# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

# ՍԱՂՄՈՍԱՑ

Յօրինեալ՚ի Տ. Միքայէլ վարդապետէ Չամ-
չեանց՝ յաշակերտութենէ ամենապատիւ Մխի-
թարայ Աբբահօր ·

Տպագրեալ հրամանաւ Հօգեւոր տն Ստեփաննոսի Գծէ
Աբբայի Ագոնց, [illegible] Արքեպիսկոպոսի ·

Յամի տն · 1815 · և հայոց · ՌՄԿԴ ·

Բաժանեալ՚ի տասն հատորս ·

ՀԱՏՈՐ · Բ ·



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

Ցուցակ 713

Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Մատենադարանին

1966

# ԱՌ ԸՆԹԵՐՑՕՂՍ

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

* «Քանզի սա՛ ա̃ծային երգս՝ առոգեալ ծաղկեցու-ցանէ զզանազան հասակս մարդկան, և զգործս և զխնամս ըստ իւրաքանչիւր Ճանապարհի և կարի, յիւ-րականն էութ̃է ոչ այլայլի . . . չէ՛ վայրապար՝ կամ յան-դգնութ̃ի, թէ՝ որ զբազմաց ծաղկեցոյց խնամս ըստ իւրեանց մեծաքոյս և առոք սերմանն զօրութեան, ա-Ճեցուսցէ և զմերս սի՛ն սաղարթ՝ 'ի փառս և 'ի պա-տիւ տնկագործողին քո՛ւ, և հօր նորա աստուծոյ»։

Լամբր. սաղ. յառաջաբ.

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

# ՍԱՂՄՈՍԱՑ

ՍԱՂՄՈՍԱՑ ՕԳՈՒՏ յաւէտ սրտի է վայելել՝ քան մը-տաց քննել. ներքին ախորժմամբ ճաշակել՝ քան արտաքին տեսութ՟ մեկնա-բանել. 'ի հոգիս համբարել՝ քան 'ի գիրս հետազօտել: Զի գերապանծ չքնաղու՟ նր՝ թէպէտև կարէ ժառանգիլ, բայց ոչ մարթի դիւրաւ պարզիլ. վ՟ առաւել արժան էր յորդորել զ՟մսին յաւել յայն սրտի մտօք և ոգւով՝ քան առաջի մատու-ցանել զնոյն մեկնութեամբ և գրով:

Այլ եթէ կամիցիմք անպատրուակ խօսիլ, մեկնութիք առաւել նսեմացուցիչ են սաղ-մոսաց՝ քան արտայայտիչ. և որ նոյն է, առաւել անզարդացուցիչ են՝ քան վայել-չացուցիչ. վասն զի վերագոյն գոլով՝ քան զամենայն շքեղութիւն մարդկային բանից, զոր մեկնութի և զգեցուսցես նմա, իբր կապերտիւ քօղարկես զնա: Զի զոր օրի-նակ գեղապաճոյճ զարդ՝ անարգագունիւք ոչ ազնուանայ, այլ նուաստանայ, սոյն-պէս և ամենագեղ իմաստ Սաղմոսաց՝ անարգանուաստ բանիւք մարդկան ոչ վա-յելչանայ, այլ անշքանայ:

Այն ինչ է միայն՝ որ մղէ զմեկնիչս մատու-չել ՚ի զգեստաւորութի սորա, այն ինքն է անհասանելի տիպար սորին. զի այսպիսի տեսանելովնոցա զսա՝ պէսպէս հայթհայ-թանս առաջի առնեն. ոչ զի մեկնեսցեն, այլ զի որ անմատչելին է, դիւրամատչելի կացուսցեն. և որ աննշմարելին է, նշմա-րելի երևեցուսցեն. և որ անծասքելին է, ծասքելի ընծայեսցեն: Ուստի և բա-նահիւսութի նոցա ոչ այնչափ կոչելի է մեկնութի, որչափ պատրաստութի կմ տրա-մադրութիւն առ փոքր մի կարօղ լինելոյ վստահիլ և մտաւորիլ ՚ի գահոյս վսեմա-

փառ տեսութեան սորա:

Յայս իսկ՝ բաղդ * մեկնութ սաղմոսաց, որ դնի ՚ի ճակատս մատենից, ոչ է հա-մարելի իբրև ճշգրիտ վերնագիր, այլ ընդ-ձայնութ իբրև ստուերագրութի ինչ, առ ՚ի ճանաչելոյ անտի իբրև ՚ի ստուերէ զմե-ծութ իմաստից յայս ձև կամ յայն ձև բա-նից նկարեալ յանծայլին տառօնյայնոսիկ: Ի սոյն ստուերագրութիւն հարկելով և մեզ մատչիլ՝ ջանալ ունիմք ըստ խոստման մերում ամենապարզ շարադրութբ շրջիլ ՚ի սմին: Ուստ առեալ ուրեմն վստահու-

թբ՝ սկիզբն արասցուք գործոյս,
Ի փառս ամենափրկչին մերոյ քրի այ,
և ՚ի պատիւ բարեբանեալ մբ ածածնին:



Երանեալ է այր՝ որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամ-
պարշտաց ։

# ԿԱՆՈՆ. Ա.

## ՍԱՂՄՈՍ. Ա.

*Երանութիւն առն արդարոյ՝ որ գնայ յօրէնս տեառն. և տիպ թշուառութեան ամպարշտաց.*

1 Երանեալ է այր, որ ոչ գնաց ՚ի խորհուրդս ամպարշտաց.
՚ի ճանապարհս մեղաւորաց նա ոչ եկաց, և յաթոռս
ժանտից նա ոչ նստաւ. 2 Այլ յօրէնս տն են կամք նորա, և յօ-
րէնս նորա խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի. և եղիցի նա որ-
պէս ծառ՝ որ տնկեալ է ՚ի գնացս ջուրց. 3 Որ զպտուղ իւր
՚ի ժամու տացէ. և տերև նորա մի թափեսցի, և զամ զոր ինչ ա-
ռնիցէ՝ յաջողեսցի նմա. 4 Ոչ այսպէս են ամպարիշտք և ոչ այս-
պէս. այլ որպէս հողմ զփոշի՝ զի հոսէ ՚ի վերայ երեսաց երկրի.
5 Վասն այսորիկ ոչ յարիցեն ամպարիշտք ՚ի դատաստանի. և ոչ
մեղաւորք ՚ի խորհուրդս արդարոց. 6 Զի գիտէ Տէր զճանապարհս
արդարոց. ճանապարհք ամպարշտաց կորիցեն.

ԱՅՍ ԱՌԱՋԻՆ ՍԱՂՄՈՍ չունի ինչ վերնագիր ՚ի բնագիրս եբրայեցւոց, և ոչ յուղիղ օրինակս սաղմոսաց մերոց, և ոչ ՚ի հասարակ օրինակս եօթանասնից, և ոչ եւ յայլ թարգմանութիւնս. Ուստի համարի նա իբր յառաջաբանութիւն ինչ բովանդակ սաղմոսաց. եւ և իբր բովանդակութիւն համօրէն ձայնից աւանդելոց ՚ի սմա. և իբր լրումն վարդապետութեան հոգևոր կե-

նաց. և ըստ վարդանայ՝ * ով հիմն տան և ողնափայտ
„ նաւի և սիրտն կենդանւոյ, այսպէս բոլոր մեծութեան
„ և ընդարձակութե̃ սաղմոսաց՝ դուզնաքեայ այս նա-
խաշաւիղ ‖ :

Ասացի՝ յուղիղ օրինակս. քանզի կան առ մեզ և երեք ձեռագիր օրինակք, յորս տեսանի եղեալ վերնագիր ինչ. 'ի միումն, * սաղմոս 'ի դաւիթ ‖. և յերկուս այլս, * 'ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ ‖. որպէս և յառաջին տպագրեալն, * սաղմոս դաւթի ‖ : Ասացի ևս՝ 'ի հասարակ օրինակս եօթանասնից. զի 'ի տպագրութեան կոմպլուտեանց գտանի ինչ վերնագիր : Բայց քանզի յայլս ոչ գտանի, չէ պարտ յաւելուլ :

Այս սաղմոս վասն ոչ ունելոյ զվերնագիր ինչ, (որպէս կան և այլ քանի մի,) կարծեցաւ յումանց, թէ սա չիցէ 'ի դաւթայ ասացեալ, այլ յեզրասայ : Ոմանք ևս վարկան՝ թէ յերեմիայէ իցէ սկսեալ, և յայլոց լրացեալ. զի նման սմին ինչ գրի 'ի մարգարէութեանն երեմիայ, այն թէ՝ * Օրհնեալ լիցի մարդն, որ յու-
„ սացաւ 'ի տէր. և եղիցի տէր յոյս նր̃. և եղիցի իբրև
„ զծառ զուարձացեալ 'ի գնացս ջուրց. և ընդ գնացս
„ ջուրց ձգտեցուսցէ զարմատս իւր. և մի երկիցէ,
„ յորժամ հասանիցէ տօթ. և եղիցի ստեղն նորա ան-
„ տառացեալ շուրջ զնովաւ. յամի երաշտութեան ոչ
„ երկիցէ, և մի կասեսցի 'ի տալոյ զպտուղ. . . Ես
„ տէր քննեմ զսիրտս, և փորձեմ զերիկամունս՝ տալ
„ իւրաքանչիւր ը̃ ճանապարհաց իւրոց, և ըստ պտղոց
գործոց իւրոց ‖. երեմ. ժէ. 7. և 8 :

Այս բան երեմեայ թէպէտ և պատկեր իմն է այսր առաջին սաղմոսի, բայց սոյն ոչ ցուցանի, թէ իցէ նոյն : Այլ և մեկնիչք առ հասարակ և թարգմանիչք դաւթի միայն ընծայեն զսա : Ուր ասեն ևս ոմանք, ընդ որս և վարդան, թէ * յորժամ չոքաւ սաւուղ
„ առ գիւթն, և գնաց 'ի խորհուրդս և 'ի ճանա-
„ պարհս գիւթին. և հանգեաւ 'ի ժամու աթոռս նր̃,
„ ասաց դաւիթ զսաղմոսս զայս ‖. այլ այս կարծիք չունի ինչ տեղի :

Ոմանք 'ի հրէից վարկան, թէ այս սաղմոս իցէ ասացեալ վասն ովսեայ թագաւորին յուդայ. զի բանք սորա

նմա յարմարին . քանզի ոչ գնաց նա 'ի խորհուրդս ամպարիշտ թագաւորացն , ևն ։ Բայց այսպիսի ամփոփումն անհիմն երևի , և ոչ ուստեք հաստատի . և ընդդէմ ևս է ընթացից բանի այսր սաղմոսի . որ 'ի հասարակի խօսի զերանութենէ ո՛ և իցէ արդարոյ , որպէս յայտնի կարէ տեսանիլ 'ի վերջին համարոյն ։

Իսկ եթէ կամիցիմք մասնաւորել առ այս ոք , կամ առ այն , հնար է և առ այլս բազումս տարածել , և իւրաքանչիւրոց նոցա յարմարեցուցանել , որպ՟ և առնեն բազումք . ընդ որս և ոմանք վերածեն 'ի դէմս յովսեփայ արեմաթացւոյ , որ ոչ գնաց 'ի խորհուրդս ածասպան հրէից , և ոչ հաւանեցաւ ընդ գործս նոցա ։ Սակայն որպէս և ասացաք՝ մարգարէն զբան սաղմոսիս առ ա՟մ ոք կարգէ ։ Եւ 'ի սկսանելն անդ՝ նախ առաջին զանուշութիւն երանութեան առաջի մատուցանէ . ըստ որոյ ասէ սարգիս շնորհալի 'ի մեկն . յակ . ա՟ . 12 . ճառ . դ՟ . * մեծն 'ի մարգարէս դաւիթ կամելով սկիզբն առնել սաղմոսերգութեան՝ ասէ սկսանի ( ա՟ յերանութենէ ) , երանելով զայրն՝ որ 'ի խորհուրդս ամպարշտաց ոչ գնաց , և 'ի ճանապարհի մեղաւորաց ոչ եկաց , և 'ի ժանտից աթոռս ոչ նըստաւ ‖ ։

Եւ զայս այսպէս կարգելով մարգարէին կամի յօժարամիտս առնել զմարդն՝ առ 'ի նահատակիլ յառաքինութիւնս , կամ ը՟ գրելոյ ներսէսի շնորհալւոյն 'ի մեկն . մատթ . գլ . ե . 2 . * յորդորել զլսօղսն՝ զհետ „ գնալ երանական գործոց ‖ . ևս և թեթևացուցանել զծանրութիւն վշտացն՝ որք ընդառաջ ելանեն յընթացս ճանապարհի երանութեան ։ Եւ զի ( ըստ ասելոյ մեծին վարդանայ ) * զուղեգնացին զժուար և „ զխոշոր ճանապարհին զաշխատութիւն թեթևացու„ ցանէ յուսացեալ օթևանին մխիթարութիւն . և „ վաճառականացն համարձակէ 'ի ծով՝ շահիցն յոյս , „ և զերկրագործականին զաշխատութիւն գողանայ պըտ„ ղոցն շահ ‖ . Այնպէս և երանութեան ակնկալութի՟ դիւրացուցանէ զա՟մ տաժանմունս առաքինութեանց . զի է լրումն ա՟մ շահու և մխիթարութեան . վ՟յ զնոյն զայն առաջի մատուցեալ ասէ ։

# ԲԱՆ.

ա. Երանեալ է այր, որ ոչ գնայ 'ի խորհուրդս ամպարշտաց. 'ի ճանապարհս մեղաւորաց ոչ եկաց. և յաթոռս ժանտից ոչ նստաւ։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

ՀԱՅԵՑԵԱԼ ՄԱՐԳԱՐԷՆ 'ի յօժարութիւն համօրէն մարդկային բնութեանս՝ կամելով առաջի նկարել զնոյն ը̃ երանական մասին, յոր մարթ է ժամանել. գիտեալ նախ՝ թէ յինչ բերի, և զինչ խնդրէ. և զորս խնդրէ՝ 'ի նոսին զինչ գտանէ։ Արդ՝ բնութիւն մարդոյ առ հասարակ յա̃մի և միշտ ցանկայ ունել զերանութիւն. ո̃ է, այնպէս վայելել 'ի բարիս, զի 'ի նմին անդորրացեալ յագեսցի բաղձանք իւր։ Եւ քանզի բաղձանք մարդոյ յօժարի առ ա̃մ բարի, յա̃մի փափաքի վայելել զա̃մ բարի, կամ զլիութիւն բարեաց. և յայսմանէ մղեալ դիմէ առ ամենայն ինչ՝ առ 'ի զնոյն գտանել. բայց յոր և իցէ իրս գտեալ միայն զմասնաւոր և զչափաւոր բարութիւն, նովին չյագեալ՝ իբր ծարաւի յարձակի գտանել միանգամայն զա̃մ։ Եւ թէպէտ ինքն ոչ զգայ՝ թէ այնմ ցանկայ, բայց բաղձանք նր̃ ընդունակ գոլով ա̃մ բարեաց, յայնմ ընդունակութենէ ձգեալ՝ առ այն դիմէ, 'ի նոյն հառաչէ, և յա̃մի ընդ նոյն խնդրէ, և յոչ գտանելն մնայ պասքեալ։

Իսկ եթէ ճշմարտիւ կամիցի գտանել, պարտ է նմա զայնպիսի բարի խնդրել, և յայնպիսի բարի հաստատել զբաղձանս սրտի իւրոյ, որ իցէ անչափ և անսահման. որոյ ժառանգութեամբն լիացեալ և անդորրացեալ՝ լինիցի երանեալ։ Եւ արդ՝ քանզի ա̃ծ միայն է անսահման բարի, եթէ ցանկայ մարդ լինել երանելի, պարտ է նմա յա̃ծ միայն յարիլ, և 'ի նա միայն

հաստատիլ, և զնոյն ևեթ ժառանգել.

Իսկ առ՚ի յարիլ յա՟ծ իբրև՚ի ժառանգութիւն երանական, հարկ է նախ հեռանալ յայնմ ա՟մէ, որ հակառակի ա՟յ. և ապա բոլորովին լինել ա՟յ. Այլ այս կրկնակի կարէ լինել, կատարեալ և անկատար. Կատարեալն լինի՚ի հանդերձեալն. ուր հոգին ազատ յա՟մ չարէ՝ բոլորովին միանայ ընդ ա՟յ՝ տեսութ՟ էութ՟ն, և զմայլելով յանձառելի փառս նորին. Իսկ անկատարն լինի յաստի կեանս, յորժամ մարդն լինի բոլոր ա՟յ՝ բարոյապէս. ի՟ խոտորելով յայնպիսի չարէ՝ որ է ընդդէմ օրինացն ա՟յ, և առնելով զայնպիսի բարի՝ որ է ըստ օրինացն ա՟յ. և այսու հաստատեալ՚ի հաճոյս ա՟յ՝ միաւորի ընդ նմա, և ժառանգէ զնա հոգեպէս իբրև զիւր ծայրագոյն բարի. որով և ըստ տանելոյ աստի կենացս լինի երանելի.

Համարին ոմանք՝ թէ բանք այսր սաղմոսի հային՚ի կատարեալն երանութիւն՝ որ լինի՚ի հանդերձեալն. յայս միտս է և վարդան. որոյ վասն ասէ՝ թէ մարգարէն * ոչ ասաց՝ երանեալ է այր՝ որ ոչ գնայ. այլ թէ „ որ ոչ գնաց. զի որչափ՚ի կենցաղումս է՝ ոչ է ե„ րանելի յաղագս անյայտութեան ելիցն. իսկ որ վճա„ րեաց զկեանս զայս, այն ահա զգուշութ՟ երանի ||. բայց ընթացք սաղմոսիս յաստի կենաց երանութիւն հային ը՟ խոտորելոյ՚ի չարէն և ըստ առնելոյ զբարին. Վասն խոտորելոյ՚ի չարէն՝ ասէ. * Որ ոչ գնաց՚ի խորհուրդս ամպարշտաց.՚ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց. և յաթոռս ժանտից նա ոչ նստաւ ||. Իսկ վասն առնելոյ զբարին ասէ. * այլ յօրէնս տն՟ էն կամք նորա. և յօրէնս նորա խորհեսցի նա՚ի տուէ և՚ի գիշերի. և եղիցի նա որպէս ծառ ևն ||. Արդ ասելովն * որ ոչ գնաց՚ի խորհուրդս ամպարշտաց ևն ||, յամենայն աստիճանաց չարութեան կամի՚ի բաց որոշել զանձն զայն, որ ցանկայ երանեալ լինել. նախ՝՚ի խորհրդոց ամպարշտաց. երկրորդ՝՚ի գործոց մեղաւորաց. երրորդ՝՚ի մոլութենէ ժանտից. Վասն զի երրակի կատարին չարիք. Նախ՝ առ՚ի ներքս խորհրդով, յորժամ ոք խորհի զչարիս, և չար խորհրդոց հաւանի, հրաժարելով՚ի բարի խորհրդոց. և որ զայս առնէ՝ ամպարիշտ ասի. և յայս հայի ասելն. * երանեալ է այր՝

որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամբարշտաց ||։

Երկրորդ՝ կատարեալն չարեաց առ արտաքս՝ եթէ 'ի գործս և եթէ 'ի բանս. որպիսի են գործք սպանութեան, գողութեան, բարկութե՛, որկրամոլութե՛, վաւաշոտութե՛ այլն. և ևս և բանք բամբասանաց, նախատանաց, հայհոյանաց այլն. որք յետ հաւանութեան խորհրդոց՝ արտաքոյ ևս կատարին՝ կամ ձեռօք, կամ աչօք, կամ բերանովք, և կամ այլովք զգայարանօք. և որք զայսպիսիս գործեն, տիրապէս մեղաւորք կոչին. և յայս հայի ասելն. *'ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց ||։

Երրորդ՝ կատարեալն չարեաց չար ունակութի՛. քանզի յորժամ գործք մեղացն կրկնին, կրկնելովն աճեալ ևս զօրանան. որով տպաւորի 'ի կամս դիւրութիւն ինչ մեղանչելոյ, կամ սովորութիւն անկարգ, որ ասի չար ունակութիւն, զոր տիրապէս կոչեմք մոլութի՛, կամ կաբեք մեղաց զօրացեալ յանդամս մեր։ Եւ որ ոք ստացեալ իցէ զայսպիսի մոլութիւն, դիւրաւ և իբր անխիղճ գործէ զչարիս. և որ յառաջն մեծ չար համարէր զգործ մեղացն, յետ ունակութեանն փոքր վարկանի. և եթէ մեծ ևս համարիցի, ոչ կամելով հատանել յիւրմէ զայն՝ իբրև զթեթև ինչ գործէ. և առաւելեալ 'ի չարիս՝ ամենևին 'ի նոյն հաստատի։ Եւ այնուհետև անամօթացեալ ընդդէմ հոգևորաց, արհամարհէ զնոյնս. և զառաքինական գործս և զբարեպաշտական իրս համարի ծաղրական ինչ և տղայական. զի որպէս ասի. առակ. ժը. 3. *ամբարիշտն ('ի մեղաւորս) հասեալ 'ի խորս չարեաց՝ արհամարհէ ||։

Այսպիսի մարդ՝ մոլի կոչի և ժանտ, այ՛ ունօղ չար ախտից, կամ ունօղ այնպիսի մոլութեան՝ որ է դառն, և ապականիչ և փոխադրական. և ինքն չարաժպիրհ։ Ասացի՝ դառն. զի որ այսպիսի է՝ դառնացուցանէ 'ի հոգի իւր զքաղցրութիւն առաքինութե՛, և զգործս աստուածպաշտութեան. և կայ դառնացեալ և ժանտացեալ թէ առ ինքն, և թէ առ այլս։

Ասացի ևս՝ ապականիչ. զի այսպիսիս ապականէ ըզգործս իւր. վասն զի թէ և արասցէ զգործ ինչ բարի՝ իսկոյն ապականէ մեղօք զնոյն. և եթէ դարձցի ևս,

և եղիցի բարի , չունելով զփոյթ մեծ 'ի չար սովորութենէ անտի զգուեալ՝ վերստին անկանի . յորմէ ապականի այն նորոգ ստացեալ բարութիւն նորա ։

Տեսցի դարձեալ փոխադրական . զի այսպիսիս փոխադրէ զչարութիւն իւր նաև յայլս ։ Սաստի ասէ զերդ վարդապետ 'ի մեկն. եսայ. է. * ժանտ զայնպիսին „ ասէ , որ ոչ միայն ինքեան , այլ և յայլս տայ զժան„ տութիւն իւր ‖ . և այս՝ եթէ արդեամբք , և եթէ բանիւ ։ Արդեամբք , յորժամ յաճախելով 'ի մեղս՝ չար օրինակս իւրով լինի գայթակղութիւն պարզամտաց և անմեղաց ։ Բանիւ , յորժամ ջանայ պէսպէս հնարաւոր պատճառօք , կամ թունաւոր վարդապետութեամբ , և կամ թիւր և մոլար մեկնութբ գրոց զգործս մոլութեան իւրոյ պատրուակել . զի երևեսցի անմեղադրելի ։ Եւ երբեմն հնարի այլոց ևս հաղորդել ըզնոյն և տարածել . զի զնոսա ևս տեսցէ իւր նմանս ։ Եւ այսպէս չար մոլութիւն նորա լինի իբրև ժանտախտ՝ 'ի բազումս փոխադրական ։ Վասն որոյ եօթանասունք եդին աստ "լիմօս", որ ածականաբար նշանակէ "ժանտ", և գոյականաբար "ժանտախտ", որ և մահտարաժամ առի , և 'ի գիրս՝ սրածութի , կամ ախտ սրածուէ կոչի . քան զոր չիք ախտ ժանտ և փոխադրական , և սատակչական անձին և այլոց ։

Տեսցի ևս՝ և ինքն չարաժպիրհ . զի այսպիսի չարաչար լրբացեալ 'ի հոգի իւր՝ 'ի լրբութենէ անտի իւրմէ այպանէ զառաքինիս , և կատականօք խօսի զզգաստութէ սրբութէ վարուց և զբարեկրօնութէ կենաց ։ Եւ յայս հայի ասելն . * Եւ յաթոռս ժանտից ոչ նստաւ ‖ ։ Եւ ահա որպէս տեսանես , յերեսին յաջողակ ակնարկելով մարգարէին՝ դնէ զայս բան . զի յառաջինն հայելով՝ ասէ ։

**Երանեալ է այր՝ որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամպարշտաց ։**

Զայն երանելով մարգարէին՝ ոչ կամի ցուցանել՝ թէ բանք սաղմոսիս հայեին 'ի սեռս արանց , այլ՝ առ հասարակ յամ մարդ ։ Իսկ պատճառ այր դնելոյն է այս , զի այրն գոլով պատուականագոյն քան զկին , ևս և գլուխ նորա , և առաւել ընդունակ կրթութե վարուց , զայն ևեթ յիշելով իբրև զպատուականագոյն մասն յազգս մարդկան , ընդ նմին տայ իմանալ և ըզ-

նուաստն , ք͞ն զկնն ։ Ուստի ըստ ասելոյ սարգսի շնոր-
հալւոյն . * յերանիլ առն՝ ընդ նմին երանի և կնն ‖ .
ա͞պ և * 'ի դատապարտիլ ( կմ 'ի պարսաւիլ ) առն
( ասէ ) , ընդ նմին և դատապարտի կնն ‖ . 'ի մեկն .
յակ . Ճառ . ը͞ ։

Նւ դարձեալ զայր գնելով կամի երանել զայնոսիկ
միայն , որ ըստ ասելոյ նորին վ͞րդպի * աղխական բնու͞թ
,, 'ի մէջ փորձութեցն՝ որ վասն ա͞յ կալով յաղթեն . . . .
,, զի ա͞մ ոք՝ որ հեղգութ͞բ և հեշտութեամբ վատթար
,, գտանի առ փորձութիւնս՝ այր ոչ է . այլ վատթա-
,, րագոյն քան զկին ‖ . 'ի մեկն . յակ . Ճառ . դ͞ ։ Իսկ
որ արիանայ՝ այնպիսին է այր . և այնպիսին է՝ զոր ե-
րանէ աստ մարգարէն ։ Յոր միտ ասէ վանական վ͞րդպ
'ի մեկնութեանն յոբայ . * այր ( նա ) է՝ որ զքաջութի͞
,, զմտաց ածէ , և զերանութի͞ անձին պահէ . որպէս մար-
,, գարէն 'ի գլուխ սաղմոսին երգեաց երանեալ է
,, այր ի͞ա ‖ . և յաւելու՝ թէ * բազումք ասեն այրք ,
,, բայց ոչ են , զի հաւասարեցին անասնոց . որպէս ասէ
,, դաւիթ , սաղ . խ͞ը . 11 ‖ ։ Ասէ եւս՝ թէ աստ փոխա-
նակ արդար գնելոյ՝ այր դնէ մարգարէն . զի առն՝
վայել է արդար լինել . զորմէ և վկայէ՝ թէ ըստ խոր-
հրդոց ամպարշտաց ոչ գնաց ։

Բառս խորհուրդ՝ կրկնակի կարէ առեալ լինել աստ .
ներգործաբար և կրաւորապէս . ներգործաբար ա-
ռեալ՝ նշանակէ խորհրդատուութիւն կամ խրատա-
տուութիւն . և ըստ այսմ կամի ասել . այր արդար ոչ
գնայ ըստ խորհրդոյ՝ զոր տան ամպարիշտք կամ զոր խոր-
հին նոքա . յայս հայի և եբր" ։ Կրաւորապէս առեալ
նշանակէ խորհրդածութիւն . այս է խորհին 'ի միտս . և
ըստ այսմ կամի ասել . այր արդար ոչ խորհի զայնպի-
սիս՝ զորպիսիս խորհին ամպարիշտք ։

Ոչ ասէ , ոչ խորհի , կամ ոչ խորհեցաւ , այլ՝ ոչ գնաց .
առ 'ի յայտ առնել՝ թէ այն խորհուրդ ամբարշտաց՝
զորոց խօսի աստ , ոչ են սոսկ տեսականք կամ հայե-
ցողականք , այլ գնացականք , ք͞ն գործնականք . իբր
զի ամպարիշտք խորհին զչարիս՝ ոչ 'ի տեսանել կամ 'ի
հայիլ , այլ՝ 'ի գնալ 'ի նոսին . ք͞ն առ 'ի գործել ։ Իսկ
արդարն ոչ խորհի զչարիս գործնականապէս . և եթէ
հարկ լիցի խորհիլ՝ հայեցողականապէս առնէ . և այն

երբեմն ականջ · ըստ որում խորհուրդք նորա ականջ բերեն 'ի խորհիլ զչարիս · որպէս * միտք մարդոյ հաստատեալ են 'ի խնամս չարի 'ի մանկութենէ իւրմէ ‖ · Ծնն · Ը · 21 ։ տես և 'ի Հռովմ · Է · 15 = 24 ։ Ոչ այս եղեալ մարգարէին՝ խօսի և ըստ երկրորդին, ասելով ։

Ի ճանապարհի մեղաւորաց ոչ եկաց ։ Այսինքն ոչ միայն ոչ գնաց ըստ խորհրդոց ամպարշտաց, այլև ոչ եկաց 'ի ճանապարհի մեղաւորաց ։ Ուր ճանապարհ ասելով՝ իմանայ զգործս · զի 'ի սուրբ գիրս՝ գործք մարդոյ՝ թէ բարի իցեն, և թէ չար, ճանապարհի նմանին · ըմ · առակ · Դ · 18 * Ճանապարհք արդարոց իբրև զլոյս ծագեն . . . ճանապարհք ամպարշտաց խաւարին · և ոչ գիտեն, զիարդ գայթակղին ‖ ։ Ուր ճանապարհօք իմանայ զգործս ։

Իսկ պատճառ ճանապարհի նմանեցուցանելոյ զգործս մարդոյ՝ այս է, զի գործք մարդոյ յաստի կեանս համարին իբր ընթացք կամ ճանապարհ առ հանդերձեալն, և առ յաւիտենականութիւն ։ Նաև ևս՝ գործք մարդոյ այնպիսի իմն են, յորս գրեթէ իբրև 'ի ճանապարհի դիպի նմա սահիլ և անկանիլ 'ի վտանգս, 'ի ձախորդութիւս, ևն · և երբեմն ևս 'ի մեղս · վասնզի և ճանապարհ կոչի ։ Նաև դարձեալ՝ որպէս որ գնայ 'ի ճանապարհ, ցանկայ ժամանել 'ի տեղին, ուր դիտէ, սոյնպէս և մարդ 'ի գործելն ինչ՝ ցանկայ ժամանել այնմ, զոր դիտէ · ուստի և գործ նորա ճանապարհի նմանի ։

Դիտել արժան է աստ · զի ոչ ասէ մարգարէն, ոչ գործեաց, կամ որպէս 'ի վերոյ եդ, * ոչ գնաց ‖ · այլ՝ * ոչ եկաց ‖ · վասնզի արդարն ոչ կայ, այսինքն ոչ տևէ 'ի ճանապարհի մեղաւորաց · այս է 'ի մեղս · թէպէտև երբեմն դիպեսցի նմա սխալիլ և գնալ 'ի նոյն · այսինքն է, մեղանչել · զի գրեալ է · * Եօթն անգամ անկցի արդարն, կանգնեսցի · իսկ ամպարիշտք տկարասցեն 'ի չարիս ‖ · առակ · ԻԴ · 16 ։ Նաև դարձեալ՝ որ գործով կատարէ զմեղս՝ 'ի չար խորհրդոց ընթացեալ 'ի գործ, որպէս թէ զկայ առնու 'ի նմին ։ Իսկ արդարն յետս կայ և զգուշանայ · ուստի և 'ի գործս մեղաւորաց ոչ կայ · այսինքն զգործս նոցա ոչ գործէ ։

Հնար է այլազգ ևս իմանալ զայս՝ եթէ առցուք զՃա-
նապարհն փոխանակ առթի՝ որ ածէ 'ի մեղս. ըստ որոյ
յասելն, * 'ի Ճանապարհի մեղաւորաց ոչ եկաց ||.
յայտ առնէ, թէ մարդ բարի ոչ կայ յառիթս մե-
ղաց. կամ ոչ դնէ զանձն իւր յայնպիսի առիթս, յորս
մեղաւորք աներկիւղ դնեն զինքեանս, և կործանին.
* Ով ի որ դնէ զանձն իւր 'ի վտանգի, անկցի ||. և
* որ սիրէ զորոգայթ, 'ի նմին կորիցէ || սիրաք. գ. 27.
Խօսի ապա մարգարէն և զայնմանէ՝ որ հայի յերկրորդ
օրինակ մեղանչելոյն, և ասէ.

Եւ յաթոռ ժանտից ոչ նստաւ։ Ի յոխնքն, ոչ հաս-
տատեցաւ 'ի գործս մեղաւորաց. կամ ոչ եղև այնպի-
սի, որպիսի են նք, որք յաճախելով 'ի մեղս՝ ստանան
զունակութի չար։ Եւ ասէ, ըստ գործոց ժանտից ոչ
արար, կամ ըստ կենաց նց ոչ եկեաց, այլ՝ յաթոռս նց
ոչ նստաւ. զի որ նստի յաթոռ, ոչ թէ հաստատի 'ի
նմին. և զայն ըստ իմքք հանգիստ համարի իւր։ Այն-
պէս և որք ունին զչար սովորութի մեղաց, հաստատեալ
կան 'ի նմին. և զգործս այնր սովորութեան իբր հան-
գիստ համարին. որոյ աղագաւ անկարգացեալք 'ի
դատմունս՝ ես և 'ի կամս իւրեանց՝ դառն դառնեն զա-
ռաքինական կեանս. և զորս տեսանեն 'ի բարեկրօ-
նութէ՝ ծաղր առնեն, և այպանօք խօսին զնոցանէ.
և յորժամ նստեալ 'ի մէջ բազմուէ զբանիւք անկա-
նոն՝ 'ի մէջ բերեալ զվարս առաքինեաց՝ զարհամար-
հական զրոյցս թափեն զնոքօք.

Բարոյական մեկնութք բառիս ժանտք՝ մարդ է ի-
մանալ աստ զժանտաբարոյս կամ զդեղս. որք եթէ
դառնութք ոչ խօսիցին ընդ այլոց կամ զայլոց՝ ոչ հանգ-
չին. ուստի և զժանտախօսութի իւրեանց հանգիստ
համարին անձանց. որոյ վասն 'ի նմանութիւն յաթոռ
նստողի այլաբանին։ Եւ ըստ այսմ առաջիկայ բնաբա-
նիւդ ըստ այլ իմն կարգի երանելի համարի նա՝ որ ոչ
յանցեաւ՝ ոչ խորհրդով, ոչ բանիւ և ոչ գործով. ոչ
խորհրդով, ըստ որում ասէ * ոչ գնաց 'ի խորհուրդս
ամպարշտաց ||. ոչ բանիւ, ըստ որում ասէ * յաթոռս
ժանտից (ժանտաբանից) ոչ նստաւ ||. ոչ գործով, ըստ
որում ասէ. * 'ի Ճանապարհի մեղաւորաց ոչ եկաց ||։
Յարմարական մեկնութք՝ բառիս ժանտք, իմացեալ

լինին աստ աղանդաւորք , ընդ որս և հերետիկոսք .
ուստի հայելով առ սոսա՝ ասէն , * յաթոռս ժանտից
ոչ նստաւ ‖ . յայտ առնէ , թէ արդարն ( զորմէ են
այս բանք ) ոչ նստաւ յաթոռս աղանդաւորաց , կամ
հերետիկոսաց . այ̃ ոչ ուսոյց , կամ ոչ ուսուցանէ ումեք
զմոլար վ̃պութիւն ինչ , կամ զհերետիկոսական բանս ,
և այնու ուսուցմամբ ոչ տարածէ յայլս իբրև զժանտ-
ախտ՝ զմոլորութիւն իւր . որպէս սովոր են առնել հերե-
տիկոսքն .

Եւ յայն սակս ասի զոցանէ՝ յաթոռս ժանտից նստ-
ել , զի որ ուսուցանէ այլոց ինչ , կամ քարոզէ , հա-
սարակօրէն յաթոռ նստի , և անտի տարածէ զվար-
դապետութիւն իւր 'ի լսելիս այլոց . Եւ կամ թէ և ոչ
նստիցի , այլաբանօրէն ասի՝ իբր յաթոռ նստիլ և ու-
սուցանել . յոր միտս ասաց Քս̃ . * Յաթոռն մովսէսի
նստան դպիրքն և փարիսեցիք . զամ̃ ինչ , զոր ասիցեն
ձեզ , արարէք , և պահեցէք . բայց ըստ գործոց նց̃ մի
առնէք ‖ . մտթ . իգ . 2 .

Լամբրոնացին՝ բառիս " ժանտ " համարի աստ զա-
տանայ . նոյնպէս և բառիւքս՝ * ամպարիշտ և մե-
ղաւոր՝ ‖ զնոյն իմանայ , ընդ նմին և զդևս նր̃ . Ի խոր-
հուրդս սոցա ասէ ոչ գնաց արդարն . և 'ի ճանապար-
հի սոսա ոչ կայ . և յաթոռ սց̃ , այ̃ յիշխա-
նութեան սոցա ոչ նստի .

Իսկ այլք՝ ամպարշտօք իմանան զհեթանոսս , մեղա-
ւորօք զհրեայս , և ժանտիւք ըստ նախադրելոյդ զհե-
րետիկոսս . Ոմանք ևս ամպարշտօք իմանան զմարմնա-
սէրս , մեղաւորօք զհպարտս , և ժանտիւք զխիստս
կամ զբարկացօղս . Այլք ևս ամպարշտօք իմանան զայն-
պիսիս , որք անհաստատ են 'ի բարիս . մեղաւորօք լոկ
զչարս . և ժանտիւք զհաստատեալսն 'ի չարիս , մինչև
արհամարհել նց̃ զբարիս . Վարդան ամբարշտօք իմա-
նայ զկռապաշտս . մեղաւորօք զայնս՝ որք ունին զհա-
ւատս և զօրէնս , և մեղանչեն . իսկ ժանտիւք զայնս ,
որք նորանոր չարեաց պատճառք են . Ըստ սմին և սար-
գիս շնորհալին ասէ 'ի մեկն . ա̃ . պետ . դ̃ . 18 . * Մե-
,, ղաւոր թուի ինձ եթէ զայնպիսիկ ասէ՝ որք 'ի հա-
,, ւատոյն ոչ ինչ շահեցան . . . իսկ ամպարիշտ զայ-
,, նոսիկ անուանէ , որք անյօծ կայոյն մոլորութ̃ ցեալ

„ կին ‖ ։ Սոքա ա՟մ՟ին յարմարին այսմ բնաբանի · միայն թէ ոչ ամփոփեսցի միտ բանին ։

Արդ՝ մարգարէն եդեալ զայսուիկ առաջին՝ զայն միայն համարի երանեալ, որ հեռի է և ազատ յայսպիսեաց աստի, ո՟յ ՚ի մեղանչելոյ՝ խորհրդով և գործով և ժան֊տութ՟ք ։ Իսկ եթէ ոք ՚ի միոյն ևեթ իցէ ազատ, այն ոչ է երանեալ ։ Որպէս և որ յերկուց իցէ միայն ազատ, և ՚ի միոյն ըմբռնեալ, զ՟բ ՚ի չար խորհրդոց, նա ևս ոչ է երանեալ · զի տարանջատ գտանի այնու֊յ՟ց · ըստ այնմ · իմաստ · ա՟ · 3 · * խորհուրդք թիւրք անջատեն յ՟յ ‖ ։ Զի զ՟բ եթէ տախտակ չիցէ ըստ ա՟մ յղկեալ, այլ՝ ունիցի զկոշտ ինչ, ոչ միանայ ընդ այլում յղկեալ ուղիղ տախտակի · զի այն կոշտ՝ անյօդ թողու զնա միւսոյն · սոյնպէս և մարդ եթէ չիցէ ըստ ա՟մ յղկեալ ՚ի մեղաց, ոչ կարէ միանալ ընդ ա՟յ, որ անսահման ուղղութ՟ին է · այլ՝ անջատեալ մնայ ՚ի նմանէ ։ Եւ արդ՝ քանզի ըստ ասելոյ մեր ՚ի վերոյ, ոչ է բաւական երանելոյն հեռանալ ՚ի չարէ, այլև առնել զբարին · ո՟ր է՝ կատարել զհաճոյսն ա՟յ, որ յայտ֊նի լինի յօրէնս ն՟ր · վ՟նկ զայն ևս ՚ի մէջ բերեալ մարգարէին՝ ասէ ։

բ · Այլ յօրէնս Տ՟ն էն կամք ն՟ր · և յօրէնս ն՟ր խորհեսցի նա ՚ի տուէ և ՚ի գիշերի · և եղիցի նա որպէս ծառ, որ տնկեալ է ՚ի գնացս ջուրց ։

Աստէն շաղկապս "այլ" այնպիսի շարայարութ՟ք որոշէ զայս բան ՚ի նախընթացէն, ո՟ք եթէ մատամբ ցուցանէր, թէ ոչ երբէք երանեալ ասի նա, որ վարի ՚ի չարիս · այլ նա միայն, որ կեայ ըստ օրինացն ա՟յ ։ Իսկ առ ՚ի կեալ ըստ օրինացն ա՟յ, հարկ է նմա առնել զերիս · մի՝ հաւանիլ ընդ օրէնս · երկ՟դ՝ համապազ խորհիլ զնմանէ · և եր՟րդ՝ կատարել զայն ։ Վ՟ առաջնոյն և երկրորդին խօսի մարգարէն յայսմ համարի · իսկ վ՟ երրորդին խօսի ՚ի յաջորդ համարն ։ Ըստ առաջնոյն՝ ասէ ։

Յօրէնս Տ՟ն էն կամք ն՟ր ։ Այսինքն թէ կամք այնորիկ՝ որ ասի երանեալ, հաճեալ են և հաւանեալ ընդ օրէնս ա՟յ · և յօժար են ՚ի կատարել զայն ։ Ոչ ասէ՝ յօրէնս ա՟յ, այլ՝ "տ՟ն", առ ՚ի ցուցանել, թէ այնպիսին ոչ

համարի զանձն իւր նկրտմամբ, կամ իբր ազատ յիշխա-
նութենէն այ. այլ թէ ունի զնա 'ի վր իւր տր բացար-
ձակ. և գիտելով զինքն ծառայ այնպիսւոյ բարի տն,
յամ սրտէ ցանկայ կատարել զհրամանս նր. Խօսե-
լով ապա և վս երկրորդին՝ ասէ.

Այլ յօրէնս տն խորհեսցի նա 'ի տիւ և 'ի գիշերի. Այս-
ինքն՝ պարապեսցի քննութեան օրինացն այ, ոչ առ 'ի
գիտել՝ թէ իցեն ուղիղ կամ հաճոյ ինքեան, այլ՝ առ
'ի տեսանել, թէ զինչ 'ի նմ հրամայէ ած առնել. և
զինչ պատուիրէ չառնել. Այլ զի ցուցցէ՝ թէ պարտ
է նմա համապաղորդել 'ի սոյն, յաւելու ասել. * Ի
տուէ և 'ի գիշերի ‖. Այսինքն թէ միշտ խորհեսցի.
և կամ յորժամ հարկ իցէ խորհիլ՝ թէ 'ի տուընջեան
և թէ 'ի գիշերի. * 'ի նստիլ 'ի տան, և 'ի գնալ 'ի
ճանապարհի, 'ի ննջել, և 'ի յառնել ‖. տես ասի. Բ.
օրին. Զ. 6. 7. Իբր զի յորժամ գործէ ինչ, և կամ
գործելոց իցէ 'ի տուէ, խորհեսցի նախ՝ արդեօք ըստ
օրինացն այ է այն, զոր գործէ, թէ ընդդէմ նմին.
Այնպէս և 'ի գիշերի. Ո՛ր և ըստ յարմարութեան ա-
ռաջի առնէ գրիգոր վրդ 'ի հրաշանգամն հաւատոյ,
'ի վերջ Նարեկին.

Այլ ոչ այսչափ միայն, այլև բազում անգամ յաւուրն
մանաւորապէս քննեսցէ, զինչ հրամայէ նմա տէր,
զի ըստ այնմ կարգեսցէ զկեանս և զգործս իւր. Այլ
ևս քննեսցէ բաղդատութբ. զի համեմատելով զգործս
և զկեանս իւր ը օրինացն այ իբրև ը գաղափարի կամ
իբրև ընդ փորձաքարի կենաց. և տեսցէ, թէ արդեօք
իցէ՞ համաձայն այնմ. ապա թէ ոչ, ջանասցէ համա-
ձայնեցուցանել.

Այս մտածութի կամ խորհրդածութի լալիչ է ախ-
տից և տրտմութեց, և տածիչ առաքինութեց, և տի-
պար անարատ վարուց. վս զի քննութի և մտածութի
'ի վր օրինաց տն է իբրև ջուր. իսկ ախտ և տրտմու-
թի իբր աղ դառն. ապա որպ աղն հալեալ 'ի ջուր հալի՝
սոյնպէս և ախտ և տրտմութի հալեալ 'ի մտածութի
օրինաց հալի. Ասացի ևս տիպար են. վս զի քննութի
օրինաց է իբր նախանկարումն (կամ ասացից իբր ռէ-
սիմ) բարի վարուց և անարատութեն կենաց, զի ըստ
այնմ յօրինեալ լինի կենցաղավարութիւն մարդոյ 'ի

բարին և 'ի հաճոյն ա̃յ ։ Ուստի որք միանգամ փա-
փաքին կեալ ըստ ա̃յ, 'ի սոյն պարտին ունիլ զփոյթ,
և 'ի սոյն ջանալ ։

Այսպէս առնէին սր̃ք, և այսպէս առնեն ծառայքն ա̃յ. և այսպէս առնելով իմաստնանան և երջանկանան. զի այսպիսի մտածութիւն աճեցուցանէ զհոգևոր կեանս ։ Զսոյն առնէ և ընթերցումն ս̃բ գրոց և հոգևոր մատենից. ուստի և սարգիս շնորհալի 'ի մեկն. Է. պետ. Գ. 18. հայելով յառաջիկայ բնաբանդ՝ ասէ. * դաւիթ 'ի սաղմոսարանի անդ ասէ ,, խորհիլ յօրէնս տ̃ն 'ի տուէ և 'ի գիշերի. և այնու ,, լինել ո̃ց ծառ՝ որ անկեալ է 'ի գնացս ջուրց. վասն ,, զի որ ջուր գիտէ այնպէս զտունկս աճեցուցանել և ,, պտղաւէտ և տերևաշատ առնել՝ ո̃ց ընթերցուածք ,, տ̃ծային գրոց զմիտս ‖ ։ Իսկ որք ոչ ունին փոյթ ընթեռնլոյ և խորհելոյ՝ ոչ կարեն աճել յառաքինութիս, և ոչ վարիլ ըստ օրինացն ա̃յ. զի թէ որք միշտ խորհին և քննեն՝ վրիպին 'ի բազումս, ապա որչափ ևս նք՝ որք անփոյթքն իցեն. վասն զի 'ի պակասիլ այսպիսի խորհրդոց՝ * մարմին եղծանելի ծանրացուցանէ զհոգի. և հակէ հողեղէն յարկ զմիտս բազմահոգս ‖. իմաստ. Թ. 15 ։

Յասելն ասա՝ * 'ի տուէ և 'ի գիշերի ‖, Առաքս տիւ և գիշեր՝ կարեն փոխաբերաբար ևս մեկնիլ 'ի վերայ յաջողութե̃ և ձախորդութե̃. զի որովհետև յաջողութիւն երևի իբր պայծառ և զուարճալի, 'ի տիւ այլաբանի ։ Իսկ ձախորդութիւն որովհետև թուի իբր մթին և տրտմագին, գիշերոյ նմանի ։ Արդ այր բարի թէ 'ի յաջողութե̃, և թէ 'ի ձախորդութե̃ հայի և խորհի յօրէնս ա̃յ. և ըմ̃ կարգաւորէ զինքն, և ոչ ըստ ախորժանաց սրտի իւրոյ. ապա թէ ոչ, անտարակոյս վրիպի յօրինացն ա̃յ և յուղղուէ վարուց ։ Զի սիրտ մարդոյ 'ի յաջողութիւն՝ երբեմն զա̃ծ մոռացեալ, և երբեմն զտկարութե̃ անձին անփոյթ եղեալ, գործէ ընդդէմ օրինացն ա̃յ ։ Նմանապէս և 'ի ձախորդութիւն դառնացեալ դժուարի կատարել զօրէնսն ա̃յ ։ Այս պատճառն է, զի կեանք մեր 'ի բանէն կառավարի՝ ա̃յ 'ի տրամաբանօղ միաց. իսկ յաջողութիւնք և ձախորդութիւնք 'ի զգայական ախորժական ուժգին աղ-

դելով պղտորեն զնոյն · և 'ի պղտորմանէ նոցին բազում անգամ բանն ևս պղտորեալ՝ ոչ կարէ ուղիղ կառավարել զընթացս կենաց ։ Ուրեմն պիտոյ է, զի հոգին յայնպիսի ժամանակս յառեսցի յօրէնս ա̃յ · և այնմ համաձայնեցուցանելով զբան իւր՝ ուղղեսցէ զգործսն ։ Նա զայս առաւել ևս պարտին առնել երիտասարդք · զի 'ի նոսա առաւել տիրէ պղտորումն · զորմէ տես 'ի սաղ · ճժը · 9 ։

Նշանակէ մեծն խոսրով 'ի մեկն · ժամերգ" · երես · 57 · թէ յայս ակնարկէ քարոզն * վասն 'ի գիշերի և 'ի տունջեան ‖ · և գրէ այսպէս · եկեղեցի սուրբ * բաղձացեալ սաղմոսերգողին երանութեանցն բաժանորդ ,, լինել, խրատէ քարոզն՝ զի տացեն յա̃յ այս շնորհք՝ ,, յօրէնս տեառն խորհիլ զտիւ և զգիշեր, և զնոյն խօ- ,, սիլ ‖ ։ Ըստ որում ազդ արար և նա ինքն ա̃ծ, ասելով · * խոկասցիս 'ի դա 'ի տուէ և 'ի գիշերի ‖ · յեսու · ա̃ · 8 ։

Հնար է ևս հեռապէս իմն մեկնել զայս բան 'ի վերայ ժամանակի կենաց և մահու · որովհետև կեանքն նմանի տունջեան, իսկ մահն գիշերոյ ։ Արդ արդարն 'ի կեանս և 'ի ժամ մահու՝ յառեալ ունի զաչս հոգւոյ իւրոյ յօրէնսն ա̃յ · որով կարէ 'ի կեանս իւր լուսաւորիլ, և 'ի մահու յոյս փրկութե̃ գտանել ։ Նա արդ՝ զայսպիսի այր, որ այսպէս հաճեալ է ընդ օրէնս ա̃յ, և 'ի նոյն խորհի հանապազ, տես թէ որում իրի նմանեցուցանէ մարգարէն ։

Եւ եղիցի նա (ասէ) որպէս ծառ, որ տնկեալ է 'ի գնացս ջուրց ։ Ծառն 'ի տնկիլ ուրեք՝ ձկտէ 'ի խորս զարմատս իւր, և 'ի նմին հաստատի · և ձգեալ յինքն զխոնաւութի̃, մնայ դալար · և եթէ մօտ կենդանի ջրոյ իցէ տնկեալ, առաւել ևս՝ և դիւրաւ ձգէ զայն խոնաւութի̃ ։ Այնպէս և որ հաճի ընդ օրէնս ա̃յ, գրեթէ ո̃պ ծառ տնկի 'ի նմին ։ Նա ըստ կրկին ներգործութե̃ց զօրանայ՝ ո̃պ ըստ կամելոյն և ըստ խորհելոյն · զի 'ի կամելն զայն կատարել՝ զյօժարութիւն իւր իբրև զարմատս բարեգործութե̃ ձկտէ 'ի նոյն · որով և հաստատի 'ի նմին · զի կամիլն առնել ինչ՝ է հաստատել զկամս իւր 'ի նոյն ։ Այնպէս և 'ի խորհելն միշտ զնմանէ՝ ձգէ միշտ յինքն զխոնաւութիւն նորա, ո̃պ

զքաղցր և զպայծառ ճաճանչումն ճշմարտութե՛ օրի-
նացն . որով և զալարմամբ 'ի հոգի իւր , ք՟ս արփանայ
և զուարթանայ . և յաճախէ 'ի գոհութիւս ա՟յ . * յօ-
,, րէնս տ՟ն են կամք առն արդարոյ ( ասէ մովսէս վար-
,, դապետ 'ի մեկն . ժամագր . երես . 169 . ) և յօ-
,, րէնս նորա խորհի 'ի տուէ և 'ի գիշերի . որով յաճա-
,, խէ միշտ 'ի գոհութիւն ‖ :

Նու՟քղի շնորհքն ա՟յ , որ կենդանի ջրոյ նմանի , զայս-
պիսիս խնդրէ 'ի լիացուցանել , և 'ի տալ գործել ըղ-
գործս ըստ օրինաց , յայսպիսի մարդ անտարակոյս
մերձ գտանի . որով և համարի նա տնկեալ 'ի գնացս
ջուրց , ք՟ս մօտ շնորհացն ա՟յ , և ընդունօղ նորին առա-
տապէս :

Նու ահա ըստ այսմ նմանութե՛ խօսելով դնէ մարգա-
րէն զայս բան ո՟չ թէ ասացեալ էր . այլ արդար նմա-
նեցի այնպիսի ծառոյ , որ իցէ տնկեալ 'ի գնացս
ջուրց . այս է՝ յայնպիսի տեղւոջ , ուր մօտ կայ ջուր
կենդանի , որ է ջուր գնայուն , թէ՛ գետ իցէ այն , և
թէ առու , և կամ անցք ջրոց ընդ երկրաւ : Իսկ այս-
պիսի ջրով ( որպէս ասացաք և ունիմք ասել այլուր . 'ի
սաղ . ի՟է . 2 : ) օրինակի շնորհքն ա՟յ . զոր մօտ իւր
ունի օրինապահն , և ըմպէ անտի հանապազ :

Ըստ յարմարական մեկնութեան ջրով իմացեալ լինի
աստ խրատ բարի , զոր ըմպէ այր առաքինի , և ըստ
ժամուն ցուցանէ զպտուղ խրատուն . յոր միտ ասէ
լուսաւորիչն մեր 'ի յաճախ . ճառ . Ե՟ . երես . 54 . * որ
,, զպտուղ իւր 'ի ժամու տացէ՝ եղև նա ո՟չ ծառ տըն-
,, կեալ 'ի գնացս ջուրց 'ի հոգևոր խրատս ‖ : Ըստ
վանական վարդապետ 'ի մեկն . յոբ . գլ . ի՟զ . ջրով
իմանայ զա՟ծեղէն իմաստութիւն ըստ դաւթայ քո-
բայրեցւոյ , յոռոգանել զտնկեալս ա՟մ . առ որում
մերձ կայ այր առաքինի :

Լամբրոնացին ո՟չ և վարդան , ջրով իմանան աստ զօ-
րէնս ա՟յ . և ըստ այսմ՝ նա որ զտիւ և զգիշեր խորհի
յօրէնս ա՟յ , համարի որպէս ծառ՝ որ տնկեալ է առ
վտակօք օրինացն ա՟յ . իբր զի այնպիսին միշտ զզօրու՟թի
օրինացն յինքն ձգելով զօրանայ և զուարճանայ . ո-
րով և ցուցանէ զարդիւնս գործոց բարեաց , որ է
երրորդ պահանջեալ հանգամանք լման օրինացն ա՟յ . և

զայս կամելով մարգարէին նմանութեամբ ծին յայտ առնել, յարէ զնոյն և ասէ ։

Դ. Որ զպտուղ իւր 'ի ժամու տացէ. և տերև նորա մի թափեսցի. և զա՟մ զոր ինչ արասցէ, յաջողեսցի նմա ։

Պտղատու ծառն յորժամ ըմպէ զխոնաւութիւն ջուրց, տայ զպտուղ իւր ըստ ժամանակի. սոյնպէս և հոգին յըմպելն զշնորհս և զզօրութիւն օրինացն՝ զորմէ խօսեցաւ այժմ մարգարէն, տայ զպտուղ իւր 'ի ժամու՝ կատարելով զօրէնս այ՟. յայս հայելով ասէ ։

Որ զպտուղ իւր 'ի ժամու տացէ ։ Զայ՟ հաճոյական գործս կատարեալս ըստ օրինաց նորա՝ պտղոյ ծառոց նմանեցուցանելով կամի յայտ առնել, թէ նա՝ որ ըստ գրելոյդ 'ի վերոյ՝ հաճեալ է ընդ օրէնս տեառն, և խորհի միշտ զնմանէ, և կամի կատարել զայն, անտարակոյս պտղաբերեսցէ, ըս՟ զպտուղ օրինացն ցուցցէ. որ է ասել. կատարեսցէ զայն. որով և հաճոյասցի այն իւրում իբրև զծառ բարի ։ Իսկ այսպիսի գործք բարիք՝ ըստ չորից նմանին պտղոյ ծառոց. Նախ՝ զի որպէս վն՟ պտղոյ է ծառն, և վասն այնր իսկ տուեալ են նմա արմատք, և զօրութիւնք ձգողականք ջուրց և հիւթոց, սոյնպէս և մարդս է վասն հոգևորական պտղոյ, գոլով կարգեալ առ գործս հաճոյականս այ՟, առ անվախճան երանութի. և վն՟ այսր իսկ տուեալ են նմա կամք և միտք և շնորհք. ապա թէ ոչ՝ լինէր 'ի համարի անասնոց, և վատթար ևս քան զնոսա ։ Զի նոքա զոր ինչ ունին՝ նոքիմբք առնեն զայն՝ առ որ կարգին. ապա և մարդն զոր ինչ ունի, պարտաւորի նոքիմբք առնել զայն՝ առ որ կարգի. և քանզի մարդն՝ (որպէս ասացաւ), կարգի առ կատարումն հաճոյիցն այ՟, և առ ժառանգութիւն յաւիտենական երանութե՟, զա՟մ զոր ինչ և ունի, ըս՟ զմիտս, զկամս, ևն՟, պարտ է կարգել առ այն՝ տալով զպտուղս, այսինքն կատարելով ըզգործս հաճոյականս այ՟, և արժանիս անվախճան երանութեան ։

Երկ՟ որդ պտուղ ծառոյն է՝ ընդ որ ուրախ լինի տընկող ծառոյն. զի տեսեալ զարդիւնս աշխատանաց իւրոց՝ մխիթարի նոքօք, սոյնպէս և բարի գործն է, ընդ որ հաճի այ՟, և որպէս թէ ցնծայ և ուրախ լինի և

մխիթարի նոսա․ Զի յայս միտ առէ նա ինքն ած բերանով եսայեայ․ * Ցնծացայց ՚ի վերայ երղմի, և „ ուրախ եղէց ՚ի վր ժողովրդեան իմոյ ‖․ եսայ․ կե․ 19․ և այս վն ծառայելոյ նոցա այ․ ըստ որում յիշէ անդ մարգարէն ՚ի համարն․ 13, և 14․ Ի սոյն միտս երկզաբար կարէ իմացեալ լինել և այն, թէ աստուած * ՚ի ծառայս իւր մխիթարեսցի ‖․ տր բերկրեսցի՝ յորժամ տեսցէ զբարի գործս նոցա․ բ օրին․ լբ․ 36․ Բայց թէ զորին հակառակն, բարկասցի, և արհամարհեսցէ, և հրաժարեսցէ ևս հատանել․ որպէս յայտ է յառակէ անտի անպտուղ թզենւոյն․ զորմէ գրի ՚ի ղուկ․ ժգ․ 7․

Արդ՝ որպէս ՚ի պտուղն հասարակորէն կայ սերմն, յորմէ կարեն ընծայիլ բազում նոյնատեսակ պտուղք, սոյնպէս և ՚ի գործս բարիս կայ սերմն, յորմէ կարեն ընծայիլ նոյնատեսակ բարի գործք բազումք․ զի ՚ի գործելն զբարիս՝ սկսանի ծագիլ ՚ի հոգին սովորութիւն ինչ․ և կամ պատրաստութիւն զնոյն կրկնելոյ․ և ՚ի կրկնելն բազում անգամ՝ տպաւորի ՚ի նմա բարի ունակութիւն․ որով հոգին դիւրաւ յօժարի զնոյն գործ յաճախել, մանաւանդ ՚ի ժամու իւրում․ Զի ևս՝ կայ ՚ի գործս անդ սերմն յաւիտենական վարձուց, զոր ընդունի հոգին ՚ի ժամանակի իւրում․

Արդ ըստ ծործորեցւոյն ՚ի մեկն․ մատթ․ գլ․ է․ որպէս պտուղն կախեալ զճիւղից՝ երևելի ընծայի, և զծառն պանծալի ցուցանէ, սոյնպէս գործ բարի երևելի ընծայի, և զանօղն պատուական և յարգոյ ցուցանէ ևս և առաջի չարաց․

Այլ աստ զննել արժան է, զի մարգարէն ՚ի նմանեցուցանելն պտղոյ զբարի գործս մարդոյ, ոչ առէ սոսկ, տացէ զպտուղ, այլ՝ * զպտուղ իւր ‖․ որով յայտ առնէ, թէ խօսի աստ ոլորպէս զայն պտղոյ՝ զորս արդարն տայ յինքեան, և ոչ թէ յայլս ևեթ․ վն զի կան բազումք, որք թէպէտ և հաճեալ ը օրէնս այ՝ խորհելն զնմանէ, բայց ոչ վասն անձանց իւրեանց, այլ վասն այլոց․ ուստի և ոչ տան զպտուղ իւրեանց, այլ զայլոց․ թէպէտև այն հազիւ երբէք․ որպիսի են ոմանք ՚ի քարոզչաց և ՚ի վարդապետաց․ որք թողեալ զինքեանս անպտուղ՝ այլոց զպէն բանիւ կամ

գրով. և 'ի նոցունց պահանջէին զայն, զոր պարտ էր
նախ ինքեանց առնել, և ապա յայլոց պահանջել.
Այս ոքս յայսպիսիս միայն զգրագէտս ոչ միայն ոչ
տան զպտուղ իւրեանց, այլև զանձինս կորուսանեն
երբեմն.

Զայս ասելով ոչ եթէ զգործ քարոզութեան կամ հոգևոր
մխիթարութեան կամիմ արհամարհ ցուցանել. քաւ լիցի.
այլ թէ պարտ է նախ զփրկութիւն անձին հոգալ, և
ապա զայլոց. քանզի * Զինչ օգուտ է մարդոյ, եթէ
,, զաշխարհ շահեսցի, և զանձն իւր կորուսցէ, կամ
,, տուժեսցի || . ղուկ . Թ . 25 . * կամ զինչ տացէ մարդ
,, փրկանս ընդ անձին իւրոյ || . մատթ . ԺԶ . 26 . Այլ
եթէ փութով փրկութեան անձին՝ կամիցին և զայլս կե-
ցուցանել, 'ի տալ այլոց զպտուղ՝ նոյնն ևս հաղոր-
դին, և համարին տալ զպտուղ իւրեանց. որով և մե-
ծի վարձուց լինին արժանի. զի * որ արասցէ և ու-
,, սուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից || .
մատ . Ե . 19 .

Յաւէտ ասէ՝ * 'ի ժամու տացէ || զպտուղ իւր, 'ի մէջ
բերի և պատեհաւորութիւն ժամուն՝ թէ յայնմ ժա-
մու տացէ, յորժամ ժամանակ է տալոյ զպտուղ գոր-
ծոց բարեաց. յոր միտ յեբր. դնի, 'ի ժամանակի իւ-
րում. Այդ՝ ժամանակ տալոյ զպտուղ բարի գործոց
կենդանի կարէ մնալով. մի՝ ընդհանրապէս. ըստ ցուցանի
'ի ձեռս է ժամանակ տալոյ կենաց. ըստ, * մինչդեռ
,, ժամանակս 'ի ձեռս է, գործեսցուք զբարիս || .
գաղ . Զ . 10 . մինչև ոչ ունիլ մեզ ժամ, յորում ար-
ժան իցէ ոչ տալ զպտուղ բարի գործոց. զի ոչ գի-
տեմք, թէ յորում ժամու գայ պահանջօղ պտղոյն.
վասն զգուշացուցանէ զմեզ տէրն. * և դուք ասէ եղի-
,, րուք պատրաստք. զի յորում ժամու ոչ ակն ունի-
,, ցիք, գայ որդի մարդոյ || . մատթ . ԻԴ . 44 . Այլ ե-
թէ եկեալ գտցէ զմեզ անպտուղ, դուցէ չորացու-
ցէ. որպէս արար ընդ թզենին, որ և 'ի տարաժամու ան-
պտուղ գտեալ՝ անկաւ ընդ անիծիւք, և չորացաւ.
( մարկ . ԺԱ . 13 . )

Այլ եթէ ասիցէ ոք, զիարդ կարեմք տալ զպտուղ
հոգևոր, յորժամ ծառայեմք պիտոյից մարմնոյ. որպէս
յորժամ ննջեմք, ուտեմք, աշխատիմք, եւն. Պատաս-

խնամեմ. այգորին եւ հանապազ բարի պտուղք հա֊ճոյք Այ, եթէ բարեաց լինիցին. զի առ այն վախճան, առ որ կարգին յԱյ. եւ այնպէս, որպէս պարտին լինել. Արդ՝ ած առ այս վախճան կարգեալ է զայս ամ, զի տեսօք կենդանի մնալով կարասցուք կատարել զհա֊ճոյս նորա. ուստի ոչ միայն չարգելու ած, այլ կամի՝ զի ըստ չափու պահանջման կենդանութե մերոյ՝ կերի֊ցուք, ըմպեսցուք, ախտանեսցուք, եւ զամ պիտոյս մեր առցուք ՚ի փառս նորա, զի ՚ի կատարումն հաճոյից նորա, ամ զի նա փառաւորեսցի. առ որ յորդորէ զմեզ առաքեալն ասելով. * Եթէ ուտիցէք, եթէ ըմպի֊
„ ցէք, եթէ զինչ եւ առնիցէք, զամ ՚ի փառս Այ ա֊
„ րարջիք‖. ա. կոր. ժ. 31. Զսոյն կրկնէ եւ այլուր. կողոս. գ. 17.

Երկդ՝ ժամանակ տալոյ զպտուղ բարի գործոց կշռի ՚ի մանաւորի. այս է՝ ըստ առթին դիպելոյ. իբր զի յորժամ դիպի ումեք առիթ պտուղ տալոյ, զայն֊պիսի տացէ պտուղ, որ այնմ առթի համեմատեսցի. Զոր օրինակ, յորժամ ժամ է աղօթելոյ, առիթ ընծայի տալոյ զպտուղ աղօթից. յորժամ ժամ է օգնելոյ ընկերին, առիթ ընծայի տալոյ զպտուղ սի֊րոյ. յորժամ ժամ է կրելոյ զնեղութիւն ինչ, առիթ ընծայի տալոյ զպտուղ համբերութեան. եւս. Այնպէս եւ յորժամ փորձի ոք բարկութեամբ, առիթ ընծայի նմա տալոյ զպտուղ հեզութե. յորժամ փորձի ոք տրտ֊մութբ սրտի, առիթ ընծայի նմա տալոյ զպտուղ հո֊գեւոր ուրախութե. յորժամ փորձի ոք աղտեղի խորհր֊դովք, առիթ ընծայի նմա տալոյ զպտուղ սրբութեան. Նոյնպէս խնա եւ վասն այլոց. յորս եթէ ոչ հեղգասցի մարդ տալոյ զպտուղ, իրաւամբք առի զնմանէ, թէ զպտուղ իւր ՚ի ժամու տայ.

Ն. յայլխս տացէ, մանաւանդ թէ առնուցու յԱյ՝ եւ զցանկալի պտուղն ՚ի ժամու մահուան՝ զվարձս գոր֊ծոց իւրոց՝ իբրեւ զվերջին պտուղ. եւս եւ առնուցու յանկէտ ժամու յաւիտենականութեան զամենազուարճ փափկութիւն երանութեն յարքայութե երկնից. Նմլ թէ այսպիսի ծառ զորպիսի տերեւ ունիցի, եւ զխարդ, առաջի առնէ մարգարէն՝ ասելով.

Եւ ժէշէ Նոշո Վ Բոֆէոշէ. Տերեւալ չորս ինչ կարէ

այլաբանիլ ասա․ Մի՛ համապարզութեան անմեղութիւն, կամ անչարութիւն․ զի որոց կամի ասել․ անմեղութիւն արդարոյն, որ նմանի ծառոյ անկելոյ՛ի գնացս ջուրց, մի չորասցի, եւ մի թափեսցի․ զի թէ չորանայր, թօթափէր որպէս տերեւ։ Այս մեկնութիւն կարի իմն անհոգի է, զի յոյժ սակաւ գտանին այսպիսի ծառք, որք երբեք ոչ չորացան․ նաեւ սոյն իրքն, որ զայս ասէ՝ երանելին Դաւիթ, որ եւ եղեւ պատճառ իմն ծառ անկեալ՛ի գնացս ճորհաց, պատրաստ առ ամ կամս այ՝ վկայեալ՛ի նմանէ՝ այր ըստ սրտի նորա, չորացաւ երբեմն մահացու մեղօք, եւ եկաց ըստ ոմանց գրեթէ զամ մի՛ի նմին չորութեան։ Սակայն այս մեկնութիւն ոչ կարէ այլազգ ճշմարտիլ, բայց եթէ վերացուսցուք զկեանս արդարոյն յայսպիսի պատահական չորութենէ․ եւ նկատեսցուք առանձինն, առանց խորհելոյ զայն չորութիւն։

Երկրորդ՝ տերեւով խնդեալ լինի ասա համապարզութեան ուրախութիւն արդարոյն, ըստ որոյ կամի ասել, թէ արդարն միշտ ուրախ կայ, եւ ուրախութիւն նր ոչ թառամի։ Եւ այս նմանութիւն կարի իմն վայելչութեամբ ընծայի ուրախութեան արդարոյն․ զի ըր ծառն՝ յորժամ տերեւալից է, ուրախ երեւի․ եւ՛ի թօթափիլ տերեւոյն տրտում համարի, այնպէս եւ՛ի կալ արդարոյն միշտ ուրախ, վայելչութեամբ ասի, թէ ուրախութիւն նր ոչ թառամի, ոչ յամարան եւ ոչ՛ի ձմերան․ եւ ոչ՛ի յաջողութեան եւ ոչ՛ի ձախորդութեան, զի թէ եւ հասցեն՛ի վերայ նր փորձութիւնք մարմնոյ, ցրտութիւնք սրտի, ցամաքութիւնք հոգւոյ, եւն, յայնժամ եւս ուրախ կայ․ ըր է տեսանել յոմանս՛ի ծառոց, որք ըստ տերեւոյն եւս մնան դալար՛ի ժամանակի ձմերան․ որպիսի են ձիթենիք, դափնիք, արմաւենիք, եւ այլք եւս՛ի խնկաբեր ծառոց։ Այլ եթէ վրիպեսցի ինչ արդարն ըստ մարդկային տկարութեան, ապաւէն ունելով զանբաւ ողորմութիւնն այ, եւ զարդիւնս չարչարանացն քի՝ խոկոյն նորոգի ապաշխարութեամբ․ եւ մնայ ուրախ, եւ ցնծայ՛ի փրկութեան տեառն։

Երրորդ՝ տերեւով խնդեալ լինին ասա թեթեւ բարեգործութիւնք արդարոյն, թէ՛ ներքինք եւ թէ արտաքինք։ Ըստ որոյ ասել, թէ նաեւ այսպիսի թե-

թէ գործք արդարոյն ոչ թափեսցին, այսինքն ոչ խոտե-ցին յա̄յ իբրև անպիտան ինչ։ Իսկ սոքին յայն սակս տերևոց նմանին, զի եթէ ներքինք են, համեմատու-թ̄ք պտղոյն, ո̄ր այլոց մեծամեծ գործոց՝ թեթև իմն համարին իբրև զտերև. թէպէտ և մեծաց վարձուց լինին արժանի։ Իսկ եթէ արտաքինք են, համեմա-տութ̄ք ներքնոյն՝ թեթև իմն են. և իբրև արտաքին զարդք, որպէս տերևքն են զարդք ծառոց։

Չորրորդ՝ տերևով իմացեալ լինին նաև անզանազան գործք, կամ բանք արդարոյն. ո̄պ գնալ, ննջել, հա-ցալ, շունչ առնուլ, խօսիլ, և այլն. զի սոքա ևս ոչ հա-մարին անպիտան առաջի ա̄յ, և ոչ խոտին ՚ի նմանէ. զի որովհետև արդարն է որդի ա̄յ, և կայ ՚ի շնորհս ա̄յ, յամենայն իրս, ևս և յանզանազանս՝ առաջնորդի, ուղղի, վարի, և գործէ հոգւովն ս̄րվ՝ կամ յայտնի, և կամ լռելեայն. և այսու ա̄մ գործք նորա յառաջ գա-լով ՚ի գործակցութենէ հոգւոյն ս̄բյ՝ լինին հաղորդ ար-դեանցն ք̄սի. որով և համարին յարգոյ առաջի աստուծոյ, և ոչ իբրև թօթափելի ինչ։

Այսպիսի անզանազան գործք և բանք արդարոյ՝ ա-ռաջի մարդկան ևս ոչ համարին անպիտան. զի տեսա-ղայ և լողայ շինութիւն տան, կամ խնամս բարի ըն-ծայեն. վ̄ոյ այսպիսի տերևք նոցա ոչ թօթափին, ո̄ր ոչ նանրանան։ Այլ արդ՝ եթէ անզանազան գործք ար-դարոյն այսպիսի համարին առաջի աստուծոյ և մարդկան, քանի՞ ևս բարի գործք նորա, թէ և փոքր իցեն և թե-թև։ Եւ զի այսպիսի գլին գործք նորա, վասն որոյ և յամենայնի յաջողեալ տեսանին. սմին իրի յաւելու մարգարէն, և ասէ։

Եւ ա̄մ զոր ինչ արասցէ, յաջողեսցի նմա։ Այսինքն ա̄մ գործք արդարոյն՝ թէ ներքինք և թէ արտաքինք, յաջող են, և յաջողեսցին նմա։ Եւ այս թէպէտև երևի անհաւատալի՝ մանաւանդ ամպարշտաց, բայց ճշմարիտ է ամենևին, և նոցին իսկ դիւրահաւատա-լի։ Վասն զի մարդիկ յաջողիլ ասելով՝ ոչ այլ ինչ իմա-նան, բայց եթէ զայս, զի զոր ինչ կամին, նոքին կա-տարին. ո̄ր ժամանեն ՚ի վախճանն, զոր դիտեն. մա-նաւանդ եթէ այն վախճան իցէ շահաւէտ. այսպիսի է առ հասարակ կարծիք մարդկան, նաև ամպարշ-

տաց իսկ. վս՟ և բազում անգամ փոխանակ ասելոյ, զոր ինչ կամէի եղև՝ ասեն, յաջողեցաւ ինձ՝ զոր կամէի. կամ թէ հասի 'ի վախճանն՝ զոր դիտէի։ Իսկ արդ՝ ա՟մ գործք՝ զորս գործէ արդարն, լինին այնպէս՝ որպէս նա կամի. կամ այսինքն ասացից, ժամանեն 'ի վախճանն, զոր նա դիտէ. ուրեմն ա՟մ գործք նորա յաջողին, և յաջողեսցին նմա։

Իսկ թէ յիրաւի ամենայն գործք արդարոյն ժամանեն 'ի վախճանն, զոր նա դիտէ, յայտ է. զի վախճան նորա, կամ այն՝ զոր դիտէ, է առնել զայն ինչ՝ որ իցէ հաճոյ աստուծոյ, միանգամայն և արժանի երկնային վարձուց. արդ՝ ա՟մ գործք նորա՝ որպէս յայտ է 'ի վերոյգրելոցդ, հաճոյ են ա՟յ, և արժանի վարձուց։ Այլ և՝ արդարն ընդ այն միայն հաճի, ընդ որ հաճի ա՟ծ. և զրեթէ միացեալ է հաճութիւն նր՟ա ընդ հաճութեան կամացն ա՟յ։ Իսկ արդ՝ հաճութիւն ա՟յ միշտ կատարի և յաջողի յայնմ, որ հաճեալ է ընդ կամս ա՟յ, ուրեմն այնու յաջողութբ՟ յաջողի միշտ և հաճութիւն արդարոյն։ Այլ դարձեալ արդարն ունի ինքեան յանձի առաջնորդ զանսահման իմաստութիւն ա՟յ, և զամենակարող զօրութիւն նորա. որում յանձն արարեալ զամենայն զկեանս իւր՝ բարի համարի զայն ամենայն զոր նա կամի և առնէ։ Արդ՝ եթէ ոք առաջնորդեսցի մարդկային տկար իմաստութբ՟ և զօրութբ՟, յուսայ յաջողութեան պատահիլ. ապա զիարդ ոչ պատահեսցի յաջողութեան նա, որ առաջնորդի ա՟ծային իմաստութեամբ և զօրութբ՟. թէպէտև ոչ այնպիսի յաջողութեամբ՝ զոր ամպարիշտք խնդրեն, այլ զոր ա՟ծ կամի և խնդրէ։ Այլ և՝ ըստ լամբրոնացւոյն՝ ամենայն առաքինական գործք արդարոյն յաջողին նմա. վասն զի յետ վարժելոյ նորա 'ի նոյնս՝ դիւրաւ և յաջողապէս կատարին։

Այլ աստ գիտելի է, զի այս երեք տունք սաղմոսաց, եթէ ըստ ա՟մի անվրէպ և ճիշդ կշռեսցին միայն քսի յարմարին, ըստ որում է մարդ։ Նախ՝ զի 'ի վայրկենէ յղութեան իւրոյ եղև երանեալ տեսութբ՟ ա՟ծային էութեան, ընդ որում միաւորեալ էր բանական հոգի նորա։ Երկրորդ զի եղև ամենևին անմեղ. և ոչ երբէք կարէր գնալ ըստ խորհրդոց ամպարշտաց, ևն՟։ * Ո 'ի այնպիսի իսկ վայել էր մեզ քահանայապետ, անմեղ,

„ անարատ , զատեալ՚ի մեղաւորաց , և բարձրացեալ
„ քան զերկինս ‖ . եբր . է . 26 ։ Որպէս և ինքն ասէր .
* Ո՞՚ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց ‖ . յովհ .
ը . 46 . և թէ՛ * գայ իշխան աշխ̃ս այսորիկ , և յիս
„ ինչ ոչ գտանէ ‖ . յովհ . ժդ . 30 ։ Երրորդ՝ զի կամք
նորա միշտ յօրէնս հօր իւրոյ էր . զայն խորհէր , և զայն
առնէր . ըստ որում ասէր ։ * Իջի ես յերկնից՝ ոչ զի ըզ-
„ կամս իմ արարից , այլ՝ զկամս այնորիկ , որ առա-
„ քեաց զիս ‖ . յովհ . զ . 38 ։ և թէ՛ * ես զհաճոյս
„ նորա առնեմ հանապազ ‖ . յովհ . ը . 29 ։ Չորրորդ՝ զի
եղև այնպիսի ծառ , զորմէ արձակապէս և ըստ ամենայնի
ասի բարի , և ամենայն գործք նորա բնաւ են պտուղ բարի .
որպէս ընդ հակառակն արձակապէս չար ասի սատանայ .
և գործք նորա պտուղ չար ։ Ուստի մեկնելով ծործո-
րեցւոյն 'ի մատ . ժբ . զբան տեառն՝ զոր ասաց . * ծառ
„ բարի պտուղ բարի առնէ եւն ‖ . գրէ այսպէս . * ծառ
„ բարի զինքն անուանէ ըստ դաւթի , և պտուղ բարի
„ զգործս բարիս՝ որ'ի ժամու տացէ . իսկ ծառ չար
„ զսատանայ կոչէ , և պտուղ չար զգործս չարութեան ‖ ։
Եւ այսմ հետևեցուցանէ ասելով . * արդ որ ըստ
„ տեառն կենցաղավարի՝ զի առնէ և ուսուցանէ , ճշմար-
„ տապէս ծառ բարի է , և պտուղ բարի առնէ՝ հա-
„ ւասարելով տեառն . իսկ որ չարութ̃բ գնայ , և չարեաց
„ լինի վարդապետ , ծառ չար է՝ 'ի չարն արմատացեալ
„ գործովք իւրովք ‖ ։ Հինգերորդ՝ զի տնկեալ էր յաղ-
բերն անսահման ջուրց ա̃ծութեան . իբր զի մարդկու̃ի
նորա գոյացապէս միաւորեալ էր ընդ ա̃ծութեանն յանձին
բանին . վ̃ն և լիացեալ էր ա̃ծութ̃բ , և զա̃մ հոսանս
լիութեան շնորհաց ունէր'ի հոգի իւր . * զի'ի նմ̃ բնա-
„ կէ ա̃մ լրումն ա̃ծութեան մարմնապէս ‖ . կողոս . բ . 9 ։
Վեցերորդ՝ զի ա̃մ գործք նորա՝ մինչև քթթել մի ա-
կանն ևս՝ ըստ ա̃մի հաճոյ էր հօրն՝ անսահման արժողու-
թեամբ ։ Եօթներորդ՝ զի զա̃մ, զոր ինչ և կամէր և առ-
նէր , բացարձակապէս յաջողէր նմա ։

Դարձեալ՝ այս բանք , բաց 'ի ք̃նէ՝ կարեն յարմարա-
կան մեկնութեամբ վայելչապէս վերաբերիլ առ ս̃ր ա̃ծա-
ծինն ։ Նախ՝ զի նա միայն եղև 'ի կանայս տիրապէս
երանեալ . ուստի և արժանապէս ասաց . * Յայսմ
„ հետէ երանեսցեն ինձ ա̃մ ազգք ‖ . ղուկ . ա . 48 ։

Երկրորդ՝ զի յամի անարատ զտաւ 'ի մեղաց, ևս և 'ի սկզբնականէն՝ և 'ի ներելեաց․ ըստ այնմ, * Ամենևին գեղեցիկ ես . . . . և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ ‖ ․ երգ․ դ․ 7 ։ Երրորդ՝ զի այնչափ հաճեցաւ ընդ օրէնս այ, մինչև բոլորովին 'ի նմա բնակեցաւ լրումն օրինաց քնի ։ Չորրորդ՝ զի իբրև խնկաբեր ծառ միշտադալար տնկեցաւ 'ի դրնացս ջուրց շնորհաց․ ըստ այնմ, * Զի գտեր շնորհս յայ ‖ ․ ղուկ․ ա․ 30 ։ Հինգերորդ՝ զի ետ 'ի ժամու զպտուղն կենաց զքն․ և յայս միտ երգէ եկեղեցին 'ի շարականի․ * Ծառատունկ խնկաբեր ծառ յանուշահոտ բու-
,, րաստանէն, որ 'ի գնացս հոգւոյն վտակաց տնկե-
,, ցար․ և զանմահութեան պտուղն 'ի ժամու ետուր մեզ ‖ ։
Ասացի 'ի վերոյ, եթէ ընդ ամի անվրէպ և ճիշդ կշռեսցին այս բանք, քանզի այնպէս՝ զի ոչ երբէք լիցի վրիպումն գտանել 'ի ներելի մեղս․ և ամենևին տերև մի ևս գործոց մի թափեսցի, այլ՝ յամի անարատ պահեսցի, ևայլն ։ Զի յայտ է՝ թէ զայսպիսի կեանս ունել միայն քնի էր, և ամածնի ևս՝ վասն լինելոյ նորա մայր այ ։ Իսկ յարդարս առ հասարակ լինին երբեմն վրիպմունք ինչ մեղաց․ զի ով 'ի մարդկանէ որ զտաւ 'ի մեղաց․ կամ ընդ յոբայ ասացից, * ով իցէ որ յաղտոյ (մեղաց), այլև
,, ոչ ոք․ թէպէտև միոյ աւուր իցեն կեանք նորա 'ի վր
,, երկրի ‖ ․ յոբ․ ժդ․ 4 ։ Որպէս և իրաւամբք ասաց յովհաննէս․ * Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք
,, ոչ ունիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն 'ի
,, մեզ ոչ գոյ ‖ ․ ա․ յովհ․ ա․ 8 ։

Եւ սակայն՝ որպէս յայտ է 'ի վերոյգրելոցդ, մարգարէն զբանս իւր վերացուցանէ յայսպիսեաց, և այնպէս խօսի աստ․ գիտելով՝ թէ այսպիսի վրիպմունք գոլով գրեթէ ակամայ, և կամ 'ի տկարութենէ սահական բնութեան մարդոյ, ոչ որոշեն զմարդն յայ և յերանութէ․ և եթէ կամօք ևս գործեսցին, և որոշեսցեն յայ, և չորացուսցեն, ջնջին ապաշխարութեամբ 'ի ձեռն արդեանցն քնի․ որով և նորոգի արդարն, և ոչ ևս յիշին յանցանք նորա ։ Աստի և ընդ նկարագրին՝ վասն այսպիսի արդարոյ խօսի աստ մարգարէն․ որպէս և յայտնի երևի 'ի կարգէ բանին ։ Արդ՝ յետ խօսելոյ մարգարէին զերանութենէ արդարոյ՝ յառաջ բերէ այժմ և զկեանս ամպարշտաց․ և բաղդատեալ զայն ընդ

կենաց արդարոցն՝ յայտնի առնէ զորպիսութիւն և զթշուառութիւն նոցա. և նախ ասէ.

Դ. Ոչ այդպէս են ամպարիշտք՝ և ոչ այդպէս. այլ որպէս հողմ փոշոյ, զոր հոսէ 'ի վերայ երեսաց երկրի.

Աստանօր կրկնումն բառիցս՝ ոչ այսպէս են, և ոչ այսպէս՝ յայտ առնէ զմեծ իմն ստուգութիւն ասացելոյն. զի յամ՛ լեզուս կրկնումն բառից ցուցանէ ըզ-սաստկութիւն ինչ և զստուգութիւն. որպէս ասէն, ամէն ամէն ասեմ ձեզ. այո այո տեսին աչք մեր. օրհնելով օրհնեցից զքեզ. ունել ունէր, ևն, ցուցանէ զառաւելութիւն ստուգութեան. ոմն հաստատէ և ծործորեցին 'ի մեկն. մատ. գլ. իե. ասելով. * երկիցս „ կրկնելն՝ զստուգութիւն իրացն ասէ ||. կամ զհաստատութիւն իրին, ուստի ասէ սարգիս շնորհալի, 'ի մեկն. ա. պետ. ե. 14. Նա. ժբ. * կրկին ասե„ լովն՝ զհաստատութիւն իրին նշանակէ ||. կամ զսաստկութիւն եղանակի գործելոյն յայտնէ : Ուստի և տեսիլք իսկ՝ որք երկիցս եղեն 'ի սուրբ գիրս՝ զայն յայտնէին. վասն և յովսէփ 'ի մեկնել զերազն փարաւոնի՝ ասաց. * Այլ վասն կրկնելոյ երազոյն փարաւոնի եր„ կիցս անգամ (այս է պատճառն.) զի ճշմարիտ է „ բանն առ յայ ||. ծնն. խա. 32 : Եւ ըստ այսմ կամելով մարգարէն սաստիկ և ստոյգ ցուցանել զբան իւր՝ ասէ.

Ոչ այդպէս են ամպարիշտք, և ոչ այդպէս : Կամի ասել. աւասիկ տեսէք զվիճակ և զհանգամանս արդարոյ՝ թէ որպէս է. իսկ եթէ հայեսցիս յամբարիշտս, այլազգ գտցես զնոսա. զի նոքա ոչ են այսպէս, և յիրաւի ոչ. որ է ասել՝ չունին ինչ նմանութիւն ը արդարոյ. զի որոց իրաց նմանին արդարք, նոցին ներհակացն նմանին ամպարիշտք. որպէս տեսանի յառաջիկայ օրինակդ՝ զոր բերէ յասելն.

Այլ որպէս հողմ փոշոյ՝ զոր հոսէ 'ի վերայ երեսաց երկրի : Որպէս զարդարոյն նմանեցոյց ծառոյ, նոյնպէս և զամպարիշտս նմանեցուցանէ փոշւոյ հոսելոյ 'ի հողմոյ. ըստ որոյ կամի ասել. որպ հողմն տարաբերեալ ցրուէ զփոշին 'ի վերայ երեսաց երկրի, նոյնպէս և փորձութիւնք և դիպուածք զամպարիշտս իբրև զփոշիս :

Եւ այս նմանութիւն, որով ամպարշտաց համեմատի փոշւոյ, բարւոք ևս փայլէ 'ի նմանութենէ անտի, որով արդարն համեմատի ծառոյ. և այս՝ բազում օրինակաւ: Մի՝ զի ծառն ձգէ զարմատս իւր 'ի խորս. իսկ փոշին կայ յերեսս երկրի. և ոչ միայն ընդ հողոյ, այլ՝ որպէս թէ արտաքոյ նոր է: Այնպէս և արդարն ձգէ զարմատս յօժարութեան իւրոյ յօրէնս ա̃յ և 'ի հոգևոր իրս. իսկ ամպարշտաց արտաքոյ կայ օրինաց, և յարտաքին բարիս միայն յարի. և եթէ ունիցի ևս զօրէնս, ոչ ձգտէ զյօժարութիւն իւր 'ի պահել զայն:

Երկրորդ՝ ծառն միշտ խոնաւ կայ. իսկ փոշին՝ չոր: Այնպէս և արդարն միշտ խոնաւ կայ ջրով շնորհաց. իսկ ամպարշտաց զուրկ գոլով 'ի շնորհաց՝ կայ մեղօք չորացեալ:

Երրորդ՝ ծառն է կենդանի. իսկ փոշին անկենդան: Այնպէս և արդարն կենդանի է շնորհօք հոգւոյն ս̃բ. իսկ ամպարշտաց՝ անկենդան և մեռեալ մեղօք:

Չորրորդ՝ ծառն ծաղկի և տայ զպտուղ իւր 'ի ժամու. իսկ փոշին ոչինչ պտուղ բերէ: Այնպէս և արդարն ծաղկի բարի խորհրդովք, և տայ զպտուղ իւր 'ի ժամու. իսկ ամպարշտաց կայ անպտուղ:

Հինգերորդ՝ ծառն զոր ինչ և ունի՝ ամփոփեալ է 'ի նոսին, և ընդ իւր ունի միացեալ զն̃ա. իսկ փոշին բաժանեալ է յինքեան: Նոյնպէս և արդարն զա̃մ գործ իւր ժողովեալ ունի առ ինքն և առ մի վախճան, ևս և ընդ այլոց սիրով միացեալ. իսկ ամպարշտաց բաժանեալ է յիւրմէ 'ի զանազան իրս և առ զանազան վախճան. բազում անգամ և ոչ յինքեան է, այլ՝ յայն, որ տարանջատ է յիւրմէ. եթէ ուրեք գտանես զամպարշտաց՝ զմիտս նորա գտանես 'ի վաճառս, 'ի խրախճանս, 'ի զարդս, և 'ի բերանս այլոց, և կամ ևս յաղբևս գարշ մեղաց:

Վեցերորդ՝ ծառն յերկինս 'ի վեր ամբարձեալ ունի զինքն և զա̃մ ոստս իւր. և միայն զարմն իւր արմատովք յերկրի՝ առ անդոյ անտի զսնունդ. իսկ փոշին յերկիր 'ի վայր ունի զինքն. զի թէ և հողմով վերասցի, դարձեալ 'ի նոյն բերի: Այնպէս և արդարն զինքն և զա̃մ կարողութիւնս հոգւոյ իւրոյ ունի 'ի վեր յերկինս. և ասէ, * մեր առաքինութիւն յերկինս է ‖.

փիլ. դ. 20 ։ զի զայն խորհի, և զայն խնդրէ՝ ըստ յոր-
դորելոյն պօղոսի. * Զվերինն խնդրեցէք, ուր քս
„ նստի ընդ աջմէ այ. զվերինն խորհեցարուք, մի զայս՝
„ որ յերկրի աստ է ‖. կողոս. գ. 1 ։ Նա սակայն կոյս
եւս մարմնով յերկրի՝ զի առնուցու զմնունդ, այս սա
'ի շահիլ զառաքինութիւնս և զարդիւնս ։ Իսկ ամբա-
րիշտն զմիտքն և զամ ինչ իւր յերկիր ունի եդեալ.
զերկրաւորս խորհի, զերկրաւորս խնդրէ, երկրաւո-
րօք մխիթարի. և ոչ ամբառնայ երբէք 'ի վեր. բայց
եթէ յամբարտաւան խորհուրդս, յանցաւոր փառս,
'ի սնոտերանման իշխանութիւնս, ևլն. յորոց 'ի մահուան
իւրում 'ի բաց անկեալ՝ դառնայ յայն, ուստի էր,
այս 'ի հող ։ Նա եթէ երբեմն 'ի բարի խորհուրդս եւս
ամբարձցի, կամ սուտ է այն, կամ բռնական, և կամ ան-
հաստատ. բայց եթէ գուցէ մասնաւոր իմն նորա-
տիք հոգւոյն սրբոյ զօրացեալ՝ ջանասցէ հաստատել
զմիտքն 'ի նմին ։

Յօթներորդ՝ ծառն պտղանացու գոլով՝ է ընդ խնամով.
իսկ փուշն գոլով անպտուղ իմն, մանաւանդ թէ վնա-
սակար, անխնամ է. և 'ի բազմանալն՝ աւելածութեամբ
ձգի արտաքս, և թափի ։ Այնպէս և արդարն պտղա-
նացու իմն գոլով յծի՝ է ընդ մասնաւոր խնամովն այ
և ընդ բարի առաջնորդութեամբ հոգւոյն սրբոյ. իսկ ամ-
բարիշտն անպտուղ գոլով յծի առ ածայինն գործս՝
կայ առանց մասնաւոր խնամոցն այ. ոչ զի աստուած ոչ
խնամէ, այլ զի ամբարիշտն ոչ կամի ըստ ուղիղ առաջ-
նորդութեան նր կառավարիլ, այլ՝ ըստ թիւր հաճոյից
իւրոց. ըստ որոյ՝ աւուրց յաւուրս յաճախեալ 'ի չարիս՝
յածելն այ զաւել բարկութեան իւրոյ՝ անկանի և թա-
փի իբրև անպտուղ ինչ 'ի դժոխս. առ որ հայի բանն
այն, որ ասի 'ի գիրս առակաց. ժա. 14. * Որոց ոչ
„ գոյ առաջնորդութիւն, թօթափին որպէս զտերև ‖ ։
Նշանի՝ թէ փուշն վնասակար եւս է. զի սուր և դա-
նի, անշքացուցանէ, և խանդարէ եւս, թէ 'ի վերայ
գետնի իցէ, թէ 'ի վերայ զգեստուց, և թէ 'ի վերայ
պատկերաց, և այլն. ուստի և տեսանեմք՝ զի մարդիկ
անդադար զհետ են մաքրելոյ 'ի փշոյ զզգեստս իւ-
րեանց, զպատկերս, զհայելիս, զգետին, և այլն ։ Այն-
պէս են և ամբարիշտք, զի սուր և դաժանին, խանգա-

րեն ։ Ուստի և արդարք և բարեպաշտք միշտ ջանան հեռի կալ ՚ի նոցանէ , և թօթափել զբանս նոցա յականջաց իւրեանց , և զյիշատակ կենաց նոցա ՚ի սրտից ։ Դարձեալ՝ որպէս փոշին յանկանելն յաչս՝ պատճառէ ցաւ , այնպէս և ամպարիշտք յանկանելն յաչս արդարոց , զի յերևելն առաջի աչաց նոցա , չար օրինակաւ իւրեանց պատճառեն ՚ի նոսա երբեմն ցաւ , զի ըզբաժանումն ՚ի մասանց բարեաց . զի ցաւն է զգածումն ինչ պատճառեալ ՚ի բաժանմանէ կենդանական մասանց ։

Ութերորդ՝ ծառն հաստատուն կայ ՚ի տեղւոջ իւրում . իսկ փոշին անհաստատ , այսօր աստ՝ և վաղիւ անդ ։ Այնպէս և արդարն հաստատուն կայ ՚ի բարին և յօրէնս տեառն . իսկ ամպարիշտն անհաստատ՝ ոչ միայն ՚ի բարին , զոր հազիւ երբեք առնէ , այլ և ՚ի չարն , այսօր զայս ինչ գործելով , և վաղիւն զայն . և վարի իբրև ինքնահալած՝ ըստ բերման ախտից իւրոց . ըստ որում ասէ իմաստունն . առակ . իը . 1 . * փախուցեալ
„ երթայ ամպարիշտն առանց ուրուք հալածելոյ .
„ իսկ արդարն իբրև զառիւծ յանձնապաստան է ‖ ։
Զոր այլով իմն նմանութեամբ յառաջ բերեալ սիրաքայ ասէ . իէ . 12 . * մարդ սուրբ յիմաստութեան հաստա-
„ տեալ կայ իբրև զարեգակն . իսկ յիմարն որպէս լու-
„ սին փոփոխի ‖ ։

Եւ եթէ դէպ լիցի նմա երբեմն իւիք հաստատիլ , եւս և ծաղկիլ բարի խորհրդով , նմանայ ՚ի նմին ։ Եւ եթէ տացէ եւս պտուղ ինչ առաքինութեան , ՚ի հնչել հողմոյ փորձութեան իբրև՝ դառնայ ՚ի փոշի , և հատի ՚ի պէսպէս մեղս ։ Եւ որ զի յորժամ փորձութիւն ինչ պատահի նմա , իսկոյն փոփոխէ զտեղի առաքինութեան իւրոյ , և գնայ յայլ տեղի , զի ՚ի չարիս ինչ ։ Եւ այսպէս միշտ երերեալ և տատանեալ կայ , չարեաց ՚ի չարիս ելանելով , և ունայնութենէ յունայնութիւն փոփոխելով , և ՚ի սկսեալ բարին անհաստատ կալով ։ Արդ՝ որպէս փոշին յետ բազում ուրեք ՚ի հողմոյ տատանելոյ՝ յափշտակի , և երբեմն հասեալ ՚ի ծով՝ ընկղմի և չքանի , այնպէս և ամպարիշտն յետ տատանելոյ ՚ի հողմոց , զի ՚ի փորձութեանց և ՚ի մեղաց՝ յափշտակեալ հասի և ընկղմի ՚ի ծով դժոխոց ։

Յայսմ բնաբանի՝ "հողմով" թէպէտ իմացեալ լինի փորձութիւնն՝ կամ ո՛ և իցէ դիպուած՝ որ 'ի սատանայէ, կամ 'ի մարմնոյ, և կամ յայլ ինչ առթէ, բայց փոխաբերի և 'ի նոյն ինքն սատանայ, որ հողմոյ նմանի. և 'ի ձեռն հողմոյ ևս գործէ բազում ինչ (յոբ. ա. 19.) Եւ որպէս հողմն՝ զյարդ և շնչեցէ՝ տարուբերէ և տատանէ զփոշիս, սոյնպէս և սատանայ զյարդ և կամիցի՝ տարուբերէ և տատանեցուցանէ զամպարիշտս. և զոր ինչ խօսի յականջս նորա՝ 'ի նոյն մոլորեցուցեալ զնա՝ ո՛ւր և կամի՝ յածեցուցանէ: Իսկ ըստ լամբրոնացւոյն՝ որպէս փոշին հոսեալ 'ի հողմոյ՝ մթացուցանէ զօդս, սոյնպէս առնէ և սատանայ. զի զփոշիս չար խորհրդոց հոսհոսեալ 'ի վերայ մտաց մարդոյ, ողջոյն մթացուցանէ զնա. և զճանապարհ նորա խաւարեցուցեալ՝ անաշխատ ածէ 'ի դժոխս:

Այս նմանութիւն հողմահոսութեան փոշւոյ հայի և յերնումն կալոյ, յոր միտ կամի ասել. քանզի յորժամ ցորեանն հեծանոցաւ հոսի, յայնժամ երնի, հողմն ցրուէ և վանէ զյարդս և զմղեղս, և ցորենոյն ինչ ոչ վնասէ. սոյնպէս յորժամ թշուառութեամբն ո͞յ հոսին և ելնին արդարք փորձութեամբք 'ի սատանայէ, և կամ յայլոց, ոչինչ վնասին, այլ մանաւանդ թէ մաքրին. իսկ ամպարիշտք որովհետև ըստ փոշենման յարդից՝ ոչ ունին զծանրութիւն հաստատութեան կալոյ 'ի բարին, և ոչ զծանրութիւն ինչ առաքինութեան՝ առ 'ի պահել նոյա իբրև զցորեան, 'ի հողմոյ անտի ցրուեալ վատնին և կորնչին. և յայս միտ յեբր. փոխանակ փոշւոյ՝ մղեղ դնի կամ ունդ. ըստ որոյ ասի զուցանէ 'ի գիրս յոբայ. իա. 18. * Եղիցին իբրև զյարդ առաջի հողմոյ, կամ իբրև փոշի, զոր տարաւ մրրիկ ||:

Եւ դարձեալ՝ որպէս 'ի ժողովել ցորենոյ 'ի շտեմարանս՝ թափին, և արտաքս ձգին յարդք և փոշիք, սոյնպէս և յաւուրն դատաստանի՝ յորժամ յառնեն արդարք, և ժողովին առ հասարակ յարքայութիւն երկնից իբրև 'ի շտեմարան երկնաւոր թագաւորի, թօթափին 'ի նոցանէ ամպարիշտք, և արտաքս ձգին: Յայս ամենայն հայեցեալ մարգարէին՝ յարէ զնի, և ասէ:

Է. Վասն այսորիկ ոչ յարիցեն ամպարիշտք 'ի դատաստան.
եւ ոչ մեղաւորք 'ի խորհուրդս արդարոց:

Այս է ահա լրումն և կատարումն չարի, յոր ունի վերջանալ մնոտի յոյս ամպարշտաց. սմին իրի և մարգարէն հետեւութեամբ բանի առաջի առնէ զայս՝ յասելն:

Վասն այսորիկ ոչ յարիցեն ամպարիշտք 'ի դատաստան: Կամի ասել. որովհետեւ ամբարիշտքն եղեն իբրեւ փոշի կամ իբրեւ զմղեղ տարածեալ արտաքոյ օրինացն՝ և հոսեալ 'ի հողմոց, եւ՟ն. վասն այսորիկ՝ զ՟ի վասն այսպէս լինելոյ նոցա՝ ոչ յարիցեն 'ի դատաստան. զ՟ի թէ յորժամ յարութիւն լինիցի մարդկան, ամպարիշտքն ոչ յարիցեն յայնժամ առ 'ի ցուցանել զիրաւունս 'ի դատաստանի, և անմեղադրելի առնել զանձինս առաջի դատաւորին, և ընդ արդարոյն փառաւորիլ. այլ՝ յարիցեն՝ առ 'ի երեւիլ առաջի ա՟մ մարդկան այնպիսի, որպիսի եղեն, և խայտառակիլ յանդիմանն նոցա. և մարմնով եւս դատապարտիլ՝ որպէս դատապարտեալ էին հոգւով. և մերժեալ 'ի ժողովոյ արդարոց՝ անդրէն դարձցին 'ի դժոխս:

Այլ առ ուղիղ եւս իմանալոյ զայս՝ գիտելի է, զի նա միայն ածի 'ի դատաստան առ 'ի դատիլ առաջի դատաւորի, որ ունի զքննելի գործս արարեալս ընդդէմ օրինաց, և կամ ունի զպարտս ինչ, որք չեւ եւս են հրապարակաւ ցուցեալ յատենի դատաւորին: Արդ՝ 'ի վերջին դատաստանի երրեակ ազգք մարդկան կարեն յառնել. (Թող զոչ մկրտեալ մանկունս, կոչ. ընծ. ժզ. 19.)

Առաջին ազգք նոքա են, որք ոչ երբէք ընկալան զճշմարիտ օրէնս ա՟յ, որպիսի են հեթանոսք. և նոքա ածին առաջի դատաւորին առ 'ի դատիլ ոչ ըստ ա՟ծային օրինաց, յորմէ զուրկ գտան, այլ ըստ բնականին՝ զոր չարաչար վարեցին. և 'ի դատինն ընկալցին զյետին վճիռ դատապարտութեան իւրեանց. թէպէտև արդէն իսկ դատապարտեալ են. որպէս յայտ է. յովհ. գ. 18. վասն զի ոչ կամեցան ընդունել զօրէնս ստեղծողին իւրեանց. զոր եթէ կամէին՝ կարէին. զի որովհետեւ ա՟մ մարդ յինքն միտս և գոցի, ճանաչէ զա՟ծ արարիչ

և տէր իւր · հարկ է ամենեցուն խնդրել և գիտել, թէ զինչ հրամայէ նոցա տէր իւրեանց, զի արասցեն զայն ։ Նաև քանզի հեթանոսք անփոյթ եղեն, և ոչ խնդրեցին, վասն այնորիկ և ոչ գտին զայն, այլ՝ փոխանակ նորա գտին զչար կամ զմոլար օրէնս, և ըստ այնմ վարեցան · վասնզի և նոքին իսկ արդէն դատապարտեալ են, ոչ այնչափ վասն ոչ գտանելոյ զօրէնս այ, որչափ վասն մոլար օրինօք չարաչար վարելոյ ։ Նաև վասն այսր պատճառի ասէ՝ թէ հեթանոսք ոչ յառնեն և ոչ կան 'ի դատաստանի առ 'ի դատիլ, այլ՝ առ 'ի կրկին դատապարտիլ յայ · զի ըստ հոգւոյն յառաջագոյն իսկ դատեալ և դատապարտեալ համարին, և ապա ըստ մարմնոյն ևս · ուստի յոհան ծործորեցին 'ի մեկնութե սաղմ · գլ · ճթ · 'ի վերայ բանին զոր ասաց քո * ընդ մէջ կորեա-
„ ցէ նա || · ասէ · * քանզի երկու բաժինս են տանջի, և
„ դատաստանն որպէս մարմնոյն, նոյնպէս և հոգւոյն
„ հատանի || ։

Գրէ ևս վանական վարդապետ 'ի մեկն · յոբ · գլ · ը · ոչ յառնել ամպարշտաց 'ի դատաստան՝ ցուցանէ՝ թէ
* առանց հարցափորձի յառաջագոյն դատապարտեալ
„ են || · իբր զի ոչ է հարկ հարց փորձ առնել · քանզի գործովք իւրեանց դատապարտեալ ցուցանին ։
* Կեանք նոցա ( ասէ 'ի գլ · խը · 16 · ) ոչ է ըստ կամացն
„ այ · նոյնպէս և յառնելն նոցա ( թէպէտ և լինի ) հրա-
„ մանաւ նորին, բայց ոչ ըստ կամաց նր · քանզի ( ար-
„ դարև ) 'ի դատաստան յառնեն, այլ ոչ ուրախանայ
„ տէր յարարածն ( յայնպիսի ) · այս է՝ զոր ասէ մար-
„ գարէն · ամպարիշտք ոչ յարիցեն 'ի դատաստան ·
„ զի ոչ են պէտք քննութեան · քանզի անձամբ գիտակ
„ են արժանեաց իւրեանց || · և ըստ նմին դատապարտեսցին ։ Նաև սարգիս շնորհալի 'ի մեկն · ա · պետ · դ · 17 · Համ · ժ · ասէ · * Նոքա ամենեքին որք յանհաւա-
„ տութեան կացին մնացին՝ ոչ յառնեն 'ի դատաստանի
„ հատուցման յարութեանն, այլ 'ի դատապարտութի
„ և 'ի տանջանս || · և յաւելու՝ թէ * այս բազում
„ ուստեք յայտ է · որպէս յորժամ ասէ դաւիթ 'ի
„ սկիզբն սաղմոսին, ոչ յարիցեն ամպարիշտք 'ի դա-
„ տաստանի, և ոչ մեղաւորք 'ի խորհուրդս արդա-
„ րոց || ։

Այս դատապարտութիւն նոցա եղիցի ի յանդիմանութեան. իբր զի յայտնի ցուցցէ նոցա Ած և ծանուսցէ, թէ ես էի տէր ձեր, և դուք ոչ կամեցայք զիս ճանաչել, և ինձ ծառայել. այլ՝ զձեզ խնդրեցիք, և արարածոց և դիւաց ծառայեցիք. վասն և ես ոչ ճանաչեմ զձեզ. 'ի բաց կացէք յինէն, և առէք զվարձս ձեր 'ի տեարց ձերոց 'ի դիւաց՝ 'ի հուրն յաւիտենական. և զայս ոչ միայն նոցա յայտնեսցէ Ած, այլև ամենեցուն՝ որք կան 'ի դատաստանի, ցուցանելով յանդիմանանոցա զամենայն գործս նոցին. և այս է կրկին դատապարտիլն հեթանոսաց 'ի դատաստանի.

Երկրորդ ազգք են նոքա, որք թէպէտև ընկալան զձրեա-րեալ օրէնս Այ, բայց ոչ պահեցին. և նոքա են ամպարիշտ քրիստոնեայքն, ընդ որս են և հերետիկոսք՝ և ուրացօղք, ևն. Նոքա յառնեն 'ի դատաստան առ 'ի ածիլ առաջի դատաւորին, զի դատեսցին և քննեսցին ամենայն գործք նոցա՝ համեմատելով ընդ օրէնսն, զոր ընկալան.

Իսկ նոցա դատիլն ես զբեթէ նոյն օրինակ լինի, որով օրինակ դատապարտին հեթանոսք. բայց սոցա առաւել լինել իբր յատուկ քննութեամբ. ոչ զի դատաւորն ոչ գիտէ զգործս նոցա, և կարօտի քննել, թէ իցէ՞ն թիւր. այլ զի՝ յանդիմանութեամբ օրինացն դատապարտելի ցուցանէ և դատապարտէ զնոսա. Նաև նոքա ես ոչ յարիցեն 'ի դատաստան և ոչ կացցեն անդ առ արդարացուցանելոյ զանձինս, այլ՝ առ դատապարտելոյ, կամ մանաւանդ թէ առ 'ի դատապարտել զինքեանս վկայութեամբ խղճի մտաց իւրեանց. Ծանիր, զի 'ի դատաստանի հինգ անձինք տեսանին. որ են, դատելին, դատախազն, վկայ, դատաւոր, և դահիճ. և զգործ ամենեցուն սոցա վճարէ խիղճն մտաց 'ի դատաստանի տեառն. զի 'ի դնել դատաւորին առաջի դատեցելոյն՝ թէ զիա՞րդ մտեր այսր ( մատթ. իբ. 12.) խիղճ մտաց նորա եղիցի նմա դատախազ և վկայ, նա և դատաւոր 'ի դատապարտել զինքն, և դահիճ զանձն 'ի տանջել յաւիտեան. Իսկ ոչ ես մնայ տեղի ջատագովութեան. զի ոպ ասի. * յորժամ ներքին ,, վկայն՝ որ է խիղճն մտաց ամբաստանէ, արտաքին ,, ջատագովութիւնն ոչ ինչ զօրէ ||. որ առէ զերդոր

վարդապետ սկեռացի. *յորժամ ա̃ծ կացցէ 'ի դա-
,, տել՝ այլ վկայ քան զխիղճ մտաց քոց ոչ է պիտոյ.
,, 'ի մէջ արդար դատաւորի և 'ի մէջ դատեցելոյդ մի
,, երկնչիր, եթէ ոչ 'ի խղճէ մտացդ. այն բաւական
,, է 'ի դատել և 'ի դատապարտել||:

Երրորդ ազգք նոքա են, որք ընկալան զօրէնս ա̃յ, և ըստ այնմ օրինաց կալով, կամ ըստ բնական օրինաց ուղիղ վարելով՝ մեռան 'ի շնորհս ա̃յ. որպիսի են ն և լցէ արդարք: Եւ սոքա յարիցեն 'ի դատաստան՝ և կացցեն անդ ոչ առ 'ի դատիլ և դատապարտիլ, այլ առ 'ի փառաւորիլ յա̃յ հոգւով և մարմնով. զի արդարն *'ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահուա-
,, նէ 'ի կեանս||. յովհ. ե. 24: Այսպիսիքս ոչ միայն ոչ դատին, այլ յաւէտ ևս դատեն զմեղաւորս 'ի դատաստանի. վասն զի յորժամ ամենեքին յառնեն, նախ՝ արդարքն առաջի ամենեցուն, ք̃ս առաջի հրեշտակաց և դիւաց և մեղաւորաց փառաւորեսցին 'ի ք̃նէ՝ յասելն նորա առ նոսա. *Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժա-
,, ռանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի
,, սկզբանէ աշ̃խի||. մատթ. իե. 34: Եւ ապա ամպարիշտք և մեղաւորք դատապարտեսցին 'ի նմանէ առաջի ամենեցուն՝ յասելն նորա առ նոսա. *Երթայք յինէն
,, անիծեալք 'ի հուրն յաւիտենական ե̃||: Եւ քանզի ընդ այս վճիռ տեառն հաւանին արդարք, և զնոյն արդարացի համարին, և ընդ դատապարտութի ամպարշտաց ուրախ լինին, ասի՝ թէ արդարք դատեն զմեղաւորս յաւուրն դատաստանի. կամ որպէս ասէ ծործորեցին 'ի մեկն. մատթ. գլ. իդ. * որք հաւատացին՝ դատա-
,, պարտեսցեն զանհաւատսն||:

Եւ այս եղիցի մեղաւորաց ցաւ մեծ յոյժ և տանջանք անհնարին՝ 'ի տեսանել իւրեանց զարդարսն փառաւորիլ և 'ի մի փառս ժողովիլ, և զինքեանս 'ի նոցունց դատիլ և դատապարտիլ, ևս և անջատիլ 'ի ժողովոյ նոցա և մերժիլ, առանց ունելոյ յոյս ինչ ընդ նոսին միանալոյ, և ընդ նոսին ուրախանալոյ. և առ 'ի զայս ևս յայտ առնել մարգարէին՝ յարէ զկնի, և ասէ:

Եւ ոչ մեղաւորք 'ի խորհուրդս արդարոց: ա̃յ՝ ոչ յարիցեն՝ այս է՝ ոչ կանգնեսցին կամ ոչ կացցեն մեղաւորք 'ի ժողովս արդարոց. որով ցուցանի՝ եթէ յորժամ ար-

դարք ժողովին ընդ աջմէ քրի իբրև խորհրդակիցք նորա, կամ յորժամ ժողովին փառօք 'ի մի խորհուրդ կե՛ն յերանութիւն արքայութեն, մեղաւորք ոչ ժողովեսցին ընդ նոսա, և ոչ կացցեն 'ի ժողովս նց. զի է՛ ոչ ունիցին ը̅ նոսա մասն և բաժին. Այլ կամ յորժամ արդարք խորհուրդ առնուն յայն ժողովլ իբրև դատաւորք, ամպարիշտք և մեղաւորք ոչ լինիցին ը̅ նոսա իբրև այնպիսի խորհօղք, այլ իբրև դատապարտեալք 'ի նոցանէ. Ընթնել արժան է աստ և զայլևայլութիւն բառիցն՝ որք դնին յայսմ բնաբանի. իբր զի՝ յառաջին հատուածն դնի ամպարիշտք. իսկ յերկրորդումն դնի մեղաւորք. և սոքա ( որպէս յայտնի երևի 'ի յաջորդ համարոյն, ) թէպէտ իբրև նոյնանշան բառք դնին, զի փոխանակ չար մարդկան. և վասն վայելուչ ձևանալոյ բանին՝ յայլ և այլ բառս կրկնին, սակայն հնար է ևս ասել, թէ՝ սոքիմք կամի 'ի մէջ բերել մարգարէն զայնսիկ՝ զորս յիշեաց 'ի համարն առաջին, լռելեայն իմն իմացուցանելով և զժամանումն ընդ բառիւս մեղաւորք. Արթ է ևս ասել, թէ ամպարիշտք ասելով՝ իմանայ զհեթանոսս և զանհաւատս, որք ոչ ունին բարի ինչ պաշտօն և օրէնք 'ի գերբնական կարգի. Իսկ մեղաւորք ասելով՝ իմանայ զչար հաւատացեալս. որք թէպէտ և ունին զբարի պաշտամունս և օրէնս 'ի գերբնական կարգի՝ որովք և են 'ի ժողովս հաւատացելոց յաստի կեանս, սակայն վասն ունելոյ և զմեղս՝ ոչ ունին մնալ 'ի ժողովս նոցա յարքայութեն երկնից,

և ոչ լինիցին ընդ նոսա.

Բարոյապէս, տեղին բանիւ նկարին վիճակ ամպարըշտաց. որք ոչ կամին յառնել 'ի մեղաց և առնել դատաստան 'ի վերայ գործոց իւրեանց. զի եթէ զայս առնէին, լուսաւորէին յայ. ըստ որում ասէ պօղոս. * Արի որ ննջեսդ, և կանգնեաց 'ի մեռելոց. և լու-
,, սաւոր լիցի քեզ քս ||. եփես. Ե. 14. Այլ սակայն սոքա ոչ միայն չառնեն զայս, այլև խորշին 'ի խորհելոյ զայսպիսիս, զի մի տանջեսցին 'ի խղճէ մտաց. Այլ սակս իսկ ոչ կամին կալ առանձինն դատարկ. զի մի յիշելով զգործս իւրեանց, և զհատուցումն նոցին, դառնեսցեն զանձինս. այլ եթէ քննէին և դատէին, անդատապարտ մնային. զի ասէ, * Եթէ զանձինս

,, քննէաք , ապա ոչ դատապարտէաք ‖ . Ա . կոր . ԺԱ .
31 ։ Իսկ ես՝ մեղաւորք ոչ կան 'ի խորհուրդս արդա-
րոց . զի ոչ խորհին և ոչ գնան ըստ խորհրդոց արդա-
րոց . վ՟ոյ և ոչ միանան ընդ արդարոց՝ իբրև կենդանի
անդամք նոցա ։

Յամբոխացին ամպարշտօք և մեղաւորօք իմացեալ
զդեւս՝ ասէ , թէ նոքա ոչ կացին 'ի դատաստանի , զի
թէ ոչ ապաշխարեցին առնելով ուղիղ դատաստան
'ի վերայ մեղաց իւրեանց . և ոչ ես արարին այնպէս , ո՟պ
մարդն արար . իբր զի ոչ խորհեցան ապաշխարութեամբ
գտանել զթողութիւն , այլ՝ մնացին յամառեալ 'ի չա-
րիս ։ Արդ՝ յետ ասելոյ մարգարէին , թէ 'ի դատաս-
տանի ամպարիշտք անկցորդ են արդարոց և վարձուց
նոցա՝ յարէ զկնի զպատճառն , և զայն՝ 'ի կողմանէ
դատաւորին , և ասէ ։

Զ . Քանզի ճանաչէ տէր զճանապարհս արդարոց . ճանա-
պարհք ամպարշտաց կորիցեն ։

Այս բանք ցուցանեն զճշմարտութիւն այնր՝ զոր ասաց
մարգարէն զամբարշտաց , որպէս և զարդարոց , թէ հան-
դերձեալ են այսպէս և այնպէս յառնել և դատիլ . քան-
զի որ հանդերձեալն է յարուցանել և դատել զնոսա
ոչ վրիպի , վասն զի անվրէպ ճանաչէ զգործս ն՟ց . յայս
հայելով ասէ ։

Քանզի ճանաչէ տէր զճանապարհս արդարոց . ճանապարհք
ամբարշտաց կորիցեն ։ Արդարովք իմացեալ լինին աստ
նոքա՝ որք կատարեալն են 'ի բարեպաշտութեան կամ
յառաքինութե՟ . ըստ գրելոյ շնորհալւոյն 'ի մեկն .
մատթ . գլ . Ը . և ըստ սարգսի . * 'ի գիրս սրբ՟ այն կո-
,, չի արդար՝ որ զբոլոր մասունս առաքինութե՟ յինքն
,, բերէ ‖ ։ Այնպէս ամպարշտօք իմացեալ լինին չարք
և անօրէնք ։ Արդ ասէ՝ վասն այնորիկ ա՟ծ զարդարսն
փառօք յարուցանէ , իսկ զամպարիշտսն դատապար-
տէ , քանզի ճանապարհք նոցա , զի գործք ն՟ց , թէ ար-
դարոց՝ և թէ մեղաւորաց՝ յայտնի են նմա . և գիտէ ,
թէ զինչ արդարք գործեցին , և զինչ մեղաւորք .
զիարդ ծառայեցին ինքեան արդարք , և զիարդ ար-
համարհեցին զինքն ամպարիշտք ։ Իսկ տեսանելով
զգործս արդարոց փառաց արժանի , և ճանաչելով

զնոսա իւր հաւատարիմ ծառայս, յարուցանէ զնս 'ի կեանս, և մեծամեծ վարձուք փառաւորէ. զի * Ծա-
նեաւ տէր զայնոսիկ, որք իւրքն են ‖. բ. տիմ. բ. 19: Եւ ներհակ այսմ՝ տեսանելով զգործս ամպարշտաց անարժան վարձուց, և ճանաչելով զնոսա թշնամի իւր, զնոսա ևս թէպէտ յարուցանէ, բայց ոչ առ 'ի փառաւորել, այլ՝ առ 'ի դատապարտել և խայտառակ կորուսանել. ըստ որում ասի. յոբ. դ. 9. Թէ ամպարիշտք * 'ի հրամանէ տն կորիցեն. 'ի հոգւոյ բարկութե նո-
,, րա սատակեսցին ‖:

Նաև քննել արժան է, զի մարգարէն որպէս զճանապարհաց արդարոցն ասաց՝ ճանաչէ տէր, նոյնպէս ոչ ասէ զամպարշտացն, այլ՝ թէ * ճանապարհք ամ-
,, պարշտաց կորիցեն ‖: Եւ այս ասի ըստ երկուց. նախ՝ առ 'ի յայտ առնել, թէ գործք նոցա են խաւարայինք, և ոչ երևին առաջի աստուծոյ, ուստի և նոքեանք իբրև 'ի խաւարի գնան, և ոչ տեսանեն՝ յոր գնան, մինչև գայթակղեալ՝ անկցին 'ի դժոխս. ըստ այնմ, սաղ. լդ. 5. * Եղիցին ճանապարհք նոցա 'ի խաւար և 'ի գայթակ-
,, ղութիւն ‖: Երկրդ՝ առ 'ի ցուցանել, թէ կեանք ամպարշտաց այնչափ ատելի են աստուծոյ, մինչև ոչ կամիլ նմա ճանաչել՝ ոչ զանձինս, և ոչ զգործս նոցա. ըստ այնմ, * Ոչ երբէք գիտէի զձեզ ‖. մատ. է. 23: Վասն որոյ և թողեալ է զնս զի յաւիտեան կորիցեն. և մի ուրեք գտցին, բայց եթէ 'ի դժոխս:

Տեսանես, թէ ճանապարհորդութիւն ամպարշտաց ո՛ւր տարաւ զնոսա. ընթացան 'ի կորիս, և մատնեցան 'ի չարիս. և զինչ յայնժամ ունիցին առնել, և յորպիսի ցաւս հանդերձեալ են ըմբռնիլ. ծանիցեն՝ զոր ոչ կամէին ճանաչել, և կրեսցեն՝ յորոց կամէին ազատ մնալ. այլ ոչ կարելով ազատանալ՝ աղաղակեսցեն առ ցաւս անձանց իւրեանց, թէ * ուրեմն մոլորեցաք 'ի ճա-
,, նապարհէն ճշմարտութե ‖. իմաստ. ե. 6: Ճանապարհորդ յիմանալն անդ՝ թէ զաւուրս երկս ընթացեալ է ընդ մոլար ճանապարհ, որքան ցաւի և կոծի, մանաւանդ եթէ վասն մոլար ընթանալոյ մատնեսցի 'ի ձեռս աւազակաց. քանի՛ ապա ցաւեսցին ամպարիշտք 'ի ճանաչելն անդ՝ թէ ընդ մոլար ընթացան 'ի կեանս իւրեանց, և մատնեցան 'ի ձեռս

*անմարմին աւազակաց յաւիտեան։ Նա ընդ հակառակն որչափ ունին ուրախանալ արդարք, 'ի տեսանելն անդ՝ թէ ուղիղ իցեն ընթացեալ, մինչև աւարտելն իսկ ճանաչել զճանապարհս նոցա, և յեզր ճանապարհին փառաւորել զնոսա, և երանացուցանել 'ի փառս իւր յաւիտեանս յաւիտենից։*

# ՍԱՂՄՈՍ. Բ.

*Յանդիմանութիւն մոտի ջանից թշնամեաց դաւթի՝ ը̄ որում էր օրինակ քրի։ Նաև ցոյց յաղթութեան քրի, և թագաւորութեան նորա, և ծննդեան նորին։*

Ի հեբրայեցւոց երկոքեան սոքա ընդ մի համար են։

1. Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան
'ի նանիս։ 2 Յանդիման եղեն թագաւորք երկրի. և
իշխանք ժողովեցան 'ի միասին վասն տն̄, և վասն օծելոյ նորա։
3 Խզեսցուք զկապանս նոցա. և ընկեսցուք 'ի մէնջ զլուծ նո-
ցա։ 4 Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք. և տէր արհա-
մարհեսցէ զնոսա։ 5 Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութ̄ իւ-
րով. և սրտմտութեամբ իւրով խռովեսցէ զնոսա։ 6 Ես կացի
թագաւոր 'ի նմանէ 'ի վր̄ սիոնի լերին սրբոյ նորա՝ պատմել զհ-
րամանս տեառն։ 7 Տէր ասաց ցիս, որդի իմ ես դու. ես այսօր
ծնայ զքեզ։ 8 Խնդրեա՛ յինէն. և տաց քեզ զհեթանոսս 'ի ժա-
ռանգութիւն. և իշխանութ̄ քեզ ընդ ամ̄ ծագս երկրի։ 9 Հովո-
ւեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ. որպէս զանօթ բրուտի
փշրեսցես զնոսա։ 10 Արդ թագաւորք զայս 'ի մտ առէք. խրա-
տեցարո՛ւք ամ̄ն, որք դատիք զերկիր։ 11 Ծառայեցէ՛ք տն̄ եր-
կիւղիւ, և ցնծացէ՛ք առաջի նորա դողութ̄։ 12 Ընկալարո՛ւք
զխրատ նորա, զի մի բարկասցի տր̄. և կորնչիցիք 'ի ճանապարհաց
արդարութեան։ 13 Ի ժամանակի որպէս բորբոքեսցի բարկութ̄
նորա։ 14 Երանի ամենեցուն որք յուսացեալ են 'ի տէր։

# ՎԵՐՆԱԳԻՐ

Ի հեբրայեցւոց՝ երկոքեան սոքա ընդ մի համար են ։

ԱՅՍ ՍԱՂՄՈՍ ՈՉ ՈՒՆԻ ՎԵՐՆԱԳԻՐ ինչ 'ի բնագիրս եբրայեցւոց . որ և 'ի սաղմոսս ինչ մեր դնի . * Անվերնագիր 'ի հեբրայեցւոց ‖ . այսինքն թէ՝ այս սաղմոս անվերնագիր է 'ի սաղմոսս եբրայեցւոց . կամ թէ չունի ինչ վերնագիր առ նոսա ։ Այլ թէպէտ յոմանս 'ի ձեռագիր սաղմոսաց նոցա գտանի ինչ վերնագիր , բայց այն երևի յետոյ մուծեալ . զի յընտիր ձեռագիրս նոցա ոչ գոյ այն՝ ըստ վկայելոյ նոցին ։ Այլ վասն՝ զի վասն ոչ ունելոյ այսր սաղմոսի վերնագիր՝ համարեցան բազումք , թէ սա ոչ է այլ յառաջնոյն , այլ՝ նոյն ընդ նմա . վասն զի հասարակ գրոց է առ եբրայեցիս վասն սաղմոսաց , թէ * Որ վերնագիր ինչ ոչ ունի , ընդ մի համար նախնւոյն թուի ‖ . և վասն թարգմանիչք մեր և կամ այլք եդին 'ի գլուխ այսր սաղմոսի . * Ի հեբրայեցւոց՝ երկոքեան սոքա ընդ մի համար են ‖ . կամ որպէս յայլ սաղմոսս մեր դնի . * 'ի հեբրայեցւոց գրոց՝ երկոքեան սոքա ընդ մի համար են ‖ . զի թէ՝ առ եբրայեցիսն այս սաղմոս և նախընթաց սորա երկոքին ևս մի սաղմոս են , և ոչ այլևայլ ։

Այլ սակայն այս կարծիք ոչ երևի հաւանական . Նախ՝ զի բանք այսր սաղմոսի և առաջնոյն ամենևին այլեայլ են . և այլևայլ օրինակաւ աւանդին , և առ այլեայլ խորհուրդս հային ։ Երկրորդ՝ զի ոչ երևի յընթացից բանիցն , սոքա 'ի զանազան ժամանակս ասացան ըստ զանազան առթից ։ Երրորդ՝ զի սոքա յամ ազգս անջատմամբ 'ի միմեանց դնին . նաև 'ի բնագիրս եբրայեցւոց այբուբենիւ որոշին . զի որպէս յառաջին սաղմոսի դնի գիրս ալէֆ . սոյնպէս և 'ի սկզբան այսր սաղմոսի դնի գիրս պէթ . որ ցուցանէ լինել երկրորդ , և ինքեանք իսկ հրեայք երկրորդ ասեն այսմ . և այնպէս թուեն զսաղմոսն ։ Չորրորդ՝ զի գրեթէ յամ եկեղեցիս , ևս և 'ի ժողովրդանոցս հրէից որոշ որոշ երգին ։

Հինգերորդ՝ զի այս սաղմոս 'ի գործս առաքելոց · ժգ · 33 · իբրև երկրորդ դնի, յասելն պօղոսի, *Որպէս և 'ի սաղմոսին գրեալ է յերկրորդում. թէ որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ‖ : Արդեամբ սա երկրորդ է, և ոչ նոյն ընդ առաջնոյն : Այլ թէպէտ յօրինակս ինչ յունաց · գործ · ժգ · 33 · փոխանակ դնելոյ յերկրորդում՝ դնի յառաջնում, բայց առ հռովմայեցիս և առ այլս, որպէս և առ ոմանս 'ի յունաց՝ համաձայն մեզ դնի՝ յերկրորդում: Իսկ պատճառ առաջին դնելոյ ոմանց զայս՝ այն եղև, զի համարեցան՝ թէ յայսմ սաղմոսէ սկսանին այլք, և զնախընթացն համարեցան իբրև յառաջաբանութիւն ինչ բովանդակ սաղմոսաց · վասն որոյ և զսա իբր սկիզբն եդեալ՝ առաջին վարկան : Այլ թէ այս սաղմոս 'ի դաւթայ իցէ ասացեալ, ոչ գոյ ինչ տարակոյս · զի առ հասարակ ամ̃ մեկնիչք, ևս և ռաբբիք հրէից՝ դաւթի տան զայս · և առաքեալքն իսկ այսպէս համարեցան · որպէս յայտ է 'ի գործս առաքելոց · դ · 25 :

Այժմ առաջի կայ մեզ քննել, թէ այս սաղմոս առ ո՞ հայի, առ դաւիթ, թէ առ ք̃ս : Առաքեալքն 'ի գործս առաքելոց · ( դ · 25 : և ժգ · 33 : ևս և եբր · ա̃ · 5 : և Ե · 5 · ) յայտնի աւանդեն, թէ այս սաղմոս վասն ք̃ի ասացաւ : Նոյնպէս և սուրբ հարք առհասարակ զնոյն հաստատեն · տես և 'ի գիրս սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետի · ճառ ժգ : Զայս խոստովանին և նախնի ռաբբիք հրէից · մինչև ասել րաբունւոյ ուրումն, այն է ռաբբի սողոմնի՝ թէ նախնիք մեր զամենայն բան այսր սաղմոսի մեկնեցին 'ի վերայ թագաւորութե̃ մեսիայի · որ և յաւելու ես · բայց ասէ՝ պարտ է մեկնել զայս 'ի վերայ դաւթի առ 'ի պատասխանի տալ ընդդէմ աղանդաւորաց · ( Իսկ աղանդաւոր ասելով իմանայ զքրիստոնեայս ) : Որով բանիւ ինքն ես ճանաչէ, թէ այս սաղմոս 'ի վերայ մեսիայինն է, բայց առ 'ի խոյս տալ յառարկութենէ քրիստոնէից՝ պարտ է ասէ 'ի վերայ դաւթի մեկնել: Արդի ռաբբիք ես վ̃ս այսր պատճառի, զ̃ի վասն հակառակելոյ քրիստոնէից՝ միայն 'ի վերայ դաւթի մեկնեն :

Բայց գիտել արժան է, զի որպէս ասացաք 'ի ներած · գլ · է · որովհետև դաւիթ մարգարէ յասելն զայս

սաղմոս, որպէս և զայլսն, յաղթէ ինչ շարժեալ ասաց, գտանին 'ի սմա բանք ինչ՝ որք հային 'ի դաւիթ ըստ այնմ առնթի, ըստ որոյ ասաց զսա. գտանին և այլ բանք ինչ՝ որք հային 'ի քս՝ ուղղակի կամ աննուղղակի. զի կամ 'ի դիմաց նր, կամ առ նա, և կամ վասն նր: Իսկ քանզի դաւիթ եղև պատկեր իմն քսի, մանաւանդ յայնս՝ յորս իբր 'ի ստուերս նկարէր թգրութիւնն քսի, այն բանք են՝ որք 'ի դաւիթ հային՝ իբր 'ի պատկեր, հային 'ի քս իբրև 'ի բուն գաղափար և 'ի ճշմարտութիւն: Իսկ թէ յինչ առթէ արդեօք ասացեալ իցէ դաւթի զայս սաղմոս, յայտ լիցի այժմ 'ի սկզբան մեկնութեանդ.

'ի համարն. 1:

## Բ. Ա. Ն:

ա. Ընդէր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան 'ի նանիս:

## Մ. Ե. Կ. Ն. Ո. Ւ. Թ. Ի. Ւ. Ն:

Ըստ բարւոք իմանալոյ զնկարագրական իմաստ այսր սաղմոսի, արժան է համառօտիւ իմն կարգել աստանօր զպատմութիւն թգրելոյն դաւթի 'ի վր Իէլի: Յետ մեռանելոյ սաւուղայ՝ գնացեալ դաւթի 'ի քեբրոն՝ օծաւ անդ թագաւոր 'ի վերայ ցեղին յուդայ ևեթ. և թգրեաց զեօթն ամ. (Բ. Թագ. Բ. 2. և 4:) Իսկ յետ մեռանելոյ յեբուսթեայ որդւոյ սաւուղայ, որ թգէր 'ի վերայ Իէլի, եկին ամ ցեղքն Իէլի առ դաւիթ 'ի քեբրոն. և ասեն ցնա. * ասաց քեզ տէր՝ հովուեսցես ժողովրդեան իմոյ Իէլի. և դու լիցիս յառաջնորդ 'ի վերայ Իէլի, եւ || (Բ. Թագ. Ե. 2:) և հաւանեցուցեալ օծին զնա անդ թգր 'ի վերայ ամ Իէլի: Իսկ դաւիթ յետ թգրելոյ իւրոյ խաղաց 'ի վերայ յեբուսացւոյն, և եհար զնոսա, և էառ զյեբուս, զի զէմ, և զսիոն՝ որ 'ի նմա, և զամրոց նորա 'ի ձեռաց նոցա. և նստաւ յամրոցին:

Իբրև լուան հեթանոսք, զի փղշտացիք, (որք բնակէին յան պաղեստինոյ,) եթէ օծաւ դաւիթ թգր 'ի վերայ Իէլի, և էառ զսիոն 'ի յեբուսացւոց, զարհու-

րեցան յոյժ . և խորհեցան տալ պատերազմ ընդ նմա , մինչև իցէ զօրացեալ թագաւորութիւն նորա . և ժողովեցան 'ի հովիտս տիտանացն , որ չէր բնաւ հեռի յերուսաղէմ ։ Եհարց Դաւիթ զԱստուած 'ի ձեռն քահանայապետին , եթէ ելից 'ի վերայ այլազգեացն այնոցիկ . և ասէ տէր ցԴաւիթ , ել . և մատնեցից զնոսա 'ի ձեռս քո ։

Զայս պատգամ առեալ Դաւթայ՝ յարձակեցաւ 'ի վերայ նոցա . և կոտորեաց զբազումս 'ի նոցանէ . և զբազումս ես արար փախստական . և էառ 'ի նոցանէ աւար բազում . և յափշտակեաց զչաստուածս նոցա , զորս թողեալ էին անդ 'ի փախչել իւրեանց ։ Եւ ասաց անդ Դաւիթ զբանս ինչ շնորհակալութեան՝ նման բանից հինգերրորդ և վեցերրորդ տանց այսր սաղմոսի . * Տէր խրամատեաց զթշնամիս իմ առաջի իմ, որպէս խրամատիցին ջուրք ‖ .

( Բ . Թագ . Ե . 20 ։ )

Իսկ փղշտացիք միաբանեալ ընդ այնոսիկ , որք էին արտաքոյ երկրին պաղեստինոյ , այսինքն ընդ ասորիս և ընդ փիւնիկեցիս , ( որպէս գրէ յովսեպոս յեօթներորդ գիրս նախնեաց գլ . Դ . ) դարձեալ գումարեցան բազմութեամբ յոյժ 'ի հովիտս տիտանացն ։ Եհարց դարձեալ Դաւիթ զԱստուած , եթէ ելից 'ի վերայ նոցա . և Աստուած ետ պատասխանի , թէ գնա 'ի տեղին , որ կոչի լալօնք՝ մօտ 'ի բանակն թշնամեաց . և յորժամ շարժին 'ի հողմոյ տերեւք ծառոց անտառին , 'ի լսել քո զձայնն՝ ելցես 'ի վերայ նոցա ։ Եւ զի յայն ձայն իբրև 'ի գործի հնչէր գոչումն բարկութեան Աստուծոյ , նովաւ զօրացեալ Դաւիթ՝ գնաց և եհար զայլազգիսն 'ի գաբաւոնէ մինչև ցգազեր . ( Բ . Թագ . Ե ։ ) Եւ այնուհետև խաղաղացաւ թագաւորութիւն նորա ։ Եւ տեսեալ 'ի գործս իւր յայսոսիկ զստուերական իմն պատկեր այնր , որ լինելոց էր 'ի ժամանակս գալստեանն Քրիստոսի , մարգարէական հոգւով սկսաւ երգել զսաղմոսս զայս , և ասել ։

**ԸՆԴԷՐ ԽՌՈՎԵՑԱՆ ՀԵԹԱՆՈՍՔ ։** Հարցմամբ խօսի , բայց ոչ այնչափ հարցանելով , որչափ զարմանալով . որպէս թէ ասացեալ էր . զարմանք է , թէ ընդէր հեթանոսք այսինքն փղշտացիք , 'ի լսել զինէն՝ թէ օծայ ես թագաւոր 'ի վերայ համօրէն իսրայէլի , փութանակ հանդարտելոյ , և յինէն զգուշանալոյ՝ խռովեցան և շփոթեցան յանձինս իւրեանց . և զի այսու յօժայն խորհուրդս բերան ,

ամին իրի յարէ զնի, և ասէ ։

Եւ ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս ։ Ժողովրդեամբք ոմանք իմանան զայլևայլ ազգս · բայց համանմանագոյն է իմանալ զնոսին իսկ զփղշտացիսն կամ զժողովուրդ նոցա · զի զայլոց ազգաց խօսի 'ի յաջորդ համարն որոշակի ։ Սնոտին ասա "'ի սնոտիս" յայտ առնէ զպատճառ զարմանալոյ իւրոյ 'ի վերայ փղշտացւոց, և կամի ասել · խորհուրդք և կամք նոցա ոչ միայն էին առանց իրաւանց · այլ ընդունայն, և առիթ իւրեանց կորստեան · զի այնու իսկ զրգռեցին զբարկութիւնն այ 'ի վերայ իւրեանց՝ առ 'ի վանել և կորուսանել զնոսա · որպէս և յայտ առնէ զայս 'ի համարն · 4, և 5 ։

Զայս խռովութիւն հեթանոսաց վերածէ վարդան 'ի ժամանակ մովսէսի · * խռովեցան ասէ շրջակայ ազգք „ 'ի հանելն մովսէսի զիէլ յեգիպտոսէ յեդմ ‖ ։ Բայց բարուք ևս է վերածել 'ի ժամանակ դաւթի ըստ գրելոյ մեր այժմ զխռովութենէ փղշտացւոց և այլոց ազգաց ։

Զոյանէ խօսելով մարգարէին՝ խօսի և վասն այնոցիկ հեթանոսաց և հրէից, որք 'ի լսելն զքնէ, թէ նա է թագաւոր իէլի և ած որդի, կամ 'ի զգալ նոցա՝ թէ նր է թագաւորութիւնն իէլի, խռովեցան յանձինս իւրեանց · և չարիս խորհեցան 'ի վերայ նորա ։ Քանզի 'ի սկզբան անդ՝ յորժամ լու եղև բանս այս, * Ո՞ւր է՝ որ ծնաւ արքայն հրէից ‖, խռովեցաւ հերովդէս՝ որ 'ի հեթանոսաց անտի էր, և ամենքին՝ որք էին ընդ նմա · ողպ գրի · մատթ · բ · 3 ։ Եւ ժողովրդեան հրէից տեսեալ՝ թէ հանդերձեալ է զօրանալ թգւորութիւն նր, բազում անգամ ժողովեցան 'ի միասին խորհել չարիս զնմանէ · և հուսկ յետոյ ժողովեալ 'ի սրահ քահանայապետին կայիափայ՝ խորհեցան և հաստատեցին սպանանել և բառնալ զնա 'ի միջոյ, մինչև տարածեալ իցէ թագաւորութիւն նորա ։ (մատթ · իզ · 3, և 4 ։ յովհ · ժա · 47, և 50 ։)

Բայց 'ի սնոտիս և 'ի զուր խորհեցան · Նախ՝ զի եթէ ինքն ոչ կամէր, ոչ կարէին առնել ինչ նմա ։ Երկրդ՝ զի այնու խորհրդով նոցա առաւել ևս բարձրացոյց նա զթագաւորութիւն իւր · վն զի թէ և թոյլ ետ նց ունել զինքն և սպանանել, բայց այնու իսկ փառաւորապէս թա-

գաւորեաց 'ի վերայ մահու և բռնութե՛ դժոխոց . և ա-
ռաւել ևս պայծառացոյց և տարածեաց զթագաւո-
րութիւն իւր յ՟ծ ՟ամ : Երրորդ՝ զի խորհուրդ նոցա դարձաւ
'ի վնաս նոցին . զի 'ի կամիլ նոցա բառնալ զթ՟գ՟րութի
նորա , սակայն իշխանութի իւրեանց ևս՝ զոր ունէին՝ բար-
ձաւ . իսկ հոգևոր իշխանութի նոցա իսպառ ջնջաւ : Եւ
ոչ այսչափ միայն , այլև 'ի հաստատութն չարութե նոցա՝
հասեալ չարիք 'ի վերայ ն՟ց . զի որպէս կամեցան 'ի ձեռն
հռովմայեցւոց սպանանել զթագաւորն փառաց , նոյն-
պէս և նոքեանք 'ի ձեռն հռովմայեցւոց սատակեցան ,
և հոսեալ ցրուեցան :

Քննել արժան է թէ ընդէ՞ր աստանօր , գործողութիքն ,
որք 'ի ք՟ն հայլեն , իբր եղեալ և կատարեալ պատմին :
Եթէ ըստ առթին քննեսցուք , ըստ որոյ ասացաւ այս
սաղմոս , յայտ է՝ թէ այն գործողութի՛ք արդէն եղեալ
էին , վասն որոյ և իբրև եղեալ դնին :

Իսկ եթէ ըստ մարգարէութեանն խորհեսցուք , այդ վ՟ս
երկուց է . մի՝ զի հայելով առ ա՟ծ՝ խօսի . իսկ առա-
ջի ա՟յ ա՟մ ինչ ներկայ է , եթէ անցեալն , և եթէ ա-
պագայն : Ուստի գրէ վանական վ՟րդ 'ի մեկն . յոբ .
գլ . ժզ . * և թէ ( ասէ ) զլինելոցն իբրև զեղեալ
ասէ , չէն ինչ զարմանք . զի զա՟յ ասէ . որում հանդեր-
ձեալքն իբրև զեղեալքս են ‖ : Երկրորդ՝ զի կամի յայտ
առնել զստուգութիւն անվրէպ կատարմանն . վասն զի 'ի
մարգարէութիւնս որովհետև մարգարէացեալ իրն ստոյգ
է , և անտարակոյս լինելի , բազում անգամ իբրև ե-
ղեալ յիշի . որպէս թէ արդէն կատարեալ իցէ . և ըստ
այսմ՝՝ փոխանակ ասելոյ , մանուկ ծնցի մեզ , որդի
տացի մեզ , գրեալ է՝ * Մանուկ ծնաւ մեզ . որդի
տուաւ մեզ ‖ . եսայ . թ . 6 : Նոյնպէս է տեսանել և
յայլ բազում մարգարէութիւնս . ևս և յորս գուշակի
թշուառութիւն և գերութի : Ուստի ասէ գէորգ վար-
դապետ 'ի մեկն . եսայ . * զլինելոցն գերութիւն իբ-
,, րև զեղեալ ասէ վասն անվրէպ կատարմանն ‖ . Ըստ
սոցին է իմանալ և աստ :

Եւ ներհակ այսմ՝՝ երբեմն փոխանակ դնելոյ յանցեալ
ժամանակն , դնի յապառնին . որպէս այն՝ զոր ասէ մար-
գարէս . սաղ . կե . 6 . * Ո՛ դարձոյց զծով 'ի ցամաք .
և ընդ գետս անցցեն ոտանաւորք ‖ . փոխանակ ասելոյ՝

անցին ։ Սոյնպէս է և յայլ բազում տեղիս ։ Որպէս և 'ի 4 · համարն այսր սաղմոսի · ուր փոխանակ ասելոյ՝ արհամարհեաց տէր , ասի՝ արհամարհեսցէ ։ Արդ՝ յետ յայտնելոյ մարգարէին զմիոյ ազգի և զժողովրդեան զընդունայն խորհուրդս և զխռովութիւնս , յարէ զչնի և զզանազան ազգացն և զիշխանաց նոցա , և ասէ ։

Բ · Յանդիման եղեն թագաւորք երկրի · և իշխանք ժողովեցան 'ի միասին՝ վասն տեառն , և վասն օծելոյ նորա ։

(Տանգէոս ։)

Այս այն է , զոր եդաք 'ի վերոյ , թէ յետ խորտակելոյ դաւթի զփղշտացիսն , որք էին 'ի պաղեստին , թագաւոր նոցա , և թագաւորք ասորւոց և փիւնիկեցւոց , որք էին արտաքոյ պաղեստինոյ , եկին առ միմեանս · և ամ̃քին 'ի միասին խորհեցան տալ պատերազմ սաստիկ ընդդէմ տեառն , և ը̃դէմ դաւթի օծելոյ 'ի տեառնէ ։ Վասն որոյ ասէ ։

Յանդիման եղեն թագաւորք երկրի ։ Յանդիման լինիլ՝ ոչ էր ժողովիլ 'ի միասին , և խորհուրդ առնել ոչ 'ի ծածուկ , այլ յանդիման , ք̃ն յայտնի ։ Եւ էին ասէ սոքա թագաւորք երկրի · որով յայտ առնէ թէ ն̃ք ամ̃քին ոչ էին թ̃ւրք պաղեստինոյ , ք̃ն երկրին աւետեաց , այլ՝ թագաւորք երկրի , ք̃ն այնոցիկ գաւառաց , որք էին արտաքոյ պաղեստինոյ · զի արձակաբար դնելն ասա երկրի՝ ցուցանէ որոշումն տալ յերկրէն աւետեաց ։ Եւ յիրաւի իսկ յայտ է՝ թէ թագաւորքն ասորւոց և փիւնիկեցւոց , որք ժողովեալ էին 'ի վ̃ր ն̃ր ընդ փղշտացւոց , էին արտաքոյ երկրին պաղեստինոյ · և թագաւորն փղշտացւոց եւս թէպէտ ունէր զթագաւորութիւն իւր 'ի պաղեստին , բայց ըստ ազգի իւրում ոչ էր 'ի պաղեստինոյ , այլ՝ 'ի կրետեայ · զի փղշտացիք 'ի կրետեայ կղզւոյն էին , և բազումք եւս 'ի գամրաց ։ Իսկ փոխաբերութեամբ առեալ՝ երկիր դնելով ցուցանէ , թէ այն թագաւորք յիմարութեամբ էին ժողովեալ , և անմտութեամբ խորհէին · զի երկրաւորք էին՝ և յերկրի բնակեալ , և խորհէին հակառակիլ այնմ՝ որ բնակեալ է յերկինս , և ունի 'ի ձեռին զա̃մ ծագս երկրի ։ Եւ կամ թէ երկրաւորաբար կամ երկրաւոր խորհրդով ժողովեալ էին ընդդէմ երկնաւորին , ք̃ն

ընդդէմ տեառն․ յոյր սակս մասնաւորապէս յաւելու, և
ասէ ։

Ս ․ ԴԵՒԱՑՆ ։ Նաև այս կրկնակի կարէ իմացեալ լինել․ մի՝
թէ այն այլազգիք որովհետև ոչ ճանաչէին զտէր,
վարկանէին զնա իբրև զա՟ծս իւրեանց․ և համարէին՝
թէ ՚ի հալածել զօծեալն տեառն, զի՟ զդաւիթ, ոչինչ
կարէ առնել ընդդէմ ն՟ց տ՟ր․ ուստի և կարծէին՝ նմա
եւս յաղթել ։ Երկրորդ՝ թէ ՚ի կամիլն հալածել զդա-
ւիթ, այնու իսկ կամէին հալածել նաև զա՟ծ, որ կա-
ցուցեալ էր զդաւիթ թ՟գր ի՟ղի․ զի որ հակառակի
իշխանի ումեք յ՟այ կացուցելոյ՝ նովին իսկ հակառա-
կի ա՟յ ։ ( Հռոմ․ ժգ․ 3 ։ ) ո՟պ ի՟էլացիք հակառակե-
լով և տրտնջելով ընդդէմ մովսէսի և ահարօնի, նո-
վին համարեցան հակառակիլ և տրտնջել ընդդէմ ա՟յ․
որպէս և վկայեաց մովսէս՝ յասելն․ * Ոչ զմէնջ է տըր-
տունջդ ձեր, այլ զա՟յ ‖․ ելից․ ժզ․ 8 ։ Նաև ա՟ծ ասաց
ցսամուէլ վասն ի՟էլացւոց, որք ընդդէմ կամաց սամուէլի
կամեցան ունիլ զթ՟գր․ * ոչ եթէ զքեզ անարգե-
ցին, այլ զիս մերժեցին չթագաւորել ՚ի վ՟ր ն՟ց ‖․ ա՟․ թագ․
ը՟․ 7 ։ Սերեմն և այլազգիքն, որք ժողովեցան ընդդէմ
դաւթի կացուցելոյ յ՟այ թագաւոր ի՟էլի, նովին իսկ
յայտ առնէին ժողովիլ և ընդդէմ տեառն ։ Ուստի և իրա-
ւամբ ՚ի միասին դնէ՝ ասելով ։

Ս ․ Ա՟Ծ ․ և ․ Ք՟Ս ․ ՕԾԵԼՈՅ Ն՟Ր ։ Որ բառիս "օծեալ", ըստ
ձայնի եբրայականին մասիախ, կամ ըստ հոլովին ասա-
ցից մեսիխօ, իմացեալ լինի նոյն ինքն դաւթի․ որպէս
և ՚ի սաղ․ ժթ․ 6 ։ և ձգ․ 9 ։ են ։ Վասն զի բազում
ուրեք ՚ի սուրբ գիրս թագաւորք՝ օծեալ կոչին ։ Ըստ
որոյ և յասելն աստ՝ * վասն տ՟ն և վ՟ս օծելոյ ն՟ր ‖․ կա-
մի ասել, վ՟ս տ՟ն և վ՟ս դաւթի, զի՟ վ՟ս ընդդիմանալոյ տ՟ն
և դաւթի․ կամ որպէս դնի ՚ի բնագիրս եբրայեցւոց՝ և
յայլ թարգմանութիւնս, ընդդէմ տեառն՝ և ը՟դէմ
դաւթի, որ օծեալ էր թագաւոր ի՟էլի ։

Բայց ըստ ճշմարտութեան իրին՝ բառիւս օծեալ ( որ է
յունարէն՝ խռիստօս, ) իմացեալ լինի աստ ք՟ս որդին
ա՟յ․ որոյ վասն ժողովեցան իշխանք և ժողովուրդք, զի
բարձցեն զխաչատակ նորա յերկրէ․ ըՙմ, զոր ասացին ա-
ռաքեալքն յաղօթելն իւրեանց առ ա՟ծ, * ժողովե-
„ ցան արդարև ՚ի քաղաքիս յայսմիկ ՚ի վերայ ս՟ր որդ-

,, ու քոյ յիսուսի՝ զոր օծերն , հերովդէս և պոնտոս պի-
,, ղատոս՝ ազգօք և ժողովրդովք իՀի , առնել՝ որչափ
,, ձեռն քո և կամք յառաջագոյն սահմանեցին լի-
նել ‖ . գործ . դ . 27 ։

Քանզի նախ առաջին հերովդէս ասկաղոնացի 'ի ըս-
կըզբան անդ կամեցաւ սպանանել զքս . յոր սակս իսկ
հրամայեաց կոտորել զամենայն մանկունս բեթղեհեմի ,
որպէս զի և զքս ընդ նոսա սպանցէ ։ Իսկ հերովդէս անթի-
պաս այսն արարեալ զքս արհամարհեաց զնա . և իբ-
րև խելագարի զգեցոյց նմա հանդերձ սպիտակ , և ետ
տանել անդրէն առ պիղատոս . և պիղատոս գան հա-
րեալ զնա չարաչար՝ ետ զվճիռ մահու նորա ։ Զայս և
ինքն իսկ քրիստոս գուշակեալ էր յառաջագոյն՝ յասելն .
* Մատնեսցի հեթանոսաց և կատակեսցի . և հար-
կանիցեն և սպանանիցեն զնա ‖ . ղուկ . ժը . 32 ։

Սոքա թէպէտև ոչ ժողովեցան 'ի միասին ըստ տեղւոյն
վասն քսի , բայց 'ի նոյն խորհուրդ միաբանելով ընդդէմ
նորա՝ ասեն 'ի միասին ժողովել վասն նր ։ Իսկ իշխանքն
հրէից բազում անգամ և ըստ տեղւոյն ևս ժողովեցան
'ի միասին վասն նր սպանանել զնա . որպ յայտ է յաւե-
տարանէն . և հանդերձ ժողովրդեամբք չարախօս ե-
ղեն զնմանէ առաջի պիղատոսի և հերովդէի , մինչև
հանել զնա 'ի խաչ . ( ղուկ . իգ . 2 . և 10 . )

Արդ՝ որպէս որք ընդդէմ դաւթի ժողովեալ էին , համա-
րէին ժողովել և ընդդէմ այն , սոյնպէս և ժողովել սոցա
ընդդէմ քսի օծելոյ նր՝ համարեալ լինէր միանգամայն
ընդդէմ այն . զի թէպէտ խորհուրդք և ջանք սոցա ուղ-
ղակի ընդդէմ օծելոյն էին , յ ընդդէմ քսի , և ոչ ընդ-
դէմ այ , մանաւանդ թէ ընդ պատրուակաւ փառացն
այ , և իբր նախանձու պատուոյ նորա , բայց ընդդէմ
այ ևս էին . վն զի քրիստոս 'ի ձեռն բանից և գործոց և
սքանչելեաց իւրոց յայտնի եցոյց , թէ ինքն է ճշմա-
րիտ միածին որդի այ՝ հաճոյ նմա յամենայնի և սիրելի .
( յովհ . ե . ) Իսկ արդ՝ որ խորհի չարիս ընդդէմ այնմ ,
որ յայտնի ցուցանէ զինքն լինել սիրելի որդի թա-
գաւորի , այնու իսկ համարի խորհել չարիս և ընդդէմ
թգրի . և որ ատէ զորդի սիրելի , ատէ և զհայր նորա .
( յովհ . ե . 23 . ) Սերեմն և չար խորհուրդք սոցա լի-
նելով վասն քսի՝ եղեն և վասն այ . և յատելոյ զօծեալն

այ զքն՝ ատեցին և զհայր նորա զաստուած ։

Այս բան մարգարէին հայի և յայնս, ովք եղեն յետ համբարձմանն քի. զի և յայնժամ բազում թագաւորք և կայսերք, իշխանք և դատաւորք բազում չարիս խորհեցան վասն տն և վն օծելոյ նր. յյ վասն բառնալոյ զհաւատս և զօրէնս և զբացարձակ տէրութիւնն քրիստոսի. որպէս տեսցի 'ի յաջորդ համարն ։

Իսկ Նարեկացին սկզբնաբար վերածէ զայս յառաջին ժողովումն հրէից ընդդէմ տեառն, զի ասէ 'ի բանն ղդ, կամ ղէ 'ի Ճառ մեռոնին. * բանն դաւթեան սաղմո-
,, սին զտիրական տնօրինականացդ սկզբնաւոր կրիցդ
,, խորհուրդ ճշմարտաբար վերասահմանէ. ժողովե-
,, ցան, կուտեցան իշխանք ժողովրդոց վասն տն և վասն
,, օծելոյ նորա ‖ ։ Այլ գիտելի է, զի որ աստանօր 'ի մեզ դնի, * վասն օծելոյ նորա ‖, 'ի յոյնս և 'ի լատինս դնի՝ վասն քսի նր. զի որում անունս "քս" օծեալ թարգմանի ։ Իսկ պատճառ անուանելոյն օծեալ կամ քս՝ այս է, զի մարդկութիւնն քսի եղև օծեալ յյ նր. և այս կրկնակի. Նախ՝ գոյացապէս՝ 'ի ձեռն անսահման սրբութեան ածութեն. զի մարդկութի նր միաւորելով ընդ ածութեան յանձին բանին՝ սրբութի ածութեն եղև նր ։ Իսկ երկրորդ՝ ունակապէս՝ 'ի ձեռն շնորհաց. զի վասն գոյացապէս միաւորելոյ նր ընդ ածութե եղեն 'ի նմա ամ շնորհք ըստ ամ լիութե. որով և անձն այն՝ որ էր ած, և որդի այ, և թգր թագաւորաց, ըստ մարդկութեան ևս օծաւ թգր թգրաց, դատաւոր ամի, քահանայապետ նր, ևն. և վասն այսպիսի օծութեց անուանեցաւ քս, յյ օծեալ. տես և 'ի սաղ. խդ. Թ ։

Մարգարէն յայտ արարեալ զմիաբանել թգրաց և իշխանաց վասն տն և վն օծելոյ նր, յայտ առնէ այժմ զխորհուրդս և զբանս նոցա. իբր թէ զինչ խորհէին և զինչ խօսէին վասն նց, յյ վն տն և վն օծելոյ նր. նմին իրի ըստ նց կարգելով զբան իւր՝ խօսի 'ի դիմաց նց, և ասէ ։

գ. Խզեսցուք զկապանս նոցա. և ընկեսցուք 'ի մէնջ զլուծ նոցա ։

Այս եղև դիտումն և վախճան, որոյ վասն այլազգիք՝ մանաւանդ փղշտացիք ժողովեցան 'ի միասին տալ

պատերազմ ընդդէմ դաւթի · իբր զի բառնալով զթագաւորութիւն նր, ևս և վանելով զզօրութիւնն նոյ՝ կարասցեն խզել զկապանս նոցա ։ Զի գիտելով սոցա՝ թէ դաւիթ զօրաւոր ոմն է, և ապաւինեալ է 'ի տէր ած իւր, խորհեցան 'ի մէջ իւրեանց, և ասեն · եթէ թողումք զնա այնպէս, նա և ևս զօրանայ · որով և իշխեսցեն տիրեն 'ի վերայ մեր, և դնեն մեզ հարկս և ծառայութիւնս ծանունս ։ Զայս խորհելով՝ ասեն, եկայք վանեսցուք զդաւիթ և զտէր և զած նոցա ։ Իսկ թէ զիարդ, նմանութեամբ իմն յայտ առնել կամելով՝ ասէ ։

Խզեսցուք զկապանս նոցա · և ընկեսցուք 'ի մէնջ զլուծ նոցա ։

Այսինքն մի թողցուք, զի դիցեն նոքա 'ի վզի մեր զկապանս, կամ զհարկս · և եթէ եդեալ ևս իցեն, հատցուք · որով * և ընկեսցուք 'ի մէնջ զլուծ նոցա ‖ · իմ մի առցուք զլուծ ծառայութեան նց · այլ ընկեսցուք 'ի բաց · կամ մի մնասցուք ընդ լծով ծառայութե նց · կամ որ նոյն է, մի բնաւ ծառայեսցուք նոցա ։

Զհարկսն՝ (որք են պարտաւոր տուրք, զորս տան ստրուկք), կապանաց կամ ըստ եբր՝ փոկոց նմանեցուցանէ · զի որպէս 'ի ձեռն կապանաց կապին և արգելեալ լինին իրք, սոյնպէս և 'ի ձեռն հարկաց՝ կապին և արգելեալ երեւին մարդիկ, այսինքն հպատակեալ համարին ։ Արդ՝ որպէս արգելեալն կապանօք՝ խզելով զկապանս ազատի · սոյնպէս և որք հարկս տալով հպատակեալ են այլոց, յոչ տալն զհարկս՝ իբրև թէ խզեն զնոյնս, և համարին ազատ լինել ։

Իսկ զծառայութիւնն նմանեցուցանէ լծոյ կամ պարանի · զի որպէս՝ որ ընդ լծով մտանէ, և կամ պարանաւ ձգէ ինչ, հարկ է նմա տանել զծանրութիւնն՝ զոր բառնան 'ի սայլն, սոյնպէս և որ կայ 'ի ծառայութեան այլոց, հարկ է նմա կրել զծանրութի աշխատանացն, զորս հրամայեն նմա ։ Արդ՝ որպէս որ կայ ընդ լծով, յընկենուլն զայն յիւրմէ՝ ոչ ևս տանի յայնժամ զծանրութիւն սայլին · սոյնպէս և որ թողու զծառայութիւնն, ոչ ևս կրէ զծանրութիւն այնր աշխատանաց ։ Եւ ահա ըստ այսմ նմանութեան խօսի աստ դաւիթ 'ի դէմս այլազգեացն ։

Իսկ խօսելով 'ի դէմս իշխանացն հրէից, այսինքն քահանայից, դպրաց, և փարիսեցւոց, եւն, որք եդեն իբ-

րև զայլազգիս առ քո, կապանօքն սոյն խնամոյ զհա-
ւատս քոյ, իսկ ըստ ամին զօրէնս նր. կամ կապանօք զօ-
րէնսն, և ըստ ով զպարտաւորութիւն պահելոյ զայն. և
կամ՝ երկրպագութեամբք ևս զնոյն օրէնսն։ Զի թէպէտ
օրէնքն քո քաղցր էին և հեշտին, բայց նոցա երևէին
կարգինք դժուարին, և լուծ անհնարին. վն և ամ՝
հնարիւք ջանային խզել զնոյն, և ՚ի բաց ընկենուլ։
Իսկ պատճառ այսպէս խիստ համարելոյ նոցա զօրէնս
քոյ՝ այս էր, զի վարք նց օտար էին ՚ի վիճակութէ նր,
և հակառակ վարուց նորին. որով և յանդիմանէր նա
զնս. նաև բանիւք ցուցանէր, թէ չար են գործք նց.
և յայտ առնէր ևս նոցա, թէ հակառակ են նոքա այ,
և եղծիչ օրինաց նորա։

Զայսոսիկ լուեալ նոցա ՚ի քէն՝ կատաղէին և հաչէին
յանձինս իւրեանց։ Եւ տեսեալ ևս՝ թէ Քրիստոս յամի
հզօր է՝ ՚ի բանս, ՚ի գործս և ՚ի սքանչելիս, ( ղուկ.
իդ. 19. ) և կամի ևս զլուծ իւր դնել ՚ի վր իւրեանց,
խորհեցան և ասեն, եթէ թողումք զնա այնպէս, նա
խափան զօրանայ. և դնէ ՚ի վերայ մեր յիրաւի զանլուծ
կապանս, և զլուծս ծանունս։ Զինչ արար. եկայք
սպանցուք զնա. և այնու խզեսցուք զկապանս օրինաց
նորա, և ընկեսցուք ՚ի մէնջ զլուծ նորա, ոյ զպարտաւո-
րութիւնն պահելոյ զբանս նորա. և մի կացցուք ՚ի ծա-
ռայութեան նր։ ( յովհ. ժա. 47. մինչ ՚ի վերջն, և
ժբ. 10, և 11։ ) Զայսպիսի խորհրդոց սոցա բա-
զումքինչ գրէ իմաստունն ՚ի գիրս իմաստութեան. գլ.
բ. սկսեալ ՚ի 1 համարոյն՝ մինչև ՚ի 22։

Զայս խորհուրդ տագնապէր և սատանայ. զի կաս-
կածելով, թէ քն կարելոց է զնա չարաչար կապա-
նօք. և ՚ի ձեռն օրինաց իւրոց՝ իբրև կապանօք սիրոյ
ձգելոց է առ ինքն զմարդիկ՝ ազատելով զնոսա ՚ի ձե-
ռաց իւրոց, ( ովս. ժա. 4. ) խորհեցաւ ընդ իշխանս
և ընդ զօրս իւր, և ասէ, եկայք խզեսցուք զկապանս
նորա. և թափեսցուք զլուծ ՚ի ձեռաց նորա։ Եւ արդ՝
քանզի օրէնք քո էին օրէնք հօր իւրոյ, ( յովհ. ժբ.
49. ) ՚ի կամին հրէից, ևս և հեթանոսաց և դիւաց՝
մերժել և խզել զօրէնս քո, նոյնին իսկ կամէին
խզել զօրէնս հօր նորա. և վնկ ոչ դնէ առ մարգարէն
ասել նոցա, խզեսցուք զկապանս նր, այլ նց. ոյ զկա-

սպանս ՚Տն և օծելոյ նր, կամ զկապանս քո և հօր նր ։
Այս մարգարէութիւն հայի և յայնս, որք եղեն յետ համբարձմանն քո․ զի որպէս ՚ի վերոյ ասացաք, զնոյն ևս տեսեալ թագաւորաց և իշխանաց, թէ պայծառանայ և տարածի օրէնքն քո և հօր նորա Ճշմարտին նդ, և օրըստօրէ բազմանան և զօրանան քրիստոնեայք, համարելով՝ թէ այն օրէնք՝ կապանք դժուարին են, և լուծ անտանելի, բազում օրինակաւ ջանացան խզել զայն, և ՚ի բաց ընկենուլ․ որպէս յայտ է ՚ի գործոց առաքելոց, և յայլ անհամար պատմութեանց ուսանելոց ՚ի վարս սրբոց և յայլ գիրս ։

Ոմանք ՚ի մեծամեծ և յերևելի վիճակաց համարին զայս բան ասացեալ ՚ի բերանոյ առաքելոց, ևս և ՚ի բերանոյ հաւատացելոց՝ ՚ի խզել նոցա զկապանս կռապաշտութեան, և յընկենուլ յանձանց իւրեանց և յայլոց զլուծ հին օրինացն ։ Ոմանք ևս համարին ասացեալ ՚ի բերանոյ ՚Տն և օծելոյ նր ընդէմ սատանայի և հրեշտակաց նորին՝ ՚ի խզելն զկապանս և զչարաչար լուծս, զորս եդեալ էին նոքա ՚ի վերայ ազգի մարդկան, որով և ձգէին և վարէին զնոսա ՚ի պէսպէս անօրէնութիւնս ։

Իսկ ոմանք համարին ասացեալ ՚ի բերանոյ հրեշտակաց ընդդէմ հրէից և տանջողացն քո առ ՚ի փանել զնոսա, և խզել զորս արարին ը քո ։ Ուր գրէ բարսեղ վճկ ՚ի մեկն․ մարկ․ ԺԳ․ * զի եթէ առէ յաղագս
,, անարգանացն զոլոյ ՚ի տղամ ոչ ժուժեցին հրեշ-
,, տակքն, այլ հրդեհեցին զերկիրն բնակչօք, որչափ
,, ևս առաւել վասն ՚Տն իւրեանց խստագոյն նախանձ
,, ցուցեալ էին․ վկայէ այսմ և դաւիթ ասելով ՚ի
,, դիմաց հրեշտակացն․ խզեսցուք զկապանս նոցա ի
,, զբևեռան․ և ՚ի բաց մերժեսցուք զլուծ նց ի զխաչն ‖ ։

Բայց այսպիսի մեկնութիւնք յաւէտ յարմարականք ասին՝ քան այլաբանականք ։

Բարոյապէս՝ կապանօք նշանակին ունակութիւնք մեղաց․ և լծով ծառայութիւն անցաւորաց․ զորս արժան է խզել յանձանց մերոց․ յոր միտ մեկնէ ՚ի բարոյական միտս վերոյիշեալ բարսեղ վճկ ՚ի մեկն․ մարկ․ գլ․ Ժբ․ * խզեսցուք առէ զկապանս և զատանս
,, ( անցաւորաց )․ զի այնպիսի են երկրաւորքս ‖ ։

Արդ՝ յայտ արարեալ մարգարէին զխորհուրդս և

զջանս թ՟գրաց և իշխանաց ընդդէմ տ՟ն և օծելոյ նորա, յայտ առնէ այժմ և զխորհուրդս ա՟յ 'ի վերայ ն՟ց · իբր թէ զինչ խորհէր ա՟ծ զն՟ցէ, և զիարդ հայէր առ նոսա · նախին իրի ասէ ։

Դ · Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք · և տ՟ր արհամարհեսցէ զնոսա ։

Նաև զայս՝ ծիծաղել զնոքօք, յայտ է թէ ոչ իմացեալ լինի այնպէս, որպէս թէ ա՟ծ իբրապէս ծիծաղիցի · զի այս գոլով գործ զգայական և նուաստ, ամենևին հեռի է յա՟յ · այլ իմացեալ լինի ըստ այնմ, զի ա՟ծ ճանաչէ զնոսա առարկայ ծիծաղելոյ, կամ որ նոյն է՝ ճանաչէ զնոսա ծիծաղելիս և արժանիս ծիծաղելոյ · և առնէ՝ զի լինիցին ծիծաղելի ։ Այնպէս և յասելն զա՟յ, արհամարհել զայլս՝ ոչ է պարտ իմանալ այնպէս՝ որպէս թէ ա՟ծ կրիւք արհամարհանաց մերժէ զնոսա, այլ թէ այնպիսի ինչ առնէ նոցա, որով յայտ առնէ՝ թէ արհամարհելի են նոքա · կամ թէ զայն ինչ առնէ ը՟նս, զոր առնեն մարդիկ յարհամարհելն զայլս · բայց ոչ ըստ մարդկան, * այլ գերագոյն ա՟միւ քան զնիւթականս ձև և զնմանութիւն ‖ · ո՟պ գրէ Շնորհալին առ միջագետ · երես 275 ։

Իսկ պատճառ այսպիսի ոճով վարելոյ սուրբ գրոց 'ի խօսելն զա՟յ՝ այս է · զի մարդիկ գոլով փակեալ ընդ զգայութեամբք և ընդ կրիւք, զրեթէ յամ գործս և 'ի բանս իւրեանց նոքօք զգածեալ վարին և խօսին ։ Աստի եթէ և անմարմին գործողութիւնք նմանաբանութեամբք զգայականութեան կամ կրականութեան բացատրեսցին՝ դիւրաւ ըմբռնին 'ի ն՟ցէ, քան եթէ առանց այսպիսեաց բացատրեալ լինէին, թող զի անմարթ իսկ էր բացատրել ։ Իսկ մեք զգործողութիւնս ա՟յ և հրեշտակաց այսպիսեօք յայտ առնեն մեզ սուրբ գիրք · որպէս առնէ և աստ մարգարէն · յասելն ։

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոքօք · և Տէր արհամարհեսցէ զնոսա ։ Այսինքն, ա՟ծ՝ որ բնակեալն է յերկինս, հայեցեալ 'ի խորհուրդս և 'ի ջանս նոցա, այս է՝ այլազգեացն, ծիծաղեսցի զնոքօք, և արհամարհեսցէ զն՟ս ։ Ուր յապառնին դնելով ծիծաղեսցի և արհամարհեսցէ, տայ իմանալ և յանցեալն, զի զեղելոյ խօսի · ո՟պ

թէ առէր, ծիծաղէր զնոքօք, և արհամարհէր զնոսա. Այլ զայս առէ մարգարէն՝ հայելով ՚ի խնամս այ՟ և ՚ի վրէժխնդիր արդարութիւն նր՟. զորոյ զփորձն իսկ տեսեալ էր ընդդէմ այնոցիկ թշնամեաց իւրոց. Ուր զի ՚ի գալ նոցա ՚ի վր՟ իւր՝ խորտակեաց զնոսա տր՟. որով և գիտաց դաւիթ, թէ անդէն իսկ ՚ի խորհիլ նոցա զչարիս ընդդէմ իւր՝ * ծիծաղէր զնոքօք ած՟ ‖. վս՟ զի տեսեալ՝ թէ զայնպիսի ինչ խորհէին, որով ոչ կարէին ժամանել բաղձանաց իւրեանց, գրեթէ ծաղր արարեալ զնոսա՝ ծիծաղէր ՚ի վերայ նոցա.

Այլ զի կամէին նք՟ այսու խորհրդովք նաև ընդդէմ այ՟ զինել, ած՟ ոչ միայն ծիծաղէր ՚ի վերայ նց՟, այլև * արհամարհէր զնոսա. ‖ ըս՟ այնպէս առնէր, զի արհամարհեսցին նոքա, և եղիցին ՚ի նախատինս. Եւ և ունայն լիցին ամ՟ խորհուրդք նոցա. վս՟ զի ինքն էր, որ խորտակելոց էր զնոսա բարկութբ՟ իւրով. զի որպէս ինքն կացուցեալ էր զդաւիթ թգ՟ր, և կամէր՝ զի այնպէս կայցէ, ինքն իսկ վանէր զյարուցեալսն ՚ի վերայ նորա. Որդ՝ եթէ ծիծաղէր ած՟ ՚ի վերայ թշնամեացն դաւթի ծառայի իւրոյ, քանի եւս ՚ի վերայ թշնամեացն քի՟ միածնի որդւոյ իւրոյ. Ծիծաղեցաւ յիրաւի, և ծիծաղելի եցոյց զնոսա ամ՟ հր՟. Որք խորհեցան ջնջել յերկրէ զթգ՟րութիւնն քի՟, և ած՟ այսու իսկ բարձրացոյց և զօրացոյց զնոյն յծ՟ ամ՟. Որք կամեցան խայտառակ մահուամբ անարգ երևեցուցանել զքրիստոս. և ած՟ այնու մահուամբ փառաւորեաց, և յանդէն երկրպագելի եցոյց զնա. Որք ջանացան զգուշանալ մահու նորա, զի մի յարիցէ, կամ զի մի քարոզեսցի յարուցել. իսկ ած՟ այնու զգուշութեամբ նց՟ առաւել ևս յայտ յանդիման եցոյց հր՟. և բերանով թշնամեաց նորա ետ քարոզել, թէ ճշմարտապէս յարուցեալ է, և յարուցիչ է ամցն՟. Այնպէս արար նոցա ած՟ և յայլ ամ՟ ջանս հնարից նոցա. որով և ծաղր նախատանաց արարեալ զնոսա՝ արհամարհեաց զնոսին.

Իսկ առեալն աստ զայ՟, * բնակեալ յերկինս ‖. ՚ի կըրկին միտս խնդրեալ լինի. մի՝ թէ ած՟ է յանսահման գերազանցութեան և յանհաս բարձրութե՟. վս՟ զի ինքնին յէութեան իւրում է յանչափ գերազանց է յանբաւս կատարեալ. Այլ յայս միտ՝ նմանութեամբ միայն

ասի զնմ՝ բնակեալ յերկինս . իբր զի սովին ցուցանի մեզ գերազանցութիւն և մեծվայելչութի փառաց նր . զի որովհետև մեք ՟ք զերկինս բարձրագոյն ինչ ոչ տեսանեմք , 'ի կամին յայտնել զբարձրութիւն գերազանցութեանն այ՝ 'ի ձեռն նմանութե երկնից նշանակեմք զայն , ասելով . ած յերկինս բնակի . տր յերկինս է . Եզ . և ըստ այսմ երկնիք պատմեն մեզ զփառս այ . զի բերելով 'ի նմանութիւն բարձրութեն այ ըստ տկարութե մերում յայտնեն մեզ զմեծութիւն փառաց նորա :

Երկրդ՝ ասի զնմ յերկինս բնակիլ իրապէս ևս . զի Թէպէտ ած յամ տեղիս է գոյացապէս , բայց հայելով 'ի բառդ բնակիլ , ոչ ասի բնակեալ յերկրի , այլ՝ յերկինս . ոչ զի անդ առաւել է՝ ք յերկրի , այլ զի այն է իբր աթոռ նորա , և երկիրս իբր պատուանդան . վս զի անդ յերկինս առաւել յայտնի լինին փառք ածութեան նորա՝ քան յերկրի : Որ քեզ օրինակ զհոգի մարդոյ , որ Թէպէտև է յամ մասունս մարմնոյ իրապս և գոյացապէս , բայց զօրութիւն նորա առաւել պայծառ երևի 'ի գլուխն և ասի բնակիլ 'ի նմա : Յայս միտ ևս ասի զնմ բնակիլ յարդարս . զի նաև 'ի նոսա յայտնին փառք նորա . ըստ որում ասի 'ի սաղ . ձը . 7 . * Ած փառաւորեալ է 'ի խորհուրդս սրբոց իւրոց || :

Իսկ Թէ ընդէր ոչ ասէ աստ մարգարէն , ած . այլ՝ բնակեալն յերկինս . Թուի Թէ այս իցէ պատճառն . զի որովհետև ասաց 'ի վերոյ՝ 'ի համարն , 2 . յանդիման եղեն Թշնմք երկրի , պատշաճ էր աստ ասել զնմ՝ Թագաւոր երկնից , կամ բնակեալն յերկինս , առ 'ի յայտ առնել նախ՝ Թէ ոչինչ զօրեն խորհուրդք նոցա ընդդէմ այ . զի նա յերկինս է բնակեալ . իսկ սոքա յերկրի : Երկրդ՝ Թէ խորհուրդք նոցա ոչ ծածկին յայ . զի նա գոլով բնակեալ 'ի բարձունս՝ ( օրինակաւ իմն խօսելով ) 'ի վերուստ անտի իբրև 'ի դիտարանէ յայտնի տեսանէ զխորհուրդս նոցա :

Իսկ 'ի յետոյն հատուածի յասէն , * և տէր արհամարհեսցէ զնոսա || . բառս տէր՝ է իբր կրկնումն նորին , և նշանակէ զնոյնն , այս զբնակեալն յերկինս . և այս ոճ կրկնելոյ զնոյն այլևայլ անուամբք՝ յաճախ է յոյժ 'ի սուրբ գիրս : Բայց ասելի է ևս , Թէ մարգարէն վսկ առնէ աստ զայս կրկնումն , զի ցուցցէ՝ Թէ ած ոչ մի-

այն բնակեալ է յերկինս , այլ. բացարձակ տէր է ամի .
և առանց թոյլ տալոյ նորա ոչինչ կարեն առնել այն
թգ̃րք երկրի . մանաւանդ թէ նա ինքն տէր՝ որպէս և կա-
մի՝ կարէ եղծանել և ցրուել զնոսա . յոյր սակս իսկ յա-
րէ զինի , և այլն .

Ե . Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով . և սրտմտութեամբ իւրով խռովեսցէ զնոսա .

Յասել զայ՝ խօսել բարկութեամբ , և խռովել սրտմտու-
թեամբ , ոչ է պարտ իմանալ յատկապէս՝ որպ̃ ասացաք 'ի
նախընթաց համարն , այլ նմանութբ . վասն զի բար-
կութիւն՝ ընդ նմին և սրտմտութի , որ է սաստիկ և տեւ-
ղական բարկութի , պատճառեն զայլայլութիւն , որ ոչ
կարէ լինել յած . զի ած անփոփոխ է և անայլայլե-
լի , և բաղդրութեամբ զարմանէ զամ̃ , և խաղաղութբ
դատէ : Արդ նմանութբ միայն ասի զայ բարկանալ
և սրտմտել , կամ առնել զինչ բարկութբ և սրտմտու-
թեամբ , յորժամ առ վրէժխնդրութի՝ խստիւ պատժէ
զոք . և այս մանաւանդ յայնժամ , յորժամ այն պա-
տիժ չէ օգուտ պատժեցելոյն առ յաւիտենական փրը-
կութիւն .

Իսկ գիրք սուրբ վնկ այսպիսի ոճով վարին , զի ազդու-
արասցեն մեզ զբանն , ցուցեալ զեղանակ վարելոյն
այ՝ յեղանակէ վարելոյ մարդկան . քանզի մարդիկ 'ի
բարկանալն՝ այսպէս առնեն . իբր զի 'ի խստանալն
բարկութեամբ կամին չարիս հատուցանել՝ ոչ առ 'ի օգ-
տել , որպէս առնեն բժիշկք , այլ՝ առ 'ի վնասել : Այս-
յայս օրինակէ առիթ առեալ , յորժամ տեսանեմք՝
զի ած պատժէ զոք այնպիսի պատժովք՝ որ չէ նմա
օգուտ՝ ասեմք , բարկացեալ է տէր 'ի վր նր . իսկ յոր-
ժամ պատժէ այնպիսի պատժովք , որ լինի նմա օ-
գուտ , ասեմք , զայն առնէ ոչ բարկութեամբ , այլ 'ի սի-
րոյ և 'ի գթոյ ( առակ . գ̃ . 12 . ) կամ 'ի հայրական
բարկութենէ . և զի սաստ բստ առաջնոյն է բանս . վն̃
այսորիկ ասէ :

Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով , և սրտմտութեամբ իւրով խռովեսցէ զնոսա : Յայնժամ ասէ , յս̃ է յորժամ
յարձակեցան այլազգիք 'ի վերայ դաւթի յերկրում
նուագի անդ . զի յայնժամ խօսեցաւ ընդ նս ած բար-

կութեամբ, և խռովեաց զնս սրտմտութբ, զի սաստիկ բարկութեամբ. վս զի յեղանել նց 'ի վր դաւթի երկդ-մնգամ, ասաց ած ցդաւիթ. եկեսցես 'ի վերայ նց 'ի լսել զձայն շարժման տերևոց անտառին, որ կոչի լալենք. և այնու ձայնիւ գրեթէ իբրև գործեաւ բարկութեան իւրոյ երևեցաւ խօսիլ ընդդէմ նոցա. Այլ թէ յիրաւի այն ձայն եղև գործի բարկութեան նր աստի յայտ է, զի զայն կարգեաց 'ի պարտութիւն նոցա, և այնու ետ խորտակել զնոսա. Այլ ապա ինքնին իսկ սրտմտութբ իւրով խռովեաց զնոսա, զի էարկ զահ իւր զնոքօք. և ահիւ մեծաւ զարհուրեցուցեալ վանեաց զնոսա.

Զայս առաւել ևս հզօր զօրութբ արար տր ընդդէմ սատանայի և զօրաց նորա, ևս և ընդդէմ տիրասպան հրէից, և հեթանոսաց, և թագաւորաց, և ամենեցուն՝ որք միաբանեալ յարեան ընդդէմ նորա. Քանզի սատանայ 'ի շարժել անդ իւրում զգլուխ իւր 'ի վերայ քի, և 'ի յարձակիլ 'ի նա համօրէն զօրօք իւրովք, թէպէտև վարկաւ յաղթել նմա՝ բևեռելով զնա 'ի խաչին, այլ իբրև էջ քս 'ի դժոխս, յայնժամ խօսեցաւ ընդ նմա ոչ բանիւք, այլ բարկութբ, իբր զի եցոյց նմա և զօրաց նորա զզօրութիւն բարկութե իւրոյ. և աւար առեալ զդժոխս՝ եհան անտի զամ հոգիս սրբոց արգելեալս անդ 'ի բռնութենէ նց. Նոյն և սրտմտութբ իւրով կա-պեալ զզօրութիւն նց՝ ամչեցոյց և խռովեաց զնոսա.
( մատ. ժբ. 29. և կողոս. բ. 15. )

Սոյնպէս խօսեցաւ և ընդ հրէայս, ոչ բարբառով բերա-նոյ, այլ պատուհասիւք սրոյ՝ 'ի մատնելն զնոսա հռով-մայեցւոց. որոց ձեռամբք չարաչար վանեալ զնոսա, և քանդեալ զտաճար սրբոյ նց՝ սրտմտութբ իւրով խռո-վեաց և ցրուեաց զնոսա. Այլ ևս զկայսերս և զթգրս հեթանոսաց և զիշխանս նոցա, որք հալածեցին զեկե-ղեցի նորա, բարկութբ և սրտմտութբ իւրով ազգի ազգի պատժովք պատուհասեաց և կորոյս. որպէս զհե-րովդէս, զմաքսիմիանոս, զյուլիանոս, և զայլս. զո-մանս որդնահարութբ, զոմանս կայծակամբք, զոմանս աներևոյթ հարուածովք, և զոմանս ցաւօք. և 'ի վերջոյ հրով դժոխոց.

Արդ՝ յետ յայտ առնելոյ մարգարէին զծիծաղելն այ 'ի վերայ թշնամեաց իւրոց ես 'ի վր թշնամեացն քի,

և զխռովել նորա զնոսա սրտմտութեամբ՝ յայտ առնէ այժմ, թէ խրատամբք առնէր Աստուած ընդ նոսա զայս. զի որովհետև ի նմանէ կացուցեալ էր նա թագաւոր Իսրայէլի, նա ինքն Աստուած խորտակելոց էր զթշնամիս նորա։ Եւ թէ յիրաւի կացուցաւ թագաւոր Իսրայէլի՝ ցուցանէ յաջորդ բանիւն, ասելով.

Զ. Ես կացի թագաւոր ի նմանէ ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա, պատմել զհրամանս Տեառն.

Այս բանք տիրապէս Քրիստոսի պատշաճին. և երկրորդաբար՝ Դաւթի. և այս յայտնի լինի յերից. Նախ՝ զի ասէ. * Ես կացի թագաւոր ի վերայ Սիոնի ‖. Իսկ այս բան կամ նշանակէ ասել, թէ ինքն օծաւ թագաւոր ի լերինն Սիոնի. կամ զայս՝ թէ օծաւ թագաւոր Սիոնի, և կամ զայս՝ թէ նստաւ ի Սիոն և անդ հաստատեաց զթագաւորութիւն իւր։ Առաջինն ոչ պատշաճի Դաւթի. զի Դաւիթ ոչ օծաւ ի Սիոն, այլ ի Քեբրոն. որպէս յայտ է. Բ. Թագ. Ե. 3. Նմանապէս և երկրորդն ոչ է ճշմարիտ. զի յօծանել նորա՝ Սիոն ոչ էր Իսրայէլացւոց, և ոչ Դաւթի, այլ Յեբուսացւոց. յորոց էառ զայն Դաւիթ յետ օծանելոյն թագաւոր Իսրայէլի. և նստաւ յամրոցի նորա։ Իսկ երրորդն թէպէտ և կարէ վերածիլ առ Դաւիթ, բայց երկրորդաբար իբր առ օրինակ, կամ իբր առ պատկեր Քրիստոսի։

Երկրորդ՝ զի ասէ. * Ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա ‖. Բայց յայտ է թէ ի կացուցանել Դաւթի թագաւոր՝ լեառն Սիոն ոչ էր սուրբ, և ոչ առնիւր լեառն Աստուծոյ. այլ էր անսուրբ, և ի ձեռս Յեբուսացւոց։ Իսկ սուրբ յայնժամ եղև, յորժամ ածաւ անդ տապանակն Աստուծոյ. և այս եղև յետ վանելոյ նորա զայլազգիսն. որպէս յայտ է. Բ. Թագ. գլ. Զ. Ուրեմն այս բան ուղղակի ոչ կարէ ընծայիլ Դաւթի։ Բայց քանզի Դաւիթ յետ ժամանակաց նստաւ ի Սիոն ի սրբին՝ յայս հայելով կարէ անուղղակի նմա ևս ընծայիլ։

Երրորդ՝ զի ասէ. * պատմել ինձ զհրամանս Տեառն ‖. և այս բան բաղդատելով ընդ վերնոյն՝ ցուցանէ, թէ յայն սակս եկաց նա թագաւոր ի Սիոն, զի պատմեսցէ զհրամանս Տեառն. կամ թէ՝ թագաւորելն նորա ըստ ինքեան կարգեալ էր ի պատմել զհրամանս Տեառն։ Իսկ այս ուղղակի ոչ ճշմարտի ի վերայ Դաւթի. զի նա կացուցաւ երկրաւոր թագաւոր ի վերայ Իսրայէլի. իսկ արդ՝ երկրաւոր և մարմնաւոր թա-

գաւորութիւնն ըն̃ ինքեան ոչ կարգի 'ի պատմել զհրա-մանս տեառն, այլ 'ի կատարել զժողովուրդն ։ Եւ թէպէտ երկրաւոր թգ̃ք եւս պարտին զգուշանալ ժողովրդեանն, զի կացցեն 'ի հրամանս տեառն, բայց զայս ոչ առնեն ըստ որում երկրաւոր թագաւոր, այլ՝ ըստ որում պաշտօնեայք այ̃ ։ Որեմն պարտ է ասել, թէ զայս բան խօսի դաւիթ ուղղակի 'ի դիմաց քի̃ ․ և անուղղակի իմ̃ 'ի դիմաց իւրոց՝ իբրև 'ի դիմաց պատկերի և օրինակի եւեթ ․ վ̃յ և մեք հայելով 'ի քրիստոս ունիմք մեկնել զսա ․ արդ ասէ ։

Ես կացի թագաւոր 'ի նմանէ ։ Ես ասելով՝ ցուցանէ զան-կախ և զարմանալի հաստատութիւն թ̃գութեն, և զինքն-իշխանաբար կալն 'ի նմին, զի եւն ասել յայտպիսի տեղիս 'ի սոյն ակնարկէ ․ ըստ ծործորեցոյն՝ 'ի մատթ ․ Ե ․ որպէս թէ ասացեալ էր ․ այլք եւս այն կացին թ̃գր, բայց ոչ անկախ ․ իսկ ես կացի անկախապէս ։

Եւ յաւելլով զբառդ 'ի նմանէ, տուեալ կամի յայտ առնել, թէ ինքն՝ որ էր որդի այ̃, ոչ 'ի մարդկանէ, այլ՝ միայն յա̃յ հօրէ կացուցաւ թ̃գր ։ Ուստի յորժամ 'ի մէջ մարդկան շրջէր, իբրև գիտաց, թէ ժողո-վուրդքն կամին թագաւորեցուցանել զնա, խոյս ետ 'ի նմանէ ․ զի մի համարեսցի՝ թէ 'ի նմանէ կացուցանի թ̃գր ․ (յովհ ․ զ̃ ․ 15 ։) Բայց որպէս զի ցուցցէ եւս, թէ ինքն ճշմարտիւ յա̃յ է կացուցեալ թագ̃ր 'ի վերայ սիոնի և եր̃մի, թագաւորական իրաւամբք եմուտ անդր ․ և ետ աղաղակել տղայոց և սանդիեցաց՝ ովսաննայ 'ի բարձունս, օրհնեալ թագաւորութիւն հօր մերոյ դաւ-թի ․ օրհնեալ՝ որ գայ յանուն տեառն ․ ( մատթ ․ իա̃ ։ մարկ ․ ժա̃ ։ ղուկ ․ ժթ ։ )

Եւ ոչ այսչափ միայն, այլև 'ի ձեռն բազմաց բազում օրինակաւ ետ յայտնել զթագ̃ութիւն իւր ։ Նախ՝ 'ի ձեռն գաբրիէլի ․ որ յաւետել կուսին՝ յայտնեաց նմա զորդին զայս ասելով ․ * թագ̃րեսցէ 'ի վերայ տանն յակո-բայ 'ի յաւիտեան ․ և թագ̃ութեան նո̃ր վախճան մի լի-ցի ‖ ․ ղուկ ․ ա̃ ․ 33 ։ Երկրորդ՝ 'ի ձեռն մոգուց եկելոց յարևելից, որք հարցանելով զորդին՝ ասէին ․ * Ուր է՝ որ ծնաւ արքայն հրէից ‖ ․ մատթ ․ բ̃ ․ 2 ։ Երրորդ՝ 'ի ձեռն նաթանայելի, որ խոստովան լինելով ասէր ․ * դու ես թագ̃րն իէլի ‖ ․ յովհ ․ ա̃ ․ 49 ․ Չորրորդ՝ 'ի ձեռն

աւազակին, որ խոստովանելով զնա Թագաւոր երկնաւոր՝ ասաց. * Յիշեա զիս տէր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով‖, ի թագաւորութեան քում. ղուկ. իգ. 42. Հինգերորդ 'ի ձեռն պիղատոսի, որ եդ 'ի վերնագրի խաչի նորուն, * Թագաւոր Հրէից‖. յովհ. ժթ. 19. յորոյ վերայ ասէ բարսեղ մեկնիչ. մարկ. ժե. Թէ որովհետեւ ինքն ասաց * ես կացի թագաւոր 'ի նմանէ՝ քարոզել զհրա-
„ մանս նորա, պատշաճաւոր էր՝ զի ինքն որ միանգա-
„ մայն Թագաւոր էր և քահանայ, յորժամ մատուցանէր
„ զմեծ ընծայ մարմնոյ իւրոյ հօր 'ի սեղան խաչին,
„ վերնագրով ցուցանել զարժանաւորութիւն թագաւորի.
„ (ուստի եդաւ 'ի բարձրութեան խաչին՝ թագաւոր Հրէից).
„ զի ծանուսցէ ամենեցուն՝ թէ 'ի ձեռն չարչարանաց խա-
„ չին ոչ կորոյս զԹագաւորութիւնն, այլ հաստատեաց‖.
Թողում 'ի մէջ բերել զայլս. Թողում և զդեւս, որք աղաղակելով ասէին. գիտեմք զքեզ՝ ով ես սուրբ այ. Թողում և զմարգարէութիւնս, մանաւանդ զդանիէլին. Թողում և զակամայ յանդէտս խոստովանիլ նոցին իսկ Հրէից 'ի Թագաւորին լինել նոցա նման փշեայ պսակաւ (երգ. գ. 11), զի իրաւամբքն 'ի վերայ նոցին

եւ Թագաւորեսցէ.

Որդ՝ քո Թէպէտեւ կացուցաւ անսահմանաբար Թագաւոր ըստ ամ իշխանութեան 'ի վր ամ թագաւորութեանց և տէրութեանց, զի որոյ ասի՝ Թագաւոր թագաւորաց, և տր տերանց. (յայտ. ժթ. 16. և ժէ. 14. և ա. տիմ. զ. 15.) Եւ տուաւ նմա ամ իշխանութիւն յերկինս և յերկրի. (մատ. իը. 18.) Եւ յանձն եղև նմա ամ՝ որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի՝ տիրել 'ի վերայ ամենեցուն ահասարակ՝ մեռելոց և կենդանեաց. (հռովմ. ժդ. 9. գործ. ժ. 42.) բայց յատկապէս և իբրև գլուխ օծաւ և կացուցաւ Թագաւոր 'ի վերայ նր եկեղեցւոյ.

Ամին իրի յարէ զնի.

Ի վերայ սիոնի լերին սրբոյ նորա. Սիոն լեառն էր յերուսաղէմ, զի որոյ և երուսաղէմ կոչիւր դուստր սիոնի. և երբեմն ես սիոն. Եւ զի տապանակն այ 'ի ժամանակս դաւթի եդաւ 'ի սիոն անդր յերուսաղէմ 'ի տեղւոջն՝ որ կոչիւր բեթար (բ. Թագ. ժե. 24. և գ. Թագ. բ. 1. և 2.) յայնմանէ և քաղաքն երուսաղէմ՝ ըստ նմին և սիոն լեառն կոչիւր սուրբ, եւ և լեառն այ. և մեծ սրբութեան նկարէր

յինքեան զհոգևորն երուսաղէմ և զսիոն, ծն՟ զեկեղեցին սուրբ. ( եսայ. բ. 3. և լգ. 20. և խ. 9. և կ. 1. և յայտ. իա. 20. և յայլ բազում տեղիս). տես և 'ի սաղ. ձզ. 1. Նաև զի ոչ ասացաք, քս՟ մասնաւորապէս եկաց յոյ՟ թգր՟ 'ի վերայ այսր խորհրդաւոր սիոնի, որ էր նորա, ծն՟ այ՟, վոյ՟ ասէ * 'ի վր՟ սիոնի լերին սրբոյ նորա ‖. յորում իբրև 'ի տան իւրում թագաւորէ 'ի վերայ ամ՟ հաւատացելոց իւրոց.

Սոյնպէս և եկաց և կայ քս՟ թգր՟ 'ի լերինն սիոն, ծն՟ յարքայութեան երկնից. զի այն ևս օրինակի 'ի սիոն. ( եբր. ժբ. 22. և յայտ. ժդ. 1.) Սեր նստեալ ընդ աջմէ հօր իւրոյ՝ իբրև զլուխ ամ՟, տիրէ ամ՟ին. որպէս բազմօք գրէ առաքեալն. եփես. ա. 20. մինչ 'ի վերջն.

Նաև քանզի քս՟ կացուցաւ 'ի հօրէ ոչ երկրային՝ այլ երկնաւոր թագաւոր, պատշաճ էր նմա՝ ըստ ասելոյ առաքելոյն ( եփես. ա. 3. և 4. և եբր. ժ. 10. ևն՟), երկնաւորս առնել զհնազանդեալս իւր, ոչ միայն պատարագաւ իւրով և շնորհօք, այլև ցուցանելով նոցա զամ՟ ուղղութիւն երկնային փառաց, և զամենայն հաճոյս ած՟ային կամաց, և զամենայն՝ զոր հրամայեալ էր աստուած. և առ այս յարէ, և ասէ.

Պատմեցից զհրաման տեառն: Առաջին հրամանն ամ՟ն զոր ունէր պատմել որդին այ՟՝ էր աւետաւորութիւն խաղաղութեան յերկինս և յերկրի. ըստ որոյ կոչի թագաւոր խաղաղութեան. ոչ տեսանի և յաղօթս պաշտամանց եկեղեցւոյ. ըստ որում գրէ խոսրով վարդապետ. երես. 355. * թագաւոր խաղաղութեան ( ա-
,, սեւք ) . . . զմարգարէին առեալ զբան, զոր կանխա-
,, գուշակ տեսութե՟ պատմաբանեալ ասէր 'ի դէմս քսի՟.
,, ես կացի թագաւոր 'ի նմանէ ևն՟ ‖. Երկրորդ հրամանն էր քարոզել զճշմարտութիւն հաւատոյ և զսրբութի՟ վարուց, և զամ՟ զոր միանգամ հաճէր հայր. Ըստ այսորիկ տեսութեանցս կամի ասել՝ ես թագաւոր կացուցայ յոյ՟ հօրէ 'ի վերայ եկեղեցւոյ և 'ի վր՟ ամ՟, զի աւետարանեցից զխաղաղութիւն, և յայտնի ցուցից զհաճոյս աստուծոյ հօր իմոյ.

Յօրինակ և 'ի հաստատութի՟ այսր ասաց ած՟ ցերեմիա, * ահա կացուցի զքեզ այսօր 'ի վերայ ազգաց և թագա-

„ ստութեանց, խլել և բրել, կործանել և յատակել
„ ( զնոյն անկարգութիւնս. հունկ յետոյ ) և շինել և
„ տնկել ||. Երեմ. ա. 10.

Նաև զայս արար Քրիստոս` Նախ ինքնին 'ի նոյն իսկ 'ի սիոն և յեղմ, ածային բերանով իւրով քարոզելով և ուսուցանելով զհրամանս հօր իւրոյ, որ զնոյն զոր կամէր հայր. որպէս զի այնու ապրեսցին մարդիկ. զի ըստ մարգարէութեանն եսայեայ` բանին քան ունէին մարդիկ ապրել յեղմ անդ. զի * յեղմ ասէ եղիցին մնացեալք, և 'ի լերինն սիոնի ապրեալք ||. Եսայ. լէ. 32. Նաև յետ այնորիկ ևս արար զնոյն զայս 'ի ձեռն առաքելոց. զոր իբրև զհրեշտակս, կամ իբրև զգեսպանս առաքեաց 'ի գիմաց իւրոց, յն ամէ. Նաև այժմ ևս միշտ զնոյն գործէ 'ի մէջ սիոնի, որ 'ի մէջ եկեղեցւոյ 'ի ձեռն քարոզչաց և վդպաց և ժողովոց` տալով զօրէնս փրկութեան և զբանս ճշմարտութե. զի գրեալ է. * Ի
„ սիոնէ ելցեն օրէնք, և բան տեառն յեղմէ ||. Եսայ. բ. 3. Արդ յետ յայտ առնելոյ մարգարէին զկացուցանելն քան թագաւոր, կամելով ցուցանել` թէ այն թգրութիւն իրաւամբք տուեալ եղև նմա վասն լինելոյ նր որդի աստուծոյ, խօսի 'ի բերանոյ նորա և ասէ.

**է. Տէր ասաց ցիս, որդի իմ ես դու. ես այսօր ծնայ զքեզ.**

Մարգարէն զայս ասելով ոչ կամի ցուցանել և հաստատել, թէ ած հայր զայս ինչ ասացեալ իցէ առ քս այսպիսի բանիւք. այլ եղանակ ինն է խօսելոյ. որով կամի յայտ առնել, թէ քրիստոս` որ կացուցեալ է յայ թգր 'ի վերայ սիոնի, ոչ է սոսկ մարդ, այլ որդի այ. և այնպիսի որդի, որում միայն` ըստ ինքեան և էապէս պատշաճի ասել 'ի հօրէ այս բան. Ի սոյն հայելով ասէ.

**Տէր ասաց ցիս, որդի իմ ես դու.** Այս որդիութի քան այ` ոչ է որդեգրական, այլ բնական. զի որդեգրական որդի ասի նա, որ ոչ է ծնեալ յայնմանէ` որոյ է որդեգրական որդի, այլ է օտար անձն, և գրեալ է որդի և ժառանգ. իսկ քս ոչ էր օտար անձն 'ի հօրէ, այլ անձն գոյակից հօր` ծնեալ 'ի նմանէ 'ի յաւիտենից. ուստի ոչ է` և ոչ կարէ ասել որդեգրական որդի այ.

այլ՝ բնական որդի, և ժառանգ ամենայնի՝ զոր ունի հայր: Վասն որոյ անսահմանաբար ասէ, * որդի իմ ես դու ||. և 'ի հաստատել զճշմարտութիւն բանին՝ յաւելու ասել:

Ես այսօր ծնայ զքեզ: Զայս բան երրակի մեկնէ առաքեալն՝ հայելով 'ի բառդ այսօր: Առաջին մեկնութիւնն է 'ի վերայ յաւիտենական ծննդեանն քի: Քանզի նա ինքն առաքեալն բաղդատելով զքրիստոս՝ ըստ որում է մարդ՝ ընդ հրեշտակս, ցուցանէ զնա առաւելեալ յոյժ քան զնս. և այս՝ վասն այսորիկ, զի յաւիտենական ծնընդեամբ է որդի աստուծոյ. իսկ հրեշտակք պաշտօնեայք: Եւ զայն հաստատէ և ցուցանէ սովին վկայութեամբ՝ գրելով առ եբրայեցիսն այսպէս. * Որչափ առաւել
„ եղեալ է զհրեշտակս, որչափ լաւ ևս քան զնոսա՝ անուն
„ ժառանգեաց. քանզի ցո՞ երբեք ասաց 'ի հրեշտակաց,
„ որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ ||. ա. ե:
Ուր եթէ բանիւս՝ * այսօր ծնայ զքեզ ||, ոչ իմանայր զյաւիտենական և զանստեղծ ծնունդն քրիստոսի 'ի հօրէ, այլ՝ զժամկաւոր և զստեղծական ծնունդ նորա 'ի մօրէ, ոչ զօրէր այս բան 'ի ցուցանել՝ թէ քրիստոս ժառանգեաց զանուն որդիութեան, իսկ հրեշտակք զանուն պաշտօնէի. քանզի և հրեշտակք ստեղծական ծննդեամբ (քն նոյնին իսկ ստեղծմամբ) ասին որդի: Ուրեմն այսու ծննդեամբ իմանայ զյաւիտենականն և զանստեղծն:

Եւ թէպէտ քս ստեղծական և ժամանակաւոր ծնընդեամբ ևս ըստ որում մարդ՝ ժառանգեաց զանուն բնական որդիութեան, զի ըստ այնմ ևս է ճշմարիտ բնական որդի այ, բայց ոչ վասն այնր ծննդեան է այնպիսի, այլ՝ վասն յաւիտենականին. յորմէ իսկ ձեռնարկէ առաքեալն, և գրեթէ ասէ, որովհետև քս ծնաւ 'ի հօրէ յաւիտենական և էական ծննդեամբ, նա միայն ժառանգեաց զանուն բնական որդիութեան. ուստի և ասաց նմաած, որդի իմ ես դու, ես այսօր ծնայ ըզքեզ: Իսկ հրեշտակք որովհետև չեն այսպէս ծնեալ, ոչ ժառանգեցին զանուն բնական որդիութեան. և ո՛չ են բնական որդի, այլ՝ որդեգրական միայն՝ և պաշտօնեայք այ. ուստի ոչ ասի բնականապէս առ նոսա 'ի հօրէ, որդիք իմ էք դուք, ես այսօր ծնայ զձեզ. այլ

միայն առ քս , որովհետեւ ճշմարտիւ ծնեալ է զնա Հայր 'ի յաւիտենից ։ Իսկ այսմ մեկնութեան՝ բառս այսօր՝ ցուցանէ աստ զյաւիտենականութիւնն կմ զանստուեր պայծառութիւն անսկիզբն եւ անվախճան տեւողութե ․ որպէս թէ ասէր ․ ծնայ զքեզ 'ի յաւիտենից՝ կամ 'ի յաւիտենականութեան ․ զի յաւիտենականութիւնն չունելով զանցեալ եւ զապագայ՝ միշտ այսօր է , եւ միշտ այժմ ․
(տես 'ի կոչ ․ ընծ ․ Ժ ) ։

Երկրորդ մեկնութի առաքելոյն է 'ի վր ժամանակաւոր ծննդեանն քոյ ․ քանզի 'ի թուղթն առ եբր ․ Ե ․ Ե ․ գրէ այսպէս ․ * քս ոչ եթէ անձին իւր շուք ետ լինել քա-
„ հանայապետ ․ այլ որ խօսեցաւն առ նա , թէ որդի
„ իմ ես դու , ես այսօր ծնայ զքեզ ․ որպէս եւ 'ի մի-
„ սումն ասէ , դու ես քահանայ յաւիտեան ըստ կար-
„ գին մելքիսեդեկի ‖ ։ Իսկ այս բան Հայր 'ի ժամանակաւոր ծնունդ նորա ․ զի սոյնն ցուցանի թէ 'ի կացուցանելն քոյ քահանայապետ՝ ասացաւ նմա 'ի Հօրէ ․ * որդի իմ ես դու ․ ես այսօր ծնայ զքեզ ‖ ․ իսկ արդ քս կացուցաւ քահանայապետ յայնմ վայրկենի , յորում ծնաւ 'ի կուսէ ․ ապա՝ յայնժամ ասացաւ նմա այս բան ըստ ծնանելոյ նր 'ի կուսէն ․ ուրեմն ըստ առաքելոյն այս բան վերաբերի նաեւ առ ժամանակաւոր ծնունդն քոյ ․ ոչ թէ 'ի ծնանել նորա՝ ասացեալ էր նմա Հայր ․ դու ես իմ միածին որդի ․ եւ ես այսօր ծնայ զքեզ 'ի կուսէ ․ այ արարի՝ զի ծնցիս 'ի կուսէ , եւ լիցիս քահանայապետ , եւ նստցիս յաթոռն դաւթի ։

Ասացի՝ քս կացուցաւ քահանայապետ 'ի վայրկենի՝ յորում ծնաւ , կամ յորում յղացաւ ․ վասն զի առաքեալն 'ի կամիլն ցուցանել զայս՝ ասէ ․ * 'ի մտանել իւրում յշխ՝
„ ասէ , զզոհս եւ զպատարագս ոչ կամեցար ․ բայց զմ-
„ մարմին հաստատեցեր ինձ ‖ ․ եբր ․ Ժ ․ 5 ․ որով կամի ցուցանել , թէ 'ի մտանել քոյ յշխ , այ 'ի յղանալն անդ եւ 'ի ծնանելն կացուցաւ քահանայապետ՝ մատուցանել աստուծոյ զինքն պատարագ ։

Երրորդ մեկնութիւն առաքելոյն է 'ի վր յարութեն քոյ ․ քանզի 'ի գործս առաքելոց ․ ( ժԳ ․ 33 ) ․ 'ի խօսելն ընդ հրէից վասն յարութեան նր՝ ասէ ․ * Ած յարոյց զնա 'ի
„ մեռելոց ․ ․ ․ ․ զի զնոյն ( խոստումն՝ որ եղեալ էր
„ առ հարսն մեր ) , աստուած կատարեաց առ մեզ առ որ-

,, զիս նոցա՝ յարուցեալ զՔս · որ և 'ի սաղմոսին գրեալ
,, է յերկրորդում, որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ
,, զքեզ ‖ ։ Արդ յայտ առնէ, թէ այս ծնանիլս՝ որ
յիշի յայսմ բնաբանի, զյառնելն քի եւս նշանակէ,
կամ զյարուցանիլ նորին 'ի հօրէ · որպէս թէ 'ի յառնել
նորա՝ ասացեալ էր նմա հայր · որովհետեւ որդի իմ ես
դու, չէր հնար թողուլ զքեզ ընդ մեռեալս, այլ՝ ծնա-
նիլ այսօր · այսինքն յարուցանել յաւուր յայսմիկ 'ի մե-
ռելոց ։

Եւ այս նմանութիւն հայի յայն, զի յառնելն 'ի մեռե-
լոց է գրեթէ վերստին ծնանիլ · յոր միտ առ · բ̅ ·
մակ · է · 14 · * և յուսոյն ակն ունիմք միւսանգամ
,, ծննդեանն յարութեան մեռելոց ‖ ։ ուստի և քս յառ-
նելովն 'ի մեռելոց՝ համարի վերստին ծնեալ յայնմ ա-
ւուր, յորում յարեաւ ։ Եւ զի այսպիսի ծնունդս է
միայն յանմահականութենէն այ, վս այնորիկ միայն
ած հայր կարէր ասել, ծնայ զքեզ, յս յարուցի ըզ-
քեզ այսօր · և վասն այսպիսի ծննդեան եւեթ ասի քս
* անդրանիկ 'ի մեռելոց ‖ · կող · ա · 18 · զի անդրա-
նիկ ասի որ՝ նախապէս ծնանելովն · և զի քրիստոս ըստ
կարգի անապականն յարութեան նախ ծնաւ, ասի անդ-
րանիկ կամ նախածին 'ի մէջ այնոցիկ որք ծնանին 'ի
ձեռն յարութեան 'ի մեռելոց ։ Եւ չէ ինչ այն՝ թէ 'ի
խաչելութեանն քի յարեան ումանք · զի յառնելնոցա էր
'ի յարութենէն քրիստոսի ։

Ամենք զայս բան մեկնեն և 'ի վր մկրտութեն քի, յո-
րում զգալի ձայնիւ ասաց հայր առ նա · * դա է որդի
,, իմ սիրելի, ընդ որ հաճեցայ ‖ · մատ · գ · 17 ։ Եւ
թէպէտ ոչ ասաց, այսօր ծնայ, բայց ասելովն որդի՝
եցոյց թէ ինքն՝ որ ծնեալ էր զնա 'ի յաւիտենից,
ծնանի եւս զնա յայնմ աւուր մկրտութբ, ոչ իբրեւ զոր-
դեգրական որդի, այլ՝ իբրեւ զհեղինակ մկրտութեան ·
զի որովհետեւ մկրտութիւնն է վերստին ծնունդ, քս իբր
հեղինակ մկրտութեան՝ մկրտելովն ծնաւ յս ծանուցա-
նել զհեղինակ նորին · և յայս միտ առ 'ի շարականի ·
* Հայր 'ի վերուստ վկայեալ կրկնակի ծննդեանն՝ դա
,, է որդի իմ սիրելի ‖ ։

Արդ՝ ցուցեալ մարգարէին, թէ քրիստոս՝ որ կացուցաւ
թգր 'ի վերայ սիոնի, է շնորհիւ բնական որդի այ, ու-

տի և իբրև իւր սեփական ունի զիշխանութիւն թագա-
ւորութեանն, կամեցեալ յայտ առնել և զմեծութիւն իշխանութե
նորա տուեալ նմա ՚ի Հօրէ, յայտէ զնի՝ առեալ Հօր առ նա
զպայմանն իւր ։

Ը. Խնդրեա՛ յինէն, և տաց քեզ հեթանոսս ՚ի ժառան-
գութիւն, և իշխանութիւն քեզ ընդ ամ ծագս երկրի ։
Յաւելու աստ՝ * Խնդրեա՛ յինէն ‖. ոչ ցուցանէ՝ թէ,
ած ասաց ցորդի իւր՝ խնդրել յիւրմէ զայս կամ զայն,
այլ ( որպէս ասացաք ՚ի վերոյ ), ոճ է ասութե. որով
յայտ առնէ նախ զարժանաւորութիւն անձին ՚ի ժա-
ռանգութիւն իւրն, զի որում քն առն խնդրելով կարէր
փրկել և ժառանգել. բայց կամեցաւ մեռանիլ եւս,
և այնու գնել զժառանգելին, * քանզի գնոց գնե-
ցայք ‖, ասէ առաքեալն ա. կոր. Զ. 19. և Է. 23 ։
Յայտ առնէ երկդ զհնազանդութիւն տէրութեն. ըստ
որում տուեալ էր նմա Հայր զամենայն. և մար-
գարէն զառեալն իբրև զօղի նկատելով խօսի յա-
ռաջն ։

Խնդրեա՛ յինէն և տաց քեզ ևն ։ Կամի ասել. որովհետև
դու ես իմ բնական որդի՝ ծնեալ յաւիտենից յար-
գանդէ իմմէ, զի յէութենէ իմմէ, և իմով ես զօրութ
ծնեալ ՚ի կուսէ ՚ի ժամանակի. վասն այնորիկ իրաւամբք
կարես խնդրել յինէն զիշխանութիւն ՚ի վր ամ ազգաց
և հեթանոսաց, եւ և ՚ի վերայ ծագաց երկրի իբրև ՚ի
վերայ սեպհական ժառանգութեան քո. զի զոր ինչ ունի
Հայրն, ժառանգութիւն է որդւոյ, զի իրաւամբք ժա-
ռանգելի ՚ի յորդւոյ. ըստ որում ասէ յովհաննէս. * Հայր
սիրէ զորդի. և զամ ինչ ետ ՚ի ձեռս նորա ‖. յովհ. Գ.
35. Յայտնելով աստ և զայլն՝ ասէ ։

Տաց քեզ հեթանոսս ՚ի ժառանգութիւն ։ Այսինքն՝ տաց քեզ
զամ հեթանոսս, զի ժառանգեսցես զնոսա. որով յայտ
առնէ, թէ քս որ կոչեալ է ՚ի Հօրէ թագաւոր ՚ի վերայ
սիոնի, ոչ միայն ունի ժառանգել զազգն հրէից, որք
էին սեպհական ժղվրդ այ, այլև զամ ազգս հեթա-
նոսաց ։ Իսկ այս ժառանգելս ոչ այլ ինչ էր, բայց
եթէ ունել զնոսին իբրև իւր ժողովուրդ, և իշխա-
նութեամբ տիրել ՚ի վր նց իբրև ՚ի վր սեպհական ժո-
ղովրդեան իւրոյ, որ և իսկն նորին. և առ այս յա-

րէ , և ասէ ։

Եւ իշխանութիւն եղ ընդ ամ ծագս երկրի ։ Սոլլին յայտ առնէ, թէ տայ նմա հայրն երկնաւոր զամենայն երկիր և զամ ծագս և զսահմանս նորա առ իշխելոյ 'ի վ՛ր նոցա, և ոչ թէ սոսկ 'ի վերայ այնոցիկ միայն՝ որք են 'ի պաղեստին. կամ որ նոյն է՝ տայ նմա զիշխանութիւն 'ի վերայ ամենայն, որք են ընդ ծագս երկրի. յն յամ մասունս և յամ եզերս երկրի. զի ծագք երկրի նշանակեն զտեղիս, յորս եզերի երկիր իբրեւ 'ի ծայրս իւր ։

Այլ աստ գիտելի է, այս իշխանութիւն քսի նկատի յաւէտ ըստ հոգևոր թագաւորութեանն. յն զն իշխելոյ նորա 'ի վերայ եկեղեցւոյ, որ տարածեալ է յամենայն ծագս ծի, զն ըստ մարմնաւորին. զորմէ գրեալ է և 'ի դանիէլի. է. 35. թէ * ելից զամ երկիր ‖ ։ Սակայն նկատի ևս զն իշխելոյ նորա 'ի վ՛ր ամի անսահմանաբար. զի տուաւ նմա ամ իշխանութիւն յերկինս և յերկրի. ( մատթ. իը. 18. ) մինչև ամենայն իսկ ծունր կրկնել նմա՝ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. ( փիլ. բ. 10 ։ ) Այս տուչութիւն իշխանութեան հայր 'ի քն ոչ ըստ աստուածութ., զի զայն 'ի յաւիտենից ունէր, այլ ըստ մարդկութեանն. զի յետ միանալոյ աստուածութեանն ընդ մարդկութ. յանձն բանին. նոյն անձն մարդկութեամբն հաղորդ գտաւ համայն աստուածային իշխանութեան և կատարելութ. ուստի ասէ սարգիս շնորհալի. 'ի մեկն. յուդ. համար. 4. ճառ. ա. * մարդկութն
„ ոչ ինչ թերի գտեալ ( քն ), այլ հաւասար աստուա-
„ ծայնն իշխանութ. իշխան և տէր ամի կացեալ զն մար-
„ գարէութեանն. խնդրեա ասէ յինէն և տաց քեզ եւն ‖.

Զայս եղեալ մարգարէին՝ 'ի մէջ բերէ նմանութեամբ իմն և զներգործութիւն այնր իշխանութեան, և ասէ ։

Թ. [illegible]ուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ . որպէս զանօթ բրտի՝ փշրեսցես զնոսա ։

Բառս գաւազան՝ ըստ յատուկ նշանակութ. իւրում, զնի փոխանակ երկայն ցպոյ. իսկ ըստ յարաբերական նշանակութեան փոխանակ արքայական նշանի. և փոխաբերաբար փոխանակ իրաւու, յն փոխանակ դատից ։ Բայց բազում անգամ նմանութբ իմն փոխանակ իշխանութեան. զորմէ տես 'ի սաղ. ձթ. 2 ։ ըստ այսմ

յետին նշանակութեան՝ որ ըստ իշխանութեան առնել լինի և ատեանէն ։

**Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ ։** Այսինքն դու ինքն կառավարեսցես զնոսա այնու իշխանութբ՝ զոր իբրև գաւազան ետու ՚ի ձեռս քո ։ Այս գաւազան իշխանութեան կոչի "երկաթի", ոչ առ ՚ի ցուցանել, թէ խիստ է և խորտակիչ, զի այսու ոչ լինի հովուել, այլ խորտակել. այլ թէ՝ հզօր է և ուղիղ, անխորտակելի է՝ միանգամայն և հակառակացն խորտակիչ. կամ այնպիսի իշխանութիւն, որում չէ հնար ընդդէմ դառնալ. կամ չհաւանիլ ։ Այսու իշխանութեամբ ասէ * հովուեսցես զնոսա ‖ . որ հովուեսցես զամ մարդ, տալով իւրաքանչիւրոց զիւր պատշաճն և զարժանն, ոչ միայն յաշխարհի աստ, այլև ՚ի հանդերձելումն, զարդարսն պսակելով և զամբարիշտսն պատժելով ։ Եւ առ ցուցանելոյ զզօրութիւն այսր իշխանութեան՝ յարէ զնի և ասէ ։

**Որպէս զանօթս բրտի փշրեսցես զնոսա ։** Այսու բանիւ զամ մարդ՝ որք են ընդ իշխանութբն քոյ, նմանեցուցանէ խեցեղէն անօթոց բրտի . իսկ ասելովն * փշրեսցես „ զնոսա ‖, ոչ կամի ցուցանել, թէ քո խորտակելոց է զամենն զնոսա, այլ թէ ունի իշխանութիւն ՚ի վր նոցա որպէս բրուտն ՚ի վր անօթոց . ըստ որոյ ասէ ած բերանով երեմիայ . * Հաւասիկ իբրև զկաւդ ՚ի ձեռս „ բրտիդ՝ այդպէս էք ՚ի ձեռս իմ տունդ իղի ‖ . երեմ. ժը . 6 ։ Եւ կամ թէ այնպէս դիւրին է նմա հովուել զամենն արդարութբ և ուղղութբ, որպէս դիւրին է բրտի զկաւեղէն անօթս երկաթեայ գաւազանաւ փշրել և խորտակել ։

Եւ սակայն եթէ դիտելով միայն յառաջին համարն մեկնեսցուք, այս բան մանաւորապէս հայի ՚ի վրէժխնդիր արդարութիւնն քոյ . և յանաչառ բարկութն նր ընդդէմ այնոցիկ հրեից, որք չարիս խորհեցան ՚ի վր նորա ։ Առ որս գրեթէ ասէ . զի խռովեալ էք, և խորհիք զինէն ՚ի չարութի . ոչ գիտէք զի կարող է խորտակել զձեզ տէր . եթէ անսայք՝ տայ ինձ հովուել զձեզ քաղցրութեամբ . ապա թէ ապստամբիլ խորհիք յինէն՝ տայ ինձ գաւազանաւ բարկութեան փշրել զձեզ իբրև զանօթս բրտի ։ Ի սոյն միտս վերածէ և իգնա-

տիոս վարդապետ . 'ի մեկն . ղուկ . ժդ̃ . 26 . և ասէ .
* Հովուեսցէ զնոսա ( զի̃ զթշնամիս իւր ) զաւազանաւ
,, երկաթեաւ, և իբրև զանօթս խեցեղէնս փշրեսցէ
,, զնոսա || ։

Եւ զայս յիշեալ արար ընդ նոսա, և արասցէ իսկ. զի 'ի ձեռն հռոմայեցւոց ( զորս դանիէլ յերկաթ առակեաց . բ̃ . 42 . ) իբրև զանօթս բրտի խորտակեաց զնոսա . զտաճար նց̃ ետ այրել . և մերժեաց ևս զնոսա ՚ի լինել իւր ժղ̃վրդ . թէպէտև զբազումս 'ի նցէ̃ էառ ։ Իսկ 'ի տեղի մերժեցելոցն եդ զհեթանոսս . յորոց և արար իւր ժողովուրդ ։ Եւ այս օրինակեցաւ յայն անօթն, զորմէ ասի յերեմ . ժը̃ . 4 . թէ անկեալ 'ի ձեռաց բրտին՝ խորտակեցաւ . և բրուտն արար զայլ անօթ պատուական ։

Ասացի ես՝ արասցէ . զի յաւուրն յետնում ցուցցէ թշնամեաց իւրոց զիշխանութիւն իւր . և այնու իշխանութեամբ՝ որում ոչ կամեցան հնազանդել, դատապարտեսցէ զնոսա ։ Վասն որոյ և մարգարէն կամելով խրատել զմարդիկ՝ մանաւանդ զթ̃գս և զդատաւորս, զի հնազանդեսցին նմա՝ յարէ զկնի, և ասէ ։

Ժ . Արդ՝ Թագաւորք, զայս 'ի մտ առէք . խրատեցարուք ամենեքեան, որք դատէք զերկիր ։

Աստի սկիզբն առնէ մարգարէն խօսիլ 'ի դիմաց իւրոյ՝ յորդորական բանիւ առ այնոսիկ, յորոց վերայ քս̃ կացուցաւ թագաւոր . և նախ ասէ ։

Արդ՝ Թագաւորք, զայս 'ի մտ առէք . խրատեցարուք ամենեքեան, որք դատէք զերկիր ։ Յայս բան թէպէտ իբր այլ դնին թագաւորք, և իբր այլ՝ դատօղք կամ դատաւորք, բայց քանզի թագաւորք ես դատեն զերկիր, զնոսա ես ընդ դատաւորօք կամելով իմացուցանել՝ ոչ դնէ որոշակի զբառդ դատաւոր, այլ մեկնաբար ասէ, ամէնքն որք դատէք զերկիր ։ Իսկ զերկիր ասելով՝ ոչ իմանայ զզանգուած հողոյս, այլ զմարդիկ, որք են յերկրի . զի 'ի սուրբ գիրս բազում ուրեք երկիր իմանին մարդիկ, կամ այնոքիկ՝ որք են յերկրի . որպէս յասելն, * աղաղա-
,, կեցէք առ տէր ամ̃ երկիր . ծառայեցէք տն̃ ուրա-
,, խութեամբ || . սաղ . ղթ̃ . 1 . երկիր իմացեալ լինին մարդիկ . զի նոքա աղաղակեն առ տէր և ծառայեն

նսա, և ոչ թէ թանձրութիւնք հողոյ ։ Արդ՝ այս բան մարգարէին առ երկս կարէ հայիլ ։

Նախ՝ առ այն թագաւորս և իշխանս, զորս յիշեաց 'ի վերոյ, թէ յանդգնեան եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան 'ի միասին վասն տն և վն օծելոյ նորա ։ Առ որս ասէ. ով թագաւորք և իշխանք * զայս 'ի միտ ա-,, ռէք ‖. անհնար է ձեզ կալ ընդդէմ քրիստոսի. այլ թէ ոչ՝ խորտակելով խորտակեսջիք 'ի նմանէ. վասն զի առեալ է նորա իշխանութի յայ, որով ունի հովուել զձեզ իբրև գաւազանաւ երկաթեաւ, և առնել 'ի վերայ ձեր դատաստան արդար ։ Այլ թէ կամիցիք՝ զի բարի լիցի ձեզ, * խրատեցարուք ‖, այսինքն զգաստացարուք և հնազանդեցարուք նմա, և վարեսջիք ըստ հրամանի և ըստ խրատու նորա ։ Իսկ կամ դիձլ՝ ում դուք կամիք, զի որք են ընդ իշխանութբ ձերով, հնազանդեսցին հրամանաց ձերոց, նոյնպէս և դուք, որք կացուցեալ էք ը իշխանութբն քնի, խրատեալ 'ի գործոց ձերոց՝ հնազանդեցարուք նմա ։ Նաև խրատեցարուք՝ մարթ է իմանալ և զընդունելութիւն հարուածոյն այ, ըստ որում խրատիլն նշանակէ հարուածիլ. յոր միտ կամի ասել. ընկալարուք զհարուածսն՝ զորս առաքէ ձեզ տէր, և 'ի հարուածոց անտի զգաստացարուք. զայսմանէ տես և 'ի հանարն. 12 ։

Երկրորդ՝ հայի ընդհանրապէս առ ամ թգրս և իշխանս երկրի. առ որս ասէ. գիտասջիք, զի չէք դուք տէր ինքնիշխան 'ի վերայ այնոցիկ՝ զորս դատէք, այլ կայ դատաւոր և տէր 'ի վերայ ձեր, որ անաչառութբ ունի դատել զձեզ ։ Արդ՝ եթէ կամիք քաղցրութեան նորա պատահիլ, ընկալեալ զհաւատս նորա՝ հպատակ կացէք նմա. և յօրինաց նորա խրատեալ՝ արասջիք դատաստան արդար և ուղիղ՝ ոչ միայն 'ի վերայ հպատակաց ձերոց, այլև 'ի վերայ ձեր ։

Երրորդ այս բան կարէ յարմարական իմն մեկնութեամբ հայիլ և առ առաքեալս քնի, կամ յաւէտ առ հոգևոր առաջնորդս, որք են իբրև հոգևոր թագաւորք և դատաւորք 'ի մէջ եկեղեցւոյ ։ Առ որս ասէ. ուսարուք, և յօրինացն քնի խրատեցարուք, ճշմարտութբ և անմոլար վարդապետութեամբ առաջնորդել ժողովրդեան, ածպաշտութեամբ և սրբութբ հովուել զնս. ևս

և արդարութեամբ և գթութեամբ խրատուն առնել նոցա. որպէս զի հատուցի ձեզ բարի ըստ բարի վաստակոց ձերոց. ապա թէ ոչ՝ ա՟ծ 'ի ձերոց ձեռաց խնդրէ վնասս: Առ որս հայելով գրէ Նարեկացին 'ի մեկն. երգոց երգոյն. Է. 11. երես. 188 = 193. * կռապաշտ թագաւորք ( ասէ ) որպէս տրդատ, յազկերտ, ջանային 'ի պաշտօն կռոց դարձուցանել. զի ասէին՝ թէ կուռք 'ի ձեռաց մերոց խնդրեն վնաս. քանի եւս ( առաջնորդք և թագաւորք և դատաւորք ) քրիստոնեայք պարտին խնամ տանել ծառայից և տանց իւրեանց ||:

Արդ՝ մարգարէն Թէոպէտե 'ի հասարակի յորդորեաց 'ի միտ առնուլ և խրատել, բայց որոշակի ոչ եդ, թէ զինչ է այն՝ զոր պարտ իցէ առնուլ 'ի միտ, և զինչ եւս այն՝ յորս արժան իցէ նոցա խրատել. վ՟յ զայն եւս որոշ առաքի եդեալ՝ ասէ:

ԺԱ. Ծառայեցէք տեառն երկիւղիւ. և ցնծացէք առաջի նորա դողութեամբ:

Այս բան մարգարէին Թէոպէտե հայի 'ի նախընթաց հանճարն իբրև բացատրութիւն ինչ նորա, բայց դնի ընդհանրապէս. և է եւս իբր ընդհանուր սկիզբն ինչ, որով կամի ցուցանել զերիս: Նախ՝ զհարկաւորութիւն ծառայելոյ տ՟ն. իբր զի հարկ է ամենեցուն՝ որք և իցեն, երկնչելով 'ի տեառնէ ծառայել նմա, և հնազանդիլ հրամանաց նորա, և ոչ իբրև ինքնատէր՝ վարիլ աներկիւղ: Երկ՟ զօգուտ ծառայելոյ տ՟ն. իբր զի բարի լինի նոցա, եթէ երկիւղիւ ծառայեսցեն տեառն. զի այնու ունին ցնծալ 'ի կեանս իւրեանց: Երրորդ՝ և առաւելապէս եւս՝ զեղանակ ծառայելոյ տեառն. այսինքն թէ զիարդ պարտ է մարդկան ծառայել ա՟յ: Յայտնի ակնարկելով ասէ:

Ծառայեցէք տ՟ն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նորա դողութեամբ: Կամ ասել. ահա զոր ասացի 'ի միտ առնուլ, այս է, զի ծանիջիք թէ պարտական էք ծառայել տ՟ն ոչ ակամայ և բռնութեամբ իբրև գերիք և ստրուկք, այլ պատկառելով 'ի նմանէ իբրև որդիք: Եւս և՝ ոչ տրտմութեամբ, այլ՝ ուրախութեամբ և ցնծութեամբ, զի ծառայէք ամենաբարի տեառն:

Այլ առ 'ի բարւոք իմանալ զայս՝ գիտելի է, զի ծա-

ռայէն ա̃յ է պահել զպատուիրանս ա̃յ ․ քանզի նա սուտ ծառայ , որ կարգեալ է ՚ի կատարել զհրամանս տեառն իւրոյ ։ Արդ՝ որ պահէ զպատուիրանս աստուծոյ , հարկ է նմա ունել զերկիւղ ինչ ։ Իսկ այս երկիւղ երրեակ է ․ Մի՛ վասն պատժոյ ․ որպէս յորժամ ոք երկնչի , թէ ոչ ծառայելով ա̃յ՝ պատուհասի ՚ի նմանէ , կամ դատապարտի ։ Եւ այս կարէ լինել բարի և չար ․ իբր զի եթէ մարդն երկնչիցի ՚ի պատժոյն՝ համարելով զայն իբր արժանի հատուցումն մեղաց , այն է երկիւղ բարի ․ և է իբրև տրամադրութիւն առ որդիական երկիւղն․ թէպէտև չէ կատարեալ ․ և սա կոչի երկիւղ ծառայական ։ Իսկ եթէ երկնչիցի ՚ի պատժոյն՝ համարելով զայն անիրաւ ․ և կամ այնպէս երկիցէ , զի թէ ոչ լինէր այն պատիժ , ոչ պահէր զպատուիրանս ա̃յ , է չար ․ և է տրամադրութիւն առ յուսահատութ̃ի ․ և սա կոչի երկիւղ գերութեան , կամ երկիւղ ստրկական և բռնական ։

Երկրորդն է երկիւղ վասն զրկելոյ ՚ի փառաց արքայութ̃ե կամ յա̃նծայլն պարգևաց ․ որպէս յորժամ ոք երկնչի , թէ ոչ պահելով զհրամանս ա̃յ՝ զրկի յարքայութենէ նորա ․ այս ևս է բարի երկիւղ ․ և տրամադրութիւն առ սէրն ա̃յ ․ բայց չէ կատարեալ ․ և ասի երկիւղ վարձկանի ․ կամ ըստ առաջնոյն երկիւղ ծառայական ։

Երրորդն է երկիւղ առաջի մեծվայելչութեանն ա̃յ ․ և սա ունի զկրկին ներգործութիւնս , գերագոյն և ստորին ։ Գերագոյն ներգործութիւն ո՛ր է ծայրագոյն իմն պատկառանք , որով ՚ի ճանաչել մարդոյ զանսահման մեծութիւնն ա̃յ՝ իբր հիացմամբ և ամփոփմամբ կարողութեանց հոգւոյն զիջանի յինքեան ․ և որպէս թէ հալի և հեղանի առաջի նորա , որպէս լինի մոմն՝ յորժամ դնի հանդէպ արեւու կամ հրոյ ։ Իսկ ստորին ներգործութիւն այսր երկիւղի է կասկած իմն՝ գուցէ կորուսցէ՝ զոր սիրէ ։ Այս երկիւղ կոչի որդիական ․ զի տայ մարդոյ իբրև որդի վարիլ առաջի ա̃յ ․ զգուշացեալ յամ̃ե՛ զի մի ինչ գործեսցէ ընդդէմ բարեհաճութեան ամենաբարի հօր իւրոյ ։ Այս երկիւղ է , որ տայ մարդոյ ցնծալ և ուրախանալ ը̃ մեծութիւն և ը̃ փառս ա̃յ , բերկրիլ նովաւ՝ և մխիթարիլ ՚ի նա ։ Սա տայ մարդոյ անդորրանալ ՚ի պատուիրանս ա̃յ ․ և յանձնելով

զնմ զկեանս իւր 'ի նա՝ հանգչել յամենախնամ գոգ-
նդ ։ Սա է՝ որ տայ մարդոյ ցանկալ, զի ամենքն ծանիցեն
զաստուած, և ծառայեսցեն նմա ։

Արդ՝ որպէս երևի, մարգարէն յաւէտ զայսպիսի երկիւ-
ղէ խօսի առ՝ք զայլոց ։ զի 'ի յաւելն զնի, * և ցն-
„ ծացէք առաջի նորա դողութ՟ ‖, զայս տայ իմանալ ։ մի
զի այս երկիւղ միայն տայ ցնծալ առաջի այ, այսինքն ու-
րախութեամբ միանգամայն և դողութ՟ կալ յանդիման
մեծվայելչութեան նր ։ Իսկ երկիւղն ծառայական ոչ
է այսպէս ։ Իւ աստ բառիս" դողութեամբ" իմացեալ
լինի նոյն իսկ երկիւղն ։ զի դողութիւն կամ դողալն գո-
լով գործ երկիւղի՝ բազում անգամ ըստ աւանն ճար-
տասանից դնի փոխանակ երկիւղի, մանաւանդ 'ի սուրբ
գիրս ։

Սոյնպէս վ՟կ 'ի մեկն ։ ժամանը ։ երես ։ 159 ։ զեր-
կիւղն և առաւել ևս զդողութիւնն համարի աստ իբր
հանգամանք օրհնաբանութեան այ յասելն ։ * ծառայե-
„ ցէք տեառն երկիւղիւ, և ցնծացէք առաջի նր դողութ՟
յօրհնաբանելն ‖ ։

Արդ մարգարէն յետ յորդորելոյ զմարդիկ ծառայել
այ որդիական երկիւղիւ, տեսեալ թէ նոքա պաշա-
րեալ 'ի զգայութեանց՝ բազում անգամ վրիպին յայսպիսի
ծառայութենէ, և զհետ լինելով բերման զգայութեանց
անկանին յորդիական երկիւղէ, և անփոյթ լինին 'ի
պահպանութիւն պատուիրանաց այ, ևս և արհամար-
հեն զբան նորա, 'ի մէջ բերէ զսպառնալիս, զի գոնէ
այնու շարժեալ յերկիւղ ծառայական՝ զզաստասցին ։
և վառեալ յերկիւղ որդիական՝ սիրով ընկալցին զբան
նորա ։ Սաստի յարէ զնի, և ասէ ։

ժբ ։ Ընկալարուք զխրատ նորա, գուցէ բարկասցի Տէր ։ և
կորնչիցիք 'ի ճանապարհաց արդարութեան ։

ժգ ։ Ի ժամանակի, որպէս բորբոքեսցի բարկութիւն նո-
րա ։

Բառս խրատ՝ հասարակօրէն նշանակէ զբան ուղղիչ
գործոց կամ վարուց ։ իսկ երբեմն նշանակէ զպատիժ
տուեալ վասն խրատելոյ՝ քան վասն ուղղելոյ կամ զզաստա-
ցուցանելոյ ։ Արդ թէպէտ ոմանք աստանօր ըստ այսմ

նշանակութեան առնուն՝ զի փոխանակ պատժոյ, բայց հայելով յայլ թարգմանութիւնս՝ պարտ է առնուլ ըստ առաջնոյն, զի յայն միտ դնի աստանօր այս բառ յասելն:

Ընկալարո՛ւք զխրատ նորա, գուցէ բարկասցի Տէր: Կամի ասելգո՛ւք՝ որոց ասացի ծառայել տեառն երկիւղիւ և ցնծութբ, այնպէս պարտիք պատրաստ կալ, զի յօժարութբ յանձն առնուցուք զխրատ նորա, մանաւանդ զխրատ օծելոյ նորա քի. զի 'ի ձեռն խրատուց նր հնար է ձեզ ըստ հաճոյից նց ուղղել զկեանս ձեր: Ապա թէ յօժարութեամբ ոչ ընդունիցիք զխրատ նր, այլ ակամայ և բռնութեամբ, գիտասջիք՝ զի բարկանայ ած 'ի վր ձեր: Իսկ բառդ բարկանալ՝ ոչ ցուցանէ զկիրս բարկութեան, այլ զգործս, ըստ ասելոյ մեր 'ի համարն. Յ. ուստի գրէ ծործորեցին 'ի մեկն. մատթ. գլ. ժը. թէ բարկանալ ասի ած * ոչ ըստ բնութեան՝ որ անախտականն է,
,, այլ ըստ տպաւորութե ձևմնայ. որպ զի զանձանց մե-
,, րոց յանցանս ծանիցուք, թէ որքան ծանրագոյնք
,, են. մինչ զի զանբարկանալին 'ի բարկութիւն շարժէ||:
Իսկ թէ զինչ զհետ գայցէ բարկութեանն նց՝ յայտ առնէ ասելով:

Եւ կորնչիցիք 'ի ճանապարհացն արդարութեանն: Ճանապարհ արդարութեան կոչէ զճանապարհն քսի, կամ զճանապարհն զայն՝ զոր պարտ էր նց յանձն առնուլ 'ի ծառայելն: Արդ՝ ասէ, եթէ ոչ ընդունիցիք զխրատ նորա, բարկացեալ 'ի վր ձեր՝ թողու զձեզ 'ի ձեռաց իւրոց. և դուք փոխանակ փրկելոյ այնու ճանապարհաւ՝ կորնչիցիք. և կամ փոխանակ խրատու նր՝ ընկալեալ զխրատս չարս ըստ մարմաջելոյ ախտից ձերոց՝ մոլորիք և արտաքս ելանէք 'ի ճանապարհէն քրիստոսի, և կորնչիք, թէ աստ՝ և թէ 'ի հանդերձեալն, յորժամ վառեսցի իսպառ բարկութիւն նր. և առ այս յարէ, և ասէ:

ԺԳ. Ի ժամանակի՝ որպէս բորբոքեսցի բարկութիւն նր: Ի ժամանակի ասելով յայտ առնէ՝ թէ ած գիտէ և զդէպ ժամանակ պատժելոյ, և ոչ յանդէպս միանգամայն. զի որպէս գրէ գէորգ վարդապետ 'ի մեկն, եսայ. ա. * ոչ
,, զամենն՝ որք զմի և զնոյն չարիս գործեն՝ միահաղոյն
,, տանջէ (կամ պատժէ) ած. ապա թէ ոչ՝ վաղ ու-

„ րեամն ընջեալ էր զմարդիկ․ այլ զոմանս պատժէ
„ այսօր, և զոմանս 'ի վաղիւ 'ի խրատ այլոց․ իսկ
„ զոչ ուղղեալսն պահէ ահագին դատաստանին‖ ։ Նաև
ըստ այսմ բառդ 'ի ժամանակի՝ յերկուս ժամանակս
կարէ հայիլ․ մի յոր և իցէ ժամանակ՝ յորում շարժի
բարկութիւնն այ 'ի վրէժ մարդոյ․ և միւսն՝ 'ի ժամանակ
աւուրն հատուցման՝ ուր ոչ ևս գոյ միջոց ողորմելոյ
կամ զիջանելոյ, այլ բարկութե դատելոյ և արդարութ
վրէժս խնդրելոյ ։

Իսկ բառս ոպ՝ կւմ ը երբ" ․ քի, դնի իբր ժմկական մակ-
բայ փոխ բառս յորժամ․ ը որում դնի և յայլ քանի
մի սաղմոսս․ որպէս 'ի սաղ․ ձլը․ 1․ յասէն․ * առ գետս
„ բաբելացւոց անդ նստէաք և լայաք․ որպէս յիշեցաք
„ մեք անդ զսիոն‖ ․ փխնկ ասելոյ, յորժամ յիշեցաք․
ևս և 'ի սաղ․ ձ․ 6․ ուր ասի․ * վկայութիւն յովսեփու,
„ զոր եդ ը նմա․ ոպ ելանէր նա յերկրէն եգիպտաց-
„ ւոց‖ ․ յր՝ յորժամ ելանէր ։ Ըստ այսմ դնի և աստ
յասէն․ * որպէս բորբոքեսցի բարկութիւն նր‖ ․ յր յոր-
ժամ բորբոքեսցի ։

Նշանակէ "բորբոքեսցի" կամի յայտ առնել զսաստ-
կութիւն բարկութեն այ, կամ զանզիջանելի զօրն նր 'ի
ժմկի դատողութեան ։ Ո՛ւ յայնժամ եթէ որ երևեսցի
անհնազանդ և թշնամի այ, ոչինչ իւիք կարէ զի-
ջուցանել զբարկութիւն նր, և ոչինչ իւիք հնար է
համոզել զնա, զի բորբոքեալ է․ ոչ միջնորդուն այլոց
նպաստէ, և ոչ կաշառք հաւանեցուցանէ․ ոչ պաղա-
տանք զնա ածրէ, և ոչ արտասուք զնա 'ի գութ շար-
ժէ․ այլ՝ նա ինքն ըստ պահանջման անաչառ արդարութե՝
դատէ, պատժէ և կորուսանէ․ մերժէ յիւրմէ, և 'ի
դժոխս մատնէ ։ Կամի յայտ առնել երկրորդ զյանկար-
ծականութիւն վրէժխնդրութեն այ՝ որ լինելոց է յանա-
կնկալ ժամանակի․ որպէս գրէ առաքեալն ( ա․ թեսաղ․
ե․ 2․ և 3․) միաձայնութեամբ մարգարէից․ քզի յայս
տայ հայիլ բորբոքելն ։

Ոմանք զայս յետին բանս իմանան և վասն այնր ժամա-
նակի, յորում բորբոքեցաւ բարկութիւնն այ 'ի վերայ
հրէից 'ի պաշարմանն երուսաղէմի ։

Մեծն խոսրով 'ի մեկն․ ժամագր․ երես․ 123․ 'ի վերայ
առաջնորդաց տարածէ զայս սաղմոս յասէն ․ * ա-

„ ռաջնորդք միաբանեցին՝ ի չարիս հակառակ տեառն և
„ օծելոյ նորա . և բարկասցի տ՟ր վճ՟կ . և կործանեցէք՝ ի
„ յուսոյն յաւիտենից . ( փ՟խկ զի՝ ի տեղի զհօտն արա-
„ ծելոյ, միաբանիք տածել զչարիս )‖ . Զայս եդեալ
մարգարէին՝ խօսի այժմ և զվիճակէ նոցա՝ որք յու-
սան՝ ի տէր . վասն որոյ ասէ .

ժդ . Երանի ամենեցուն՝ որք յուսացեալ են՝ ի տէր .

Այս բան է իբրև եզրակացութիւն ինչ, կամ իբրև վեր-ջաբանութիւն այսր երկրորդ սաղմոսի, ( ըստ ոմանց նաև առաջնոյն իսկ . ) որով ազդ առնէ մարգարէն՝ ի միտ առնուլ յասացելոց իւրոց ցայս վայր, թէ քանի բա-րի լինի մարդոյ, եթէ յուսացեալ յաստուած՝ հնազանդ-գոցի նմին . և այնպիսի երևեսցի՝ ի ժամանակի բար-կութեան նորա :

Ասացի՝ ըստ ոմանց, առաջնոյն իսկ, ըստ որում առաջին սաղմոսն յերանութենէ սկիզբն եդ, և երկրորդս յերանութեն գլխաւորեաց : Արդ՝ որպէս գեղեցիկ ասէ երանաշնորհ հայրն մեր Մխիթար աբբայ հայր՝ ի մանաւոր քաղ-ուածս մեկնութեան սաղմոսի ( չև տպագրեալս ), * Յարմարաբար դնի՝ ի սկզբան, զի երանութին է վախ-
„ ճան, որ՝ ի դիտաւորութեան է առաջին ‖ . նոյնպէս և ս՝ ի կատարած երկրորդ սաղմոսիս՝ ի վերայ բերի երա-նութիւնն իբրև վախճան, որ՝ ի գործադրութե է վեր-ջին : Նա զի այս է նպատակ առաքինեաց՝ ցանկա-լի, սմին իրի երանելով այնպիսեաց՝ ասէ սաղմոսեր-գուն :

Երանի ամենեցուն, որք յուսացեալ են՝ ի տէր : Այսինքն՝ երանի է ամենեցուն ն՟ց, որք՝ ի կեանս իւրեանց ծանեան զա՟ծ՝ իբրև իւրեանց տ՟ր . և իբրև զա՟ծ պաշտեցին ըզ-նա . և հնազանդեցան հրամանաց և խրատուց միած-նի որդւոյ ն՟ր . և հաւատարմութեամբ ծառայեցին նմա, դնելով զյոյս իւրեանց բոլորովին՝ ի նա . զի նոցա միայն է կեալ երանութեամբ՝ ի մ՟ե երկրի, և լինել ապահով՝ ի դատաստանի, և կալ պարզերես առաջի ն՟ր, և ընդու-նիլ՝ ի նմանէ զերանութիւնն յաւիտենական :

Համբռնացին՝ բովանդակ զայս սաղմոս յարելով՝ ի նախընթացն՝ մեկնէ ըստ յարմարութեան բանից՝ ի բա-

րդական միտս ըստ իւրաքանչիւր համարոյ 'ի վ՟ր արդարոյ, և մանաւանդ 'ի վ՟ր կրօնաւորի ։ Քանզի 'ի թողուլ նորա (ասէ) զչարն և զճն՟՝ և 'ի լինել զհետ բարեաց, (ա) խռովին դևք, և յարուցանեն 'ի միտս նորա զխորհուրդս չարս ։ և տեսեալ զնա՝ օծեալ, ի՟ արդարացեալ շնորհօք, (բ) յանդիման լինին, և յառնեն 'ի վերայ ն՟ր պէսպէս փորձութ՟ք, առ արկանելոյ զնա 'ի մեղս, և նովին նախատինս դնել ա՟յ ։ (գ) Ո այս տեսեալ արդարոյն՝ խորհի 'ի միտս իւր ։ քննէ զպատճառն, և ասէ ։ զի՞ է, զի ես հրաժարեցայ 'ի մեղաց և յաշխարհէ, և տակաւին կրեմ 'ի դիւաց զբազմադիմի խառնութիւնս փորձութեանց ։ Արդարև կան յիս դեռևս յօժարութիւնք փառասիրութ՟ե, հեշտասիրութ՟ե, ագահութեան, աւելորդաստացութ՟ե, և այլոց սոյնպիսեաց, որք են իբրև կապանք չարք, որովք ջանան դևք ձգել զիս 'ի մեղս ։ Ոչինչ ապա ։ խզեցից զայսոսիկ կապանս դիւաց, և ընկեցից յինէն զլուծ անկարգ յօժարութեանց ։ (դ) և այսու զերծեալ յա՟մ երկրաւոր բաղձանաց՝ դիմեցից յերկնայինս ։ և որպէս թէ եղէց բնակեալ յերկինս անկասկած յերկիւղէ դիւաց ։ վասն զի բնակեալն յերկինս, ի՟ նա՝ որ ունի զկեանս և զքաղաքավարութիւն իւր յերկինս, ոչ երկնչի 'ի պատերազմէ դիւաց ։ այլ՝ ծիծաղի զնոքօք ։ և տէր ևս արհամարհեսցէ զնոսա ։ (ե) և խօսեսցի ը՟ն ն՟ս բարկութ՟բ ։ և զերծուսցէ զիս 'ի ձեռաց նոցա ։ (զ) Իսկ ոչ այսչափ միայն, այլև կացուսցէ զիս 'ի մէջ եկեղեցւոյ իւրոյ 'ի նոր սիոնի թագաւոր 'ի վ՟ր դիւաց և ախտից ։ և արասցէ զիս թագաւոր յարքայութ՟ե երկնից ։ ը՟ն որումև պատմեալ է՝ ի՟ խոստացեալ է, թէ արդարն ունի թ՟գլել յերկինս ։ (է) վասն զի արդարն է ժառանգ թ՟գլութ՟ե ա՟յ, զի է որդի ա՟յ, որովհետև ա՟ծ շնորհօք ծնանի ըզնա յիւր որդի ։ և դրեթէ (ը) ասէ ցնա, խնդրեա յինէն, և տաց քեզ իշխել հեթանոսաց, ի՟ դիւաց՝ ընդ ամենայն ծագս երկրի ։ ի՟ յո և իցէ խորհուրդս կամ 'ի գործս, յորս երևի ծագ ինչ երկրասիրութեան ։ (թ) և տիրեսցես նոցա, և փշրեսցես զն՟ս խստութ՟բ վարուց իբրև գաւազանաւ երկաթեաւ ։ (ժ) Այսպիսի վիճակ վերառեալ արդարոյն՝ սկսանի ազդ առնել մտաց և կամաց իւրոց՝ իբրև թագաւորաց մարմնոյ, և ասէ ։

արդ՝ թագաւորք, ո՛վ միտք և կամք իմ՝ այսուհետև խրատեցարուք, և ուղիղ դատեցէք զերկիր, այսինքն զմարմինս. (ժա) և մի ես ծառայէք նմա, այլ՝ Տեառն՝ երկիւղիւ և ցնծութբ. (ժբ) Նաև դուք ո՛վ զգայութիւնք իմ, ընկալարուք զխրատ Տեառն ձերոյ՝ որ դատողականութեան մնայ. զի մի բարկասցի Տր ՚ի վր ձեր, (ժգ) և կորուսցէ զձեզ ՚ի ժամանակի՝ յորժամ բորբոքեսցի բարկութիւն նր. (ժդ) Ապա թէ հպատակեսջիք ուղղութեան օրինացն Տն ձերոյ, լինիջիք երանելի ՚ի կեանսն յաւիտենից.

# ՍԱՂՄՈՍ. Գ.

*Խնդրէ ազատութեան դաւթի առ Տր ՚ի հալածիչ իւրոյ Աբեսաղոմայ. և շնորհակալութիւն վն ազատութեան, այլաբանելով՝ ՚ի դէմս Քրիստոսի.*

Սաղմոս ՚ի Դաւիթ. ՚ի ժամանակի զի փախուցեալ էր նա յերեսաց Աբեսաղոմայ որդւոյ իւրոյ.

1 Տէր. զի՞ բազումք եղեն նեղիչք իմ. բազումք յարեան ՚ի վր
իմ. 2 Բազումք ասեն զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն
նորա առ Ած իւր. 3 Այլ դու Տր օգնական իմ ես, փառք իմ, և
բարձրացուցիչ գլխոյ իմոյ. 4 Ձայնիւ իմով ես առ Տէր կար-
դացի. և լուաւ ինձ ՚ի լեռնէ սրբոյ իւրմէ. 5 Ես ննջեցի, և ՚ի
քուն եղէ. զարթեայ, և Տէր ընդունելի իմ է. 6 Ոչ երկեայց
ես ՚ի բիւրուց զօրաց նորա, որք շուրջանակի պատեալ պաշարեալ
պաշարեն զիս. 7 Արի՛ Տէր, և փրկեա զիս Ած իմ. զի դու հա-
րեր զամն՚որք էին ընդ իս ՚ի թշնամութն ՚ի տարապարտուց, և զա-
տամունս մեղաւորաց փշրեցեր. 8 Տեառն է փրկութն. ՚ի վերայ
ժողովրդեան քո օրհնութիւն քո.

# ՎԵՐՆԱԳԻՐ ։

### Սաղմոս 'ի դաւիթ․ 'ի ժամանակէ՝ ուր փախուցեալ էր 'ի յերեսաց աբեսաղոմայ որդւոյ իւրոյ ։

ԱՅՍ ԵՂԱՆԱԿ ԽՕՍԻՑ ՈՐ ԴՆԻ
'ի վերնագրիդ, որպէս և յայլ բազում վերնագիրս,
* սաղմոս 'ի դաւիթ ‖ ․ յայտ առնէ, թէ
սաղմոսքն ասացեալք 'ի դաւթայ՝ են շնչ-
եալք 'ի նա 'ի հոգւոյն սրբոյ․ որպ թէ եղեալ էր․ * սաղմոս
„ ազդեալ 'ի հոգւոյն սրբոյ առ դաւիթ ‖, որով նշանա-
կի, թէ սկզբնական հեղինակն սաղմոսաց ոչ է դա-
ւիթ, այլ՝ հոգին սուրբ ։ Նա և եթէ բարւոք ևս կշռես-
ցուք, այս օրինակ խօսելոյ համեմատի այնց բանից,
որք դնին 'ի գլուխս մարգարէութեանց․ ծ͞ա այսմ, * Ակիւղն
„ բանից տեառն առ ովսէէ ‖ ․ ովս ․ ա ․ 1 ։ * բան տն՝ որ
„ եղև առ սոփոնիա ‖ ․ սոփ ․ ա ․ 1 ։ * բանն՝ որ եղև
„ առ եսայի ‖ ․ եսայ ․ բ ․ 1 ։ * Նա եղև բան տեառն առ
„ իս ‖ ․ եզեկ ․ գ ․ 1 ։ * պատգամ տեառն՝ որ եղև առ յո-
„ վէլ ‖ ․ յովլ ․ ա ․ 1 ։ * պատգամն՝ որ եղև առ երեմիա
„ 'ի տնէ ‖ ․ երեմ ․ է ․ 1 ․ և ։ Օր որպ 'ի սոսա որոշա-
կի առանցի, թէ այն բանք՝ զորս խօսէին մարգա-
րէքն, էին 'ի հոգւոյն սրբոյ, նմանապէս և աստ՝ յա-
սելն, * սաղմոս 'ի դաւիթ ‖, անորոշակի աւանդի,
թէ սաղմոսքն՝ զորս խօսէր դաւիթ, էին 'ի հոգւոյն
սրբոյ ։ Տես զայսմանէ և 'ի ներածութ․ գլ․ է․ 'ի վերջն․
Նա թէպէտ 'ի սաղմոսս ինչ մեր, և 'ի մեկն․ լատին",
ոչ դնի, * սաղմոս 'ի դաւիթ ‖ ․ այլ՝ * սաղմոս դաւ-
„ թի ‖, բայց յայտ է թէ զայս փոփոխութիւն այլք մու-
ծին, յորոց էառ և ոսկան․ և տեսեալ ևս՝ թէ 'ի լա-
տինս անորոշ դնի, որպէս և յեբրայեցին, փոփոխեաց
զնմ վերնագիրս սաղմոսաց մերոց, և եդ՝ * սաղմոս
„ դաւթի ‖ ։ Նա սակայն այս ոչ երևի ուղիղ․ վասն զի
թէպէտև 'ի լատինս և յեբրայեցիս անորոշ դնի, իբր
կամ անհոլով, կամ այնպիսի եղանակաւ՝ որ ըստ ար-
տաքին հնչմանն կարէ իմացեալ լինել՝ թէ 'ի սեռա-

կան և թէ 'ի տրական հոլովն, բայց ըստ ներքին մտացն՝ իմացեալ լինի 'ի տրականն. որպէս և իմանան մեկնիչք. ըստ որում և իմացան եօթանասուն թարգմանիչքն, և հեղինակքն քաղդէական մեկնաբանութեան. ընդ որ համաձայն և հոգելից թարգմանիչք մեր՝ եդին յամենայնի, * սաղմոս 'ի դաւիթ ||. և ոչ, * սաղմոս դաւթի ||:

Մակագիր այսր սաղմոսի յայտնի ցուցանէ, թէ սա ըստ կարգի յետոյ է քան զայլ բազում սաղմոսս. (որպ̃ և նախընթաց սորա). զի ասէ՝ թէ զայս ասաց դաւիթ 'ի փախչելն իւր յերեսաց աբեսաղոմայ, և այս՝ յայտ է թէ պատահեցաւ նմա յետ թ̃գելոյն իւրոյ. իսկ արդ՝ դաւիթ յառաջ քան զթ̃գելն ևս ասաց զբ̃մ սաղմոսս, ուրեմն այս սաղմոս յետոյ եղև քան զնոսա: Իսկ թէ ընդէր երրորդ դնի, պատճառն ոչ է յայտ. որպէս և ոչ այլոցն. ըստ որում ասացաք 'ի ներածութեան. գլ. Է̃. 'ի վերջն: Այլ առ բարւոք իմանալոյ զընթացս բանից այսր սաղմոսի, ընդ նմին և զնշանակութիւն վերնագրիս, արժան է կարգել աստ համառօտիւ զպատմութիւն հալածելոյն դաւթի յերեսաց աբեսաղոմայ:

Յետ հաստատելոյ թ̃ւթեն դաւթի՝ իբրև անցին ամք երկոտասան, կամ աւելի ևս, որդին ն̃ր աբեսաղոմ յանկուցեալ յինքն զսիրտ ժողովրդեանն ի̃ւր՝ գնաց 'ի քեբրոն. փող եհար, և թ̃գեաց անդ. և էառ իւր խորհրդակից զաքիտոփէլ զխորհրդատուն դաւթի: Զայս լուեալ դաւթի՝ փախեաւ յերեսաց նորա, և ել յե̃մէ բազմութեամբ ծառայից և զօրաց իւրոց. և երթայր հետիոտս. և ելեալ 'ի լեառն ձիթենեաց՝ էջ անտի, և էանց ընդ յորդանան. և ժողովրդեանն տեսեալ զնա այնպէս նուաստացեալ յարքայական փառաց՝ լային մեծաձայն. նոյնպէս և որք ընդ նմա էին՝ ծածկ զգլխով արկեալ՝ լային յոյժ, չունելով գրեթէ զյոյս անդրէն միւսանգամ թագաւորելոյ նորա.

( Բ̃. թագ. ԺԵ. )

Այլ իբրև եկն և եմուտ աբեսաղոմ յե̃մ, ետ նմա խորհուրդ աքիտոփէլ՝ ժողովել զօրս, և հասանել 'ի վերայ դաւթի, և սպանանել զնա. այլ իբրև ոչ յաջողեցաւ խորհուրդ նորա, խեղդ էարկ զինքն, և մեռաւ. ( Բ̃. թագ. ԺԶ. և ԺԷ. ) Իսկ աբեսաղոմ զի-

մեալ 'ի վե՟ր դաւթի բազմութե՟ զօրաց՝ 'ի պարտութիւն մատնեցաւ, և չարաչար մահու սպանաւ՝ ընկալեալ 'ի սիրտ իւր զերիս նետս 'ի յովաբայ զօրապետէն դաւթի. (բ. թագ. ժէ. և ժը.)

Այս դաւթի յաղթանակեալ դարձաւ անդրէն յաթոռ իւր. և գրեթէ կրկին թ՟գ՟րեաց յերուսաղէմ. (բ. թագ. ժթ.) Այս 'ի շնորհակալութիւն այսր բարերարութե՟ն՝ զոր ընկալաւ յ՟այ, ասաց զսաղմոս զայս. յորում 'ի համարս ինչ այնպէս ձևացուցանէ զինքն, ո՟պ թէ կայ 'ի նոյն տառապանս հալածմանց. և 'ի համարս ինչ այնպէս ձևացուցանէ, որպէս թէ ակնունի զերծանիլ յայնմանէ. և 'ի համարս ինչ ևս ձևացուցանէ իբրև զերծեալ.

Իսկ յասէն 'ի վերնագրի աստ, * 'ի ժմկի՝ զի փախուցեալ էր յերեսաց աբեսաղոմայ որդւոյ իւրոյ ‖, այնու ոչ ցուցանի, թէ դաւիթ 'ի ժամանակի անդ փախստեան իւրէ ասացեալ զայս, այլ թէ՝ զայս ասաց վասն այնր ժմկի, յորում հալածեցաւ. կամ թէ բանք այսր սաղմոսի են վասն այնր, որ պատահեցաւ նմա 'ի ժամանակի հալածելոյն իւրոյ յաբեսաղոմայ, և ազատելոյն իւրոյ 'ի ձեռաց նորա.

Արդ՝ դաւիթ մարգարէ յասէն զայս սաղմոս՝ թէպէտ յանցս հալածման իւրոյ և ազատութեան հայելով խօսէր, բայց մարգարէական հոգւով լցեալ՝ 'ի դիմաց ք՟սի կարգէր զբան իւր՝ իբրև զմարգարէութիւն. թող զայն զի դաւիթ էր օրինակ ք՟սի ը՟ստ վկայելոյ սուրբ գրոց. (երեմ. Լ. 9; եզեկ. լդ. 23, 24, և 25; ովս. գ. 5; եսայ. իբ. 22. ևն.) Աստի և զբանս նորա զասացեալս զիւրմէ մարգարէական հոգւով՝ պարտ է իմանալ զք՟սէ՝ իբրև 'ի դիմաց նր՟, կամ 'ի դէմս նորին ասացեալ. որպէս յայտ լիցի 'ի մեկնութե՟ն. զայսմանէ տես և 'ի ներածութեան. գլ. Է. 'ի սկզբան.

# ԲԱՆ.

ա. Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ. բազումք յարեան 'ի վերայ իմ:

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Աստանօր բառս "զի", կամ՝ "ընդէր" որքան, ոչ է պարզ հարցական, այլ՝ զարմացական. որով իբր զարմացմամբ խօսի դաւիթ առ ա՟ծ, թէ զի՞ է՝ զի բազմութ՟ք որդւոյն իւրոյ յարեան ընդդէմ նորա կորուսանել զնա:
Ասացի՝ իբր զարմացմամբ խօսի. զի յայսմ հալածման զարմացեալ էր դաւիթ 'ի վերայ բ՟զմ իրաց: Նախ՝ 'ի վերայ նախախնամութեան ա՟յ, թէ զիա՞րդ արդարապէս հատոյց նմա զհատուցումն մեղաց իւրոց, կատարելով զոր սպառնացեալն էր բերանով նաթանայ՝ յասելն. * ահա ես յարուցից 'ի վերայ քո չարիս 'ի տանէ քում- ,, մէ... զի դու արարեր զայդ 'ի ծածուկ. և ես ա- ,, րարից զբանդ զայդ յանդիման ա՟մ իսրայելի ‖. բ. թագ. ժբ. 11, և 12: Երկրորդ՝ զարմացեալ էր ընդ այս, զի որդի իւր էր՝ որ հալածէր զինքն. * Ահա- ,, սիկ (ասէ) որդի իմ, որ ելեալ է յորովայնէ իմմէ, ,, խնդրէ զանձն իմ ‖. բ. թագ. ժզ. 11. Երրորդ՝ զարմացեալ էր ը՟ն այնչափ բազմութ՟ն ժողովրդեանն և ընդ աքիտոփէլ, թէ զիա՞րդ առ հասարակ միաբանեցան ընդ աբեսաղոմայ. զի որպէս ասի. բ. թագ. ժե. 15. և ժզ. 15. ա՟մ ի՟էլ և աքիտոփէլ էին ընդ աբեսաղոմայ. և վասն այսորիկ իսկ ասէ, թէ բ՟զմ եղեն նեղիչք իմ: Չորրորդ՝ զարմացեալ էր ընդ փոփոխմունութ՟ն ժողովրդեանն, թէ զիա՞րդ որ յառաջն յօժարութ՟բ հնազանդեալ էին ինքեան իբրև իւրեանց բարի թագաւորի, այժմ դարձան ընդդէմ իւր, և յա՟մ սրտէ յարեցան յաբեսաղոմ. զի որպէս ասի. բ. թագ. ժե. 13. ժողովուրդքն ոչ ակամայ՝ կամ բռնի, այլ՝ սրտիւ յարեցան 'ի նա: Եւ ահա յայս ամենայն հայեցեալ՝ ասէ:

Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ. բազումք յարեան 'ի վերայ իմ:

Տէր ասելով՝ ոչ միայն խոստովանի, թէ նա է տէր ա՟մի, այլև փափաքի 'ի գութ շարժել զնա 'ի վերայ իւր իբրև

'ի վ՟ր ծառայի իւրոյ . հայեաց առէ 'ի ծառայ քո , և տես՝ թէ նեղիչք և տառապեցուցիչք իմ քանի՛ և զի՛արդ բազում եղեն . որոց ոմանք բանիւք նախատանաց նեղեն զիս , և ոմանք արհամարհանօք և բա- պատնալեօք տաղնապեն . և առ հասարակ յարուցեալ են
'ի վերայ իմ ջնջել զյիշատակ իմ։

Օ այսպիսիս ընթեռնումք և յաճախարանի 'ի պատմութեան չարչարանաց տ՟ն մերոյ . ուր տեսանի , թէ քանի բազում եղեն նեղիչք ն՟ր , և քանի՛ բ՟րք էին՝ ողջ յարեան 'ի վերայ ն՟ր . զի ա՟մ ժողովուրդք հրէից , ողջ յառաջին ովսաննայ ասելոյ իբրև թագաւոր ընկալան զնա , յանկարծակի իմն փոփոխեալ՝ մերժեցին զնա . և ուրացան զթ՟գրութիւն ն՟ր . * չէք մեր թագաւոր ( աղաղակէին ) բաց 'ի կայսերէ ‖ . յովհ . ժթ . 15 . Նա զայս կամակար մտօք ասէին . զի ( բաց 'ի ծառայից ք՟նի , ք՟ր բաց յառաքելոց և յայլոց ոմանց ) զրեթէ առհասարակ սրտիւ յարեալ էին զհետ չարին աբեսաղոմայ՝ ք՟ր սատանայի , որ յառաջագոյն յորժամ յերուսաղէմ էր՝ ք՟ր յերկինս , իբր որդի էր ն՟յ գեղեցիկ . բայց ապստամբեալ 'ի նմանէ՝ եղև թշնամի նորա . և յանկուցեալ յինքն զժողովուրդ նորա , յարեաւ ը՟դէմ ն՟ր կորուսանել զնա . և առ այս մասնաւորապէս էառ իւր խորհրդակից զաքիտոփէլ , ( որ թարգմանի՝ եղբայր կործանման և յիմարութեան , ) այն է յուդա սկարիովտացի . որ և ը՟ր աքիտոփէլի իբրև ետես՝ թէ այլազգ վճարեցաւ խորհուրդ իւր , խեղդ էարկ , և մեռաւ ։

Իսկ տէրն մեր թէպէտև ը՟ր օրինակի դաւթի ել յե՟րմէ , և գնաց 'ի լեառն գողգոթա , և մահուամբ իւրով իբրև թէ հեռացաւ 'ի նոցանէ . բայց փառաւորապէս ես դարձաւ յիւր թագաւորութիւն՝ 'ի հրաշալի յարութե՟ իւրում , և թագաւորեաց յաւիտեան . զորմէ խօսի
մարգարէն 'ի համարն . 5 . և յորս զկնի ։

Խորհրդաբար առեալ ստեփաննոս սիւնեաց 'ի կարգս պաշտամանց եկեղեցւոյ երես . 421 . զայս բան վերածէ 'ի դէմս մարդկային բնութեան՝ յասելն . * բազումք ։, յարեան 'ի վերայ իմ 'ի սկզբանէ կենաց իմոց թշնամիք ., 'ի դրախտին հակառակամարտ զօրութիւնքն ն՟ռ ‖ ։
Որպիսապէս առեալ՝ ասելի է թէ որպէս 'ի մեկնել դաւթի յե՟րմէ և յանկանել 'ի թ՟գուէ՝ բազում նեղիչք յա-

րեան 'ի վերայ նր, սոյնպէս 'ի մեկնել մարդոյ յեղմէ մր 'ի խաղաղութենէ հոգւոյ, և յանկանելն 'ի հոգևոր թագաւորութենէ՝ յամենայն 'ի վր նր բղմ նեղիչք, որ բղմ նեղացուցիչ խորհուրդք և վշտացնիչ խայթմունք խղճի մտաց։ Նոյն ընդ հակառակն, որպ ի փախչիլ մարդոյ 'ի բանսէ, բազումք յարձակին զկնի նորա, սոյնպս և որ փախչի 'ի բանսարկութենէ մեղաց՝ բազում դևք յարձակին զհետ նորա, և բազում յուսահատեցուցիչ բանս խօսին 'ի սիրտ նորա. որպ ասելն բղք 'ի փախչելն դաւթի. ուստի ասէ։

Գ. **Բազումք ասեն զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած իւր։**

Բազումք 'ի ժողովրդենէ իսրայէլի 'ի տեսանելն ըզդաւիթ այնպէս հալածեալ՝ լալին 'ի վր նր, որպ տեսանի 'ի նախագրելոյդ, չունելով յոյս դարձի թգրութեան նր. կամ յերկրայս անկանելով զնմանէ. իսկ որք զհետ եղեն աբեսողոմայ՝ անարգէին զնա, և համարէին՝ թէ ոչ ևս կարէ նա զօրանալ, և ոչ յԱյ պաշտպանիլ. զի զմեղանչել նորա գիտէին, և ապաշխարելոյ նորուն անտեղեակ էին. և առ հասարակ գրեթէ ամենեքին կամ խորհրդով և կամ բերանով զայսպիսի խօսէին. վասն որոյ ասէ։

**Բազումք ասեն զանձնէ իմմէ՝ թէ չիք փրկութիւն սմա առ Աստուած իւր։**

Այսինքն ժողովուրդք իմ՝ որք էին բազումք, կամ բազումք 'ի ժողովրդենէ իմմէ՝ տեսեալ զիս 'ի հալածման՝ ասէին, ոչ փրկի դա այլ իւրով, կամ ոչ գտանէ զփրկութիւն յԱյ, կամ ըստ նմայն եղեալ է զյոյս փրկուե իւրոյ առ Այծ, կամ թէ ոչ կարէ փրկիլ առաջի Այ. որ է ասել, Այծ ոչ փրկէ զնա, զի բարկացեալ է 'ի վերայ նորա, և թողեալ է զնա։

Սոյն զայս՝ առաւել ևս դառն բանիւ ասէր նմա սեմէի ազգականն սաւուղայ. զի յորժամ ելանէր դաւիթ յերղմէ հետևոտս, քարինս արձակելով 'ի վերայ նորա՝ անիծանէր զնա, և ասէր. * Ել ել այր արեանց
„ և այր անօրէն. դարձոյց 'ի քեզ տէր զամ արեան
„ տանն սաւուղայ, զի թագաւորեցեր փոխանակ նորա. և
„ ետ տէր զթագաւորութիւն քո 'ի ձեռս աբեսողոմայ որդ-
„ ւոյ քո, և ահա քեզ չարիս քո. զի այր արեանց ես

„ դու ‖ . Բ . Թագ . ԺԲ . 7 , և 8 ։

Օ այսպիսի ասէին և առ տէրն մեր բազումք յանօրէն հրէից , յորժամ ել նա յեղմն 'ի գողգոթա ։ Օ ի տեսեալ զնա 'ի վերայ խաչին՝ * հայհոյէին զնա . շար-
„ ժէին զգլուխս իւրեանց , և ասէին , վա՛հ որ քա-
„ կէիր զտաճարն , և զերիս աւուրս շինէիր զնա . ապ-
„ րեցո՛ զքեզ . եթէ որդի ես ա̃յ , էջ 'ի խաչէդ ‖ .
մատ . իէ . 39 , և 40 ։ Այլ եւ՝ թէ * զայլս ապրե-
„ ցոյց . զինքն ոչ կարէ ապրեցուցանել . եթէ թագաւոր
„ է իէլի , իջցէ այժմ 'ի խաչէդ , և հաւատասցուք
„ դմա . եթէ յուսացաւ յա̃ծ , փրկեսցէ այժմ զդա ,
„ եթէ կամի զդա . քանզի ասաց՝ եթէ ա̃յ որդի եմ ‖ ։
մատ . իէ . 42 , և 43 ։ Իսկ թէ ինքն զինչ ասէր առ աստուած , յայտ առնէ ասելով ։

**Գ . Դու տէր օգնական իմ ես , փառք իմ , և բարձրացուցիչ գլխոյ իմոյ ։**

Ի հալածիլ դաւթի յերեսաց աբեսաղոմայ , և 'ի կարծել թշնամեաց նորա , թէ նա ոչ կարէ գտանել ուստեք զօգնութիւն , և ոչ կարէ վերստին դառնալ 'ի փառս թագաւորութեան իւրոյ , և ոչ եւս ունի բարձրանալ զօրութեամբ , նա յա̃ծ ապաւինելով՝ զերեսին զայսոսիկ եւս եգիտ յա̃յ , թ̃ է օգնիլ , փառաւորիլ , և զօրաւորիլ ։ Յայսոսիկ հայելով ասէ .

**Դու տէր օգնական իմ ես , փառք իմ , և բարձրացուցիչ գլխոյ իմոյ ։** Բառդ "այլ" կրկնակի յարէ զայս բան ընդ նախընթացին , մի՝ հայելով յանձինս թշնամեաց . յոր միտ կամի ասել . ժողովուրդք իմ թողին զիս , և հալածեն եւս . բայց դու ոչ թողեր , և ոչ թողուս զիս ա̃ծ ։ Երկրորդ՝ հայելով 'ի բանս թշնամեացն . յոր միտ կամի ասել . հալածիչք իմ ասէին՝ թէ աստուած ոչ օգնէ նմա ա̃ծ . բայց ոչ է այնպէս . զի դու որ ես տէր ա̃մ՝ միշտ օգնական իմ ես , փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ ։

**Օգնական իմ ես** ասելով՝ ցուցանէ , թէ 'ի հալածիլ իւրում գտեալ է զօգնութիւն 'ի ն̃նէ . և այս մի̃ն̃գ յերիս ։ Նախ՝ զի տէր ոչ ետ թողլ աբեսաղոմայ վարիլ ըստ խորհրդոյն աքիտոփէլի , այլ քուսեայ արաքացւոյ . ապա թէ ոչ՝ անտարակոյս կորուսանէր զնա

աբեսաղոմ: Երկրորդ՝ զի յապստամբիլ 'ի նմանէ իսրայելացւոցն՝ յարեցան յինքն ծառայք նորա՝ յոլովք, աբեսսա, և այլք՝ հանդերձ զօրօք բազմօք. նա և քերեթին և ոփելեթին: Երրորդ զի 'ի փախստեան անդ թէպէտև ինքն և զօրք իւր կային նքողեալ յոյժ, քաղցեալ, և ծարաւի, և լքեալ յանապատի անդ՝ գրեթէ մերձ 'ի մահ, բայց Աստուած օգնեաց նմա, առաքելով կերակուր առ նա 'ի ձեռն վեսբեայ, և մաքիրայ, և բերզելեայ, (Բ. Թագ. ԺԷ. 27 = 29:) Ուր նկատել արժան է, զի եթէ դաւիթ չէր փախուցեալ կամ թաքուցեալ, այլ յանհոգս լեալ. Աստուած ոչ լինէր նմա օգնական. այլ կամ հրաշիւք պահէր զնա արտաքոյ հասարակ կարգի, և կամ 'ի ձեռս թշնամեաց նորա մատնէր. զի ըստ գրելոյ բարսղի, 'ի մարկ Ժ. 16. * օգնականն ոչ դատարկի ումեք լինի օգնական, այլ այնմ՝ որ 'ի գործ ինչ սկսցի ||: Նաև քանզի Աստուած ոչ միայն օգնեաց, այլև փառաւորեաց զդաւիթ, վասն որոյ ասէ:

**Փառք իմ:** Որով յայտ առնէ, թէ 'ի նեղութեան իւրում Աստուած եղև նմա փառք, այսինքն փառաւորիչ կամ պատճառ փառաւորութեան: Նաև այս երրակի. Նախ՝ զի թէպէտ իբրև անարգեալ երևեցաւ, բայց փառաւոր ևս ցուցաւ ընդդէմ թշնամեաց իւրոց. (Բ. Թագ. ԺԸ:) Երկրորդ զի յորոց անարգեցաւն, և անիծաւ, 'ի նոցունց ևս փառաւորեցաւ. (Բ. Թագ. ԺԹ. 16:) Երրորդ՝ զի 'ի վերջոյ ել 'ի փառս թագաւորութեան. քանզի ամենայն իսրայէլ ընդ առաջ նորա ելեալ՝ փառօք ընկալան զնա իբրև իւրեանց թագաւոր. (Բ. Թագ. ԺԹ. 41:) որով և բարձրացաւ նա. որոյ վասն ասէ:

**Բարձրացուցանես զգլուխ իմ:** Սովաւ յայտ առնէ, թէ Աստուած եղև նմա զօրացուցիչ, մխիթարիչ, և ժամանեցուցիչ 'ի մեծութիւն. վասն զի 'ի սուրբ գիրս՝ բարձրացուցանելն կամ բարձր առնելն զգլուխ՝ հասարակօրէն երրակի նշանակէ. Նախ՝ փոխանակ զօրացուցանելոյ զոք 'ի մեծի նեղութեան և կարօտութեան. որպէս եթէ ոք ձեռն կարկառեսցէ այնմ՝ որ մերձ իցէ նուաղիլ և անկանիլ. և յայս միտ ասի 'ի սաղ. ՃԹ. 7. * Յուղխս 'ի ճանապարհի արբուսցէ. վասն այնորիկ բարձր արասցէ զգլուխս ||. այսինքն զօրացուսցէ, և 'ի նուաղմանէն կանգնեսցէ: Նոյնպէս եղև և դաւթի. զի գրեթէ նքողեալ էր՝ ոչ մի-

այն 'ի պակասութենէ հացի և ջրոյ , այլև 'ի պակասութենէ բաջաղերութե՛ն . և տէր զօրացոյց զնա ,

Երկրորդ՝ փոխել մխիթարելոյ յուսով փրկութեան . որպէս եթէ 'ի պաշարելն ուրուք 'ի նեղութեան կամ 'ի ձեռս թշնամեաց՝ գացէ նմա որ հնարս ազատութե՛ն կամ յաղթութե՛ն . Ըմ . սաղ . իզ . 7 . * բարձր արա զգլուխ իմ 'ի վերայ թշնամեաց իմոց ‖ . և կամ՝ որպէս եթէ որ ընկղմեալ 'ի ծովու՝ 'ի վեր առնլով զգլուխ իւր՝ ընկալցի յոյս զերծանելոյ . և յայս միտ առի 'ի ղուկ . իա . 28 . * Յորժամ սկսանիցի այս լինել , ամբարձջիք և բարձրացուսջիք զգլուխս ձեր , զի մերձ է փրկութի ձեր ‖ . յդ մխիթարեսջիք յուսով փրկութեանն մերձեցելոյ . որպէս և եղև խոկ զաւթի ,

Երրորդ փոխել ազատելոյ զոք , և հաստացանելոյ 'ի պատիւ կամ 'ի մեծութիւն . որպէս եթէ թագաւոր որ զանկեալն 'ի մեծութենէ՝ վերստին մեծացուցէ . և յայս միտ առի՝ յերեմ . ծբ . 31 . * բարձրացոյց ուղմարոդաք արքայ . . . . զգլուխ յովակիմայ արքային յուդայ ‖ . յդ եհան զնա 'ի բանտէ , և թագաւորակերպ պատուեաց զնա . որպէս և պատմի անդ . Այնպէս եղև և դաւթայ՝ 'ի բարձրացուցանել զնա տեառն վերստին 'ի մեծութի . վսյ և գոհանայ զնմանէ . դու ես ասէ * բարձրացուցիչ գլխոյ իմոյ ‖ .

Զայս խօսի մարգարէն յաւէտ ևս 'ի դիմաց քի առ հայր՝ գոհանալով զնմէ , որ 'ի հալածիչ և 'ի նախատիչ իւրում 'ի հրէից և 'ի հեթանոսաց՝ եղև նմա օգնական , փառաւորիչ և բարձրացուցիչ , ոչ այսպիսի ինչ օրինակաւ , այլ՝ ամենահրաշ զօրութեամբ և մեծամեծ սքանչելեօք . Զայսոսիկ առաջի եդեալ մարգարէին՝ 'ի մէջ բերէ այժմ իբր առիթ ինչ յաջողելոյ այսոցիկ՝ զկարգաւ իւր առ աստուած , և ասէ .

Դ . Ձայնիւ իմով առ տէր կարդացի . և լուաւ ինձ 'ի լեառնէ սրբոյ իւրմէ .

Զինչ արդեօք ասաց մարգարէն 'ի կարգաւ իւրում առ ած յորժամ հալածեցաւ յաբեսաղոմայ , զայնմանէ խօսի յայլ սաղմոս՝ զորս յօրինեաց վասն այնր հալածանաց . և յայսմ ևս ակնարկէ 'ի համարն 7 ասելով . * արի տէր և փրկեա զիս ած իմ ‖ . Իսկ աստանօր

անողորմակի եւ 'ի հաստատակի խօսի ասելով.

Զայնիւ իմով առ Տէր կարդացի. Կամի ասել. յորժամ հալածեալ եղէ յԱբեսաղոմայ, եւ փախեայ 'ի ժողովրդենէ իմմէ, ապաւինեցայ առ տէր, եւ կարդացի առ նա, զի աղաղակեցի առ նա եւ աղաչեցի, զի մի եւ նա լքեալ թողցէ զիս 'ի ձեռաց իւրոց ըստ չնչելոյ թշնամեաց իմոց, այլ ցուցցէ առ իս զգթութիւն իւր. որ եւ եղեւ իսկ՝ լինելով օգնական իմ, փառք իմ, եւ հաստատիչ իմ. Որ * ձայնիւ իմով || ասելով ցուցանէ թէ յամենայն սրտէ կարդայր առ նա. զի այնպիսի տենչանօք եւ եռանդիւ աղաչէր, մինչ գրեթէ աղաչանք նորա իբրեւ զձայն քաղցր հնչէր յականջս Աստուծոյ. Ցուցանէ եւ՝ թէ ոչ 'ի ձայն օտարաց ապաւինելով կարդայր, այլ 'ի ձայն իւր. որով եւ լինէր լսելի. եւ առ այս յարէ.

Եւ լուաւ ինձ 'ի լեռնէ սրբոյ իւրմէ. Լուաւ ասէ, մի զի ա̃ծ ունի ականջս, եւ նոքաւ լսէ, այլ զի՝ ըստ աղաչանաց նորա արարանէն, որ թէ ականջօք լսեալ էր զձայն նորա, եւ հաւանեալ.

Իսկ ասելովն * 'ի լեռնէ սրբոյ իւրմէ ||, յայտ առնէ՝ թէ լուաւ նմա 'ի սուրբ լեռնէ. ուր կայր զտապանակն տեառն ( Գ. Թագ. Է. 1. ) 'ի ձեռն որոյ լսէր ա̃ծ աղաչանաց ժողովրդեանն. որպէս եւ այժմ 'ի ձեռն սրբազան իրաց լսէ Աստուած աղօթից հաւատացելոց.

Զայս ասէ մարգարէն՝ հայեցեալ յայն, որ պատմի 'ի գիրս. Բ. Թագ. ԺԵ. 25. թէ 'ի փախչելն Դաւթի յերեսաց՝ եհան ընդ իւր եւ զտապանակն 'ի բեթսայ որ 'ի սիոն՝ հանդերձ քահանայիւք. եւ յետոյ հրամայեաց Սադովկայ քահանայի դարձուցանել զնա 'ի սիոն 'ի տեղի իւր. եւ ասէ. * Դարձո զտապանակդ այդ 'ի
„ քաղաք, եւ նստցի 'ի տեղւոջ իւրում. եթէ գտի
„ շնորհս առաջի տեառն, դարձուսցէ զիս, եւ ցուցցէ ինձ
„ զնա, եւ զվայելչութիւն դորա. ապա թէ այսպէս ա-
„ սասցէ ցիս, թէ ոչ հաճեցայ ընդ քեզ, ահաւասիկ
„ կամ, արասցէ ինձ որ հաճոյ իցէ առաջի աչաց նորա ||.

Զայս բան անկանելով մարգարէին՝ ըստ այսմ գոհանայ աստ զնմանէ, եւ խոստովան լինի՝ ասելով. լուաւեր աղաչանաց իմոց, եւ փափագանաց սրտի իմոյ 'ի լեռնէ սրբոյ իւրմէ, զի 'ի սիոնէ. եւ որպէս թէ կր-

չեաց զնա անտի առ ինքն , և մխիթարեաց զնա ։ Արդ է աստ լերանց իմանալ զբարձրութիւն երկնից . որ այլաբանի 'ի լեառն . և յայս միտ կամի ասել . լուաւ ինձ 'ի սրբութենէ երկնից կամ յաթոռոյ փառաց իւրոց ։ Այս բան մարգարէին հայի և 'ի կարդալն ՝ Է՛լի առ հայր . զորմէ վկայէ առաքեալն , ( Եբր . Ե . 7 ։ ) Ա՛ն զի տէրն մեր որովհետև երաշխաւոր մեր եղև , 'ի ժամանակի չարչարանաց իւրոց աղաչեաց զհայր վասն մեր 'ի լեառնէն գողգոթայ . և հայրն երկնաւոր հաճութեամբ լուեալ աղաչանաց նորա 'ի լեռնէ անտի՝ անցոյց զմեօք զցասումն բարկութեան իւրոյ ։ Յայտ արարեալ մարգարէին , թէ լուաւ նմա ա՛ծ՝ փրկելով զնա 'ի հալածչաց իւրոց , զփրկիչն իւր նմանաբանութեամբ իմն առաջի դնէ , և ասէ ։

Ե . ԵՍ ննջեցի , և 'ի քուն եղէ . զարթեայ , և տէր ընդունելի իմ է ։

Ննջումն է այսպիսի վիճակ , յորում դադարեն զգայարանք 'ի զգալոյ՝ վասն կարօտ լինելոյ հասարակ զգայութեան՝ որ իշխանն է զգայարանաց . և այս վճարի երեքկին . մի՝ յորժամ զգայարանք սկսանին թմրիլ . և սա ասի նիրհել , ո՛ր է մրափել ։ Երկրորդ՝ յորժամ ըմբռնին 'ի թմրութիւն . և սա ասի ննջել ։ Երրորդ յորժամ իսպառ կամ երկարեն 'ի թմրութեան անդ . և սա ասի 'ի քուն լինել . թէպէտ երբեմն ննջելն և 'ի քուն լինելն 'ի տեղի միմեանց 'ի գործ ածին . ( ուստի յՅաբառ լեզու փոխել երկաքանչիւրոցն ևս քնանալ ասի ) ։ Արդ որովհետև որ ննջէ կամ որ 'ի քուն լինի՝ 'ի վիճակ թմրութեան մտանէ , կամելով մարգարէին փոխաբերմամբ իմն զօրաւոր առնել զբանն իւր , զայն զայս 'ի վիճակ իւր հպեցուցանէ , և ասէ ։

Ես ննջեցի և 'ի քուն եղէ . զարթեայ , և տէր ընդունելի իմ է ( որ ընդունող իմ է ) ։ Այս բան եթէ վերածիցի յանձն մարգարէին՝ հնգապատիկ մեկնութեամբ բացատրի ։ Առաջին մեկնութիւնն հայի 'ի հալածանս նորա . և ըստ այսմ կամի ասել . ես հալածեալ լինելով վարկայ այնպէս , որպէս թէ ննջեալ իցեմ և 'ի քուն լեալ . զի որ՝ որ ննջէն , զգայարանք նորա դադարեն 'ի զգալոյ և 'ի հոտոտելոյ , և որ իշխանն է զգայարանաց՝ ծած-

կի և ոչ ես տիրէ նոցա . և ինքն մարդն գրեթէ ոչ ես համարի 'ի միջակի մարդկան , այլ անասնոց . և ոչ խնամոյ թէ ունի զփառս և զմեծութիւն . այնպէս եղև և ինձ անխափանելով յաղթող թագաւորութեանս . զի ժողովուրդք իմ դադարեցան 'ի հպատակելոյ ինձ , և իշխանութիւն իմ ծածկեցաւ և ընկղմեցաւ , և ոչ կարէր հրամայել և տիրել . և ես ինքն այնպիսի իմն համարեալ եղէ , որպէս թէ ոչ ես եմ 'ի համարի թշ̃ղոց , այլ իբրև մեռեալ . կամ իբր կիսամեռ երևեալ առաջի ժողովրդեան : Բայց սակայն "զարթեայ" ես . զի 'ի համարել զիս այլոց ննջեալ և կորուսեալ՝ զարթեայ և յարեայ . որ է ասել . զօրացայ և կանգնեցայ յառաջին փառս իմ : Իսկ թէ զիարդ՝ և որով զօրութ̃բ , ցուցանէ այնու՝ զոր ասէ . * և տէր ընդունելի իմ է ‖ . Որ բառս և՝ զնի իբրև պատճառական . որպէս թէ ասէր , վերստին կանգնեցայ . վասն զի նա՝ որ տէր իմ է , ընդունող իմ ես է . ըստ որում և ընկալաւ զիս , և օգնեաց ինձ . և մատոյց առ իս ձեռն փրկութեան , և ոչ եթող զիս իսպառ : Այս մեկնութիւն երևի ըստ բուն նկարագրին :

Երկրորդ մեկնութիւն հայի 'ի սակաւ անդորութ̃ հալածանացն . իբրև թէ ասէր . այնչափ կարճ եղև ժամ հալածանաց իմոց , մինչև նմանիլ ննջման գիշերոյ միոյ . որոյ ընդ անցանելն՝ ոչ յիշի ինչ . կամ թէ իբրև երազ քնոյ եղև ինձ հալածիլս իմ յաբեսաղոմայ . յորմէ էառ և ընկալաւ զիս տէր : Եւ կամ 'ի գիշերին՝ յորում հալածեցայ , անցեալ ընդ յորդանան՝ սակաւիկ մի ննջեցի և 'ի քուն եղէ , և զերծ գտեալ զիս 'ի մերձահաս վտանգէ՝ զարթեայ ուրախութեամբ . զի նոր ծընող իմ եղև : Այս մեկնութիւն ես երևի հարազատ :

Երրորդ մեկնութիւնն հայի յայն , որ եղև յետ հալածանաց և յաղթութեան . և ըստ այսմ կամի ասել . յորմէ հետէ յաղթեցի թշնամեաց իմոց , և զերծայ 'ի նեղութեանցս . "ննջեցի" , զի հանգեայ , * և 'ի քուն եղէ ‖ . որ է ասել , անզբաղ ննջեցի . զի որ ննջէ՝ համարի հանգչիլ . և որ 'ի քուն լինի , երևի անզբաղ կալ : Եւ 'ի յաւելուն՝ "զարթեայ" , կամի ցուցանել զանկասկած ննջել իւր ես և յարթնութեան . նա և զըզգաստութիւն անձինն . որպէս թէ ասէր . անկասկած և

աներկիւղ յառնելի․ և ՚ի հանգչիլ խնամ ոչ հեղգ ծուլի, այլ զգաստ կայի, զի զամ յոյս իմ եդեալ էի յած․ և նա ընդունող իմ եղև․ որ խնամարկեաց ինձ

Թէ՛ ըստ հոգւոյ՝ և թէ ըստ մարմնոյ ։

Զորրորդ մեկնութիւն հայի յանկումն ՚ի մեղս, և ՚ի կանգնումն ՚ի մեղաց․ և ըստ այսմ կամի ասել, անկանելով ՚ի մեղս ընդ բերսաբէի՝ ոչ թէ ննջեցի և թմբրեցայ ՚ի նմին իբրև ՚ի քուն խաւարին․ բայց յորժամ ազդ արար ինձ տէր ՚ի ձեռն Նաթանայ մարգարէին, զարթեայ, որ զգաստացայ և զղջացայ չորհօք նմա․ և տէր եթող զմեղս իմ, և ընկալաւ զիս ։ Այլ գիտելի է, զի մեղքն ըստ ինքեան նկատեալ՝ թէպէտև մահ է հոգւոյ, բայց ըստ ողորմութեն այ նկատեալ՝ է իբրև քուն․ ըն որոյ սուրբ գիրք ՚ի բզմ տեղիս "քուն" կոչեն զմեղս, որպէս գրէ բարսեղ ՚ի մեկն․ սաղմ․ ժզ․ և տայ զպատճառն ասելով․ * զի նախ խափանէ յառաքինութենէ, և սոյս գործէ զչարիսն ‖ ։ Բայց ոչ ասացի՝ քուն կոչի հայելով և յողորմութիւնն այ, զի առաւել դիւրին է այ զմեռեալ հոգին յարուցանել ողորմութեամբ՝ քան մեզ

զ'ի քուն եղեալն զարթուցանել զօրութեամբ ։

Հինգերորդ մեկնութիւն հայի ՚ի մահն և ՚ի յարութիւն․ և ըստ այսմ՝ ոչ թէ յապագայն հայելով և յառաջինն խօսելով կամի ասել․ ես ննջեցից և ՚ի քուն եղէց մահուամբ․ և յետոյ զարթեայց յարութբ, և եղիցի տէր ընդունող իմ ։ Վասնզի ըն վերացելոյդ մահն իբրև քուն համարի առաջի այ․ յոյր սակս զմեռեալսն կոչեմք ննջեցեալս․ զորս ունի զարթուցանել արարիչն․ ոչ գրի ՚ի մարգարէութեն դանիէլի․ ժբ․ Զ․ այլ երանի թէ * և տէր ընդունող լինէր նց ‖ ։ * Մեղաւոր
„ մինչ կենդանի է, (ասէ սուրբն յակոբ մծբնայ հայ-
„ րապետ․ ճառ․ ը․) մեռեալ է առ այ․ և արդար՝
„ թէպէտ և մեռեալ է՝ կենդանի է առ այ․ այս մահ
„ քո քուն է, սիրելի, (եթէ արդար իցես) որպէս և դա-
„ ւիթ ասէ ես ննջեցի, և ՚ի քուն եղէ, և զար-
„ թեայ․ և զարթեալ (այ) ասէ (բերանով դանիէ-
„ լի), զարթիցեն ննջեցեալք ՚ի հող․ և տէր մեր ասաց
„ զդստերէ ժողովրդապետին․ աղջիկն ոչ է մեռեալ,

այլ ննջէ ‖ ։

Այս բան առանձինն առեալ՝ կարէ մեկնիլ և ՚ի վերայ

զգալի քնոյ. յորմէ 'ի զարթնուլ արդարոյն, և 'ի յանդիմանն լինել առաջի մեծվայելչութեանն ո՛չ՝ կարէ առել, ես ննջեցի, և 'ի քուն եղէ. և այժմ 'ի զարթնուլս՝ եղև տէր ընդունող իմ. զի ապաւինեալ ես 'ի նա յանձն արարեալ զիս՝ նովաւ ննջեցի և 'ի փառս նորա,
նա ես 'ի զարթնուլս իմ ընկալաւ զիս.

Բայց այս բան ըստ իմ Ճշմարտութեն նկատեալ վերաբերի միայն առ Քս. զի նմա միայն հնար էր ինքնիշխանաբար ասել. * Ես ննջեցի, և 'ի քուն եղէ ||. Քս է, ես ինքնիշխան կամօք ընկողմանեցայ 'ի վերայ խաչին. որպէս՝ որ ննջել կամի՝ յօժար կամօք ընկողմանի 'ի մէջ անկողնոյ. Եւ 'ի քուն եղէ. Քս 'ի քուն մահու մտի. այս է՝ մեռայ 'ի խաչին. և այս ես՝ ազատ կամօք. Եւ յայս ապացոյց՝ խոնարհեցոյց զգլուխ իւր, և ես հրամանն մահու՝ զալ առ նա. յովհ. ժթ. 30. Եւ որպէս ինքնիշխան մեռաւ, նոյնպէս և ինքնիշխան յարեաւ. ուստի ոչ ասէ. Ես ննջեցի, և այլ ոք յարոյց զիս. այլ՝ որպէս գրէ բարսեղ 'ի մեկն. մարկ. Թ. * Ես ննջե-
ցի և 'ի քուն եղէ, և ես զարթեայ ||.

Զմահն իւր՝ քուն անուանէ փրկիչն. վասն զի յոյժ զիւրին էր նմա ինքնին յառնել 'ի մահուանէ՝ քան 'ի քուն եղելոց զարթնուլ 'ի քնոյ. Ուստի և արձակապէս, ասէ "զարթեայ". Քս ինքնին յարեայ՝ զօրութեամբ հօր, որ ես է իմ. Եւ առ այս յարէ. * և Տէր ընդունող իմ է ||. Քս հայր իմ, որ ընդ իս է, ընդունող իմ է, և
ընդունող իմ եղև յարուցանելով զիս.

Յորժամ խոնարհեցոյց անձն մեր զգլուխ իւր 'ի խաչին առ 'ի ննջել, այսինքն առ 'ի մեռանել, վաղվաղակ մահն՝ զի գողացի զնա, և իջուցէ 'ի դժոխս. բայց չարաչար խաբեցաւ. և փոխէ գողանալոյ զնա՝ ինքն եղև գողացեալ. Ըստ սմին նմանութեն խօսելով բարսղի 'ի մեկն. մարկ. ժդ. ասէ. * Քն եթէ հզօր որ ննջելովն գո-
,, ղացեալ լինիցի յումեքէ, իբրև զարթնու՝ գողա-
,, նայ զգողն. այսպէս և Քս 'ի ննջելն մահուամբ՝ գո-
,, ղացաւ զնա մահ, և տարաւ եմյծ 'ի դժոխս (կամ
,, 'ի գերեզմանն)... և իբրև զարթեաւ տէր, շրջեցաւ
,, և գողացաւ զգողն իւր. այս է (ասէ) խաչ խայծ
,, խաչահանուաց իւրոց (մահու և սատանի) և գերի գե-
,, րեաց գերեվարաց իւրոց. զի որպէս փառաւոր Ձուրքն,

„ որով հեղձուցանէր զանձկոյթն՝ հեղձաւ․ և որպէս զո-
„ ղիաթ՝ որոյն՝ որով զբնին սատակէր՝ եղև սպանեալ,
„ այսպէս և սատանայ՝ մահուամբն՝ որով զնոյն սպան՝
„ սպանեալ եղև ։

Զայս ասացեալ մարգարէին զյանձնել իւր և զՔրիստոսի, յայս առնէ այժմ և զապաշխարանսն և զաներկիւղ ծնալ իւր յառնելոց և 'ի թշնամեաց, և ասէ ։

Է․ Ոչ երկիցեայց ես 'ի բիւրուց զօրաց նոցա, որք շուրջանակի պատեալ պահեալ պաշարէին զիս ։

Այս բան ըստ առաջին հատուածոյն հայի յապագայն, որ յայնպիսի ժամս՝ յորում կարէին յանձնել թշնամիք ։ Իսկ ըստ երկրորդին հայի յանցեալն․ որ 'ի ժամն յայն, յորում բազումք յարեան 'ի վր․ և զայսոսիկ զանցեալ յարուցանէս 'ի մէջ բերելով մարգարէին՝ յանցելոց անտի ցուցանէ զապաշխարութիւն և զաներկիւղութիւն յապագայիցն ևս՝ ասելով ։

Ոչ երկիցեայց ես 'ի բիւրուց զօրաց նոցա․ եւ։ Կամի ասել՝ որովհետև յարեաց ես 'ի թշուառութեանց, և տէր ընկալաւ զիս, և ապրեցոյց 'ի թշնամեաց, այսուհետև ոչ երկիցեայց 'ի բիւրուց զօրաց նոցա, որ 'ի բազմութէ զօրաց՝ ն և իցէ թշնամեաց իմոց, թէև բիւրաւորք լինիցին, և բազումք յոյժ քան զառաջինսն ։ Զի որպէս յառաջն փրկեաց զիս տէր 'ի նմանէ, յորժամ բազմութի եկեալ էին 'ի վր իմ, և * պատեալ պահեալ պաշարեալ էին զիս ‖, որ ըստ ամի 'ի նեղ արկեալ էին զիս պաշարմամբ․ նոյնպէս ևս փրկեսցէ, եթէ վերստին 'ի թշնամութիւն դարձեալ՝ բիւրաւոր ևս բազմութի զօրաց յարիցեն 'ի վերայ իմ ։

Բիւր ասելով՝ ոչ միայն զտասն հազարս, ըստ որում նշանակէ բիւրն․ այլ՝ կամի յայտ առնել զմեծ բազմութի նոցա, քանի և իցեն, և քանի բիւրուք բազմացեալ իցեն, և որպէս զխիտ ժողովեալ իցեն ։

Այս բան հայելով առ քս առաջի դնի այսպէս․ յորժամ ընկողմանեցայ ես և 'ի քուն եղէ մահուամբ 'ի վերայ խաչին՝ և թաղմամբ 'ի գերեզմանի, թշնամիք իմ զզինուորս կարգեցին 'ի վերայ իմ, որք պատեալ պաշարեալ պահէին զիս և զգերեզմանս իմ զգուշութեամբ, զի մի զերծայց, և մի ևս յարութ փառաւորեսցայց․

բայց 'ի զուր . զի ես ննջեցի որպէս 'ի քնոյ զարթուցեալ յարեայ .

Եւ թէպէտ սակաւ էին պահապան զօրք , որք զգուշանային զնովաւ , բայց բռնաւոր դնելով կամի յայտ առնել՝ թէ 'ի նմանէ էր տքնիլ նոցա . ոչ թէ առաջեալ էր՝ թէև բռնաւոր զօրս կարգեալ էր նոցա 'ի վը իմ , ոչ ինչ երկիւղ կրէի . այլ վանէի զնոսա . և յաղթանակեալ թռչէի 'ի վերայ իշխանութե մահու և դժոխոց . որպէս և արարի իսկ .

Այսոքիկ պահապան զօրք փոխ խափան լինելոյ յարութեն քոյ , առաւել ես յայտնեցին և հռչակեցին . ոչ յայտ է յաւետարանէն . որ կրկին զնէ ծածկեցին զհռչակել նոցա զյարութիւն իմ 'ի մեկն . մատթ . գլ . իը . քզի երկիւղ եկին առ հրեայս . զի նախ զի- չերախտան հաւատալ առ նոսա ասացին՝ թէ յարեաւ նա զի- նչերայն . և գերեզմանն նորա կայ կնքեալ . ընդ որ առ- կացեալ հրէիցն եկին 'ի գերեզմանն . և տեսեալ զնա կնքեալ՝ անփոյթ եղեն , Յետոյ 'ի թաւալել հրեշ- տակին զվէմն՝ դարձեալ եկին մնացեալ պահապանքն . և պատմեցին զիրսն . և նոցա յիմարեալ՝ խորհե- ցան խորհուրդս չարս . և կամելով խափանել զհամ- բաւ յարութեանն՝ զայնպիսի ինչ արարին , որով առա- ւել ևս համբաւեցին զայն . մանի առ սոսա ևս հայե- լով առէ՝ ոչ երկեայց , և ոչինչ համարեցայց զհնարս ձեր . որով ջանայիք պաշարել զհամբաւ յարութե իմոյ ,

Այս առի և 'ի զինաց մարմնոյն քոյ , զր 'ի զինաց ե- կեղեցւոյ , ես և 'ի զինաց ապամայ առ քո . բա ոչոյ մեռ բանին լինի այս . քանի և բազմացին թշնամիք իմ , և պաշարեցին զիս , ես ոչ երկեայց . զի դու տէր Յիսուս ընդ իս ես .

Բազմապէս այսոքիւք բռնաւոր զօրօք նշանակին բազ- մութիւնք չար խորհրդոց և զիւական փորձութեց , որք շուրջ պաշարեն երբեմն զմեզ առաքինիս . այլ եթէ տէր ընդ նմա իցէ , և պաշտպանեսցէ զնա , զիւրա ցրուեն և չքանին . առ այս բերէ օրինակ կիրակոս վարդապետ 'ի մեկն . հարիւրաւորացն եւագրի . 'ի յաւելուածն . 60 . և ասէ . որպէս որ յերադի պաշարեալ 'ի զաղանաց , և պատերազմեալ ընդ նոսա , և խաւարեալ , եթէ որ զարթուցէ զնա , ոչ զաղան ինչ , ոչ պատերազմ ,

ոչ վիշտ և ոչ խածուած , նոյնպէս 'ի յառնել ախտից և ազգի ազգի խորհրդոց և փորձութեանց 'ի վ՛ր մեր , եթէ տէր զարթուսցէ զմեզ , և հասցէ յօգնութ՟ի նոր-հոգք խռովէք , ցրուին այն ամ՟ . և որ մեծ իմն երևէր՝ ոչ ևս երևի ։

Այդ մարգարէն ապահովացեալ 'ի պաշտպանմանէ բիւ-րաւոր զօրաց , և վստահութ՟ի առեալ , կամելով ապա առաւել ևս հաստատուն և անսասան մնալ , մաս-նաւոր իմն պաղատանօք ապաւինի յա՟ծ , և յօգնութիւն կոչելով զնա՝ ասէ ։

է . **Արի՛ տէր և փրկեա՛ զիս ա՟ծ իմ . զի դու հարեր զամենե-սեան , որք էին ընդ իս թշնամաբար՝ 'ի տարապարտուց . և զատամունս մեղաւորաց խորտակեցեր ։**

Որովհետև ասաց 'ի վերոյ 'ի համարն 5 . թէ ես ննջե-ցի , և օգնութեամբ տ՟ն յարեայ , և զօրութ՟բ ն՟ր զօրա-ցայ , այժմ աղաչէ՝ զի և նա յարիցէ . վասն որոյ ասէ ։

**Արի՛ տէր ։** Բառս "արի" որ է հրամայականն յառնել բային , ոչ նշանակէ՝ թէ ա՟ծ իրապէս ննջէ և յառնէ , որպէս առասպելեալ լինէր առ հեթանոսս . այլ՝ փոխա-բերութեամբ դնի փխկ օգնելոյ . զի 'ի ս՟բ գիրս յառնել ասել զա՟յ յայս միտս վարի . իբր զի յայնժամ յառնել ասի զնմանէ , յորժամ սկսանի օգնել ումեք , կամ վա-նել զթշնամիս նորա , և կամ ցուցանել զզօրութ՟ի իւր ։ Նոյնպէս և ննջել ասի զա՟յ , յորժամ ոչ օգնէ , կամ դադարի յօգնելոյ , և կամ ըստ լմբ . սաղ . է . 7 . յա-պաղէ ։ Եւ ըստ այսմ կամի ասել . Յետ այսչափ խնա-մարկելոյ քո զիս , և ապահովս առնելոյ 'ի թշնամեաց իմոց , մի՛ ննջեր . և մի՛ դադարիր յօգնելոյ . այլ՝ արի . և որպէս ես յարեայ՝ 'ի զարթուցանելն քո զիս զօրութ՟բ քով , նոյնպէս և դու յարիցես 'ի զարթուցանելն իմ զքեզ աղաչանօք իմովք . զի եթէ տէրդ ևս ոչ յարիցէ , զի՞նչ օգտեսցէ ինձ յառնելս իմ . որովհետև ես տկար ծառայ քո եմ . և առ այս դնէ աստ զտէրն ։ Եւ զխախ-ձան յառնելոյն առաջի եդեալ՝ ասէ ։

**Եւ փրկեա՛ զիս ա՟ծ իմ ։** Ուր ևն դնի իբրև պատճառա-կան շաղկապ . որպէս թէ ասէր . արի տ՟ր , զի պատերազ-մեսցիս ընդ իմ , և փրկեսցես զիս ։ * Ա՟ծ իմ , ասելով կամի 'ի գութ շարժել զնա՝ յայտ առնելով , թէ ինքն

զնա միայն ճանաչէ իւր ած և փրկիչ · վզի զնա ևեթ աղաչէ փրկել զինքն, և վանել զթշնամիս իւր · որպէս աղաղակէ յայլ բազում նուագս · որոյ վասն յարէ զկնի և ասէ ։

Զի դու հարեր զամն, որք էին ընդ իս թշնամութեամբ ՚ի տարապարտուց ։ Այս բան կրկնակի կարէ իմացեալ լինել · մի՝ ըստ անցելոյն · ըստ որում ցուցանեն և շուրջ բառիցն · որպէս թէ ասէր, յորժամ ընդէք ՚ի տարապարտուց զի առանց իրաւանց և առանց պատճառի թշնամի եղեն ինձ, և հալածեցին զիս, դու զամն զնոսա հարեր, և վանեցեր, և զիս զերծուցեր · իսկ արդ ընդէր և այժմ ոչ արասցես նոյնպէս ։ Երկրորդ՝ կարէ իմացեալ լինել ըստ առաջիկային՝ կամ ըստ ապագային · որպ թէ ասէր · փրկեա զիս՝ հարկանելով զայնոսիկ զամենեսեան, որք առանց պատճառի լեալ են ինձ թշնամի · և որպէս նք խնդրեն զանձն իմ, նոյնպէս և դու խնդրեա զանձինս նոցա · և առ զվրէժ ՚ի նոցանէ ։ Յայս հայելով յաւելու և ասէ ։

Եւ զատամունս մեղաւորաց փշրեցեր ։ Ատամամբք մեղաւորաց նշանակին աստ այն զօրութիւնք նց, որովք կարեն խածանել, և իբր ժանեօք ըմբռնել և վնասել զայլս ՚ի ձեռն բանից և գործոց ։ Ուստի և ՚ի դնելն * զատամունս մեղաւորաց փշրեցես ||, կամի ասել · զվնասիչ զօրութիւնս նց կամ զչարութիւնս նոցին վանեցես և խորտակեսցես · զի մի ևս վնասեսցեն, մի ինձ, և մի այլոց · և ես այսու հանգեայց ՚ի կասկածանաց իմոց՝ զոր ունիմ զնցէ ։ Եւ թէպէտ ՚ի խորտակիլ ատամանց նոցա՝ կարեն նք հաջել և չչել ՚ի վր իմ, զի ապանաւ ինձ չարիս, բայց չունելով զատամունս վնասիչս՝ ոչինչ կարասցեն առնել ինձ չար ։

Եթէ այս բան ասացեալ լիցի ՚ի դիմաց մարդկային բնութեան, թշնամութիւն նշանակի չարութիւն դիւաց, և ատամամբք զօրութիւնք նց · յոր միտ կամի ասել · արի տէր, եկ և փրկեա զիս, արի և ՚ի դերեզմանէ և հար զդևս, որք տարապարտուց թշնամանեցան ընդ իս · խորտակեա և զժանիս նց, որովք յափշտակեցին զիս ։ Բայց քզի յանցեալն դնի այս բան յասելն, հարեր, պատշաճագոյն ես առնի ՚ի դիմաց ադամայ առ քս ։ Դարձեալ՝ ըստ որում գրէ բարսեղ ՚ի մեկն · մարդ ·

ժա․ յառաջ ք̅ն զգալ քոյ* ըդ̅մ եկին թշնամութիւնքն․
„ Նախ ընդ մարդ և ը̅ ա̅ծ․ երկ̅դ՝ ը̅ մարդիկ և ը̅ հրեշ-
„ տակս․ երրորդ՝ ը̅ հրեշտակս և ը̅ հեթանոսս․ չ̅րդ՝ ը̅
„ մարմին և ընդ հոգի․ ( և քանզի ) զայս ա̅մ տեսակս
„ խռովութեանց՝ 'ի սէր և 'ի հաշտութիւն ածելոց էր ք̅ս
„ խաչիւն ‖, վ̅կ աղաչէ՝ զի յարիցէ և արասցէ ։

Այլ եթէ այս բան ասացեալ լիցի 'ի դիմաց եկեղեցւոյ, մեղաւորք նշանակին հերետիկոսքն․ և ըստ այսմ եկեղեցին աղաչէ զա̅ծ, զի որպէս 'ի սկզբան՝ նոյնպէս և յա̅մ ժամ պաշտպանեսցէ զնոքն 'ի հերետիկոսաց և 'ի հալածչաց․ զատամունս նոցա փշրեսցէ, ա̅յ վանեսցէ զմոլար և զխստասակար վ̅րդպութիս նոցա, որովք իբր ատամամբք ձգեն առ ինքեանս զհաւատացեալս, և չարաչար գիշատեն զնոսա 'ի վարս ։ Եւ թէ կարէ ա̅ծ զայս ամենայն առնել դիւրաւ, յայտ առնէ յաջորդ բանիւն․ 'ի մէջ բերելով և զօրհնութիւն 'ի վ̅ր ժողովրդեան տեառն, և ասէ ։

Ը̅․ Տեառն է փրկութիւն․ 'ի վերայ ժողովրդեան քո օրհնութիւն քո ։

Այս վերջին բանք սաղմոսիս յաւէտ խանդաղատականք են՝ քան պաղատականք, բղխեալք 'ի յանդորրացեալ սրտէ, և 'ի ձև աղաչանաց եղեալք առաջի, որովք խանդաղատի մարգարէն առ տէր և ասէ ։

Տեառն է փրկութ̅ի ։ Կամի ասել․ 'ի պաղատիլս իմ առ քեզ՝ փրկել զիս, և պաշտպանել զանձն իմ 'ի թշնամեաց իմոց՝ զանդէպ ինչ կամ զդժուարին ինչ ոչ խնդրեցի, այլ զարժանն և զդիւրինն․ զի որովհետև դու միայն ես տէր, քո միայն է ինքնին և դիւրին փրկել զյուսացեալսն 'ի քեզ ։ Եւ զայս ոչ վ̅ս իւր միայն ասէ մարգարէն, այլ և վասն ժողովրդեան իւրոյ, առաջի առնելով և զօրհնութիւն տեառն յասելն ։

Ի վերայ ժողովրդեան քո օրհնութ̅ի քո ։ Կամի ասել․ եկեսցէ փրկութիւն քո և իջցէ օրհնութ̅ի քո առ ժողովուրդ քո, թէ առ այնոսիկ՝ որք ընկերացան ինձ 'ի նեղութ̅ս 'ի փախչել իմում յերեսաց աբեսաղոմայ, և թէ առ այնոսիկ՝ որք միաբանեալ ընդ աբեսաղոմայ՝ յարեան 'ի վերայ իմ, և յետ այնր հպատակեցան ինձ, և միաբանեալ ընդ առաջինսն՝ եղեն ընդ իս ժողովուրդ քո․ առ

սոսա ամենեսին այց արա տէր փրկութ և օրհնութ քով ։
Պատմօր "օրհնութիւն" ասելով խնմնայ նախ զբարե-
րարեն այ առ նոսա առանց յիշելոյ զմեղս նց ․ ա՛զ թէ
ասէր ․ մի յիշեր՝ զոր ինչ մեղան նոքա , այլ՝ մոռացեալ
զամ զմեղս նց փխկ պատուհասելոյ զնա՝ ժամանեցո ՚ի
վր նց զօրհնութի քո մեծ , զի զառատ բարերարութիւ
քո , և զպցելութի հայրախնամ գթութեան քո ․ զի
ամենքին լեալ մի եկեղեցի՝ օրհնեսցեն զքեզ ։
Խմնայ երկրորդ զառատուէ տեսղական բարեաց ․ յոր
միտ ասաց խաղաղ առ եսաւ ․ * էառ ( յակոբ ) զօրհ-
նութիւն քո ‖ ծնն ․ իէ ․ 35 ․ Իւ յայս միտ կամի ա-
սել ․ որովհետև ժողովուրդ քո է իէլ՝ օրհնեա զնոսա զի
լցո զնս բզմ բարեօք ․ որովք հաստատուն մնասցեն ՚ի
կատարել զհաճոյս քո ։
Զայս աղօթէր և տէրն մեր առ հայր ՚ի վերջին ըն-
թրեան վասն անդամոց իւրոց , և խնդրէր օրհնութ իւ-
րով սուրբ առնել զնոսա ։ ( յովհ ․ ժէ 17 ․ ևն ) Իւ այս
օրհնութիւն եհաս յանդամս իւր փխկ անխծիցն՝ որք հա-
սին յանդամն ադամայ ․ և որպէս այն անեաց մինչև
՚ի քն , սա ևս ունի անել մինչև ՚ի կատարած ծի , և
մինչև ՚ի յաւիտեան ։
Յամբռնացին ՚ի բարոյական միտս մեկնեալ համայն
զայս սաղմոս՝ ասէ , թէ նա՝ որ նորոգ դարձեալ է ՚ի
մեղաց , և սկսանի ծառայել այ , տեսեալ զբազում չար
խորհուրդս եկեալս ՚ի սատանայէ ՚ի միտս իւր՝ աղա-
ղակէ առ ած՝ ասելով ․ (ա) Տէր՝ զի է , զի ես կամիմ
սրբութեամբ սրտի և մաքրութբ մտաց ծառայել քեզ ․
և ահա սատանայ յարուցանէ ՚ի վր իմ բզմ խորհուրդս
չարս ․ և կամի խափանել զիս յառաջադիմութենէ իմ-
մէ , և ՚ի յուսահատութիւն արկանել զիս , ասելով
զիս , (բ) ած ոչ թողու զմեղս քո , և ոչ փրկէ ըզ-
քեզ յորոգայթից նոցա , ևն ․ (գ) Բայց մի լիցի ինձ
անսալ նմա , գիտելով հաւատով , թէ դու՝ որ վասն իմ
եդուր զանձն քո ՚ի մահ խաչի , և եղեալ յերկինս՝
փառաւորեցար , օգնես ինձ , և փառաւոր առնես զիս՝
յաղթելով չարին ․ և բարձրացուցանես զգլուխ իմ ,
զի զխորհուրդս մտաց իմոց առ քեզ՝ առ ճշմարիտ գը-
լուխդ իմ ։ Զայս ասացեալ՝ դառնայ ապա առ ինքն ,
և մխիթարէ զանձն իւր , և ասէ ․ (դ) Զի տխրիս

ծովամն իմ, և յուսահատիլ խոնարհիս 'ի փրկութենէ այն. ես ահա վերացուցեալ զխորհուրդս իմ՝ խնամա-լի ձայնիւ կարդացի առ նա. և նա լուաւ և լուիցէ ինձ յերկնից: (Ե) Զի թէպէտ ես 'ի սկզբան անդ հա-ւանելով մեղայ՝ նենգեցի և թմբեցայ, և մեղք 'ի քուն եղէ, բայց յորժամ օգնականութբ այն զարթեայ, և տեսի զմեծութի չարեացս՝ և զունայնութիւն դիս, և յետս նահանջեցայ, ընկալաւ զիս տէր. և փրկեաց զիս: (Զ) Այպ յայսմ հետէ զօրացեալ նովաւ՝ հաս-տատեցայց 'ի նա, և ոչ ևս երկեայց 'ի թշնամեաց իմոց, թէ և առաւել ևս բազմասցին և զօրասցին: Իսկ եթէ կարի ստիպեսցեն զիս, աղաղակեցից առ ած. (Է) Արբ տէր, և փրկեա զիս. զի դու ես ած իմ՝ վասն ստեղծանելոյդ զիս, և տէր իմ՝ վն գնելոյդ զիս արեամբ քով 'ի բևեռիլն քո 'ի խաչին. ուր հարեր զատն և զպաշտօնեայս նորա զդևս, որք թշնամութբ են ընդ իս. հար աղաչեմ և այժմ զնոսա, և խորտակեա զչար թելադրութիւնս նց, որովք իբր ատամամբք կա-մին խածատել զիս: (Ը) Ոյ ի քո է փրկել զիս և զամ հաւատացեալս 'ի քեզ. յորոց վր է՝ և եղիցի օրհնութի քո միշտ և յաւիտեան:

Ի վախճան այսր սաղմոսի՝ գիտելի է, զի եկեղեցիս հայոց զայս երգէ 'ի սկիզբն գիշերային ժամերգութե յերիս դէմս. Նախ՝ 'ի դէմս քսի՝ առ 'ի յիշատակել առաջի հօր երկնաւորի զգործս անօրէնութեան չարչա-րանաց և յարութե նորա, և առ 'ի գոհանալ զհօրէ վն տալոյ նորա զորդի իւր մեզ փրկիչ: Երկրորդ՝ 'ի դէմս ընդհանուր եկեղեցւոյ, առ 'ի գոհանալ զփեսայէն իւրմէ զքսէ՝ վասն լինելոյ նր ըուծօղ իւր 'ի քնոյ հնն օրինաց և 'ի քնոյ կռապաշտութեան. և վն լիացուցա-նելոյ զնա օրհնութբ. ևս և առ 'ի յայտ առնել նմա զտառապանս իւր, զորս կրէ յանհաւատից և 'ի հերե-տիկոսաց յարուցելոց 'ի վր իւր: Երրորդ՝ 'ի դէմս իւ-րաքանչիւր հաւատացելոյ՝ առ 'ի ձնորհակալ լինել զնյ վասն անզբաղ զարթնլոյ 'ի քնոյ, ևս և առ 'ի զեր-ծանիլ 'ի պէսպէս չար խորհրդոց յարուցելոց 'ի սա-տանայէ և յապականութենէ բնութե 'ի զարթնուլն անդ. և գտանելով զօգնութիւն և զօրհնութիւն նր, յամի և միշտ փառաւորել զնա:

# ՍԱՂՄՈՍ Դ.

*Երգ գոհութե առ ած վն լսելոյ նորա զաղաչանս մարգարէին, և պաշտպանելոյ զնա յարեստաղանց. միանգամայն և յորդոր առ որդիս մարդկան՝ գործել զբարին, և մատուցանել պատարագս արդարութեան ըստ առաջնորդելոյ ածային լուսոյն. ևս և ցոյց խաղաղութեամբ հանգչելոյ ՚ի յոյս խոստմանցն աստուծոյ:*

Ի կատարած ընդ օրհնութեան. սաղմոս երգոյ ՚ի դաւիթ:

1 Ի կարդալ իմում լուաւ ինձ ած ըստ արդարութեան. ՚ի նե-
ղութե ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից
իմոց: 2 Որդիք մարդկան մինչև յերբ էք ծանրասիրտք. ընդէր
սիրէք զնանրութիւն. և խնդրէք զստութի: 3 Ծանիջիք զի
սքանչելի արար տր զսբ իւրում, և տր լուիցէ ինձ ՚ի կարդալ
իմում առ նա: 4 Բարկանայք, և մի մեղանչէք. զոր ինչ ասէք
՚ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք: 5 Զոհեցէք զո-
հս արդարութեան, և յուսացարուք ՚ի տէր: 6 Բազումք ա-
սեն, թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն տն. նշանեցաւ առ մեզ լոյս
երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց: 7 Ի պտղոյ
ցորենոյ, գինւոյ, ձիթոյ իւրեանց լցան նոքա: 8 Խաղաղու-
թե յայս և ՚ի նմին ննջեցից և զարթեայց. զի դու տր միայն
առանձինն յուսով բնակեցուցեր զիս:

# ՎԵՐՆԱԳԻՐ.

Ի կատարած ընդ օրհնութեան. սաղմոս երգոյ ՚ի դաւիթ:

ԱՅՍ ՎԵՐՆԱԳԻՐ ՅԱՅԼԵՒ*այլ ձեռագիրս մեր այլևայլ կարգաւ բառից գնի. յոմանս *՚ի կատարած, սաղմոս երգոյ՚ի դաւիթ ‖. յոմանս *՚ի կատարած, օրհնութիւն երգոյ. սաղմոս՚ի դաւիթ ‖. և յոմանս *՚ի կատարած ընդ օրհնութե. սաղմոս՚ի դա-*

ւիթ ‖ . այլ 'ի բազումս ըստ վերոյ եդելոյդ գրի * 'ի կատարած ընդ օրհնութե՛ . սաղմս երգոց 'ի դաւիթ ‖ , Ի Թարգ . ըստ . գնի . * 'ի կատարած , յօրհնութիւնս . սաղմոս դաւթի ‖ ; Ի Թարգ . սիւմաքոսի գնի * երգ յաղթութեան վասն սաղմոսող գուսանաց ‖ ; Ի Թարգ . ակիւղասայ գնի . * յաղթանակողի 'ի սաղմոս . երգ 'ի դաւիթ ‖ . 'ի սոսին վերածի և Թէոդիտոնին , նոյնպէս և այլոյն ;

Իսկ յեբր . գրի այսպէս . լամնաձէախ պինկինօթ միզմօռ լէ տաւիտ . այս է * 'ի կատարած նուագարանօք ( Թմբկօք ) երգ 'ի դաւիթ ‖ . իսկ ոմանք Թարգմանեն . * 'ի յաղթանակօղ նուագօք , երգ 'ի դաւիթ ‖ . և ոմանք * Երգ դաւթի 'ի նուագարանս ‖ . և այլք * յաղթողի յերգս սաղմս 'ի դաւիթ ‖ . և այլք այլազգ ; Իսկ յոմանս 'ի սաղմոսաց նոցա ոչինչ գնի , այլ միայն գիրս տալէթ . որ նշանակէ չորրորդ ;

Յայսպիսի տարբերութեանց յայտնի երևի՝ թէ վերնագիր այսր սաղմոսի , ոչ և այլոց բազմաց , մթին իմն է և անիմանալի ; Զայս և բազումք բանիւք հրէից խոստովանին ; Մ՝եկնիչք ևս թէպէտ բազում ինչ գրեն , բայց ամփոփեն ընդ տարակուսանօք և ընդ կարծեօք . և այս՝ վասն բառիս 'ի կատարած . զորմէ տես 'ի ներած . գլ . Թ ; Այլ կամեցեալ աստ ևս խօսել ինչ համառօտիւ , ծանիր , զի բառդ 'ի կատարած՝ որ յեբր . գնի լամնաձէախ , ըստ նկարագրին առեալ՝ գնի իբր ընդունելութի փոխ բայից կատարող և կատարելի և կատարեալ . եթէ նշանակեսցէ կատարօղ , միտ բանի վերնագրիս առաջի գնի այսպէս . սաղմս օրհնութ երգոց ասցեալ 'ի դաւիթ , և տուեալ 'ի կատարօղ երգոց . այսինքն 'ի նուագապետ կամ 'ի դասապետ՝ երգել արուեստիւ երաժշտութեան ընդ իբուիմ դասու ; Իսկ եթէ նշանակեսցէ կատարելի , միտ բանի վերնագրիս բացատրի այսպէս . սաղմս ասցեալ 'ի դաւիթ կատարելի այսինքն երգելի ընդ ձայնի օրհնութ երգոց . կամ իբրև օրհնութիւն երգոց ; Այլ եթէ նշանակեսցէ կատարեալ , միտ բանի վերնագրիդ բացատրի այսպէս . սաղմս օրհնութեան երգոց ասցեն 'ի դաւիթ 'ի կատարեալ օրհնութիւն , կամ յամենակատար և 'ի գերազանց նուագերգութիւն ;

Նայեցի՝ ըստ նկարագրին առեալ , զի արտաքոյ այսր՝ որ

ինչ ասի, կամ յարմարական մեկնութիւն է, կամ քերակա- նական, կամ բարոյական, և կամ այլաբանական։ Ըստ յարմարական մեկնուն բացատրի այսպէս. այս սաղ- մոս ասացաւ ՚ի կատարած. յդ ՚ի կատարել և ՚ի վեր- ջանալ հալածմանցն աբեսաղոմայ և յաղթութեան. որպէս յայտնի երևի և ՚ի բանիցն։ Ըստ քերականական մեկնութեան բացատրի այսպէս. այս սաղմոս ասացաւ ՚ի կատարած նախընթաց սաղմոսին, յդ առ ՚ի կատա- րած հաստատանել զայն կամ առ ՚ի լրացուցանել զնոյն, և կամ յաւարտել նորին. կամ է նուագելի ցխսճմն անթերի, և յամ ժամանակի՝ երգովք։ Ըստ բարոյական՝ ևս և ըստ վերածական մեկնութեն բացատրի այսպէս. այս սաղմոս ասացաւ ՚ի կատարած մարդոյ. իբր զի մարդիկ ՚ի լսելն կամ յասելն զայս սաղմոս՝ հայեսցին ՚ի վերջին վախճան իւրեանց, կամ ՚ի վերջին երանուն իւրեանց կամ ՚ի վերջին դար, յդ ՚ի դար նոր օրինաց. ևս և ՚ի վախճան և ՚ի գործ տնօրէն նախախնամու- թեն. ըստ որում առ ծանօթութիւն այսպիսեաց առաջ- նորդէ այս սաղմոս։ Ըստ այլաբանական մեկնութեան բացատրի այսպէս. այս սաղմոս ասացաւ ՚ի կատարած տեառն, յդ ՚ի քս. որ եղև կատարումն և լրումն տեառն. և ըստ այսմ՝ յասելն ՚ի կատարած, տասս ՚ի դնի փոխանակ բառս ՚ի դէմս. որպէս թէ ասացեալ էր. այս սաղմոս ասացաւ մարգարէութեամբ իմն ՚ի դէմս քսի։

Արդ քանզի ըստ ձեռնարկութեն այս սաղմոս յօրինեցաւ ՚ի դաւթայ յետ հալածմանցն աբեսաղոմայ, յայն հայելով ունիմք մեկնել զսա ըստ ձայնին, շարայարե- լով ՚ի նոյն և զխորհրդականն։

## Բ. Ա. Ն.

ա. Ի կարդալ իմում լուաւ ինձ ած ըստ արդարութե. ՚ի նե- ղութեան ինձ ընդարձակ արարեր. ողորմեա ինձ, և լուր աղօթից իմոց։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Մարգարէն այսու օրինակաւ կարգելով զսկիզբն սաղմոսին՝ կամի ցուցանել զառաւելուն փախաքանաց

սրտի խրոց , որով ցանկայր յայտ առնել զխնամս գը-թութեան իւրոյ , և յետ սրտէ շնորհակալ լինել զնմանէ . ուստի և յայն ակնարկելով ասէ ․

**Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան ։** զի յորժամ կարդացի առ քեզ Աստուած իմ, և խնդրեցի զօգնութիւն քո՝ լուար ինձ ։ Եւ ասելն ըստ արդարութեան՝ չորեքկին իմացեալ լինի . զի ըստ արդար գոլոյ , ըստ արդար գործելոյ , ըստ արդար երևելոյ , և ըստ արդար լսելոյ ։ Ըստ առաջնոյն բառս արդարութիւն՝ հայի յարդար գոլն իւր՝ որպէս թէ ասէր , Աստուած ըստ արդարութեան . այս է Աստուած արդար ։ Ըստ երկրորդին՝ հայի ՚ի գործ արդարութեան իւրոյ իբր յարդարացուցիչ , որպէս թէ ասէր . դու Աստուած լուար ինձ՝ գոլով արդարութիւն իմ, զի արդարացուցիչ իմ . և այս համաձայն է եբր" և այլոց թարգ" . տես ՚ի համեմատութիւնս ։ Ըստ երրորդին՝ հայի յարդարութի մարգարէին . որպէս թէ ասացեալ էր , լուար ինձ Աստուած վասն արդարութեան իմոյ , զի վասն արդարացի և իրաւացի լինելոյ աղաչանաց իմոց . կամ ըստ վարդանայ՝ վասն արդար խնդրուածոցս . կամ թէ լուար ինձ , վասն զի ես արդար էի , այս է անմեղ էի , և ՚ի զուր հալածէին զիս թշնամիք իմ . յայս միտ մեկնէ լամբր . ընդ նմին և մեծն խոսրով ՚ի մեկն . ժամագր . երես 367 . յասելն . * ՚ի կարդալ իմում
„ լուար ինձ Աստուած յայսմ կենցաղոյս . ըստ արդարութեան .
„ զի սատանայի չեմ ինչ մեղուցեալ ‖ ։ Ըստ չորրորդին հայի ՚ի լսելն . որպէս թէ ասէր . Աստուած լուար ինձ արդարութեամբ կամ իրաւամբք . իբր թէ արդարութի էր լսելն ։ Եւ ըստ այսմ մարթ է և զբառդ արդարութի՝ իմանալ փոխ ողորմութեան ։ Յոր միտ սարգիս շնորհալի ՚ի մեկն . ա . յովհ . գ . 10 . ճառ . է . զբառդ արդարութի՝ զոր յիշէ աւետարանիչն ՚ի թղթի անդ՝ համարի վերածել յողորմութիւն յասելն . * ամենայն որ ոչ
„ առնէ զարդարութի չէ նա յԱստուծոյ . . . արդարութիւն թուի
„ ինձ եթէ զողորմութիւն անուանէ . արդ որ ոչ ողոր-
„ մի ասէ՝ նա ոչ է յԱստուծոյ ‖ ։ Յայս միտ առնու և բարսեղ ՚ի մեկն . մարկ . գլ . ժէ . յասելն . * արդարութի
„ զողորմութիւնն կոչեաց . զի և (ողորմութի) արդարս
„ կարէ առնել զմեղաւորս ‖ , և անպարտ կացուցանել զպարտաւորեալն ։ Ըստ այսմ կարէ առեալ լինել և աստ բառդ արդարութիւն . որպէս ասելն երևելի թարգ-

մանկունք. ըստ որում ած ողորմութբ լուաւ ողորմածէր և բարեգութ արքային և մարգարէին ։ Իսկ թէ լսելով զինչ արար նմա՝ յայտ առնէ ասելով ։

Ի նեղութեան ինձ ընդարձ արարեր ։ զի յորժամ նեղեալ էի, և յանձկութեան հալածմանց և տառապանաց պաշարեալ կայի, ընդարձակեցեր ինձ. և ցուցանելով զխնամս քո՝ մխիթարեցեր և ուրախացուցեր զիս ։

Ու զայս առ ՚ի բարւոք իմանալ՝ արժան է գիտել, զի ած եռակի լսէ ծառայից իւրոց ՚ի նեղութ՟ իւրեանց. մի՝ յորժամ հեռացուցանէ զնեղութիւնն. և այս է ազատել, իբր թէ ազատ կացուցանել ։ Երկրորդ՝ յորժամ առանց հեռացուցանելոյ զնեղութիւնն՝ տայ զզօրութիւն համբերելոյ նեղութեանց. և այս է զօրացուցանել. և է մեծ քան զառաջինն ։ Երրորդ՝ յորժամ ՚ի նեղութեան անդ ոչ միայն տայ զհամբերութի, այլև զուրախութի սրտի մանաւանդ իմն ներկայութեամբ իւրով. և այս է անդորր առնել ումեք ՚ի նեղութեան ։ Զի որովհետև նեղութեան է անձկացուցանել զհոգին, և ուրախութեան է զնոյն անդորրացուցանել՝ զի ընդարձակել, յորժամ ՚ի նեղութ՟ ընծայի յոյժ ուրախութիւն, այնու իսկ ընծայի և անդորրութիւնն՝ զի ընդարձակութի ընդունակութեան հոգւոյն. մինչ զի եթէ տրտմութ՟ հոգւոյն որ ՚ի նեղութենէ, ընկղմիլ և փոխարկիլ յառաւելութիւն ուրախութ՟ն. յոր միտ ասէ պօղոս. * Առաւելեալ եմ ուրախութեամբ յամ՟ նեղութիս մեր ‖. Բ. կոր. Է. 4 ։ Ըստ այսմ խօսի և աստ մարգարէն զայս բան. որպէս թէ ասէր. ՚ի նեղութ՟ և յանձկութ՟ իմում տալով ինձ զուրախութիւն քո՝ ընդարձակեցեր զհոգի իմ. որով և զտրտմութիւն նեղութեանց իմոց յուրախութի փոխարկեցեր ։ Զայս անդորրութիւն յայսպիսն ես՝ և յամն ցանկալով գտանել յոյժ՝ աղաչէ զնա և ասէ ։

Ողորմեա ինձ, և լուր աղօթից իմոց ։ զի որպէս ողորմեցար և լուար ինձ ՚ի նեղութ՟ իմում, այնպէս արասցես յամն և յամ ժամ և այժմ իսկ. զի եթէ ողորմութիւն քո ոչ ժամանեսցէ առ իս, և յաղօթել իմում առ քեզ՝ ոչ լուիցես ինձ, վտանգիմ յոյժ, և ունայնանամ իսպառ, և ուրախութիւն իմ դառնայ ՚ի սուգ. զի լի են կեանք իմ վտանգօք. և ես կարօտ եմ միշտ ողորմութեան քում ։

Այս բան մարգարէին 'ի դէմս ք͞ի առեալ՝ ցուցանէ , թէ յորժամ կարդայ նա առ հայր , լուաւ նմա ըստ արդարութե՛ նորա . կամ լուաւ նմա արդար իրաւամբք իբրև որդւոյ իւրում . ըստ որում և ինքն ասաց , * գիտէի զի յա͞մ ժամ լսես ինձ ‖ . յովհ . ժա . 42 ։ Եւ 'ի նեղութեան իւրում ևս , որով տագնապէր 'ի պարտիզի , անդորր արար նմա . զի յասելն առ հայր , * եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն ‖ . մատթ . իզ . 39 . գիտելով՝ թէ կամք հօր իւրոյ էր ըմպել զբաժակն զայն , այնպիսի ուրախութեամբ յանձն էառ զնոյն , մինչև այն ամենամեծ տրտմութիւն ն͞ր , որով ասէր , * տրտում է հոգի իմ մինչև 'ի մահ ‖ . ( մատթ . իզ . 38 . ) ոչ թէ ընկղմեցաւ յուրախութեան ն͞ր . վ͞ոյ և զուարթագին գնաց առ չարչարանս . Այս բան կարէ հայիլ և յայն աղօթսն ք͞ի , որով աղօթէր առ հայր վասն եկեղեցւոյ իւրոյ՝ ողորմիլ և լսել հանապազ աղաչանաց նորուն . որպէս յայտ է 'ի բ͞մ բանից նորին՝ զորս խօսեցաւ 'ի վերջին ընթրիսն ( յովհ . ժէ . 16 . և 17 ։ )

Արդ մարգարէն 'ի խօսելն զայսոսիկ 'ի դիմաց իւրոյ և 'ի դիմաց ք͞ի՝ գիտէ և ևս ազդ առնել երկու ինչ . մին է յորդորել զմարդիկ , զի յիւրմէ օրինակ առեալ՝ ինքեանք ևս համարձակեսցին կարդալ առ ա͞ծ . զորմէ խօսի 'ի համարն 3 ։ Երկրորդն է ցուցանել ն͞ց՝ թէ չէ պարտ յենուլ յինքեանս և խաստանալ , և փ͞նկ զա͞ծ խնդրելոյ՝ յունայնութիւնս բերել . ամն իրի յարէ զնի , և ասէ ։

ը . Որդէք մարդկան՝ մինչև ցե՞րբ էք ծանրասիրտք . ընդէ՞ր սիրէք զունայնութիւն , և խնդրէք զստութիւն ։

Որովհետև ասացաք 'ի վերոյ , թէ մարգարէն զայս սաղմոս ասաց յառթէ հալածմանցն աբեսաղոմայ , յետ խօսելոյ ընդ ա͞յ , և յետ յայտնելոյ՝ թէ լուաւ նմա ա͞ծ , դարձուցանէ զբան իւր առ այնոսիկ , որք միաբանեցան ընդ աբեսաղոմայ . և առ ն͞ս խօսելով ասէ ։ Որդէք մարդկան մինչև ցե՞րբ էք ծանրասիրտք . ևն ։ ո՛վ որդիք խելքի , որք մարդկօրէն ևեթ խորհիք , ո՞չ բաւական է ձեզ թողուլ զիս՝ և յարել յաբեսաղոմ . ընդէ՞ր առաւել ևս լինիք խստասիրտք և անողորմք , և պնդիլ կամիք զհետ իմ սպանանել զիս . այլ սակայն

գիտասջի՛ք , զի աշխատանք ձեր այդ ընդունայն է , և յոյս ձեր սնոտի , զոր եդեալ էք յաբեսաղոմ . քանզի կեղծի՛ք է թագաւորութիւն նր նոր , և սուտ , զոր խնդրէք հաստատել 'ի տեղի հաստատուն թագաւորութեան չնորհելոյ ձեզ յայ : Այսմ մեկնութե՛ն նպաստէ ընագիրն եբրայեցւոց . զորմէ տես 'ի համեմատութիւնն :

Զայս բան խօսի մարգարէն և առ ամ մարդ . որդի՛ք մարդկան՝ զի՞ է , զի փոխկ այ ծառայելոյ՝ ապստամբեալ 'ի նմէ՝ կամի՛ք ունայնութեան ծառայել . * մինչև յե՞րբ էք խստասիրտք ‖ . կամ որպէս դնի 'ի մեկն . լամբ . * մինչև յե՞րբ էք ծանրասիրտք ‖ . յն մինչև յե՞րբ է ձեզ խստացուցանել և ծանրացուցանել զսիրտս ձեր՝ յերկրաւորս 'ի վայր բերելով իբրև զկենս , և զծանրութիւն երկրաւորաց սիրելով , և 'ի նոսա զերանութիւն սուտ խնդրելով . զոր բացայայտ եւս առաջի դնէ ասելով :

Ընդէր սիրէք զնանրութիւն : Յոյժ գեղեցիկ միայարէ մարգարէն զծանրասրտութիւնն ը խստասրտութե՛ . զի սիրտ՝ որ խստացեալ է երկրաւորօք իբրև զկիմ , և ծանրացեալ է հողօք Ծախանօք , ոչ ընդունի յինքն զսերմն երկնային խորհրդոց , այլ՝ ունայն իրաց և անցաւորաց . ուստի և ոչ խկ սիրէ զհաստատուն և զՃշմարիտ բարին , այլ՝ զունայնն և զսուտն . և քանզի զոր ինչ սիրէ մարդ՝ զնոյն խնդրէ , սիրտ խստացեալ՝ միայն զունայն և զսուտ բարիս սիրելով՝ զնոյն միայն խնդրէ . և այնու ծանրութեամբ 'ի նոյն բերի :

Այսպիսեաց սիրտ կրկին է . մին յօժարի բերել առ հաստատուն բարիս , և միւսն առ նանիրս . որպիսի են կաքաւք պարիզադմնից . զորոց ասի ունել զերկուս սիրտս . միոյն յարին , և միւսոյն խորշին . * մի լինիցի յանձնի քում կշիռ և կշիռ . . . կշիռ ստոյգ և արդար եղիցի քեզ ‖ . բ . օր . իե . 13 : Զարք միով սրտիւ խորշին 'ի բարւոյ , և միւսով յարին 'ի չարն : Իսկ եթէ մի միայն համարիցիս , կրկին դիր զբերանս նորա . և ըստ այսմ չարիք նոցա կատարի փախչելով և ոչ փախչելով . յն է՝ կամ փախչելով 'ի վշտաց , կամ ոչ փախչելով 'ի հեշտալեաց . որով 'ի Ճշմարիտ բարւոյն հեռանան , և 'ի սուտ բարիս նանրանան . առ որս յան-

Ս զիմմանութեամբ ինն խօսի մարգարէն, և ասէ ։
Ս·- Խնդրէք զտուրսն ։ Ո՞վ թէ ասէր . ընէր է ձեզ՝ որք ունիք փառաւորիլ երկնային փառօք և 'ի նոյնս վայելել՝ սիրել զերկրաւորս, որք են սուտ բարիք, և խնդրել 'ի նոսա զհանգիստ ձեր ։ Յայս միտ մեկնէ և մեծն խորով 'ի մեկն. ժամագր ։

Անագոգական մեկնութեամբ, 'ի ձեռն ստուեր և նմանուն կարեն իմացեալ լինել ասոտ և պակասութիւնք փոքունք, որպիսի են անշնաս սուտք, դատարկ զբօսք, կատակք, ևն. որպիսի են և այն գործք՝ որք թէպէտ և չեն մահուչափ մեղք, բայց 'ի նոյն տրամադրեն զհոգին, վասն որոյ ոչ միայն են նանիր, այլև սուտ, որք իբր սահելով խաբեն զմարդ. և որ յարի 'ի նոսա կամ սիրէ զնոսին՝ 'ի նոսին կորնչի. * որ սիրէ զմեղս՝ ատեայ զանձն իւր ‖. սաղ. Ժ. 7 ։

Ի բնագիրս եբրայեցւոց՝ դնի աստանօր բառս սելա. որ է հանգիստ. որ ըստ բարոյական մեկնութեան կարգի առ 'ի հաստատութիւն բանիցն ասացելոց. որ առ 'ի յայտնել, թէ ճշմարիտ հանգիստ մարդոյ ոչ է յերկրաւորս և 'յանցաւորս. այլ՝ յերկնաւորս և յանանցս ։

Տես 'ի ներած. գլ. Թ. 'ի միջին տեղւոջ ։

Այս բան՝ ըստ որում ասի 'ի բերանոյն Քի, ուղղի առ տիրասպան հրէայսն. առ որս գրեթէ ասէ. ո՞վ որդիք մարդկան՝ այնչափ սքանչելիս ցուցի ձեզ, և այնչափ մեծամեծ գործս բարիս գործեցի 'ի միջի ձերում. և դուք տակաւին խստասիրտք էք. մինչև յե՞րբ ոչ կակղացուցանէք զսիրտս ձեր՝ ընդունել զիս մեսիայ և Թագաւոր ձեզ. ընդէ՞ր ոչ առնուք 'ի միտ, թէ ես եկեալ եմ՝ ոչ նանիր մեծութեամբ մեծացուցանել զձեզ, այլ՝ երկնաւորօք. ապա ընդէ՞ր յայդպիսի մտօք և սուտ կամ մնայք խստացեալ ։ Եւ կամ այլազգ ևս. որ թէ՝ ընդէ՞ր խստացեալ 'ի չարիս՝ խնդրէք սուտ բարուրանս՝ սպանանել զիս. բայց ծաներուք ևն, ուստի յարէ, և ասէ ։

Դ. Ծանիրուք զի սքանչելի արար Տէր զսուրբ իւրում. և Տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա ։

Աստանօր բառս սքչ՝ ըստ նկարագրին առեալ՝ անկարկէ յանձն զաւթի. և նշանակէ՝ նուիրական, սրբազա-

նեալ, կամ սեպհականեալ, և ընտրեալ այ կամ լեալ այ. զի 'ի սբ գիրս բազում ուրեք այսու նշանակութ զնի սրն, և սրբեն. յոր միտ բազում ուրեք ասի. * Որ ած կոչեսցի ‖. ղուկ. բ. 23. յս որոշմամբ յայլոց՝ տեառն լի-ցի, որով և տեառն կոչեսցի։ Ըստ այսմ ևս ասի. ելից. ժդ. 2. * Սրբեա՛ դու ինձ զամ անդրանիկ նախածին ‖. յս որոշեա՛ յայլոց, և արա՛ իմ. որպէս և զկնի ասէ. * քանզի իմ է ‖. սոյնպէս և յայլ բազում տեղիս։ Ըստ այսմ նշանակութեան զնի և աստ բառս * սբյ իւրում ‖, վերաբերութբ առ զաւիթ, որ ընտրեցաւ յայ, և որո-շեցաւ և կացուցաւ 'ի նմանէ թգր 'ի վերայ իղի։ Մարթ է ևս ընդ այլոց ումանց և ընդ վարդանայ՝ զբառդ սբյ վե-րածել յանմեղութիւնն զաւթի՝ զոր ունէր առ թշնա-միս իւր և առ աբեսաղոմ։

Նա՝ քզի բազում մեծամեծ գործս արար ած 'ի ձեռն զաւթի յառաջ քան զթագաւորել նր. և ապա 'ի մե-ծի նեղութեան նր 'ի հալածիլն յերեսաց սաւուղայ և աբեսաղոմայ, և 'ի ժողովրդոց իւրոց, եցոյց նմա զան-ակնունելի փրկութիւն իւր, և փառաւոր արար զնա յամի, զայս ամ սքանչելիս համարելով՝ ասէ։

Ծանիջիք, զի սքանչելի արար տր սբյ իւրում. և տր լուի-ցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա։ յս թէ՝ այս յայտնի լիցի ձեզ՝ ո՛վ իշխանք և ժողովուրդք իէլացւոց, զի ած՝ որ ընտրեաց զիս, և արար զիս իւր, լուաւ աղաչանաց իմոց 'ի հալածիլ իմում, ևս և յայլ ամ գործս իմ, և սքան-չելապէս փրկեաց՝ և փառաւոր արար զիս։ Նա՝ ոչ այս-չափ միայն, այլ և յետ այսորիկ յամի լուիցէ ինձ՝ յոր-ժամ կարդայցից առ նա. և արասցէ ինձ զևս մեծա-գոյն սքանչելիս. գիտացեալ ապա ձեր զայն՝ մի ևս 'ի նանիր աշխատիք հալածել զիս։

Բ. Ալ յայս բան բառս սրբոյ իւրում՝ խորհրդաբար վե-րաբերի առ քն. զի նա ոչ միայն եղև որ, այլ և սրբութ սբց, և մի միայն որ. ըստ որում և դեք իսկ աղաղա-կելով ասէին. * գիտեմք զքեզ՝ ո՛վ ես սբդ աստուծոյ ‖. մարկ. ա. 24։ Արդ՝ ած հայր թէպէտև բազում օրինա-կաւ սքանչելիս արար սբյ իւրում, յս քսի որդւոյ իւ-րում, բայց առաւել ևս 'ի յարուցանելն զնա. և ըստ այսմ առեալ, գրեթէ ասէ առ հրէայսն և առ այնո-սիկ, որք հալածեցին զնա, և 'ի մահ խաչի դատա-

պարտեցին. ծաներուք, զի թէպէտև դուք հալածեցիք զիս, և սպանիք 'ի վերայ խաչին, բայց սքանչելիս արար ընդ իս. զի յարոյց զիս, և փառաւոր արար զիս, և նստոյց ընդ աջմէ իւրմէ բարեխօս առ հասարակ վասն ազգի մարդկան և վասն ձեր իսկ, եթէ դուք ևս կամիցիք դառնալ առ իս, և ոչ մնալ 'ի խստասրտութեան ձերում և 'ի հոգս ունայնութեան.

Իսկ առ անտարակոյս առնել, թէ բարեխօսութիւն իւր ընդունելի է և աննահանջելի, ասէ. Տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա. որպէս թէ ասէր. 'ի բարեխօսել իմում առ հայր՝ լուիցէ ինձ, և ոչինչ ինայեսցէ կամ արգելցէ յինէն. մանաւանդ զի՝ որ ինչ հօր է, այն իմ է. և որ ինչ իմ է, այն հօր է.

Այսպիսի խօսի Քրիստոս և առ ամենայն հաւատացեալս. ծաներուք, զի վասն հնազանդութեան և խոնարհութեան իմոյ և համբերութեան սքանչելապէս փառաւորեաց զիս հայր իմ. և ես կամ յերկինս միջնորդ խաղաղութեան ը̃ ձեզ և ընդ հայր իմ, խնդրել 'ի նմէ զամենայն պարգևս վասն ձեր. և հայր իմ յամենայնի լուիցէ ինձ. Դուք ձեզ այժմ ճանաչել զերախտիս իմ, և զնալ զհետ ճանապարհաց իմոց հեզութեամբ, խոնարհութեամբ և անմեղութեամբ. Այսպիսի իմն իմացուած հայելով մարգարէին՝ յարէ զկնի, և ասէ.

Դ. Բարկանայք, և մի մեղանչէք. զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք.

Արդ զոր յանդիմանեաց մարգարէն զխստութիւն սրտից որդւոց մարդկան, և զնանրամտութի նոցա. ծանոյց ևս միանգամայն, թէ ինքն ոչ գոլով այնպիսի՝ արար նմա ած̃ սքանչելիս. Իսկ այժմ իբր յորդորանօք սկսանի խրատել՝ ոչ միայն զորդիսն իւր, այլ զամենայն մարդ 'ի հասարակի, և յուղղութիւն վարուց առաջնորդել. ասելով.

Բարկանայք, և մի մեղանչէք. զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր յանկողինս ձեր զղջացարուք. Բառս "բարկանայք" ոչ դնի աստ իբր սահմանական, որպէս թէ ասացեալ էր, յորժամ բարկանայք, մի մեղանչէք, այլ իբր հրամայական. որպէս թէ ասէր, բարկացէք կամ բարկացարուք. և մի մեղանչէք. Իսկ թէպէտ ոմանք իբր սահմանական մեկնեն զայս, բայց հրամայական լինելն յայտ-

նի երևի յերկուց . մի՛ զի զնի դնի շաղկապդ և . որ 'ի սահմանականն անյարմար է և աւելորդ . զի ըն- թերցեալ լինէր այսպէս . յորժամ բարկանայք , և մի մեղանչէք . ուր աւելորդ տեսանի են ։ Երկրորդ՝ զի 'ի բնագիրս եբրայեցւոց և յայլ թարգմանութիւնս հրա- մայականաբար դնի ։ Եւ թէպէտ 'ի յոյն և 'ի լա- տինս այնպիսի եղանակաւ դնի , որ ըստ երկուց ևս կա- րէ իմացեալ լինել՝ յ̃ն իբր հրամայական և իբր սահմա- նական , բայց և նոքա առ հասարակ իբր հրամայական իմանան ։

Իսկ թէ 'ի մեզ բառս "բարկանայք"՝ կարէ նշանակել ևս 'ի հրամայական եղանակին՝ փոխանակ բառիս "բարկա- ցէք" , ոչ է տարակուսելի . զի առ նախնիս մեր այսպի- սի եղանակ 'ի տեղի հրամայականի ևս վարէր . իբր զի սահմանական եղանակի ներկայն յերկրորդ դէմս յոգ- նականին երբեմն դնիւր փոխ հրամայականի 'ի ձեռն շեշտի . և այս՝ 'ի յունաց առեալ ։ Ըստ որում և աստ փոխ դնելոյ բարկացէք , եդեալ է՝ բարկանայք , և մի մեղանչէք ։

Արդ այս բան երրակի մեկնի ։ Առաջին մեկնութիւնն հայի 'ի յորդոր որդւոցն իլի՝ ոյք միաբանեալ ընդ աբե- սաղոմայ հալածեցին զդաւիթ . և յայս միտ կամի ա- սել . զի՞ է ձեզ որդիք իլի , զի՞ յարուցեալ էք 'ի վերայ իմ . ո՞չ դուք ընտրեցիք զիս ձեզ թագաւոր . և արդ զի՞ ե- ղև ձեզ , և զի՞նչ տեսէք յիս , զի հալածէք զիս . եթէ համարիք՝ թէ անիրաւեալ իցէ իմ առ ձեզ , ունիք տե- ղի բարկանալոյ . բարկանայք յ̃ն բարկացէք և զայրա- ցէք , զխո՛րդ և կամիք . բայց տեսէք ևս , և քննեցէք , զի մի՛ անիրաւութեամբ վարելով ձեր յայդ բարկութի̃՝ մեղիցէք առ իս , ևս և առ ա̃ծ ձեր . վասն որոյ յորդորեմ զձեզ քննել զխորհուրդս ձեր՝ զորս խօսիք 'ի ներքս 'ի սիրտս ձեր . և եթէ վասն ամբոխելոյ մտաց ձերոց ոչ կարէք 'ի միտ առնուլ , * յանկողինս ձեր զղջացա- րո՛ք ‖ ։

Եւ ըստ այսմ անկողնովք իմացեալ լինի նախ բուն ան- կողինն , որ է տեղի առանձնութեան և հանգստեան , և յարմար 'ի քննել զխորհուրդս և 'ի զղջալ ։ Իմացեալ լինի երկրորդ ո՛և իցէ տեղի առանձնութե̃ . ուր մարթ է հանգստեամբ քննել զանկարգութիւն խորհրդոց և բա-

նից և գործոց, և զղջալ 'ի վր նց ։ Իմացեալ լինի երդ ներքին խորհրդարան հոգւոյն. ուր իբր յառանձին տեղւոջ բարւոք ևս մարթ է կատարել զայս գործ. վյ և յորդորէ մարգարէն յայսպիսի առանձնութեան քննութի առնել և զղջալ 'ի վր այնր ամի՝ զոր խօսե- ցան զնմանէ Թշնամիք Նորա 'ի սիրտս իւրեանց, և զոր- ծեցին չարիս ընդդէմ Նորա ։

Ըստ այսմ առաջին մեկնութեան սոյն այս բան կարէ ե՛ր հակառակն վերածիլ և առ զօրս դաւթի յերթալ Նոցա ընդդէմ աբեսաղոմայ և իէլացւոց՝ որք միաբանեցան ը՛ն նմ. ո՞չ թէ ասացեալ էր առ նս. զօրացարուք և վառե- ցարուք ընդդէմ այնոցիկ՝ որք յարուցեալ են 'ի վր մեր. բայց զգոյշ լերուք, զի մի մեղիցէք, և մի իսպառ փճասիցէք Նոցա, մանաւանդ աբեսաղոմայ. այլ խնայելով տաջիք աւարտ պատերազմին՝ զի եղբարք ձեր են. և եթէ խօսիցիք, կմ խորհիցիք 'ի սիրտս ձեր անիրաւ ինչ, կամ եթէ անօրէն խորհրդով կատարիցէք զայս պա- տերազմ ընդդէմ Նոցա, յանկողինս ձեր զղջացա- րուք, յորժամ դառնայք 'ի տունս ձեր, և հանգչիք 'ի Նմին ։

Երկդ մեկնութիւն է այս, թէ յորժամ իրաւունք ար- դարութեն պահանջէ, արժան է մարդոյ բարկանալ, բայց առանց մեղանչելոյ. իսկ առ այս պահանջին ե- րեք. մի՝ զի դիտումն բարկութե իցէ բարի, և ոչ չար ։ Երկդ՝ զի մի բարկութիւն 'ի բարի դիտմանէ սկսեալ՝ 'ի չարն աւարտեսցի, կամ յանիրաւ գործ ինչ բերիցի, և կամ յառանձին իմն վրէժխնդրութի յօժարեսցի ։ Եր- րդ՝ զի բարկուին լիցի 'ի վր այնոցիկ, յորոց վր ու- նիցի մարդն զիրաւունս. որպէս թգրք 'ի վր այնոցիկ, որք են 'ի թագաւորութեան. դատաւորք 'ի վր դատե- լեաց. մեծաւորք 'ի վերայ հպատակաց, ևն ։

Բայց այսմ բարկութեան ևս ոչ է պարտ տևել յերկար 'ի սրտի, այլ՝ փութով զիջանիլ ։ Ուստի և առաքեալն՝ յետ առաջի դնելոյ զայս բան մարգարէին, * բար- ,, կանայք, և մի մեղանչէք ||, յարէ զկնի. * արեգակն ,, 'ի վր բարկութե ձերոյ մի մտցէ ||. եփես. դ. 26 ։ Ո՞չ թէ ասէր. յորժամ իրաւամբք ևս բարկանայք, ջանացարուք փութով արտաքսել 'ի սրտից ձերոց ըղ- կիրս բարկութե՝ յառաջ ք զմտանել արեգական. զի

մի առաւելեալ կրից բարկութեանն՝ արկցէ զձեզ՚ի մեղս
կամ յանիրաւութիւնս ։

Ի սոյն հայելով կրկին բարկուն զանազանեն բարոյականք 'ի կիրս մարդոյ, մին գովելի, և միւսն պարսաւելի. զոր և սուրբն Շնորհալի 'ի մէջ բերէ 'ի մեկն. յակ. ա. 19. ճառ. դ. և գրէ այսպէս. * Գովելի բարկութիւն այն է ասէ՝ որ սակս մեղաց է և արհամարհելոյ ամենայն պատուիրանացն, յուղղութիւն կառելով ամեն զայն, որ զներելովն և զերկայնմտութեն այ արհամարհիցէ. և զայսմ բարկութես մարգարէն յայտնապէս ասէ, և ազատէ 'ի բամբասանաց. բարկանայք ասէ, և մի մեղանչէք . . . և առաքեալն գրէ խրատ աշակերտին. սաստեա, յանդիմանեա . . . Իսկ պարսաւելին է այն՝ զոր մարգարէն օձի նմանեցոյց զբարկութիւն նոցա խժի և քարբի ‖ ։

Եւ քանզի պատահի երբեմն՝ զի նաև 'ի բարկանալ մարդոյ գովելի բարկութեամբ՝ վրիպմունք ինչ լինին 'ի սրտի ընդդէմ խրատուց, յետ ասելոյ մարգարէին՝ բարկացարուք, և մի մեղանչէք, յարէ, * զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք ‖ . այ յետ բարկութեանն քննեսջիք զխիղճ մտաց ձերոց. և եթէ իցէ ասացեալ ձեր՝ և կամ խորհեալ անկարգ ինչ 'ի բարկութեան, զղջացարուք 'ի վերայ, և այս ոչ եթէ յետ աւուրց ինչ, այլ՝ յայնմ աւուր 'ի մտանել ձեր յանկողինս, կամ յառաջ քան զննջել ձեր յանկողնի ։

Ըստ այսմ մեկնութեան բառդ անկողին՝ առաւել հայի 'ի ժամանակն, քան 'ի տեղին. զի դնի իբր յորդոր փութով զղջանալոյ 'ի նմին աւուր՝ յորում եղև բարկանալ. որպէս զի արեգակն մի մտցէ 'ի վերայ բարկութե ։

Այլ մեկնութիւն է այս, թէ յորժամ շարժին 'ի մեզ սկզբնաւորութիւք մեղաց, կամ անկարգ յօժարութի՝ որ է արմատ մեղաց, կամ սէր առ ունայնութիւն աշխի՝ յորմէ ծնանին մեղք, պարտ է մեզ ամենայն իմն նախանձաւորիլ, և իբր բարկութեամբ վանել զայն 'ի հոգւոյ մերմէ. զի մի լիցի մեզ մեղանչել ։ Զի առ այս իսկ տուեալ է մեզ բանականացս կիրք բարկութեան՝ ընդ նմին և կիրք երկիւղի՝ առ 'ի բարկութեամբ իմն ազատել ընդդէմ մեղաց իբր բերանով հոգւոյ. զի ըստ գրելոյ իմաստնոյ ուրումն, * Բարկութիւն տուեալ է մեզ առ 'ի լինել բե-

„ րան առաքինութեան, և զէն ընդդէմ անխրատութեան, և ոչ „ թէ սուսեր ընդդէմ այլոց ||: Ուստի ասէ ծործորեցին ՚ի մեկն. մատ. * Ոչ բարկութիւն իբրև զզէն ինձ տըն- „ կեաց Աստուած ՚ի մարդկայինս բնութիւն՝ վառել զմեզ „ ընդդէմ մեղաց և սատանայի. իսկ թէ ոք սատերիւրիցէ „ զայն, և առ եղբարս զմարտն դարձուցանիցէ, այն- „ պիսի ինձ ասնէ՝ ոչ թէ ոք սրով իւրով զանձն խո- „ ցոտէ ||:

Այլ քանզի սահականութիւն մարդկային բնութեան նաև ՚ի վառելն ընդդէմ մեղաց այլոց՝ երբեմն սխալէ և տկա- րացեալ ՚ի բռնութենէ կրից՝ ձգէ զմարդն ՚ի թշուառութիւն մեղաց՝ գէթ ներելեաց, յորս տայ մարգարէն, և յա- պաշխարութիւն յորդորէ:

Որ ինչ ասէք (ասէ) ՚ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջա- ցարուք: Այս հայի և ասել առաքելոյն. * և առաջի „ նորա արասցուք զհանգէս սրտից մերոց ||. Ա. յովհ. գ. 19: Ի սոսին սրտիւ իմացեալ լինի հոգին, ևս և միտքն. ուստի ասէ սարգիս շնորհալի ՚ի ճառն. դ. * սիրտ թուի ինձ աստանօր զհոգին ասել և զմիտսն ||, ընդ որս իմա և զխորհուրդս ներքինս, ևս և զխիղճ մտացն, նաև զշարժմունս կամաց. յոր միտ կամի ա- սել. պարտ է ձեզ յամենայն աւուր առանձնանալ, մանաւանդ ՚ի ժամ մտանելոյ յանկողինս, և քննել անդ զսիրտս ձեր, թէ արդեօք ՚ի շարժել կրից ձերոց, կամ ՚ի գալ փորձութեան մեղաց՝ զինչ խորհեիք, և յինչ յօժարէր կամք ձեր. զի գուցէ հաւանեալ ևս իցէք մեղացն, և կամ ոչ ՚ի բաց հերքեալ զայն ՚ի ձէնջ: Այլ կամ դարձեալ՝ ածէք զմտաւ, թէ յինչ արդեօք տատանէր սիրտ ձեր ՚ի տուընջեան, յինչ առթէ շարժեալ գործեիք ըղ- գործս ձեր, և կամ զիարդ անցուցեալ իցէք զօրն զայն: Այլ եթէ գտանիցէք խորհուրդ ինչ անկարգութեան խոր- հեալ ՚ի սիրտս ձեր, և կամ իւիք մեղուցեալ՝ զղջացա- րուք ՚ի վերայ նորա:

Ասացի յամենայն աւուր. զի հանապազ և յամենայն ժամու անպակաս են փորձութիւնք մեղաց, մինչև ասել յոբայ. * իբրև զփորձութիւն են վարք մարդոյ ՚ի վերայ երկրի.. յոբ. է. 1: Այլ և յամենայն աւուր՝ պարտ է առնել զքննութիւն ՚ի վերայ գործոց մերոց, և հայել ՚ի խորշս խղճի մտաց, և զամենայն վրիպմունս և զպակասութիւնս և

գայանցանս զգջմամբ և արտասուօք ջնջել, և զխիղճ մտացն յարդարել ուղիղ ։

Ապաքէն մարդիկ յամենայն աւուր ուղղեն զժամացոյցս իւրեանց ( թր̃ խուռմիշ կընեն ) . և երբեմն սրբել տան . միթէ չիցէ՞ արժան և զխիղճ մտացն ուղղել յա̃մ աւուր , և սրբել ։ Որպէս առնեն ամ̃քին նոքա , որք կամին կեցուցանել զհոգիս իւրեանց . զի առանց այսպիսի քննութեան խղճի մտաց և զղջման 'ի վ̃ր մեղաց՝ անհնար է ստանալ զանմեղութիւն կենաց և զուղղութի վարուց . զի որպէս առանց սրբելոյ անհնար է մնալ փայլողութեան յերկաթն , որ եղեալ իցէ 'ի խոնաւ տեղի , սոյնպէս և առանց հանապազորդեան քննութեան խղճի մտաց՝ անկար է մնալ փայլողութեան հոգւոյն՝ որ կայ 'ի մարմնի ։

Ի սոյն յորդորէ զմեզ և հայրն մեր 'ն̃բ գրիգոր լուսաւորիչն , 'ի յաճախապատումն գիրսն . ճառ . ժը̃ . ասելով . պարտ է * հանապազօր քննօղ լինել խորհրդոց „ և բանից և գործոց . որ եթէ ստունգանեալ իցէ , „ ուղղեսցէ 'ի լաւագոյն խրատուն աստուածայնն գրոց 'ի „ ձեռն զղջման ‖ ։ Զայս պատուիրէին և զգաստ փիլիսոփայք . զի ասի , թէ պիւթագորաս հրամայեաց աշակերտաց իւրոց յաւուրն երկիցս քննել զանձն , զինչ արարի , որպէս արարի , վասն է՞ր արարի . և 'ի քննելն ուրախասցի ( ասէր ) ընդ բարեն , և տրտմեսցի ընդ չարն ։ Զսոյն պատուիրէր և սենեքա և պլուտարքոս , և եպիկտետոս , գուցէ և այլք ։ Զի 'նք համարէին՝ թէ հոգի մարդոյ յանձնեալ է նմա յա̃յ իբր աշակերտ կամ իբր որդի թագաւորի՝ 'ի դաստիարակել . ապա պարտ է ասէին քննել և խրատել , ուսուցանել և ուղղել ։ Տանուտէրն ոչ անփոյթ լինի համարս պահանջել և 'ի հաւատարիմ տնտեսէ . քանի ևս դու 'ի պահանջել համարս յանհաւատարիմ մտացդ և յանկարգ կամացդ ։ Եթէ յապաղես և յամեցուցանես , ոչ կարեն բարւոք տալ զհամարն . և դու ինքն լինիս պարտաւոր ։

Արդ թէպէտև յա̃մ աւուր՝ ևս և յամենայն ժամու արժան է զայս առնել , սակայն ըստ որում յորդորէ առաջիկայ բնաբանդ , առաւել ևս պատշաճ է յերեկոյի . որպէս գրէ և բարսեղ մեկնիչ 'ի մարկ . գլ . ժդ̃ . * պարտ

„ էր ասէ և զցերեկն զնոյն առնել. բայց զի 'ի հոգս
„ ծի զբաղեալ էք, գոնէ ասէ, 'ի քնոյն ժամ (քննե-
„ ցէք զանձինս և) յիշեցէք զա̃ծ. զի և ընդ առաւօտս
„ զնոյն ածցուք զմտաւ. և զայս առնելով 'ի բազում
„ զգուշութեան պահեսցուք զմիտս մեր: Զգաստ վա-
ճառականք նաև յանկողնի և 'ի քուն մտանելն քըն-
նեն, զինչ շահեցաք, և զինչ կորուսաք. մի արդեօք
և 'ի գլխոյն պակասեալ իցէ: Այսպէս և դու պար-
տական ես յերեկոյի քննել. մի արդեօք և շնորհքն
ա̃յ կորուսեալ իցէ 'ի հոգւոյդ. և 'ի քննելդ ուղղեա
և բարեկարգեա զքեզ: Եթէ քննէիր, զղջայիր և
ուղղէիր. որպէս տեսանի այս յանձն դաւթի. * Լուա-
„ ցի ասէ զամենայն գիշեր զմահիճս իմ. և արտասուօք ի-
„ մովք զանկողինս իմ թացի ‖. սաղ. զ̃. 6:
Յասել առ մարգարէին * զոր ինչ ասէք ի̃ս ‖. սովին
ցուցանէ թէ պարտ է ոչ միայն 'ի հասարակի, այլ որո
շակի քննել զա̃մ խորհուրդս մեր, և զղջալ 'ի վերայ
իւրաքանչիւրոյն: Եթէ կամիս բարւոք կատարել
զայս, տրոհեա զքննութիւնդ 'ի վերայ խորհրդոցդ և
մոլութեանցդ, և 'ի վերայ միոյն աշխատեա. զի այսու
դիւրաւ կարես յաղթել նոցա. զի բաժանեալ թշնամիք
դիւրաւ յաղթին. որպէս 'ի բաժանիլ կորտիատեանց
յաղթեցան 'ի յորատիատեանց: Ապա թէ 'ի բազումս 'ի
միասին մարտիցես՝ ոչ օգտիս. զի որ բազմաց մարտչէ՝
յիւրաքանչիւրոյն տկարանայ: Ի ձգելդ ախոլ զբազում
ինչ 'ի միասին՝ տկար լինի ձգումն. որպէս և ասի. * որ
զբազումս ախէ՝ նա սակաւս ձգէ:
Իէլացիք կամէին զամենայն քանանացիս համայն ջնջել.
բայց ասաց ցնոսա մովսէս. * ոչ կարասցես սատակել զն̃ս
„ միանգամայն ‖. բ̃. օրին. է. 22: Ի սպանանել ըզ-
մին՝ զգուշանաս յայնմ պահու և 'ի միւսոյն. մենա-
մարտն եթէ 'ի թիկանց ևս ունիցի թշնամի, ոչ միայն
որ զառաջեաւն է՝ ջանայ սպանանել, այլ 'ի յետ-
նոյն զգուշանայ: Այլ դու ուշ դիր միոյն, և մի ձա-
պաղիր 'ի բազումս միանգամայն. որոշեա զմին, և յայն
ուղղեա զջանսդ: Յիմար է որսորդն՝ որ արձակէ ըզ-
նետ իւր առ բազումս միանգամայն. կամ լարէ զաղեղն
առանց դիտելոյ՝ թէ ուր արձակէ զնետն. յիմար է
և մարդն այն՝ որ առանց ուշ դնելոյ յայս կամ յայն՝

յանորոշս քննել . և բաղդատլին մասցի՛ ի քննութիւն
խղճի մտաց իւրոց ։

Բայց և զմին զայն ես՛ յոր ուշ դնես՛ մի փոյթ փոխեր . ծառ փոյթ փոխեալ՛ ի տեղւոջէ՛ ոչ արմատանայ . ձու փափոխեալ՛ ի մօրէ՛ ոչ ծնանի ։ Ոստնլով ընդ խարոյկն՛ ոչ ջեռնու ոք . դու ես փոխելով և ոստնլով՛ ի քննութիւնդ աստի անդր , և անտի այսր , ո՛չ շահիս ինչ ։ Յետ քննելոյ քո և յետ զղջալոյ՛՛ ի հաստատուն առաջադրութիւն սկզբեան զկամս քո , և մի յանհաստատ ինչ ։ Ագռաւն զամպս նշան եղեալ՛ թաղէ զընկոյզն . ՚ի ցրուիլ ամպոյն ոչ գտանէ ինչ . դու ես՛ ի դնել զառաջադրութիւնդ մի յենուր՛ ի դիւրափոփոխ յօժարութիւն զգայութեանդ կամյախորժակ սրտիդ , այլ՛ ի հաստատութիւն կամացդ ։

Ծանիր ես՛ զի՛ ի մասնիկդ՛ ի քննութիւն՛ ի վ͞ր միոյ՛ այն մին ոչ պարտի լինել թեթև ինչ , այլ այնպիսի , որ է գլխաւոր թշնամի հոգւոյդ ։ Եթէ՛ ի բազում տկարանաս , տես թէ ո՛րն է գլխաւորն՛ որ վտանգէ զքեզ . զայն կա՛լ , և այնու կալեալ լինին այլք ։ Ի քարշել միայն զգլուխ ձիոյ՛ զայլ բոլոր ձին ։ Ի նուաճել զգլխաւոր մոլութիւնդ , ո͞պ զվաւաշտութիւնդ՛ նուաճին և այլ մոլութիւնք ։ Հա՛ր զքարն՛ ի գլուխ գողիաթիդ . ո͞պ ՛ի գլուխ հպարտութեանդ . քո՛ է այնուհետև յաղթութիւնն փղշտացւոց ։ Եթէ զզօրագլուխն սպանանես՛ զօրացն նորա ես յաղթես . եթէ ընդ ձեռամբ ունիցիս զթ͞գն , ո͞պ զագահութիւնդ , դիւրաւ նուաճին ծառայք նորա . ուստի և արքայն ասորւոց՛ ի պատերազմին ընդ ի͞էլացւոց՛ պատուիրեաց զօրաց իւրոց և ասէ . * մի
„ մարտնչիցիք ընդ մեծի կ͞մ ը͞դ փոքու . այլ միայն ը͞դ ար–
„ քային ի͞ղի ( ա͞յ ընդ աքաաբու ) ‖ ։ Գ . թագ . ի͞բ . 31 ։

Պատգամաւորք հռովմայեցւոց՛ ի մարտնչելն ՛ի թէատրոնի՛ յարձակէին նախ՛ ի վերայ այնր գազանի՛ որ ք͞ զայլս էր կատաղի . զի՛ ի յաղթել նմա՛ յայտնի լինէր՛ թէ յաղթէ և այլոց . եթէ յաղթես մեծի ախտիդ՛ ո͞պ ախտի բարկութեան՛ կարօղ ես յաղթել և այլոց ։

Քաղաք է հոգիդ , և շուրջ կան զքև մոլութիւնք և ախտք . ընդ ո՛ր կողմն կամի թշնամին մտանել , յայն ուշ դի՛ր . իսկ եթէ դու անփոյթ լեալ զայնմանէ՛ յայլ կողմն մտադրես , թշնամին մտանէ առանց գիտելոյ

քո, կամ անապան գիտելով։ Եթէ մեղք մտանեն 'ի հոգի քո ընդ կողմն ցանկութեան, կամ ը̃ն կողմն հետաքրքրութեան, յայն կողմն փոյթ կալ առ 'ի պաշտպանելոյ զհոգիդ։

Քննութիւն խղճի մտաց սպեղանի է. դնելի է 'ի վ̃ր վիրի, և ոչ 'ի վերայ այլ անդամոց։ Երբ նախանձու կայ 'ի սրտիդ. դիր զքննութիւնդ 'ի վերայ նորա։ Դեղ է քննութիւնն, և յիրաւի դեղ ամենահարկաւոր, առ զայն ը̃ն հիւանդութեանց. հիւանդն՝ որ երթայ 'ի կրպակ դեղավաճառի՝ ոչ ձգէ զձեռն իւր յայն՝ որ պատահի, այլ յայն որ պիտոյ է և հարկաւոր հիւանդութեան իւրում։ Այս 'ի սրտիդ հիւանդութիւն վրէժխնդրութեան. հան 'ի քննութենէդ զդեղ ընդդէմ այնր։ Իմա նախ զհիւանդութիւնդ, և ըստ այնմ գիտ զդեղն, որով կարես բժշկել զքեզ. եթէ բժիշկն ծանիցէ զհիւանդութիւնն և զպատճառ նորին՝ դիւրաւ բժշկէ։ Ի քննելն խնամաս զպատճառ հիւանդութեանդ. և յայնժամ յաջողի բժշկութիւնն ըստ ա̃մի։ Ի հատանել զպատճառ ծառոյն՝ թօշնին տերևք, և չորանայ ծառն. այլ եթէ զոստսն միայն հատանիցես, արմատն կրկին բողբոջէ։ Ի խլելդ զմոլութիս՝ տնկելի են 'ի տեղի նոցա առաքինութիւնք. և որ կարևորն է 'ի նոսա՝ այնմ պարտ է փոյթ տանիլ, և 'ի նոյն հպեցուցանել զքննութիւնդ։ Քննութիւնն աղբիւր է 'ի պարտիզի հոգւոյդ. յորմէ ոռոգանին ա̃մ տունկք առաքինութեանց. բայց առաւել այն տունկ՝ որ կարօտի բազում ջրոյ, եթէ անջուր մնասցէ՝ չորանայ։ Ի մտանելդ 'ի պարտէզ, նոյնպէս և յելանելդ՝ զայն ծաղիկ քաղես՝ որ ք̃ զայլս ցանկալի է քեզ. նոյնպէս 'ի քննութեան քաղեա զայնպիսի առաքինութիւն՝ որ քան զա̃մ պիտոյ է քեզ և կարևոր. որով կարասցես զարդարել զհոգի քո. և նոքիմբք կատարել զհաճոյսն ա̃յ, և նուիրել նմա զգործս բարիս, զորս մարգարէն կոչէ պատարագ արդարութեան. և առ 'ի նոյն յորդորելով, ասէ։

Ե. Մատուցէք պատարագ արդարութեան. և յուսացարուք 'ի Տէր։

Բառիս "արդարութիւն" ոչ իմացեալ լինի աստ առանձին առաքինութիւն արդարութեան, այլ ո̃ և իցէ գործ

բարի․ զի ըստ որում գրէ Շնորհալին 'ի մեկն․ մատթ․ Ե․ * ոպ ոմ չարեաց և՛ բանիւ և՛ գործով՝ անիրաւութե
„ է անուն, նոյնպէս և ոմ բարեաց անուն արդարու-
„ թիւն․ զի արդարապէս խօսին և գործեն ‖․ Նաև ըստ այսմ՝ պատարագաւ արդարութեան խնդրէ լինել այնպիսի բարի գործք, որք ըստ արդարութե կմ օրինաց կատարելով պատարագին և ընծային այ իբրև Հաճոյ ինչ և իբրև Հաշտեցուցիչ նուէր․ որով և լինին ոչ միայն պատարագ, այլ և առիթ փառաւորելոյ այլոց զած․ Առ որ Հայի և այն բան տեառն մերոյ, զոր ասաց, * Տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորես-
„ ցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է ‖․ մատ․ Ե․ 16․

Այդ՝ գործք բարիքս յայնժամ լինին Հաճոյ այ, իբր պատարագ և պատճառ փառաւորելոյ զնա, յորժամ բարւոք եղանակաւ կատարին, կամ յորժամ բարեպէս լինին․ զի բարի գործք ոչ Համարին առաջի այ բարի, եթէ բարեպէս ոչ կատարեսցին․ և յայս սակս Հասարակաց գրոյց է, թէ ած ոչ Հայի այնչափ 'ի գործն, որչափ յեղանակ գործոյն․ յորմէ ել և առածն այն, թէ ած ոչ Հայի 'ի բայն, այլ՝ 'ի մակբայն․ այսինքն ոչ Հայի 'ի գործողութիւնն, այլ՝ յորպիսութիւն, թէ զիարդ կատարեցաւ այն գործ բարի․

Իսկ առ 'ի բարեպէս կատարել բարի գործոյ՝ երկու ինչ պաՀանջի․ մի՝ զի գործողն մի խառնեսցէ 'ի նոյն զարատ ինչ․ ոպ արար փարիսեցին․ որ յայնչափ բարի գործս իւր խառնեաց զարատ Հպարտութե․ (ղուկ․ ժը․ 11․) ոպ և առնեն բզմք, որք 'ի գործելն զբարիս՝ խառնեն 'ի նոյն զարատ կեղծաւորութե, կամ կամակորութե, կամ չխատակար տրտմութե, կամ ունայն ուրախութե, կամ աւելորդապաշտութե, կամ ագաՀութե, և կամ այլ այնպիսի անկարգութեց, որք իբրև զչխատակար և զապականիչ ճանճս յածին զպատարագօք բարի գործոց․ զոր պարտ է 'ի բաց վանել (այսինքն քշել)․ Երկրորդ՝ զի գործողն՝ կամովին ընծայեսցէ այ զբարի գործն՝ զոր առնէ, կամ որ նոյն է՝ ուղիղ դիտաւորութբ արասցէ, այսինքն 'ի փառս այ, կամ վն սիրոյ նր․ ապա թէ ոչ՝ գործն այն ոչ ևս կրէ յինքեան զանուն կատարեալ պատարագի․ զի պատարագն յայնժամ Համարի կատարեալ, յորժամ լինի կամաւորական նուիրմամբ․ Այս ամե-

նոյն հայելով մարգարէին ասէ ։

Մատուցէք պատարագ արդարութեան ։ Ոչ ասէ տարէք, այլ "մատուցէք". որով ոչ զտանելն արգելու, այլ զմատուցանելն խնդրէ. որպէս թէ ասէր. գործեսջիք ըզգործս արդարութեան կամ զգործս բարիս. և 'ի գործելն եթէ կամիք՝ զի հաճոյ լիցին աստուծոյ, նմա ընծայեսջիք զայնս՝ կատարելով 'ի փառս նորա. և յայնժամ համարեալ լինին գործք ձեր պատարագ արդարութեան ։ Այլ գիտելի է, զի (որպէս փորձիւ տեսանեմք), որ սկսանի գործել զբարիս, և 'ի նոյն պարապի, երեք ազգք փորձութեանց սովոր են յառնել 'ի վ̃ր ն̃ր. մի՝ երկիւղի կամ վհատութ̃ե. երկ̃ր՝ տարակուսութ̃ե. և եր̃ր՝ որ վտանգաւորն է՝ երբեմն ևս հպարտութ̃ե կամ յանձնապաստանութեան ։ Իսկ պատճառ այսոցիկ փորձութեանց է, զի նախ՝ տեսեալ մարդոյ, թէ որպէս կիրք բռնադատիչք և ախտք յորդորիչք և վտանգք ծանունք իւր խոչընդոտան ընդ առաջ ելեալ՝ խափան լինին նմա 'ի գործս բարիս և 'ի բարի առաջադիմութիւնս, սկսանի վհատիլ՝ մինչև յետս ևս կալ 'ի սկսեալ գործոյն և թողուլ զառաջադիմութիւն իւր ։ Երկ̃ր՝ երբեմն սկսանի տարակուսիլ մարդ, արդեօք հաճոյ իցեն աստուծոյ՝ զոր առնէ, և կամ արդեօք հաւատոյ ունի առնուլ 'ի ն̃նէ վարձս գործոց իւրոց, ե̃ն ։ Երրորդ՝ ներհակ վերոյգրելոցդ՝ երբեմն տեսեալ մարդոյ, թէ գործէ զբարիս և վանէ զչարիս, զարթնու 'ի հոգի նորա շառաւիղ ին̃ հպարտութեան, և կի̃ յանձնապաստանութ̃ե, ո̃չ թէ ինքնին կարէ առնել ինչ ։ Արդ՝ կամելով մարգարէին զգուշացուցանել յայսպիսեացս, յետ ասելոյ՝ * Մատուցէք պատարագ արդարութ̃ե ‖, յարէ զկնի, և ասէ ։

Յուսացարուք 'ի Տէր ։ Որպէս թէ ասէր. 'ի գործելն ձեր զբարիս՝ զյոյս ձեր դիք յա̃ծ. և նախ՝ մի բքանիք յը̃ղխութ̃եց պատահելոց ձեզ 'ի գործս բարիս. զի 'ի յուսալն ձեր 'ի Տէր՝ նա զօրացուցանէ զձեզ ։ Երկրորդ՝ մի տարակուսիք 'ի վերայ բարութ̃ե գործոց ձերոց, զի թէ իցէ ըստ ա̃ծային օրինաց՝ հաճոյ ընծայի նմա. ևս և մի երկբայիք 'ի վ̃ր վարձուցն. այլ յուսացարուք յայն՝ որ ամենաառատ է 'ի հատուցանել, և առաւել միայն սպասէ տալ վարձս. զի եթէ անպատիժ ոչ թո-

ղու զչար գործս, քանի ևս ոչ թողցէ անվարժ ըզ-
գործս բարիս ։ Երկրորդ՝ մի՛ լինիք յանձնապաստան. զի
ձեօք ոչ ինչ կարէք առնել. այլ՝ խոնարհութ՟բ և հաս-
տատութ՟բ գործեցէ՛ք զբարիս. ապա թէ ո՛չ ոչ միայն ա-
պականին գործք ձեր, այլև յաստուծոյ արհամարհին ։
Տե՛ս խոսրով՝ի մեկն. ժամագր. երես. 367. պա-
տարագաւ արդարութեան խնկոյ՝ զբանաւոր պաշտօնն՝
ք՟ զաղօթս և զօրհնութիւնս յասելն. * մատուցէ՛ք պա-
„ տարագ արդարութ՟ե զբանականն պաշտօն ||. այլ այս
պաշտօն ոչ այնչափ կոչի պատարագ արդարութ՟ե, որչափ
պատարագ օրհնութ՟ե. ո՟պ տեսանի՝ի սաղ. խթ. 14, և 23 ։
Եւ տիրապէս խօսելով բան մարգարէին ուղղակի ոչ
հայի աստ՝ի բանս աղօթից, այլ՝ի բարի գործս հա-
ճոյս ա՟յ ։ Բայց քանզի գտանին բազումք, որք ոչ կա-
մելով գործել զբարիս՝ պէսպէս պատճառս յօդեն,
մանաւանդ զայս՝ թէ ոչ գիտեմք, ո՞յք իցեն գործք բարիք
և ո՞յք հաճոյք ա՟յ, և միթէ կայցեն ինչ վարձք. մար-
գարէն իբր՝ի բերանոյ նոցա հարցանէ, և պատասխա-
նէ՝ ասելով ։

Է. Բազումք ասեն, թէ ո՞ ցուցանէ մեզ զբարութիւն քո. Նշա-
նեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրա-
խութիւն սրտից մերոց ։

Յասելն աստ՝ * բազումք ասէին ||, ոչ կամի ցուցա-
նել մարգարէն, թէ բազումք ասացեալ իցեն նոյն զայս
բան, * ո՞ ցուցէ մեզ զբարութիւն ա՟ն ||. այլ՝ է ձեւնկա-
րագրութ՟ե բանի, որով կամի յայտ առնել, թէ գտա-
նին բազումք՝ որք կամ վ՟ն անփոյթ լինելոյ, կամ վ՟ն ոչ
կամելոյ աշխատիլ՝ի գործս բարիս, և կամ վ՟ն տգիտա-
նալոյ ևս ոչ առնուն՝ի միտ, թէ զինչ պարտ իցէ նոցա
գործել, որ իցէ բարի և հաճոյ ա՟յ, և կամ զինչ վարձս
ընկալցին առնուլ յա՟յ. և առ անմեղադրի առնելոյ
զտգիտութիւն իւրեանց՝ պատճառեն զայս՝ թէ ո՞ եցոյց,
կամ ո՞ ցուցէ մեզ զայն՝ զի գիտասցուք. առ սոսա
հայելով ասէ ։

Բազումք ասեն, թէ ո՞ ցուցանէ մեզ զբարութիւն քո ։ Բարութ՟
ա՟ն խնդրեալ լինի նախ այն բարութի՝ զոր տայ մեզ ա՟ծ.
երկրորդ այն բարութի՝ զոր մեք ընծայեմք տալ ա՟յ ։ Ըստ ա-
ռաջնոյն, ք՟ է բարութեն՝ զոր տայ մեզ ա՟ծ՝ կամի ա-

սել · բազումք ասէին ցիս · դու ասես՝ մատուցէք պատա֊
րագ արդարութեան, և ո՞ է՝ որ ցուցցէ մեզ, թէ ՚ի մա֊
տուցանել մեր ա՟յ զայսպիսի պատարագ, ա՟ծ տալոց է
մեզ զբարիս իւր կամ զվարձս՝ ՚ի լիացուցանել զմեզ ։
Այսմ մեկնութեան նպաստէ բնագիրն եբր · զորմէ տես
՚ի համեմատութիւնս ։ Ըստ երկրորդին, ա՟յ ը՟ բարու֊
թեանն զոր մեք ունիմք տալ ա՟յ՝ կամի ասել · դու յոր֊
դորեցեր զմեզ գործել զբարիս կամ զարդարութիւն, և
զայն մատուցանել ա՟յ իբրև զպատարագ · բայց արդ
ո՞ ցուցցէ մեզ զայնպիսի գործս՝ որ իցէ բարի և հաճոյ
ա՟յ · զի ո՞վ գիտաց զմիտս ա՟ն, և կամ ո՞վ կարէ ճանա֊
չել և յայտնել մեզ, թէ ըստ այս հաճի տէր, և ոչ ըստ
այն ։ Զայսպիսիս խորհին և խօսին նաև այժմ բ՟ք ·
զորոց տես ՚ի գիրս իմաստութեան · գլ · Բ ։

Յայսպիսի անհիմն և անտեղի բանս սոցա հայելով մար֊
գարէն՝ զարմանայ · և անարժան համարելով խօսիլ
ընդ նոսա՝ դարձուցանէ զբան իւր առ ա՟ծ · և ը՟ նմ՟ խօ֊
սելով՝ ՚ի խօսս անդ իւր դնէ զպատասխանի բանից
նոցա · և ասէ ։

**Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց ։** Որպէս թէ ասէր ·
զի է տէր, զի լոյս երեսաց քոց ծագեալ է առ մեզ,
որ և ցուցանէ ամ՟ն զբարին՝ զոր դու հաճիս տալ, և
զբարին՝ զոր դու կամիս ընդունել · իսկ անբարիշտք և
ծոյլք ասեն, ո՞ ցուցցէ մեզ զայն ։

Արդ գիտելի է, զի լոյս երեսաց տեառն երրեակ է յաս֊
տի կեանս ։ Մին է լոյսն բնական օրինաց՝ հաղորդեալ
յա՟ծային մտաց · և կամ լոյսն ճանաչման, զոր ամենայն
մարդ ունի յա՟յ՝ իբրև պատկեր ինչ ճանաչման նորա ·
որով և կարէ որոշել զբարին և զչարն · զի յա՟մ մարդ
կայ ուղիղ ճանաչումն, որ իբրև լոյս յայտնի ցուցա֊
նէ, թէ արժան է առնել զայս ինչ, և ոչ զայն · զ՟ր՝
թէ պա՛րտ է պաշտել զա՟ծ · պա՛րտ է պատուել զծը֊
նօղս · պա՛րտ է առնել այլոց զայն ինչ, զոր կամիմք
թէ այլք արասցեն մեզ · և թէ՝ չէ՛ պարտ առնել այ֊
լոց զայն ինչ, զոր ոչ կամիմք՝ թէ այլք արասցեն մեզ ·
և ևս՝ թէ չէ՛ պարտ գողանալ, շնալ, սպանանել,
ստել, նախատել, ևն · այլ՝ ողորմիլ, բարեբարել,
յարգել, մաքուր պահել զանձն ՚ի պղծութենէ, խորհիլ
զբարին, խօսել զճշմարիտն, ևն ։ Իսկ այս այնչափ

յայտնի տպաւորեալ է 'ի միտս մարդկան, մինչև 'ի տղայս եւս երեւի, թէև չիցեն հասեալ 'ի բանաւորութի. ըստ որպ բարսեղ 'ի մեկն. մարկ. ժԲ. փինկ նշանելոյ՝ տպիլ ընթեռնու, յասելն. * տպեցաւ 'ի մեզ
„ լոյս երեսաց քոց տէր ‖. ուստի ոչ ոք յորդւոց մարդկան կարէ տարակուսիլ, թէ ո՞յք իցեն գործք բարիք. վասն որոյ և ոչ իսկ կարեն անմեղադիր լինել յոչ գործելն զբարիս: Այս լոյս վերածի և գիտութիւնն և ճշմարիտ իմաստութիւն. ուստի ասէ շնորհալին 'ի մեկն. մատթ. Դ. * լոյս ոչ զայս ասէ, զոր միշտ տեսանեմք
„ մարմնոյ աչօք, այլ զճշմարիտ գիտութիւն, որ մտացն
„ միայն տեսանելի ‖.

Երկրորդ լոյսն է յայտնութիւն ածային՝ յոր հիմնին հաւատք մեր. և այն եթէ ըստ տեսականին, և եթէ ըստ գործնականին: Ըստ տեսականին է այն ամ, զոր յայտնեալ է մեզ ած՝ բերանով մարգարէից և առաքելոց 'ի հաւատալ, 'ի յուսալ, և 'ի սիրել. որպիսի են գաղտնի խորհուրդք հաւատոյ, և բարիքն խոստացեալք, զորս 'ի յայտնութեն այ գիտեմք: Ըստ գործնականին է օրէնքն ածային համաձայն բնական օրինաց. և սա լոյս կոչի, զի լուսաւորէ զմիտս՝ ճանաչել, թէ զինչ իցէ հաճոյ այ, և զինչ անհաճոյ. ո՛ր իցէ բարի, և ո՛ր չար. որո՛ւմ իրի պարտ է ցանկալ, և յորմէ խորշիլ, ևն. զի դբ յորժամ ծագէ լոյս 'ի խաւարին սենեկի, յայտնի երեւին՝ որ ինչ կան 'ի նմին, թէ անարգ իցեն՝ և թէ պատուականք, որք յառաջն ոչ երեւէին. ըստ նմին օրինակի և օրէնքն այ, ընդ նմին և օրէնքն բնական ծագեալ 'ի մեզ յերեսաց այ, որք եւս իբր 'ի խաւարի մարմնոյ և ծի, յայտնի առնեն՝ թէ այս ինչ չար է, և այն ինչ բարի. զորս առանց այսր լուսոյ ոչ կարէաք ճանաչել. և յայս միտս ասէ պօղոս. * Օ մեղս ոչ գիտէի, եթէ ոչ օրինօք. և զցան-
„ կութի ոչ ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ՝
մի ցանկանայցես ‖. հռովմ. է. 7.

Երրորդ լոյսն է շնորհքն, զոր տայ ած ամ մարդոյ, և ոչ յումեքէ խնայէ. վասն զի որպէս կամի ած, զի
* ամ մարդիկ կեցցեն, և 'ի գիտութի ճշմարտութեան
„ եկեսցեն ‖, ըստ առաքելոյն. ա. տիմ. բ. 4. վն կամելոյն թէ այսպէս լինիցի՝ ծագէ ամեն զլոյս շնորհաց

իւրոց, նա և զԼոյս նախախնամութեան և օգնականութ̃ե իւրոյ · ըստ այնմ, * Լուսաւոր արա զիմ մարդ, որ գա„լոց է յիս ‖ · յովհ · ա · 9 · Ցց տայ ամնն զլուսական շնորհս և զնպաստս · զի ծանիցեն զՃշմարտութիւնն · և նովին գիտացեալ զբարին՝ արասցեն զայն, և կեցցեն ։ Իսկ եթէ ոք այսու լուսով ոչ լուսաւորեսցի, իւր է յանցանքն · քանզի ոչ կամի ընդունել զայն · զի թբ եթէ ոք նստեալ ՚ի սենեկի՝ ՚ի ծագել արևու ոչ բացցէ զպատուհանն, և ոչ լուսաւորեսցի, իւր է յանցանքն ոչ լուսաւորելոյ, այնպէս է և այն, որ ոչ ընդունի զԼոյս շնորհացն այ ։ Այլն հանգոյն տեառնն և նոքա, զորոց խօսի աստ մարգարէն · * բազմք ասեն՝ թէ ո՞ „ցուցցէ մեզ զբարութիւն տն ‖ · զի ած ցուցեալ է առ նոսա զայն, այլ նոքա ոչ կամին ճանել ։ Աստի և Լոյս երեսացն այ թէպէտ և առ նոսա ևս ծագեցաւ, բայց քանզի նոքա ոչ կամեցան լուսաւորիլ, վսն և մարգարէն ոչ ասէ ՚ի պատասխանին, թէ նշանեցաւ առ նոսա, այլ՝

Նշանեցաւ առ մեզ · Որպէս թէ ասէր · Լոյս երեսացն այ թէպէտև առ ամնն ծագեցաւ, թէ՛ առ նոսա՝ որք ոչ կամին առնել զբարին, և թէ առ մեզ՝ որք կամիմք առնել զնոյն, բայց ոչ նշանեցաւ առ նոսա, այլ՝ առ մեզ · զի առ մեզ եղև նշանակօղ և յայտնօղ զկամս այ ։ Այլաբանօրէն, լուսով նշանակի բանն ած, ըստ որում զինքն կոչեաց Լոյս · յովհ · ժբ · 46 · և նշանեցաւ առ մեզ ՚ի հօրէն լուսոյ, և ցոյց զմեզ լուսով խնամութեան և շնորհաց իւրոց ։ Իսկ վն լուսոյ հանդերձեալ կենաց, տես ՚ի սաղ · լե · 10 ։

Այս լոյս նշանեցաւ նախ առ նահապետս և առ մարգարէս, և ապա ՚ի սկիզբն նոր օրինացս նշանեցաւ նախ առ յովհաննէս, և առ սիմէոն ծերունին · և առ այլս զկնի · որք և ծանեան զնա լինել ած Ճշմարիտ, թէև մարդ տեսանէին զնա ։ Աստի վասն սիմէոնի և յովհաննու ասէ շնորհալին ՚ի մեկն · մատթ · գլ · դ · 6 · * ՚ի մարդեղութե տն սիմէոն և յովհաննէս ծանեան „զնա հոգւովն՝ թէ իցէ ած · և յայտ անտի է, զի „թէպէտ և ՚ի կերպարանս մարդոյ տեսին զնա, „(բայց) որպէս ընդ աստուծոյ խօսէին ‖ ։

Այլ յասեն աստ՝ * նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց

,, քոց ||, բառս "երեսաց" կամ ըստ եբրայ՝. փան, այս է երես՝ ոչ ցուցանէ թէ ա̄ծ ունի զերեսս որպէս զմարդոյ, այլ՝ փոխաբերութ̄ բնն դնի. ըստ որում այս բառ զանազան օրինակաւ նշանակէ 'ի սուրբ գիրս.

Երբեմն նշանակէ զայն՝ զոր նշանակէ էական դերանունս ինքն, դու, ես, նա. ուստի փոխանակ ասելոյ 'ի նմանէ, յինէն, եւ̄. ասի յերեսաց նորա, յերեսաց իմոց, եւ̄. որպէս եւ աստ փխկ ասելոյ 'ի քէն՝ դնի * յերեսաց քոց ||: Նաեւ ըստ այսմ երբեմն նշանակէ եւ զայն՝ զոր նշանակէ ստացական դերանունս իմ, քո, իւր, եւ̄. յոր միտ փոխանակ ասելոյ լուսով քով տեսանեմք ըզլոյս, ասի, * լուսով երեսաց քոց եւ̄ ||:

Երբեմն նշանակէ զէութ̄ն ա̄յ. քանզի որպէս մարդն յայտնի երեւի յերեսս, այսպէս եւ ա̄ծ յէութեն իւրում. եւ յայս միտս ասէ քն̄. * Հրեշտակք նոցա յերկինս հանապազ ,, տեսանեն զերեսս հօր իմոյ ||. մատ. ժը̄. 10: Երբեմն նշանակէ զանձն ա̄յ, կամ զմեծվայելչութիւն նր. ըստ այնմ, * Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով ||. սաղ. ճժը. 58: Երբեմն նշանակէ զներկայութիւնն ա̄յ. ըստ այնմ, * Յերեսաց քոց ես յո՞ փախեայց ||. սաղ. ճլը. 7: Երբեմն նշանակէ զտեսչութիւն ա̄յ. ըստ այնմ, * Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց ||. սաղ. ծ. 13: Երբեմն նշանակէ զօգնութիւն ա̄յ. ըստ այնմ, * Երեւեցո զերեսս քո 'ի ,, ծառայս քո ||. սաղ. ճժը. 135: Երբեմն նշանակէ զվրէժխնդրութիւն ա̄յ. ըստ այնմ, * Յերեսաց նորա ելցեն ,, հարուածք ||. ամբակ. գ. 5. 'ի սաղմոսն. Ճնէ. Երբեմն նշանակէ զայն որ հայի 'ի ճանաչումն եւ 'ի միտս ա̄յ. եւ թուի թէ տիրապէս յայս միտ դնի եւ աստ. ուստի եւ յասելն, * նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց ||, կամի ասել. լոյս կամ նշոյլ ա̄ծայնոյ քո միտացդ եւ ճանաչմանն, որով անմոլար ճանաչես եւ ուղղես զամենայն, ծագեցաւ առ մեզ՝ 'ի ձեռն լուսոյ բանին եւ 'ի ձեռն յայտնութեան քո եւ շնորհաց. եւ եղեւ մեզ իբրեւ նշան՝ ցուցանել մեզ զբարին.

Հնար է եւ իմանալ աստ երեսօք զբանն ա̄ծ, որ է իբր երես, այսինքն պատկեր եւ նկարագիր էութեանն ա̄յ. (եբր. ա̄. 3:) Նաեւ ըստ այսմ, լուսով խնդրեալ լինի հոգին սբ., որ յերեսացն ա̄յ, այսինքն 'ի բանէն ա̄յ տուաւ մեզ իբրեւ նշան հաշտութ. Ուստի ասէ գէորգ վարդապետ

'ի մեկն․ եսայ․ *յայտնեսցին, որք կնքիցեն զօրէնս․
„ ա̃յք, որք 'ի քո հաւատացին, որք և ասեն․ Նշանե֊
„ ցաւ 'ի մեզ լոյս երեսաց քոց տէր․ երես հօր որդին․
„ և լոյս որդւոյ առաքեալ սուրբ հոգին․ որով կնքեալք
„ ըստ յառաջնումն 'ի պատկեր ա̃յ երևելիք և յայտնիք
„ եղեալ յաշխարհի, կնքեն զօրէնս ոչ գրովն վարե֊
„ լով հրէաբար, այլ հոգւովն աւետարանապէս ‖։

Յարմարական մեկնութի̃. լուսով երեսացն ա̃յ նշանա֊կին ա՛ և իցէ ա̃ծային իրք, եթէ խորհուրդք եկեղեց֊ւոյ, և եթէ սրբազան բարեկարգութիւնք․ և որք վերա֊ծին յայնս ։ Նաւ ո՞ք կոչին լոյս ըստ երից․ մի՝ զի լուսա֊ւորեն զմեզ․ երկրորդ՝ զի լուսաւորս ցուցանեն այլոց զիւրս քրիստոնէութեան․ եր̃րդ՝ զի հանդոյն լուսոյ ան֊աղտ են և անընդունակ աղտից․ իբր զի որպէս լոյսն և ճառագայթք լուսոյ յաղտեղի իրս ոչ աղտեղին, սոյնպէս և սրբազան իրք․ որով և պարծանք համա֊րին քրիստոնէական կրօնիս մերոյ, զորս և յանուն մեր 'ի կիր՝ ոչ կրեմք զամօթ, այլ մանաւանդ ուրա֊խացեալ ցնծամք․ ըստ որում ցուցանէ և յաջորդ բանն՝ զոր ասէ ։

Նշ․ ― ԵՏՈՒՐ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՍՐՏԻՑ ՄԵՐՈՑ ։ Կամի ասել, դու տէր տալով մեզ զլոյս օրինաց և շնորհաց՝ ևս և սուրբ իրաց՝ այնու իսկ ետուր մեզ ուրախ լինել 'ի սիրտս մեր՝ մանաւանդ 'ի պահպանութե̃ օրինաց քոց ։ Ոչ ասէ մեզ կամ մարմնոց մերոց, այլ սրտից մերոց․ զի որպէս լոյսն օրինաց պատշաճի մտաց, սոյնպէս և ուրախութիւնն՝ որ 'ի պահպանութե̃ օրինաց՝ պատշաճի սրտին, ա̃յ կամաց․ վասն այսորիկ զսիրտն դնէ աստ ։

Զայս տուն սաղմոսի սեպհականութեամբ իմն երգեմք 'ի տօնս և 'ի յիշատակս պատուական խաչին ք̃ի ըստ երկուց․ մի՝ հայելով 'ի բառդ "երես", որով իմա֊ցեալ լինի աստ խաչն․ որ այլաբանօրէն եղև երես՝ ա̃յ պատկեր խաչեցելոյն ք̃ի․ յորմէ և ծագեցաւ լոյս հաւատոյ առ ա̃մն յուրախութիւն սրտից նոցա ։ Նոյն և պատկեր և հայելի անճառ սիրոյ սրտի նորա․ որով մինչև 'ի մահ խաչի սիրեաց զմեզ․ և նովին խաչիւ իբր ե֊րեսօք եցոյց մեզ զոր ունէր 'ի սրտի․ ք̃զի որպէս ասէ ծործորեցին 'ի մեկն․ մատթ․ գլ․ ղ̃․ * երեսք հայելի են սրտի ‖։

Նշկորդ (սառնելապէս) հայելով 'ի բաղդ նշանեցաւ. ըստ որում խաչն քո ամենայաղթ որ նշանն նշանեցաւ 'ի մեզ, քո եղև մեզ նշան ծագեալ իբրև լոյս երեսացն քոյ, և նշան զաւակութե՛ ճշմարիտ լուսոյ՝ քո հաւատոյ, և նշան կամ դրօշակ որոշող յանհաւատից, և նշան յաղթօղ դիւաց յարուցելոց 'ի վերայ մեր: Այս նշան օրինակեցաւ յայն ձև՝ որ եդաւ 'ի վ՟ր բարաւորի տանց որդւոյն Իլի, զի մի սատակիչ անդրանկացն մերձեսցի առ նոսա (ելից. ժբ. 7. և 13.) Նաև օրինակեցաւ 'ի նշանն յայն, որ եդաւ 'ի ճակատ երկիւղածացն այնոցիկ՝ որք լային 'ի վերայ մեղաց որդւոցն Իլի, և այնու նշանաւ ապրեցան յերեսաց բարկութեանն այ (եզեկ. թ. 4. և 6.) որոց և 'ի դէպ գայ այն բան զոր ասէ մարգարէն * ետուր երկիւղածաց քոց նշան, ,, զի ապրեսցին յերեսաց աղեղան ||. սաղ. ծթ. 4. Այսու նշանաւ բարոյապէս կնքեալ լինէին նոքա, որք նեղութբ 'ի խաչ հանեն զմարմինս իւրեանց ըստ գրելոյն պօղոսի առ գաղատացիս (ե. 24.) Նաև որք միանգամ զայն ցուցին յանձինս իւրեանց՝ ոչ միայն սփոփեալ գտան, այլև վանեցին զամ փորձութիւնս սատանայի, մարմնոյ և ոգի. և կործանեցին զոռն ախտից. որոց յօրինակ սամփսոն խաչաձև տարածեալ զբազուկս իւր՝ կործանեաց զտուն այլազգեացն. (դատ. ժզ. 25.) Նաև զի խաչն քո երկրպագեմք փայտիւք կազմեցաւ, ճշմարտապէս և լիապէս խաչեալ լինին ընդ քեզ՝ որք հոգւով և մարմնով տանին նեղութեանց վասն քո. Այս ծանուցեալ գուշակութեամբ իմն կինն սարեփթայ ժողովէր երկուս փայտս 'ի նեղութեան իւրում առ 'ի սփոփանս տառապանաց իւրոց. (Գ. թագ. ժէ. 10.) Արդ յայտ արարեալ մարգարէին զնշանին լուսոյ երեսացն այ առ մեզ, առաջի առնէ այժմ և ըղ-լիացուցանել նորա բարեօք զմեզ՝ յասելն.

Է. Ի ՊՏՂՈՅ ՑՈՐԵՆՈՅ՝ ԳԻՆՒՈՅ՝ ՁԻԹՈՅ ԻՒՐԵԱՆՑ ՅՂԱՑԵԱԼ ԼԸ-ՆԱՆ:

Այս բանք յայտ առնեն զամենախնամ բարերարութիւն աստուծոյ, որ յամ ժամանակի տայ մեզ առատաձեռնէ զբարիս, թէ՛ զհոգևորս՝ զորոց ասաց 'ի վերոյ, և թէ՛ զմարմնաւորս՝ զորոց խօսի աստ. հայելով առ հասարակ

առ արդարս և առ ամպարիշտս. ըստ որում գրեալ է՝ թէ * զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց. և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մեղաւորաց ‖. մատթ. Ե. 45: Նոյ զայս առնէ, զի արդարքն վայելեալք 'ի բարիսն այ՝ գոհասցին զնմանէ. և տեսեալ՝ թէ այսչափ բարիս առնէ մարդկան՝ մինչդեռ են յանցաւոր և յապականացու կեանս, այսու ծանիցեն՝ թէ քանի ևս մեծամեծ բարիս համբերձեալ է առնել նոցա յանանց և յանապական կեանսն, և այսու առաւել յորդորեալ՝ ջանասցեն բարւոք ծառայել նմա: Իսկ ամպարիշտք տեսեալ՝ թէ ած ոչ խնայէ 'ի նոցանէ զբարիս իւր՝ զգաստասցին. և ծանուցեալ զգթութիւն նորա՝ դարձցին առ նա: Նոյ յայս միտս ասէ պօղոս. գործ. ժդ. 16. * Ոչ եթէ առանց վկայութեան զինքն
„ եթող բարերարութեամբն տալ յերկնից ձեզ անձրևս,
„ և ժամանակս պտղաբերս՝ լնուլ կերակրովք և ու-
„ րախութեամբ զսիրտս ձեր ‖. այս թէ ած՝ որ կամեցաւ ցուցանել ձեզ զբարերարութիւն իւր՝ անձրևօք, պտղովք, եւն, ոչ առանց դիտաւորութեան արար, և ոչ առանց վախճանի առնէ. այլ զի ծանիջիք զնա, և դարձջիք առ նա, և ծառայեսջիք նմա: Յայսմիկ հայի և

առաջիկայ բանդ, զոր ասէ մարգարէն:

Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ, ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Եթէ զնոսա ասելն՝ զուգապէս առցի ընդ առաջին ասացելոյն, առ մեզ, և սրտից մերոց, կամի ասել, ոչ միայն նշանեցաւ առ մեզ և առ ամենայն լոյս երեսաց քոց, որով լուսաւորեցեր զհոգիս մեր, և ուրախ արարեր զսիրտս մեր. այլ և բարեօք երկրի՝ ցորենով և գինւով լցուցեր զմեզ և զամենեսեան. որպէս զի սոքօք ծանուցեալ զինամս մարդասիրութեան քո՝ ամենեքեան

քեզ ծառայեսցուք:

Բայց եթէ ուրոյն առցի, կարէ մեկնիլ իբրև յանդիմանութիւն ամպարշտաց. որպէս թէ ասէր. որովհետև ամպարիշտք կամեցան ուրախ լինել միայն 'ի ժամկաւոր բարիս, որպիսի են՝ ցորեան, գինի, ձէթ, եւն, զորս համարեցան իւրեանց բարի, դու ևս զայնոսիկ միայն բազմացուցեր 'ի նոսա, և նոքօք լցուցեր զնոսա իբրև

իւրեանց բարեօք:

Զերիս զայսոսիկ յիշելով, այսինքն զցորեան, զգինի, և

զձէթ, տալ խմանալ և զայլ բարիս. զի սոքա են առաւել հասարակ քան զայլս և մնտղարար. մին՝ կարգեալ 'ի յուտել, այն է՝ ցորեանն. միւսն կարգեալ 'ի ըմպել, այն է գինին. և երրորդն ՚ի ձէթն որ իբրև ընդ մէջ համարի, կարգի 'ի դիւրութիւն մարմնոյ:

Խորհրդաբար, պարարտ ցորենով նշանակի աստ ամենասուրբ մարմինն քի, և ուրախարար գինեաւ արիւն նորա. իսկ ձիթով սրբարար շնորհքն, ևս և մեռոնն տր. և զի 'ի պտղոյ սոցա, յն 'ի բարութէ ոչ լցոյց տր զհաւատացեալս իւր, վճկ ասէ. 'ի պտղոյ ցորենոյ, գինւոյ եղ: Դարձեալ ցորենով նշանակի աստ ածաշունչ գիրն, որ 'ի խորհուրդս մտաց և 'ի բերանս վրդց աղացեալ լինի. իսկ գինեաւ նշանակի սէրն այ՝ որ առ բերցուցանէ զհոգիս. սոյնպէս և ձիթով սէր ընկերին, ևս և ողորմութիւն հոգևոր. որովք լնու ած զեկեղեցի իւր: Արդ յետ յայտ առնելոյ մարգարէին զայս ամենայն, առաջի մտացուցանէ այժմ և զայն՝ թէ զինչ հաճելի և ընտրելի իցէ նոքեան և արդարոց, նմին իրի յարէ զկնի և ասէ:

Ը. Ի խաղաղութեան յայս և 'ի սոյն ննջեցայց, և զարթեցայց. զի դու տէր միայն առանձինն յուսով բնակեցուցեր զիս:

Այլին կամի յայտ առնել մարգարէն, թէ ած 'ի տանն մեզ զամ բարի՝ յամի 'ի նոսա զայս դիտէ, և զայս խնդրէ, զի նմա միայն ծառայեսցուք, և ընդ խնամովն նորա հանգիցուք, և նմա միայն մատուսցուք պատարագս արդարութե՝ ունելով զառանձին իմն յոյս, թէ անվրրէպ հատուցանէ մեզ զվարձսն ըստ անսուտ խոստմանն իւրում. վճկ հարկ է մեզ այսպիսի յուսով զուարթագին և յօժարական պաշտել զնա: Իսկ եթէ այլք զայսմանէ անփոյթ եղեալ՝ յայլ ինչ հաճեսցին, և ժմկաւոր բարեօք ևեթ լիանալ կամեսցին, մեք ասէ ոչ հաճեսցուք ը այն. զի այնու ոչ միայն վտանգաւորեմք զմեզ, այլև ոչինչ իւիք գտանեմք զխղղութիւն: Իսկ 'ի կալն մեր 'ի հաճոյս այ, և 'ի գործեն զարդարութի՝ հանգիցուք և անդորրասցուք. 'ի սոյն ակնարկելով ասէ:

Ի խաղաղութեան յայս և 'ի սոյն ննջեցայց, և զարթեցայց: Զայս

բան՝ բառդ * յայս և 'ի սոյն ‖ յարաբերէ նախ զայն ամ՟՝ զոր ցայս վայր ասաց մարգարէն 'ի սաղմոսի աստ, մանաւանդ 'ի համարսն 6. և 7. և ը՟ այսմ կամի ասել. որովհետև այս այսպէս է՝ յայսմ հետէ խաղաղութ՟բ ննջեսցուք և զարթիցուք ։ Որ եթէ ննջելն և զարթնուլն առեալ լիցին յատկապէս, միտ բանին լինի այս. այսուհետև յամի մնասցուք 'ի խաղաղութե՟ թէ 'ի ննջելն, և թէ 'ի զարթնուլն ։ Իսկ եթէ ննջելն և զարթնուլն առեալ լիցին փոխաբերաբար, միտ բանին լինի այս. յայս ամ՟ բարերարութիս ան՟ վայելեալ, հանգիցուք 'ի խաղաղութե՟, և զարթիցուք, քո՟ կայցուք արթուն և զուարթուն ։

Եւ ըստ այսմ բառդ * յայս և 'ի սոյն ‖ դնի փ՟նկ բառիս միանգամայն կամ 'ի միասին. յոր միտ յեբր՟. դնի եախտաւ ծո՟ 'ի միասին. զնոյն նշանակութիւն ունի և յունականն. զի բազում ուրեք՝ ուր 'ի մեզ դնի 'ի միասին՝ առ նոսա առի 'ի նոյն, կամ յայս և 'ի սոյն. տես և 'ի սաղ. ժը՟. 9 ։

Երկ՟դ. յարաբերէ զհաճոյս կամացն ա՟յ կամ զգործս կենդանիս, զորս կոչեաց մարգարէն պատարագ արդարութե՟. զի յայսպիսի գործս ևեթ հանգչի արդարն, և ոչ 'ի մեռեալս. որ՟ առնեն ամպարիշտք ։ Յորոյ օրինակ առի՝ թէ աղաւնին ոչ եգիտ հանգիստ ոտից իւրոց. զի թէպէտ կային՝ յորս կարէր նստիլ, այլ մեռեալ մարմինք էին, յորս ոչ կամէր հանգչիլ. իսկ ագռաւն եգիտ և նստաւ 'ի մեռեալսն ։ Եթէ արդարն ոչ գտցէ հանգիստ, անհանգիստ առնելով զինքն՝ հանգչի ։ Եթէ վաստակեսցի 'ի կենդանի գործս՝ հանգիստ տայ անձին այլով կենդանի գործով ։ Պարբերինն աշխատեալ 'ի գործս կռանաց՝ այլով կռանահարութեամբ թեթևանայ յաշխատանացն, ըստ որում յանպէտս բաղխէ կռանաւ զսալն. այսպէս առնէ և արդարն, և յամի խաղաղութ՟բ կայ և հանգչի 'ի կամս ա՟յ, և 'ի գործս հաճոյս կամաց նորա ։ * Օ՟ի թէ
„ որք մարդկան ըստ կամաց հաճոյանան ծ՟ոյք՝ անհոգ
„ և անլլուկ իւրեանց ստահան կեանս ( տե՛ս մեծն
„ խոսրով 'ի մեկն. ժամագր. երես. 66. ) ապա քա-
„ նի աներկիւղ և անհոգ և ազատ կեանս նոյա խմա-
„ նայցես՝ որ մարդասիրեն ա՟յ ըստ կամաց հաճոյ լինին,

(և հանգչիմ 'ի հաձոյս նորա)||։

Արդ՝ յարաբերէ զյաջորդ բանն, զայն՝ զոր ասէ, * զի „ դու տէր միայն յուսով || և. որով և միտ բանին լինի այս, որովհետև դու տէր խոստմամբ մեծամեծ բարեաց յուսացուցեր զմեզ, մեք ևս յայս և 'ի սոյն յոյս խոստման քո հանգիցուք խաղաղութեամբ։

Մարթ է ասել՝ թէ հայի նաև 'ի նոյն ինքն յա՟ծ. զի ո՟րպ ասէ լուսաւորիչն մեր 'ի յաձախ. ձառ. ա. նա ինքն * հանգստարար նաւահանգիստ է ձգնողաց 'ի „ խնամս սուրբ սիրոյն իւրոյ ||։

Բարոյապէս, այսոքիկ բանք հայեն 'ի բարի խիղձ մըտաց, յորում հանգչի արդար հոգի. զի ոչ ինչ է 'ի հոգին քաղցրագոյն, և ոչ ինչ 'ի սրտի անուշագոյն, ոչ ինչ 'ի յերկրի անդորրագոյն, և ոչ ինչ 'ի մեծութիւն ապահովագոյն՝ քան զբարի խիղձ մտաց։ Սա ապաբակ է օրհնութեան և դրախտ փափկութեան, սրահ ա՟յ, և տաձար սողոմոնեան. ձեմարան այցելութեան տ՟ն, և տեղի ամենասուրբ տաճարակին, ո՟ր հոգւոյն ս՟բյ. (Երգ. Դ. 12.) Սա 'ի կորուստ ընչից ոչ տրտմի, 'ի նախատինս բանից ոչ խռովի, 'ի փորձութիւնս հոգւոյ ոչ լքանի, և 'ի տանջանս մարմնոյ ոչ քստմնի։ Ո խորդ և պատահեսցեն իրք, եթէ յաջողութեամբ և եթէ ձախորդութե՟ք, ոչ այլայլի։ Եթէ տէգք տեղասցեն որպէս անձրև, եթէ երկիր սասանեսցի, եթէ երկինք պատառեսցին, եթէ ալիք ծովու բարձրասցին, բարի խիղձ մտաց աներկիւղ կայ, անկասկած մնայ, յապահովի գնայ։ Սատանայ զարհուրեցուսցէ, և յինքն ձգեսցէ, մարմինն գրգռեսցէ. նա անշարժ մնայ հանգիստ և հանդարտ. և յայլ ա՟մ դիպուածս՝ անխռով և անդորր։ Սա է՝ որ ցնծալից գոչէ. * խաղաղութե՟բ „ յայս և 'ի սոյն ննջեցից և զարթեայց, հանգեայց „ և անդորրացայց ||. առաջի ունելով զայս խոստմանցն ա՟յ. ըստ որում ասի. սաղ. Դ. 12. * ուրախ լի„ ցին ա՟մենքն, որք յուսացեալ են 'ի քեզ ||. զոր և 'ի մէջ մատուցանէ մարգարէն ասելով։

Զի դու տէր միայն առանձինն յուսով բնակեցուցեր զմեզ։

Բառդ յոյս՝ զնի աստ խելամտութեամբ ձևով ըստ ձարտասանից՝ փոխ այնր՝ յորմէ պատձառի յոյս, որ փոխանակ խոստմանցն աստուծոյ, որով խոստացեալ է մեզ զինքն և

գնուրն ասելով. * Ես վերակացու եղէց քեզ. և վարձք ,, քո բազում եղիցին յոյժ ‖. Ծնն. ԺԵ. 1 ։ Եւ ըստ այսմ կամի ասել, խաղաղութ՟ն հանգիցուք՝ զի դու տէր առ-անձին խոստմամբ, այսինքն յատուկ և ճշմարիտ խոստ-մամբ անչափական բարեաց, և երանական կենաց հաստատեցեր զյոյս մեր. և արարեր, զի վ՟ն այսպիսի յուսոյ աներկեւան բնակեսցուք 'ի խաղաղութեան ընդ խնամով քով. և 'ի նմին խաղաղութեան ննջեսցուք և զարթիցուք, կ՟մ կացցուք խաղաղութեամբ 'ի հաւատա-րիմ ծառայութեան քում առանց կասկածելոյ երբէք զխոստմանց քոց ։

Այս յոյս 'ի հանապազորդելն՝ լինի մարդոյ սիւն ամ-պոյ 'ի տունջեան՝ ո՟ր 'ի կենդանութեան, և սիւն հրոյ 'ի գիշերի՝ ո՟ր 'ի ժամու մահուան. ( Ելից. ԺԳ. 21 ։ ) Իսկ բառդ միայն՝ որ դնի 'ի մերում թարգմանութեան՝ հայի յառանձին խոստումն ա՟յ իբրև յայն՝ որ բաւա-կան իցէ 'ի խաղաղութեան ննջելոյ. որպէս թէ ասէր. բաւական եղև մեզ միայն յատուկ խոստումն քո առ 'ի հանգչիլ մեզ խաղաղութեամբ. զի դու տէր այդու խոստմամբդ յապահովս բնակեցուցեր զմեզ 'ի խա-ղաղութեան. կամ թէ դու քոյին յուսովդ միայն՝ բնակե-ցուցեր զմեզ 'ի խաղաղութեան ։

Այս սաղմոս տուն առ տուն այլաբանօրէն մեկնի 'ի դէմս սուրբ եկեղեցւոյ. իբր զի ( ա՟ ) Եկեղեցի ո՟ք 'ի սկզբան անտ, և արդ ևս բազում հալածանս կրեալ 'ի հե-թանոսաց և 'ի հերետիկոսաց՝ կարդաց առ ք՟ս, և 'ի կարդալ իւրումն լուաւ նմա ք՟ս արդարութեամբ. զի խոս-տացեալ էր մինչև 'ի կատարած պահել զնա անարատ. Ես և անդորր արար նմա, ո՟ր ընդարձակեաց զնա 'ի նե-ղութեան անդ՝ բազմացուցանելով զհաւատացեալս. և զի հալածանքն ոչ դադարէին, եկեղեցին ևս ոչ դա-դարէր յաղաղակելոյ առ ք՟ս, ողորմեա ինձ, և լուր աղօթից իմոց ։ Եւ առ հալածիչսն դարձուցեալ ըզ-բանսն՝ ասէ. ( բ՟ ) որդիք մարդկան՝ մինչև յերբ խըս-տացեալ էք և ծանրացեալ 'ի սիրտս ձեր մոլորութեամբ. ընդէ՞ր, ով հեթանոսք՝ սիրէք զնանրութիւն պաշտաման կռոց՝ և ատէք զօր կրօնս մեր. և դուք հերետիկոսք զի խնդրէք հաստատել զստութիւն կարծեաց ձերոց ։ ( գ՟ ) ծանիրուք, զի 'ի զուր են ջանք ձեր. վասն զի որ

արար զիս իւր՝ սքանչելիս արար ինձ սրբոյ իւրում. զի 'ի կամին ձեր նուաստացուցանել զիս, և բառնալ և փոխել զհաւատս՝ նա պէսպէս սքանչելեօք աճեցոյց զիս. և առաւել ևս հաստատեաց զհաւատս իմ. և միշտ լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա, և փրկեսցէ զիս, և օգնեսցէ։ Այլ ապա դարձուցեալ զբանն առ հաւատացեալսն՝ ասէ. (Ե) Մի հաւանիք ստութեան նոցա, այլ արհամարհեցէք զսուտ կրօնս նոցա, և զչար աղանդս նոցին. և կացեալ հաստատուն 'ի ճշմարիտ հաւատս ձեր, ըստ վճռութե ճշմարիտ հաւատոյ ձերոյ վարեսջիք զկեանս՝ պարապելով յուղղութիւն վարուց, 'ի մեռուցումն ախտից, 'ի ճնշումն մարմնոյ, յարհամարհութիւն ընչից, 'ի մատուցումն ընծայից բարերարութեանց, ևս և 'ի քննութիւն խորհրդոց սրտից ձերոց զմ̃ ածուրս. և զոր ինչ խօսիք 'ի սիրտս ձեր անհամաձայն վճռութեան հաւատոյ ձերոյ՝ յանկողինս ձեր զղջացարուք, ի յատենի խոստովանութեան. (ուր երբ յանկողնի հանգչի խիղճ մտաց)։ (Զ) Այլ ջանացարուք գործովք ցուցանել զհաւատս ձեր. և որպէս զպատարագս արդարութեան մատուցէք Տեառն զգործս ձեր՝ յուսացեալ 'ի նա։ (Է) Այլ եթէ ասասցեն հերետիկոսք և անհաւատք, թէ ո՞ր ցուցեալ է ձեզ, և կամ ո՞վ է յայտնեալ, թէ այդպիսեօք ունիք շահել զբարութիւն ինչ և անմահ վարձս, դուք մի՛ անսասջիք նոցա. զի լոյս հաւատոցն քոյ, և սուրբ հոգի երեսաց քոյ ծագեալ է առ մեզ, և ուսուցանէ մեզ՝ թէ զի՞նչ պարտ է մեզ առնել, և զոր վարձս ընդունիլ. ևս և զօրութիւն նշանի նորա, այն է զօրութիւն սրբոյ խաչին տուեալ է մեզ 'ի պահպանել զմեզ, և յուրախ առնել զսիրտս մեր՝ 'ի խորհելն անդ՝ թէ տ̃րն մեր վասն սիրոյ մերոյ մեռեալ 'ի վերայ խաչին՝ ազատեաց զմեզ 'ի ձեռաց սատանայի և 'ի դժոխոց։ Այլ ոչ այսչափ միայն, (Ը) այլ և գերագոյն պարգևօք լիացոյց զմեզ, և խորհրդովք եկեղեցւոյ զօրացոյց զմեզ։ (Թ) Վասն որոյ ոչ ևս մնայ ումեք հաւատացելոյ տարակուսիլ ինչ, այլ բոլորովին ապաւինեալ 'ի բարերարութիւնն քոյ՝ խաղաղութեամբ յայս և 'ի սոյն յոյս եկեղեցւոյ նորա հանգչիլ, և 'ի սմին մեռանիլ, և յառնել 'ի կեանս յաւիտենից։

Համբառնացին պարզ ըստ հոգևորին մեկնեալ զայս

սաղմոս՝ գրէ այսպէս. (ա̅) Հոգի առաքինութեան տեսեալ զինքն 'ի նեղութիւնս փորձութե̃ չարին՝ 'ի կարդալ իւրում առ տէր գտանէ զանդորրութի̃. այլ հայեցեալ թէ ստորին կամքն, և կամ արտաքին մարդն, և որդիք նորա՝ ք̃ս զգայարանք՝ ծանրացեալ բերին 'ի նանրութիւնս, որով և խռովեն զնա, սկսանի խօսիլ ընդ նոսա յանդիմանութե̃. (բ) ով որդիք արտաքին և չնչաւոր մարդոյս՝ մինչև յերբ էք ծանրասիրտք, և յօժարիք 'ի սնոտիս, և կամիք սուտ յորդորանօք զիս ևս ընդ ձեզ ծանրացուցանել: (գ) ո՞չ գիտէք, զի ա̃ծ արար զիս տէր, և եցոյց ինձ զաքանչելիս՝ թողութե̃ մեղաց: (դ) Ապա մի ևս յօժարիք 'ի մեղանչել, և զիս 'ի նոյն յօժարեցուցանել, այլ մինչդ̃ բարկութե̃ իմն 'ի բաց վանեցէք զայն: Ու զոր ինչ ցարդ խորհէիք 'ի սնոտիս, այսուհետև ատրջացարուք և զղջացարուք յանկողինս խղճի մըտաց, ևս և յանկողնի աստի կենաց, ք̃ս ԴԻ. (զի ԴՍ է իբր անկողին մարմնոյ և զգայութեց. քզի 'ի նմա կամին հանգչիլ, և 'ի նմա իսկ թաղին): (ե) Ու այս չէ բաւական, այլև պիտոյ է ձեզ մատուցանել աստուծոյ պատարագս արդարութե̃, առնելով զայն՝ առ որ ստեղծեալ էք. բերանդ՝ յօրհնաբանել զա̃ծ, և ո՛չ 'ի բամբասել, կամ յանիծանել. ականջքդ 'ի լսել զբանն ա̃յ, և ոչ յունկնդրութի̃ չարի. աչքդ 'ի զննել զգործսն ա̃յ, և ո՛չ 'ի հայիլ յարատ. ձեռքդ 'ի համբառնալ յաղօթս, և ոչ 'ի շօշափումն գարշութե̃. սոյնպէս և այլն՝ որ 'ի կարգի. յոյս կալեալ վասն ա̃մի այսուցիկ ընդունիլ վարձս 'ի տ̃նէ: (զ) Իսկ զգայարանքն ասեն. մեք զանկալեալն զայն՝ զաներևոյթ բարին ոչ ըմբռնեմք. ապա պարտ է զայնպիսի բարիս ցուցանել մեզ, յորս յօժարելով՝ 'ի մերոցս հրաժարեսցուք, 'ի տեսանելոյ զանարժանս, 'ի լսելոյ զսնոտիս, 'ի խօսելոյ զչարիս, եւ այլն:
Յայսցանէ շարժեալ հոգւոյն՝ ասէ առ ա̃ծ, (է) Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր մեզ վայելել զցորեան ա̃ծային քո բանից, և զգինի սիրոյդ, և զձէթ շնորհացդ, որք և լցուցանեն զմեզ բարեօք. և ուրախ առնելով զսիրտս մեր յայտնի ցուցանեն մեզ՝ թէ քանի մեծ ուրախութի̃ պատրաստեալ է մեզ յերկինս, մինչդ̃ յորժամ տեսցուք զերեսս քո: Իսկ զգայութիւ̃քս իմ ոչ ըմբռնելով զայսպիսիս՝ կամին ա-

*պատամբեցուցանել զիս 'ի քէն ։ Բայց (ը) չէ ինձ արժան անաղնոցա, այլ՝ զօրացայց և նուաճեցից զնոսին. և ունելով զայս ժառանգելոց զարքայութիւն քո՝ յայս և 'ի սոյն յոյս հանգեայց խաղաղութք ։ Եւ եթէ ննջեցից մեղօք, զարթեայց վաղվաղակի. զի դու տէր՝ որ բնակեցուցեր զիս 'ի մարմնի, ետուր և զայս թողութե առանձին իմն խնամով, 'ի մարդանալդ և 'ի հեղուլդ զարիւն քո վասն իմ. և ես այսու յուսով հաստատեալ՝ գտից զքեզ յերկինս, և վայելեցից 'ի խաղաղութեան քումյաւիտեան ։*

## ՍԱՂՄՈՍ. Ե.

*Պաղատանք առ ած՝ վասն ընդունելութե աղօթից. միանգամայն և ցոյց արհամարհութե անօրինաց և չարութեան նոցա. Եւ և յայտարարութիւն ցնծութե արդարոց, և պարծանաց սիրելեաց աստուծոյ ։*

Ի կատարած, վասն ժառանգաւորին. սաղմոս 'ի Դաւթի ։

1 Բանից իմոց ունկն դիր տէր. և 'ի ձայն աղաղակի իմ ։
2 Նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց թգր իմ և ած իմ ։ 3
Առ քեզ աղաչեմ տէր. ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում.
ընդ առաւօտս պատրաստ եղէց յանդիման լինել առ քեզ ։ 4 Ոչ
եթէ դու ած կամիս զանօրէնութիւն, ոչ բնակեսցեն առ քեզ չարք. մի
անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց ։ 5 Ատեցեր զայնոսիկ՝
որ գործեն զանօրէնութիւն. կորուսանես զամենեսեան՝ որք խօ-
սին սուտ ։ 6 Զայր արիւնահեղ և զնենգաւոր՝ պիղծ առ-
նես դու տէր. այլ ես ըստ բազում ողորմութե քում մտից 'ի
տուն քո, երկիրպագից 'ի տաճար սբ քո երկիւղիւ քով ։ 7 Տէր
առաջնորդեա՛ ինձ յարդարութե քում վասն թշնամեաց իմոց. ու-
ղիղ արա զճանապարհս իմ առաջի քո ։ 8 Զի ոչ գոյ 'ի բե-
րան նոցա ճշմարտութե. և սիրտք նոցա նանրացեալ են ։ 9 Գե-
րեզման բաց է կոկորդ նոցա. լեզուօք իւրեանց նենգա-
ւորք եղեն ։ 10 Դատեա՛ զնոսա ած, զի անկցին 'ի խորհրդոց
իւրեանց. ըստ բազում ամպարշտութե նոցա մերժեա՛ զնոսա, զի
դառնացուցին զքեզ ։ 11 Ուրախ լիցին ամենեքեան՝ որ յուսա-

ցեալ են 'ի քեզ · յաւիտեան ցնծասցեն , և բնակեսցես դու 'ի նոսա ։ 12 Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան քո , զի օրհնեսցես դու զարդարն · Տէր որպէս զինու հաճութեան պսակեսցես զմեզ ։

## ՎԵՐՆԱԳԻՐ ·

Ի կատարած , վասն ժառանգաւորին , սաղմոս 'ի դաւիթ ։

ՅԱՅՍՄ ՎԵՐՆԱԳՐԻ ՓՈԽԱնակ բառս ժառանգաւոր՝ յեբր · գնի նէխիլօթ · որ յայլեայլ թարգմանութիւնս այլեայլ օրինակաւ 'ի մէջ բերի ։ Եւ նախ 'ի թարգմանութեան եօթանասնից և լատինացւոց գնի · * Ի կատարած՝ վասն այնր , որ մնանէ „ 'ի ժառանգութիւն ‖ ։ Սոյն բառս այնր՝ իգականապէս գնի առ նոսա ։ Ի թարգմանութե սիւմաքոսի և ակիւղասայ և հերոնիմոսի , որպէս և 'ի սաղմոս ինչ մեր՝ գնի յոգնակի · * վասն ժառանգուէց , կմ՛ վս ժառանգաց ‖ · և 'ի քանի մի ձեռագիրս մեր ես՝ գնի · * վասն վիճակելոց ։ Ի թարգմանութեան քաղդէացւոց գնի՝ * Սաղ„ մոս վասն դասու ‖ ։ Եւ 'ի թարգմանութիս ինչ՝ * վս „ ժողովոց ‖ ։ Բազում ռաբբէք հրէից ասեն , թէ բառս նէխիլօթ՝ նշանակէ աստ զայնպիսի նուագարան , որ իցէ իբրև զքնար · և այս կարէ ցուցանիլ անտի , զի ա՟ · թագ · Ժ · 5 · և եսայ · Ե · 12 · յորս 'ի մեզ գնի քնար , առ եբրայեցիս գնի նէխիլօթ ։ Եւ յայս նշանակութիւն հայելով ոմանք 'ի նորոց զայս վերնագիր եբրայեցւոց թարգմանեն այսպէս · * Սաղմոս 'ի դաւիթ՝ զոր պարտ է ասել վարժապետի հարկանողաց զնէխիլօթ ‖ ։ Բայց զանզի եօթանասունք , և այլ ևս բազում երևելի թարգմանիչք , որք քաջ տեղեակ էին լեզուին եբրայեցւոց , թարգմանեցին զայս ըստ նշանակութեան ժառանգաւորի , արժան է առաւել նց՟ կարծեաց զհետ գնալ՝ քան այլոց ։

Իսկ թէ ժառանգաւոր կամ ժառանգութիւն ասելով զինչ պարտ իցէ աստ իմանալ , տարակոյս կայ առաջի , և կարծիք բազում ։ Այլ զի մի լիցի մեզ յերկու-

նայնս և 'ի տարապարտս յերկար դեգերիլ, զՀինգ կարծիս ևեթ՝ որք հաւանական երևին, դիցուք առաջի:

Առաջին կարծիքն է, թէ բառս * ժառանգաւոր ||, որ և ասի վիճակաւոր կամ վիճակեալ, և յունական բառիւ գլէր կամ կղերիկոս, նշանակէ աստ զպաշտօնեայ տաճարին կամ եկեղեցւոյ. որպէս զայն, որ մասնաւորապէս կարգեալ է ասել զսաղմոս նուագարանօք 'ի մէջ տաճարին. զի այսպիսիքս ժառանգաւորք կոչին, ևս և վիճակաւորք: Եւ զի յաւելեալ լինի 'ի մեզ 'ի վերջոյ տառս՝ն, զի ոչ ասի՝ ժառանգաւորի, այլ՝ ժառանգաւորին, այսու որոշի առ մասնաւոր անձն, որպէս առ գլխաւորն կամ առ դասապետն ժառանգաւորաց, որպէս սաղմոսանուագաց. որով և միտ բանին լինի այս: Սաղմոս ազդեալ 'ի դաւիթ՝ զոր պարտ է ասել ժառանգաւորի տաճարին, կամ դասապետի սաղմոսաց 'ի դիմաց ժողովրդեան՝ առ 'ի յանդիման առնել զհանգամանս արդարոց և մեղաւորաց: Իսկ վասն բառիս 'ի կատարած տես 'ի ներած. գլ. Թ. և 'ի սաղ. Դ:

Երկրորդ կարծիքն է, թէ բառս ժառանգաւոր՝ վերաբերի առ դաւիթ, հայելով 'ի ժառանգութիւն թագաւորութեանն իւր: Զորմէ գիտելի է, զի յետ թագաւորելոյն սաւուղայ 'ի վերայ իւր, իբրև մերժեցաւ նա յԱստուծոյ, և անկաւ 'ի ժառանգութենէ այնր թագաւորութեան, դաւիթ օծաւ թագաւոր իւր. և թէպէտ յայնժամ ոչ եկաց թագաւոր, այլ յետ բազում ամաց, բայց կացուցաւ ժառանգ առ իրն, որպէս առ այն թագաւորութիւն. զի ստացաւ իրաւունս ժառանգելոյ զայն: Եւ զի գիտէր սաւուղ, թէ դաւիթ ունի ժառանգել զայն թագաւորութիւն՝ ջանայր սպանանել զնա. վասն որոյ և ըստ բազում ամս հալածէր զնա: Եւ ապա իբրև եմուտ դաւիթ 'ի ժառանգութիւն թագաւորութեան, և կամ թերևս նախ քան զմտանելն յայն՝ ասաց զայս սաղմոս, ձևացուցեալ զանձն իւր այնպէս, որպէս թէ դեռևս 'ի հալածանս իցէ: Եւ ըստ այսմ միտ բանի վերնագրիս լինի այս: Սաղմոս ասացեալ 'ի դաւթայ 'ի լինելն իւր ժառանգաւոր թագաւորութեան իւր, երգելի 'ի կատարած, որպէս իբրև երգ ամենակատար, կամ իբրև երգ յաղթողական, կամ երգելի յայնմանէ՝ որ է կատարած, այս է գլուխ դասու երգեցողաց. կամ ըստ յարմարական մեկնութեան երգելի

վ՟ա վերջանալոյ հալածմանցն սաւուղայ , կամ յորժամ
վերջացաւ այն հալածանք :

Հնար է եւ ասել, թէ այս հայի եւ յայն ժառանգութի , որ եղեւ յետ հալածմանն աբեսաղոմայ . զի յայտ է թէ 'ի թ̃գրելն աբեսաղոմայ 'ի վ՟ր իւր՝ եւ 'ի հալածել նորա զդաւիթ , ճշմարիտ ժառանգաւորն թ̃գրու̃ն ոչ էր աբեսաղոմ, այլ՝ դաւիթ : Եւ թէպէտ յայնժամ զրկեալ երեւէր դաւիթ , բայց ունէր զիրաւունս ժառանգելոյ . եւ յորժամ յետ մահուն աբեսաղոմայ վերստին եմուտ 'ի ժառանգութիւն այնր թ̃գրու̃ն , եւ նուաճեաց եւս եւ զապստամբութիւն սաբէի որդւոյ բոքորայ , ( Բ . թագ . Ի . ) կրկին հանդիսացաւ ժառանգաւոր լինելն նորա : Եւ հաւանական երեւի , թէ յայնժամ ասաց զայս սաղմոս , որպէս եւ զերրորդն եւ զչ̃ն : Եւ ըստ այսմ՝ յասելն աստ 'ի կատարած , ըստ յարմարութեան կարէ նշանակել , 'ի կատարել՝ զ̃ի 'ի վերջանալ հալածմանցն աբեսաղոմայ եւ ապստամբութեան սաբէի :

Երրորդ կարծիքն է , թէ բառս ժառանգաւոր՝ կամ վիճակեալ , նշանակէ աստ զժողովուրդն ա̃յ , որ է եկեղեցի ա̃յ՝ թէ յօրինակի անդ՝ եւ թէ 'ի ճշմարտութեանն , զ̃ի՝ թէ 'ի հինն , որ օրինակ էր նորոյս , եւ թէ 'ի նորն՝ որ եղեւ կատարումն հնոյն : Ուստի գիտել արժան է , զի եկեղեցի ա̃յ թէպէտեւ սկսաւ յադամայ , բայց որոշակի կարգիլ նորա ժառանգաւոր՝ սկսաւ յաբրահամէ , յորժամ աստուած կոչեաց զնա՝ ելանել յերկրէ եւ յազգէ իւրմէ , եւ գնալ յերկիր՝ զոր ցուցէ . որով կամեցաւ ա̃ծ կազմել որոշ իւր ժ̃ղվրդ սեպհական . եւ յայս իսկ օրինակ ետ զորոշումն իսահակայ յիսմայելէ . ոչ զի մերժեաց զիսմայէլ , այլ զի կացոյց այնու զիսահակ հարազատ ժառանգ աբրահամու՝ եւ ժառանգաւոր ուխտեացն :

Եւ զայս խ̃նդ յայտնեաց սառա յայն բան , զի տեսեալ նորա՝ թէ իսմայէլ որդին ագարայ խաղայր կամ ոգորէր ընդ իսահակայ , ասաց ցաբրահամ . * 'Ի բաց հան զաղա-
,, խինդ եւ զորդի դորա , զի մի ժառանգեսցէ որդի ա-
,, ղախնոյն ընդ որդւոյ իմում իսահակայ ‖ . Ծնն . ի̃ա .
10 . վասն զի ծանեաւ սառա , թէ այն խաղ է գուշակ հալածելոյ զիսահակ 'ի ժառանգութենէ . որպէս մեկնէ պ̃ղն

պօղոս · գաղ · դ · 29 ։ Եւ թէպէտ խիստ թուեցաւ աբրահամու մեկնիլն իսմայէլի, բայց ասաց նմ՟ աստուած · * մի՛ ինչ խիստ թուեսցի առաջի քո վասն մանկանն և
,, վասն աղախնոյն · զա՟մ՝ որ զինչ ասիցէ քեզ սառա,
,, լուր ձայնի նորա, զի իսահակաւ կոչեսցի քեզ զա֊
,, ւակ ॥ · ծնն · իա · 12 · ո՟րպ թէ ասէր, իսահակ եղի֊
ցի քո ժառանգ, և ոչ իսմայէլ ։

Ուստի ասի 'ի գլ · իե · 5 · թէ * ետ աբրահամ զա՟մ
,, ինչս իւր իսահակայ որդւոյ իւրում ( իբրև այնմ, որ
,, էր սեպհական ժառանգ ). և որդւոց հարճիցն իւ֊
,, րոց՝ որք էին աբրահամու, ( ոչ արար այսպէս, այլ )
,, ետ պարգևս ( միայն ), և արձակեաց զնոսա յիսահա֊
,, կայ յորդւոյ իւրոյ ॥ ։ Եւ յայսմ մարմնաւոր ժառանգութեան՝ որոշակի կացուցաւ իսահակ հանդերձ ծընընդովք իւրովք հոգևոր ժառանգ աստուծոյ, զի՟ որոշեցաւ ա՟մ ծննդովք իւրովք լինել աստուծոյ՝ առ 'ի ժառանգել զա՟ծ և ժառանգիլ յա՟յ · կամ կարգեցաւ լինել որոշեալ ժողովուրդ ա՟յ · որպէս յայտ է 'ի ծնն · իը · 18 ։ Ուստի և ժողովուրդն՝ որ յիսահակայ, կոչեցաւ ժողովուրդ ա՟յ, կամ եկեղեցի ա՟յ · եւս և ժառանգ՝ կի՟մ ժառանգութի՟ ա՟յ · ո՟րպ է տեսանել 'ի ա՟ · թագ · իգ · 19 ։ դ · թագ · ը · 15, 53 ։ սաղ · հը · 1 ։ երեմ · բ · 7 ։ ժբ · 7 · և 8 ։ եսթեր ժգ · 15 · և յայլ բազում տեղիս ։

Արդ՝ այս եկեղեցի թէպէտև յայնժամ կացուցաւ ժառանգ, բայց ոչ յիրն, այլ՝ առ իրն · զի դեռևս իբրև տղայ էր՝ և իբրև ծառայ · և էր ը՟ դաստիարակաւ · զի՟ 'ի ներքոյ պէսպէս ձևոց և արարողութե՟ց ։ Իսկ նոր եկեղեցիս եղև Քրիստոսիւ որդի և ժառանգ աստուծոյ հասեալ 'ի չափ հասակի · զի՟ ժառանգ կատարեալ 'ի յիրն 'ի ք՟ս՝ միաւորելով ընդ նմա ։ Եւ զայսմանէ գեղեցիկ գրէ պօղոս · գաղ · դ · 1 = 9 ։ և հռոմ · ը · 15 = 17 ։ և եփես · դ · 13 ։ և այլուր ։ Եւ 'ի գրեն առ նոյն գաղ · 'ի նոյն գլ · դ · ցուցանէ՝ թէ նոր եկեղեցիս է ժառանգ և որդի ըստ աւետեացն սահակայ · * Այլ մեք ասէ եղբարք ըստ սահակայ աւետեացն՝ որդիք եմք ॥ · և զկնի ասէ · * վ՟ոյ եղբարք չեմք որդի աղախնոյն, այլ՝ ազատին, ազատութեամբն՝ որով ազատեցոյց զմեզ ք՟ս ॥ ։ Իսկ ք՟ս ազատելովն զմեզ՝ ոչ միայն արար իւր ժառանգաւոր, այլև ինքն իսկ ժառանգեաց ըզ֊

մեզ. ըստ որում ասէ մարգարէն. * Դու ժառանգեսցես զա՟մ հեթանոսս ‖. սաղ. ձա՟. 8: Եւ յայս միտս և եկեղեցին կոչի ժառանգութի՟ այ՟. ըստ որում ասէ լամբ. սաղ. հը՟. * Ժառանգութիւն է այ՟ ընդհանրական եկեղեցի, զոր գնեաց քս՟ պատուական արեամբն

իւրով ‖:

Արդ՝ որպէս ասեն բզմ՟ մեկնիչք, այս սաղմոս վս՟ այսր ժառանգաւորի երևի ասացեալ, յս՟ վս՟ ոք եկեղեցւոյ, նկատելով զայն՝ թէ՛ ՚ի նորն, և թէ ՚ի հինն: Եւ թէ ՚ի հինն նկատեսցի, բառս ՚ի կատարած՝ հոգևորապէս հայի ՚ի նոր եկեղեցին, որ եղև կատարումն հնոյն. զի հինն առ այս կարգեալ էր և առ այս հայէր՝ իբրև ՚ի կատարիչ իւր, կամ իբր ՚ի փոխման իւր: Իսկ եթէ ՚ի նորն նկատեսցի, բառս ՚ի կատարած՝ հայի ՚ի քս՟, որ եղև կատարումն օրի՟, և լրումն եկեղեցւոյ: Եւ ըստ այսմ՝ միտ բանի վերնագրիս առաջի դնի այսպէս. * Սաղմոս ՚ի դաւիթ՝ ասացեալ վասն եկեղեցւոյ՝ հայելով ՚ի կատարած նորա, յս՟ ՚ի քս՟ ‖: Կամ որ նոյն է, սաղմոս ՚ի դաւիթ՝ որ ասի ՚ի դիմաց եկեղեցւոյ առ քս՟: Իսկ թէ բանք սաղմոսիս յարմարին եկեղեցւոյ՝ յայտ է, զի ՚ի համարս ինչ աղաչէ զա՟ծ վասն անդամոց իւրոց, և ՚ի համարս ինչ դատապարտէ զմեղս անօրինաց: Վասն զի եկեղեցին գոլով նման աղաւնոյ՝ ըստ անմեղութեան աղաւնոյ անարգէ զմեղս, և ըստ պէսպէս կարօտութե՟ անդամոց իւրոց հանապազ աղաչէ և

մինչ աղօթիւք և պաղատանօք առ աստուած:

Չորրորդ կարծիքն է, թէ աստ բառս ժառանգաւոր՝ վերաբերի առ ո՛ և իցէ արդար մարդ. կամ որ նոյն է, առ իւրաքանչիւր առողջ անդամ եկեղեցւոյ. զի այսպիսիս է ժառանգաւոր աստուծոյ՝ թէ՛ աստ ՚ի ձեռն շնորհաց, և թէ ՚ի կատարած կենաց ՚ի ձեռն փառաց: Այս կարծիք ևս է հաւանական. և գրեթէ նոյն է ընդ նախընթացին, բայց այսու միայն տարբերի՝ զի այն դնի ՚ի հասարակի վասն ը՟հանուր եկեղեցւոյ. իսկ այս ՚ի մասնաւորի վասն իւրաքանչիւր կենդանի և առողջ անդամոց եկեղեցւոյ: Եւ որպէս յայտնի տեսանի, բանք սաղմոսին առաւելապէս ՚ի սոյն հային. զի այնպէս առաջի դնին, որպէս թէ արդար ոք կացեալ առաջի ներկայութեանն այ՟՝ պաղատի առ նա առանձինն, ասե-

լի ցուցանելով զչար գործս անօրինաց, և ցանկալի՝ զբարի գործս արդարոց:

Հինգերորդ կարծիքն է, թէ բառս ժառանգաւոր՝ նշանակէ աստ զմեսիայն, որ նախ՝ի յաւիտենից ըստ առումն՝ եղև ժառանգ ածութեանն, ծնանելով՝ի Հօրէ ածութբ. և ապա՝ի ժմկի ևս ըստ որում մարդ՝ եղև ժառանգ ամի, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի. (եբր. ա. 2): Իսկ ըստ այսմ կարծեաց՝ բառս՝ի կատարած՝ Հոգևորապէս առեալ՝ կրկնակի կարէ նշանակել աստ. մի՝ փինկ կատարածի կամ վախճանի աւուրց, ոյ փոխանակ ժամանակին՝ յորում երևեցաւ մեսիայն. որով միտ բանին լինի այս. * Սաղմոս վասն մեսիային, որ գալոց է՝ի վախճան ժմկի ‖ . ըստ այնմ. * ՝ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն, զոր եդ ժառանգ ամի, որով և զյաւիտեանս արար ‖ . եբր. ա. 2: Երկրորդ՝ փինկ յաւիտենականութե. որպէս թէ ասէր. Սաղմոս վասն մեսիային, որ է ժառանգ՝ի յաւիտեան: Իսկ թէ բանք սաղմոսիս զիարդ պատշաճին քնի՝ չէ պարտ տարակուսիլ. զի քրիստոս գոլով ևս մարդ ճշմարիտ և երաշխաւոր մեր, ըստ որում այսպիսի՝ կարէր ասել առ Հայր զամենայն բանս սորա:

Արդ՝ որովհետև ըստ վերոգրեալ Հինգ կարծեացդ բանք սաղմոսիս առ ընդհ կարեն վերաբերիլ, և յամենին զնոյն միտս ունին, մեք ևս այնպէս ունիմք առաջի դնել զմեկնութին սորա, զի առ ամէն կարասցէ տարածիլ. վասն զի և բանք իւրաքանչիւր Համարոյ սորա ոչ են որոշեալ առ մին՝ի վերոյ եդեալ կարծեացդ, այլ՝ի Հասարակի դնին, իբրև բանք աղօթից, կամ այնպիսի բանք, որովք իւրաքանչիւր արդար կարէ դնել առաջի այ զՀայցուածս իւր, և խնդրել՝ի նմանէ զոր Հայցէ:

## ՐԸ. Ն.

ա̄. Բանիցս իմոց ունկն դիր տէր, և 'ի մտի առ զաղաղակս իմ։

բ̄. Նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց՝ թագաւոր իմ և Աստուած իմ։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Երրակի լինի լսել այլում. մի՝ ըստ ձայնին միայն, և ոչ ըստ իմացուածոյն. որպէս եթէ ոք անգէտ լեզուի եբրայեցւոց՝ լուիցէ զբան ինչ եբրայեցերէն. և առ այս լսողութիւն՝ ոչ այլ ինչ պահանջի, բայց եթէ առողջ ունկն 'ի լսել։ Երկրորդ՝ ըստ ձայնին և ըստ իմացուածոյն միայն, և ոչ ըստ դիտեալ իրին. որպէս եթէ ագահ ոք լուիցէ զձայն մուրող աղքատի. զոր թէպէտ և իմանայ՝ թէ զինչ խնդրէ, բայց ոչ կամի տալ՝ զոր իմանայ. և առ այս լսողութիւն՝ բաց յունկանէն պահանջի և մտաւորութիւն։ Երրորդ՝ ըստ զօրութ̄, ո̄ր ըստ դիտաւորութեան՝ կամ ըստ հաճութեան. իբր զի նայեցեալ 'ի դիտաւորութի̄ բանից կամ խնդրուածոց՝ հաճեսցի առնել՝ զոր բանքն նշանակեն. որպէս եթէ ողորմած ոք լուեալ զձայն տառապելոյ ուրուք՝ ո՛չ միայն ծանիցէ, թէ զինչ խնդրէ, այլ և կամիցի առնել՝ զոր նա խնդրէ. և առ այս լսողութի̄ պահանջի գթութի̄, կամ այլաբանօրէն նայեցողութի̄. զի հասարակօրէն յորժամ տառապեալ ոք խնդրէ ինչ յումեքէ, եթէ այլաբանութեամբ իմն կամիցի խօսել, ասէ, նայեա՛ առ իս, որ է ասել՝ գթա՛ յիս։

Ըստ այսմ օրինակի և ա̄ծ երրակի լսէ աղօթից մարդոյ. Նախ՝ ըստ ձայնին միայն, և ոչ ըստ իմացուածոյն. որ է գրեթէ ոչ լսել։ Եւ այս 'ի կողմանէ ա̄յ մտածեալ՝ յայնժամ լինի, յորժամ ցուցանէ զինքն իբր ոչ լսօղ՝ կամ նման ոչ լսողի. վասն զի առնէ զգործ այնպիսւոյ, որ ոչ լսէ, կամ զգործ այնպիսւոյ՝ որ ըստ ձայնին միայն լսէ։ Իսկ 'ի կողմանէ աղօթողին մտածեալ՝ յայնժամ լինի, յորժամ ձայն աղօթից միայն կայ, և ո՛չ արժանաւորութիւն. ո՛րպ յորժամ նա՝ որ աղօթէ, այնպէս ցնդեալ կայ, զի և ինքն ոչ իմանայ՝

զոր աղօթէ . և կամ՝ ամենայն լեզուաւ ոչ խօսի յաղօթելն , որ ոչ աղօթէ խոնարհութեամբ և ջերմեռանդութեամբ , և այլովք պարագայիւք աղօթից . այլ՝ կամ հպարտութեամբ , կամ գաղջութեամբ , եւն .

Երկրորդ՝ համարի լսել ըստ ձայնին և ըստ իմացուածոյն միայն , և ոչ ըստ զօրութեան՝ որ ըստ դիտաւորութեան , կամ ըստ հաճութեան , յորժամ իբր այնպիսի ցուցանէ զինքն առ աղօթօղն , իբր զի թէպէտեւ իմանայ և ընդունի զաղօթսն , բայց ոչ տայ զխնդրելին . զի այն չէ օգտակար խնդրողին , և կամ զի վասն իրիք գաղտնի պատճառի ոչ կամի տալ , թէ և նա խնդրեսցէ աղաղակաւ , որ ջերմեռանդութեամբ և զգաստութեամբ :

Երրորդ՝ համարի լսել ըստ ձայնին , ըստ իմացուածոյն՝ և ըստ զօրութեան , որ ըստ դիտաւորութեան , յորժամ ցուցանէ զինքն նման այնպիսւոյ . իբր զի ոչ միայն՝ ընդունի զաղօթսն , այլև հայելով՝ի դիտաւորութիւն աղօթողին՝ տայ նմա զխնդրելին . և այս՝ կամ վասն այսորիկ՝ զի բանաւոր է այն և օգտակար . և կամ վասն՝ զի ինքն բացարձակ տէր գոլով՝ հաճի տալ : Եւ ահա յայտնի հայելով դնէ մարգարէն զայս բան : Ըստ առաջնոյն ասէ :

Բանից իմոց ունկն դիր Տէր : Ունկն դիր ասելով՝ ոչ կամի ցուցանել , թէ Աստուած ունի զունկն , այլ՝ կամի յայտ առնել , թէ խնդրէ յԱստուծոյ այնպէս լինել առ ինքն , որպէս եթէ ունկն դնէր բանից իւրոց քաղցրութեամբ . իբր թէ ասէր , զբանս աղօթից իմոց մի՛ արհամարհեր իբրև ըզբանս անարժանապէս աղօթողի , այլ՝ ընկա՛լ իբրև ըզխոնարհ ծառայի . և առ այս յաւելու զոյերն : Եւ ապա ըստ երկրորդին աղաչելով ասէ .

Իմա՛ն մտա զաղաղակ իմ : որ այնպէս ցոյց ինձ զքեզ , որպէս թէ ՝ի միտ առեալ իցես զբանս աղօթից իմոց , և ոչ մերժեալ իբր զանարժան ձայն արհամարհեցելոյ . վասն զի աղաղակաւ , որ եռանդագին աղօթեցի , և աղօթեմ առ քեզ : Աղաչէ և ըստ երրորդին ասելով .

Նայեա՛ ՝ի ձայն աղօթից իմոց Թագաւոր իմ և Աստուած իմ : որ նայեա՛ ՝ի զօրութիւն , կամ՝ի դիտաւորութիւն աղօթից իմոց , և նայելովդ գթա՛ յիս , և տո՛ւր՝ զոր խնդրեմ . զի զայն միայն խնդրեմ , և զայն միայն առնուլ փափաքիմ , զոր դուդ հաճիս տալ : Եւ թէպէտ ընդհանրապէս խօ-

սելով ա՟ծ միշտ նայի, * բայց ասէ. ես զքաղցրութեամբ հայեսն խնդրեմ ‖. ըստ որում գրէ ասա լամբրոնացին ։ Նաև առ՚ի դիւրաւ լսելի առնել զբան իւր՝ յաւելու ասել, * թագաւոր իմ ‖. զի բարի թագաւոր սովոր է լսել աղաչանաց ժողովրդեանն, և խնամալ զկարիս նոցա ։ Նաև յաւելու ևս՝ * և ա՟ծ իմ ‖. առ՚ի ցուցանել՝ թէ ինքն ոչ միայն է մի՚ի ժողովրդենէ թ՟գրուե նորա, այլև ստեղծուած նորուն, և յամի կախեալ զնմէ, և ոչինչ իմիք կարող առանց նորա ։ Իսկ իմ ասելովն յայտ առնէ, թէ մտերմութեամբ և յօժարութ՟ աղաչէ ։

Բայց ասա գիտելի է, զի այս երեք բանք, * բանից իմոց ո՟նկն դիր . ՚ի միտ առ զաղաղակ իմ . նայեա՚ի ձայն աղօթից իմոց ‖. թէպէտ ըստ այլևայլ բանի մտա-ծին, որպէս և եդաք, բայց երեքին ևս՚ի մի ինչ հային, և առ մի և նոյն հայցուած կարգին . ց՟ առ ընդունելու-թ՟ի աղօթիցն ։ Ուստի ըստ իւրն՝ զոր ինչ նշանակէ ա-սելն, * բանից իմոց ո՟նկն դիր տէր ‖, զնոյն նշանակեն և հետևեալքն ։ Բայց յայն սակս կրկնին, զի ըստ այլևայլ մտածման և առ թախանձանաց դիւրաւ լսե-լի լիցին ։ Նաև այս է ոճ սուրբ գրոց, որ զմի ինչ բ՟մ բա-նիւ յայտ առնէ, վ՟ երկուց . ց՟ կամ վասն ցուցանելոյ զճշմարտութիւն . ո՟րպէս է այն՝ զոր ասէ տէրն . * խնդ-րեցէք, և տացի ձեզ . հայցեցէք, և գտջիք . բախե-ցէք, և բացցի ձեզ ‖. մատ . է . 7 . որով ցուցանի, թէ որ խնդրէ՝ ճշմարտիւ առնու ։ Նաև կամ վ՟ ցուցա-նելոյ զհաստատութիւն իրին . ո՟րպէս է այն, զոր ասաց նոյն ինքն տէրն . * Իջին անձրևք և խաղացին գետք, շնչեցին հողմք և բախեցին զտունն . և ոչ կործանե-ցաւ ‖. մատ . է . 25 . որով ցուցանի հաստատութիւն տանն ։

Նաև եթէ մի բառ ևս դնէր, զնոյն նշանակէր . սոյնպէս և ասա . ուստի հասարակօրէն՚ի մի վերածելով բա-ցատրեն մեկնիչք զունկն դնելն, և զլսելն, և զնայ-ելն . զոր և գեղեցիկ ի՟մ պարզելով մեծն խոսրով՚ի մեկն . ժամագր . երես 69 . և առաջի առնելով զսո-վորութիւն մարդկան՝ գրէ այսպէս . * Նաև՚ի մարդ-
,, կան սովորութեան այսպիսի իրս գտանեմք . խնդրեմք
,, ինչ, և՚ի չկամելն տալ՝ չլուաւ ասեմք, թէպէտ և
,, լուեալ իցէ . և՚ի տալն զխնդիրսն՝ ասեմք լուաւ .

„ ոչ զայն ցուցանեմք՝ թէ յականջսն աղդեցաւ ձայնն ,
„ այլ թէ կամեցան ընդունակ եղև . սոյնպէս և աստ ըղ-
„ կամիլն ընդունիլ՝ կոչեմք ունկն դնել այ 'ի խոնար-
„ հումն 'ի մեր խնդրուածս , և զայն մաղթեմք ‖ :

Նա օրինակ ինչ տուեալ այսմ՝ յարէ յերես . 70 . և ասէ . * բազում անգամ առաջի աչաց ուրուք աղա-
„ չանս արարեալ ասեմք , տես զաղաչանս . և 'ի լուր
„ ականջաց խօսելով ասեմք՝ մի անլուր լինիր , այլ
„ մատո՛ առ իս զականջդ . զայս խնդրելով զի կամք
„ նորա դարձցին 'ի մեզ . և եթէ լինիցի այն , և խոստա-
„ նայ զխնդիրն՝ դառնալ ասեմք կամացն : Նմա ի-
„ մացիս և զոր ինչ մարմնապէս բանն առնու յանձայ-
„ նան : Ոչ զի զքոյդ 'ի նմա նկարեսցես , այլ զի
„ քոյովդ նորայոցն զխտութիւն առնուցուս ‖ :

Գիտելի է և՝ զի այս բանք մարգարէին ոչ այնչափ աղօթք համարին , որչափ վկայմունք կամ կրկնապատկութիւնք աղօթից . զի որ զայսպիսիս խօսի՝ արդէն ունի տարածեալ զսիրտ իւր առաջի այ աղօթիւք . և յաղօթման անդ խնդրէ՝ զի այն աղօթք իւր լիցին ընդունելի : Աստի այսպիսի բանք համարին իբր ցոյցմունք բոցոյ աղօթից , կամ իբր վկայմունք բորբոքեալ սրտի , կամ իբր հեծութիւնք հոգւոյ աղօթիւք մաշելոյ , կամ իբր անուշահոտութիւնք բուրման ներքին հառաչանաց , կամ իբր նշոյլք լուսափայլք 'ի պայծառութենէ աղօթից ճառագայթեալք : Արդ՝ յետ խնդրելոյ մարգարէին լսելի լինել աղօթից իւրոց՝ դնէ և զժամ լսելի լինելոյն , և ասէ :

Դ . Առ քեզ կարդամ Տէր՝ ընդ առաւօտս , լուիցես ձայնի իմում . ընդ առաւօտս պատրաստ եղէց՝ յանդիման լինել առ քեզ :

Մարգարէն թէպէտ և միշտ աղօթէր առ ած , և միշտ խնդրէր՝ զի լուիցէ նմա ած , բայց աստ զառաւօտեանն միայն յիշէ . զի առաւօտու աղօթք քան զայլ ժամու ընդունելի է . և երկուք գերազանցէ քան զայլս . մի՝ զի է սկիզբն աղօթելոյ յաւուրն . և եթէ աստուած լսելով այնմ աղօթից՝ տացէ շնորհս աղօթողին , հոգի նորա այնու զօրացեալ՝ զօրն ողջոյն կարէ բարւոք կեալ . և յաղօթելն ևս 'ի հասարակ աւուր և յերեկոյին՝ բար-

ւոք պատրաստութեամբ աղօթէ․ որով և աղօթք նր՟ լինին լսելի ։ Ապա թէ ոք թուլասցի յառաւօտեան աղօթմն, գրեթէ հալին յաւուրն կեանք նորա ըն՟ մանանայն, և յոյս նորա տկարասցի․ ո՟պ ասի Իմաստ․ ժզ․ 27, և 28 ։ Երկրորդ՝ զի լինի յանզբաղ և 'ի հանդարտ ժամի, յորում միտք մարդոյ դեռ ազատ 'ի զբաղմանց կարէ անշփոթ յանդիման լինել այ՟, և առնուլ 'ի նմէ՝ զոր խնդրէ․ զի իբ՟ օդ յստակ՝ առաւօտ և պայծառ ընդունի զլոյս, սոյնպէս և միտք անզբաղ՝ զլոյսն ածային, և սիրտ մաքուր՝ զշնորհս նորա ։ Եր՟դ՝ զի կատարի ձեռնամբ հանգստեան մարմնոյ․ վասն զի յառաւօտու քաղցրանայ մարդոյ քուն․ իսկ որ արթնայ, և զուարթագին սրտիւ յանդիման լինի այ՟, պատարագ հաճոյական ընծայէ նմա, և դիւրաւ լսելի առնէ զաղօթս իւր ։ Յայսմիկ հայելով՝ զառաւօտն 'ի մէջ բերէ․ և նախ ասէ ։

**Ես առ քեզ աղաչեմ տէր ընդ առաւօտս, լուիցես ձայնի իմում ։**

Կամի ասել․ 'ի կանխել իմում առ քեզ յառաւօտու՝ դու տէր լուիցես ձայնի իմում․ իբր թէ ասէր․ որպէս ես կանխեմ յառաւօտու աղաչել զքեզ, սոյնպէս և դու կանխեսցես լսել աղօթից իմոց ։ Եւ զի առ այսպիսի կանխումն հոգւոյն առ աստուած՝ պիտոյ է պատրաստութի՟, զայն իւր յարէ զկնի, և ասէ ։

**Ընդ առաւօտս պատրաստ եղէց՝ յանդիման լինել առ քեզ ։**

Յայսմ բանի զօրութեամբ դնի մակբայ ժամական, ո՟պի է բառս՝ յորժամ, կամ մինչ․ և կամ շաղկապ պատճառական, ո՟պի է բառս՝ որպէս զի ։ Եթէ դիցի մակբայ ժամանակական, միտ բանին լինի այս, աղաչեմ զքեզ՝ ընդ առաւօտս լուիցես ինձ, մինչ 'ի նոյն ժամու՝ ես ընդ առաւօտս պատրաստ եղէց՝ յանդիման լինել առաջի քո առ աղօթելոյ ։ Իսկ եթէ դիցի շաղկապ պատճառական, միտ բանին լինի այս․ աղաչեմ զքեզ լսել ինձ յառաւօտու․ որպէս զի յուսալով և իմ՝ թէ լսես ինձ յայնժամ, 'ի զարթնուլս իմ 'ի քնոյ յառաջ քան զա՟մ պատրաստեցայց և փութացայց յանդիման լինել առ քեզ ։

Ապա եթէ շաղկապ ինչ ոչ դիցի, որպէս է և յեբր․ իբր արձակ բան առաջի դնի այսպէս․ յա՟մ առաւօտու պատրաստեցայց յանդիման լինել քեզ, ես՟ պատրաստ

գտայց կալ առաջի ներկայութեան փառաց քոց, կամ կալ 'ի տան քում առաջի քո. և փառաւորեցից զքեզ, և խնդրեցից 'ի քէն զշնորհս քո. զի մի լիցի ինձ գործել ինչ անօրէնութիւն յայնմ աւուր, այլ կատարել միայն զհաճոյս քո:

Այս պատրաստութիւն՝ զոր դնէ մարգարէն, երիւք լինի. Նախ՝ ժողովելով զզգայութիւնս, զի մի յայլ ինչ ցնդեսցի: Երկրորդ՝ զօրացուցանելով և զուարթացուցանելով զհոգին, զի մի թուլասցի: Եւ երրորդ խորհելով, թէ ո՞յր առաջի ունի կալ, և ընդ ո՞ւմ ունի խօսիլ, զի մի յանդգնեսցի. և առ այս յորդորէ Իմաստունն՝ ասելով. * Յառաջ քան զաղօթել պատրաստեա զանձն քո. և մի լինիր որպէս զմարդ՝ որ փորձէ զաստուած ‖. սիրաք ժը. 23:

Արթ է աստանօր բառիդ առաւօտ՝ նմանութ͞ք իմն իմանալ զվաղվաղուն կամ զկանխութիւն. ըստ որում առաւօտն է կանխութիւն աւուր. յոր միտ կամի ասել. 'ի փութալ և 'ի վաղվաղել իմում աղօթել առ քեզ պատրաստութեամբ, դու ևս վաղվաղեսցես լսել. կամ դու ևս փութաս կատարել:

Փոխաբերութեամբ առեալ բառդ առաւօտ՝ դնի վճկ մարդկային կենաց, որ թէպէտ և բազում իրօք նմանի երեկոյի, բայց հայելով առ մահն՝ առաւօտու համեմատի. մանաւանդ յորժամ 'ի յաջողութ͞ե է. յոր միտ ասի. սաղ. ձթ. 6. * Ընդ առաւօտս որպէս դալարի „ բուսցին (մարդիկ). ընդ առաւօտս այ͞ դալարի զուար„ ճասցին և ծաղկեսցին. ընդ երեկոյս (մահու) թարշամեսցին ‖: Եւ ըստ այսմ իմացեալ՝ կամի ասել. մինչդեռ կենդանի եմ և աղաչեմ զքեզ աղօթիւք, լուիցես ինձ յաստի կեանս. զի 'ի հանդերձեալն ոչ լինի լսել՝ առ 'ի գտանելոյ օգուտ ինչ անձինս:

Այլաբանօրէն, առաւօտու նշանակի ք͞ս, որ լոյս եկն յաշխարհ. բայց պատշաճագոյն ևս նշանակի նոր օրէնքն. որ համեմատութեամբ հնոյն՝ համարի իբր առաւօտ. իսկ այն, այ͞ հինն, իբր արշալոյս, յորում ակն ունէին մարդիկ ծագման արեգականն արդարութ͞ե: Եւ ըստ այսմ կամի ասել. 'ի ծագել առաւօտու նոր օրինաց, լցցին և կատարեսցին խնդրուածք իմ. և ես պատրաստ գտեալ՝ զերծայց 'ի դժոխոց՝ այ͞ 'ի լիմբո-

սէ՝ յանդիման լինել քեզ. որ դէմ յանդիման տեսա-
նել զքեզ:

Բարոյապէս, առաւօտն դնի աստ՝ փոքր պայծառութե շնորհաց. յորում մարդն կայ 'ի ցանկալի իմն հոգևոր առաւօտու. ևս և փոքր այնր ժամու, յորում մարդ 'ի ձեռն շնորհաց դառնայ 'ի խաւարէ մեղաց առ Ած. զի այն է առաւօտ հոգևոր կենաց, յորում դիւրաւ լսէ աստուած. յոր միտ ասէ գէորգ վրդ 'ի մեկն. եսայ. * ա-
,, ռաւօտ ոչ միայն զգալի, այլև իմանալի, պարտ է
,, գիտել զզղջման ժամուն, յորում առաւել լսէ աստուած
,, ըստ մարգարէին, թէ ընդ առաւօտս լուիցես ձայնի ի-
,, մում ||: Կամ դարձեալ առեալ լինի փոքր լուսաւորութեան մտաց. և որ այսմ կամի ասել. 'ի յառաւօտու շնորհաց քոց և լուսաւորութեան պատրաստ եղէց յանդիման լինել առ քեզ. և դու լուիցես ձայնի իմում, և ազատեսցես զիս 'ի խաւարէ մեղաց, ևս և 'ի պատժոց նոցին: Եւ կամ ըստ գրելոյ աստ լամբրոնացւոյն՝ կամի ասել. * նորոգ եմ ելեալ 'ի խաւարէ մեղաց,
,, և լուսոյ քո հանդիպեալ. արդ՝ աղաչեմ, մի թո-
,, ղուր զիս աշխատիլ ընդ երկար ժմկ. . . զի վաղվա-
,, ղակի յետ ելիցս 'ի խաւարէն՝ զճառագայթ իմանալի
արեգականդ տեսեալ զուարճացայց ||:

Վերածաբար առեալ առաւօտն դնի աստ փոքր յաւիտենական կենաց, որ է անսահման առաւօտ ամենապայծառ. յորում մարդ միշտ կայ յանդիման այ. և ամենայն աղօթք նորա լեալ են արդէն լսելի: Յետ յայտ առնելոյ մարգարէին զյանդիման լինելն իւր աղօթիւք առաջի աստուծոյ 'ի ժամ առաւօտու՝ յայտ առնէ այժմ, թէ Ած որոց հաճի յանդիման լինել նոքեան, և որոց ոչ. վասն որոյ խօսելով առ աստուած ասէ:

Է. ՈՉ ԵԹԷ ԴՈՒ ԵՍ ԱԾ ԿԱՄԻՍ ԱՆՕՐԷՆՈՒԹԵ. ՈՉ ԲՆԱԿԵՍՑԷ ԱՌ ՔԵԶ ՉԱՐՆ. ՄԻ՛ ԱՆՕՐԷՆՔ ԲՆԱԿԵՍՑԵՆ ԱՌԱՋԻ ԱՉԱՑ ՔՈՑ:

Զոր օրինակ՝ յորժամ ոք յանդիման լինի արեգական, յայտնի տեսանէ՝ թէ ամենևին աննման է նա խաւարի, և խաւար ոչ կարէ կալ առաջի նորա. և ճանաչէ ևս, թէ քանի ցանկալի է առ այնոսիկ՝ ոյք կարօտին նմա, սոյնպէս և մարգարէն 'ի ծագել առաւօտու՝ յանդիման եղեալ այ՝ յայտնի ետես, թէ զիարդ ամե-

նեխմբ 'որ է ած՝ և ամենևին բարի , և թէ որչափ ա-
տելի է նմա խաւար անօրէնութեան . և հայեցեալ ես
յանձս սուտս՝ զորս պաշտեն հեթանոսք և անօրէնք ,
ետես թէ քանի գարշ են նոքա , պիղծ և ատելի այ .
զայսոսիկ այսպէս տեսանելով՝ հաստատի 'ի խորհուրդս
իւր , և ասէ ։

ՈՉ ԵԹԷ ԱՍՏՈՒԱԾ ԿԱՄԻՍ ԶԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ։ Կամի ասել . լուսով
շնորհաց քոց լուսաւորեալ ծանեայ , զի ամենևին
սուրբ ես դու տէր , և ոչ երբէք կամիս զանօրէնուի ինչ ,
որպէս կամին չածքն հեթանոսաց ։ Եւ յայս միտ 'ի սաղ-
մոսս ինչ մեր դնի . * ոչ թէ դու այն ած ես՝ որ կամիս
զանօրէնութիւն ‖ . այլ թէ դու ոչ ես նման ածոցն հե-
թանոսաց . վասն որոյ և ոչ կամիս զանօրէնութի , որպէս
նոքին կամին ։ Օ այս եղեալ՝ գրեթէ զօրութեամբ բնին
հետևեցուցանէ , թէ ուրեմն և ինձ պարտ է ամե-
նևին անարատութեամբ յանդիման լինել քեզ , և ոչ ու-
նել յանձն իմ անօրէնութիւն ինչ . ես և թէ հարկ է
ինձ վարել զկեանս սրբութեամբ և արդարութբ . ապա
թէ ոչ՝ մերժեցայց յերեսաց քոց իբր խաւար . և առ-
այս յարէ ։

ՈՉ ԲՆԱԿԵՍՑԵՆ ԱՌ ՔԵԶ ՉԱՐՔ ։ այլ նոքա՝ որք զչարիս խորհին , և
ընդ նոյն հաճին , խաւարաւ չարութեան պաշարեալ իբրև
խաւար հալածին առաջի քո . և ոչ կարեն հարազա-
տօրէն և ընտանեբար յանդիման լինել քեզ , կամ
մերձենալ առ քեզ ։

Եթէ այսպիսի են չարք՝ ասիցէ ոք , զի ես էր պիտոյ
ստեղծանել զնոսա ։ Այսմ պինէ բարսեղ մեկնիչ .
մարկ . ժդ . 21 . * պարտ էր քեզ չարացն մեղադիր
լինել . զի կարէին չլինել չարք , և եղեն ։ Իսկ դու
զայն թողեալ՝ զայն քննես . և գիտես ես , չիք ոք
չար 'ի հարկէ . և բարեացն ասես պարտ էր լինել , և
ոչ չարացն ‖ ։ Չարացն չար գոլ կամքեանք են պատ-
ճառ . մինչև չարեօք իւրեանց անարգիլ և իբր անարգ-
չհամարձակել կալ առաջի տեառն . առ որս հայելով
կրկնէ մարգարէն և ասէ ։

ՄԻ ԱՆՕՐԷՆՔ ԲՆԱԿԵՍՑԵՆ ԱՌԱՋԻ ԱՉԱՑ ՔՈՑ ։ Այս բան է
իբրև երկրորդումն նախընթացին . որով կամի ասել .
այն մի բնակեսցեն չարք և անօրէնք առաջի աչաց
քոց , այլ առաջի քո ։ Հնար է ես ասել . թէ զայս յա-

ւելու առ 'ի ցուցանել՝ թէ նոքա, որք գործեն զանօրէնութիւն, և անփոյթ են դառնալ առ ա՟ծ, այնպէս արհամարհելոց են յա՟յ, որպէս թէ ոչ կայցեն 'ի միտս ա՟յ, և ոչ բնակեսցեն 'ի տան նորա, այսինքն յեկեղեցի. և ոչ ևս բնակեսցեն առաջի նորա յարքայութեան ։

Գէորգ վրդպ 'ի մեկն. եսայ. ա՟. բառնիս անօրէնք՝ ոչ այնչափ խմնայ զօրինազանցս կամ զարհամարհօղս օրինաց, որչափ զոչ ընդունօղս, յասէն. * Ու ասաց՝ „ անցեալք զօրինօք, այլ անօրէնք, զի հաւատարեսցէ „ այնոցիկ, որ ոչ բնաւ ընկալան զօրէնս ‖ ։

Սարգան վրդպ 'ի ձեռն չարաց խմնայ զդեւս՝ որք բնակեին առ կուռս. իսկ 'ի ձեռն անօրինաց խմնայ զհրէայս. յոր միտ կամի ասել. ոչ բնակեսցեն առ քեզ դեւք, որպէս բնակեին առ կուռս. զի նոքա չեն ա՟ծ, այլ դու միայն ա՟ծ ճշմարիտ. սոյնպէս և անօրէն հրէայք, որովհետև ատեցին քեզ, և մերժեցին զքեզ, մի բնակեսցին 'ի տաճարի քում. զի ատելի եղեն առաջի քո՝ եթէ նոքա, և եթէ սոքա, և ա՟մ անպարիշտք ընդ նոսա ։

Այս բան կարէ հայիլ և յատեան դատաստանին ք՟ի. յորում ոչ կարեն կալ այնոքիկ, որք ոչ կամեցան գնալ ըստ օրինացն ք՟ի, այլ սատանայի. քանզի 'ի յանդիման լինել նոցա յայն ատեան, տեսեալ ք՟ի՝ թէ յայլ օրէնս և յայլ լեզուս են նոքա, ոչ ևս ճանաչէ զնոսա, և որպէս թէ ոչ հաւանալով զխօսս ն՟ց 'ի բաց վարէ զն՟ս յերեսաց իւրոց ։ Նոյն զայս օրինակաւ իմն առաջի առնէ բարսեղ 'ի մեկն. մարկ. գլ. ժը. գրելով այսպէս. * համարեայց՝ թէ իցէ ումն դատաւոր հռովմայեցի, և „ այլ ումն հայեցի մտեալ 'ի դատ առ նա. և 'ի չլսել „ (այսինքն 'ի չհասկանալ) դատաւորին զխօսս դատեցելոյն, „ 'ի բաց տայ հանել զնա յատենէն. այսպէս և ք՟ս, „ որ զդատաստանին ունի իշխանութիւն, յորժամ ոչ „ գտանէ զմեզ լեզուաւն իւրով միայն խօսեցեալ, „ այլև սատանայի՝ զոր ոչ կամի լսել, տարագիր առնէ ըզ„ մեզ յայնմ ատենէ. զոյն ուսանիմք գործով վճա„ րեալ առ յիմար կուսանս, և առ այնս՝ որք ասա„ ցին, տէր տէր յանուն քո մարգարէացաք, և զօրութի՟ս „ բազումս արարաք. լուան. ամէն ասեմ ձեզ՝ եթէ „ ոչ գիտեմ զձեզ ‖. զի ատելի են ք՟ի այսպիսիքս .

և զայսմ ատելութենէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն, և ասէ ։

Է. Ատեցեր զամենեսին, որ գործեն զանօրէնութիւն. կորուսանես զամենեսեան, որ խօսին սուտ ։

Քանի՛ ատելի իցէ անօրէնութիւն առաջի ած՝ յայտ առնէ մարգարէն կրկնութեամբ բանիցս, 'ի ցուցանելն թէ ոչ միայն զանօրէնութիւնն, այլև զգործօղս այնր ատէ աստուած. ուստի ասէ ։

Ատեցեր զամենեսին՝ որ գործեն զանօրէնութիւն ։ Կամի ասել. զի՝ որ ծայրագոյն ողորմութեամբ սպասես դարձի անօրինաց, ծայրագոյն ատելութեամբ հայիս առ նս վս անօրէնութեանց նց. յորոց եթէ դարձցին՝ ընդունիս զնս, իսկ եթէ ոչ դարձցին, կորուսանես ։ Զայս բան իբր ընդհանուր ինչ եդեալ մարգարէին՝ մանաւորէ ապա զայն յերիս, զերիս 'ի մէջ բերելով. զի որովհետև երրակի կատարին անօրէնութիւնք, խորհրդով, բանիւ և գործով, զերիս ազգս անօրինաց 'ի մէջ բերէ. զնենգամիտս, զստախօսս, և զարիւնահեղս. զերկուցն խօսի 'ի յաջորդ համարն, և զմիոյն աստ ։ Եւ թէպէտ զայս ես կարէր թուել, բայց սոքաք զայլսն գոլով վնասակար, զստա միայն թուելով զայլսն ես տայ իմանալ ։ Եւ նախ զստախօսս 'ի մէջ բերելով ասէ ։

Կորուսանես զմն, որ խօսին սուտ ։ Այ կորուսանես և դատապարտես, և երբեմն ստա ես պատուհասես զմն նոսա, որք խօսին զսուտ, այ որք զսուտ խօսելով վնասեն այլոց. կամ ստութեամբ շահին յայլմէ ինչ, և ոչ հատուցանեն վնասուն ։ Եւ կամ ըստ լամբրոնացւոյն. կորուսանես զայնոսիկ՝ * որք 'ի մեղանչելն ոչ
,, զպարտութիւն խոստովանին, այլ զօրէնս՝ իւրեանց
,, անօրէնութեանն ջատագով առնուն, կամ իրաւացի
,, ևս համարին զայն, և ոչ ընաւ մեղք ‖ ։ Եւ այս
յայտնի երևի ասէ 'ի մոլս. զի ահա * բարկացօղն
,, համարի զինքն վրէժխնդիր արդարութե. և ագահն
,, պատճառէ զհարկաւորութիւն. և ստախօսն զշահ
,, իւր, և կամ զայլ ինչ ‖ ։

Արժանապէս ասէ մարգարէն "կորուսանես". զի ստախօսք գրեթէ գործովք իւրեանց ուսուցանեն այ կո-

բուսանել զինքեանս. զի նախ ինքեանք խոկ կորուսանեն զինքեանս ըստ բանականութեան. զի որինչ կայ 'ի բանի, քն 'ի միտս, որով են բանականք, կորուսանեն զայն. վասն զի այնու բանիւ ոչ վարին 'ի խօսս. կամ զի ոչ խօսին այնպէս, որպէս ճանաչեն, այլ ոք ոչ ճանաչեն. ուստի գրեթէ զինքեանս կորուսեալ՝ բայց փոխին. և այսմ կարէ յարմարիլ այն բան իմաստնոյն, զոր ասէ. * բերան ստախօս սպանանէ զանձն ‖. Իմաստ. ա. 11: Նենգք՝ կորուսանեն և զայլս՝ խաբելով զնոսա, և արկանելով 'ի վնաս. կամ ստութբ վատահամբաւելով զնոսա:

Արդ՝ որպէս լինին մք անողորմ՝ թէ առ ինքեանս, և թէ առ այլս, այսպէս ևս առանց ողորմութե դատապարտին. և իբրև գող բանից՝ 'ի ձեռս ունելով զգողունին ստութեան՝ կրաւամբք պատուհասին: Նաև յիրաւի գող են, զի 'ի կամիլն բանալ զգուռն մտաց՝ քն զբերանն, առ 'ի հանել անտի զբան, իբրև գող՝ ստար բանալեօք բանան՝ զայլ ինչ խօսելով. վյ և իբր գող կորուսանին յյ: Նաև զի երբեմն իբր աւազակ ևս վարին, ըստ որում փնկ բանալոյ՝ խորտակեն զուղղութի բանին, վյ և իբրև աւազակ պատուհասին և խորտակին և սատակին. ըստ որում գրէ բարսեղ. մարկ. Ժ. * սատակէ տէր ասէ զամն՝ որք խօսին սուտ ‖: Սոքա նմանին ևս այնպիսի խանգարեալ ժամացուցի, որոյ ցուցակն իցէ ուղիղ, և ձայնն թիւր. որպէս եթէ ցուցակն երևեցուսցէ զժամն իններորդ, և ձայնատուն հարկանիցէ զերրորդն. սոյնպէս են և ստասացք. զի ճանաչումն իւրեանց ցուցանէ, թէ այս ինչ այսպէս է. իսկ ձայն նոցա այլ ինչ հնչէ: Արդ՝ որպէս զայսպիսի խանգարեալ ժամացոյցս կորուսանեն մարդիկ 'ի տանէ իւրեանց, սոյնպէս և ած զստասացս յարքայութենէ իւրմէ. զի ատելի է նմա ամ՝ որ խօսի զսուտ. վասն զի որպէս գրեալ է. մի յեօթանց զորս ասէ ած՝ է * լեզու ստասաց ‖:

Նաև թէպէտ այսպիսի չար է ստութիւն, բայց տեսանեմք՝ զի եղեալ է հասարակաց, մինչև հազիւ գտանել զոք՝ որ ոչ խօսիցի զստութիւն: Այլ և սովորեալ են մարդիկ 'ի լսելն ինչ հարցանել, ստոյգ իցէ արդեօք, թէև գիտասցեն՝ թէ ստոյգ է. զի գիտեն,

թէ ստեն մարդիկ ։ Արդ՝ թէպէտ ոչ ամ սուտ է կորուսանող՝ կամ մեղք մահացու, բայց որ սովորեալ է խօսիլ զսուտ ներելի, զմահացուն ևս խօսի. և այնու իսկ կորնչի, մանաւանդ թէ կորուսեալ իսկ է. զի ոչ զոք գտանես, որ լիցէ սուտասաց, և չլիցէ սովորեալ ՚ի չարիս ինչ մեղաց. և ամենքն՝ որք զսուտ խօսին, խիղճ մտաց նոցա խանգարեալ է, և դժուարաւ նորոգի ։ Աստի ոչ մասնաւորէ մարգարէն՝ զամենս կորուսանել. այլ զամենն. զի կատարած այսպիսեաց ամենն ՚ի կորուստ հայի. վասն զի թիւրեալ ՚ի ճշմարտութենէ ընդ մոլար գնան ։

Այսպիսիք և ՚ի հաւատոյ պակասաւոր են. որոյ վասն սարգիս շնորհալի ՚ի մեկն. յակ. ը. 26. Ճառ Է. անհաւատ կոչէ յասելն. * անհաւատ է և նա՝ որ սուտ „ խօսի, և սուտ վկայէ. զի ոչ հաւատայ նա ասողին „ . . . թէ կորուսանէ տէր զամենն՝ որ խօսին զսուտ ||։ Եւ ՚ի մեկն. ա. յովհ. ա. 5. Ճառ ը. կոչէ ասելով. * սուտն դատապարտեալ է յամ հոգեպատում „ Ճառից, և մանաւանդ ՚ի տէրունական բանիցն, կորու„ սանէ տէր զամենն՝ որ խօսին սուտ, ասէ դաւիթ ||։ Յայտ արարեալ մարգարէին՝ թէ կորուսանէ ած ըղստասացս, որք են մի յերից կարգաց անօրի, որք գործեն զանօրէնութիւն, ՚ի մէջ բերէ այժմ և զերկուսն ևս. զի զայնոսիկ՝ որք խորհրդով և գործով կատարեն զանօրէնութիւն. վասն որոյ ասէ ։

Է. Զայր արիւնահեղ՝ և զնենգաւոր՝ գարշի ատեսցէ տէր. այլ ես բազում ողորմութեամբ քով մտից ՚ի տուն քո. երկիր պագից ՚ի տաճար սուրբ քո երկիւղիւ քով ։

Այր արիւնահեղ ասի, Նախ՝ այն, որ սրով և կամ այլով իւիք սպանանէ զոք առանց իրաւանց ։ Երկրորդ որ բաղձանօք սպանանէ. զի որ բաղձայ՝ զի սպանցէ. կամ որ ցանկայ մահու այլոց ։ Երրորդ նա, որ բամբասանօք սպանանէ զոք ՚ի միտս այլոց, և կամ չարաչար դատելով սպանանէ զայն ՚ի միտս իւր ։ Չորրորդ՝ նա, որ չար օրինակաւ գայթակղեցուցանէ զայլս, և ՚ի մեղս արկանէ. և կամ մոլար վարդապետութեամբ ՚ի հերետիկոսութիւն ահեցուցանէ ։ Հինգերորդ՝ նա, որ մահուչափ մեղօք սպանանէ զհոգի իւր ։

Բայց մեղք արիւնահեղութեան 'ի նոր գիրս ասի լինել մեծ առաջի այ. և թէ վրէժխնդիր է ած այսմ մեծապէս. * որ հեղու (ասէ) զարիւն մարդոյ, փոխ ա-
„ րեան նորա հեղցի արիւն նր. զի 'ի պատկեր այ արա-
„ րի ես զմարդն ‖. Ծնն. Թ. 6. և դարձեալ թէ * 'ի ձեռաց առն զղունչ եղբօր իւրոյ խնդրեցից ‖. Սմին վասն 'ի կանգնել սողոմոնեան տաճարի ոչ հաւեցաւ երկաթ, զի մի որ կարէ լինել գործի արեանհեղութեան՝ մերձեսցի 'ի բնակութիւն տանն այ. Նաև զի այսու կարի իմն զգուշացուցանել կամէր ած զհրէայս 'ի սպանութեանց. ուստի ասէ գէորգ վարդապետ 'ի մեկն. եսայ. * Երկաթ
„ ասէ մի հաւեսցի 'ի շինուած տաճարին. զի 'ի սպա-
„ նութեանց ցածուսցէ զնս. զի թէպէտ զենուին քա-
„ հանայք ոչխարս և արջառս, այլ զարիւնն այ մա-
„ տուցանէին. զի թէ յանասնոց արեանէ 'ի բաց պարտ
„ է լինել հեռի 'ի նուիրելոյ, քանի ևս 'ի մարդկան
„ արենէ ‖ :

Իսկ ներնգաւոր ասի, նախ՝ նա, որ ներնգէ զբանս սուրբ գրոց, ըստ չարութե մեկնէ 'ի մոլար միտս. և կէս 'ի վն ուղիղ հաւատոյ և ածային դատաստանաց և հատուցման արդարոց և մեղաւորաց թիւրս խորհի: Երկրորդ՝ նա, որ խորհի խաբել զայլս՝ առ 'ի վնասել նոցա. և զնոսա ածէ զհնարս անօրէնս՝ առ 'ի կատարել զչար խորհուրդս իւր. և այսպիսիս չարաչար ատելով զեղբայր իւր՝ համարի ես եղբայրասպան. ըստ այնմ, * ամ որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է ‖. ա. յովհ. գ. 15: Ուստի և ընդ արիւնահեղս դասելով 'ի մէջ բերի աստ: Երրորդ՝ նա, որ (ըստ լամբրոնացւոյն՝) * 'ի սէր եղ-
„ բօրն չոգմնդութբ վարի. լեզուաւն այլ ձգէ ունի
„ առ նա, և սրտիւն այլ. լեզուն մեղր կաթեցուցա-
„ նէ նմա, և կամքն և սրտին բաղձանքն զարիւն հե-
„ ղու ‖: Չորրորդ՝ նա, որ կամի առնել ինչ այնպիսի միջոցաւ, որ երևի բարի, և է չար: Իսկ ես նա՝ որ չար է, և երևեցուցանէ զինքն բարի. և սա տիրապէս կոչի կեղծաւոր: Զայսպիսի արիւնահեղից և զնենգաւորաց խօսի աստ մարգարէն, ասելով:

Զայր արիւնահեղ և զնենգաւոր պիղծ առնէ տէր: Սովաւ ոչ կամի ցուցանել մարգարէն, թէ նոքա ոչ են պիղծ, և ած առնէ զնոսա պիղծս, այլ թէ պիղծ հա-

մարելով զնոսա՝ արհամարհէ զնա ։ Այլ յիրաւի համարի զնոսա պիղծս․ զի պիղծն է, որ վն ունելոյ յինքեան զաղտեղութիւն՝ ծնանի յայլս զզուանս ։ Այլ զի արիւնահեղք արեամբ այլոց աղտեղեալ են, և նենգաւորք ևս մահացու թունովք զայրացեալ են ՚ի ներքս, որովք և պատճառեն զամենամեծ զզուանս ՚ի կողմանէ իւրեանց, վնկ պիղծս համարի զնոսա ած իբրև զլցեալս ամ անխտանութեամբ, դն զուտ աղտեղութբ և անապակ չարութեամբ, կամ անխտանելի և անհպելի գարշութեամբ․ ( մատ․ իգ․ 25․ ) զորս և արհամարհէ ած ։ Այլ թէպէտ նա զամ մեղաւորս արհամարհէ և անարգէ յոչ դառնալ նոցա առ նա, բայց զարիւնահեղս և զնենգաւորս իբր զզուանօք արհամարհէ․ և վնկ ոչ ասաց մարգարէն՝ ատես կամ կորուսանես, այլ՝ * պիղծ առնես ‖․ որպիսի էին յուդայեանք և թեզասեանք՝ երևեալք յառաջ քան զքն․ ըստ որում ասէ

ծործորեցին․ ՚ի մեկն․ մատթ․ գլ․ իգ․

Այլ աստ նկատել արժան է, զի մարգարէն ՚ի խօսիլն զատոց՝ ասաց, * կորուսանես զամենեն, որք խօսին սուտ ‖․ իսկ զարիւնահեղից և զնենգաւորաց ոչ ասաց՝ զամենեն, կամ զամ արիւնահեղս, եւ․ այլ՝ * զայր արիւնահեղ և զնենգաւոր ‖․ վասն զի ամ ստութիւն չար է՝ յինչ և իցէ առիթս՝ թէ՛ պատճառաւ բարւոյ, և թէ պատճառաւ մեծի օգտի այլոց․ զի եթէ վնասակար է, մահուչափ չար է․ և եթէ անվնաս է, սակայն չար է, թէպէտև ներելի ։ Իսկ արիւնահեղութիւն երբեմն կարէ լինել առանց մեղաց՝ ևս և իրաւամբք, որպէս յորժամ դահիճք հրամանաւ դատաւորաց սպանանեն զոք ըստ ածային իրաւանց ։ Այլ նենգութիւն թէպէտ ոչ կարէ լինել բարի, բայց երբեմն ըստ պարագայից պարզ ճարտարութեան՝ կարէ լինել առանց մեղաց, մինչև ոչ համարիլ այնմ նենգութիւն․ ոճի եղև յակոբայն առ խառհակ հայր իւր․ յուդիթայն առ հողեփեռնէս․ և այլոց ևս․ թէպէտ այսպիսի գործք՝ հնարագիտութիւնք ասին, քան նենգութիւնք ։ Որդ յետ յայտ առնելոյ մարգարէին զարհամարհումն չարաց՝ առաջի դնէ այժմ, թէ զինչ ասա պարտ իցէ ինքեան առնել․

նախ իւր ասէ ․

ԱՅԼ ԵՍ ԸՍՏ ԲԱԶՈՒՄ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՔՈՒՄ ՄՏԻՑ ՚Ի ՏՈՒՆ ՔՈ․ ԵՐ-

ԿԻՐ ՊԱԳԻՑ 'Ի ՏԱՃԱՐ ՍՈՒՐԲ ՔՈ ԵՐԿԻՒՂԻՒ ՔՈ ։ Աստանօր բառդ-այն՝ 'ի մէջ բերէ զողորմութն անձին 'ի վիճակէ անօրինաց, և զմերձենալն առ ած. որպ թէ եղեալ էր, անօրէնք հեռացեալ են 'ի քէն. իսկ ես 'ի նոցունց հեռացեալ մերձեցայց առ քեզ ողորմութբ քով, և մտից 'ի տուն քո, և երկիր պագից 'ի տաճար սուրբ քոյ ։

Այլ թէ որ տաճար է այս, ծանիր, զի յառաջ քան զշինութիւն տաճարին՝ ուր և էր տապանակն այ, այն տեղի կոչէր տաճար տեառն. որպ տունն՝ որ 'ի սելով. (ա. թագ. ա. 9. եւ և 24 ։ և գ. 3 ։) Այլ զի յաւել մարգարէն զայս սաղմոս՝ տապանակ տեառն էր յեղմ 'ի սիոն լեառն 'ի բեթար (որ թարգմանի տուն երգեցողաց, կամ տուն օրհնութե,) յայս տուն հայելով դնէ 'ի տաճար սուրբ քո. (բ. թագ. ժե. 24 ։ և զ. 12. 16 ։ և գ թագ. ը. 1 ։) Այլ զայս դնելով կամի ասել. ես յինէն չունիմ ինչ արդիւնս արժանաւորապէս մտանելոյ 'ի տուն քոյ, և արժանաւորապէս երկրպագանելոյ քեզ. բայց որովհետև գտի զողորմութիւն առ 'ի քէն՝ նովիմ վստահացեալ մտից անդր. կամ թէ յուսալով յողորմութիւն քո համարձակեցայց և մտից անդր. և երկիր պագից քեզ երկիւղիւ քո, այ ծայրագոյն պատկառանօք կալով առաջի քո ։ Յայս նիւթական տաճար ցանկալով մարգարէին մտանել՝ տայ իմանալ, թէ ցանկայ եւս մտանել մտօք 'ի տաճարն վերին, այ յերկինս, և երկիր պագանել անդ աստուծոյ ։

Այլ դու տես ինձ, զի ոչ ասէ մարգարէն սոսկ՝ ըստ ողորմութե քում, այլ՝ * ը բազում ողորմութե քում ‖ ։

Այլ այս երրակի կարէ մտածիլ. մի՝ հայելով 'ի նորոգ դարձ մարգարէին 'ի մեղաց անտի, զոր գործեաց. վասն զի յետ յանդիմանելոյ զնա նաթանայ, և յետ զղջանալոյ իւրոյ՝ բզմ խոնարհութբ ըմբռնեալ՝ կարօտ ճանաչէր զինքն բազմապատիկ ողորմութեն այ առ 'ի համարձակ մտանել 'ի տուն տեառն, և 'ի վստահիլն՝ թէ եգիտ զայն, եմուտ անդր ուրախութեամբ. և երկիր եպագ տեառն. (բ. թագ. ժբ. 20) ։

Երկ՝ հայելով յարժանաւոր պատրաստութիւն մտանելոյ 'ի տուն տեառն. զի առ 'ի արժանաւորապէս և երկիւղիւ մտանել 'ի տուն նորա, և երկիր պագանել նմա, պիտոյ է բազում պատրաստութիւն հոգւոյ. իսկ առ

բազում պատրաստութեն հոգւոյ՝ պիտոյ է բազում շնորհք,
կամ բազում ողորմութիւն ։

Նորոդ՝ հայելով ՚ի բազմապատիկ եղանակս ողորմելոյն այ ․ վասն զի ած ոչ միապէս ողորմի մեզ, այլ՝ բազում օրինակաւ, միումն այսպէս, միւսումն այնպէս ․ և հաւանականագոյն երևի, թէ յայս միտս դնէ աստ մարգարէն, * ըստ բազում ողորմութեն քում ‖ ․ որպէս թէ ասէր ․ դու տէր՝ որ ըստ բազմապատիկ ողորմութեան քում՝ բազում օրինակաւ ողորմիս մեզ, յայդմ բազմապատիկ ողորմութենէ քումմէ մասն ինչ և ինձ մասնաւորեցես ․ զի և ես արժանաւորեցայց մտանել ՚ի տաճար քո, և երկիր պագանել քեզ ընդ երկիւղիւ քով ։ Ուր յաւե-լով զերկիւղն՝ առաջի առնէ զզգուշութիւն չմոլորելոյ ։ Բարոյապէս՝ տուն այ կամ տաճար տն ասի ներկայութիւն այ ․ կամ մտաւորական տեսութիւն նր ․ Ես և կեանքն առաքինական ․ յոր փափագել արժան է մեզ, և մտանել ՚ի նոյն, և ՚ի նմին երկիր պագանել տեառն ։ Պարձեալ՝ տաճար տեառն կոչի և հոգի մարդոյ ․ յոր հարկ է մտանել մարդոյ ՚ի ժամ աղօթից ․ զի թէ՝ առանձնանալ ՚ի հոգի իւր, և կալ ընդ յաղօթս առաջի այ երկիւղիւ ․ ըստ այնմ, * Դու յորժամ կայցես յաղօթս, մուտ ՚ի սենեակ քո, և փակեա զդուրս քո, և կաց յաղօթս առ հայր քո ՚ի ծածուկ ‖ ․ մատ ․ զ ․ 6 ։ Ի սոյն հայի այն՝ զոր ասէ բարսեղ մեկնիչ ․ մարկ ․ ժա ․ 17 ․ թէ * տաճար այ և տուն է միտք և խիղճ հաւատացելոց ‖ ։

Այլաբանօրէն՝ տուն և տաճար այ է եկեղեցին քի, յոր ողորմութեամբ տն լինի մտանել, և երկիւղիւ պաշտել ընդ զած ։ Վերածաբար՝ տուն և տաճար այ է արքայութիւնն երկնից, յոր արժան է հանգոյն մարգարէին մտօք մտանել յաղօթելն, և ընդ երկիւղիւ երկիր պագանել տեառն ։ Արդ՝ յետ ցուցանելոյ մարգարէին զփափաք իւր մտանելոյ ՚ի տուն տն՝ խնդրէ այժմ ՚ի նմանէ զօգնութիւն նորա, և ասէ ։

Է ․ Տէր առաջնորդեա ինձ յարդարութեն քում՝ վասն թշնամեաց իմոց ․ ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո ։

Որովհետև յայտ արար ՚ի վերոյ, թէ ատելի են այ ճանապարհք անօրինաց ․ և եցոյց զփափաք իւր, թէ

ինքն ոչ կամի գնալ 'ի ճանապարհս նոցա, այլ արդարու-
թե̃ կեալ, և երկիւղիւ պաշտել զա̃ծ 'ի տաճարի նորա,
այժմ աղաչէ զնա՝ զի առաջնորդեսցէ նմա, ի̃ տացէ
նմա անմոլոր ճանապարհաւ գնալ յարդարութե̃ նորա ․
վասն որոյ ասէ ։

Տէ̃ր առաջնորդեա՛ ինձ ։ Տէր ասելովն կամի ցուցանել, թէ
բանաւորապէս խնդրէ առաջնորդել 'ի նմէ ․ զի այսու
խոստովանի զինքն ծառայ նորա ․ արդ՝ արժան է ծա-
ռային գնալ զհետ տ̃ն իւրոյ ․ և տ̃ն ևս արժան է ձգել
զհետ իւր զծառայ իւր՝ զերծուցանելով զնա 'ի ձե-
ռաց թշնամեաց նորա ․ և քանզի մարդ ինքնին ոչ կարէ
գնալ զհետ տեառն, ի̃ ը̃ հաճութեան ա̃ն, այլ կարօտի
ձեռնտուութեան նորա, վ̃ն ասէ ։

Առաջնորդեա՛ ինձ յարդարութեան քում ։ Արդարութի̃ ասե-
լովն խնամոյ զայնպիսի գործս, որ լիցէ հաճոյ ա̃յ ․ ևս
և խնամոյ զպատուիրանս ա̃յ ․ զի այն պատուիրանք
գոլով ամենեքին արդար՝ և առաջնորդիչ յարդարու-
թիւն, կոչի պարզապէս արդարութի̃ ա̃յ գնի ․ 'ի սաղ ․
ճժ̃ը ։ Եւ առ իմացուցանելոյ թէ արդարութե̃ խնա-
մոյ ասա զգործս հաճոյականս ա̃յ, և զպատուիրանս
նորա, յաւելու զբառդ քում ։ Այսպիսի արդարութե̃
քում ասէ՝ առաջնորդեա՛ ինձ, ի̃ ա̃ծ զիս առ քեզ
ճանապարհաւ արդարութե̃ քո ․ կամ տուր ինձ առանց
մոլորելոյ անսայթաք գնալ 'ի ճ̃հս արդարութե̃ քո ․
կամ որ նոյն է, տուր ինձ անվրէպ և անարատ պահել
զպատուիրանս քո, և մնալ հաստատուն յարդարութե̃,
որով ոչ միայն լինի ինձ խոտորիլ 'ի չարէ, այլև առ-
նել զբարին, և հաճոյ գտանիլ առաջի քո ։ Այս
խնդիր եղեալ՝ յարէ և զպատճառ խնդրելոյն, և
ասէ ։

Վասն թշնամեաց իմոց ։ ի̃ վ̃ն խնդրեցի առաջնորդել
ինձ, վասն զի թշնամիք իմ շուրջ պատեալ են զինև ․ և
եթէ դու ոչ առաջնորդեսցես ինձ, խափանեն զիս 'ի
գնալոյ յարդարութե̃ քում ․ և սահեցուցանեն 'ի ճ̃հէ
պատուիրանաց քոց, և կորուսանեն ։

Արդ՝ այսպիսի թշնամիք, որք լինին խափան գնալոյ
յարդարութե̃, բազում են ․ նախ դևք ։ Երկրորդ՝ ամպա-
րիշտք, որք չար օրինակաւ, և կամ գայթակղեցուցիչ
բանիւ խոտորեցուցանեն զմարդ 'ի ճ̃հէ արդարու̃ ։

Տէր՝ չար բարեկամք, ես և յիմար ընտանիք․ ը՟ այնմ, * Թշնամիք առն ընտանիք իւր ‖։ մատ․ Ժ․ 36։ Հնար է և թշնամեօք իմանալ աստ զպէսպէս վտանգս և զփորձութիւնս, որք խոչ ը՟ ոտն լեալ՝ տան թիւրել զճանապարհս պատուիրանացն ա՟յ․ իսկ բառոյապէս մարթ է իմանալ զաշխարհ և զմարմին, ընդ որս և զսատանայ․ որք նախանձեն զմարդ յուղիղ ընթանալոյ 'ի ճանապարհս տ՟ն։ Այս կրկին աղաչէ մարգարէն ուղղել զնոյն, և ասէ։

Ուղղեա առաջի իմ զճանապարհս քո։ ա՟յ 'ի գնալս իմ 'ի ճանապարհս քո, այս է՝ 'ի պատուիրանս և յարդարութիւն քո՝ եթէ լիցի ինձ թիւրիլ յայնցանէ, դու ուղղեա՛ զայնս առաջի իմ․ ա՟յ յաջողեա՛ զն՟ս, կամ արա՛ զի ուղղութ՟բ գնացից ը՟ այնս․ ապա եթէ դու ոչ ուղղեսցես, թշնամիք իմ դարանակալք և դաւաճանք խաբեն և խոտորեցուցանեն զիս։ Իսկ թէ ընդէ՞ր, ասէ․

Ը․ Զի ոչ գոյ 'ի բերան նոցա ճշմարտութիւն․ և սիրտ նոցա նանրացեալ էն։

Զբերանն նոցա՝ իմանայ զայն թշնամիսն, զորս յիշեաց 'ի վերոյ, մանաւանդ զդևս, և որք իբր արբանեակք զևաց խաբէութեամբ մոլորեցուցանեն զմարդն 'ի ճանապարհէն ա՟յ։ Իսկ պատճառ այսպիսեօք վարելոյ նոցա է այն՝ զոր ասէ։

Զի ոչ գոյ 'ի բերան նոցա ճշմարտութիւն․ ա՟յ թէ, ոչ խօսին նոքա ճշմարտութ՟բ, և ոչ ևս գտանի ճշմարիտ բառ 'ի բերանս կամ 'ի բանս նոցա․ փոխ զի՝ որ ոչն է՝ իբր է ցուցանեն․ և որ է՝ իբր ոչ է։ Զանցաւոր բարիս իբր անանց ներկայացուցանեն․ իսկ զանանց բարիս իբր ընդունայն։ Այլ թէ երկեցուցանեն 'ի չարէն, խաբեն․ զի համոզեն հեռանալ 'ի փոքր չարէ, որպէս զի արկցեն 'ի մեծն, որպէս սովոր են առնել հերձուածողք։ Այլ թէ յորդորեն առ բարին, պատրեն․ զի համոզեն առնել զփոքր ինչ բարի, որպէս զի 'ի մեծամեծացն զրկեսցեն․ ըստ որում է տեսանել 'ի հեթանոսս․ սիրտք ն՟ց նանրախորհուրդք, և բերանք նոցին չարաթոյնք։ Այլ արմատական պատճառ այսպէս վարելոյ նոցա այն է, զոր ասէ․

Սիրտ նոցա նանրացեալ էն․ ա՟յ միտք և խորհուրդք նոցա

նմանեցեալ և զատուցեալ են 'ի ճշմարտութենէ, և լցեալ միայն ստութբ և անիրաւութբ. ուստի չու-նելով 'ի ներքս զճշմարտութիւն, այլ միայն զստութի, ոչ կարեն հանել անտի զբանս ճշմարտութեան, այլ՝ զստութեան.

Զայս յայտնագոյն ևս ասաց տէրն մեր զանձնէ. յովհ. ը. 44. * Ոչ գոյ (ասէ) ճշմարտութի 'ի նմա. յորժամ խօսիցի՝ սուտ, յիւրոց անտի խօսի. զի սուտ է և հայր նորա ||. ոչ թէ հայր է ստութե. Մարգարէն կամելով նմանաբանութեամբ ևս յայտ առնել զասացեալսն իւր՝ զորս խօսեցաւ 'ի վերոյ զթշնամեաց իւրոց, յառաջ բե-րէ վասն նոցա զօրինակ ինչ, և ասէ.

Ծ. Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա. լեզուօք իւրեանց նենգաւորք էին.

Կոկորդն է վերին մասն որկորոյն, կամ բերան նորին, ընդ որ գնան կերակուրք 'ի ստամոքսն. բայց աստ որպէս և յայլ բազում տեղիս դնի փոխ հագագի. որ է բե-րան ընչափողոյն. և զի սա է առաջին գործիք խօսե-լոյ, որովհետև 'ի հագագն սկիզբն առնուն խօսք 'ի ձևաւորիլ 'ի ձեռն լեզուի, զսա միայն յիշէ աստ մար-գարէն յասելն.

Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա. Զկոկորդ թշնա-մեաց իւրոց բաց գերեզմանի նմանեցուցանէ. որով կամի յայտ առնել նախ, թէ որպէս 'ի պեղել գերեզմա-նի՝ կլանէ զմարդ մեռեալ, սոյնպէս և 'ի բանալ կո-կորդաց թշնամեաց իւրոց, կլանեն զմարդ՝ մեռուցա-նելով զնա չարաչար բանիւք. Կամի յայտ առնել երկրորդ՝ թէ 'ի սիրտ նոցա իբր 'ի գերեզմանի թաղեալ կան խորհուրդք չարք. որոց կափարիչ է լեալ կոկորդ նոցա. Կամի յայտ առնել երրորդ՝ թէ որպէս յորժամ բա-ցեալ լինի գերեզման և կամ բաց մնայ, բուրէ գարշա-հոտութիւն դիականց, սոյնպէս ևս յորժամ բանին կո-կորդք կամ բերանք և լեզուք թշնամեաց, բուրեն ըզ-բանս գարշահոտս, ոչ սուտս և անօրէնս, զայթակ-ղեցուցիչս, և թունաւորիչս հոգւոյ. զի զչարն և ըզ-սուտն յայտնի խօսին. և զի երբեմն նենգութեամբ ևս վարին, վերկ յարէ զկնի, և ասէ.

Լեզուօք իւրեանց նենգաւորք էին. ոչ թէ այսպիսի

թշնամիք ոչ միայն զանօրէնութիւնս և զստութիւնս խօ-
սին, այլև զնենգաւոր բանս հնարեն. իբր զի պատ-
րուակաւ բարւոյ խօսելով հաւանեցուցանեն զչարն.
Այնպէս և դևք, որք են թշնամիք մեր, թէպէտև
չունին զգործիս խօսելոյ, ոպ̃ զկոկորդ, զլեզու, ևն̃,
բայց հնարք նոցա են գործիք նոցին. որովք պէսպէս
բանս անօրէնութեան և ստութե̃ թելադրեն 'ի միտս
մարդոյ. և պատրուակեալ զչարն ընդ տեսակաւ բար-
ւոյ՝ արկանեն զմարդն 'ի բերան սատակելի. Կամ ըստ
ասելոյ լամբր. * զխորխորատ գեհենոյն՝ որ պատրաս-
,, տեալ է իւրեանց, փորեալ 'ի ճանապարհս մեր՝ ծածկեն
,, զնոյն մնոտի խոտովք մարդկային փառօք . . . և
,, նենգաւոր խորհրդոցն լեզուօք անդր ջանան զմեզ
,, կործանել ||.

Այս բանք հային և 'ի փարիսեցիսն և 'ի դպիրսն՝ ո-
րոց բերանք հանգոյն գերեզմանի կամէին կլանել
զՔս̃. որոյ վասն բզմ̃ անգամ նենգութբ̃ խօսէին ընդ
նմա. ոպ̃ տեսանի յաւետարանի 'ի բզմ̃ տեղիս. Հային
և 'ի սադուկեցիսն՝ յուրացօղս յարութեան մեռելոց, որք
նենգաւոր լեզուօք մատուցեալ առ յիսուս՝ ասէին, թէ
կին մի եղև եօթն արանց հետ զհետէ. 'ի յառնել
նոցա ում լինիցի կինն. (մատ. իբ̃. 23 = 28.) ահա
նենգութբ̃ խօսին. զի սուտ ասեն. վասն զի առ հրէայս
չէ օրէն կնոջ յետ երից՝ լինել առն այլում. ապա թէ
ոչ՝ վատանուն համարի. որպէս յայտ է 'ի հռութայ ի-
րացն և 'ի թամարայ. Իսկ թէպէտ 'ի գիրս օրինաց
ասի վասն սառայի (Ղ. 14. և Ի. 9.) տուեալ եօթն
առն, բայց առանց մերձաւորութեան, և կոյս մնալով.
Զայս նենգամիտ ստուի̃ նոցա ոչ եհար յս̃ յերեսս նց̃.
զի ոչ եթէ խայտառակել կամէր զնոսա, այլ զգաստա-
ցուցանել. վասն որոյ յայն ետ հայիլ նոցա այլով բանիւ.
Հային այս բանք և 'ի կեղծաւորս. առ որս ասաց Քս̃.
* նման էք գերեզմանաց բռելոց. որ արտաքոյ երևին
,, գեղեցիկք, և 'ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց.
,, Նոյնպէս և դուք արտաքոյ երևիք մարդկան ար-
,, դարք, և 'ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ և անօ-
,, րէնութեամբ ||. մատ. իգ̃. 27. Մեղքող եղ պաճա-
ճառատանս 'ի մահիճս դաւթի՝ ծածկեալ արտաքուստ
զգեստուք նորա (ա. թագ. ժթ. 13.) Եթէ մերձե-

նաս հայիլ՚ի գործս կեղծաւորաց, համարիս վնասս դա-ւիթս. բայց ՚ի ներքս չիք դաւիթ. գերեզման են՝ ինքեանք, և կոկորդք նոցա, և լեզուք նոցին։

Բազումք ՚ի սրբոց հարց՝ զայս բան ընդ նախընթաց համարոյն վերաբերեն առ հերետիկոսս. զի ՚ի բերանս նոցա ոչ գոյ ճշմարտութիւն. սիրտք նոցա ՚ի նանիր խոր-հուրդս խաբէութեան յածին. գարշահոտութի՛ւ մահու-բուրէ ՚ի կոկորդս նոցա, և նենգութե՛ք խաբեն զպար-զամիտս, և կորուսանեն։

Բազումք ևս զսոյն զայս յարմարեցուցանեն բամբա-սողաց. զի սոքա յորժամ բանան զբերանս իւրեանց, հոտ դիականց բուրէ. իբր զի ՚ի բերանս նոցա մեռանին բամբասեալքն. և հոտ նոցա անտի ելեալ, և յականջս այլոց տարածեալ՝ զզուեցուցանէ։ Այսպիսիք բազում անգամ ոչ կամելով յայտնի բամբասել, նենգաւոր լինին լեզուօք իւրեանց. զի նենգութեամբ բամբասեն. երբեմն ցուցակցելով, աւա՛ղ ասեն, ո՛րքի բարի և ա-ռաքինի ոմն է, և զայս ինչ չար գործեաց։ Երբեմն լռելով. բզմ ինչ կայ ասեն, բայց պա՛րտ է լռել՝ զի մի՛ բամբասանք լիցին։ Երբեմն գովելով, զարմանա-լի է ասեն գործ նորա, և ինքն իմաստուն, բայց։ Եւ ասացեալ զբայցն՝ լռեն. որով եղծանեն զառաջին գովասանութիւն իւրեանց։ Երբեմն այլազգ ևս, զոր-մէ ոչ է տեղւոյս երկարել։ Արդ՝ մարգարէն յայտ-արարեալ զորպիսութի՛ թշնամեաց իւրոց՝ այժմ աղա-չէ զԱծ զսպել զանզգամութիւն նոցա, և ասէ.

Ժ. Դատեա՛ զնոսա Ած՝ զի անկցին ՚ի խորհրդոց իւրեանց. ըստ բազում ամպարշտութե՛ նոցա մերժեա՛ զնս. զի դառնացուցին զքեզ։

Սոյն այսու ոչ խնդրէ մարգարէն՝ զի մերժեսցէ Ած յերեսաց իւրոց զթշնամիս իւր, այլ զի խափանեսցէ զչար խորհուրդս նոցա, և զգաստացուսցէ զնս, զի մի՛ ևս դառնացուսցեն զԱծ. և կամ գուշակէ՝ թէ նոքա մերժելոց են յԱյ։ Բայց կամելով զօրաւոր առնել զբան իւր՝ ՚ի ձև աղաչանաց դնէ յասելն։

Դատեա՛ զնս Ած, զի անկցին ՚ի խորհրդոց իւրեանց։ Այսինքն, դու՝ որ Ած իմ ես՝ և ստեղծող իմ, և ոչ կամիս զկորուստ իմ, ուղղեա՛ զդատաստան, և դատեա՛

զչարիս թշնամեաց իմոց, զորս կամին հատուցանել ինձ. և արա զի անկցին 'ի խորհրդոց իւրեանց բարձրացելոց. իբր զի գիտացեալ նոցա՝ թէ մի՛ պաշտպանելով քո զիս՝ ոչ կարեն առնել ինձ զայն, զոր խորհին և խօսին, անկցին կամ յետս կացցեն 'ի խորհրդոց իւրեանց. կամ թէ ընդունայն լիցին խորհուրդք նոցա, որովք կամէին կորուսանել զիս:

Նայամ օրինակ իմն տայ լամբրոնացին, և ասէ. որ 'ի խորհիլ ումանց խաբել զպարզամիտ ոք՝ եթէ բարեկամ նորա իմացեալ զխորհուրդս նոցա՝ զերծուցէ զնա, նոքա անկանին 'ի խորհրդոց իւրեանց. զի ընդունայն լինին խորհուրդք նոցա. սոյնպէս և 'ի խորհիլ դիւաց կամ չար մարդկան խաբել զարդարն՝ եթէ Աստուած վանեսցէ զնոսա, կամ արգելցէ, և զերծուսցէ զարդարն 'ի ձեռաց նոցա, նոքա անկանին 'ի խորհրդոց իւրեանց: Այսպէս և արար Քրիստոս ընդ պետրոս. զի յասելն զնա, սիմոն սիմոն սատանայ խնդրեաց խարբալել զձեզ. և 'ի յաւելուլն՝ բայց ես աղաչեցի վասն քո, սոլին անկաւ սատանայ 'ի խորհրդոց իւրոց, և յամօթ եղև: Յայսպիսի իմն միտս խօսի և մարգարէն զայս բան. * անկցին 'ի խորհրդոց իւրեանց ||: Նաև կամելով ստակացուցանել զեղանակ խօսից իւրոց՝ յարէ զկնի և ասէ.

Ըստ բազում ամպարշտութեան նոցա մերժեա զնոսա: Տէր որովհետև բազմեղեն ամպարշտութիւնք նոցա առ իս, որովք ջանացան և ջանան մերժել զիս 'ի քէն, դու հայեցեալ 'ի բազում ամպարշտութիւնս նոցա մերժեա, Տէր հեռացո զնոսա յինէն. կամ խափանեա զնոսա 'ի չար խորհրդոց իւրեանց, զորս խորհին 'ի վերայ իմ, և կամ մերժեա զնոսա յերեսաց քոց: Նաև զպատճառ մերժելոյն յարէ՝ ասելով:

Զի դառնացուցին զքեզ: Նայս բան կրկնակի մեկնի. մի՝ թէ թշնամիքն այնոքիկ այնչափ բազմացուցին զամպարշտութիւնս իւրեանց առ իս և առ այլս, մինչև եղեն պատճառ՝ զի դու ես դառնասցիս 'ի վերայ նոցա. Տէր բարկասցիս յոյժ 'ի վերայ նոցա, և մերժեսցես զնոսա, և կորուսցես իսպառ: Երկրորդ՝ թէ կամելով նոցա վնասել մարդկան, և դառնացուցանել նոցա զկեանս, այնու իսկ կամեցան վնասել և դառնացուցանել զքեզ: Զի Աստուած զվնասիլ և զանարգիլ ծառայից իւրոց՝ իւր համարի.

ըստ այնմ, զոր ասաց առ սամուէլ. * Ոչ եթէ զքեզ ա-
նարգեցին, այլ՝ զիս մերժեցին ‖ . ա. Թագ. Ը. 7 :
Դ̃դ՝ մարգարէն յետ խօսելոյ զնոցանէ, որք մերժե-
լի են՝ և կամ մերժեալ յա̃յ, և կամին զայլս ևս մեր-
ժել, սկսանի խօսիլ զերջանիկ կենաց արդարոց, որք
ունին ժառանգել զն̃ծ՝ ըստ ցուցանելոյ վերնագրի
սաղմոսի . վասն որոյ ասէ :

ժա̃ . Ուրախ լիցին ամենեքեան՝ որ յուսացեալ են ՚ի քեզ .
յաւիտեան ցնծասցեն . և բնակեսցես ընդ ՚ի նոսա :

Երկկին կենաց ուրախութիւն է յարդարսն, մի՝ ըստ աս-
տեացս՝ յուսով . և միւս ևս ըստ հանդերձելոյն՝ փա-
ռօք . յաստի կեանս՝ անկատարապէս և փոփոխութբ̃,
խառն ընդ վիշտս . իսկ ՚ի հանդերձեալն ամենակատար
և անփոփոխ, զուտ և անխառն յա̃ և իցէ տրտմութե̃
և ՚ի վշտաց : Յայտնիկ ուրախութիւնս արդարոց հայե-
լով մարգարէին՝ խօսի նախ զառաջնոյն, և ասէ :
Ուրախ լիցին ամէն, որ յուսացեալ են ի քեզ : "Ամենե-
քեան" ասէ, և ոչ ամենեքին . զի որպէս գրէ բարսեղ ՚ի
մեկն . մարկ . գլ . ժդ̃ . յայսպիսի գրոյս * ամենե-
քինն միանաւոր է . իսկ ամենեքեանն ընդհանուր ‖ .
որով ոչ ոք ՚ի բաց թողեալ լինի . Թէպէտ և ամենե-
քինն ևս զնոյն ցուցանէ . ըստ որոյ կամի ասել, ամե-
նեքեան նոքա՝ որք քեզ ծառայեն, յիրաւի յա̃ծի աստ
՚ի պէսպէս փորձութիւնս և ՚ի բազմապատիկ նեղու̃ս
տառապին, և ՚ի գլխաց և յամպարշտաց վտանգաւո-
րին, բայց ուրախ լիցին ՚ի հոգիս . զի զյոյս իւրեանց
ոչ են եդեալ յունայնութիւնս, այլ՝ ՚ի քեզ . և ակն ու-
նին ընդունիլ ՚ի քէն զվարձս ՚ի յարքայութե̃ . յորում
է լրումն ուրախութեան :
Եւ յոյս է՝ որ թեթևացուցանէ զաշխատանս, և
տանի սիրով ա̃ և իցէ վշտաց, և կազդուրէ զջանս .
պահպանէ զհամբերութիւնս և մխիթարէ զհիւան-
դութիւնս : Որպէս յոյս հնձոցն զօրացուցանէ զերկրա-
գործս . յոյս շահու զվաճառականս . յոյս յաղթութեան
զզօրականս : * Ոչ ինչ անբերելի ցուցանէ՝ սրտի
փոքրոգութիւն, թեթև և հեշտ ցուցանէ՝ յուսոյ մե-
ծութիւն ‖ :
Յոյս երկնային՝ աստղ է բևեռական . յոր եթէ ոք

անշարժ հայեցի՝ ոչ վրիպի 'ի հասանելոյ 'ի նաւահանգիստ կենաց ։ Գամբար ձոնապայծառաձակ, որոյ լուսով շրջիմք և գործեմք ։ ( սաղ. ճժը. 105 ։ ) Ճախուղայ զուարթարար՝ փարատիչ երկիւղի ։ Ադամանդ անխորտակելի հանգուցանաւոր երկնից պարգուէ ։ Մարգարիտ անգին, յորոյ վերայ արժան է ծախել զամ ինչս մեր ։ Գանձ թագուցեալ յագարակի սրտի մերոյ իբր յամանօթ խեցեղէն ։ ( բ. կոր. դ. 7 ։ ) Վահան է հաւատոյ, և սաղաւարտ փրկութե ։ որով անվնաս պահեմք զգլուխս մեր 'ի յարձակմանէ նետից թշնամւոյն ։ Խարիսխ է անդրութեան տատանելոյս 'ի ծովու կենցաղոյս ։ Այս յոյս է, որով ակն ունիմք մխիթարութեանն իէլի ։ ( ղուկ. բ. 25 ) ։ այնմ մխիթարութեան, որով ցնծան արդարք, և ունին ցնծալ յաւիտեան 'ի հասանել նոցա 'ի ժառանգութի ածային երանութեան ։ զոր և առաջի առնէ մարգարէն յաջորդ բանիւն ասելով ։

Յաւիտեան ցնծասցեն ։ այս 'ի տեսանել արդարոց զերեսս քո՝ հաղորդեսցին ածային անսահման և յաւիտենական ուրախութեան քո ։ և այնու ուրախութբ ուրախասցին և ցնծասցեն յաւիտեանս յաւիտենից ։

Այս ուրախութիւն կամ ցնծութի ոչ միայն է յաւիտենական, ըստ որոյ ասէ՝ * յաւիտեան ցնծասցեն ||, այլև ամենամեծ, մինչև մարդկային բաղձանաց՝ որ ամենատարած իմն է, մտանել և ընկղմել 'ի նոյն ։ ըստ այնմ, * Մուտ յուրախութիւն տն քո || ։ մատ. իե. 21 ։ Իսկ արդ՝ եթէ ոչ էր ամենամեծ, անսահման փափաք մարդոյ ոչ կարէր մտանել 'ի նոյն, այլ՝ նմայր արտաքոյ ։ Իսկ վս զի ամենամեծ է, է և ամենալի ։ ըստ այնմ, * և ձեր ուրախութիւն լցեալ եղիցի || ։ յովհ. ժե. 11 ։ Իսկ այս մեծութիւն և լիութի ծագի աստի ։ զի ըստ յիշելոյ մեր այժմ՝ այն ուրախութի է հաղորդութի ածային անսահման ուրախութեն ։ քանզի ասէ տրն ։ յովհ. ժե. 11 ։ * Ուրախութիւն իմ 'ի ձեզ իցէ || ։ այս այն ուրախութիւն որ իմ է, 'ի ձեզ եղիցի ։ վս զի նորքն զայն ուրախութիւն ունին վայելել, զոր վայելէ ած ։ և այս յայտ անտի է, զոր ասաց քս, * Ուտիցէք և ըմպիցէք 'ի սեղան իմ յարքայութեան իմում || ։ ղուկ. իբ. 30 ։ արդ՝ որ նստի 'ի սեղան թգի, և ընդ նմա ուտէ, զայն

կերակուր ուտէ՝ զոր ուտէ Թագաւորն . ապա և սուրբք զայն ուրախութիւն վայելեն՝ զոր ունի ա̃ծ ։ Իսկ պատճառ այսպիսի լինելոյ ուրախութեան սէր՝ այն է, զի ա̃ծ բնակի 'ի նոսա . յոյր սակս խօսք յարէ զկնի, և ասէ ։

Ս̃– ԲՆԱԿԵՍՑԷ ԴՈՒ 'Ի ՆՍ ։ ա̃յ է՝ բնակիլս և բնակեսցիս դու 'ի հոգիս նոցա, ա̃յ 'ի հոգիս արդարոց, եթէ աստ և եթէ 'ի հանդերձեալն ։ Զի ա̃ծ բնակի 'ի հոգի մարդոյ նախ 'ի կեանս յայս 'ի ձեռն սրբարար շնորհաց, որով սրբեալ զհոգին յաղտեղութենէ մեղաց՝ առնէ զնոյն տաճար ա̃ծութեան իւրոյ, և բնակի 'ի նմա իբր բարեկամ 'ի տան բարեկամի . և գործէ 'ի նմա զայն ինչ, զոր ինչ գործէ հոգին 'ի մարմնի . իբր զի գերբնական շարժութեամբ կենդանացուցանէ զներգործութիւնս հոգւոյն . յա̃մի առաջնորդէ 'ի բարին . զգուշացուցանէ 'ի չարէ . վանէ զարգելս ընթացից առաքինութե̃ . զօրացուցանէ, քաջալերէ, մխիթարէ և ուրախ առնէ ։ Եւ ո̃ր յեղծանիլ մարմնոյն՝ ոչ ևս մնայ հոգին 'ի նմա, այլ՝ անջատի 'ի նմէ, սոյնպէս և յեղծանիլ հոգւոյն 'ի ձեռն մեղաց՝ ոչ ևս բնակի ա̃ծ 'ի նմա . զի թէպէտ յա̃մի է ա̃ծ, և ոչ երբէք հեռանայ յումեքէ, ապա թէ ոչ՝ դադարէր յէութիւն, բայց ը̃ս բանի բնակելոյն ասի հեռանալ 'ի մեղաւոր հոգւոյ ։ Երկ̃դ՝ բնակի ա̃ծ 'ի հոգին 'ի ձեռն լուսոյ փառաց 'ի հանդերձեալն . և այս բանիւ իմանալի տեսակի . զորմէ գիտել արժան է, զի մեք որովհետև տեսանեն զա̃ծ դէմ յանդիման, կարօտին ունիլ յինքեանս զիմանալի տեսակ երևեցուցիչ էութեանն ա̃յ . և քանզի ոչինչ ստեղծական տեսակ կարէ երևեցուցանել զայն, զի է անսահման, նոյն ինքն էութիւնն ա̃յ բնակի 'ի նս բանիւ իմանալի տեսակի՝ յայտ յանդիման երևեցուցանել զինքն . և վ̃ոկ ասի 'ի յայտ . է . 15 . * Որ նստի 'ի վ̃ր . աթոռոյն, բնակեալ է 'ի նս ‖ ։ Եւ ո̃ր առ 'ի բնակիլ ա̃յ 'ի հոգի արդարոյն յաստի կեանս՝ պիտոյ է սրբարար շնորհք՝ մաքրել զայն, և տաճար կազմել ինքեան, սոյնպէս ևս առ 'ի բնակիլ ա̃յ 'ի հոգիս երանելոց իբր իմանալի տեսակ՝ պիտոյ է լոյս փառաց, որ վերացուցէ զհոգին յընդունելութիւն էութեանն ա̃յ ։ Եւ այս բնակութիւն այնչափ գերազանց է և սքանչելի, մինչև փոխադրել զհոգին իմանալապէս յա̃ծ, և առ-

նել նման նմա. ոդ̃ ասի. ա. յովհ. գ. 2. * Յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն ‖ ։ Եւ յայսմ տեսութե՛է երբ յարմարոյ շառաւիղէ ՚ի հոգիս սրբոց յաւիտենական և ա͞ծային իմն ուրախութիւն և ցնծութիւն՝ լնուցուցիչ ա͞մ բաղձանաց հոգւոյն, և զմխլեցուցիչ բոլոր ա͞մի։ Եւ զի զայս ուրախութիւն վայելել ակն ունին արդարքն, վ͞ն զա͞մ նեղութիւնս աստի կենաց յօժարութբ͞ և ուրախութբ͞ առնուն յանձն, և ցնծան ևս ՚ի նոսին պարծանօք. որով և օրհնին յա͞յ, և կան անդորր։ Եւ զայս կամելով յայտ առնել մարգարէին՝ յաւէ զկնի, և ասէ։

ժբ. Պարծեսցին ՚ի քեզ սիրելիք (այսինքն սիրօղք) անուան քո. զի օրհնեսցես դու զարդարն. տէր որպէս զինու հաճութեամբ պսակեցեր զմեզ։

Սիրելիք անուանն ա͞յ ասէն նոքա որք սիրեն զաստուած, և յանուն ա͞յ գործեն զամենայն գործս իւրեանց, և յանուն նորա, և ՚ի սէր նր͞ համբերեն նեղութեց, և պարծին ևս ՚ի նա ՚ի նեղութեան իւրեանց. յայս հայելով ասէ։

Պարծեսցին ՚ի քեզ սիրելիք անուան քո։ Այսինքն. որովհետև արդարք սիրեն զքեզ, և են բարեկամ քո, ոչ միայն սիրով և ուրախութեամբ կրեն զնեղութի յա͞յի աստ, այլև նոքօք պարծին ՚ի քեզ. զի տեսեալ՝ թէ նովիմբք կան ՚ի սէր քոյ, և վասն նոցին ունին առնուլ զմեծամեծ վարձս յարքայութեան քում. ուրախ լինին և ցնծութբ͞ ասեն, * Ոչ են արժանի չարչարանք ժամիս համեմատ հանդերձելոց փառացն, որք յայտնելոց են ՚ի մեզ ‖ . հռովմ. ը. 18։ Եւ որպէս աստ, նոյնպէս և ՚ի հանդերձեալն պարծելոց են, ու͞ ուրախանալոց են, տեսանելով՝ թէ ՚ի ձեռն շնորհաց քոց յորպիսի փառս ժամանեցին։

Եւ զի մի լիցի կարծել, թէ արդարք յուսալով՚ի զօրութիւն իւրեանց՝ պարծին, ասէ՝ պարծեսցին * ՚ի քեզ ‖ . որպէս թէ ասէր, յուսալով՚ի քեզ և ՚ի զօրութի քո՝ պարծեսցին. կամ թէ վասն քո պարծեսցին։

Կան ևս՝ որք պարծին ոչ յա͞ծ, այլ՚ի պարդևս աստուծոյ, ոչ երբ յա͞յ տուեալ, այլ երբ յիւրեանց ստացեալ.

որպէս որ պարծիցի 'ի հանճար իւր կամ 'ի գիտութիւն, և որ պարծիցի 'ի զօրութիւն իւր կամ 'ի մեծութիւն. և որ պարծիցի 'ի գործս առաքինութեան կամ ողորմութեան, ևն ։ Այնպիսին ողքա յիմարեալս զգանձ, և պարծելով ցրուեն և կորուսանեն ։ Որ գնայ ընդ ճանապարհ, զգուշանայ՝ զի մի գիտասցեն աւազակք՝ թէ կայ առ իւր գանձ, և գիտելով զայն՝ գողասցին. եթէ յայտնեսցէ՝ կորուսանէ ։ Հաւք յածելն զձուս՝ կարկաչեն. և որք լսենն՝ առնուն զձուս նց, և ուտեն. 'ի գործելդ գործ ինչ մեծ՝ մի կարկաչեր, պարծելով. ապա թէ ոչ՝ ելանէ այն 'ի ձեռաց քոց ։ Ծածկեն արդարք զբարի գործս իւրեանց. և ած՝ որ տեսանէ 'ի ծածուկ, հատուցանէ նոցա յայտնապէս. վ՞յ նմա միայն յայտնեն, և 'ի նա ընծայելով՝ նուէր պարծին. և ած հայելով յընծայութիւն պարծանաց նց՝ օրհնէ զնս. ըստ որում և յայտ առնէ մարգարէն ասելով ։

ԶԻ ՕՐՀՆԵՍՑԵՍ ՏԷՐ ԶԱՐԴԱՐՆ ։ Օրհնելն այ զոք յայտ է, զի հաճելով ընդ նա՝ լիացուցանէ զնա հաստատուն բարեօք. կամ ես տայ նմա զայն ինչ՝ որով զօրանայ կատարել բարւոք՝ զոր պարտ է առնել. և ընդունիլ լիով՝ զոր արժան է առնուլ, եթէ աստ, և եթէ 'ի հանդերձեալն. զի աստ հաճելով ընդ նա տայ նմա զայնպիսի շնորհս՝ որով լինայ 'ի կարգի իւրեք բարւոյ, և կամ զօրանայ բարւոք կատարել զկամս աստուծոյ, և քաջապէս համբերել նեղութեանց, և ստանալ և ունել զառաքինութիւնս, ևս և զուրախութիւն սրտի ։ Իսկ 'ի հանդերձեալն՝ հաճելով ընդ նա՝ տայ նմա զլոյս փառաց, որով զօրանայ և վերանայ միտքն 'ի տեսանել զած. յորում և ստանայ և ժառանգէ զամ բարի յաւիտեան ։ Ըստ այսմ մտաց խօսի աստ մարգարէն զայս բան. որպէս թէ ասէր. վ՞կ պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան քո, զի դու օրհնես և օրհնեսցես զարդարն և զսիրօղս անուան քո, հաճելով ընդ նս՝ և տալով նց զշնորհս քո՝ համբերել վ՞ս քո 'ի նեղութիւնս. և ցնծալ աստ ակնկալութբ վարձուցն հատուցման, և վայելել 'ի հանդերձեալն զփառս երանութեան ։

Բայց այն օրհնութիւն է, զորմէ ասէ առաքեալն. * օրհնեաց զմեզ ամ հոգևոր օրհնութբ յերկնաւորս 'ի քս. . . որով և վիճակեցաք յառաջագոյն հրաւի-

րեալք ըստ յառաջագրութեան ա՟յ՝ լինել մեզ 'ի գովեստ փառաց նորա յառաջագոյն յուսացելոցս 'ի ք՟ս ‖ . եփես ա՟ . 3 . և 11 ։ Իսկ քանզի արմատն՝ յորմէ շառաւիղեն ա՟մ բարիք , և սկիզբն՝ յորմէ զեղուն 'ի մեզ ա՟մ օրհնութիւնք , է հաճութիւն ա՟յ , զի ա՟ծ վասն հաճելոյ օրհնէ՝ ընդ որ հաճի , զայն հաճութ՟ի ա՟յ յառաջ բերէ մարգարէն , և ասէ ։

Տ՟ր՝ որպէս զինու՝ հաճութեա՟ն պսակեցեր զմեզ ։ Հաճութի՟ն ա՟յ կրկնակի մասամբ , առ 'ի ներքս՝ և առ արտաքս ։ Առ 'ի ներքս մասամբեաւ՝ է հաճելին նորա ընդ անտահման բարութիւն իւր , և ընդ բարութի՟ն՝ զոր կամի տալ այլոց . և հասարակօրէն այսու նշանակու՟թ վարի 'ի սուրբ գիրս բառդ հաճութ՟ի ա՟յ . ը՟ն այնմ , եփես . ա՟ . 9 . * Ծանուցեալ մեզ ( ա՟ծ ) զխորհուրդ կամաց իւրոց ը՟ս հաճութե՟ իւրում ‖ ։ և փիլ . բ՟ . 13 . * Ա՟ծ է՝ որ յաջողէ 'ի ձեզ զկամելն և զառնելն վասն հաճութե՟ ‖ ։ Իսկ առ արտաքս մասամբեաւ՝ հաճութիւն ա՟յ է այնպիսի իմն նշան , որով ճանաչեմք՝ թէ ա՟ծ կամի զայս ինչ կամ զայն . որպիսի են պատուիրանքն ա՟յ . եւ և այն ա՟մ՝ զոր կամի աստուած , զի արարցուք . կամ այն ա՟մ , զոր առնէ ա՟ծ 'ի նախախնամելն զ՟ծս . և այս յաւէտ կոչի հաճոյք ա՟յ . ըստ որոյ ասաց ք՟ս . յովհ . ը՟ . 29 . * Ես զհաճոյս ն՟ր առնեմ հանապազ ‖ . ա՟յ առնեմ զայն ա՟մ , ընդ որ հաճի ա՟ծ հայր իմ , զի արարից ։ Իսկ յայս միտ՝ յորժամ պատահի ինչ մեզ , ասեմք , այս է հաճութի՟ն ա՟յ , կամ կամքն ա՟յ . ա՟յ թէ այսպէս հաճի ա՟ծ , կամ այսպէս կամի . կամ թէ այս եղև ըստ հաճութե՟ նորա , կամ ը՟ս կամելոյ ն՟ր ։

Արդ՝ որպէս երևի , մարգարէն յայս երկուս միտս եւ առնու աստ զհաճութի ա՟յ . և զայն նմանեցուցանէ զինու , ա՟յ այնպիսի իրի՝ որ 'ի գործ ածի 'ի պատերազմի՝ առ 'ի վանել զթշնամին , որպիսի են՝ նիզակ . տէգ , սուր , ևլն . և կամ առ 'ի պաշտպանել զանձն 'ի թշնամեաց . որպիսի են՝ վահան , զրահ , վերտ . ևլն ։ Որպ՟ս սոքօք պաշտպանի զինուորն 'ի պատերազմի , և յաղթէ թշնամեաց , նոյնպէս եւ մեք գոլով իբր զինուոր 'ի հոգևոր պատերազմի՝ հաճութեամբն ա՟յ իբրև զինու պաշտպանիմք 'ի թշնամեաց մերոց . և յաղթեմք նոցա ։ Եւ յայս միտս ասէ , որպէս զինու պսակել ։

Իսկ պսակելն է դնել զպսակ , կամ զթագ 'ի գլուխ

ուրուք՝ վասն իշխանութեն, կմ վն վարձուց, և կամ վն այլ ինչ պատճառի. ըստ այնմ. * պսակեցաւ կրկին Թագաւն ասիացւոց, և Թագաւն եգիպտացւոց ||. ա. մակ. ժա. 13: Իսկ փոխաբերաբար առեալ՝ պէսպէս կարէ նշանակել. մի՝ փնկ կատարելոյ կամ լրացուցանելոյ, ըստ որում պսակն բոլորակութբ իւրով ցուցանէ զլրումն ինչ. ըստ որում և ՚ի գլուխն դնի, որ լրումն է կենդանւոյն: Երկրորդ՝ փնկ վարձատրելոյ վասն իւրեք գործոյ. ըստ այնմ. * ոչ պսակի, եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ ||. բ. տիմ. բ. 5: Երրորդ՝ փնկ զգեցուցանելոյ կամ զարդարելոյ. ըստ այնմ, * փառօք և պատուով պսակեցեր զնա ||. սաղ. ը. 6: Չորրորդ փոխանակ պաշտպանելոյ և խնամելոյ, ևս և փառաւորելոյ. ըստ այնմ. * պսակէ զքեզ ողորմութբ և գթութբ ||. սաղ. ճբ. 4: Հինգերորդ՝ փոխանակ շուրջանակի պատելոյ զինչ իւիք զօրութբ և խնամով իբրև պսակաւ: Իսկ աչս փնկ այսր առնու սաս մարգարէն զպսակելն. ևս և փոխանակ պաշտպանելոյ: Որպէս թէ ասէր. որովհետև արժան է տն ՚ի տեսանելն զծառայս իւր մտանել ՚ի պատերազմ, զինուք պսակել զնա, կմ զինուք պատել, և ըստ կարի պաշտպանել զնա, և յաղթանակօղ առնել, դու ևս գոլով տէր մեր՝ հաճեցար այսպէս առնել ընդ մեզ. իբր զի քո ամենայն ներքին հաճութբ, և քո շնորհիւդ՝ որ տուաւ մեզ ՚ի հաճոյէ քումմէ, և քո քաղցր նախախնամութբդ՝ իբրև զինու, կամ իբրև զրահիւ պատեցեր զմեզ. և այնու պահեցեր և պաշտպանեցեր զմեզ ՚ի թշնամեաց մերոց, և յաղթանակօղ արարեր ընդդէմ նոցա. և ունիս ևս փառօք պսակել և փառաւորել զմեզ յերկինս: Կամ որ նոյն է, հաճութին քո եղև մեզ իբրև զէն պաշտպանօղ ՚ի թշնամեաց մերոց, և արար զմեզ յաղթօղ նոցա. ևս և արժանաւոր յաւիտենական պսակաց: Իսկ կամ համառօտիւ ևս, հաճոյքդ քով շուրջ պատեցեր զմեզ և պաշտպանեցեր, որպէս զինուորն պաշտպանի ՚ի ձեռն զինու. և նովին արարեր՝ զի պսակեսցուք ՚ի հաճութենէ քումմէ:

Այլ է ՚ի մարդիկ զէնն, և այլ պսակն. իսկ առ այ մի և նոյն տեսանի զէնն և պսակն. ՚ի պատերազմին՝ զէն է հաճութիւն նր. ՚ի տալն զյաղթութին՝ և ՚ի փառաւորելն՝ պսակ է:

Յարմարական մեկնութք 'ի ձեռն հաճունէ խնդրեալ լինի այն ընդ որ հաճեցաւ յո՛ այն է նշան որոց խաչին. զոր հաճութք էառ յուս իւր, և հաճութք բևեռեցաւ 'ի նմա. և նովաւ իբր զինու զօրացոյց զմեզ և պսա֊կեաց, ք̃ս զարդարեաց և փառաւորս արար։

Յայլ ինն հոգևորական միտս ևս կարէ մեկնել այս բան. զորմէ ասէս 'ի սաղ. Է. 5. իբր զի 'ի ճանաչելն մեր՝ թէ հաճութիւն ա̃յ է՝ այսմ այսպէս լինել, և այնմ այնպէս, այսու ճանաչմամբ հաճութեան ա̃յ՝ ո̃ղ զինու ամրանամք, և մնամք անվրդով և անշփոթ յա̃մ փոր֊ձութիւնս և 'ի վտանգս. և արժանաւորիմք պսակել յա̃յ յերկինս անվախճան փառօք յաւիտեանս յաւի֊տենից։

# ՍԱՂՄՈՍ Զ.

Թախանձագին մաղթանք առ Ա̃ծ 'ի դիմաց զղջացեալ մեղաւորի, պաղատելով առ նա՝ ողորմել և բժշկել և փրկել զանձն, և վանել զթշնամիս։ Այլ ևս խոս֊տովանութիւն տկարութե̃ անձին, և ընդունելութե̃ հոգևոր առողջութեան։

Ի կատարած ընդ օրհնութիւնս վասն ութերորդացն. սաղմոս 'ի Դաւթի։

1 Տէր մի՛ սրտմտութեամբ քո յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ
քո խրատեր զիս։ 2 Ողորմեա՛ ինձ Տէր, զի հիւանդ եմ
ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ 3 Անձն իմ
յոյժ խռովեցաւ. և դու Տէր մինչև յե՞րբ։ 4 Դարձի՛ր Տէր, և
փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս Տէր վասն ողորմութեան քոյ։ 5 Զի
ոչ ոք է՝ որ 'ի մահու յիշէ զքեզ, կամ 'ի դժոխս խոստովան առ֊
նիցի առ քեզ։ 6 Վաստակեցի ես 'ի հեծութեան իմում, լուացի
զա̃մ գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թա֊
ցի։ 7 Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ, և մաշեցայ ես 'ի մ̃ջ ա̃մ
թշնամեաց իմոց։ 8 Ի բաց կացէք յինէն ա̃մ, որք գործէք զա֊
նօրէնութիւն. 9 Լուաւ Տ̃ր ձայնի լալոյ իմոյ. լուաւ Տ̃ր աղօթից

իմոյ, և տէր զխնդրուածս իմ ընկալաւ։ 10 Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա՟մ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ, վաղվաղակի և խռովեսցին։

## ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած ընդ օրհնութիւս վասն ութերորդացն. սաղմոս ՚է Դաւթի։

ՅԻՆՉ ՄԻՏՍ ԱՐԴԵՕՔ ԴՆԻ-ցի այս բառս "ութերորդաց", որ առ Եբրայեցիսն գրի "ալ հաշէմինիթ", ( ելեալ ՚ի բառէս շէմինա, որ է ութ, և շէմինիթ, որ է ութերորդ ) բազում են կարծիք։ Ոմանք, ընդ որս և վարդան՝ իմանան եղեալ վասն վերջին դարուն, ա՟յ վասն յաւիտենականումն. զի ը՟ս կարծեաց ո՟մ ՚ի սկզբանէ ա՟շի մինչև ՚ի ժ՟մկս նեռին վեց դարք են. իսկ ժ՟մկ նեռին մինչև ՚ի գալուստ ք՟ի՝ եօթներորդ դար. որում յաջորդէ յաւիտենականութիւնն իբր ութե՟րդ։ Իսկ բարսեղ ՚ի մեկն. մարկ. գլ. ժե. հայելով ՚ի վեցօրեայ արարչութիւն ա՟շի, և զաւուրս մեր յարմարեցուցեալ այնմ՝ ասէ. * յորժամ իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ
,, կատարէ զվեցերորդ օրս զայս, որով շրջիմք յաշխար-
,, հի սրբութ՟բ և արդարութ՟բ, և վճարիմք և կա-
,, տարիմք մահուամբ, մարմինք մեր եղեալ լինին ՚ի
,, գերեզմանի. և հոգիք մեր խորհրդական խաղաղու՟բ
,, ( իբր յաւուր եօթներ՟դի շաբաթանման, ա՟յ ) հանգ-
,, չին ընդ ա՟ծ մերոյ ՚ի ձեռն գործոցն բարեաց, մինչև ՚ի
,, գալ ութե՟րդ աւուրն. յորում լինելոց է յարութիւնն
,, հասարակաց. յայնժամ մարմինք մեր ՚ի յարութեանն
,, յառնեն փառօք. և խառնեալ միանան ընդ միմեանս
,, հոգին և մարմին. և զարդարին և գեղեցկանան
,, ա՟ծական փառօք. և ժառանգեն ՚ի միասին հոգին
,, և մարմին զկեանս անտրտում և անվախճան յաւի-
,, տեանս յաւիտենից ||։

Ոմանք իմանան զայս ՚ի վ՟ր յարութե՟ն ք՟ի, կամ ՚ի վերայ անցիցն այնոցիկ, որք եղեն ՚ի միաշաբաթու յարու-

թեն. ըստ որում միաշաբաթին, զոր կիւրակէն, սկսեալ 'ի նախընթաց շաբաթէ՝ ութերորդ օր է։ Այս կար-ծիս է և շնորհալին 'ի մեկն. մատթ. գլ. Ե։ Նա և՛ որք բարոյապէս իմանան 'ի վե՛ր քրիստոնէական առա-քինութեց. իբր զի բարոյական առաքինութիւնք, որք վասն բազմութե կարեն եօթն ասիլ, կատարին յառաքի-նութիւնս քրիստոնէից իբր յութերորդ։

Բազում ռաբբիք հրէից իմանան վասն աւուրց թլփա-տութե. ըստ որում հրեայք յաւուրն ութերորդի թլփա-տեն։ Որ շնորհալին 'ի վերոյիշեալ տեղւոջ՝ յութ-օրեայ թլփատութիւն հոգւոյ վերածէ և 'ի բաց ըն-կեցումն մեռելոտի գործոց։

Եւ ըստ հասարակ կարծեաց՝ բառիս "ութերորդ" նշանակի աստ նուագարան կամ սաղմոսարան, և կամ քնար ութաղեայ. որպիսի է սանթուռն այն, որ ութ աղիք կրկնեալ են. կամ ըստ աւանդելոյ հրէից՝ ութնա-թել ջութակ, այն է թամպուռ. կամ ըստ այլոց ութե-ղեգնեայ սրինգ, որպիսի է ութփողեայ մնխալն. կամ և սփող ութնածակեայ, որ է իբրև նէյ կամ նայ, կամ կլրինֆ. զի 'ի հնումն այսպիսեօք նուագէին զսաղ-մոս պաշտօնեայք խորանին, և ըստ այսմ յասելն * վն :, ութերորդացն. սաղմոս 'ի դաւիթ ||, միտ բանին բա-ցատրի այսպէս. այս սաղմոս դաւթի նուագելի է ութաղեայ քնարիւք, ևն։

Համանականացն ևս է ասել, թէ ութերորդօք նշա-նակի աստ ութերորդ ձայն, կամ ութերորդ դաս երգե-ցողաց. և թերևս յայս միտ՝ Ա. մնաց. ԺԵ. 21. գրի թէ մատթիաս և եղիփաղէաս և այլ պաշտօնեայք կարգեալ էին * սրնգօք սենէթիաս զօրացուցանել ||. ուր բառդ սենեթիաս ըստ տառադարձութե դնի փինկ եբրայական բառիս շէմինիթ, որպէս յայտ է 'ի թարգ-մանութենէ եօթանասնից, ուր դնի ամասէնիթ, այս է հաշէմինիթ, զոր ըստ ութերորդի. ապա թէ ասէր. այս պաշտօնեայք կարգեալ էին երգել զսաղմոս այնու ձայնիւ՝ որ է ըստ ութերորդաց, կամ ըստ դասու ութերոր-դաց. յայս միտ և 'ի վերնագրի աստ եդեալ է վասն ութերորդաց, այս է սաղմոս յօրինեալ վն ութերորդ ձայնի, զոր վասն նուագելոյ ութերորդ ձայնիւ։

Իսկ ասելովն 'ի կատարած ըստ օրհնութիս, կամ ըստ եբրայա-

կանոնին լամնաձէաս պինկլինօթ, նշանակի լինել առն-նախատար երգ սաղմոսաց նուագելի ընդ օրհնութիւս. կամ սաղմոս յանձնեալ 'ի նուագարանս՝ երգել ըստ ձայ-նի օրհնութեանց ութերորդօք:

Իսկ թէ այս սաղմոս յինչ առթէ իցէ ասացեալ՝ կամ վասն ինչ պատճառի, բազում են կարծիք: Ոմանք ասեն, թէ զայս ասաց Դաւիթ հայելով 'ի գերութիւն Իլցւոց 'ի բաբելոն՝ իբր 'ի դիմաց նոցա: Եւ ըստ այսմ բառս * 'ի „ կատարած || կարէ ըստ յարմարութեան վերաբերիլ առ այն գերութի. որպէս թէ այս սաղմոս ասացեալ իցէ 'ի դաւթայ՝ հայեցեալ 'ի կատարած Իլցւոցն՝ յորժամ գերեցան 'ի բաբելոն: Իսկ այս կարծիք ոչ երեւի հա-ւանական. զի բանք սաղմոսիս զայսպիսի ինչ իմաստ ոչ տան որոշակի:

Իսկ ոմանք 'ի բաբելոնեայն հրէից ասեն՝ թէ զայս ա-սաց դաւիթ վասն առողջանալոյ 'ի մարմնաւոր հիւան-դութենէն, որ պատահեցաւ նմա ասեն 'ի պատիժ մեղաց իւրոց: Ի սուրբ գիրս այսպիսի հիւանդութի ոչ յիշի ըղ-դաւթայ, այլ միայն հիւանդութի ծերութեան, յորմէ ոչ եւս առողջացաւ: Եւ սակայն գրէ դաւիթ անյաղթ 'ի կանխաբանութեան սաղմոսաց, թէ * զայս հաւաս-„ տեաւ դաւի, զի հիւանդութի ծիւրական ախտի 'ի „ հրամանէ այ 'ի վն հասեալ որ վն յանցանացն՝ մեր-„ ձեցաւ մինչեւ 'ի դրունս մահու, մինչդեռ ապաշխա-„ րէր. եւ յայնժամ ասաց զվեցերորդ սաղմոսն, եւ զե-„ րեսնեւհինգերորդն, եւ զերեսնեւութերորդն, եւ զքա-„ ռասներորդն, եւ զյիսներորդն ||:

Բայց հաւանականագոյն եւ հասարակ կարծիք է ե-րեւելի մեկնչաց, թէ զայս սաղմոս ասաց դաւիթ յա-ռողջութիւն հոգւոր հիւանդութե իւրոյ, որ 'ի մահուչափ մեղաց, յորոց վն արդէն ապաշխարեալն էր. կամ որ նոյն է՝ զայս ասաց 'ի շնորհակալութի այ վասն ընդունելոյ 'ի նմանէ զհոգւոր առողջութի նկարագրելով զանձն իւր 'ի բանս ինչ իբրեւ աղաչօղ եւ խնդրօղ, եւ 'ի բանս ինչ իբրեւ ընդունօղ եւ վայելօղ. եւ այս՝ ոչ միայն 'ի դի-մաց իւրոց, այլեւ 'ի դիմաց ամ ապաշխարողաց: Ուս-տի եւ առ հասարակ ամ քրիստոնեայք, եւս եւ հրեայք զայս սաղմոս ըստ նկարագրին յայս միտս ասեն, կմ վասն գտանելոյ զառողջութիւն հոգւոր: Եւ թէպէտ վասն

մարմնաւորին եւ ասէն, բայց այն է ըստ յարմարական
իմացուածոյ ։

Եւ ըստ այսմ մտաց՝ 'ի վերնագրի եղեալ բառդ՝ * 'ի կա-
„ տարած՝ ‖ կարէ 'ի բարոյական միտս իմացեալ լինել
վ̃ն առողջուն̃, որ է իբր կատարած եւ աւարտ հիւան-
դութ̃, ք̃ վերջացուցիչ եւ աւարտիչ · ա̃պ թէ այս լինէր
մի բանին · այս սաղմոս ասացաւ կամ ասելի է յաւար-
տումն հիւանդութեան հոգւոյ · ք̃ թէ ասելի է յառող-
ջութիւն հոգւոյ, խնդրելով 'ի տ̃նէ՝ զի մի բարկացեալ
թողցէ 'ի ձեռաց իւրոց զայն՝ որ սովաւ պաղատի առ
նա · այլ՝ ողորմեսցի նմա, եւ պահեսցէ զնա, եւ պաշտ-
պանեսցէ 'ի թշնամեաց ։

## ՐՌՆ.

ա. Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս · եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս ։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Յայս սաղմոս՝ ուսթիցս անուանէ մարգարէն զա̃ծ՝
տէր · որով յայտ առնէ նախ՝ թէ ճանաչէ զինքն ըստ
ամենայնի ծառայ նորա, եւ այնպիսի ծառայ՝ որ թէ-
պէտ եւ երբեմն ապստամբեալ իցէ 'ի նմանէ, բայց
յ̃ոմ սրտէ եւս դարձեալ է առ նա · եւ ցանկայ յամենայնի
ծառայել նմա ։ Եւ զայս այսպէս ճանաչելով պաղա-
տի առ նա, զի որպէս ինքն ցանկայ՝ նմա ծառայել, նա
եւս հայեցեալ 'ի յօժարութ̃ի սրտի նորա՝ հաճեսցի միշտ
'ի ծառայութ̃ իւրում պահել զնա, եւ մի՛ իբրեւ զապս-
տամբ ըզ բարկութեամբ յանդիմանեսցէ զնա ։

Յայտ առնէ երկ̃դ, թէ նա ինքն է միայն ինքնիշխան
տէր, որում տկարանայ եւ ոչ ինչ · եւ նոյնն ինքնիշ-
խան տէրութ̃բ եւ աննահանջելի իրաւամբք՝ զմարդ եւ
հաճի, որպէս եւ կամի՝ գործէ · եթէ ումեք տայ ինչ՝
այն է 'ի նորա գթութ̃է · եւ եթէ ոչ տայ, ոչ անիրաւի ·
եթէ փրկէ, ողորմութիւն է · եւ եթէ գանէ, արդա-
րութ̃բ առնէ ։ Յայս ամենիշխան տէրութ̃ի ա̃յ հայելով
աստանօր մարգարէին՝ 'ի մեծութ̃է նորա պատկառեալ
հալի · եւ 'ի բարկութենէ նորին զարհուրեալ սարսի · եւ

ծայրագոյն խոնարհութեամբ յառաջ մատուցեալ տարածէ զամենայն յանդիմանութիւնս նորա, և աղերսէ՝ մի՛ յանդիմանել զինքն սրտմտութեամբ, և մի՛ խրատել բարկութեամբ ։ Սրտմտութիւնն է բարկութիւն սաստիկ և տևողական . իսկ բարկութիւնն է շարժումն սրտի 'ի վրէժխնդրութիւն իրիք վնասու . կամ եռացումն արեան զսրտիւ յառնուլ վրէժ 'ի վնասողէն . զորմէ ունիմք խօսել և այսուր ։ Բայց թուի թէ մարգարէն 'ի նոյն միտս կրկնելով խօսի աստ առ 'ի զօրաւոր ցուցանել զբանն իւր . որպէս և յայլ բազում տեղիս առնէ, յորս սովոր է զնոյն բան այլևայլ բառիւ կրկնել առ ընդունելի առնելոյ զաղաչանսն, կամ առ 'ի սաստկացուցանել զնշանակութիւն ասացելոյ իւրոյ . որպէս ասացաք 'ի սաղ . Ե . 1 ։ Ըստ սմին և աստ միայարելով զերկոսին՝ զսրտմտութիւն և
զբարկութիւն, աղաչէ ։

Նաև թէպէտ ոչ գոյ յԱստուծոյ սրտմտութիւն և բարկութիւն յատկապէս առեալ, բայց զի գործէ զայնպիսիս, որք են գործք կամ ներգործութիւնք սրտմտութեան և բարկութեան, և կարգին առ վրէժխնդրութիւն, վասն այսր սրտմտութեամբ յանդիմանել և բարկութեամբ խրատել յԱստուծոյ գանին . և զայս յայնժամ առնէ, յորժամ իբր 'ի դէմս ածելով յանցաւորին զմեղս նորա՝ վասն մեղաց նորին պատուհասէ զնա, ոչ 'ի սիրոյ, այլ յատելութենէ . իբր զի ոչ պատուհասէ առ 'ի փրկել, այլ՝ առ 'ի կորուսանել, և հատուցումն առնել արդարութեան իւրում ։ Իսկ եթէ 'ի սիրոյ պատուհասեսցէ, և կամ վասն փրկելոյ, ոչ ասի բարկութեամբ խրատել՝ կամ սրտմտութեամբ յանդիմանել, այլ՝ գթութեամբ և հայրաբար . երբեմն ևս ասի 'ի բարկութենէ խրատել՝ բայց ոչ բարկութեամբ . զորմէ տե՛ս 'ի սաղ . լէ . 1 . ուր կրկնի այս բան, յորում ունիմք խօսիլ և զբարկութեամբ խրատելոյն 'ի հանդերձեալն ։

Իսկ թէ իւ հնար է մեզ որոշել յաստի կենանս՝ արդեօք առ 'ի փրկել պատժէ զմեզ Աստուած՝ թէ առ 'ի կորուսանել, չունիմք զայնպիսի նշան, որով աներկբայ կարասցուք իմանալ զայս ։ Նաև սակայն ըստ իմիք նշան կարէ համարիլ այն, զի յորժամ պատժէ զոք առ 'ի փրկել, առաքէ զայնպիսի հարուածս՝ որք կարգին առ օգուտ հոգւոյ, որպիսի են զգաստացուցիչ փորձութիւնք . և ևս արտաքին պատիժք, որպէս՝ հիւանդութիւն,

աղքատութի, սով, հալածանք, եւ․ զի սոքա ըստ ան-
գամ զարթուցանեն զմարդն 'ի թմրութէ, և ստիպեն
աղաղակել առ ած, և գտանել զփրկութիւն, թէպէտ
երբեմն 'ի դատապարտութի ես առաքեն այսպիսիք․
որպէս և տեսանեմք 'ի բազումս ։

Իսկ յորժամ առ 'ի կորուսանել պատժէ, հարկանէ
այնպիսի պատժովք, որք կարգին 'ի չնաս հոգւոյ, եւ
և 'ի դատապարտութի․ և այս կրկնակի․ մի՛ յորժամ ոչ
տայ տեղի ապաշխարութե ըստ ասելոյ աստ լամբրոնաց-
ւոյն, այլ՝ ընդ մեղանչելն պատժէ․ և այս՝ կամ յանկար-
ծական մահուամբ, որպէս բազմաց պատահեցաւ․ կամ
արհամարհելով խրատու, որպէս եղև սաւուղայ․ և կամ
ոչ ես տալով զշնորհս իւր․ յոր միտ ասաց ոմն յիմաստ-
նոց․ * Նկեսցէ Տէր՝ զի լցցի չափ շնորհացն իմ, և
չափ մեղաց քոյ ‖ ։ Նոյնպ՝ յորժամ ամփոփէ 'ի մարդոյ
զխնամակալ ձեռն իւր․ որոյ նշանք են՝ կուրութի մտաց․
խստութի անձնիշխան կամաց․ թուլութի անկանելոյ
'ի շնորհաց, կամ տևելոյ 'ի չար սովորութիս, եւ․ ոչ
թէ մեղօք զմեղսն պատժէր․ ոչ զի ած ինքնին առնէ
այսպէս, այլ զի թողու զմարդն վասն չարութե նորին 'ի
ձեռս հաճոյից իւրոց՝ առնել որպէս և կամի ։

Այս պատիժ այնչափ մեծ է, մինչև ասել ոմանց 'ի
սբ հարց, թէ յաստի կեանս է զայս մեծ պատիժ ոչ
տայ ած ումեք․ վասն զի այս համարի իբր լրումն պատ-
ժոց, կամ իբր վերջին պատիժ․ որպէս երևի յինէլացիս․
որոց յետ ըստ արտաքին պատիժս տալոյ՝ իբրև ետես,
թէ ոչ զգաստանան, զայս պատիժ ետ նոցա՝ իբր վեր-
ջին․ * Ժողովրդ իմ (ասէ) ոչ լուաւ ձայնի իմում․․․
„ բարձի թողի զնոսա․ եւ ‖ ․ սաղ․ Ձ․ 12․ և 13 ։ Իսկ
թէպէտ 'ի պատժելն իւ յաստի կեանս պատիժն միշտ
չափաւորի 'ի գթութե նր, ապա թէ ոչ՝ միանգամայն
դատապարտէր 'ի դժոխս, բայց այսու ամիւ՝ այս պա-
տիժ է զամ պատիժս համարի մեծ և զարհուրելի ։
Յայսպիսի ահագին պատիժս հայելով խօսի աստ
մարգարէն․ յասելն ։

Տէր մի սրտմտութեամբ քո յանդիմաներ զիս․ և մի բարկութեամբ քո
խրատեր զիս ։ Ոչ աղաչէ ազատ մնալ 'ի յանդիմանութե
և 'ի խրատուէ ամն, այլ՝ 'ի սրտմտութեամբ յանդիմանե-
լոյն, և 'ի բարկութե խրատելոյն․ որպէս թէ ասէր․ մի

ըստ սրտմտութեան քո յանդիմանեա հարկանէր յերեսս իմ զոր ինչ ընդդէմ քո գործեցի. և մի՛ ըստ բարկութեանդ 'ի պատուհաս մատներ զիս ։ Ո՛չ հայիր, թէ արդեօք արժանի՞ իցեմ յանդիմանելոյ 'ի քէն սրտմտութեամբ, այլ՝ հայեա՛ց՝ թէ արդեօք արժա՛ն է անսահման ողորմութեան քում քաւել և բժշկել զիս գթութեամբ ։ Ո՛չ հայիր 'ի պահանջողութիւն բարկութեան քո 'ի հեղուլ զայն 'ի վերայ իմ. այլ՝ հայեա՛ց 'ի քաղցրութիւն ամենաբարի բնութեանդ՝ առ 'ի սփոփել զիս ։ Ո՛չ հայիր՝ թէ որչափ կարես պատժել զիս, այլ՝ հայեա՛ց՝ թէ որչափ կամիս ողորմիլ ինձ ։ Ո՛չ հայիր յիրաւունս վրէժխնդիր արդարութեան քոյ՝ առ 'ի խորտակել զիս պատժով, այլ՝ հայեա՛ց յիրաւունս գթութեան քո՝ առ 'ի խրատել զիս սիրով ։ Զայս խնդրէր և երեմիա՝ ասելով, * խրատեա՛ զմեզ տէր. բայց իրաւամբք, և մի՛ ցասմամբ ‖. երեմ. Ժ. 24. որպէս թէ ասէր, իրաւունք են տէր՝ զի հայեցեալ յանբաւ գթութիւն քոյ, ես և 'ի տկարութիւն մեր՝ խրատեսցես զմեզ ողորմութեամբ քան թէ բարկութեամբ ։ Նա արդ քանզի խնդրեաց մարգարէն՝ մի՛ պատահիլ խրատու բարկութեան Տեառն, յողորմութիւն նորա ապաւինի, և թախանձելով պաղատի առ նա, և ասէ ։

Բ. Ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ ։

Նոկուն ողորմութեանն փաղանշանէ զերկուս, այս է զողորմածութիւն յայնմ որ ողորմի, և զողորմելութիւն յայնմ որում լինի ողորմիլ. և ըստ այսմ առ ընդունելութիւն ողորմութեան պատշաճ ճանապարհ և յարմար միջնորդ է յայտարարութիւն երկաքանչիւրոցն ևս, այս է խնդիր մատուցեալ առ այն՝ որ ողորմի հայելով յողորմածութիւն նորա, և ցոյց թշուառութեան անձին՝ այս է յողորմելութիւն այնր որ խնդրէ ։ Զայն է տեսանել յառաջիկայ բանդ՝ յասելն ։

Ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ ես ։ Որպէս թէ ասէր. փոխանակ բարկութեամբ խրատելոյ զիս՝ ողորմութեամբ քով խնայեա՛ յիս. վասն զի ուր ողորմելի վիճակ է, արժա՛ն է ցուցանել անդ զողորմութիւն, և ոչ զբարկութիւն. և ուր հիւանդութիւն է, արժան է մատուցանել դարման բժշկութեան, և ոչ զսպառնալիս վրէժխնդրութեան. արդ

տէր՝ ահա ամենևին ողորմելի ես եմ, և հիւանդ մեղօք․ ապա ցոյց առ իս զողորմութիւն քո, և տուր՚ի դարման բժշկութե հոգւոյ իմոյ զկենդանարար շնորհս քո։ Ոչ խնդրեմ զփափկութի դեղոցդ մխիթարութե, զի այդմ անարժան եմ․ ոչ խնդրեմ զքաղցրութիւն ծանօթութե սքանչելեաց քոց, զի անարգեցի զնոյն․ ոչ խնդրեմ փառաւորիլ՚ի քէն աստ, զի զփառս քո արհամարհեցի։ Այլ՝ միայն զայս խնդրեմ և զսոյն աղաչեմ, մի բարկանար՚ի վր իմ վս մեղաց իմոց, այլ՝ համարելով զմեղս իմ թշուառութի մեծ և հիւանդութիւն ցաւալի՝ ողորմեա ինձ․ և ողորմելովդ բարձ յինէն զայս թշուառութի հիւանդութեան իմոյ։ Ոչ աղաչեմ իբրև որդի, զի զորդիութեան պատիւն կորուսի․ ուստի և չունիմ համարձակութիւն ասելոյ՝ հայր ողորմեա ինձ․ այլ՝ իբրև անարգ ծառայ թախծագին մաղթեմ, և պատկառելով դիմօք պաղատիմ առաջի տէրութեանդ, ողորմեա ինձ տէր՝ զի հիւանդ եմ ես։ Այս հանգիտութիւն, որով մարգարէն հիւանդի նմանեցուցանէ զանձն իւր, եթէ ըստ տրամադրութե մտածեսցի, հայի՚ի հիւանդութի կամաց․ զի որում՚ի տկարանալ նորա՝ հետևի մեղանչել, և՚ի մեղանչելն՝ կրկին ես տկարանալ։ Իսկ եթէ ըստ ինքեան մտածեսցի, հայի յայլ և այլ համգամանս հիւանդի․ մի՝ զի որպէս՚ի հիւանդն անկարգանան խառնուածք չորից հիւթոց, սոյնպէս և՚ի մեղաւորն վատթարանան չորեքին ՟դք, ըն միտք, կամք, ցանկական և ցասմնական կարողութիւնք․ միտքն կուրութ, կամքն չարութ, ցանկականն տկարութ, և ցասմնականն անկարգութ։ Երկրորդ՝ զի ոպ՚ի հիւանդն ոչ գոյ ախորժ առ օգտակար կերակուրս, այլ՝ առ վնասակարս, սոյնպէս և՚ի մեղաւորն ոչ գոյ ախորժ առ օգտակար բանս և գործս, այլ՝ առ վնասակարս։ Երրորդ՝ զի ոպ՚ի հիւանդն կուտին պէսպէս տառապանք ցաւոց և տրտմութեանց, նա, սոյնպէս և՚ի հոգի մեղաւորին ժողովին ազգի ազգի դառնութիւնք, և առաւել ևս խայթն խղճի մտաց։

Ըստ այսոցիկ նմանութեց և ըստ այլոց բազմաց ևս՝ հիւանդութի համարելով մարգարէին զմեղս՝ հիւանդ կոչէ զինքն։ Եւ թէպէտ մեղքն բզմ անգամ նմանութբ մահուչէի՚ի ՟դք գիրս, բայց այն նմանութի ըստ

լամբրոն՛՛ Հայլի 'ի մէջսն՝ ըստ որում է մահացուցիչ հոգւոյ, սոսկապէս մնացեալ առանց բժշկութեան. յոր միտ այլուր ասէ մարգարէն. * Մի՛ երբէք ննջեցից 'ի մահ ‖. սաղ. ժբ. 4: Իսկ ըստ որում մնացի իբր բժշկելի ողորմութեան այ, նմանի հիւանդութեան. տես և 'ի սաղ. զ. 3. յորում բժշկիլ կամելով մարգարէն՝ աղաչէ, և ասէ:

ԲԺՇԿԵԱ ԶԱՆՁՆ ԻՄ: Այս բան է իբր բացատրութի, և կամ յաւելուած հետևութի նախընթացին. զի անդ խնդրեաց զողորմութի յայ՝ ցուցանելով նմա զհիւանդութի իւր, յասելն՝ * ողորմեա ինձ տէր, զի հիւանդ եմ ես ‖: Արդ՝ յայտ է թէ յորժամ ողորմի ումեք այ, բառնայ յայնմանէ զթշուառութի այնր իրի՝ ըստ որոյ ողորմի. ուստի եթէ ըստ բանի հիւանդութեան ողորմեսցի, բառնայ զթշուառութի հիւանդութեան, և այնու իսկ բժշկէ. վսյ և յետ խնդրելոյ զողորմութի՝ 'ի յարելն զկնի՝ * բժշկեա զանձն իմ ‖, սովին կամի յայտ առնել զիմացուած խնդրոյն. ոպ թէ ասացեալ էր. գործ ողորմելոյդ ինձ լիցի այս, զի բժշկեսցես և առողջացուցես զհոգի իմ 'ի մեղաց իմոց՝ իբր 'ի ծանր հիւանդութենէ: Նա և տայ զպատճառն՝ ասելով:

ՈՉ ԽՌՈՎԵՑԱՆ ՈՍԿԵՐՔ ԻՄ: Ոսկերօք իմանայ զզօրութիւ հոգւոյն, որ են, միտք, կամք, և այլն. զի որպէս ոսկերք հաստատուն ունին զմարմինն, սոյնպէս և ըստ լամբ՛՛. զօրութիւնք հոգւոյն զհոգին, թէ՛ 'ի բնական կարգի՝ և թէ 'ի բարոյական: Արդ՝ որպէս յորժամ ոսկերք խախտին և կամ բեկանին՝ համարին խռովեալ, սոյնպէս և յորժամ զօրութիւնք հոգւոյն յողդողդին 'ի բարի խորհրդոց, և խորտակին մեղօք, և կամ պաշարին սաստիկ տրտմութեամբ և ցաւօք, ևս և երկիւղիւ, ասին խռովիլ. և վեր 'ի վայր լինել. 'ի հեշտութենէ՝ դառնութի խղճի, և 'ի բերկրութենէ թախծութի սրտի: Ըստ այսմ մնաց խօսելով աստ մարգարէին՝ աղաչէ. հիւանդացայ ասէ մեղօք, և ամ զօրութիւնք հոգւոյ իմոյ այլայլեցան և տկարացան, կամ անհնարին ցաւօք և երկիւղիւ պաշարեցան. և չիք ինձ գտանել ուստեք հնարս բժշկութեան և մխիթարութեան բայց 'ի քէն տէր: Այս հոգևոր հիւանդութի արդարև մեծ էր, և մեծի բժշկութեան կարօտ. վսյ և մեծապէս թախանձէ մար-

գարէն, և իբրև ամենահնարաւոր բժշկի ցուցանէ զե-րակս իւր, և առաջի առնէ զհանգամանս ախտերացն։ Մեղայն մեծ էր. զի և հիւանդացեալն մեծ էր. վասն զի մարգարէ ոմն էր, այր ըստ սրտին Այ, Թագա-ւոր ընտրեալ յամենակալ Անէ, և զօրացեալ յամի ըդդէմ ամնյն. ամն իրի և հիւանդութի նորա զի մեղք նորին մեծ համարեցաւ։ Ի թող մարդ այլայլութիւն երակաց ոչ երկեցուցանէ զբժիշկն. վասն զի այնպիսի բնութեան այնպիսի ինչ հետևի. բայց յայր զօրաւոր երկնչելի է. որպիսի եղև 'ի դաւիթ. և վասն առէ զիրն, թէ * չար թուեցաւ բանն . . . յաչս Անն ||. Բ. Թագ. ԺԱ. 27։ Սոյնպէս է կշռելի և վասն այլոց։

Ստամոք մարթ է բաւիղ ախերք՝ խմմալ և զմար-մինն, առեալ զմասն փոքի բոլորին. և ըստ այսմ կամի ասել. 'ի խռովիլ և 'ի հիւանդանալ հոգւոյս մեղօք՝ խռովեցաւ և մարմին իմ, և թուլացաւ՝ ինքնին զի-մել 'ի չարն (որպէս թոյլ անկոց է թեքիլ և իջանել 'ի վայր). և արդ բժշկեա զիս տէր 'ի հիւանդութէ և 'ի խռովութէ աստի, և տուր զօգնականութի քո 'ի նեցուկ տկարութեանս։

Այս բանք մարգարէին միանգամայն և յորդորանք են հիւանդացելոց հոգւով յուսալ առ Այ և խնդրել զբժշկութիւն, և մի անփոյթ լինել. ապա թէ ոչ՝ առա-ւելեւս զօրանայ հիւանդութին. * ոչ այնքան չար է ախ-
,, տանալն, որչափ զբժշկութի ոչ ընդունելն ||. ասէ գէորգ վրդպ. 'ի մեկն. եսայ. գլ. Ա։ Եթէ ախտացեալ իցես և դու, փութա՛ 'ի բժշկութիւն. մի անսար ախորժ-մանցդ. զի հիւանդն զվնասակարս խնդրէ, և զգուի 'ի դեղոց. եթէ անսաս՝ հիւանդ մնաս. զխորդ վարիս ընդ հիւանդի, այնպէս վարեսջիր ընդ քեզ՝ 'ի գտանել զա-ռողջութիւն. մի երկնչիր յայտնել բժշկին զհիւան-դութիւն քո, զի է խոստովանիլ քահանայի զմեղս քո. յայտնեա՛, և ազատեսջիս ոչ միայն 'ի հիւանդութենէ հոգւոյդ, այլև 'ի խռովութէ սրտիդ և 'ի խղճէ մտացդ. և նա ինքն տէր ցուցցէ 'ի քեզ զայցելութի իւր. առ որ փութացուցանել կամելով և մարգարէն զԱնձ՝ առա-ջի առնէ 'ի յաջորդ համարն զառաւելութի խռովութե անձին, և ասէ։

Գ · ԱՆՁՆ ԻՄ ՅՈՅԺ ԽՌՈՎԵՑԱՒ · ԵՒ ԴՈՒ ՏԷՐ ՄԻՆՉԵՒ ՅԵՐԲ ։

Առաս անձն՝ զնի աստ փոխկ հոգւոյ, որպէս յայտ է յԵբր · եւ յայլոց թարգմ", եւս եւ 'ի զօրութէ բանին, յորում զանբերելի վիշտ հոգւոյն՝ անուամբ խռովութեան առաջի մատուցանէ, եւ յայն հայելով պաղատի եւ ասէ ։

ԱՆՁՆ ԻՄ ՅՈՅԺ ԽՌՈՎԵՑԱՒ ։ Այս բան կրկնակի հայի 'ի նախընթաց համարն · մի՝ ըստ ծանօթութե թշուառութե անձին, յորմէ պատճառի խռովութի 'ի նմին՝ իբր գործ այնր ծանօթութե, եւ զի այսմ կամի ասել, տեսանելով հոգւոյս զթշուառութի իւր, որ 'ի հիւանդութէ եւ 'ի խռովութէ ոսկերաց, ինքն եւս խռովեցաւ յոյժ · զի զարհուրեցաւ, եւ 'ի զարհուրանացն շփոթեցաւ ։ Երկրորդ՝ զի ներգործելոյ թշուառութեցն 'ի հոգին · եւ զի այսմ կամի ասել, 'ի հիւանդանալ իմում մեղօք, եւ 'ի խռովել զօրութեցն՝ հոգի իմ խիստ խռովեցաւ, զի անկարդութեամբ լցաւ · եւ այժմ չգտեալ իմ հնարս առ 'ի դարմանս բժշկութե, առ քեզ ապաստան եղեալ աղաղակեմ · եւ առ այս յարէ, եւ ասէ ։

ԵՒ ԴՈՒ ՏԷՐ ՄԻՆՉԵՒ ՅԵՐԲ ։ Այսպիսի եղանակ բանից յայսպիսի տեղիս առանց բայի իրիք առաջի եդեալ՝ ցուցանէ զառաւելութի խռովութե հոգւոյն, եւ զսաստկութի զարհուրանաց, մինչեւ յառաւելութենէ անտի տագնապմանն չկարել զորոշեալ ինչ դատումն մտաց ձեւացուցանել, եւ իւիք բայիւ զնոյն յայտնել · այլ միայն 'ի մեծութի թշուառութեցն հայելով գոչել առ տր · * Եւ դու տր մինչեւ յերբ ‖ · որպ թէ ասացեալ էր · ահա քանի ժամք են, յորմէ հետէ խռովութիք տիրեալ են 'ի հոգի իմ, եւ տագնապեն զիս · եւ դու՝ որ տէրդ ես ամի, կամիցիս արդեօք՝ զի նոքա տիրեսցեն 'ի վր իմ եւ ոչ դու · դու տիրեա ինձ աղաչեմ · դու՝ եւ մի այլք · դու միայն լեր ինձ տէր եւ ապաւէն, եւ մի այլ ոք ։ Եւ արդ մինչեւ յերբ յամեսցես տիրել ինձ, եւ օգնել ինձ · մինչեւ ցերբ ոչ այց արասցես նեղութես՝ ազատել զիս 'ի թշուառութեց իմոց · մինչեւ յերբ թողուցուս զիս կալ 'ի հիւանդութե իմում, եւ 'ի խռովութե անձինս · փութա աղաչեմ, եւ կեցո զիս ։ Կամելով ա-

պս լսելի առնել զբան իւր՝ աղաղակէ զձնի նորա, եւ ասէ ։

Դ. Դարձիր Տէր, եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր վասն ողորմութեան քում ։

Մարդկօրէն կամելով ձեւացուցանել մարգարէին ըղ-բան իւր, այնպէս խօսի առ ած, ոպ թէ նա մեկնեալ 'ի նմանէ՝ դարձուցեալ իցէ զերեսս իւր, եւ յայլս հայելով՝ ոչ լսէ եւ ոչ խնամոյ՝ թէ զինչ խօսի մարգարէն, եւ զինչ խնդրէ ։ Սոյ եւ աղաչարարութե օրինակաւ ձայնէ առ նա՝ եւ ասէ ։

Դարձիր Տր ։ Դառնալն այ առ մեզ, կամ երեւեցուցանելն նորա մեզ զերեսս իւր՝ նշանակէ ցուցանել ըղգթութի իւր 'ի մեզ, եւ զօրացուցանել զմեզ օգնականութբ իւրով, եւ ձգել առ ինքն ։ եւ այս կարէ օրինակիլ յայն դարձն՝ զորմէ գրի 'ի ղուկ ։ իբ ։ 61 ։ թէ * դարձաւ տէր, եւ հայեցաւ 'ի պետրոս ‖ ։ որով եւ զօրացոյց զնա կանգնիլ 'ի գլորմանէն, եւ ձգեաց առ ինքն՝ կենդանացոյց իւրեւ ։ յորմէ իբր 'ի կենաց զըրկեալ էր ուրացութբն ։ Զի ոպ յորժամ արեգակն ցուցանէ զերեսս իւր իբր դառնալով իմն, նոյնն լուսաւորէ եւ ջերմացուցանէ եւ կենդանացուցանէ զմարմնաւորս, զբազումս 'ի ծաղկանց առ ինքն ձգէ, այնպէս եւ ած դառնալով եւ հայելով աչօք գթութեան իւրոյ՝ լուսաւորէ, վառէ եւ կենդանացուցանէ զհոգիս ։ եւ ըստ այսմ ասէ մարգարէն 'ի սաղ ։ հթ ։ 4 ։ * Երեւեցո „ զերեսս քո 'ի մեզ, եւ կեցցուք ‖ ։ իբր թէ ասէր, յերեւեցուցանելդ զերեսս քո առ մեզ, կամ 'ի հայելդ քո 'ի մեզ՝ փրկիմք եւ կենդանանամք ։ ըստ այսմ խօսի եւ աստ ։ * դարձ տէր ‖ ասէ ։ ոպ թէ մի թողուր զիս ըղհիւանդս առանց այցելութե բժշկիդ ։ այլ դարձ առ իս, եւ ցոյց ինձ զողորմութի քո ։ եւ կամ ըստ լատին'' ։ դարձ 'ի բարկութենդ, եւ գթա յիս ։ Յոր դարձի գործ հաստատելով մարգարէին զփրկութիւն անձինն՝ յարէ զինի, եւ ասէ ։

Փրկեա զանձն իմ ։ Փրկելն է զերծուցանել 'ի չարեաց ։ եւ զի մարգարէն խոստովան եղեւ՝ թէ ըմբռնեալ է 'ի չարիս, ոպ 'ի հիւանդութե մեղաց, 'ի խռովութե անձին եւ ոսկերաց, 'ի յարեն զինի, * փրկեա զանձն իմ ‖,

կամի առնել, զերծս և ազատեա զիս 'ի հիւանդութենէս և 'ի խռովութենէս : Իսկ զառաւելն ևս առաջի եդեալ ասէ :

ԿԵՑՈ ԶԻՍ ՏՐ : Կեցուցանելն յատկապէս առեալ՝ նշանակէ ազատել յ'ի վերայ հասեալ վտանգէ մահու . և զի դատապարտութի̃ հոգւոյն է իբր յետին մահ հոգւոյ հիւանդացելոյ մեղօք, աղաչէ մարգարէն . խնդրեմ ասէ կեցո զիս, ա̃յ ազատեա զիս յ'ի վ̃ր հասեալ վտանգէ դատապարտութեան՝ անկանելոյ 'ի դժոխս : Այլ կշռել արժան է աստ զկարգ այսր ազատութե̃, որով փրկէ զմեզ ա̃ծ . իբր զի դառնալ նր̃ առ մեզ՝ կանխէ՝ 'ի հայցել նորա 'ի մեզ շնորհօք իւրովք . և առ այս ասաց մարգարէն * դարձ տէր || : Իսկ 'ի դառնալ նորա առ մեզ՝ դառնամք և մեք առ նա, և 'ի դառնալն փրկէ . և առ այս ասաց . * և փրկեա զանձն իմ || : Իսկ զի յետ դառնալոյն ազատէ զմեզ 'ի վտանգէ դատապարտութե̃, ամէն իրի ասաց . * կեցո զիս տէր || : Իսկ քանզի այս ա̃մ՝ որով ազատիմք, ոչ է և ոչ լինի իւիք նախընթաց արժանաւորութե̃ մերոյ, այլ միայն ողորմութե̃ն ա̃յ . ( զի առ որպիսի ինչ արժանաւորութի ունիցի ամպարիշտն, բայց եթէ առ պատիժս ), վ̃նկ յաւելու, և ասէ :

ՎԱՍՆ ՈՂՈՐՄՈՒԹԵ̃ ՔՈՒՄ : Ոչ թէ ասէր . Համարձակեցայ խնդրել 'ի քէն տէր զայդպիսի պարգևս՝ ոչ զի արժանի եմ ես, այլ զի դու ողորմած ես, և ըստ ողորմութե̃ քում փրկես և կեցուցանես զա̃մն՝ որք խնդրեն ըզքեզ : Իսկ առ 'ի ցուցանել՝ թէ իրաւացի է, զի կեցուսցէ զինքն, ձեռնարկութիւն ինչ կազմէ, և ասէ :

Ե. ԶԻ ՈՉ ՈՔ Է, ՈՐ 'Ի ՄԱՀՈՒ ՅԻՇԷ ԶՔԵԶ. ԻՍԿ 'Ի ԴԺՈԽՍ ԽՈՍՏՈՎԱՆ ԱՌՆԻՑԷ ԱՌ ՔԵԶ:

Այս ոճ քանի այլուր ևս երևի 'ի սաղմոսս . որպէս այն՝ ուր ասէ, * Զ՛ինչ օգուտ է քեզ յարեանս իմում՝ թէ
„ իջանեմ ես յապականութի . միթէ հող խոստովան
„ առնիցի առ քեզ, կամ պատմեսցէ զճշմարտութիւնս
„ քո || . սաղ . իթ . 10 . և այն ևս՝ * միթէ մեռելոց
„ առնիցես զսքանչելիս քո տր̃ || . սաղ . ձէ . 11 . 12 .
և 13 : Իսկ ևս՝ * Ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ .
„ և ոչ ա̃մքն՝ որք իջանեն 'ի դժոխս . այլ կենդանիքս

„ օրհնեսցուք զՏր ‖. սաղ. ճժգ. 18: Յայս հայի և
այն բան եզեկիայ Թգրի՝ որ գնի 'ի մարգարէութեան
եսայեայ. * Ոչ Թէ որք 'ի դժոխսն են՝ խոստովան
„ առնիցին առ քեզ. և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ.
„ և ոչ յուսացեալ են յողորմութիւն քո՝ որք իջանեն 'ի
„ գուբ ‖. եսայ. ԼԸ. 18: Ըստ սոյնն խօսի և աստ
մարգարէն ասելով:

Ոչ ոք է, որ 'ի մահու յիշէ զքեզ. կամ 'ի դժոխս խոստո-
վան առնիցէ առ քեզ:

Այս բան՝ է սմին և փոխակար-
գեալ բանոյդ. ոմանք իմանան միայն վասն մարմնաւոր
մահու, և վն մարմնաւորապէս իջանելոյ 'ի դժոխս՝ այ
'ի գերեզման. իսկ ոմանք վն յաւիտենական հոգևոր
մահուան, և վասն իջանելոյ 'ի ներքին դժոխս, այ 'ի
սանդարամետս անդնդոց:

Առաջին կարծիքն եթէ ճիշդ առցի, չէ ինչ ընդհատ 'ի
կարծեացն սադուկեցւոց. զի 'ի գնիլ այսր՝ Թէ 'ի մե-
ռանիլ մարդոյ և յիջանել նորա 'ի գերեզման՝ ոչ ևս յի-
շէ զԱծ, համարեալ լինի Թէ չիք նորա հոգի. ուստի և
'ի մեռանիլն դառնայ ողջոյն յառաջին նիւԹն ըստ ա-
նասնոց. ապա և սրբք՝ որպէս աբրահամ, իսահակ, եւն,
յետ մեռանելոյ ոչ յուսացան յԱծ. այլ կամ յոչնչութի
դարձան, և կամ Թմրեցան իսպառ. որ է զրոյց անառե-
ղի և անխրատ: Ասացի՝ եթէ ճիշդ առցի. զի ըստ խմբ՝
այ է զգայութեցն, կարէ ճշմարտիլ և ճշմարտի իսկ.
իբր զի 'ի մեռանիլ մարդոյ և յիջանելն 'ի գերեզման՝
ոչ ևս հնար է նմա բերանով իւրով օրհնել զԱծ. և
ևս ոչ է նմա հնար զգայութբ յիշողութե յիշել զնա, և
կամ մարմնով ծառայել նմա, և արդիւնաւորիլ ինչ:

Երկրդ կարծիքն Թէպէտ և ճշմարիտ է և ուղիղ, բայց
իմանալով և զմահն մարմնաւոր. որով և միտ բանին
լինի այս. Որ 'ի մեռանիլն և յիջանելն 'ի գերեզման՝
մտանի 'ի մահն յաւիտենական, կամ որ 'ի մեղս գո-
լով՝ մեռանի Թշնամի Այ, ոչ յիշէ զԱծ առ 'ի գովել.
այլ՝ յանարգել: Եւ ևս՝ ոչ ոք, որ իջանէ 'ի խորս
դժոխոց, խոստովան լինի զբարերարութէն Այ, կամ
շնորհակալ լինի զնմէ իբր երախտաւորեալ 'ի նմանէ,
այլ կայ միշտ անարգեալ իբրև Թշնամի և ատելի Այ:
Ուսանիմք ցուցանի նաև այս, Թէ յետ մահու ոչ գոյ
միջոց ապաշխարութե, և ոչ դեղ Թողութե անձին.

ոչ գոյ ժամ բարւս գործելոյ, և ոչ իսկ հնար 'ի դա-տապարտութենէ զերծանելոյ. այլ ժամ է ընդունելոյ յիւր զվարձ, կամ զպատիժ յաւիտենական: Ուստի եթէ որ մեռեալ իցէ 'ի շնորհս և 'ի բարեկամութեան այ՝ ընդունի յիւր զվարձս առանց կորուսանելոյ. իսկ եթէ մեռեալ իցէ 'ի մեղս և 'ի թշնամութեան այ, ընդունի յիւր զպա-տիժս առանց զերծանելոյ: Յորում վիճակի և մեռ-ցի որ, 'ի նոյն մնասցէ յաւիտեան. զի որպէս ծառն յոր կողմն և թեքեալ իցէ՝ 'ի հատանելն անկանի յայն կողմն, սոյնպէս և մարդն յոր վիճակ և թեքեալ իցէ՝ եթէ 'ի վիճակ դատապարտութեան, և եթէ 'ի վիճակ փրկութեան, 'ի հատանելն մահուամբ՝ 'ի նոյն անկցի, և 'ի նոյն մնասցէ. զի * ուր անկցի փայտն, անդ կաց-
„ ցէ ||. Ժող. ԺԱ. 3: Ունկ սբ գիրք և սբ հարք առ-հասարակ յորդորեն գործել զբարիս, մինչդեռ ժա-մանակս 'ի ձեռս է. զի գայ գիշեր՝ յորում ոչ ոք կարէ գործել. Յովհ. Թ. 4: Ուստի մեծն խարոլ յառաջ բերեալ զայս բան 'ի մեկն. Ժամագր. Ե-րես. 295. ասէ. * ոչ ոք է՝ որ 'ի մահու յիշէ զքեզ.
„ կամ 'ի դժոխս խոստովան առնի առ քեզ. զի անօ-
„ գուտ է անդ խոստովանութիւն և զղջումն. և ոչ
„ կաշառս կամ բարեխօսել փրկութիւն է գտանել, ըստ
„ գրեցելումն, եղբայր ոչ փրկէ, ԽԸ ||:

Այլ թէ ընդէր զայս բան յառաջ բերէ մարգարէն՝ գիտելի է, զի սոյնն հնարի յայտ առնել, թէ ցան-կայ փութապէս գտանել յիւր զառողջութիւն հոգևոր հիւանդութեան իւրոյ. զի որոյ և կամի ասել, բժշկեա և փրկեա և կեցո զիս տէր. որպէս զի և ես՝ որ դեռևս կենդանի եմ 'ի վր երկրի, յիշեցից զբարերարութիս քո, և գոհացայց զքէն, և փառաւորեցից զքեզ. իսկ եթէ յապաղեսցես կեցուցանել զիս, և թողցես մեռանիլ 'ի մեղս, ոչ ևս կարեմ յուսալ 'ի քեզ, կամ օրհնել զքեզ, և խոստովան լինել առ քեզ. զի ոչ ոք է՝ որ 'ի մեղս մեռանելով, և 'ի յաւիտենական մահն մատնելով կարասցէ ակն ունել փրկութեան, և իբր ե-րախտաւորեալ 'ի քէն յիշել և օրհնել զքեզ. և կամ 'ի մատնելն 'ի դժոխս խոստովան լինել՝ թէ գտեալ է և կամ գտանելոց է 'ի քէն զփրկութիւն: Զայսմանէ տես և 'ի սաղ. ՃԷ. 11:

Նորոյնպէս , մարդիկ 'ի մահու այլոց ոչ յիշեն զա̅ծ . Երբ զի թէպէտև տեսանեն զմահ բազմաց , բայց այնու ոչ զգաստանան 'ի յիշել զպարտիչ իւրեանց ։ Եւս և թէպէտ հաւատան՝ թէ գոյ դժոխք , բայց այնու ոչ զարթնուն խոստովան լինել առ Ա̅ծ ։ Ոմանք ևս այնպէս հաւատան , և այնպէս վարին , որ̅պ թէ 'ի գնալն 'ի դժոխս՝ ունին դառնալ անտի . որով գրեթէ կամին նախ փորձել , և յետոյ հաւատալ . մի փորձեր , և մի գնար . խաբիս , զի այս փորձ ոչ կրկնի . արդ յիմարութիւն է փորձել զայն՝ որոյ փորձն անկրկնելի է ։ Իսկ որք մոլեգնեալ են յամպարշտութեան , յանհաւան միտս բերեալ , ասեն . ո՞ դարձաւ 'ի դժոխոց և պատմեաց . բայց այս ոչ դառնալ նոցա առաւել զգուշացուցանելոց էր զնոսա , թէ գուցէ և նոքեանք 'ի նոյն մտանեալ՝ ոչ դարձցին ։ Լսի յառակս՝ թէ աղուէսն ոչ կամէր գընալ յապարանս առիւծու . զի տեսանեմ ասէր ըզշաւիղս գնացելոց , և ոչ նշմարեմ զհետս դարձելոց ։ Յարմարական մեկնութ̅բ մարթ է դժոխք իմանալ աստ փոխաբերաբար զսկզբնական մեղս , և մահուամբ զպարտաւորութիւն յաւիտենական դատապարտութեան . և ը̅ր այսմ բառդ խոստովան լինել՝ հայի 'ի խորհրդական խոստովանութ̅ի մեղաց . զի որ 'ի սկզբնական մեղս է , և չէ մկրտեալ , ոչ է ընդունակ խորհրդական խոստովանութեան ։ Եւ քանզի առ ժամանակօք շնորհալւոյն ոմանք յառաջ ք̅ զմկրտիլն մտանէին 'ի խորհուրդ խոստովանութ̅ե , վ̅ն գրէ 'ի մեկն . մատթ . գլ . գ̅ . թէ * ոչ նախ ք̅ զմկրտութ̅ի , այլ յետ մկրտելոյն ,, ասէ խոստովան լինել զմեղսն || . որպէս ուսուցանեն և ա̅ծաբանք . զի մկրտութ̅ին է դուռն խորհրդոց . ապա ուստի և առանց մտանելոյ ընդ այս դուռն՝ ոչ ոք 'ի դժոխս սկզբնական մեղաց կարէ խոստովանիլ խորհրդական խոստովանութեամբ ։

Համբռնացին մահուամբ իմանայ աստ զմեղս , և դժոխովք զհեթանոսական անհաւատութիւն , կամ ըզհաստատութիւնն 'ի մեղս , և յայս միտ խօսելով գրէ այսպէս . * Ոչ որք մինչդեռ 'ի մահ մեղացն տապաստ ,, արկեալ է ցանկութ̅բն , յիշէ զքեզ , կամ 'ի քոյդ եր- ,, կիւղէ զարհուրի . . . զի որչափ անզեղջ կամօք ընդ ,, նոյնն բերի , բնաւ ոչ կարէ տեսանել զծանրութիւն

„ մեղացն, կամ յիշել զքո արդար դատաստանն. և
„ զայս՝ զինչ կարօտ եմք հաստատել, բաւականապէս
„ ուսուցանեն երկտասարդական ընթացք բազմաց՝
„ և անխտիր շաղախումն ընդ պէսպէս տեսակս մեղաց.
„ զի թէ յիշէին, որպէս պարտ է յիշել զած, երբ էին
„ կարօղ առ 'ի նոյնն յամել. զի ո՞ ոք 'ի տեսանել
„ զտանուտէրն՝ ոչ խորշի 'ի գողանալոյն, և տեղի
„ տայ ||: Այնպէս և ոչ ոք՝ որ 'ի դժոխս հեթանոսա-
կան անհաւատութեանցն իցէ՝ կամ 'ի սովորութենէ մեղաց
կամակար հաստատեալ՝ խոստովան լինի առ ած, այլ
առ կուռս, կամ առ մեղս։ Իսկ եթէ այս այսպէս է,
ապա խնդրեմ ասէ՝ զի ապրեցուսցես զիս 'ի չարէ ա-
տի մեղաց։ Զայս եղեալ մարգարէին՝ առաջի անձնէ
այժմ և զայն՝ զոր յիւրմէ կողմանէ կարէր առնել
շնորհիւ տեառն՝ առ 'ի գտանել 'ի նմանէ զողորմութի.
վասն որոյ ասէ։

Է. Աշխատեցայ ես 'ի հեծութեան իմում. լուացի զամ գի-
շեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս
իմ թացի։

Ահա արդարև սքանչելի պտուղ ճշմարիտ ապաշխա-
րութեան, զոր մարգարէս ցուցանէ. և զայս ետ նմա
խորհին նորա զմահ իւր. և զվտանգ դատապարտութե
անձին. զոր և յիշատակեաց 'ի նախընթաց համարն.
քանզի խորհելով թէ 'ի մեռանելն՝ ոչ կարէ գործել
զգործ փրկութե անձին, և թէ յիջանելն 'ի դժոխս՝
ոչ ևս հնար է նմա խոստովան լինել առ ած, և ցնծալ
'ի բարերարութե նորա, և վայելել 'ի սէր նորին, այլ
զսոցին հակառակն, զի է՝ յայ անարգիլ, և մնալ 'ի
ներքոյ բարկութե նորա յաւիտեան, այսու խորհրդով
այնչափ վառեցաւ սիրտ նորա յապաշխարութի 'ի վր մե-
ղաց իւրոց, մինչև յանբերելիս բերիլ, և յոգւոց
հանելով մաշիլ. ըստ որում և յայտ առնէ բանիւս՝ յա-
սելն։

Աշխատեցայ ես 'ի հեծութե իմում։ Հեծութիւն է այնպի-
սի հառաչանք, որ յառաջ գայ 'ի ցաւոց թախծեալ
սրտի. ընդ որ բզմ անգամ խառնի և արտասուք։ Այս-
պիսի հառաչանք եթէ յաճախեսցեն և սաստկասցին,
կարի իմն վաստակեն և տագնապեն զհոգին, մինչ

թէ հալէն և մաշեն զանձն մարդոյ : Զայսպիսի կիրս յայտ առնել կամի մարգարէն՝ յասելն . * Վաստա- „ կեցի ես 'ի հեծութե̃ իմում ‖ : Որով ոչ կամի ասել, թէ վաստակիլս կամ աշխատիլս իմ այս էր, զի հեծէի կամ կայի 'ի հեծութե̃, որպէս մեկնեն ոմանք . այլ թէ՝ աշխատեալ խոնջեցայ յոյժ 'ի բազում հեծութե̃է . կամ հաշեցայ և մաշեցայ յոգւոց հանելով առ բազում ցաւոցն՝ զոր ունէի 'ի վ̃ր մեղաց իմոց, և առ տառապանաց սրտիս՝ որով կասկածեալ տագնապէի 'ի վերայ դատապարտութեան անձինս :

Արդ՝ զր̃ յառաւելն վաստակիլ մարմնոյ 'ի ծանր աշխատանս՝ հոսին յորդ քրտունք, սոյնպէս և յառաւելն աշխատիլ հոգւոյ 'ի ցաւագին հառաչանս՝ հոսեն յորդ արտասուք՝ 'ի լուանալ զցաւս անձին . և զայս կամելով յայտ առնել, յարէ զկնի, և ասէ :

Լուացից զա̃մ գիշեր զմահիճս իմ . և արտասուօք իմովք զանկողինս իմ թացից : Աստանօր բառս արտասուօք՝ հայի միանգամայն առ լուանալն և առ թանալն . ոչ թէ եդեալ էր, արտասուօք իմովք լուացի զմահիճս իմ, և նովին արտասուօք թացի զանկողինս իմ . որովք կամի ասել, այնչափ լացի 'ի գիշերի, մինչև արտասուք իմ բաւական լինէր 'ի լուանալ զմահիճս իմ, և 'ի թանալ զանկողինս իմ։

Բայց զայս լուանալ և զթանալ ոչ է պարտ առնուլ այնպէս, որպէս թէ մահիճքն և անկողինքն լուղէին 'ի մէջ արտասուաց . զի այս է անհնարին . այլ թէ հեղումն արտասուաց իջեալ յանկողինն նորա՝ ( այ̃ 'ի տեօչէկն՝ ) թանայր զայն տեղին՝ ուր էր և լայր . ես և իջեալ 'ի մահիճն՝ ( այ̃ յանկողնականն կամ 'ի քիրեվէտն՝ ) որ 'ի ներքոյ անկողնոյն , ողողէր և զայն ըստ մասին : Իւ ըստ այսմ կարգի՝ թէպէտ նախ անկողինն թացեալ լինի, և ապա մահիճն լուանի, յոր միտ պարտ էր դնել, արտասուօք իմովք զանկողինս իմ թացի, և զմահիճս իմ նովիմբք լուացի, բայց կամելով զառաւելութիւն արտասուացն կարգաւ առաջի առնել, նախ դնէ՝ թէ զմահիճս իմ լուացի . և ապա՝ թէ զանկողինս իմ թացի : Վասն զի թանալն ը̃ իմիք առաւել է քան զլուանալ . զի լուանալն արտաքուստ ևս կարէ լինել . առ որ բաւական է սակաւ ջուր . իսկ

Թմբանն ոչ լինի արտաքուստ եւեթ , այլ 'ի ներքս , տոգորելով զներքին մասունս եւս . առ որ պիտոյ է առաւելութիւն ջրոյ ։

Եւ քանզի մարգարէն կամէր աստիճանաւ ցուցանել զառաւելութիւն արտասուաց իւրոց , վ՛նկ նախ եդ զլուանալն , եւ ապա զթանալն , առ 'ի յայտ առնել՝ ոչ եթէ զողողումն , այլ զառաւելութիւն արտասուացն ։

Արթ է աստ երկոքումբք այսոքիւք զմի ինչ իմանալ , ք՞ է արտասուօք տամկացուցանել զանկողինն . իսկ կրկնութիւն ցուցանէ զսաստկութիւն արտասուելոյն . յոր միտ բացատրէ եւ սուրբն Շնորհալի . 'ի մեկն . ԺԲ . պետ . Ե . 7 . Ճառ . Գ . յասելն . * զամենայն գիշեր ար-
„ տասուօք զանկողինն թանայր ( դաւիթ ) , եւ կերա-
„ կուր զարտասուսն առնէր . եւ զըմպելին նովին ար-
„ տասուօքն խառնէր ‖ ։

Իսկ այն՝ զոր ասէ , * զամ՛ գիշեր ‖ , կրկնակի կարէ նշանակել . մի՝ զգիշերսն ողջոյն , կամ գիշերսն 'ի բուն՝ ք՞ թարգմանելոյ ոմանց . եւ մի եւս՝ յամ՛ եւ յիւրաքանչիւր գիշերի ըստ թարգմանութեան եօթանասնից եւ լատինացւոց . եւ այս համաձայն եբր՛՛ , ուր գնի պէխօլ լայիլա . այս է՝ ամէն գիշեր ։ Երկոքին եւս մեծ են եւ սքանչելի . եւ որպէս ասեն բզմ՛ մեկնիչք , ըստ երկուցն եւս վարէր մարգարէն . իբր զի յիւրաքանչիւր գիշերի բզմ՛ ժամս հեղոյր զարտասուս յանկողնի ոչ միայն 'ի ծունկս կալով այլեւ ընկողմանեալ գոլով ։ Եւ թէպէտ մարգարէն 'ի տուէ եւս լայր . ո՛րպ յայտ է սաղ . խա՛ . 4 . եւ Ճա՛ . 10 , բայց առաւել եւս 'ի գիշերի եւ յանկողնի . վասն զի գիշերն է յարմար ժամանակ առանձնութե . եւ առանձնութիւնն յարմար ժամանակ լալոյ ։

Նաեւ զի աչք մարդոյ 'ի ցերեկի զբաղի 'ի տեսութիւնս . իսկ 'ի գիշերի 'ի հանգիստ , եւս եւ յարտասուս . եւ զայս օրինակաւ իմն առաջի առնէ բարսեղ 'ի մեկն . մարկ . ԺԳ . ասելով ։ * Ծաղկունք 'ի ջերմութէ արեգա-
„ կան թառամիլ երեւին . բայց 'ի գիշերային ցօղոյ
„ զուարթանան , 'ի վ՛պութի մեզ . վասն զի մինչ 'ի
„ ցերեկի՝ լուսովն համարձակ առնէ զկիրառումն տե-
„ սութե բնութիւն մարդկան , վ՛յ արգելեալ լինի ( ք՞
„ խափանի ) կրթութիւն լալոյ . բայց 'ի գիշերի գիշե-
„ րային մթով եւ խաւարաւ գոլով արգելեալ կիրա-

„ ռումն տեսութեա̃ն համարձակ կարող է արտասուել ‖ ։
Դարձեալ՝ զանկողինն 'ի մէջ բերելով մարգարէին՝ կամի
լուելեայն ինձ խմացուցանել, թէ որովհետև յանկող-
նի մեղաւ, յանկողնի եղև նմա լալ, և զաղտ անկող-
նոյն աղի արտասուօք լուանալ ։ Եւ սովին այսու եղև
սքանչելի օրինակ ապաշխարութեան. զի 'ի թագաւո-
րական փառս գոլով, և յայնչափ զբաղմունս լինելով,
միանգամ մեղուցեալ, այսչափ ինչ առնէր յապաշխա-
րութիւն. և կայր ևս զարհուրեալ առաջի աստուծոյ ։
* Լուիցեն ( ասէ վարդան ) որք ասեն՝ թէ վախճան
„ գոյ տանջանացն, և դիւրաւ քաւի մեղքն. զի ահա
„ զմիոյ գիշերոյ զմեղանսն զամենայն գիշերս երկիւղիւ
„ լուանայր, արտասուօք թանալով զանկողինսն ‖ ։
* Լացցուք ( և մեք. ասէ սարգիս շնորհալի. 'ի
„ մեկն. ա̃. յովհ. է. 10. ճառ. ը̃. յորդ. ) զա̃մ գի-
„ շերս 'ի մահիճս ըստ երանելւոյն դաւթի, և արտա-
„ սուօք զանկողինս թացցուք ‖ ։ Եթէ ոչ կարես զա̃մ
գիշեր, գէթ զմասն մի գիշերոյ լա՛ց 'ի վերայ մեղաց
քոց ։ Մի յուսահատիր 'ի բազմութէ մեղացդ, և մի ևս
լքանիր՝ թէ ո՛րպէս մաքրել և ուղղել կարիցես զքեզ. ա-
րա՛ և յաջողեսցի. եթէ անփոյթ լիցիս՝ խապառ լքա-
նիս ։ Երկրագործ ոմն յանձնեաց որդւոյ իւրում մաք-
րել զարտն յաւելորդ խոտոց. իսկ նորա տեսեալ՝ թէ
լի է արտն խոտով յուսահատեցաւ, և լքաւ, ննջ-
ջեաց 'ի վերայ խոտոյ ։ Յետ աւուրց ինչ տեսեալ հօր
նորա՛ թէ չէ բնաւ մաքրեալ զարտն, ասէ ցնա. յիւրա-
քանչիւր աւուր ջանա՛ մաքրել զայնչափ տեղի, որ
իցէ քեզ իբր անկողին ննջելոյ. արար՝ և յաջողե-
ցաւ ։ Դու ևս 'ի տեսանելդ զհոգի քո լի խոտովք
ախտից և մեղաց՝ մի՛ լքանիր, այլ յիւրաքանչիւր ե-
րեկոյի մաքրեա՛ քեզ տեղի անկողնոյ, մ̃ թէ մաք-
րեա՛ զքեզ յանկողնի. և սրբեսցիս խապառ ։ Եթէ
հասցէ քեզ թախծութի սրտի, և խռովութիւն ոգւոյ,
զօրացի՛ր. և ա̃ծ օգնական լիցի քեզ. ըստ որում և
մարգարէն առնէր. յոյր սակս իսկ զխռովութիւն ան-
ձինն առաջի դնելով ասէ ։

Է. **Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ. եւ մաշեցայ ես ՚ի վերայ ամենայն թշնամեաց իմոց.**

Բառս ակն՝ ՚ի փոխաբերական միտս դնի աստ փոխանակ մտաց. զի որ ինչ է ակն կամ աչք ՚ի մարմնի, նոյն է եւ միտքն ՚ի հոգին՝ ՚ի տեսանել. արդ թէպէտ եւ բոլոր հոգի մարգարէին խռովեալ էր, որպէս եւ վկայեաց ՚ի համարն 3. բայց քանզի այն խռովութիւն սկզբնաբար էր յակն հոգւոյ, այսինքն ՚ի միտսն, զայն ՚ի մէջ բերէ աստ ՚ի մասնաւորի, եւ ասէ.

**Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ. եւ մաշեցայ ես ՚ի վերայ ամ թշնամեաց իմոց.** Ըստ այսմ բառս սրտմտութիւն՝ կարէ վերածիլ առ երիս. այսինքն կամ առ բարկութիւն Աստուծոյ. կամ առ բարկութիւն թշնամեացն դաւթի. կամ առ բարկութիւն անձին իւրոյ. Եթէ հասիցի առ բարկութիւն Աստուծոյ, այս բան ՚ի մէջ բերի իբր պատճառ նախընթացին. եւ մեկնի այսպէս. խորհելով զսրտմտութիւն քո տէր, որում ունիս պահանջել յինէն զվրէժ վասն մեղաց իմոց, խռովեցաւ ակն իմ. այսինքն շփոթեցաւ միտք իմ, եւ զարհուրեցաւ հոգի իմ. վասնզի եւ հեծէի եւ հառաչէի, եւ զամենայն գիշեր արտասուօք լայի՝ զերծանիլ ՚ի բարկութենէ այտի քումմէ. Իսկ ՚ի վերայ այսր տեսեալ ես զթշնամիս իմ՝ զի ծիծաղէին զինեւ, իբրեւ թէ ես ՚ի լալ իմում ՚ի զուր աշխատիմ, տրտմութեամբ մաշէի ՚ի վերայ արհամարհութեան նոցա.

Իսկ եթէ սրտմտութիւն հասիցի առ բարկութիւն թշնամեացն դաւթի, միտ բանին լինի այս. ՚ի բարկացուցանելն իմ զքեզ տէր՝ դու ես թոյլ ետուր, զի եւ թշնամիք իմ բարկութեամբ յարձակեսցին ՚ի վերայ իմ եւ հալածեսցեն զիս. եւ զայս տեսանելով՝ ոչ միայն հեծէի եւ լայի ՚ի վերայ մեղաց իմոց՝ որովք զքեզ բարկացուցի, այլ եւ միտք իմ խռովէին յիս, թէ գուցէ թողեալ իցեմ ՚ի ձեռաց քոց, եւ մատնեալ ՚ի ձեռս թշնամեաց իմոց. որք ոչ գթալով յիս՝ կամէին իսպառ կորուսանել զիս. վասնզի եւ նեղէի մաշէի ՚ի վերայ նոցա.

Այլ եթէ սրտմտութիւն հասիցի առ բարկութիւն անձին դաւթի, յայնժամ կշռի իբր գործ տրտմութեան նորա. զի որ ՚ի տրտմութենէ է՝ դիւրաւ կարէ շարժիլ ՚ի սրտմտութիւն. եւ սրտմտութիւն՝ որպէս յաչսն պատճառէ զխոժոռու-

թն̃, նոյնպէս և ՚ի միտս զխռովութն̃։ Այլ զի մրգ̃րէն՝ (որ̃ և յայտ արար ՚ի նախընթաց հատուածն), էր ՚ի մեծի տրտմութե̃ ազգ̃ ՚ի վ̃ր մեղաց իւրոց, տեսեալ ևս զառաւելութն̃ զարշութե̃ մեղացն՝ շարժէր նաև ՚ի բարկութն̃ ՚ի վ̃ր իւր, կամ ՚ի վ̃ր մեղաց իւրոց. և ոչ համարելով բաւական զհեծեծելն և զլալն՝ զայրանայր ևս, թէ զիարդ համարձակեցաւ արհամարհել զարարիչ իւր. և զայս առնէր ոչ եթէ յուսահատութբ̃, այլ խոնարհութբ̃։ Այլ ոչ այսչափ միայն, այլև ՚ի վ̃ր թշնամեաց իւրոց մաշէր. վասն զի որ̃ ատացաք՝ տեսանէր, թէ ն̃ք զիարդ ծաղր առնէին զնա վ̃ս հեծելոյ և ողբալոյ նորա ՚ի վ̃ր մեղաց իւրոց. որով և առաւելուին զցաւս ն̃ր և զայրացուցանէին զնա։ Այլ դր̃ձլ կասկածէր, թէ գուցէ նոքա բանիւք և գործովք իւրեանց խափան լիցին նմա յետս կալոյ յողբալոյ զմեղս իւր։ Նաև զի գիտէր, թէ նոքա հալածելով զնա՝ մեղանչէին ընդդէմ ա̃յ. որով և արժանաւորէին պատահիլ բարկութե̃ ն̃ր. և զի զխաւար նիւթ լալոյ մարգարէին էր այս, զի մեղուցեալ էր ը̃դէմ ա̃յ, այնու արժանի գտեալ դատապարտութե̃, զթշնամիս իւր ևս տեսանելով յայսպիսի չարիս վարակեալ, տրտմէր և մաշէր ՚ի վ̃ր ն̃ց. զոր յիշէ և ՚ի սաղ. ճծը. 158։

Ընդ հակառակն ևս կարէ տարածիլ այս, ՚ի ցուցանել զխոնարհութն̃ հոգւոյ մրգ̃րէին. իբր զի նա յայնչափ խոնարհութե̃ք զթշնամիս իւր մեղաւոր և անարգ համարելով զանձն՝ ՚ի հայիլն ՚ի վ̃ր ն̃ց մաշէր, ա̃հ գոչելով, զի եղև ինձ, զի յայսպիսի յիմարութն̃ մոլեգնեցայ. որով և քան զթշնամիս իմ խոտան գտայ։ Մարթ է դարձեալ ասել, թէ սովին ցուցանի կալ և մաշիլն ՚ի մէջ թշնամեաց երկար ժամանակաւ, ըստ որում մաշիլն փաղանչանէ և զերկար ժմկ̃. ըստ որոյ յայլս դնի հնանալ, զորմէ տես ՚ի համեմատութիւն։ Իսկ թէ ոյք էին թշնամիք իւր՝ յայտնի ոչ դնէ. ոմանք իմանան զդևս. ոմանք՝ զմարդիկ չար. ոմանք՝ զախտս. լամբր", զմեղս. բազումք ևս՝ միանգամայն զմարդիկ՝ և զդևս։ Այլ զիարդ և խնայցի, կարէ ճշմարտիլ. և վերջգրեալ մեկնութեանց յարմարիլ. Դարձուցեալ ապա մարգարէին զբան իւր առ սոսա, ասէ։

Ը. Ի ԲԱ՛Ց ԿԱՑԷՔ ՅԻՆԷՆ ԱՄԵՆԵՔԵԱՆ, ՈՐՔ ԳՈՐԾԷՔ ԶԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ :

Որովհետեւ յապաշխարութեան իւրում տխրեցուցիչ տեսանէր մարգարէն զթշնամիս իւր, եւ տառապիւր 'ի նոցանէ զկծանօք՝ առ 'ի յետս կալոյ յապաշխարութենէ, ձանձրացեալ 'ի նոցունց՝ 'ի բաց վանէ զնոսա յիւրմէ ասելով :

Ի ԲԱ՛Ց ԿԱՑԷՔ ՅԻՆԷՆ ԱՄԵՆԵՔԵԱՆ՝ ՈՐՔ ԳՈՐԾԷՔ ԶԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ : Յասել մարգարէին զայս՝ ոչ ցուցանէ, թէ ինքն այսպէս իցէ ասացեալ առ թշնամիս իւր. այլ յայտ առնէ, թէ ոչ կամի անսալ նոցա, եւ ոչ ունի իւիք հաղորդութիւն ընդ նոսա. զի թէպէտ եւ ինքն եւս գործեալ էր զանօրէնութիւն, բայց ապաշխարեալ էր եւ ապաշխարէր 'ի վերայ նորա. իսկ թշնամիք իւր ոչ միայն ոչ էին ապաշխարեալ 'ի վերայ անօրէնութեան իւրեանց, այլ եւ ջանային խափանել զնա յապաշխարելոյ 'ի վերայ անօրէնութեան իւրոյ, եւ կամէին յուսահատեցուցանել զնա՝ ասելով, թէ չիք փրկութիւն նորա առ Աստուած իւր, եւ թէ Աստուած արհամարհեալ է զնա, եւ ոչ լսէ աղօթից նորա, եւ այլն : Ապա 'ի բաց հեռացուցանէ զնոսա. եւ կամելով եւս տալ պատասխանի բանից նոցա՝ ասէ :

Թ. ԼՈՒԱՒ ՏԷՐ ՁԱՅՆԻ ԼԱԼՈՅ ԻՄՈՅ, ԼՈՒԱՒ ՏԷՐ ԱՂՕԹԻՑ ԻՄՈՑ, ԵՒ ՏԷՐ ԶԽՆԴՐՈՒԱԾՍ ԻՄ ԸՆԿԱԼԱՒ :

Զայս ասելովն կամի յայտ առնել, թէ այնուհետեւ ոչ միայն չունի երկնչել 'ի թշնամեաց իւրոց, այլ եւ ոչ իսկ գրել ինչ զխորհուրդս նոցա զլքուցիչս հոգւոյ, եւ զբանս նոցա զյուսահատեցուցիչս անձին իւրոյ. զի ոչ որպէս նոքա ասէին՝ եթող զնա Տէր, այլ՝ որպէս նա յուսայր՝ ընկալաւ զնա, եւ լուաւ նմա. վասն որոյ ասէ :

ԼՈՒԱՒ ՏԷՐ ՁԱՅՆԻ ԼԱԼՈՅ ԻՄՈՅ : Ոչ ասէ՝ լուաւ ինձ, կամ լուաւ ձայնի աղօթից իմոց, այլ թէ՝ լուաւ * ձայնի ,, լալոյ իմոյ ||. որով կամի յայտ առնել զսաստկութիւն լալոյն. զի ձայն լալոյն է նշան առաւելութեան լալոյ : Նա զայս ոչ է պարտ այնպէս իմանալ, որպէս թէ մարգարէն ձայնիւ լայր, կամ առանց ձայնի. այլ զի որովհետեւ ձայն լալոյ նշան է սաստկութեան լալոյն, ասելովն՝ լուաւ ձայնի լալոյ իմոյ, կամի ցուցանել՝ թէ

սաստիկ էր յոյժ լալիւն իւր ։ Իսկ թէ այն լալ իւր զինչ էր, յայտ առնէ յաջորդ բանիւն, թէ էր լալագին աղօթք առ ա̃ծ . ուստի և լսելն ա̃յ ձայնի լալոյ նորա՝ էր լսել լալագին աղօթից նորին . վասն որոյ յարէ զկնի և ասէ ։

Լուաւ Տէր աղօթից իմոց ։ Որ ուղղեաց բերան արտասուօք աղօթէի առ Տէր, ոչ անտես արար զաղօթս իմ, և ոչ դարձոյց զերեսս իւր յինէն . այլ շարժեալ 'ի գութ յարտասուաց իմոց՝ լուաւ աղօթից, և եթող զմեղս իմ. և ոչ միայն եթող, այլ և ետ ինձ՝ զոր խնդրեցի 'ի նմանէ . և առ այս յարէ ։

Տէր զաղաչանս իմ ընկալաւ ։ Խնդրուածքն է աղաչանք ընդունելոյ զխնդիրն . իսկ խնդիրն է յայտարարութիւն այնր որ անկեալ լինի յաղաչելն, կամ որ խնդրեալ լինի ։ Արդ խնդիրք մարգարէին էին այնք՝ զորս յիշատակեաց յայսմ սաղմոսի, ո̃ր է՝ ազատութիւն 'ի բարկութենէն ա̃յ, բժշկութի̃ հոգւոյ, փրկութի̃ 'ի յաւիտենական դատապարտութ̃է, և այլն . ընդ որս և դիւրութիւն 'ի խռովութ̃է անձին, և քաջալերութի̃ ընդդէմ թշնամեաց իւրոց՝ երևելեաց և աներևութից ։ Զայս ամ̃՝ զորս աղաչանօք խնդրէր մարգարէն, այսու բանիւ խոստովան լինի՝ թէ ընկալաւ յա̃յ . որով և զօրացեալ յինքեան՝ վստահանայ առնել զթշնամեաց իւրոց ։

Ժ . Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ . դարձցին յետս, և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին ։

Զայս բան և զսմին նմանեան բազում ուրեք դնէ մարգարէն 'ի սաղմոսս իւր . զի ցուցցէ՝ թէ օգնական ինքեան ունելով զա̃ծ՝ չունի ինչ երկիւղ 'ի թշնամեաց . զի նովաւ կարէ ոչ միայն փրկիլ 'ի ձեռաց նոցա, այլ և զօրանալ, և մեծամեծս գործել . և զի այսր զհետ գայ ամօթ կրել թշնամեացն և խռովիլ, մինչ զամաչել նոցա եւս առաջի դնէ և զխռովիլն ։

Այս սորա պատճառն է զի յորժամ որ ջանայ ումեք վստահացուցանել, և կամ խափանել զնա 'ի գործոյ ինչ, եթէ տեսցէ՝ թէ նա փոխ վստահելոյ՝ օգնութեան, և փոխ խափանելոյ 'ի գործոյն՝ առաւել եւս զօրացաւ 'ի նոյն, ամաչէ յոյժ 'ի ն̃մէ, և յայլոց եւս՝ որք տեղեակ են նորա

խորհրդոյն ։ Ոչ զի ամաչելն և յամօթ լինելն է կերպ պատճառեալ ՚ի հոգին՝ վասն ՚ի յայտ գալոյ պակասութէ կամ տկարութէ ։ և զի յայնմ, որ կամի վնասել այլում՝ յոչ կարելն զայն առնել՝ յայտնի երևի տկարութիւն ընդ չարութէ, զի ոչ կարաց առնել՝ զոր կամէր, յայտնանէ ծնանի ՚ի նմա ամօթ մեծ առաջի նոցա որոց յայտնի լինի տկարութի նորին ։ Եւ յայսմ ամօթոյ՝ եթէ իցէ սաստիկ, պատճառի և խռովութի ՚ի հոգին ։ մինչև ոչ ևս համարձակել երևիլ առաջի նոցա՝ այլ մեկնիլ ՚ի միջոյ նոցին՝ կամ դառնալ ՚ի տեղի իւր ։

Արդ՝ որովհետև յապաշխարելն դաւթի՝ թշնամիք նորա զայնպիսի ինչ գործելն, որք կարէին խափանել զնա ՚ի բարի գործոյ անտի նորա, ՚ի տեսանել նոցա՝ թէ նա փոխանակ խափանելոյ կամ վնասելոյ՝ առաւել ևս զօրանայ, և օգտի յոյժ, ամաչէին և խռովէին յոյժ ։ վասն որոյ ասէ ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ ։ Կամի ասել ։ որովհետև լուաւ ինձ տէր, և փրկեաց զիս և զօրացոյց, այսուհետև յամօթ լիցին և խռովեսցին յոյժ յանձինս իւրեանց ամենայն թշնամիք իմ ։ զի ոչինչ օգտեցան ՚ի խորհրդոց իւրեանց ։ այլ ամենայն ջանք նոցա ՚ի դերև ելին, որով և կոր ՚ի գլուխ եղեն ։ և զայս կամելով՝ ՚ի մանաւանդ ևս յայտնել՝ յարէ զկնի, և ասէ ։

Դարձցին յետս, և ամաչեսցեն յոյժ ։ Այսինքն՝ տեսեալ թշնամեաց իմոց՝ թէ ՚ի զուր վաստակին վասն իմ, թողցեն զիս, և ՚ի բաց գնասցեն յինէն ։ և կամ ըստ եբր", մեծաւ դողութեամբ դարձցին յետս, և երթիցեն՝ ուր և կամին ։ և այսու կրկին ևս * ամաչեսցեն յոյժ ‖ ։ Յորժամ պաշարեսցին սաստիկ ամօթով՝ տեսեալ՝ թէ ես բնաւին ոչ անսամ խորհրդոց նոցա ։ Եւ զի յամաչելն անդ կրկին ևս խռովեսցին, վասն որոյ յաւելու ասել ։

Վաղվաղակի՝ և խռովեսցին ։ Այսինքն թէ յառաւել ամաչելն առ ժամայն թշուառացեալ խռովեսցին, և այժմ իսկ խռովեսցին ։ Իսկ ես անդորր մնաց ընդ հովանեաւ խնամոց Աստուծոյ ։ և գնացից ըստ հաճոյս նորա ։ և ոչ ըստ հաճոյս խորհրդոց նոցա ։ Ըստ սոցին յամօթ լիցին և խռովեսցին որք զհետ գնան կամաց սատանայի, և արհամարհեն զգնացս բարեպաշտութէ ծառայից քո ։

* դարձցին յետս և ամաչեսցեն ( ասէ լուսաւորիչն

„ մեր . 'ի յաճախ . ժԴ . ) նորա կամարարքն ( ՚ի հե-
„ տեւողքն սո՛նյի ) , եւ որք յուսան 'ի նորա յոյսն || :
Քննել արժան է աստ , զի յասելն երկիցս՝ * ամա-
չեսցեն || , ոչ եդ 'ի վերայ առաջնոյն զմակբայդ յոյժ .
այլ 'ի վ՛ր յետնոյն միայն . իսկ յասելն երկիցս՝ "խռո-
վեսցին" 'ի վ՛ր առաջնոյն եդ զյոյժն . իսկ 'ի վ՛ր երկ-
րորդին՝ "զվաղվաղակին" : Եւ այս կարգ ցուցանէ
զպատճառն առաւելութե՛ ամօթոյն եւ խռովութեանն .
զի ամաչեսցեն ասելով ցուցանէ պարզ զյամօթ լի-
նելն . եւ խռովեսցին յոյժ ասելով ցուցանէ , թէ 'ի
սոսկ ամաչելոյն պատճառեցաւ 'ի նոսա մեծ խռովութի .
ապա 'ի յարելն զկնի՝ ամաչեսցեն յոյժ , կամի ցուցա-
նել՝ թէ կարի իմն սաստիկ եղեւ ամօթ նոցա կ՛մ ամա-
չել նոցա . յորմէ առաւել եւս սաստկացաւ խռովութիւն
նոցա . զի եթէ 'ի պարզ ամաչելոյն յոյժ խռովեցան , ա-
պա յառաւել ամաչելոյն ո՞րչափ եւս . որով ո՛չ միայն
յոյժ խռովեցան , այլեւ վաղվաղակի . զի որ սաստիկ
է՝ ոչ միայն սաստիկ ներգործէ , այլեւ վաղվաղակի :
Բայց աստ գիտելի է , զի մարգարէն այսու բանիւ ոչ
խնդրէ յ՛այ՝ զի այսպէս լիցին թշնամիք իւր . վասն զի
այս է չարամաղթն լինել . այլ միայն կամի յայտ առ-
նել՝ թէ այսպէս պատահի նոցա : Եւ կ՛մ դարձեալ կա-
մի ցուցանել , թէ այսպէս պատահելոց է նոցա յաւուրն
դատաստանի :

Բարոյապէս մտածեալ , մարգարէն այսու բանիւ ա-
ղաչէ զԱծ , զի զգաստացուսցէ զթշնամիս իւր , եւ տա-
ցէ նմ՛ զշնորհս . ո՛պ զի նոքին ամաչեսցեն 'ի վ՛ր մեղաց
իւրեանց , եւ խռովեսցին , ՚ի զղջասցին յոյժ . դարձ-
ցին յետս 'ի մեղաց , եւ ամօթ մեծ համարեսցին կր-
կնել զնոյն մեղս . եւ եթէ տկարութեամբ իւիք սա-
հեսցին , վաղվաղակի զղջասցին , եւ արդարասցին :
Եւ կամ դարձեալ խնդրէ , զի թշնամիք իւր եւ այլ ո՛
եւ իցէ մեղաւորք՝ տեսեալ զապաշխարել իւր՝ դարձ-
ցին յետս 'ի չարեաց . զի ապաշխարութի յապաշխա-
րութի յորդորէ . ո՛պ գրի վ՛ս երկուց վաւաշոտ երիտասար-
դաց՝ թէ 'ի գնալ գիշերայն առ կին մի չար , իբրեւ ան-
ցանէին առ սենեկաւ միով , յորում ձաղկէր զինքն Լու-
դովիկոս կրանաւորացն 'ի սէր չարչարանացն ք՛սի , զկայ
առին , եւ զղջացեալք դարձան յետս . եւ ուղղեցան :

Յարմարական մեկնութ̃ի այս բանք հային ըստ ծործո-
րեցոյն յայնոսիկ՝ որք հակառակն կային քնի . և ըստ
աւանդելոյ ոմանց՝ մանաւորապէս հային 'ի հարկա-
պահանջսն՝ որք խնդրէին զերկդրամեանն . և իբրև
տեսին՝ թէ պետրոս 'ի բերանոյ ձկան եհան զսա-
տերն , և ետ վասն իւր և վ̃ն իւր , յամօթ եղեն յոյժ և
խռովեցան . և զայս որոշագոյն ևս աւանդէ ծործո-
րեցին 'ի մեկն . մատթ . գլ . ժէ . և գրէ այսպէս .
* իբրև էառ ( պետրոս ) զցանցս՝ երթալ ընկենուլ ,
,, ը̃ նմա երթային և նք̃ ( յր̃ հարկապահանջքն ) , ո-
,, մանք առ 'ի սքանչելիս տեսանելոյ , և կէսք առ 'ի
,, յանդգնել և ծաղր առնել . և իբրև եհան նա ըզ-
,, ձուկն՝ որ ունէր զսատերն 'ի բերանի իւրում . . .
,, անհալ՝ նկարելով պատկեր արքունի , որ նշանակէր
,, զանմահութիւն թ̃գին քնի : Ո այն յորժամ տեսին՝
,, ամաչեցին ամբարտաւանքն և խռովեցան || .
Ըստ սոցին և ըստ այլոց ունին ամաչել ա̃մքն նք̃՝ որք
ծաղր առնէին զարդարս և արհամարհէին զգործս նոցա ,
մի̃նչ յորժամ տեսցեն զն̃ս փառօք բարձրացեալ յա-
ւուրն յետնում . զորոց ասէ սողոմոն . * յայնժամ ար-
,, դարն կացցէ բզ̃մ համարձակութ̃ի հանդէպ նեղ-
,, չաց իւրոց . և որոց անգոսնէին զվաստակս նր̃ , տե-
,, սեալ զնա՝ խռովեսցին ահնաւորին երկիւղիւ . և
,, զարհուրեսցին 'ի վ̃ր սքանչելի փրկութեան նորա . և
զղջասցին 'ի միտս իւրեանց ե̃ն || իմաստ . Ե . 1 = 8 .
Իսկ արդարք ուրախ լեալ ցնծութ̃ի վերասցին յերա-
նութիւն յաւիտենական .

# ՍԱՂՄՈՍ Է.

*Ապաւինութիւն հոգւոյ առ ած, առ 'ի գտանել 'ի նմա- նէ զօգնութիւն ։ Նաև և յայտարարութիւն գործոց թըշ- նամեաց և գուշակութիւն չար կատարածի նոցա . դրժել և ցոյց երկայնմտութեանն այ և արդարութեն նր . ևս և սպառնալիք նորին ընդդէմ մեղաւորի ։*

Սաղմոս 'ի Դաւիթ . զոր օրհնեաց զՏր վս բանիցն Քուսեայ որդւոյ յեմինեայ ։

1 Տր ած իմ 'ի քեզ յուսացայ, փրկեա զիս ; և յամ հալած-
չաց իմոց ապրեցո զիս ։ 2 Մի երբեք յափշտակեսցէ
որպէս առիւծ զանձն իմ . ուր ոչ իցէ՝ որ փրկիցէ, և ոչ այն՝ որ
ապրեցուցանիցէ ։ 3 Տր ած իմ թէ արարի զայդ . թէ իցէ անօ-
րէնութիւն 'ի ձեռս իմ ։ 4 Թէ հատուցի երբեք այնոցիկ, որք
հատուցին ինձ չար, անկայց և ես 'ի թշնամեաց իմոց ընդու-
նայն ։ 5 Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ . հասցէ, և կո-
խեսցէ յերկիր զկեանս իմ . և զփառս իմ 'ի հող բնակեցուսցէ ։
6 Արի Տր բարկութեամբ քով . և բարձր լեր 'ի սահմանս թշնամեաց
իմոց ։ 7 Զարթիր Տր ած իմ 'ի հրամանաւ քո, զոր պատուիրե-
ցեր . և ժողովուրդ ժողովրդոց շուրջ եղիցին զքև ։ 8 Ի դա 'ի բար-
ձունս դարձիր Տր . և Տր դատէ զժողովուրդս իւր ։ 9 Դատ ա-
րա ինձ Տէր ըստ արդարութեն իմում . ըստ անմեղութեն իմում որ
յիս ։ 10 Վախճանեսցին չարիք 'ի մեղաւորաց . և ուղղեսցես
զարդարս ։ 11 Որ քննէ զսիրտս և զերիկամունս՝ ած ար-
դար . յերկնից է ինձ օգնութիւն յայ . որ ապրեցուցանէ զուղի-
ղսն՝ որք ուղիղ են սրտիւք ։ 12 Ած դատաւոր արդար, հզօր
և երկայնամիտ . որ ոչ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ ։
13 Եթէ՝ ոչ դառնայք առ նա, զսուր իւր սրեալ է . և
զաղեղն իւր լարեալ 'ի նմա է պատրաստեալ զնոսա մահու , և
զնետս իւր այրեցեալս է գործեալ ։ 14 Ահաւասիկ երկնեաց
զանօրէնութիւն . յղացաւ զցաւս , և ծնաւ զանիրաւութիւն ։
15 Գուբն՝ զոր փորեաց և դեղեաց , 'ի նոյն անկցի 'ի խորխո-
րատ . զոր և գործեաց ։ 16 Դարձցին ցաւք 'ի գլուխ նր . 'ի վր
գագաթն նր անօրէնութիւնք իւր իջցեն ։ 17 Խոստովան եղեց
Տն ըստ արդարութեն նր . սաղմոս ասացից անուանն Տն բարձրելոյ ։

# ՎԵՐՆԱԳԻՐ.

Սաղմոս ՚ի Դաւիթ. զոր ասաց Տն վս բանիցն Քուսեայ որդւոյ յեմինեայ.

Ի ՎԵՐՆԱԳՐԻ ԱՅՍ ԵՐԿՈՒ ԻՆՉ կան քննելի. Առաջինն է այն, զի ՚ի բնագիրս եբրայեցւոց, և յայլ բազում թարգմանութիւնս, ոչ գնի աստ բառս սաղմոս. այլ "սիկկայոն". Եւ զի այս բառ եբրայական՝ երևի ՚ի նմա շփոթ և հոմ՝՝ այ պէսպէս իրաց նշանակող, հեն թարգմանիչք յունաց, ընդ որս և նոր թարգմանիչք լատինացւոց պէսպէս թարգմանեցին. Ոմանք. * անգիտութի դաւթի ||. ոմանք մոլորութի. ոմանք սխալումն. ոմանք մեղք. ոմանք փափկութի. ոմանք ջատագովութի. ոմանք առանձնութի. ոմանք թագուստ. և այլք այլազգ. զի զայս ամ կարէ նշանակել բառս սիկկայոն, ՚ի՞նչ զխաղումն, կամ զմոլորումն. Նաև բազում առբերք հրէից այսու անուամբ խնդական աստ զեղանակ երգոց, կամ երգ մխիթարութե. և ոմանք զանեսակ ինչ նուագարանաց. և այլք զայլ ինչ.

Յայս յետին նշանակութի այ ՚ի նշանակութի երգոց հայեցեալ եօթանասնից և սբյն հերմինեան եդին ՚ի հատարակի, սաղմոս ՚ի դաւիթ, կամ սաղմոս դաւթի. այս է հօգևոր նուագ. Եւ այս բազմաց երևեցաւ հաւանականագոյն. բայց պահելով միանգամայն և զնշանակութի բառիս անգիտութի, զի յընթացս սաղմոսին ցուցանէ մարգարէն անգէտ լինել այնց չարեաց, որոց վս չարախօսէին զնմանէ թշնամիք իւր, յառաջն ՚ի հանդէպն. 3. * տէր այ իմ՝ թէ արարի զայս. եւ ||. Եւ ըստ այսմ՝ բառիւս "սիկկայոն" նշանակի աստ ՚ի վերնագրիդ, երգ դաւթի առանձինն եղանակաւ սաղմոսելի առաջի այ՝ ՚ի ցոյց անգիտութեան այնց մեղաց, որոց վս զրպարտէին զնա թշնամիք իւր. տես և ՚ի ներածն. գլ. Ժ. ՚ի բառն սաղմոս.

Երկրորդ քննելին է այս, թէ ո՞վ իցէ քուսի որդի յեմինայ՝ որ գնի ՚ի վերնագրի աստ. կամ ոչ յայլ սաղմոս

մեր գրի, որդի յեմենայ։ Ոմանք ասեն թէ իցէ ան-ծանօթ ոք. բայց անպատեհ իմն երևի, թէ դաւիթ վն բանից այնպիսւոյ ուրուք իցէ ասացեալ զայս սաղ-մոս։ Այլք ասեն, թէ այն է քուսի արաքացին, որ յի-շի 'ի բ. թագ. ժե. 32. և ժզ. 16. և ժէ. 5։ Այլ այս ոչ երևի հաւանական. Նախ՝ զի բանք սաղմոսիս՝ որ վն քուսեայ յեմինեան՝ խիստ են իբրև զթշնամ-ւոյ. իսկ քուսի արաքացի սիրելի բարեկամ էր դաւ-թի, և բարերար նր, և ազատիչ 'ի չար խորհրդոյն աքիտոփելայ։ Երկրդ՝ զի ոչ է յայտ թէ որոյ իցէ որ-դի քուսի արաքացին. իսկ այս քուսի է որդի յեմինայ։ Երրդ՝ զի քուսի արաքացին յեբրայեցին գրի տառիւ "խէթ" խուսայ. իսկ այս՝ որ դնի 'ի վերնագրի աստ, տառիւ "քաֆ" քուշ. ուրեմն ոչ է նոյն։

Բզմ ռաբբիք հրէից, ընդ որս և այլ բզմ մեկնիչք՝ այ-սու քուսեաւ իմանան աստ զսաւուղ որդի կիսեայ. զի բզմ բանք այսր սաղմոսի նմա յարմարին ըստ հալա-ծելոյ նր զդաւիթ, և ըստ դառնալոյ չարեաց նորա 'ի գլուխ նորին։ Այլ թէ զիարդ հնար իցէ՝ զսաւուղ անուանել քուսի որդի յեմինայ, պատասխանեն ոմանք, թէ մարգարէն, և կամ նա՝ որ եդ զայս վերնագիր, ոչ կա-մելով յայտնի յիշել զանուն սաւուղայ՝ զի մի նշաւա-կեսցի, զայս անուն դնելով՝ ընդ սովոր կամեցաւ իմա-ցուցանել զնա յանուանէ հօրն, որ կոչիւր կիս, կամ կիսի, և կամ քուսի, որ էր 'ի ցեղէն բենիամենի. ըստ որոյ ասէ լինել 'ի տանէ առն յեմինացւոյ, այսինքն 'ի տանէ առն որ էր 'ի ցեղէն բենիամենի. զի եբրայական բառս եէմինի կամ եամինի հայի 'ի բենիամին, այսինքն յորդի եամինի, որ է բենիամին. տես 'ի ա. թագ. թ. 1։

Բազում մեկնիչք ևս, ընդ որս և քանի մի ռաբբունիք իմանան այսու զսեմէի՝ 'ի տանէ յեմինայ, որ գուցէ ունէր և զանունն քուսի. որ և 'ի հալածելն աբեսա-ղոմայ զդաւիթ՝ բզմ բանիւք դառնութեան և անիծա-նաց նախատեաց զնա ինքն զդաւիթ. որպէս գրի. բ. թագ. ժզ. 15։ Այն իբր նա՝ որ վերնագիր եդ այսմ սաղմոսի, փոխ ասելոյ՝ վասն բանիցն սեմեայ թոռնին յեմինայ, եդ * վն բանիցն քուսեայ որդւոյ յեմինայ ‖։ Ըստ այսոցիկ կարծեաց իմացուած վերնագրիդ բա-ցատրի այսպէս. Սաղմոս՝ զոր ասաց դաւիթ առ տէր

'ի հալածիլ իւրում 'ի սաւուղայ կամ յաբեսաղոմայ . վ՛ս բանիցն՝ զոր յանժամ խօսեցաւ զնմանէ նա ինքն սաւուղ ( ա՛ . թագ . ի՟ը . 7 . ) , կամ վ՛ս նախատանացն ,

որով նախատեաց զնա սեմեի ։

Եւ այս բառս "վասն" ըստ կրկին նշանակութե՛ կարէ իմացեալ լինել . մի՛ ըստ նշանակութեան շարժառթի . իբր թէ այն բանք , զորս ասաց սաւուղ , կամ սեմեի , եղեն շարժառիթ ասելոյ դաւթի զայս սաղմոս ։ Երկր՛ ըստ նշանակութե՛ փոխանակի . իբր թէ փոխանակ ասելոյն դաւթի զայս սաղմոս՝ էր այս , զի պաշտպանեսցէ նմա տ՛ր , և ազատեսցէ զնա յանիրաւ բանից նոցա ։ Նաև զայս ոչ է պարտ իմանալ այնպէս՝ որպէս թէ յասելն դաւթի զայս սաղմոս՝ չէր նա պաշտպանեալ յա՛յ . այլ թէ պաշտպանեալ գոլով իբր պաշտպանելի խօսէր . զի որովհետև յասելն զայս՝ զանձն իւր յայն հալածանսն ձևացուցանելով խօսէր , վ՛սկ իբրև խնդրող պաշտպանութե՛ զբանսն կարգէր ։ Եւ այս անտի յայտ է , զի զայս սաղմոս ոչ ասաց յայնմ հալածմանն , այլ՛ յետ հալածմանն 'ի շնորհակալութի բարեբարութեանն ա՛յ և պաշտպանութե՛ նո՛ր , ո՛ր և զայլ բ՟ղ՟մ

սաղմոսս ։

Եւ քանզի դաւիթ ըստ ասելոյ մեր այլուր՝ բերել յինքեան զպատկեր քի՛ի , և զկերպարանս իւրաքանչիւր արդարոյ , յասելն զայս սաղմոս՝ մարգարէաբար ասէր և 'ի դիմացն քի՛ի . եւս և 'ի դիմաց եկեղեցւոյ և ա՛մ արդարոց՝ հայելով 'ի հալածանս նոցին ։ Եւ զայս ա՛մ որ ինքնին կարէ յարմարեցուցանել՝ յիմանալն զնկարագրական միտ սաղմոսիս , նմին իրի փոյթ մեր լիցի հայիլ յաւէտ 'ի նկարագիրն , և ուրեք ուրեք եւս յայն , առ որ նկարագիրն կարգի . որպէս և տեսցի 'ի

յառաջիկայդ ։

# Բ Ա Ն.

ա. Տէր ած իմ'ի քեզ յուսացայ, փրկեա զիս, և յամ հա- լածչաց իմոց ազատեա զիս ։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Որպ̃ յայտ է յառաջին և յերկրորդ գրոց Թագաւորութե, դաւիթ 'ի հալածիլ իւրում ոչ զոք ունէր իւր օգնա- կան հզօր ընդդէմ սաւուղայ և աբեսողոմայ. զի զրե- թէ ամենեքին առհասարակ դարձեալ էին նմա 'ի թշնա- մութիւն՝ բաց 'ի սակաւուց, որք էին առ նմա. և թէպէտ ինքն էր այր զօրաւոր, և որք ընդ նմա՝ ոգիք զօրութեան, բայց տեսեալ՝ թէ այն հալածանք էր 'ի թոյլտուութենէն այ, որ որպէս և կամի՝ տնօրինէ, ոչ հա- մարձակեցաւ իւիք դնել զյոյս իւր 'ի զօրութիւն անձին իւրոյ ընդդէմ թշնամեաց իւրոց. այլ ամիւ յած ապա- ւինեալ՝ 'ի նա եւեթ յուսացաւ. և ահա 'ի սոյն միտս ասէ ։

Տէր ած իմ'ի քեզ յուսացայ ։ Տէր ասելով կամի ցուցա- նել զտիրել և զպաշտպանել իւր 'ի տէրութենէն այ, և զանդորրանալ և զապահովանալ անձին ընդ հովանեաւ տէրութե նորա. գիտելով թէ որովհետև նա է իշխող ամի, առանց նորա հրամանի ոչինչ կարեն առնել նմա թշնամիք իւր. իսկ եթէ հրամայեսցէ առնել ընդ նմա ինչ, հրամայէ իրաւամբք, զի տր է բացարձակ ։ Բայց քանզի է նաև նախախնամող բարի, և գթութբ վարէ զարարածս իւր, առ այս յուսալու և զքաղդ ած՝ ասե- լով, * ած իմ ‖. Ուր իմ ասելով տայ իմանալ, թէ ած ոչ է թողեալ զինքն, և ինքն ոչ է թողեալ զած, այլ ճանաչէ զնա ած իւր. և այնպիսի ճանաչելով յուսայ 'ի նա. վասն որոյ և ասէ ։

Ի քեզ յուսացայ ։ Որպէս թէ ասէր. յո՞ կարեմ յուսալ տէր. 'ի թագաւո՞րն իմ սաւուղ, նա զիս կորուսանել խնդրէ. յորդին իմ աբիսողոմ, նա յանհնարինս հա- լածէ զիս. 'ի բարեմութիւն բարեկամաց, նոքա թողին զիս, և յարեցան զհետ թշնամեաց. 'ի զօրս իմ սա- կաւաւոր, զինչ նոքա կարեն առնել, եթէ դու ոչ կա-

միշտ օգնել. վ՟ն 'ի քեզ միայն յուսացայ ։ Զայս եդեալ, զվախճան յուսալոյն ևս առաջի առնէ, և ասէ .

Փրկեա՛ զիս, և յամ հալածչաց իմոց ապրեցո՛ զիս ։ Այս ասելով ցուցանէ զբազմութիւն հալածչացն. որոց ոմանք զինուք հալածէին, որպէս սաւուղ և աբիսողոմ. ոմանք խորհրդով, որպէս աքիտոփել. և ոմանք նախատանօք, որպէս սեմէի ։ Յայտնի առնէ ոչ միայն խնդրէ փրկել, այլև ապրել. զ՟ի այնպէս փրկել, զի ապահովացի 'ի նմէ, մինչ զի 'ի սաւուղայ և յաբիսողոմայ. զի մի յափշտակեսցի 'ի նմէ. և առ այս յաւելու զկնի և ասէ ։

ը . Գուցէ երբէք յափշտակիցէ որպէս առիւծ զանձն իմ. մինչ ոչ իցէ որ փրկիցէ. և ո՛չ ոք որ ապրեցուցանիցէ ։ Առիւծ ասելով՝ իմանայ աստ զսաւուղ կամ զաբեսաղոմ. զի որպէս առիւծն թ՟գր կոչի համեմատականութ՟ք, այնպէս և սք՟ նմանութ՟ք առիւծ կոչին. քանզի հանգոյն կատաղի առիւծու յարձակեալ էին 'ի վ՟ն նորա, և սպանէին որսալ զնա, և յափշտակելով բառնալ ըզկեանս նր՟ ։ Այս ահա 'ի կատաղութէ սոցա երկնչելով ասէ ։

Գուցէ = որ ապրեցուցանիցէ ։ Կամի ասել. եթէ դու տր՟ ոչ փրկեսցես զիս, և պաշտպանութ՟ք քով ոչ ապահովացուսցես 'ի թշնամեաց իմոց, գուցէ գոցէ նա յարձակ միջոց սպանանելոյ զիս. զի իբրև առիւծ յարձակեալ է 'ի վ՟ն իմ. և խնդրէ գտանել զիս, յափշտակել և պատառել ։ Այս յայնժամ * Ոչ ոք իցէ՝ որ փրկիցէ. և ոչ այն՝ որ ապրեցուցանիցէ ‖. Որպէս թէ ասէր, ոչ իցէ արդեօք յայնժամ բայց 'ի քէն՝ որ փըրկեսցէ զիս. և եթէ գտցի ևս, մինթէ կարիցէ ապրեցուցանել. զ՟ի այնպէս փրկել՝ զի ապահովս արասցէ զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոց. քանզի մ՟դքն միաբանեալ են ը՟ նմա. իսկ որ ը՟ իս են, քև միայն կարեն փըրկել և ապրեցուցանել ։

Զայս բան՝ արժան է մ՟ր ումեք ասել առ ա՟ծ՝ հայելով 'ի կատաղութի այնր առիւծու, զորմէ գրէ գլուխն առաքելոց. ա՟. պետ. ե՟. 8. * Ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ. շրջի և խնդրէ՝ թէ զո՛ կլանիցէ ‖. Այս սիրաք 'ի գործ չարութե այսր անօրէն

առիւծու հայեցեալ՝ որ է մահուչափ մեղքն, ասէ. * Կորիւն՝ որոյ դարանակալ լինի, և մեղք՝ որոց գործեն զանօրէնութիւն ‖. սիր. ԻԷ. 11: Եւ զբռնութիւն նորա ատամանց առիւծու նմանեցուցանէ ասելով. * ատամունք առիւծու ատամունք նորա, որք սպանանեն զհոգիս մարդկան ‖. սիրաք ԻԱ. 3:

Իսկ առիւծ կոչելն զսատանայ՝ * զյանդգնութիւն 'ի վերայ համանել նորա նշանակէ ‖. ըստ լամբ. զի յորժամ տեսանէ (ասէ), թէ արուեստ իւր զօրէ, և զխորհուրդս մարդոյ գերի կալեալ իւրոց տանի, ոչ 'ի գործ ածէ 'ի նա զուժգնութիւն իւր. իսկ յորժամ տեսանէ, թէ ջանայ մարդն պահել զխորհուրդս իւր յաղաւղութենէ, և 'ի նորին թելադրութենէ, յայնժամ ամենայն ուժգնութեամբ իբրև առիւծ յարձակի 'ի վերայ նորա, և պատառէ զնա. և եթէ զնա չկարիցէ առ ժամայն յօշոտել՝ իւիք մեղօք իբր ատամամբք խածատէ զգործս նորա, և անպիտան կացուցանէ: Բերան առիւծու հոտի յոյժ, և զորս խածանէ՝ գարշահոտութեամբ զգածէ. և ոմն ասեն՝ զորս ուտէ, զմնացեալն ոչ որ ուտէ, բայց միայն շունք: Եթէ սմա խածանիցէ զքեզ՝ ոչ որ ուտէ զմնացուած քո, զի զգործս քո, եթէ ոչ շունք: Շրջի ասէ յաշխարհի, և խնդրէ՝ թէ զո կլանիցէ. շրջիս և դու յաշխարհի. զգոյշ կաց, և զգուշութեամբ մերձեցիր յիրս աշխարհի. զի 'ի նոյն դարանի, և 'ի նոյն խնդրէ կորուսանել զքեզ: Որէ բանասէր ոմն (եղիսէոս 'ի գիրս կենդանեաց), թէ շունք եգիպտոսի յորժամ գնան 'ի նեղոս գետ ըմպել զջուր՝ յափշտակլեն երբեմն 'ի կոկորդիլոսաց. կամելով ապա զգուշանալ 'ի նոցանէ՝ յորժամ մերձին ըմպել զջուր, փոքր մի առեալ 'ի բերան՝ հեռանան, և յետ ըմպելոյ զայն՝ վերստին մատչին 'ի գետն և զնոյն առնեն. որով և ազատին 'ի վտանգէ նոտի: Նոյնպէս զգուշութեամբ պարտ է մեզ առնուլ 'ի մեղ զբարիս աշխարհիս: Նմին 'ի թակարդ իւր դնէ զմեղր աշխարհիս. մի հուպ լինիր, մի ճաշակեր. և մի իսկ հայիր և մի զկայ առնուր, գուցէ ըստ յովնաթանու ճաշակեսցես և ընդ նմին պարտաւորեսցիս (Ա. Թագ. ԺԴ. 43:)

Եթէ քաղցունս խնդրես յաշխարհի՝ խնդրեա մի զայն՝ զոր թակարդէ սմա, գուցէ երբէք յափշտակիցէ ըղ-

քեզ, այլ զայնս զորս ցուցանէ քեզ յա՟ . ամի են գործք առաքինութե . 'ի նորին զուարճասցիր, և 'ի նորին գիտ գյա : Մեղուն 'ի շրջիլն 'ի ծաղկունս ոչ իջանէ և ոչ նըստի յաղտեղի անուշունս, այլ 'ի բերկրալի ծաղկունս . սոյնպէս և հոգի բարի . ապա թէ ոչ՝ հասանէ սմին ոչ իբր բրէտ իշխողու, այլև իբրև առիւծ : Այլ զուարճացիր 'ի քս . և փնկ յափշտակեալ լինելոյ՝ յափըշտակեսս և պատառեսս զնա ինքն զանս . և զոյգս մեզ ոչ 'ի բերանս նորա, ( դաւ . ժդ . 8 . ) այլ 'ի գործս քո : Արդ՝ մարգարէն յետ խնդրելոյ յոյ փրկութե 'ի թըշնամեաց, առաջի դնէ այժմ և զանմեղութիւն իւր առ թշնամիսն՝ իբրև զպատճառ գտանելոյ զպաշտպանութիւն յոյ . վյ ասէ :

Գ . Տէր Աստուած իմ, թէ արարի զայս . և թէ իցէ անօրէնութիւն 'ի ձեռս իմ :

Դ . Թէ հատուցի երեսաց այնոցիկ, որք հատուցին ինձ չար . անկայց և ես 'ի թշնամեաց իմոց ընդունայն :

Աստանօր * Տէր ած իմ || ասելով ոչ միայն զայն կամի ծանուցանել, զոր ասացաք 'ի վերոյ 'ի հատածն . Ա . այլև յայտ առնէ յետագայ բանիւն՝ թէ ած միայն է, որ քննէ զսիրտս և զերիկամունս, և ճանաչէ զամ խորհուրդս մարդկան, և առնէ իրաւունս ամենցն, մանաւանդ զրկելոց : Իսկ զի մարգարէն զրկեալ եղև, յո 'ի զուր հալածեալ, և 'ի զուր անկեալ 'ի խաղաղութե և 'ի թագաւորութենէ իւրմէ, եւ և 'ի զուր զրպարտեալ 'ի սաւուղայ և 'ի սեմեայ, ըստ որում յայտնի էր և այ, խնդրէ իրաւունս առնել . և այնու փրկել զինքն 'ի նոցանէ : Իսկ նախ զիւր իրաւունսն առաջի դնելով ասէ :

Տէր Աստուած իմ թէ արարի զայս . և թէ իցէ անօրէնութիւն 'ի ձեռս իմ : Աստանօր բառդ "զայս" հայի յայն, զոր ասաց սաւուղ զդաւթայ ցծառայս իւր . * Իուարունք որդիք բենիամենի, թէ արդարև ամենցն ձեզ տայցէ որդին յեսսեայ անդս և այգեստանս, և զամենն զձեզ առնիցէ հազարապետս և հարիւրապետս . զի միաբանեալ կայք 'ի վերայ իմ դուք ամենքն . և ոչ ոք էր՝ որ յայտնէր յունկն իմ 'ի դնել որդւոյն իմոյ ուխտ ընդ որդւոյն

յեսսեայ․ և չէք որ 'ի ձէնջ, որում ցաւէր վասն իմ․ և յայտնէր յանկին իմ, զի յարոյց որդի իմ զծառայ իմ 'ի վ՞ր իմ թշնամի, ո՞ր յաւուր յայսմիկ ‖ . ա . թագ . իբ . 7 . և 8 ։ Այսմ բանիւ հանճարէր սաւուղ, թէ դաւիթ միաբանեալ է ընդ զօրս նր, և ընդ յովնաթանու՝ ու 'ի թագաւորել 'ի վ՞ր իւր, և բառնալ 'ի նմանէ զթագաւորութիւն նորին ։ Բայց այս յայտնի սուտ էր․ զի թէպէտ և յոյժ օծեալ էր յայնժամ դաւիթ թ՞գ իւր, բայց ինքն անսեալ զսաւուղ թագաւորեալ, հնազանդ էր նմա, և ոչ խորհէր չարիս 'ի վ՞ր նր․ վ՞զ իբր երդմամբ հաստատէ սա՝ թէ չէ իւր զայնպիսի ինչ

գործեալ ։

Իսկ զոր յարէ զկնի, այն հայի առ բանս սեմեայ․ որ 'ի հալածելն դաւթի յաբիսաղոմայ, անիծանէր զնա յանէծս ցաւագինս՝ յանէն առ նա․ * Ե՛լ ել այր արեանց, այր անօրէն․ դարձցի 'ի քեզ տէր զամ արիւնս տանն սաւուղայ, զի թագաւորեցեր փոխ նորա․ և ետ տէր զթագաւորութիւն քո 'ի ձեռս աբեսաղոմայ որդւոյ քո, և եցոյց քեզ զչարիս քո․ զի այր արեանց ես դու ‖ . բ . թագ , ժզ . 7 . և 8 ։ Այսուք բանիւք երկու

զրպարտութիւնս ասէ սեմէի ։

Առաջինն է այն զի կոչէ զնա այր անօրէն․ և այսու կամի հաստատել, թէ դաւիթ անօրինեալ իցէ առ սաւուղ․ և թէ անօրէնութբ է թագաւորեալ 'ի տե-

ղի նորա ։ Ընդդէմ այսմ ասէ ։

**Եթէ իցէ անօրէնութիւն 'ի ձեռս իմ ։** իբր թէ ասիցէ, սուտ են այն բանք սեմեայ․ զի ոչ գոն 'ի ձեռս իմ անօրէնութիւնք․ ո՞չ թէ ոչ է իմ գործեալ անօրէնութիւն ինչ ընդդէմ սաւուղայ, և ոչ իսկ անօրէնութբ թագաւորեալ 'ի տեղի նորա, այլ՝ իրաւամբք, և բանիւ այ ։ Երկրորդ զրպարտութիւն է այն զի ասէ․ * դարձցի 'ի քեզ տէր զամ արիւնս տանն սաւուղայ, եւն ‖ . որով կամի հաստատել՝ թէ դաւիթ փոխ բարեացն, զոր ընկալեալ էր 'ի սաւուղայ, չարիս իցէ հատուցեալ նմա և լեալ պատճառ մահու բազմաց տանն նորա․ և թէ վ՞նկ իցէ նա այր արեանց, ո՞ր այր արիւնահեղ․ կամ այր արժանի արեան և մահու կամ պատճառ արեանհեղութեան ։ Այլ իբր և 'ի գլուխ նորա իցէ դարձուցեալ այն զարիւնս տանն սաւուղայ ։ Ընդդէմ այսմ

ասէ ։

Եթէ հատուցի երբեմն այնոցիկ , որք հատուցին ինձ չար ։ Սովին կամի ցուցանել, թէ ինքն թէպէտ և բարերարութիւն արար սաւուղայ և տան նր , և սպան զթշնամի նորա զգողիաթ , և ազատեաց զինէլ , բայց սաւուղ և տունն նր ընդդէմ այսր բարերարութե չարիս հատուցին նմա՝ հալածելով զնա , և խորհելով սպանանել զնա . և սակայն նա ինքն այսու ամենայնիւ ոչ երբէք չարիս հատոյց նոցա փոխ չարեաց նոցին . մանաւանդ կարելով իրաւամբք սպանանել զսաւուղ , գթութեամբ խնայեաց 'ի նա . և արգել եւ զզինուորս իւր՝ զի մի ինչ արասցեն ընդ նա . տե՛ս գրի . ա . թագ . իդ . իզ ։ Նաև այս այնչափ յայտնի և ստոյգ էր , մինչև համարձակիլ դաւթի յերդումն անիծից եւ բերել . ուստի ասէ ։

Անկայց և ես 'ի թշնամեաց իմոց ընդունայն ։ իբր թէ ասէր . եթէ ըստ զրպարտանացն սեմեայ , և նոցին իսկ սաւուղայ և տան նր՝ անօրինեցայ յանձն սաւուղայ , և կամ չարիս հատուցանելով՝ ընդունայն կացուցի զթշնամութի նորա , ապա և ես կրեցից զնոյն 'ի թշնամեաց իմոց . և 'ի պատերազմին իմ ընդ նս , * անկայց 'ի նմէ ընդունայն || . այս է , յաղթեցայց 'ի նոցանէ , և եղէց ունայնացեալ 'ի զօրութէ և յիշխանութէ իմմէ , 'ի փառաց իմոց և 'ի թագաւորութենէս ։

Լամբրոնացին ըստ ոմանց սաղմոսաց մերոց յայտանի ծմկն ընթեռնու զայսոսիկ երկուսին բնաբանս այսպէս , * թէ արարից զայս , թէ հատուցից , իզ || , և մեկնէ բարւոյապէս 'ի վր ներքին անձնիշխան մարդոյն . իբր զի սա՝ որ ստեղծեալ է 'ի պատկեր այ , հաճեալ ընդ բարին՝ ոչ կամի բերել 'ի չարն , ըստ առաքելոյն . հռովմ . է . 22 ։ Նաև սակայն յօրինաց զգայութեան և արտաքին մարդոյն տկարացեալ , և 'ի խարդաւանաց դիւին գրգռեալ , 'ի չարն եւ յօժարի , և անկրաւի ։ Ուստի և հոգին յայս հայեցեալ՝ ասէ . եթէ ես ինքնին առանց յորդորելոյ 'ի զգայութեանցս արարից ինչ չար , և կամ հատուցից չարիս , ապա հալածեսցէ 'ի թըշնամեաց իմոց , և ունայնասցայց յայսմ բարի յօժարութենէս եւ . բայց քանզի ես ըստ ներքին մարդոյս հաճեալ եմ ընդ բարին և ընդ օրէնս քո , յայն հայեցեալ տէր՝ խորտակեսցես զթշնամիս իմ , և ապրեցուսցես զիս 'ի

թանութենէ նոց: Ուստի զոր եդ մարգարէն, իբր անբաւական համարելով զնոյն՝ յաւելու զառաւելն ևս և ասէ:

Ե. Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ. հասցէ, և կոխեսցէ յերկիր զկեանս իմ. և զփառս իմ՝ ի հող բնակեցուսցէ:

Զայս բան բառդ "ապա" 'ի մէջ բերէ զայն՝ զոր ասաց 'ի համարն. 3. և 4. որպ թէ եղեալ էր. եթէ ճշմարիտ էն այն բանք, զորս խօսեցան զինէն թշնամիք իմ՝ սաւուղ և սեմէի, թէ զայս ինչ և զայս ինչ իցէ իմ գործեալ, ապա իրաւամբք հալածեսցէ թշնամին զանձն իմ, հասցէ և կոխեսցէ. ևն: Ուր աստիճանաւ իմն ըն-բեքկին սաստկացուցանէ զտեսակս չարեացն, զորս կարէր առնել նմա թշնամին իւր: Առաջին է այն՝ զոր ասէ.

Հալածեսցէ թշնամին իմ, այսինքն պնդեսցի զինի իմ. խնդրեսցէ և որոնեսցէ զիս 'ի կորուսանել. զնէ և զերկրորդն ասելով:

Հասցէ, այսինքն ժամանեսցէ առ իս. և 'ի ժամանելն կալցի և ըմբռնեսցէ զիս: Խօսի և զերրորդն ասելով:

Կոխեսցէ յերկիր զկեանս իմ: Այս ասացեալ է փոխաբերական բան. որով նշանակի նախ վատահամբաւլինելն. զի վատահամբաւութիւն է մարդոյ յերկիր կործանիլ 'ի թշնամեաց իւրմէ, և կոխիլ 'ի նմանէ. որպէս յայտ է յըմբշամարտիկս: Եւ ըստ այսմ յասելն * կոխեսցէ յերկիր զկեանս իմ ‖, կամի ասել՝ յաղթելով ինձ՝ վատահամբաւ կացուսցէ զիս 'ի կեանս իմ: Նշանակի երկրորդ սպանանել. զի զկեանս ուրուք յերկիր կոխել՝ է բառնալ զկեանս նորա, և զմարմին նր տալ երկրի, այսինքն հողոյ: Եւ ըստ այսմ կամի ասել՝ սպանցէ զիս, և բարձցէ զկեանս իմ. և կամ կալեալ զիս կործանեսցէ յերկիր, և ոտիւք կոխելով կորուսցէ զկեանս իմ. այս է՝ չարաչար մահու սպանցէ զիս:

Զայս եղեալ խօսի և զչորրորդն ասելով:

Զփառս իմ 'ի հող բնակեցուսցէ: Այս ևս է փոխաբերական բան, որով նշանակի նախ՝ իսպառ եղծումն փառաց. որպէս թէ եղեալ էր, այնպէս և այնչափ նուաճեսցէ զիս թշնամին իմ, մինչև 'ի հող դարձու-

ցանել զփառս իմ, կամ հողոյ հաւասարել զծ̃րութիւն իմ ։ Նշանակի երկ̃դ բարձումն յիշատակի անուան ։ և ըստ այսմ կամի ասել, ոչ միայն սպանցէ զիս Թշնամին իմ, և կամ վատահամբաւ կացուսցէ, այլ 'ի հող բնակեցուսցէ զփառս իմ ։ Ի̃յ այնպէս արասցէ ընդ իս, զի 'ի մէջ մարդկան ոչ ևս մնասցէ յիշատակ իմ կամ անուն թագաւորութե̃ իմոյ, այլ ընդ իջանելն իմ 'ի հող, յիշատակ իմ ևս 'ի հող դարձցի, այս է՝ բարձցի իսպառ ։ Այս բանք դաւթի յայտնի առնեն, և ո̃մ իւրք քարոզեն՝ թէ որ ոչ ներէ Թշնամեաց իւրում, և կամ փոխ ներելոյ չարիս հատուցանէ, ոչ գտանէ զթողութիւն ։ և անկանի ևս 'ի պատուհաս մեծ ։ զի թէ այսպէս ունէր պատահիլ առն ըստ սրտին ա̃յ, քանի՛ ևս այլոց ։ Զայս իբրև դաշն եդ տէրն մեր՝ թողութե̃ գտանելոյ ։ * Եթէ ասէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր ։ ապա թէ՝ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր ‖, մատ ։ զ̃ ։ 14 ։ Նա պատուիրեաց ևս՝ յաղօթելն մեր ասել ։ * և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ‖ ։ յորոյ վ̃ր ըստ կրկին հակադրութե̃ բանի խօսի ծործորեցին 'ի մեկն ։ մտթ ։ զ̃ ։ և ասէ ։ * յոր-
„ ժամ թողուցուս տէրդ զպարտս մեր, վարժեալ և
„ մեք 'ի բարերար ո̃նէդ իբր յերկնաւոր վարդապետէ՝ և
„ մեք մերոցն շնորհեմք ։ Կամ թէ ըստ նմանութե̃ մեր
„ և դու թողուցուս ։ զի թէ աղքատքս և յա̃մի ան-
„ բարիքս թողումք զյանցանս ընկերաց մերոց, քա-
„ նի առաւել ձոխդ և բարիդ բնութեամբ ‖ ։

Աստանօր առ եբրայեցիս դնի սէլա, կամ ը̃ մեզ հանգիստ, որ ըստ ասելոյ հրէից նշանակէ՝ միշտ ։ իբր թէ ասէր, միշտ այսպէս եղիցի ։ իսկ ըստ կարգի բանիցդ՝ նշանակէ ասել ։ այո, այնպէս եղիցի ։ Նա ևս յայտ առնէ զփոփոխութի̃ ընթացից բանին ։ ըստ որում մարգարէն յետ խօսելոյ ցայսվայր զանիրաւութենէ թըշնամեաց իւրոց՝ և զանմեղութենէ անձին՝ փոխէ զբանն, և իբր թէ հանգիստ տալով բանիցն՝ սկսանի խնդրել յա̃յ զպաշտպանութիւն և զվրէժխնդիրն լինել ը̃դէմ թշնամեաց իւրոց ։ ուստի ասէ ։

Է. Արի Տէր բարկութեամբ քով. Եւ բարձր լեր 'ի սահմանս թշնամեաց իմոց։

Ըստ ասելոյ մեր 'ի սաղմոսն Գ. համար 7. փոխաբերութիւն առ ի զԱյ յառնել կամ ննջել, իբր զի յորժամ ոչ օգնէ, առ ի ննջել. իսկ յորժամ սկսանի օգնել, և զթշնամիսն վանել, առ ի յառնել. այսու փոխաբերութեամբ վարի և աստ մարգարէն յասելն.

Արի Տէր բարկութեամբ քով. Կամի ասել. բաւական է տէր՝ զի այսչափ ժամս երկայնամտեալ՝ թոյլ ետուր թշնամեաց իմոց՝ առնել՝ զոր կամին. ժամ է արդ՝ զի օգնեսցես ինձ, և ցուցցես առ նոսա զզօրութիւն բարկութեան քո՝ ոչ 'ի կործանել զնոսա 'ի դժոխս, այլ՝ 'ի վանել զնոսին յինէն 'ի բաց, և զերծուցանել զիս 'ի ձեռաց նոցա։ Կամելով ապա զօրաւորագոյն առնել զխնդրուածս իւր, յարէ և ասէ։

Եւ բարձր լեր 'ի սահմանս թշնամեաց իմոց։ Որ բառս * բարձր լեր || կրկնակի կարէ նշանակել. Մի՝ փոխ յայտնելոյն Այ զզօրութիւն և զվրէժխնդրութիւն իւր յաղթօղ լինելով թշնամեացն, և ըստ այսմ կամի ասել. յայտնեա տէր զզօրութիւն քո ընդդէմ թշնամեաց իմոց. զի զարհուրեալ առ 'ի քէն՝ փախիցեն յինէն, և սպառեսցին. զի բարձցին 'ի միջոյ։ Եւ կամ վանելով զնոսա՝ փառաւորեսջիր 'ի վր նց. իբր զի տեսեալ նց զզօրութի քո, ծանիցեն եթէ բարձր ես դու տէր, հզօր և փառաւորեալ. և ոչ որ կարէ կալ ընդդէմ քո։

Զայս յայտնի տեսին թշնամիք հոգւոց մերոց 'ի յառնել տեառն մերոյ 'ի մեռելոց։

Երկրորդ՝ փոխ նստելոյ յաթոռ դատաստանի. և ըստ այսմ կամի ասել. ահա թշնամիք իմ խնդրեն կորուսանել զիս, այլ դու տէր բարձր լեր. զի բարձրասցիր և բազմեա յաթոռ դատողութե քո. և դատելով զգործս նոցա՝ սպառեա զնս. զի հեռացցին զնս յինէն։ Կամ ըստ լամբ. Տեսեալ զգործս իմ և զգործս նոցա, օգնեա ինձ, և սպառեա զնոսա։ Յետ խնդրելոյ մարգարէին զօգնութիւն յԱյ՝ վերստին կրկնէ զխնդրուածս իւր, առաջի դնելով և զպատճառն, որոյ վասն արժան իցէ Այ առնել նմա զայս շնորհս. նախին իբր ասէ։

Է. Զարթիր Տէր Աստուած իմ 'ի հրամանս քո, զոր պատուիրե-
ցեր. և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցեն զքեւ.

Զարթնուլն այդ 'ի հրամանս իւր՝ է կամիլ նորա առնել ըստ հրամանաց իւրոց, զոր պատուիրեալ է. և քանզի պատուիրեալ է ա̃ծ՝ դատաւորաց և թագաւորաց երկրի ազատել զանմեղս և զանպարտս 'ի ձեռաց նեղչաց նոցա, արժան է, զի և ինքն զարթիցէ 'ի նոյն, այսինքն է հաճեսցի առնել զայն. վասն զի է դատաւոր արդար 'ի վ̃ր ա̃մի, և թագաւոր գթած։ Այս հայեցեալ խօսի առ մարգարէն, և ասէ։

Զարթիր Տէր Աստուած իմ 'ի հրամանս քոյ, զոր պատուիրեցեր. այսինքն է արի օգնել ինձ տէր ա̃ծ իմ. և արա առ իս ըստ հրամանի քում, կմ ը̃ն. եբր. ը̃ն դատաստանի քում. զի եթէ մարդկան պատուիրեցեր օգնել անկելոյն 'ի ձեռս թշնամեաց, և ազատել զնա 'ի բռնութենէ նոցա, քանի ևս արժան է քեզ առնել զայս առ իս, և ազատել զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոց, որք 'ի նմանէ հալածեն զիս։ Այս բան այլազգ ևս կարէ մեկնիլ, եթէ զհրամանն ածցուք փոխ այնր՝ զոր պատուիրեալ էր ա̃ծ դաւթայ հովուել բարւոք զժողովուրդ իւր. յորոյ սակս իսկ հալածեալ լինէր 'ի սաւուղայ. և ըստ այսմ կամի ասել. օգնեա ինձ տէր, զի քո զերծեալ 'ի ձեռաց թշնամեաց իմոց՝ կարացից կառավարել զժ̃ղ̃վրդ քո ըստ հրամանի քում, որով պատուիրեցեր ինձ առաջնորդել ժ̃ղ̃վրդեան քում։ Կամ այլազգ ևս՝ ըստ լամբ. խնայեա յիս տէր, և պաշտպանեա զիս ը̃ն հրամանի քում. այսինքն ըստ խոստման քում՝ որով խոստացեալ ես օգնել և խնամարկել զրկելոց։ Կամ ևս. օգնեա ինձ տէր, զի կարացից պահել զհրամանս քո, զոր պատուիրեցեր. որով և ժողովուրդք վստահասցին, և դիմեսցեն առ քեզ։ Զայս այսպէս եդեալ մարգարէին՝ առաջի առնէ և զբազմութիւն ժողովրդոցն և ասէ։

Եւ ժողովք ժողովրդոց (շուրջ եղիցեն զքեւ)։ Ժողովն է խումբ մարդկան 'ի միասին եկեալ. իսկ ժողովուրդն է բազմութիւն մարդկան՝ թէ իցեն 'ի միասին, և թէ 'ի միմեանց հեռի։ Աստի և ժողովք ժողովրդոց ասելով խմբեալ լինելն բզմ ժողովք մարդկան՝ որք են

'ի մէջ ժողովրդեան ։ Իսկ զայս այսպէս դնելով մարգարէին՝ կամի յայտնել զբազմութիւն ժողովրդեանն իւր․ որք միաբան յարուցեալ էին ընդդէմ իւր ․ ըստ որոյ և 'ի բնագիրս եբրայեցւոց գրի՝ բազմութիւն ժողովրդեան ։ Արդ՝ եթէ ասէ դու տէր օրհնեցես ինձ , բազմութիւն ժողովրդեանն՝ որք զհետ լեալ ապստամբութեան հեռացան 'ի քէն , տեսեալ զզօրութիւն և զպաշտպանութիւն քո՝ յետս կացցեն յապստամբութենէ անտի , և մերձեսցին առ քեզ ․ վասն որոյ յարէ գիծն և ասէ ։

* Շուրջ եղիցին զքեւ ‖ ։ Այս ոչ բանի նշանակէ մերձենալ ժողովրդեանն առ ա͞ծ ․ ևս և պաշտել զնա և կիր պահել զհրամանս ն͞ր ․ ըստ այնմ․ սաղ․ ձը․ 7 ․ * ա͞ծ ․ ․ ․
„ մեծ և ահաւոր 'ի վերայ ամենեցուն՝ որք շուրջ են զնո-
„ վաւ ‖ , զի որք մերձ են 'ի նա և պաշտեն զնա ․ յոր միտ ասէ 'ի սաղ․ իե․ 6 ․ * Շուրջ եղէց զսեղանով
„ քով տ͞ր ‖ ․ զի մերձեցայց 'ի սեղան քո , կիր կացից առաջի սեղանոյ քո , կամ յարգեցից զնա , տ͞ր ։ Ըստ որոյ ասէ և 'ի սաղ․ խէ․ 13 * շրջեցարուք զսիոնիւ ‖ ։ զի մերձեցարուք 'ի սմա , և ապաւինեցարուք 'ի նա , և ամրեցարուք 'ի նմա , և լերուք պաշտպան նորա , և պահեցէք զնա ․ ըստ որում յարէ անդ գիծն՝ * և պահ-
„ պանեցէք զնա ‖ ։ Ըստ այսմ ոճոյ խօսի և աստ մարգարէն ․ որպէս թէ ասացեալ էր ․ առ քեզ մերձեսցին բազմութիւնք ժողովրդոց , քո լիցին , քեզ ծառայեսցեն , զքեզ պաշտեսցեն , և զքեւ փարեսցին ․ ևս և՝ առ քեզ ապաւինեսցին , ընդ հովանեաւ թևոց քոց ցնծասցեն ․ տ͞ր ։

Զայս տուն սաղմոսի եկեղեցիս հայոց երգէ առ ք͞ս հայելով 'ի յարութիւն ն͞ր ․ Զարթիր ասէ տէր ա͞ծ իմ յ͞ս ք͞ս ․ արի 'ի հրամանս քո , զոր պատուիրեցեր ․ զի արի 'ի մեռելոց ըստ խոստմանց քո , որով յուսացուցեր զմեզ յառնել և փրկել 'ի ձեռաց թշնամեաց մերոց ։ Արի ըստ հրամանի քում, որով պատուիրեցեր մեզ սպասել յարութեան քում ։ Արի և արա՝ զի կատարեսցին 'ի մեզ ա͞մ հրամանք քո , զորս պատուիրեցեր մեզ ։ Արի և լից զհրամանս քո , զի զմարգարէութիւնս զորս դու ետուր աւանդել մեզ ։ Արի և հաստատեա զնոր օրէնսդ՝ զոր պատուիրեցեր ։ Արի տէր ա͞ծ իմ․ զի և ժողովք ժողովրդոյն հրէից և հեթանոսաց տե-

սեալ զյարութիւն քո և զզօրութիւն փառաց քոց՝ շուրջ եղիցին զքև. և ընկալցին զքեզ խրեանց փրկիչ և փեսայ ։

Նորոգապէս՝ (ըստ լամբ. հմր. 8.) 'ի վանել այ̃ զչար խորհուրդս և զփորձութիւնս 'ի մէնջ, եւ և զհնարս ամ̃նյի, ժողովք խորհրդոց մերոց զերծեալք 'ի գերողացն՝ շուրջ զա̃յ դադարեն, զնա խորհելով, և 'ի նմա հանգչելով ։ Զայս եղեալ մարգարէին՝ հետևեցուցանէ. և ասէ ։

Ը. Վասն այսորիկ 'ի բարձունս դարձ տէր. և տէր դատի զժողովուրդս իւր ։

Ի ժամերգութիւնս մեր՝ յաւելու Ճաշու առաջին հատուած այսր համարոյ յարի 'ի վերջ նախընթացին այսպէս. * արի տէր ա̃ծ իմ 'ի հրամանս քո, զոր » պատուիրեցեր. և ժողովք ժողովրդոց շուրջ եղի- » ցին զքև. վասն այսորիկ 'ի բարձունս դարձ տէր ‖. և այս սկսանի համարն ութերորդ ։ Եւ այս թէպէտ ուղիղ եւ երևի, բայց յամենայն սաղմոս մեր, եւ և 'ի Թարգ, եօթ՛՛, և լատ՛՛, ը̃ առաջիկայ որոշմանց դնի, յասելն ։

Վասն այսորիկ 'ի բարձունս դարձ տր̃. և տր̃ դատի զժողովուրդս իւր ։ Այս ա̃յ, զ̃ է 'ի բարձունս դառնալ՝ չորեքին կարէ նշանակել աստ. ըստ փոխաբերութե̃, ը̃ փոխառութե̃, ը̃ նմանութե̃, և ը̃ հարազատ բառին ։

Ըստ փոխաբերութեան առեալ՝ նշանակէ բարձրանալ 'ի փառս կամ փառաւորիլ. և ը̃ այսմ բառս վ̃նկ՝ դնի իբր հետևողական. և միտ բանին լինի այս. վ̃ն այսորիկ՝ զ̃ վ̃ն շուրջ լինելոյ ժողովրդեան զքև՝ * 'ի բար- » ձունս դարձ տէր ‖. լե՛ր բարձրացեալ, կամ լե՛ր փառաւորեալ 'ի բարձունս. որ է ասել՝ բարձրացի՛ր փառօք. իբր զի որպէս ժողովուրդն ե̃լի հետևանալով 'ի քէն, և ապաստանելով յինէն՝ անարգեաց զքեզ, և դադարեցաւ 'ի փառաւորելոյ զքեզ, սոյնպէս եւ առ քեզ դառնալով՝ վերստին բարձրացուսցէ զքեզ փառօք. և վ̃նկ՝ զ̃ վ̃ն այսր դարձման նց̃ առ քեզ՝ դու եւ դարձցիս 'ի բարձունս. զ̃ փառաւորեսցիս 'ի նոցանէ 'ի բարձրութե̃ փառաց քոց ։ Եւ զի այս յիրաւի այսպէս եղև, ամ̃ն իրի 'ի հրամայական եղանակն խօսի, որով և

ցուցանէ զատուցութիւն իւրն. որպէս թէ ասէր, ահա վ՟ս
այսորիկ փառաւորեսցիր։ Իսկ 'ի յարենէն զինի՝ * և
,, տէր դատի զժողովուրդ իւր ‖. կամի ասել, 'ի դառնալ
ժողովրդեանն առ տէր՝ նա դատէ զնոսա. զի զդատաս-
տանս նց՟ նա տեսանէ, և զթշնամիս նց՟ նա վանէ.

Ըստ փոխաբերութեան առեալ՝ երկոքին բառքդ եւ յայլ
միտս դնին. զի բառդ 'ի բարձունս՝ ըստ ձեւոյ Ճարտա-
սանութեան դնի փոխ աթոռոյ. և աթոռն փոխ դա-
տաստանի. սոյնպէս և բառդ դառնալ՝ դնի փոխ նըս-
տելոյ, և նստիլն փոխ դատելոյ կամ վրէժխնդիր լի-
նելոյ. և ըստ այսմ բառս որպէս՝ դնի իբր բաղդատական.
և միտ բանիս լինի այս. որպէս 'ի վանել զթշնամիս իմ՝
նստար յաթոռ դատաստանի, սոյնպէս արա և այժմ.
բազմեալ 'ի փառաւորեալ աթոռ դատողութեան քո՝ առ 'ի
վանել զթշնամիս ժողովրդեան քո շուրջ եղելոյ զքեւ.
տես և 'ի սաղ. Թ. 4.

Եւ ըստ այսմ Հետեւեալ բանն այն* և տէր դատի ըզ-
,, ժողովուրդ իւր ‖, դնի իբր ցուցումն ինչ. որով կա-
մի Հաստատել զասացեալսն, որպէս թէ եղեալ էր,
արժան է վասն ժողովրդեան քո նստիլ քեզ յաթոռ
դատողութեան ընդդէմ թշնամեաց նց՟. վ՟ս զի դու միայն
ունիս զերագոյն իշխանութիւն և բացարձակ տէրութիւն
'ի վ՟ր ա՟մի. և քեզ միայն վայելէ դատել զժողովուրդ քո,
և վանել զթշնամիս նորա.

Ըստ նմանութեան առեալ՝ այս եղանակ բանի նշանա-
կէ յաղթօղ լինել կամ յաղթանակել. ըստ որում որ
յաղթէ՝ բարձրանայ 'ի վեր, և իբր թէ դառնայ 'ի
բարձրութիւն յաղթութեան. և ը՟ս այսմ՝ բառս վ՟ս այսորիկ՝
դնի իբր պատճառական. և միտ բանիս լինի այս. դու
իսկն տէր յաղթանակեա՛ 'ի վ՟ր թշնամեաց քոց. և վ՟ս
այսորիկ զի այսու յաղթութ՟բ քով ժողովք ժողովրդոց
ազատեալ 'ի ձեռաց նոցա ժողովեսցին առ քեզ. և ծա-
նիցեն՝ թէ տէր դատէ և փրկէ զժողովուրդ իւր.

Ըստ Հարազատ բառիցն առեալ՝ նշանակէ ելանել 'ի
բարձունս՝ ուստի եղև իջանել. ըստ որոյ այս բան ուղ-
ղակի վերաբերի 'ի դէմն քի՟, և մանաւորապէս Հայի
'ի Համբարձումն նորա. և միտ բանիս լինի այս. դու
տ՟ր՝ որ իջեր 'ի բարձանց, խաչեցար և մեռար վ՟ս մեր,
և յարեար յաւուր երրորդի. որպէս զի վասն կատարելոյ քո

զայս ա՟մ՝՝ ՚ի բարձունս դարձ տէր ․ զ՟ի համբարձեալ փա-ռօք դարձ և նիստ յաղթու փառաց քոց ․ ուր ունիս դատել զա՟մ ժողովուրդ քո՝ հատուցանելով իւրաքանչիւր ըստ գործոց ն՟ց ։ Ի սոյն յայս հատուցումն վստահացեալ դիմէ մարգարէն ՚ի դատաստան տեառն, և ասէ ։

Թ․ Դատ արա ինձ տ՟ր ըստ արդարութեան իմում ․ ըստ ան-բծութեան իմում, որ յիս ։

Նաքդ արդարութիւն և անբծութի ոչ զնկին ասա ար-ձակապէս ՚ի ցուցանել՝ թէ յա՟մի և ը՟ն ա՟մի իցէ արդար, և անբիծ ․ այլ՝ համեմատութեամբ առ այն, զորմէ են բանքս, զ՟ի հայելով ՚ի զրպարտութիւնսն սաւուղայ և սեմեայ, և ՚ի հալածանս նոցա ․ ըստ որում վկայութ՟բ խղճի մտաց իւրոց գիտէր մարգարէն՝ թէ ինքն ա-մենևին արդար գտեալ էր առ նոսա, և բնաւ չէր ինչ չարիս գործեալ ընդդէմ ն՟ց ․ վ՟յ և հալածանք նոցա, և զրպարտութիւք նոցին՝ ամենևին անիրաւ էին ։ Վասն իրի խնդրէ յա՟յ իբր ՚ի գերագոյն դատաւորէ դատաս-տան առնել և փրկել զինքն, ասելով ։

Դատ արա ինձ տ՟ր ըստ արդարութեան իմում, ըստ անբծութեան իմում, որ յիս ։ Կամի ասել ․ դու գիտես տէր, զի ես ոչ-ինչ արարի ընդդէմ թշնամեաց իմոց, այլ՝ արդարութ՟բ և անբծութ՟բ եղէ առ նոսա ․ իսկ նոքա յատելութ՟է և ՚ի նախանձուէ շարժեալ՝ համարին, թէ բազում չարիս գործեալ է իմ ընդդէմ նոցա, որոյ աղագաւ հալածեն զիս ։ Արդ՝ դու տէր, որ դատես զա՟մ ուղղութ՟բ, և հատուցանես ա՟մի ըստ գործոց իւրեանց, հայեաց ՚ի գործս իմ և ՚ի գործս նոցա ․ հայեաց աղաչեմ, ես զինչ արարի ընդ ն՟ս, և ն՟ք զինչ առնեն ը՟ն իս ․ և արա դա-տաստան ՚ի մէջ մեր ․ և ցոյց յանդիմանն զարդարու-թիւն իմ, և զանբծութ՟ի սրտի իմոյ ․ և այնու յանդի-մանեա և վանեա զնոսա յինէն ՚ի բաց ․ և նահանջեա զյարձակմունս նոցա ։

Լամբրոնացին զայս բնաբան ըստ ոմանց սաղմոսաց և ըստ Նարեկացւոյն ՚ի բանն ․ Է ․ և ըստ թարգմանութ՟ե եօթանասնից ընթեռնու այսպէս ․ * Դատ արա ինձ ,, տէր ըստ արդարութ՟ե քում, և ը՟ս անբծութ՟ե իմում, ,, որ է յիս ‖ ․ ուր անբծութեամբ իմնայ լամբ" ․ զան-մեղութիւն բնութ՟ենս մերոյ, որ ՚ի սկզբնական արդա-

րութ՟ն, որպէս էր ՚ի դրախտին. ըստ որոյ մեր բանին լինի այս, դու տէր որ դատաւոր արդար ես՝ ըստ արդարութ՟ե քում դատ արա ինձ յոսոխաց իմոց՝ այսինքն ՚ի դիւաց և յախտից. և հայեցեալ յայն ամբծութ՟ի բնութ՟ես, որ էր ՚ի սկզբնական արդարութ՟ե՝ վանեա զոսոխսն իմ. և առաջնորդեա ինձ ՚ի նոյն ամբծութիւն. և յաջողեա զգնացս իմ ՚ի հաճոյս քոյ. որով և յամօթ լիցին նոքա, և ՚ի չարիս իւրեանց վտանգեսցին ։ Իսկ առ ՚ի ցուցանել՝ թէ այս ևս իցէ կատարելի առ Թշնամիսն՝ ասէ ։

Ժ. Կատարեսցին չարիք ՚ի վ՟ր մեղաւորաց. և յաջողեսցէ զարդարս ։

Չարիք յայնժամ կատարին ՚ի վերայ մեղաւորաց, յորժամ այնքիկ չարիք՝ զորս խորհին նոքա՝ այլոց հասուցանել, հասուցանին և գործին ՚ի վերայ ինքեանց. և այս յայտնի երևի ՚ի սաւուղ և յաբեսաղոմ ՚ի Թշնամիսն դաւթի. զի սաւուղ կամելով սպանանել զդաւիթ ՚ի լերինս. ՚ի վերայ լերանց գեղբուայ սպանաւ իւրեան ձեռօք, և աբեսաղոմ ՚ի կամիլն բառնալ զկեանս դաւթի հօր իւրոյ՝ և զթագաւորութ՟ի նորա՝ սպանաւ ՚ի զօրաց նորա, և բարձաւ ամենայն զօրութ՟ի իւր ։ Իսկ դաւիթ յ՟ոյ զօրացեալ՝ եգիտ զյաջողութ՟ի, և դարձաւ անդրէն ՚ի թագաւորութիւն իւր ։ Յայսոսիկ հայելով՝ ասէ ։

Կատարեսցին չարիք ՚ի վերայ մեղաւորաց. և յաջողեսցէ զարդարս ։ այսինքն, ՚ի ջնջել մեղաւորաց չարիս հասուցանել արդարոյն, թող տաս՝ զի չարիք նոցա դարձցին ՚ի գլուխ նոցա, և զարդարն զերծուցեալ ՚ի ձեռաց նոցա՝ յաջողես նմա ՚ի բարին, զայս գիտելով իմ՝ ոչ երկեայց ինչ ՚ի նոցէ, այլ ՚ի քեզ տէր եդից զյոյս իմ ։ Իսկ եթէ ուրեք տեսցի, թէ չարիք մեղաւորաց ոչ կատարին ՚ի վ՟ր նոցա, և արդարոց ոչ յաջողին, որպէս և տեսանի ՚ի բազումս, այն է ըստ աստի կենաց. իսկ ՚ի հանդերձեալն անտարակոյս կատարեսցին ։

Այլով իմն օրինակաւ կատարին չարիք ՚ի վերայ մեղաւորաց. իբր զի ա՟ծ կամելով տեսանել զփորձ նոցա՝ խրատէ սաստ և հարկանէ ևս չարեօք այսինքն պատժովք իբր դաւաճանաւ. և եթէ ոչ զգաստասցին, ո՛չ ևս դաւաճանաւ, այլ հրով դժոխոց պատուհասէ զն՟ս. ուր

կատարին 'ի վ՛ր նոցա չարիք նոցին ։ * Զի՞նչ տեսանես
,, երեմիա . . . գաւազան ընկուզի տեսանեմ ես . . .
,, ( և դարձեալ ) զինչ տեսանես . . . կաթսայ յեռանդան
,, տեսանեմ ‖ . Երեմ . ա . 11 . Ահա քեզ գաւազան
խրատու՝ քաղել նուշս զընկոյզս՝ որ զպտուղս ապաշ-
խարութեան ։ Այլ այնմ որ ոչ կամիցի դառնալ . զի
կատարին չարիք 'ի վ՛ր նորա յեռանդն կաթսայն՝ որ 'ի
հուրն դժոխոց ։

Ած ոչ զոք կամի դատապարտել . վ՛ն ազգ առնէ նոցա ,
զի զգաստասցին . այլ չարիք նոցա աղաղակեն առ Ած ,
զի թոյլ տացէ ճիքեանց թօթափիլ 'ի վ՛ր ն՛ց ։ * Աղա-
,, ղակ սոդոմացւոց և գոմորացւոց ասէ յաճախեաց ,
,, և մեղք նոցա մեծացան յոյժ . և արդ իջեալ տեսից
,, եթէ ըստ աղաղակի ն՛ց որ յիս հասանէ՝ վճարիցեն .
,, ապա թէ ո՛չ զի գիտասցից ‖ Ծնն . ժը . 20 ։ Տեսա-
նե՞ս՝ զի ակամայ բերի պատժել . տեսից ասէ , որպէս
թէ ոչ գիտիցէ ։ Ապա 'ի խստանալ նոցա կատարեցան
չարիք նոցա 'ի վ՛ր ն՛ց , և յափշտակեաց զնոսա կաթսայ ե-
ռանդեան , այլ Ած ազատեաց զարդարն ։

Յարմարական մեկնութ՟բ՝ կատարին չարիք 'ի վ՛ր մե-
ղաւորաց 'ի լնանալ չափու մեղաց նոցա . մինչև ոչ ևս
գտանել նոցա յ՛ոյ զողորմութ՟ի . որ՟պ եղև սաւուղայ . յո-
րոյ վերայ ցաւելով սամուէլ մարգարէ աղաչէր զԱծ
գթալ 'ի նա . այլ * ասէ տէր ցսամուէլ . մինչև յերբ
սուգ առնես 'ի վերայ սաւուղայ . և ես անարգեցի
զնա ‖ ։ Ա . թագ . ժզ . 1 . զի կատարեցան չարիք ն՛ր , որ
թէ լցաւ չափ մեղաց նորա ։

Ի սկզբան ևս երկայնամիտ լինէր Ած . այլ 'ի լնման
չափու մեղաց մարդկան կորոյս զմ՟նն . զի ասաց ցնոյ ,
* Ժամ ամ՟ մարդոյ հասեալ է առաջի իմ . . . և ահա
ես ապականեցից զնոսա ‖ Ծնն . զ . 13 ։ Նոյ թէպէտ
յայնժամ գտանէին և արդարք բաց 'ի նոյայ , բայց
յափշտակեցան նոքա , զի մի՛ չարուն այլոց փոփոխեսցէ
զառաքինութիս նոցա . որ՟պ ասէ իմաստունն ( իմաստ . դ .
11 ։ ) Նոյ 'ի պակասիլ նոցա եկն ջրհեղեղն . զի կատա-
րեալ էին չարիք նոցա ։ Կամէր Ած ջնջել զամբարհացիս .
բայց առ ժամ մի խնայեաց . * քանզի չև ևս լցեալ է ասէ
մեղք ամուրհացւոցն մինչև ցայժմ ‖ Ծնն . ժե . 16 . և
'ի լցեալ լինելն կորոյս ։

·Բանի քանի թշնամութիւնք և հասարակութիւնք , քաղաքք և տունք լցան և կործանեցան , զի կատարեցան չարիք նոցա , և հասին 'ի չափ իւրեանց ։ Նպաքէն անտարակոյս լքանէր զած և զիսրայէլացիս , բայց չև էին լցեալ չարիք նոցա . եկն առ նա , և կամեցաւ շահել զնա , և յընդէմ դառնալ նոցա՝ ասաց առ նա . * և դուք լցէք զչափ հարցն ձերոց ‖ . մատ . իգ . 32 ։ Լցին և լցան , վա և զեղան . զի անօթ լցեալ ըստ չափ՝ զեղու . պտուղ հասեալ 'ի չափ՝ անկանի . բեռն անցեալ ըստ չափ՝ ընկղմէ զնաւ . * յամ կատարածի տեսի զվախճան ‖ . սաղ . ճժը . 96 ։ Օ ի ած զամ ինչ չափով և թուով և կշռով է կարգեալ . իմաստ . ժա . 21 ։ Ըստ սմին չափ եդեալ է և գործոց մարդկան եթէ չարաց և եթէ բարեաց , 'ի լրանալ չար գործոց՝ կատարին չարիք 'ի վերայ չարագործաց . և 'ի կատարիլ բարի գործոց՝ կատարին բարիք 'ի վերայ բարեգործաց ։

Այն այս այլով իմն յարմարական մեկնութիւն հայի և 'ի չար ունակութիւնս , որք կատարին 'ի մոլի անձինս , որ հաստատին և պնդին 'ի նոսա . և որչափ յամեն՝ այնչափ մեծանան և զօրանան , և դժուարաւ բառնին . զի որչափ և մեծանայ ծառ և պնդի , այնչափ դժուարախլի ։ Կատարումն կամ ասացից լրումն այսպիսի չարեաց յայնպիսի վիճակ կացուցանէ զմարդն , մինչև ոչ ինչ իմիք ներգործել 'ի նմա , ոչ խրատու , ոչ քարոզութեան , ոչ պատժոյ , և ոչ իսկ շնորհաց . ոչ զի ոչ ներգործէ շնորհքն , այլ զի չէ ընդունակ՝ յոր ներգործելին էր ։ Օ մարդ սևացեալ յարևու՝ մարթ է լուացմամբ կամ դեղով սպիտակացուցանել . այլ ոչ զեթէովպացին . յոր միտ առէ երեմիա . ժգ . 23 . * Եթէ փոխեսցէ հնդիկ զմորթ իւր , և ինձ զխայտուցս իւր . և դուք կարող լինիցիք գործել զբարիս՝ ուսեալք զչարիս ‖ ։ Վասն զի կատարեալ են չարիք 'ի վր այսպիսեաց . իսկ որք արդարքն են , և տկարութիւն իւիք սևանան , յաջողի նոցա սպիտականալ . որով և ճշմարտի ասել վա նց և սոցա . * կատարեսցին չարիք 'ի վր մեղաւորաց . և յաջողեսցես դու արդարոյ ‖ ։

Բայց քննել արժան է , զի մարգարէն՝ յետ ասելոյ , * կատարեսցին չարիք 'ի վր մեղաւորաց ‖ , ըստ պահանջելոյ կարգի շարադրութեան ոչ դնէ , արդարոյն յաջո-

զեսցի․ այլ թէ * յաղթեսցես դու արդարոյն ‖․ և սորա պատճառն թուի լինել այս, զի կատարումն չարեաց սկիզբն ունի ՚ի չարութենէ մարդոյն․ իսկ յաղթութի բարեաց սկիզբն ունի ՚ի բարութենէն այ․ նմին իրի վս կատարման չարեացն՝ ասէ, * կատարեսցին չարիք ՚ի վր մեղաւորաց ‖․ Իսկ վասն յաղթութե բարեացն՝ առ ած խօսելով ասէ․ * յաղթեսցես դու արդարոյն ‖․ և զի զայս առնէ ած ըստ իւրում անբաւ իմաստութե որով ճանաչէ զնմ խորս սրտից, սմին իրի յաւելու ասել․

ժա․ Որ քննէ զսիրտս և զերիկամունս, ած արդար․ յիրաւի է ինձ օգնութիւն յայ՛ որ ապրեցուցանէ զուղիղսն, այս ուղիղ են սրտիւ․

Աստանօր քննելն ոչ ցուցանէ, թէ՛ ած ոչ գիտէ ըզսիրտս մարդոյ, և քննէ՝ զի գիտասցէ․ այլ թէ այնպէս գիտէ զնմ գաղտնիս սրտից մարդկան, որպէս թէ նմ զգուշութբ քննեալ էր զայն և տեղեկացեալ․ Ասաց ասէ գէորգ վրդ ՚ի մեկն․ եսայեայ․ Է․ 11․ * յորժամ
„ ասէ գիրն՝ թէ քննէ ած զսիրտս, ոչ զայլ ինչ ասէ,
„ այլ զայն՝ թէ գիտէ․ զի քննելն ՚ի գիտելոյն է․ որպէս
„ յորժամ ասէ՝ չափեաց զջուրն և զայլ ևս՝ զայն ասէ,
„ թէ գիտէ որչափ ինչ ջուր իցէ՝ չափոյ կամ կշռոյ ոչ
„ կարօտեալ ‖․

Իսկ պատճառ քննել դնելոյն է կրկին․ մի՝ ՚ի կողմանէ գիտողին, և մի ևս՝ ՚ի կողմանէ գիտացեալ իրին․ ՚ի կողմանէ գիտողին քի ՚ի կողմանէ այ մատուցեալ՝ ցուցանէ զառաւելութիւն գիտութե նորին․ զի որ քննէ զինչ, քաջ գիտէ զայն․ ապաքէն ած ամենևին քաջ գիտէ զսիրտս՝ ասի քննել․ և այս դնի ըստ ձևոյ փոխանունութեան, որով պտճռն դնի փխկ պատճառելելոյն․ և զի քննելն է պատճառ գիտելոյ, դնի փխկ գիտելոյ․ Իսկ ՚ի կողմանէ գիտացեալ իրին ցուցանէ զաներկբայութի գիտացեալ լինելոյ նորին․ զի որովհետև սիրտ մարդոյ խոր է, առ ՚ի գիտել զայն՝ պահանջի նուրբ քննութի, ուստի և ՚ի կամելն ցուցանել թէ գիտէ ած զայն, պատշաճագոյն ևս ասի թէ քննէ, որով ցուցանի աներկբայ գիտացեալ լինելն սրտի առ յայ․

Զայսոսիկ կամելով յայտնել մարգարէն՝ ասէ․

Որ քննէ զսիրտս և զերիկամունս՝ ած արդար։ Արդիւք և

երիկամամբք ոչ է պարտ իմանալ զմարմնեղէն կազմուածս, այլ զհոգեղէնն. սրտիւք զվերինն մասն կամաց, իսկ երիկամամբք զստորինն. և եւս սրտիւք ըզմիտսն (ըստ ծործորեցւոյն. 'ի մեկն. մատ. գլ. ժբ.) և երիկամամբք զկամսն, և կամ զերկոսին միանգամայն առ բարին և առ չարն. առ բարին մտածեալ՝ բազում ուրեք 'ի սուրբ գիրս կոչի սիրտ. յ̄ի որում սիրտն է կայարան սիրոյ, որ բերի առ բարին. իսկ առ չարն մտածեալ՝ կոչի երիկամունք, ըստ որում երիկամունքն է կայարան անկարգ ցանկութեան. և եւս և միտող 'ի չարն, և հեռացուցիչ 'ի բարւոյն. յոր միտ ասէ Երեմիա. * Մերձ ես դու տէր 'ի բերանս նոցա, և հեռի յերիկամանց ն̄ց ‖. Երեմ. ժբ. 2 : (Եւ թէպէտ առ բարին եւս հայեցեալ ասի երբեմն երիկամունք, բայց այն եւս ըստ կրելոյ զչարիս՝ յ̄ի զտառապանս, որպէս թէպէտև առ չարն հայեցեալ երբեմն ասի սիրտ, բայց այն եւս ըստ առերևոյթ բարւոյ) : Արդ թէ ըստ բարւոյ մասին մտածեսցի, և թէ ըստ չարին, քննէ Ա̄Ծ զսիրտս և զերիկամունս. և զի արդար է ասէ, որպէս և քննէ, նոյնպէս հատուցանէ իւրաքանչիւրոյ ըստ խորհրդոց սրտից ն̄ց, և ըստ գործոց նոցին : Եւ քանզի ամպարիշտք անիրաւ խորհրդով կամին չարիս հատուցանել արդարոց, որպէս զն̄ս պատուհասէ՝ նոյնպէս և զարդարսն զերծուցանէ 'ի ձեռաց նոցա. և զի ճշմարտիւ այս այսպէս է, և այսպէս ճանաչէր մարգարէն, յայս հաստատեալ զյոյս իւր՝ հետևեցուցանէ, և ասէ :

Յիրաւի է ինձ օգնականութիւն յԱ̄յ. յ̄ի անտարակոյս օգնեսցէ ինձ Ա̄Ծ, և զերծուսցէ զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոց. վ̄ն զի այնպիսի արդար տէր է նա, որ ոչ առնէ անտես՝ որք ուղիղ սրտիւ յուսան 'ի նա. և առ այս յարէ զկնի. և ասէ :

Որ ապրեցուցանէ զայնոսիկ՝ որք ուղիղ են սրտիւք. յ̄ի փրկէ Ա̄Ծ և յապահովս առնէ 'ի հալածչաց զայնոսիկ, որք ուղիղ են սրտիւք : Ուր յաւելլով զբառդ սիրտ՝ 'ի բաց առնու զայնոսիկ, որք ուղիղ երևին յաչս անձանց իւրեանց կամ յաչս այլոց. բայց ոչ են այնպիսի, զի երևին և չեն. կռունկք 'ի թռիչսն գիր ձևանան, բայց ոչ են գիր. այնպիսի են և բազումք. և որովհետև ոչ են, ըստ առաջիկայ բնաբանին՝ ոչ ապրեցուցանէ զն̄ս

տէր. այլ զայնոսիկ՝ որք են, ըստ զուղիղն սրտիւք, և որք ուղղեալ են զսիրտս իւրեանց առ Աստուած, մինչև Աստուած ևս՝ որ միայն քննէ զսիրտս, այնպիսի ճանաչէ զնոսա, ըստ ուղղոյ։ Իսկ քանզի մարգարէն 'ի հալածիլ իւրում և 'ի նախատինսն՝ ուղիղ էր սրտիւ, որպէս և յայտ արար 'ի համարն 9. յայն սակս վստահութեամբ ասէ զայս. և խնդրէ զօգնութիւն ընդդէմ թշնամեաց իւրոց։ Զայսպիսիս ասէր և Երեմիա. * Տէր զօրութեանց՝ որ ընտրես զիրաւունս, և քննես զերիկամունս և զսիրտ. տեսից առ 'ի քէն զվրէժխնդրութիւն առ 'ի նոսա. զի քեզ յայտնեցի զիրաւունս իմ ||. Երեմ. ժա. 20։

Զայսպիսիս ասելով մարգարէից, ոչ եթէ խնդրեն՝ զի Աստուած բարկասցի 'ի վերայ մեղաւորաց. այլ զի վրէժխնդիր լինելով իրաւունս համարեսցի զերծուցանել զինքեանս 'ի ձեռաց նոցա։ Իսկ եթէ յամէ առնել զայս, երկայնամիտ լինի վասն երկուց. մի՝ առ առաւել օգտիլ արդարոյն. և երկ՝ զի չև է լցեալ չափ անօրէնութեան ամպարշտացն։ Իսկ զայսոսիկ ևս կամելով յայտ առնել մարգարէին՝ յարէ զկնի, և ասէ։

ժբ. Աստուած դատաւոր արդար, հզօր և երկայնամիտ՝ որ ոչ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ։

Ըստ կարգի թուէ մարգարէն զյատկութիւնս դատաւորին. վասն զի 'ի դատաւորն՝ բաց յիշխանութենէ դատաւորութեան՝ չորս կատարելութիւնք պահանջին։ Մի՝ գիտութիւն, զի ճանաչելով զճշմարիտն և զսուտն, և տեսանելով զիրաւացին և զանիրաւն՝ խորհեսցի տալ վճիռ ուղիղ։ Երկրորդ՝ արդարութիւն. զի զոր ուղիղ ծանեաւ, ուղղութեամբ դատեսցէ՝ ըստ համաձայն օրինաց. և մի աչառութեամբ կամ կաշառանօք թիւրեսցէ զիրաւունս, և անիրաւեսցի առ զրկեալն։ Երրորդ՝ երկայնմտութիւն. զի մի ընդ ճանաչելն վեր 'ի վերոյ զյանցանս յանցաւորին, իսկոյն հրամայեսցէ պատուհասել, կամ վճարել. ապա թէ ոչ՝ 'ի բազում սխալէ և բազմաց վնաս հասուցանէ։ Չորրորդ՝ զօրութիւն. իբր զի հրամանն նորա զօրեսցէ. զի եթէ այսպէս ոչ լինէր, վճիռ նորա 'ի դերև ելեալ յոչինչ լինէր. զի ոչ կատարէր։

Արդ՝ Աստուած գոլով գերագոյն դատաւոր ա͞մ՝ գերագոյն օրինակաւ ցուցանէ յինքեան զայսոսիկ չորեսին կա-

տարելութիւնս, այ զպիտութի, զարդարութի, զերկայնմտութիւն եւ զզօրութի. զորս Թուէ մարգարէն յառաջիկայդ: Նա զի զպիտութենէն յիշեաց 'ի նախընթաց համարն՝ յասելն, * որ քննէ զսիրտս եւ զերիկամունս ած ‖. աստ զերիսն միայն դնէ՝ ասելով.

**Ած դատաւոր արդար, հզօր եւ երկայնամիտ:** "Արդար" ասելով յայտ առնէ՝ ոչ զայն միայն, թէ տայ իւրաքանչիւր զպատշաճ իւր, այլ եւ թէ 'ի ճանաչել կամ 'ի տեսանել նորա գործիլ ինչ ընդէմ իրաւանց առ ինքն, կամ առ ծառայս իւր, ոչ առնէ անտես, այլ խորհի՝ արդարութբ պատուհասել զնոսա: "Հզօր" ասելով յայտ առնէ, թէ կարող է առնել՝ զոր խորհի: "Երկայնամիտ" ասելով՝ յայտ առնէ, թէ ած թէպէտեւ ը արդարութն իւրում բարկացեալ խորհի պատուհասել զյանցաւորս, ըստ որում եւ կարող է, բայց երկայնամիտ լինի առ նոսա. այ սպասէ՝ զի դարձցին եւ ապաշխարեսցեն: Նա զայս կամելով մարգարէին բացատրել յարէ զկնի, եւ ասէ:

**Ոչ ածէ զբարկութիւն իւր զօրհանապազ.** կամի ասել. թէպէտ զօրհանապազ բարկանայ ած 'ի վը մեղաւորաց, բայց ոչ զօրհանապազ ածէ զգործս բարկութե 'ի վը նոցա: Դարձեալ՝ թէպէտ միշտ եւ յամ առիթս բարկութե կարէ ած պատուհասել զյանցաւորս, բայց բազում անգամ անտես առնէ. վն զի երկայնամիտ է: Իսկ եթէ նոքա ոչ զգաստասցին, 'ի հասանել մահու նց՝ կարգէ զպատուհասն իւր, եւ մատնէ զնոսա 'ի դատապարտութիւն յաւիտենական, եւ ոչ եւս երկայնամտէ մինչեւ ցօր վերջին դատաստանի ըստ Թիւր կարծեաց ոմանց: Ուստի խօսելով Շնորհալւոյն 'ի մեկն. մատ. գլ. դ. 'ի վերայ այնր բանի * որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում ‖. ասէ. * ոչ ասաց՝ թէ յայնժամ միայն ('ի
„ վերջնում աւուր) առնուցու 'ի ձեռս. այլ զինչ.
„ որոյ հեծանոցն 'ի ձեռին իւրում. այ միշտ ընդ ինքեան
„ կրելով. յորժէ ուսանիմք՝ յամ ժամ լինել դատաս-
„ տան այ յարաբածս. թէպէտ եւ ոչ համօրէն եւ յայտ-
„ նի (որպ յաւուրն յետնում). այլ մասնաւորաբար, եւ
„ 'ի ծածուկ ‖: Որով ցուցանի՝ թէ յոչ դառնալ մեղաւորաց, ոչ եւս սպասէ նց ած. այլ ընդ մեռանիլն անդ արդար դատաստանաւ իւրով դատապարտէ 'ի տան-

ջանս դժոխոց: Ամէն իւր դարձուցեալ մարդասէրն զբան իւր առ մեղաւորս՝ ասէ:

ժգ. Ապա թէ ոչ դառնայք առ նա, զսուր իւր սրեսցէ, և զաղեղն իւր լարեալ. ՚ի նմա է պատրաստեալ զանօթս մահու. և զնետս իւր այրեցելոց է գործեալ:

Այսու բանիւ յայտ առնէ մարգարէն զարդարութիւնն այ. միանգամայն և զերկայնմտութի նորա և զողորմութի: Զարդարութիւնն՝ զի ասէ, թէ պատրաստեալ է պատիժս՝ ՚ի խնդրել զվրէժ ՚ի թշնամեաց իւրոց: Այնպէս և զերկայնմտութի նր ընդ ողորմութե, զի ցուցանէ՝ թէ սպասէ դարձի նոցա, և ոչ կամի փաղփաղակի պատուհասել զնոսա. ըստ որոյ դնէ զբառդ՝ ապա թէ ոչ, յասելն:

Ապա թէ ոչ դառնայք առ նա ևն: Այսինքն թէ ած թէպէտ և երկայնամիտ է և ողորմած, սակայն եթէ դուք միայն յողորմութիւն նր ապաւինելով անփոյթ լինիցէք յետս կալ ՚ի չարեաց ձերոց, և դառնալ առ նա, գիտասջիք, զի ոչ ևս խնայէ ՚ի ձեզ, այլ՝ ըստ բարկութե իւրում, որով բարկացեալ է ՚ի վր ձեր, չարաչար կորուսանէ զձեզ. զի պատրաստեալ է զամ գործիս բարկութեան իւրոյ ՚ի վրէժխնդրութիւն: Իսկ թէ զինչ իցեն այն գործիք և քանի, թուէ կարգաւ զկնի և ասէ:

Զսուր իւր սրեսցէ, և զաղեղն իւր լարեալ: Նմանաբանութբ խօսի, և զներգործութիւն բարկութեն այ պէսպէս գործեաց նմանեցուցանէ: Արդ՝ սրով և աղեղամբ, որք են գործիք սպանանելոյ, իմանայ զայն ներգործութի բարկութե, որով ած սպանանէ զթշնամիս իւր յաւիտենական մահուամբ, զրկելով զնոսա ՚ի յաւիտենական կենաց. որ այն ինքն է պատիժ մնասու:

Իսկ զայս գործ՝ սրով և աղեղամբ ասի կատարել վասն բազում պատճառաց: Նախ՝ առ ՚ի ցուցանել զստակութիւն բարկութեն այ, և զանվրէպ պատուհասելն նորա. զի մարդիկ ՚ի բարկանալն սաստիկ՝ հասարակօրէն այսպիսեօք յարձակին ՚ի սպանանել զթշնամին. եթէ մօտ է՝ սրով, և եթէ հեռի՝ աղեղամբ. և եթէ սրեալ իցէ սուր նոցա, և աղեղն լարեալ ուղիղ, գրեթէ անվրէպ գործեն՝ զոր գործեն: Իսկ արդ՝ քանզի ած

անվրէպ ունի սպանանել զԹշնամիս իւր, եԹէ 'ի մօտոյ և եԹէ անագան, վասն սրել զսուր իւր, և լարել զաղեղն. և կամ սպանանել սրեալ սրով, և լարեալ աղեղամբ: Իսկ սրել այսր ածայրն սրոյ և լարել աղեղանն՝ 'ի կողմանէ այ՟ մտածեալ՝ է 'ի վրէժխնդրուԹենէ նորա. իսկ 'ի կողմանէ մարդոյն մտածեալ՝ է 'ի չարուԹենէ մեղաց:

Երկրորդ՝ առ 'ի ցուցանել, Թէ ած՟ ոչ միայն զորս յայտնի մեղաւորք են՝ սպանանէ, այլև զորս անմեղ կարծեն զինքեանս, և ոչ են այնպիսի առաջի այ՟: Զյայտնի մեղաւորսն իբր սրով սպանանէ. զի սուրն հասարակօրէն 'ի յայտնի կացեալսն վարի. իսկ զծածուկ մեղաւորսն իբր աղեղամբ. զի աղեղն լարի առ հեռակայս իբր առ անյայտս. ևս զի առ լարումն աղեղան ուշադրուԹի՟ է պիտոյ. որում համեմատի նուրբ քննուԹիւնն, զոր առնելոց է ած՟ 'ի վ՟ր այնպիսի մեղաւորաց. զի նոքա որովհետև ոչ քննելով զինքեանս՝ համարէին անմեղ, և ամբարտաւանէին, ած՟ նուրբ քննելովն յայտնի կացուսցէ առաջի նոցա զյանցանս նց՟, և այնպէս կորուսցէ զնոսա:

Երրորդ՝ առ 'ի ցուցանել զաստիճան բարկուԹե՟ն այ՟. զի զորս հասարակ մահուամբ սպանանէ 'ի յաւիտեան, ասի իբր սրով սպանանել. զի հասարակ գործի սպանման է սուրն: Իսկ զորս առաւել սաստկուԹբ՟ և վրէժխնդրուԹեամբ սպանանէ, ասի սպանանել աղեղամբ. վասն զի առ 'ի սպանանել զոք աղեղամբ՝ պիտոյ է քաջ նշանառուԹի՟, զի հարցի նետն 'ի նպատակն. սոյնպէս և ած՟ 'ի սպանանելն զմեծ Թշնամիս իւր՝ իբր Թէ նշան առնու, զի անվրէպ հասուսցէ առ նոսա զնետս բարկուԹե՟ իւրոյ. և Թէպէտ ած՟ յա՟մ Թշնամիս իւր անվրէպ գործէ զայս, սակայն առաւել ևս 'ի մեծամեծ Թշնամիսն: Բայց զի մի՛ կարծեսցեն մեղաւորք, Թէ սուրն այ՟ և աղեղն նորա չունին ինչ ներգործել 'ի նս՟, և կամ Թէ նոքին ոչ սպանանեն, այլ փայլեն միայն, յարէ մարգարէն զկնի, և ասէ.

Ի ՆՄԱ Է ՊԱՏՐԱՍՏԵԱԼ ԶԱՆՕԹՍ ՄԱՀՈՒ: Որովհետև զերկուս եդ 'ի վերոյ՝ զսուր և զաղեղն, նախ զսրոյն խօսի, ըստ որոյ բառդ 'ի նմա՝ յարաբերէ զսուրն. խօսի ապա և զնետից աղեղան 'ի յաջորդ համարածն. (Թէ-

պէտ հնար է զայս բան նաև 'ի նետս աղեղան վերածել) ։ Արդ անօթ մահու ասելով խանձայ զգործիս մահու. և կամի ասել, թէ զսուր իւր այնպէս է սրեալ, մինչև սայրի նորա՝ քն̃ բերանոյ նր̃ որ 'ի նմա՝ լինել գործի մահու. որ է ասել, մահացուցիչ ։

Այսու որով որպ̃ ասացաք 'ի վերոյ՝ հանդերձեալ է ած̃ հատանել զթշնամիս իւր յամենայանկալի կենաց, և մատնել 'ի մահն յաւիտենական. և սա կոչի պատիժ զրկման կամ պատիժ վնասու. որում զհետ գայ պատիժն զգայութե̃, զոր հարուածոյ նետից նմանեցուցանէ մարգարէն, յանչափս հեռացեալ տեսանելով յոյ̃ զթշնամիս նր̃. ըստ որում առ հեռաւորսն ոչ ևս 'ի գործ ածի սուր, այլ նետ 'ի հարկանել. սմին իրի ասէ ։

**Այլ զնետս իմ արբեցուցից է գործեալ ։** Այսմանօր բառս "արբեցուցից" կրկնակի կարէ նշանակել. Մի՝ փոխանակ այնր, որ լցէ մսոյն կամ մսեալ. որպ̃ յորժամ պողպատն (քն̃ չելիկն) հրաշէկ գործի, և 'ի ջուր մխի. ուրով և այնչափ կարծրանայ, մինչև ոչ ևս ներգործիլ 'ի գործեաց ինչ ։ Արդ՝ այսպէս է ասէ գործեալ ած̃ զնետս իւր, քն̃ թէ հրացեալ և մխեալ պողպատի. և զայս այսպէս գնելով՝ կամի յայտ առնել զսաստկութիւն բարկութեանն այ̃, և զլինել պատժոյն աննահանջելի ։ Երկրդ̃ միտք հրայլին նիւթոյ. ըստ որոյ միտ բանին լինի այս, թէ ած̃ զնետս աղեղան իւրոյ (ընդ նմին և զսուր իւր) արարեալ և շինեալ է հրեղէն նիւթովք. քն̃ այնպիսի նիւթովք՝ որ բորբոքեալ է, և այրէ՝ որոց պատահէ ։ Որով կամի յայտ առնել, թէ ած̃ 'ի պատժելն զթշնամիս իւր՝ յաւիտենական հրով այրելոց է զնոսա 'ի գեհենի ։ Իսկ թէպէտ բազում են պատիժք 'ի դժոխս, բայց զայրելն միայն յիշէ. զի այս պատիժ սաստիկ է յոյժ 'ի մէջ պատժոց զգայութեան ։ Յորմէ սարսափեալ երջանկին այնորիկ վայ գոչէ 'ի բանն, է. ասելով. * վայ ինձ առ այսր յիշատակի՝ թէ նետք ,, բարկութեանն այ̃ այրեցելովք են գործեալ ։

Ոքիմբք յայտնի տեսանի, թէ քանի սարսափելի է անկանիլ 'ի ձեռս այ̃ կենդանւոյ, ըստ վկայելոյն պօղոսի. եբր. ժ. 31. զի թէ արդարև ահ մեծ է անկանիլ 'ի ձեռս թշ̃րի բարկացելոյ, քանի ևս այ̃ զայրա-

ցելոյ ․ նա զի թ՟ըն գոլով մարդ մաՀկանացու՝ և փոփոխական, վրէժխնդրութիւն ն՟ր եւ փոփոխական է և առժամեայ ․ իսկ ա՟ծ յաւիտեան կայ ․ և զի կենդանի է յաւիտեան, նա որ անկանի 'ի ձեռս նորա, յաւիտեան մնայ 'ի ներքոյ բարկութեան ն՟ր ․ յայս իսկ դնէ առաքեալն զբառդ կենդանի՝ յաւելն ․ * աՀ մեծ է անկանիլ 'ի ձեռս ա՟յ կենդանւոյ ‖ ։

Ոբանս այսր Համարոյ Հնար է մեկնել եւ և 'ի վերայ Ժիլաւոր պատժոյ և մաՀու ․ իբր զի յորժամ ա՟ծ ինքնին պատուՀասէ՝ կամ փութով, ասի սրով առնել․ իսկ յորժամ 'ի ձեռն այլոց, կամ անագան, ասի աղեղամբք ․ և յայտ է թէ զայսովիկ պատիժս ունի պատրաստեալ 'ի կատարած դատողութեան իւրոյ իբրև յանօթս մաՀու ։

Հայելով ոմանց յեբր″ ․ զբառդ այրեցելովք՝ վերածեն առ ամբարիշտս ․ որպէս թէ եղեալ էր ․ զնետս իւր գործեալ է վ՟ն այրեցելոց մեղօք ․ տես 'ի Համեմատութիւն ։ Ոմանք ասեն, թէ զայս ասէ մարգարէն վասն սաւուղայ և աբեսաղոմայ և այլոց թշնամեաց իւրոց ․ զորոց են բանք սաղմոսիս ․ բայց այս կարծիք եւ նոյն է ընդ առացելոյս 'ի վերոյ, զի նոյն բան է վ՟ն սոցա, և վասն ամենայն մեղաւորաց ․ զի առ այսպիսիս պարտ է յաւէտ սպառնալեօք խօսիլ քան ողոքանօք ․ եւ և յաւէտ զգօնոյց լինել, քան զերկնային փառաց ․ յաղագս այսորիկ գրէ բարսեղ վ՟պ ․ 'ի մեկն ․ մարկ ․ գլ․ Ժ ․ 'ի յորդ ․ * միթէ ասէ ցաւոտին պ՟րտ իցէ
„ զուտելոյ և զըմպելոյ խօսիլ ․ այլ նախ վասն դեղոյ
„ արժան է ճառել ․ ․ ․ սմին իրի ստէպ զգեՀենէն
„ ճառեմք ․ զի աՀիւն կակղեցեմք զսիրտս ձեր ‖ ։

Այս բանք ցուցանեն եւ՝ թէ որչափ Հնարի ա՟ծ դարձուցանել զմեղաւորս և 'ի դարձեալն գթալ, այնչափ անխնայ պատուՀասէ զոչ դարձեալսն ․ Որչափ յորդորէ զքեզ 'ի ներքոյ և արտաքոյ՝ խոստովանիլ զմեղս քո, ոչ զի պատժեսցէ՝ որպէս առնեն մարդիկ, այլ զի քաւեսցէ ․ մի՛ լինիր ապա անՀոգ ․ գուցէ մատնեսցիս յա՟յ 'ի ձեռս քոյ ․ և յետոյ 'ի կամիլդ խոստովանիլ յերկիւղէ չարէ, անկցիս յերեսաց նորա ․ Կորեկոս թ՟ըր զաղղիոյ իմացեալ զյանցանս զքսին պորկանեայ, բազում անգամ յորդորեաց և սաստեաց զնա

խոստովանիլ, որ յայտնի ցուցանէ՝ թէ զիարդ արար և ընդէր. այլ յոչ խոստովանիլ նորա՝ եդ զնա 'ի բանտի. վարանեալ ապա նորա 'ի բանտի անդ և երկուցեալ՝ աղաչեաց հանել զինքն 'ի բանտէ զի խոստովանեսցի. պատասխանի ետ թագաւորն. եանց ժամն. և հրամայեաց գլխատել զնա: Այսպէս պատահի և ամ մեղաւորաց, որք յապաղեն դառնալ: Այլ թէ զիարդ բերէն սոքա 'ի չարիս և յանօրէնութիւնս, առաջի առնէ մարգարէն՝ ասելով:

ԺԴ. Ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն. յղացաւ զցաւս, և ծնաւ զանիրաւութիւն:

Սկսեալ ահաւասիկ՝ կամի յայտ առնել նախ զանզգամութիւն մեղաւորին. քանզի թէպէտև տեսանէ մեղաւորն՝ զի Աստուած սուր 'ի ձեռին պատրաստեալ է խնդրել վրէժս 'ի նմանէ, բայց ինքն ոչ ինչ հոգայ, և ոչ դողայ. այլ մանաւանդ զհետ է ծնանելոյ զչարիս և բազմապատկելոյ զանօրէնութիւնս: Կամի յայտ առնել երկրորդ զպատճառ պատրաստելոյն նորա զգործիս բարկութեան իւրոյ, զորոց խօսեցաւ 'ի նախընթաց համարն. որպէս թէ ասացեալ էր. եթէ խնդրեսցես՝ թէ ընդէր է նորա զայս այսպէս առնել, ահա այս է պատճառն, զի մեղաւորն փոխանակ դառնալոյ՝ երկնեաց զանօրէնութիւն իւր. և ոչ երկեաւ յԱստուծոյ: Օրինակ որում Թինամոս անուն ամբաստանեալ առ զօրապետս իւր՝ կոչեցեալ բասկոլբոս՝ յնորին Ամերիկոյ, 'ի բարկանալ զօրապետին՝ Թինամոս եդ զձեռն իւր 'ի վերայ սրոյ նորա, և ասէ. զիարդ կարիցեմ ես գործել ինչ ընդդէմ քո, որ զինեալ ես այդպիսի զինու: Այսպէս պարտ էր և մեղաւորի սարսիլ յերեսաց սրոյն Աստուծոյ. բայց նա ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն իւր:

Իսկ թէ մարգարէն վասն որոյ մեղաւորի ասիցէ զայս՝ բազում են կարծիք. բայց հաւանականագոյն երևի ասել, թէ մարգարէն դիտէ աստ խօսել 'ի հասարակի զամենայն մեղաւորաց. իսկ 'ի մասնաւորի զայնմանէ՝ որոյ առթիւ յօրինեաց զայս սաղմոս, որ զՍաւուղայ, կամ զԱբեսաղոմայ, են. զի ամենեցուն սոցա ևս յարմարի այս բան զոր ասէ:

Ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն: Երկնելն է կրել զցաւ

ծնանելոյ․ կամ մերձ գոլով ծննդեանն՝ զցաւ զայնպի-
սի ցաւ, որ է սկզբնաւորիչ ծնանելոյ․ ուստի և երկ-
նելն զանօրէնութիւն՝ է կրել զտագնապ՚ի սրտի առ՚ի
ծնանիլ զանօրէնութիւն․ որ է կամիլ կամ ջանալ գոր-
ծել զանօրէնութիւն։

Եւ քանզի երկնելն է ընդ մէջ յղանալոյն և ծնանե-
լոյն, զի առ՚ի երկնել պարտ է նախ յղանալ, ա՛պ ընդ-
ունիլ զսերմն, և ապա երկնել, և յետոյ ծնանիլ,
զոյն ևս կամելով մարգարէին բացատրել՝ յաւել զկնի,
և ասէ։

Յղացաւ ցաւս, և ծնաւ զանիրաւութիւն։ Ա՛պ թէ ասէր,
ասացի՝ եթէ աշխատանօք մեղաւորն երկնեաց զանօրէ-
նութիւն, վ՚ն զի յառաջագոյն խոկ յղացաւ նա զցաւս
ընդդէմ մերձաւորին, և յետոյ երկնեաց և ծնաւ զա-
նիրաւութիւն․ կամ թէ երկնեաց զանօրէնութի՛, յորմէ
հետէ յղացաւ զցաւս․ և ապա ծնաւ զանիրաւութիւն,
կամ ըստ եբր․ զստութի։ Բայց ո՛չ բզմ ուրեք գտանի՚ի
ս՛բ գիրս․ ո՛պ այն՝ զոր ասէ եսայի․ * յղանան զցաւս, և
ծնանին զանօրէնութիւն ‖․ եսայ․ ծԹ․ 4։ և այն՝ զոր
ասէ յոբ․ * յղասցի զցաւս․ դիպեսցին նմա սնոտիք․
յորովայն նո՛ր կրեսցէ զնենգութիւն ‖․ յոբ․ ԺԵ․ 35։
Բրդ՝ յղանալ մարդոյ զցաւս ընդ հանրապէս առեալ՝ է
յղանալ զմեղս, որ է ցաւ մեծ․ ուստի ասէ սարգիս
շնորհալի․ ՚ի մեկն․ յակ․ տ․ 5․ ճառ․ գ․ * յղացաւ
„ (ամբարիշտն) զցաւս, և ծնաւ զանօրէնութի․ ար-
„ դարև ցաւք հոգւոյ են մեղքն ‖ ։ Իսկ ՚ի մասնաւո-
րի յղանալ մարդոյ զցաւս ընդդէմ մերձաւորին՝ է յղա-
նալ զնախանձ կամ զատելութիւն ընդդէմ նր․ կամ որ նոյն
է՝ առնուլ և ունիլ յինքեան զնախանձ և զատելութի,
որք են սերմն անօրէնութեց․ և այս յղացութի իրա-
ւամբք կոչի յղութի ցաւոց․ զի նախանձ և ատելութիւն
ցաւեցուցանեն և տագնապեն զհոգիս նախանձոտաց
և ատեցողաց․ և լինին այնպիսի ժանտ սերմն, յոր-
մէ ծնանին անիրաւութիւնք․ որպիսի են բամբասանք,
սուտ վկայութիւնք, սպանութիք, յափշտակութիք, և՛ն։
Որ ասէ սարգիս շնորհալի ՚ի յիշատակեալ տեղւոջ․
* չար սերմանեացն չար և յղացութի, չար յղացութեն
„ չարաչար և ծնունդ ‖․ զի է սպանանող ծնողին․
առ որ օրինակ բերէ անդ սա ինքն սարգիս շնորհալի

զյղութիւն և զծնունդ իմի՝ ասելով ըստ աւանդելոյ ո-
մանց. * որպէս յղութի իմի, որ ծնանելոյն ոչ անսայ
„ այլ առ չարութեանն պատառէ զորովայնն և ելանէ,
„ սպանանելով զծնօղն. (ըստ սմին) կրկին և բազմա-
„ պատիկ է չար՝ մեղացն յղութիւն... 'ի ծնանելն ըզ-
„ ծնօղ հոգին սպանանէ ||. ճռ. այնմ յակ. ա. Ծ. * և մեղքն
կատարեալ զմահ ծնանին ||.

Այլ գիտելի է՝ զի բառքս անօրէնութիւն և անիրա-
ւութիւն՝ որք դնին աստ, թէպէտև բազմանգամ 'ի տե-
ղի միմեանց 'ի գործ ածին, բայց այսու տարբերին,
զի անիրաւութիւնն յընդարձակ միտս դնի քան զանօրէ-
նութին. վս զի անօրէնութին է գործողութի ընդդէմ
օրինաց. իսկ անիրաւութին է գործողութի ընդդէմ
իրաւանց. և զի իրաւունքն առաւել ընդարձակ է քան
զօրէնս, բառս անիրաւութիւն՝ նշանակելով զայն՝ որ
լինի ընդդէմ իրաւանց, ունի զնշանակութի ընդարձակ
քան զանունն "անօրէնութիւն".

Արդ՝ մարգարէն դնելով նախ զանօրէնութիւն, և յե-
տոյ զանիրաւութիւն՝ զայս միայն կամի յայտ առնել,
թէ մեղաւորն յղացեալ զնախանձ և զատելութիւն
ընդդէմ մերձաւորին, 'ի ջանալն չարիս ինչ հասուցա-
նել նմա հակառակ օրինաց արդարութե և սիրոյ, թէ-
պէտ և ինքն 'ի ցաւոց այնր ատելութեան կուրացեալ.
համարի՝ թէ այն, զոր ջանայ առնել, է իրաւացի.
իբր զի իրաւունք իւր պահանջեն զայն գործել. բայց
այն գործ՝ զոր նա գործէ, կամ այն ծնունդ՝ զոր նա
ծնանի, է ստութիւն և անիրաւութի. զի ընդդէմ իրա-
ւանց, ես և ընդդէմ այնր զոր կարծէր ունել. վասն զի
յայտ է թէ բամբասելն, սպանանելն, ևն, է ընդդէմ
իրաւանց. վսյ և է անիրաւութի. Այլ թէպէտ 'ի սաղ-
մոսս ինչ մեր ոչ դնի աստ անիրաւութիւն, այլ՝ անօրէ-
նութի. բայց այդ կամ վրիպակ է, և կամ բառդ անօրէ-
նութիւն եդեալ է 'ի տեղի անիրաւութեան.

Գիտելի է դարձեալ՝ զի յայսմ բնաբանի զանազան
մեկնիչք զանազան կարգաւ դասաւորեն զերիս հա-
տուածս սորին. որոց առաջինն է, * երկնեաց զանօ-
րէնութիւն ||. երկրորդն՝ * յղացաւ զցաւս ||. և երրդն՝
* ծնաւ զանիրաւութիւն ||. Ոմանք դնեն՝ թէ երկու յե-
տինքն դնին իբր պատճառ առաջնոյն. ըստ որում ե-

զաք 'ի վերոյ · որպէս թէ ասէր , երկնեաց զանօրէնութի , վասն զի յառաջին յղացաւ զատելութիւն · և յետոյ ծնաւ անտի զանիրաւութիւն ։ Ոմանք գնեն , թէ վերջինն է կրկնումն առաջնոյն՝ իբր բացայայտիչ նորա · զի ասեն՝ թէ այն բան , * երկնեաց զանօրէնութիւն ‖ · նոյն է ը̃ այմ , * ծնաւ զանիրաւութիւն ‖ ։ Ոմանք ևս գնեն՝ թէ առաջինն է իբր համառօտութիւն ինչ այնց երկուց յե-տին համառուածոց · իսկ այն երկու համառուածք են բա-ցայայտակի եղեալք ։ Ոմանք գնեն՝ թէ երեքին ևս այնպէս կարգին , մինչև միոյն զհետ գալ միւսոյն · որպէս թէ այս լինէր միտ բանին · ահաւասիկ մեղաւորն երկնեաց զանօրէնութիւն · այ̃՝ կամեցաւ չարիս համա-ցանել ընկերին · և յայսմանէ յղացաւ զցաւս՝ այ̃ զպէս-պէս տագնապիչ խորհուրդս · և ապա ծնաւ զանիրա-ւութիւն ։

Ոմանք գնեն փոփոխմամբ կարգի ըստ նախագրելոյդ այսպէս · նախ՝ յղացաւ զցաւս · յետոյ երկնեաց զա-նօրէնութիւն · և ապա ծնաւ զանիրաւութի ։ Եւ զայս կարգ եղեալ՝ մեկնեն այսպէս · նախ խորհեցաւ զչա-րիս ցաւեցուցիչս հոգւոյ · յետոյ կամեցաւ կատարել զայն · և ապա ծնաւ , այ̃ կատարեաց զնոյն՝ գործով ։ Կամ , նախ՝ հաստատեաց 'ի միտս իւր գործել զչա-րիս · յետոյ ջանաց և խնդրեաց հնարս և միջնորդս գործելոյ զայն · և ապա եդ 'ի գործ ։

Ամենեքին սոքա ուղիղ են · և ուղղութ̃բ յարմարին գիտաւորութեան սաղմոսի · և 'ի մասնաւորէն՝ կարի իմն յանգաւոր երևին սաւուղայ և աբեսաղոմայ · որոց առթիւ յօրինեաց մարգարէն զայս սաղմոս ։ Քանզի յայտ է , թէ սաւուղ նախ յղացաւ զատելութիւն ընդ-դէմ դաւթի · ( ա̃ · թագ · ժը̃ · 8 ։ ) Յետոյ երկ-նեաց , այ̃ ծածուկ հնարիւք ջանաց բառնալ զկեանս նորա · և եդ նմա որոգայթ՝ զի սպանցի 'ի փղշտացւոց · ( ա̃ · թագ · ժը̃ · 25 ) ։ Եւ յետոյ ծնաւ , զի խնդրէին սկսաւ հալածել զնա · ( ա̃ · թագ · ժթ̃ · և ի̃ · և իա̃ · իբ̃ ։ ) Նոյնպէս և աբեսաղոմ նախ յղացաւ · այ̃ հա-տատեաց 'ի միտս իւր զխորհուրդ՝ անօրէնութ̃ բ թա-գաւորելոյ · ( բ̃ · թագ · ժգ̃ · 38 ։ ) յետոյ երկնեաց · այ̃ ջանաց հալածել զհայր իւր , և առնուլ զթագաւո-րութիւն նորա · ( բ̃ · թագ · ժե̃ · 1 ։ ) Եւ ապա առեալ

զնոյն. (Բ. Թագ. ԺԵ. 10.) Հալածեաց զնա պատերազմաւ. (Բ. Թագ. 17. և 18:) Նոցին հանգոյն և յուդա նախ յղացաւ զանօրէնութի՛՝ զչարելով. ապա երկնեաց՝ զհետ լինելով. և յետոյ ծնաւ վաճառելով զաստուած իւր:

Իսկ այժմ և ամ̃ մեղաւոր նախ յղանայ զչար խորհուրդս՝ 'ի խորհելն և 'ի կամելն գործել զչար. յետոյ երկնէ զանօրէնութի՛՝ 'ի ջանալն զնոյն կատարել. և ապա ծնանի զայն. բայց ծնունդ չար, և * երկունք հակառակ երկանց կանանց ‖. (ասէ լամբ). զի կինն յորժամ երկնէ, և կամի զմանուկն ծնանել՝ այս տագնապի և վշտանայ 'ի ցաւոյն, բայց յորժամ ծնանի՝ ցնծայ, և ուրախ լինի. զի ծնաւ մարդ յԾ. իսկ ծնունդն մեղաց դառնացուցիչ է և վնասիչ՝ ոչ այնչափ այնր՝ ընդդէմ որոյ ծնանի, որչափ այնր՝ որ ծնանի, այս է, ծնանողին: Եւ զայս ասել իմն բանիւ յայտ առնէ մարգարէն զկնի, 'ի մէջ բերելով զայն՝ թէ զխորդ չարիք մեղաւորի՝ զոր այլում նիւթէ, դառնան 'ի նա, յասեն:

ԺԵ. Գուբն՝ զոր փորեաց և պեղեաց, 'ի նոյն անկցի 'ի խորխորատ, զոր և գործեաց:

Այս բան է նախընթաց համարոյն 'ի միասին առեալ՝ 'ի մէջ բերէ զերիս չարիս մեղաւորին, մանաւանդ այնր՝ որ կամի վնասել ընկերին: Առաջինն է անզգամութիւն և նենգութիւն նր̃. զի մեղաւորն երբեմն անզգամութ̃ յայտնապէս հետամուտ լինի, և երբեմն նենգութ̃ 'ի ծածուկ հնարիւ՝ չարիս հասուցանել ընկերին: Յայտնապէս, յորժամ յայտ յանդիմանն ծնանի զչարիսն. զորմէ ասաց, * ծնաւ զանիրաւութիւն ‖: Ի ծածուկ, յորժամ լարէ նմա գաղտնի որոգայթ, որպէս և երևի յառաջիկայ բանդ:

Երկրորդն է տառապանք և տագնապ նր̃. զի յայտ է թէ փորելն և պեղելն աշխատանք են. որպէս և ծնանելն՝ ցաւ մեծ. և քանզի այսպիսեօք առաջի դնէ աստանօր գործողութիւնք մեղաւորին, այսու իսկ ցուցանի՝ թէ մեղաւորն 'ի կամելն չարիս հասուցանել ընկերին՝ կրէ զմեծ ցաւ. և վտանգի յոյժ 'ի նոյն չարիս, թէ՛ յինքեան և թէ 'ի գործս իւր:

Երկն է վտանգն և վնասն . վս վտանգին ասաց 'ի նախընթաց համարն , յղացաւ և ծնաւ . զի յայտ է՝ թէ ծնանելն վտանգէ զծնօղն . և բազում անգամ լինի պատճառ մահու նորա : Իսկ վնասն՝ զոր կրէ՝ կրկնակի է . մի ըստ նոքեան յեղծանել մեղաւորին յնոքեան զպատկերն այ , և 'ի զրկել 'ի շնորհաց նց . և մի ևս ըստ պատահման՝ 'ի դառնալ չարեաց ընկերին 'ի գլուխ նորա : Արդ թէպէտ յայս ամ կարէ հայիլ առաջնկաց բանդ , բայց մանաւանդ հայի 'ի յետին վնասն՝ յասելն :

**Գուբն զոր փորեաց և պեղեաց , 'ի նոյն անկցի 'ի խորխորատ , զոր և գործեաց :** Զայսպիսիս ասէ և սողոմոն , 'ի գիրս առակաց և ժողովողի , և այլուր . * Որ փորէ զխորխորատ ընկերի իւրում , անկցի նոքին 'ի նոյն ‖ . առակ . իզ . 27 : ժողով . Ժ . 8 : սիրաք . իէ . 29 : Իսկ այսպիսի նմանաբանութբ՝ ո՜վ և յայտ է , նշանակի՝ թէ որ հնարի որոգայթ դնել ընկերին , նոքին ըմբռնի 'ի նմին . կամ որ ջանայ վնասել , կամ նենգութբ չարիս հասուցանել ընկերին , նոքեան վնասէ , և կամ նոքին կրէ զայն չարիսն : Եւ զայս թէպէտ բազմայայտ ես կարէր դնել . որպէս և դնէ իսկ 'ի յաջորդ համարն , բայց կամելով զպարագայս գործողութեանն ևս յայտնել , այսու փոխաբերութբ վարի : * Գուբն ասէ , զոր փորեաց և պեղեաց , եւ ‖ :

Փորելն է բրել զտեղի ինչ՝ առ 'ի փոս գործել 'ի նմա . իսկ պեղելն է արտաքս հանել զբրեալ հողն . որով փոս ձեւանայ : Եթէ սակաւ ինչ խոր լիցի փոսն , կոչի գուբ . իսկ եթէ առաւել խոր , կոչի խորխորատ . և եթէ լիցի բոլորակութեամբ յօրինեալ , կոչի հոր . և եթէ լինիցի լայն , կոչի վիրապ :

Արդ՝ մեղաւորն 'ի կամին չարիս հասուցանել արդարոյն՝ 'ի ծածուկ փորէ նմա զգուբ առաջի ընթացից ճանապարհի նորա . զի թէ գործէ զայնպիսի ինչ , որով կարասցէ վնասել նմա 'ի գնալ նր խաղաղութբ , կամ 'ի կալն նորա յապահովս : Եւ զի մի ինչ խափան լիցին այնմ գործոյ իւրոյ , պեղէ , զի 'ի բաց առնու 'ի գործոյ անտի զորգեալն , զի զայնպիսիս , ուր արգել լինին այնմ վնասու :

Եւ սակայն այլ ինչ գործի 'ի նմա՝ քան զոր նոյն խոր-

հի . զի թէպէտև կրեսցէ արդարն այնու վնաս ինչ , բայց այն զաննայ նմա յօգուտ նորին . իսկ ամպարիշտն փոխանակ արդարոյն վնասելոյ՝ անձին վնասէ . և նովին գործով՝ որով կամէր փոքր չարիս հասուցանել արդարոյն , մեծի չարի պատահէ . զի՛ի կարծելն զուբ փորել՝ նմա՝ գործէ խորխորատ ինքեան . և կամելով արկանել զարդարն 'ի յայն զուբ՝ ինքն անկանի 'ի նոյն , ոչ իբրև 'ի զուբ , այլ՝ իբրև 'ի խորխորատ՝ զոր ինքն գործեաց . և ահա յայս միտ դնէ աստանօր մարգարէն զայս բան . * զուբն զոր փորեաց և պեղեաց , 'ի նոյն անկցի 'ի խորխորատ , զոր և գործեաց ‖ :

Այլ որպէս և տեսանի , այս բան ունի 'ի մեզ մթութի ինչ՝ ոչ յիմաստն , այլ 'ի շարադրութեան . առ որոյ բացատրութիւն՝ գիտելի է , զի բառս "զոր" , որ դնի յառաջին հատուածի , համարի իբրև թարմատար . որպէս յայտ է յերբ" և յայլ թարգ" . զի մարթ էր առանց նր եւ դնել այսպէս * զուբ փորեաց , և պեղեաց ամպարիշտն առ 'ի արկանել յայն զընկեր իւր . բայց ինքն անկցի 'ի նոյն իբրև 'ի խորխորատ՝ զոր ինքն գործեաց ‖ : Այլ եթէ բառդ "զոր" համարեսցի իբր յարաբերական , զուբն դնի փոխանակ նախդրիւ տրականի . որպ դնէ և Նարեկացին 'ի բանն Դ . յասելն * 'ի զուբն ինձ փորեալ ինքեանք ընկճեսցին ‖ : Այլ թէպէտ այդ բառ եդեալ է իբր անորոշ հայցական . բայց այն է վասն համաձայնելոյ ը յարաբերականին իւրում . ըստ որոյ բացատրի այսպէս . 'ի զուբն՝ զոր փորեաց և պեղեաց ամպարիշտն , 'ի նոյն անկցի . քն 'ի զուբն յայն իբր 'ի խորխորատ զոր գործեաց : Այլ բոլոր դիտումն մարգարէին է ցուցանել , թէ որ կամի այլում վնասել՝ ինքեան վնասէ . զի որպէս գրէ բարսեղ մծ 'ի մեկն մարկ . գլ . ժա . * որ ընդդէմ սրոյ աքացէ՝ զինքն խոցոտէ ‖ : Կամելով ապա մարգարէին առաւել ևս բացայայտ առաջի դնել զբանն՝ յարէ զկնի , և ասէ ,

ԺԶ . **Դարձցին ցաւք 'ի գլուխ նորա . և 'ի վերայ գագաթան նորա անօրէնութիւնք իւր իջցեն ։**

Ցաւք և անօրէնութիւնք ասելով՝ իմանայ զայնս , զորս յիշեաց 'ի համարն 14 . այսինքն են նախանձ և ա-

տելութիւն, անողորմութիւն և հնարք չարի, զորս ասէ ծնաւ թշնամին իբրև զծնունդս իժի, և արձակեաց զայնս իբրև զնետս 'ի վերայ արդարոյն ։ Ո՜վ այսպիսիս կոչէ ցաւս և անօրէնութիւնս, և վկայէ՝ թէ այսպիսեաց ունի հանդիպիլ այր ամբարիշտ յասէն ·

Դարձցեն ցաւք 'ի գլուխ նր · 'ի գլ̄ գագաթն նր անօրէնութիւնք իւր իջցեն ։ Ոչ ասէ դարձցին առ նա, կամ իջցեն 'ի վր նորա · այլ՝ դարձցին 'ի գլուխ նր, եւն ։ Իսկ այս թէպէտ զնոյն նշանակութիւն ունի, բայց այսու նմանաբանութբ խօսելով կամի յայտ առնել զառաւելութիւն վնասու ամպարշտին՝ քան զայն որով վնասելոց էր արդարոյն · զի յայտ է թէ մեծ է վնասիլ 'ի գլուխն, ք̄ 'ի ձեռս · եւս և մեծ է վնասիլ 'ի գագաթն՝ քան յոտս ։ Ուրեմն եթէ վնասն կշռեսցի նմանաբանութբ դառնալոյ չարեաց 'ի գլուխն, կամ իջանելոյ 'ի վերայ գագաթան, այն մեծ համարի՝ քան զայն վնաս՝ որ կշռի նմանաբանութեամբ պատահելոյ չարեաց յոտս և 'ի ձեռս եւն ։ Իսկ դարձեալ՝ որովհետև հոգին 'ի մարդն է իբր գլուխ, և միտք նր ըստ գերազանցութե իբր գագաթն, յասէն՝ այն չարիք դարձցին 'ի գլուխ ամպարշտին, և իջցեն 'ի վր գագաթան նորա, այսու ցուցանի՝ թէ ամպարիշտն 'ի կամին վնասել ընկերին ըստ մարմնոյ, վնասի 'ի հոգին, և խորտակի 'ի միտս, որ խանգարի և կուրանայ 'ի նոյն ։

Սոյն այս պատահի և դժնէութեան կամաց գլխին · զի 'ի կամիլ նորա արկանել զքեզ 'ի մեղս՝ եթէ ոչ տացես նմա տեղի, մեղքն դառնան 'ի գլուխ նր յառաւելութի տանջանաց նորին · նա զի վրիպիլ նորա 'ի չար կամաց իւրոց՝ համարեալ լինի նմա կողոպտիլ 'ի զօրութէ իւրմէ ։ * Ո՜ բուրդ ոչխարիդ՝ դևըն առնու զայ · բրդա„ թափ դառնայ, ինքնին դառնանայ ‖ ։

Յոգնիկ՝ զոր ասաց մարգարէն, հայելով յարդարն ասին լինել գործք արդարութեանն տյ · իսկ հայելով 'ի մեղաւորն՝ գործք վրէժխնդրութեան նր · ապա 'ի խոստովանութիւն տացէն աւարտեալ մարգարէն զբան իւր, ասէ ։

ԺԷ. Խոստովան եղէց Տն ըստ արդարութեան նորա . սաղմոս ասացից անուան Տեառն բարձրելոյ ։

Խոստովան լինելն ընդհանրապէս առեալ՝ նշանակէ հաստատութի̃ւն իմն յայտնել ումեք բերանով զայն ինչ՝ զոր ունի մարդ 'ի միտս, կամ զոր կրէ յինքեան, և կամ զոր գործեալ է կամ տեսեալ ։ Իսկ 'ի մասնաւորի առեալ, խոստովան լինել տ̃ն կամ առ Տէր՝ նշանակէ՝ նախ յայտ առնել առաջի տ̃ն զայն ինչ՝ զոր գիտէ մարդ, կամ զոր կրէ կամ զոր արարեալ է, և այնու խնդրել ինչ 'ի նմանէ . նշանակէ երկ̃դ՝ յայտ առնել զայն՝ զոր ա̃ծ արարեալ է նմա, և այնու յայտարարութի̃ գոհանալ զն̃մէ, և կամ օրհնել զնա . զորմէ տե̃ս 'ի սաղ . ը̃ . 1 . ըստ այսմ յետին նշանակութեան դնէ աստ մարգարէն զբառդ խոստովան լինել . յասելն ։

Խոստովան եղէց Տն ըստ արդարութեան նր ։ ի̃ յայտնելով առաջի տ̃ն զի̃մ՝ զոր ես կրեցի, և զի̃մ՝ զոր նա արար ինձ՝ գոհացայց զն̃մէ, և օրհնեցից զնա՝ * ըստ արդարութեան նր‖ . ի̃ ը̃ պահանջելոյ կամ ը̃ արժանաւորելոյ արդարութեան նր . 'ի ձեռն որոյ սքանչելի օրինակաւ ազատեաց և ազատէ տէր զարդարսն, և պատժէ զանիրաւսն . կամ դարձեալ, օրհնեցից զնա՝ ոչ վասն վրէժխնդրութեանն նր՝ որով պատուհասէ զամպարիշտս, այլ՝ վասն արդարութե̃ նր՝ որով ազատեաց զիս 'ի ձեռաց նոցա ։ Զայս խոստովանութի̃ կամ օրհնութի̃ այլով իւիք ես կամելով առաջի առնել՝ յարէ զինի, և ասէ ։

Սաղմոս ասացից անուան Տն բարձրելոյ ։ Կամի ասել . սաղմոսելով օրհնեցից զանուանն ա̃յ, որ է տէր ա̃մի, և տէր բարձրեալ, ի̃ ամենազօր և ամենաբարձր . և իշխէ 'ի վ̃ր ա̃մի, և որպէս կամի ազատէ զարդարսն 'ի ձեռաց թշնամեաց իւրոց . և առնէ ես՝ զի որչափ և զօրաւոր իցեն նոքա, ոչ կարասցեն առանց թոյլ տալոյ նր առնել ինչ չար արդարոյն ։

Զայս խոստովանութիւն օրհնութե̃ սաղմոսաց ը̃ յորդորելոյ լամբ″, արժան է մ̃ք քրիստոնէի մատուցանել հանապազ առաջի ք̃ի, և ասել . խոստովան եղէց քեզ տէր ա̃ծ փրկիչ իմ, և օրհնեցից զքեզ զկենարարդ իմ՝ ըստ արդարութեան քում, որով փրկեցեր զանձն իմ 'ի

ձեռաց թշնամեաց իմոց, և արդարացուցեր զիս՝ հատուցանելով զիմ զպարտս իմ. և երգօք օրհնութեան փառաւորեցից զանուն փրկչիդ իմոյ, որ բարձրացար փառօք յերկինս, օրհնեալ յիմ արարածոց յաւիտեանս յաւիտենից.

# ՍԱՂՄՈՍ Ը.

Հրատարակութիւն սքանչելի լինելոյ անուանն ա͞յ և մեծվայելչութեան նորուն, ցուցեալ զայն 'ի զօրութ͞է նորա և յիմաստութենէ նորին, ևս և 'ի գործոց և 'ի խնամոցն, զոր ունի 'ի վ͞ր մարդկան.

Ի կատարած 'ի վ͞ր հնձանաց. սաղմոս 'ի դաւիթ.

1 Տէր տ͞ր մեր. զի սքանչելի է անուն քո 'ի վ͞ր ամ երկիր.
2 Համբարձաւ մեծվայելչութի͞ւ քո 'ի վերոյ քան զեր-
կինս. 3 Ի բերանոյ մանկանց տղայոց ստնդիեցաց հաստատեցեր
զօրհնութ͞ի. վ͞ս թշնամեաց քոց տ͞ր. զի եղծցես թշնամին և հակա-
ռակորդն. 4 Տեսից զերկինս՝ զգործս մատանց քոց. զլուսին և
զաստեղս, զորս դու հաստատեցեր. 5 Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու
զնա. կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես դու նմա.
6 Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո. փառօք և
պատուով պսակեցեր զնա. և կացուցեր զնա 'ի վ͞ր ամ ձեռա-
կերտաց քոց. 7 Զամ ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից
ն͞ր. զխաշն, և զարջառ. և զամ ինչ. 8 Այլ և զերէ վայրի,
զթռչունս երկնից, զձկունս ծովու, որ շրջին ընդ շաւիղս ծո-
վու. 9 Տ͞ր տ͞ր մեր, զի սքանչելի է անուն քո յամ երկիր.

# ՎԵՐՆԱԳԻՐ.

Ի չորրորդ 'ի վր̃ հնչմանց. Սաղմոս 'ի դաւիթ:

ԱՅՍ ՎԵՐՆԱԳԻՐ Է ԵՒ Ի սաղմոսն, Ձ, և Ձգ. փոքր ինչ տարբեր. իբր զի սոյն այս առ ի լինել 'ի դաւիթ. իսկ ութսուներորդն՝ յասափ. և ութսուն և երրորդն՝ յորդւոցն կորխայ: Այլ որ աստ դնի՝ * 'ի վր̃ հնձանաց ||, 'ի նոյնն դնի * վասն հնձանաց ||. որ զնոյն նշանակէ:

Ի բնագիրս եբրայեցւոց փոխ բառիդ 'ի վերայ հնձանաց, գրի՝ ալ հակիթթիթ. այլ թէ զինչ նշանակիցէ այս բառ, այլեայլ բանք են 'ի մատենագիրս: Հրեայք պնդեն՝ թէ բառս կիթիթ նշանակէ նուագարան, որպիսի է տաւիղ, կմ̃ քեման կամ վիօլի. և ը̃ այսմ միտ բանի վերնագրիդ, բացատրի այսպէս. սաղմոս դաւթի՝ որ կատարի ը̃ երգի տաւղով՝ այս է քեմանով կամ վիօլիով:

Բայց բազում մատենագիրք պնդեն թէ բառդ կիթթիթ եկանէ 'ի բառէս կէթ, այն է գէթ. որ է անուն քաղաքի իւրք. որ բազում ուրեք յիշի 'ի սր̃ գիրս. (տե՛ս ա. թագ. Է. 8: և Ժ. 17: և բ. թագ. ա. 20: և բ. մնաց. ժա. 8: և իզ. 6. եւն): Աստի և բառս կիթթիթ նշանակէ ասեն կէթացի կամ գեթացի: Այլ ը̃ այսմ կարծեաց՝ վերնագիր սաղմոսիս ընթերցեալ լինի այսպէս, 'ի կատարած 'ի վերայ գեթացւոց՝ սաղմոս 'ի դաւիթ: Վասն զի (ասեն) դաւիթ երկիցս պատերազմեալ ընդ գեթացիս՝ էառ զքղք նց զգէթ. տե՛ս գրի. ա. մնաց. ժը. 1: և բ. թագ. իա. 18. և 20:

և 'ի յիշատակ այսր ասաց զայս սաղմոս:

Ոմանք ևս ասեն, թէ որովհետև սպան դաւիթ զչորս հսկայս, որք էին գեթացիք. զմին ձեռօք իւրովք, այն է գողիադ. և զերիսն 'ի ձեռն ծառայից իւրոց, յորոց 'ի միոյն ևս վտանգեցաւ և զերծաւ. տե՛ս գրի. բ. թագ. իա. 16. 'ի սոյն հայեցեալ՝ ասաց զայս

սաղմոս 'ի չնորհակալութիւն աստուծոյ ։

Իսկ ոմանք ասեն. թէ յորժամ դաւիթ 'ի գեթ էր, արար զայս սաղմոս՝ վասն երգելոյ գեթացւոցն, ք̃ վ̃ս այնոցիկ՝ որք էին ընդ նմա 'ի գեթ՝ արք վեց հարիւր ։ Որպէս յայտ է. ա̃. թագ. իէ. 2 ։ որք 'ի բ̃. թագ. ժե. 18. կոչին գեթացիք ։

Այլք կարծեն, թէ զայս ասաց վասն զերծանելոյ տապանակին 'ի ձեռաց հնգից այլազգեաց, յորս գեթացիք էին երեւելիք և հզօրք. ( ա̃. թագ. ե. 8 ։ և զ̃. 13 ։ և է. 1 ։ ) և կամ վ̃ս հանելոյ իւրոյ զտապանակն 'ի տանէ աբեդդարայ գեթացւոյ. ( բ̃. թագ. զ̃. 11 ։ ) Իսկ ահա վասն այսոցիկ ա̃մ ասեն գնի 'ի վերնագրի սաղմոսիս առ եբրայեցիսն, ալ հակիթթիթ. ք̃ 'ի վ̃ր գեթացւոց. ո̃պ թէ ասացեալ էր, այս սաղմոս ասացաւ 'ի դաւթայ՝ աւթիւ գեթացւոց ։ Իսկ ըստ այսմ ոմանք զբառդ 'ի կատարած՝ յարմարական մեկնութի̃ տարածեն 'ի վ̃ր կատարմանն. որպէս թէ եղեալ էր. զայս ասաց դաւիթ 'ի կատարել յաղթութեն ընդդէմ գեթացւոց. կամ հայելով 'ի կատարումն ճմլին կալոյ տապանակի ա̃ն 'ի ձեռս գեթացւոց. ոչ զի յիւր ճմլս եղև այս, այլ՝ վասն յառաջագոյն լինելոյ ։

Բայց քանզի զբառդ կիթթիթ՝ յիգական սեռի ասեն լինել, բազումք համարին՝ թէ այսու նշանակի գուսան գեթացի կամ երգեցիկ կին գեթացի. և ը̃ այսմ միտ բանի վերնագրիդ լինի այս. սաղմոս երգելի ըստ այնմ եղանակի՝ զոր վարեն գեթացի կանայք, կամ ըստ եղանակի գեթացւոց ։

Այլ թէ զիարդ եօթանասունք և այլք փոխակ ասոր եդին հնձանք՝ գիտելի է, զի այս բառ ըստ եբրայականնին՝ եկանէ յանուանէս կաթ. այն է հնձան, որոյ յոգնակին լինի կիթթօթ՝ այս է հնձանք ։ Իսկ զի եօթանասունք կիթթօթ ընթերցան, հնձանք եդին. իսկ թէ բառիս հնձանք՝ զինչ նշանակի աստ, բազում են կարծիք. որոց զչորեսին ևեթ դիցուք առաջի ։ Առաջին և հաւանականագոյն կարծիքն է այս՝ թէ բառդ հնձան՝ դնի աստ փոխաբերութեամբ. փոխ բառի կիթթիթ. 'ի նշանակել զտաւիղ, ք̃ զքնարն կամ զվիօլի, և կամ թերևս զեղանակ ինչ երաժշտութե. և ըստ այսմ, ո̃պ ասացաք 'ի վերոյ՝ վերնագիր սաղմոսիս

բայատրի այսպէս , այս սաղմոս դաւթի երգելի է տաւղիւ :

Երկրորդ կարծիքն է՝ թէ այսու անուամբ նշանակի աստ բուն հնձանն , որ է կազմուած ինչ և կամ անօթ նման աւազանի , ուր ճմլի խաղող . և մերթ ևս նշա-նակի տեղի ժողովելոյ զհունձս ցորենոյ , կամ գարւոյ , եւն : Արդ ըստ այսմ կարծեաց՝ այս սաղմոս համարի արա-րեալ վասն ասելոյ 'ի կութս , կամ յետ կթոց խաղողոյ . ևս և յետ հնձոց ցորենոյ , մինչ յաւուրս տօնից տաղաւարահարաց , 'ի գոհութիւն բարերարութեանց այ՟ , և յաւէտ ևս 'ի շնորհակալութի՟ ստեղծագործութե՟ նր՟ զծ՟ս յօրինէ լի ա՟մ բարեօք : Արդ յայս միտ՝ ասել՛ն 'ի վերնագրի աստ * 'ի կատարած 'ի վերայ հնձանացն , „ սաղմոս 'ի դաւիթ ‖ , նշանակէ ասել . այս սաղմոս արարաւ 'ի դաւթայ՝ երգել յետ հնձելոյ զհունձս և զխաղողս , և արկանելոյ 'ի հնձանս . կամ 'ի ճմլի՝ յո-րում քաղին հունձք , կամ կթեն խաղողք , և արկանին 'ի հնձանս : Արդ ըստ այսմ բառդ 'ի կատարած յարմա-րական մեկնութի՟ նշանակէ , թէ այս սաղմոս ասելի է 'ի կատարման անդ հնձանաց . կամ 'ի կատարումն գո-հութե՟ և շնորհակալութե՟ այն : Յայս կարծիս վերա-ծի և այն , զոր ասեն ոմանք , թէ յորժամ դաւիթ 'ի հնձանս բնակէր մերձ 'ի գեթ՝ արար զայս սաղմոս . որպէս և զայլ երկուսն . այլ այս ոչ ուստեք ստուգի :

Երրորդ կարծիքն առաջի դնի 'ի բարոյական միտս . իբր թէ հնձանաւ նշանակիցի աստ սիրտ մարդոյ . ուր պէսպէս հոգևորական խորհուրդք իբր խաղողք ճմլ-լեալք՝ բղխեն զգինի սիրոյ . և որպէս 'ի ճմլի կթոց ու-րախանան մարդիկ իբր արբեալք , և ուրախութի՟ եր-գեն զերգս 'ի հնձանս , այսպէս լինի և սիրտ նոցա , որք արբեալ են սիրովն այ՟ . և այսպիսի ուրախութի՟ լինի նոցա երգել զայս սաղմոս : Դրձ՝ այսու հնձանաւ նշա-նակին զօրութիւնք շնորհաց հոգւոյն սրբ՟յ . յորս ճմլին սիրտք մեր , և բղխեն զսէր իբրև զգինի անուշարար հոգւոց մերոց :

Չորրորդ կարծիքն՝ որ է հասարակ սրբ՟ց հարց , դնի յայ-լաբանական միտս . ըստ որոյ այս սաղմոս ասի վասն նոր եկեղեցւոյ , որ է այգի խորհրդաւոր . յորում եդ քս՟ զհնձան : Յայս միտ գրէ և դաւիթ անյաղթ 'ի նախ-

երգանս սաղմոսաց ասելով . * Իսկ որ ասէն հնձա-
„ նաց՝ ոմանք ՚ի հարցն հնձան զեկեղեցի թարգմա-
„ նեցին՝ որ համօրէն ընդ տիեզերս ‖ ։ Այլ յաւելու ևս
գրել՝ թէ * ոչ այգաբիկ սաղմոսք միայն, այլև գոն
„ յօրինակս ինչ՝ թէ ՚ի վ̃ր̃ հնձանացն իւր ( կամ ուր )
„ եհար զաւիթ զխորանն ա̃ն ՚ի սիոն . և եղև անդ
„ զամն ի̃ . ըստ որում և ամբարիշտ թ̃գ̃ւքն յուդայ ՚ի
„ վ̃ր̃ տանեաց ապարանիցն սեղան շինեցին արեգա-
„ կան, և անդ զոհեցին ։ Իսկ իբրև շինեցաւ տաճարն՝
„ անդ և խորանն փոխեցաւ, երթային ք̃հ̃նք ՚ի տօնս
„ և յամսագլուխս, և երգէին ՚ի տեղւոջ խորանին ՚ի
„ վ̃ր̃ հնձանացն ասելով, փո̃ղ հարէք ՚ի գլուխս ամ-
„ սոց յաւուր նշանաւորի, և տէր տէր մեր զի՞ սքանչե-
լի է անուն քո ։ ‖

Յայս հայի և առակ ա̃ն մերոյ՝ զոր ասէ . * այր մի էր
„ տանուտէր, որ տնկեաց այգի, և ցանգով պատեաց
„ զնա, և փորեաց ՚ի նմա հնձան ‖ . մատ . իա̃ . 33 ։
Իսկ այսու հնձանաւ օրինակի խաչն կենարար . ուր
ճմլեցաւ ողկոյզն անմահութեան ։ Այլ ո̃ղ գրէ գէորգ
վ̃ր̃դ ՚ի մեկն . եսայ . ե̃ . * Հնձան եհար ՚ի նմա մե-
„ րոց ախտից և չարչարանաց . զի զնոցա ողկոյզն ճմլ-
„ լեաց . և այլ հնձան յարոյց, զորոց զաւիթ ասէ
„ վասն հնձանաց . թէ սիրելի են յարկք քո տէր զօ-
րութեանց ‖ ։

Պ̃ր̃ճ հնձան ասի նոյն եկեղեցի . յորում ա̃մ որ ինչ
է՝ եթէ գործք և եթէ վ̃ր̃պութիւնք, եթէ աղօթք, և
եթէ խորհուրդք՝ ՚ի մի հաւատ հաւաքեալք իբրև ՚ի մի
ողկոյզ՝ ճմլին, ո̃ր քննեալ լինին, և հանեն զխնդութ̃ե̃
գինի և զուրախութիւն ։ * Այլ զի հնձանաց դնէ ( ասէ
„ վարդան ) և ոչ հնձանի . քանզի հրէիցն մի խորան
„ էր, և մերս բ̃զ̃մ, ընդ ծով և ընդ ցամաք, ձեռագործ
„ շինուածք ա̃մ եկեղեցեաց . և յամենն մի խորհուրդ
„ կատարի ։ ‖

Յայսմ ամենայնի երկու ինչ պարտ է աստ համարել իբր
ստոյգ . մի՝ թէ այս սաղմոս ասացեալ ՚ի դաւթայ՝
կարգի ՚ի ցոյց մեծվայելչութեան փառացն ա̃յ, և սքան-
չելի խնամոց նորին ։ Երկ̃դ՝ թէ այս սաղմոս յայտնի
ի̃ն̃ մարգարէութ̃բ̃ կարգի ՚ի դէմս ք̃ի̃ . և այս յայտ
անուի է, զի ինքն ք̃ս̃ զբան երկրորդ համարոյ ՚որ եդ ա-

ռաջի քհնյապետիցն և դպրաց իբր վասն իւր ասացել. մատ. իա̃. 16 : Այնպէս և պօղոս զբանս 5, 6, և 7, համարոյն բերէ 'ի վկայութի̃ վասն ք̃ի. եբր. բ̃. 6. 7. 8. և 9 : և ա̃. կոր. ժե̃. 26 : Նոյս և բ̃մ ռաբբիք հրէից խոստովանին, թէ այս սաղմոս իցէ ասացեալ վասն մեսիային : Նու ահա յերկուս յայտնիկ հայելով ունիմք մեկնել զսա :

## Ը Ս. Ղ.:

ա̃. Տէր տէր մեր՝ զի՛ սքանչելի է անուն քո 'ի վ̃ր ամենայն երկրի :

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ:

Այս եղանակ սկզբնաւորութեան բանից ցուցանէ զառաւելութիւն զարմացման հոգւոյ մարգարէին. վ̃ն զի այսպէս խօսելով յայտ առնէ, թէ 'ի նկատել իւրում զմեծվայելչութիւն փառացն այ̃, և զսքանչելի գործս նորա՝ յափշտակեալ է 'ի նոյն հիացմամբ. և 'ի տեսանել անդ զզօրութիւն նորա սփռեալ 'ի վ̃ր ամ̃ երկրի՝ յուրախութենէ սրտի իւրոյ և 'ի մեծուէ̃ զարմացմանն վերացեալ իցէ յապշութիւն : Չկարելով ապա խօսիլ զնմանէ՝ զանուն նորա 'ի մէջ մատուցանէ, և նախ իբր հիանալով ասէ :

Տէր տէր մեր՝ (զի՛ սքանչելի է անուն քո) : Նուանքս * տ̃ր ,, տէր || 'ի բնագիրս եբրայեցւոց այլ և այլ բառիք դնին աստ. զի 'ի տեղի առաջնոյն դնի եհօվա. զոր բարսեղ ձ̃ն 'ի մարկ. ժբ̃. ահիահ ընթեռնու. և այս անուն՝ որ չորս տառիւք եւեթ գրի առ եբր". միայն այ̃ ընծայի, և ոչ այլում. և է այն անուն՝ զոր ած̃ յայտնեաց մովսէսի՝ յասելն առ նա, * ես եմ ած̃ ,, որ էն ||. ել. գ̃. 14 : Ուր յեբրայեցին դնի եօվա : Իսկ 'ի տեղի երկրորդին դնի ադօնայ, կամ ադօնայի. և աստանօր գրի ադօնենու, այս է տէր մեր. որ առ եբրայեցիս յաճախ 'ի գործ ածի՝ 'ի յիշել զանունն այ̃. և յատկապէս նշանակէ տէր : Բայց այս անուն ոչ այնպէս է՝ որպէս առաջինն. զի սա ե̃ւ ասելոյ մեկնչաց երբեմն մարդոյ ևս ընծայի : Իսկ յորժամ 'ի միասին

ընդ Եօվա անուան դնի, յա̃ծ և եթ հայր իբրև զբառդ
Եօվա . վասն որոյ և եօթանասունք զնոյն բառ եդին ։
Օ̃ այսմանէ տե՛ս և 'ի սաղ . ՃԹ . 1 ։

Այլ ծանիր, զի եբրայեցիք այնչափ սքանչելի հա-
մարին զանունս Եօվա . մինչ զի թէպէտ և 'ի գիրս
դրոշմեն զայն չորիւք տառիւքս, որք են եօտ . հէ .
վաւ . հէ . բայց ոչ արտասանեն զայն ըստ տառիցն . զի
համարին անճառելի և անարտասանելի . ուստի և
փոխ եհովահ ասելոյ՝ ադոնայի ասեն ։ Եւ եթէ ու-
րեք 'ի միասին եդեալ իցեն որպէս սա եհովահ և ա-
դոնայի՝ ընթեռնուն ադոնայի ադոնայի . յորմէ և
թարգմանիչք յունաց և այլոց ազգաց նովին բառիւ
եդին, այ̃ է՝ տէր տէր . տե՛ս զայսմանէ 'ի նուագարանն
օրհնութեանց . 'ի յօրհն . ա̃ . 4 ։

Այս կրկնումն՝ եթէ ըստ եբրայականին, և եթէ ըստ
մերումս՝ յայտ առնէ զբացարձակ տէրութիւն ա̃յ . իբր զի
ա̃ծ ոչ է սոսկ տէր, այլ՝ տ̃ր տ̃ր, այ̃ ըստ ա̃մի տ̃ր . և ևս
ոչ միայն տէր, այլև տէր որ էն, կամ տ̃ր եհովահ . զի
ոչ միայն ունի զայնպիսի տէրութիւն, որ այլոց ևս հա-
ղորդի . ըստ որոյ ասի ադոնայի, այ̃ տէր . այլև զայնպի-
սի տէրութի, որ վասն անբաւութե̃ն՝ անհաղորդելի է
այլոց . ըստ որոյ ասի եհովահ, այս է՝ որ էն, այսինքն
էութիւն ինքնագոյ կամ ինքնաբաւ ։ Ուստի և դնելով
ասա՝ * տէր տէր մեր ‖, կամի ասել . դու՝ որ ես անսահ-
ման աղբիւր գոլոյ՝ և ինքնագոյ տէրութիւն, գոյացու-
ցանելով և կառավարելով զմեզ և զամենայն էս՝ տիրես
'ի վերայ ա̃մցն . և այնպիսի օրինակաւ ցուցանես յա̃մի
զտէրութիւն քո, մինչև երևիլ անուան քո սքանչելի ։

Նմին իրի յարէ 'ի սոյն, և ասէ ։

Ո՜րչափ սքանչելի է անուն քո 'ի վերայ ա̃մ երկրի ‖ ։ Ուր բառս
զի, ոչ դնի իբր հարցական, այլ իբր զարմացական .
որպէս թէ եդեալ էր, ո՜վ՝ որպէս սքանչելի է անուն քո ։
Արդ անուանն ա̃յ ասի՝ սքանչելի՝ ը̃ս կրկին իմացուածոյ .
մի՝ ը̃ս նշանակօղ գոլոյն, և մի ևս՝ ը̃ս նշանակեալ իրին ։
Ըստ առաջնոյն թէպէտ և ամենայն անուանք՝ որք ըն-
ծայեն ա̃յ, սքանչելի են, բայց առ եբրայեցիս անունս
եհովահ կամ Եօվա ըստ ինքեան սքանչելի համարի .
մինչև որպէս ասացաք, ոչ համարձակիլ նոցա արտասա-
նել զայն ։

Բստ երկրորդին առի սքանչելի՝ հայելով յայն՝ զոր նշա-
նակէ. այն է անծութիւնն կմ մրուն այ, զոր անունս
ած կամ տէր՝ յայտ առնէ: Մի զի անունն է իբր պատ-
կեր ինչ այնր՝ զոր նշանակէ. արդ՝ որպէս պատկերն ըն
որում պատկեր ոչ փառաւորի վն այսորիկ՝ զի է նկար
ինչ, այլ վնկ՝ զի ցուցանէ յինքեան զնկարնաւորն,
այնպէս և անունն ոչ վնկ փառաւորի՝ զի է ձայն ինչ
այսպիսի, այլ զի նշանակէ զայն՝ յորոյ վերայ եդեալ է.
ուստի և անունն այ վնկ փառաւորի, զի նշանակէ կամ
փաղանչանէ զէածուն նր, կամ զանէրուն նորին: Ուստի
և սքանչելի առի և սքանչելի քաղաքի յամ երկրի, և
փառաւորի յամենայն տեղիս, և երկրպագի յամենայն յամ
ազգս, ես և 'ի հեթանոսս. որպ ասէ աճ բերանով մա-
ղաքեայ. * Օ'ի յարևելից մինչև 'ի մուտս արևու փա-
,, ռաւորեալ է անուն իմ 'ի մէջ ազգաց. և յամ տե-
,, ղիս մատչին խունկք անուան իմո, և պատարագ
,, ոք. զի մեծ է անուն իմ 'ի հեթանոսս ասէ տէր ա-
,, մենակալ ||. մաղաք. ա. 11: Որ մեծ է առելով
կամի ցուցանել թէ սքանչելի ես է:

Իսկ "սքանչելի" առի ինն վասն այնպիսի գերազանցու-
թեան, որ 'ի յայտ եկեալ՝ ածէ զմարդն 'ի զարմացումն.
և երբեմն ես 'ի զմայլումն: Իսկ զարմանալի առի այն
ինչ՝ որ սակ վասն 'ի յայտ գալոյ անակնունելի իրիք
պատճառի՝ ածէ զմարդն 'ի զարմացումն, թէ գերա-
զանց ինն իցէ այն պատճառ, և թէ սոսրին և ա-
նարգ: Բայց եթէ այսպիսիս պատճառեսցէ զմեծ զար-
մացումն՝ կոչի ես հիանալի: Ուստի և անուանքս՝
զարմանալի, հիանալի, և սքանչելի՝ ընդ որս և բառս
հրաշալի՝ թէպէտև 'ի տեղի միմեանց 'ի գործ ածին
բզմ անգամ, բայց իւէք իւէք տարբերին: Իբր զի ե-
թէ պատճառն զարմացման՝ 'ի հասարակի նկատես-
ցի, իցն առի զարմանալի. և եթէ մեծապէս զարմա-
ցուցէ, առի հիանալի: Իսկ եթէ ըստ գերազանցու
կատարելութեան նկատեսցի, առի սքանչելի: Իսկ եթէ
ըստ գերազանցութե գործողու նկատեսցի՝ առի հրա-
շալի: և վնկ այնպիսի գործողութիւնք, որք գերազան-
ցեն զբնականօք, հրաշք կոչին և սքանչելիք: Իսկ
արդ՝ քանզի գերազանցութի տէրութե և զօրութե այ
յայտնի է յամենայն երկրի յամ գործս իւր, 'ի մարդիկ,

և յանասունս, 'ի տունկս, և 'ի հանքս ևս, մինչ և անուն նորա՝ որ յայտ առնէ զգերազանցութիւն այնպիսի տէրութեան և զօրութեան նորին, սքանչելի առ յամենայն երկրի. և յայս միտ դնի առս այս բան. ըստ որում և եբրայական բառդ ադիր՝ 'ի այն ակնարկէ 'ի ցուցանել զսքանչելի գոլն Այ 'ի զօրութեան.

Եւ թէպէտ ոչ ամենեքին որպէս արժան է՝ ճանաչեն զայն, նմին իրի և ոչ ամենեքին սքանչանան իրօք ընդ այն, այլ նոքա միայն, որք քննեն և հային 'ի զօրութիւն գործոց նորա. բայց այսու ամենայնիւ է և առ սքանչելի յամենայնի և 'ի վերայ ամենայն երկրի. զի ամենայն արարածք, ևս և որք անարգ երևին, յայտ առնեն զգերազանցութիւն իմաստութեան և զօրութեանն Այ. և այնու ցուցանեն՝ թէ սքանչելի է. որպէս ո՛ և իցէ կերտուած գեղեցիկ՝ յիւրմէ կողմանէ գովելի ցուցանէ զճարտարապետ իւր.

Այն այս առաջիկայ բնաբան՝ հայելով 'ի բնագիրս եբրայեցւոց՝ կարի իմն գեղեցիկ յարմարի Այ մարդացելոյ, Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, ըստ որում է Աստուած և մարդ. զի ըստ աստուածութեանն կոչի եհովահ տէր. և ըստ մարդկութեանն միաւորեցելոյ ընդ աստուածութեանն՝ ադոնայի տէր. կրկին ծննդեամբ կրկին անուն առեալ.

Իսկ ըստ լամբ″. կոչի տէր, զի էր տիրող յառաջ քան զյաւիտեանս ըստ աստուածութեանն. կոչի դարձեալ տէր, զի եղև տիրող 'ի ժամանակի ևս և ըստ մարդկութեանն. և կատարելով զխորհուրդ սքանչելի մարդեղութեանն՝ եղև սքանչելի յամենայն երկրի. * Բայց զինչ սքանչելիս խնդ-
„ րես (ասէ լամբ″), քան Այ մարմին զգենուլ, և
„ զիւր մարմնոյն արիւնն գինս տալ, և զամ ծ 'ի դա-
„ տապարտութենէ մեղացն ազատել, և երկնից ժա-
„ ռանգաւորս առնել» : Բայց առաւել ևս սքանչելի այն եղև՝ զի որ այնքան խոնարհութեամբ 'ի յերկրի երևեցաւ, և իբր հասարակ ոք ընդ որդիս մարդկան շրջեցաւ, և այնպիսի նախատական մահուամբ 'ի վերայ խաչին մեռաւ, սքանչելի փառօք փառաւորեցաւ 'ի վերայ ամենայն արարածոց յերկինս և յերկրի. և զայս յայտ առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն. և ասէ.

### Է. Համբարձաւ մեծվայելչութիւն քո 'ի վերոյ քան զերկինս ։

Մեծվայելչութիւն ա՟յ յինքեան մնացեալ՝ է նոյն ինքն ա՟ծութիւն ըստ ա՟մ կատարելութեանցն. իսկ վայելչութ առ այլս մնացեալ՝ է մեծարանք նորա փառաւորութիւն, կամ երեւելին նորա սքանչելի առ արտաքս, որ առ արարածս. զի որպէս մեծութիւն թ՟գի՝ փառաւորութիւն նորա համարի, յորժամ երեւի թ՟գաւորն հանդիսիւ 'ի մեծաշէն իւրում պալատան եւ 'ի շքեղ զարդս, եւ 'ի բազմութեան թիկնապահաց եւ պաշտօնէից իւրոց. սոյնպէս եւ մեծվայելչութիւն ա՟յ համարեալ լինի փառաւորութիւն նորա յերեւելին սքանչելի յերկինս եւ յերկրի առաջի հրեշտակաց եւ մարդկան ։

Եւ զի մարգարէն 'ի նախընթաց համարն զերկիրս միայն յիշելով ասաց, սքանչելի է անուն ա՟յ 'ի վերայ ա՟մ երկրի, աստ զերկինս եւս յիշելով 'ի նոյն բարձրացուցանէ զփառաւորութիւն ա՟յ. եւ պատճառն է, զի որովհետեւ մարդիկ քան զա՟մ գերագոյն ըմբռնեն զերկինս՝ վասն բարձրութեան եւ վ՟ն ընդարձակութեան ն՟ր, նմին իրի 'ի կամելն ցուցանել զգերազանցութիւն մեծվայելչութեան ա՟յ՝ 'ի նոյն բարձրացուցանէն զայն. ուստի եւ մարգարէն 'ի ցոյց այսր ոչ բաւականացեալ զերկիրս միայն յիշել՝ զերկինս եւս յիշատակէ. եւ զայս բազում տեղիս առնէ. որպ՟ 'ի սաղ. լե. 6. եւ ծզ. 2. եւ ճբ. 2. եւ ճէ. 5. եւ՟ն ։

Բայց զի մի կարծեսցի, թէ ինքն խօսի՝ տեղականապէս մնացելով, եւ կամ թէ փառքն ա՟յ գրաւեալ իցէ յերկինս, ոչ դնէ՝ համբարձաւ մեծվայելչութիւն քո յերկինս. այլ՝ 'ի վերոյ, յաւելն ։

Համբարձաւ մեծվայելչութիւն քո 'ի վերոյ քան զերկինս. ո՟ փառաւորութիւն քո, կամ հանդիսաւորութիւն փառաց քոց, կամ սքանչելի լինելն անուան քոյ՝ բարձրացաւ 'ի վերոյ քան զերկինս. որ է ասել. դու ինքն փառաւորեալ ցուցար, կամ փառաւորեալ ես յերկինս եւ յերկրի, եւս եւ 'ի վերոյ քան զերկինս եւ քան զա՟մ արարածս, կամ թէ փառք քոյ բարձր է եւ անհաս քան զա՟մ. զի եւ երկինք՝ որ բարձր է յոյժ, ոչ կարէ պարագրել զքեզ. եւ իբր ոչ ինչ է առաջի մեծվայելչութեան քո. զի 'ի վեր է քան զայն եւս ։ Կամ որ նոյն է, ոչինչ կայ՝ որ բաղդա-

տեսցի անսահման փառաց քոց՝ իբրեւ հաստատ, կամ իբրեւ երկրորդ. զի ո՞մ ինչ, եւ ե երկինք լրիւ ի-բոլոր գոլով ստեղծուածք քո՝ այնչափ են առաջի փառաց քոց, որչափ էին՝ յորժամ ոչ էին, եւ են որպէս թէ ծածկեալ եւ գաղեալ՝ի փառաց քոց. Յայս միտ բերէ եւ ամբակում զայս բան յաղօթս իւր յասելն. * Ծածկեցին զերկինս փառք նր. (կամ՝ ըստ լատ." վայելչութիւն փառաց նորա). եւ օրհնութիւնք նր լի եղեւ երկիր ||.

Ամբ. Գ. 3.

Այս բան այլազգ եւս կարէ մեկնիլ. իբր թէ մեծվայելչութիւն քո թէպէտեւ՝ի վեր է քան զերկինս, քո ծածկեալ՝ի մարդկանէ, եւ անհաս՝ի ստեղծական մտաց, բայց երեւի փառաւորեալ՝ի գործս իւր յերկինս եւ յերկրի՝ մանաւանդ յարքայութեան, որ է՝ի վերոյ քան զերկինս. եւ նոյն իսկ երկինք յայտ առնեն զայն. ըստ այնմ, * Երկինք պատմեն զփառս քո ||. սաղ. ժը. 1. Յայս միտ՝ի վերջ. Ճիւ. սաղմոսի այլով բառիւ զնի վերացուցեալ բանն ամբակումայ յասելն. * Յայտնեցեն երկինք զվայելչութիւն փառաց նորա ||.

Այլ արդ եթէ այսչափ բարձր է մեծվայելչութիւն փառացն քո. ասէ սուրբն Շնորհալին՝ի մեկն. ա̃. պետ. ա̃ 12. Ճառ. Ը. յորդ. ո՞չ ապաքէն արժան էր մարդկան յամ̃ սրտէ՝ի նոյն վերաթեւել. * Եթէ բնութիւնք բար-
,, ւոյն են ցանկացող մարդիկ, զինչ մեծագոյն բարի
,, քան զած̃, կամ որ գեղեցկութիւն առաւելեալ ք̃ զմեծ-
,, վայելչութիւնն քո, որ գեր՝ի վերոյ ամբարձաւ քան
,, զերկինս եւ քան զամ̃ արարածական բնութիւնս ||.

Նախեւ մեծվայելչութիւն՝ մարթ է իմանալ եւ զքո մեծագործութիւնն. որով նշանակի սքանչելի մեծութ̃ կամ զօրութիւն արարչագործութեան քո եւ պահպանութ̃ նորա. զի մեծագործութիւն է՝ որով որ մեծամեծս գործէ. իսկ արդ՝ զինչ քան զայս մեծ իցէ՝ միայն կամելով ստեղծանել յոչնչէ զերկինս եւ զերկիր եւ զամենայն զարդ նոցա, եւ զբազմութիւն այնչափ անհամար հրեշտակաց, եւ այլ եւս բազում իրաց. եւ զամ̃ պահել յիւրեանց

դասաւորութեան.

Այս մեծագործութիւն, եւ կամ այս մեծվայելչութիւն՝ զոր դնէ աստ մարգարէն, նշանակէ եւս եւ զփառաւորութիւն համբարձմանն քի̃. որով ել՝ի վերոյ քան

զերկինս . և նստեալ ընդ աջմէ Հօր՝ ծանուցանէ մեզ ազա-
րանց տէր փառաց , և Թ՞լ Թ՞լց՝ ըստ ճշմարիտ :
Սարգիս Շնորհալի 'ի մեկն . Բ . պետ . Ա . 16 . Ճառ . Բ .
զայս համբարձումն մեծվայելչութ̃ե այլով իմն տեսութ̃ե
վերածէ 'ի դէմս որդւոյ . զոր 'ի դէմս Հօր դնէ պետ-
րոս առաքեալ . Ասէ և գրէ այսպէս . * զոր մար-
,, գարէն՝ որդւոյ ասաց , զնոյն պետրոս Հօրն դաւա-
,, նի . զի մարգարէն 'ի հեռուստ տեսեալ հոգւոյն
,, յայտնութ̃ն զմարմնաւորն որդւոյ , և զհրաշափառ
,, այլակերպութ̃ին 'ի վ̃ր նորա 'ի լերինն , ասաց . համ
,, բարձաւ մեծվայելչութիւն քո 'ի վերոյ քան զերկինս .
,, և զայս զմարմնաւորութենէ նո̃ր ասէր . ( իսկ պետրոս
,, 'ի բարբառոյ հօրն լուաւ ) || : Ո՜ այսպիսի ամբար-
ձումն մեծվայելչութեանն ա̃յ 'ի փառս՝ օրհնէլին ասէ
հրեշտակք յերկինս , ընդ որս և որդիք մարդկան պար-
տաւորեն օրհնել . այլ 'ի պակասել նոցա՝ քարինք
տղայոց բերան 'ի նոյն . ամեն իրի յարէ զնի , և ասէ :

Գ . Յ Բերանոյ մանկանց տղայոց ստնդիեցաց հաստատեցեր օրհնութիւն :

Բառքդ մանուկ և տղայ և ստնդիաց՝ կրկնակի ա-
ռեալ լինին աստ . մի՝ ըստ յատուկ նշանակութ̃ե . և մի
ևս՝ ըստ փոխաբերութ̃ե . Ը̃ստ յատուկ նշանակութ̃ե առեալ՝
Մանկամբք իմացեալ լինին նոքա , որք դեռևս չեն հա-
սեալ յարբունս . Տղայիւք իմացեալ լինին այնք , որք
դեռևս չեն հասեալ 'ի բանաւորութիւն . Ստնդիեցիւք
իմացեալ լինին այնք՝ որք դեռևս չեն հասեալ 'ի ստե-
նէ մարց իւրեանց : Ըստ փոխաբերութ̃ե առեալ՝ ման-
կամբք նշանակին պարզամիտք . տղայիւք՝ խոնարհքն ,
և ստնդիեցօք՝ անմեղքն : Յայսպիսի նշանակութիւնս
հայելով ասէ :

Ի Բերանոյ մանկանց , տղայոց , ստնդիեցաց հաստատեցեր օրհ-
նութիւն . վասն Թշնամեաց քոց տ̃ր . զի եղծցէ Թշնամին և
հակառակորդն : Այս բան երրակի յարի 'ի նախըն-
Թացն . Նախ իբրև հետևողութ̃ի . որպէս Թէ ասէր ,
այնչափ մեծ և զարմանալի է յանձն փառքն ա̃յ , մինչև
տղայոց իսկ՝ և պարզամտաց յայտնի ցուցանել զայն և
օրհնել՝ յամօթ և յեղծումն Թշնամեացն ա̃յ :
Երկրորդ յարի իբր պատասխանի այնմ , զոր հնար էր

տարփել. իբր զի՛ եթէ պանծելի երեւի տէրութիւն այ ՚ի վր ամ երկրի, եւ փառաւորեալ տեսանի մեծվայելչութիւն նր ՚ի վերոյ քն զերկինս, զիարդ ապա ոչ միայն ճանաչեն զնա, եւ ոչ միայն գովեն զզօրութիւն նր. Եւ յայտնի տայ, թէ ած ոչ հաճի եւ ոչ կամի ճանաչիլ եւ գովիլ ՚ի հպարտաց, եւ յորոց պարծին ՚ի զօրութիւնս իւրեանց, այլ՝ ՚ի խոնարհաց, ՚ի մանկանց եւ ՚ի տղայոց. Ըստ այնմ, * Գոհանամ զքէն հայր տէր երկնի եւ երկ„րի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց, „ եւ յայտնեցեր տղայոց ||. մատ. ժա. 25. Եւ սովին իսկ մեծապէս փառաւորի ած. զի տղայոց եւ մանկանց անմեղունակ եղելոց իմաստութե՝ հաղորդի իմաստութիւն նորա յօրհնիլ ՚ի նոցանէ. իսկ իմաստութիւն իմաստնոց աշխս եղծանի առաջի նորին, եւ իբր խաւար մերժի. Եւ զարմեալ՝ այսու եւս մեծ երեւի զօրութիւնն այ, զի յորոց կամի՝ ճանաչի եւ պաշտի, եւ յորոց ոչ կամի՝ ոչ ճանաչի վասն անարժանութե նոցա.

Երրորդ յարի իբր յանդիմանութե թշնամեացն այ՝ քն ամպարշտաց եւ անածից. իբր զի եթէ անածք ոչ կամիցին ճանաչել զնախախնամութիւնն այ, եւ խոստովանիլ զնոյն յայնչափ գործոց նորա, յորս պանծելի երեւի զօրութիւն նորին, տղայք անմեղիկք՝ եւ այր տգէտք եւ պարզամիտք ՚ի ճանաչելն եւ յօրհնելն զած՝ յայտնի ցուցանեն նոցա, թէ պարտ է ամենայն խոստովանիլ զիշխանն այ ՚ի վր աշխի եւ ՚ի վր ամ մարդոյ. եւ այսու խոստովանութեամբ օրհնել զաստուած.

Յաւելն աստանօր վասն թշնամեաց քոց. բառդ վասն՝ ՚ի մէջ բերէ զընկճումն թշնամեացն. ոչ թէ եղեալ էր. տեսեալ թշնամեաց քոց՝ թէ տղայք իսկ օրհնեն զքեզ՝ յամօթ լինիցին եւ ընկճեսցին, հեղձցին եւ եղծցին. եւ առ ՚ի բացատրել զայս՝ կրկնէ եւ ասէ. զի եղծցի թշնամին եւ հակառակորդն. քն ՚ի հաստատել քո զօրհնութիւն ՚ի բերանոյ տղայոց՝ ամաչեսցէ թշնամին քո հակառակօղն զօրութե եւ իշխանութե քում.

Ոչ ասէ մարգարէն, արարեր՝ զի տղայք օրհնեսցեն, կամ թէ ետուր նոցա օրհնել. այլ թէ հաստատեցեր զօրհնութի, կամ ոչ յայլ տաղմոս զնի, հաստատեցի կամ կատարեցի օրհնութիւն. առ ՚ի յայտ առնել նախ՝ թէ այս յաջողի ՚ի զօրութենէն այ. քն որոց ասի * յար-

մարիչ բանից ‖ . Նարեկ . Ղ . երգ՝ թէ յօրհնելն անդ տղայոց զա՟ծ՝ հաստատի և ցուցանի՝ թէ պարտ է ճանաչել զա՟ծ և օրհնել զնա վասն մեծվայելչութեան փառաց նորա , և վասն բարերարութե՟ցն ։

Դարձեալ, ոչ ասէ մարգարէն , 'ի սրտից տղայոց հաստատեցեր զօրհնութիւն , այլ՝ 'ի բերանոյ . զի որովհետև սանդխայք չեն ընդունակ սրտիւ օրհնելոյ՝ հոգւոյն սուրբ շարժէր զլեզուս նոցա յօրհնութիւնս ։

Արթ է աստ տղայիւք իմանալ առ հասարակ զա՟մ մարդիկ , որք համեմատութեամբ հրեշտակաց են իբրև տղայք ։ Այլք իմանան զմարգարէս , և առաւել ևս զառաքեալս որք էին իբրև տղայք պարզամիտք . և ա՟ծ ետ նոցա զայնպիսի խօսիլ և գործել, որովք թէպէտև յիմար համարեցան , բայց նովին իսկ թշնամիք նոցա յամօթ եղեն . որք էին իմաստունք ա՟խ . ըստ որում գրէ առաքեալն . * Կորուսից զիմաստութիւն իմաստ
,, նոց . . . ոչ ապաքէն յիմարեցոյց ա՟ծ զիմաստութիւն
,, ա՟խ այսորիկ . . . . այլ զյիմարս ա՟խ ընտրեաց ա՟ծ ,
,, զի յամօթ արասցէ զիմաստունս , ևն ‖ Ա՟ . կոր . Ա՟ .

19 = 27 ։

Լամբրոնացին տղայիւք և մանկամբք իմանայ զհաւատացեալս 'ի Ք՟ս . յետ մարմնանալոյ որդւոյն Ա՟յ ասէ ա՟մքին որք հաւատացին 'ի նա , եղեն օրհնիչք նորա . զի յառաջին ( ասէ ) * ոչ եթէ տղայք՝ անիմաստք , կամ
,, մանկունք՝ անկատարք , համարձակէին զա՟ծ փա
,, ռաբանել . այլ միայն կատարեալքն յամենայն հասակս
,, բարեգործութեան . ո՟պ մովսէսն էր և եղիա , ևն . . .
,, իսկ ապա յորժամ ա՟ծ մարդացաւ , և վեհագոյն ա՟մ
,, երկրի բարձրացաւ , և մարմնով ընդ աջմէ հօր ելեալ
,, նստաւ , յայնժամ առեալ զհամանգոյակից հոգին՝
,, սփռեաց 'ի յա՟ . և լցեալ նովաւ զմարդիկ զտղայս և
,, զմանկունս՝ արար իւր երգեցօղս . . . . և յորժամ
,, մարդիկ երգեցօղք եղեն , հակառակորդն իւրեանց
,, յամօթ եղեալ կորացաւ ‖ ։ Յայս միտ և Ծործորեցին գրէ զայսպիսի ինչ 'ի մեկն . մատ . ԺԸ . 2 . * ա՟մքն ասէ ,
,, որք միտս տանին կատարեալս , և առ չարութի՟ տղայք
,, են , ( նք ) մանկունք են , և արքայութե՟ ժառանգք ‖ ։

Այս բան ըստ յատուկ նշանակութե՟ բառիցն առեալ՝ բազում օրինակաւ կարէ առաջի դնիլ . զի նախ առա

ջին՝ այս եղանակ խօսից ըստ ասելոյ ոմանց ոչ ցուցանէ, թէ տղայք և ստնդիայք տիրապէս իւրեանց յատուկ բերանով օրհնեն զա̅ծ. այլ թէ ա̅ծ յանմեղութի նոցա հայեցեալ՝ ՚ի նոսին հաճի և փառաւորի. ո̅պ թէ նոքա բերանովք իւրեանց օրհնէին զնա. և նոքիմբք հաճի նաև յօրհնութիւնս և ՚ի պաղատանս ժողովըրդեան: Յայս իսկ տեսանեմք ՚ի ս̅բ գիրս, զի յորժամ ժողովուրդքն ՚ի պաղատանս լինէին առ ա̅ծ, բազում անգամ զտղայս և զստնդիայս ՚ի միասին ածունին. առ որ և յովէլ յորդորէր. * ժողովեցէք ասէ զժողովուրդդ. սրբեցէք զեկեղեցի. ընտրեցէք զծերս. ժողովեցէք "զտղայս ստնդիացս"... և ասացէք, խնայեա տէր ՚ի ժողովուրդս քոյ ‖. յովէլ. բ. 16. որով կամի ցուցանել՝ թէ ա̅ծ յանմեղութէ մանկանց օրհնի, փառաւորի, և ՚ի գութ շարժի. և այնու ազդ առնէ թշնամեաց իւրոց՝ ա̅յ ամպարշտաց՝ զգաստանալ, և զանմեղութիւն ստանալ. և առ այս թերևս յարէ զինի մարգարէն. * վ̅ս թշնամեաց քոց տէր ‖. ա̅յ վ̅ս զգաստանալոյ թշնամեաց քոց. իսկ եթէ ոք ոչ զգաստասցի, այլ մնասցէ թշնամի և հակառակորդ, այնպիսին ասէ * եղծցի ‖. ա̅յ մերժեսցի և կամ ունայնասցի ՚ի ձայնաչելոյ զա̅ծ և յօրհնելոյ զնա:

Երկրորդ՝ ը̅ ասելոյ այլոց՝ այս բան առաջի դնի հայելով ՚ի գործս և յարարս տղայոց. իբր զի գործք և շարժութիւնք նոցին, ևս և յօրինուածք մարմնոց ն̅ց իբր բերանք նոցին աղաղակեն և օրհնեն զա̅ծ. ա̅յ հաստատեն և ցուցանեն ընդդէմ անա̅ծից և ամպարշտաց՝ որք են թշնամիք ա̅յ, թէ գոյ նախախնամութիւն ա̅յ ՚ի վ̅ր ամի, և թէ վ̅ոյ պարտ է օրհնել զնա: Իսկ եթէ ոք հակառակեսցի, եղծցի, ա̅յ դադարեսցի յիմատութենէ, և յիմարեսցի:

Երրորդ՝ ը̅ կարծելոյ ոմանց՝ այս գուցէ հայի յայնպիսի դիպուած, որ իցէ պատահեալ ՚ի ժամս դաւթի՝ օրհնել տղայոց զա̅ծ բերանովք իւրեանց. և կամ գուցէ հայի ՚ի ժամն յայն, յորժամ անցին որդիքն իսրայելի ը̅ ծովն կարմիր. և տեսեալ զեգիպտացիսն ընկղմեալ՝ սկսան օրհնել զա̅ծ առ հ̅րկ մանկամբք և կանամբք, ընդ որս էին և խուլք և համերք. յոր միտ կարէ խմացեալ լինել այն բան՝ որ ասի ՚ի գիրս իմաստութե̅. * իմաստու-

թիւն եբաց զբերանս համրոց ։ և զլեզուս տղայոց եդ պարզախօսս ‖ . Իմաստ. Ժ. 21 ։ Իւր այսմ՝ հետևեալ բանն այն՝ վս թշնամեաց քոց ևն, իմացեալ լինի այսպէս. ետուր տղայոց օրհնել զքեզ վասն կորստեան թշնամեաց քոց, որ եգիպտացւոց. և արարեր՝ զի եղծցի թշնամին և հակառակորդն, որ է՝ փարաւոն ։

Զորդ՝ ըստ հաստատելոյ այլոց՝ այս ասի վասն այնոցիկ տղայոց, որք նորոգ սկսեալ ՚ի խօսիլ՝ ուսանէին ՚ի բերան զբանս այ և զօրհնութիւնս նր ՚ի ծնողաց կմ յուսուցչաց իւրեանց. և ասելով զայնս՝ օրհնէին զած. որպէս է տեսանել և այժմիկ յեկեղեցիս քրիստոնէից ։ Որով բարոյապէս յորդորիմք և մեք ուսանել ՚ի քսէ, և գործովք մերովք օրհնել զնա. ուստի ասէ մեկնիչն. * սանդխաց մանուկ ՚ի գիրկս մօր լսելով զխօսս
„ մօրն՝ սկիզբն առնէ խօսելոյ. ըստ սմին և մեք լսելով
„ զբանս քի, և խոկալով զկեանս նորա՝ ուղղիմք ՚ի
„ խօսս, և բարեկարգիմք ՚ի վարս. որով և կատա-
„ րեմք զօրհնութիւս այ յեղծումն և յապականութիւն
„ հնարիցն դիւաց ‖ ։

Չորրորդ՝ ըստ ճշմարտութե իւրն, այս բան է յայտնի գուշակութի այնր՝ որ կատարեցաւ յաւուր գալստեանն քի ՚ի տաճարն. ուր տղայք օրհնէին զնա աղաղակելով, * ովսաննայ՝ օրհնութիւն որդւոյ դաւթի ‖ . մատ. իա. 15 ։ ընդ որ զայրացան թշնամիք, որ քհնյապետքն և դպիրք, և ասացին ցքս, լսես զինչ ասեն դոքա ։ Եւ որս պատասխանի ետ քս, և ասէ. * այո. չիցէ
„ ընթերցեալ ձեր՝ թէ ՚ի բերանոյ տղայոց և ստըն-
„ դիեցաց կատարեցեր զօրհնութի ‖ . մատ. իա. 16 ։

Բայց զայս ասելով ոչ կամէր ցուցանել տէրն մեր, թէ այս բան սոսկ վս իւր իցէ ասացեալ. այլ իբրև ՚ի հասարակի խօսեցեալ, և ՚ի մասնաւորի վս իւր ։ Ուստի և զայս առաջի դնելով նց՝ կամէր ասել ցնս, չէ պարտ ձեզ զարմանալ ընդ այս. այլ մանաւանդ սովին իսկ հաւատալ՝ թէ ես եմ մեսիայն, և ած ձեր. ես եմ որ տղայացայ վասն ձեր. զոր և ահա տղայք ճանաչեն և օրհնեն. որով և կատարի առ իս այն բան՝ զոր ասաց մարգարէն՝ թէ ՚ի բերանոյ տղայոց կատարեցեր զօրհնութիւն. որպէս և տեսանէք իսկ և լսէք. ապա զի ևս զարմանայք ընդ այս, և զայրանայք ՚ի վերայ իմ ։

Օսոյն զայս յառաջ բերեալ Իգնատիոս վ՟դպ 'ի մեկն․
ղուկ․ ժԹ․ 46․ գլխ․ տեսանես ասէ, զի * 'ի լռել
„ աշակերտացն՝ բացան անխօս բերանք մանկանց նոցա
„ (ժ՟բ երբայեցւոց)․ և որ ոչ ունէին բան, ընդ հրեղէն
„ լեզուացն երգէին օրհնութիւս․․․ իսկ ('ի հակառա-
„ կիլ թշնամեացն, և յասել լռես,) յ՟ն ասէ․ այս․ և
„ զիարդ ոչ իմանայք եթէ կատարին մարգարէիցն
„ յառաջատեսութիւք․․․ նոյնպէս և գաւթայն աղաղա-
„ կելն մանկանց․ չիցէ ասէ ընթերցեալ ձեր թէ 'ի
„ բերանոյ մանկանց ստնդիաց կատարեսցի օրհնութի
„ քո․ ահաւասիկ և մարգարէին բանք յայտնեն թէ
„ տղայք ստնդիայք հաստատեն զօրհնութիւնս ն՟ր ‖ ։
Իսկ զոր յաւելու ասել մարգարէն՝ թէ եղծցի թըշ-
նամին՝ տէրն մեր ոչ եբեր 'ի մէջ․ զի մի կատաղես-
ցին ։ Ուստի ասէ անդ նոյն Իգնատիոս վարդապետ․
թէ * զայս ասացեալ՝ զյաջորդն՝ նոցուն թողու քըն-
„ նել և 'ի միտ առնուլ, այն զի ասէ՝ վասն թշնամեաց
„ քոց տէր․ զի հեղձեալ եղծցի թշնամին և հակառա-
„ կորդն ‖ ։ Եւ ապա յարէ զկնի ասելով․ * այսպէս բա-
„ նայ նոցա զբանս մարգարէիցն․ զի կի՟ գրգռեսցին, կի՟
„ զարհուրեսցին ‖ ։ Եւ ՟քզի նոքա այսու ոչինչ օգտե-
ցան՝ առաւել ևս 'ի թշնամութի դարձան նմա, և հա-
կառակ կացին․ վ՟ճկ և եղծան եթէ՛ ինքեանք և ե-
թէ կարգք իւրեանց ։
Ի վերայ այսոցիկ մանկանց գրէ ծործորեցին 'ի մեկն․
մատ․ գլ․ ի՟ա․ այսպէս․ * բայց ասէ մանկտին՝ որ
„ աղաղակէին 'ի տաճարի, թուի քառամսօրեայ անդ-
„ րանիկքն գոլ, որ ըստ օրինացն եկեալ էին 'ի տա-
„ ճարն յանդիման լինել տ՟ն․ ուր յորժամ տեսին զնա
„ մտեալ 'ի տաճարն՝ ծանեան զնա տէր տաճարին․ և
„ սկսան աղաղակել, թէ օրհնութի որդւոյ դաւթի ‖ ։
Եւ յաւելու գրել թէ * բարւոք ասաց 'ի բերանոյ․
„ ՟քզի ոչ թէ 'ի մտաց նոցա ինչ էին բանքն, այլ ն՟ր զօ-
„ րութեն պարգև, որ պարզէր զտհաս և զխակ լեզուս
„ նոցին յօրհնաբանութի․․․ նշանակ առնելով հեթա-
„ նոսաց՝ ուք երբեմն տկարք էին և տխմարք, և յան-
„ կարծակի հնչեցին զմեծամեծսն կատարեալ մտօք ։
„ Նաև առաքելոցն 'ի մխիթարութիւն տուաւ այս․
„ քանզի կարծէին՝ թէ զիարդ մեք տգէտքս կարի-

,, ցեմք պատմել զքաղցրութիւնն . կանխէին մանկտին ,
,, հանէին զնմ կասկածանս 'ի մտաց , թէ տաղոց է և
,, նց բան 'ի բերան ‖ ։ Իսկ տէրն մեր կամելով առաւել վստահացուցանել զնոսա , և ցուցանել նոցա զամենակարողութի̃ իւր , ասաց ցքահանայապետսն , * եթէ դք
,, լռեսցեն՝ քարինքդ աղաղակեսցեն ‖ ։ Իսկ խորհրդաբար ցուցանէր ըստ ծործորեցւոյն , թէ * 'ի լռել ա-
,, շակերտացն , մանկունքն՝ որ անբան էին իբր զքար՝
,, սկսան երգել ը̃ հրեղէն զօրաց օրհնութի̃ ‖ ։ Յուսկ յետոյ ծանիր , զի ըստ գրելոյ նր̃ , ո̃պ 'ի ծննդեան տ̃ն մանկունք կատարեցան աղաղակաւ , սոյնպէս մօտ 'ի մահ նորա մանկունք աղաղակէին՝ թէ ա̃ծ է նա ։ Ո այսոսիկ ասացեալ մարգարէին՝ առաջի դնէ այժմ և զփափաք իւր զքննութե̃ խնամոցն ա̃յ և գործոց նորա , և ասէ ։

Դ . Տեսից զերկինս զգործս մատանց քոց , զլուսին և զաս-
տեղս . զոր դու հաստատեցեր ։

Երկինք ասելով իմանայ զբովանդակութիւն երկնից ը̃ անկանելոյ ը̃ տեսութե̃ . ը̃ որոյ ասէ տեսից . և փափաքելով օրհնել զարարիչ նոցա և գոհանալ զնմանէ , նիւթ առնու զնոսին՝ օրհնութե̃ և գոհութե̃ . և որպէս տղայք ստնդեայք ըստ ասելոյ 'ի վերոյ՝ հաստատէին և զօրանային յա̃յ կատարել զօրհնութի̃ նր̃ , սոյնպէս և ինքն իբր յա̃յ հաստատեալ և զօրացեալ ցանկայ զնոյն կատարել տեսութե̃ երկնից և զարդուց նոցա . վասն որոյ ասէ ։

Տեսից զերկինս՝ զգործս մատանց քոց , զլուսին և զաստեղս .
զոր դու հաստատեցեր ։ Մ̃ի ուշ եդեալ նկատեցից զերկինս , որք են գործք մատանց քոց . տեսից 'ի նմին զլուսինն գեղեցիկ , և զայնչափ աստեղս , զորս դու ստեղծեր , և յընդարձակութեան երկնից հաստատեցեր , և յիւրաքանչիւրսն կարգ եդեր . և զայսոսիկ տեսանելով ծանեայց զարարողդ այսր ամենայնի . և
օրհնեցից զքեզ ։

Ոչ ասէ մարգարէն՝ զգործս ձեռաց քոց կամ բազկաց քոց , այլ՝ մատանց քոց ։ Նախ՝ զի ցուցցէ , թէ դիւրին իմն եղև ա̃յ ստեղծել զերկինս յոչնչէ . քանզի մատունք 'ի դիւրին գործս վարին ։ Երկրորդ՝ զի ցուցցէ զազնուութիւն և զնրբութի̃ յօրինուածոյ երկնից . վ̃ն

զի ազնիւ և նուրբ յօրինուածք յաւէտ մատամբք ա-
ւսին գործիլ՝ քան ձեռօք ։ Երրորդ՝ զի ցուցցէ զորոշումն
ստեղծագործութեան երկնից և մարդոյ . ըստ որում
ձեռօք գործելն ա՟յ՝ 'ի սուրբ գիրս հասարակօրէն մար-
դոյ ընծայի . որպէս այն՝ զոր այլուր ասէ մարգարէն .
* ձեռք քո արարին և ստեղծին զիս ‖ . սաղ . ճժը .
73 . զի որովհետև ստեղծագործութիւն մարդոյ մեծ է
քան զերկնից , այնմ ընծայի գործելն ձեռօք , և
երկնից՝ գործելն մատամբ . զի մեծ գործք ձեռամբք
գործին , և մանունք՝ մատամբք ։ Ըստ որում և չնոր-
հալին գրէ 'ի թուղթն առ միջագետս . * ասէն ( ասէ )
„ և ձեռք ա՟յ . . . յաղագս արարչագործութե՟ն ըստ ասե-
„ լոյն , ո՛չ ձեռք իմ արար զայս ա՟մ . և թէ ձեռք քո
„ արարին և ստեղծին զիս . և թէ տեսից զերկինս
„ զգործս մատանց քոց , զլուսին և զաստեղս . որպէս և
„ մեք սովոր եմք զմեծագոյնս 'ի գործոց ձեռօք յօրի-
„ նել և զմանունսն մատամբք ‖ ։ տե՛ս և 'ի ստորև .
համար . 5 ։ Եւ թէպէտ այլուր զերկինս ես՝ և զա՟մ
արարածս կոչէ զիրն ձեռակերտս ա՟յ , կամ գործ ձե-
ռին ա՟յ՝ որպէս տեսանի և 'ի գրեալդ , բայց այն ոչ
ներհակի այսմ , զի նոյն ամենակարողութիւն ա՟յ է՝ որ
գործէ զայս ա՟մ եթէ իբրև ձեռք ա՟յ , և եթէ իբրև
մատն ։ Այլ ասա առ յատուկ որոշումն կարգեալ մար-
գարէին՝ զերկինսն կոչէ գործք մատանցն ա՟յ ։ Իսկ
ռաբբի ոմն հրէից գրէ , թէ վ՟նկ զերկինս կոչէ գործ
մատանցն ա՟յ , զի են ասէ յերկինս տասն պարունակք՝
որք նմանութ՟բ իմն կարեն ասիլ գործք տասն մատանց ։
Ասացի ես՝ ոչ ասէ գործք բազկաց քոց . զի բազկաւ
գործելն ա՟յ հասարակօրէն հայի առ ամենամեծ գործ .
որպիսի եղև փրկութիւն մարդկան 'ի ձեռն մարդե-
ղութե՟ . ո՟ր և ինքն ա՟ծ վկայէ . * փրկեաց զն՟ա բազուկ
„ իւր ‖ . ես . կզ . 5 . յոր միտ և սուրբ կոյսն ասաց . * ա-
„ րար զօրութիւն բազկաւ իւրով ‖ . ղուկ . ա՟ . 51 ։
Նկատելի է դարձեալ և այն , զի ոչ յիշէ մարգարէն զա-
րեգակն . վասն զի յիշելով զաստեղս և զլուսին՝ ոչ էր
մարթ յիշել և զարեգակն . զի յորժամ աստեղք և
լուսին տեսանին , ոչ տեսանի արև ։ Եւ յայսմանէ
երևի , թէ մարգարէն զայս ասէ ըստ գիշերային տե-
սութե՟ . և կամ զի յարուցեալ 'ի մէջ գիշերի՝ տքնէր . և

հայեցեալ յերկինս՝ նկատէր զաստեղս և զլուսին . և
օրհնէր զարարիչ նոցին՝ զարմանալով ընդ ամենազօր
կարողութիւն նորա . որ միայն բանիւ գոյացոյց զա՛մ :
Ի նոյն յորդոր լեալ Գրիգ . Նար . կէ՛ սկեռ , գրէ 'ի հրա-
հանգման . յերես 497 . * պարտ է ասէ բանալ զակն
,, 'ի տեսութիւն արարածոցս , և տեսանել զսքանչելի
,, գործսն ա՛յ . և 'ի տեսանելն մարմնոյ աչօք՝ ընդ նմին
,, բանալ և զմտացն աչս , և իմաստութեամբ տեսանել
,, զզարմանագործութի արարածոցս . ըստ որում և դա-
,, ւիթ տեսեալ ասէր . տեսից զերկինս զգործս մա-
,, տանց քոց , զլուսին և զաստեղս , զորս դու հաս-
,, տատեցեր . քո հայիլ յերկնի բարձրութի և յընդար-
,, ձակութի , 'ի լուսաւորացդ պայծառութի և 'ի գե-
,, ղեցիկ կարգաւորութի . . . . և յայսմանէ ճանաչել
,, զմեծութի և զիմաստութի և զանչափ զօրութին ա՛յ
,, և զբարերարութի . ( և գոհանալ զնմանէ և ասել )
,, թէ զայս ա՛մ վասն մեր է արարեալ || :

Այլաբանօրէն , երկինք է նոր եկեղեցի . յորում ա-
ւետարանն սուրբ յայտնի ճառագայթէ իբրև զարե-
գակն . հին օրէնքն իբրև լուսին . մարգարէութիւնն իբրև
աստեղք , զորս իբր մատամբ գրեաց ա՛ծ , և ինքնին
եկեալ լրացոյց , և հաստատեաց :

Վերածաբար , ըստ լամբ'' , 'ի ձեռն երկնից իմացեալ
լինի արքայութիւնն ա՛յ . ուր լուսին է եկեղեցին յաղ-
թանակօղ՝ 'ի քսէ լուսաւորեալ երկնային փառօք . իսկ
աստեղք են հրեշտակք : Զայսոսիկ փափաքելով
մարգարէին տեսանել՝ կարօտիւ սոցին մաշէր . այլ
հայեցեալ եւս 'ի նուաստութիւն իւր , և 'ի նուաստութի
ամենայն մարդոյ , զարմանայր՝ թէ զիարդ ա՛ծ այսպիսի
անարգ էի զայսչափ խնամս ցուցեալ է , և զայնչափ
փառս պատրաստեալ . նմին իրի ասէ :

Ե . Ո՞վ է մարդ՝ զի յիշես զնա . կամ որդի մարդոյ՝ թէ
այց ինչ արասցես զնա :

Եթէ արդարև մեծ է անարգ մարդոյ 'ի համարի լի-
նել առաջի թագաւորի և փայփայիլ 'ի նմանէ , ապա
քանի եւս մեծ իցէ եթէ 'ի յարգի իցէ առաջի երկ-
նաւոր թ՛գի , և բազում գթով խնամարկեալ լինիցի 'ի
նմանէ . զի ո՛վ է մարդ , և ո՛վ է ա՛ծ : Այս հայեցեալ

մարգարէին՝ հիմնալով իւր խօսի. և նախ զբան յար-
գի ըննելոյն առաջի դնէ և ասէ։

Զի՞ է մարդ՝ զի յիշես զնա։ Յիշելն յատկապէս ա-
ռեալ ենթադրէ 'ի յիշօղն զմոռացութի՛ւն, և նշանակէ՝
'ի միտս բերել զայն ինչ՝ որ եղեալ է և անկեալ ընդ
մոռացութե՛բ. Իսկ անյատկապէս առեալ՝ 'ի մէջ բերէ
զանմոռացութիւն. և նշանակէ 'ի միտս ունիլ զայն ինչ՝
որ է, և չէ ընդ մոռացութե՛բ. Ըստ առաջնոյն՝ յայնժամ
ասի զա՛յ յիշել՝ յորժամ ցուցանէ մեզ զգործ յատկապէս
յիշողի. որպ այն զոր ասէ գիրն. * և յիշեաց ա՛ծ զնոյ
„ նոյ ‖. Ծնն. Ը. 1. իբր թէ մոռացեալ էր զնա զամիսս
տասն. Ըստ երկրորդին ասի յիշել՝ յորժամ ցուցանէ
մեզ զգործ՝ անյատկապէս յիշողի. որով նշանակի նախ
ոչ մոռանալ նր զմեզ. երկրորդ՝ իբրև զպատուական ինչ՝
'ի համարի ունել. Եւ թէպէտ ըստ այսմ յետին նշա-
նակութեան ոչ ուրեք տեսանեմք 'ի սբ գիրս 'ի գործ
ածեալ զայս բառ, բայց սակայն աստ ըստ այսմ նշա-
նակութեան երևի եղեալ. որպ և յայտնի տեսանի 'ի
զօրութենէ բանին՝ յասելն. * Զի՞ է մարդ զի յիշես
„ դու զնա ‖.

Զի՞ է ասելով զանարգութիւն մարդոյ 'ի մէջ բերէ. և
համեմատելով զնա ընդ մեծութեան այ՝ յանչափս նուաստ
ցուցանէ. որպէս թէ ասէր. Ո՜ ինչ է մարդ՝ եթէ ոչ
հող և մոխիր՝ էակ յոչնչէ. իսկ դու արարիչ երկնի և
երկրի, էակ անսպառագիր, էութիւն անսահմանելի,
թգ՛րութի՛ւն ինքնազօր և մեծութիւն անմատչելի. ապա
զի՞մարդ է՝ զի յիշես դու զնա, և իբր մեծ ինչ 'ի յարգի
ունիս զնա. որով և յօժարիս ցուցանել նմա զխնամա-
տարութիւն քո. և զայս կամելով յայտ առնել մարգա-
րէին՝ յարէ զկնի և ասէ։

Կամ որդի մարդոյ՝ զի այց ինչ առնես դու նմա։ Որդի
մարդոյ ասելով՝ իմանայ զնոյն, զոր եդ 'ի վերոյ ա-
նուամբս մարդ. և սակայն առ յարմարութե՛ ոտից բա-
նին դնէ աստ որդի մարդոյ. Այլ հայելով 'ի յաջորդ
համարն հնար է ևս ասել՝ թէ մարդ ասելով իմանայ
աստ զադամ. զոր յետ մեղանչելոյն ոչ անտես արար
ա՛ծ, այլ յիշեաց զնա, և ձայնեաց առ նա. * ադամ
„ ո՞ւր ես ‖. Ծնն. Գ. 9. Իսկ որդի մարդոյ ասելով
իմանայ զորդիս ադամայ. զորս թէպէտև մերժեալ էր

ա՟ծ վասն մեղացն ադամայ , բայց 'ի գթու՟է իւրմէ հաճեցաւ այց ելանել նոցա ։

Դ՟րձ՝ ըստ գրելոյ ոմանց 'ի բարունեացն հրէից հայելով յոճ եբրայական , որդի մարդոյ ասելն 'ի մէջ բերէ զնուաստութիւն մարդոյ՝ քան ասել սոսկ մարդ , կամ որդի ադն ։ Այլ քանզի միջրէն զնուաստու՟ի մարդոյն նկատելով խօսէր առ ա՟ծ , ոչ բաւականացեալ դնել սոսկ մարդ , յաւելու ևս ասել՝ որդի մարդոյ . զինչ է ասէ որդի մարդոյ , զի դու՝ որ անկարօտդ ես ա՟մի՝ խոնարհեցիս այց առնել նմա ։

Այց առնելն ա՟յ նշանակէ խնամել նորա զմարդիկ այնպիսի գթով , զորով զանց էր արարեալ , կամ ցուցանել զբարերարութիւնս և զխնամս և զգութ իւր առ նոսա . որպէս որ այց առնիցէ իւրում սիրելւոյ . և զայս՝ ա՟մցն հաճի ցուցանել ա՟ծ . զոր առաւելապէս ևս եցոյց , յորժամ եկն յա՟ , և էառ զմարդկային բնութիւն , և երևեցաւ մարդ յերկրի և որդի մարդոյ, և շրջեցաւ ընդ մարդկան՝ բարի առնել ամենեցուն և փրկել զա՟մենն ։ Զինչ տեսեր տէր 'ի մարդն , * զի այդչափ սիրեցեր
,, զնա ( ասէ լամբ՟ ) , այդչափ աշխատեցար 'ի վ՟ն ն՟ր .
,, զհրեշտակս 'ի ներքոյ պատուոյ թողեր , և զմանէ
,, բուռն հարեալ կանգնեցեր . երկնից և երկրի սի-
,, րով զքեզ չասացեր , և մարդասէր անուամբ պար-
,, ծեիր ‖ ։ Զարմանք է ասէ Նարեկացին 'ի բանն . ըէ .
զի * զերկնիս ղամպարօք նոցին զմատանց քոց գործ
,, ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա . այլ առեր 'ի պատու
,, մեծաց զոլեստից՝ առաջին , դասեալ զմարդասի-
,, րութիւնն ‖ ։

Այս եղև յիրաւի բարի այցելութիւնն ա՟յ 'ի վ՟ր մարդոյ . ընդ որ հայեցեալ զաքարիայ՝ ցնծացաւ 'ի հոգի իւր . և երգեաց ասելով . * Օրհնեալ տէր ա՟ծ ի՟լի , զի յայց
,, ել մեզ , և արար փրկութիւն ժողովրդեան իւրոյ ‖ .
ղուկ . ա՟ . 68 . և լուսաւորեաց զխաւարեալքս մեղօք . ըստ որում յաւելու ասել 'ի համարն . 78 . * այց արար
,, մեզ արեգակն 'ի բարձանց , երևիլ որոց 'ի խաւարի
,, և 'ի ստուերս մահու նստէին ‖ ։ Զայսոսիկ այցելութիս և զբարերարութիս ա՟յ իբր 'ի հասարակի առաջի եղեալ մարգարէին՝ սկսանի 'ի մասնաւորի ևս խօսել զբարերարելոյ նորա և զխնամելոյ զմարդն՝ ըստ արարչա-

գործելոյն և ըստ մեծացուցանելոյն , ասելով ·

Զ · Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո , փառօք և պատուով պսակեցեր զնա · և կացուցեր զնա 'ի վերայ ամենայն ստեղծուածոց քոց :

Արարչագործութիւն մարդոյ սքանչելի իմն տեսանի ՚ի երից · մի՝ զի ա̄ծ իբրև թէ 'ի խորհուրդ մտանելով արար զնա · ըստ որում յայտնի տեսանի յայն բան՝ զոր ասէ · * արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ „ նմանութե̄ ‖ · Ծնն · ա̄ · 26 · ոչ̄ թէ ասացեալ էր · խորհուրդ արասցուք 'ի վ̄ր ստեղծագործութե̄ մարդոյ , որպիսի ինչ արժան իցէ առնել · եթէ արասցուք զնա պարզ իմացական՝ լինի հանգոյն հրեշտակի , և ոչ նոր տեսակ ինչ · իսկ եթէ արասցուք սոսկ մարմնաւոր և զգայական , լինի հանգոյն այլոց՝ զորս արարաք · ուրեմն այնպիսի պարտ է առնել , զի իցէ ընդ մէջ , ցր̄ ստորին քան զհրեշտակս , և վերին քան ըզ-մարմնաւոր արարածս , հաղորդս արարեալ զնա բնութե̄ երկաքանչիւր սեռիցն :

Այսպիսի իմն խորհրդով արարեալ տեսանի մարդս : Ուստի ասի 'ի շարականի · * որ զկերպարանս ա̄ծային „ ստեղծեալ՝ երրորդութե̄դ խորհրդակցութ̄բ , զարդարե- „ ցեր փչմամբ շնորհաց քոց կենդանարար ‖ : Յոր մտօ և շնորհալին ասէ 'ի մեկն · մատ · գլ · զ̄ · * Խորհր- „ դեամբ երիցն 'ի պատկեր ստեղծաւ միութե̄ն ‖ : Արդ յորժամ իմաստուն ոք խորհրդով առնէ գործ ինչ՝ մեծ իմն համարի այն :

Եր̄կդ՝ զի ձեռամբ իւրով արար զնա , և ոչ սոսկ հրամանաւ , որպէս արար զայլս · իսկ յայսպիսի արարչութե̄ ձեռամբ առնելն ցուցանէ զգերազանցութիւն արարեալ իրին քան զայնոսիկ՝ որք չիցեն արարեալ ձեռամբ , այլ սոսկ հրամանաւ : Օրօրինակ եթէ 'ի շինել մեծի պալատի գործեսցին բ̄զմ ինչ հրամանաւ ճարտարապետին , և ինչ մի ևս ձեռամբ նորին , այն որ ձեռամբ նորա գործի՝ ք̄ զայլս գերազանց ցուցանի · սոյնպէս է իմանալ և զարարչութենէ մարդոյ · ուստի ասէ վանական վարդապետ · 'ի մեկն · յոբ · գլ · ժ · * զայլարա- „ րածս բանիւ արար ( ա̄ծ ) , և զմարդոյն 'ի խորհուրդ „ մտեալ ձեռամբ ( արար զնա ) վասն պատուոյ ‖ ,

Նորոգ՝ զի յաւարտ ա՟մի ստեղծ զմարդն․ իբր զի յետ որոյ արար ա՟ծ զայլ ամենայն արարածս (եւս և զհրեշտակս,) յայնժամ ձեռն էարկ առնել զմարդն իբրև զլրումն ա՟մի այնոցիկ և իբր զվախճան նոցին, ուստի և իշխան և թագաւոր կացոյց զնա 'ի վերայ ամենայն մարմնաւորաց ։

Նաև ըստ այսմ ա՟պ 'ի վերջոյ եղև ստեղծումն մարդոյ, նոյնպէս յառաջ եղև յղացումն նորա 'ի միտս ա՟յ 'ի բնական կարգի մարմնաւոր արարածոց․ զի որ վերջին է 'ի գործադրութ՟ե՝ առաջին է 'ի դիտման ըստ վախճանական գոլոյ․ զի նախ վախճանն դիտի, և ապա միջնորդքն․ իսկ 'ի գործադրութեան միջնորդքն նախ դնին, և 'ի վերջոյ վախճանն ։ Արդ 'ի կամիլ ա՟յ ստեղծանել զն՟ս՝ զմարդն եդ վախճան 'ի կարգի մարմնաւոր արարածոց․ զի վասն ն՟ր արար զա՟մ երևելիս․ ուստի նախ զնա յղացաւ 'ի մտի 'ի բնական կարգի, և յետոյ զայլս․ և 'ի ստեղծանելն անդ՝ նախ արար զամենայն, և հուսկ յետոյ իբր վախճան նոցին զմարդն ։ Նաև զայսմանէ խօսելով սուրբ յակոբ մծբնայ հայրապետ 'ի ճառն․ ժ՟զ․ գրէ այսպէս․ * ամենայն արա-
„ րածք վերնականք և ներքնականք նախ հաստատե-
„ ցան, և ապա՝ զկնի ա՟մն մարդն․ ք՟զի իբրև խորհե-
„ ցաւ ա՟ծ հաստատել զն՟ս հանդերձ ա՟մ զարդու և
„ կազմուածովք իւրովք, նախ զադամ յղացաւ և
„ նկարեաց 'ի խորհուրդս իւր․ և ապա յղացաւ զա-
„ րարածս․ ո՟պ ասաց․ մինչչև յղացեալ էին լերինք, և
„ երկնեալ երկրի զերկունս ծննդեան առ 'ի սերմա-
„ նել և աճել․ ք՟զի մարդս է երէց և յառաջ յղու՟թ՟բ
„ զա՟մ արարածս․ բայց ծննդեամբ յառաջ են արա-
„ րածք քան զադամ․․․ և իբրև կատարեաց բովան-
„ դակեաց և զարդարեաց զն՟ս 'ի կազմութ՟ի զարդուց
„ իւրոց, և ոչ գոյր 'ի նմա և ոչ ինչ թերի, յայնժամ
„ ծնաւ զադամ 'ի մտաց անտի խորհրդոց․ և ստեղծ
„ յօրինեաց զմարդն ձեռօք իւրովք․․․ և իշխեցոյց
„ զնա 'ի վ՟ր ա՟մի՝ զոր արար ‖ ։

Ասացի 'ի վերոյ՝ թէ յետ որոյ արար ա՟ծ եւս և ըզհրեշտակս․ զի ըստ հաւանական կարծեաց յառաջ քան զստեղծանիլ մարդոյ գոյացան հրեշտակք․ և զայս ցուցանէ ասելն սա՝ * քան զհրեշտակս ‖․ որով հա-

մարթալ լինի՝ թէ ստեղծեալ էին հրեշտակք · և 'ի ստեղծանիլ մարդոյ՝ փոքր ինչ խոնարհ քան զնոսա գոյացաւ ։

Յայս կարծիս գոլով և վանական վարդապետի՝ գրէ 'ի մեկն · յոբ · գլ · լը · թէ յասելն ա̃յ · յորժամ եղեն աստեղք ծերք, ամենայն հրեշտակք աստեղաց օրհնեցին զիս մեծաձայն, յայս բան տեսանի՝ թէ յառաջագոյն ստեղծեալ էին հրեշտակք ։ Գրէ դարձեալ անդ թէ * 'ի կենդանւոջ նախ ուղեղն սկսանի գոյանալ ‖ , ըստ սմին ասէ՝ նախ հրեշտակք գոյացան իբրև ուղեղք ծի ։ Այլ կիրակոս արևելցի 'ի մեկն · հարիւր · եւագրի · ա · 51 · ասէ · * յորժամ եղեն աստեղք ծերք, այս „ է ցերք, ա̃մ հրեշտակք օրհնեցին զիս մեծաձայն · „ և դեռ մարդն չէր ստեղծեալ ‖ ։ Յայս միտս է և իգնատիոս վարդապետ 'ի մեկն · ղուկ · ժե · 11 · * երեց „ են ասէ հրեշտակք վասն ծմլին · զի նախ գոյացան „ ք̃ զա̃մ երևելի արարածս · և վասն պատւոյն բարձ„ րութե̃ · որ̃պ և գրեալ է վ̃ն մարդոյն, փոքր ինչ խո„ նարհ արարեր զնա ք̃ զհրեշտակս քո ‖ ։ Հայեսցուք ապա 'ի բանդ՝ զոր ասէ ։

**Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս ։** Յա̃մ արարածս ա̃յ հրեշտակք են ազնուականագոյնք յոյժ · զի են իմանալի գոյացութի̃ք, կատարեալք յինքեանս և 'ի գործողութի̃ս իւրեանց, անկարօտք մարմնաւոր պիտոյից և զգայական նիւթոց ։ Իսկ մարդն փոքր ինչ խոնարհ է և ստորին ք̃ զհրեշտակս · և զայս փոքր ինչ խոնարհ լինելս ոչ է պարտ իմանալ ըստ մարմնոյ, զի ը̃ այսմ յոյժ ստորին է քան զնոսա, թէ և յանմեղութե̃ վիճակի նկատեսցի, որպիսի էր ադամ · այլ ըստ գոյացութե̃ հոգւոյն · զի թէպէտ նաև հոգիք մարդկան՝ են հոգեղէն գոյացութի̃ք՝ որ̃պ և հրեշտակք, բայց ստորին և իբր վերջին եղլ 'ի կարգի հոգեղինութե̃ ։ Այլ սակայն հաւասար են մարդիկ ընդ հրեշտակս ըստ վախճանին և ըստ պաշտաման · իբր զի հրեշտակք և մարդիկ 'ի նոյն վախճան կարգին՝ յ̃ 'ի ժառանգութիւն ա̃յ · և 'ի նոյն առարկայ պաշտաման բերեն՝ յ̃ է 'ի պաշտել զաստուած ։

Դարձեալ այսպիսի գոլով մարդս՝ յայլ ինն միտս ասի զնմանէ խոնարհ առնել աստուծոյ զնա քան զհրեշտակս ·

ըստ որում զհրեշտակահանգէտ հոգին յանօթ ապա-
կանացու փակելով խոնարհ կացոյց քան զհրեշտակս.
ընդ որ զարմացեալ իմաստնոյ ուրումն ասաց. * զիարդ
„ զայսպիսիս յայսպիսի դիւրեղծական անօթ պա-
„ րագրեաց՝ որ արարն ‖ ։

Իսկ եթէ այս խոնարհ լինելս մտածեսցի ըստ մարմնոյ
միայն, վերաբերի առ Ք՟ս. որ ը՟ս մարմնոյն և ը՟ս նախա-
տանաց խաչին և մահուն խոնարհ երևեցաւ ք՟ զհրեշ-
տակս. ըստ որում ասէ առաքեալն եբր. բ. 9. * փոքր
„ մի խոնարհեալ քան զհրեշտակս տեսանեմք զՅ՟ս վ՟ս
„ չարչարանաց մահուն ‖ ։ Ո՛չ զի թէպէտ Ք՟ս բացար-
ձակապէս և ը՟ս ա՟մի 'ի վեր էր՝ և 'ի վեր է ք՟ զա՟մ հրեշ-
տակս, և քան զա՟մ էս, բայց զի ունէր զմարմին կրա-
կան չարչարելի և մահկանացու, ը՟ս այսմ բանի երևե-
ցաւ փոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս. և յայս
իսկ կամեցաւ՝ զի 'ի ժամանակի չարչարանացն երևես-
ցի ինքեան հրեշտակ առ 'ի արտաքսապէս զօրացու-
ցանել զինքն ։

Եւ որ սքանչելին է՝ սոյին այսու երևեցոյց զանձն
խոնարհ և բարձր, մեծ և փոքր, հզօր և տկար ։ Ըն-
դէր յածիւր յաթէնս, թէ ո՛ կամ զինչ է այն՝ որ իցէ
միանգամայն մեծ և փոքր, եւս և բարձր և խոնարհ,
ոմանք ասէին՝ թէ իցէ միտքն, ոմանք թէ կամքն, և
ոմանք թէ աչքն. զայս ասէին՝ զի ոչ տեսանէին յծի
գիր ինչ իրօք մեծ և փոքր. մեք տեսաք զՔ՟ս մեծ քան
զա՟մ, և փոքր քան զհրեշտակս, բարձր քան զա՟մ և խո-
նարհ ։

Այլ եթէ սոյն այս առաջիկայ բնաբանս հայեցի 'ի
մարդն ը՟ս բոլորին, ըստ սմին եւս թէպէտ նոյն բան է,
բայց սակայն եթէ ը՟ս պատկերի նկատեսցուք զմարդն՝
իւիք իւիք 'ի վեր երևի. վ՟ս զի ըստ բոլորին առեալ՝ բո-
վանդակի 'ի մարդն հաղորդակցութիւն ա՟մ էից, եթէ
հրեշտակաց՝ ը՟ս հոգեղինութ՟ե, և եթէ զգայուն կեն-
դանեաց՝ ը՟ս զգայականութ՟ե. եթէ բուսոց՝ ը՟ս տնկակա-
նութեան, և եթէ սոսկ մարմնաւորաց՝ ըստ մարմնեղէ-
նութ՟ե ։ Եւ ըստ այսոցիկ ա՟մի պատկեր ա՟յ ասի մարդն
'ի բնական կարգի, և եթէ իցէ 'ի շնորհս՝ կոչի պատ-
կեր և նմանութիւն ա՟յ նաև 'ի գերբնական կարգի ։
Ասի 'ի ս՟բ գիրս՝ միայն վ՟ս մարդոյ ասի պատկեր ա՟յ,

և ոչ վս այլոց, և ոչ իսկ վս հրեշտակաց ։

Այլ սակայն Ներսէս շնորհալին սոսկ ըստ հոգւոյն իմա-
նալով գրէ առ միջագետս զայսպիսի ինչ. * Մարդն
„ անուն՝ որ եմ արթուն յի իմաստուն՝ ոչ մարմնոյս է՝
„ այլ հոգւոյս. և մինչ ես զմարդն ասէ արար ած 'ի
„ պատկեր իւր, որ է հոգին և ոչ մարմինս. և տէրն
„ զմարմնոյն ասէ՝ թէ ոչ ինչ օգնէ. հոգին է որ կեն-
„ դանի առնէ. վյ և հաղորդ այ հոգիս մեր է՝ ա-
„ նուամբ և պատկերաւ և ոչ մարմինս. անուամբ՝ ըստ
„ այնմ թէ հոգի է ած. և պատկերաւ՝ յաղագս անձն-
„ իշխանական բնութեն ||։ Այլ զայս յայն սակս այսպէս
ճշգիւ գրէ, զի 'ի միջագետս ծագեալ էր մոլորութիւն
համարելոյ զած ունել զմարմնաւոր կերպարանս մար-
դոյ. որոյ վասն ասի (ասէին) թէ մարդս ստեղծաւ 'ի
պատկեր այ. այսմ կամելով շնորհալւոյն ընդդիմանալ՝
միայն զհոգւոյն բուռն հարկանէ. ըստ որում մարդն
առաւել ըստ հոգւոյն ասի պատկեր այ ք ը մարմնոյն ։
Այլ զի փառք մեծ է նմա այս և պատիւ, 'ի սոյն ակն-
արկելով մարգարէին՝ ասէ ։

**Փառօք և պատուով պսակեցեր զնա ։** Փառօք իմացեալ լի-
նի աստ միանակցութի մարդոյ ընդ հոգեղէնս ըս իմա-
ցողութե և ըստ անձնիշխանութե. իսկ պատուով ի-
մացեալ լինի միանակցութի նր ընդ կատարելութիս
այլ ամ էից. որովք զարդարեաց ած զմարդն ։ Ոմանք
փառօք իմանան աստ զփառս իմացականութեան, որով
մարդս ասի ասեն 'ի պատկեր այ. իսկ պատուով ի-
մանան զպատիւ անձնիշխանութեան, որով ասի ասեն
'ի նմանութիւն այ ։ Բայց ոչ սոսկ վասն այսոցիկ ասի
մարդն զարդարեալ այսպէս, այլև ըստ գրելոյ մեր 'ի
վերոյ՝ վասն յինքն ժողովելոյ զամ արարածական բնու-
թեց հանգամանս. որպէս գրէ և բարսեղ մեկնիչ 'ի
մարկ. ժը. 1 ։ Բայց քննել արժան է, զի մարգարէն
փոխ ասելոյ, զարդարեցեր, կամ արարեր, դնէ պսա-
կեցեր. և այս ևս թէպէտ զնոյն նշանակէ աստ, բայց
որովհետև պսակն հայի յայնպիսի զարդս՝ որ է իբր
լրումն զարդուց, պսակեցեր ասելով կամի յայտ առ-
նել՝ թէ այն փառք և պատիւ այնպիսի ինչ են, որովք
իբր ծայրագոյն զարդուք բնութեան զարդարի մարդն
ըստ որում մարդ, և կացուցանի էակ բոլորական՝ իբր

յիւրմէ և իբր ինքեամբ ունելով և գործելով և զբարին, զի եթէ անկարօտ արտաքին նպաստից՝ բաց 'ի նախախնամութենէն ա՟յ: Ուստի ասէ բարսեղ ձնն. 'ի մեկն. մարկ. գլ. ժդ. * 'ի սկզբան լինելութեան մար-
„ դոյն զա՟մ բարեացն պատճառս եդ ա՟ծ 'ի մարդն.
„ որպէս զի մի արտաքուստ 'ի մեզ բարեացն իցէ մուտ.
„ այլ 'ի մեզ լեալ ունիցիմք, ըստ ասելոյն՝ թէ 'ի բե-
„ րան քո և 'ի սրտի քում է. զի յորժամ կամիցիմք՝
„ իբրև 'ի շտեմարանէ իմեքէ 'ի ձեռն առնուցումք...
„ արքայութիւնն ա՟յ 'ի ներքս 'ի ձեզ է ||:

Դրձ՝ պատկեր գնելով յայտ առնէ՝ թէ ա՟ծ իբր պըսակաւոր տ՟ր իբր թ՟գր ստեղծ զմարդն. որոյ վասն մնաց 'ի մարդն ցանկութիւն թ՟գրելոյ. և այնու ցանկութ՟բ իսկ յօժարեցան թ՟գրել. ըստ որում ասէ և ծործորեցին. * թ՟գր ստեղծաւ մարդն 'ի պատկեր նորին. և
„ թէպէտ յանցեաւ, սակայն նոյն ցանկութեամբն վա-
„ ռեալ՝ թագ եդին ոմանք և տիրեցին բազմաց ||:

Այս բան եթէ հայիցի առ ադամ, փառօք նշանակի սկզբնական արդարութիւն նորա, և պատուով վիճակն անմահութեան. որովք զարդարեալ էր, և ցնծայր 'ի դրախտին. թող զիշխանութ՟ի թ՟գրութ՟ն նորա, որով կարէր տիրել 'ի վերայ ա՟մցն: Այս փառք և պատիւ ադամայ նախանձ էարկ 'ի սատանայ. մինչև չկարել նմա հանդարտիլ, այլ չարահնար ջանիւք՝ մահու առնել զնա պարտաւոր. ըստ այնմ * նախանձու բանսարկուին եմուտ մահ յա՟շ ||. իմաստ. բ. 24: Այսմ նախանձու տիրապէս խօսելով ոչ եթէ փառքն ադամայ եղև պատճառ, և ոչ բարերարութիւնն ա՟յ՝ որով պսակեաց զադամ, այլ չարութիւն բանսարկուին. զի ա՟ծ 'ի պսակելն զադամ փառօք՝ ոչ արար ինչ զրկանս սատանայի, յորմէ զչարեսցի նա, և զրգռեսցի 'ի նախանձ: Ուստի ասէ եզնակ կողբացի 'ի գլ. ժբ. * եթէ (ա՟ծ) զնորա ինչ
„ հանեալ էր և մարդոյն շնորհեալ, թերևս յիրաւի
„ պատճառ չարեաց կարծիւր տուիչն. ապա եթէ
„ զնա նոյնպէս ո՟ղ եղեն պահեաց, և զմարդն այնպէս
„ կամեցաւ առնել, պտճռ չարեացն նախանձորդն է ||:

Եթէ այս բան հայիցի առ ք՟ս, փառօք նշանակի ա՟ծութիւնն՝ որով ասի և է ա՟ծ ճշմարիտ՝ փառաւորեալ 'ի վ՟ր ա՟մի. իսկ պատուովն նշանակի իշխանութիւն ն՟ր՝ ըստ

որում է մարդ ։ Այլ կամ դարձեալ՝ փառօք և պատուով նշանակի փառաւորիլն և պատուիլն նորա վ՛ն խոնարհութեան իւրոյ, և վասն չարչարանաց և մահու. յոր միտ առէ զնմանէ առաքեալն. * փառօք և պատուով պըսակեալ ‖. եբր. բ. 9. և թէ * վ՛յ և ա՛ծ զնա առաւել բարձրացոյց և շնորհեաց նմ անուն ևն ‖. փիլ. բ. 9. Աստի յայտնանէ և եկեղեցի ո՛ր՝ թէպէտև ըստ նիւթաւորն գոլոյ փոքր մի խոնարհ է քան զհրեշտակս, բայց ըստ որում հարսն քնի՝ ասի առաւելագոյն փառօք պսակեալ ։ Ուստի և Նարեկացին՝ 'ի մեկն. երգ. ը. 7. գրէ այսպէս. * քոյր մեր փոքր է ( ասեն հրեշտակք ).
„ քոյր ասի եկեղեցի յաղագս 'ի միոյ արարչէ լինե-
„ լութե՛ ստեղծողութե՛. և փոքրիկ վասն անարգ ընու-
„ թե՛ս ասէ, զի հողեղէն եմք. թէ և միւսն հրեղէն,
„ այսինքն հոգին՝ որ ընդ մարմնոյս լծակցեալ. բայց ք՛ ըզ-
„ հրեշտակս փոքր է. որում և մարգարէն վկայէ.
„ փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս.
„ բայց առաւելագոյն փառօք և պատուով պսակեցեր
„ զնա ‖ ։ Զայս եդեալ մարգարէին՝ խօսի ապա և զիշ-
խանութենէ նորա, և ասէ ։

Եւ կացուցեր զնա 'ի վ՛ր ամ ձեռակերտաց քոց ։ Կացուցեր դնելով՝ կամի ասել, ետուր նմա իշխանութիւն տիրելոյ. և հրամայեցեր՝ զի իշխեսցէ 'ի վ՛ր ամ ձեռակերտաց քոց, այսինքն 'ի վ՛ր ամ մարմնաւոր արարածոց քոց յերկրի երևելոց, և կառավարեսցէ զնոսա. ը՛ այնմ. * արասցուք
„ մարդ ըստ պատկերի մերում և ը՛ նմանութե. և իշ-
„ խեսցէ ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և անաս-
„ նոց, և ամ երկրի, և ամ սողնոց՝ որք սողին 'ի վերայ
„ երկրի ‖. ծնն. ա. 26. Այլ արու և էգ ստեղծեալ՝
ետ նոցա յատուկ հրաման՝ ասելով, * աճեցէք և բազմացարուք, և լցէք զերկիր. և տիրեցէք դմա. և իշխեցէք ձկանց ծովու, և թռչնոց երկնից, և ամ անասնոց, և ամ երկրի, և ամ սողնոց՝ որք սողին 'ի վերայ երկրի ‖. ծնն. ա. 28. Այս և յօրհնելն զՆոյ և զորդիս նորա՝ ասաց ա՛ծ. * լցէք զերկիր, և տիրեցէք դմա. և ահ և երկիւղ ձեր եղիցի 'ի վերայ ամ գազանաց երկրի, և 'ի վ՛ր ամ թռչնոց երկնից, և 'ի վերայ ամ զեռնոց երկրի, և 'ի վերայ ամ ձկանց ծովու, զորս ը՛ ձեռամբ ձերով ( այսինքն ընդ իշխանութե՛ ձերով ) ետու ‖.

Ծնն. Թ̃. 2: Որովք յայտնի երեւի՝ թէ ա̃ծ կարգեալ է զմարդն իբր իշխան ձեռակերտաց իւրոց եղելոց ՚ի վերայ երկրի. եւ զա̃մ եդեալ է ընդ հնազանդութեամբ մարդոյն:

Սարգիս Շնորհալի. ՚ի մեկն. ա̃. պետ. ա̃. 21. Ճառ. Գ̃. եւ այլք բ̃ք զայն զայս վերածեն ՚ի մարդկային բնութիւն. որ ՚ի ձեռն խորհրդոյ մարդեղութե̃ բարձրացաւ ՚ի վերոյ քան զա̃մ. * առեալ ասէ զմարդն եւ
„ զհողանիւթեայն՝ հաւասարեաց իւրոյ ա̃ծութե̃ն. եւ
„ փառօք եւ պատուով պսակեաց զնա ըստ մարգարէու_
„ թե̃ն. եւ տէր եւ իշխան կացոյց զնա ՚ի վ̃ր ձեռակեր_
„ տաց իւրոց ‖: Ս՝իայն այց առնել նորա տառապեալ եւ թշուառացեալ մարդկային բնութեան մեծ ի̃ն լինէր, քանի եւս մեծ իցէ պսակելն զնա փառօք: Եթէ հնար էր՝ ցանկային եւ հրեշտակք ՚ի համարս մարդոյ լինել, ՚ի տեսանել նոցա խոնարհիլ ա̃յ առ ինքեանս: Պատմի թէ Կարոլոս հինգերորդ գնաց ՚ի տեսութիւն զինուորի միոյ՝ որ վիրաւորեալն էր. ընդ այս զարմացեալ զօրաց նորա՝ ցանկային եւ ինքեանք վիրաւորիլ: Արդ յայսմանէ կարես չափել՝ թէ որքան մեծ եղեւ մարդոյ գալ առ նա որդւոյն ա̃յ ՚ի տեսութիւն, եւ փառաւորել զնա, եւ կացուցանել զնա իշխան ՚ի վ̃ր իշխանութե̃ ա̃մյի: Արդ զոր ՚ի հասարակի եդ մարգարէն՝ որոշէ եւս եւ մասնաւորէ ՚ի յաջորդդ ասելով:

Է. Զամ ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նր. զխաշն, եւ զարջառս եւ զամ ինչ:

Այս հնազանդութիւն յանմեղութե̃ վիճակի կատարեալ էր. բայց յայսմ վիճակի՝ յորում գտանին մարդիկ, անկատար է յոյժ. զի ոչ պարզ հրամայելով հնազանդին մեզ արարածք, որպէս ՚ի դրախտին, այլ՝ հնարագործութե̃. յոր սակս յաւելուածով ի̃ն դնէ զբանն ասելով:

Զամ ինչ հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նր: Կամի ասել. այնպէս կարգեցեր զարարածս՝ զի եղիցին հնազանդ ՚ի ներքոյ ոտից մարդոյ: Եւ ոտիւք նշանակի հնարագործութիւն մարդոյ. զի որպէս ոտիւք գնայ մարդ ՚ի վ̃ր երկրի եւ ոտիւք կոխէ, սոյնպէս եւ հնարագործութե̃ գնայ՝ եւ կոխէ՝ ք̃ իշխէ ՚ի վ̃ր ա̃մ արարածոց,

ոպ̃ տարերաց, հանքաց, տնկոց, եւն̃. ևս և կենդա-
նեաց. զորս և թուէ մարգարէն ասելով։

Ը. Ոչխարս և զարջառս և զամ̃ ինչ. Նաև և զգազանս վայրի. Զթռչունս երկնից, զձկունս ծովու, որ շրջին ընդ շաւիղս ծովու։

Սեռք կենդանեաց ըստ տեղւոյ մասնեալ՝ յերիս վերածին, ոպ̃ 'ի ցամաքայինն՝ որպիսի են խաշն և արջառ և երէ վայրի. յօդայինն՝ որպիսի են թռչունք, և 'ի ծովայինն՝ որպիսի են ձկունք։ Զսոսա զամենն առ, կարգեաց ած̃ ընդ իշխանութե̃ մարդոյ. * զխաշն, և զարջառ ‖ եւն̃։ Խաշամբ և արջառով իմանայ զընտանի կենդանիս. որպիսի են, ոչխար, այծ, եզն, եւն̃. և առ 'ի խնայուցանել նաև զայլս՝ յաւելու ասել, * զամ̃ ինչ ‖. ոպ̃ զձի և իշէ ընտանի կենդանիս։ Վայրի երէիւք իմանայ զամ̃ վայրի կենդանիս. որպիսի են եղջերու, այծեամն, եւն̃. ընդ որս և զգազանս, որպիսի են, առիւծ, արջ, փիղ, օձ, եւն̃։ Իսկ թռչունք երկնից յայտ է թէ իմանայ զայն ամ̃ կենդանիս՝ որք թռչին յօդս։ Իսկ ձկամբք ծովու՝ զամ̃ ձկունս, որք են 'ի ծովս, և 'ի լիճս՝ իբր 'ի ծովս. ևս և 'ի գետս՝ որք ըստ մասին են 'ի ծովէ. ըստ որոյ 'ի սաղմոս ինչ մեր դնի՝ * զձկունս ծովուց ‖։

Իսկ ասելով՝ * որ շրջին ընդ շաւիղս ծովու ‖. կամի յայտ առնել՝ թէ ոչ միայն ձկունք հնազանդեալ են մարդոյ, այլև այն ամ̃՝ որք չեն յատկապէս ձկունք, բայց շրջին 'ի ծովու. ոպ̃ են ժժմունք և խեցեմորթք, ևս և երկակենցաղ կենդանիք, և համբարուք, եւն̃։

Զայս ամ̃՝ որպէս և տեսանեմք՝ հնազանդեցուցանեն մարդիկ իւրեանց պէսպէս հնարագործութեամբք իւրեանց, զորս հնարեն 'ի ձեռն բանականութեան։ Իսկ յայսմ ամի̃ սքանչելի երևի նախախնամութիւնն այ̃ 'ի վերայ մարդոյ. զի գոլով նա էակ փոքրիկ՝ զայնպիսի ճարտարութի̃ տուեալ է նմա ած̃, և այնպէս կարգեալ է զամ̃ արարածս իւր 'ի ներքոյ նորա, մինչև փոքու իմն հնարիւք առ հասարակ իշխել 'ի վերայ ամի̃։ Թողում աստանօր յիշել ընդ լամբրանացոյն զիշխել նոցին 'ի վերայ դիւաց ևս՝ յանուն այ̃։

Ի վերայ սոյին խօսելով եզնիկ կոչեացի 'ի Գլ. ԻԴ.

դրէ այսպէս . * այլ յայն ևս հայել պարտիք՝ թէ,
,, որչափ անասունս մ՟ե մերոց պիտոյից ընդ մեզ հնա-
,, զանդեցոյց, զձիս և զուղտս, զփիղս, զարջառ և
,, զոչխար . և 'ի լերանց և 'ի դաշտաց զայծեամունս և
,, զեղջերուս և զվարազս . որոց կէսք կրելիք են, և
,, կէսքն ուտելիք ։ Եւ զայն ևս գիտել ետ մեզ՝ թէ
,, որոց նա կամի՝ յաղթական կարեմք լինել . և որոց
,, ոչ կամի չկարեմք յաղթել՝ ոչ միայն յարդաւորացն,
,, այլ որք ճնճինք են . զինչ վատթարագոյն քան զլուն
,, և զմուկն կայցէ . և զայնս ոչ սպանել կարեմք, և
,, ոչ յետ մերժել ։ Եւ զայլն ևս որք 'ի ջուրսն են,
,, և 'ի մեր պէտս ոչ հարկաւորք . բայց միայն զի զկծե-
,, ցուցանիցէ ( նոքօք զմեզ . ) զի յորժամ տեսանի-
,, ցեմք թէ չեմք բաւական զնոսա սպանել, ծանիցուք
,, զանձանց մերոց զտկարութիւն . և իջցուք 'ի զուր
,, հպարտութէ . և նմա միայնոյ տացուք զյաղթութիւն,
,, որ ճնճենովք զմեզ աշխատս առնէ, և զմեծամեծսն
,, հնազանդէ մեզ, զբ՟ զփիղս, զուղտս, զառիւծս,
,, զինձս, և զյովազս . զորոց զկէսն 'ի կրելիս, և ըզ-
,, կէսն 'ի զբօսանս ընտելացուցեալ համբուրեցու-
,, ցանէ ‖ ։

Բայց զարմանք է՝ զի մարդս այսքանեօք գերազանցեալ 'ի վերոյ քան զանբանս առ իշխել 'ի վ՟ր ն՟ց, 'ի վարել և 'ի նուաճել զնոսա, հաւասարի ն՟ց գործովք իւրովք . և որում պարտ էր հանգէտ հրեշտակաց վարել՝ երբեմն վատթար ք՟ զանասունս երևի ։ Անասունք բոլոր յերկրաւորս պարապին, հրեշտակք բոլոր յերկնաւորս . մարդիկ յերկոսին ևս . 'ի պարապիլն երկրաւորաց՝ հաւասարին առաջնոցն . 'ի պարապիլն երկնաւորաց՝ հաւասարին հրեշտակաց . սակայն առաւել ախորժեն երկրաւորաց պարապելով՝ անասնոց հաւասարել՝ քան երկնաւորաց պարապելով՝ հաւասարել հրեշտակաց . որով ոչ միայն հաւասարին անասնոց, այլ առաւելուն քան զնոսա յանասնականութե, մինչև իշխել անասնականութեն 'ի վ՟ր նոցա, և ածել զն՟ս 'ի 'ի սանդարամետս, և մատնել 'ի ձեռս այնոցիկ՝ որոց կարէր իշխել ։ Որքան ամօթ է՝ եթէ այր մի կապեալ 'ի դանդանաւանդ ածիցի աստ և անդ յանասնոյ՝ իբր յառաջնորդէ նորին ։ Որանի այլանդակ իմն իցէ

գլխ 'ի վայր հրճոյն հրճիլ մարդոյ ։ Բայց առաւել ևս նողկալի երևին կեանք մեր առաջի հրեշտակաց 'ի տեսանել նոցա զմեզ զհետ լեալ անասնականութե, մինչդ զհետ պղծալից ցանկութե ։

Չորեքումբք առաւելու մարդ քան զանբանս, յիմացականութե, յանձնիշխանութե, 'ի խօսս և 'ի ձև մարմնոյ ․ իսկ մարդս՝ փ̃խկ սոքիմբք վեհ երևելոյ քան զն̃ս, յանարգութի բերաւ ։ Արար զքեզ իմաստուն ( ով մարդ ասէ գէորգ վ̃պ ․ 'ի մեկն․ եսայ ), զի ծանիցես զարարիչդ և իշխեսցես արարածոց ․ արար զքեզ անձնիշխան՝ զի լիցիս տէր անձինդ և գործոց քոց ․ ետ քեզ լեզու, զի զնա փառաւորեսցես, և ընկերացդ օգնեսցես ․ կանգնեաց զքեզ 'ի ձև վայելուչ հասակի ուղղորդ, զի ընթասցիս ուղիղ, և ելցես յերկինս 'ի վեր ․ և զա̃մ ինչ հնազանդ արար քեզ, զի հնազանդեսցիս և դու այնմ որ հնազանդեցոյց քեզ զա̃մ ․ արդ զի եղև քեզ՝ զի յետնեալ գտար յա̃մի ։ Արդարև նախատինք մեծ է անարգանալ մեծի քան զանարգութի փոքու ։ Այլ այս նախատինք 'ի պարծանս փոխի, եթէ մարդ յինքն եկեալ՝ առ ա̃ծ դարձցի, և շնորհօք նորա զօրացեալ՝ 'ի սահման առաջին վիճակի բանականութե հաստատեսցի ։

Խորհրդաբար, բանք այսոցիկ երկուց տանց, որպէս և հաստատած հինգերորդ տանն է̃ բանի իշխողութե առեալ՝ տիրապէս և Ճշմարտապէս հայլն առ ք̃ս, է̃ որում կացոյց զնա ա̃ծ իշխան 'ի վերայ ա̃մ ձեռակերտաց իւրոց ․ և զա̃մ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ն̃ր ․ է̃ այնմ՝ զոր ասէ առաքեալն ․ * զա̃մ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նորա ‖ ․ ա̃ ․ կոր ․ ժե ․ 26 ․ և եբր ․ 8 է̃ ։ Իսկ թէ ո՞յք են այն ա̃մ ինչ, յայտ առնէ մարգարէն ասելով ․ * Զխաշն և զարջառ ‖ ևն̃ ․ ուր խաշամբք և արջառօք նշանակին հրէայք, որք էին ընտանի ա̃յ ․ յորոց և բազումք հաւատացին 'ի ք̃ս ։ Երէիւք նշանակին հեթանոսք ․ որք էին վայրի, և եղեն ք̃սի ․ և կամ ևս ն և իսէ անհաւատք և հերետիկոսք վայրենացեալք 'ի տանէն ք̃սի, և կամ մեղաւորք հեռացեալք յա̃յ ։ Թռչնոցք երկնից նշանակին հրեշտակք, որք հանապազ երգեն զօրհնութիւնս ա̃յ ․ ևս և իմաստունք և ա̃ծապաշտք ․ և կամ ևս հոգևորք, ևն̃ ։ Ձկամբք ծովու

նշանակեն զնք՝ որք են յանդուգունս , և են հաւնի յօրհնել զա̃ծ , և թաղեալ 'ի խաւարութիւնս մեղաց . և կի̃ մարդիկ փոփոխամիտք և ալեկոծեալք իբրև 'ի ծովու , կամ հեշտասէրք , և որք ոչ խորհին զերկնայինս , և որք են ծանրալուր առ աստուածայինս բանս իբրև զձկունս : Ի վե̃ ա̃մի սոցա՝ ոք և իցեն , թէ բարի՝ և թէ չար , բացարձակապէս իշխէ քս̃ . և յաւուրն դատաստանի յայտնի ցուցցէ ա̃մն՝ թէ ինքն է տէր և դատաւոր ա̃մի :

Յայլ իմն այլաբանական միտս վերածէ վարդան զառաջիկայ բանսդ , ուղղելով յանձն պետրոսի . տէրն զհօտն ասէ յանձնեաց նմա , յանձնեաց և զառաջնորդսն հօտին . զի̃ զառաքեալսն իբրև զխաշն և իբրև զարջառս . զմարգարէսն իբրև զերէ վայրիս , զվ̃դպս իբրև զթռչունս . և զերիցունս իբրև զձկունս , ընդ որս և զա̃մ հաւատացեալս : Նորոգապէս , ետ ա̃ծ մարդոյ իշխանութիւն հնազանդեցուցանել ը̃ իւրև զա̃մ զօրութիւնս իւր , և զա̃մ շարժմունս կրից հոգւոյն . եւ և զա̃մ խորհուրդս որոց՝ զիւրաքանչիւր ըստ այլեւայլ նմանութեանց :

Ի բանից աստի մարթ է եւ իմաստասիրել , թէ որովհետև ա̃ծ զա̃մ կենդանիս արար վ̃ մարդոյ , և ետ զնոսա 'ի ձեռս մարդոյ 'ի վարել և 'ի վայելել . ա̃պ կարէ մարդ վարել զնոսա . սոյնպէս կարէ առանց խտրելոյ վայելել , զի̃ ուտել յորոց և կամիցի , եթէ 'ի վայրի երէոց և եթէ յօ̃ և իցէ թռչնոց . զի ա̃պ ասէ ծործորեցին 'ի մեկն . մատ . գլ . ժե̃ . * զվ̃ իւր եղեալն յիւր պէտս փոխել՝ ոչ է արտաքոյ իրաւանց || : Իսկ թէպէտ ա̃ծ որոշեաց զսուրբս յանսրբոց 'ի հին օրէնս . բայց այդ հայէր նախ 'ի տարբերութի̃ զի̃ յորոշումն պատուականաց վասն իւրոյ ժողովրդեան առ զգուշանալոյ 'ի հեթանոսական ժողովրդոց ըստ հին վիճակի . հայէր երկրորդ յորոշումն պիտանեաց յանպիտանից : Առաջինն էր օրէնք առ իէ̃ացիս . երկրորդն խրատ առ ա̃մն՝ զլաւն վայելել և զյոռին թողուլ : Բայց և այն օրէնք լուծան 'ի նորումն . զորմէ տես յեզնակ կողբացին . գլ . հդ̃ . քղի 'ի ժմկէ առաքելոց բարձաւ այն օրէնք . նա զի յայտնի եւ ցուցաւ պետրոսի՝ ոչինչ յայնցանէ համարել խառնակ կամ պիղծ . ուստի

ասէ ծործորեցին 'ի մէջն . մատ . գլ . ժէ . * 'ի
,, տեսլեան կտաւոյն պետրոսի վարժեցան ( հաւատա-
,, ցեալք ) ուտել , և 'ի նմին բանիցս՝ ուտեն ( յն և իցէ
,, կերակրոց ) և ոչինչ վնասեն || ։

Օ այս ամ եղեալ մարգարէին՝ սքանչացմամբ իմն վեր-
ջացուցանէ զբան իւր այնու՝ զոր սկսաւ , և ասէ ։

Թ . Տէր Տէր մեր , զի՜ սքանչելի է անուն քո յամենայն երկրի ։

Օ այս 'ի վերջոյ ևս դնելով մարգարէին՝ յայտ առ-
նէ , թէ ահա այն՝ զոր եդ 'ի սկզբան սաղմոսիս իբրև
ցուցանելի եզրակացութիւն՝ ճշմարիտ է . և թէ 'ի բա-
նից սաղմոսիս ցուցեալ է ճշմարտութիւն նորին ։ Իւ-
զի եզրակացութիւնն՝ որ իբր գլութիւն առաջի մատու-
ցանի , 'ի վերջն բանիցն իբրև ցուցեալ կրկնի , ամէն
իրի և սոյն այս բան՝ որ եդաւ 'ի սկզբան սաղմոսիս ,
'ի վերջոյ ևս կրկնի յասելն ։

Տէր Տէր մեր՝ զի՜ սքանչելի է անուն քո յամ երկրի ։ Իբր թէ
ասէր . յիրաւի սքանչելի է անուն քո ոչ յայսմ կամ
յայնմ տեղւոջ միայն , այլ յամ երկրի , ևս և յամենայն
իրս , և յամ զօրութիւնս , զի 'ի քէն է ամ , և առ քեզ
կարգի ամ , դու սկիզբն ամի , վախճան ամյն , օրհ-
նեալ յաւիտեանս ։

# ՍԱՂՄՈՍ Թ.

*Գոհութիւն առ ա͞ծ 'ի գլխոյ մարդկայնոյ բնութեան վասն այնր մեծի յաղթութե͞ և բարերարութե͞, որ եղև 'ի ձեռն մարդեղութե͞. Եւս և վ͞ս վանելոյ ս͞ն զսա-տանայ և զզօրութիւն նորա ։ Գործ և յանդիմանութի͞ գործոց ամպարշտի. և մաղթանք տառապեալ անձին յաղատիլ 'ի ձեռաց նորա ։*

Ի կատարած վ͞ս գաղտնեաց որդւոյ. սաղմոս 'ի Դաւթի ։

1 Գոհացայց զքէն Տ͞ր բոլորով սրտիւ իմով. պատմեցից զա͞մ
սքանչելիս քո ։ 2 Ուրախ եղէց և ցնծացայց 'ի քեզ.
սաղմոս ասացից անուան քում Բարձրեալ ։ 3 Ի դառնալ յետս
թշնամեաց իմոց՝ տկարասցին և կորիցեն յերեսաց քոց ։ 4 Արա-
րեր զդատաստան իմ և զիրաւունս. նստար յաթոռ՝ դատաւոր
արդարութե͞ ։ 5 Սաստեցեր 'ի հեթանոսս, և կորեաւ ամպա-
րիշտն. զանուանս նոցա ջնջեցեր յաւիտեան յաւիտենից. և
թշնամւոյն զէն պակասեաց մինչև իսպառ ։ 6 Զքաղաքս աւե-
րեցեր. և կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ ։ 7 Ա͞ծ կայ և
մնայ յաւիտեան. պատրաստ արար զաթոռ իւր 'ի դատաստանի ։
8 Նա դատի զաշխարհս արդարութե͞, և զժողովուրդս իւր
ուղղութեամբ ։ 9 Եղև Տ͞ր ապաւէն տնանկին, և օգնական
'ի նեղութեան 'ի դէպ ժամանակի ։ 10 Յուսասցին 'ի քեզ
ամենեքին՝ որք գիտեն զանուն քո. զի ո՛չ թողցես զայնոսիկ՝
որ խնդրեն զքեզ Տէր ։ 11 Սաղմոս ասացէք Տ͞ն որ բնակեալ
է 'ի սիոն. պատմեցէք 'ի հեթանոսս զգործս նորա ։ 12 Ի խնդ-
րել զարիւն նոցա՝ յիշեաց. և ոչ մոռացաւ Տ͞ր զաղօթս տնան-
կաց ։ 13 Ողորմեա՛ ինձ Տէր, և տե՛ս զխոնարհութիւն իմ 'ի թշնա-
մեաց իմոց. ո՛ բարձր արարեր զիս 'ի դրանց 'ի մահուանէ ։ 14 Որ-
պէս պատմեցից զա͞մ օրհնութի͞ս քո 'ի դրունս դստեր սիոնի, և
ցնծացայց 'ի փրկութե͞ քում ։ 15 Ընկղման հեթանոսք յապականութե͞
իւրեանց՝ զոր արարին. որոգայթ՝ զոր թագուցին, անդէ զոտս նո-
ցա ։ 16 Ճանաչի Տէր յառնել զդատաստանս իւր. և 'ի գործս
ձեռաց իւրեանց խաղեցին մեղաւորք ։ 17 Դարձցին մեղաւորք
անդրէն 'ի դժոխս, և ա͞մ հեթանոսք՝ որք մոռացան զա͞ծ ։ 18 Ո՛չ

իսպառ մոռանայ Տէր զաղքատն. համբերութիւն տնանկաց ոչ կորիցէ
իսպառ։ 19 Արի՛ Տէր, մի՛ զօրասցի մարդ. դատեսցին հեթա-
նոսք առաջի քո։ 20 Կացո՛ Տ՟ր՝ օրէնսդիր ի վ՟ր նոցա. և ծանի-
ցեն հեթանոսք՝ թէ մարդիկ են։ 21 Ընդէ՞ր Տ՟ր կայցես ի հեռաս-
տանէ. անտես արարեր ի դէպ նեղութեան ժամանակի։ 22 Յամ-
բարտաւանել ամպարշտին՝ այրի աղքատն. արգելցին ի խոր-
հուրդս իւրեանց՝ զոր և խորհեցան։ 23 Զի գովի մեղաւորն
ի ցանկութիւնս անձին իւրոյ. որ զրկէն, և նա գովի։ 24 Իսկ
ընդէ՞ր բարկացոյց մեղաւորն զԱ՟ծ ըստ բազում բարկութեան իւ-
րում, թէ ոչ խնդրէ։ 25 Ո՛չ է Ա՟ծ առաջի աչաց նորա. պղծ-
են ճանապարհք ն՟ր յամ՟ ժամ։ 26 Բարձեալ են իրաւունք յե-
րեսաց ն՟ր. ի վ՟ր ամ՟ թշնամեաց իւրոց տիրեսցէ։ 27 Ասաց ի
սրտի իւրում, թէ ոչ սասանեցայց ազգէ յազգ առանց չարի։
28 Անէծս և դառնութիւն և նենգութիւն լի՛ է բերան նորա. ի
ներքոյ լեզուի ն՟ր ցաւք և վաստակք։ 29 Նստի դարանեալ ընդ
մեծամեծս ի գաղտնիս՝ սպանանել զանմեղն։ 30 Աչք նորա ի
տնանկս հային. դարանէ ի գաղտնիս՝ որպէս առիւծ ի մոր-
աջի իւրում։ 31 Դարանի յափշտակել զաղքատն, յափշտակել
զաղքատն, և ձգել զնա։ 32 Յորոգայթ իւր խոնարհեցուցանէ
զնա. խոնարհեսցի և անկցի ի տիրել իւրում՝ ի վ՟ր տնանկաց։
33 Զի ասաց ի սրտի իւրում, թէ մոռացաւ Ա՟ծ. դարձոյց
զերեսս իւր, զի մի՛ տեսցէ իսպառ։ 34 Արի՛ Տէր Ա՟ծ իմ. բա՛րձր
եղիցի ձեռն քո. և մի՛ մոռանար զտնանկս։ 35 Իսկ ընդէ՞ր բար-
կացոյց ամպարիշտն զԱ՟ծ. զի ասաց ի սրտի իւրում, թէ ոչ քննէ։
36 Տեսանես դու զնա. ի ցաւս և ի սրտմտութիւնս հայիս։ Ի
քեզ թողեալ է աղքատն. և որբոյն դու ես օգնական։ 37 Խոր-
տակեսցես բազուկ մեղաւորի և չարի. խնդրեսցին մեղք նորա, և
նա մի՛ գտցի։ 38 Տ՟ր թագաւոր յաւիտեանս յաւիտենից. կորի-
ցեն հեթանոսք յերկրէ ն՟ր։ 39 Զցանկութիւն տնանկաց լուար Տ՟ր.
ի պատրաստութիւն սրտից նոցա նայեցաւ ունկն քո։ 40 Դատ
առնել որբոյն և տնանկին. զի մի՛ ևս յաւելցէ մարդ ի մե-
ծաբանել իւրում ի վ՟ր երեսաց երկրի։

# ՎԵՐՆԱԳԻՐ

*Ի կատարած՝ վ՟ն գաղտնեաց որդւոյ, սաղմոս ՚ի Դաւիթ||:

Ի ՎԵՐԱՅ ԱՅՍՐ ՎԵՐՆԱԳՐԻ բազում բանք են ՚ի մեկնիչս՝ վ՟ն բառիցդ *՚ի վ՟ր գաղտնեաց որդւոյ||. զի սա յեբրայեցին գրի՝ *ալ մութ լաբէն||. իսկ այսոքիկ բառք եբրայականք ը՟ստ հնչման և ը՟ստ նշանակութե՟ն իւրեանց թարգմանին՝ *՚ի մահ որդւոյ||. կա՟մ *՚ի վ՟ր մահուան որդւոյ||. որպէս և Թարգմանէ սիւմաքոս, և այլս բ՟մք. ըստ որս և քաղդէականն: Ոմանք յաւելուն և զբառդ "երիտասարդ". և Թարգմանեն, *վ՟ն մահուան որդւոյ երիտասարդի||: Ակիւղաս *վասն յաղթութե՟ն մանկութե՟ն որդւոյն||. Թէոդիտոն, *վ՟ն տղայութեան որդւոյ||:

Իսկ թէ ո՞վ իցէ այն որդի՝ յորոյ մահուն վ՟ր կամ յորոյ ՚ի գաղտնիսն ասացեալ իցէ դաւիթ զայս սաղմոս, բ՟զմ են կարծիք: Ոմանք ասեն, թէ այն է աբեսաղոմ. բայց այս կարծիք ոչ ունի տեղի. զի բանք սաղմոսի ուրախականք են. իսկ դաւիթ վ՟ն մահու որդւոյ իւրոյ աբեսաղոմայ ՚ի սուգ տրտմութեան էր. վ՟յ պարտ էր տրտմական բանս խօսիլ, և ոչ զուրախական: Ո՛չ զայն՝ զի ընթացք բանից սաղմոսիս յայլ ինչ հային:

Ոմանք ՚ի րաբունեաց ասեն թէ եբրայական բառդ լապէն աստ գրի փ՛ոխ գողիադու, զոր սպան դաւիթ. և թէ՝ վասն սպանանելոյն զնա ասացեալ իցէ զայս: Բայց անտեղի երևի այս կարծիք: Յայս հայի և այն՝ զոր այլք ասեն, թէ զայս ասաց դաւիթ՝ յորժամ եհար զադրիազար արքայ սուբայ: Այլք ասեն, թէ աստ զեբրայական բառդ լապէն կամ լապան՝ պարտ է ընթեռնուլ փոխադրութեամբ տառից՝ նապաղ. այն է նաբաղ՝ այրն աբիգեայ. որ յիշի, ա՟. թագ. ի՟ե. 3. իբր թէ ՚ի մեռանիլ նորա ասացեալ իցէ դաւիթ զայս սաղմոս: Բայց այս կարծիք չունի հիմն. վասն զի դա-

ւիթ զայս սաղմոս ասաց յետ թգրելոյ իւրոյ 'ի սիոն
և յետ տանելոյ անդր զտապանակ ա̃ծ . ըստ որոյ լեառն
ս̃բ կոչէ զսիոն 'ի համարն . 11 . Իսկ մեռանիլն Նաբա֊
ղայ եղև բ̃ժ ամօք յառաջ յոյժ . ապա ոչ է հաւանա֊
կան ասել, թէ 'ի մեռանիլ նորա իցէ ասացեալ զայս ։
Եւ դարձեալ դաւիթ յայսմ սաղ.՚՚ ոչ խօսի զմահուանէ
միոյ առն և եթ , այլ և զկորստենէ բազմաց ։

Իսկ ոմանք 'ի նոր մեկնչաց ասեն՝ թէ բառիս՚՚ մութ՚՚
իմացեալ լինի եղանակ ինչ , կամ երգ , և կամ քնար . և
բառիս պէն՝ ( թողեալ 'ի բաց զմասնիկդ ալ ) , իմա֊
նան զղևտացի ոմն երգեցիկ , որ յիշի , ա̃ . մնաց . ժե̃ .
18 ։ Ուր և պատմի՝ թէ զիարդ բերէր դաւիթ զտա֊
պանակն տեառն յեղ̃մ հանդիսիւ մեծաւ , և հանդերձ
սաղմոսանուագօք ։ Եւ թէպէտ 'ի թարգմանութեան
մերումն յեօթանասնիցն ոչ յիշի զևտացին այն՝ պէն
անուամբ . բայց 'ի բնագիրս եբր՚՚ յիշի , որպէս և 'ի լա֊
տինս ։ Արդ՝ ասեն , թէ դաւիթ զայս սաղմոս արար
երգել պենայ ղևտացւոյն ընդ եղբարց իւրոց առաջի
տապանակին ա̃ծ՝ 'ի բերելն զայն յեղ̃մ՝ ալ մութ . այ̃
այնու եղանակաւ՝ կամ այնու նուագարանաւ՝ որ ասի
մութ ։ Բայց այս կարծիք ոչ երևի ճշմարիտ . զի
ղևտացին այն՝ որ յիշի . ա̃ . մնաց . ժե̃ . ոչ էր այնպի֊
սի երևելի ոք , այլ՝ հաւասար բազմաց . մանաւանդ թէ՝
ստորին ևս քան զբ̃մն , որք յիշին անդ . ապա ը̃էր յա֊
նուն նորա իցէ այս սաղմոս , և ոչ յանուն այլոց ։ Եւ
զրծել պէնն այն և եղբարք նորա ոչ յիշին անդ իբր սաղ֊
մոսասացք , այլ՝ իբր յառաջապահք տապանակին՝
անուամբ դռնապանի . իսկ սաղմոսասացքն էին ա֊
սափ , աման , եթ̃ . որպէս գրի անդ 'ի համարն . 19 . և
20 . եթ̃ ։ Բազում և այլ սոցին նման կարծիք են ,
զորս թողուլ արժան է 'ի բաց ։

Իսկ այլք առ 'ի համաձայնեցուցանել զթարգմա֊
նութիւն եօթանասնից ը̃ բնագրին եբրայեցւոց ասեն՝
թէ եբրայական բառդ ալ մութ՝ որ նշանակէ 'ի մահ .
կարէ ընթերցեալ լինել, և ալ ամութ , կամ ալամօթ ,
( որպէս և ընթեռնուն բ̃մք ) . իսկ այս բառ ը̃ այլևայլ
առման նշանակէ օրիորդք և գաղտնիք՝ յոր եթէ յա֊
ւելցի նախդիր ալ , և ընթերցցի ալ ալամօթ նշանա֊
կէ 'ի վ̃ր օրիորդաց կամ 'ի վ̃ր գաղտնեաց ։ Եւ զի եօ֊

Թանատունք սոսա և 'ի խէ սաղ՛՛ եդեն 'ի վերայ գաղտ-նեաց, զայն պարտ է համարիլ ուղիղ, և յայն յենուլ ։ Նաև ըստ այսմ սոյն այս վերնագիր խորհրդաբար հայի յայն որդի, որ իցէ մի միայն, յն յորդին այ ։ Զի ո-րովհետև բացարձակապէս դնէ զանուն որդւոյ՝ յա-ռեալ * 'ի վր գաղտնեաց որդւոյ ‖ ․ և կամ ևս ըստ եբ-րայեցւոյ՝ * 'ի վր մահուան որդւոյ ‖ ․ այնու իսկ ըստ պատշաճի նշանակի այն որդի, որ է մի միայն ․ ըստ ո-րում և բանք սաղմոսիս 'ի նոյն հային ։ Աստի և սուրբ հարք առ հասարակ՝ որք միանգամ գրեցին ինչ 'ի վերայ այսր սաղմոսի՝ հայեցեալ 'ի պարզ նկարագրական նշա-նակութիւն բառիցդ՝ մեկնեցին զայն 'ի վր գաղտնեաց որդւոյն այ, յն 'ի վր գաղտնի խորհրդոց մարդեղութե նորա, և չարչարանաց, մահու և յարութե նորին ․ զի այս է յիրաւի գաղտնի իմն խորհուրդ ծածկեալ՝ ըստ գրելոյն պօղոսի ․ * Զխորհուրդն ( ասէ ) որ ծած-կեալն էր 'ի յաւիտենից և յազգաց, որ այժմ յայտ-նեցաւ սրբոց իւրոց ‖ ․ կող ․ ա ․ 26 ։ և ա ․ կոր ․ ժ ․ 11 ։ Յայտնիկ հայելով՝ վերնագիր սաղմոսիս բացատրի այսպէս ։ Սաղմոս ասացեալ 'ի դաւթայ վասն գաղտնեաց որդւոյն այ, յն վասն մարդեղութե նր, վս փրկութեն, վս մահուանն, վս յարութեն, վասն համբարձմանն, ևս և վասն քարոզութե աւետարանի նորին, 'ի կատա-րած ․ զորմէ տես 'ի ներած ․ գլ ․ Թ ։

Ի սաղմոսս ինչ մեր և 'ի վարդանայն դնի ․ * Ի վերայ գաղտնեան որդւոյ ‖ ․ և այս թէպէտ երևի վրիպակ լինել, բայց եղեալ ևս՝ թէ իցէ ուղիղ, հայի յայն՝ զոր ասացաք ․ ևս և հայի 'ի գաղտնիս երկրորդ գալս-տեան որդւոյն այ ։

Իսկ թէ զայս սաղմոս ասացեալ իցէ դաւթի յայլ ինչ առթէ, զր 'ի տանելոյ հանդիսիւ զտապանակն տն յեղմ, կամ հայելով 'ի յաղթութիւն ինչ մեծ, այն մասամբ նիւթապէս միայն ․ իսկ բանքն կարգեն 'ի յայտ առնել զներգործութիւն խորհրդոց մարդեղութեն ․ և 'ի ցուցանել զյաղթութիւնն զայն՝ զոր արար որդին այ ընդդէմ սատանայի և զօրաց նորա ։ Այս և մեք ըստ սրբոց հարց, և ըստ երևելի վիպագրաց՝ 'ի վր մարդեղութե ունիմք մեկ-նել զայս սաղմոս ըստ կիսոյն, և այն՝ 'ի դիմաց մարդ-կային բնութե ։ Նաև եթէ ոք կամիցի զայլ իմն արտա-

քեն մեկնութիւն եւ յուզել, կարէ ինքնին գտանել 'ի գրեալսն յընթացս մեկնութեան սորա :

Բացի բառ կիցսն , զի այս տողիս յերկուս բաժանի առ Եբրայեցիս . առաջինն՝ որ է իններորդ , աւարտի 'ի համարն 20 . ուր ասի * կացո տէր օրէնսդիր լ̃ա ‖ : Իսկ երկրորդն՝ որ առ Եբր″ է տասներորդ , սկսանի 'ի 21 համարոյն , ուր ասի * ընդէր տէր կացեր լ̃ա ‖ . որպէս զնի և 'ի տպագրեալ ա̃ծաշնչին օրինակս : Եւ զայսմանէ թէպէտ ունիմք խօսիլ 'ի հասանել մեր անդր 'ի համարն 21 . բայց աստ եւ յիշատակեցաք վասն այսորիկ՝ զի յայտ արասցուք , թէ վերնագիր այսր սաղմոսի հայի յառաջին մասն , և ոչ յերկրորդն . զի այն է մաղթանք ինչ՝ նեղեալ անձին կարդեալ յազատութիւն 'ի ձեռաց ամպարշտի :

## ԲԱՆ .

ա̃ . Գոհացայց զքէն տէր բոլորով սրտիւ իմով . պատմեցից զա̃մ սքանչելիս քո :

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ .

Գոհանալն է շնորհակալ լինել զումեքէ վ̃ն այնպիսի բարերարութե̃ , որով գո՛հ է ընդունող նորին . իբր զի լիացեալ է նովաւ : Աւստի և գոհանալն առաւել է քան զշնորհակալ լինելն . զի շնորհակալութիւն հայի յո՛ և իցէ բարերարութիւն . իսկ գոհութիւն հայի յայնպիսի բարերարութիւն , որ առաւել է , և այնչափ մեծ՝ մինչև՝ որպէս ասացի՝ շատանալ նովաւ ը̃ւնողի նորին՝ հայեցեալ 'ի նուաստութի̃ իւր և 'ի մեծութի̃ տուողին : Իսկ արդ՝ ք̃զի բարերարութի̃ն ա̃յ 'ի վ̃ր ա̃մ մարդոյ է մեծ յոյժ . իսկ բարերարութիւն խորհրդոյ մարդեղութեան է այնչափ մեծ՝ մինչև ա̃մ մարդոյ լինել նովաւ յերկնաւոր բարիս , և յանծայրն շնորհս , նմին իրի և մարգարէն 'ի բերանոյ ա̃մ մարդոյ գոհանայ զա̃յ վ̃ն այսպիսի մեծի բարերարութե̃ նր̃ , և ասէ :

Գոհացայց զքէն տէր բոլորով սրտիւ իմով . ա̃յ շնորհակալ եղէց զքէն տէր վասն այնչափ բարերարութեանց քոց . և մանաւանդ վ̃ն այնր մեծի բարերարութե̃ քո՝ որ առաւել

եղև քան զմն։ Որ յաւելլով զբաղդ տէր՝ զիւրն առաւելուլ զզօրութիւն բանին. ո՞չ թէ ասէր. զա՝ որ որդ էր ամենիշխան, ըստ խրատուց արդարութեան քո ոչ մերժեցեր զապստամբեալքս 'ի տէրութենէ քումմէ, այլ՝ կամելով գթութեամբ վարել զտէրութիւն քոյ 'ի վերայ մեր՝ ցուցեր մեզ զգութ քոյ. եկիր առ մեզ, և փրկեցեր զմեզ, և եղեր կրկին եւ տէր։

Նա քանզի յայսմ փրկութեան ոչ ըն խմբք եցոյց մեզ տէր զգութ իւր, այլ՝ ըստ բոլորին. զի ետ մեզ զինքն բոլոր, և էառ զմեզս բոլոր՝ բաց 'ի մեղաց, և եղև մեր բոլոր, և հասոյց վն մեր բոլոր, ամեն իրի և գոհութիւնն, որ վասն այսր ընծայի նմա, պարտի լինել բոլոր. յաղագս այսորիկ յաւելու ասել. " բոլորով սրտիւ իմով ". Ը ամ յօժարութեամբ հոգւոյ իմոյ։ Նա վն զի յայս խորհուրդ մարդեղութեան յայտնեցան բզմ սքանչելիք այ, վասն եւ խոստովան լինի, և ասէ։

**Պատմեցից զամ սքանչելիս քո։** Սքանչելիք ասին այն գործք, որք վն 'ի յայտ գալոյ անտեսանելի իրիք գերազանցութեն՝ որ 'ի նմ, ածեն զմարդն 'ի զարմացումն. և տեսեն եւ. զի թէ ոչ տեսցեն, ոչ ասին սքանչելիք, այլ միայն հրաշք. և եթէ կարգեսցին առ 'ի ցոյց հաստատութեն իրիք, կոչին նշանք. իսկ գործողութիւնքն՝ որով լինին սոքա, կոչին սքանչելագործութիք, հրաշագործութիք, և նշանագործութիք։ Նա արդ՝ թէպէտ ամ գործք այ են այսպիսի, զի յամի երևի գերազանցութիւն ինչ՝ որ անտեսանելի կարծի, բայց առաւել եւ այնորիկ որք եղեն 'ի մարդեղութեն բանին, եւ և յետ մարդեղութենն։ Ամեն իրի սքանչելիս կոչէ զնոսին. * Պատմեցից ասէ զամ սքանչելիս քո ‖. որպէս թէ ասէր, 'ի հաստատութի մեծի գոհութեն՝ յայտնեցից զամ սքանչելի գործս և խորհուրդս, զորս ցուցեր 'ի մարդեղութեան քում։

Նա ասա բառս զամ՝ յայտ առնէ նաև զայս, թէ ամ 'ի խորհուրդ մարդեղութեն իբր 'ի գերագոյն իր բովանդակեաց զամ սքանչելիս իւր. ըստ այնմ, զոր ասէ առաքեալն. Եփես. ա. 9. * Ցոյց մեզ զխորհուրդ
,, կամաց իւրոց ըստ հաճութեն իւրում, զոր յառաջագոյն
,, եդ նմա, 'ի տնտեսութեն լրման ժամանակաց, բո-
,, վանդակել զամ քսիւ, որ ինչ յերկինս, և որ ինչ

‥ յերկրի, ’ի նոյն ॥։

Արդ՝ մարգարէն ’ի խօսիլն զայսոսիկ թէպէտև իբր ներկայ, կամ իբր կատարեալ նկատէր զխնդ մարդեղութենն, բայց որում ’ի գլխոյ մարգարէին բանքն խօսէր, բայց քանզի կատարումն նորին իրք յապագայն էր, վասն յապառնին խօսի. գոհացայց ասէ զքեզ, և պատմեցից զամ սքանչելիս քո. և երբեմն եւս ’ի կատարեալն. Նա քանզի որ բովանդակ սրտիւ գոհանայ զամենայնէ, ցնծայ եւս՝ և ուրախ լինի ’ի նա. վասն յորէ զկնի և ասէ.

Բ. Սրտիւ եղէց և գոհացայց ’ի քեզ. պատմեցից զամենայն զսքանչելիս քո.

Ուրախ լինել կամ ուրախանալ և ցնծալ՝ այսպէս և բերկրիլ և զուարճանալ, և այլ այցին նման բառք, որպէս և առաւնելք ’ի գիրս, ’ի տեղի մխեանց ’ի գործ ածին, և ամքին սոքա նշանակեն ախորժական ինն և զուարթագին հանգիստ բաղձանաց ’ի բարին, որ իբր ժառանգեալ ըմբռնի. Իսկ թէ յորում իցէ զանազանութիւն սմ՝ ոչ գտանեմք ասանդեալ ուրեք. վասն զործարին է որոշել. Բայց քանզի ’ի բազմ տեղիս սփռեալ են սոքա ’ի գիրս, պատշաճ դատիմ ըստ այլեայլ բանի մտածելոյ՝ որոշումն ինչ տալ սոսա. Նա որոյ տեղեկութիւն պարտ է գիտել, զի ’ի մարդն է կրկին բաղձանք, բանական և զգայական. բանականն յորժամ ինքնին վարի յուրախանալն կամ ’ի սրտամբն, կամ յորժամ ըստ բանի ուրախանայ և սրտի, սա վարիլ ըստ վերին մասին. այլ յորժամ ըստ զգայականն զգածման վարի՝ սա վարիլ ըստ ստորին մասին. Իսկ զգայական բաղձանքն վարի միայն առաջնորդութեամբ զգայութեան. Ըստ այսպէս եղեալ՝ ասելի է թէ զանազանութիւն ուրախութեան, ցնծութեան, եւն, ըստ այլեայլ կարգի անսանի.

ա. Եթէ սակ ’ի կողմանէ բաղձանաց մտածեսցի, ուրախանալն երևի լինել ըստ վերին մասին. բերկրելն եւս ըստ նմին՝ բայց յաւաւելուլն. ցնծալն ըստ վերին մասին կապակցութեամբ ստորնոյն. խնդալն երևի լինել ըստ վերին և ըստ ստորին մասին. զուարթանալն ըստ զգայական բաղձանաց. զուարճանալն եւս ըստ նմին, բայց յաւա

ւելոյն , որպէս ասացաք զբերկրելոյն . իսկ հրճուելն է յորդել զուարճութեան . և խրախճանալն է զեղանիլ ուրախութե՟ 'ի զգայութիւնս ։

Ե . Ի կողմանէ առարկայի բաղձանացն մտածեալ , ուրախանալն հայի առ 'ի բարին . բերկրելն 'ի բարին՝ որ առաւել հաճոյական է կամաց . խնդալն 'ի բարին՝ որ հաւասար հաճոյ է կամաց և զգայական բաղձանաց . ցնծալն 'ի բարին՝ որ մեծ է յոյժ . զուարթանալն 'ի բարին՝ որ է օգտակար . զուարճանալն 'ի բարին՝ որ է յարմար ժմկին . իսկ հրճուելն է գործ ուրախանալոյ , և խրախճանալն գործ ցնծալոյ ։

Զ . Ի կողմանէ ըմբռնողական կարողութե՟ց հոգւոյն մտածեալ , ուրախանալն և բերկրելն հային 'ի բարին ըմբռնեալ բանիւ . ցնծալն և խնդալն հային 'ի բարին ըմբռնեալ բանիւ և երևակայութ՟բ . զուարթանալն և զուարճանալն հային 'ի բարին ըմբռնեալ երևակայութ՟բ հանդերձ կապակցութ՟բ բանին . իսկ հրճուելն և խրախճանալն հային 'ի բարին ըմբռնեալ զգայարանօք , որոյ 'ի զեղանելն 'ի մարմին՝ ասի հեշտանալ ։

Է . Ի կողմանէ ներգործութե՟ցն մտածեալ , ուրախանալն և բերկրելն է ներքին և իբր աննիւթ . վ՟յ և տիրապէս գտանի յաննիւթ էակս . խնդալն և ցնծալն է ներքին ընդ արտաքնոյն . զուարճանալն և զուարթանալն է արտաքին ընդ ներքնոյն . հրճուելն և խրախճանալն արտաքին ։

Ը . Ի կողմանէ կապակցութե՟ կամաց ընդ զգայական բաղձանաց մտածեալ , ուրախանալն կամաց կանխէ քան զուրախանալ զգայական բաղձանաց . բերկրելն 'ի միասին զարթնու . խնդալն հետևի . ցնծալն առաւելլով զհետ գայ . զուարթանալն յափշտակի 'ի նոյն . զուարճանալն 'ի նոյն յաւելու . հրճուելն զեղանի 'ի զգայարանս . և խրախճանալն բերի արտաքս ։

Թ . Ի կողմանէ ներհականացն մտածեալ , ուրախանալն հայի յազատութիւն 'ի տրտմութ՟է , և վերածի 'ի սփոփիլ . բերկրելն յազատութիւն 'ի սգոյ , և վերածի 'ի մխիթարիլ . խնդալն յազատութիւն 'ի ցաւոց . ցնծալն յազատութի՟ 'ի հոգոց . զուարճանալն յազատութիւն 'ի վտանգէ մեծէ . զուարթանալն յազատութիւն 'ի տա-

տամտութենէ. հրճուին յազատութիւն ՚ի կորստենէ. ուրախանան յազատութիւն յարտաքին թշուառութենէ, է. Ի կողմանէ առաւելութե՛ն և նուազութե՛ն մտածեալ, ուրախանալն ըստ ինքեան առեալ ոչ ցուցանէ զառաւելութիւն կամ զնուազութի, այլ միայն զկենդանական հանգիստ կամաց ՚ի բարին ժամանելոյ կամ ժամանցելի. բերկրելն ՚ի մէջ բերէ զառաւելութի, և է իբր պզպջումն ուրախութե. խնդալն է իբր տարածումն առաւելութեան բերկրելոյ. ցնծալն իբր բարձրացումն նորին. զուարթանալն իբր զգածումն նորա. զուարճանալն իբր խայտացումն. հրճուիլն իբր զեղումն, և ուրախանալն իբր հասումն.

Ո այսպիսի եղաք ասա՝ ոչ ՚ի ցուցանել՝ թէ յամենայնի այսպէս ՚ի գործ ածին սոքա, այլ թէ այսպէս կարեն զանազանիլ. և զի ըստ ասելոյ մեր այժմ այսպիսի բառք մինչ ուրախանալն և ցնծալն սփռեալ կան ՚ի գիրս, տատանօք հաւաքել կամեցաք զնա, զի թէ ոք կամիցի որոշումն ինչ ընթեռնել ՚ի սոսա, մարթասցի ողխմբք գտանել. որով մի ևս լիցի մեզ հարկ յամ տեղիս խօսիլ ինչ զորցանէ. մանաւանդ զուրախանալոյ և զցընծալոյ, զոր բազում ուրեք վարէ մարգարէն ՚ի սաղմոսս, որպէս և աստ, ուր ցուցանէ զանձն լցեալ սոքօք. որոց ՚ի սաստիկ զեղմանէ առիթ բարբառել և ասել.

Ուրախ եղէց և ցնծացայց ՚ի քեզ. Այսինքն լի եղէց այսուհետև ուրախութեամբ յամենաբարի փրկչէդ իմ. և յառաւելութէ ուրախութէ և ցնծութէ իմ օրհնեցից զքեզ. Ոչ ասէ՝ ուրախ եղէց ՚ի գործս քո կամ ՚ի բարերարութիւնս քո, այլ ՚ի քեզ. զի այս գործ, կամ այս բարերարութիւն՝ զի է խորհուրդ փրկութե՛ ոչ եղև ինն արտաքոյ աստուծոյ, այլ ՚ի նոյն ինքն յանձն որդւոյն իւրոյ. վասն և ՚ի նոյն ինքն ուրախ լինի և ցնծայ. Իսկ ավելն չբաւականացեալ՝ յաւելու ևս ասել.

Սաղմոս ասացից անուան քում Բարձրեալ. զի ՚ի ձեռն սաղմոսաց յայտնեցից զայս բարերարութի քո մեծ. և այնու փառաւորեցից զանուն քո. Իսկ բառս "բարձրեալ" յայտ է թէ ոչ ինչ կոչականապէս. զի է՝ ով բարձրեալ. որով ոչ նշանակի՝ թէ ած տեղականապէս իցէ բարձր, այլ թէ ՚ի վեր է քան զամ ինչ, և ՚ի զամ հա-

աղութի առեղծական մնաց և բանից ։ Այլ տես զա-
աստ զկարգ բանիցն ես, զի յառաջին համարն կո-
չեաց զնա՝ տէր . իսկ աստ կոչէ բարձրեալ . զի մինչ տէր
զնելով՝ կամեցաւ յայտ առնել, թէ ա̃ծ յառաջ քան
զկամիլն փրկել զմարդ՝ որպէս թէ թողեալ էր զնա, և ոչ
եւս տիրէր 'ի վ̃ր նորա . իսկ 'ի կամիլն փրկել՝ կամեցաւ
եւս տիրել, և լինել տէր նր̃ . և զայս խորհելով մար-
գարէին ոչ միայն գոհացաւ զնմէ իբրև զծնէ, այլև
սկսաւ ուրախ լինել, և ուրախութե̃ օրհնել զնա, և
'ի ձեռն սաղմոսացս յայտ առնել զայս բարերարութիւն
նորա ։ Բայց տեսեալ ես՝ թէ անհաս է նա և անճառ,
չգտեալ զայլ ինչ ասել՝ աղաղակեաց ասելով, ով
բարձրեալ ։ Եւ զի ոչ կարէր ըմբռնել զէութիւն նորա՝
զանուանն 'ի մէջ բերէր ասելով . սաղմոս ասացից ան-
ուան քում ։ Նկարագրեալ ապա այլ ևս ինչ յօդել 'ի
գոհութիւն և 'ի գովութի ա̃յ՝ սկիզբն առնէ պատմելոյ
զներգործութի խորհրդոյ մարդեղութե̃ն, մանաւանդ
զայն թէ զիարդ 'ի կատարել այնր կրկեան թշնամիք .
զիարդ եղև և արդար հատուցումն, եւ . վ̃յ ասէ ։

դ . Ի դառնալ յետս թշնամեաց իմոց, տկարասցին և կորի-
ցեն յերեսաց քոց ։

Յանկանիլ մարդոյ յերեսացն ա̃յ 'ի ձեռն սկզբնական
մեղաց՝ տիրեալ էր նմա սատանայ, և դեւք առհասա-
րակ ընդ նմա . ը̃ որս և մահ և ախտք և ապականութիւնք .
և չէր հնար ազատութի և հանգիստ գտանել . մինչև
եկն որդին ա̃յ, և եցոյց զինքն փրկիչ ազգի մարդ-
կան . յորմէ զահի հարեալ դիւաց և մահու՝ տկարա-
ցան 'ի տիրելոյ 'ի վերայ մարդկայինս բնութե̃ ։ Զայս
հայելով ասէ ։

Ի դառնալ յետս թշնամեաց իմոց՝ տկարասցին և կորիցեն յերե-
սաց քոց ։ Կամի ասել . 'ի ձեռն սքանչելի փրկագործութե̃
քո յետս դարձցին և հեռասցին յինէն թշնամիք իմ .
և 'ի դառնալն յետս՝ * տկարասցին և կորիցեն յերե-
,, սաց քոց ‖ . "տկարասցին" ասելով՝ կամի ցուցանել,
թէ ոչ եւս ունիցին կարողութիւն իշխելոյ՝ ո̃պ յառաջն,
այլ լքցին և անկցին ։ Իսկ "կորիցեն" ասելով՝ կամի
ցուցանել, թէ փոխանակ զայլս կորուսանելոյ՝ ինքեանք
կորիցեն, իբր զի 'ի նուաճիլ սատանայի՝ զօրք նորա ոչ

ես կարիցեն առնել ինչ , այլ տկարացցին և կոր-
ցեն , ոչ 'ի զօրութենէ մարդոյ , այլ՝ յերեսացն այ , որ 'ի
բարկութէ և 'ի վրէժխնդրութէ նր . Մահն ես դարձցի
յետս 'ի յառնելն նորա 'ի մեռելոց , և լիցի փախստական ,
մինչդ թէ մեռցի . Այս այն է՝ զոր ասաց տէրն մեր .
* այժմիկ դատաստան է աշխս , այժմիկ իշխան աշխս
" այսորիկ ընկեսցի արտաքս ‖ . յովհ . ժբ . 31 .
Ասիցէ ոք թերևս . եթէ այսպէս արար քո , ապա զի
ես իշխեն դևք 'ի վր մարդոյ , և զիարդ զայնչափ մար-
դիկ կորուսանեն 'ի դժոխս . Պիտեմ . քո զամ՝ զոր
արժան էր առնել՝ արար մարդոյ . և զոր 'ի վեր էր քան
զարժանն՝ ոչ պակասեցաւ 'ի տալոյ . իսկ թէ դևք իշ-
խեն ես 'ի վր մարդոյ և կորուսանեն , այն ոչ է 'ի պա-
կասութէ օգնութեն քոյ , այլ 'ի չարութէ և յանդգ-
նութենէ մարդոյ . որ զայնչափ բարիս առեալ 'ի
քէն՝ փոխանակ առ նա մերձենալոյ՝ հեռանայ 'ի նմանէ .
և վն դոյզն ինչ անցաւոր փառաց , կամ հեշտութե , և
կմ վն սիրոյ ընչից՝ վաճառէ զինքն թշնամեաց նր , զի
գիւաց . Իսկ թէ յիրաւի քո արար յիրմէ կողմանէ
զամ՝ զոր բաւական էր , և զոր արժան էր առնել , և
թէ յաղթեալ արարեալ զթշնամիս մեր՝ հալածական
արար զնոսա , վկայեն որք գիրք առ հասարակ . վկայէ և
սոյն այս մարգարէ 'ի հետևեալ բանսդ ասելով .

Զ . Սաստեցեր հեթանոսաց եւ կորեան ամբարիշտք . անուն նոցա յա-
ւիտեան՝ ջնջեցեր յաւիտենից .

Մարդն , որ ստեղծաւ 'ի ծառայել այ՝ և 'ի ժառան-
գել զնա , անարգեաց զնա . և անկեալ յերեսաց նորա
գերեցաւ 'ի սատանայէ . Այս անարգանք մեծ եղև յոյժ
մինչև փակել յինքեան զանհնութի ինչ բարոյապէս .
և սորա պատճառն է՝ զի անարգանքն այնչափ մեծ հա-
մարի , որչափ մեծ է անարգեալն՝ և որչափ փոքր ա-
նարգօղն . և զի ած է յանսահմանս մեծ , և մարդն
փոքր յոյժ , այն անարգանք զոր եա մարդն , բարոյա-
պէս համարեալ եղև անհուն և անսահման . ուստի
և մարդն այնու գտաւ պարտական անհուն պարտուց ,
որ պարտական վճարելոյ այ զայնպիսի ինչ , որ արժի-
ցէ անհուն՝ առ 'ի հատուցանե առնել անհուն անար-
գանացն , և ազատիլ ես 'ի գերութե սատանայի .

և զի մարդն գոլով չափաւոր էակ՝ ոչ էր կարօղ անհուն ինչ վճարել ա՟յ, մինչ մնայր պարտական ա՟յ, և միշտ գերի սատանայի ։

Այլ տեսեալ ա՟յ զմարդն զպատկեր իւր յայսպիսի չարաչար թշուառութե՟, և յայսպիսի անտանելի գերութե՟՝ զրեթէ ողբայր 'ի վ՟ե նորա, և ո՟չ թէ 'ի տարակուսի կայր թէ զինչ արասցէ ։ Եկաց առաջի ողորմութիւն նորա, և ստիպէր՝ այց առնել կորուսելոյն և փրկել։ Իսկ սակայն արդարութիւն նորա կամէր, զի որ անարգեալն՝ նոյնն հատուսցէ, ա՟յն է մարդս ։ Ամենաբաւ կարողութիւն նորա ևս կամէր այնպէս փրկել ըզմարդն 'ի ձեռաց սատանայի, զի մի կարասցէ ասել նա, թէ ոչ ապաքէն անսահման է կարողութիւնն ա՟յ, զինչ քաջութիւն համարեսցի նմա՝ եթէ յաղթեսցէ ինձ, և առցէ զմարդն 'ի ձեռաց իմոց ։ Իսկ զի դիտէր ևս սատանայ, թէ մարդն ինքնին ոչ կարէր առնել զհատուցումն, վ՟ն որոյ իսպառ բռնացեալ կայր 'ի վ՟ե նորա. և յոր մեղս և կամէր՝ ծառայեցուցանէր զնա. և էր իբր յանհոգս վասն նորա ։

Այլ իմաստութիւնն ա՟յ՝ ա՟յն որդին միածին՝ եգիտ զայնպիսի գաղտնի հնարս՝ որում այն ոչ ունէր սատանայ. իբր զի զգեցաւ զկերպարանս մարդոյ, և եղև մարդ, և հատոյց զպարտս մարդոյ. և այնու ունայնացոյց զտէրութիւնն սատանայի. և եցոյց նմա, թէ խաբէութ՟բ ստացեալ է զմարդն իւր ծառայ, և անիրաւութ՟բ իշխէ 'ի վ՟ե ն՟ր ։ Իսկ զայս ցուցեալ նմա՝ իբրև թէ էառ 'ի ձեռաց ն՟ր զթուղթ գերութե՟ մարդոյն, և պատառեաց զայն. և ամօթալից՝ խայտառակ դարձուցեալ զնա յետս՝ ազատեաց զմարդն 'ի ձեռաց նորա ։

Իսկ ահա յայտնիկ հայելով ասէ ։

**ԱՐԱՐԵՐ ԶԴԱՏԱՍՏԱՆՍ ԻՄ և ԶԻՐԱՒՈՒՆՍ ։** ա՟յն է՝ 'ի կարծել սատանայի՝ թէ իրաւամբք տիրէ 'ի վերայ իմ, և թէ կարէ համարձակիլ ևս ելանել 'ի դատաստան առաջի քո, և ցուցանել՝ թէ ինքն իրաւամբք ստացեալ է զիս ինքեան ծառայ, դու տեսեալ զանիրաւութիւն նորա՝ արարեր զդատաստանս իմ. ա՟յն է՝ յայտնի ցուցեր նմա՝ թէ խաբեբայութ՟բ ստացեալ է նա 'ի վերայ իմ զայն տէրութի ։ Իսկ զայս ևս ոչ արարեր մերկ ա՟ծութ՟բ քով, այլ մարդանալով և իբրև մարդ հատուցանելով.

մինչև ոչ ևս կարել սատանայի առնել. հզօր էր, բռնացաւ 'ի վերայ իմ, և բռնութիւն էառ յինէն զմարդն. և կամ թէ արար ընդդէմ իրաւանց, ոչ. այլ զարմանալ, և բռնադատելով առնել թէ իրաւամբք արար: Եւ յայս իսկ յաւելու զկնի զբառդ՝ "զիրաւունս". եթէ զի իրաւունք էր, զի Աստուած իշխեսցէ 'ի վերայ մարդոյ՝ քան թէ սատանայ. և ևս իրաւունք էր՝ զի գթասցի Աստուած 'ի վերայ այնր՝ զոր արար 'ի պատկեր իւր. զի թէպէտև նա անարգեաց զԱստուած, բայց դրդեալ 'ի չարութենէ սատանայի և պատրեալ 'ի նմանէ: Աստի և արժան էր՝ ըստ ասելոյ Լամբր. զպատրօղն խայտառակել և մերժել, և ըզպատրեալն ազատել: Իսկ թէ ուր նստեալ որդւոյն Աստուծոյ՝ արար զայս դատաստան, յայտ առնէ յաջորդ բանին՝ ասելով:

**Նստար յաթոռ դատաւոր արդարութեան:** Այս գրէ Գէորգ վրդպ 'ի մեկն. եսայ. գլ. Ե. *Նստեալ յաթոռ՝ զատենի իւր օրէնս յայտնէ ըստ դաւթայ՝ թէ նստար յաթոռ դատաւոր արդար ||: Այս աթոռ ըստ ձայնին առեալ՝ փոխաբերութիւն իւր նշանակէ զաթոռ արդարութեանն Աստուծոյ, կամ զարդարութիւն նորա. յորում արար և առնէ իրաւունս: Իսկ ըստ խորհրդոյն այսու աթոռով նշանակի խաչն բարձրացեալ 'ի գողգոթա. զի անդ բազմեցաւ Քրիստոս իբրև դատաւոր արդարութեան. և անդ դատեաց զսատանայ. անդ եցոյց նմա զխաբէութիւն նորա, և անդ յամօթ արար զնա. անդ ազատեաց ըզմարդն 'ի դատապարտութենէ նորա. և անդ հատոյց հօր վասն մարդոյ. *անդ 'ի գլուխ եհան զյաղթութիւն մարմնաւորացս (ասէ լամբ), և զթշնամեացն կորացոյց ըզպանծանս ||. և անդ կատարեաց զամենայն:

Եւ ահա այս եղև գաղտնիք որդւոյն Աստուծոյ՝ ըստ վերնագրի սաղմոսիս: Զի մինչև ցայնվայր գաղտնի էր 'ի սատանայէ, թէ նա յայն նախատական աթոռ բազմեալ՝ կարասցէ դատաստան առնել 'ի վերայ իւր, և ազատել զմարդն 'ի ձեռաց իւրոց: Եւ մարդիկ իսկ տեսանելով զնա այնպէս անարգեալ, և իբր մահապարտ 'ի մէջ աւազակաց խաչեալ և մեռեալ, ոչ կարծէին՝ թէ նա այնու իցէ փրկելոց զմարդն: Բայց նա յայս և 'ի սոյն աթոռ 'ի մեռանիլն՝ մեռոյց զզօրութիւն սատանայի, և զմեռեալն կենդանացոյց, և շնորհեաց զյան-

ցանս նորա . և վճարեալ զպարտս նորին՝ զերծոյց զնա 'ի ձեռաց ոսոխի նորա , և խայտառակեաց զնա . ըստ օրում գրէ առաքեալն . կողոս . բ . 13 . մինչ 'ի 16 .
* Եւ զձեզ ( ասէ ) , որ երբեմն մեռեալն էիք 'ի
„ մեղս , . . . կենդանացոյց յանձին իւրում . շնոր-
„ հեաց մեզ զամ յանցանս մեր . և ջնջեաց զձեռա-
„ գիր մերոյ հակառակութեան հրամանօք իւրովք . որ
„ կայր մեզ հակառակ՝ եբարձ զայն 'ի միջոյ , և բևե-
„ ռեաց զնա ընդ խաչափայտին . մերկեաց զիշխանու-
„ թիւնս և զպետութիւնս ( չր զգևս ) . յայտ յանդիման
„ խայտառակեաց նշաւակեալ զնոսա յանձին իւրում 'ի
„ յաղթութեան իւրում» : Օ այս դատաստան վճարեալ տեառն մերոյ՝ ապա սկսաւ մաքրել զմս յանօրէն կապաշտութեանց և 'ի նենգութեց սատանայի : Եւ զայսոսիկ յայտ առնէ մարգարէն 'ի յետագայս :

Ամենք զայս բան վերածեն 'ի վերջին դատաստանն . յորում նստելոց է քս յաթոռ լուսեղէն 'ի դատել զամ . յայս կարծիս է և ծործորեցին 'ի մեկն . մատ . գլ . իե . զայսմանէ տես 'ի սաղ . խթ . 5 : Տեսցուք այժմ՝ զոր ասէ մարգարէն 'ի յաջորդսդ :

է . Սաստեսցէ 'ի հեթանոսս , և խօսեսցէ ամպարիշտն . զան-
ռանս նոցա ջնջեսցէ յաւիտեանս յաւիտենից . և
թշնամեայն չէն պաշարեսցի մինչև խաղաղ :

ը . Օժողովս աւերեսցէ . և խօսեսցէ յիշատակ նոցա աղա-
ղակա :

Երկոքս յայտ առնէ մարգարէն զգործս՝ որք հետևեցան մարդեղութեան բանին . նախ ասէ :

Սաստեսցէ 'ի հեթանոսս : Սաստելն է իշխողութ և բարկութ իմն հրամայել ումեք , զի դադարեսցի 'ի խօսելոյ կամ 'ի գործելոյ ինչ՝ ընդ որ ոչ հաճի սաստօղն : Արդ՝ այսպէս արար քս հեթանոսաց յետ յարութեան իւրում 'ի ձեռն առաքելոց և աշակերտաց իւրոց . իբր զի ետ նոցա իշխանութի քարոզել հեթանոսաց զաւետարան իւր , և մեծամեծ սքանչելագործութ և ամօրէն իշխողութ հրամայել նց դադարել 'ի պաշտելոյ զչամս : Եւ քզի 'ի սաստն՝ որպէս եղաք , գոյ և բարկութիւն , զայն եղանակ ես 'ի գործ ածին առաքեալքն

ոչ այնչափ յանձինս հեթանոսաց, որչափ 'ի գործս և 'ի պաշտամունս նոցին ։ Իսկ զայս արարին զօրութք հոգւոյն սրբոյ, յանդիմանելով զաշխարհս վասն այլևայլ իրաց · մանաւանդ վասն երից, որ է * վասն մեղաց, վասն արդարու- „ թեան, և վասն դատաստանի ‖ · որպէս ասաց Քրիստոս յովհ · ժզ · 8 ·

Վասն մեղաց, զի 'ի մեղս անհաւատութեան և կռապաշտութեան կապեալ էր աշխ · և սատանայ պատրուակաւ աստուածպաշտութեան ծածկէր զայն · իսկ առաքեալքն զօրացեալք 'ի հոգւոյն սրբոյ՝ յանդիմանեցին զնոյն, և ցուցին նոցա՝ թէ քանի չար է պաշտել զկուռս, և հաւատալ 'ի նոսա, և ոչ 'ի Քրիստոս ։ Իսկ յայս իսկ՝ յաւել Քրիստոս ասել · * վասն մեղաց, զի ոչ հաւատան յիս ‖ ։

Վասն արդարութեան, զի աշխ աղաւաղեալ էր զարդարութիւնն, և կարծէր արդարանալ առանց Քրիստոսի · իսկ առաքեալքն ցուցին, թէ չէ հնար ումեք արդարանալ, բայց եթէ այնու՝ որ մեռաւ վասն մարդկան, և գնաց առ հայր բարեխօս լինել վասն արդարանալոյ նոցա ։ Ուստի յաւել Քրիստոս ասել, * վասն արդարութեան զի առ հայր իմ երթամ ‖ ։

Վասն դատաստանի, զի թէպէտև Քրիստոս արար զդատաստան, և դատապարտեաց զսատանայ, բայց մարդիկ դեռևս պաշտէին զնա 'ի կուռսն ։ Իսկ առաքեալքն յայտնի ցուցին նոցա, թէ նա դատապարտեցաւ և կորեաւ ։ Յաղագս այսորիկ յաւել Քրիստոս ասել, * վասն դա- „ տաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ „ է ‖ ։ և թէ յիրաւի այնպէս էր, ճշմարտեամբ իսկ առաքեալքն յանունն Քրիստոսի անաշխատ հալածէին զնա 'ի միջոյ հեթանոսաց և 'ի կռոց նոցա ։ Այնմ իրի յարէ մարգարէն զկնի, և ասէ ։

Եւ կորեաւ ամպարիշտն ։ որ հալածեցաւ և կորեաւ սատանայ հանդերձ զօրօք իւրովք · և այս օրինակեցաւ 'ի փարաւոն և 'ի զօրս նորա ։ Իսկ ըստ բառս "ամպարիշտ" կարէ նշանակել և զամպարշտութիւն · ըստ որում սովորութիւն է սուրբ գրոց զթանձրացեալ անուանս վարել փոխ վերացելոց · որպէս փոխ դնելոյ՝ զանօրէնութիւն, դնել զանօրէն · փոխ դնելոյ՝ զարդարութիւն, դնել զարդար, եւն ։ Իսկ ըստ այսմ առմանն՝ բառիս ամպարիշտ՝ նշանակի աստ այն ամբարշտութիւն հեթանոսաց,

որով պաշտէին նոքա զկուռս . արդ այս ամպարշտութիւն նոցա քարոզութիւն առաքելոց և առաքելաշնորհ անձանց կործեալ յԱստուծոյ ըստ բազում մասանց . մինչև ջնջիլ 'ի նոսա և անուանց կռոցն և կռապաշտից . նմին իրի 'ի սոյն յա-րեալ՝ ասէ .

Զանուանս նոցա ջնջեցեր յաւիտեան յաւիտենից : Քանզի ոչ միայն կործաներ յԱստուծոյ զկռապաշտութիւն , և զհեղինակ նորա զսատանայ , այլև զանուանս կռոց և կռապաշտիցն իսկ բարձեր յԱստուծոյ . և այս՝ յաւիտեանս յաւիտենից . քանզի ոչ և ջնջեցեր զանուանս նոցա՝ այնպէս մնացէ միշտ ջնջեալ . և այս օրինակեցաւ 'ի քանանացիս . զորս ջնջեցին իսրայէլացիք 'ի պաղեստինոյ , և զանուն նոցա ժառան-գեցին : Եւ զի 'ի ջնջիլ քանանացւոց յԱստուծոյն պաղեստի-նու՝ ուրեք ուրեք անզամոր մնացին նոքա և անուանք նոցա , ոչ զի նոքա իշխէին՝ այլ զի իշխեալ լինէին , սոյնպէս և թէպէտև քրիստոս ընդհանրապէս ջնջեաց յԱստուծոյ զանուանս կռոց և կռապաշտից , բայց ուրեք ուրեք ևս գտան և գտանին նոքին , որպէս 'ի հնդիկս , 'ի թաթարս , ևլն . ոչ իբր իշխօղք , այլ իբր իշխեալք . իբր զի ոչ յառաջին իշխէր կռապաշտութիւն , այժմ այնպէս իշխի , մինչև մանուկ մի ևս կարէ յանուն յիսուսի կործանել զկուռս : Իսկ թէ մարդիկ վասն պաշտելոյ զախտս իւրեանց պաշտեն զնոսա , այն է յիւրեանց յիմարութենէ , և յաւէտ ևս յանզգամութենէ . որպէս ասացաք 'ի վերոյ . զի Աստուած յիւրմէ կողմանէ ջնջեաց զնոսին . և եցոյց ևս ամենեցուն՝ թէ յիրաւի ջնջեալ է զնոսա , և և կապեալ է զսկզբնա-պատճառն այնց չարեաց զսատանայ , և յաւարի է ա-ռեալ զզօրութիւն նորա : Եւ ահա զայս ևս յայտ առնէ մարգարէն յաջորդ բանիւդ , և ասէ :

Եւ թշնամւոյն զէն պակասեաց մինչև իսպառ : Գլխաւոր զէնն սատանայի էր նորա բռնութիւն , որով գերի վարէր զմարդիկ , և տանէր 'ի դժոխս , և և 'ի լիմբոս՝ որ ասի ևս դժոխք . իսկ մասնաւոր զէն նորա էր հնարք նո-րին , և ըստ լամբ'' , տգիտութեան խաւարն . որով արկա-նէր զմարդիկ յմ՟ և իցէ մեղս , մանաւանդ 'ի մեղս կռապաշտութեան : Արդ՝ գլխաւոր զէն նորա 'ի գալն Քրիստոսի պակասեցաւ իսպառ , և ամենևին բարձաւ . իբր զի ոչ ևս կարէ նա բռնութեամբ ածել զմարդիկ զկնքեալսն անուամբն Քրիստոսի 'ի դժոխս , և կամ ևս 'ի լիմբոսն : Իսկ

մանաւանդ որ զէն նոցա՝ այ խաբէական հնարք նոցին տկա-րացան և պակասեցան, յորժամ նա ինքն 'ի քէն յաղ-թեցաւ, մինչ յերիս փորձութիւնս. (մատ. դ. 3.) և տգիտութեն խաւարն ես՝ որով կուրացուցեալ էր զհեթանոսս, լուսովն քո փարատեցաւ. և այսու եհաս սատանայ 'ի վերջին անարգութիւն և 'ի թշուա-ռութիւն.

ԱՅԼ ԶԻ՝ որ ժամանէ 'ի մեծ թշուառութի, տիրէ նմա և դառնութիւն, որով և յանհատատ իմն կատաղածի վախի ընդդէմ թշնամեաց իւրոց, այնպէս և սատանայ 'ի վերջին թշուառութի հասեալ՝ ըմբռնեցաւ և ըմբռ-նեալ է 'ի դառնութի. և կատաղութբ արձակէ 'ի մի ազգի մարդկան զնետս իւր՝ հարկանել զնոսա. Այլ այ-սքիկ նետք նորա թէպէտև են ամենաչար՝ մխեալ 'ի դառնութիւն սրտի նր, բայց տկար եւս են, և ոչ ինչ կարեն վնասել նոցա, որք զինեալ են քեւ, և պարա-փակեալ վահանաւ հաւատոյ նորա. Յայս հային այն բանք առաքելոյն՝ զոր ասէ. * Այլ 'ի վերայ ամի առէք „ զվահանն հաւատոյ, որով կարող լինիջիք զամենայն „ նետս մուխս չարին (սատանայի) շիջուցանել ‖. եփես. Զ. 16. և թէ՝ * զզեցարուք զսպառազինու-թիւնն այ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սա-տանայի ‖. եփես. Զ. 11. և 13. Յարմարական մեկ-նութեանք, զէնք սատանայի եղեն հալածիչքն եկեղեց-ւոյ, եթէ հեթանոսք և եթէ հրէայք, եթէ հերձ-ուածողք և եթէ կախարդք. որք տկարացան 'ի զօ-րութենէն քո. Այլ քանզի 'ի տկարանալ զինուց սա-տանայի, պակասեցաւ և տեղի նորա առ 'ի գործելոյ զչարիս, սմին իրի յաւելու մարգարէն ասել.

ԶՔԱՂԱՔՍ ԱՒԵՐԵՑԵՐ, ԵՒ ԿՈՐԵԱՒ ՅԻՇԱՏԱԿ ՆՈՑԱ ԱՂԱՂԱ-ԿԱՒ. Յայտ է ամենայն, թէ յաշխարհ ամ յամ քաղաքս և 'ի տեղիս տիրապետեալ էր իշխանութիւն սատանայի. և յամ տեղիս պաշտօն մատուցանէին նմա մարդիկ՝ պաշտելով զկուռս. բայց յայտ է եւ՝ թէ քս եկեալ յծ՝ աւերեաց զքաղաքս նորա, և զքաղաքս պաշտա-մանց նորին. զի եհան զնոսա յիշխանուէ նր, և ջնջեաց 'ի նոցանէ զկուռս և զպաշտամունս նոցին. կամ որ նոյն է՝ մերժեաց զնոսա 'ի կռապաշտութէ. Այլ այս է այն, զոր ասէ տէրն մեր յաւետարանի. * Յորժամ

„ Հզօր վառեալ պահիցէ զտուն իւր , 'ի խաղաղութեան են
„ ինչք նր · բայց եթէ հզօրագոյն ք զնա 'ի վր եկեալ
„ յաղթեսցէ նմա , զսպառազինութիւն հանէ՝ յոր յու-
„ սացեալ էր , և զաւար նորա բաշխեսցէ ‖ · ղուկ · ժա ·
21 և 22 ։ Իբր զի՝ յորժամ սատանայ զինու իւրով պահէր զծս , 'ի խաղաղութեան էին կռապաշտութիւնք և ախտք , որովք 'ի ձեռին ունէր զմարդիկ · բայց իբրև եկն ամենահզօր փրկիչն , յաղթեալ նմա՝ էառ զզէն նորա՝ յոր վստահացեալ էր նա · և մերկացոյց զնա յամէ · և էառ զքաղաքս նորա , և եբարձ զինչս նորա՝ այսինքն զկռապաշտութիւնս 'ի քաղաքաց նորա · մինչև ցնջիլ և յիշատակի նոցին · և առ այս յարէ և ասէ ։

Կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ ։ Զի թէ՝ յիշատակ այնոցիկ քաղաքաց , ևս և յիշատակ կռոցն՝ ոչ ևս մնաց · զի որք յառաջն էին քաղաքք սատանայի , այժմ ոչ ևս են քաղաքք նորա , այլ՝ քաղաքք այ · և յորս յառաջն կուռք պաշտէին , այժմ ոչ գոյ յիշատակ նոցա · զի այս նոցա յիշատակ ասէ "աղաղակաւ կորեաւ · վասն զի յաղաղակել սատանայի առ մարդիկ պաշտել զկուռս , և յաղաղակել առաքելոց անարգել զնոյն , յայս աղաղակ կորեաւ յիշատակ կռապաշտութեան ։ Իսկ աղաղակ սատանայի եղև յայսմ , զի տեսեալ՝ թէ մերկացաւ յիշխանութենէ իւրմէ , պէսպէս հնարիւք սկսաւ հրապուրել և յորդորել զծս մր , և շարժել զթագաւորս՝ զի ջնջեսցեն մր զօրութեամբ իւրեանց՝ հաստատուն պահել զկռապաշտութիւնս , և հալածել զհաւատոն քի · բայց որչափ առաւել շարժեցան սոքա յաղաղակէ սատանայի , այնչափ առաւել նկուն եղեն յաղաղակէ առաքելոց և հետևողաց նոցա · և այնչափ առաւել կործանեցան կռապաշտութիւնք · և 'ի կատարել շարժման և ձայնի հալածմանցն՝ կորեաւ և յիշատակ կռապաշտութեանցն և կռոց ։

Այլ արժան է քննել , զի ոչ ասէ բարձաւ , այլ կորեաւ · զի թէպէտ և մնաց բզմ ուրեք յիշատակ կռապաշտութեան , բայց այն ևս 'ի կողմանէ իւրմէ կորստական ցուցաւ ։ Ո ի աւանիկ այն երևելի կուռք , որպէս՝ արտեմիս , զևս , եռ , որք յառաջն ածք անուանէին , յետոյ բարձրաձայն աղաղակաւ առաքելոց և աւե-

տարմնչայ ցուցան, թէ ոչ են աստուած, այլ՝ չնչինք և կուռք. և յիշատակ նոցա այսպիսի աղաղակաւ կորեաւ։ Այնպէս ևս և այն երևելի քաղաքք, որպէս՝ Հռովմ, Եգիպտոս, և այլն, որք յառաջն քաղաքք կռապաշտից անուանէին, յետոյ ձայնեցան՝ ոչ ևս լինել այնպիսի, այլ՝ քաղաք աստուածպաշտից։ Նոյն այս ձայն իբր աղաղակ լսելի եղև յծ ամ։ Իսկ թէ զկնի վերստին յարեցան մարդիկ 'ի կռապաշտութիւն 'ի բազում տեղիս, այն եղև 'ի չարութենէ նոցա։

Լամբրոնացին բարոյապէս առեալ՝ քաղաքօք իմանայ աստ զմարդիկ, ևս և զներգործութիւնս կարողութեց նոցա, յորս իշխէին դևք. և զայսոսիկ դատարկացոյց քս յիշխանութենէ դիւաց. զի որք յառաջ մեհեան դիւաց առնէին զանձինս, յետոյ տաճար այ կազմեցին. որով և յիշատակ մեհենականութե նոցա կորեաւ, և այս, աղաղակաւ, այսինքն մարտնչելով ընդդէմ մարմնական յօժարութեց։

Այսոքիկ բանք ըստ ձևոյն կարեն հայիլ յայն ամ՝ զոր արար ած ընդ զանազան ազգս, կորուսանելով զնս կործանմամբք, կայծակամբք, տեղացմամբք հրոյ, ևն. որպէս արար և ը քանանացիս ձեռամբ իէլացւոց, ևս և ընդ այլ թշնամիս ձեռամբ դաւթի։ Սաստեաց 'ի նոսա և կորոյս զամպարիշտս 'ի նմէ. ջնջեաց զանուանս նոցա և աւերեաց զքաղաքս նոցին. և յաղաղակել նոցա, ոչ յաղմկիլ և յընդդէմ դառնալ՝ կորեաւ այսպիսի աղաղակաւ յիշատակ նոցա։

Աղաղակաւ աստն կարէ նշանակել սաստ և զսաստկութի կործանման և կորստեան նց վս յայտնի չարեաց նոցին։ Ուստի գրէ սուրբն Շնորհալի 'ի մեկն. ա. պետ. Է. Գ. ձառ. ժբ. թէ * այս սովորութիւն է „ ածայլն գրոց՝ զյայտնի և զանսաստ չարիս մարդ-„ կան (և զկորուստ նոցա) աղաղակ անուանել. աղա-„ ղակ ասէր ած՝ սոդոմացւոցն և գոմորացւոց յանձա-„ խեցին. . . նոյնգունակ և մարգարէն 'ի սաղմո-„ սարանի անդ զկորնչիլ անօրէնութեան քաղաքին ա-„ ղաղակ անուանէ ‖։

Յարմարական իմն մեկնութի, այնոքիկ մեծատունք և անուանի մարդիկ, որք իբրև բարձրաշէն քաղաքք փառաւոր երևէին, 'ի հասանել մահու՝ աւերեալ եղ-

ծան. և յիշատակ նոցա կորեաւ աղաղակաւ. իբր զի 'ի յիշատակիլ կմ̄ 'ի հռչակիլ նոցա աղաղակաւ՝ այսինքն գովասանական բանիւ՝ թէ այսպիսիք իցեն և այնպիսիք, յիշատակ նոցա կորեաւ այսպիսի գովասանութե: Ըստ սոցին սակի է և յիշատակ այնոցիկ՝ որոց 'ի մեռանիլն՝ հռչակին, թէ այս ինչ ոք իցեն. և 'ի հռչակիլն այսպէս՝ իջանեն 'ի դժոխս. և յայնժամ կատարի առ նոսա բանն այն՝ թէ * հռչակին ուր ոչ են, և չարչարին յորում են ||: Այլ մեք հայեսցուք 'ի կարգ բանիս. ուր յետ առաջի առնելոյ մարգարէին զտկարանալ սատանայի, և զկորնչիլ իշխանութեան նորա 'ի զօրութենէն ա̄յ, յայտ առնէ այժմ զմնայութիւն գոլոյ մշտնջենաւորութեանն ա̄յ, և ասէ:

Է. Ա̄ծ կայ՝ և մնայ յաւիտեան. պատրաստ արար զաթոռ իւր 'ի դատաստանի:

Ը. Նա դատի զաշխարհս արդարութբ̄, և զժողովուրդս իւր ուղղութեամբ:

Արդ կալ և մնալ յորժամ 'ի միասին դնին՝ 'ի մէջ բերեն զանշարժութի կամ զանփոփոխութի ինչ. իսկ անփոփոխութին ը̄ ա̄ծի արձականս առեալ հիմնէ զյաւիտենականութիւն. ուստի որ կայ և մնայ անփոփոխ յինքեան ըստ գոլոյ և ըստ գործելոյ, յաւիտենական ասի. վ̄ոյ և մարգարէն առ 'ի ցուցանել զյաւիտենականութիւնն ա̄յ՝ յետ առաջի դնելոյ զկալ և զմնալ նր̄՝ 'ի մէջ բերէ և "զյաւիտեանն" ասելով:

Ա̄ծ կայ՝ և մնայ յաւիտեան: Բառդ յաւիտեան՝ դնի աստ իբր մակբայ և իբր հետևողի բայից * կայ և մնայ ||. որով որպէս ասացաք 'ի մէջ բերի յաւիտենականութին ա̄յ. իբր զի որովհետև ա̄ծ կայ և մնայ 'ի նոյնութեան, այնու իսկ է յաւիտենական:

Սարգան զկալ մնալն վերածէ յա̄ծպաշտութի և ասէ. * ա̄ծպաշտութի կայ և մնայ յաւիտեանս յաւիտենից ||: Պարձեալ զմնալն առնու 'ի տեղի սպասելոյ ասելով. * ա̄ծ կայ միշտ. այլ մնայ աւուրն դատաստանի, որ յաւիտեան է ||:

Այլ գիտելի է, զի որովհետև կարգ բանից սաղմոսիս հայի առ մարդացեալն ա̄ծ՝ յ̄ս առ ք̄ս, սովին դի-

ան՝ մարգարէն յայտ առնել , թէ ած մարդանալով՝ ոչ եղև այնպիսի՝ զի փոփոխութեամբ անցանիցէ , այլ

կայ և մնայ յաւիտեան ։

Իսկ այս կալ և մնալս յաւիտեան՝ հնգապատիկ մի- տածի ՚ի քն · մի՝ պարզ բառ գոլոյն · իբր զի կայր և կայ նա յնքեան յաւիտեանս յաւիտենից · Երկրորդ բառ ան- պայալելի մնալոյն · իբր զի որպէս է այժմ ած և մարդ ճշմարիտ , նոյնպէս մնասցէ յաւիտեանս ած և մարդ ճշմարիտ · և ոչ եղիցի ժամ ինչ՝ զի թողեալ զմարդ- կութիւն՝ մնասցէ միայն ած · ըս այնմ, Յիսուս քս երէկ և այ- „ սօր , նոյն և յաւիտեանս ‖ · եբր · Ժգ · 8 ։ Երրորդ՝ բառ խնամելոյ զեկեղեցի իւր · իբր զի որպէս ՚ի սկզբան ՚ի մարդանալն արար զնա իւր անդամ և հարսն , նոյնպէս ունի և նոյնպիսի ունիցի զնոյն միշտ և յաւիտեան · և իբրև իւր անդամ խնամեսցէ , դարմանեսցէ , և պաշտպանեսցէ , եւ ։ Չորրորդ՝ ըս յիշատակելոյ անուան նր · իբր զի միշտ և յաւիտեան յիշեսցի յծ ամ անուն նորա · և յամենայն ատեանս զօրեսցէ և աղդեսցէ , և յամենեցունց երկրպագեալ պաշտեսցի յաւիտեանս յաւի- տենից ։ Հինգերորդ՝ ըս իշխանութե նորա · իբր զի այն իշխանութիւն՝ որ տուաւ նմա ՚ի հօրէ ըս որում մարդ , մնասցէ յաւիտեան , և նովաւ իշխեսցէ ՚ի վերայ ամի՝ որ ինչ յերկինս և որինչ յերկրի · որով և հանդերձեալ է դատաստան առնել ամց ։ Սմին իրի յարէ զկնի ,

և ասէ ։

Պատրաստ արար զաթոռ իւր ՚ի դատաստանի ։ ըս յետ այնր մեծի յաղթութե՝ որով վանեաց քն զմահ , և էառ ՚ի ձեռաց նորա զազգս մարդկան՝ * պատրաստ արար զա- թոռ իւր ‖ · ըս հաստատեաց զդատաւորական ատեան իւր * ՚ի դատաստանի ‖ · ըս ՚ի դատել , կամ առ ՚ի դա- տաստան առնել ։ Իսկ այս նոյն է՝ թէ ասէր · կարգեալ և հաստատեալ է զդատաստան իւր , զի դատեսցէ զամ ։ Բայց որպէս զի մի կարծեսցեն մարդիկ՝ թէ ՚ի հանդերձեալն միայն լինելոց իցէ այն դատաստան , ոչ ասէ՝ պատրաստ արար զաթոռ դատաստանի , այլ ՚ի դատաստանի · որով յայտ առնէ՝ թէ կայ ՚ի դա- տաստանի , և թէ դատէ իսկ ։ Զայս ասաց սբն յա- ւիկ ցօհան ՚ի յանդիմանելն զնա · զիտաձիր զի պատկեր * հօգւոյդ քո կայ և մնայ յաւիտենական ,

,, պատրաստեալ ( էր ) զաթոռ իւր 'ի դատաստան ,
,, առ 'ի մշտնջենաւոր դատել զայնպիսիսն ||. Եղնկա-
ցի 'ի գով. լուս. երես. 323 ։ Եւ զի այս դատաստան
հայի և 'ի բոլոր Այ, վ՛ն յարէ զկնի և ասէ ։

Նա դատի զաշխարհս արդարութբ. և դատեսցէ զժողովուրդս իւր ուղ-ղութբ ։ Ինքն առեալ նախ 'ի բաց առնու զդատաստան մարդկան. իբր թէ ասէր. մարդիկ բազում անգամ անիրաւութբ դատեն, իսկ ինքն Ած յաւէ և միշտ արդարութբ և ուղղութբ ։ Երկրորդ՝ կամի յայտ առնել, թէ որովհետև նա միայն է իշխան ամ թագաւորութեց երկրի, ինքն միայն դատէ զնս, այս զամ մարդիկ Այս. իբր զի 'ի մեռանիլ նոցա պահանջէ 'ի նոյէ համարս, որդեօք որպէս նա ինքն հոգ տարաւ վասն նոց՝ մինչև տալ զանձն վ՛ն փրկութե նոց, նոքա ևս հոգ տարան՝ զի փըրկեսցին. ում արդեօք կամեցան ծառայել. այնմ՝ որ փրկեաց զնոսա, թէ այնմ՝ յորմէ փրկեցան. արդեօք զոր ինչ պատուիրեաց նոցա առ 'ի ժամանել յերանութի, արարին, թէ մերժեցին. և զայլ ևս բազում իրաւացի քննութիս առաջի եդեալ նոցա՝ դատեսցէ զնս ոչ անիրաւութբ. այլ՝ արդարութբ, մինչև նոցա իսկ ձայնակցել՝ թէ արդար է դատաստան նորա ։

Եւ այս դատաստան հայի յայնոսիկ, որք յԱյ գոլով՝ ըստ Այ վարեցին զկեանս իւրեանց. ուստի և կոչէ զնս աշխարհս, այս մարդիկ յարեալք 'ի սէր աշխարհի, կամ որք են Այ ծառայք, և կամ իշխանք Այ. յոր միտս ասաց յովհաննէս. * յԱյ էր. . . և Ած զնա ոչ ծանեաւ ||. յովհ. ա. 10 ։ Սէր Աւ խնամոյ զԱսակերս. զի յայտ է թէ այլք ծանեան և ընկալան զնա ։ Եւ թէ յիրաւի մարգարէն ևս աշխարհաւ զԱսակերս և զամպարիշտս խնամոյ ասէ, անտի յայտ է, զի զարդարան որոշ դնէ անուանբս ժողովուրդ ։ Սարթ է ևս Աւ խնամոյ զհեթանոսս, յորոց զատուցանելով զյատուկ ժողովուրդս ան՝ խօսի և զդատողութէ նոց, և ասէ ։

Եւ դատեսցէ զժողովուրդս իւր ուղղութբ ։ այս զայնոսիկ՝ որք են իւր ուղիղ ժողովուրդ, դատէ ուղղութբ. այս այնպիսի դատաստանաւ, որ ուղիղ է՝ և համաձայն արդարութեան, և հատուցիչ ուղղոց զվարձս ։ Եւ յայս իսկ վ՛ն դատելոյ զԱս՝ ասաց, դատէ զնոսա արդարութբ. իսկ վասն դատելոյ զուղիղսն՝ ասէ, դատէ զնոսա ուղղութբ.

զի փոխա վրէժխնդրութեան դառն. իսկ զուղիղսն քաղցրութեամբ, և հատուցանելով զվարձս.

Այս բան այլազգ ևս կարէ մեկնիլ. եթէ զի Քս անու իշխանութեամբ՝ որ տուեալ է նմա 'ի Հօրէ, դատէ նաև զկենդանիս, որք դեռևս են յերկրի աստ. ուստի թէ և բազում իշխանք և թագաւորք անհաւատք՝ է որս և դեռ՝ յարիցեն ընդդէմ ժողովրդեան նորա, և կամ ընդդէմ հաւատոց նորին, ոչ կարեն առնել ինչ. բայց եթէ որչափ նա թոյլ տացէ նոցա առնել արդար դատաստանաւ խրատել առ 'ի յուղղութիւն ժողովրդեան իրոյ. Իբր այս օրինակեցաւ 'ի բազում զխոյուածս՝ որք պատահեցան ժողովրդեանն Իսրայէլի. Ուստի և այժմ 'ի նորունս ժողովուրդք նորա ոչ պարտին երկնչիլ, այլ 'ի նա ապաւինիլ, և 'ի նմանէ գտանել զօգնութիւն.

Այնպէս և ըստ ասելոյ լամբ", իւրաքանչիւր արդար պարտի ապաւէն իւր ունիլ զՔս, գիտելով՝ թէ նա, որ ազատեաց զինքն յիշխանութենէ սատանայի, նոյնն միշտ պատրաստ կայ 'ի զերծուցանել զնա. և ուղեալ է զգաստատան իւր առ 'ի օգնել նմա, և օգնէ իսկ. Ամէն եկի յարէ զինի, և այլն.

Ժ. Եղեւ տէր ապաւէն տնանկին. օգնական 'ի նեղութեանս 'ի դէպ ժամանակի.

Յանկանիլ մարդոյ 'ի նեղութիւն երկուց կարգաւ, հայելով 'ի վախճանն. մի՝ զի ազատեսցի 'ի վշտաց անտի նեղութեանն. և մի ևս՝ զի հասցէ հանգստեան. յառաջինն հայելով զնա ապաւէն. իսկ յերկրորդն հայելով զնա օգնական. Իբր զի առ յաջողութիւն այսր պահանջի դիպողութիւն ժամանակի, զայն ևս յաւելու և այլն.

Եղեւ տէր ապաւէն տնանկին. օգնական 'ի նեղութեան 'ի դէպ ժամանակի. Տնանկն՝ նախ նշանակի աստ մարդկային բնութիւնն. որ 'ի սկզբան 'ի վիճակի անմեղութեան մեծատուն էր յոյժ՝ շնորհօք, իմաստութեամբ, իշխանութեամբ, և այլ բազում կատարելութեամբք. և յետոյ անկաւ, և եղև տնանկ, զի անկեալ 'ի մեծութենէ անտի. որով և մատնեցաւ 'ի ձեռս սատանայի. և զրկեցաւ յայնպիսի թշուառութենէ, յորմէ ոչ ոք կարող էր ազատել զնա. և պաշարեաց զնա այնպիսի արհաւիրք

մահու, և այնպիսի նեղութիւն, որ էր ծայրագոյն. յորում եթէ տակաւին տևէր, ոչ ևս մնայր յոյս փրկութեան. նա զի՛ ոչ ևս գոյր ոք՝ ապաւինիլ ՚ի նա։ Իսկ աՀա յայսմ մեծի տնանկութեան գոլով մարդս՝ ապաւէն եղև նմա տէր ՚ի խոստման և ՚ի կատարման։ Ի խոստման՝ յորժամ խոստացաւ մարդոյ ազատել զնա ինքնին։ Ի կատարման՝ յորժամ * ՚ի դէպ ժմկի ||, ցհ ՚ի լրման ժմկի, կմ ՚ի յարմար ժմկի, կմ ՚ի Հարկաւոր ժմկի, յորում էր մարդն ՚ի յետին նեղութեան, եղև նմա ապաւէն և օգնական. իբր զի՛ եկն և փրկեաց զնա, և զերծոյց զնա յերկիւղէ յաւիտենական մահու, և վերածեաց ՚ի յաւիտենական կեանս։

Երկրորդ՝ բառիս տնանկ՝ նշանակի աստ սուրբ եկեղեցին, ըստ երևելոյն. իբր զի տնանկ երևեցաւ ՚ի սկզբան ՚ի բազում Հալածմունս. յորս ապաւէն եղև նմա տէր բազում իրօք. և ՚ի կարծել ոմանց՝ թէ կործանի և ջնջի ՚ի բռնմ Հալածանաց անտի, օգնական եղև նմա ՚ի դէպ ժամանակի, ցհ ՚ի նեղութիւնս անդ։

Երրորդ՝ բառիս տնանկ՝ կարէ նշանակիլ աստ ո՛ և իցէ մարդ. որ կամ մեղօք տնանկացեալ է ՚ի շնորՀաց, և փափաքի դառնալ առ փրկիչ իւր. և կամ ՚ի բազում նեղութիւնս և ՚ի փորձութիւնս գոլով իբր տնանկ և թշուառ Համարի. և կամ առաջի մարդկան արՀամարՀեալ և անարգ երևի։ Իսկ ամի սոցա ապաւէն և փրկիչ քս է. որ և ՚ի դէպ ժամանակի՝ ՚ի յետին նեղութե՝ օգնական է նոցա և ազատիչ և սփոփիչ։

Սովին վայելուչ իմն յուսացուցանէ լամբրոնացին զտնանկն՝ խօսելով ՚ի դիմաց նր այսպէս. * Տնանկ եմ, „ով անձն իմ, և ՚ի մէջ կարճաց շրջիմ. մի՛ երկնչիր՝ „թէ առանց նախախնամութեան եմ. զի որ աստ զիւր „տնանկութիւնն ճանաչէ, զնն օգնականութեն Հո„վանին ապաւէն և վերակացու ունի ||. Յաղագս այսորիկ ո՛չ է արժան ումեք Հատանել զյոյս իւր ՚ի քնէ. այլ ճանաչելով զտնանկութիւն իւր, և աներկբայ գիտելով գտանել զգթութիւն նորա՝ յուսալ ՚ի նա։ Յայս ակնարկելով մարգարէին՝ յարէ զկնի, և ասէ։

ժ̃. Յուսասցին ՚ի քեզ ամենեքեան՝ որք գիտեն զանուն քո, զի ոչ թողցես զայնոսիկ, որ խնդրեն զքեզ Տէր:

Որ ՚ի յուսալ մարդոյ յանձն ոք՝ հարկ է ճանաչել զնա թէ որպիսի իցէ. և թէ արդեօք ՚ի դիմել իւր առ նա՝ ընդունիցի՞ զինքն թէ ոչ. իսկ եթէ ոչ ծանի-ցէ, զիարդ յուսասցէ: Ըստ սմին խօսելով մարգա-րէին՝ ցնէ աստ զգիտութիւն անուանն ա̃յ ասելով:

Յուսասցին ՚ի քեզ ամենեքեան՝ որք գիտեն զանուն քո:

Անուանն ա̃յ թէպէտև ուղղակի կարգեալ է ՚ի նշանակել զգոլն ա̃յ, բայց աստանօր հայելով ՚ի նախընթաց հա-մարն՝ երևի թէ նշանակէ զլինելն ա̃յ ա̃մի ապաւէն, և օգնական ամենազօր. և ը̃ այսմ կամի ասել. որք միանգամ ճանաչեն զանուն քո՝ ապաւէն տնանկացե-լոց, և օգնական կարօտելոց, ա̃մքին նոքա առ քեզ դի-մեսցեն, և ՚ի քեզ դիցեն զյոյս իւրեանց, գիտելով թէ ոչ ես մերժելոց զնոսա. և առ այս յարէ և ասէ:

Զի ոչ թողցես զայնոսիկ, որք խնդրեն զքեզ Տէր: Տ̃ր ոչ եր-բէք անտես արասցես զյոյս այնոցիկ, որք ջանկան գտանել զքեզ, և ընդունիլ ՚ի քէն զշնորհս քո, և այ-նու հաճոյանալ քեզ, և ժառանգել զքեզ: Եւ այս՝ յիրաւի. զի եթէ առանց խնդրելոյ իսկ՝ յորժամ տնանկացեալ էին մարդիկ, և թշուառացեալ ՚ի տա-ռապանս գերութեան սատանայի, հայեցաւ ա̃ծ ՚ի նս̃, և գթացեալ՝ ազատեաց զնոսա, և մեծացոյց շնորհօք և երկնային փառօք, ո՛րչափ ևս առաւել՝ եթէ մարդիկ խնդրեսցեն զնա, օգնական լինի նոցա, և տայ նոցա զպարգևս ողորմութեան իւրոյ:

Եւ զայս ոչ միայն ՚ի հոգևորս է իմանալ, այլև ՚ի մարմնաւոր դիպուածս և ՚ի ծանր կարիս. աւասիկ ոչ եթող զյովսէփ. (իմաստ. ժ̃. 13:) Ոչ եթող զդանիէլ. (դան. ժ̃դ. 37:) Ոչ եթող զշուշան. (դան. ժ̃գ. 35:) Ոչ եթող զպօղոս. (բ̃. կոր. է̃. 4:) Ոչ եթող զերեսնևութամեայ զանդամալոյծն. (յովհ. ե̃. 6:) Ոչ եթող զաւազակն. (ղուկ. ի̃գ. 43:) Ոչ եթող և զայլս բ̃զմն՝ որք խնդրեցին զնա: Ոչ եթող և զսա ինքն զդաւիթ ՚ի կարդալ իւր առ նա: Այլ յա̃մի և առ ա̃մենին եցոյց զգութ խնամոց իւ-

րոց ։ Արդ ահա յայս ամ հայելով մարգարէին մատչի ՚ի գոհութիւն այ, և յորդորելով զմարդիկ ասէ ։

ԺԱ. Սաղմոս ասացէք տն որ բնակեալ է ՚ի սիոն. պատմեցէք ՚ի հեթանոսս զգործս նորա ։

Զարմանալ արժան է ընդ ընթացս բանից մրգրէիս, զի պէսպէս փոփոխէ՝ ոչ միայն աստ. այլև գրեթէ յամ սաղմոս իւր. երբեմն ՚ի դիմաց իւրոց խօսելով, և երբեմն ՚ի դիմաց այլոց. երբեմն իբր սահմանական, և երբեմն իբր հրամայական. երբեմն առ ած, և երբեմն առ այլս ։ Արդ զայս առնէ ախորժակ սրտի նորա. որ ՚ի գովութե փառացն այ նորանոր վառմամբ բորբոքեալ բերէր, երբեմն յափշտակութեամբ մտաց, և երբեմն տեսութբ ածային խորհրդոց, երբեմն բոցով սաստկութեան սիրոյ, և երբեմն բերկրութբ երկնային խոստմանց, երբեմն վստահութեամբ յուսոյն առ ած, և երբեմն տարփանօք փառաց անուան նորա, և այլ ևս բազմապատիկ զգածմամբ. ըստ որում և աստ զգածեալ ՚ի փափաք փառաբանութեանն այ, և ՚ի խրախոյս յորդորելոյ զայլս յօրհնութիւնս նր, ցնծալից գոչէ և ասէ ։

Սաղմոս ասացէք տն ։ (Այսինքն սաղմոսիւք օրհնեցէք զտէր.) որ բնակեալ է ՚ի սիոն ։ Որով ոչ կամի ցուցանել, թէ ած միայն ՚ի սիոն էր բնակեալ, այլ թէ որովհետև տապանակ տն անդ էր, վն այնր ՚ի նմա բնակել ։ Արդ զրձլ զի առաւել խնամ ունէր ած ՚ի վր այնր քաղաքի քան այլոց. զի կոչեցեալ էր զանուն իւր ՚ի վր նորա. քանզի սիոն ասիւր քաղաք այ բարձրելոյ ։ Որով նշանակիւր եկեղեցի ոք, յորոյ վր քս մանաւոր լինի խնամ ունի իբրև ՚ի վերայ հարսին իւրոյ ։

Զայս բան՝ * որ բնակեալն է ՚ի սիոն ‖, յայն սակս յաւելու մարգարէն, զի սովին որոշմամբ տացէ ՚ի մէջ ճշմարտին այ և ՚ի մէջ սուտ ածոցն՝ որք բնակէին ՚ի մեհեանս, և պաշտէին ՚ի հեթանոսաց ։ Արդ յետ տալոյ զայս որոշումն՝ ազդ առնէ և յորդորէ զմնին՝ պատմել ՚ի մէջ հեթանոսաց զգործս ճշմարտին այ. վասն որոյ ասէ ։

Պատմեցէք ՚ի հեթանոսս զգործս նր ։ Այսինքն յայտնի ցուցէք և աւետարանեցէք հեթանոսաց զգործսն, զորս գոր-

ծեաց ած վասն ազգի մարդկան, ևս և վն նց խոկ : Իսկ թէ զինչ այս գործք իցեն , յայտ առնէ 'ի յաջորդ-
հատուածն , և ասէ :

ժը . Ի խնդրել զարեան նոցա՝ յիշեաց . և ոչ մոռացաւ զձէր աղօթս տնանկաց :

Այս այն է՝ զոր ասաց 'ի վերոյ 'ի հատուածն 9 . զայն՝ թէ՝ ազգք մարդկան , որք տնանկացեալ էին 'ի մեծութենէ շնորհացն այ , աղաղակէին առաջի այ . և ած ոչ անտես արար զաղաղակ նոցա , այլ հաճեցաւ օգնել նոցա , և խնդրել վրէժս 'ի սատանայէ վասն արեանն նց . զի նա սպառեաց և սպան զնոսա 'ի հոգիս նոցին . ըստ որում գրեալ է զնմանէ , թէ * նա մարդասպան էր 'ի ,, սկզբանէ ‖ . յովհ . ը . 44 . յայս հայելով ասէ :

Ի խնդրել զարեան նոցա յիշեաց , և ոչ մոռացաւ զձէր աղօթս տնանկաց : զի յիշեաց զտնանկացեալ ազգ մարդկան , զորս գրեթէ մոռացեալ էր վասն մեղաց նոցին . և լուաւ ևս աղաղակի աղօթից նոցա : Այս յիշել և լսել նորա եղև ասէ * 'ի խնդրել զարիւն նոցա ‖ . զի 'ի խնդրելն զվրէժ արեան նոցա 'ի սատանայէ : Օ ի այս եղանակ խօսից զի խնդրել զարիւն՝ է այնպիսի ոճ զոր վարէ սբ . գիրն՝ 'ի ցուցանել զվրէժխնդրութիւն արեան ընդդէմ սպանողաց . ըստ այնմ , ծնն . թ . 5 . * Եւ զձեր արիւն շնչոյ ,, խնդրեցից . 'ի ձեռաց ամ գազանաց խնդրեցից ըզ-,, նա . և 'ի ձեռաց մարդոյ՝ 'ի ձեռաց առն զչունչ եղ-,, բօր իւրոյ խնդրեցից ‖ : Իսկ թէ զինչ իցէ այս խնդրելս՝ անդէն յայտ առնէ՝ ասելով . * Որ հեղու զա-,, րիւն մարդոյ , փոխ արեան նորա հեղցի արիւն նր ‖ : Ըստ այսմ և յասելն աստ՝ * Ի խնդրել զարիւն նոցա ,, յիշեաց ‖ . կամի ասել , ած ոչ արար անտես զարիւն մարդկան , զի զկորուստ նոցա , որովհետև աղաղակէին առ նա . այլ զերծոյց զնոսա 'ի կորստենէ անտի , խնդրելով զվրէժ 'ի սատանայէ , և նուաճելով զբռնութիւն նորա . զի որովհետև եհեղ նա զարիւն մարդկան , փոխ արեան նոցա հեղցի արիւն նորա , զի թէ՝ փոխ կորուսանելոյ նորա զնոսա ինքն կորիցէ :

Այս բան կարէ հայիլ և յարիւն դիւական զոհից . և ըստ այսմ աղօթքն հայի յուխտ իէլացւոց : Վերածի ևս յարիւն անմեղաց , զորս սպանին ամպարիշտք , ըստ

որդ զայս բան կարգէ մարգարէն զբեթէ իբր պատասխանի առարկութե՛, որ կարէր առարկել ընդդէմ խնամոցն հա-մարոյն. իբրզի եթէ ա̃ծ ապաւէն է տնանկաց 'ի նե-ղութիս իւրեանց, ապա զիա՞րդ արդարք, որք 'ի տնան-կութեան և յաղքատութե̃ են, չարչարեցան յամբարշ-տաց, և սպանան ևս: Պ̃նէ այսմ, թէ յիրաւի երևի երբեմն՝ մատնալ ա̃յ զնոսա, և ոչ օգնել նոցա, բայց ո՛չ է այնպէս. զի 'ի խնդիր է 'ի քննել զգործս նո̃ց և սպանողաց նոցին. քանզի յիշեաց զանպարտ հե-ղումն արեան նոցա, և ոչ մոռացաւ զաղաղակս աղօթից նոցա, որով աղաղակէին առ նա 'ի չարչարիլ իւրեանց. և հատոյց նոցա և հատուցէ իսկ զյաւիտենական կեանս. նոյնպէս և չարչարողաց նոցա զյաւիտենական տանջանս:

Արդ՝ առաջի եդեալ մարգարէին զխնամս ա̃յ որ 'ի փրկութիւն ազգի մարդկան, աղաչէ զնա 'ի դիմաց ար-դար մարդոյ, և յաւէտ 'ի դիմաց եկեղեցւոյ՝ ողոր-մել և ազատել նաև 'ի ներկայ և յապագայ վտանգից ասելով:

ԺԴ. Ողորմեա ինձ տէր, և տես զխոնարհութիւն իմ 'ի թշնա-մեաց իմոց. ո՛ բարձր արարեր զիս 'ի դրանց 'ի մահ-ուանէ:

Նա զիւրաւ գտանելոյ զողորմութիւն յայլմէ՝ պատե-հագոյն երևի մի̃նչ թէ հարկաւոր տեսանի՝ երկու-լինչ առաջի մատուցանել. ըստ յիշելոյ մեր 'ի սաղ. Գ. 2. մի՝ զողորմելի գոլ անձին խնդրողի, և մի ևս՝ զո-ղորմածութի̃ անձին տուողի, կամ այնր՝ յորմէ խնդրի. ըստ սմին վարի և աստ մարգարէն. զի հայելով յառա-ջինն՝ 'ի մէջ բերէ զխոնարհիլ իւր 'ի թշնամեաց. հայելով և յերկրդն 'ի մէջ բերէ զբարձրացուցանելն ա̃յ զինքն ողորմութեամբ: Յայսոսիկ ակնարկելով աղա-չէ նախ, և ասէ:

Ողորմեա ինձ տր: Այսմ ասել. դու տէր՝ որ ողորմութե̃ քով փրկեցեր զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոց, և 'ի գերութե̃ սատանայի և դիւաց ա̃մի, նովին ողորմութե̃դ դարձեալ ողորմեա ինձ, և զերծո՛ զիս 'ի չար հնարից նոցա, որովք ջանան արկանել զիս 'ի մեղս և յանխթս մեղաց, և վերստին գերել զիս. յոր սակս իսկ ազգի

ազգի տառապանս յարուցանեն 'ի վե՛ր իմ 'ի ձեռն այնոցիկ՝ որք ատեան խորհրդոց նոցա ։ Նա և կամելով շարժել զա̃ծ 'ի գութ՝ կամիս 'ի մէջ բերել զողորմելի վիճակ իւր . և խանդաղատելով ասէ ։

Նա տե՛ս զխոնարհութիւն իմ 'ի թշնամեաց իմոց ։ Խոնարհութիւն ասելով աստ՝ ոչ իմանայ զառաքինութիւն խոնարհութեան , այլ զպատճառս նորա . քանզի բառս այս խոնարհութիւն՝ երրակի նշանակէ . մի՝ փոխ առաքինութեան խոնարհութեան . որով որք անարգ համարելով զինքն՝ պատկառանօք կայ առաջի ա̃յ , եդեալ զյոյս իւր բոլոր 'ի նա ։ Երկրորդ՝ փոխ գործոյ խոնարհութեան . որպէս են պարապիլ 'ի նուաստ գործս , զգենուլ զանարգ ըզգեստ , ընտրել զխոնարհ տեղիս , ևն . որք 'ի խոնարհութենէ պատճառելով խոնարհութիւն կոչին ։ Երրորդ՝ փոխ պատճառաց խոնարհութեան . որպիսի են նախատինք , վտանգք , փորձութիւնք , հալածանք , տանջանք , աղքատութիւնք , հիւանդութիւնք , և այլ նեղութիւնք . զի սոքա պատճառելով զխոնարհութիւն կոչին եւս երբեմն խոնարհութիւն . տես և 'ի սաղ . իդ . 15 ։ Յայս միտս բազում ուրեք 'ի գործ ածէ մարգարէն զանուն խոնարհութեան , որպէս և աստ . յասելն * Տես զխոնարհութիւն իմ 'ի թշնամեաց իմոց ‖ . կամի ասել , տես զտառապանս և զփորձութիւնս իմ , որ 'ի թշնամեաց իմոց՝ ա̃յ 'ի դիւաց , եւս և 'ի մարդկանէ . և գթացեալ 'ի վե՛ր իմ իբրև 'ի վե՛ր այնր՝ զոր դու փրկեցեր , պահեա զիս 'ի հնարից և 'ի նենգութեանց նց , և արա ինձ անդորր , զի կարացից յամի և յամ ժամ քեզ ծառայել ։ Նա առ 'ի զօրաւոր առնել զխնդրուածս իւր՝ զառաջին փրկագործութիւն ա̃յ յուշ առնէ նմա , և ասէ ։

Ո՛ բարձր առնես զիս 'ի դրանց 'ի մահուանէ ։ Բառս "բարձր առնել" երրակի նշանակէ , մի՝ փոխ օրհնելոյ և գովելոյ . երկրորդ՝ փոխ իշխանութեամբ կամ պատուով իւիք փառաւորելոյ . և երրորդ՝ փոխ 'ի վեր առնլոյ , կամ վերացուցանելոյ զոք ։ Ըստ այսոցիկ յետին երկուց նշանակութեցս դնէ աստ մարգարէն զբառդ բարձր արարեր . որպէս թէ ասէր , 'ի վեր առեր կամ հեռացուցեր զիս 'ի դրանց 'ի մահուանէ , և հոգևոր իշխանութեամբ փառաւորեցեր զիս . և շնորհօք քո զարդարեցեր զհոգիս ։

Իսկ յասելն՝ * 'ի դրանց 'ի մահուանէ ‖ , բառս 'ի մահ-

ուանէ՝ ոչ դնի աստ իբր բացայայտիչ բառս 'ի դը-
րանց, այլ իբր յատկացուցիչ. զի Թէպէտև յատկա-
ցուցիչն 'ի սեռական հոլովս դնի, բայց ըստ սովորուԹե̃
լեզուի մերոյ երբեմն համաձայնուԹեամբ հոլովին ևս
վարելով, յոր հոլով իցէ եղեալ յատկացուցեալն՝
յայն հոլով դնի և յատկացուցիչն: Իսկ զի աստ յատ-
կացուցեալն եղեալ է 'ի բացառական հոլովս, այն է՝
'ի դրանց, յատկացուցիչն ևս եղեալ է 'ի բացառա-
կանն, այն է՝ 'ի մահուանէ, փոխ դնելոյ՝ 'ի դրանց
մահու. և այս յայտ անուի է, զի և 'ի բնագիրս երբ″,
և յայլ ԹարգմանուԹիւնս այսպէս դնի: Այսու ամ̃իւ
եԹէ ոք իբր բացայայտիչ առցէ, ոչ վրիպի 'ի ճշմար-
տուԹենէ. զի 'ի բարձր առնելոյ զոք 'ի դրանց մահու,
այսու իսկ բարձր առնէ զնա 'ի մահուանէ:

Իսկ դրանբք մահու ըստ ճառին նշանակին մահացու-
ցիչ նեղուԹիւնք կամ վտանգք մեռանելոյ. Է̃ որս իբր
ընդ դրունս լինի մտանել 'ի մահ: Իսկ ըստ խորհրդոյն
բազում ինչ կարէ նշանակել աստ. մի՝ սկզբնական
մեղքն, որ եղև դրունք մահու. զի անտի եմուտ մահ
յաշ̃ս: Երկրորդ՝ ըստ Լամբ″, ա̃ և իցէ մահուչափ մեղք,
որք են դրունք յաւիտենական մահու. և ըստ Լուսա-
ւորչին մերոյ 'ի յաճախապատումն, ճառ. ժը̃. անհա-
ւատուԹի̃ և ծուլուԹի̃: Երր̃դ՝ գերուԹիւն սատանայի.
զի այն եղև այնպիսի դուռն, ընդ որ մտանէին մար-
դիկ 'ի մահն յաւիտենական: Չ̃րդ՝ կռապաշտուԹիւնն,
զի և այն էր դուռն՝ ընդ որ 'ի մահ դրաւեցան մարդիկ:
Հինգերորդ՝ հեԹանոս իշխանք և Թգ̃ք հալածիչք ե-
կեղեցւոյ, որք եղեն դրունք մահու, ոչ միայն այսու՝
զի չարաչար մահու մտանէին զքրիստոնեայս, այլև
այսու՝ զի կամէին ածել 'ի մահն յաւիտենական՝ տա-
լով երկիր պագանել կռոց: Վեցերորդ՝ նոյն իսկ դը-
րունքն դժոխոց, այ̃ մուտքն սանդարամետին. զի ընդ
այն լինի մտանել 'ի մահն յաւիտենական: ԵօԹներ̃րդ՝
բազմուԹիւնք դիւաց. զի ն̃ք Թէպէտև ոչ են դրունք
մահու, բայց զի են ածիչք 'ի մահն յաւիտենական,
և կան առ դրունս նորա, վ̃ն կարեն ասիլ դրունք մա-
հու. զի ը̃ր հերետիկոսք՝ իւրեանց մոլորուԹեամբքն ա-
ծիչք գոլով մարդկան 'ի դժոխս՝ ասին դրունք դժո-
խոց. որպէս ասեն ն̃ք հարք 'ի մեկնուԹե̃ այսր բանի,

զոր ասաց քս՟, * դրունք դժոխոց զնա մի յաղթահա-
„ րեսցեն ‖. մատ. ժզ. 18 : Սոյնպէս և դուք զդրունս գոլով մարդկան առ մահն հոգւոյն, որ առ մահուչափ մեղս, և ածիչք գոլով՚ի մահն յաւիտենական, ասին դրունք մահու : Յայսմ ած՟ ասէ ազատեսցես զիս, և այժմ ես աղաչեմ ասէ փրկեա և ազատեա, և մեծ ՚ի դրունս եկեղեցւոյ քո, զի ազատ յած՟ կարացից անդադար օրհնել զքեզ և ցնծալ՚ի քեզ. և առ այս յարէ զկնի և ասէ :

ժզ. Որպէս պատմեցից զամ՟ օրհնութիւնս քո ՚ի դրունս դստեր սիոնի. և ցնծացայց ՚ի փրկութեն քում :

Վայելուչ դնէ ընդդէմ դրանցն մահու զդրունս դստեր սիոնի, կամ եկղի. զի ՚ի դրունս մահու խռովութիւն տեսանի. իսկ ՚ի դրունս եկղի խաղաղութի. ըստ որում եհմ՟ թարգմանի տեսութի խաղաղութե՟ : Առ դրունս մահու ժողովին ժողովք դժոխոց. իսկ ՚ի դրունս եկղի ժղվրդք այ՟ : Դրունք մահու ՚ի խորս են երկրի. իսկ դրունք սիոնի ՚ի լերին բարձու : Դրունք մահու ածիչ են ՚ի դժոխս. իսկ դրունք սիոնի՝ յարքայութիւն : Դրունք մահու՝ մահու են պատճառ. իսկ դրունք սիոնի՝ առիթ կենաց : Ի դրունս մահու՝ գերութիւն է սատանայի. իսկ ՚ի դրունս սիոնի ազատութի որդւոցն այ՟ : Ի դրունս մահու կուռք պաշտին. իսկ ՚ի դրունս սիոնի՝ քս՟ ած՟ ճշմարիտ :

Արդ՝ բառիս դուստր սիոնի նշանակի աստ նախ ժղվրդ սիոնի՝ ըստ առմանն ՚որ գրոց. ուստի յասելն դուստր ծուրայ, դուստր եդոմայ, ևլն. նշանակի ժղվրդ ծուրայ, ժղվրդ եդոմայ, ևլն : Երկրդ նշանակի քաղաքն եհմ. զի որովհետև սիոն քաղաք էր ՚ի վերայ լերին, եհմ գոլով խոնարհ քան զնա՝ կոչեցաւ դուստր սիոնի. որպէս գրէ և ծործորեցին. ՚ի մեկն. մատ. գլ. իա : Յայսմանէ և եկեղեցին քի, որ այլաբանի յեհմ՟, կոչեցաւ դուստր վերին սիոնի՝ որ արքայութե՟ երկնից. զի նա է ՚ի լերինն բարձու յերկինս. իսկ սա ՚ի խոնարհ քան զնա. այլ բազմօք ես բարձր քան զառաջինն սիոն :

Դրունք ՚որ են պէսպէս խորհուրդք, է որս լինի մտանել յեկեղեցին, և ժողովել ՚ի նոյն, և կալ ՚ի նմին :

Դրունք սորա ասին և տաճարք շինեալք յանուն ա՟յ, յորս պաշտի ա՟ծ, և մատակարարին խորհուրդք։ Դրան՝ դրունք ասին եկեղեցւոյ և մասնաւոր եկեղեցիք ուղղափառ քրիստոնէից, յորս մտանելով՝ լինի մտանել յընդհանուր եկեղեցի։ Այլ ևս՝ դրունք եկեղեցւոյ ասին՝ անշարժութիւն և հաստատութի՟նք, ևլն։ Դարձեալ դրունք եկեղեցւոյ ասի և այն՝ որով նշանակի մէջ եկեղեցւոյ. որպէս թէ ասացեալ էր՝ 'ի մէջ եկեղեցւոյ։ Յայսոսիկ դրունս խոստանայ մարգարէն օրհնել զա՟ծ, և ասէ։

Որպէս պատմեցից զա՟մ օրհնութիւնս քո 'ի դրունս դստեր սիոնի։ Նմանօր բանս որպէս՝ դնի փոքր շաղկապս ա՟ղ զի. իբր թէ եղեալ էր. օգնեա՛ ինձ և պահեա՛ զիս, որպէս զի և ես պատմեցից զա՟մ օրհնութիւնս քո՝ կացեալ 'ի դրունս քաղաքի քո ե՟մի. ես և 'ի մէջ եկեղեցւոյ քո, և 'ի տաճար սր՟բ քո։

Իսկ օրհնութեամբք իմացեալ լինին պատուիրանական երգք գովութեան ընծայեալք ա՟յ. յոր միտ կամի ասել. երգեցից զա՟մ երգս գովութեան փառաց անուան քո. և յերգան անդ յիշեցից զա՟մ՝ զոր միանգամ արարեր ընդ մեզ։ Բայց հայելով՝ 'ի բայդ պատմեցից, և 'ի բառդ զամենայն, հաւանականագոյն է ասել՝ թէ աստ օրհնութեամբք իմացեալ լինին բարերարութի՟ւն ա՟յ, որովք օրհնէ ա՟ծ զարարածս, մանաւանդ զեկեղեցի սր՟. և ըստ այսմ կամի ասել, պատմեցից 'ի մէջ եկեղեցւոյ զա՟մ բարերարութի՟ս քո, և այնու օրհնեցից զքեզ։ Յայս յաւելեալ մարգարէին և զբարերարութի փրկութե՟ անձին՝ ցնծայ 'ի նոյն և ասէ։

Ես ցնծացայց 'ի փրկութե՟ քում։ Կամի ասել, այնու փրկութե՟ զոր ցուցեր ինձ՝ ցնծացայց 'ի քեզ. կամ որ նոյն է, վասն այնր փրկութե՟ զոր արարեր ը՟ իս՝ ուրախ եղէց. և կամ 'ի փրկել քո զիս 'ի ձեռաց թշնամեաց իմոց և 'ի հնարից նոցա՝ ցնծացայց 'ի քեզ։ Արդ՝ եդեալ մարգարէին զցնծութիւն իւր վասն փրկելոյ 'ի թշնամեաց՝ դառնայ խօսիլ զկորստենէ հեթանոսաց, և ասէ։

ԺԵ. Ընկլան հեթանոսք յապականութեան իւրեանց՝ զոր արարին. որոգայթ՝ զոր թաքուցին, անդէն կալաւ զոտս նոցա:

Ապականութիւնն հեթանոսաց մինչդ իշխանաց նոցա և հալածչաց եկեղեցւոյ՝ էր ապականելի և յանօրական գործ նոցա, որ է կռապաշտութիւն նոցա, և կամ ապականութիւն յաւուր նոցին. զի ոչ ունելով զլոյս հանդերձեալ կենացն՝ այն անյուսութիւն նոցա՝ լինէր նոցա ապականութիւն և պատճառ ապականութեան, որ պատճառ մեղանչական գործոց, որով ապականէին, և եղծանէին, և զայլս ևս ապականել և եղծանել ջանային. բայց նովին իսկ եղծեալ կորնչէին. վասն որոյ ասէ.

Ընկլան հեթանոսք յապականութեան իւրեանց, զոր արարին:

Այս բան եթէ յինքեան մտածեսցի՝ մեկնի այսպէս. ՚ի գործել հեթանոսաց զապականութիւն, որ զապականիչ գործն՝ ՚ի նոյին ընկղմեցան, այսինքն է նորօք կորեան: Իսկ եթէ այս բան մտածեսցի իբր առ այլ հայելով, որ առ քրիստոնեայս, մեկնի այսպէս. ՚ի կամիլ հեթանոսաց ապականութեամբ իւրեանց եղծանել զայլս, մինչդ զքրիստոնեայս, և բաժանել զնոսա ՚ի ժառանգութենէ հանդերձեալ կենաց, ինքեանք ընկղմեցան յայնմ իւրեանց ապականութեան. որ է ասել՝ վասն ապականութեան իւրեանց և վասն կամելոյ ապականել զայլս, կորեան ՚ի կորուստ յաւիտենական, և ընկղան. որ իջին ՚ի դժոխս: Եւ ՚ի ցոյց այսր յաւելու ասել:

Որոգայթ՝ զոր թաքուցին, անդէն կալաւ զոտս նոցա:

Զայս դնէ առ ՚ի ցուցանել՝ թէ ոչ միայն յայտնի հալածմամբ հեթանոսաց որով եղծանել ջանային զայլս, այլև գաղտնի ևս, զոր իբրև որոգայթ լարէին այլոց մանաւանդ քրիստոնէից, փախեսցէ ինքեանց լարողացն, և ըմբռնեսցէ զնոսա: Այլ փոխ ասելոյ՝ փախեսցէ, դնէ՝ * առցէ զոտս նոցա ‖. զի որովհետև նմանութեամբ որոգայթի խօսի, յաւէտ պատշաճ էր դնել՝ * առցէ զոտս նոցա ‖, քան դնել՝ փախեսցէ. զի որոգայթն հասարակօրէն զոտն ըմբռնէ: Եւ սակայն այսպէս դնելով կամի ևս յայտ առնել, թէ ով՝ որ ոտիւք ըմբռնի յորոգայթ՝ զոր թաքոյց այլում, բարւոք ճանաչէ զփոսն՝ զոր ինքեան հատոյց, այնպէս և

թշնամիք եկեղեցւոյ 'ի վնասել իւրեանց ծանիցեն՝ զոր արարին, և զարմասցին ևս ընդ դատաստանն ա̃յ որ 'ի կամիլն փրկել զծառայս իւր յորոգայթից թըշնամեացն, թոյլ տայ՝ զի ինքեանք անկցին 'ի նոյն, և
ոչ ծառայք իւր ։

Հոգևորապէս՝ այն չար հնարք, զոր իբր որոգայթ թագուցանեն մեզ դևք, այսէ զոտս նոցա, յորժամ մեք զզջմամբ դառնամք առ ա̃ծ, և խոստովանիմք զմեղս մեր ։ Իսկ զայս յայտ առնէ լամբ″ ․ այսպիսի իմն օրինակաւ ․ * Պ̃ր ասէ՝ թէ զմանուկ տխմար, որ ծա-
,, ռայէ թշ̃րին, մի ոք 'ի նենգաւոր ծառայից յորդո-
,, րեսցէ զողանալ յարքունի ստացուածոցն, և ու-
,, սուսցէ զնա՝ թէ ոչ վասն այդր պատժիս ․ զայն ծա-
,, նուցեալ թշ̃րին՝ բարկանայ ․ իսկ յորժամ մանուկն
,, եկեալ խոստովանի զուղիղն ․ յայտ է թէ զպա-
,, տիժն իւր ըստ մեղացն 'ի վ̃ր պատրող ծառային ար-
,, կանէ ․ այսպէս և մեք յետ զզջմանն՝ զորոգայթ մեր
,, յատս թշնամւոյն ձգեմք, և մեք զերծանիմք ‖ ։ Իսկ
զի այսքիւք յայտնի տեսանի արդարութիւն դատաստանացն ա̃յ, ամն իրի յարէ զկնի մարգարէն և ասէ ։

ժԶ․ Ճ՛անաչի տէր յառնել զդատաստանս իւր․ և 'ի գործս ձեռաց իւրեանց կալեալ են մեղաւորք ։

Ճանաչիլն ա̃յ չորեքկին լինի ․ մի՝ յորժամ տեսանի յինքեան որպէս և էն դէմ յանդիման ։ Երկրորդ՝ յորժամ պատգամօք իւրովք, կամ երևմամբ իւիք՝ յայտնեալ լինի այլոց ։ Երրորդ՝ յորժամ քննութ̃բ արարածոց գոյութիւն ն̃ր և կատարելութ̃իւք նորին ծանուցեալ լինին ։ Չորրորդ՝ յորժամ 'ի գործոց ինչ՝ զոր առնէ՝ ցուցանի լինել այսպիսի կամ այնպիսի, որ̃պ 'ի գործոց վրէժխնդրութեան ցուցանի լինել արդար ․ 'ի գործոց ողորմութեան՝ ողորմած ․ եա̃ ։ Ըստ այսմ չր̃դ առման դնի աստ
ճանաչիլն ա̃յ յասելն ։

Ճ՛անաչի տէր յառնել զդատաստանս իւր ։ Կամի ասել, յորժամ ա̃ծ արդար դատաստանաւ պատուհասէ զամբարիշտս՝ որք ոչ կամին ճանաչել զնա, և կամ յորժամ կորուսանէ զթշնամիս եկեղեցւոյ և կամ զայլս, սովին այսու ճանաչի՝ ա̃յ յայտնի լինի, թէ քանի արդար է, զի առնէ զայսպիսի դատաստան ամբարշտաց ․ մինչև

իւրեանց չարեօք իսկ կալիլ նոցա և դատապարտիլ ։ Բազումք 'ի մեղաւորաց յանցանել ժմկաց մոռանան զմեղս իւրեանց կամ զծանրութի նոցին · այլ յորժամ յանդիման լինիցին ստեղծողին իւրեանց՝ որում յանցեան, յայտնի տեսեալ զայնս՝ զահի մեծի հար- ցին · և 'ի դատել անդ տեառն ափիբերան լեալ ասիցեն · այժ · և յայնժամ ճանաչի տէր յառնել զդատաստան ։ Նախարար ոմն պարսից յղեաց գիր առ իշխան ոք · յո- րում յետ այլևայլ բանից, գրեաց ես թէ դարեհ թգր մեր անիրաւութբ կալաւ զաթոռն, և անմտութբ իւրով ունի կորուսանել · այս գիր անկաւ 'ի ձեռս դարեհի, և պահեցաւ 'ի զգուշութե ։ Յանցանել ժա- մանակաց մոռացաւ նախարարն՝ զորս գրեալն էր, վնյ և ոչ ինչ հոգայր ։ Յաւուր միում 'ի գիմել նա- խարարին առ դարեհ վասն իրիք գործոյ, եհան դարեհ զգիր նորա · և ասէ ցնա, ընթերցիր զդա · իբրև ետես նա զգիրն, յորում յայտնի երևիւր յանցանք իւր, ան- կաւ առաջի նորա, և ասէ · այժ արդար ես · և ոչ ես մնայ ինձ ասել ինչ · զի ձեռամբ իմով արարի, ես յան- ցեայ, և 'ի յանցանս իմ ըմբռնեցայ ։ Նա սմին պա- տահի և մեղաւորաց 'ի դատաստանի տեառն · և զայս կամելով մարգարէին յայտ առնել՝ յարէ զինի, և ասէ ։

Եւ 'ի գործս ձեռաց իւրեանց կալեալ են մեղաւորք ։ Այս- ինքն նոքա որք ըմբռնակ կեանս վարելով մեղան, կամ այլոց վնասեցին, այնուհետև ոչ անիրաւ ինչ դատաս- տանաւ, և ոչ առ ամբաստանութե այլոց, այլ գործովք իւրեանց կալեսցին, որ պաշարեսցին և դատապար- տեսցին · կամ գործովք իւրեանց յանդիմանեսցին, և նոքիմբք պարտաւոր ցուցեալ պատժեսցին և տան- ջեսցին · որոյ վ՟ն իսկ դնէ՝ կալեսցին · զի յորում կա- պի ոք՝ 'ի նմին տառապի · քանի ես 'ի կապին՝ ոչ եթէ 'ի կապանս այլոց, այլ 'ի կապանս գործոց իւրոց · որպէս լինելոց է մեղաւորաց · ուր ասէ բարսեղ վրդպ, 'ի մեկն · մարկ · գլ · ժա · տեսանես զզժնէութի իրացդ · զի * Ի ,, գործոց ձեռաց իւրոց կալեցաւ մեղաւորն, և ոչ ,, թէ 'ի սատանայէ ‖ ։ Նա որ հայի ասացեալն՝ թէ * 'ի սուտս մեղաց շաղի իւրաքանչիւր ոք ‖ · առակ · Է · 22 ։ Եւ զայս 'ի դէմս իւր առեալ նարեկացւոյն

ասէ 'ի բանն . Ը . * Ահա զարդիւնս գործոց ձեռաց
,, քոց ժառանգեսցես Թիւրեալք յուղղութեց և զա-
,, ռածեալք 'ի մոլորութեց ‖ .

Մարգարէն . կապեսցին դնելով՝ յայտ առնէ միան- գամայն թէ կապանք իմն են մեղք կամ շղթայք յորս կաշկանդին մեղաւորք . ուստի ասէ ծործորեցին 'ի մեկն . մատ . գլ . ժԸ . * մեղքն շղթայք իմն են ը͞ մար-
,, գարէին , 'ի գործս ձեռաց իւրեանց կապեսցին մե-
,, ղաւորք . արդ որ ոչ կամի 'ի մեղացն որոշիլ , 'ի կա-
,, պանս է ‖ .

Դարձեալ սա նոյն ծործորեցին 'ի նոյն մեկն . գլ . ժԳ . խօսելով 'ի վ͞ր այսր բնաբանի , ասէ թէ այս կապիս յայտ առնէ * անզերծանելի գոլ 'ի տանջանսն իբր
,, զկապեալս շղթայիւք համագումար 'ի միասին ըստ
,, խրձանն օրինի ‖ .

Կապին մեղաւորք և 'ի շղթայս տանջանաց խղճի մտաց իւրեանց . և յանզերծ մնան յուսահատ կորնչին . * կորուսանել կամին՝ զոր գործեցին . բայց կորիցեն յորոց գործեցան ‖ . ( զ͞ի յայնց իրաց՝ որք գործեցան 'ի նոցանէ ) . Պատմի 'ի գիրս ուրեք , թէ այր ոմն զաղտ սպանեալ զընկերն , գրկեալ տարաւ զդի նորա 'ի ծածկել . բայց հրամանաւն ա͞յ կապեցաւ ընդ դիոյ ն͞ր . և փտեցաւ ը͞ նմա , և մեռաւ . Այնպէս պատահի և մեղաւորաց եթէ աստ և եթէ 'ի հանդերձեալն , եթէ ոչ ապաշխարեսցեն .

Մարդան վ͞րդ ըստ ոմանց աւանդելոյ ընդ հակառակն եւ մեկնէ զայս յետին բան յասելն . այն մեղաւորք * որք զ͞որն կամեցան որսալ 'ի մահ , նոքեանք որսա-
,, ցեալ եղեն 'ի կեանս ‖ . Այս մեկնութ͞ի թէպէտ ըստ պատշաճի դնի , բայց ոչ հայի յառաջիկայ բնաբանդ , որ յայտնի ցուցանէ զկապիլ մեղաւորին 'ի չար գործոց իւրոց , և 'ի պատիժս նոցին . ըստ որոյ այս կապուտս կարէ ցուցանել և զմշտնջենաւորութիւն պատժոցն՝ զորս ունին կրել մեղաւորք 'ի դժոխս . մինչ զի թէ և լինիցի ն͞ոց ելանել անտի յաւուրն յետնում առ 'ի դատիլ յանդիման ա͞մ ազգաց , բայց մի լիցի նոցա ազատիլ անտի , այլ վերստին դառնալ 'ի նոյն , և մնալ 'ի նմին , և առ այս յարէ զնի և ասէ .

ԺԷ. Դարձցին մեղաւորք անդրէն ՚ի դժոխս. և ամենայն հեթանոսք, որք մոռացան զԱծ։

Բառս'' դժոխք''' կրկին նշանակութե̃ ՚ի գործ ածի ՚ի սբ̃ գիրս մի՝ փոսկ գերեզմանի. երկրդ՝ փոսկ սանդարամետի յ̃ք փոսկ այնր խորխորատի՝ որ է ՚ի ծոց հողագընտոյս. զայսմանէ տես ՚ի սաղ. ԺԵ. 10։ Արդ յայտ է թէ աստանօր բառս դժոխք՝ ոչ դնի փոսկ գերեզմանի, այլ փոխանակ սանդարամետի. վս̃ զի մեղաւորք որք դնան ՚ի գերեզման՝ ոչ դառնան անդրէն ՚ի նոյն, այլ փտին ՚ի նմին։ Իսկ որք դնան ՚ի սանդարամետս՝ վերստին դառնան ՚ի նոյն։ Յայս հայելով ասէ։

Դարձցին մեղաւորք անդրէն ՚ի դժոխս։ Այսինքն, մեղաւորք՝ որք ՚ի մեռանիլն դնան հոգւով ՚ի դժոխս անդընդոց, յետ ծնկաց վերստին դարձցին ՚ի նոյն. զի յաւուրն յետնում ելեալ անտի, և առեալ զմարմինս իւրեանց՝ նախ մատիցեն ՚ի դատաստան հոգւով և մարմնով, և դատեսցին ըստ բոլորին. և ապա ՚ի հատանել վերջին վճռոյ դատապարտութե̃ ՚ի վ̃ր նց̃, և յասել տեառն * երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական ||, դարձցին ՚ի նոյն, յ̃ք երթիցեն վերստին անդր ուստի ելինն։ Այնպէս է ընկելոց և ամ̃ հեթանոսաց. վս̃ յաւելու ասել։

Եւ ամ̃ հեթանոսք, որք մոռացան զԱծ։ Կամի ասել. զոր ասացի վս̃ մեղաւորաց՝ զնոյն պարտ է իմանալ և վասն ամ̃ հեթանոսաց ՚ի մեռնել նց̃ ՚ի հեթանոսութեան իւրեանց. յ̃ք յանհաւատութեան. յոր սակս իսկ դնէ և զայն՝ թէ որք մոռացան զԱծ. որով ոչ ցուցանէ՝ թէ հեթանոսք ոչ լինէին բնաւ զգօնն այ̃, այլ թէ գործով իւրեանց ցուցանէին զինքեանս մոռացօղս այ̃՝ վասն հեռանալոյ ՚ի նմանէ. և վասն պաշտելոյ փոխանակ նորա զարարածս։

Ամենք ջանան այլազգ մեկնել զայս բնաբան. իբր թէ ասել կամիցի մարգարէն. մեղաւորք՝ որք յառաջ քան զքս̃ մեռանեցան ՚ի դժոխս, յիջանել քսի̃ անդր՝ հանեալ եղեն անտի, և եղան ՚ի տեղւոջ ուրեք. և ապա յաւուրն յետնում ՚ի դատին՝ վերստին դարձցին անդր։ Բայց այդ մեկնութիւն արտաքոյ է մտաց առաջիկայ բանիս. զի մարգարէն ոչ խօսի աստ վասն ամանց

մեղաւորաց, ոչ վասն այնոցիկ որք յառաջ քան զգալ ք՟ի իջնին 'ի դժոխս, այլ վասն ամենեցուն. որոյ աղագաւ յաւելու դնել և զբառդ "ամ՟"։ Թող զայն զոր ասեն՝ թէ ք՟ս յիջանելն 'ի դժոխս՝ հանեալ իցէ անտի զմեղաւորս, և եդեալ իցէ զն՟ս այլուր. քանզի այդ յառասպելաց սակի է։

Բարոյապէս, 'ի ձեռն դժոխոց իմացեալ լինի նախ մեղքն, որ քան զդժոխս այլանդակ իմն չար է. ապա որք յետ ելանելոյ 'ի մեղաց՝ դառնան 'ի նոյն, իրաւամբք ասի զնոցանէ, դարձան մեղաւորք 'ի դժոխս. որ է պատիժ պատժոց, զի ո՟պ գրէ փիլիսոփայ ոմն (Սենեքա) * մեծագոյն պատիժն՝ որ կարէ տուեալ լինել մեղաւորի՝ է գործել զնոյն մեղս ‖։ Վիճակ դատապարտելոց է սոյն. ելեր յայսմ վիճակէ՝ մի դառնար 'ի նոյն. ապա թէ ոչ, դառնաս՝ ոչ յարձան քարի, այլ յարձան աղի. որպէս եղև կինն Ղովտայ, որ և իւրով օրինակաւ իբր աղիւ համեմէ զապաշխարող միտս չդառնալ անդրէն 'ի վիճակ մեղաց. * յիշեցէք զկինն Ղովտայ ‖։

Իմացեալ լինի երկ՟ ըստ վարդանայ պարտաւորութ՟ն դժոխոց. ըստ որոյ որք մկրտութ՟բ ն՟ր աւազանին ելին 'ի պարտաւորութենէ անտի դժոխոց, 'ի մեղանչելն՝ անդրէն դառնան 'ի նոյն պարտաւորութ՟ի դժոխոց։

Յարմարական մեկնութ՟բ բառիդ դժոխք՝ իմացեալ լինի տանջանքն խղճի մտաց. զորմէ ասի լինել բարոյական դժոխք, եւս և կենդանի դժոխք, և ներկայ դժոխք։ Աստի որք մեղանչենն, 'ի մեղաց անտի իբր 'ի դժոխոց մատնին 'ի դժոխս խղճի մտաց, որ անխնայ տանջէ, ոչ արտաքոյ՝ այլ 'ի ներքոյ, ոչ ժամ մի, այլ միշտ. ոչ աստ, այլ յամ՟ տեղիս. ոչ 'ի ձեռն այլոյ, այլ իւրովի. ոչ վկայութեամբ օտարի՝ այլ իւրով աննահանջելի վկայութեամբ։ Յայլոց կարես փախչիլ, բայց յայսմ դժոխոց ոչ կարես. եթէ 'ի քէն կարես հեռանալ՝ աստի ևս կարիցես. իրական դժոխք արտաքոյ քո է. սա 'ի քեզ է։ Սա է տանջանքն այն, որ սկսանի աստ, և մնայ անդ մինչև 'ի յաւիտեան։

Դարձեալ՝ այլով իմն համեմատական տեսութ՟բ կարէ առաջի դնել այս մեկնութ՟ի. ըստ որոյ մեղաւորք են մեռանին, ունին անդրէն դառնալ 'ի դժոխս. իբր զի

եղեալ 'ի դժոխս՝ այսինքն 'ի դժոխային վարուց՝ մատնեսցին 'ի դժոխային տանջանս գեհենին. որով և ըստ իմիք ճշմարտի ասել զնոցանէ՝ թէ վերստին դառնան 'ի դժոխս՝ ոչ 'ի նոյն, այլ յայն՝ յոր առաջի դժոխային կեանքն նոցա. ուր և կայցեն 'ի սուգ անվախճան՝ մերժեալ յերեսացն ա՜յ իսպառ. և որք ինքեանք մոռացան զա՜ծ, ա՜ծ ևս մոռասցի զնոսա. և մնացեալ ն՜ց իբր առանց ա՜յ՝ տանջեսցին 'ի մահն յաւիտենական. յորոյ փ՜ր ասէ լուսաւորիչն մեր 'ի յաճախ. Ճառ. Ի.
*դժոխքն 'ի տ՜նէ վ՜ս ն՜ր (այսինքն վ՜ս սատանայի) պատրաս-
„ տեցան, և վ՜ս ն՜ր արբանեկացն և ոչ վ՜ս մարդկան.
„ այլ որք ախորժեն զնոյն խորհել և գործել զչար,
„ ընդ նոսա պարտաւորեալ տանջին զանմահ մահն ||:
Զայս եղեալ մարգարէին՝ դառնայ հայիլ և յարգարն. և տեսեալ զնա պաշտպանեալ յա՜յ և պատուեալ 'ի նմանէ, գրէ և վ՜ս ն՜ր ասելով:

ԺԸ. Ո՛չ իսպառ մոռասցի աղքատն. համբերութիւն տնանկաց մի կորիցէ իսպառ:

Աղքատ ասելով իմանայ աստ զայնպիսի արդար, որ անարգ է յաչս այլոց. և կամ համարի իբր չունող իրիք կատարելութե՜ առաջի մարդկան. և կամ զի համբերելով ընդդիմութե՜ց, և չարիս չհատուցանելով երևի տկար, կամ որ անմիտ և անստացուած գոլով յա՜ծ միայն եդեալ է զյոյս իւր. և այսպիսիքս կոչին աղքատք հոգւով. և սոցա միայն յարմարի այս բան՝ զոր ասէ:

Ոչ իսպառ մոռասցի աղքատն: Կամի ասել. թէպէտև իբր մոռացեալ յա՜յ երևի աղքատն, բայց ոչ իսպառ, զի ա՜ծ ոչ թողու զնա 'ի ձեռաց իբրև զօտար. և ոչ ևս անխնամ լքանէ զնա, այլ պաշտպանէ նմա. և 'ի ժմկի իւրում ցուցանէ նմա, թէ չէր բնաւ մոռացեալ զնա: Ուստի և համբերել նորա որով տանի աղքատութե՜ 'ի ժմկի իւրում երևեսցի: Ոմին իւր յարէ 'ի սոյն, և ասէ:

Համբերութիւն տնանկաց մի կորիցէ իսպառ: Զոր աղքատ կոչեաց՝ զնոյն տնանկ ևս անուանէ. և զոր եզակի ասաց՝ զնոյն յոգնակի դնէ. Համբերութիւն այսպիսեաց ասէ մի կորիցէ իսպառ, մի աստ, և մի 'ի հանդեր-

ձեռն, առ լիցի նմա տատարիչ և զօրացուցիչ 'ի գործս առաքինութեանց, և 'ի հանդերձեալն մեծիչ յաղթ-ութի և վարձատրիչ. ուստի ասէ բարսեղ մ̃ծ 'ի մեկն. մարկ. գլ. ժզ. * աթոռ և ցուպ և հաստատութի է
„ ամ̃ առաքինութեց համբերութին. նաև դռնապան
„ և փականք արքայութեան երկնից ||: Իրաւամբք ասէ * հաստատութիւն ամ̃ առաքինութեց ||. զի որպէս զխոնարհութենէ ասի լինել հիմն առաքինութեց, նոյնպէս և համբերութին հաստատութիւն նոցին, եթէ վայրագունից և եթէ վերնագունից: Ուստի ասէ սարգիս շնորհալի 'ի մեկն. բ. պետ. ա. 6. ճառ. ա.
* ամ̃ առաքինութեց համբերութիւնն է միջոց. վ̃ս զի
„ կէսն 'ի վերոյ է քան զնա' և կէսն 'ի ներքոյ ն̃ր. և
„ ամ̃քն նովաւ հաստատին: Այնոքիկ' որ խոնարհ
„ են քան զնա' նովաւ 'ի բարձրն ելանեն: Իսկ այնոքիկ'
„ որ 'ի վերոյ են քան զնա' իբրու 'ի խարիսխ հաստա-
„ տեալ 'ի նա' կան մնան անշարժ. Նմին իրի ժուժկա-
„ լութիւնն զհամբերութի ծնանի, և համբերութիւն
„ զա̃ծպաշտութիւն ||:

Մ՛ի կորիցէ ասելովն աստ' զայս ևս ցուցանէ, թէ համբերութիւն արդարոց թէև անպտուղ և անպիտան թուեսցի անզգամաց, բայց ցուցցէ 'ի ժմկի իւրում զպտուղս իւր. զի տէր ինքնին պտղաբեր առնէ զհամբերել նոցա. և ոչ մոռանայ զայն:

Եթէ զբայս մի կորիցէ' առցուք 'ի տեղի ներգործականի, վայելուչ ևս մեկնի այս բան. որ թէ ասացեալ էր, համբերութիւնն պահէ յապականութէ զկեանս ամենեցին, և ոչ թողու կորնչել: Ապականելի պտուղք, որպէս բալ, սալոր, ծիրան, թութ, ևս. համեմեալ շաքարով մնան անապական զամս բազումս. զի շաքարն ոչ թողու նոցա դիմել յապականութի. սոյնպէս կեանք մարդոյ համեմեալ համբերութբ. մինչև անապական մնալ 'ի նմա, և տրամադրել առ արժանաւորութի ընդունելոյ զպարգևս յաւիտենութե, և կեալ յաւիտեան. զի 'ի նմա կատարի բան տն. * որ համբերեսցէ իսպառ' նա կեցցէ ||. մատ. Ժ. 22:

Ոչ կարել մարդոյ անվտանգ կալ 'ի նեղութիւնս և 'ի փորձութիս' եթէ բուռն հարցէ զհամբերութենէ, նոյն համբերութիւնն օգնէ նմա և պահպանէ 'ի վտանգե-

լոյ, և ոչ թողու զնա անկանիլ կամ ընկղմիլ ։ Նաւավարք յոչ կարեն անվտանգ գնալ ՚ի վ՟ր լերի եղելոց ՚ի բարձունս՝ առնուն ՚ի ձեռս զկշիռ ( այն է թերմաչափ ) և այնու աներկիւղ ընթանան . նոյնպէս և որ ոչ կարէ անվտանգ գնալ ՚ի մէջ նեղութեանց՝ առցէ ՚ի ձեռս ըզ-համբերութիւն . և ընթասցի յապահովի ։

Տեսանեմք՝ զի որք ոչն գիտեն լողել՝ առնուն ընդ անթովք զպատարկ դդումս , կամ զնեն ընդ կրծով տիկ ուռուցեալ , և նոքիմբք անվտանգ լողեն ՚ի ծովու . ապա թէ ոչ՝ ընկղմին ։ Արդ քեզ ՚ի ծովս Տէր տկարանամք լողել ՚ի ջուրս նեղութեանց և անցանել յայնկոյս մեր ՚ի հանդերձեալ կեանս , հարկ է մեզ առնուլ ը՟ անթովք մեր ընդ զօրութեամբ մերովք զհամբերութիւն իբրև զգդում պատարկ ՚ի մտաւ խորհրդոց , կամ զնել զայն ՚ի կուրծս մեր ՚ի սիրտս մեր իբրև զտիկ ուռուցեալ ա՟ծայինն զօրութեամբ . և այնու լողել և գնալ անվտանգ ։

Իսկ ՚ի հանդերձեալն յայտ է թէ ոչ միայն ոչ կորուսանէ զմարդ համբերութիւնն , այլև երկնայինն պսակացն արժանի առնէ . զի որ վարձատրելոցն է՝ նոքին ևս համբերութեամբ էանց ընդ ծով կենցաղոյս . և որ ոչ է մնացեալ զհամբերել իւր , նոյնպէս ոչ մնասցէ և զհամբերել մեր , և ոչ ընդ վայր հարկանէ ։ Նա արդ
* եթէ ոչ մնասցէ տէր զքոյ համբերութեանդ ա՟մ անձն
,, ( ասէ Լամբրոնացին ) , ապա ընդէր հեղգաս համբե-
,, րել . և թէ վրէժխնդիր է աղքատութեանդ , ապա
,, էր վ՟ն ՚ի դիմանէ հրաժարես ‖ ։

Այլ ք՟զի չարք և հեթանոսք և անա՟ծք ոչ այսպէս համարին , այլ կարծեն՝ թէ ընդունայն է յոյս համբերողացն , որպէս և յայտնի ասէին բռնաւորքն՝ որք չարչարէին զմարտիրոսս , և այժմ իսկ յայտնապէս ասեն անա՟ծք , վ՟ն փութացուցանէ մարգարէս զա՟ծ՝ զի ցուցցէ զխնամս առ ծառայս իւր , և այնու յամօթ արասցէ զբանս անա՟ծիցն և հեթանոսաց . ասելն իւր ասէ ։

ԺԹ . Զի ոչ ՚ի սպառ մոռասցի աղքատն . համբերութիւն տնանկաց ոչ կորիցէ ՚ի սպառ ։

Արդ ասել առ ա՟ծ փոխաբերմամբ իմն զնի . զորմէ

տես 'ի սաղ. գ. 7. խգ. 24. և 27. Իսկ աստ առեալ լինի փոխ փութով նպաստելոյ. զի կարգ բանիցն յայս տայ հայիլ յասելն ։

Արի Տր, և մի զօրասցէ մարդ ։ Յայս բան բառդ մարդ՝ յերկու կարէ հայիլ. մի՝ ըստ Վարդանայ և ըստ այլոց ոմանց 'ի Նեռն. զոր պօղոս կոչէ * մարդ անօրէնութե || . Բ. Թեսաղ. Բ. 3. և յայս միտ կամի ասել. փութամ տէր ժողովել զքոյսդ առ քեզ, զի մի մարդն անօրէնութե յափշտակեսցէ զնս. և այս դնի ը՟ հոգևորին ։

Երկդ հայի 'ի մարդ չար, որպէս է այր անհաւատ կամ հեթանոս. և յայս միտ կամի ասել. դու որ տէրդ ես ցոյց փութով զնախախնամութի և զգթութի քո 'ի վր ծառայից քոց, և մի զօրասցի մարդ, ը՟ թէ մի իշխեսցէ ասել անհաւատ ոք, կամ հեթանոս ոք, թէ ահա յոչինչ դարձաւ համբերութի նոցա. և զայս ասելով՝ զօրասցի բանիւք իւրովք, ը՟ երևեսցի՝ թէ ինքն ուղիղ խորհեցաւ, և ոչ վարկաւ, այնպէս եղև. և այսու համարեսցի զօրաւոր 'ի խորհուրդս և 'ի բանս իւր. եւ և 'ի գործս՝ որով կամէր զօրանալ 'ի վերայ նոցա, այլ՝ տեսեալ զօգնութիւն քո 'ի վր ծառայից քոց՝ ծանիցէ՝ թէ ընդունայն էին խորհուրդք իւր. որպէս եղև նաբուգոդոնոսորայ, անտիոքայ և այլոց բազմաց ։

Երրորդ՝ հայի յն և իցէ մարդ, որ կարող իցէ օգնել և փրկել. և յայս միտ կամի ասել. յապաւինել ումեք 'ի մարդ՝ օգնէ նա նմա, և փրկէ ես, քանի ես դու տէր կարող ես օգնել և փրկել զապաւինեալս 'ի քեզ. արի ուրեմն և օգնեա մեզ, զի մի զօրասցի մարդ, ը՟ թէ զի մի զօրաւոր երևեսցի մարդ ք̃ զքեզ 'ի յօգնելն ։ Յայս միտ առեալ նարեկացւոյն՝ ասէ 'ի բանն. ծԹ. * արդ արի. և մի զօրասցի ք̃ զքոյդ ( զօրութիւն )
,, աջ հողեղինի, ('ի փրկել նորա զդիմեալս յօգնութի
,, իւր ). մի կշռեսցին ողորմութիւնք քո ընդ ջանից
,, մարդկան || . ը՟ ընդ քաջութիս մարդկան, կամ ընդ հեթանոսս, որոց մտանի են զօրութիք, և ցուցցին լինել անպիտան 'ի դատիլն իւրեանց. յոր միտ յարէ զկնի, և ասէ ։

Դատեսցին հեթանոսք առաջի քո ։ Այս բան կրկնակի մեկնի. մի՝ թէ 'ի տեսանել հեթանոսաց զայցելութի

քոյ, զոր արասցես ծառայից քոց, 'ի խնամոց այտի և 'ի դատաստանաց քոց պատկառեալ՝ յամօթ լիցին առաջի քո: Երկրորդ՝ թէ հեթանոսք թէպէտև առաջի մարդկան զինքեանս մեծ և զօրաւոր երևեցուցանեն, և ոմանք իբր ա͞ծ պաշտիլ կամին, բայց եկեսցէ ժամանակ, զի դատեսցին առաջի քո. զ͞ի ոչ ևս երևեսցին առաջի քո այնպիսի՝ որպիսի կամէին երևիլ, այլ դատեսցին. և այնու յայտնի երևեսցի, թէ ընդունայն էին զօրութիւնք և բանք նոցա: Այլ ո͞պ զի ն͞ք այժմէն զպատացեալ և զչար անձին ծանուցեալ՝ ուղղեսցին, աղաչէ վասն ն͞ց զՏէր, և ասէ:

Ի. Կա՛ց Տ͞ր՝ օրէնսդիր 'ի վերայ նոցա. և ծանիցեն հեթանոսք՝ թէ մարդիկ են: (Հանգիստ:)

Թէպէտ և մարդկան է կացուցանել իշխան ինքեանց և այլոց, բայց ք͞զի ա͞ծ է՝ որ յաջողէ և կամ թոյլ տայ այսմ, սմին իրի ա͞յ ընծայէ զայն՝ ասելով:

Կա՛ց Տ͞ր՝ օրէնսդիր 'ի վերայ նոցա. և ծանիցեն հեթանոսք՝ թէ մարդիկ են: Բառդ ն͞շ՝ դնի ասա նախ փինկ հեթանոսաց. որով և միտ բանին լինի այս. կաց և հաստատեա տէր 'ի վ͞ր հեթանոսաց զայնպիսի իմաստուն և զօրաւոր իշխան, յորոյ իշխանութեանն կալով նոցա՝ ուսցին զօրէնս քոյ. և այնու ծանիցեն՝ թէ ոչ են ինքեանք ինքնատեարք, այլ թէ դու ես տէր նոցա. և կամ ծանիցեն՝ թէ չեն այնպիսի՝ որպիսի կարծեն զինքեանս, այլ են մարդիկ տկարք: Իսկ այս յիրաւի կատարեցաւ 'ի ժ͞մս քրիստոնեայ թ͞գրաց, որք եղեն աբգար, տրդատ, կոստանդիանոս, թէոդոս, ևլն. զի յորժամ հեթանոսք անկան ընդ իշխանութ͞բ ն͞ց, ծանեան՝ թէ տկար մարդիկ են, և ոչինչ կարեն առնել ընդդէմ ք͞նի ա͞յ՝ զոր յառաջն արհամարհէին, և ընդդէմ եկեղեցւոյ նորա՝ զոր հալածէին:

Երկրորդ՝ բառս ն͞շ՝ դնի փինկ ժողովրդեան ա͞ծ, և յայս միտ կամի ասել. դիր տէր 'ի վ͞ր ժողովրդեան քո զայնպիսի օրէնսուսոյց իշխան, զի հեթանոսք 'ի կառավարութ͞է ն͞ր պատկառեսցին. և ծանիցեն թէ ժողովուրդ քո յա͞մ կատարեալ է՝ իմաստուն և զօրաւոր, իսկ ինքեանք յիմարք և տկարք: Օ ընտրութենէ այսպիսի իշխանի յառաջագոյն զեկոյց ա͞ծ առ ի͞էլ. և ասէ.

* եթէ մտանիցես յերկիրն . . . և ասիցես, կացուցից
,, 'ի վ՟ր իմ իշխան . . . յեղբարց քոց կացուսցես քեզ
,, իշխան . և մի իշխեսցես կացուցանել քեզ զայր
,, օտար՝ որ չիցէ եղբայր քո . զի մի յաճախեսցէ իւր
,, երիվարս , և մի դարձուսցէ զժողովուրդն յեգիպտոս ||.
Բ՟ . օրին . ԺԷ . 14 . 16 ։ Բայց գտանին ազգք , որք յաւէտ յօտարաց անտի կամին իշխան կացուցանել ինքեանց՝ քան յեղբարց իւրեանց . զի ընդ լծով օտարաց ընկճին և հանդարտին . իսկ ընդ ձեռամբ ազգայնոյն անսաստեն և յապստամբութիւն մտաբերին , մղեալք և վարեալք 'ի թանձրութենէ փտեալ և նեխեալ նախանձու ։

Եր՟դ՝ դնի փոխ մարդկան առ հասարակ . վասն զի մարդիկ թէպէտ և յորդիական պատիւ ունէին վերանալ առաջի ա՟յ շնորհօք և խնամութ՟բ , բայց յանցանել ըստ օրէնսն՝ քան զծառայս անարգ և տղէտ ցուցան , մինչև ցանկալ նոցա գտնել 'ի կարգս ծառայի դասիլ . որպէս տեսաւ յանառակ որդին . ապա առ 'ի դառնալ նոցա յայն վիճակ՝ յոր սահմանեալ էին՝ պիտոյ էր նոցա ունիլ զօրէնսուսոյց և զօրէնսդիր , այն ինքն է տէրն մեր յ՟ս ք՟ս . ուսանիլ նոյա 'ի նմանէ զկամս ա՟յ և ճանաչել զինքեանս և զվիճակ իւրեանց ։

Ի սոյն միտս տարածէ զայս բան բարսեղ վարդապետ 'ի մեկն . մարկ . գլ . ԺԴ . յասելն . * մարդն ( արհամար-
,, հութ՟ օրինաց ) ք՟ զծառայս խոնարհ գտաւ . զի եթէ
,, 'ի ծառայից չափ մնացեալ էր , ոչ ասէր անառակ որ-
,, դին՝ թէ համարեա՛ զիս իբրև զմի 'ի ծառայից քոց .
,, և յաղագս այսորիկ մարգարէն աղերսէր ա՟յ ասե-
,, լով . կացո՛ , տէր , և օրէնսդիր 'ի վ՟ր մարդոյն , զի
,, ծանիցեն զինքեանս՝ թէ մարդիկ են . ք՟զի 'ի բազ-
,, մութ՟է չարեացն և գալն 'ի միտսն պակասեալ եղև .
,, ո՟պ 'ի յաճախել մարմնական ցաւոց ընդարմացեալ լինի
,, հիւանդն . առ որ իբրև զդեղ իմն բժշկական խնդ-
,, րէ մարգարէն զօրէնսն || ։ Որպէս և տեսանես՝ աստանօր բարսեղ վ՟պ զբառդ տէր ոչ դնէ կոչականապէս , այլ իբր խնդիր բայիս կացո՛ , իբր թէ եդեալ էր , կացո՛ զոք տիրող 'ի վ՟ր ն՟ր և օրէնսդիր . կամ դիր նոցա օրէնս . այլ այս ոչ ինչ վնասէ մտաց բանին ։

Չ՟րդ՝ յարմարական իմն մեկնութ՟ , դնի փոխ առաքե-

լոց. որոց գլուխ և օրէնադիր եդ տէր զպետրոս, տալով նմա զաթոռս և զփականս. ո՛պ գրէ ծործորեցին 'ի մեկն. մատ. գլ. Ժ. * պետրոսի ես ասէ ոչ միայն „ զաթոռոցն (պատիւ), այլև զփականսն ||, և իբրև զգլուխ մեղադրեաց զնա յոչ հսկել նորա 'ի վ՞ր այլոց 'ի պարտիզի. Սուտի ասէ նա ինքն ծործորեցին 'ի գլ. ԻԶ. * առ պետրոս ասնէ զբանն՝ ոչ վայրապար, „ այլ իբր գլուխ առ նա խօսի մեղադրելով, և նովաւ ընդ այլսն. ||

Արդ՝ ո՛պ ասացաք 'ի սկզբան սաղմոսիս, այս իններորդ սաղմոս առ եբրայեցիսն աւարտի աստանօր. և սկսանի տասներորդն 'ի յաջորդ համարոյն առանց իրիք վերնագրի. Այս իսկ թերևս ըստ եօթանասնից և 'ի ձեռագիր սաղմոսս մեր դնի աստ՝ "Հանգիստ". ուր յեբր". գրի՝ "սէլա". զորմէ տես 'ի ներած". գլ. Թ. Իսկ թէ արդեօք 'ի սկզբան ևս այնպէս բաժանեալ էին սոքա, թէ յետոյ բաժանեցան, ոչ է յայտ. Ի քաղդէացիս, ևս և 'ի թարգմանութիւնս ինչ յունաց բաժանմամբ դնի. իսկ յեօթանասնից թարգմանութե առանց բաժանման. Նաև թէպէտ 'ի լատինս և յիմծաղնչին ունանայ բաժանմամբ դնի, բայց ասի ևս անդ՝ թէ այս է ըստ եբրայեցւոց. և կրկնի ևս այլ տասներորդ սաղմոս. Նաև այսու ոչ բազմանայ թիւ սաղմոսացն քան զճծ. զի որ 'ի մեզ սոյն դնի առանց բաժանման, յեբրայեցիսն այլք դնին անբաժան. ուստի՝ թէ 'ի մեզ և թէ 'ի նոսա ճծ համարին սաղմոսք.

Իսկ տարբերութիւն այսոցիկ իններորդ և տասներորդ սաղմոսաց յայտ է, զի իններորդն էր գոհութիւն առ ած վ՞ն գաղտնեայն որդւոյ. իսկ այս է մաղթանք 'ի դիմաց տառապեալ և խոնարհ անձին առ ած՝ առ 'ի ազատութիւն 'ի ձեռաց ամպարշտի. ևս և առ 'ի յանդիմանութիւն գործոց նորա. Արդ՝ զայսր մաղթանաց զսկիզբն խանդաղատական իմն օրինակաւ առաջի դնէ մարգարէն, և ասէ.

իբ. Ընդէ՞ր տէր հեռացեր 'ի հեռաստանէ. անտես առարեր 'ի
դէպ նեղութե ժամանակի.

Թէպէտ և ապաւէն է ած տնանկին, և օգնական 'ի դէպ ժմկի՝ որպէս վկայեաց մարգարէն 'ի վերոյ 'ի հմր.

9 . բայց երբեմն երեւի ոչ օգնել նմին եւ 'ի դէպ ժամի , այլ իբր 'ի հեռաստանէ կալով դիտել , եւ գաղտնի դատաստանաւ իւրով թոյլ տալ նմա տառապիլ 'ի ձեռաց ամպարշտի՝ յառաւել օգուտ նորին ։ Զայս այսպէս տեսեալ տնանկին՝ տխրի արդարն եւ զարմանայ , բայց ոչ յուսահատի . այլ առաւել եւս ջերմանայ իբրեւ ոսկի 'ի բովս առ ընդունելոյ եւ տպաւորելոյ յինքեան զայցելութիւնն այ . ուստի եւ որդիական համարձակութեամբ պաղատի առ նա , որ առնէ աստ եւ մարգարէն ասելով ։

Ընդէ՞ր Տէր կացեր 'ի հեռաստանէ . անտես արարեր 'ի դէպ նեղութեան ժամանակի ։ Կամի ասել , ո՞չ ապաքէն սովոր էիր դու տէր օգնել տնանկին եւ աղքատին 'ի դէպ ժամի նեղութե , մինդ 'ի տառապիլ նր 'ի ձեռաց ամպարշտի . ապա ընդէ՞ր եւ այժմ 'ի նեղութեան մերում , յորում է դէպ ժամ օգնելոյ , * կացեր 'ի հեռաստանէ ‖ . ըն ոչ օգնեցեր , եւ ոչ ցուցեր զօգնութիւն քո ։ Իսկ ըստ այսմ թէպէտ պարտ էր ասել , ընդէ՞ր ոչ օգնեցեր՝ բայց ոչ դնէ այսպէս , այլ թէ ընդէ՞ր կացեր 'ի հեռաստանէ . վն զի այ թէպէտեւ առ ժամ մի թոյլ տայ տառապիլ ծառայից իւրոց , բայց ոչ թողու զնս առանց օգնականութե , եւ ոչ առնէ անտես իսպառ . այլ ըստ ասելոյ մեր այժմ դրեթէ 'ի հեռաստանէ կալով սպասէ , զի աղաղակեսցեն առ նա . եւ նա ցուցցէ նոցա զօգնութիւն իւր . ոչ զի ինքն կարօտ է աղաղակի նոցա , այլ զի նք այնու արժանասցին օգնութե նր ։ * Այս այ խնամոյն սովո-
,, րութիւն է ( ասէ Լամբ . ) զի յորժամ յինքն ձգէ զմք
,, 'ի մարդկանէ , առ սակաւ սակաւ 'ի փորձանս թո-
,, ղացուցանէ . որպէս զի մի միայն շնորհօք , այլ եւ գոր-
,, ծովք իւրովք պսակեսցի ‖ ։

Այս բան կարի իմն է պատշաճի ասի 'ի դիմաց մարդկային բնութե առ բանն այ , 'ի պաղատիլ նորա առ նա բերանով նախահարց . ընդէ՞ր տէր այսչափ հեռացուցեր զժմն գալստեան քո . դէպ ժամ է այցելութեան քում , ընդէ՞ր անտես արարեր տէր ։

Իսկ արդ քանզի 'ի յամել այցելութե փրկողին , եւ 'ի հեռանալ զօրաւոր պաշտպանողի՝ սկսանին ամպարիշտք յոխորտանօք վարիլ ընդ նուաստս , յայս հայելով մարգարէին՝ յետ առաջի դնելոյ զկայն այ 'ի հեռաս-

տանէ, 'ի մէջ բերէ և զխորխտումն ամբարշտաց 'ի վ՟ր աղքատաց, և զնուաճիլ նոցին, ասելով.

Ի՟Թ. **Յամբարտաւանել ամպարշտի՝ այրէ աղքատն. արգելուցին 'ի խորհուրդս իւրեանց, զոր և խորհեցան.**
Աստանօր ամպարիշտ ասելով իմանայ զայն, որ չար է՝ միանգամայն և մեծատուն, կամ զօրաւոր. զի համեմատութի՟ւ աղքատի դնէ. իսկ աղքատ ասելով իմանայ զայն, որ բարեպաշտ է՝ միանգամայն և անինչ կամ տկար, և կամ տառապեալ. Զկիրս այսպիսի աղքատի առաջի առնէ մարգարէն 'ի չար կրից ամպարշտի. և գժգմնելով իմն ընդ այն ասէ.

**Յամբարտաւանել ամբարշտի՝ այրի աղքատն.** Այսինքն՝ յորժամ ամբարիշտն վ՟ն յաջողութեանց իւրոց կամ վասն այլ ինչ պատճառի ամբարտաւանութի՟ւ վարի 'ի բանս և 'ի գործս իւր, և արհամարհէ զայլս, մանաւանդ զաղքատս, և կամ յոխորտայ, և սպառնայ, այրի յայնժամ աղքատն, ո՟ր տառապի յոյժ և յոգւոց հանէ, և իբր յայրեալ սրտէ բոցս և ծուխս հառաչանաց արձակէ, և երբեմն զայրանայ եւ՝ և զչարի.

Զայսպիսի ամպարիշտ մեծատունս՝ գազանաց նմանեցուցանէ ս՟բ գիրն, զգործս գազանաց առաջի առնելով. Ուստի սարգիս շնորհալի, 'ի մեկն. յակ. Ե. 4. ճառ. Ժ. 'ի մեկնել զբան առաքելոյն. ասէ. * որպէս
,, զգազանաց վայրենեաց խօսի զմեծատանց... (զի)
,, տմարդութիւն ցուցանեն 'ի զրկելն և 'ի կեղեքելն
,, զաղքատսն. և նոքա վասն զի տկար են զփոխարէն
,, զրկանացն հատուցանել ամպարշտաց, միայն առ
,, ա՟ծ 'ի վեր աղաղակեն ասելով. տես տէր և մի լռեր.
,, խնդրեա՛ զվրէժ մեր յանա՟ծիցս յայսցանէ. և զայս
,, յոգւոց հանելով ասեն. այրեն զմեզ և խորովեն ըստ
,, մարգարէութեանն. յամբարտաւանիլ ամպարշտին
,, այրի աղքատն. և դու անսաս տէր, և ոչ հանես ընդ
,, կառափն նո՟ց զչարութիւս նո՟ց. Եւ այս ձայն բազում
,, անգամ զարթուցանէ զա՟ծ 'ի վրէժխնդրութիւն ամ-
,, պարշտացն. Զայս և ինքն ա՟ծ ասաց մարգարէիւն
,, վասն տառապանաց աղքատին և հեծութե՟ն տնանկին
,, այժմ յարեայց ասէ տէր ||. Եւ զի սովին ընկճին
ամպարիշտք, և ընկրկին, սմին իրի յաւելու մարգա-

րէն, և ասէ ։

Արգելցին (ամպարշտք) 'ի խորհրդոց իւրեանց, զոր ես խորհեցայ ։ Որպէս թէ ասէր, ոչ է պարտ աղքատի տառապելոյ 'ի տեսանել անդ զամպարիշտն ամբարտաւանիլ 'ի յաջողութիւս իւր. վն զի ամբարտաւանութիւն ամպարշտաց ոչինչ զօրէ. զի ոչ կարասցեն նոքա 'ի գործ դնել զայն ամ՝ զոր ամբարտաւանութբ խորհին 'ի յաջողութիւնս իւրեանց, այլ՝ արգելցին յինէն ։ Իսկ եթէ կարասցեն ևս առնել ինչ, այն առ ժմկ մի է, և յետոյ 'ի դերև ելցէ ։

Այս բան այլազգ ևս մեկնի ըստ յարմարական մեկնութբ. իբրզի 'ի տեսանել աղքատին՝ թէ ամպարիշտն 'ի յաջողութե իւրում ամբարտաւանութբ վարի, գայթակղի 'ի նա, և դատի, և չարիս ևս խորհի, որով և այրի, քն մեղանչէ ։ Իսկ այսու երկոքին ևս, քն ամպարիշտն և աղքատն՝ * արգելցին 'ի խորհուրդս իւրեանց՝ զոր խորհեցան ‖. այս է, մնասցեն 'ի խորհուրդս իւրեանց անպիտան և խոտան. զի ամպարիշտն, որ խորհի՝ թէ ունի իրաւունս յախորժելոյ 'ի վն այլոց և յերջանկութե վայելելոյ, այնու զինքն խաբէ, զի ոչինչ կարէ, այլ արգելանի յինէ ։ Իսկ աղքատն, որ տեսանելով զամպարիշտն յայսպիսի խորհուրդս, վշտանայ ընդ այն, այնու արատաւորի 'ի խորհուրդս իւր, և արգելանի 'ի խորհիլ զբարին ։ Իսկ այսպէս երկոքին ևս խորհելով զայնպիսի խորհուրդս՝ որ ոչ են ուղիղ, խոտան գտանին 'ի նոսին ։

Համբոյնացին այլազգ ընթեռնու զայս բան, և այլազգ մեկնէ, և այն՝ հոգևորապէս յասելն. արիացեալ աղքատ հոգին յորժամ բարիս խորհի, 'ի խոտորեալ սատանայի 'ի վն նորա՝ արգելեալ լինի 'ի բարի խորհրդոց անտի և խափանի. վն և աղաղակէ դիմէ առ ած՝ գտանել զօգնութիւն յայնպիսի ժմկի ։ Ասա եղեալ մարգարէին՝ դնէ այժմ և զպատճառն՝ թէ ընդէր ամպարիշտն ամբարտաւանի 'ի յաջողութիւն. վասն որոյ ասէ ։

իզ. Ոչ է գոլի ժողովարն 'ի ցանկութեան անձին իւրոյ. որ ճշէն, և ոչ գոլի ։

Սեղաւոր ասելով խնմայ զայն, զոր 'ի նախընթաց

համարն ամպարիշտ կոչեաց. զորմէ ասացաք լինել այնպիսի ոք՝ որ իցէ չար, միանգամայն եւ մեծատուն կամ հզօր. Այսպիսիս ասէ վ՛նկ 'ի յաջողութիւնս իւր ամբարտաւանի, վ՛ն զի զրգռի 'ի գովութենէ. ուստի ասէ.

Զի գովի մեղաւորն 'ի ցանկութիւնս անձին իւրոյ. Այսինքն մեղաւորն 'ի յաջողել կամաց իւրոց՝ գովի 'ի բազմաց ըստ ցանկութե՛ սրտի իւրոյ, կամ ըստ որում ցանկայ գովիլ 'ի գործս իւր. զի թէպէտեւ չարաչար գործէ՝ զոր գործէ ըստ որում մեղաւոր. բայց քանզի մեծատուն է, վ՛նկ գովի 'ի բազմաց. եւ յաղագս գովեալ լինելոյն ամբարտաւանի. Զայն խօսի եւ վասն զրկողին յասէլն.

Անօրէն՝ եւ նա գովի. զ՛ի թէ որ զրկէ, թէպէտեւ այնու չար գործէ, բայց ք՛զի այնու ցուցանէ՝ թէ զօրաւոր է, նա եւս 'ի բազմաց գովի. որով եւ պարծի. Իսկ զի այսպիսեօք չարաչար բարկացուցանէ մեղաւորն զԱծ, զանգատելով ինն խօսի մարգարէն եւ ասէ.

ժդ. Եւ ընդէ՞ր բարկացոյց մեղաւորն զԱծ ըստ բազմութեան բարկութեան իւրոյ, թէ ոչ խնդրէ.

Արդարեւ յիրաւի զարմանալ արժան է ընդ անզգայութի՛ մարդոյ՝ որ թէպէտ եւ գիտէ, թէ զոր գործէ՝ նովին բարկացուցանէ զԱծ, բայց ինչ ոչ համարի՝ զոր մեծ ճանաչէ. վ՛ն եւ յանդգնի մեղանչել. Նոյնպէս առաւել եւս արժան է զարմանալ ընդ այն՝ զի յետ մեղանչելոյն անփոյթ մնայ 'ի մեղսն անդ, որով բարկացոյց զբարերար իւր. Յայս հայելով մարգարէն ասէ.

Եւ ընդէ՞ր բարկացոյց մեղաւորն զԱծ ըստ բազմութեան բարկութեան իւրոյ, թէ ոչ խնդրէ. Նաեւ՝ իսկ ընդէ՞ր՝ հայի աստ ոչ միայն 'ի բառդ բարկացոյց, այլ առաւել եւս 'ի յետին բանն յայն՝ թէ ոչ խնդրի. որպէս թէ ասէր. զիա՞րդ բարկացոյց մեղաւորն զԱծ. եւ զիա՞րդ անփոյթ կայ 'ի մեղս իւր կարծելով թէ ոչ խնդրի այն. տե՛ս եւ 'ի համարն 35.

Իսկ բառդ բարկութիւն՝ դնի փ՛նկ մեղաց՝ որով մեղաւորն բարկացուցանէ զԱծ. եւ այս է առումն ճարտասանից ըստ ձեւոյ փոխանունութե՛ն, որով անուն գործոյն դնի փ՛նկ անուան պատճառին. եւ զի բարկացուցա-

նել զա՟ծ է գործ մեղաց, վ՟նկ փ՟նկ մեղք դնելոյ՝ դնէ բարկութիւն. և կամի ասել. զի՞ է՝ զի մեղաւորն բազում մեղօք բարկացոյց զա՟ծ, և համարեցաւ թէ ոչ լինի խոյզ և խնդիր ըստ բազում բարկութեան իւրում; զ՟ի 'ի վ՟ր բ՟զմ մեղաց իւրոց՝ որով բարկացոյց զա՟ծ. Պատշաճագոյն ևս երևի 'ի ձեռն բարկութե՟ իմանալ աստ զամբարտաւանութ՟ի ամպարշտին, զոր եդ 'ի համարն 22. ո՟պ թէ ասէր. զի՞ է՝ զի մեղաւորն ամբարտաւանութ՟բ այրելով զսիրտ աղքատի՝ յայտնի բարկացոյց զա՟ծ. և վարկաւ թէ ոչ գոյ վրէժխնդրութիւն առ յ՟նյ: Նաև ըստ այսմ՝այն յետին բան՝ զոր ասէ թէ ոչ խնդրի, լինի ևս և պատճառ նախընթացին. որպէս թէ ասէր. վ՟նկ մեղաւորն բ՟զմ մեղօք բարկացոյց զա՟ծ, և կայ յանհոգս, վ՟ս զի համարի թէ ոչ խնդրի վրէժ մեղաց իւրոց. որով չարեաց 'ի չարիս մտաբերի, և զա՟մ ընթացս կենաց իւրոց յապականութիւն թաթաւէ. և զի այսը ա՟մի սկզբնապատճառ այն է՝ զի ոչ յիշէ զա՟ծ, և ոչ ունի զնա առաջի աչաց իւրոց, սմին իրի յարէ զկնի մարգարէն, և ասէ.

ԻԵ. Ո՛չ է ա՟ծ առաջի աչաց նորա. պղծին են ճանապարհք նորա յա՟մ ժամ.

Ճանապարհք մարդոյ՝ զ՟ի գործք մարդոյ յանժամ են բարի, յորժամ առ ա՟ծ կարգին, և ըստ ա՟յ գործին. այլ գործք մեղաւորի չեն այսպիսի. զի որովհետև մեղաւորն ապստամբի 'ի հրամանացն ա՟յ, և կամ ըստ մտաց նախընթաց համարոյ համարի՝ թէ ոչ քննին գործք իւր, ոչ կարգէ զայնս առ ա՟ծ, և ոչ ըստ ա՟յ գործէ, այլ մանաւանդ ընդդէմ ն՟ր գործելով բարկացուցանէ զնա. իսկ թէ ը՟էր, տայ զպատճառն ասելով. Ո՛չ է ա՟ծ առաջի աչաց ն՟ր = յա՟մ ժամ: Կամի ասել. թէպէտև ա՟ծ միշտ առ նմա է, զ՟ի մօտ առ մեղաւորն, բայց աչք հոգւոյ ն՟ր՝ զ՟ի միտք ն՟ր հպարտութ՟բ և պէսպէս մեղօք կուրացեալ ոչ դիտէ զհաճոյսն ա՟յ, և կամ զ՟ը եբր". ոչ խորհի զնմանէ: Ուստի և ճանապարհք ն՟ր, զ՟ի գործք նորա միշտ պիղծ են և չար, և անիրաւութ՟բ զանգեալ, և խաւարաւ լցեալ: Նաև զայսմանէ չէ նմա ինչ փոյթ. զի որպէս ասաց մարգարէն, համարի թէ ոչ գոն քննութիւնք գործոց իւրոց, և ոչ հատուց-

մունք ․ Իսկ զի այսպիսիս խոտորեալ է յօրինացն ա̄յ իսպառ , և յա̄մ իրաւանց , զոյն յայտ առնել կամելով մարգարէին՝ յարէ զկնի , և ասէ ։

իզ. ԲԱՐՁԵԱԼ ԵՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՅԵՐԵՍԱՑ ՆՈՐԱ․ ՚Ի Վ̄Ր Ա̄Մ ԹՇՆԱՄԵԱՑ ԻՒՐՈՑ ՏԻՐԵՍՑԷ ։

Երեսօք իմացեալ լինի աստ միտքն՝ և կամ յաւէտ խիղճ մտացն․ զի սա է իբր երես հոգւոյն ՚ի բարոյական գործողութ̄իս․ և կամ դարձեալ երեսօք իմացեալ լինի ներկայութ̄ին՝ որով տեսեալ լինի իրն․ և ա̄ծ այսմ բարձեալ լինին և ոչ տեսանին իրաւունք յամբարիշտ մարդոյ ։ Իսկ իրաւամբք իմացեալ լինին աստ բարոյական սկզբունք կամ ճանաչմունք ուղղութեան․ որք են իբր աչք յերեսսն անդ․ և զի եղծեալ են ա̄ք յամբարիշտն , վ̄յ ասէ ։

ԲԱՐՁԵԱԼ ԵՆ ԻՐԱՒՈՒՆՔ ՅԵՐԵՍԱՑ Ն̄Ր ։ Այսինքն բարձեալ են ՚ի խղճէ մտաց ամպարշտի ոչ միայն իրաւունք ա̄յ , այլև իրաւունք բնական օրինաց , այս է՝ արդար ճանաչումն՝ առնելոյ զբարին և խոտորելոյ ՚ի չարէն , ևս և բարձեալ է ուղիղ ճանաչումն ոչ առնելոյ այլում զայն ինչ , զոր ոչ կամի՝ թէ այլք արասցեն ինքեան ։ Մարթ է աստ իրաւամբք իմանալ զդատաստանն ա̄յ ․ որ յանդիման լինի բարեպաշտից , և բառնի ՚ի մտաց ամպարշտաց ․ յոր միտ առեալ և բարսեղ վ̄դպ ՚ի մեկն․ մարկ․ գլ․ ժէ․ ասէ․ * օրէնք հասարակաց է այս ,
„ ոչ ոք յայնցանէ՝ որ յառաքինութեան կեցցէ՝ թերե-
„ հաւատէ ՚ի դատաստանէ՝ թէպէտև անհաւատ ի-
„ ցէ․ և ոչ ոք ՚ի լցելոցն մեղօք բաց ՚ի սակաւուց ընդ-
„ ունի զյարութ̄ին․ ըստ այնմ բարձեալ են դատաստանք
„ քո յերեսաց նորա․ ընդէր․ զի պիղծ են ճանապարհք
„ նորա յա̄մ ժամ ‖․ ուստի և աներկիւղ գործէ զոր գործէ , և յանդուգն բռնանալ կամի ընդդէմ այլոց․ զորմէ խօսի մարգարէն ՚ի հատուածդ որ զկնի՝ ասելով ։

Ի Վ̄Ր Ա̄Մ ԹՇՆԱՄԵԱՑ ԻՒՐՈՑ ՏԻՐԵՍՑԷ ։ ա̄յ այլ ամբարիշտ բանութ̄բ և անզգամութ̄բ տիրեսցէ․ այս է՝ իբր իշխանաբար յոխորտասցի , և տառապեցուսցէ․ և սպառնասցի ընդ ոտիւք իւրովք արկանել զա̄մն զն̄ս , զորս թշնամի իւր կարծէ․ կամ զայնոսիկ որք հակառակին

նմա ։ Եւ զայս առնէ իբր անկասկած . վասն զի մնոտի յուսով համարի՝ թէ կարէ առնել այլոց , զոր կամի . և թէ՝ բռնութիւն իւր ունի տևել ըստ հաճութեան իւրում ։ Զայս ընդունայն համարումն նորա առաջի դնէ մարգարէն 'ի յաջորդ համարն , և ասէ ․

ԻԷ ․ Ասաց 'ի սրտի իւրում , թէ ո՛չ սասանեցայց՝ ազգէ յազգ առանց չարի ։

Որպէս ուղիղ ճանաչումն առաջնորդէ յուղիղ գործս , սոյնպէս և թիւր ճանաչումն 'ի թիւրս և յապականեալս ։ Եւ զի բազում են այսպիսի թիւր ճանաչմունք 'ի միտս ամբարշտի , զմին յայնց յառաջ բերէ մարգարէն իբր առաջնորդող անօրէնութեան գործոց նորին 'ի համարել նորա զինքն անսասան . վասն որոյ ասէ ։

Ասաց 'ի սրտի իւրում՝ թէ ոչ սասանեցայց ։ Այսինքն թէ ամպարիշտն տեսեալ զինքն 'ի յաջողութեան և յիշխանութեան՝ խորհեցաւ կամ խորհի 'ի սրտի իւրում , և ասէ . ոչ կարէ իր ինչ ինձ վնասել , և ոչ ոք կարէ զիս ընկենուլ 'ի վիճակէ աստի իմմէ . ուստի և զոր միանգամ առնեմ , մնամ անսասան , և այն՝ միշտ . և առ այս յարէ , և ասէ ։

Ազգէ յազգ առանց չարի ։ Բառս ազգէ յազգ՝ դնի 'ի սաղմոսս փոխ յարատեւութեան , և նշանակէ միշտ ցամ դարս . ըստ որում և յեբր" դնի լետօռ վատօռ . այս է դարէ 'ի դար . և զի դարք ազգօք գան , և ազգօք գնան , 'ի մերումս փոխ ասելոյ դարէ 'ի դար՝ դնի յազգէ յազգ . որ է ասել միշտ՝ ցորչափ յաջորդեն ազգք զկնի ազգաց . և ըստ այսմ կամի ասել . միշտ և հանապազ մնացից առանց իրիք չարի կամ առանց իրիք վնասու ։ Յայտ արարեալ մարգարէին զորպիսութիւն սրտի ամպարշտին , և զթիւր խորհուրդս նորա , յայտ առնէ այժմ և զհանգամանս բերանոյ նորա , և ասէ ․

ԻԸ ․ Անիծից և դառնութեամբ և նենգութեամբ լի՛ է բերան նորա . 'ի ներքոյ լեզուի նորա ցաւ և վաստակ ։

Անիծիւք իմանայ՝ զհայհոյութիւնս առ Աստուած , և զյիշոցատուութիւնս առ մարդիկ , ( որ է քիւֆիւր ) ըստ որում մեկնէ Շնորհալին . 'ի հանրականն . 11 ։ Դառնութեամբ իմանայ զբամբասանս , զտրտունջ , զբրթմնջիւն , ևն ։

՝Նենգութբ իմանայ զխաբեբայութիւն, զստասացու- թի, զստերդմնութիւն. եւ: Օսոսին նախ ընէ լինել պտուղ բերանոյ ամպարշտի յասելն:

**Նզովք եւ դառնութբ եւ նենգութբ՝ լի է բերան նր:** ՝Նոյն է թէ ասէր 'ի հոլովակումն ըստ այլոց, անիծիւք եւ դառնութբ եւ նենգութբ լի է: Կամ ասել. ամ չա- րեօք լի է բերան ամպարշտի. զի թէ անէծք ասիցես եւ թէ դառնութի ընդ նմին եւ նենգութիւն, ամքին մք ժայթքին 'ի բերանոյ նորա:

՝Նախ առաջին 'ի բանալ բերանոյն՝ փնկ օրհնութեան կամ գոնէ փնկ մաքուր բանից՝ անէծք ելանեն. որպիսի են բերանք ոմանց յանբարի քրիստոնէից: Բայց զար- մանք են՝ զի որ ուտէ զանուշահոտ ինչ, որպիսի են ազ- գի ազգի համեմք, (տարչին, խարամփիլ, եւ) բե- րան նորա անուշ բուրէ. եւ ոչ հոտ գարշ. եւ որ ուտէ զխոտն կոչեցեալ հրեշտակային՝ շունչ նր քաղցրանայ. դու քրիստոնեայ գոլով ճաշակես զսրբութիւն, եւ բու- րես զպղծութի. ուտես զհացն հրեշտակաց, եւ շնչես զշունչ դիւաց. եւ այս նշան է՝ թէ 'ի հաղորդիլդ՝ ոչ ես ընկալեալ զշնորհս խորհրդոյն: Ի բանիլ դրան՝ եթէ ճռնչիցէ, իմանաս՝ թէ ոչ է օծեալ յաղխամն. սոյնպէս եւ 'ի բանիլ բերանոյ քո անիծիւք՝ յայտնի ե- րեւի թէ չէ օծեալ հոգի քո յիւղոյ շնորհաց խորհրդոյն: Երկրդ՝ փնկ քաղցր բանից՝ դառնութիւն բամբասանաց եւ տրտնջմանց. անօթ լցեալ անուշահոտ հիւթիւ 'ի բանիլն՝ հոտ բարի ելուզանէ. եթէ 'ի բանիլ անօ- թոյն հոտ գարշ ելցէ՝ ցուցանի՝ թէ գոյ 'ի նմա հիւթ գարշ: Եթէ հոգի քո լցեալ էր առաքինութբ, 'ի բա- նալ զբերանդ՝ ոչ ելանէր բամբասանք, կամ չարախօ- սութիւն, կամ խեղկատակութի:

Երրդ՝ փնկ ճշմարտութե նենգութի, ստութիւն, խար- դախութի, եւ: Երգեհոն է սիրտ մարդոյ, եւ իբր փող երգեհոնի բերանն. եթէ ապականեալ իցէ այս փող՝ անախորժ բանս հնչէ: Եթէ խանգարեալ իցէ ժա- մացոյցն՝ փնկ եօթն հարկանելոյ՝ ինն հարկանէ. այս- պէս եւ բերան նենգաւորի, եւ լեզու չարասիրի. զի բանք ելեալք լեզուաւ ընդ բերանն ցուցանեն թէ յո- րում որպիսութե իցէ հոգի: Հիւանդութի եւ առող- ջութի մարդոյ 'ի լեզուէ ճանաչի, սոյնպէս եւ յոռութի

և բարութիւն հոգւոյդ 'ի լեզուէ ։ Եթէ հիւանդ ես հոգւով և եթէ առողջ՝ լեզու քո յայտնէ ․ * 'ի բանից քոց պարտաւորեսցիս ‖ ․ մատ ․ ժբ̄ ․ 37 ։

Ըստանոր որպէս և ասացաք՝ շարադրութ̄ի առաջիկայ ընաբանիդ ըստ կարգի բառիցն մթին է անկեալ ․ զի փոխկ դնելոյ , լի է բերան նորա անիծիւք և դառնութ̄ , և նենգութ̄ ․ ( որպէս գնի 'ի քանի մի սաղմոս , և 'ի վարդանայն , և 'ի հանրականն շնորհալւոյն , ) եդեալ է յուղղականն ․ բայց այս ազդողագոյն ևս կացուցանէ զասացեալն ։ Իսկ թէ զինչ զհետ գայ այսպիսի չար բանից , յայտ առնէ ասելով ։

Ի ներքոյ լեզուի ն̄ր ցաւք և վաստակք ։ Որքա երկոքին պ̄ ցաւք և վաստակք՝ են ծնունդք ժանտք վերոյեդելոց պ̄ անիծից , դառնութ̄ե և նենգութեան ․ զի 'ի ներքոյ լեզուի ամպարշտի պ̄ 'ի ներքոյ չարաթոյն բանից նորա՝ զորս խօսի լեզուաւ , զետեղեալ կան այսոքիկ երկու չարիք , պ̄ ցաւք և վաստակք ․ իբր զի բանք նորա կարգին 'ի ցաւեցուցանել զսիրտս այլոց , և 'ի վաստակեցուցանել զմտ̄ , պ̄ առնել՝ զի այլք աշխատեսցին 'ի շինել , զոր ամպարիշտն բանիւք իւրովք եղծանէ ։

Կիւրղ վճլ 'ի մեկն ․ եսայ ․ ցաւօք խմնայ զչարիս , զորս ամպարիշտն թաքուցեալ պահէ 'ի ներքոյ լեզուի իւրոյ ․ * Նիւղք ասէ զչարիս ցաւս կոչէն ․ 'ի ներ-
,, քոյ լեզուի նորա ասէ ցաւք ․ և առաքեալ , մի 'ի ցաւս
,, ցանկութ̄ե ․ և յիրաւի ցաւք են չարիք , որ բերեն
,, պտուղ սատակման ‖ ։

Հաւանականագոյն է ասել , թէ այս բան նոյն է ընդ վերնոյն ․ զի զոր անդ եդ անէծք և դառնութիւն , կոչէ զայնս ցաւք և վաստակք ․ պ̄ անէծք ցաւեցուցիչք , և դառնագին բանք վաստակեցուցիչք ։ Իսկ պատճառ այսպիսի տարազու խօսելոյ մարգարէին է յանդիմանելի ցուցանել զչարաբանսն , պ̄ զվիշոցնատուն , և զդառնալեզուն ․ որ փոքու իւիք յափշտակեալ 'ի բանից կամ 'ի գործոց ընկերին՝ յիշոցս թափէ 'ի վերայ նորա , և դառնահոտ ժանտութիւնս հոսէ ։

Եթէ ասիցես ցնա , ընդէր ոչ խօսիս քաղցրութ̄ ․ պ̄ ասէ ․ վասն զի ասէ այրէ նա զսիրտ իմ ․ եթէ ընդ այդ զայրանաս և ոչ հաճիս , դու ընդէր այրես զսիրտ ն̄ր դառնութ̄բ բանիցդ ։ Եթէ յիրաւի այրէ զսիրտ քո , դու շի-

ջն, մի բուրեր զանձն։ Ջաղուէ (որ է ըստ աղաձի) յայրելն անոյշ բուրէ, կաշի յայրելն գարշ հոտ հանէ. պատասխան ոչ է հուրն, այլ ինքն։ Ջուր արկեալ 'ի վ՟ր քարի՝ ոչ այրէ. յանկանիլն 'ի վ՟ր փշոյ՝ բորբոքէ, և 'ի վ՟ր մոմոյ՝ հալէ։ Ասեղն հարեալ յեղունգն՝ ոչ պատասխանէ զցաւ, 'ի մերձիլն 'ի մարմին ցաւեցուցանէ. պատասխան ոչ է ասեղն, այլ ենթակայն։

Եթէ խոնարհ իցես և եղբայրասէր՝ ոչ ցաւիս յասեղանման բանից ընկերին, և ոչ հալիս. բայց ք՟զի հրպարտ ես և խիստ, ժանտամաս և դառնամաս, բեկանիս և պայթիս։ Մխեալ պողովատիկ 'ի հարկանիլն բեկանի։ Զուտ ոսկի (որ է հստ աւած ոսկի) 'ի հարկանիլն ձայլթի։ Ապակի անարգ 'ի հարկանիլն՝ ձայնիւ խորտակի. բեկեալ անօթ (ձաթած բորջ) 'ի հարկանիլն ոգեղ ձայն հանէ։ Յայսմ մ՟ք չափեամ զքեզ, և կշռեամ ընդ նախագրելոցդ. և 'ի յափշտակելդ ցասմամբ՝ յափշտակեամ զպատուհասդ, և ցասնր 'ի վերայ ցասմանդ. և արա զոր գրէ Բարսեղ վ՟դ 'ի մեկն. մարկ. գլ. ժդ. 'ի ցանուլդ ասէ * հան խաշ ,, 'ի վ՟ր սրտիդ. և յիշեամ զք՟մ զգործսն, զոր ընդ քո ,, անցուցին. և փութով զիջանի ցասումդ ||։ Արդ յետ առաջի դնելոյ մարգարէին զչարութիւն բերանոյ ամպարշտին՝ սկսանի թուել և զչարութի գործոց նորա, զորս ցուցանէ առ անմեղս. վ՟դ ասէ։

ԻԹ. Նստի դարանակալ ընդ մեծամեծս 'ի գաղտնիս, սպանանել զանմեղն։

Ամպարիշտն ոչ կարելով երբեմն յայտնի գործել զչարիս ընդդէմ այլոց՝ հնարի նենգութբ կատարել զայն. և զայս յայտ առնէ մարգարէն բանիւս դարանեալ՝ յասելն.

Նստի դարանակալ ընդ մեծամեծս 'ի գաղտնիս ևն։ Կամի ասել. զի որ դարանակալ լինի ումեք՝ թաքչելով 'ի գաղտնի տեղւոջ, սպասէ անդ, և վարանելով հոգայ զի յանցանել թշնամւոյն ընդ այն՝ սպանցէ զնա, սոյնպէս և ամպարիշտն՝ եթէ տեսցէ թէ ոչ կարէ յայտնի չարիս գործել ընդդէմ արդարոյն, սպասէ այնպիսի առթի, կամ վարի այնպիսի նենգութբ՝ որով կարասցէ արկանել զնա 'ի յետին թշուառութիւն, և կամ սպա-

նանել ես ։ Եւ առ ՚ի ցուցանել զառաւելութիւն չարութեանն՝ յաւելու ասել, թէ զայս առնէ * ը̅ մեծամեծս ‖ ։ ք̅ ընդ իշխանս , կամ ը̅ այնս՝ որք զօրաւորք են ։ զի յայտ է՝ թէ որ ընդ այսպիսեաց խորհի չարիս հասուցանել աղքատին՝ դիւրաւ կարէ , քան զոր կարէր առնել առանձինն ։ Եւ քանզի խորհուրդք սրտի նորա համապազ ՚ի սոյն բերին , սմին իրի յարէ զկնի մարգարէն և ասէ ։

Ը. ԱՉՔ ՆՐ̅ ՚Ի ՏՆԱՆԿՍ ՀԱՅԷՆ ։ ԴԱՐԱՆԻ ՚Ի ԳԱՂՏՆԻՍ՝ ՈՐՊԷՍ ԱՌԻՒԾ ՚Ի ՄՈՐՈՋ ԻՒՐՈՒՄ ։

Թ̅. ԴԱՐԱՆԻ ՅԱՓՇՏԱԿԵԼ ԶԱՂՔԱՏՆ , ՅԱՓՇՏԱԿԵԼ ԶԱՂՔԱՏՆ , ԵՒ ՁԳԵԼ ԶՆԱ ։

Երկոքեան այս բանք հայեն ՚ի նախընթաց համարն իբր բացատրութի̅ նորին ։ որով դիտէ ցուցանել մարգարէն՝ թէ խորհուրդք և կամք ամբարշտի յանողորմութի̅ յածին ։ զի առ որ պարտ էր ողորմութի̅ ցուցանել՝ որպիսի է աղքատն և տնանկն , անգթութեամբ վարի ընդ նմա , և հնարի կեղեքել զկեանս նորա ։ յայս սակս ասէ ։

ԱՉՔ ՆՐ̅ ՚Ի ՏՆԱՆԿՍ ՀԱՅԷՆ ։ Այսինքն միտք կամ խորհուրդք ամբարշտի՝ որք են աչք հոգւոյ նորա , ոչ դիտեն իշխել մեծամեծաց և կեղեքել զնս̅ , այլ՝ տնանկաց և աղքատաց ։ զի դժուարին է՝ մեծամեծաց իշխել ։ իսկ տնանկաց և աղքատաց տիրել՝ դիւրին ։ Եւ եթէ տեսցէ ամպարիշտն , թէ ն̃ք պաշտպանին , նենգութ̃ք վարի ։ սմին իրի ասէ ։

ԴԱՐԱՆԻ ՚Ի ԳԱՂՏՆԻՍ՝ ՈՐՊԷՍ ԱՌԻՒԾ ՚Ի ՄՈՐՈՋ ԻՒՐՈՒՄ ։ ք̅ որպէս առիւծն ՚ի խնդրել զորսս՝ ոչ շրջի յայտնի , զի մի̃ փախուսցէ զնս̅ ։ այլ յորջ իւր կամ յայլ գաղտնի տեղի թաքուցեալ ծածկի , զի յանցանել որսոյն՝ յանկարծ ելեալ արտաքս՝ յափշտակեսցէ զնա , սոյնպէս և ամպարիշտն բզ̃մ անգամ իբրև չար որսորդ՝ դարանելով խնդրէ որսալ զաղքատն ։

Այսպէս առնէ և չար առիւծն սատանայ՝ ասէ Լամբ. * դարանի թշուառացեալ մարդկութեանս , զի յափշտակեսցէ զայն ‖ ։ Սառնախորդ գնայ առիւծ ՚ի վերայ ձեան , և զոտնագիրսն ամփոփէ , զի մի̃ գիտասցեն հետք

նր · յանտառս մթինս շրջի, զի մի յայտնի երևեսցի, և յորսոյ իւրմէ զրկեսցի · սոյնպէս առնէ և սատանայ · և յոչ գտանել զորսն՝ գոչէ ։ Որոնեսցէ և գոչեսցէ · մինչև վաստակեսցի և հասցի ձայն նորա · դու միայն զգուշասցիր · մի հպիր 'ի նա, այլ մատիր յաղօթս ։ Զարհուրի առիւծ 'ի ձայնէ և 'ի կատարից խոսնակի, և սոսկայ 'ի բոցոյ հրոյ, սոյնպէս և սատանայ զարհուրի 'ի ձայնէ աղօթից և 'ի կատարից մտածութեան և 'ի բոցոյ սիրոյն այ · և նուաճեալ մնայ 'ի դարանի իւրում · բայց դադարիլ ոչ գիտէ · ոչ հանգչի և ոչ նահանջի · զի հանդիստ իւր է որսալ զմարդ · և կերակուր նորա է ապականել զհոգիս ։ Աստի ասէ սարգիս շնորհալի 'ի մեկն · յակ · տ · 27 · ճառ · Է · * Հան-
„ գիստ նր և քուն և կերակուր՝ ապականութիւն հոգ-
„ ւոց է · զի վ՜կ տքնի և վարանի և 'ի դարանի ան-
„ ցեալ նստի, զի վնասեսցէ և կորուսցէ ||։

Եթէ 'ի դարանին ոչ կարասցէ որսալ, ցուցանէ զինքն որսացեալ, և վարի ընտել իբր ընտանի, զի մի զգուշասցիս 'ի նմանէ · մինչև գտցէ դիպօղ ժամ պատառելոյ զքեզ ։ Պատմի թէ յամի տն 2675 · այր ոմն գերմանացի ընտանեցուցեալ զառիւծ մի՝ շրջեցուցանէր զնա, և խաղայր ընդ նմա · անցեալ 'ի գերմանիոյ 'ի հոլանտա՝ անդ ևս սոյնպէս վարէր · այլ յաւուր միում 'ի խաղալն՝ մռնչեաց գազանն, և յափ իւր էառ զնա · յաղաղակել առն առ շրջակայս՝ գոչեցին առ նա՝ աւազս հարկանել յերեսս առիւծուն · և յաճապարել նր՝ պատառեաց զնա առիւծն ։ Սմին նման և այլ ոմն 'ի խաղալն ընդ ձեռասուն առիւծուն կերաւ 'ի նմանէ 'ի փլորենտիա ։ Ոչ բազում ինչ շահեցան յառիւծուցն · բայց յորոց շահեցան՝ 'ի նոցունց կորեան ։ Եթէ ընտելանայ քեզ սատանայ՝ և շահս ցուցանէ քեզ՝ մի խաբիր · առթի սպասէ, և ոչ խնայէ · 'ի խաղալդ ընդ նմա՝ ոչ եթէ պատառէ զքեզ, այլ կլանէ · ուստի ոչ ասէ առաքեալն, թէ շրջի առ 'ի յափշտակել, այլ առ 'ի կլանել (ա · պետ · Ե · 8 ։) Բայց բաւական է նմա և յափշտակելն ։

Եթէ ոչ կարասցէ զայս առնել, զախորժականս առաջի մատուցանէ բայց թիւնալիս, որ զախորժելի մեզ՝ յուսով գտանելոյ զթողութիւն 'ի ձեռն խոստո-

վանութեան. այլ յաւանելդ խափանէ և զհնարս թողու-
թեան : Որսորդք դնեն թիւնալի կերակուր առ ճանա-
պարհաւ՝ ընդ որ անցանէ բորենին. բայց նա ոչ մերձի
'ի կերակուրն՝ մինչև ոչ առցէ զհոտ դիւթամ խոտոյ.
զի այն է դեղթափ նորա : Զայս գիտելով որսորդաց՝
կախեն զդիւթամ խոտ զծառոյ. և բորենին առեալ
զհոտ նորա ուտէ զթիւնալի կերակուրն, կարծելով թէ
յետոյ ունի ուտել՝ զդիւթամ. և 'ի դիմել զհետ հո-
տոյ նորա՝ տեսեալ՝ զայն 'ի բարձրութեան ծառոյ, և ոչ
կարացեալ ուտել, մեռանի. և որսորդք առնուն զմար-
մին նորա : Այսպէս առնեն և դևք. դնեն զթիւնալից
մեղս զճանապարհայն. և կախեն զյոյսն խոստովա-
նութեան առաջի մարդոյ. և նա յուսով խոստովանութեան
ուտէ զմեղս, և ոչ կարացեալ հասանել խոստովանութեան՝
կորնչի. զի * որ յուսով մեղանչէ՝ անյոյս կորնչի ‖ :
Պատմի թէ անգղիացի ոմն մեծատուն դարձաւ յուղ-
ղափառ հաւատս. և փոքր սրբութեամբ վարելոյ՝ զհետ
եղև անառակութեան. և խորհեալ 'ի միտս իւր՝ թէ
գուցէ առանց խոստովանութեան մեռանիցի, կալաւ 'ի
վարձու զերկուս քահանայս, որոց զմին պահեաց առ
իւր 'ի քաղաքի, և զմիւսն եդ յամարանոցին իւրում
'ի գեղջ. զի գոնէ զմին ունիցի առ իւր 'ի ժամ մահու :
Յաւուր միում եկեալ 'ի քաղաքէ կամեցաւ գնալ 'ի գիւղ
իւր. և 'ի հասանել նորա 'ի կէսն ճանապարհի՝ կալաւ
զնա ցաւ սաստիկ՝ մինչև վտանգել զնա 'ի մահ : Ազդ
եղև քահանային. և նորա հասեալ առ հիւանդացեալն՝ եգիտ
զնա մեռեալ : Աւասիկ քեզ զօրութիւն դիւթամ խո-
տոյ. զոր կախեաց սատանայ առաջի թշուառականիդ այ-
դորիկ. և յուսով նորա յափշտակեաց զնա : Յայս հը-
նարս վարանի առ ամենեսին. և ոչ դադարի : Իսկ եթէ
յետնեսցի, կրկին դարանի. և զայս առաջի առնէ մար-
գարէն 'ի յաջորդ համարն հայելով 'ի դարանսն ամ-
պարշտի, յասելն :

Դարանէ յափշտակել զաղքատն. յափշտակել զաղքատն, և ձգել
զնա : Այս կրկնումն, այս է յափշտակել զաղքատն,
յափշտակել զաղքատն՝ 'ի մէջ բերէ զզարմացումն.
եթէ ասէ մեծատուն լինէր յափշտակելին կամ հզօր,
չէր զարմանք՝ թէ կամիցի յափշտակել զնա ամպա-
րիշտն. աղքատն է՝ զոր կամի յափշտակել. արդարև

աղքատ , և աղքատ գոլով կամի դարանելով յափշ-
տակել զնա :

Դարանի ասէ . վասն զի այր ամպարիշտ և նենգաւոր յոչ վստահիլն ոչ կքրի յայտնի , այլ դարանի . իբր զի հնարաւոր բանիւք՝ կամ կեղծուպատիր գործովք ՚ի դարան մտանէ . որպէս զի դիւրաւ յափշտակեսցէ զաղքատն . և ՚ի յափշտակելն արասցէ ընդ նա ո՞չ և կամի . և փոյթ իւր այս է՝ զի կամ յորոգայթ իւր ձգեսցէ զնա , և կամ զհետ իւր քարշեսցէ . որ է ասել . այնպիսի ինչ արասցէ՝ զի աղքատն կատարեսցէ զայն՝ զոր նա խնդրէ : Եւ կամ ձգեսցէ զնա յայն թշուառութիւն , զոր իբրև որոգայթ լարեալ է նմա առ իսպառ նուաճելոյ զնա :

Ծործորեցին ՚ի մեկն . մատ . գլ . Է . ըստ գրելոյ մեր այժմ , ՚ի դէմս սատանայի վերածելով զայսպիսի արարս՝ զայլ իմն օրինակ առաջի առնէ ՚ի ցոյց չար հնարից նորա , և ասէ . * Զոր օրինակ զվէմ անշարժ ՚ի ձեռն
„ փոքու նիզի փորձեմք . եթէ սակաւ ինչ շարժի՝
„ ակն ունիմք խախտել . ապա թէ կարծրագոյն իցէ ,
„ անյուսաբար ՚ի բաց գնամք . նոյնպէս և սատանայ
„ առնէ . քանզի գունեալ բարեաւն զչարն՝ իբր կարթ
„ կլանել տայ . զի ձգէ զմեզ ցանկութ̄բ ՚ի պոռնկու-
„ թի , և հարկաւոր պիտոյիւք յարծաթսիրութիւն ,
„ նմանապէս և այլովքն , ( զի ) ՚ի ձեռն մերոց ցանկու-
„ թեց փորձիմք ( և յորոգայթ նր̄ գլորիմք ) || ըստ որում ջանայ նա արկանել զմեզ ՚ի նոյն . և առ այս յարէ և ասէ :

ԼԱ̄ . Յորոգայթի իւր խոնարհեցուսցէ զնա . խոնարհեսցէ և անկցի ՚ի տիրել իւրում ՚ի վերայ տնանկաց :

Որոգայթն է գործի գաղտ որսալոյ , որոյ վասն յօրինակ բերի նենգութ̄ե վարելոյ ը̄ այլում առ ՚ի վնասել նմա . և զի զայս կամէր ցուցանել մարգարէն , սմին իրի ասէ :

Յորոգայթի իւր խոնարհեցուսցէ զնա : Ի յինքն . արկցէ զաղքատն յորոգայթ՝ զոր լարեալ իցէ նմա : Ո՛չ ասէ , արկցէ . այլ խոնարհեցուսցէ . որով կամի յայտ առնել , թէ ամպարիշտն այնպիսի հնարիւք վարի ընդ աղքատին՝ մինչև զիջուցանել զնա ՚ի կամս իւր և նը-

ւածել զնա, և խլխել նմա, և թափել զոգի նր̃. որպէս ջանայ և ս̃տնյ ընդդէմ արդարոյ: Նաև քանզի բազում անգամ 'ի գլուխ իւր շրջի այն հնարք նենգութեան նորա՝ զայս կամելով յայտ առնել մարգարէին՝ յարէ զկնի և ասէ:

Խոնարհեսցի և անկցի 'ի տիրել իւրում 'ի վր̃ տնանկաց: Ո̃ր 'ի կամիլ ամպարշտի տիրել 'ի վերայ տնանկաց՝ խոնարհեսցի, ո̃ր տկարասցի և անարգեսցի, և անկցի յորոգայթն յայն՝ զոր լարեաց տնանկին:

Լամբրոնացին զբառսդ * խոնարհեսցի և անկցի՝ ‖ մեկնէ 'ի վերայ մարդոյ պարտելոյ 'ի ս̃տնյէ. իբր թէ 'ի խոնարհեցուցանել զնա սատանայի յորոգայթ իւր՝ եթէ խաբեսցի մարդն, խոնարհեսցի և անկցի յայն որոգայթ. և յայնժամ տիրեսցէ նմա ս̃տնյ:

Ոմանք ընդ հակառակն մեկնեն զայս բան. ըստ որոյ բառս "խոնարհեսցի" դնի աստ փոխ բառիս իջցէ. և բառս անկցի՝ փոխ դիմելոյ կամ 'ի վր̃ անկանելոյ. որպէս թէ ասացեալ էր. ամպարիշտն յետ արկանելոյ զաղքատս յորոգայթ իւր՝ և յետ տիրելոյ 'ի վր̃ նց̃՝ իջցէ 'ի վր̃ նց̃, ո̃ր ընկճեսցէ զնոսա. և բռնութբ̃ անկցի 'ի վր̃ նց̃, ո̃ր նուաճեսցէ և կեղեքեսցէ զնոսա:

Այսոքիկ մեկնութիւնք թէպէտև միմեանց ներհակ երևին, բայց ըստ այլևայլ մտաց ճշմարտին: Բազմաց առաջինն թուի հաւանական՝ հայելով 'ի թարգմանութիւնն եօթանասնից. և բազմաց ևս յետինն՝ հայելով 'ի բնագիրն եբր": Ո'րն և առցի՝ յայտ առնէ զանզգամութիւն ամբարշտին: Իսկ թէ յինչ հիմնի այն անզգամութիւն նր̃, յայտ արար մարգարէն 'ի վերոյ յերիս համարս. ո̃ր են. 24. 25. և 26. այլ զառաւելն ևս 'ի մէջ բերէ 'ի յաջորդ համարն, և ասէ:

ԼԳ. Ասաց 'ի սրտի իւրում, թէ մոռացաւ Ածծ. դարձոյց զերեսս իւր, զի մի տեսցէ իսպառ:

Ամպարիշտն 'ի յաճախելն 'ի չարիս փոխ զզուելոյ 'ի նոցանց՝ և ևս ընկղմի 'ի նոսին, և վատթարացեալ անկարգանայ. և զոր յառաջն մեծ չար համարէր, 'ի սովորելն 'ի նոյն՝ իբր ոչինչ համարի. և զոր գործէ՝ իբր թեթև ինչ մտանայ. 'ի չարչարել նր̃ ևս զաղքատն՝ տեսեալ թէ ոչ պատուհասի, վարկանի՝ թէ

ա՟ծ դարձուցեալ է զերեսս իւր յաղքատէն. և որպէս
ինքն վարի և վարկանի, նոյնպէս և զա՟յ կարծէ։ Յայս
հայելով՝ ասէ։

Զի ասաց 'ի սրտի իւրում, Թէ մոռացաւ ա՟ծ. դարձոյց զե-
րեսս իւր, զի մի՛ տեսցէ իսպառ։ Այսինքն՝ յայն սահման
անզգամութե՟ եհաս ամպարիշտն, մինչև ասել ը՟ն հա-
մարել, թէ մոռացեալ է ա՟ծ զչարիս նորա, և ոչ ընաւ
տեսանէ. ո՟չ թէ դարձուցեալ իցէ զերեսս իւր 'ի նմէ.
Կարծէ ևս երբեմն ընդ հակառակն՝ թէ յոչ պաշտպա-
նել ա՟յ զաղքատս հարստահարեալս յամպարշտէ՝ մո-
ռացեալ է զնա։

Այլ սկզբնական դիտումն մարգարէին է ցուցանել
զայն համարումն ամպարշտին՝ որով համարի ոչ խնդ-
րել ա՟յ զվրէժս 'ի նմէ վասն չարեաց գործոց ն՟ր։ Իւ-
յիրաւի թէպէտև ա՟ծ առ ժ՟մկ մի անտես առնէ զչա-
րիս ն՟ր, և թոյլ տայ ևս յաջողել զոր նա կամի, բայց
ոչ իսպառ երկայնամիտ լինի առ նա, այլ ունի խնդ-
րել վրէժս 'ի նմէ, և հատուցանել նմա զհատուցումն
գործոց ն՟ր. * Զայս ա՟մ արարեր (ասէ), և լռեցի
քեզ. կարծեցեր անօրէնդ 'ի մտի քում, թէ և ես
քեզ նմանիցիմ ‖. սաղ. խԹ. 21։ Այլ կամելով
մարգարէին յայտ առնել զստուգութիւն վրէժխնդրու-
թեանն ա՟յ, աղաչէ զնա ցուցանել զայն հաստատութե՟.
վ՟ն որոյ ասէ։

ԺԲ. Արի՛ տէր ա՟ծ իմ. բարձր եղիցի ձեռն քո. և մի՛ մո-
ռանար զտնանկս։

Ի վերոյ 'ի համարն 19. "արի տէր" ասելով փութա-
ցոյց զա՟ծ 'ի նպաստել և յօգնութիւն մատուցանել ար-
դարոյ։ Աստ ևս արի տէր՝ ասելով թէպէտ զնոյն դի-
տէ՝ ը՟ն փութացուցանել զա՟ծ, բայց 'ի վանել զանզգա-
մութի ամբարշտին. յայս հայելով ասէ։

Արի՛ տէր ա՟ծ իմ. բարձր եղիցի ձեռն քո, և մի՛ մոռանար
զտնանկս։ Կամի ասել, աւասիկ տէր ա՟ծ իմ ժամանակ
է վանելոյ զանօրէնութիւն ամբարշտին՝ և ազատելոյ
զտնանկս և զարդարս 'ի ձեռաց նորա. զի բարձրացաւ
յոյժ չարութիւն ն՟ր 'ի վ՟ր ն՟ց. վ՟յ զարթիր 'ի վանել
զնա. և * բարձր եղիցի ձեռն քո ‖։ Նմանութե՟ խօ-
սի՝ հայելով 'ի ննջօղսն. վասն զի որ ննջէ՝ 'ի ննջելն

գրեթէ մոռանայ՝ զոր գիտէր․ և ձեռն նորա ևս ան-
գործ կայ և թուլացեալ․ իսկ 'ի յառնելն՝ յիշէ․ և
ձեռնն զօրանայ և գործէ ։ Եւ ք՟զի նմանութեամբ ա-
սաց՝ * արի́ տէր ա՟ծ իմ ‖ ․ յարմարապէս յարէ զկնի․
* բարձր եղիցի ձեռն քո ‖ ։

Ձեռք ասել ա՟յ՝ այլաբանութեամբ է իմանալի և ոչ իս-
կութեամբ․ զի ա՟ծ զօրով ամենևին աննիւթ՝ անհնարին
է ասել, թէ ունի ձեռս կամ ոտս եւն ։ Յոր սակս ասէ
մեծն խոսրով․ 'ի մեկն․ ժամագր․ * Իսկ ա՟յ ձեռք և
,, ոտք և կամ ընաւ զգայարանս ինչ իմանալ կամ կար-
,, ծել՝ անմտութիւն մեծ է․ զի թէպէտև լսեմք այս-
,, պիսիս 'ի գրոց, ըստ մերում տկարութեան ձևացուցա-
,, նեն զբանն, զոր մեք սովոր եմք ասել․ զի ընտելա-
,, կանաւն կարիցեմք իմանալ․ որպէս այն՝ զի ասեմք․
,, խոնարհեցո́ տէր զունկն քո և լո́ւր․ բա́ց զաչս քո և
,, տե́ս, զարթի́ր ընդէ́ր ննջես․ արի́ և մի́ մերժեր ըզ-
,, մեզ․ ա́ռ զզէն և զասպար քո․ և ա՟ծ այսմ ա՟մի
,, պէտս ոչ ունի․ զի կամքն գործ է կատարեալ ‖ ։

Ուստի և աստ ձեռամբ ոչ իմացեալ լինի իրական ինչ
ձեռք, այլ ամենակարողութի՟ն ա՟յ․ յոր միտ կամի ա-
սել․ բարձրասցի ամենակալ ամենակարող զօրութիւն
քոյ 'ի վանել զամպարիշտն․ և այնու փառաւորեսցի
անուն քո, ոչ միայն վ՟ն վանելոյ քո զբռնութիւն ամ-
պարշտին, այլև վասն ցուցանելոյ՝ թէ չես մոռացեալ
զտնանկս՝ զյուսացեալսն 'ի քեզ ։ Եւ առ 'ի ցուցա-
նել՝ թէ հա́րկ է առնել զա́յս, առաջի դնէ մարգարէն
զպատճառն, որով գրեթէ յորդորէ զա՟ծ՝ զի արաս-
ցէ՝ զոր խնդրէ․ վասն որոյ ասէ ։

լդ․ Իսկ՝ ընդէ՞ր բարկացոյց ամպարիշտն զա՟ծ․ զի ասաց 'ի
սրտի իւրում թէ ոչ խնդրէ ։

Զսոյն եդ և 'ի համարն 24 ասելով․ * Իսկ ընդէր
բարկացոյց մեղաւորն զա՟ծ ըստ բ՟զմ բարկութ՟ե իւրում
թէ ոչ խնդրի ‖ ․ զսոյն ահա փոքր մի փոփոխութ՟բ բա-
ռից կրկնէ և աստ ասելով ․

Իսկ ընդէ՞ր բարկացոյց ամբարիշտն զա՟ծ․ զի ասաց 'ի սրտի իւ-
րում՝ թէ ոչ խնդրէ ։ Կամի ասել․ պատճառն՝ թէ ը՟նդէ́ր հա-
մարձակ գործէ ամպարիշտն զչարիս և այնու բարկա-
ցուցանէ զա՟ծ՝ այս է, զի համարի թէ ոչ գոյ քննութ՟ի

գործոց իւրոց, և թէ՝ ա՟ծ ոչ ունի խնդրել վրէժս 'ի նմէ. ա՟պ և եդաք 'ի նախայիշեալ համարն. 24: Եւ եթէ նա այսու պատճառաւ համարձակ գործէ ըզ-չարն, ապա արժան է՝ զի ցուցցէ նմա ա՟ծ զվրէժխնդ-րութիւն իւր. և այնու ծանուսցէ նմա, թէ ո՛չ այնպէս է՝ որպէս ինքն կարծէ. այլ թէ քննէ՝ որպէս և տեսանէ զա՟մ՝ զոր նա գործէ: Իսկ թէ յիրաւի տեսանէ, և քննէ, և ըստ քննելոյն պատժէ՝ յայտ առնէ 'ի յաջորդ համարն, և ասէ:

ԺԴ. Տեսանես դու զնա. 'ի ցաւս և 'ի սրտմտութիւնս հայիս. 'ի քեզ թողեալ է աղքատն. և որբոյն դու ես օգ-նական:

Սովիմբք յայտ առնէ մարգարէն՝ թէ խաբի և մոլորի ամպարիշտն 'ի խորհուրդս իւր՝ կարծելով թէ ա՟ծ ոչ հայի 'ի գործ նորա, և ոչ տեսանէ զնա 'ի գործել նորա զչարիս, և ոչ օգնէ ինչ աղքատին. զի ա՟ծ միշտ տե-սանէ զա՟մ յա՟մի, եւ և զնա ինքն զամբարիշտն. զայս կամելով ցուցանել մարգարէին՝ խօսի առ ա՟ծ և ասէ:

Տեսանես դու զնա 'ի ցաւս և 'ի սրտմտութիւնս հայիս: Կամի ասել. դու տէր որ ամենահայեաց աչօք քովք հայիս յա՟մ, նովին հայեցուածով տեսանես զամպարիշտն: * Եւ 'ի ցաւս և 'ի սրտմտութիւնս ‖. 'ի ցաւս ասե-լով՝ կամի ցուցանել՝ թէ հայի ա՟ծ 'ի դառնութիւն սրտի ամպարշտին, որով դառնացեալ է նա առ տնանկս և առ աղքատս: Իսկ 'ի սրտմտութիւնս ասելով՝ կամի ցու-ցանել. թէ հայի և յանողորմ գործս բարկութեան ամ-պարշտին, որով տառապեցուցանէ զտկարս, մ՟նդ զաղքատս և զորբս:

Վանական վ՟րդ 'ի մեկն. յոբ. դւ. ա. զբառդ զնա՝ վերածէ 'ի ա՟նձ. * տեսանես ասէ դու զնա՝ զա՟նձ 'ի
„ ցաւս. որ դարմանայ յափշտակել զաղքատն ըն-
„ տուգութե՟ ‖: Ն.յ տեսանէ զնա ա՟ծ 'ի ցաւս. մ՟ 'ի հոգս. իբր զի հոգայ և տագնապի ա՟նձ ընկղմել զար-դարն, և յափշտակել զառաքինութիւնս նր. և ա՟ր թոյլ տայ՝ ոչ 'ի վնասել, այլ 'ի շահեցուցանել զարդարն: Տզրուկ է ա՟նձ, և խայթէ փորձութե՟ք 'ի ծծել. այլ դիտումն ճարտար բժշկապետին է տալ հանել զվատ-

Թար արխնան յօգուտ արդարոյն ։

Սարգան ընդ հակառակն մեկնէ զայս բան . եթէ զի զտեսանելն ոչ վերածէ յաղքատն . ոչ թէ ասացեալ էր . չէ հարկ ինձ առնել զոմ վասն աղքատին . դու ինքն տեսանես զցաւս նորա , և հայիս 'ի սրտմտութե թշնամեաց նորա . և գիտես , զի նա ոչ աղքատն ոչ և որբն չունի հաւատարիմ զոք օգնական , այլ զքեզ միայն ։

Սաստի յարէ՝ ասելով ։

**Քեզ թողեալ է աղքատն . և որբոյն դու ես օգնական ,** ոչ աղքատն չունելով զկարողութի ընդդէմ կալոյ բռնութե անիրաւութին , և ոչ ունելով ևս զոք իւր պաշտպան՝ 'ի քեզ է թողեալ և առ քեզ է անկեալ , զի դու հոգասցիս զնմէ և պաշտպանեսցես զնա ։ Սոյնպէս և որբն չունելով զհայր և զմայր խնամող ինքեան՝ զքեզ միայն ունի իւր օգնական ։ Իսկ յիրաւի է այս . զոր և ած աղքատ և որբ կարեն փորձել յինքեանս՝ եթէ ճշմարտութք ապաւինեսցին յամենաբարի հայր իւրեանց յած . զի յապաւինիլ նց 'ի նա՝ ինքնին խնամէ նա զնս մասնաւոր իմն խնամով իբրև հայր բարի . և այնպէս առնէ ընդ նս , մինչև չկարել չարաց առնել ինչ չար ընդդէմ նոցա , այլ մանաւանդ տկարանալ առաջի նց ։ Աղքատն եթէ զած ունիցի՝ ոչինչ ունի և զամ ինչ ունի . և կայ 'ի մեծի խաղաղութե իբրև 'ի նաւահանգստի . ուստի ճշմարիտ է՝ զոր ասէ բարսեղ վճղ . 'ի մեկն . մարկ . գլ . Ժ . * աղքատութիւն խաղաղ նաւահան„ գիստ է , նման հրեշտակաց ( առնէ ) ‖ . կայ աղքատն անզբաղ և անկասկած . հոգ նորա է միայն վասն կերակրոյ և հանդերձի . իսկ մեծատունն վասն բզմ իրաց լլբի ։ Անկասկած ևս ասացի . զի որպէս ասէ՝ * զաղքատն և զմերկն հարիւր այր չկարեն կողոպտել , նաև ոչ թզրն ‖ . զի չունի ինչ կողոպտելի ։

Այն այս առաջիկայ բնաբանդ ըստ լամբ" յարմարի մարդկութեն՝ որ անկաւ . և 'ի մեռանիլ նախահօրն մեղօք՝ որբ մնաց և աղքատացաւ . և միայն ոչ եղև թողեալ . զի նա եկեալ ազատեսցէ զնա , և զբռնակալութի թշնամւոյն նուաճեսցէ . զորմէ խօսի 'ի յաջորդ համարն . 'ի դէմս անիրաւին ասելով ։

ԼԵ. **Խորտակեսցի բազուկ մեղաւորի և չարի · խնդրեսցին մեղք նորա, և ոչ գտցի ·**

Բազուկ մեղաւորի և չարի է բռնութիւն և կարողութիւն նր · որով կամի նուաճել զաղքատս, և կեղեքել զնա · բայց 'ի պաշտպանել Այ զաղքատն՝ տկարասցի իսպառ · վասն որոյ ասէ ·

**Խորտակեսցի բազուկ մեղաւորի և չարի ·** Այսինքն տկարասցի և անպիտանասցի բռնութիւն մեղաւորի՝ և չարամտոյ՝ որպէս անպիտանանայ բազուկ խորտակեալ · Նոյնպէս բազկաւ մեղաւորի նշանակի սմմայ · զի մեղաւորն ձեռնտուութիւն սատանայի գործէ զչարն · ուստի սմայ համարեալ լինի նմա իբր բազուկ մեղանչելոյ · յոր միտ առի յանձնց, թէ որպէս առանց բազկի ոչ գործի ձեռակերտ, այնպէս և առանց սատանայի ոչ գործի մեղք · Իսկ թէ 'ի խորտակիլ բռնութեան մեղաւորի՝ զինչ լինիցի նմա, յայտ առնէ ասելով ·

**Խնդրեսցին մեղք նր, և ոչ գտցի ·** Մեղք ասելով իմանայ զանիրաւ գործս մեղաւորին ընդդէմ արդարոյն · Այսինքն գործք մեղաւորին ասէ եթէ խնդրեսցին, զի եթէ կամեցեալ լիցին գործել, մի գտցեն, զի ոչ յաջողեսցին · իբր զի մեղաւորն 'ի պատուհասին յԱյ խորտակմամբ բազկին՝ այնպէս տկարասցի 'ի գործելոյ զայնս, մինչև ամենևին լինել անձեռնհաս առ այնպիսին՝ թէև կամիցի գործել ·

Իսկ ասելն յաւելն՝ * և նա մի գտցի ‖ · զերբառունն նա՝ զնի նախ փինկ բառս այն · և յարաբերէ զմեղքն · որպէս թէ եղեալ էր · խնդրեսցին մեղք նր, և այն մեղք մի գտցի · որ է ասել, թէպէտև կամեսցի մեղաւորն մեղանչել, ոչ կարասցէ · և թէպէտ բայն 'ի միում զնի յոգնակի՝ և 'ի միւսումն եզակի, բայց այն է վասն անեզական լինելոյ բառս մեղք ·

Երկրորդ զնի փինկ մեղաւորի՝ հայելով 'ի համարն · 33, և 35 · որպէս թէ եղեալ էր · 'ի խորտակիլ զօրութեան և բռնութեան մեղաւորի * նա ինքն մեղաւորն մի գտցի ‖ · զի է այնպէս կորիցէ, մինչև յաւիտեանս ոչ գտանիլ · ըստ որոյ սիւմաքոս թարգմանէ առ վարդանայ · * և նա մի ապրեսցի ‖ ·

Հնար է զայս բան յարմարութեամբ իմն մեկնել և վասն

զգաստութե՛ մեղաւորին, ոչ թէ ատացեալ էր. խոր-տակեցի զօրութի՛ մեղաւորի. և այնու խոնարհեալ ամաչեցուցէ 'ի վ՛ր գործոց իւրոց, և այնուհետև զգու-շասցի մի ևս մեղանչել. մինչև յետ այնորիկ 'ի խնդ-րել մեղաց նորա՝ ոչ գտցի այն, այլ ապաշխարութ՛ք ջըն-ջեալ երևեսցի. Ըստ այսմ իմացեալ լինի և այն բան, զոր այլուր ասէ մարգարէն. * Լից զերեսս նոցա ա-նարգանօք. և խնդրեսցեն զանուն քո տէր ‖. սաղ. ձբ. 16.

Այս մեկնութիւն ևս թէպէտ ընտիր է՝ և համաձայն բանից ոմանց ս՛ր հարց, սակայն առաջինն և երկրորդն երևին համանմանագոյն, և առաւել համաձայն ըն-թացից բանի սաղմոսիս. Այլ զոր ասաց մարգարէն 'ի վերոյ, թէ ա՛ծ տեսանէ զգործս ամպարշտի, և վրէժս խնդրելով 'ի նմանէ խորտակէ զբազուկ նորա, զօրագոյնս հաստատել կամելով զայն՝ 'ի մէջ բերէ զյաւիտենականութի տէրութեն ա՛յ, և ասէ.

ԼԷ. Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից. կորիջիք հե-թանոսք յերկրէ նորա.

Բառքդ յաւիտեանս յաւիտենից՝ յորժամ դնին 'ի վերայ ժմկաւոր իրաց կամ սահմանական գործողութեց՝ ցու-ցանեն զտևողութի համայն ժմկաց մինչև ցաւարտումն այնր ժմկի, զորմէ է բանն. Իսկ յորժամ դնին 'ի վերայ երկնային կամ ա՛ծային իրաց, և մնւնդ 'ի վ՛ր ա՛ծային կատարելութեց և 'ի վ՛ր տիրելոյն և թագաւորելոյն ա՛յ, ցուցանեն զանփոփոխ և զանվախճան տևողութի. և յայտ է թէ յայս միտ դնին և աստ յաւելն.

Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից. Այսինքն՝ ա՛ծ, որ տէր է ա՛մի, է և թագաւոր 'ի վերայ ա՛մցն՝ ոչ առ ժմկ մի, այլ յաւիտեանս յաւիտենից. Իսկ զայս դնէ մար-գարէն առ 'ի զգաստութի մեղաւորաց և 'ի քաջալե-րութիւն արդարոց. Իբր զի մեղաւորք զայս գիտելով մի կարծեսցեն, թէ ա՛ծ 'ի ժմկի աստ թողլ տալով նց առնել՝ զոր կամին, չունիցի յետոյ խնդրել վրէժս 'ի նցէ. զի որովհետև նա է թ՛գր յաւիտեանս յաւիտե-նից, ոչ գոյ ժմկ ինչ՝ յորում կարիցեն մեղաւորք զեր-ծանիլ 'ի վրէժխնդրութե նորա. Այնպէս և արդարք գիտելով թէ թ՛գրութիւնն ա՛յ տևէ յաւիտեան, յայն

ապաստան եղեւ՝ մխիթարեսցին 'ի նեղութիւնս իւ-
րեանց, որովք նեղէին 'ի ձեռաց մեղաւորաց. վասն զի
եկեսցէ ժ՟մկ՝ զի ա՟ծ միայն թ՟գրեսցէ 'ի վ՟ր նոցա յար-
քայութե՟ իւրում, և ինքեանք ը՟ նմա. Իսկ մեղաւորք
հեռասցին 'ի նմէ, և կորիցեն 'ի տեղւոջէ անտի նոցա.
և առ այս յարէ զկնի, և ասէ.

ԿՈՐԻՑԵՆ ՀԵԹԱՆՈՍՔ ՅԵՐԿՐԷ ՆՐ. Զհեթանոսք ասելով՝ ի-
մանայ զմեղաւորս, կամ զայնս՝ որք ոչ ծառայեն ա՟յ,
այլ կռոց, կամ ախտից իւրեանց. Ա՟պ անքին ասէ կո-
րիցեն յերկրէ նորա, զի յերկրէն կենդանեաց, այս է՝
յարքայութենէն ա՟յ, որ է իբր երկիր ա՟յ, կամ [illegible] թագա-
ւորութե՟ նր.

Խնդրու՝ կարէ խնայեալ լինել աստ և տիեզերքս,
որ է երկիր ա՟ն ա՟յ. զի * ա՟ն է երկիր լրիւ իւրով ‖.
սաղ. ժդ. 1. Ի սմանէ ևս կորիցեն հեթանոսք և ա՟մ
մեղաւորք. զի թէպէտև ա՟մ մարդիկ՝ թէ արդարք և
թէ մեղաւորք բառնին մահուամբ յերեսաց երկրի,
բայց բարձումն արդարոց այնպէս է՝ որում յաջորդէ
գիւտ կենաց, այն է կեանքն յաւիտենական. իսկ
բարձումն մեղաւորաց այնպէս է, որում յաջորդէ
գիւտ կորստեան, այն է մահն յաւիտենական. Ուս-
տի և վասն մեղաւորաց Ճշմարտիւ ասէ՝ կորիցեն յերկրէ
ա՟ն ա՟յ, և երթիցեն յերկիր սատանայի, այն 'ի դժոխս.
Յետ զայսոսիկ առաջի դնելոյ մարգարէին՝ կամելով
առնել ևս քաջալերել զարդարսն, և մխիթարել
զաղքատսն, ասէ.

լթ. ՑԱՆԿՈՒԹԵԱՆ ՏՆԱՆԿԱՑ ԼՈՒԱՒ ՏՐ, 'Ի ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ
ՍՐՏԻՑ ՆՈՑԱ ՆԱՅԵՑԱՒ ՈՒՆԿՆ ՔՈ.

Ըստ հատուածոյ կարգի խօսելով առ 'ի գտանել յա՟յ
զպաշտպանութիւն և զօգնականութիւն, պահանջի յընդու-
նողն նախ ցանկութիւն առ այն, և ապա պատրաստու-
թիւն 'ի նոյն խոնարհութեամբ և հաստատութեամբ. Ուր զի
ըստ նախակարգեալ քանիցդ աղքատք և տնանկք կարօ-
տին գտանել յա՟յ զպաշտպանութիւն և զօգնականութիւն,
'ի յունիլ նոցա առ այն զցանկութիւն և զպատրաստութիւն՝
ընդունակ գտանին այնմ. և ա՟ծ տեսանելով զայն
ցանկութիւն ն՟ց և զպատրաստութիւն՝ ոչ անտես առնէ
զն՟ս, և ոչ անարգէ զկարօտութիւն ն՟ց, այլ տայ՝ որում

կարօտենն ։ Ըստ առաջնոյն խօսելով մարգարէին ասէ ։

Զ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ՏՆԱՆԿԱՑ ԼՈՒԱՐ ՏՐ ։ Բարդ ցանկութի՛ դնի աստ ըստ ճարտասանից փոխանունութե՛ ձեւով փոխ այնպիսի աղօթից՝ որով յայտնին ցանկութիւնք սրտի . եւ ըստ այսմ կամի ասել . յաղօթել տնանկաց , եւ 'ի յայտնել նոցա յաղօթսն անդ զցանկութի իւրեանց՝ լուաւ նց Տր ։ Իսկ պատճառ դնելոյ զբարդ ցանկութի՛ երեւի լինել այն , զի ցուցցէ՝ թէ գոյ 'ի նս ճշմարիտ փափաք գտանելոյ զօգնութի յԱյ ։ Իսկ փոխաբերաբար ցուցանէ թէ ած արագ լսէ նոցա . իբր զի 'ի ցանկալ նոցա խնդիր եւ յաղօթել վն այնր՝ ունկն մատուցանէ 'ի լսել ։ Յարմարութք իմն եւս ցուցանէ թէ կարի իմն գթայ 'ի նս . իբր զի ած՝ որ քննէ զսիրտս , բզմ անգամ տեսանելով զտառապանս նց՝ ոչ սպասէ՝ զի աղաղակեսցեն նոքա առ նա , եւ խնդրեսցեն 'ի նմանէ վանել զբռնութիւն ամպարշտացն , այլ գիտելով միայն՝ թէ ցանկան նք զերծանիլ 'ի ձեռաց ամպարշտաց , զայն ցանկութիւն նց իբրեւ զաղաղակ աղօթից լսէ . զի ը՟ առակին * աղաղակ սրտի է ցանկութիւն || ։ Նաեւ զի յայս աղաղակ տնանկաց նայի ած ըստ պատրաստութե սրտից նց՝ որպէս յիշեցաք այժմ , ամէն իբր յաւելու մարգարէն ասել ը՟ երկրորդին ։

Ի ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՐՏԻՑ ՆՈՑԱ ՆԱՅԵՑԱՒ ՈՒՆԿՆ ՔՈ ։ Ոչ ասէ 'ի սիրտս նց , այլ 'ի պատրաստութիւն սրտից . զի սիրտ անպատրաստ չէ ընդունակ այցելութե ։ Իսկ այս պատրաստութի սրտի տնանկաց է ըստ խոնարհութե հոգւոյ եւ ըստ հպատակութե կամաց 'ի ներքոյ հաճութեն այ . որով տրամադրեալ գտանին առ ընդունելութիւն ածային օգնականութե ։ Զայս պատրաստութի սրտից նոցա ասէ նայեցաւ ունկն քո . որով ոչ կամի ցուցանել՝ թէ ած ունի զունկն , այլ թէ յայն պատրաստութիւն նց նայելով՝ ողորմի 'ի նս եւ օգնէ նց , որպ թէ ոչ միայն տեսեալ էր զցանկութիւն սրտից նց , այլ եւ ունկամբ լուեալ զներքին պատրաստութիւն նոցին ։ Նաեւ առ 'ի զայս իմացուցանել՝ ոչ ասէ՝ լուաւ ունկն քո , այլ՝ նայեցաւ ։

Նաեւ թէպէտ 'ի բազում ձեռագիրս մեր , եւ 'ի տպագրեալ սաղմոս իմն դնի հայեցաւ , բայց այս երեւի

լինել վրիպակ. զի ոչ համաձայնի դիտաւորութե̃ բա-
նին և ոչ նշանակութե̃ բառին. իբր զի հայելն բառ յա-
ռաւել նշանակութեան խրում ոչ ընծայի ունկան, այլ
աչաց միայն, ըստ այնմ* հայեսցին 'ի նա յոր խոցեցինն‖.
յովհ. ԺԹ. 37. Իսկ նայելն՝ այլոց զգայութեանց եւս
պատշաճի. ըստ այնմ* նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց‖. սաղ.
Է. 2. յոր միտ և յծարաւ լեզուս փնկ առելոյ լսե՛
ինչ կլսէ, առեւմք երբեմն նայէ ինչ կլսէ. և փնկ ա-
սելոյ համբ սա, առեւմք երբեմն. համբ նայէ ինչպէս է
Տր. Այլ դարձեալ հայելն առ լինել 'ի վեր կոյս. ըստ այնմ.
ես. ԼԸ. 'ի սաղ. ՃԺ. * հայեցայ 'ի բարձունս‖. Իսկ
նայելն՝ 'ի վայր, ըստ այնմ* Տր յերկնից նայեցաւ յամ որ-
դիս մարդկան‖. սաղ. ԺԳ. 3. Այլ զի առ առ Ած
առի՝ դիտել 'ի պատրաստութիւն սրտից՝ որ 'ի վայր կոյս
մատեալ լինի, ըստ պատշաճի դնի նայեցաւ.

Բայց ըստ յառաւել նշանակութեն. զի ըստ փոխաբերու-
թեան՝ բառս հայիլ բազմանգամ դնի փնկ վերաբերե-
լոյ առ այլ. որպ յառաջն. այս բան հայի յայս ինչ կամ
յայն ինչ Տր. Թող զայն՝ զի երբեմն դնի և փոխանակ
նայելոյ, որպ և նայելն փնկ հայելոյ ըստ յարմարութե
տեղւոյն. Բայց քզի առ ունկան ընծայի բանն՝ յար-
մարութիւն տեղւոյն ոչ տանի դնել հայիլ, այլ նայիլ
յառաջն. 'ի պատրաստութե սրտից նոց նայեցաւ ունկն
քո. Թէպէտ և 'ի Գ գիրս եզրասայ. Է. 12. հայիլ
բայլ եւ դնի այսպիսի ինչ յառաջն. * եղիցին ա-
կանջք քո հայիլ յաղօթս ծառայից քոց‖. սակայն մարթ
է եւ առել թէ զուցէ վրիպակ գրագրաց իցէ. որք
փնկ դնելոյ նայիլ՝ գրեցին հայիլ.

Նախանօր ցանկութ̃ և պատրաստութ̃ սրտի կարէ
խնացեալ լինել և դիտաւորութիւն գործոյն. եւ և
փափաք հոգւոյն առ գործս առաքինութեան և առ
արքայութիւն երկնից. Նյամ բարի փափաքանաց
սրտի արդարոց առէ լսաւ Ած, և 'ի սոյն նայե-
ցաւ և հաճեցաւ և կատարեաց. զի * լաւ այն է
տիրապէս (առէ լամբրոնացին), յորում գործն հե-
տեւի լսելոյն‖. Տեսանեմք երբեմն յարգարս զայնպի-
սի ինչ գործս, որք չերևին մեզ պատշաճ, սակայն
պատրաստութիւն սրտից նոց այլազգ է. Որ օրինակ
տեսանք 'ի մէջ երբեմն կամեցան երևիլ սուրբ, ոչ զի 'որ

երեւեցին, այլ զի որբութ՟ զանմարմն շահեցին. եւ ա՟ծ նայեցաւ յայս բարի պատրաստութիւն սրտից նց, եւ ոչ յայն զոր մեք համարիմք. Ըստ այնմ եւ ոմանք 'ի փիլիսոփայից յայտնեցին զինքեանս լինել փիլիսոփայ, ա՟յ զի մարդիկ թողուցուն զնոսա փիլիսոփայօրէն կեալ. եւ յայտնի արարս ա՟ծ նայի 'ի դիտաւորութիւն նոցա. Նաեւ զի 'ի կատարեալն դնէ՝ լուաւ եւ նայեցաւ, ասելն այսու կամի ցուցանել՝ թէ ա՟ծ անաչառակս նայի եւ լսէ մտանկաց եւ որբոց. զորոց է բանն.

Ոչ ասէ մարգարէն, անուաց նց, այլ սրտից նոցա. վ՟ն զի 'ի սիրտն նայի ա՟ծ, եւ զայն խնդրէ. * տուր ցիս որդեակ զսիրտ քո ||. առակ. իգ. 26. Նաղէն զսիրտ խնդրէ, եւ ոչ զթեւս կամ զլեարդ. քանի եւս ա՟ծ՝ որ հաստիչ է սրտից. զի 'ի սիրտն է բովանդակութիւն կենաց. ըստ որում նա է առաջին 'ի կերպարանիլն եւ վերջին 'ի մեռանիլն. Որպէս անօթ կաւեղէն է սիրտն. եթէ հրով սիրոյ ջերմասցի՝ զօրանայ եւ հաստատի, պնդանայ եւ պատրաստի. եւ որ արտաքն զնա՝ նայի 'ի նա սիրով, օգնէ եւ պաշտպանէ զթով. զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն. 'ի մէջ բերելով զցոյց պաշտպանութեանն ա՟յ առ որբս եւ առ մտանկս, եւ ասէ.

ԼԹ. Դատ առնել որբոյն եւ տնանկին. զի մի եւս յաւելուցու մարդ 'ի մեծաբանել իւրում 'ի վերայ երկրի.

Դատ առնելն է՝ դատաստան ուղիղ տեսանելով պաշտպանել զիրաւունս զրկելոյն, մինչեւ ոչ եւս մնալ տեղի ամբարտաւանութեան չարախօսին. եւ զի մարգարէն եցոյց 'ի վերոյ՝ թէ զրկեալ լինին յամբարշտաց տնանկք եւ աղքատք, ընդ որս եւ որբք, եւ թէ ա՟ծ լսէ նց, սմին իրի զդատ առնելն ա՟յ եւս 'ի մէջ բերէ ասելով.

Դատ առնել որբոյն եւ տնանկին. Կամի ասել. լսելով ա՟յ զհեծութիւնս որբոյն եւ տնանկին՝ հանեցաւ դատ առնել նոցա ընդդէմ ամբարշտաց՝ նեղչաց անձին նց, առ 'ի զերծուցանել զնոսա, եւ զամբարիշտսն պատուհասել. Նաեւ այսմ հետեւեցուցանէ ասելով.

Զի մի եւս յաւելուցու մարդ 'ի մեծաբանել իւրում 'ի վերայ երկրի. այս ամբարիշտն, որ է մարդ տկար 'ի վե՟ երկրի, ուր եւ մեծաբանէ՝ թէ զայս ինչ եւ զայն կարէ

առնել ընդդէմ տնանկաց՝ մինչ նոք թէ ընդդէմ այ, * մի եւս յաւելուցու ||. զի մի եւս յաւելցի առնել. որ է ասել, մի կարասցէ առնել զայն զոր մեծաբանէ. կամ որ նոյն է, ըստ մեծաբանելոյ իւրոյ ոչ կարասցէ առնել ինչ ընդդէմ այ. զի ինքն է մարդ 'ի վերայ երկրի, իսկ ած է յերկինս. կամ ըստ եբրայեցւոց՝ ինքն է մարդ յերկրէ, զի երկրաւոր. իսկ ած՝ երկնաւոր եւ տէր երկնից.

Սարդամ յայլոց դէմս վերածէ զայս բան. զի ասէ՝ թէ 'ի խնդրել այ զվրէժ յանիրաւացն, * այլք տեսեալ խրատին, եւ ոչ յաւելուցուն զինքեանս 'ի նոյն չարիս ||.

Լամբրոնացին զայս բան իբր ըստ յունաց ընթեռնու, * զատ առնել որբոյ եւ տնանկի. ընդ որ մի յաւելցի մարդ մեծաբանել 'ի վերայ երեսաց երկրի ||. եւ զայս համարի ուղիղ է զմեր թարգմանութիւն՝ ըստ հոգեւոր խնամոց. իբր զի ած հաճի եւ հաճեցաւ այնպէս դատ առնել որբ եւ տնանկ ընթեռնում, մինչեւ ոչ եւս մեծաբանել ընդ այն հնչաւոր մարդոյ՝ եւս եւ տառանայի. Բ.Մ ասելի է եւս՝ թէ այս Ճշմարտի ըստ հոգեւորական մեկնութեան. իսկ ըստ նկարագրականին թարգմանութիւն մեր 'ի յունականէն՝ բարւոք եւս է, եւ ուղիղ.

Ի վախճան այսր սաղմոսի արժան է գիտել, զի ամ բանք սորա ասացեալք ընդդէմ անիրաւին կամ մեղաւորի նեղչի տնանկաց եւ աղքատաց՝ կարեն ըստ պատշաճի յարմարիլ նեռին ըստ մեկնութեան սրբոց հարց. եւս եւ կարեն յարմարիլ սատանայի ըստ մեկնութեան Լամբրոնացւոյն, որպէս եւ ուրեք ուրեք եդաք 'ի մեկնութեան.

Իսկ հայելով միայն յանիրաւիչսն՝ յայտ առնեն, թէ յորքան չարիս պաշարեալ իցէ նա, եւ թէ զիարդ իւր վրէժխնդիր ունի զինքեան. Նա զայս խորհելով իւրաքանչիւրոք՝ պարտի յամ սրտէ զգուշանալ, զի մի արասցէ ինչ անիրաւութեան յարեւգլ 'ի հոգի իւր. զի այն փոքր արասց իբր խոնր տարածեալ համարէն՝ եղծանէ զհոգի նր. եւ յայն վիճակ չար հասուցանէ զնա՝ յոր ոչ կամէր. Իսկ եթէ արար յարատոյ անիրաւութե կրթեցաւ զանձն յանդգնութիւն, յայն վիճակ բարի հասանէ՝ յոր ոչ կարծէր, մինչեւ 'ի բարի կատարած աւուրց իւրոց եւ 'ի կեանս յաւիտենականս.

# ՍԱՂՄՈՍ Ժ.

*Նանք քաջալերութեան ապաւինելոյ յՏէր 'ի նեղութիւնս և 'ի հալածանս, 'ի դիմաց անօրէն արդարոյ, 'ի մէջ բերելով զտեսչութիւն Այ 'ի վերայ ամի. եւս և զգործ և զկատարած մեղաւորի.*

Ի կատարած. Սաղմոս 'ի Դաւիթ.

1. Ի Տր յուսացայ. որպէս ասիցէք ցանձն իմ. փոփոխեաց 'ի լերինս որպէս ճնճղուկ: 2. Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց. պատրաստ արարին նետս 'ի կապարճս, ձգել ընդ խաւար՝ այնոցիկ, որք ուղիղ են սրտիւ: 3. Զի զոր դու շինեցեր՝ աւերեցին. իսկ արդարն զի՞ արար: 4. Տր 'ի տաճար սբ իւրում. Տր յերկինս յաթոռ իւրում: 5. Աչք նր 'ի տնանկս հային. արտեւանունք նր քննեն զորդիս մարդկան: 6. Տր քննէ զարդարն և զամպարիշտն. որ ատէ զմեղս, ատեայ զանձն իւր: 7. Տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որոգայթս. հուր և ծծումբ. այս մրրկէ՝ բաժին բաժակի նոցա:

## ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած՝ Սաղմոս 'ի Դաւիթ.

ՅԵՐԲԱՅԱԿԱՆՆ ԶԻՒԲՐԱՌՈԳ սաղմոս: Երկ վասն անուանս 'ի կատարած և 'ի դաւիթ. տես 'ի ներած. գլ. թ. և ժ. Իսկ բարոյապէս առեալ բառդ" 'ի կատարած" ցուցանէ՝ թէ որ ինչ գրին 'ի սաղմոսի աստ մինչև 'ի կատարած՝ կարգին 'ի քաջալերութիւն արդարոց, յայտ առնելով թէ ած է պաշտպան նոցին 'ի հալածչաց նոցա: Կամ թէ այս սաղմոս կարգի 'ի կատարած, զի 'ի յաղթանակումն ազատութե արդարոց յա-

րոգայթից թշնամեացն՝ 'ի դնել նոցա զչար խորհրդոց յաստուած ։

Իսկ թէ զայս առաջին յինչ առթէ իցէ ասացեալ դաւթի, ոչ է յայտ ․ ոմանք վերածեն զսա յայն դիպուած, որ պատմի յառաջին գիրս թագաւորաց ․ գլ․ ԻԹ․ և Լ․ ուր գրի, թէ դաւիթ չոգաւ առ անքուս որդի մաոքայ արքայ գեթայ ․ և 'ի գնալ անքուսայ 'ի պատերազմ ընդդէմ իղի տարաւ և զդաւիթ ընդ իւր ․ ընդ որ նախանձեալ նախարարացն անքուսայ՝ յետս դարձուցին զդաւիթ ․ և մինչև հասեալ էր նորա 'ի սիկելակ՝ ասպատակեցին ամաղեկացիք զքաղաքն, և այրեցին զայն, և գերեցին զամ՛, ևս և զկանայսն դաւթի և արանց նորա ։ Հասեալ անդր դաւթի, և տեսեալ զապականութիւն քաղաքին, յարձակեցաւ 'ի վ՛ր ամաղեկացւոց, և թափեաց զամ՛ գերիսն, և 'ի յաջողել այսր՝ երգեաց զսաղմոս զայս, ուղղելով զբանն առ նախարարսն անքուսայ յանձն ․ դուք մերժեցիք զիս և ասացիք, փոփոխեաց աստի յայլ լերինս ․ իսկ ես 'ի տէր յուսացայ, և յուսալով 'ի նա՝ արարի զայս գործ մեծ ։

Հաւանականագոյն կարծիք է այն՝ թէ զայս ասաց նախ քան զսկսանիլ հալածանացն սաւուղայ, յորժամ իմացեալ բարեկամացն դաւթի, թէ սաւուղ խորհի սպանանել զնա, ազդ արարին նմա փախչիլ և բնակիլ 'ի լերինս ։ Այլ նա թէպէտև յետոյ փախեաւ յերեսաց նորա, բայց զյոյս իւր բոլոր յած՛ եդեալ՝ վստահանայր, թէ զօրութբն այ ունի անվնաս զերծանիլ ։ Այլ այսու առթիւ ասաց, * Ի տէր յուսացայ ․ որպէս ասիցէք ցանձն իմ՝ փոփոխեա՛ 'ի լերինս ‖ ․ որով ոչ ցուցանէ, թէ ինքն այսպիսի ինչ ասացեալ իցէ նոցա, այլ միայն յայտ առնէ զներքին վստահութիւն իւր՝ յուսացեալ յած ։

Իսկ ոմանք ասեն, թէ զայն յորդորանան թշնամիք դաւթի արարին նմա, որպէս զի փախուսցեն զնա և հեռացուսցեն 'ի սահմանաց իւրեանց ․ բստ որում զանգատէ դաւիթ զոյգանէ առ սաւուղ՝ յանձն, « Այլ արդ՝
» լուիցէ տէր իմ արքայ զբանս ծառայի իւրոյ ․ եթէ
» այ շարժեալ է զքեզ 'ի վերայ իմ, հոտոտեսցի զոհ
» քո ․ և եթէ որդւոց մարդկան, անիծեալ լիցին
» դոքա առաջի տեառն ․ զի մերժեցին զիս այսօր՝ հաս-

„ տառել ինձ 'ի ժառանգութեան նմա . առեն՝ երթ ծա-
„ ռայեա աստուածոց օտարաց ‖ . ա . Թագ . իզ . 19 .
Զոր յաւելուն այլք , թէ յաւել ոմանց և 'ի հեգնել
զդաւիթ՝ թէ շրջի 'ի լերինս որպ ձնձղուկ , առացեալ
իցէ , թէ զի՞ հեգնէք զիս՝ ասելով փոխեաց 'ի լե-
րինս իբր ողորմելի ձնձղուկ եա .

Այլ գիտելի է , զի թէպէտ և մտ այսր կամ այնր իցէ առացեալ դաւթի զայս սաղմոս , բայց այս մտ իբր առիթ նկատի . խկ ինքն խօսի 'ի դիմաց իւրաքանչիւր արդարոյ , ևս և 'ի դիմաց եկեղեցւոյ՝ հալածեալ 'ի հալածչաց . Ուստի և մեք ըստ այսմ ունիմք մեկնել զայս սաղմոս . յորում և զմեկնութիւն այնր առթի կարէ իւրաքանչիւրոք ինքնին իմաստասիրել .

## ԻԱ. Ն.

ա . Ի Տէր յուսացայ . որպէս ասիցէք ցանձն իմ , փոխեաց 'ի լերինս որպէս ձնձղուկ .

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ .

Այս բան է արդարև ձայն արդարոյ եղելոյ 'ի փորձութեանս յուսահատութե 'ի փոխուել զվիճակ կմ զառաջադրութիւն իւր վս բազմութե մեղաւորաց առթից և վտանգաց և տառապանաց յարուցելոց 'ի վր 'ի խորհրդոց յուզելոց 'ի դիւաց կամ 'ի տկարութէ , կմ 'ի հալածչաց . Զորոյ զփորձ առեալ դաւթի 'ի սաւուղեանց անտի՝ յուսացուցանէ զանձն , և իբր թէ քաջալերս առեալ ասէ .

Ի Տէր յուսացայ . Իբր թէ ասիցէ , ես ոչ եմ յուսացեալ 'ի զօրութիւն իմ , և ոչ ես 'ի մարդ ոք . այլ՝ յԱծ , որ Տր է ամի , և է յամ տեղիս , և յամի ամ ուրեք կարող է պաշտպանել զիս . Նա զայս եղեալ՝ հեռանեցուցանէ . և ասէ .

Որպէս ասիցէք ցանձն իմ , փոխեաց 'ի լերինս՝ որպէս ձնձղուկ . Յս է՝ որովհետև ես 'ի Տէր յուսացայ՝ ընդէ՞ր ասէք ցիս , * փոխեաց 'ի լերինս որպ ձնձղուկ ‖ . Ձնձղուկք ասելով խմանայ զտկար թռչունս որք երկուցեալ յորսորդաց՝ փախչին 'ի բարձր տեղիս կամ 'ի

գլուխս լերանց՝ ապահովեալ 'ի նոսին յերեսաց որ-
սորդացն. ըստ որում դժուարին է նց̃ ելանել 'ի նոսին.
Այսու նմանութեամբ խօսելով մարգարէին՝ լերամբք տայ
իմանալ զայնպիսի տեղիս կամ զայնպիսի վիճակս և
զգործս, յորս իցէ գտանել ապահովութիւն 'ի հալած-
չաց, եւ և յիմանալի որսորդաց՝ յր̃ 'ի փորձողաց և 'ի
փորձութեանց նց̃. Ան զի խորհուրդք մարդոյ 'ի տեսա-
նել զյաճախութիւն փորձութեանց՝ արկանեն զնա 'ի փոր-
ձութիւն յուսահատութեան. և գրեթէ ասեն ցնա. * փո-
,, փոխեաց 'ի լերինս որպէս ճնճղուկ ‖. յր̃ թող զայդ
բարի կոչումն՝ յոր կոչեցար. թող զայդ առաջա-
դրութիւն զոր արարեր. թող զայդ գործ՝ զոր սկսար. զի
ահա յայդոսիկ բազում որսորդք կան, յր̃ փորձութիւնք և
տառապանք և վտանգք մեղանչելոյ. ապա թող ըզ-
դոսա. և * փոփոխեաց 'ի լերինս ‖. յր̃ ընտրեա՛ քեզ
զայնպիսի վիճակ՝ յորում կարիցես կեալ բարւոք.
արա՛ զայնպիսի առաջադրութիւն՝ զոր կարիցես կատա-
րել. սկիզբն արա այնպիսի գործոյ՝ որ կարասցէ յա-
ջողիլ. Իսկ արդարն, որ յուսացեալ է 'ի Տէր, յայս-
պիսի բանից ոչ շարժի. զի գիտէ՝ թէ յամ̃ տեղիս և
յամ̃ վիճակս և յամ̃ գործս անպակաս են փորձութիւնք.
և գիտելով եւս թէ որպէս սոքին են անպակաս, նոյնպէս
և խնամքն այ̃ են աննուազ 'ի վր̃ ամենեցուն՝ որք կամին
առնել զբարին, յայն յուսայ. և այնու կայ հաստա-
տուն 'ի յառաջադրութեան իւրում.

Այս բան կարէ առնուլ և իբր հեգնական կամ արհա-
մարհական տարազու. զի արդարն եդեալ զյոյս իւր
յա̃ծ, յանկանելն 'ի փորձութիւս, դարձեալ 'ի նա հաս-
տատէ զյոյս իւր. և յասել ցնա խորհրդոց իւրոց,
և կամ այլոց ումանց. փոփոխեաց 'ի լերինս՝ հեգնէ
զնոսին և արհամարհէ, ասելով. ես 'ի Տէր եմ յու-
սացեալ, զի՞ եւ փոխեցայց յայլ ինչ. միթէ կարիցէ՞
գտանիլ հզօրագոյն քան զՏր̃.

Համբառնացեն լերամբք իմանայ աստ զաստիճան ա-
ռաքինութեան, և զպատիւ իշխանութեան, և զգերագոյն
պաշտօն ուսուցանելոյ այլոց զխորհուրդս այ̃. յոր 'ի
յորդորել խորհրդոց արդարոյն՝ ասէ ցնա հոգի նորա.
ըստ գրելոյ նորին լամբ". * 'ի Տր̃ յուսացայ, և զճաշակ
,, ողորմութեն նորա ընկալայ. և շնորհօք նորին 'ի մեղաց

„ որբեցայ · բայց դուք որպիսի կամօք խրատէք զիս
„ կարճամիտ լինել 'ի յուսոյս և յայս ձգտէ առա-
„ քինութե 'ի յայլ փոփոխել, որպէս ճնճղուկ · այդ
„ ճնճղկի է սովորութիւն, երագութե թեւովքն զմի
„ լեառն թողուլ, և վաղվաղակի 'ի միւս այլ հասանել ·
„ իսկ բանաւոր մարդ՝ որ զգործոյ բուռն հարկանէ,
„ զիարդ այս նման յաջողի, զայս գործ անկատար
„ թողուլ՝ և յայլ լինել ձեռնամուխ · յապաշխարու-
„ թէ երագել, և 'ի վճպական աստիճան վաղվաղել
„ նստել · 'ի խոնարհ վայրէս՝ որ զիս յուսոյ հանդի-
„ պեցոյց՝ փոփոխել, և 'ի լեառն բարձր իշխանութեան
„ ելանել · չէ ուղիղ խրատդ ձեր, զոր ասէք ցիս ‖ :
Այլ նոքա կամելով անյապաղ խոնարհեցուցանել
զոգին 'ի խորհուրդս իւրեանց, առաջի առնեն նմա
զայսպիսի ինչ :

Ը̅ · Զի ահա մեղաւորք լարեցին աղեղունս իւրեանց ·
պատրաստ արարին նետս 'ի կապարճս, յձգել ընդ
խաւար՝ այնոցիկ՝ որք ուղիղ են սրտիւք :

Զայս ասէ մարգարէն՝ ոչ 'ի դիմաց իւրոց, այլ 'ի
բերանոյ թշնամեաց, կամ 'ի բերանոյ այնոցիկ՝ որք
ասէին նմա * փոփոխեաց 'ի լերինս որպէս ճնճղուկ ‖ ·
առ որոյ հաստատութիւն իւր պատճառ առաջի դնե-
լով զայս բան 'ի դիմաց նոցա՝ ասէ :

Զի ահա մեղաւորք = սրտիւք : Ահա ասելով կամի
ցուցանել նախ զյանկարծութիւնն · զի ոչ զրէ ծոր-
ծորեցին 'ի մեկն · մատ · գլ · ժդ · * ահա ասելն յան-
„ կարծութե նշանակ է ‖ : Կամի ցուցանել երկդ զմօ-
տակայութի և զպատրաստութիւն փորձանաց և տա-
ռապանաց՝ որ 'ի մեղաւորաց, կմ 'ի չար մարդկանէ,
կամ 'ի դիւաց հասանեն ընդդէմ արդարոյ, որպէս
թէ եղեալ էր · փութամ փոփոխիլ 'ի լերինս · զի ահա
մեղաւորք մերձ են յանկարծ յարձակիլ 'ի վերայ քո
աղեղամբք՝ և հարկանել զքեզ նետիւք, ևն :

Աղեղամբք իմացեալ լինին աստ հնարք չարի, ևս և
հպարտութի, նախանձ, բարկութիւն, և այլ մոլութիք
մեղաւորաց, նաև մեծութիք և իշխանութիւնք նց · զի
այսպիսի իրք ունելով զզօրութիւն վանելոյ զայլս՝ նմա-
նին աղեղանց լարելոց :

Նետիւք իմացեալ լինին աստ բանք մեղաւորաց. ք՟ են՝ բամբասանք, նախատինք, արհամարհանք, երգիծանք, անօրէն խորհուրդք, ևն՟. Ես և չար օրինակք, և գործք գայթակղեցուցիչք, և անիրաւ հալածանք. զի սպքին իբրև զնետս հարկանեն զարդարսն:

Իսկ կապարճօք իմացեալ լինին աստ սիրտք և բերանք մեղաւորաց. զի որպ՟ ՚ի կապարճս բազում նետք պատրաստին, սոյնպէս և ՚ի սիրտս և ՚ի բերանս մեղաւորաց իբր ՚ի կապարճս պատրաստ կան բազմադիմի չարիք՝ ես և բամբասանք և նախատինք՝ ևն՟, իբրև նետք, զորս ՚ի լարելոյ, ք՟ ՚ի մղելոյ հպարտութեան և անօրէնութեան իւրեանց՝ արձակեն և ձգեն առ այնոսիկ. ոյք ուղիղ են սրտիւք:

Այս զայս առնեն * Ընդ խաւար ‖. ք՟ ՚ի գաղտ, որ օրինակի ՚ի խաւար, կամ յայնպիսի ժ՟մկս և յայնպիսի առիթս, յորս անպատրաստ են արդարք, և կամ ոչ գիտեն և ոչ տեսանեն՝ թէ յայնմ պահու այսպիսի ինչ պատահելոց իցէ ինքեանց. և կամ ես ՚ի փորձութ՟ժամանակի, որ է իբր ժ՟մկ խաւարին:

Արդարսն կոչէ ուղիղս սրտիւք. զի նախ սիրտք այսպիսեաց համաձայն գոլով ա՟ծային կանոնաց, և շարժմունք ն՟ց անխոտոր ՚ի բնական օրինաց, ասին ուղիղ. և երկ՟՝ զի սիրտք նոցա ուղղեալ են առ ա՟ծ, և յուղղութ՟է անտի նաև ա՟մ կարողութ՟իք հոգւոյն, ես և զգայութիւնք ուղղին ք՟ կարգեալ լինին առ ծառայութիւն ա՟յ. յորմէ եթէ մին կասեսցի՝ ոչ ես ասի ուղիղ: Ամին իրի ջանային ս՟բք, զի բովանդակ կեանք իւրեանց, և համայն զգայութ՟իք կարգեալ լիցին առ ա՟ծ, և ոչ երբէք իւիք նահանջեսցին. ուստի գոչէր սաղմոսեանն ձայն. * Եթէ գիտէի, թէ աչք իմ
,, և ականջք, կամ ձեռք իմ և ընթացք ոչ ուղղին
,, առ ա՟ծ, ոչ կամէի ունիլ զնոսա ‖: Առ այսպիսիս ասէ ձգել ջանան չարք զնետս իւրեանց:

Սարգիս շնորհալի. ՚ի մեկն. ա՟. պետ. Ե. Գ. ճառ. Ժ՟Բ. մեղաւորք իմանայ աստ զստ՟նյ և զդևս նորա. և ասէ.
* աղեղն և յանդուգն պատերազմող է բնութեանս
,, մերում բանսարկուն. և սովորեցաւ գաղտնի նե-
,, տաձիգ լինել ՚ի մարդիկ, և ընդ խաւար խոցո-

,, տեղ զայնոսիկ՝ դք ուղղիղ են սրտիւք ||։ Այս 'ի ա․
պետ · դ · 18 · ճառ · Ժ · յորդ · յորդորելով ասէ ·
* արդ պնդակամք լիցուք , և զզէնս անմարմինս ըն֊
,, դեցցուք և մեք · ելցուք ընդդէմ չար ախոյանացն ·
,, որ սովորեցան ձգել ընդ խաւար նետս մուխս յայ֊
,, նոսիկ դք ուղիղ են սրտիւք ||։ Այլ զայսոսիկ նետս
սատանայի այնպէս պարտիմք վանել , զի մի ևս կրկին
նետաձիգ լիցի 'ի մեզ ։

Ամբարտաւանացն ևս 'ի սոյն միտս առեալ՝ աղեղամբք
խնամոյ ասա զչար խորհուրդս , զորս պատրաստեն
դեք ընդդէմ ուղղոց · և նետիւք զգործս այնց խորհրդ֊
դոց՝ զխոցոտիչս հոգւոյն · իսկ կապարձովք նետից
զմարմնական յաջողութիւնս , յորոց խոցոտել կամին
դեք զհոգին · և խաւարաւ զկուրութիւնն , որով կու֊
րացուցանել փութան զմիտսն · ուստի ընդ խաւար ասէ
ձգեն , այսինքն ընդ կուրութիւն · որ է ասել , կուրացուցանե֊
լով զմիտս ։

Խաւարաւ խմացեալ լինի աստ և տրտմութիւն դառն , որ
խաւարեցուցանէ զհոգին , և 'ի մահ ևս փութացու֊
ցանէ · զի * 'ի տրտմութենէ վաղվաղէ մահ ||· ասէ սի֊
րաք · լը · 19 · և խե · 17 ։ Այս որչափ կատարեալ իցէ
մարդ՝ 'ի դառնագին տրտմութենէ կործանի 'ի յատակս
դժոխանմանն վշտաց հոգւոյ · յորոյ ապացոյց ասաց
յակոբ · * և իջուցանիցէք զծերութիւն իմ տրտմութեամբ
,, 'ի դժոխս ||· ծնն · խբ · 38 ։

Արդ՝ այսոքիկ նմանութեամբք դիտէ յայտ առնել մար֊
գարէն զսաստկութիւն փորձութեանց արդարոյն , և զա֊
նողորմ գործս թշնամեաց նորա · յորս 'ի տառապիլ նա֊
րին՝ թեւադիր լինին , և ասեն · * զի ահա մեղաւորք
,, լարեցին զաղեղունս ||· ժա · որպէս թէ ասէին · ահա
ոչ ևս մարթ է քեզ յայդ գործ կամ յայդ վիճակ
առնել զոխրս անդորր , զի յամ կողմանց տառապանօք
թշնամեացդ պաշարեալ լինիս · ապա կամ պարտ է քեզ
մատչիլ 'ի լերինս , այսինքն յայլ ապահով և բարձրագոյն
գործս , կամ ելանել իբրք 'ի գլուխ լերանց , ուր չի֊
ցէ հնար մարդոյ մերձենալ · և կամ անսալ մեղաւո֊
րաց , և միաբանելով ընդ նոսա՝ թողուլ խոպան զճա֊
նապարհն արդարութեան ։

Այլ ընդդէմ այսպիսի խորհրդոց պնդնի սոյ արդարն

զայն՝ զոր ասաց 'ի վերոյ. 'ի տէր յուսացայ, եւ վ՛նկ ոչ յայլ ինչ փոխիմ, ոչ յանմատոյց լերինս մատչիմ, եւ ոչ զճ՛պհն արդարութեան լքանեմ. վասն զի ես զայն ճ՛պհ պարտիմ գնալ՝ եւ զայն գործ գործել, զոր եցոյց ինձ ա՛ծ. եւ ոչ զայն՝ զոր մեղաւորք գնան. զի եղծիչ են նոքին հրամանացն ա՛յ, եւ աղաւաղիչք արդարութեան ։ Նա զայս յայտ առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն ասելովն ։

գ. Զի զոր դուն շինեցեր՝ աւերեցին. իսկ արդարն զի՞ արար ։

Որ ինչ շինութի՛ եւ կարգ գտանի 'ի տիեզերս, ա՛մի առաջին հեղինակ ա՛ծ է. եւ ներհակ այսմ՝ որ ինչ աւերմունք եւ ապականութիւնք տեսանին 'ի գործս ա՛յ՝ ըստ քաղաքական կառավարութե՛ եւ ըստ բարոյական ուղղութե՛, հեղինակք նոցին ամպարիշտք են. եւ ըստ այսմ որպէս ա՛ծ համարի կարգիչ նոցին, նոյնպէս եւ ամպարիշտք ասին լինել աւերիչք. վասն այսորիկ ասէ ։

Զի զոր դուն շինեցեր՝ աւերեցին ։ Այսինքն է, զոր ինչ կարգ եդեր դու յխ՛ի, եւ զոր ինչ հրամայեցեր մարդկան, եւ զոր ինչ աւանդեցեր 'ի խրատ ժողովրդեան քում, մեղաւորք եղծին զայնս ։

Նոյն այս յայտնի տեսանի 'ի չարս. զի ահա եդ ա՛ծ կարգ ուղղութե՛ 'ի սիրտ ա՛մ մարդոյ՝ մի՛ հատուցանել չար փոխանակ բարւոյ. հրամայեաց մի՛ բամբասել եւ մի՛ չարախօսել զընկերէ. խրատ ետ յարգել զարդարն եւ խնամել զաղքատն ։ Իսկ մեղաւորք ոչ միայն ոչ առնեն այսպէս, այլ եւ փոխանակ բարւոյ չարիս հատուցանեն, լարեն զաղեղունս ընդդէմ արդարոյ, եւ արձակեն 'ի նա զնետս. բամբասեն եւ հալածեն զնա, որ չէ ինչ արարեալ ընդդէմ նոցա, ո՛պ դաւիթ ը՛դէմ սաւուղեանց, եւ առ այս յարէ եւ ասէ ։

Իսկ արդարն զի՞ արար ։ Այս քան կրկնակի յարի 'ի նախընթացն. մի՛ իբր յանդիմանութիւն չարութե՛ մեղաւորաց. ո՛պ թէ ասէր. արդարն ոչինչ չար արար նոցա, եւ ոչ իսկ ետ նոցա առիթ ատելութե՛. այլ նոքա վ՛ն չարութեան իւրեանց ատեն զնա, եւ կամին եղծանել զընթացս կենաց նորա եւ զուղղութի՛ վարուց նորին ։

Արդ՝ իբր ջատագովութիւն արդարոյն. ո՞չ թէ ասէր.
մեղաւորք աւերեցին՝ զոր դու շինեցեր. իսկ արդարն
ոչ արար այսպէս. ապա արժան է՝ զի դու օգնեսցես
նմա, և ազատեսցես զնա ՚ի ձեռաց նոցա։ Բա-
րոյապէս արդարով իմացեալ լինի աստ խիղճն մտաց.
որ խօսելով առ ած՝ ասէ ըստ լամբ″. * Այս զի արա-
„ րի. Քզի ոչ յիմէն լարեցան աղեղունքս կործանել,
„ այլ յօտարացն. զի թէ իմ էր, ապա ոչ ես ՚ի լա-
„ րելն ՚ոց տրտմէի. իսկ որովհետև տրտմիմ և տաղ-
„ տակիմ, յայտ է թէ թշնամեացն է խարդախութի
„ չարեացն, և ոչ իմոյ արդարութեանս. որ առ քեզ
„ բաղձանօքդ համապազ տոչորիմ‖։ Ողջամիտ ե-
դեալ մարգարէին՝ առաջի առնէ այժմ, թէ ամբա-
րիշտք յաւերել իւրեանց զայն՝ զոր շինեաց ած՝ ոչ
ինչ կարեն առնել ընդ նմա. զի նա է յերկինս, և մեծա
փառօք պաշտի ՚ի տաճարի իւրում. ուստի ասէ.

Դ. Տէր ՚ի տաճար սրբում իւրում. Տէր յերկինս յաթոռ իւ-
րում.

Ով թէպէտ և յամ տեղիս է, բայց ասի լինել յեր-
կինս իբրև յաթոռ իւր. ասի ևս լինել մասնաւորապէս
՚ի տաճարի իւրում՝ իբրև ՚ի սուրբ տեղւոջ, որ և է
պատկեր իմն երկնից, ուր և սրբի անուն նորա, ջ է
՚ոք ցուցանի և իբրև ՚ոք փառաւորի։ Այս հայելով
ասէ.

Տէր ՚ի տաճար սրբում իւրում։ Տաճարս իմացեալ լինի
աստ տունն այն՝ յորում էր տապանակն ածն, զորմէ
տես ՚ի սաղ. Ե. 7։ Այլ զի անդ ՚ի ձեռն տապանակին
յանդիմանն լինէր ներկայութիւնն այ, սմին իրի ասէր՝
թէ անդ է ած, ոչ իբրև ՚ի հասարակ տեղւոջ, այլ
իբրև յիւր ընտրեալ տեղի, և իբրև ինքեան սրբեալ
ջ նուիրեալ. և ըստ այսմ բազում ՚ոք՝ դնի փոխ ՚ոք տեղ-
ւոյ. որպէս թէ ասացեալ էր. ած է ՚ի տաճար իւր
իբրև ՚ի ՚ոք տեղւոջ. իսկ յերկինս իբրև յաթոռ. սմին
իրի յարէ զնի, և ասէ.

Տէր յերկինս յաթոռ իւրում։ Աթոռն է նշան բազում
իրաց. նախ իշխանութե և թագաւորութե. ջ որում
իշխանք յաթոռոյ հրամայեն. երկրդ՝ դատաստանի,
ըստ որում դատաւորք յաթոռ կան ՚ի բարձր տեղ-

ւոջ նստեալ գառեն․ երրորդ պատուոյ, ըստ որում պատուաւորին է նստիլ յաթոռ․ չորրորդ՝ համեմատութիւն՝ բարձրութե, ըստ որում աթոռն է բարձր քան զտեղին՝ ուր է․ հինգերորդ փոխաբերութիւն՝ հանգստեան․ ըստ որում աթոռն է տեղի հանգչելոյ։ Ըստ այսոցիկ տեսութեանցս ասի զնա լինել յերկինս՝ իւր յաթոռ․ ըստ որում անդ յայտնագոյնս ցուցանի թագաւորութիւն նորա, և փառք նորին․ ուր և ասի հանգչիլ։

Նաև դիտել արժան է, զի մարգարէն ոչ դնէ աստ որոշակի ինչ բայ՝ որ է բնակիլ, կամ նստիլ․ կամ փառաւորիլ, ևն․ այլ անորոշ ասէ․ * տէր ՚ի տաճար սուրբ ,, իւրում, տէր յերկինս յաթոռ իւրում ‖․ և այսու կամի ցուցանել, թէ ած անպարագրելի իմն օրինակաւ է ՚ի տաճար իւր և յերկինս։ Խորհրդաբար, ՚ի ձեռն այսր տաճարի օրինակի իմանալի դրախտն․ որով նշանակի սուրբ կոյս ածածինն, յորմէ ծագեցաւ որդին այ․ ըստ ասէ․ * ես որպէս զմուռ ելի ՚ի ,, դրախտէն ‖․ սիրաք․ իդ․ 41․ զի թէպէտ ինքն յամի է, բայց յետ մարդանալոյն ասի ելանել իբրև զմուռ ՚ի կոյս տաճարէ։ Նոյն է տաճարն այն, յորում պըսակեցաւ ածութիւնն ը մարդկութե․ ըստ որում ՚ի տաճարի լինել պսակիլ․ ՚ի տաճարի աստ մատոյց քրիստոս զանձն պատարագ հնազանդութեան հօրն յաւիտենականի։ Յայս տաճար բազմեցաւ տէր իւր յաթոռ՝ մանաւանդ թէ իւր յերկինս․ ըստ այնմ, սաղ. ճբ. 19․ * տր ,, յերկինս ( այսինքն ՚ի կոյսն ) պատրաստեաց զաթոռ ,, իւր ‖․ որ է ասել․ տէր արար իւր աթոռ զկոյսն՝ որ էր երկինք երկնից․ ըստ այնմ եսայ․ կզ․ * երկինք ,, աթոռ իմ են ‖․ որպէս և առաջիկայ բնաբանդ ասէ․ * տէր յերկինս յաթոռ իւրում ‖։ Աստի որ հարք կոչեն զսուրբ կոյսն աթոռ երկնային․ աթոռ փառացն այ, աթոռ անբովանդակելւոյն ՚ի համայնից։ Յայս աթոռ նստաւ թագաւորն թագաւորաց․ և յայսմ աթոռոյ քաղեաց զփրկութիւն։

Արդ յետ առաջի դնելոյ մարգարէին՝ թէ տէր յերկինս է իբրև յաթոռ իւր, յայտ առնէ այժմ, թէ նա յերկինս գոլով ոչ առնէ անտես զարարածս իւր․ և ոչ թողու ՚ի բաց ՚ի խնամելոյ զնս, այլ առաւել ևս

յայտնի տեսանէ և խնամէ . և յայս հայելով յարէ զկնի, և ասէ.

Ե . Աչք նորա 'ի տնանկս հայեն . արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան .

Աչք ասել յած՝ ոչ ցուցանէ թէ ած ունիցի զզգայական աչս, այլ՝ է փոխաբերութիւն բանից . որով նշանակի հայեցուած կամ տեսութի և կամ միտք, որ է իբր աչք . բայց քանզի մարդիկ աչօք հային, 'ի խօսիլ նոցա զայ՝ թէ հայի, նմանութբ իմն ասեն, աչօք հայի, փնկ ասելոյ միոք . Իսկ շնորհալին 'ի թուղթն գրեալ առ ուրուկս, աչօք այ խնամոյ զխնամածոր խնամն նորա . զի գրէ այսպէս . * աչք այ ասէ զիրն զխնամն ո„ զորմութեանն, որ առ երանեալ 'ի նմէ աղքատն „ հոգւով ||.

Նոյնպէս և ասելն աստ արտեւանունք՝ ոչ ցուցանէ թէ ած ունի զարտեւանունս, կմ զթարթիչս աչաց . այլ է նմանութի իմն . որով նշանակի նախ քննութիւնն այ 'ի դատաստանի . ուստի ասէ շնորհալին 'ի վերոյգրեալ թուղթն . * արտեւանունք ասել այ ցուցանէ „ զքննութիւն դատաստանին՝ որ առ մեղաւորս և առ „ անպարկեշտս, աստ տեսանելով և պահելով, և „ անդ դատելով և հատուցանելով . յայտ արարեալ „ թէ ըստ նուազագունից մազոյ արտեւանացն ասանե„ լոց է քննութիւն մանունց կրից որդւոց մարդկան, „ որ առ խորհուրդս, առ բանս, և առ գործս յա„ ւուրն դատաստանին ըստ առաքելոյ ||.

Նշանակի երկրորդ անսխալութիւն տեսութեան այ, որով ըստ ամի անվրէպ տեսանէ զամ գործս մարդկան, թէ մօտ իցեն՝ և թէ հեռի . Իսկ զայս յայն սակս այսու նմանութբ առաջի դնէ, զի նկատելով 'ի գործողութիւնս մարդկան խօսի . վասն զի մարդիկ 'ի հայիլն 'ի հեռաւոր տեղիս, և կամ 'ի քննելն ինչ միոք՝ զարտեւանունսն ամփոփմամբ իմն շարժեն՝ առ 'ի բարւոք տեսանել կամ քննել . Իսկ զի ած հայի յամ տեղիս, և ըստ ամի տեսանէ զամ, վնկ նմանութեամբ խօսելով՝ 'ի մէջ բերէ մարգարէն զարտեւանունս 'ի քննել՝ և զաչս 'ի հայիլ յատելն .

Աչք նր 'ի տնանկս հայեն . արտեւանունք = մարդկան . Աստ

տեղ. ա͞ծ 'ի բարձրութեան աթոռոյ փառաց իւրոց հայի աչօք յաղքատս եւ 'ի տնանկս եւս եւ յա͞մ տառապեալս, եւ տեսանէ զա͞մ որ ինչ պատահի նոցա. եւ նորին զննու-թք իբր արտեւանունքն քննէ զա͞մ գործս մարդկան. Այլ ծանիր, զի հայիլն ա͞յ յարարածս՝ ոչ է սոսկ նկատումն, այլեւ ազդութիւն գթութեան եւ լինելութեան նոցին, որում զհետ գայ՝ թէ առանց նորա թոյլտուութեան ոչ ինչ կարէ պատահիլ նոցա. Այս եւ չէ արժան արդարոց երկնչիլ 'ի տառապանաց եւ 'ի հալածանաց. այլ գիտելով թէ ա͞ծ տեսանէ զամենայն, եւ առանց կամաց նորա ոչ ինչ լինի յաշխարհի, յանձն առնել զանձինս իւրեանց 'ի ձեռս նորա, եւ միայն խաղաղացեալ եւ մխիթարեալ 'ի կամս նորա. եւս եւ զգուշանալ յա͞մ գործս իւրեանց, եւ պատկառանօք կալ առաջի աչաց նորա. զի եթէ մարդոյ առաջի (ասէ լամբ") ոչ ժպրհիմք տգատնելի գործ առնել՝ երկուցեալ 'ի պատկառանաց ամօթոյն, քանի եւս առաւել առաջի ա͞յ՝ որոյ աչք յա͞մի հային 'ի մեզ. Այլ զոր ասաց մարգարէն 'ի հասարակի՝ թէ ա͞ծ քննէ զորդիս մարդկան, զնոյն մանաւորելով յարդարն եւ յամպարիշտն ասէ.

Զ. Տէր քննէ զարդարն եւ զամպարիշտն. որ սիրէ զնեղս, ատեայ զանձն իւր.

Այս բան ըստ առաջին հատուածոյն դնի իբր բացատրութիւն երկրորդ հատուածոյ նախընթաց համարոյն, զի զոր անդ ասաց * արտեւանունք նորա քննեն զորդիս „ մարդկան ||, աստ կամելով առաւել եւս հաստատել՝ բացայայտագոյնս դնէ, և ասէ.

Տէր քննէ զարդարն եւ զամպարիշտն. Զարդարն քննէ իբրեւ զոսկի. եւ զամպարիշտն իբրեւ զկապար. ոսկի 'ի հուր մտեալ, 'ի հուր սաստ քննութեան՝ ոչ ապականի. իսկ կապար ապականեալ կորնչի. Քննէ ա͞ծ արդարն զիւրաքանչիւրսն ըստ գործոց իւրեանց. ոչ զի ոչ գիտէ եւ քննէ, այլ զի զոր գիտէ՝ իբր քննող անվրէպ տեսանէ. եւ 'ի ժամանակի իւրում յայտնի ցուցանէ նոցա, եւ ըստ արժանեաց նոցին տայ նմա վարձս կամ պատիժս. վարձս անապականութեան՝ արդարոց, եւ պատիժս ապականութեան՝ ամպարշտաց.

․Քննէ տէր երբեմն և ազգի ազգի նեղութեամբք իւր փորձելով, երբեմն և պատժելով զամպարիշտս 'ի բղդատութիւն նոցա և 'ի զգուշութիւն արդարոց, երբեմն և զարդարսն տայ 'ի տառապանս, զի զարթիցեն այլք. Աստի ասէ Եզնիկ կողբացի 'ի գլ. իա. * տանջին և
,, անմեղք, զի 'ի մահ կալցին այլք զբանս խրատանոյն՝
,, որ ասէ. եթէ արդարն հազիւ կեցցէ, ամպարիշտն
,, և մեղաւորն ուր երևեսցի. և այս յայն սակս լինի,
,, զի մի արդարն յարդարութենէն ծուլասցի, և մի մե-
,, ղաւորն միշտ 'ի մեղս կայցէ ||. Այլ թէ քանի չար է մեղաւորին յարել 'ի մեղս՝ զայն եւս յայտ առնէ մարգարէն ասելով.

Որ տիրէ ոգւոց՝ տուեալ ոգւոյն իւր. Կամի ասել. մարդ 'ի սիրելն զմեղս, կամ 'ի յարելն 'ի մեղս՝ երևի թէ սիրէ զանձն իւր. զի առ հաճեցուցանելոյ զինքն՝ մեղանչէ. բայց ըստ ճշմարտութեան ատէ զնոյն բազում իրօք. Նախ՝ զի խանգարէ զկեանս իւր. թունաւոր մեղր է մեղք. 'ի ճաշակելն քաղցրացուցանէ, միանգամայն և թունաւորէ. Մեղր հերակլէփոնթէ կոչեցեալ գաւառի կազմեալ 'ի ծաղկանց ազնիւ խոտոյ՝ քաղցր է ք̃ զայլ ա̃մ մեղր. և սակայն փխտէ յոյժ զուտօղս, դողդոջեցուցանէ զգլուխն, պղտորէ զտեսութիւն աչաց, թմրեցուցանէ, և անզգայ առնէ. այլ առաւել է չարիք մեղացն քան զհերակլէականդ մեղր. եթէ սիրես ուտես, ատես զքեզ.

Երկրորդ՝ խռովեցուցանէ զխիղճ մտացն և կատաղեցուցանէ. մինչև չարաչար բանալ նմա զբերան իւր ընդդէմ գործողին, և բանիւք դատնութեան տանջել զնա հանապազ՝ ոչ արտաքուստ, այլ 'ի ներքուստ. Այլ արդ՝ եթէ * լաւ է բնակել յանապատի քան ընդ կնոջ
,, անզգամի լեզուանւոյ և բարկացողի ||. (առակ. իթ. 19.) զինչ ապա բնակել ընդ չարալեզու դաժան և դահիճ խղճի մտաց. տես ահա թէ զիարդ որ սիրէ զմեղս՝ ատեայ զանձն իւր.

Երրորդ՝ կորուսանէ զշնորհս, ընդ նմին և զորդեգրութիւն ա̃յ և զժառանգութիւն արքայութեան. առնէ զինքն գերի սատանայի, եւ և մատնէ չար գազանաց՝ ոյ մոլութեց. և սպանանէ զհոգի իւր. Այս եթէ կամիս սիրել զքեզ՝ մի սիրեր զմեղս. մի մերձենար, մի հալ լի-

նիր. այլ հեռացի՛ր 'ի նմանէ. Թիթեռն այնչափ սիրէ զբոց ճրագի՝ մինչև յարձակիլ 'ի նա և յօժարիլ յուտել. այլ 'ի յարձակիլն անդ այրի. սիրելով ահա զբոց նորա՝ ատեաց զանձն իւր. Եւայի տեսեալ ըզպտուղն՝ զի գեղեցիկ էր և քաղցր 'ի կերակուր, շարժեցաւ 'ի սէր նորա, մերձեցաւ, կերաւ, և կորեաւ. սիրեաց զմեղս և այնու ատեաց զանձն իւր. նոյնպէս և ամենեքին նոքա որք յարին 'ի մեղս՝ ատելով ատեն զանձինս.

Այդ՝ դնէ զինքն 'ի ներքոյ բարկութեանն այ, և առնէ պարտաւոր յաւիտենական պատժոց 'ի դժոխս. ուր յանդիմանն կացուցէ ած ընդդէմ մեղաւորին զմեղս նորա. զի զոր սիրեացն՝ 'ի նմէ տանջեսցի. Նմանական ան ըմբռնեալ զկին իւր 'ի շնութե՛ ետ նմա ձեռօք իւրովք կախել զսեղեխին. և փակեաց զնա ընդ սեղեխին 'ի նըմին սենեկի. Նոյնպէս և որ սիրէ զմեղս՝ համդերձեալ է ած կախել ձեռօք նորա զմեղս նր 'ի դժոխս յանդիման աչաց նորին յաւիտեան. ուր յայտնի տեսցէ, թէ քանի չար եղև խիղճեան յարիլ 'ի մեղս. Նոյն ամենեւին ճշմարիտ է՝ զոր ասէ, * որ սիրէ զմեղս՝ ատեաց զանձն իւր ‖.

Նոյնպէս հիւանդն այն՝ որ սիրէ ուտել զվնասակար կերակուր, ատեաց զանձն իւր և կորուսանէ. իսկ որ ժուժկալէ յուտելոյ և յըմպելոյ զվնասակարս, և սիրէ առնուլ դեղ դառն և զխարան խիստ, սիրէ զանձն իւր, և կեցուցանէ. * որ կամիցի կեցուցանել զանձն ,, իւր՝ կորուսցէ զնա ‖. մատ. ժզ. 25. Զանձն կեցուցանէ ատելով, զի մի կորուսցէ սիրելով. Սիրես զախտդ իբրև զփտեալ ոտն, եթէ ոչ հատանես՝ մեռանիս. սիրես զզգայութիւնդ, եթէ ոչ թաղես 'ի ծով ճնշման, ընկղմիս. սիրես զզբաղանս՝ եթէ ոչ տահացի՝ անտուաղ մնաս. զըկելով զբեղ 'ի զբաղանց՝ կեցուցանես զանձն 'ի կերակրոց. Ատեա՛ ապա յայսհետէ մի զանձնդ, այլ զմեղս, զի սիրեսցես զանձնդ. մի ուրեմն սիրեր զմեղս, զի մի ատեցող լիցիս անձինդ. զհուսկն ասացից. եթէ սիրես զմեղս, զարթուցանես զվրէժխնդրութիւնն այ 'ի տեղալ 'ի վն քո զպատուհաս բարկութեան իւրոյ. զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն, և ասէ.

Է. Տեղասցէ ՚ի վր մեղաւորաց որոգայթս, հուր և ծծումբ. այս մրրկէ՝ բաժին բաժակի նոցա.

Այս եղանակ խօսից յայտ առնէ զստուգութիւն, զյաճախութիւն, զուժգնութիւն, և զյանկարծականութիւն թշուառութեանց. որք իբրև զանձրև տեղան ՚ի վր մեղաւորաց՝ թէ աստ, և թէ ՚ի հանդերձեալն. Բայց աստի կենաց խօսելով դնէ զտեղալ որոգայթից յաւելն.

Տեղասցէ ՚ի վր մեղաւորաց որոգայթս. Հայելով ՚ի հանգամանս որոգայթի՝ պարտ էր դնել՝ լարեսցի, դիցի, փորեսցի, եւն. բայց ոչ դնէ այսպէս, այլ տեղասցի. զի իբրև անձրև թափեսցի. որով կամի ցուցանել զյաճախութիւն որոգայթից ՚ի պաշարել նոցա զմեղաւորս յամ կողմանց, և այս՝ կարի յիրաւունս. զի որովհետև ոչ կամեցան նոքա յօրէնս այ և ՚ի կամս նորա կեալ՝ իբր յապաստան փրկութեան յապահովլի, այլ՝ ըստ հաճութեան և ըստ զգայութեան իւրեանց, և ըստ կամաց սատանայի, այն հաճութիւն զգայութեան նոցա և թելադրութիւն սատանայի իբրև համապաղորդեան որոգայթ յամ առիթս որսացին և ըմբռնեցին զնոսա, և կապեցին ՚ի պէսպէս մեղս. և մեղաց ՚ի մեղս կործանելով արկին զնոսա ՚ի դժոխս, ուր հասցեն ՚ի վր նոցա հուր և ծծումբ, եւն. զորոց ՚ի մասնաւորի խօսի առելով.

Հուր և ծծումբ (այս մրրկէ բաժին բաժակի նոցա.) Այսպիսի պատուհաս հրոյ և ծծմբոյ յաստի կեանս եւս երբեմն տուեալ լինի մեղաւորաց, որպէս յայտ է ՚ի պատիժս սոդոմացւոց (Ծնն. ԺԹ. 4. և յուդ. ՚ի համարն. 7.) Բայց մարգարէն ՚ի հանդերձեալն հայելով խօսի զայս. և ըստ այսմ հուր առելով իմանայ յառակապէս զհուրն դժոխոց, որ այնչափ է սաստիկ, մինչև այսր հրոյ՝ զոր մեք տեսանեմք և վարեմք յօդի աստ, լինել իբրև նկար ինչ նորուն՝ ըստ առելոյ ոմ հարց. Իսկ եթէ սա նկար է նորին, ապա այնչափ տարբեր է սա նմանի, որչափ տարբեր է նկար և պատկեր մարդոյ ՚ի մարդոյ. Իսկ ծծումբ առելով իմանայ զնիւթ հրոյն դժոխոց. Այսուքիկ ասէ, զի հուր և ծծումբ տեղասցի ՚ի դժոխս ՚ի վերայ մեղաւորաց, զի յորդութեամբ և անսպառելի յաճախութեամբ հասցէ և

պաշարեսցէ զնոսա յամենայն կողմանց. և լիցի նոցա այն ժառանգութիւն չար յաւիտեան. փոխանակ զի ոչ կամեցան ժառանգել 'ի ժառանգութիւն մեծայնի բարեաց. այլն իւր առէ Իգնատիոս վկայ. 'ի մեկն. ղուկ. ժԶ. 21. * որք զանձինս կամու 'ի բաց փակեցին 'ի մեծութենէ անտի՝ որ առ այս է, ժառանգեն „ զգաւթայ աստեղեան բաժին ժառանգութեան մեղաւորաց. և է նա հուր և ծծումբ անլոյս խաւարաւ խառնեալ ‖.

Որ եթէ աստանօր բարդ հուր և ծծումբ՝ եւ և որդայթ՝ առեալ լիցին փոխաբերութք, ցուցանեն զկուսակութիւն չարի 'ի վը մեղաւորաց, ընդ նմին և զաստուածութի դատմութե ոգւոյ, և զգժնդակութիւն յաւաչատութե. զոր և այլով իմն նմանութք առաջի առնէ մարգարէն, և առէ.

Ոյս հրէէ (բաժին բաժակի նոցա). Ոյսանօր. բարդ այս՝ զնի զոյակամապէս, և նշանակէ հողմն կամ ոգի, որպէս յայտ է յեբրայականէն. ուր գրի վէռուախ զիլաֆօթ. որ և մրրիկ հողմոյ, կամ հողմ մրրկեալ, կամ ոգի մրրկի. Այնպէս է և յայլ թարգմանութիւնս. որ որում գրէ և Եզնիկ Կողբացի 'ի գլ. իդ. յասելն. * այսն հողմն է, և հողմն ոգի. քանզի յորժամ մեզ „ ասեմք, սիւք չնչէ, ասորեայք ասեն՝ այս չնչէ ‖. Որ մեծ բաղում ուրեք 'ի սուրբ գիրս ոգին աստուածական կոչի այս. որ ոգի չար. Իւր բառ այսմ առմամբ՝ բառս մրրիկ՝ զնի աստ իբր յատկացուցիչ այսին. որպէս թէ եղեալ էր, այս մրրկի, կամ հողմն մրրկի, և կամ ոգի մրրկի. որով նշանակի բնութիւն մրրկի. մարթ է եւ առել՝ թէ մրրիկն զնի իբր բացայայտիչ. որպէս թէ ասացեալ էր, այս՝ որ է մրրիկ.

Իսկ մրրիկն է հողմն սաստիկ յանկարծ չնչեալ 'ի ծովու, որ ուժգին պտուտիւք բաղխեալ յարձշտակէ՝ զոր ինչ առաջի իւր գտանէ. և այս եթէ 'ի ցամաքի լիցի, կոչի փոթորիկ. (թէպէտ երբեմն մրրիկ եւ կոչի. ոմն և որ 'ի ծովու լինի՝ երբեմն կոչի փոթորիկ).

Ոյղինի բնութեան հողմոյ նմանեցուցանէ մարգարէն զխստութիւն պատժոյ մեղաւորաց. զի 'ի նուեր նոյ 'ի ծովու մեղաց և յոչ ակն ունիլն պատժոյ, 'ի մեռանելն անդ հասցէ նոյ այս մրրիկ, որ խաւարութիւն ան-

հնարին , որհանելոց զարհուրագին , տանջանք դժըն-դակ , և յուսահատութի ամենավրդով . հասցեն և ա-մենատագնապ յուզմունք ոչ միայն իբրև զկրկին ծո-վու , այլև իբրև զկրկին հնոցի .

Այսմ նմանեցուցանէ դարձեալ և զբռնութիւն այսոյն չարին քո սատանայի , որ 'ի դատապարտիլ մեղաւորաց՝ հասցէ և կալցէ զնս , անհնարհանձելի ուժգնութեամբ յափշտակեսցէ զնս 'ի դժոխս . ուր անկցի զնոսա միշտ խռովեալս և ահաբեկեալս . և այս լիցի նոցա բաժին յաւիտենական . ամէն իւր յարէ զկնի , և ասէ .

Բաժին բաժակի նոցա . Այսինքն թէ բռնութիւն մրրկի համդերձ յուսահատութբ լինիցի նց բաժին բաժակի քո մասն ժառանգութեան նոցա . զի բառս բաժակ՝ դնի աստ նոյնաբար փխնկ բաժնի , կամ մասին , կմ փխնկ ժա-ռանգելի կամ կրելի իրի . ըստ որում դնի և յայլ բզմ տեղիս 'ս գրոց . ( ոմ . սաղ . հդ . 9 , եսայ . ծա . 17 , և 22 , երեմ . իե . 15 , խթ . 12 . ողբ . դ . 21 . մատ , ի . 22 . յովհ . ժը . 11 . ևն . ) յորս բաժակն դնի փոխա-նակ բաժնի .

Իսկ այս նմանութիւն առաւել լինի 'ի բաժանմանէ գինւոյ բաժակաւ . զի 'ի խրախճանս և 'ի սեղանս հարկօրէն բաժակաւ ընծայի իւրաքանչիւրոց բաժին գինւոյ . ուստի և նոյն բաժինն , որ պարունակի 'ի բաժակին՝ ան-ուամբ պարունակողին կոչի բաժակ . Իսկ յայսմանէ նաև այլ իրք , որք իբրև բաժին վիճակին ումեք , թէ պատիժ իցեն՝ և թէ վարձք , կոչին 'ի ս. գիրս բաժակք . և վասն բացայայտութեան և երբեմն վս սաստկութեան նշա-նակութեանն ուրեք ուրեք ասին՝ մասն բաժակի , կամ բաժին բաժակի , որպէս դնի աստ . որ նոյն էր՝ թէ սոս-կապէս ասէր , մասն , կամ բաժին , և կամ վիճակ , եւն . Իսկ ըստ այսմ ասելն՝ * այս մրրիկ բաժին բաժակի նց ‖ , ցուցանէ , թէ յաւիտենական բաժին և անդառնալի մասն լինիցի նց'' այս մրրիկ'' .

Բարոյապէս , այս մրրիկ է չար խիղճն մտաց , որ ա-սի լինել բաժին բաժակի մեղաւորաց . զի 'ի մեռնել նց յնց մեղօք՝ այս չար խղճի մտաց հասանէ 'ի հոգի նց , և այսահարեալ կացուցանէ զնոյն՝ քո կցորդ տան-ջանաց այսոյն չարի . մինչև աղաղակել մարդոյ . հո-գի իմ չարաչար այսահարի ( մատ . ժե . 22 . ) ամէն իւր

տ̃րն մեր ասաց զմատնչէն. * մինչ 'ի ձեռնջ սորայ է ‖. յովհ. Զ. 71. զի սկսեալ էր կրել զտանջանս սորայ 'ի խղճէ մտաց. Այլ զոր ինչ լսէր 'ի տ̃նէ՝ չար խղճիւն հեղձուցանէր. և յորմէ այլք լուսաւորէին՝ նա խաւարէր և տգիտանայր. * զանձ ցանկալի հանգիցէ 'ի սիրտ իմաստնոց. և արք տգէտք կլցեն զնա ‖. առակ. իա. 20. Նոյնպէս պատահի և նց̃ անձն՝ որք յարին 'ի մեղս. զի ա̃ծ թողու զնոսա 'ի ձեռս չար խղճի. և զայս առնէ արդար իրաւամբք և անհնարին ճանաչմամբ.

Յոր սակս յարէ զկնի մարգարէն, և ասէ.

Ը. Արդար է Տէր, զարդարութիւնս սիրէ. զուղղութիւնս տեսանեն երեսք նորա.

Աստ արդար՝ հայի առ յայն ներքին կատարելութիւն ա̃յ, որով զամ̃ ինչ ա̃ կարգի և ըստ իրաւանց գործէ, ազդելով և տալով իւրաքանչիւրոց զայն՝ զոր պատշաճ դատէ. Իսկ բարքդ արդարութի և ուղղութի հային յարդար և յուղիղ գործս, զորս այլք գործեն. Այլ ըստ այսմ 'ի ձեռն արդարութեան ոչ նշանակի աստ մին 'ի չորից բարոյական առաքինութեց, այլ ընդհանրապէս ա̃ և իցէ բարի գործ համաձայն ա̃ծային կամաց. Այնպէս և 'ի ձեռն ուղղութեան իմացեալ լինի այնպիսի գործ՝ որ իցէ համեմատ ուղիղ կանոնի, կամ թէ ոչ իցէ 'ի նմա ինչ ընդդէմ կանոնի. Զայսոսիկ հայելով ասէ.

Արդար է Տէր, զարդարութիւնս սիրէ. զուղղութիւնս տեսանեն երեսք նր̃. Կամի ասել. որովհետև ամենևին արդար է ա̃ծ յինքեան, կամի զարդարութիւն տեսանել և յայնս՝ զորս արար ըստ պատկերի իւրում. Այլ գոլով ինքն իւր առաջին կանոն ուղղութե՝ ոչ կամի հայիլ յայն ինչ՝ որ ոչ է ուղիղ, այլ յայն միայն՝ որ ունի զուղղութի. Այս առ զօրագոյնս հաստատելոյ զայս՝ ոչ ասէ մարգարէն, զուղղութի տեսանէ աչք նորա, այլ երեսք նր̃. առ 'ի ցուցանել՝ նախ՝ թէ ա̃ծ համայն զուղղութի կամի տեսանել. երկ̃դ՝ թէ ա̃ծ դարձուցեալ զերեսս իւր 'ի թիւրութենէ՝ ուղղեալ է զայն 'ի տեսանել զուղղութիւնս.

Իսկ այս տեսութիւն ոչ նշանակէ աստ սոսկ զպարզ հայեցողութիւնն ա̃յ, այլ գթնիչ և զորովիչ տեսութիւն

նի , որով տեսեալ զգործս արդարութեան և ուղղութե յարդարսն՝ պսակէ զնոսա յաւիտենական փառօք . Նոյնպէս տեսեալ և զգործս անիրաւութեան 'ի մեղաւորսն՝ պատուհասէ զնս յաւիտենական պատժովք .

Այս ուղղութիւն և արդարութի , զոր կամի ած տեսանել 'ի մարդն՝ է կեալ մարդոյ ըստ ուղղութե և ըստ արդարութե օրինաց իւրոց . զի կեալն ըստ նմին է կեալ ուղղութբ և արդարութբ . Զայսպիսի իմն միտս խօսելով սարգիս շնորհալի 'ի մեկն . յակ . դ . 8 . ճառ թ . 'ի մէջ բերէ զառաջիկայ բնաբանդ . և գրէ այսպէս . * և է իսկապէս ուղղութի սրտի՝ զբարկութիւն և զերկ-
,, մտութիւն 'ի պատուիրանս այ 'ի բաց ընկենուլ , և
,, զքաղցրութիւն և զխոնարհութիւն սիրոյն այ 'ի ներքս
,, մուծանել , զի եթէ այս ստացի . չիք ինչ 'ի թիւ-
,, րութեանցն՝ որ կարիցէ 'ի սրտի բնականալ . և ոչ ինչ
,, պակաս յուղղութեցն՝ որ պիտանացուն է՝ 'ի ներքս
,, բնակեցուցանել . Եւ յայտ է թէ ընդ այսոսիկ և
,, ճշմարիտ ուղղութիւն 'ի ներքս մտանէ , որ է նոյն
,, ինքն ած , ըստ մարգարէին՝ որ ասէ . ուղիղ է տր ած
,, մեր , և զուղղութի տեսանեն երեսք նր ‖ .

Այս արդարութի և ուղղութիւն կարէ վերածիլ և 'ի ներգործութի ածային արդարութե և ուղղութե 'ի հատուցանել նորա իւրաքանչիւր ըստ գործս իւր . զի որովհետև արդարութբ և ուղղութբ հատուցանէ՝ երեսք նր տեսանեն յայնժամ զարդարութիւն և զուղղութի , եթէ 'ի մեղաւորսն 'ի դատապարտելն , և եթէ յարդարսն 'ի փառաւորելն զնոսա յաւիտեան .

# ՍԱՂՄՈՍ ԺԱ.

*Յանդիմանութիւն նուազելոյ սրբութեան և ճշմարտութեան յորդւոց մարդկան. եւս և ցոյց նենգութեան և մտաց պարծանաց նոցա. գարշելի և յայտարարութիւն օգնականութեան այ առ տառապելոյն, և զօրութիւն սրբութեան բանից նորա։*

Ի կատարած ՚ի վերայ ութերորդին. սաղմոս ՚ի Դաւիթ։

1. Կեցո՛ զիս Տէր, զի նուազեաց սուրբ. նուազեցին ճշմար-
տութիւնք յորդւոց ՚ի մարդկանէ։ 2. Ի նանիս խօսե-
ցաւ այր ընդ ընկերի իւրում. շրթամբք նենգաւորօք սրտէ ՚ի
սիրտ խօսեցան։ 3. Սատակեսցէ Տէր զամ շրթունս նենգաւորս, և
զլեզուս մեծաբանս։ 4. Որք ասացին, զլեզուս մեր մեծ արաս-
ցուք. շրթունք մեր առ մեզ են. և ով տէր մեր իցէ մեզ։ 5. Վասն
տառապանաց աղքատին և հեծութեան տնանկին՝ այժմ յարեայց ա-
սէ Տէր։ 6. Դնեցից զփրկութիւն իմ, և համարձակեցայց ՚ի նոսա։
7. Բանք Տեառն են բանք սուրբ, որպէս արծաթ ընտրեալ և փորձեալ
յերկրէ, սրբեալ եօթնպատիկ ՚ի հնոց։ 8. Դու Տէր
պահեսցես զմեզ, և պահեսցես յազգէ յայսմանէ մինչև յաւի-
տեան։ 9. Շուրջանակի ամբարիշտք շրջին. ըստ բարձրութեան
քում յաճախեցեր զորդիս մարդկան։

## ՎԵՐՆԱԳԻՐ.

Ի կատարած ՚ի վերայ ութերորդին. սաղմոս ՚ի Դաւիթ։

ԶԱՅՍՄ ՎԵՐՆԱԳՐԻ՝ ՏԵՍ Ի սաղ. Զ. Իսկ թէ արդեօք զայս սաղմոս յինչ առթէ իցէ յօրինեալ դաւթի, չէ յայտ։ Ոմանք համարին՝ թէ զայս ասաց ՚ի ժամանակս հալածմանն սաւուղայ կամ աբեսաղոմայ։ Ոմանք՝ թէ հայելով յապագայ գերութիւնն բաբելաց-

ւոց, և ոմանք՝ թէ յայլ էին։ Իսկ ըստ նիւթոյն մտածեալ՝ որպէս յայտնի տեսանի, զայս ասաց դաւիթ վասն փրկութիւն գտանելոյ նորա 'ի նենգութենէ մարդկան՝ հայելով 'ի խիղճս և 'ի սիրտս նոցա, թէ զիարդ յօժարեալ էին 'ի ստութիւն, և նուաղեալ 'ի ճշմարտութենէ, 'ի մէջ բերելով միանգամայն և զկատարելութիւն օրէնացն նորա։

## ԲԱՆ.

ա. Ապրեցո՛ զիս տէր՝ զի նուազեցաւ սուրբ. նուազեցին ճշմարտութիւնք յորդւոց 'ի մարդկանէ։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Այս բանք թէպէտև երևին հայիլ միայն 'ի ժամս դաւթի յորժամ պակասեցաւ սամուէլ մարգարէ, եւ և նաթան նոյ, սակայն ոչ է այնպէս, այլ ընդհանրապէս ասի, և յամ ժամս հայի. զի յիրաւի յամ դարս և 'ի ժամս նուազ եղեն յերկրի արք սուրբք և ճշմարտութիւնք. որպէս յայտնի երևի 'ի բանից անտի մարգարէութեանց և 'ի պատմութեանց եւս։ Իսկ բարսեղ վկայ 'ի մեկն. մարկ. գլ. ժգ. 'ի յորդ. հայելով 'ի վիճակ նոր եկեղեցւոյ՝ գրէ, թէ այժմ նուազեցին սուրբք և յաճախեցին անսուրբք. 'ի սկզբան եկեղեցւոյ ասէ * 'ի փոքր ժամանա-
„ կի բազմութիւնք սրբոց յայտնեցան. իսկ այժմ անսուրբք
„ բազում... այսպիսի (անսուրբ) քրիստոնեայք նախա-
„ տինք են ասէ քնի ‖։ Արդ մարգարէն հայեցեալ 'ի հասարակի 'ի նուազութիւն սրբոց, և չգտեալ զապահովութիւն ապաւինելոյ 'ի մարդիկ, և փրկութիւն գտանելոյ 'ի վտանգից, յԱծ ապաւինի, և 'ի նմանէ խնդրէ զփրկութիւն, ասելով։

Ապրեցո՛ զիս տէր, զի նուազեցաւ սուրբ։ Կամի ասել. դու տէր փրկեա՛ զիս յամ վտանգից. զի ոչ գոյ ոք այլ, յոր մարթ իցէ ինձ լինել ապաստան. * զի նուազեաց սուրբ ‖. Սուրբ յոյժ սակաւ է, և գրեթէ հազիւ գտանի յերկրի ոք տիրապէս սուրբ. և արդար կամ բարեպաշտ։ Իսկ եթէ բառդ սուրբ ասցի 'ի վերացեալսն, միտ բանին լինի այս. պակասեալ է յոյժ յերկրի կատարեալ սրբութիւն. և 'ի

նուազիլ սրբութեն՝ ճշմարտութիւնք եւ պակասեալ տեսանելի. և առ այս յարէ զկնի և ասէ.

Զի նուազեցին ճշմարտութիւնք յորդւոց 'ի մարդկանէ. Ճշմարտութիւնք ասելով՝ իմանայ զճշմարիտ խօսս. ք̃ զայնպիսիս որք իցեն համաձայն ճանաչման. Այսպիսի խօսք ասէ նուազեցան յորդւոց մարդկան. որ է ասել. յոյժ պակաս են 'ի բերանս մարդկան ճշմարիտ խօսք. զի հազիւ ոք գտանի՝ որ ըստ ամի իւ̃ ճանաչման մտաց իւրոց խօսիցի. Իսկ եթէ այսպիսիք եւ գտցին բ̃մ, բայց սակաւ են՝ որոց ճանաչմունք իցեն ճշմարիտ, ք̃ համաձայն իրին՝ զորմէ խօսին. Վասն զի ճանաչմունք նց̃ կամ տարակուսանք են, կամ թիւրք, և կամ այլազգ՝ ք̃ զոր պարտ էր լինել. Ոյք ի զոր տեսանեն և լսեն, բ̃մ անգամ այլազգ ըմբռնեն, և ըստ ըմբռնման իւրեանց խօսին. և այն խօսք նոցա թէպէտև կարէ համարիլ ճշմարիտ ըստ համաձայնելոյ ճանաչմանն, բայց ըստ համաձայնելոյ իրացն՝ զորոց խօսին, են սուտ. զի ոչ համաձայնին նոցին. ապա եթէ և ճանաչմանցն եւս ոչ համաձայնեսցեն, ըստ ամի լինին սուտ.

Լամբրոնացին զայս բան վերաբերէ առ զգայական կամս և խորհուրդս. պակասեցաւ ասէ 'ի զգայական կամացս սրբութիւն. զի նետիւք մեղաց հարաւ 'ի թըշնամւոյն 'ի դրախտի անդ. և հանապազ 'ի չարն բերելով՝ նուազ երևին յիս ճշմարտութիւնք, ք̃ ուղիղ գործք. և երկնչիմ ասէ՝ գուցէ և ըստ խորհրդոցն բերիցիմ յանկարգ գործս. վ̃ն խնդրեմ ապրեցուցանել զիս. Արդ՝ զոր ասաց մարգարէն՝ թէ նուազեաց 'ոք կամ արդար, և նուազեցան ճշմարտութիւնք 'ի մարդկանէ, ցուցանէ զնոյն 'ի յաջորդ համարն 'ի գործոց նց̃. վ̃ն ասէ.

Բ̃ · Ընդունայն խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում. շրթամբք նենգաւորօք սրտէ 'ի սիրտ խօսեցաւ.

Այս ոճ բանի, ք̃ է խօսիլ այր ընդ ընկերի իւ̃. ոչ ցուցանէ սոսկ միոյ ընդ միոյ խօսիլ, այլ 'ի հասարակի փոխ խօսելոյ մարդկան ընդ միմեանս. ո՛րպ յայտ է յեբր". և զի մարդիկ 'ի պակասելն յուղղութենէ և յարդարութ՝ թիւրս և անիրաւ խօսին ընդ միմեանս. և այս՝ կամ առ

արտաքս և կամ ևս առ 'ի ներքս՝ 'ի սոսին հայելով մար-
գարէին կարգէ զբան իւր . և նախ ըստ արտաքնոյն
ասէ ։

Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում ։ Բառս" 'ի նա-
նիր" երեքկին կարէ նշանակել աստ . մի՝ փոխ այն-
պիսի տարազու , որով խօսքն երևի լի բարութե՛ , բայց
է ունայն 'ի բարութենէ . և ը՛ այսմ այս բան հայի յա-
ռաջին հատուած նախընթաց համարոյն , ուր ասաց՝
Նուազեաց ս̃ր . առ որ իբր հաստատութի՛ 'ի մէջ բերէ
զայս . որով կամի ասել . այր նուազեալ 'ի սրբութենէ
կամ յարդարութե՛ խօսեցաւ կամ խօսի ը̃ այլում մարդոյ
այնպիսի բանիւ , որ է նանիր . ո̃պ յորժամ ոք ցուցցէ
այլում թէ առնելոց է նմա բարի ինչ , 'ի չառնելն , բան
նորա գտանի ունայն 'ի բարերարելոյ , զի զոր խօսի՝ ոչ
առնէ ։

Երկրորդ՝ փոխ մնապարծութեան . ըստ որոյ կամի ասել .
մարդ ամ̃ք խօսի ընդ այլում մարդոյ այնպիսի օրինա-
կաւ , որով իբր պարծելով ցուցանէ՝ թէ կարէ առ-
նել զոր կամի . կամ կարէ ապրեցուցանել 'ի վտանգից՝
յորս ոք գտանիցի . բայց քանզի ոչ կարէ , այնու իսկ
'ի նանիր խօսի , այս է՝ մնոտի պարծանօք խօսի ։

Երրորդ՝ փոխ խաբեբայութե՛ . ըստ որոյ կամի ասել . այր
անողորմ խաբեբայութե՛ և նենգութե՛ խօսի ընդ ըն-
կերի իւրում ։

Չորրորդ՝ փոխ կեղծաւորութե՛ . ըստ որոյ կամի ասել . այր
կեղծաւոր ոչ խօսի և ոչ վարի ընդ ընկերի իւրում ո̃պ
է յինքեան , այլ որպիսի ոչ է . ուստի զայսպիսիս նմա-
նեցուցանեն իմաստունք այնպիսի անձանց՝ որք երե-
ւին 'ի թէատրոնի . սմին իրի գրէ սարգիս շնորհալի 'ի
մեկն . ա̃ . պետ . ա̃ . 22 . ճառ զ̃ . * կեղծաւորութիւն
,, է ասէ որպէս ( որ ) 'ի տեսարանսն ռամիկ գոլով՝ թ̃գր
,, կերպարանի , և զինուոր՝ զօրավար . նմանապէս և
,, աստ ( յ̃յ 'ի կեղծաւորութեան ) սրտիւն այլ իմն բե-
,, րի , և վերերևութի՛ն այլ իմն ձևանայ՝ առ 'ի պատ-
,, րել զմիտս տեսողացն . վասն զի այսպիսի կերպարան
,, կարի իմն օտար է 'ի քրիստոնէից , և մերձաւոր ան-
,, ա̃ծութեան . որ ոչ հաւատայ այնպիսին , եթէ կամա-
,, կարութի՛ք ոչ հաստատեն առաջի ա̃յ . վ̃ն զի 'ի սիրան
,, հայի ա̃ծ , և ոչ յերեսն ‖ ։

Մարթ է՝ նմին խօսիւք իմանալ սուտ և զդատարկ բանս, որպէս զայնպիսի բանս, որք Թէպէտ և չեն չար, բայց կամ ոչ կարգին առ բարի վախճան, և կամ ոչ յարմարին առաջիկայ նիւթոյն. յոր միտ ասէ Ծործորեցին. 'ի մեկն. մատ. գլ. ժբ. * յորժամ ըստ իրացն ,, որ առաջի կայցէ՝ ոչ խօսեսցի ոք, դատարկ է ‖. և ըստ այսմ կամի ասել. այլ անմիտ դատարկս խօսի ընդ այլ:

Զայս բան 'ի կատարեալ ժամանակի դնելով մարգարէին՝ կամի յայտ առնել՝ Թէ յիրաւի բազում անգամ այնպէս առնեն մարդիկ: Իսկ եզակի խօսելով տայ իմանալ 'ի յոգնակին. զի սովորութիւն է սրբ. գրոց՝ երբեմն եզակի խօսիլ փոխ յոգնակի խօսելոյ, և երբեմն յոգնակին՝ փոխ եզակի խօսելոյ: Նաև յետ առաջի դնելոյ մարգարէին զնամրութիւն խօսից մարդկան առ արտաքս. 'ի մէջ բերէ և զոր առ 'ի ներքս քաղեալ ունին. վս որոյ ասէ.

Շրթունք նենգաւորք սրտէ 'ի սիրտ խօսեցան: Այս բան հայի յերկդ հատուած նախընթաց համարոյն. ուր ասաց՝ * Նուազեցան ճշմարտութիւնք յորդւոց մարդկան ‖. վս զի ասէ տեսանեմք, զի շրթամբք նենգաւորօք կամ ոչ երբ" կակուղ շրթամբք սրտէ 'ի սիրտ խօսին մարդիկ: Իսկ սրտէ 'ի սիրտ խօսիլն կարէ լինել կամ անհամաձայնութբ, և կամ համաձայնութբ:

Անհամաձայնութբ երկակի լինի. մի՝ հայելով սակ 'ի խօսօղն, որ նուազեալ իցէ 'ի ճշմարտութենէ. զի այսպիսիս երկու ունել ներքին և արտաքին սիրտ անհամաձայն միմեանց. 'ի խօսիլն ցուցանէ, Թէ զոր խօսի՝ ունի 'ի սրտի. և ահա այս է սիրտ արտաքին, յորում այլ ինչ կայ՝ քան զոր կայ 'ի ներքին սրտի. յոր միտ Թերևս յեբր" դնի պէլէվ վալէվ. որպէս 'ի սիրտ և սիրտ, կամ սրտիւ և սիրտ. զի սրտիւ 'ի սիրտ փոխելով խօսի: Երկդ՝ հայելով 'ի խօսօղն և 'ի լսօղն. որպէս յորժամ խօսօղն կարծելով Թէ որպիսի է սիրտ իւր՝ այնպիսի է և սիրտ լսօղին, ըստ այնմ խօսի. բայց չէ այնպէս, զի ոչ համաձայնի սիրտ սորա և սիրտ նորա: Երրդ՝ յորժամ խօսօղն զայլ ինչ ունելով 'ի սրտի՝ խօսի ըստ սրտի լսողին՝ առ 'ի յանկուցանել զսիրտ նորա յինքն. որպէս արար աբեսաղոմ ընդ ժողովրդեանն Իէլի

( բ̄ . Թագ . ժե̄ . 6 ։ )

Համաձայնութ̄ չորեքկին լինի . մի՝ յորժամ ոք խօսի ընդ այլում ուղիղ և համաձայն սրտիւ . և յայտ է թէ ոչ խօսի ստա մարգարէն զայսպիսեաց ։ Երկրորդ՝ յորժամ այլ նենգաւոր խօսի ըստ սրտի իւրում համաձայն սրտի միւսում նենգաւորի ։ Երրորդ՝ յորժամ առանց բարբառելոյ՝ ակնարկի կամ նշանացի յայտնէ զնենգաւոր սիրտ իւր այնպիսում որ ունի սիրտ նենգաւոր համաձայն նմին ։ Չորրորդ՝ յորժամ զայնպիսի նենգաւոր խօսս 'ի մէջ արկանէ , որով այլ ոք նենգաւոր զսիրտ նորա իմանալով՝ նմին նման խօսիւք զսիրտ իւր ևս իմացուցանէ նմա ։ Կամ ը̄ հակառակն , այնպիսի խաբեբայ բանիւք վարի , որոց միամիտք միայն հաւատան , այլ ոչ նենգաւորք . զի 'ի խօսիլ միոյ նենգաւորի , միւս նենգաւորն ոչ հայի 'ի բանն զի իմանայ թէ սուտ է , այլ՝ 'ի սիրտն . զի գիտէ՝ թէ այլ ինչ կայ 'ի նմին , որով և այլ ինչ գիտէ ասել ։ Աստի այսպիսիքս 'ի խօսելն ընդ այլոց բերանով խօսին ը̄ միմեանս սրտիւ կամ սրտէ 'ի սիրտ ։

Այս բան կարի իմն ը̄ պատշաճի յարմարի մոլի մարդկան և մոլորեալ անձանց . զի սիրտ նոցա ապականեալ գոլով՝ յորժամ տեսանեն զոք՝ որ արտաքուստ կեղծեալ բարեպաշտութ̄ խօսի , և 'ի ներքոյ լի է ապականութ̄ , համասիրտ գտանելով զնա ինքեանց՝ ինքեանք ևս ըստ նմին ձևացուցանեն զբանն , որով և սրտէ 'ի սիրտ զնոյն խօսին ընդ միմեանս ։

Սոյն այս յարմարի և թեթևամիտ ցոփաբանից . որք տղայական բանիւք թեթևանան յայլեայլ պատրուակեալ խեղկատակութիւնս , և ոստնուն սրտէ 'ի սիրտ յայլեայլ հոմաբանութիւնս անվայելս , ( կամ ասացից յանպատշաճ թէճնիս խօսս ) . որով ցուցանեն՝ թէ զուրկ են 'ի մարդկային առաքինութենէ . թող զդատարկ լինել նոցա յածայնոյն ։ Յորժամ թեթև է լեմոնն՝ նշան է թէ չունի ջուր . յորժամ ընկոյզն յանկանիլն՝ 'ի վեր ոստնու , դատարկ է 'ի ներքս և փըտեալ ։ Ի լինելդ այդ՝ ոչ ևս յօժարիս պարապիլ տղայական խաղուց , այլ վայելչականաց . ապա և 'ի լինելդ այդ առաքինի՝ ոչ պարտիս պարապել տղայական բանից , 'ի դիտելդ՝ զլաւն խօսելով զյոռին իմա-

ցուցանել. * մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի, իբ-
„ րև զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի. այլ
„ յորժամ եղէ այր, զտղայութիւնն ՚ի բաց խափանեցի ‖.
ա՟. կոր. ժգ. 11: Խափանեա ապա և դու զտղայա-
կան բանսդ. * որ խնայէ ՚ի բերան իւր՝ զանձն իւր
պահէ ‖. առակ. ժգ. 3:

Փոխաբերութեամբ առեալ՝ սրտէ ՚ի սիրտ խօսիլն է ու-
նել զմիասրտութիւն կամ զմիակամութիւն ընդ այլում. յոր
միտ կամի ասել. նենգաւորք միակամ են, և ՚ի խօ-
սիլն զնոյն սիրտ ունին, և ՚ի նոյն միտս մոլին:
Բարոյապէս ըստ ասելոյ լամբ″, սիրտ մարմնոյն խօսի
՚ի սիրտ հոգւոյն նենգաւոր յորդորմամբ՝ պատրել
և ձգել զնոյն զհետ իւր ՚ի կամս մարմնոյ: Զայս ե-
դեալ մարգարէին՝ յայտ առնէ այժմ, թէ քանի՞ ատե-
լի են Այ այսպիսի նենգաւորք. և զայս ատելութիւն
Այ ցուցանէ ՚ի պատժելոյ նորա զնոսա, վասն որոյ ասէ:

դ. Սատակեսցէ Տ՟ր զ՟ամ շրթունս նենգաւորս, և զլեզուս մե-
ծաբանս:

Ըստ ճարտասանութեան ոճոյ ձևացուցանէ զբանսն.
զմասն առնու փոխ բոլորին. իբր զի զշրթունս և զլե-
զուս՝ որք են մասունք մարդոյ, առնու փոխ մարդոյ.
և այն՝ ըստ ձևոյ դերանունութեան. ըստ որոյ շրթամբք
նենգաւորօք իմանայ զայնպիսիս, որք խօսին նենգա-
ւոր շրթամբք, կամ այնպիսի բանիւք՝ որք նենգութեամբ
արտաբերին ընդ շրթունս: Նմանապէս և լեզուօք մե-
ծաբանօք իմանայ զայնպիսիս, որք խօսին մեծաբան
լեզուօք, կամ այնպիսի բանիւք՝ որք ամբարտաւանութեամբ
արտաբերին ընդ լեզուս: Այսպիսիքն ՚ի կամիլն վնասել
այլոց՝ ինքեանց վնասեն. զի Ած ինքնին վրէժխնդիր
լեալ՝ կորուսանէ զայսպիսիս. սմին իրի ասէ:

Սատակեսցէ Տ՟ր զ՟ամ շրթունս նենգաւորս, և զլեզուս մեծա-
բանս: Այսինքն՝ չարաչար պատուհասիւք կորուսանէ
զայսպիսիս, և մատնէ ՚ի մահն յաւիտենական: Իսկ
պատճառ այսպէս առնելոյն Այ ընդ նոսա՝ այս է, զի ոչ
երբէք ՚ի յաջորդ բանիցն՝ նոքա ՚ի նենգելն և ՚ի մեծա-
բանելն իւրեանց այնպէս համարին, որպէս թէ ոչ գոյ
Ած ճանաչող սրտից նոցա, և խափանիչ մոլորապար-
ծութեան նոցին. նմին իրի և Ած հանդերձեալ է ցուցա-

նել նոցա, թէ խաբեցան. և փոխ զայս պատրելոյ զնե-քեանս պատրեցին և նենգեցին. ուստի հետև սուտ թ հաւանեցուցին անձանց իւրեանց, թէ չիք վրէժխնդ-դիր խաբեբայութեան իւրեանց։

Լամբրոնացին զայս բան ընթեռնու 'ի Հրամայական եղանակին՝ այսպէս. * սատակեսցէ զա̃մ շրթունս նենգաւորս, և զլեզուս մեծաբանս ‖. ուր շրթամբք և լեզւօք իմանայ զյորդորմանս մարմնոյ և մարմնական խորհրդոց. յորոց տառապեալ հոգին՝ աղաչէ առ ա̃ծ, զի սատակեսցէ զնոսա, ա̃յ ջնջեսցէ և բարձցէ։ Արդ. քանզի 'ի մէջ երեր մարգարէն զլեզուս և զշրթունս մեծաբանից, առաջի դնէ այսմ և զօրինակ մեծաբանութեան նց̃ ասելով։

Դ. ՈՐՔ ԱՍԱՑԻՆ, ԶԼԵԶՈՒՍ ՄԵՐ ՄԵԾՍ ԱՐԱՍՑՈՒՔ. ՇՐԹՈՒՆՔ ՄԵՐ ԸՆԴ ՄԵԶ ԵՆ. ԵՒ ԱՐԴ ՄԵՐ Ո՞Վ Է ՏԷՐ։

Մեծ առնել զլեզուն կրկնակի կարէ լինել. մի՝ ըստ ողջանութեան իւրն՝ անձեցուցանելով զայն, կամ զօրացուցանելով. և կամ իրօք մեծացուցանելով. և մի ևս՝ ը̃ յար-զի բարձր առնելով զնոյն, կամ սոսկ բանիւք մեծ ցուցանելով։ Աստ ըստ առաջնոյն մտի, 'ի ցուցանել թէ ամբարիշտք զօրացուցանեն զլեզուս իւրեանց, յոր միտ 'ի բերանոյ նոցին խօսելով մարգարէին ասէ։

ՈՐՔ ԱՍԱՑԻՆ, ԶԼԵԶՈՒՍ ՄԵՐ ՄԵԾՍ ԱՐԱՍՑՈՒՔ. ՇՐԹՈՒՆՔ ՄԵՐ ԸՆԴ ՄԵԶ ԵՆ։ Այսինքն ասացին 'ի մտաս իւրեանց արք նենգաւորք և ամբարտաւանք. * զլեզուս մեր մեծս արասցուք ‖. այս է, արասցուք՝ զի լեզուք մեր մեծամեծս խօսեսցին. որ է ասել, խօսեսցուք մեծամեծս և ամբարտաւանս. և առ 'ի հաստատութիւն այսր յաւելուն, զի * շրթունք մեր առ մեզ են ‖. իբր թէ ասել. ոչ ապաքէն ունիմք շրթունս, և կարեմք խօսիլ որպ̃ և կամիմք, թէ՛ 'ի նենգել՝ և թէ՛ 'ի պարծիլ։ Ա-այս ոչ հայի սոսկ 'ի խօսիլն, այլև, յառնելն. որպէս թէ ասել, ըստ ասելոյ մեր արասցուք. և ո՛ կարէ արգելուլ զմեզ. կամ թէ 'ի գործ դիցուք զմեծաբանութիւն մեր. ապաքէն տէր եմք խօսելոյ զմեծամեծս և կատարելոյ զայնս։

Փոքր մի այլազգ ևս կարէ մեկնիլ այս բան ըստ երկդնշանակութեան մեծ առնելոյ. յոր միտ յաւելն՝ * զլե-

զլեզուս մեր մեծ արասցուք || . ցուցանէ մեծացուցանել նոցա զլեզուս իւրեանց բանիւք կամ փառաւորել . որպէս թէ ասացեալ էր . մեծացուսցուք և փառաւորեսցուք զլեզուս մեր , նոցա ընծայելով զբարիսն՝ զորս ունիմք . զի նոքօք շահեցաք զայնոսիկ . և * շրթունք մեր առ մեզ են || . այսինքն է՝ շրթունք մեր ՚ի մեր կողմն են , կամ վասն մեր աշխատին , և յօգուտ մեր գործեն . և կամ են գործի նենգելոյ զայլս և իշխելոյ նոցա : Այս մեկնութիւն եւս թէպէտ ունի տեղի , բայց առաջինն է համաձայնագոյն . զի այս բան է ցոյց ամբարտաւանութեան մտաց նոցա , իբրև թէ ինքեանք անկախ յայլոց զորինչ և կամին՝ խօսին , և առնել կարեն . յոյր սակս իսկ և ամբարտաւանեալ ասեն :

ՈՎ ԱՐԴ՝ ՄԵՐ ՈՉԷ ՏԷՐ : Որպէս թէ ասէին , ոչ ճանաչեմք զայլ ոք՝ որ իցէ մեր տէր , այսինքն այնպիսի ոք , որ կարիցէ իշխել ՚ի վերայ մեր , և կամ խափանել զմեզ ՚յառնելոյ զայն , զոր ասեմք շրթամբք մերովք : Զայսպիսիս ասէին և փարաւոն և նաբուգոդոնոսոր և ռափսակ . զի փարաւոն ասէր . * ով է նա՝ որում լուայց ձայնի նորա՝ արձակել զորդիսն իսրայէլի . ոչ գիտեմ զտէր , և զիսրայէլ ոչ արձակեմ || . ելից . Ե . 2 : Եւ նաբուգոդոնոսոր ասէր ցերիս մանկունսն . * ով է Աստուած , որ փրկեսցէ զձեզ ՚ի ձեռաց իմոց || . դան . Գ . 15 : Իսկ ռափսակ ՚ի բերանոյ սենեքերիմայ արքային ասորեստանեայց ասէր առ եզեկիա արքայ երուսաղեմի . * յո՞ յուսացեալ նշկահեցեր
,, զիս . . . . ասացեր ցիս՝ թէ ՚ի տէր Աստուած յուսացեալ
,, եմք . . . միթէ փրկելով փրկեցին Աստուածք ազգացն . . .
,, ո՞ւր է Աստուածն եմաթայ և արփաթայ . . . ո՞յք յամենայն Աստուածոց
,, ազգաց փրկեցին զերկիրս իւրեանց ՚ի ձեռաց իմոց , զի
,, փրկեսցէ տէր զերուսաղէմ ՚ի ձեռաց իմոց || . Դ . թագ . ԺԸ . 22 . և 33 :

Բայց մեք և այլք ըստ նոցա որչափ կամեցան բարձրանալ և մեծ երևիլ , այնչափ փոքր երևեցան և անարգեցան : Արձան որչափ ՚ի բարձունս իցէ՝ այնչափ փոքր երևի և անարգ . իսկ որ ՚ի խոնարհ տեղւոջ զետեղի՝ մեծ երևի . և որպէս ասէ կլիմակոս վէպ ՚ի մեկն . հարիւր . եւագրի . Գ . 29 . * աստղ՝ որ բարձր է քան զայլս՝ փոքր երևի քան զայլս . որ խոնարհ է քան զայլս՝ մեծ երևի քան զայլս || : Այնպէս և մարդ :

Արդ ոտքս զորս յիշեցաք, և զորոց լուեցաք՝ որպէս պարծէինն՝ ոչ կարացին ըստ պարծմանց իւրեանց առնել. այլ մերժեցան յինէն և սատակեցան. որպէս և յայտ է. զի ած թէպէտև երբեմն թոյլ տայ այսպիսեաց մեծարանել՝ ի վերայ տառապելոց և աղքատաց. բայց խնդրէ ևս ՚ի նոցանէ զվրէժ քինու ամբարտաւանութեան նոցա, և ազատէ զտառապեալս ՚ի ձեռաց նոցին։ Եւ զայս յայտ առնէ մարգարէն ՚ի յաջորդ համարն՝ ասելով։

Է։ Վասն տառապանաց աղքատին և հեծութեան տնանկին՝ այժմ յարեայց ասէ տէր։

Զ. Եդից զփրկութեան իմ, և համարձակեցայց ՚ի նոսա։

Ի դիմաց այ առաջի դնելով զբանն ոչ ցուցանէ՝ թէ ած այսպէս իցէ խօսեցեալ, * այժմ յարեայց աս ‖. այլ թէ յիրաւի այսպէս առնէ. զի խոստացեալ է օգնել տառապելոց, և փրկել զնոսա ՚ի ձեռաց նենգաւորաց և ամբարտաւանից։ Յայս հայի ասելն։

Վասն տառապանաց աղքատին և հեծութեան տնանկին այժմ յարեայց ասէ տր։ Աղքատ և տնանկ ասելով կամ խնամոյ յատուկ զաղքատս և զտնանկս, որք տառապին յամբարտաւանից. կամ ըն երբ" զտառապեալս, և կամ զայնպիսիս, որք աղքատ են՝ ոչ ընչիւք, այլ զօրութեամբ. և կամ տկար են. և կամ վս համբերութեան իւրեանց երևին անարգ և անկեալ ՚ի զօրութենէ։

Վն տառապանաց սոցա ասէ, կամ ՚ի թշուառութէ սոցա, և կամ ըն երբ" յաւերմանէ սոցա, որովք տագնապին ՚ի նենգաւորաց և յամբարտաւանից, և հեծեն և յոգւոց հանեն. ոչ յամեցուցից զօգնութի իմ. այլ * այժմ յարեայց ‖. այ ՚ի հեծութենէ և յաղաղակէ նց ստիպեալ՝ և որպէս թէ ՚ի քնոյ զարթուցեալ՝ հասից նց յօգնութի։ Իսկ թէ յորում իցէ լինելոց այս օգնութիւն, և կամ թէ յառնելով զինչ ունիցի առնել, յայտ առնէ զկնի, և ասէ։

Եդից զփրկութեան իմ։ Այլ ոմանքն եդից ՚ի վր նց կամ ՚ի նս զփրկութիւն իմ. որ է ասել փրկեցից զնս։ Բայց կամելով ցուցանել զառաւելութիւն փրկութեան՝ ոչ ասէ

փրկեցից, այլ՝ եղից զփրկութիւն իմ. որով կամի ասել թէ հաստատութք և անշարժ ցուցից նոցա զփրկութի իմ։ Եւ զի ցուցցէ՝ թէ զայս առնէ յօժար կամօք՝ յարէ զկնի և ասէ։

Եւ համարձակեցայց 'ի նմա։ դր յօժարութք և հաճութք փրկեցից զնա. կամ ոչ խորշեցայց 'ի նմանէ, այլ համարձակութք վարեցայց ընդ նմա իբրև ընդ հաւատարիմ ծառայս իմ. և կամ ևս՝ երևեցայց նմա՝ թէ վստահացեալ եմ 'ի նմա. և կամ զրձել՝ ազատութք և լիութք բարեաց եղէց առ նմա. և ոչ ոք արգելուցու զիս 'ի ցուցանելոյ առ նմա զփրկութի իմ. և կամ այլազգ ևս, փութացայց 'ի փրկութի նոցա կամ 'ի գործս փրկութե նոցին. զի ունիմ համարձակութի 'ի նոսա։ Մարդկօրէն ձևացուցանէ զբանն. իբր թէ նա ինքն Ած յոյս ունելով թէ հաւատարիմ մնայցեն ծառայք իւր՝ համարձակիմ ասէ 'ի նմա. իսկ համարձակիլն 'ի մէջ բերէ զլրումն յուսալոյն. զի որպէս ասէ վանական վրդպ 'ի մեկն. յոբ. գլ. իը. * զյուսոյն լրումն իմասցիս զհամարձակութի ||։ Զայս եղաք վն պահանջելոյ կարգի բանին. իսկ հայելով 'ի բուն նշանակութիւն համարձակիլ բային՝ այս ասացեալ վերածի առ թշնամիս ծառայից նոց. զի բայս համարձակիլ ըստ առաջին նշանակութե հայի 'ի վանումն չարի. յոր մտ առնու և լամբրոնացին. և ըստ այսմ կամի ասել. համարձակեցայց 'ի թշնամիս նց. դր ցուցից 'ի թշնամիս նց զվրէժխնդրութիւն իմ. կամ թէ համարձակեցուցից զսուր բարկութե իմոյ 'ի նենգաւորս և յամբարտաւանս։ Տես և 'ի համեմատութիւնսն։

Բայց աստ գիտելի է, զի ըստ ոգ. հարց որ ինչ բանք ասացան ցարդ 'ի սաղմոսիս, այլաբանութք վերաբերին 'ի փրկութի ազգի մարդկան. իբր զի 'ի նուազիլ սրբց յերկրէ և 'ի պակասիլ ճշմարտութե, և յառաւելուլ տիրել զխաւ 'ի վր մարդկան, յորժամ սկսաւ հեծել աղքատացեալ և տնանկացեալ մարդկայինս բնութի՝ յարեաւ տր յաթոռոյ բարձրութե, և եցոյց զփրկութի իւր. զորմէ ասաց և բերանով եսայեայ, թէ * զփրկութի իմ ոչ յամեցուցից ||. ( եսայ. խբ. 13. ) ուր ասէ գէորգ վրդպ՝ թէ այս է * նոյն ինքն յս պատրաստեալ փրկութի առաջի ամ ժողովրդոց ||։

Խորհրդաբար առեալ՝ եդ և կանգնեաց յո՟ զփրկու-
թի՟ իւր ո՟ր զփրկարար խաչ իւր ՚ի գողգոթայ, և ետ
ա՟մն հանապազ քարոզել զաւետարան իւր պարծա-
նօք խաչին ։

Բարոյապէս այս բանք հայլին առ փրկութի՟ կամ առ ազատութիւն հոգւոյ մարդոյ ՚ի խորհրդոց չարաց, ըստ աւանդելոյ լամբրոնացւոյն ։ Այլ թէ արդեօք ա՟ծ յերաւի ցուցանէ միշտ զօգնութի՟ և զփրկութիւն իւր ըստ խոստմանց իւրոց՝ հաստատէ մարգարէն ՚ի յաջորդ համարն, ՚ի մէջ բերելով զհաւատարմութի՟ և զճշմարտութիւն բանիցն ա՟յ․ ասելով ։

է․ ԲԱՆՔ Տ՟Ն ԵՆ ԲԱՆՔ Ս՟Բ, ՈՐՊԷՍ ԱՐԾԱԹ ԸՆՏՐԵԱԼ և ՓՈՐՁԵԱԼ ՅԵՐԿՐԷ․ ՍՐԲԵԱԼ և ՊԱՐԶԵԱԼ ԵՕԹՆՊԱՏԻԿ ՚Ի ՀՈՂՈՅ ։

Ի վերոյ յայտ արար մարգարէն ըստ կարգի զորպիսութի՟ բանին և խոստմանց որդւոց մարդկան՝ լինել նոցա ՚ի բազում սուտ, ընդունայն, նենգաւոր և անբարտաւանական ։ Իսկ աստ ցուցանէ՝ թէ բանքն ա՟յ կամ խոստմունք ո՟ր ներհակ բանից որդւոց մարդկան՝ անենգ ՚ոք են, ճշմարիտ, և հաւատարիմ․ և զայս ցուցանէ նմանաբանութե՟բ ի՟ն ասելով ։

ԲԱՆՔ Տ՟Ն ԵՆ ԲԱՆՔ Ս՟Բ ( ՈՐՊԷՍ ԱՐԾԱԹ ԸՆՏՐԵԱԼ ։ ) Այսինքն զոր միանգամ խօսեցեալ է ա՟ծ և կամ խոստացեալ, են բանք ՚ոք, ո՟ր մաքուր յա՟մ ստութէ և յա՟մ արատոյ մոլորութէ և թիւրութէ․ ոչ կեղծեօք արտաքուստ պաճուճեալ, այլ՝ համակ ճշմարտութե՟բ աւանդեալ․ և առ հաստատութի՟ այսր յաւելու ասել ։

ՈՐՊԷՍ ԱՐԾԱԹ ԸՆՏՐԵԱԼ և ՓՈՐՁԵԱԼ ՅԵՐԿՐԷ ։ Բառս" ընտրեալ" դնի աստ փոխանակ բառիս՝ զտեալ հրով, կամ փորձեալ ՚ի հրոյ, ո՟ր դնի յեբր" յաւելն ձառուֆ․ այս է զտեալ հրով, կամ այլազգական բառիւ ասացից խառն եղեալ․ սոյնպէս դնի և յայլ թարգ․ յոր միտ դնի և ՚ի սաղ․ ժէ․ 26, 30 ։ Իսկ ըստ այսմ բառդ փորձեալ՝ դնի աստ իբր մեկնութի՟ բառիդ ընտրեալ․ ըստ որոյ ասի ՚ի յայտ․ գ․ 18․ * ա՟ռ գնեա յինէն ոսկի փորձեալ ՚ի հրոյ ‖ ։ Արդ մարգարէն զայս նմանութիւն բերելով կամի ցուցանել, թէ ո՟րպ արծաթն համարի ընտիր և մաքուր, յորժամ մաքրի և զտի հրով ՚ի բովս

և սրբի յերկրէ՝ այսինքն ՚ի հողային աւելորդութեանց, սոյնպէս եւս ամենեւին ընտիր և զուտ են բանքն ա՟յ փորձեալ յերկրէ, այսինքն մաքրեալ յերկրաւորաց. և ըստ լամբ՛՛ յերկրային խորհրդոց. եւս և ՚ի ստութէ, ՚ի մոլորութենէ, ՚ի տգիտութէ, ՚ի թիւրութէ, յաւելորդութենէ, եւն. և կամ եւս քննեալ լինելով ՚ի մարդկանէ՝ զտեալ են ս՟բ։

Նա իբր արծաթն համարի զտեալ և փորձ. յորժամ ՚ի գոյնն, ՚ի ձայնն, և ՚ի կշիռն (կամ յայարն) է կատարեալ, սոյնպէս և բանք տ՟ն են ամենեւին փորձ. զի են կատարեալ նախ ՚ի գոյնն, այսինքն յարտաքին տեսութիւնն, զի ունին գեղեցկութիւն մեծ, եւս և զահեղութիւն. երկ՟դ՝ ՚ի ձայնն՝ այսինքն ՚ի նշանակութիւնն. զի ունին իմաստ կենդանի և զուարճացուցիչ. եր՟դ ՚ի կշիռն՝ այսինքն ՚ի ծանրութիւնն և ՚ի յարգն. զի են յոյժ ծանրակշիռ ՚ի մեկնիլ, մինչև ոչ ումեք մահկանացուի հնար լինել բանալ այսինքն իմանալ զա՟մ կարելի մեկնութիւնս իւրաքանչիւր բանից ն՟ց. վ՟յ և են յարգոյ յոյժ։

Ոչ յիշէ մարգարէն զոսկի, այլ զարծաթ. զի հայելով ՚ի մարգարէսն խօսի. իսկ բանք տ՟ն ՚ի մարգարէս իբրև արծաթ էին. այլ յառաքելսն իբրև ոսկի, ա՟քին եւս ընտրեալ և փորձեալ ըստ իւրաքանչիւր կարգի և վիճակի։

Կամք՛՛ հայելով ՚ի հանգամանս զուտ արծաթոյ՝ ասէ թէ ո՟պ փորձ արծաթն ՚ի հուր արկեալ ոչ սեւանայ, այլ մնայ սպիտակ, և եթէ սեւ եւս իցէ՝ սպիտականայ, սոյնպէս և բանք ա՟յ յ՟ո և իցէ ուղիղ քննութիւն արկեալ՝ ոչ սեւանայ. և եթէ ումեք սեւ եւս երեւեցի, յուղիղ քննութեան սպիտակ երեւի՝ և ամենեւին սրբեալ. և առ այս յարէ։

ՍՐԲԵԱԼ Ե ԶՏԵԱԼ ԵՕԹՆՊԱՏԻԿ ՚Ի ՀՈՂՈՅ։ Կամի ասել. ո՟պ արծաթն կամ ոսկին յորժամ եօթնիցս, այսինքն բ՟զմ անգամ յստակի և պարզի ՚ի հողոյ, այս է՝ ՚ի հողային որակութեանց, լինի ըստ ա՟մի զուտ, սոյնպէս են ասէ և բանքն ա՟յ. իբր զի են ամենեւին զուտ և յստակ, յորս սուզեալ ո և իցէ նրբութե միոյ՝ զզտութիւն ճշմարտութե եւեթ գտանէ ՚ի նոսին։

Մնացի՝ բ՟զմ անգամ. զի բառս «եօթնպատիկ» դնի առ փոխ բառիս բ՟զմ անգամ, ըստ սովորութե ս՟բ գրոց. ո՟պ է և այն, որ ասի ՚ի ղեւտ. իզ. 24. * հարից զձեզ

եօթնպատիկ ( այս բզմ ) փոխկ մեղաց ձերոց ‖ ։ տես զայսմանէ և 'ի սաղ. ձծը. 164 ։ Բայց քանզի առ կատարեալ զսուլթիւն արծաթոյ եօթն ձեռք աշխատին 'ի հանքաց անտի սկսեալ, թերևս յայս հայելով դնէ եօթնպատիկ 'ի հողոյ ։ Արդ՝ մարգարէն առաջի եդեալ զուղղութիւն և զճշմարտութի բանիցն այ, այժմ առ նա դարձուցանէ զբան իւր. և շնորհակալ ես լինի զնմէ վոհ՝ զի ըստ ճշմարտութե բանից իւրոց, և ըստ հաւատարմութեան խոստմանցն՝ պահեաց և ապրեցոյց զյուսացեալսն 'ի նա. վո որոյ ասէ ։

Ը. **Դու Տր պահեսցես զմեզ. և ապրեցուսցես յազգէ յայսմանէ մինչև յաւիտեան ։**

Յոգնակի դնելով * պահեցեր զմեզ ‖ . յայտ առնէ՝ թէ խօսի 'ի դիմաց ազգին իւրի 'ի նեղիլն նց, 'ի նենգաւոր և 'ի մոլորեալ ազգաց, և կամ խօսի 'ի դիմաց այնոցիկ՝ որք նեղեալ տառապէին 'ի նենգաւորաց և յամբարտաւանից. և այժ ազատեաց զնս. յայս առումն հայելով՝ ասէ ։

**Դու Տր պահեսցես զմեզ. և ապրեցուսցես յազգէ յայսմանէ մինչև յաւիտեան ։** Այսի ասել. 'ի նեղել զմեզ նենգաւորաց և ամբարտաւանից՝ դու տէր ըստ աննենգ խոստմանց քոց պահեցեր զմեզ անվնաս, և ազատեցեր յազգէ յայսմանէ, այս յազգէ նենգաւորաց և ամբարտաւանից, զորս յիշեաց 'ի վերոյ. յոր սակս իսկ դնէ՝ յայսմանէ. որպ թէ եղեալ էր, փրկեցեր զմեզ 'ի սոցանէ, և պահեցեր 'ի նենգութէ նց ։ Այլ կամ ես ըստ ոմանց, ( որք առ գերութին բաբելացւոց վերածեն զայս սաղմոս ), յազգէ յայսմանէ ասելով կամիս ասել, յազգէն բաբելացւոց, և 'ի գերութէ նց. և կամ ըստ լամբ" 'ի դիւաց ։ Այլ այս ասէ՝ * մինչև յաւիտեան ‖ . այս ոչ միայն այժմ, այլև առ յապայն ես, ցորչափ կեամք. ես և մինչև 'ի հասանել հանդերձեալ յաւիտենին. յոր միտ թերևս 'ի թարգմանութե եօթանասնից դնի. * յայսմ ազգի և 'ի յաւիտեան ‖ ։

Զայս եդեալ մարգարէին՝ առաջի առնէ այժմ և զորպիսութի վիճակի նոցա, այս ամպարշտաց, և զկամս այ առ ազգս մարդկան, և ասէ ։

Թ. Շուրջանակի ամպարիշտք շրջին. ըստ բարձրութեան քում մեծս արարեր զորդիս մարդկան:

Ըստ գոլոյ անսահման բարւոյ՝ կամեցաւ հաղորդս առնել իւրում բարութեան զազգ մարդկան. վասնզի և արար զնա մեծս. զի գոյացոյց զնա 'ի պատկեր իւր. և կարգեաց զնոսին առ այնպիսի մեծ բարի՝ որոյ ժառանգութիւն ունէին մեծանալ ըստ Աստուծոյ, այն է ժառանգութիւն անսահման բարութեանն Աստուծոյ. և յայս իսկ տպաւորեաց 'ի նոսա բաղձանս առ այն անսահման բարին: Իսկ ամպարիշտք, որք այնու բաղձանօք 'ի նոյն բարին մղին, 'ի նոյն ոչ բերին. այլ՝ յայնս, առ որս չէին կարգեալ. քանզի կամ առ մեղանչական գործս և կամ առ սնոտի իրս. և քանզի 'ի նոսին ոչ կարեն գտանել զայն, անդադար 'ի միոյ 'ի միւսն դեգերին. և հանապազ երերեալ շուրջ աստ և անդ շրջին՝ գտանել զոր խնդրեն: Եւ ահա յայս հայի բանն մարգարէին՝ յասելն:

Շուրջանակի ամպարիշտք շրջին: Քանզի ամպարիշտք թողեալ զանսահման բարին, առ որ կարգեալ են, երերեալ տատանին յանօրէնութիւնս և 'ի նենգութիւնս, յանցաւոր և 'ի չափաւոր բարիս, յորս ոչ երբեք գտանեն զհանգիստ ներքին բաղձանաց իւրեանց: Եւ այս ըստ երկուց նմանութեանց. Նախ՝ զի որպէս որ շուրջանակի շրջի, յոր կողմն և դարձցի՝ սկիզբն առնու շրջելոյ, սոյնպէս և բաղձանք մարդոյ եթէ 'ի չափաւոր բարիս շրջեսցի, յոր բարի և բերիցի, 'ի չափաւորութենէ նորին յագեալ՝ թողու զայն, և սկիզբն առնու յայլ չափաւորս, յայս և յայն թափառելով. առ որ ասելի է. * մինչև յերբ թափառիցիս դուստր անարգեալ ‖. Երեմ. ԼԱ. 22: Երկրորդ՝ որպէս մագնիսաքօծ լեզուակն կողմնացուցին խախտեալ միանգամ 'ի հայելոյ յանշարժ բևեռ երկնի՝ թափառեալ շուրջանակի շրջի, սոյնպէս և ամպարիշտն խախտեալ 'ի հայելոյ յանշարժ բարին՝ որ է Աստուած, տատանեալ շրջի յամի. և ոչ ուրեք գտանէ իւր հանգիստ, բայց եթէ դարձցի առ այն անսահման բարին, առ որ կարգեալ և բարձրացուցեալ է Աստուած զմարդ. ընդ որում և յայտ առնէ զայս յաջորդ բանն այն՝ զոր ասէ:

Ըստ բարձրութեան քում մեծս արարեր զորդիս մարդկան:

Այլինքն , դու որ բարձր ես և յամենայն փառաւորեալ. այնու բարձրութ՟բդ և փառաւորութ՟բդ ունիս մեծս առնել և փառաւորել զորդիս մարդկան ․

Այլ յասելն աստ՝ այնու բարձրութ՟բ , կամ * ը՟ բարձրութեան քում ‖ , ոչ է պարտ այնպէս իմանալ , ո՟չ թէ ա՟ծ 'ի չափ բարձրութեան իւրոյ կամ հաւասար բարձրութե՟ իւրում փառաւորէ զմարդիկ , այլ թէ զբարձրութիւն իւր՝ ը՟ չափու իւր հաղորդէ ն՟ց , և նովին մեծ առնէ զն՟ա աստ և 'ի հանդերձելումն ․ աստ 'ի ձեռն զանազան բարերարութեանց և պարգևաց ․ և 'ի հանդերձեալն 'ի ձեռն դերազանցութեան փառաց ․ որով գրեթէ ա՟ծս առնէ զն՟ա ոչ էակապէս կամ հաւասարապէս , այլ՝ հաղորդականապէս ․ և այս լինելոց է՝ 'ի ժառանգել ն՟ց զա՟ծ տեսութ՟բ էութե՟ ն՟ր ․ ըստ որում ասէ յովհան ․ * Նման նմա լինելոց եմք ․ զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն ‖ ․ ա՟ ․ յովհ ․ գ՟ ․ 1 ․

Այլ առաջիկայ բնաբան ըստ պարզ տեսութե՟ կարէ մեկնիլ և 'ի ցոյց անհաստատութեան ամպարշտաց , և 'ի յայտարարութիւն խնամոցն ա՟յ՝ զոր ցուցանէ առ արդարս ․ յոր միտ կամի ասել ․ ամպարիշտք չունին յիմիք հաստատութիւն բարեյօժար կամաց , կամ հաստատութիւն խաղաղութե՟ ․ այլ յայլևայլ զբաղմունս շրրջին , և որպէս թէ շուրջանակի պտոյտքին՝ սնոտեաց 'ի սնոտիս փոխելով , և կամ 'ի նոյն դառնալով ։ Իսկ որք առ ա՟ծ մերձենան , նա ինքն ա՟ծ , որ բարձրեալն է՝ հաստատելով զն՟ա 'ի բարութեան իբրև զծառս յիւրում պարտիզի՝ տայ նոցա զօրանալ շնորհօք և մեծանալ արդեամբք , և յետոյ ժառանգել 'ի մեծութիւն յաւիտենական ․

Իամբ" ․ փոքր մի այլազգ ընթեռնու զայս բան ․ ը՟ է * շուրջանակի ամպարշտան շրջի ․ վ՟ն բարձրութեան քո ,, վերացուցեր դու զորդիս մարդկան ‖ ․ և մեկնէ այսպէս ․ ամպարշտան սատանայ շրջի շուրջ զորդւովք մարդկան՝ յափշտակել զնոսա ․ այլ տէր վերացուցէ ը՟ ազատեսցէ զնոսա 'ի ձեռաց ն՟ր ․ և ածցէ զն՟ա առ իւր յազատութի՟ յաւիտենական ։

Բարոյապէս , սոյն այս բան 'ի մասնաւորի հայի առ այնոսիկ ամպարիշտս , որք վերստին դառնան 'ի նոյն մեղս ․ ուստի և շուրջանակի շրջին , և են իբրև 'ի բո-

լորաձև շրջանակի՝ յորում ոչ գոյ որոշեալ սահման . որպէս տեսանի և 'ի շրջանակեալ աղօրիս . ուր շրջօղն՝ եթէ ձի իցէ և եթէ մարդ՝ շուրջ 'ի նոյն բերի . Այսպէս ահա սամփսոն յետ մեղաց ըմբռնեալ՝ շուրջանակի շրջէր 'ի տան աղօրեաց . ( դատ . ժզ . 21 . ) Սոյնպէս և մեղաւորք պտոյտքին . այսօր մեկնին , վաղիւ մերձին . Յիշոցնատու ամբարիշտն ( դր . բփրօղն ) այսօր ապաշխարէ , վաղիւ 'ի նոյն զլեզուն շաղախէ . ամբարիշտ վավաշոտն այսօր դադարի՝ վաղիւ 'ի նոյն մոլեգնի . ամբարիշտ արբեցօղն այսօր յետս կայ , վաղիւ 'ի նոյն դառնայ . Իբրև անիւ միշտ 'ի նոյն շրջանակի , և ոչ ինչ օգտի . * արա զնոսա որպէս զանիւ ‖ . սաղ . ձբ . 21 . Կամ որպէս մրրիկ հնոցի , որ միշտ 'ի նոյն փոթորկի .

Ճանճք զազիրք են այսպիսի ամբարիշտք , որչափ ջանան հրեշտակք մեկնել զնոսա 'ի զազրութենէ՝ այնչափ 'ի նոյն դառնան նոքա . որոյ վն և շանաճանճք կոչին . ( ելից ը . 24 . ) Ի տեսլին հայելով ասացին հրեշտակք . * բժշկեցաք զբաբելոն և նա ոչ բժշկեցաւ , թողցուք զնա ‖ . երեմ . ծա . 9 . Խոզք են մք , որք 'ի լուացեալ լինիլն՝ ընդ տիղմ շաղախին . ըստ այնմ . բ . պետ . բ . 22 . * և խոզ լուացեալ ընդ տիղմ թաւալեալ ‖ . ուստի և են օթևանք դիւաց . զի դևք 'ի նոսին կամեցան իջեանիլ . ( ղուկ . ը . 28 ) . Նման են որք շանց՝ որք դառնան 'ի փսխած իւրեանց . * եկեալ 'ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգօնութե , եթէ շուն դառնայ անդրէն 'ի փսխած իւր ‖ . բ . պետ . բ . 22 . * լաւ էր նոցա ասէ եթէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեն ճանապարհ , քան թէ ծանեան և յետս կացին 'ի որ պատուիրանէն ‖ . բ . պետ . բ . 21 . Ո զի այսու չար ևս լինի վիճակ նց . քզի յայտ է թէ հիւանդ առողջացեալ՝ եթէ դարձցի 'ի նոյն հիւանդութի ( կամ ասացից՝ եթէ իւղնիւկ արասցէ ) չար ևս լինի նմա . որոյ վասն ասաց քս ցառողջացեալ հիւանդն . * ահաւասիկ ողջացար . մի ևս մեղանչեր . զի մի չար ևս ինչ լինիցի քեզ ‖ . յովհ . ե . 14 . Իսկ որ չարագոյնն է , այսպիսիս անարժան առնէ զինքն բժշկութե . զի ոչ ասի յառակս որ հարց , * անարժան է բժշկութեան՝ որ յետ դարման գտանելոյ վիրաց իւրոց՝ անձամբ զանձն վիրաւորէ ‖ .

և թէ . * ոչ արժանաւորի սրբիլ՝ որ յետ շնորհաց զանձն աղտեղէ ‖ . և եթէ սրբեսցի ևս , զի՞նչ օգուտ , զի դարձեալ դառնայ յաղտեղութ՟ին առաջին . և միշտ շուրջանակի 'ի նոյն շրջի : Եւ պատճառն է՝ զի ճշմարտութ՟ք և հաստատուն առաջադրութ՟ք ոչ նորոգէ զինքն . ապա թէ ոչ՝ հոգին ՟ը որ սպասէ դարձի նորա՝ տայր նմա զյանպլխի մեծ շնորհս , որով հաստատէր , և բարձրանայր , և ոչ ևս գլորէր յառաջին չարիսն :

Յարմարական մեկնութ՟ք , այս բան հայի յայնոսիկ՝ որք ոչ ուշ դնեն յառաջիկայ գործն զոր առնեն , այլ յորս շուրջ են . կամ 'ի ներկայ գործն , և յապագայն հային , կամ զանցելովք յածին . և այսպէս շուրջանակի շրջին : Անցեալն գնաց . ապագայն չէ յայտ . ներկայն է միայն 'ի ձեռս քո . յայն հայեաց և զայն արա . զի՞ շրջիս աստ և անդ : Պատմի ('ի գիրս պլուտարքոսի) թէ 'ի մատուցանել քրմի զզոհս , կայր առ նմա փողահար , և ազդ առնէր նմա . * զայդ արա , զայդ արա ‖ : Զոր ինչ առնես՝ այնպէս արա , ո՟պ թէ չունիցիս զայլ ինչ առնել . յաղօթելդ այնպէս աղօթեա , որպէս թէ չունիցիս ամենևին զայլ գործ . յուսանիլդ այնպէս ուսիր ո՟պ թէ չունիցիս գործել ինչ այլ . ապա թէ ոչ՝ զոր գործեսդ՝ անպիտանացուցանես , և զոր ոչն գործես 'ի նոյն զքեզ շրջեցուցանես :

Նկար 'ի հիւանդութ՟ի դարման տար բժշկութեան . և մի շրջիր յապագայն՝ թէ յառողջանալդ զի՞նչ լինիցի քեզ , կամ յոչ առողջանալդ՝ զի՞նչ պարտիցիս գործել . * վաղիւն վասն իւր հոգասցի . շատ է աւուրն չար իւր ‖ . մատ . զ . 34 : Սատանայն առնէ՝ զի թողեալ զփոյթ առաջիկայ գործոյդ՝ հայեսցիս յայն որ ոչ գոյ , այլ որ լինելոցն է . և 'ի հասանելդ յայն՝ զայն ևս թողեալ՝ հայեսցիս յապայն . և այսպէս միշտ յապայն շրջեցուցանելով զքեզ , երբեմն և յանցեալն , ապականէ զառաջիկայ գործդ , կամ ոչ թողու՝ զի բարւոք արասցես զայն :

Ոչ աստ գտանես զոր խնդրես , և ոչ անդ տեսանես՝ զոր մտածես , այլ 'ի ներկայդ . * ահա արքայութիւնն ա՟յ 'ի ներքս 'ի ձեզ է ‖ . ղուկ . ժէ . 21 : Ի ներկայ գործդ գտանես զշաւիղս արքայութ՟ե՟ն ա՟յ . ներկայն է

ժամ, այսօր է ժմկ, վայրկեանս է՝ զոր ունիս․ եթէ զվաղւին որոնես, զայսօրն կորուսանես․ զայն չունիս, և զայս ոչ գտանես․ կալ զոր ունիս, և նա կալցի զքեզ։ Եթէ վաղուեան է գործն, հայեաց 'ի վաղւին, իսկ եթէ այսր աւուր՝ հայեաց յայս օրն․ * ամ՟ ժամանակ է, և ժամ ամ՟ իրաց 'ի ներքոյ երկնից ‖․ Ժողով․ Գ․ 1։

Եթէ հարցանիցես, զինչ արարից՝ զի կեցից ը՟ հաճոյս այ՟, զերկուս ցուցանեմ․ ուշ դիր նախ 'ի գլուխ գործոյդ, զ՟ 'ի վախճանն որոյ վ՟ գործես․ ապա եթէ առանց հայելոյ 'ի վախճանն գործեսցես, շրջուն սկսանիս, և շուրջանակի շրջիս․ և ոչ ժամանես յայն՝ յոր պարտ էր քեզ ժամանել․ և նմանիս այնմ պատկերահանի, որ միշտ յոտից սկսանէր նկարել, վ՟յ և բազում անգամ ոչ ժամանէր 'ի գլուխն․ * իմաստնոյ աչք 'ի գլուխ իւրում ( զ՟ դիտաւորութի՟ իմաստնոյ 'ի սկիզբն գործոց իւրոց ) և որ անմիտն է՝ ընդ խաւար գնայ ‖․ Ժողով․ Բ․ 14։

Ուշ դիր երկ՟դ 'ի ներկայ գործդ՝ զոր առնես․ եթէ բարի է՝ յայն միայն դիր զփոյթ քո․ եթէ չար՝ զգուշացիր․ 'ի գործելդ զբարին՝ մի՛ շրջաբերիր, այլ հաստատուն կաց 'ի նոյն․ և ա՟ծ որ տեսանէ զփոյթ քո, ը՟ ամենառատ լիութե՟ և ողորմութե՟ իւրոյ մեծ արասցէ զքեզ աստ և 'ի մեծի ապագային, զ՟ 'ի հանդերձեալ յաւիտենին։

# ՍԱՂՄՈՍ ԺԲ.

*Աղօթանք ցաւած սրտի, եւ խնդրուածք ընդունելոյ լոյս յԱյ, եւս եւ բանք յուսալոյ յողորմութիւն նորա:*

Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ:

1. Մինչեւ յերբ Տէր մոռանաս զիս իսպառ, մինչեւ յերբ դար-
ձուցանես զերեսս քո յինէն: 2 Մինչեւ յերբ դնեմ
զխորհուրդս յանձին իմ, եւ ցաւս սրտի իմոյ զաւուրս: 3 Մին-
չեւ յերբ բարձրանայ թշնամին ՚ի վերայ իմ. նայեա եւ լուր ինձ Տէր
Աստուած իմ: 4 Լոյս տուր աչաց իմոց. գուցէ մի երբեք ննջեցից ՚ի
մահ: 5 Մի՛ ասասցէ թշնամին, թէ յաղթեցի նմա. նեղիչք իմ ցնծասցեն... 

## ՎԵՐՆԱԳԻՐ.

Ի կատարած՝ Սաղմոս ՚ի Դաւիթ:

ԲԱՆՔ ԵՒ ԲԱՌՔ ՎԵՐ-
*նագրիս բացատրեալ ՚ի ներածութեան գլ. Թ.
եւ Ժ. եւս եւ ՚ի գլ. Է ՚ի վերջն: Իսկ թէ
այս սաղմոս յինչ առթէ իցէ ասացեալ,
չունիմք ուստեք ցուցանել. ոմանք դնեն յառթէ հա-
լածանացն Սաւուղայ, եւ ոմանք Աբեսաղոմայ. այլք
զայլ ինչ ՚ի մէջ մատուցանեն. իբր թէ սոյն այս սաղ-
մոս ասացեալ իցէ հայելով ՚ի տառապանս եզեկիայ
արքայի. եւ կամ հայելով ՚ի գերութիւն բաբելացւոց. կամ
ըստ վարդանայ հայելով յաւարտ ապաշխարութեան դաւ-
թի. ըստ որոց յարմարական ինչ մեկնութիւն վերնագիր
սաղմոսիս բացատրի այսպէս. սաղմոս ասացեալ ՚ի*

դաւթայ 'ի կատարած, որ 'ի կատարմանն՝ և կամ առ 'ի կատարել, որ առ 'ի վերջանալ այնր հալածանաց կամ տառապանաց կամ գերութեան Ի՟ղի։

Իսկ հասարակ կարծիք բազմաց է, թէ այս սաղմոսիցէ ասացեալ սոսկապէս իբր մաղթանք առ Ա՟ծ՝ առ 'ի ը՟ռւնիլ 'ի նմանէ զօգնութիւն ն՟ր յազատութիւն յերկարեալ տառապանաց. և այս՝ 'ի կատարած. որ բարոյապէս հայի յաւարտումն կամ յազատութիւն 'ի տագնապիչ փորձութեան. որպ և յայտնի երևի յընթացից սաղմոսիս։

## ԲԱՆ.

Ա. Մինչեւ յե՞րբ Տէր՝ մոռանաս զիս իսպառ. մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Բառս մինչեւ յե՞րբ՝ սոսկ ըստ զօրութեան ձայնին առեալ ցուցանէ աստ զնշան նեղութեան կամ զանյուսութեան սրտի. իսկ ըստ զօրութեան բանին կշռեալ՝ յայտ առնէ զցոյց երկարութեան ժմկի փորձութեանն, և սաստկութեան տառապանաց սրտին, նաև զառաւելութեան յուսոյն որ առ Ա՟ծ. և ըստ լամբ" զհամարձակել հոգւոյն 'ի գութ խնամոց ն՟ր. զի այսու ոչ եթէ գանգատէ մարգարէն, այլ զկիրս հոգւոյն յայտնէ, յորմէ տագնապէր և հանգիստ ոչ գտանէր։ Նոյն յայս իսկ 'ի վերջ այսր սաղմոսի ասէ. * Ես յողորմութիւնս քո յուսացայ Տ՟ր ||։ Նոյն զայս այսպէս ոչ ասէր, եթէ ըստ առաւելութեան յուսոյն չէր ասացեալ՝ * մինչեւ յե՞րբ ||։ Բառս այսմ է իմանալ և 'ի յաջորդ երկուս համարսն, այլ այսու զանազանութբ. զի յերրորդումն անդ՝ բառդ "մինչեւ յե՞րբ" հայելով առ թշնամին դնի. իսկ յերկրորդն՝ հայելով առ անձն. այլ աստ՝ հայելով առ Ա՟ծ։ Ի մինն իբրև բողոք զթշնամեաց. 'ի միւսն իբրև խոստովանութիւն զխորհրդոց և զցաւոց իւրոց. իսկ աստ իբր մաղթանք առ ազատեցուցիչն՝ յաւելն։

Մինչեւ յե՞րբ Տ՟ր մոռանաս զիս իսպառ. մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։ Մեծ է տառապանք հոգւոյ

տան արդարոյ, եթէ յետ վայելելոյ յա̃ծային լուսաւորութիւն. և յետ ճաշակելոյ զքաղցրութիւն սիրոյ ն̃ր, բազում ժամկաւ ըմբռնեսցի յայնպիսի փորձութիւն՝ յորս տեսանիցէ զինքն իբր թողեալ յա̃յ, և իբր անօգնական. զի թէպէտև ա̃մ ոք՝ որ 'ի փորձութիւնս իցէ, տառապի, բայց որ ը̃երկար ժամկ մնայ 'ի փորձութիւնս, երկու ինչ աւելի կրէ 'ի հոգին, ք̃ն են՝ վրդովեալ շարժումն 'ի կամս, և խաւար մթագին 'ի միտս: Այս վրդովումն կամաց յառաւելուլ փորձութեանցն այնչափ սաստկանայ՝ մինչև կարծեցուցանել մարդոյ, թէ ա̃ծ մոռացեալ է զնա իսպառ: Սոյնպէս և այն խաւար մթագին երբեմն այնպէս տիրէ 'ի միտսն՝ մինչև կարծել մարդոյ, թէ ա̃ծ դարձուցեալ է զերեսս իւր 'ի նմանէ:

Վ̃ն առաջնոյն ասէ. * Մինչև յե՞րբ տէր մոռանաս զի՞ս իսպառ ||: Իսկ վասն երկրորդին ասէ. * Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն ||: Նա զայս ասելով՝ ոչ կամի ցուցանել, թէ ա̃ծ կարէ մոռանալ զոք. ք̃զի ո̃պ ասէ մեծն խոսրով 'ի մեկն. ժամագր. երես. 367. * ա̃յ մոռացօնք ոչ է, այլ վասն անտես առնելոյն ասէ ,, ( մինչև յե՞րբ մոռանաս զիս )||: Սոյնպէս և յասելն դարձուցանել զերեսս՝ ոչ կամի ցուցանել, թէ ա̃ծ ունի զերեսս ըստ մարդոյ, և դարձուցանէ զնոյն 'ի մարդոյ. այլ խնդրէ միայն՝ զի մի ցուցցէ առ ինքն զգործս մոռացողի և դարձուցանողի զերեսս, ըստ որում առնեն մարդիկ. վ̃զի մարդիկ զայն մոռանան՝ զոր ոչ սիրեն, և կամ նուազ ինչ համարին. և ևս յայնմանէ դարձուցանեն զերեսս իւրեանց՝ յորմէ տաղտկանան, կամ ը̃ որ ոչ հաճին, և կամ յոր բարկանան: Յայսպիսի եղանակ մարդկային գործողութեանց հայելով մարգարէին՝ այսպիսի օրինակաւ խօսի. որով ըստ առաջին հատուածոյն կամի ասել, մի՛ վարիր ընդ իս՝ աղաչեմ զքեզ տէր՝ իբրև ը̃ այնս, զորս ոչ սիրես. իսկ ը̃ երկրորդ հատուածոյն կամի ասել, մի՛ առներ ընդ իս այնպէս, ո̃պ առնես ընդ այնս՝ յորոց տաղտկանաս. և եթէ հաճոյ իցէ քեզ այդու օրինակաւ ևս վարել ընդ իս 'ի կեանս յայս, այդ մի տևեսցէ "իսպառ". զի թէպէտև ես չունիմ ինչ իրաւունս պահանջելոյ 'ի քէն զօգնութիւնդ, բայց դու ունիս իրաւունս տիրե-

լոյ ինձ, եւ ոչ մոռանալոյ զիս, զի տէր ես. ուրեմն ար-
ժան է՝ զի օգնեսցես ինձ, եւ հայեսցիս գթութեամբ 'ի
տառապանս իմ՝ զորս կրեմ:

Նայցի 'ի կեանս յայս՝ զի 'ի սոյն հայելով ասէ զայդ.
յոր միտ մեծն խոսրով 'ի մեկն. ժամագր. երես 367.
ընթեռնու այսպէս. * մինչեւ յե՞րբ տէր մոռանաս զիս
'ի կենցաղս յայս, որ է ժմկ ապաշխարութե ||: Յարէ
ապա մարգարէն՝ 'ի մաշեալ սրտէ, ասելով:

Բ. Մինչեւ յե՞րբ դնեմ խորհուրդս յանձին իմ. եւ ցաւս
սրտի իմոյ զտուընջեան:

Յասելն 'ի վերոյ առ ա՛ծ՝ * մինչեւ յե՞րբ տէր մոռանաս
զիս իսպառ [illegible] ||. ոչ եդ առաջի զառիթմն՝ յորոց շար-
ժեալ՝ ասաց զայս. այլ լռեաց: Իսկ աստ հայի յա-
ռիթմն յայնոսիկ, որ 'ի խաւարումն մտաց եւ 'ի վրդո-
վումն կամաց. եւ զներգործութեանցն նոցին խօսի. բայց
խօսի ցաւագին. եւ զբան իւր այնպէս կարգէ. որպէս
թէ ընդ ինքեան խօսելով՝ զոր 'ի հոգւի իւր կրէ, առա-
ջի ա՛յ տարածանէ յասելն:

Մինչեւ յե՞րբ դնեմ խորհուրդս յանձին իմ: Այս խոր-
հուրդք են ներգործութիւք շփոթման կամ խաւարման
մտաց առն արդարոյ. զի 'ի տառապիլ նորա 'ի փորձու-
թիւնս, եւ 'ի խաւարիլ մտացն՝ պէսպէս խորհուրդք
յուզին 'ի միտս նր՝ գործել զայս ինչ կամ զայն՝ առ 'ի
թեթեւացուցանել զանձն իւր 'ի նմնէ. եւ 'ի յապաղելն՝
ստիպի ասել. մինչեւ յե՞րբ դնեմ 'ի միտս իմ զայս ինչ
կամ զայն. որ խորհիմ զայսպիսիս եւ զայնպիսիս. կամ ըստ
լամբ՛՛ * մինչեւ յե՞րբ 'ի խորհրդոց 'ի խորհուրդս մատ-
նիմ ||: Ու կամ ա՛րդեօք ցո՞րքան ժմկ եւս ունիմ այսպէս
տատանիլ 'ի պէսպէս խորհուրդս: Ու քանզի յայսպիսի
խորհրդոց ծագի տրտմութիւն եւ ցաւ 'ի սրտի, վասն
յաւելու ասել:

Եւ ցաւս սրտի իմոյ զտուընջեան: Յաւօք նշանակի աստ
դառն տրտմութիւն սրտի. եւ կամ այնպիսի ցաւագին
զգածումն, որ պատճառի յըմբռնմանէ բաժանման
բարւոյն. վասն զի յատկապէս ցաւն է զգածումն 'ի
բաժանմանէ կենդանական մասանց. եւ քանզի հոգին 'ի
տեւել մեծի փորձութեան կասկածի 'ի բաժանելոյն յա՛յ
կամ յառաքինութէ, կամ 'ի բարւոյ իմիք, յայտնանէ

ծագի 'ի կամս ցաւ ինչ տրտմագին, կամ դառն ինչ տխրութիւն կամ թաղծութիւն հառաչանաց. ը̄ որոյ յերբ'' դնի տխրութիւն. կամ հոգ (ծանր որ է տատանմունք կամ ցաւ ը̄ հոգւոց)։

Զայսպիսի ցաւոց խօսի աստ մարգարէն. ուր եթէ բառդ ''ցաւք'' դիցի փոխկ հայցականի ըստ երբ'' և ըստ լատինականին, միտ բանին լինի այս. մինչև յե՞րբ է ինձ այս, զի 'ի վրդովելոյ կամացս՝ յաւելում 'ի վերայ տառապանացս զցաւս և զտրտմութիւն սրտի յայսքան աւուրս. որ է ասել, մինչև յե՞րբ կացից այսպէս ցաւած և տխուր. և այն՝ 'ի բազում աւուրս։ Իսկ եթէ բառդ ցաւք՝ առեալ լիցի յուղղական հոլովն, միտ բանին լինի այս. մինչև յե՞րբ ցաւք սրտի իմոյ պաշարեալ ունիցին զաւուրս կենաց իմոց. կամ մինչև յե՞րբ զայսքան աւուրս տևեսցեն յիս ցաւք սրտի իմոյ։

Այլ զարմանք է, զի ըստ ասելոյն վարդանայ՝ սահման ոչ դնէ աւուրցն ասելով, զքանի աւուրս, կամ այսչափ աւուրս, այլ միայն զաւուրս, կամ ը̄ երբ'' յաւուր. զի ոչ 'ի չափ աւուրցն նայի, այլ 'ի չափ անձկութեան, մանաւանդ թէ յանչափութիւն նորին։ Արդ՝ յետ յայտնելոյ մարգարէին զներքին աղէտս հոգւոյն՝ յայտ առնէ այժմ և զբռնութիւն թշնամւոյն՝ գանգատելով իմն, և ասէ։

Գ. ՄԻՆՉԵ ՅԵ՞ՐԲ ԲԱՐՁՐԱՆԱՅ ԹՇՆԱՄԻՆ 'Ի ՎԵՐԱՅ ԻՄ. ՆԱՅԵԱ՛ Ե ԼՈ՛ՒՐ ԻՆՁ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԻՄ։

Բառիւս թշնամի՝ թէպէտ և կարէ նշանակել աստ արտաքին թշնամին, որ յընկճել մարդոյ՝ բարձրանայ 'ի վերայ նորա՝ եթէ բանիւ իւիք, և եթէ գործով. բայց հայելով 'ի նախընթաց և 'ի յաջորդ համարսդ՝ տիրապէս նշանակի ներքին թշնամին, որ է դևն, կամ մանաւանդ չնչաւոր մարդն. և ըստ այսմ սոյն այս բան հայի յերկուս աղէտս հոգւոյն, զոր յիշեցաք 'ի վերոյ, որ են՝ մտայոյզ խորհուրդք պատճառեալ 'ի խաւարմանէ մտաց, և ցաւք սրտի պատճառեալ 'ի վրդովմանէ կամաց. վասն զի 'ի տիրել սոցա 'ի վերայ հոգւոյն՝ զօրանայ պատճառն փորձութեանց. որ է թշնամին սատանայ կամ չնչաւոր մարդն. և 'ի զօրանալն բարձրանայ, որ բռնանայ՝ և ջանայ տիրել նմա. վասն

և հոգին տառապեալ աղաղակէ առ Ած ասելով.
Մ՝ԻՆՉԵՒ ՑԵ՞ՐԲ ԲԱՐՁՐԱՆԱՅ ԹՇՆԱՄԻՆ 'Ի Վ՟Ր ԻՄ. այս՟ մինչև յե՞րբ տևելոց իցէ բռնութիւն թշնամւոյն 'ի վ՟ր իմ, կամ մինչև յե՞րբ է այս, զի տեսեալ զիս թշնամւոյն ընկճեալ 'ի փորձութեանց՝ բռնանայ 'ի վ՟ր իմ.

Մ՝եծն խոսրով 'ի մեկնելն զայս բան 'ի ժամագրքի. երես 367. զբարձրանալ թշնամւոյն դնէ վասն անվրէժխնդիր լինելոյն Այ. և ընթեռնու այսպէս. * մինչև
,, ցե՞րբ բարձրանայ թշնամին 'ի վ՟ր իմ. զի յորժամ
,, դու վրէժխնդիր ոչ լինիս չարին, նա մեծաբանէ 'ի
,, վ՟ր իմ ||. Զայս եղեալ՝ ապաւինի 'ի գթութի՟ն Այ, և ասէ.

Ն՝ԱՅԵԱ՛, ԵՒ ԼՈ՛ՒՐ ԻՆՁ Տ՟Ր Ա՟Ծ ԻՄ. Ո՝րովհետև 'ի վերոյ ասաց՝ մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն. այժմ աղաչէ, զի առ ինքն դարձուսցէ զնոյն և նայեսցի. * Նայեա՛ ||, ասէ. այս՟ դարձո՛ զերեսս քո առ իս, և նայեա՛ զի լուսաւորեսցին միտք իմ. մատո՛ և զունկն քո առ իս, * և լո՛ւր ինձ տէր Ած իմ. || իբր թէ ասիցէ. մի՛ ցուցաներ զքեզ իբրև ոչ լսող, կամ իբրև մոռացօղ, այլ իբրև լսող. և զի 'ի լսելդ օգնես, օգնեա՛ և ինձ աղաչեմ, և պաշտպանեա՛ զիս. խաղաղացո՛ զվրդովմունս հոգւոյ իմոյ, և զերծո՛ զիս 'ի բռնութենէ թշնամւոյն. զի մի՛ նա տիրեսցէ 'ի վ՟ր իմ, այլ դու միայն. զի դու միայն ես տէր, և ես ծառայ քո. դու միայն ես Ած իմ, և ես արարած քո. * Նու եթէ արարած եմ քո (ասէ լամբ՟"), պարտիս պահել. և եթէ ծառայ եմ, պարտիս փրկել ||. Զայս բան՝ զոր եդ աստ համառօտիւ, * նայեա՛ց և լո՛ւր ինձ ||. առաւել ևս բացայայտ դնէ զկնի. և զներգործութիւն նայելոյն և լսելոյն նմանութ՟բ իմն յայտ արարեալ ասէ.

Դ. Լ՝ՈՅՍ ՏՈՒՐ ՏԷՐ՝ ԱՉԱՑ ԻՄՈՑ. ԶԻ Մ՟Ի ԵՐԲԷՔ ՆՆՋԵՑԻՑ 'Ի ՄԱՀ.

Այս լոյս, զոր խնդրէ աստ մարգարէն, է շնորհքն Այ, մանաւանդ այն՝ որ իբրև ճառագայթ իմանալի փարատէ յաչաց հոգւոյն՝ այս՟ 'ի մտաց՝ զխաւար մոլար ճանաչման, և զշփոթութիւն թիւր խորհրդոց. և տայ ճանաչել զուղիղն և զճշմարիտն. զի Ք՟ս 'ի հայիլ արեգական առ մեզ ճառագայթիւք իւրովք փարատէ ըզ-

խաւարն, և 'ի յայտ ածէ՝ զորս ծածկեալ էր 'ի մէնջ խաւարն, սոյնպէս և Ած 'ի նայելն առ մեզ շնորհօք իւրովք՝ իբր լուսով փարատէ 'ի մտաց զխաւարային խորհուրդս, և 'ի յայտ ածէ զուղղութիւնս՝ զորս յառաջն իբրև խաւարեալք ոչ տեսանէաք. զի որպէս աչք թէև առողջ իցէ, առանց լուսոյ ոչ տեսանէ, սոյնպէս և աչք հոգւոյ մերոյ՝ թէև առողջ իցէ՝ առանց ներգործական շնորհաց ոչ տեսանէ զԱծայինս: Եւ արդ Քզի 'ի նախընթաց համարն ասաց մարգարէն առ Ած. նայեաց առ իս իբրև արև, ասա զայցելութին նորա ևս իբրև զլոյս խնդրէ, առ 'ի լուսաւորիլ նովաւ. վն ասէ:

Լոյս տուր աչաց իմոց: այ է, տուր աչաց հոգւոյ իմոյ զլոյս շնորհաց քոց, կամ ըստ եբրայ" լուսաւորեա զաչս իմ, այ զմիտս իմ, և այնու փարատեա զխաւարային խորհուրդս իմ: Ըստ սմին ընթեռնու և սուրբն շնորհալի 'ի մեկն. յակ. Ա. 27. Հատ. Է. և յորդորելով ասէ. * Գնասցուք ընդ լոյս, զի մի խաւար մեզ հասցէ. „ և եթէ հասցէ, աղօթելով ասասցուք այ. լուսաւո„ րեա տէր զաչս իմ. զի մի երբէք ննջեցից 'ի մահ ‖: Եւ 'ի մեկն. Ա. պետ. Է. 9. Հատ. ԺԶ. երկար գրէ այսպէս. * Զգօքեն զզգայութիս (կենդաղականք) և կախար„ դելով յինքեանս դարձուցանեն, և ննջեցուցանեն „ 'ի մահ.... վն պարտիմք հանապազ արթուն լի„ նել, ցանկ 'ի հսկման կալ. միշտ աղօթել այ ընդ „ մարգարէին՝ թէ լուսաւորեա տէր զաչս իմ. զի մի „ երբէք ննջեցից 'ի մահ ‖:

Գրիգոր Նարեկացի 'ի Հատ. մեռոնին որ 'ի բան զԴ. համարի՝ թէ դաւիթ 'ի խնդրելն զլոյս աչաց՝ զմեռոնի օծումն ևս խնդրէր 'ի վառել զհոգին իբրև զպատրոյկ իւղեալ՝ և առ հաղորդութի իւր ձգել. * մեռոնս „ այս (ասէ) օրհնաբանեալ, զոր մարգարէն կանխաւ „ լոյս աչաց գրեթէ զսոյն աղերսեալ խնդրէր ըստ քեր„ թողութեն բառի ‖: Եւ այսմ հետևեցուցանել կամի մարգարէն, թէ զի մի 'ի խաւարի մնալով 'ի նմին տեսցէ զմահ. սմին իրի յարէ զկնի, և ասէ:

Զի մի երբէք ննջեցից 'ի մահ: այ զի մի բնաւ կուրութե մտաց հաւանելով ցանկութեց կամ փորձութեց՝ գլորեցայց 'ի մահ հոգւոյ, այ 'ի մեղս, և մեռայց. որ է

տեսել, զի մի՛ երբէք անկայց 'ի մեղս, և կամ զի մի՛ 'ի խաւարի փորձութե՟ց մնալով ըմբռնեցայց 'ի քուն մեղաց ։ Նա և զայս յայն սակս այսպէս դնէ, զի հաստարակորէն 'ի խաւարի քուն պատճառի, այլ 'ի լուսոյ փարատի · վ՟յ աղաչէ · * լոյս տուր տէր ասէ աչաց իմոց, զի մի՛ ննջեցից զմահուն քուն ‖ · ըստ գրե՟լոյ գրեգորի վ՟պի 'ի հրահանգսն ։

Ըստանոր բառս "երբէք" կարէ առեալ լինել և փոխանակ բառիդ՝ ես, կամ այսուհետև · յոր միտ այս բան ասի 'ի բերանոյ մեղաւորի՝ որ տաղտկացեալ 'ի դառնութենէ կամ 'ի նեղութէ մեղաց՝ աղաչէ զա՟ծ՝ տալ զշնորհս իւր և հաստատել այնու զոգի նորա · զի մի՛ այլ ես ննջեալ մնասցէ 'ի մահ մեղաց ։

Բայց զարմանալ արժան է ընդ կարգ բանիս · վ՟ն զի որ ննջէ՝ ոչ համարի մեռեալ · և որ մեռեալն է՝ ոչ համարի ննջեալ · իսկ սա ասէ՝ մի՛ ննջեցից 'ի մահ · որպէս թէ հնար իցէ 'ի մահու անդ ննջել ։ Այլ զայս ասէ ըստ երից · Նախ՝ հայելով յանբաւ ողորմութիւնն ա՟յ · զի առաջի ա՟յ ո՛ և իցէ մահ՝ թէ՛ ըստ հոգւոյ իցէ՝ և թէ ըստ մարմնոյ՝ իբրև քուն է · վասն զի առաւել դիւրին է ա՟յ կոչել զմեռեալն 'ի կեանս՝ քան մեզ զարթուցանել զննջեցեալն 'ի քնոյ · վ՟նկ թէպէտև մեղքն ըստ ինքեան մտածեալ՝ մահ ինչ է չար, բայց հայելով 'ի մեծութիւն գթութե՟ն ա՟յ է իբր քուն և ննջումն · նմին իրի փոխկ ասելոյ՝ մի՛ մեռայց մահուամբ մեղաց, ասէ մի՛ ննջեցից 'ի մահ ։

Երկդ՝ հայելով 'ի չար ունակութի՟ն կամ 'ի սովորութի՟ն մեղաց · վասն զի սովորութի՟ն մեղաց է թոյն ամենաչար, յոր եթէ ոք ըմբռնեսցի, ընկղմի յամենավարան թմրութի՟ քնոյ · և այն թմրութի՟ ածէ 'ի մահ մեղաց, քա՟ 'ի մեղս · և վ՟նկ ազատիլ խնդրէ 'ի չարէ անտի, քա՟ 'ի թմրութենէ չար սովորութե՟ ։ Որ որ յորդոր լեալ սարգիս շնորհալի, 'ի մեկն · ա՟ · պետ · դ՟ · 11 · ճառ · թ՟ · յորդ · ասէ · * զարթիցո՛ւք այսուհետև՝ աղաչեմ,
,, զարթիցուք · և զքունն զայն ( չար սովորութե՟ ) որ
,, ածէ 'ի մահ, զասացեալն 'ի դաւթայ՝ յանձնէ 'ի
,, բաց ընկեսցուք ‖ ։ Յովհան իմաստասէր՝ զայս քուն նմանեցուցանէ ննջման յիմար կուսանաց · ուստի յառաջ բերեալ զայս բան 'ի կարգս պաշտամանց եկեղեց-

ւոյ. ասէ. * մի՛ երբէք ննջեցից ՚ի մահ ըստ յիմար հինգ կուսանաց ‖։

Եր̃դ՝ հայելով ՚ի չարաչար փորձութիւնս, յորս ՚ի տառապիլ մարդոյ՝ գրեթէ յարհաւիրս և ՚ի ցնորս քնոյ տագնապի. բայց ք̃զի այս քուն է մահաբեր, վ̃նկ ասէ՝ մի՛ ննջեցից ՚ի մահ, ք̃ մի՛ ըմբռնեցայց ՚ի փորձութեանց, և այնու մատնեցայց ՚ի մահ մեղաց. որով ցանկայ ազատիլ ՚ի փորձութեանցն՝ ո՛չ մահուամբ մեղաց, այլ՝ շնորհօքն ա̃յ։

Զարք ևս խնդրեն ազատիլ ՚ի փորձութեանց, բայց ոչ օգնութ̃ըն ա̃յ, այլ չար մահուամբ, ք̃ մեղօք. վասն զի կրկնակի հնար է մարդոյ ազատիլ ՚ի ներկայ փորձութեանց. մի՝ օգնականութ̃ըն ա̃յ. և այս յայնժամ լինի, յորժամ ա̃ծ՝ կամ զփորձիչն ՚ի բաց վանելով նուազէ և մեղմէ զփորձութ̃իւնն, և կամ մ̃նալով փորձութեանցն պահէ զմարդն յանկանելոյ. և միւս ևս՝ մահուամբ. և այս կամ մահուամբ փորձութ̃եց և կամ մահուամբ փորձեցելոյն. իբր զի կամ փորձութիւնք մեռանին, և կամ փորձեալն, որ լինի հաւանելով մեղաց և կատարելով զցանկութիւնն։ Եւ քանզի այս երկրորդ օրինակ ազատութ̃ե՝ է զարհուրելի մահ, խնդրէ յա̃յ զի առաջին օրինակաւ ազատեսցի. ո̃պ զի մի՛ երբէք լիցի նմա յերկրորդն ըմբռնիլ։ Եւ առ ՚ի լռելի առնել ա̃յ զբանս աղաչանաց իւրոց՝ գրեթէ իբրև զպատճառ յառաջ բերէ զյոխորտալ թշնամեացն, և ասէ։

Ե. Մի՛ ասասցէ թշնամին՝ թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց։

Զի ինչ այնչափ չար՝ ունել զթշնամիս այլ չար այն է՝ եթէ լինիցի յաղթիլ ՚ի նոցանէ. և եթէ յետ յաղթութեան ծաղր ևս լիցի ՚ի նոցունց, այս դառն է յոյժ. և սոյն այս, թէ յաղթիլս և ծաղր լինիլս համարի ստգտանք և այնմ՝ առ որ յաղթեալն ապաւինեալ իցէ իբրև առ կարող ոք։ Յայսմիկ հայելով մարգարէին ասէ։

Մի՛ ասասցէ թշնամին՝ թէ յաղթեցի նմա։ Որպէս թէ ասէր, ունիմ ինձ թշնամի հզօր՝ որ հանապազ մարտնչի ընդ իս, և բռնացեալ ևս է ՚ի վ̃ր իմ. այլ ես յողորմութ̃իս

քոյ տէր յուսացեալ՝ աղաչեմ զքեզ, դու օգնեա՛ ինձ, և վանեա՛ զնա, զի մի՛ յաղթեսցէ ինձ. և յետ յաղթութեանն պարծեսցի, և ասասցէ, ահա յաղթեցի այնմ՝ որ ապաւինեալ էր յա՟ծ: Զայս բան, զոր իբր յորդորումն դնէ աստ առաջի ա՟յ, զօրաւոր ես կամելով ցուցանել՝ ի գործոց պաշտօնէից թշնամեացն՝ յարէ զկնի և ասէ:

Կամ նեղիչք իմ ցնծասցեն՝ թէ ես սասանեցայց: Նեղիչք իմանայ աստ զհասարակ թշնամիս, ես և զդևս, որք ՚ի տեսանելն զսասանիլ արդարոյն՝ ը՟դ զփոփոխիլ նորա յարդարութէ՟, ցնծան և ուրախանան. զի դ՟ր ուրախութիւն մեծ լինի հրեշտակաց յերկինս վ՟ս միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ, քան վասն իննսուն և ինն արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն. ղուկ. ժե. 17. և 10: Այնպէս ուրախութիւն չար լինի դիւաց ՚ի դժոխս վ՟ս միոյ արդարոյ՝ եթէ սասանիցի յարդարութենէ, քան վասն բ՟զմ մեղաւորաց՝ որք ոչ միայն են սասանեալ, այլև կործանեալ. յայս հայի ասելն. * կամ նեղիչք իմ ցնծասցեն՝ թէ ես սասանեցայց ||:

Կամ ասելով յայտ առնէ, թէ այնչափ դառն է նմա ցնծալն նեղչաց իւրոց ՚ի վ՟ր սասանութեան իւրոյ, որչափ դառն է նմա յաղթելն ՚ի թշնամւոյն. վ՟յ ասէ՝ աղաչեմ զքեզ, մի՛ թողուր թշնամւոյն յաղթել ինձ, և պարծիլ ինև. և մի՛ թոյլ տար ինձ սասանիլ յարդարութէ՟. զի մի՛ ցնծասցեն նեղիչք իմ:

Եւ ը՟ռ այսմ յասելն աստ * թէ ես սասանեցայց ||. բառս թէ՝ ունի զնշանակութիւն բառիս եթէ, կամ յորժամ, կամ մինչ, և կամ ՚ի. ո՟պ թէ եդեալ էր. եթէ ես սասանեցայց, կամ մինչ ես սասանեցայց՝ ցնծասցեն նեղիչք իմ. կամ ՚ի սասանիլ իմում ցնծասցեն ն՟ք վ՟ս սասանելոյս:

Հայելով առ յաղթելն՝ դնէ ասասցէ, իսկ հայելով առ սասանիլն՝ դնէ ցնծասցեն. քանզի առաւել ուրախանան դևք ՚ի սասանիլ արդարոյ հնարիւք իւրեանց. քան ՚ի յաղթել նորա պատերազմաւ. զի ՚ի սասանիլն որսան. իսկ որսն զուարճացուցանէ. և թէպէտ յաղթութիւնն ես զուարճացուցանէ, բայց աշխատ առնելով: Իսկ որսալն դիւաց՝ է պատրանօք կործանել, և յորդայթ իւրեանց արկանել, և կենդանւոյն կլա-

նել . ուստի և ջանք նոցա յամի բերի 'ի պատուել զՏր որսորդաց . ըստ որոց զխայծն ցուցանեն , և զկարթն ծածկեն . միովն սնունդ մատակարարեն , և միւսովն 'ի կորուստ թակարդեն . և գրեթէ յամի զբարին ցուցանեն , և զչարն ջամբեն . կեանս երևեցուցանեն , և 'ի մահուանս մատնեն ։

Դրձլ՝ յասելն աստ յառաջնում հատուածի եզականապէս , մի՛ ասասցէ թշնամին . և յասելն յեկրորդում հատուածի յոգնականապէս , նեղիչք իմ ցնծասցեն , եզակին հայի 'ի ստնյ յիշխանն դիւաց , իսկ յոգնակին 'ի դևս . և զի յաղթութիւն 'ի մեծն հայի , և սասանութիւն առ ստորինս , յառաջինն հայելով յաղթիլ դնէ . իսկ յեկրդն հայելով սասանիլ ասէ ։

Յովհան իմաստասէր 'ի կարգս եկեղեցական պաշտամանց՝ երես . 208 . զայս սասանութիւն վերածէ յանկումն մարդոյ 'ի հուր դժոխոց . յասելն . գուցէ * նեղիչք իմ ցնծասցեն՝ թէ ես սասանեցայց 'ի հուրն յաւիտենից ‖ ։ Կամելով ապա զերծ մնալ աստի , ապաւինի ըստ ամի յողորմութիւն այ , և ասէ .

Է. Տէր յողորմութիւն քո տէր յաւիտեան . ընծայեա սէրս իմ 'ի ձեռնտուութիւն ձեռաց . օրհնեցից զտէր՝ զբարերարն իմ ։

Ողորմութեամբք իմացեալ լինելն աստ ներգործութիւք ողորմութեան այ . ուստի և յոգնակի դնէ յասելն * յողորմութիւնս քո ‖ . առ 'ի ցուցանել՝ թէ բզմ են նոքին և անսպառելի . որք և են իբրև ճառագայթք հոսեալք յամենալոյս արեգակնէ անտի ողորմութե . առ որս ապաստանեալ երանելոյն՝ զայս իւր ցուցանէ եղեալ յայնս , մանաւանդ յաղբիւր նոցին՝ յասելն ։

Տէր յողորմութիւն քո տէր յաւիտեան ։ Կամի ասել . ապաքէն բզմ են յոյժ ողորմութիւնք քո , զորս ցուցեր և ցուցանես յուսացելոց 'ի քեզ . վն և ես յուսացայ 'ի նոսին՝ մնւնդ թէ 'ի քեզ , զի և ինձ ցուցցես զնոյնս՝ փրկելով զիս 'ի թշնամեաց և 'ի նեղչաց իմոց . ցոյց աղաչեմ , արա աղաչեմ , եթէ արասցես՝ զինչ պակասի յողորմութեանց քոց . որպ թէ ասէր . եթէ պակասի՝ մի ողորմիր ինձ . ապա եթէ ոչ ինչ պակասի , աղաչեմ մի անտես առներ զայս իմ ։ Բ. յլազգ ես կարէ ձևանալ այս ասացուած՝ եզակի առեալ զբառդ ողորմութիւն .

ո՞չ թէ եղեալ էր . արժան է ողորմութե՟ քում գթալ յիս և օգնել ինձ , վ՟ս զի յայն միայն եդի ես զյոյս իմ , յայն և եթ ապաստան եղէ , յայն միայն վստահացեալ աղաչէցի զքեզ ազատել զիս 'ի տառապանաց իմոց , և փրկել 'ի մահուանէ մեղաց : Եւ զի ըստ ակնկալութեան իւրում եգիտ յա՟յ զոր խնդրեացն՝ զփրկութի՟ , վ՟ս յարէ զկնի և ասէ :

**Ցնծացաւ սիրտ իմ 'ի փրկութենէ քում :** ա՟յ լցաւ հոգի իմ ուրախութ՟բ . և բերկրեցաւ 'ի փրկութեան քում . ուր ասելն 'ի փրկութեան քում՝ նշանակէ ասել 'ի փրկելդ քո զիս . կամ 'ի ցուցանելն քո ինձ զփրկութի՟ . և ք՟զի յայսպիսի ցնծութ՟է յառաջ գայ գոհանալ և օրհնել զա՟ծ , վասն այսորիկ ասէ :

**Օրհնեցից զՏ՟ր զբարերարդ իմ :** Օրհնել զա՟ծ՝ է զուարճանալով ընդ մեծութիւն փառաց ն՟ր՝ ասել առ նա զայնպիսի բանս , որք յայտ առնեն կամ հռչակեն զնորին զայն մեծութի՟ . զի ը՟ս որում ասէ ծործորեցին . 'ի մեկն . մատ . գլ . ի՟ա , * օրհնելն յայտնել լսի ‖ . կամ հռչակել : Այս հռչակումն երրակի կարէ մտածիլ . մի՝ իբրև յայտնիչ փառացն ա՟յ , և ասի փառաւորել կամ փառաբանել . երկ՟ ՝ իբրև յայտնիչ ա՟ծային բարութեանց , և ասի բարեբանել կամ օրհնաբանել . եր՟րդ իբրև յայտնիչ ա՟ծային մեծութե՟ , և ասի գովել կամ մեծացուցանել :

Եւ եթէ այսպիսի գովելս կամ օրհնելս լիցի վասն իրիք բարերարութեան՝ ասի օրհնութի գոհութե՟ . կամ օրհնել գոհութ՟բ . և երբեմն և պարզ օրհնել . ըստ այսմ ձնէ աստ մարգարէն զբառդ օրհնել . ո՞չ թէ ասէր . վասն բարերարութե՟ քո , որով ցուցեր առ իս զպաշտպանութիւն քո , և այնու փրկեցեր զիս 'ի մահուանէ մեղաց և եղեր ինձ բարերար , ոչ միայն շնորհակալ եղէց և գոհացայց զքէն , այլև օրհնեցից և գովեցից զքեզ զայդպիսի բարերարդ իմ :

Այս օրհնութի թէպէտ յատկապէս հայի աստ 'ի մասնաւոր բարերարութի փրկութեան , բայց 'ի հասարակի և կարգի յա՟մ բարերարութիւնս ա՟յ , որք յորդորեն զմեզ և ստիպեն օրհնել զնա և գոհանալ զնմանէ . և առաւելութ՟բ իւրեանց կապեն զմեզ 'ի սէր նորա : Աստի ասի թէ բարերարութիւնքն ա՟յ են շարահիւսեալ

ոսկի շղթայք, որք պարաւանդեն զմեզ ընդ ա՟յ ։ Ի վախճան այսր սաղմոսի գիտելի է, զի ա՟մ բանք սորա այլաբանութ՟բ վերաբերին առ մարդկային բնութիւնս՝ 'ի տառապիլ նորա 'ի մ՟նչև յառաջ քան զմարդեղութ՟ի բանին ։ Սաստի աղաղակ նորա էր առ ա՟ծ, * մինչև յերբ տէր մոռանաս զիս իսպառ ‖ ։ և այլն՝ որ 'ի կարգի ։ Այս աղաղակ եհաս յականջս ա՟ծ զօրութ՟եց ։ և 'ի բարձրանալ այնր բերանով նահապետաց և մարգարէից, հաճեցաւ փութալ հասանել. եկն և փըրկեաց, և եած 'ի ցնծութ՟ի յաւիտենից ։

# ՍԱՂՄՈՍ ԺԳ.

Յանդիմանութ՟ի բանից, յորում առաջի դնի անօրէն խորհուրդ սրտի անզգամին, և վիճակ ապականեալ մարդկային բնութեան. եւս և խնամք տեսչութ՟են ա՟յ 'ի վ՟ր արդարոց, և փափաք գալստեան փրկչին ։

Ի կատարած . սաղմոս 'ի դաւիթ ։

1 Ասաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ ա՟ծ ։ 2 Ա-
պականեցան և պղծեցան յանօրէնութ՟ե իւրեանց . և
ոչ ոք է՝ որ առնէ զքաղցրութ՟ի ։ 3 Տ՟ր յերկնից նայեցաւ յա՟մ
որդիս մարդկան, տեսանել՝ թէ իցէ՞ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ
զա՟ծ ։ 4 Ամենեքեան խոտորեցան, 'ի միասին անպիտանացան ։
5 Ոչ ոք է՝ որ առնէ զքաղցրութիւն . և չէ՛ ոք՝ մինչև 'ի մի ։
6 Ո՛րպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութ՟ի ։
7 Ոյք ուտէին զժողովուրդ իմ՝ որպէս կերակուր հացի . և զ-
տ՟ր ոչ կարդացին ։ 8 Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ իցէ եր-
կիւղ . զի տ՟ր է յազգս արդարոց ։ 9 Զխորհուրդ աղքատի յա-
մօթ արարէք . զի տ՟ր է յոյս ն՟ր ։ 10 Ո՞ տացէ 'ի սիոնէ զփրկութ՟ի
ի՟էլի . 'ի դարձուցանել տ՟ն զգերութ՟ի ժողովրդեան իւրոյ՝ ցըն-
ծասցէ յակոբ, և ուրախ եղիցի ի՟էլ ։

# ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած՝ սաղմոս 'ի դաւիթ.

ՅԵԲՐԱՅԱԿԱՆՆ ՉԻՔ ԲԱՌԻԴ սաղմոս. այլ այս չէ ինչ. իսկ մեր բառիցդ 'ի կատարած և 'ի դաւիթ, տես 'ի նեքածութեան։ Զոր ինչ ասացաք զնախընթաց սաղմոսէ 'ի վերնագրի, զնոյն մարթ է ասել և աստ. իբր զի զայսմանէ ևս ոմանք համարին՝ թէ ասացեալ իցէ 'ի պատճառս հալածմանն սաւուղայ. ոմանք՝ թէ 'ի պատճառս աբեսաղոմայ։ Այլք համարին՝ թէ այս իցէ ասացեալ հայելով 'ի ժմկս եզեկիայ արքայի, և թէ՝ վասն ռափսակայ ասի աստ. * ասայ անզգամն 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ ած ||։ Ոմանք ևս համարին՝ թէ այս ասացաւ հայելով 'ի գերութիւնն բաբելացւոց. քն որում 'ի վերջ սաղմոսիս դնի. * ո տացէ 'ի սիոնէ զփրկութն իէլի, 'ի դարձուցանել տն զգերութիւն ժողովրդեան իւրոյ եա ||։ Բազումք համարին՝ թէ այս սաղմոս իցէ ասացեալ վասն անհաւանութեն հրէից եղելոց 'ի ժմկս քսի և առաքելոց նորա։ Իսկ ըստ այսոցիկ կարծեաց վերնագիր սաղմոսիս յարմարական մեկնութք բացատրի այսպէս. * Սաղմոս ասացեալ 'ի դաւթայ հայելով 'ի կատարած, քն յանցս այնր հալածմանց, կամ գերութե, եա ||։ Կան և բազումք որք համարին՝ թէ բանք սաղմոսիս հայէին 'ի կատարած՝ քն 'ի վիճակ ապականեալ բնութե մարդկան, և յակընկալութիւն գալստեանն քսի։

Այս ամ կարծիք ըստ այլ և այլ տեսութեց համարին հաւանական։ Այլ հաւանականագոյն ևս թուի ասել ընդ բազմաց՝ թէ այս սաղմոս իցէ ասացեալ հայելով 'ի սիրտ անզգամին, և ևս և յապականութիւն մարդկային բնութեան՝ նկատեալ առանց նպաստաւորելոյ յածայինն շնորհաց, միանգամայն ևս հայելով 'ի գերութիւնն բաբելացւոց իբրև յօրինակ գերութե մարդկութեա։ Ըստ այսմ է իմանալ և մեր ծբ սաղմոսի. որ քն ամի նման է սմին, բաց 'ի վերնագրէն։

## Ի Ա. Ն.

ա. Ասոյ անկեալ 'ի սրտի խորոյն, ծեծ ոչ գոյ զծ.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Անզգամ առելով խմանայ առատ զայնպիսի մարդ, որ ըմբռնեալ և զգածեալ է խստա 'ի մոլութիւնս, մինչև չզգել ինչ նմա զանձայինս՝ և չիմանալ իսկ. Եւ այս յայնժամ պատահի մարդոյ, յորժամ անձային ազգարարութեանց ոչ տալով տեղի՝ յօժարի վարիլ ըստ հաճութեան իւրում, և 'ի նոյն կարգել զգործս իւր. որով և հոգի նորա ստանայ ունակութիւն ինչ՝ ոչ ևս անսալոյ անձային ազգարարութեանց, այլ՝ հետևելոյ հաճութեան իւրում։ Այս ունակութիւն յորժամ առաւել հաստատի 'ի հոգին, լինի նմա իբրև թոյն թմրեցուցիչ՝ մինչև ոչ զգալ նմա զյորդորանս խղճի մտաց. կամ թէ լինի իբրև լուռ ասպ՝ որով ոչ տեսանէ զնախախնամութիւն այ, և կամ իբրև որմ թանձր, որ անջրպետէ զնա 'ի հայելոյ առ վերջին վախճան իւր։

Այս վիճակ հասեալ մարդոյ՝ ոչ ևս ճանաչէ, թէ գոյ այ ճշմարիտ՝ կառավար տի։ Զի թէպէտ այսպիսիս ևս ոչ կարէ բացարձակապէս և ըստ ամի ուրանալ զգոյութիւն այ, զի ամ էակք աղաղակեն և յանդիմանն ցուցանեն զնոյն. բայց սակայն երբեմն ևս ուրանայ այնպիսին զած. մի՝ զի ոչ ընդունի, թէ նա կառավարէ զծս՝ ըստ այնմ որ է. իսկ այս չէ ինչ ընդհատ յուրանալոյ զգոյութիւն այ։ Երկրորդ՝ զի ոչ ընդունի՝ թէ նա հատուցանէ իւրաքանչիւրոց ըստ գործոց իւրեանց, այլ թէ եդեալ է զնա ըստ վիճակի անասնոց. ըստ որում ասի 'ի գիրս ժողովողի առել անզգամին. * զինչ առաւելու մարդ քան զանասուն, և ոչինչ ‖. Ժող. Գ. 19. և իմաստ. Բ. 1 = 23. Երրորդ՝ զի ոչ ընդունի թէ այ իցէ այնպիսի՝ ամքի առի լինել. այլ եղական ինչ. և յայսմ մասին խստա մոլորի անզգամն. զի եթէ արդարև եղական իցէ այ, յորմէ է եղեալ. եթէ յայլմէ եղականէ, նա յորմէ իցէ. և եթէ նա ևս

յայլմէ, նա ուստի․ և եթէ յանբաւս ևս գնասցես
յեղականսն և չգուցէ անեղ, անդէն հանապազ եղեալ․
և զի արտաքոյ Ածոյ ոչ գոյ ինչ, անդէն ևս լինելին յայն-
մանէ՝ որ ոչ գոյ․ և զիարդ մարթի լինել, թէ յոչ
գոյից լինիցի ինչ․ Իսկ եթէ Ած ոչ է եղական, ու-
րեմն անեղ է․ եթէ անեղ է, ուրեմն նա է անբաւ էն․
Առ բարւոք իմանալոյ զայս՝ ծանիր, զի 'ի բառդ ա-
նեղ՝ երկու ինչ նշմարի․ * ան, և եղ ‖․ անն հայի առ
ոչինչ․ իսկ եղն՝ հայի առ էն․ ըստ որոյ յայնմ՝ որ է ան-
եղ՝ այնչափ ինչ է՝ որչափ անկախ է յոչնչէ․ և որ-
չափ մին չունի 'ի գոլոյ, այնչափ ունի միւսն 'ի գոլոյ․
և ըստ այսմ որչափ մտածի ոչինչն ըստ տարածութ ոչնչի,
այնչափ մտածի և անեղն ըստ տարածութե էին․ Այլ զի
յոչինչն բացատրաբար է բան անհնութե և տարածութ
յանհունս (զի չիք յոչինչն եզր), սոյնպէս և 'ի յա-
նեղն է դրականապէս անհնութիւն և տարածութիւն
էին յանհունս ըստ անհուն տարածութե ոչնչի․ մինչև
յամս ոչնչութիւնս ձգել․ որով նա որ անեղն է՝ յամի
իշխէ ոչնչի, և առնէ յոչնչէ զամ զոր կամի․ առացի
զամ, զի որպէս կարաց առնել յոչնչէ զայս ինչ և զայն,
զեր զմարդ, զքար, եւն, այսպէս ևս կարէ առնել և
զայլ ինչ և զայլ․ և չիք ինչ յոչինչն՝ որ արգել լիցի
նմա և խափան գործելոյ․ (զորմէ տես և 'ի սաղ․ ծը․ 1․)
Այս տակաւին անզգամն զայս ոչ ընդունի, և զառաջինն
ուրանայ․ Զայս հայելով մարգարէին՝ ասէ․

**Ասաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Ած․** Որ անզգամն
գոլով 'ի միտս իւր ապականեալ, և 'ի կամս իւր չա-
րութբ խառնակեալ, և իբրև թէ նմջեալ 'ի մոլութեան
մահճին՝ իսպառ հեռացաւ 'ի Ճանաչելոյ զԱծ՝ զվեր-
ջին վախճան իւր․ վյ և * ասաց 'ի սրտի իւրում ‖․
Որ հանապազեցաւ յիմարեան, թէ * ոչ գոյ Ած ‖․
Զայս բան եթէ "ոչ գոյ" ասելն՝ առցի արձակապէս 'ի
նշանակել՝ թէ չիք բնաւ Ած ոք, բառդ սիրտ՝ թէ-
պէտև հայի 'ի միտս, բայց ոչ ըստ Ճանաչման իմացա-
կանութե, այլ ըստ Ճանաչման զգայականութե, կամ ըստ
այնմ Ճանաչման՝ որ ըստ զգայութեց ձևաւորի, և հայի
'ի սորին մասն կամաց․ վասն զի որչափ և անզգամ
իցէ ոք՝ ըստ Ճանաչման իմացականութե, ոչ երբէք ասէ
թէ ոչ գոյ Ած ոք․ իսկ ըստ Ճանաչման զգայականութե՝

որ ոչ բերի յապացուցութիւն կարէ ասել. և յայս սակս ոչ դնէ մարգարէն, ասաց անզգամն 'ի մտի, այլ 'ի սրտի.

Այլ եթէ "ոչ գոյ" ասելն առցի ամփոփմամբ իւիք, բառդ սիրտ հայի 'ի միտս ըստ ճանաչման իմացականութեան. և ըստ այսմ այր անզգամ ասէ 'ի միտս իւր՝ թէ ոչ գոյ Աստուած այնպիսի՝ որպիսի ասի լինել, որոյ իցէ խնամ ունել 'ի վերայ մարդոյ, և կամ փոյթ իցէ նմա առնել կամ հատուցանել մարդոյ զբարի կամ զչար. Աստի և ոչ գոյ ասելն անզգամին՝ ոչ հայի յԱստուած գոլն, այլ յայնպիսի Աստուած գոլն. զի որ ուրանայ զհայրն Աստուած՝ թէպէտ և ուրանայ զԱստուած, բայց ոչ ըստ որում Աստուած, այլ ըստ որում հայր Աստուած. ուստի այն ուրացութիւն եղերի 'ի հայրութիւնն և ոչ յԱստուածութիւնն։ Որպէս որ ուրանայ զգոյութիւնն Աստուծոյ, թէպէտև ուրանայ զԱստուած, բայց ոչ ըստ որում է Աստուած, այլ ըստ որում է այնպիսի Աստուած՝ որպիսի ասի. վասն որոյ ուրացութիւնն այն եղերի յայնպիսի գոյութիւն Աստուծոյ, և ոչ յԱստուածութիւն.

Պատճառել յասելն աստ, ասաց անզգամն թէ ոչ գոյ Աստուած, միայն զսիրտն 'ի մէջ բերելով և ոչ զբերանն, որոյ է ասելն, ցուցանէ՝ թէ այսպիսիք ոչ իշխեն բերանով ասել թէ ոչ գոյ Աստուած, այլ սրտիւ միայն, զի ըստ չարութեան սրտի իւրեանց. թէպէտ երբեմն նաև բերանով իսկ ժայթքեն զայսպիսի հայհոյութիւնս. որպէս արարին փարաւոն, սենեքերիմ, նաբուգոդոնոսոր, ռափսակ, և այլն.

Աստանօր երկու ինչ քննել արժան է. մի՝ թէ քանի թշուառանայ մարդ հեռանալով ախտից իւրոց. Երկրորդ՝ թէ որչափ ապականեալ իցէ մարդկայինս բնութիւն 'ի ձեռն սկզբնական և ներգործական մեղաց, մինչև յայսպիսի սահման թշուառութեան և կուրութեան հասանել նմա. զի եթէ 'ի պտղոյ ծառն ճանաչի, ապա և յայսպիսի ժանտ պտղոյ ճանաչի՝ թէ քանի ժանտ իցէ այն ծառ, որոյ է այս պտուղ, այն է ապականեալ մարդկայինս բնութիւն. Եւ զայսմանէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով.

բ. Ապականեցան և պղծեցան յանօրէնութիւնս իւրեանց. և ոչ ոք է, որ առնէ զբարութիւն.

Մարգարէն հայի աստ 'ի բնութիւն մարդկան՝ առանց

չարչարաց նկատեալ․ կամ հայի 'ի մարդիկ ըստ վիճակի հեթանոսութեան․ և կամելով յայտ առնել զթշուառութիւն նոցին՝ առաջի դնէ նախ զապականիլ և զպղծիլ նոցա 'ի ձեռն անօրէնութեան․ և ասէ ։

Ապականեցան և պղծեցան յանօրէնութիւնս իւրեանց ։ Ապականիլն է 'ի լաւութենէ 'ի յոռութի բերիլ․ սոյնպէս և պղծիլն է 'ի մաքրութենէ յաղտեղութի փոխիլ ։ Արդ՝ մարդիկ առ հասարակ թէպէտև 'ի յաղագս ապականեալ և պղծեալ էին, բայց մնացեալ եւս էր 'ի նոսա կայծ ինչ բարւոյ, որպէս ուղղութիւն և լաւութի ինչ լուսոյ բանին, եւս և 'ի հասարակի բաղձանք առ ծայրագոյն բարին, և բերումն ինչ յօժարութեան առ վերջին վախճան իւրեանց․ որով և կարէին և կարեն իսկ առանց մեծային գերբնական շնորհաց միայն հանրական նախախնամութբ նորա առնել զբարի ինչ բարոյական․ որպէս տալ զողորմութիւն, հող տանիլ 'ի վս զաւակաց, հաշտեցուցանել զոք ընդ թշնամւոյ իւրում, զզրկեալն ազատել 'ի ձեռաց զրկողին․ Եւ․ որք յայտ է թէ ոչ են մեղք, այլ բարի ինչ․ բայց ոչ կատարեալ բարի․ զի ոչ կարգին կատարելապէս առ ծայրագոյն բարին ։ Զայս կայծ ուղղութեան և լաւութե, որ արդէն եղծեալ էր 'ի ձեռն սկզբնական մեղաց, գրեթէ իսպառ եւս եղծին մարդիկ ազգի ազգի անօրէնութբք, որպէս այնպիսի մեղօք, որք էին ընդդէմ օրինաց բնութե վս և կրկին ապականէին և պղծէին յանօրէնութեան իւրեանց․ իսկ եթէ գտաւ ոք՝ որ չէր ապականեալ, ամն յոբ և բարեկամք նր, Եւ, այն էր 'ի շնորհացն այ որք տուեալ լինէին յապագայ արդեանցն քի ։ Նշանքզի յիսպառ ապականութե և 'ի դառնութենէ ոչ յառաջ գայ բարի ինչ և կամ քաղցրութի ինչ, մարդիկ եւս իսպառ ապականելով տկարացան 'յառնելոյ զքաղցրութիւն․ և վս այսր յաւելու և ասէ ։

Ոչ ոք է՝ որ առնէ քաղցրութիւն ։ Քաղցրութի ասելով իմանայ զայնպիսի գործս, որ իցէ կատարեալ բարի ամենեւին հաճոյ այ՝ իբրև քաղցր ինչ ախորժելի նմա ։ Զայսպիսի գործ ասէ՝ ոչ ոք առնէ ըստ ապականեալ բնութե իւրում ։ Այլ ծանիր եւս՝ զի եթէ այս բան իբր գանգատօրէն իմասցի, հայի 'ի ձե չարխափանցական ըստ Հարտասանից․ և միտ բանին լինի այս․

այնպէս ապականեալ են մարդիկ անօրէնութեամբք, մինչ գրեթէ ոչ գտանիլ ումեք որ ցուցցէ այլում զքաղցրութիւն, կամ բարի ինչ. այլ կամ յայտնապէս զչարիս գործէ, կամ 'ի ծածուկ որոգայթ լարէ, և կամ փխնկ գթալոյ՝ խիստ բարս ցուցանէ: Յարմարական մեկնութ̃բ՝ այս բան գնի ըստ հետևութեան. իբր զի յանզգամնալ մարդոյ հետևի ապականիլ 'ի վարս. նոյնպէս և յանզգայանալն 'ի խորհուրդս՝ հետևի ապականութիւն գործոց. յոր միտ առեալ ծործորեցուցին 'ի մեկն. մատ. գլ. իդ̃. գրէ. այսպէս. * որպէս ասէ և „ Դաւիթ թէ յորժամ անզգայացաւ 'ի սրտի իւրում, „ ապականեցաւ գործով ||: Ըստ այսմ յարմարութե յաւելն մարգարէին 'ի նախընթաց համարն, * ասաց անզգամն 'ի սրտի իւրում ա͞ծ ||, յայտ առնէ զապականութիւն խորհրդոց անզգամ մարդկան, մինչ 'ի հաւատալիս: Իսկ 'ի յաւելուլն զկնի՝ * ապականեցան յանօրէնութե իւրեանց ||, յայտ առնէ զապականութի կամաց նոցա մինչ 'ի գործսն: Եւ այսմ հետևեցուցանէ՝ թէ * ոչ ոք է որ առնէ զքաղցրութի ||. կամ * ոչ ոք է՝ որ առնէ զբարի ||. Եւ 'ի սոյն իբր վկայ կոչէ զտեսութիւնն ա͞յ, և ասէ.

Գ̃. Տէր յերկնից նայեցաւ յամ որդիս մարդկան՝ տեսանել, թէ իցէ որ իմանայցէ, որ խնդրիցէ զա͞ծ:

Դ̃. Ամենեքեան խոտորեցան. 'ի միասին անպիտանացան:

Նշանակ քեզ յետին աղէտ թշուառութե մարդկայնոյ բնութեան առ հասարակ. մինչև 'ի յորոնել անդ հաստչին՝ ոչ գտանել զմի ոք՝ որ յուղղութե կայցէ, ընդ որ և մարգարէն խռովեալ՝ զարմացմամբ իմն խօսի զայսմանէ յաւելն:

Տէր յերկնից նայեցաւ յամ որդիս մարդկան՝ տեսանել, թէ իցէ որ իմանայցէ, որ խնդրիցէ զա͞ծ: Մարդկօրէն ձևացուցանէ զնայելն ա͞յ. որով ոչ այլ ինչ կամի յայտ առնել, բայց զայս միայն. թէ ա͞ծ տեսանէ և գիտէ՝ զինչ գործին յերկրի, և յինչ բերին մարդիկ. ո՞յք իցեն այսպիսի, և ո՞յք այնպիսի: Եւ սակայն այսու օրինակաւ խօսելով կամի ցուցանել. թէ այնպէս ապականեալ էին

մարդիկ 'ի խորհուրդս և 'ի գործս իւրեանց, մինչ գրեթէ 'ի խնդրել ա՟յ գտանել զոք արդար և բարի, ըստ օրինակի մարդոյ նայիլ 'ի բարձրութե՟ մեծութե՟ իւրոյ. և ո՛չ թէ որոնել զայսպիսիս. այլ խնդրել թէ արդեօք 'ի մէջ այսչափ բազմութեան մարդկան * իցէ ոք իմաստուն ‖. այլ իցէ այնպիսի ոք՝ որոյ խորհուրդն և ճանաչումն չիցէ ապականեալ, այլ՝ մնացեալ ուղիղ. և եւս իցէ ոք, * որ խնդրիցէ զա՟ծ ‖. այլ այնպիսի ոք, որ չիցէ յետս կացեալ 'ի խնդրելոյ կամ 'ի սիրելոյ զա՟ծ, այլ ուղիղ մտօք և յօժարութե՟ սրտի իցէ խնդրող ա՟յ առ 'ի գտանել զնա, և սիրել և պաշտել. Այլ 'ի նայիլն այսպէս յա՟մ որդիս մարդկան՝ ետես, զի ա՟մէքին ապականեալ էին, և ոչ ոք էր՝ որ խնդրէր զնա. Այլ զայս յայտ առնէ 'ի յաջորդ համարն.

Նշանակելի է, զի յասելն աստանօր՝ * իցէ ոք իմաստուն, որ խնդրիցէ զա՟ծ ‖, որն ոչ յարաբերէ զիմաստունն, այլ՝ ըստ դնելոյ մեր այժմ, և զայնպիսի ոք՝ * որ խնդրիցէ զա՟ծ ‖. Այլ այս յայտ է ոչ միայն 'ի թարգմանութենէ այլոց ազգաց, այլև 'ի բանից առաքելոյն, որ այլովք բառիւք որոշակի դնէ զայսոսիկ յասելն. * ոչ գոյ՝ որ իմանայ, (այլ ոչ գոյ ոք իմաստուն). և ոչ ոք է՝ որ խնդրէ զա՟ծ ‖. Հռովմ. Գ. 11. Այլ թէ. պէտ յեբր" անորոշ դնի, բայց 'ի զօրութենէ բանին ուրոշ իմացեալ լինի. որով և ցուցանի թէ 'ի հայիլ ա՟յ յորդիս մարդկան ոչ ետես 'ի նոսա ոչ ճանաչօղ և ոչ գործօղ ըստ հաճոյս իւր.

Գրէ Վարդան, թէ ոչ ասէ աստ մարգարէն, ա՟ծ նայեցաւ, այլ տէր. զի իբրև տէր նայի ասէ յերկնից 'ի դատել. * զի բազմացան չարիք մարդկան. և վերացու
„ գթութիւն նր յանցգանաց, որչափ բարձր են երկինք
„ յերկրէ. որով ամենեքեան ապականեալ երևեցան, և անպիտան գտան. վ՟յ յարէ զկնի մարգարէն, և ասէ.

ԱՄԵՆԵՔԵԱՆ ԽՈՏՈՐԵՑԱՆ, ('Ի ՄԻԱՍԻՆ ԱՆՊԻՏԱՆԱՑԱՆ.) Այսմի ասել. 'ի նայիլ ա՟յ յորդիս մարդկան՝ թէ իցէ ոք իմաստուն, կամ բարեպաշտ, ոչ եգիտ զայնպիսիս 'ի հասարակի. զի * ա՟մէքին խոտորեցան ‖. այլ թէ ա՟մ մարդիկ խոյս ետուն և յետս դարձան յիմաստութենէն ա՟յ, և յուղղութենէ լուսոյ բանին, և 'ի շաւղէ արդա-

ութեան · Մինչ թէ ետուն զթիկունս՝ ք̃ զզգայութիս իւրեանց՝ իմաստութե և արդարութե · և զերեսս՝ ք̃ զմիտս և զկամս իւրեանց դարձուցին 'ի մոլորութիւնս և յանիրաւութիւնս ։ Նոյ կամ ոմն զրէ սարգիս շնորհալի 'ի մեկն · ա̃ · յովհ · դ̃ · 21 · Ձևս է · յորդ · ա̃ւքն զկնի կամաց իւրեանց չարաց գնացին ։ Ըստ որ օրինակ երբեք ք̃ս զմնատակ որդին · ըստ որում մեկնէ
իգնատիոս վ̃րդպ · 'ի մեկն · ղուկաս · ժե̃ · 16 ։

Որդին ա̃յ հայեցաւ 'ի պետրոս , զի և պետրոս հայեսցի 'ի նա · եսես զդեմ , զի և դեմ տեսցէ զնա · իսկ ասա հայեցաւ ասէ յանմն , և ոչ զոք եսես հայեցող
առ ինքն · այլ զա̃նմն եսես խոստովանս յինքենէ ։

Բայց այսպիսի բանք հայրն 'ի բնութիւն մարդկան ըստ ապականութեան մնացեալ , և առանց շնորհաց ասեալ ( որպէս յիշեցաք 'ի համարն 2 · ) զի ըստ այսմ որպէս քարն բնութե̃ բերի յերկիր 'ի վայր , և բնութե̃ ձգի 'ի վեր , այնպէս և բնութիւն մարդկան 'ի գոլն զուրկ 'ի զօրութենէ շնորհաց՝ իբր բնութե̃ բերի առ չարն , և այն խնամով · ( ծնն · ը̃ · 2 · ) իսկ առ բարին՝ բնութե̃ · նաև ըստ այլում համգամանաց՝ յինչևիցէ առիթս դիւրաւ բեկանի · զի որպէս ասի , * ապականեալ չէնք է
կեանք մարդոյ առանց շնորհաց ‖ ։

Ապա եթէ բնութի մարդկան մնացեալ իբրև նորատաւորեալ յանձայն շնորհաց , յայնժամ այս բանք խմնցեալ լինին 'ի հասարակի , և ոչ 'ի մասնաւորի ։ Նա ըստ այսմ յասելն ասա * ա̃ւքն ապականեցան ‖ , բառս ա̃ւքն՝ ոչ պարագրէ զա̃մ անհատս , այլ միայն զմարդիկ 'ի հասարակի · յորոց միջի բազումք էին՝ որք
անխոտոր կացին , կամ 'ի խոտորելն ուղղէին ։

Այնպէս և յասելն 'ի վերոյ և 'ի յաջորդ համարն * ոչ ոք է՝ որ առնէ զքաղցրութի ‖ եւ̃ · բառդ ոչ ոք՝ 'ի բաց առնու զա̃մ , ոչ ըստ ա̃մ անհատից , այլ 'ի հասարակի ։ Բայց զի յորս բ̃ք̃ք խոստովին՝ սովոր եմք 'ի բազումն հայելով՝ ասել ա̃ւքն , և յորս սակաւ , ասել ոչ ոք , զի ամէն ձևացուցանէ մարգարէն զբան իւր · ըստ որոյ ասէ բարսեղ ձ̃ն 'ի մեկն · մարկ · զլ · ժդ̃ · * Ի ժողովս՝ ուր բ̃ք̃ք իցեն՝ ասեմք թէ ա̃ւքն անդ են · և ուր սակաւք՝ թէ չգոյր ոք անդ ‖ ։ Այսմանէ տես 'ի գիրսն կոչեցեալ պատկեր ասնից · ուր բ̃մ ինչ ասացեալ է

իմ յառաջնումն ձայնի. Յայսմ տեղի զխօսումն մար-
գարէին է ցուցանել՝ թէ մարդիկ ՚ի հասարակի խօ-
սելով խառնեալ տատանէին, և ՚ի խառնման անդ
անզգամացեալ էին. սմին իրի յաւելու ասել.

Ի բանին անզգամացն։ Ասաց ՚ի մտասին՝ զնի աստ
ըստ ընդհանրութե. ոչ թէ ասէր, առհասարակ եղեն
անզգամ ա՟յ. զի ա՟ծ զմարդիկ արար առ ՚ի ծառայել
ինքեան և լնուլ բարի, և հասանել ՚ի ծայրագոյն
բարին. Իսկ նոքա մերժեցին զայս բարերարութի՟ նր,
և ծառայեցին ախտից իւրեանց, և յետս կացին ՚ի լը-
նելոյ բարի. վ՟յ և եղեն անզգամ. զի ո՟ր գիրք եղ-
ծեալ կամ անօթ խորտակեալ՝ անպիտան է ո՟ն իւրում,
նոյնպէս և մարդ եղծեալ ՚ի խորհուրդս, և խորտա-
կեալ ՚ի գործս՝ անպիտան է ա՟յ. Արդ՝ յետ առաջի
դնելոյ մարգարէին զապականիլ և զանպիտանանալ
մարդկան, դնէ առաջի և զսկարանալ նոցա առ բարին,
ըստ որում եղ ՚ի համարն 2. վ՟ո որոյ ասէ.

Է. Ոչ գոյ է որ առնէ զքաղցրութիւն. և ոչ գոյ մինչև ՚ի մի.

Ի վերոյ եղ միայն * ոչ ոք է՝ որ առնէ զքաղցրութի ||.
աստ կամելով զառաւելն ևս ցուցանել՝ յաւելու և
զչէն մինչև ՚ի մի՝ ասելով.

Ոչ գոյ է որ առնէ զքաղցրութիւն. և ոչ գոյ մինչև ՚ի մի. Կամի
ասել. մարդիկ յայն վիճակ թշուառութե էին հասեալ
՚ի ձեռն սկզբնական և ներգործական մեղաց, մինչև
ոչ գտանիլ միոյ ումեք՝ որ յիւրմէ առնիցէ զքաղցրու-
թի կամ զբարի ինչ գործ հաճոյ ա՟յ. Իսկ եթէ գտաւ
և գտանի ոք այսպիսի, այն է ՚ի շնորհացն ա՟յ. որպէս
ասացաք ՚ի վերոյ. զորոյ զօրինակն տեսանեմք առ
ժմկօք նոյի. զի հայեցեալ ա՟յ յայնժամ յորդիս մարդ-
կան՝ եւտես, զի առ հասարակ ապականեալ էին, բայց
նոյ ՚ի շնորհացն ա՟յ՝ զոր ընկալեալ էր վ՟ո ապագայ ար-
դեանցն քոի, գտաւ արդար. Սոյնպէս և այլք՝ զոր
ժողովուրդ ա՟յ կոչէ մարգարէն ՚ի համարն 7.

Ո՟ւ գիտելի է, զի ՚ի տպագրեալ ա՟ծաշնչին ոսկա-
նայ՝ յաւելեալ լինին աստանօր և այսպիսի բանք.
* Գերեզմանն բաց է կոկորդ նոցա. լեզուօք իւրեանց
նենգաւորք եղեն. Թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց

նոցա . որոց բերանք անիծիւք և դառնութեամբ լի են . Երագ են ոտք նոցա հեղուլ զարիւն . բեկումն և թշուառութիւն ՚ի ճնպհս նց . և զճնպհն խաղաղութեան ոչ ծանեան . ոչ է երկիւղ այ առաջի աչաց նոցա ||: Բայց այսորիկ բանք ոչ գտանին ՚ի ձեռագիր ածաշունչս , և ոչ յայլ սաղմոս մեր . և ոչ գոն ևս ՚ի բնագիրս եբր" . և ոչ ՚ի մեկնաբանութե քաղդէացւոց . և ոչ յասորիս , և ոչ ՚ի թարգմանութե հերոնիմոսի . և ոչ ևս յընտիր օրինակս թարգմանութեան եօթանասնից . և ոչ ՚ի մեկնութիւնս սրց հարց . այլ միայն ՚ի լատինս , և ՚ի սաղմոս ինչ յունաց ՚ի ոմանս . և զի ոմանս վրջ ՚ի տպագրել զածաշունչն՝ հետևեցաւ լատինականին՝ զայդոսիկ բանս ևս զատեալ ՚ի նմին՝ էառ և եդ անդ : Իսկ թէ ուստի իցեն մուծեալք այսորիկ բանք ՚ի լատինս , գիտելի է , զի առաքեալն ՚ի բերելն զբան 4 , համարոյ՝ այսր սաղմոսի , զայդոսիկ բանսդ ևս կարգաւ յարէ զկնի . հռովմ . գ . 13 : Զայս ընթերցեալ անդ ոմանց՝ ( ոչ առեն լատին մեկնիչք , ) համարեցան՝ թէ այն բանք են հատուած ինչ այսր սաղմոսի . և վասն յաւելլին զնոսին ևս յայս սաղմոս : Բայց որպէս և յայտնի երևի՝ առաքեալն ՚ի զանազան տեղեաց սաղմոսին , ևս և ՚ի մարգարէութէն եսայեայ և յառակաց՝ զպէսպէս բանս ՚ի մի հաւաքեալ՝ ցուցանէ ՚ի գործոց մարդկան զապականիլ մարդկային բնութեան խապառ ՚ի ձեռն սկզբնական և ներգործական մեղաց . և այսմ հետևեցուցանէ ՚ի 22 համարոյ մինչև ՚ի 27 , թէ ՚ի զարմանն այսր ապականութեան հարկ եղև գալ որդւոյն այ՝ առ արդարացուցանելոյ զմարդիկ :

Իսկ թէ յիրաւի յայլևայլ տեղեաց սաղմոսին են այն բանք , յայտ է . վասն զի այն՝ զոր ասէ , * գերեզման բաց է կոկորդ նոցա . լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն ||, գտանի ՚ի Ե . սաղմոսի համար . 10 : և այն բանն՝ * թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց նոցա || . գնի ՚ի սաղ . ճլթ . 4 : և այն բանն՝ * որոց բերանք անիծիւք և դառնութեամբ լի են || . գտանի ՚ի սաղ . Թ . 28 : և այն բանն՝ * երագք են ոտք նոցա հեղուլ զարիւն … բեկումն և թշուառութիւն ՚ի ճնպհս նց , և զճնպհն խաղաղութե ոչ ծանեան || . գնի յեսայ . ծթ . 7 : և առակ . ա . 16 : Իսկ այն յետին բանն՝ * ոչ է երկիւղ այ առաջի

աչաց նոցա ‖ . գնի ՚ի սաղ . լէ . 1 .

Զմեկնութի սոցա բաց յեսայեայն՝ կարես տեսանել յիւրաքանչիւր տեղիս իւրեանց . բայց համառօտիւ ես կամեցեալ մեկնել աստ՝ գիտելի է , զի սոփեստք ցուցանի՝ թէ ամպարիշտք բանիւք և գործովք վնասեն այլոց . Բանիւք , զի իբրև * գերեզման բաց է կոկորդ նոցա ‖ . իբր զի որպէս ՚ի բացեալ գերեզմանէ բուրէ զարշահոտութիւն մարմնոյ , այնպէս և ՚ի բանալ կոկորդաց ՚ի̃ բերանոյ նոցա՝ ելանեն բանք չարք և գարշք՝ բղխեալք ՚ի ներքին ապականութենէ . և ոչ այսչափ միայն , այլև * լեզուօք իւրեանց ասէ նենգաւորք եղեն ‖ . ՚ի̃ նենգութ̃բ խօսեցան առ ՚ի պատրել զայլս . Թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց նոցա ‖ . ՚ի̃ բանք նոցա՝ զորս խօսին շրթամբք իւրեանց , իբրև զթոյն վնասեն այլոց՝ ածելով զն̃ս առ չարն . Նոյն և * բերանք նոցա անիծիւք և դառնութ̃բ լի են ‖ . որով կամի ասել , թէ մ̃ք տեսեալ՝ զի ոչ կարեն վնասել այլոց , անէծս արձակեն ՚ի վ̃ր նոցա , և զդառն վնաս պատճառեն . Նա որպէս պատճառեն , նոյնպէս և ջանան գործովք կատարել . զի * երագք են ոտք նոցա հեղուլ զարիւն ‖ . իբր զի փութան գործով կատարել՝ զոր բանիւք պատճառեն . որով և ջանան սպանանել զայլս ըստ հոգւոյ , կամ ըստ մարմնոյ . Աստի և * բեկումն և թշուառութիւն ՚ի ճ̃հս ն̃ց ‖ . ըստ որում յամ̃ գործս իւրեանց ջանան բեկանել ՚ի̃ եղծանել զայլս , որով և ինքեանք եղծանին և թշուառանան . Նա պատճառ այսպէս առնելոյ նոցա՝ այս է , զի * զճ̃հն խաղաղու̃ե ոչ ծանեան ‖ . ՚ի̃ թէ ոչ գիտացին՝ թէ որով ճ̃հաւնին գտանել զխաղաղութիւն . Կամ ոչ կամեցան գնալ խաղաղութ̃բ , այլ խռովութ̃բ և չարութ̃բ . Նաև զի * ոչ է երկիւղ ա̃յ առաջի աչաց նոցա ‖ . իբր զի իսպառ թողեալ են զերկիւղն ա̃յ . մինչդ թէ ոչ կամին ճանաչել զա̃ծ . ըստ որոյ և ասեն ՚ի սիրտս իւրեանց՝ թէ * ոչ գոյ ա̃ծ ‖ . Իսկ թէ արդեօք այսպիսի մարդիկ՝ որք զհետ են չարութեան , և զայսչափ անօրէնութիս գործեն , կարեն լինել անմեղադիր՝ թէ ոչ , յայտ առնէ մարգարէն ՚ի յաջորդ համարն , և ասէ .

Դ. Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութիւն.

Անօրէնք 'ի գործելն զչար ընդդէմ այլոց՝ թէպէտ և ոչ համարին զայն չար լինել. բայց խիղճ մնայ նոցա ոչ լաւ յազգ առնելոյ՝ թէ չար է՝ զոր գործեն. ուստի և ոչ կարեն ասել՝ թէ անգիտացաք, կամ ոչ ծանեաք. իսկ եթէ համարձակիցին ասել զայս, ցուցմունք իմն յանդիմանէ զնս մարգարէն, ասելով.

Որպէս ոչ ծանիցեն զՏէր՝ որք գործեն զանօրէնութիւն. Կամի ասել. Նոքա ամենքն որք զանօրէնութիւն գործեն, ոչ կարեն անմեղադիր առնել զինքեանս, և պատճառս տալ՝ թէ ոչ գիտէին այնպիսի գործոց իւրեանց լինել անօրէնութիւն. քզի զիա՞րդ իցէ կարելի, թէ նք՝ որք յայտնի անօրինին, ոչ ծանիցեն՝ թէ անօրէնութիւն է՝ զոր գործեն. վն զի եթէ որ ընդդէմ նց գործէր զայնպիսի ինչ, նոքա ճանաչէին. ապա որպէս ինքեանք ոչ ծանիցեն, զոր ընդդէմ այլոց գործեն, մնչ ընդդէմ ժողովրդեանն այ. զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն և ասէ.

Ե. Ոյք ուտէին զժողովուրդ իմ՝ որպէս կերակուր հացի. և զՏէր ոչ կարդացին.

Ժողովրդեամբ խնդրեալ լինին աստ ազգք հրէից՝ որք որոշեցան յայլոց ազգաց լինել ժողովուրդ այ. Մնացեալ լինին և արդարք, յն նք որք 'ի շնորհացն այ զօրացեալ՝ կային յարդարութեան, զի և նք էին ժողովուրդ այ՝ են և պատուական մասունք յեկեղեցւոջ նորա ըստ հին վիճակի, զորս և ազգ արդարոց կոչէ մարգարէն 'ի յաջորդ համարն. և զի ընդդէմ սոցա անօրինէին ամբարիշտք՝ նմանութեամբ իմն ձևացուցանէ մարգարէն զգործ նոցա և ասէ.

Ոյք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի. Այս նմանութի երեք ինչ կամի ցուցանել. Նախ՝ թէ ամբարիշտք սպառել կամէին զժողովուրդ այն. որովհետև որ ուտէ զհաց իբրև զկերակուր՝ սպառէ զայն. Երկրորդ՝ թէ ախորժելի էր նոցա սատակեցուցանել հանապազ զժողովուրդ այն. զի որպէս քաղցեալ մարդիկ թէպէտև հանապազօր ուտեն զհաց, բայց յառաւելն

քաղցնու՝ առաւել ախորժելի ուտել, սոյնպէս և չարք որք հանապազ կամին նեղել զարդարսն յառաւելուլն 'ի չարութեան՝ առաւել ախորժեն ձնշել զնոսա . զի որչափ և ձնշեն՝ ոչ յագին ։ Նոյն՝ թէ գոյլք ժողովրդեան ոն կամին մեծանալ, և մուցանել զանձինս իւրեանց իբրև կերակրովք հացի . ըստ որում տեսանի 'ի քննաւորս, որք ուտեն 'ի գոյից ժողովրդեան . որպէսի էին և նոքա, զորոց ասաց Քս, որք * ուտէք զտունս այրեաց || . մատ . իգ . 14 ։

Օայս բան առաջի դնելով մարգարէին 'ի դիմաց այ՝ կամի ցուցանել, թէ այս գործ անպարշտաց բանական է նոցա՝ զի ծանիցեն, թէ անօրէնութիւն է այն՝ զոր գործեն . զի եթէ ըղէմ անօրէն մարդոյ չար գործել՝ յայտնի անօրէնութիւն է, ապա քանի ևս յայտնի անօրէնութիւն է՝ ըղէմ արդարոց գործել զայն ։ Ուրեմն անպարիշտ մարդիկ՝ որք այնչափ չարիս գործեն ժողովրդեանն այ՝ մանաւանդ արդարոց, և կեղեքեն զնս, ոչ կարեն անմեղադիր առնել զանձինս, և ասել՝ ոչ գիտէաք՝ թէ այն գործք էին անօրէնութիւնք ։

Նոյն՝ թեպէտ ոչ ամքին առնեն զայսպիսի անօրէնութիւն՝ ըստ հալածել զարդարսն, այլ՝ ոմանք զայս ինչ գործելով, և ոմանք զայն, բայց մարգարէն զայս ևեթ յառաջ բերէ . և զայս միայն յառաջ բերելով՝ տայ իմանալ և զայլս . և կամի ցուցանել՝ թէ որք զայսպիսի անօրէնութիւն գործեն, ոչ կարեն լինել անմեղադրելի, նմանապէս և որք զայլ անօրէնութիւնս գործեն՝ ոչ կարեն անպարտ առնել զանձինս իւրեանց ։ Նաև ոչ ևս կարեն ասել՝ թէ մեք տգիտութբ կորացեալ էաք, և 'ի շնորհացն այ զրկեալ . վա և ոչ կարէաք զուղիղն որոշել, և յանօրէնութեանց խորշիլ . վս զի կարէին առ այ ապաւինել, և 'ի նմանէ լոյս խնդրել, և կամ փոխ զայլս կեղեքելոյ, կարէին յայ խնդրել զօրս կարեւոր ճանաչէին . և սակայն ոչ արարին այսպէս . այնմ իրի յարէ դնէ, և ասէ ։

Ա— — զՏր ոչ կարդացին ։ այս է՝ ոչ դիմեցին առ այ . կամ ոչ աղաղակեցին սրտի մտօք առ այ, և ոչ խնդրեցին 'ի նմանէ զօգնութիւն կամ զկարևոր պէտս իւրեանց . մինչ թէ երկեան դիմել առ նա և դնել 'ի նմա զյոյս իւրեանց . թող զի փոխ այնր յուսացան յունայն իրս

և 'ի հաճոյս իւրեանց և յանօրէն գործս ։

Այլ յարմար եւս է զբանդ ոչ կարգայլն՝ առնուլ փոխ ոչ յիշելոյ զԱծ, կամ փոխ ոչ հայելոյ առ Ած. յոր միտս կամի ասել. 'ի կեղեքել անօրինաց զաղքատս կամ 'ի գործել նոցա զչար՝ ոչ յիշեցին թէ վրէժխնդիր է Ած. կամ ոչ կամեցան հայիլ յարդարութիւնն նորա. ուստի և ոչ երկեան 'ի կեղեքելոյ և 'ի չարիս գործելոյ. բայց ունին յետոյ երկնչել և զղջալ. զոր և յիշէ մարգարէն 'ի յաջորդ համարն, և ասէ ։

Ը. ԱՆԴ ԵՐԿԵԱՆ ԵՐԿԻՒՂԻՒ՝ ՈՒՐ ՈՉ ԷՐ ԵՐԿԻՒՂ. ԶԻ ՏԷՐ Է ՅԱԶԳՍ ԱՐԴԱՐՈՑ ։

Ամպարիշտք կուրացեալք 'ի խորհուրդս, և անկարգացեալք 'ի կամս և 'ի գործս իւրեանց՝ ոչ ճանաչեն, թէ յինչ պարտ է յուսալ, և յորմէ պարտ է երկնչել. վ՛ոյ իբրև յիմարք և խելագարք շրջելով յուսան՝ յորս չէ վայել, և երկնչին, ուր չիք տեղի երկնչելոյ. սմին իրի ասէ ։

ԱՆԴ ԵՐԿԵԱՆ ԵՐԿԻՒՂԻՒ. ՈՒՐ ՈՉ ԷՐ ԵՐԿԻՒՂ. Յայս բան եթէ բայդ երկիցեն՝ առցի իբր ստորադասական, կամի ասել. արժան է մարդկան երկնչել անդ, ուր թէև չգուցէ երկիւղ, բայց կարէ կասկածեալ լինել. և յոչ զգուշանալն՝ հասանէ երկիւղն, զի թէ հասանէ երկեցուցիչ վնասն. զի պարտ էր փարաւոնեանց երկնչել 'ի կարմիր ծովէ. բայց զի համարեցան՝ թէ ոչ գոյ անդ երկիւղ, զի թէ չիք անդ տեղի երկիւղի, կորեան 'ի նմին. նոյն եղև և այլոց բազմաց ։

Իսկ եթէ բայդ երկիցեն՝ առցի իբր սահմանականի ներկայ փոխ բայիս "երկնչին", կամ 'ի կատարեալն՝ փոխ գնելոյ երկեան, կամի ասել. են որք յայնպիսի իրս ունին զերկիւղ, յորս չէ արժան երկիւղ կրել. և այս կրկնակի կարէ իմացեալ լինել. մի՝ հայելով յԱծ. Քանզի ամբարիշտք երկնչին գնել զյոյս իւրեանց յԱծ՝ կարծելով թէ գուցէ այնու կրեսցեն զժամանակաւոր վնաս ինչ, կամ թերևս կորուսցեն զհանգիստ իւրեանց, կամ զրկեսցին 'ի մեծէ ինչ բարւոյ. և քանզի յայսմ չիք ամենևին տեղի երկնչելոյ, վ՛նկ ասի զնոցանէ. անդ երկնչին զերկիւղ, ուր ոչ է երկիւղ. յոր միտս յեօթ, և 'ի լատ, և յարաբ, և յեթէոպ, դնի. * անդ սասկացան

երկիւղիւ, ուր ոչ էր երկիւղ ։ Նոքա հայելով յանցաւոր բարիս. զի ամպարիշտք 'ի նոսին յարելով՝ այնպէս դողան զնոքօք, մինչև պատրաստ են կորուսանել զհոգիս իւրեանց՝ վն ոչ կորուսանելոյ զնոսին, փոխ զի պարտ էր նոցա արհամարհել զայնպիսի անցաւորս՝ վն ոչ կորուսանելոյ զանմահ հոգիս իւրեանց. ուստի և ըստ այսմ յորս չէք տեղի երկնչելոյ՝ երկնչին ամպարիշտք. իսկ յորս գոյ տեղի երկնչելոյ՝ ոչ երկնչին ։

Յայս միտ իմանալով և վանական վրդպի 'ի մեկն. յոբ. գլ. Ե. ասէ. * երկնչէր յոբ՝ զի մի կողոպտեսցի 'ի հոգևոր մեծութէն. իսկ որ վն մարմնաւորիս իմանայ, „ զզուշութիւն ոչ ինչ է հարկաւոր. զի մարգարէն ասէ, „ անդ երկիցեն երկիւղ, ուր ոչ իցէ երկիւղ. որ թէ չէ հարկաւոր երկնչիլ անդ ուր ոչ գոյ երկիւղ ։ Նոյս բան կարէ հայիլ և 'ի չար երկիւղ հերետիկոսաց. որք սաբէլեանք երկնչէին դնել զանազանութիւն անձանց, երկնչելով թէ դնի այնու և զանազանութիւն բնութե. և եւտիքեականք երկնչէին դնել զանազանութիւն բնութե, երկուցեալ՝ թէ այնու դաւանին և զանազանութիւն անձանց. ուստի սարգիս շնորհալի խօսելով զսաբէլեանց 'ի մեկն. ա. պետ, ա. Զ. Ճառ ա. առ նոսա վերածէ զայս բան, յասելն. * զանձինս „ մի խոստովանելն, զանազանեալ (միայն) անուամբք, „ անդ երկուցեալ՝ ուր ոչ իցէ երկիւղ. քանզի ասեն, „ անձինք զանազանեալք միոյ բնութեան լինել ոչ կարեն ։ սոյնպէս և եւտիքեականք ընդ հակառակն ։

Որոյպէս հայի այս և 'ի չար երկիւղ այնոցիկ՝ որք 'ի մատչիլն 'ի խորհուրդ խոստովանութեան՝ ծածկելով իմն ասեն քահանայից զմեղս իւրեանց, երկուցեալ՝ թէ խայտառակիլն առաջի նորա ։ Յելանել ապա 'ի սնոտի խոստովանութէ անտի դատափետին և տանջին 'ի խղճէ մտաց, և փոխ մխիթարութե՝ զոր կարէին շահել 'ի խոստովանութէ՝ դառնութի խղճի հասանէ և տագնապէ զնա ։ Քանի բարի լինէր քեզ՝ եթէ ճշմարիտ խոստովանութե առնուիր զվճիռ 'ի քաղցր դատաւորէ՝ քան յետոյ 'ի խիստ դատաւորէ խղճի մտացդ ։ Որչափ օգուտ էր քեզ դատիլ և խրատիլ 'ի խոստովանահօրէ քան 'ի չար խղճէ. * Եթէ ոչ կամիս ամբաստանիլ 'ի խղճէ 'ի ներքուստ, ամբաստա-

նեմ զքեզ 'ի խոստովանութե՛ արտաքուստ ||. * Վկայ լէր քեզ հաւատարիմ առաջի քննչին. և խիղճ մտաց քոց վկայ լիցի առաջի այ զհաւատարիմ վկայութենէ քումմէ ||. Ընդէ՞ր երկնչիս անդ՝ ուր ոչ գոյ երկիւղ, այլ վկայութիւն արդարութեան ։

Յարմարական մեկնութե՛ սոյն այս բան կարէ հայիլ և յերկիւղ աւելորդապաշտից. զի սոքա հաւատալով սուտ նշանաց կամ կռոց կամ մոտի երազոց, և կամ խաւբէական գուշակութեանց, յորս չիք ամենևին նիւթ երկիւղի, երկնչին և սոսկան. որք 'ի շարժիլ արտևանաց կամ յօձից և կամ այլոց անդամոց, յորս չիք տեղի երկիւղի, նոքա երկնչին՝ թէ այս ինչ համդերձեալ է պատահիլ ։ Այլ ևս 'ի տեսանելն յերազի զայս ինչ կամ զայն, երկիւղիւ պաշարին՝ թէ դիպելոց է ինքեանց այսպիսի ինչ չար ։ Այլ դարձեալ 'ի գուշակել խաբէբայ մարդոյ ուրուք, թէ այս ինչ պատահելոց իցէ, սոսկան, և 'ի հաստատել ումեք ստութեամբ՝ թէ յայս ինչ տան դևք բնակին կամ երևոյթք լինին, դողան ։ Իսկ պատճառ այսպէս տագնապելոյ նոցա այն է, զի ոչ երկնչին յայ, և ոչ են յուսացեալ 'ի նա. զի թէ յուսային, աներկիւղ և անդորր մնային. գիտելով թէ ած պաշտպան լինի յուսացելոց իւրոց, և կայ առ նմա իբրև առ իւրոն. ըստ որում վկայէ մարգարէն 'ի մէջ բերելով զարդարս՝ յասելն ։

Զի տէր է յազգս արդարոց ։ Կամի ասել. եթէ մարդիկ զհետ լինէին արդարութեան, և յուսային յած, ոչ երկնչէին անդ՝ ուր չիք երկիւղ. վն զի 'ի նմա և առ նոսա լինէր ած, ըստ որում լինի յարդարսն. յորս 'ի ձեռն շնորհաց իւրոց բնակելով իբրև զիւր ծառայս խնամէ զնոսին և պահէ և պաշտպանէ զնս, և հոգայ վասն նց ։ Այլ կամ ըստ այլոց սաղմոսաց և ըստ լամբ. բնակի 'ի յարկս նոցա՝ օրհնելով զամ գործս նոցին ։ Այլ զի ամպարիշտք տեսեալ զայս՝ փոխ շահելոյ և յած ապաւինելոյ՝ անգոսնեն զարդարսն, և ընդունայն համարին զյոյս նոցա, վն ասէ մարգարէն ։

Թ. Զխորհուրդ աղքատի յամօթ արարէք. զի տէր է յոյս նորա ։

Զբաւդ խորհուրդ՝ խելամտութեան ձևով դնէ աստ

մարգարէն 'ի տեղի այնր՝ յորում է խորհուրդ բարի · ուստի փոխկ ասելոյ, յամօթ արարին զաղքատն՝ յորում էր խորհուրդ բարի, զխորհուրդն առաջի դնէ ասելով ։

Օ զխորհուրդ աղքատի յամօթ արարէք · զի տէր է յոյս նորա ։

Օ այս ասելով զյետին անմտութիւն ամպարշտաց կամի յայտ առնել · որպէս թէ ասէր · այնչափ անմտացան և կուրացան ամպարիշտք, մինչև ոչ միայն համրացան կարդալ առ Աստուած, և երկեան յուսալ 'ի նա, զորմէ խօսեցաւ 'ի վերոյ, այլև արհամարհեցին և ծաղր արարին զայնոսիկ որք այնպէսն առնէին ։ Ուստի և * ըզխորհուրդ աղքատի յամօթ արարին ‖ · այսինքն տեսեալ՝ թէ աղքատն, այս է՝ արդարն՝ որ յաչս ամպարշտաց իբր աղքատ երևի, բարի խորհրդով եղեալ է զյոյս իւր յԱստուած՝ ծաղր առնելով զնա ամաչեցուցին · այսինքն արարին՝ զի երևեսցի ամաչեցեալ և յամօթ եղեալ 'ի խորհուրդս իւր · որպէս թէ ամօթ իցէ դնել մարդոյ զյոյս իւր յԱստուած ։ Իսկ ըստ այսմ՝ այն յետին բան, * զի տէր է յոյս նորա ‖ · կրկնակի յարի 'ի նախընթացն · մի՝ իբր պատճառ ծաղր առնելոյ ամպարշտաց զաղքատն, որպէս թէ ասացեալ էր, պատճառ՝ այսպէս վարելոյ ամպարշտաց՝ այն է, զի համարի և հաւատայ աղքատն, թէ Աստուած է յոյս իւր ։ Իսկ զայս յայտնի տեսանեմք զոր հանապազ յամպարիշտս, որք յիմարութիւն համարին դնել մարդոյ զյոյս իւր յԱստուած · վասն զի յիմարութիւն նոցա որպէս տայ նոցա՝ իմաստութիւն համարիլ՝ դնել զյոյս իւրեանց յայնս, զորս տեսանեն, սոյնպէս և ս տայ նոցա՝ յիմարութիւն համարիլ՝ դնել զյոյս իւրեանց յԱստուած, զոր ոչ տեսանեն ։

Երկրորդ այս բան յարի 'ի նախընթացն միջնորդութեամբ այլոյ իմն բանի · որպէս թէ ասացեալ էր · ամպարիշտք թէպէտ և ջանացան յամօթ առնելով զաղքատն սասանեցուցանել զնա 'ի բարի խորհրդոց իւրոց, բայց ոչ կարացին առնել նմա զայս · * զի տէր է յոյս նորա ‖ ։

Օ այս Աստուած եղեալ մարգարէին՝ բովանդակէ զբան իւր, և ասէ ։

Ժ. Ո՞ տացէ ՚ի Սիոնէ զփրկութիւն Իէլ՟ի. ՚ի դարձուցանել Տ՟ն զգերութիւն ժողովրդեան իւրոյ՝ ցնծասցէ Յակոբ, և ուրախ եղիցի Իէլ՟։

Այս յետին բան հայի յայն ա՟մ, զորս ասաց մարգարէն յայսմ սաղմոսի. յորս և յայտ արար զապականութիւն և զկորուսթի մարդկային բնութե՟ առհ՟րկ սկզբնական և ներգործական մեղօք։ Իսկ այժմ փափաքելով, և գրեթէ աղօթելով մաղթէ առ ա՟ծ՝ առաքել փութով զփրկութիւն Իէլ՟ի յօրինակ ազատելոյ զազգ մարդկան ՚ի թշուառութե՟է իւրեանց։

Ո՞ տացէ (ասէ) ՚ի Սիոնէ զփրկութի՟ Իէլ՟ի։ Ո՞ ասելով ոչ ցուցանէ թէ բաց յա՟յ իցէ ոք այլ՝ որ կարիցէ փրկել, այլ՝ է եղանակ խօսից, որով յայտ առնէ զխղճ՟ սրտի իւրոյ. և կամի ասել, իցէ՞ թէ փութով առաքեսցէ ա՟ծ զփրկութիւն ՚ի Սիոնէ։ Աստանօր եթէ փրկութիւնն հայիցի յազատութիւն Իէլ՟ի ՚ի գերութե՟է բաբելացւոց, բառդ ՚ի Սիոնէ՝ դնի ըստ յատուկ նշանակութե՟՝ փոխ լերինն Սիոնի՝ որ յե՟մ, կամ փոխ ե՟մի. և զայս յայն սակս դնէ, զի որովհետև Սիոն էր քաղաք ա՟յ, անտի յուսային իղձացեալք գտանել զփրկութի՟ ՚ի գերութենէ իւրեանց։

Իսկ եթէ փրկութի՟ն հայիցի յազատութի՟ ազգի մարդկան, բառս "՚ի Սիոնէ՝" դնի ըստ արձակ նշանակութե՟ փոխ եղելոյն ՚ի Սիոն, ո՟ է փոխ ազգին հրէից. յոր միտ կամի ասել. իցէ՞ թէ փութասցի տէր առաքել զփրկութի՟ իւր յազգէն հրէից. զի * Փրկութի՟ ՚ի հրէից է ‖ ասաց ք՟ս. յովհ. դ. 22։ Իսկ ըստ այսմ թէպէտ կարէր մարգարէն դնել՝ ՚ի հրէից, կամ յինէն՝ քան ՚ի Սիոնէ, բայց որովհետև Սիոն էր տեղի ուր երևէր ազգն Իէլ՟ի իբր ՚ի մայր քաղաքս իւրեանց, և զի խոստացեալ փրկիչն գալոց էր ՚ի ցեղէն դաւթի՝ որոյ քաղաք էր Սիոն, վ՟ն փոխ ասելոյ՝ յինէն, ասէ "՚ի Սիոնէ". յոր միտ և եսայի ասէ. * եկեսցէ ՚ի Սիոնէ փրկիչ, և դարձուսցէ զամպարշտութիւնս յակոբայ ‖. Ես". ծթ. 20։

Բայց թէ ընդէ՞ր ոչ ասէ, ո՞ տացէ ՚ի Սիոնէ զփրկութի՟ ազգի մարդկան, զորոց ասաց՝ թէ ապականեալ են խապառ, այլ՝ * զփրկութի՟ Իէլ՟ի ‖, գիտելի է, զի փրկիչն թէպէտև վասն ամ՟ցն եկն, բայց ք՟զի խոստացեալ էր

յազգէն իսրայէլի գալ, նախ և առաւելապէս առ նա կար-
գէր այն փրկութիւն. յոր միտ առեալ քրիստոս ցհեթանոս կենն
քանանացի. * Թոյլ տուր, նախ յագեսցին մանկունք
(այսինքն հրեայք, և ապա հեթանոսք). զի ոչ է բարւոք
առնուլ զհաց մանկանց, և արկանել շանց (այսինքն հեթա-
նոսաց) ‖. մարկ. է. 27 : Նա և՝ թէ * ոչ ուրեք
առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն
իսրայէլի ‖. մատ. ժե. 24 : Նա դարձեալ՝ զի ինքն քրիստոս ան-
ձամբ իւրով 'ի մէջ հրէից երևեալ՝ հրէից քարոզեաց
զփրկութիւն. իսկ առ այլս՝ 'ի ձեռն առաքելոց իւրոց.
և ըստ այսմ՝ այսինքն ըստ անձամբ իւրով քարոզելոյն, գրեթէ
միայն հրէից եղև փրկիչ. իսկ ըստ փրկելոյն՝ ամենայն ազ-
գաց : Նա և՝ ըստ խորհրդոյն՝ թէպէտ քրիստոս 'ի կողմանէ
իւրմէ փրկեաց զամենայն, և վասն ամենայն եւս զանձն իւր 'ի
փրկանս՝ և հատոյց ըստ ամենայնի, բայց իրօք սակաւք եղեն՝
որք առ նա ժողովեցան, և զնա փրկիչ ընկալան. և
քանզի մեք են ժողովուրդ այ, և կոչին նոր իսրայէլ, և կամ
հոգևոր իսրայէլ. յաղագս այսորիկ 'ի սոսա հայեցեալ՝
ասէ * զփրկութիւն իսրայէլի ‖. Նա զի զհետ գայ փրկութեան ցըն-
ծութիւն և ուրախութիւն, ասին իբր յարէ զկնի և ասէ :

Ի դարձուցանել տն զգերութիւն ժողովրդեան իւրոյ. ցնծասցէ
յակոբ, և ուրախ եղիցի իսրայէլ : Որպէս թէ ըստ նկարագրին՝
հայի 'ի դարձ գերութեան բաբելացւոց. յորում ցնծա-
ցաւ յակոբ. այսինքն ցեղն յուդայ և բենիամենի. զի 'ի դար-
ձեալսն անդ բազումք էին 'ի սոցանէ : Նա զի գտան 'ի
նոսա և յայլոց ցեղից, վասն որոյ և ասէ, ուրախ եղև
իսրայէլ :

Ըստ խորհրդոյն՝ ոմանք աւանդեն սուրբ հարք, եւս և ո-
մանք 'ի րաբունեացն հրէից, այս թէ հայի 'ի դարձ
գերութեան ազգի մարդկան 'ի ձեռաց սատանայի. և յայս
միտ կամի ասել. յորժամ առաքեսցէ տէր զփրկիչ, և
դարձուսցէ զազգ մարդկան 'ի գերութենէ, ցնծասցէ
և ուրախասցի նա իբրև ժողովուրդ այ. որ հոգևորա-
պէս կոչի յակոբ և իսրայէլ. զորմէ բազում ինչ գրէ առա-
քեալն 'ի թուղթն առ հռովմայեցիս, 'ի բազում գլուխս,
մանաւանդ 'ի գլ. թ : և առ գաղ. գլ. դ :

Լամբրոնացին զբանս այսր սաղմոսի ծայրէ 'ի ծայր
յայլ իմն միտս վերաբերէ, և մեկնէ այսպէս : (ա) Սա-
տանայն՝ որ է գլուխ անզգամաց, ասաց 'ի միտս իւր՝

թէ ոչ գոյ ած, ոչ զի այնպէս ծանեաւ, այլ զի այնպէս հաւանեցոյց մարդկան. և կամելով արկանել զնա 'ի յուսահատութի յորդորեաց զնա մի յուսալ յած. (բ) զի ամքն դուք, ասէ, ապականեցայք և պղծեցայք մեղօք, և ոչ կարէք առնել բարի ինչ. (գ) Ո՞չ ես նայեցայ 'ի ձեզ յորդւոց մարդկան. (դ). (ե) և տեսեալ՝ թէ խապառ ապականեալ էր, եթող զձեզ. Ընդդէմ այսր յորդորէ մարգարէն 'ի դիմաց այ զազգ մարդկան, և ասէ. (զ) դուք՝ որք անսալով ստնյի՝ զանօրէնութի գործէք, ընդէ՞ր ոչ ճանաչէք՝ թէ ստնյ և դևք նր խաբեն զձեզ, և ոչ թողուն կարդալ առ իս. ո՞չ տեսանէք՝ զի նոքա կամին ոպ զհաց ուտել զձեզ. (է) որպէս և ուտեն զժողովուրդ իմ՝ ցանկալով պարարիլ մեղօք նոցա. ապա մի անսայք նոցա. այլ անսացէք ինձ, և երկերուք յինէն. (ը) Եւ եթէ նոքա բարձին 'ի ձէնջ զերկիւղն իմ, ես արարից՝ զի բնակեսցի 'ի ձեզ այն. և ես ևս բնակեցայց 'ի ձեզ ոպ 'ի յարկս արդարոց. (թ) Եւ թէպէտ դևք զբարի խորհուրդս ապաշխարողին (որ աղքատացեալ գոլով 'ի շնորհաց՝ կամի դառնալ առ ած) ջանան յամօթ առնել՝ ասելով նմա, թէ զիա՞րդ իշխես ապաւինիլ յած՝ որ այսչափ մեղօք աղտեղեալ ես, բայց այսու ոչինչ կարեն առնել նմ, զի տէր է յոյս նր. Զայսոսիկ եդեալ մարգարէին՝ ապա 'ի բերանոյ ազգի մարդկան հառաչէ, և ասէ. (ժ) Իցէ՞ թէ առաքեսցէ ած յերկնից մեզ զփրկիչ, և նա դարձուսցէ զգերութի մեր, և յայնժամ ուրախ եղիցուք ամքին. Եկեսցէ (ասէ լամբ.) և միւս ևս այլ ժմկ, զի երևեսցի փրկիչն յերկրորդ գալստեան իւրում. և ամ իէլ ժղվ ամ ածատեսք՝ (զի իէլ ածատես թարգմանի) ցընծասցեն, և ուրախ եղիցին 'ի նա յաւիտեանս յաւիտենից.

# ՍԱՂՄՈՍ. ԺԴ.

Հանգամանք առն՝ որ ցանկայ բնակել ՚ի լեառն սուրբ, եւս և յարքայութն երկնից, թէ որպէս պարտ է նմա զգուշանալ ՚ի նենգութէ և ՚ի վաշխից, և խօսիլ զճշմարտութիւն, և գործել զարդարութիւն։

Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ։

1 Տէր, ո՞վ կայցէ ՚ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ՚ի
լերանն ս̄բ քո։ 2 Որ գնայ անբիծ, գործէ զարդարու-
թե, խօսի զճշմարտութե ՚ի սրտի իւրում։ 3 Որ ոչ նենգաւո-
րեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում ոչ արար։ 4 Նա-
խատինս ՚ի մերձաւորաց նա ոչ առնու. արհամարհեալ է առաջի
նորա չարագործն։ 5 Զերկիւղածս տն փառաւոր առնէ. որ
երդնու ընկերի իւրում, և ոչ ստէ։ 6 Զարծաթ իւր ՚ի վաշ-
խս նա ոչ ետ. կաշառ ՚ի վերայ անպարտից նա ոչ առնու։ Որ
զայս առնիցէ, նա մի սասանեսցի յաւիտեան։

# ՎԵՐՆԱԳԻՐ.

Ի կատարած. Սաղմոս ՚ի Դաւիթ։

Ի ՐՆԱԳԻՐՍ ԵԲՐԱՅԵՑՒՈՑ և ՚ի քաղդէացիս և ՚ի թարգմանութեան Հերոնիմոսի, եւս և ՚ի բզմ սաղմոսս յունաց, և ՚ի մեկնութիս բզմ մծց հարց, և ՚ի բզմ սաղմոսս մեր, ՚ի վերնագրի աստ ոչ գնի բառս "՚ի կատարած"։ Այլ թէ դիցի, և թէ ոչ, չէ ինչ. տես զայսմանէ ՚ի ներածութն գլ. թ.

Իսկ թէ յինչ հային բանք սաղմոսիս, այլեւայլ կարծիք են։ Առաջին կարծիքն է՝ թէ այս սաղմոս հայի ՚ի փախճան գերութն բաբելացւոց. յոր միտ ումանք

զբառդ "'ի կատարած" անուն ասէ փինկ աւարտման գերութեան. որպէս թէ ասացեալ էր. ո՜վ թէ քանի երանելի իցէ նա, որ յազատիլ 'ի գերութէ անտի, և կամ յայլ ո՛ և իցէ օտարութէ, բնակեսցի 'ի լեառն սիոն, որ յեղիմ. և կատարեսցէ զկեանս իւր ամբծութբ և առանց չարութէ, են: Այլ այս կարծիք, զոր և ոմանք 'ի բարունեայն հրէից պաշտպանեն, նիւթապէս միայն հայի 'ի նկարագրական մեկնութի սաղմոսիս. զի մարգարէն ոչ խօսի աստ ըղձանալով, այլ հարցանելով. և 'ի պլինեն՝ զայնպիսի հանգամանս առաջի դնէ, առանց որոց կարէր ոք բնակիլ 'ի սիոն. վս զի բզմք՝ որք չունէին զայնս, բնակէին անդ յառաջ քն զգերութիւն, եւս և յետ գերութէ.

Երկդ կարծիքն է՝ թէ այս սաղմոս վերաբերի յեկեղեցին՝ եթէ 'ի հին և եթէ 'ի նոր վիճակի մտածեալ. յորոյ սակս յաւուրս տօնից եկեղեցւոյ երգեմք զսա: Եւ ըստ այսմ ոմանք զբառդ 'ի կատարած՝ վերածեն 'ի կատարելութի եկեղեցւոյ. ուր ոչ գոյ նենգութիւն և ոչ անիրաւութի, ըստ ասելոյ սոփոնիայ. գ. 13: և եսայ. իզ. 25: և ա. 26: և կ. 17: և այլոց մարգարէից:

Երրդ կարծիքն է, թէ այս սաղմոս ասացաւ 'ի դիմաց ժողովրդեանն բնակելոյ 'ի սիոն, յորժամ հարան ասորէք 'ի զօրութէ ելելոյ 'ի սիոնէ. յորմէ զարհուրեալ ժողովրդեանն՝ ասացեալ իցէն, տր ո՜վ կացցէ են: Յայս կարծիս է և վարդան:

Չորրդ կարծիքն է, թէ այս սաղմոս հայի 'ի բնակութի արդարոց յարքայութեան երկնից. և ըստ այսմ ոմանք զբառդ "'ի կատարած՝" անուն ասէ փինկ յաւիտենականութէ: Այս կարծիք է հասարակ սբց հարց, ընդ որս և լամբրոնացւոյն: Եւ թէպէտ 'ի վերածականն հայի այս, բայց 'ի կշռել մեր զիւրաքանչիւր բան սաղմոսիս, ստիպիմք և մեք 'ի սոյն կարգել. 'ի մէջ բերելով միանգամայն և զայն որ ըստ ձայնին հայի 'ի խորանն կամ 'ի տաճարն եղիմ:

## ԲԱՆ․

ա․ Տէր ո՞վ կացցէ 'ի խորանի քում․ կամ ո՞վ բնակեսցէ 'ի լեառն սուրբ քո։

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ․

Գիտելի է, զի խորան ա՟ն, (կամ որ նոյն է՝ վրան), որ ը՟ս եբր՝՝ գրի օհէլ, և յունարէն ըսքէնի, շինեցաւ ը՟ս այնմ ձևոյ զոր եցոյց ա՟ծ մովսէսի 'ի ս՟բ լերինն․ ձև նորա էր քառակուսի երկայն․ երեսուն կանգուն՝ յերկայնութի և տասն 'ի լայնութի, և տասն ևս 'ի բարձրութի․ և տրոհիւր յերկուս․ որոց առաջինն՝ որ կոչիւր սրբութիւն, էր քսան կանգուն յերկայն, և տասն 'ի լայն․ և անդ էին երկու սեղանք, սեղանն առաջաւորութե (այն է սեղան հացի երեսաց), և սեղանն ոսկի, ուր մատչիւր խունկ․ անդ էր և աշտանակն ոսկի եօթնաստեղեան։ Իսկ երկ՟դ մասն՝ որ կոչիւր սրբութի սրբութեց կամ սրբութի սբ՟ց, էր տասն կանգնաւ յերկայն, և տասն 'ի լայն․ և անդ էր տապանակ ուխտին։

Զերկոսին զայսոսիկ անջրպետէր վարագոյր ազնիւ կախեալ զչորից սեանց յանփուտ փայտից ոսկւով պատելոց։ Եւ առ դուրս սրբութեն ձգեալ կայր վարագոյր հինգ սիւնակօք յանփուտ փայտից, որք պատեալ էին ոսկւով, և հաստատեալ 'ի վերայ երկու երկու պղնձի խարսխաց։ Յարևմտից, 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ որմունք տախտակամածք յանփուտ փայտից ոսկեպատք, և 'ի պղնձի խարիսխս հաստատեալք․ կողմն արևմտեան ութ տախտակօք, և հիւսիսայինն քսանիւք, նոյնպէս և հարաւայինն․ ամենեքին միաչափք․ 'ի տասն կանգնոյ բարձրութիւն, և 'ի կանգնոյ կիսոյ լայնութիւն․ և իւրաքանչիւրն 'ի վերին և 'ի ստորին ծայրսն ագուցեալ ընդ միմեանս, և 'ի վերայ իւրաքանչիւրոցն հինգ հինգ ոսկեղէն օղք ըստ կարգի, յորս անցուցեալ լինէին ձողք կամ նիգք ոսկեպատք յանփուտ փայտից։ Մուտք խորանին հայէր ը՟դ արևելս․ սրբութի սրբութեցն ը՟դ արևմուտս․

երկոքին կողմանք ընդ հիւսիս և ընդ հարաւ ։

Ի խորանն ընաւին չկայր մուտք արևու. վ՞ն զի քառեակ ծածկութիւք ծածկիւր. առաջինն ազնիւ 'ի ծիրանւոյ և 'ի կապուտակէ. երկրորդն 'ի մազից այծից. երրորդն 'ի շիկակարմիր մորթոյ խոյոց համդերձ բրդովն. չորրորդն 'ի նոյն մորթոյ կապուտակ ներկելոյ ։ Իսկ այս խորան շարժական էր. զի ընդ լուծանել ձողիցն՝ մարթ էր ամփոփել զամ՟ մասունսն. որպէս առնէին որդիքն Իղի 'ի չուս իւրեանց յանապատի ։

Շուրջ զխորանաւն կայր սրահ լայնանիստ քառանկիւնի. հարիւր կանգնոյ յերկայնութիւն, և յիսուն կանգնոյ 'ի լայնութիւն. Ելից. իէ. 9 ։ Զբովանդակ ընդարձակութիւն սրահին պատէին շուրջանակի առագաստք կամ վարագոյրք շարունակեալք և հաստատեալք արծաթապատ սեամբք, արծաթի խոյակօք և պղնձի խարսխօք ։ Յարևմտից կուսէ սիւնք տասն. յարևելից վեց. 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ քսան. և 'ի սեանց անտի ձգեալ էին առագաստքն շարունակեալք ։ Ի մուտս սրահին կայր առագաստ ազնիւ 'ի կապուտակէ և 'ի ծիրանւոյ նկարէն ասղնէգործ քսան կանգնոյ. յորոյ 'ի նեցուկ կային չորս սիւնք արծաթապատք՝ արծաթի խոյակօք և պղնձի խարսխօք ։

Ի նմին սրահի 'ի կողմն խորանին կանգնեալ էր սեղան ողջակիզաց 'ի նուիրել զզոհս ։ Կայր և աւազան կամ աղբիւր 'ի պէտս քահանայից ։ Մինչև ցայս թոյլ տուեալ լինէր մուտ ժողովրդեան առ 'ի պատարագաբեր լինել 'ի սեղանն ։ Ուր և յամենայն առաւօտու և յերեկոյի մատչիւր ողջակէզ 'ի գառանց ։ Որպէս և 'ի ներքս 'ի խորանի յամ՟ առաւօտու մատուցանիւր խունկ 'ի սեղան խնկոցն. և յերեկոյի լուցեալ լինէին ճրագունք շիջեալք ։

Այս խորան համդերձ սրահիւն յօրինեցաւ 'ի սկզբան առ ստորոտով լերինն Սինայ յերկրորդ ամի ելիցն յեգիպտոսէ. և նաւակատիք նորա եղև յառաջնում աւուր ամսեանն առաջնոյ՝ յամի Աշ՟ի 2514. 1486 ամօք յառաջ քան զՔ՟ս, կամ 1490 ամօք յառաջ քան զհասարակ թուականն Ք՟ի ։

Ի չուել որդւոցն Իղի ընդ անապատ՝ յորժամ բանակէին համդերձ այսու խորանաւ, ցեղ առ ցեղ ըստ

կարգի շուրջանակի ունէին զնովաւ տեղի. ( Թուոց. Բ. ) Յուդայ, զաբուղոն և իսաքար ընդ արևելս. Եփրեմ, բենիամին և մանասէ ընդ արևմուտս. Դան, ասեր և նեփթաղիմ ընդ հիւսիս. Ռուբէն, շմաւոն և գադ ընդ հարաւ: Իսկ ցեղն ղևեայ 'ի սպաս տն որոշեալ ունէր զիւր տեղի սահմանեալ 'ի սրահի շուրջ զխորանաւն ըստ չորից դասուց: Մովսէս և ահարոն յարևելակողմն. տունն գերսոնայ յարևմտակողմն. մերարեանք 'ի հիւսիսակողմն. կահաթեանք 'ի հարաւակողմն:

Սոյն այս կերտուած ըստ բոլորին առեալ, զի է սրահն և խորանն որ 'ի նմա միանգամայն կոչիւր տուն տեառն, տաճար այ, և յարկ բարձրելոյ, երբեմն ևս խորան տն, լռ, և այս նաև յառաջ քան զշինութիւն բուն տաճարին. որպ և յայտ է. զի նաև 'ի ժմկս հեղեայ քահանայի և սամուէլի մարգարէի կոչիւր տաճար տն. ընդ հեղեայ ասէ գիրն, թէ * Նստէր աթոռով առ սեամս ,, տաճարին տն ||. Ա. Թագ. Ա. 9: Եւ զսամուէլէ ասէ թէ * ննջէր 'ի տաճարին տն. ուր էր տապանակն ,, այ ||. Ա. Թագ. Գ. 3: Եւ զծնողաց նորա ասի, թէ * մուծին 'ի տուն տն 'ի սելով ||. Ա. Թագ. Ա. 24:

Այս տուն տն թուի թէ ոչ մնաց 'ի նմին որպիսութե, գոնէ առագաստք սրահին. այլ կամ նորոգութբ փոփոխեցաւ. և կամ իսպառ հնացեալ բարձաւ. և մնաց միայն խորանն. և ուր զետեղեցաւն՝ տեղին այն տուն տն կոչեցաւ, կամ տաճար տն:

Արդ այս խորան նախ զետեղեցաւ 'ի սելով. որպէս յայտ է 'ի վերոգրելոցդ. և ապա 'ի գաբաւոն. որպէս տեսանի. Ա. Մնաց. ԺԶ. 39: Յետ ժմկց մինչդեռ 'ի կարիաթարիմ էր տապանակն տն՝ շինեաց դաւիթ հանգոյն առաջնոյն և զայլ տուն 'ի սիոն լեառն, և անդր եած զտապանակն, ( Բ. Թագ. Զ. 17: ) Թողեալ զխորանն հին 'ի բամին՝ որ 'ի գաբաւոն հանդերձ սեղանով ողջակիզաց. որոյ 'ի սպաս կարգեաց զսադովկ քահանայ և զեղբարս նորա զքահանայսն. ( Ա. Մնաց. ԺԶ. 39: ) Իսկ 'ի սիոն կարգեաց 'ի սպաս նորոյ խորանին զաբիաթար քահանայ հանդերձ այլովք քահանայիւք և ղևտացւովք հազարաւորօք: Եւ եդ 'ի խորանի անդ զսեղանն խնկոց, և զսեղանն ա-

ռաջաւորութեան համադերձ աշտանակաւն յայնմ բաժնի խորանին՝ որ կոչիւր սրբութիւն. իսկ զտապանակն եդ յայնմ բաժնի՝ որ կոչիւր սրբութի՟ սրբութեանց, Եւ յայնմ հետէ այն տեղի եղև յատուկ տուն ա՟յ և տաճար տ՟ն մինչև 'ի շինութիւն տաճարին Սողոմոնի: Եւ 'ի նոյն եղանելին երբայեցիք ամի ամի, և մատուցանէին զզոհս և զայլ պատարագս:

Իսկ թէ ը՟դէր զՍադովկ քահանայ եթող 'ի Գաբաւոն, ծանիր, զի ասի թէ երկու էին յայնժամ քհ՟նյապետք Սադովկ և Աբիաթար. և Դաւիթ առ 'ի բառնալոյ զխռովութի՟ն՝ որ կարէին ծագել 'ի մէջ նոցա, զՍադովկ կացոյց 'ի Գաբաւոն, և զԱբիաթար 'ի Սիոն 'ի պաշտօն նորոյ խորանին և տապանակի տ՟ն: Յայս խորան հայելով, ասէ:

Տէր ո՛վ կայցէ 'ի խորանի քում. կամ ո՛վ բնակեսցէ 'ի լերան ս՟բ քո: Յասելն ասա՝ * ո՛վ կացցէ ||, ոչ ցուցանէ՝ թէ զայսպիսի ինչ իցէ հարցեալ մարգարէն ց՟ա՟ծ, և 'ի նմէ առեալ զպ՟նի. այլ՝ է եղանակ խօսից, որով կամի յայտ առնել զկատարելութի՟ կամ զարժանաւորութիւն կալոյ 'ի խորանի տ՟ն, և բնակելոյ 'ի լեռան ս՟բ նորա: Եւ զայս կամելով զօրագոյն 'ի մէջ բերել հարցականապէս առաջի դնէ և ասէ:

Տէր ո՛վ կայցէ 'ի խորանի քում, կամ ո՛վ բնակեսցէ 'ի լերան ս՟բ քո: Կամի ասել, ո՛վ արժանի իցէ կալոյ 'ի խորանի քում յանդիմանն քո Տէր, կամ ո՛րպիսի պարտի լինել նա՝ որ սպասաւորել կարիցէ քեզ 'ի տաճարի քում՝ որ 'ի լեռան Սիոն. որպէս թէ ասէր. սրբո՟ւ մեծ խնդրի յայնմ՝ որ յանդիման լինիցի ա՟յ 'ի տաճարի նորա առ 'ի պաշտօն մատուցանել նմա. և զի որք հանապազ պաշտէինն անդ՝ 'ի նմա բնակէին, վ՟նկ բնակիլ ևս դնէ:

Հոգևորապէս ըստ վերածական մեկնութեան խորանաւ իմանայ աստ զանձեռագործ խորանն արքայութեան, զոր առաքեալն կոչէ, * խորան ճշմարտութե՟. զոր տ՟րն „ կանգնեաց, և ոչ մարդ ||. եբր. ը. 2: Եւ այս կրկնակի կարէ իմացեալ լինել, ա՟յ ը՟ տեղւոյն և ըստ ժառանգութե՟ն. ըստ տեղւոյն իմացեալ լինի վայրն այն՝ որ է 'ի վերոյ քան զա՟մ երկինս. և կոչի երկինք երկնից. ա՟յ երկինք 'ի վերայ այլոց երկնից. ուր սքանչելի երևի փառքն ա՟յ 'ի սուրբս իւր և 'ի հրեշտակս. վ՟յ և

կոչի արքայութի՟ այ՟, կամ արքայութի՟ երկնից ։

Ըստ ժառանգութե՟ն՝ իմացեալ լինի վերջին երանութի՟ մարդոյ, այն է տեսութիւնն այ՟, որ կարէ այլաբանիլ 'ի խորան կամ 'ի վրան. զի խորանն է այնպիսի բնակարան, ուր դադարին՝ որք 'ի բացի օթագային. և ք՟զի որք արժանանան տեսութե՟ն այ՟՝ 'ի բացէ լինելով յամենայն տառապանաց՝ դադարեն 'ի նմա իբրև 'ի ծայրագոյն և 'ի վերջին երանութե՟ իւրեանց, ըստ այսմ նմանութե՟՝ այն տեսութի՟ կարէ այլաբանիլ 'ի խորան. զի եթէ առաքեալն այլաբանէ զայն յերկինս. (բ՟. կոր. ժբ. 2.) կարէ ևս այլաբանիլ 'ի խորան այ՟. յոր միտ թուի թէ առէ յովհաննէս աւետարանիչ 'ի յայտ. իա՟. 3. * աՀաւասիկ խորանն այ՟ 'ի մէջ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա ‖ ։

Այնպէս և * լեառն ս՟ր ‖, ասելով մարգարէին իմանոյ զնոյն. բայց լեառն կոչելով կամի յայտ առնել զբարձրութիւն նորին. զորմէ և բ՟զմ ինչ գրէ առաքեալն. եբր. ը՟. և թ. և ժբ՟ ։ և յովհաննէս աւետարանիչ 'ի յայտ. ժդ. իա ։

Ընդ՝ Հարցանէ մարգարէն, թէ ո՞վ արդեօք արժանի իցէ կալոյ յայն խորան այ՟, և բնակելոյ յայն սուրբ լեառն ։ Իսկ կրկին բանիւք զնոյն Հարցանելով կամի յայտ առնել զառաւելութիւն փափաքմանց իւրոց, և զստուգութիւն յաջորդ բանիցն. որպէս և առնէ 'ի սաղ. իդ. 3 ։

Այլաբանօրէն խորան այ՟ կոչի եկեղեցի, ըստ որում ած՟ բնակի 'ի նմա իբրև 'ի տաղաւարի իւրում. կոչի և լեառն այ՟ ս՟ր, զի է բարձրացեալ ած՟ային խորհրդովք, ևս և իմաստութ՟բ, և սրբութ՟բ. և կարգեալ առ գերագոյն վախճան ։ Տաճարն այ՟ ևս կոչի խորան՝ ոչ միայն վ՟ն՝ զի ըստ այժմու վիճակի ած՟ մարմնով բնակի անդ 'ի ձեռն Հաղորդութե՟, այլև զի նոյն ինքն ած՟ մասնաւոր իմն օրինակաւ բնակի 'ի նմին իբրև 'ի տան, ևս և իբրև 'ի գործիք սրբելոյ զՀոգիս մարդկան 'ի ձեռն խորհրդոց և պաշտամանց ։

Իւ ըստ այսմ յասելն սաս ով ելցէ՝ ցուցանի բարձր լինելն եկեղեցւոյ. ուստի գէորգ վ՟դպ մեկնելով ըղբանն եսայեայ գրէ այսպէս * Բարձր է (եկեղեցի)... „ քան զերկնայինսն, և զա՟յ փառս տեսանէ. իսկ

„ զի զեռևս մարգարէս առակաւոր կոչմամբ լեառն
„ ա՟ծ ասէ զեկեղեցի, մի՛ ինչ զարմանար. զի մերթ
„ բանս և մերթ խիտ զմարգարէութիւնն. զի խիտ֊
„ լոյն զարթուցէ զլսօղսն 'ի միտ առնուլ զառակօք
„ ասացեալն լեառն ա՟ծն. և բանալոյն կարկեցէ ըղ֊
„ հրէական վիճաբանութիւնն՝ որ վասն առակօք ասա֊
„ ցելոյն ||։

Նորոյապէս, լեառն ոք կոչի կատարելութիւն վարուց առն արդարոյ, բարձրացեալ երկնային իմաստութ՟բ, և խորամնացեալ կամ սեղմնացեալ հրով ա՟ծային սիրոյ. թէպէտ և ըստ զգայութեանց բազմօք վրդովեսցի, նմանեալ վեսուվ լերին, որ 'ի ստորոտս ունելով ըղձիւն՝ 'ի վերոյ բոցբոցի։

Արդ՝ յետ հարցանելոյ մարգարէին՝ թէ ով իցէ արժանի բնակելոյ 'ի սիոն՝ կամ վերածաբար յարքայութ՟ն երկնից, և կամ այլաբանօրէն՝ ով իցէ արժանի՝ լինելոյ սպասաւոր եկեղեցւոյ, և կենդանի տաճարի 'ի սուրբ լերինն՝ ք՟ս յեկեղեցւոջ, նա, պ՟խնի տայ, և ասէ։

Բ. Ո՛Ր ԳՆԱՅ ԱՆԲԻԾ. ԳՈՐԾԷ ԶԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ. ԽՕՍԻ ԶՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ 'Ի ՍՐՏԻ ԻՒՐՈՒՄ։

Այս բան յերեսին ասացուածոյ բովանդակէ համայն ուղղութ՟ի վարուց. վասն զի առ 'ի ունել մարդոյ զուղիղ կեանս ըստ ինքեան կշռեալ, հարկ է, զի ազատ իցէ 'ի բծէ մեղաց, և ունիցի զգործ բարի. ընդ նմին և զուղիղ խորհուրդ 'ի սրտի իբրև ուղղիչ այսոցիկ։ Վ՟ս ազատ լինելոյ 'ի մեղաց ասէ։

Ո՛Ր ԳՆԱՅ ԱՆԲԻԾ։ Այսինքն, որ կեայ անբիծ վարուք, առանց գործելոյ զմեղս՝ կամ առանց բծի մահուչափ մեղաց. զի ներելիքն համեմատութ՟բ մահուչափ մեղաց՝ ոչ համարին յատկապէս բիծ, այլ արատ կամ վէրք։

Խօսի ապա և վ՟ս ունելոյ զգործ բարի՝ և ասէ։

ԳՈՐԾԷ ԶԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ։ Որով ցուցանէ մարգարէն՝ թէ սոսկ չունելութ՟բ մեղաց, և կամ սոսկ հաւատով ոչ է հնար հասանել յայն լեառն սրբութեան. այլ պիտոյ է գործել և զարդարութիւն, ք՟ս զայնպիսի գործս՝ որ իցէ ուղիղ, բարի, և հաճոյ ա՟յ. զի արդարութեամբ իմացեալ լինի աստ այսպիսի գործ, կամ բովանդակութիւն առաքինութեանց. ըստ որոյ ասէ գէորգ վ՟դպ 'ի

մեկն . եսայ . * արդարութ՛ն զբոլոր առաքինութիւնսն
ասէ ‖ ։ Զայս եդեալ՝ խօսի և վասն ունելոյ զուղիղ խոր-
հուրդս և ասէ ։

Խօսի զճշմարտութիւն 'ի սրտի իւրում ։ քն խորհի 'ի սրտի ,
և խորհելով իբրև թէ խօսի 'ի միտս իւր զճշմարտու-
թ՛ն . քն զայնպիսի խորհուրդս , որ է ճշմարիտ . այս
է՝ համաձայն ուղիղ բանի և Ածային օրինաց ։ Եւ
այս է արմատ և ուղղիչ ամ բարի գործոց . զի 'ի խոր-
հիլ մարդոյ ուղիղ՝ ըստ նմին վարելով գործէ ուղիղ . և
'ի խորհիլն թիւր՝ ըստ նմին վարելով գործէ թիւր ։
Եւ յիրաւի՝ ( որպ ասէ լամբրոնացին ) * Մ՝եծ է այս
քան զամ՝ զխորհուրդն մաքուր պահել . զի թէ այս
ճշմարիտ լինի ( 'ի ներքս ) , ամն ուղղի ( առ արտաքս ) ‖ .
ըստ որում ասաց քս * մարդ բարի 'ի բարի գանձուց
սրտի իւրոյ հանէ զբարիս ‖ . մատ . ժբ . 35 ։ Ի յայպի-
սիս ժառանգէ և զբազում փառս . որպ ասէ ծործորե-
ցին 'ի մեկն . մատ . գլ . ժզ . * որ գնայ անբիծ , գոր-
„ ծէ զարդարութիւն , խօսի զճշմարտութ՛ն , զերեսուն
„ փառսն ժառանգէ . զհոգւոյն , զբանին , և զմարմ-
„ նոյն ‖ ։

Զայսոսիկ եդեալ մարգարէին՝ կամի սքեմբք յայտ
առնել , թէ որ այսպէս գնայ առաջի այ , նա միայն
արժանապէս կացցէ 'ի խորանի նր ։ Եւ թէ այս այսպէս
իցէ ասէ լամբ . ապա այսպիսի լինել արժան է և պաշ-
տօնէից եկեղեցւոյ , որ է խորան այ , և և ամցն՝ որք
բնակին յեկեղեցւոջ ։ Եւ արդ՝ քզի ոչ է բաւական
մարդոյ յինքեան եւեթ լինել անբիծ և բարի , այլև
առ ընկերն , զայսմանէ և կարգաւ խօսի մարգա-
րէն , և ասէ ։

Գ . Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով . և չար ընկերի
իւրում ոչ արար ։

Ի յառ բանիւ զերկուս չարիս հեռացուցանէ յարդա-
րոյն . մի՝ որ բանիւ կատարի . և միւս ևս՝ որ գոր-
ծով ։ Վն առաջնոյն ասէ ։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով ։ քն ոչ խօսեցաւ ոչ
զընկերէն և ոչ առ ընկերն զայնպիսի բանս՝ որ իցէ
սուտ , կամ խաբեբայ , կամ կեղծաւորեալ , կամ բամբա-
սական , կամ բան քսութե , և կամ զայնպիսի բանս՝ ո-

րով ընկերն պատրեալ անկանիցի յորոգայթ մեղաց՝ կամ վնասու . զի այս է նենգութիւն չար՝ աղաւաղիչ սիրոյ, և որ չարագոյնն է, և տարագրիչ յարքայութէ՛ն երկնից . * Նենգութիւնն (ասէ լամբ՟) սիրոյ քակ-
,, տիչ է, և ատելութե՛ն ուղղիչ . արդ՝ եթէ սիրեն
,, զմիմեանս ածէ զմեզ յերկնային խորանն, յիրաւի
,, որ հակառակ է նմին, նենգութիւնն՝ արտաքս ձգէ ‖ : Ըստ սմին է և մատնութիւն ընկերին . յորմէ քակտի բարեկամութիւն . որոյ վ՟ս և հեթանոսք զգուշանան . մինչև ումանց դնել և զկեանս 'ի վտանգի քան լինել մատնիչ : Պատմի 'ի քրոնիկոնս, թէ արմոդիոս և արիստոգիտոն իշխանք սպանին զհպարքոս բռնաւոր աթենացւոց . և ապա բռնադատեցին զղէենա աղխ՟ ասել զդաշնաւորս նորա, և զի նք՟ ծանօթ էին ինքեան՝ ոչ կամեցաւ ասել . և 'ի տոկալն՝ * իւրովի զիւր լեզուն կտրեաց ‖ . զի մի ասիցէ զայն . որով եցոյց թէ առաւել կամէր չունել զլեզու ք՟ 'ի չարիս ունել : Խօսի ապա մարգարէն և վ՟ս երկրին, և ասէ :

Ս՟ — չար ընկերի իւրում ոչ արար : Այսինքն զայն ինչ որ է չար, և կամ արգելեալ յօրինաց, ոչ արար ընկերի իւրում : Որ ընկեր ասելով իմանայ զո՛ և իցէ մարդ, թէ՛ հաւատացեալ իցէ՝ և թէ անհաւատ, թէ՛ չար իցէ՝ և թէ բարի : Եւ այս է գործ մարդոյ բարւոյ . զի որ բարի է՝ նաև չարին բարի առնէ, և ոչ չար . և 'ի վնասին՝ փոխ վրէժ խնդրելոյ՝ դարման մատուցանէ, հանգոյն անդամոց . զի յայտ է թէ անդամ յանդամոյ ոչ խնդրէ զվրէժ՝ թէև վնասեսցի 'ի նմանէ . 'ի խածանել ատամանց զլեզուն, ոչ հանէ մարդ զատամունսն . զի մի երկու լիցի վնասն՝ ք՟ լեզուի և ատամանց : Յայս յորդորիմք և 'ի գրոց . * մի ումեք (ասէ) չարի զչար հատուցանէք ‖ . հռոմ . ժբ . 17 . և առակ . իդ . 29 : այլ * շնորհել միմեանց, ո՟պ և ա՟ծ քսիւ շնորհեաց մեզ ‖ . եփես . դ . 31 : եզեկ . լա . 34 : մատթ . ժը . 35 :

Եւ ես յաւէտ կամիլ զրկիլ՝ քան զրկել, և առաւել հաձիլ յաղթիլ քան յաղթել . * Պիտեմ (ասէ բար-
,, սեղ վ՟րդ . 'ի մեկն . մարկ . գլ . թ . ) զի ոչ ո՟պ յե-
,, րևելի կռիւսն այնպիսի ինչ և սուտ իցէ . զի անդ թէ
,, չզգեստնիցես՝ չյաղթեսցես, և աստ թէ չզգեստնի-

,, ցես ( չհատուցանելով զչար ) , յաղթես || : Այսպիսի այր բարեպաշտ՝ ոչ միայն չհատուցանէ չար այլում, այլեւ ոչ կամի թէ այլք այլոց արասցեն կամ տասցեն չար , եւ կամ յինքեանս եւս լինիցին չար կամ վատթար :

Զայս հայելով մարգարէն յարէ զկնի եւ ասէ :

Դ . Նախատինս 'ի մերձաւորաց նա ոչ առնու . արհամարհեալ է առաջի նր չարագործ :

Բնական իմն է մարդոյ ախորժանօք բերիլ 'ի լուր պակասութե այլոց կամ բամբասական բանից . զի այնու իբրեւ թէ ծածկեալ տեսանէ զպակասութիւն իւր . եւ ոչ եւս տագնապի այնչափ 'ի խիղճ մտաց իւրոց՝ յայլս եւս նշմարելով զայն՝ զոր յինքեան կրէ : Իսկ սակայն այր առաքինի՝ որ չար ընկերի իւրում ոչ առնէ , ոչ ախորժէ զայսպիսի ինչ լսել զնմէ . սմին իրի ասէ :

Նախատինս 'ի մերձաւորաց նա ոչ առնու : Այսինքն ոչ ընդունի զնախատական բանս 'ի մերձաւորաց , այս է 'ի վր մերձաւորաց . որ է ասել , ոչ ընդունի 'ի լսելիս իւր զնախատական բանս , կամ զբամբասական զրոյց , կամ զպակասաւոր խօսս , եւ կամ զտրտունջս զասացեալս զմերձաւորաց . կամ ոչ հաւատայ յօժարութբ եւ յանդգնութբ այնմ՝ որ չարիս խօսի զմերձաւորաց . յոր հայի եւ բանն այն , որ գրի 'ի գիրս ելից . իգ . 1 . * համբաւ սուտ մի ընդունիցիս || : Իսկ այս է իբր բնական օրէնք , յորս ասէ Նարեկացին 'ի բանն . կ . * չառնուլ նախատինս 'ի մերձաւորաց օրէնք են || :

Լամբրոնացին զայս բան 'ի հոգեւոր միտս առեալ՝ մերձաւորօք իմանայ զխղճմտանսն . եւ մեկնէ այսպէս . այն մարդ ասէ , * որ ոչ նախատի 'ի խղճէ մտաց , որ
,, զամ շաւիղս մեր քննեալ ճանաչէ , արդարեւ արժա-
,, նի է երկնից խորանացն . ըստ որում գրեացն յովհան-
,, նէս , սիրելիք յորժամ սիրտք մեր ոչ ստգտանեն
,, զմեզ , համարձակութիւն ունիմք առ նա || : Ընտիր է այս մեկնութի ըստ հոգեւորին , այլ միտ բանին բնաբանի . զի այս բան՝ * Նախատինս 'ի մերձաւորաց ոչ առնու || . ոչ նշանակէ ասել , ոչ նախատի 'ի մերձաւորաց , այլ՝ ոչ լսէ , կամ ոչ առնու յանձն լսել եւ խօսիլ զնախատինս զմերձաւորաց կամ 'ի վր մերձաւորաց . եւ կամ ըստ թարգմանութե այլոց՝ ընդդէմ մերձաւորաց . եւ

ոչ միայն ընդդէմ բարի մերձաւորաց, այլև ոչ ընդդէմ չարաց. յոր միտ յարէ զկնի և ասէ ։

ԱՐՀԱՄԱՐՀԵԱԼ Է ԱՌԱՋԻ ՆՐ ՉԱՐԱԳՈՐԾ ։ Այս բան չորեքկին յարի 'ի նախընթացն. մի՝ ըստ անփոյթ լինելոյ կմ ըստ ոչ դատելոյ ինչ արդարոյն զչարագործութե ամպարշտաց. որպէս թէ ասէր. 'ի լսել արդարոյն զնախատական բանս զչարագործաց՝ թէ նոքա զայս ինչ և զայս ինչ իցեն գործեալ, արհամարհէ. այլ ոչ անսայ, և ոչ դատէ զնս. զի՞ պիտոյ է ինձ ասէ դատել զայլս. ո՞ կացոյց զիս դատաւոր այլոց. ո՞ եմ ես, զի դատեցից զայլոյ ծառայ. եա ։

Երկրորդ՝ ըստ ոչ կենցաղավարելոյ ընդ չարագործս. որպէս թէ ասէր. արհամարհելի է նմա կենցաղավարել ընդ այնոսիկ, որք գործեն զչար. զի մի և ինքն ընդ նս միաբանեսցի ։ Եւ յայս միտ ասէ մարգարէն յայլում սաղմոսի. * որ ամբարտաւան էր աչօք և ագահ սրտիւ, ընդ նմա և զհաց ոչ ուտէի ‖. սաղ. ճ. 6 ։

Երրորդ՝ ներգործաբար, ըստ ատելոյ արդարոյն զչարն և զչարագործն. որպէս թէ ասէր. արդարն ոչ միայն ատէ և արհամարհէ զչարիս, այլև զչարագործս, ոչ ըստ անձանց նց, այլ ըստ չարագործութե նոցին. յոր միտ ասէ մարգարէն 'ի վերոգրեալ սաղմոսի. * որք առնէին զանօրէնութի, ատեցի ‖ ։ Ըստ այսմ արհամարհեաց սամուէլ զսաւուղ ( ա. թագ. ժե. 16 ։ ) և եղիսէ մարգարէ զյովրամ թգր իղի ( դ. թագ. գ. 14 ։ ) և մուրթքէ զհամանն ( եսթ. գ. 2 ։ ) և նոյն ինքն քս զհերովդէս՝ անարժան համարելով զնա պատասխանւոյ ( ղուկ. իգ. 9 )

Չորրորդ՝ կրաւորաբար, ըստ պատկառելոյ չարագործաց յերեսաց արդարոյն. ըստ որոյ կամի ասել. չարագործն տեսեալ զկեանս արդարոյն՝ ոչ համարձակի տեսանել. զի արհամարհելի երևի առաջի նր. կամ զի մի արհամարհ համարիցի ։ Յոր միտ ասէ մարգարէն 'ի նոյն վերոյիշեալ սաղմոսի. * ոչ մերձեցաւ առ իս՝ որ թիւրն էր սրտիւ. խոտորեալ յինէն անզգամին՝ և ես ինչ ոչ փոյթ առնէի ‖ ։ Իսկ հայելով յարդարսն՝ ասէ ։

Ե. Զերկիւղածս տն փառաւոր առնէ. որ երդնու ընկերի իւրում, և ոչ ստէ։

Զայս բան յաւելու մարգարէն առ 'ի ցուցանել զկրկին ազնուութիւն արդարոյն՝ յատելն ոչ զչարն, և յառնել զբարին. ըստ առաջնոյն ոչ միայն չկամի գործել զչարն, այլ և ոչ կամի յայլս տեսանել զնոյն. զորմէ խօսեցաւ 'ի նախընթաց համարն։ Ըստ երկրորդին՝ ոչ միայն մեծ համարի գործել ինքնին զբարին, այլ որք գործեն զայն երկիւղիւն այ, փառաւորէ. վսյ ասէ։

Զերկիւղածս տն փառաւոր առնէ։ որ զայնոսիկ, որք երկնչին 'ի տնէ, և զպատուիրանս նորա պահեն, այնչափ մեծ համարի արդարն և պատուական, մինչև փառաւորել զնս և գովել և պատուել՝ բանիւ և գործով։ Եւ ըստ ասելոյ լամբրոնացւոյն, * Նոցա լինե
,, լով փառաւորիչ՝ յայտ առնէ այ զկամս սրտի իւրոյ,
,, թէ 'ի նոյն ախորժէ շաւիղս՝ կացուցանել զոտս. և
,, նա՝ զի մարդասէր է, տայ նմա զբաղձալին ||։ Զայս եղեալ մարգարէին՝ յաւելու խօսիլ և զհաւատարմութէ բանից և գործոց այնպիսւոյն. և նախ զբանիցն խօսելով՝ ասէ։

Որ երդնու ընկերի իւրում, և ոչ ստէ։ որ 'ի ստիպել հարկին՝ երդնու արդարն ընկերի իւրում. և այս՝ կամ 'ի վր անցեալ իրի, թէ այս այսպէս է. և կամ 'ի վր ապագայ իրի, թէ այսպէս առնելոց է. և յերդնուլ իւրում՝ ստէ ինչ ոչ խառնէ. զի եթէ 'ի վր անցելոյ է, որպ ճանաչէ և գիտէ՝ այնպէս ասէ, և այնպէս լինել հաստատէ. իսկ եթէ 'ի վր ապագայի է, զոր ինչ երդմամբ հաստատէ, կատարէ. և ընդդէմ երդման իւրոյ ինչ ոչ առնէ։ Եւ թէպէտ պատշաճ ևս է՝ բնաւ ոչ երդնուլ, ըստ որում խրատ ընկալաք 'ի քէ. մատ. Ե. 34. բայց սակայն երբեմն հարկն ստիպէ երդմամբ հաստատել զայն՝ զոր խօսի մարդ ստուգութբ. որպէս արարին բզմ անգամ նահապետք և մարգարէք, ևս և առաքեալք, ըստ որոյ և պօղոս ուրեք ուրեք երդմամբ հաստատէր՝ զոր խօսէր. * Այլ ես (ասէ) վկայ զած կոչեմ անձին իմոյ ես || . բ . կոր . ա . 23 . և ժա . 31 . և հռոմ . Թ . 1 . և յայլ տեղիս։ Եւ

'ի հին օրէնս հրամայի հատուցանել տն զերդմունսն . ( մատ . Ե . 33 . ) որով իմացեալ լինի կատարել զերդումն . կամ թէ երդնուլ յած , եւ ոչ 'ի կուռս . որպէս մեկնէ եզնակ կողբացի 'ի գլ . հդ . յասելն . * Հատուցջիր տն զերդմունս քո . քս յիս երդնուցուս՝ որ կենդանի եմ, եւ մի 'ի կուռսն՝ որք ոչ են կենդանի ∥ ։
տես զայսմանէ 'ի մեկն . մատ . Ե . 33 = 37 ։

Արդ՝ մարգարէն զայս բան յառաջ բերելով ոչ կամի ցուցանել , թէ արդարն 'ի յերդնուլն եւեթ պահէ զհաւատարմութի . այլ թէ զոր ինչ խօսի ընկերի իւրում, ճշմարտութբ խօսի . եւ այնչափ հաւատարիմ է յայսմ , մինչ նաեւ 'ի լինել հարկին՝ երդմամբ եւս հաստատէ զայն . եւ ոչինչ իւիք ստէ՝ ոչ 'ի պարզ խօսիլն , եւ ոչ 'ի յերդնուլն ։

Մարթ է եւս ասել, թէ զայս խօսի մարգարէն հայելով թերեւս 'ի սովորութիւն եբրայեցւոց . վն զի նոքա կարի իմն յօժարեալ էին յերդնուլ . իսկ յաճախութի երդման ածէ զմարդն 'ի ստերդմնութի ։ Ուստի եթէ ոք 'ի նչէ բնաւ ոչ ստիցէ յերդնուլն , այն մեծի հաւատարմութե նշան է 'ի նմա ։

Լամբրոնացին զայս բան վերածէ առ առաջնորդս եկեղեցւոյ եւ առ քահանայս՝ եւս եւ առ կրօնաւորս . սոքա ասէ ուխտիւք կամ երդմամբ վերամամ յայս գերագոյն վիճակ . վս պարտին հաւատարիմ լինել յայնմ, եւ ոչ եղծել զուխտ իւրեանց՝ չկատարելով զայն ։ Սոյնպէս եւ ամ քրիստոնեայք՝ որք երդուեալ են յաւազանին մկրտութեան առ քս՝ որ եղեւ ընկեր մեր , պարտին պահել զերդումն իւրեանց , եւ ոչ ստել ։ Արդ՝ յետ առաջի դնելոյ մարգարէին զհաւատարմութի բանից արդարոյն՝ առաջի դնէ այժմ եւ զհաւատարմութիւն գործոց նր . եւ ասէ ։

Ժ . Զարծաթ իւր 'ի վաշխս նա ոչ ետ . կաշառս 'ի վերայ անմեղաց նա ոչ առնոյր ։ Որ զայս առնիցէ , նա մի սասանեսցի յաւիտեան ։

Գտանելի է , զի այլ է 'ի վարձու տալ զարծաթ , եւ այլ է 'ի շահու տալ ։ Իսկ նոցա տարբերութիւն յայսմ է . զի որ 'ի վարձու տայ զարծաթ իւր , վաշխիւ տայ զայն . յոր միտ յեբր" վաշխ դնի . եւ այս է անիրաւ , եւ արգե-

լեալ յօրինացն ա՟յ. ( ո՟պ աւանդի եզեկ. ժը. 8. և 13. և բ. օրին. իգ. 19. և ղևտ. իե. 37. և ելից. իբ. 25. և առակ. իը. 8. ) Իսկ որ 'ի շահու տայ, ոչ տայ վաշխիւ, այլ՝ առ 'ի շահեցուցանել առողին և տուողին. և այս ոչ է արգելեալ յօրինաց. Ըստ որում ուսուցանէ և հասարակ սովորութիւնն այն, որ գտանի յա՟մ ազգս քրիստոնէից.

Այլ թէ երբ լինի վաշխիւ տալ զարծաթ իւր այլում, և երբ շահիւ, գիտելի է, զի յորժամ ոք ումեք փոխ տայ զարծաթ, եթէ վ՟ փոխ տալոյն պահանջէ 'ի նմէ զայսչափ ինչ դրամս, կամ յամին՝ 10 դահեկան վ՟ հարիւր դահեկանի՝ իբր շահ տուեալ փոխոյն, այնպիսին վաշխիւ տայ. և պարտական է յետս դարձուցանել զայն անիրաւ շահսն. Վ՟ զի որ փոխ տայ այլում ըզդրամս, զտ՟րութին նց՟ ևս տայ նմա. և նա լինի տ՟ր դրամոցն այնուհետև. իսկ արդ՝ ա՟մ ինչ ըստ իրաւանց՝ տ՟ն իւրում պտղաբերէ, և ոչ այլում. Ուրեմն այն դրամն 'ի փոխ տուեալ՝ ոչ տայ շահս տուողին, այլ՝ առողին. և եթէ կորիցէ ևս, առողին կորնչի, և ոչ տուողին.

Իսկ որ տայ այլում զդրամս 'ի շահու, ո՛չ տայ նմա 'ի փոխ. այլ՝ տայ նմա այսու պայմանաւ, զի 'ի գործ ածցէ զայն՝ որո՛վ օրինակաւ և իցէ. և զորս շահի՝ 'ի շահուցն տացէ նմա զայսչափ ինչ դրամս. և եթէ այն դրամ կորիցէ առանց խարդախութե՟ կամ անզգամութե՟ առողին, կորնչի տուողին, և ո՛չ առողին. զի տուօղն է տ՟րն. իսկ առօղն է միայն 'ի գործ ածօղ. Այլ եթէ առօղն մսխեսցէ, և կամ յայլ ինչ ծախեսցէ, և կամ իւրով անհոգութ՟բ և հեղգութ՟բ ոչ ինչ շահեսցի, այն մնասի իբր ըստ պատահման. զի կարէր շահել. ըստ որում և շահելոց էր տուօղն. և ոչ շահիլն իւր՝ ոչ կարէ իբր պատճառ բերել առ 'ի ոչ վճարել տուողին զպայմանեալ շահն.

Այլ խնդրեցես. եթէ ոք առնուցու յումեքէ դրամս՝ ո՛չ վ՟ շահեցուցանելոյ, այլ՝ վասն ծախելոյ 'ի պէտս տան իւրոյ, կամ վ՟ ստանալոյ գիւղխանութի, կամ վասն վարելոյ զպաշտօն ինչ, եւն. 'ի տալն զշահ վ՟ առեալ դրամոցն՝ այն շահ համարիցի վաշխ.

Պատասխանեմ. եթէ առօղն ունիցի՝ զայլ ինչ, որով այլուստ շահի, և կամ թէև ոչ ունիցի՝ բայց հասանելով յիշխա-

նութիւն, կամ վարելով զպաշտօնն՝ շահելոյ է․ թէ և ոչ շահեսցի՝ տուեալ շահն ոչ համարի վաշխ․ վասն զի՝ առեալ արծաթն այն համարեալ լինի իբրև նիւթ շահելոյ զդրամս, թէ՛ վասն տուողին՝ և թէ վասն առողին․ զի թէպէտև ոչ անմիջական, բայց միջնորդութեամբ այնր արծաթոյ ծնանի շահ։

Իսկ եթէ առօղն իցէ աղքատ, և միայն վասն շինելոյ կամ վասն ապրելոյ առնու զդրամն, շահ առնուլն 'ի նմանէ վասն այնր դրամոյ՝ է վաշխառութիւն․ զի այն դրամ ոչինչ իւիք կարգի 'ի պտղաբերել։ Այլ կամ պարտ է տալ զայն այսպիսեաց իբրև ողորմութիւն, և կամ տալ իբրև փոխ, ակնունելով՝ թէ յունիլ նոյն զդրամս հատուսցեն առանց շահու, և կամ ևս առանց ակնունելոյ՝ թէ առնուցու ինչ 'ի նմանէ։ Առ որ յորդորէ Տէրն՝ ասելով․ * տուք փոխ, ուստի ոչ ակն ունիցիք առնուլ ‖․ Ղուկ․ Զ․ 35։ Զի * եթէ (ասէ) տայք փոխ այնոցիկ, յորոց ակն ունիցիք առնուլ, ո՞ր շնորհ է ձեր․ քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի անդրէն առցեն զկշիռն ‖․ (նոյն այլ թամամ)։

Ասացելոցս զհետ գայ ‖ թէ ոչ է դատապարտելի արհեստն լումափոխութեան կամ սառաֆութեան, այլ մանաւանդ հարկաւոր 'ի դիւրութիւն քաղաքացեաց․ զի 'ի լինել հարկաւորութեան դրամոյ՝ 'ի պատրաստի ունելով զոր-ւօղն՝ առնուն անտի․ և նոքին շահեալ՝ վճարեն նմա զպայմանեալ շահն, միայն թէ այն շահ իցէ օրինօք․ և մի իցէ աւելի քան զհասարակականն․ և մի առցի ևս գրաւ շահաւոր․ և մի դիցի դաշն ինչ անօրէն․ և մի ևս առցի շահ վասն մնացեալ շահուն․ և դարձեալ՝ մի տացի այնպիսի դրամ, որ իցէ պակասաւոր յոյժ։ Յայսմ ամէ՝ զոր ասացաք, յայտնի լինի մեկնութիւն առաջին հատուածոյ բնաբանիս․ ուր ոչ դնէ մարգարէն՝ 'ի շահու տալ, այլ 'ի վարձու՝ յասելն։

Զարծաթ իւր 'ի վաշխս ոչ ետ։ Այսինքն զարծաթ իւր կամ զդրամս՝ զոր ունի, վաշխիւ ոչ տայ այլոց․ կամ ոչ տայ զայն 'ի փոխ հանդերձ շահիւ։ Արդ՝ յետ խօսելոյ մարգարէին զվաշխառութենէ, խօսի և զկաշառակերութենէ ասելով։

Կաշառ 'ի վերայ անպարտաց ոչ առնու։ Կաշառն է ընծայ, որ տուեալ լինի ումեք առ 'ի յիւր կողմն ձգել զնա․

ո՞վ զի նա եթէ իշխան է կամ դատաւոր՝ ինքեան տացէ զիրաւունս. և եթէ իցէ այլ ոք՝ զիւր կողմն ջատագովեսցէ, թէ և ընդդէմ իրաւանց իցէ այն: Նաև եթէ ոք յիշխանաց կամ՚ի դատաւորաց և կամ յայլ ո՛ և իցէ վիճակի եղեալ անձանց՝ առնուցու զայսպիսի ընծայս կամ տուրս՝ դիտմամբ պաշտպանելոյ զկողմն նորա, կաշառառու համարի, և մեղանչէ: Այսպիսի կաշառառուս եթէ ըստ ցուցանելոյ իրաւանց պաշտպանեսցէ զկողմն կաշառատուին՝ թէպէտև մեղանչէ վասն առնլոյ զկաշառ, բայց ոչ պարտաւորի առնել հատուցումն ինչ: Ապա եթէ ընդդէմ իրաւանց պաշտպանեսցէ զկողմն կաշառատուին, ոչ միայն մեղանչէ չարաչար, այլև լինի պարտական առնելոյ զհատուցումն միւս կողմանն: Նաև եթէ ՚ի հոգևոր իրս իցէ, պարտի դարձուցանել և զկաշառն: Այլ թէ քանի չա՛ր է այսպիսի կաշառ, կարես տեսանել ՚ի ս՟բ գիրս բ՟զմ ուրեք. (Ելից. ի՟գ. 8: բ՟. օրին. ժ՟զ. 19. և ի՟է. 25: յոբ. ժ՟ե. 34. և լ՟զ. 18: առակ. ժ՟ե. 27. և ժ՟է. 23. և ի՟թ. 9: եսայ. ա՟. 23. և ե՟. 23. և՟ն.) Որդ՝ ասէ. արդարն զայսպիսի կաշառ * ոչ առնու ՚ի վ՟ր իրաւանց ‖. ո՟րպ ոչ առնու կաշառ վ՟ս առնելոյ զիրաւունս. կամ ոչ առնու զընծայս առ ՚ի առնել զեղծումն ինչ շուրջ զիրաւամբք, կամ առ ՚ի առնել ինչ ՚ի վեր ք՟ զիրաւունս. որ է ասել, ընդդէմ իրաւանց:

Հոգևորապէս՝ զարծաթ իւր ՚ի վարձու ոչ տայ, և կաշառ ոչ առնու պաշտօնէայն եկեղեցւոյ կամ վ՟ճպ ոք, յորժամ (ը՟ լամբ՚՚) զքանն ա՟յ ոչ վաճառէ լողաց՝ ո՛չ դրամովք, ո՛չ փառօք, և ո՛չ այլով իւիք. և ոչ ևս առնու ակն՝ աչառանօք խօսիլ, կամ թիւր վարդապետել: Զայս ա՟մ եդեալ մարգարէին՝ հետևեցուցանէ, և ասէ:

Որ զայս արասցէ, նա մի՛ սասանեսցի յաւիտեան: Այս բան է իբր բովանդակութիւն վերոյասացելոցն. որով և կամի ցուցանել, թէ նա որ առնէ զայս ա՟մ, զոր ասացի, * մի՛ սասանեսցի յաւիտեան ‖: Բառս յաւիտեան՝ դնի երբեմն փ՟ոխ երկար ժ՟մկի, կամ փ՟ոխ տևողութ՟ե մինչև ՚ի կատարած կամ մինչև ՚ի մահ. յոր միտ ասաց աննա մայր սամուէլի. ա՟. թագ. ա՟. 22. * յորժամ „ հատուցից զդա ՚ի տէնէ. և յանդիման լիցի առա-

„ ջի տ՟ն (՚ի տաճարի ն՟ր), և նստցի անդ մինչև ցյա-
„ ւիտեան ‖ ։ Ի՟մ անգամ ես դնի փ՟նկ անվախճան
տևողութեան ։ Ըստ սկզբնաբար առեալ լինի ը՟ն առաջ-
նոյն, և եր՟կդաբար ըստ եր՟կդին ։ ո՟չ թէ եղեալ էր ։
որ զայս արասցէ՝ այնպիսին մի վտանգեսցի ։ այլ յա-
պահովլի կացցէ ՚ի խորանին տ՟յ, և բնակեսցի ՚ի լեառն
ս՟բ ն՟ր առանց իրիք կասկածանաց սասանելոյ կամ ան-
կանելոյ յայնպիսի երջանիկ տեղւոջէ՝ մ՟ինչ՟նդ յարքայ-
ութէ ։ ուր զմայլեսցի տեսութե՟ն տ՟յ յաւիտեան ։

Օ այսուիկ ասաց և եսայի ։ զի յետ հարցանելոյ, թէ
* ո՞ պատմեսցէ ձեզ զտեղւոյն յաւիտենից ‖ ։ տ՟ր զար-
քայութէ երկնից ։ և թէ ո՞վ իցէ նմին արժանի, յա-
րէ զկնի, և ասէ ։ * որ գնայ արդարութե՟ ։ խօսի զու-
„ ղիղ ճ՟պհէ ։ ատեայ զանօրէնութի և զանիրաւութի ։
„ թօթափէ զձեռս իւր ՚ի կաշառոց ։ ծանրացուցանէ
„ զականջս իւր առ ՚ի չլսելոյ զդատաստան արեան ։
„ խնու զաչս իւր, զի մի տեսցէ զանիրաւութի ։ նա
„ բնակեսցէ ՚ի բարձրային վիմին հաստատնոյ, (տ՟ր
„ յերկինս) ։ հաց (ուրախութե) տացի նմա, և ջուր
„ (ապահովութե) նորա հաւատարիմ ։ զթ՟գրն փա-
„ ռաց տեսցեն աչք (հոգւոյ) ն՟ր ։ (և աստէն) տես-
„ ցեն զերկիրն ՚ի հեռուստ ‖ ։ եսայ ։ լգ ։ 15 ։

Բարոյապէս՝ որ զքրիստոնէական առաքինութի՟ն կա-
տարէ, և զախտս իւր նուաճէ և ՚ի վ՟ր նոցին թ՟գրէ,
նա յ՟ն և իցէ փորձութե՟ց մի սասանեսցի ։ այլ կացցէ
հաստատուն և խաղաղացեալ ։ և ՚ի վախճանի կենաց
իւրոց՝ հասցէ ՚ի լեառն սուրբ յերկինս ։ և բերկրեսցի
անդ թագաւորելով և զմայլելով յաւիտեանս յաւի-
տենից ։ Արդարև * թ՟գր առնես դու տէր՝ զ՟մն,
„ որք հաճոյ եղեն քեզ ։ (ասէ երանելին խոսրով ՚ի
„ մեկն ։ ժամագր ։ 226 ։) և որք թագաւորեցին ՚ի վ՟ր
„ ախտից ՚ի կեանս յայսոսիկ ։ և իշխանաբար սպանին
„ ՚ի հոգիս իւրեանց զհեշտասէր բարս, և զընդու-
„ նակս մեղաց ։ և զարուական բարեզարդութիս քա-
„ ջապէս ապրեցուցին, զայսպիսիսն ընդ քեզ թա-
„ գաւորեալ պսակես ՚ի հանդերձեալ և յանվախ-
„ ճան կեանսդ յաւիտենական փառօք ‖ ։

# ՍԱՂՄՈՍ ԺԶ·

*Բանք աղօթից առ Տծ 'ի դիմաց Քսի, ևս և 'ի դիմաց առն արդարոյ, խնդրելով զպաշտպանութի 'ի նեղութե · միանգամայն և յայտարարութիւն հաճութե կամաց 'ի ժառանգութեն Տյ, և ցոյցք ոչ հաճելոյ 'ի խորհուրդս մարդկան : Գ̄նծլ և մարգարէութիւնք վս յարութեն Քսի և փառաց Նր ·*

Արձանագիր 'ի Դաւիթ :

1 Պահեա՛ զիս Տր, զի ես 'ի քեզ յուսացայ · ասացի Տն, Տր
իմ ես դու · և բարիք իմ ինչ 'ի քէն են : 2 Սրբոց որոց՝
որ են յերկրի նորա, սքանչելի արարեր զամ կամս իմ 'ի նոսա :
3 Յաճախեցին հիւանդութիւնք նոցա, յետ այսորիկ արագ վազ-
վազեցին : 4 Ո՛չ ժողովեցայց 'ի ժողովս նոցա յարեանց, և ո՛չ
յիշեցից զանուանս նոցա 'ի շրթունս իմ : 5 Տէր բաժին ժառան-
գութե իմոյ և բաժակի իմոյ՝ դու ես, որ այսրէն դարձուցա-
նես զժառանգութիւն իմ յիս : 6 Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս,
և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ : 7 Օրհնեցից զՏր՝ որ ի-
մաստուն արար զիս · մինչև 'ի գիշերի ևս խրատեցին զիս երիկա-
մունք իմ : 8 Յառաջագոյն տեսանէի զՏր առաջի իմ յամ ժամ,
զի է ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց : 9 Վսն ուրախ եղև
սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ · ևս և մարմին իմ բնակեսցէ
յուսով : 10 Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ո՛չ տա-
ցես սրբոյ քում տեսանել զապականութիւն : 11 Ծանուցեր ինձ զճա-
նապարհս կենաց · լցուցեր զիս ուրախութեամբ յերեսաց քոց · 'ի
քաղցրութե վայելչութե քոյ մինչև իսպառ :

# ՎԵՐՆԱԳԻՐ.

## Արձանագիր 'ի դաւիթ.

Ի ՍԱՂՄՈՍՍ ԻՆՉ ՄԵՐ յաւելեալ լինի սոյն բառս տողիս. և դնի այսպէս. * արձանագիր սաղմոս 'ի դաւիթ ||. կամ * յարձանագիր սաղմոս 'ի դաւիթ ||. և յոմանս. * սաղմոս յարձանագիր 'ի դաւիթ ||. և յոմանս ևս՝ որք և 'ի վարդանայն. * Ի կատարած, սաղմոս յարձանագիր 'ի դաւիթ ||։ Իսկ յընտիր ձեռագիրս դնի ՟Ը վերոյգրելոյդ։

Արդ արձանագիրն է արձան ունօղ գգիր, կամ նշնա գիր գրեալ յարձանի, կամ 'ի վիմի, որ մեծի իրիք գործոյ. որ որ յաղթութե, որ աւերման, որ մահու ևն. և ըստ այսմ նշանակութե վերնագրիս բացատրի այսպս. Սաղմոս աւանդեալ 'ի դաւթայ՝ գրեալ յարձանի. և կամ սաղմոս դաւթի արժանի գրելոյ 'ի վր արձանի։ Ոի գուցէ ըստ ասելոյ ոմանց՝ այս սաղմոս որ մշտնջենաւոր յիշատակի գրեցաւ 'ի վր վիմի կամ արձանի. և վնկ եդաւ 'ի վերնագրի սորա՝ * արձանագիր 'ի դաւիթ ||։ Այլ այս չէ յայտ։

Ի բնագիրս եբրայեցւոց փոխ բառիս արձանագիր՝ դնի միխթամ. զոր բազումք բազում օրինակաւ առաջի առնեն. ոմանք 'ի նորոց թարգմանեն՝ սաղմոս։ Յօթանասունք թարգմանեցին. * ստորագրութիւն քանդակեալ յարձանի 'ի դաւիթ ||. և այս նոյն է ընդ մերումս. սոյնպէս դնի և 'ի քաղդէացին, և յայլս բզմս։ Ի լատինս դնի. * գրութի վերտառութեան ինքեան դաւթի ||։ Ի նոր թարգմանութիս նոյն դնի. * ոսկեգիր երգ դաւթի ||. և յոմանս՝ * սաղմոս գրեալ դաւթի ||։ սոքին ևս նոյնանան ընդ մերումս։ Իսկ 'ի թարգմանութեան ակիւղասայ, սիւմաքոսի, և հերոնիմոսի դնի. սաղմոս * խոնարհ և անմեղ դաւթի ||. կամ սաղմոս * խոնարհութե դաւթի ||։

Այս ամենայն տարբերութիւնք ծագին 'ի մթութէ եբրայական բառին, զոր որպէս ասացաք՝ այլ և այլ օրի-

նակաւ իմանալով թարգմանչաց , այլ և այլ օրինակաւ երգեն . Մեք ևս համարեցաք , թէ այն բառ եբրայ-ական , որոյ փոխան դնի 'ի մեզ "արձանագիր" , նշա-նակէ զգործի ինչ սաղմոսելոյ , և կամ զնուագարան . բայց այս չէ այնչափ ստոյգ . Տես զպայմանէ 'ի ներ-ածութեն . գլ . Ծ .

Իսկ թէ այս սաղմոս երբ ասացաւ , կամ յինչ առթէ՝ ոչ է յայտ . Հաւանականագոյն կարծիքն է , թէ յոր-ժամ պանդխտացեալ էր դաւիթ 'ի սահմանս փղշտաց-ւոց և մովաբացւոց 'ի հալածմանն սաւուղայ՝ ասաց զայս , հայելով 'ի պանդխտութիւն յայն՝ զոր պանդխտ-տացաւ որդին այ 'ի վր երկրի 'ի մէջ մարդկան , ևս և 'ի փառաւոր յարութին նր .

Առաջին մասն այսր կարծեաց՝ այն թէ զայս ասաց դաւիթ 'ի հալածիլն , թէպէտ և չէ ամենևին ստոյգ , բայց չէ ևս հեռի 'ի ճշմարտութէ . Իսկ երկդ հատ-ուածն՝ այն թէ զայս ասաց հայելով 'ի պանդխտա-նալ որդւոյն այ , կամ հայելով 'ի քս , ցուցանի 'ի բա-նից առաքելոյն պետրոսի . որ զչորս համարս այսր սաղմոսի՝ 'ի 8 , համարոյն՝ մինչև 'ի վերջն 'ի մէջ բե-րեալ 'ի գործս առաքելոց . բ . 25 . հաստատէ , թէ այնորիկ 'ի դիմաց քսի ասացան , և թէ միայն յիւ պատշաճին , և ոչ այլում . Զնոյն ցուցանէ և սբն պօղոս 'ի նոյն գործս առաք . ժգ . 35 . և ձեռնար-կութբ ևս հաստատէ . Իսկ եթէ այն չորս տունք այսր սաղմոսի միայն քսի պատշաճին , ապա և ամ բանք սորա առ նա հային . զի այս սաղմոս՝ մի մաղթանք է առ ած . Իսկ յայս միտ՝ բառս "արձանագիր" եդեալ 'ի վերնագրին՝ այլաբանօրէն կարէ մեկնիլ 'ի վր քսի . իբր թէ այս սաղմոս իցէ ասացեալ կամ գրեալ 'ի վերայ վիմի , քն 'ի վր քսի՝ վր յաղթութն և յարութն նր .

Իսկ քանզի իւրաքանչիւր արդարք կամ հաւատացեալք քսի՝ են անդամք նորա , բանք սաղմոսիս նց ևս յարմա-րին , թէ 'ի հասարակի , և թէ 'ի մասնաւորի . ուրեք ուրեք տիրապէս և անմիջապէս , և ուրեք ուրեք յար-մարաբար և հետևապէս . Սպ տեսցի 'ի մեկնութն . Զայս մի ինչ ևս արժան է ծանուցանել աստ , իբր զի այս սաղմոս է մի յայնց սաղմոսաց՝ որք համարին մթին և դժուարին 'ի մեկնել . մինչև ասել ուրումն .

* խիստ է և կարծր իմաստ սորա , ուր և գործիք մտաց
„ բթին . զի իբրև 'ի վիմի գոլով արձանագրեալ՝ ոչ
„ թափանցեն 'ի սա միտք մարդոյ ‖ .

## Ի․ Ա․ Ն ․

ա․ Պահեա՛ զիս Տր , զի ես 'ի քեզ յուսացայ . ասացի Տն , Տր իմ ես դու , և բարեաց իմ ինչ 'ի քէն են .

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ .

Այս բան ասացեալ 'ի դիմաց քսի՝ Հայր 'ի ժամն յայն՝ յորում եւ կամաւ զինքն 'ի ձեռս կատաղի թշնամեաց իւրոց : Ուր երկու ինչ տեսանել արժան է . Առաջինն է այս , զի քս ոչ եթէ զայս բան ըստ այսմ իցէ ասացեալ առ Հայր , այլ թէ հայեցեալ յայն ընթրանումն՝ զայսպիսի բանս առել մարթ էր բանական հոգւոյն քսի առ Հայր . ըստ որում երեւէր առաջի մարդկան այնչափ տկար՝ մինչև մատնիլ 'ի ձեռս թշնամեաց . և յայս միտ առէ առաքեալն . * յաւուրս „ ( չարչարանաց ) մարմնոյ իւրոյ աղօթս և պաղատանս „ առ այն՝ որ կարօղն էր ապրեցուցանել զնա 'ի մահ„ ուանէ , ուժգին գոչմամբ և արտասուօք մատու„ ցանէր . և լսելի լինէր առ լաւութենն . թէպէտև „ որդի է , ուսաւ 'ի չարչարանաց անտի զհնազանդու„ թիւն ‖ . եբր . ե . 7 : Երկրորդն է այս , զի զայսպիսի բանս ասելով՝ ոչ ցուցանէ թէ 'ի կասկածի էր քս , իբր թէ գուցէ ոչ պահեսցի յւյ հօրէ . զի այս էր անկարելի . այլ՝ յայտ առնէ , թէ իբրև մարդ մատնեալ է 'ի ձեռս մարդկան , և խնդրէ 'ի հօրէ՝ զի արասցէ , զոր առնելոց է . Քս է՝ զի պահեսցէ զնա . և որչափ ինչ ինքն կամի՝ թոյլ տացէ , զի արասցեն ը նա մարդիկ : Յայս միտ աչա առաջի դնի այս բան իբրև 'ի դիմաց քսի և անդամոց նորա յասելն :

Պահեա՛ զիս Տր , զի ես 'ի քեզ յուսացայ : Այսինքն քոյին նախախնամութեբդ խնամ տարեալ 'ի վր իմ՝ պահպանեա զիս 'ի նեղութենէ աստի , որ հասեալ է 'ի վերայ իմ . կամ պահեա զիս 'ի ներքոյ խնամոցդ 'ի նեղութենս իմում : * զի ես 'ի քեզ յուսացայ ‖ . Քս զյոյս իմ միայն

'ի քեզ եղի, և ոչ յայլ ոք ։

Ուշ դնելի է, զի ըստ ցուցանելոյ մարգարէին ոչ եղև 'ի քս յատուկ յոյս . զի յոյսն յատկապէս առեալ յայնմ է միայն, որ չև է հասեալ 'ի լիութիւն շնորհաց և 'ի տեսութիւն այ . իսկ 'ի հոգին քի էր լիութի ամ շնորհաց . և էր երանեալ տեսութ ածութեն՝ ըստ որում էր գոյացապէս միաւորեալ . բայց դիր 'ի նմա յոյս հաստատութե . զի անհնարութի փրկելոյ մարդկան, և վերջանալոյ տառապանաց իւրոց, և հասանելոյ փառացն՝ որ ըստ մարմնոյ, որպիսի էր յարութիւնն, և որք զհետ գային յարութե . և ըստ այսմ յուսոյ ասէ՝ * 'ի քեզ յուսացայ ‖ ։ Այլ առ 'ի ցուցանել՝ թէ արդարացի է յուսալ իւր 'ի նա, պատճառս ինչ դնէ առաջի, և ասէ ։

Ասացի Տն՝ Տր իմ ես դու . և բարիս իմ ինչ 'ի քէն են ։ զի խոստովանս եղէ քեզ ընդ, և ասացի 'ի սրտի իմում՝ թէ * տէր իմ ես դու ‖ . զի դու միայն ես տէր իմ, և տէր այնր ամի՝ զոր ունիմ . զի ամ * բարիք իմ ինձ 'ի քէն են ‖ . զի զոր ինչ բարի ունիմ և ունելոց եմ, այն ամ բարիք 'ի քէն տուեալ են և տալի են ինձ . վասն և ես միայն 'ի քեզ յուսացայ ։

Յաւելն աստ՝ 'ի դիմաց մարդոյ խօսելով * բարիք իմ ինձ 'ի քէն են ‖, ոչ ցուցանի՝ թէ 'ի մէնջ ես չիցեն, զի 'ի մէնջ ես են 'ի շնորհացն այ . որում լինիմք գործակիցք . և գործակից լինելով արժանանամք փրկութե . զի ըստ առակին * որ արարիչ մեր է առանց մեր, ոչ լինի փրկիչ մեր առանց մեր ‖ . միայն չարիքն չեն յայ, այլ 'ի մէնջ . իսկ բարիքն 'ի մէնջ և յայ . ուստի ասէ բարսեղ վդպ . 'ի մեկն . մարկ . գլ . ժա . * չարիքն „ ըստ մերոց կամացս միայն լինին . և բարիքն՝ 'ի մերոց „ կամաց և 'ի նորա օգնութեն ‖ . նա օգնէ՝ զի գործեսցուք, և առնէ զի արասցուք ։ Այլ այս առաւել պատիւ է մեզ՝ զի նորա օգնութ և նովաւ գործեմք զբարիս . նաև մեծ փառք է խոստովանիլ թէ յայ ունիմք և առնեմք զ 'ի մէնջ . ոչ առաւել փառք է մարդոյ 'ի ձեռանէ թգւորի հանդերձ զգենուլ, քան իւրովք դրամովք առնել և ագանել . ուստի 'ի յայտ . դ . 10 . գրի թէ սրբքն զպսակս իւրեանց դնէին առաջի աթոռոյն այ, նմա ընծայելով զամ փառս և զպատիւ ։

Ի սաղմոսս ինչ մեր և 'ի մեկնութեան Լամբ" փոխ ասե-լոյ, * և բարիք իմ իմձ 'ի քէն են ||, դնի ըստ ոմանց թարգմանութեանց. * և բարիք իմ չեն քեզ ինչ պիտոյ ||. բայց այդ ևս զնոյն նշանակէ. մանաւանդ եթէ առաս-ցի 'ի դիմաց արդարոյ. զի այսու կամի ասել. ես չու-նիմ զայնպիսի ինչ բարի՝ որ չիցէ 'ի քէն. այլ ամ̃ն ես 'ի քէն է. զի եթէ առկ յինէն էր, և կամ առկ ը̃ստ հա-ճոյից իմոց, այն ոչ էր բարի. և թէ բարի ևս լինէր՝ այն քեզ ոչ էր պիտոյ. զի ոչ եթէ դու կարօտիս իմոց բարեաց, այլ ես քոյոց.

Արդ թէպէտև ա̃ծ ոչ կարօտի բարեաց մերոց, բայց կամի ևս. ոչ զի առցէ, այլ զի տացէ, և կամ իբր առեալ համարելով՝ զփոխարէնն բազմապատիկ վճարեսցէ. յորոյ վ̃ր գեղեցիկ իմն գրելով Սարգիս շնորհալի 'ի մեկն. ա̃. պետ. դ̃. 11. ճառ. թ̃. յորդ. ասէ * լուր
,, մարգարէին՝ զինչ ասէր ցա̃ծ. բարիք իմ ասէ՝ քեզ
,, չեն ինչ պիտոյ. վասն զի բարիքն իմ իմձ 'ի քէն է. ա
,, պա էր վ̃ր խնդրէ 'ի մէնջ ով մարգարէ ասիցէ ոք.
,, ասէ. ո̃պ զի 'ի տալն մեր՝ վաշխիւ զփոխարէնն այս-
,, րէն 'ի մեզ դարձուցանիցէ ||.

Զգուշացուցանէ աստ Լամբրոնացին՝ թէ այս բան ոչ վ̃նկ ասի, զի յայն ապաստանեալ՝ անփոյթ լիցուք 'ի գործել զբարիս, այլ զի ծանիցուք՝ թէ ծառայք անպիտանք եմք, և պարտ է մեզ առնել զայն՝ որ հրա-մայեալ է մեզ։ Իսկ թէ ը̃Եր փոխ դնելոյ բարիք իմ 'ի քէն են, եդեալ է. * բարիք իմ չեն քեզ ինչ պիտոյ, տես 'ի համեմատութիւն։

Աստանօր բառս * բարիք ||, կարէ նշանակել և ըղ-գործսն, զորս կատարեաց ք̃ս 'ի փրկագործութեան իւ-րում։ Իսկ այս գործք ք̃սի կրկնակի մտածին. մի՝ զի էին յանձնէ նորա. և մի ևս՝ զի էին փրկարար ազգի մարդկան։ Ըստ որում էին յանձնէ նորա, էին յան-բաւս հաճոյ ա̃յ. և ըստ այսմ ոչ կարէ ասել՝ * բարիք իմ չեն քեզ պիտոյ ||։ Իսկ ըստ որում էին փրկարար ազգի մարդկան, թէպէտև չէին հարկաւ պիտոյ ա̃յ, որովհետև ա̃ծ մերժեալ էր զազգ մարդկան. յոր միտ հնար էր ասել ք̃սի * բարիք իմ չեն քեզ պիտոյ ||. բայց ք̃զի հաճեցաւ ևս հայր՝ զի ք̃ս փրկեսցէ զնոսա, վ̃նկ այն գործք պիտոյ եղեն նմա առ 'ի փրկել զմար-

դիկ. Եւ ևս այն գործք ողորմութեան եղեն այնպիսի բարիք, որք էին յայ հօրէ պատուիրեալք նմա, հնար է ևս ըստ մերում թարգմանութեն ասել, * բարիք իմ ինձ 'ի քէն են ||. զի բարիք իմ՝ որով փրկեցայ մարդիկ. 'ի քէն հրամայեցան ինձ.

Մարթ է ևս ասել, թէ զայս ասէ հայելով 'ի զօրս և 'ի պատարագս, և յայն ամ, որք կատարէին 'ի հին օրէնս 'ի գուշակել զքս և զգործս նց. և ըստ այսմ կամի ասել. այսոքիկ բարիք գուշակիչք իմ, ոչ ևս են քեզ պիտոյ, և ոչ ինձ. Եւ քանզի զայս ամ, և զոր ինքնին կատարեաց քս՝ սքանչելի եցոյց հայր առ սրբս իւր, յայս հայելով ասէ.

Գ. Սրբոց նոցա, որ են յերկրի նորա. սքանչելի արարեր զամ կամս իմ 'ի նոսա.

Հայրն երկնաւոր նախ քան զմարդանալ որդւոյն՝ յադամայ սկսեալ մինչև 'ի ծննդս առաքելոց՝ պէսպէս խորհրդով յայտ արար ծառայից իւրոց, զի նախահարաց և մարգարէից՝ զխորհուրդ մարդեղութեանն, և զգործսն, զոր կատարելոց էր քս. Զնոյն եցոյց և առաքելոց և այլոց ծառայից իւրոց սրբց 'ի կատարման խորհրդոյն. Եւ զայս այնպիսի օրինակաւ յայտնեաց նց, մինչև սքանչանալ նց ընդ բարձրութիւն իրացն, և զէ անձառելի սէրն քնի՝ որ յայսմ խորհրդեան երևեցաւ.

Զայս խորհուրդս՝ մինչդ թէ զգործս այսր խորհրդոյ կոչէ աստ "կամք". վասն զի նոքին էին կամօք յանձն առեալք և կամեցեալք յորդւոյն այ, ըստ որոյ կամք նորա էին պատճառ այնց գործոց. և զի պատճառն դնի բզմ անգամ փխնկ գործոյ, վնրկ փխնկ ասելոյ՝ սքանչելի արարեր սրբոց քոց զամ զգործս, զոր կամեցայ գործել 'ի նոսա, զի վս փրկութեան նց, ասէ՝ * զամ կամս իմ ||. Ըստ այսմ ոճոյ խօսի 'ի սաղ. ՃԺԸ. 108. * ընդ կամս բերանոյ իմոյ ( ասէ ) հաճեսցիս տր ||. փխնկ ասելոյ ընդ գործս կամաց իմոց, զոր ցուցի բերանով իմով. Նոյնու մնօք առնու և աստ զկամսն յասելն.

Սրբոց նոցա՝ որ են յերկրի նորա, սքանչելի արարեր զամ կամս իմ 'ի նս. զի սրբց քոց մարգարէից և նախահարաց և ա-

ռաքելոց , որք * են յերկրի քում ‖ , սքանչելի իմն ցուցեր զգործս իմ զա՟մ, զորս կամեցայ 'ի ն՟ա կատարել 'ի մարդանալ իմում ։ Մ՟ր՝ "յերկրի քում" ասելն հայի յե՟ղմ, որ էր յատուկ երկիր ա՟ն · ուր և 'ի մ՟ջ աւետարանեցան գործք մարդեղութե՟ն ք՟սի , և 'ի ք՟սէ
կատարեցան ։

Մարթ է երկրաւ իմանալ աստ և զա՟մ երկիր · զի * ա՟ն է երկիր լրիւ իւրով ‖ · սաղ · իգ · 1 · Այլ ը՟ այսմ փոքր մի այլազգ կարգի մեկնութի այսր բանի · իբր թէ ասացեալ էր · 'ի ձեռն սքանչելեաց՝ որք գործեցան 'ի մ՟ջ քոց առաքելոց՝ հզօր և մեծ ցուցեր ը՟ ա՟մ երկիր զկամս իմ, ա՟յ զփրկութի ազգի մարդկան , զոր
եմն կամեցայ ։

Այս բան ըստ որում ասի 'ի բերանոյ դաւթի՝ կրկնակի կարէ մեկնիլ · մի՝ 'ի ցուցանել զսքանչանալ մ՟ջ ը՟ նա , և մի ես 'ի ցուցանել զսքանչանալ նորա ընդ մ՟ս ։ Ըստ առաջնումն կամի ասել · ետուր ինձ կամիլ և գործել զայնպիսիս՝ որք սքանչելի երևեցան մ՟ջ քոց · կամ որ նոյն է , այնչափ ինչ ետուր ինձ կամիլ և գործել՝ մինչև սքանչանալ ծառայից քոց ընդ այն իմ կամս · և ըստ այսմ բառդ 'ի ն՟ս՝ դնի փոխ մ՟ջ · ո՟չ է սովորութի գրոց յաւելուլ և զդերանուն 'ի վ՟ր անուան իբր բացայայտելի · և թէպէտ պարտ էր յայնժամ դնել ն՟ջ , բայց բառդ 'ի նոսա ես գոլով տրական՝ եղեալ է
փոխ բառիս ն՟ջ ։

Ըստ երկդ մեկնութե բառդ "սքանչելի" դնի փոխ բառիս սքանչացող · ո՟չ թէ ասացեալ էր · սքանչացող և փափաքող արարեր զկամս իմ առ ծառայս քո՝ որք են յերկրի քում, կամ որ նոյն է՝ արարեր՝ զի կամք իմ սքանչացի ընդ մ՟ս քո որք են 'ի սիոն և պաշտեն զքեզ անդ 'ի տաճարի քում ։ Այլ ըստ այսմ բառդ 'ի ն՟ս՝ դնի իբր խնդիր կանոց · որպէս թէ ասել · զկամս իմ՝ զոր ունէի 'ի նոսա՝ սքանչացող և փափաքող արարեր նոցա , ա՟յ մ՟ջ քոց ։ Այսու յետին մեկնութե առաջի դնէ լամբրոնացին զայս բան 'ի դիմաց իւրաքանչիւր արդարոյ · ըստ որում ա՟ծ բազում անգամ զկամս մարդոյ սքանչելի իմն փափաքանօք շարժէ 'ի հաճիլ ընդ ն՟ս նորա , որք են 'ի վ՟ր երկրի , և հետևիլ վարուց նոցին · ես և երբեմն տարփանօք իմն խանդակաթ առ-

նէ 'ի սէր մեր իւրոյ, որք են յերկրին կենդանեաց.
Եւ այս լինի մարդոյ աստ լամբռնացին՝ * յետ թե-
„ թեւանալոյ մեղացն յաղթելոյ մեր, եւ յետ փարա-
„ տելոյ խաւարութե խղճի մտաց՝ յառաջադիմութեամբ
„ առաքինութեն ||. զի յայնժամ աստ * տիրէ ցանկու-
„ թիւն մտացն առ մեծն. եւ առ վարս նոցին սէր եւ
„ փափաքումն, քանզի յորժամ լսէ զվարս նոցա սքանչե-
„ լիս՝ հեծելով սրտին խանդաղատի . . . . զնոյ պէսպէս
„ ընթացման ունի առաջի, եւ ցանկայ նմանել նոցա: Ի
„ նկարագիրս պատկերաց նոցա փափաքէ. 'ի պատիւս
„ եւ 'ի տօնս յիշատակացն ցնծայ. բարեխօս ունել
„ (զնոսա) ոչ դադարէ. զպատուղ սիրոյն զարտասումն՝
„ նոցին պատարագէ. եւ իբրեւ մերձաւոր եւ ընտանի
„ զնոսին կարծէ. եւ գրեթէ ընդ կամքն 'ի նոսա է խառ-
„ նեալ, եւ 'ի համանմանութիւն նոցին բորբոքեալ ||:
Օ այսպիսի եղեալ մարգարէին՝ առաջի առնէ այժմ
զհամբաւական թշուառութիւն ազգի մարդկան, եւ զայն
թէ զիարդ 'ի ձեռն սքանչելի գործոցն քոյ ազատեալ
'ի թշուառութէ անտի՝ նորոգեցան 'ի նորոգութի կե-
նաց. վերոյ աստ:

Գ. Յամառեցին հնազանդութեան նոցա. յետ տեսութեան աղա-
վաղվաղելոյն:

Օ արհուրելի էր հիւանդութի յազգի մարդկան, այն
է հիւանդութեն մեղաց, որ յամենին տարածեալ էր,
եւ առ ամեն յաճախեալ էր եւ յաճախէր, որ առաւելոյր
եւ բազմանայր. եւ խպառ տկարացուցեալ զնոսա մանա-
ւանդ թէ մահացուցեալ՝ ոչ թողոյր ընթանալ 'ի
կեանսն յաւիտենից:
Այսպիսի հիւանդութե եւ 'ի տկարութե դոլով մարդ-
կան՝ եկն որդին այ, եւ զգեցեալ զտկարացեալ մար-
մին մեր՝ առողջացոյց եւ կենդանացոյց զմեզ. եւ եբաց
մեզ ձեզ վաղվաղ ընթանալոյ 'ի կեանս: * Մինչ-
դեռ (ասէ առաքեալն) տկարքն էաք (եւ յանկարծ-
ութե ըմբռնեալք), քս վս մեր 'ի ժամի 'ի վր ամ-
պարշտաց մեռաւ ||. հռովմ. Ե. 6: Այլ յայտ է թէ
տկար ասելով խնմայ զբան տկարութեան մեղաց եւ
զթշնամութե. ոպ որում յարէ զկնի, * մինչդեռ (ասէ)
„ մեղաւորքն էաք, քս վս մեր մեռաւ . . . . մինչ թըշ-

„ նամիքն էաք , հաշտեցաք ընդ այ՟ մահուամբ որդւոյ
„ նր՟ ‖ ․ և յետ հաշտութեան բացաւ ճանապարհ ընթա-
նալոյ յարդարութիւն և ՚ի կեանս ․ յայտնի հայե-
ցեալ՝ ասէ ։

Յաճախեցին հիւանդութիւնք նոցա ․ յետ այսորիկ ապա փութա-
ցեցին ։ այ՟ թէպէտև յաճախեցան և բազմացան տկա-
րութիւնք մարդկան , մինչև ոչ ևս կարել նց՟ ընթանալ
՚ի բարին , և առ ա՟ծ , այլ՝ ՚ի չարին և առ կուռս ․ բայց
յետ այսորիկ ՚ի մարդանալ որդւոյն այ՟՝ շնորհօք նորա
առողջացեալք և զօրացեալք՝ փութալով ընթացան
՚ի գործս բարիս , և ՚ի փրկութիւն յաւիտենական ։

Արդ գիտել արժան է , զի դերանունս նոցա՝ թէպէտև
դնի աստ ՚ի տեղի բառիս մեզ , զոր եդ ՚ի նախընթաց
համարն , բայց տայ ևս իմանալ զազգ մարդկան առ
հասարակ ։ Որ զի այս է ոճ ինչ այնպիսի , որով պա-
տուական մասն հասարակութեան դնի փոխ բոլոր հասա-
րակութեան ։ Եւ զի բառդ նոցա՝ դնի աստ փոխ մեզ
որք եմք պատուական մասն հասարակութեան ազգի
մարդկան , այնու իսկ դնի փոխ բոլոր ազգին ․ և այս
է ձև փոխանունութեան , որով բառ մի դնի փոխ միւս
բառի , և այն միւս ևս փոխ այլոյ ։ Եւ չասիցես , թէ
զիարդ կարիցէ ասել , թէ յաճախեալ էին ՚ի վր՟ մեզ
հիւանդութիւնք մեղաց ․ վս՟ զի այն հիւանդութիւն ՚ի վր՟
ադ՟մյն լինելով ՚ի վր՟ մեզ ևս անցեր ․ իսկ թէ նորա ու-
նէին առողջութիւն ըն՟ հոգւոյ , այն էր յարդեանցն քնի ։

Արդ բան ըն՟ ինքեան և ըն՟ ճառին առեալ , չորեքկին
ևս կարէ մեկնիլ ․ Նախ հայելով յանպարտ տառա-
պանս նոցա ․ ըստ որոյ կամի ասել ․ այս՟ յաճախեցին և
բազմացան հիւանդութիւնք՝ այ՟ տկարութիւնք և տառա-
պանք և կամ հալածանք մեզ , բայց յետոյ փութալե-
ցին , այ՟ փութով վերջացան , կամ միանգամայն բար-
ձան և բարձցին ․ և կամ ինքեանք յետ տառապանացն
փութալակի ուրախացին՝ նաև յԾի աստ ․ ո՞րպ՟ յայտնի
երևի ՚ի ծառայսն այլ՟ ․ յոր միտ ասէր պօղոս , * յոր-
ժամ տկարանամք , յայնժամ զօրանամք ‖ ․ բ՟ ․ կոր ․
ժբ՟ ․ 10 ։

Երկրորդ՝ հայելով ՚ի վտանգաւոր հիւանդութիւնս , այ՟ ՚ի
փորձութիւնս մեզ ․ վս՟ զի բազում անգամ յաճախեն այս-
պիսի հիւանդութիւնք , այ՟ փորձութիւնք հիւանդացու-

ցինք՝ 'ի վե՛ր սրտից, որպէս զի նոքօք վաղվաղակի զգաստասցին, և ծանուցեալ զտկարութիւս իւրեանց՝ դիմեսցեն առ ա՛ծ. որպէս պատահեցաւ և պատահի բազմաց ։ Իսկ թէ ը՞րք ճառեցան 'ի փորձութենց, պնդի տայ բարսեղ վկ՛յ 'ի մեկն. մարկ. ժա՛. ասելով. * ոչ
„ թէ 'ի փորձութեանցն, այլ յիւրեանց ծուլութեանն է.
„ զի ո՞չ եթէ որ տկար ստամոք ունիցի, և չկարիցէ
„ պահել զզգամն դեղն որ զնա սրբիցէ, ոչ թէ զդեղն
„ նախատեմք, այլ զցաւոտ ստամոքսն. նոյնպէս և
„ աստ զանժուժկալութիւն ստգտանեմք. զի փորձու-
„ թիւքն ընտիր առնեն, և ոչ թէ խոտեն ‖ ։

Արդ՝ հայելով 'ի նեղութիւս մեղաւորաց. իբր զի բազումանգամ 'ի յաճախել 'ի վե՛ր նո՛ց հիւանդութեանց կամ նեղութեանց՝ վաղվաղեցին, զի վաղվաղակի դարձան առ ա՛ծ, և կեցին. յոր միտ ասէ մարգարէն. * յորժամ
„ սպանանէր զն՛ո, խնդրէին զնա, և դառնային, և
„ առաւօտ առնէին առ ա՛ծ ‖ սաղ. հէ. 34.

Արդ՝ ըստ հակառակն՝ հայելով յառաւելութի չարութե մարդկան. յոր միտ կամի ասել. 'ի յաճախել հիւանդութեանց զի անօրէնութեանց մարդկան՝ փոխ յետս կալոյ՝ վաղվաղեցին 'ի նոյն, մինչև իսպառ ապականելոյ ։ Զայս ակնարկէ այժմեան բնագիրն երբ. զորմէ ասէ 'ի համեմատութիւն ։ Զայս եդեալ մարգարէին՝ դարձուցանէ զդէմս բանիցս, և ասէ ։

Դ. Մի՛ ժողովեցայց 'ի ժողովս նոցա յարեանց. և մի՛ յիշեցից զանուանս նոցա 'ի շրթունս իմ ։

Ժողովք յարեանց՝ ասելով, իմնայ զայնպիսի ժողովս, յորս ժողովին մարդիկ առ 'ի խորհուրդ սպանու՛ վ՛ն սպանութե այլոց, կամ առ 'ի հեղուլ զարիւն, կամ առ 'ի զենուլ զոհս կռոց, կամ առ 'ի կորուսանել զոք անիրաւութբ, և կամ առ 'ի բանիւք ևս սպանանել զայլս, այսինքն բամբասելով, չարախօսելով, յորդայթ արկանելով, ևն. և կամ ևս առ 'ի մեղօք սպանանել զանձինս իւրեանց ։ Իւ կամ դնել ժողովք յարեանց ասելով իմնայ առանձնակի զայնպիսիս, որք են արիւնահեղք, զի անիրաւ սպանօղք՝ թէ գործով իցէ և թէ բանիւ ։ Իմնայ դնել սուրս և զհրէայս, որք հեղմամբ արեան, զի թլփատութբ և զոհիւք որո-

չեալ էին իբր մասնաւոր ժողովլ․ յայսպիսիս հայե-
լով ասէ ։

**Ո՛չ ժողովեցայց ՛ի ժողովս նոցա յարեանց ։** Բառդ նոցա՝ դնի աստ փոխանակ մարդկան, կամ փոխանակ բանից՝ այնպիսեաց․ որպէս թէ ասէր, ոչ մտից ՛ի ժողովս այնպիսի մարդկան՝ որք մասնակից են արեանց, կամ թէ ոչ մերձեցայց յայնպիսի ժողովս․ ես և ոչ եղէց ես ինքնին ժողովօղ այսպիսեաց, կամ հեղինակ այսպիսի ժողովոյ ։ Եւ առ ցուցանելոյ զառաւելութիւն ատելութեան առ այնպիսիս յաւելու ասել ։

**Եւ ոչ յիշեցից զանուանս նոցա ՛ի շրթունս իմ ։** Այսինքն ոչ միայն ոչ մտից յայնպիսի ժողովս նոցա, այլ և ոչ իսկ անուանեցից զնոսա․ զի ամենևին ատելի են ինձ՝ ինքեանք և անուանք իւրեանց ։ Եթէ աստանօր բառդ նոցա՝ հայեսցի յազգն հրէից, մեկնի ՛ի բերանոյն քրիստոսի այսպէս․ ոչ ևս յիշեցից զանուանս նոցա, և ոչ ծանեայց զնոսա, և ոչ ասացից զնոցանէ ժողովուրդ իմ․ այլ փոխանակ նոցա կազմեցից ինձ նոր ժողովուրդ՝ ոչ հեղմամբ արեան թլփատութեան և ոչ զենմամբ զոհից, այլ լուացմամբ ջուրց մկրտութեան, և նուիրմամբ անարիւն պատարագի ։

Մարթ է աստ բառիս նոցա՝ իմանալ և զդատապարտեալսն ՛ի դժոխս․ զի զանուանս այսպիսեաց ոչ յիշեաց քրիստոս ՛ի շրթունս իւր․ քանզի ՛ի յիշել անդ զաղքատ ղազարն՝ ոչ էառ ՛ի բերան զանուն մեծատանն՝ որ էջ ՛ի դժոխս․ և ՛ի յիշել զանուն ղովտայ, ոչ յիշեաց զանուն կնոջ նորա ։ Եւ մի ասիցես, թէ յիշեաց զանուն սատանայի․ վասն զի այն ոչ էր յատուկ անուն նորա, այլ անուն յաւելեալ ՛ի ցուցանել զհակառակն լինել նորա, որպէս և անունս մեծատուն․ իսկ թէ յիշեաց զանուն յուդայի, այն չէ ինչ, զի յուդայ տակաւին չէր դատապարտեալ ։ Յայսմանէ մարթ է հեռապէս իմն ցուցանել զոչ դատապարտելին սողոմոնի, որովհետև յիշեաց զանուն նորա ՛ի շրթունս իւր․ ( տես ՛ի նարեկն․ բան խբ ։ )

Լամբրոնացին այսու ժողովով իմանայ զբազմութիւն չար խորհրդոց, ևս և դիւաց․ զորոց խօսի հոգի արդարոյն, և ասէ․ ոչ ժողովիմ առ նոսա, և ոչ թողում զկամս իմ հաւանիլ նոցա․ և որպէս գրէ բարսեղ մեծն,

մարկ . ԺԴ . ոչ ևս յիշեմ զանուանս մեղաց և ախտից նոցա , և ոչ ունիմ բաժին ընդ նմա : Իսկ Թէ որ իցէ իւր բաժին կամ ժառանգութիւն յայտ առնէ ասելով :

Ե . **Տէր բաժին ժառանգութեան իմոյ՝ և բաժակի իմոյ դու ես , որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս :**

* Բաժին ժառանգութեան || ասելով խնամոյ զայն ինչ , զոր ոք ունի իբրև իւր ժառանգելի . սոյնպէս և * բա„ ժին բաժակի || ասելով զնոյն խնամոյ . որպէս յայտ է յառաջելոցս 'ի սաղ . Ժ . 7 , տես և 'ի սաղ . ՃԺԸ . 57 . Բայց հնար է ևս ասել , Թէ որովհետև բաժակաւ մատուցանի ըմպելի քաղցր , ուրեմն բաժին ժառանգութեան ասելով խնամոյ զժառանգելի իրն , սոյնպէս և բաժին բաժակի ասելով խնամոյ զժառանգել նորին . զի քաղցր է ժառանգելն քան զժառանգելի ունելն : Ըստ այսց նշանակութեանց խօսելով մարգարէն՝ ասէ :

**Տէր բաժին ժառանգութեան իմոյ , և բաժակի իմոյ :** Կամ ասել , բաժին ժառանգութեան իմոյ , այսինքն այն՝ որ է ինձ ժառանգելի , ոչ այլ ինչ է , եԹէ ոչ դու Տէր . զի դու միայն ես ինձ ամենայն , իմ ամենայն մեծութիւն , և իմ ամենայն փառք . և դու միայն ես բաժին * բաժակի իմոյ || . այսինքն դու միայն ես բաժին ցնծութեան իմոյ , և 'ի ժառանգութեան քո է բերկրութիւն իմ : Եւ քանզի զայս բան ասէ մարգարէն 'ի դիմաց քո՝ ըստ որում էր ուղևոր , և չև էր տակաւին ըստ մարմնոյն փառաւորեալ , այլ՝ սահմանեալ էր՝ նախ մեռանել , և ապա զայն մարմնոյ փառս ժառանգել , վասն այնորիկ յաւելու ևս , և ասէ :

**Դու ես՝ որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ յիս :**

Բառդ " այսրէն " որ դնի 'ի Թարգմանութեան մերում , հայելով յայլս երրակի կարէ նշանակել . մի՝ իբր կրկնական մակբայ . երկրորդ՝ իբր տեղական . և երրորդ իբր ժամական : ԵԹէ իբր կրկնական առցի , այս բան սկզբնաբար միայն որդւոյն Աստուծոյ պատշաճի . զի նմա միայն կրկին իրաւամբք դարձուցանելի կամ տալի էր ժառանգութիւն փառաց , Թէ ըստ իրաւանց բնական որդիութեան , և Թէ ըստ իրաւանց արդեանցն . զի որովհետև կամեցաւ նա արդեամբք ևս շահիլ զայն փառս , սոյն իսկ կրկին իրաւունք ժառանգելոյ եղև 'ի նմա .

սմին իրի գնէ այսրէն դարձուցանել . ոչ թէ ասէր . դու որ ետուր ինձ զնոյն փառս ըստ հոգւոյ , և պատրաստեալ պահես զնոյն փառս ըստ մարմնոյ և զնոյն իշխանութիւն իբրև զիմ յատուկ ժառանգութիւն կրկին իրաւամբք հատուցանես ինձ յետ չարչարանացս և մահու ։ Որ ժառանգութիւն մարթ է իմանալ և զնորս եկեղեցի . զոր հայրն երկնաւոր ետ որդւոյ իւրում 'ի տեղի հնոյն իբրև զժառանգութիւն . ըստ որում ասացաք 'ի սաղ . բ . 8 ։ Ասացի սկզբնաբար . զի բառդ այսրէն առեալ փոխանակ բառիս վերստին , երկդաբար կարէ պատշաճիլ և մարդկայինս բնութեան 'ի նորոգեալ վիճակի . քանզի սա յառաջ քան զմեղս կարգեալ էր 'ի ժառանգութիւն երկնային փառաց , եւ և 'ի ժառանգութիւն դրախտին , որ էր իբր օրինակ երկնայնոյն . և զի կորոյս զայն մեղօք , 'ի սատանայէ զնոյն 'ի ձեռն յսի քսի՝ վերստին դարձուցաւ նմա այն . սմին իրի ասէ . դու տէր մարդանալովդ եղեր իմ բաժին ժառանգութեան . զի եղեր իմ . որով և զժառանգութիւն դրախտին զոր կորուսի , վերստին դարձուցեր առ իս ։ Յայս միտ իմանալով և գէորգ վարդապետ՝ գրէ 'ի մեկն . եսայ , թէ որդի այ * զաւարի առեալ զմեծութիւնն „ ( զոր կորուսաք ) դարձոյց առ մեզ . զոր ըղձայր „ դաւիթ , այսրէն դարձուցանել զժառանգութիւն „ իմ յիս ‖ ։

Իսկ եթէ բառդ "այսրէն" առցի իբր տեղական մակբայ , գնի աստ իբրև զարդ , կամ 'ի տեղի բառիս առ . և ըստ այսմ այս բան կարէ ասիլ 'ի դիմաց իւրաքանչիւր արդարոյ առ ած իբրև առ հայր ասելով . տէր բաժին իմ , տէր յոյս իմ , տէր բաժին ժառանգութեան և բերկրութեան հոգւոյ իմոյ . դու տէր հատուցանելոց ես ինձ կամ առ իս զայն անսահման բարութիւնն , զոր պատրաստեալ ես քոին 'ի ժառանգութիւն իմ ։

Այլ եթէ բառդ այսրէն՝ առցի իբր ժամանակական մակբայ՝ փոխանակ բառիս այժմ , ցուցանէ՝ թէ ած նաև այսրէն՝ այ յայսմ ժամանակի յծի աստ դարձուցանէ կամ տայ զժառանգութիւն բարի՝ այ զժառանգութիւն շնորհաց , և այլոց պարգևաց , եւ և զճաշակ ժառանգութեան երկնային փառաց ։ Այլ այս մեկնութիւն համարի յարմարական միայն ։ Իսկ առաջինն և երկրորդն հարազատ , 'ի

բերել հոգւոյն առ ա՟ծ հառաչանօք ժառանգելոյ ըղ-
ձա · զոր 'ի կեանս յայս ցուցանի 'ի պանդխտութեան եմք՝
յաւուր վայելեմք · իսկ յետ պանդխտութեանս ունիմք
ժառանգել զնոյն իրօք , և ըմպել լիով զբաժակն բա-
ժակին · զի զանսահման ուրախութիւն զայն , զոր իբրև
աւանդ պահեալ է մեզ ա՟ծ · ըստ որում ասէ առա-
քեալն · * Գիտեմ յո՛ հաւատացեալն եմ . և հաս-
տատեալ եմ՝ թէ կարող է զաւանդ իմ պահել յօրն
յայն ‖ · բ · տիմ . ա՟ · 12 ։ Ո՛ի յայս իսկ որդեգրեալ է
զմեզ ա՟ծ ծննդեամբ աւազանին · ըստ որում ասէ ս՟րն
պետրոս · * Ծնաւ զմեզ վերստին 'ի յոյս կենդանի 'ի
,, ձեռն յարութեան յի՟ի ք՟ի 'ի մեռելոց՝ յանեղծ և յա-
,, նարատ և յանթառամ ժառանգութիւնն , որ պա-
,, հեալ է ձեզ յերկինս ‖ · ա՟ · պետ · ա՟ · 3 ·

Այս ժառանգութի՟ փոխաբերելով ս՟րց՝ թէպէտև յերկրի
կային , բայց բոլոր յերկինս բերէին ։ Ո՛ի ք՟ր գնտակ
միով կէտիւ կայ 'ի վ՟ր երկրի , և մնացն բոլոր 'ի վեր ·
սոյնպէս և արդարն միայն մարմնով կայ յերկրի , այլ
հոգւով համայն յերկինս ։ Ոտն՝ միայն արմատոյն
տեսանի յերկրի , իսկ բունն , և ոստոյ , տերևոյն
և պտղովք 'ի վեր ամբարձեալ · սոյնպէս և արդարն
միայն վասն մնունդ առնլոյ կենաց ունի զմնացն յ՟ձի ·
այլ բովանդակ կենօքն բարձրացեալ 'ի մտածութիւն
արքայութե՟ երկնից · որով և զօրութիւք հոգւոյ նորա ըն-
թանան յառաքինութե՟ յառաքինութիւն ։ Կենդանիքն
զորս եսես եզեկիէլ՝ արագ ընթանային · քանզի ասէ
* բարձունք էին և հայէին ընդ նոսա ‖ · ա՟ · 18 · զի՟ 'ի
մտածութե՟ բարձանց , և թէ * նմանութիւն հաստա-
,, տութե՟ 'ի վ՟ր գլխոյ գազանացն ‖ ա՟ · 22 · զի՟ մտա-
ծութե՟ նկարագրութե՟ մտաց զհաստատութէ երկնից ,
որովք նշանակի՝ թէ խորհուրդք ս՟րց և փոխաբերմունք
ն՟ց յերկինս էին , և այնու կարողութիւք ն՟ց զօրանային
զիմել 'ի գործս բարիս , և ժամանել 'ի ժառանգութե՟
յաւիտենական երանութեան իբրև 'ի մի միայն բաժին
ժառանգութե՟ իւրեանց ·

Ամբոխացին բաժակս խնծոյ ասա զանձնիւրեան
կամս · ա՟ծ է ասէ իմ բաժին և ժառանգելի յինէն ,
ես և բաժին կամաց իմոց , որ իբրև բաժակ՝ ժառան-
գութ՟ նորին , և կամ սիրով և խորհրդովք ն՟ր առ լցեալ

բերկրի ։ Իսկ թէ այս բաժին ժառանգութեան ասաց և որով օրինակաւ իցէ սահմանեալ, յայտ առնէ 'ի յաջորդ համարն, և ասէ ։

Ղ. Սեփհական եղեն ինչ ընդ ընտիրս. և ժառանգաւորեալ եմ համայն եղեալ ինչ ։

Այս բան եթէ մտածեսցի՝ 'ի դիմաց Քրի ասացեալ, վերածի 'ի համարն Դ, կրկին բանիւ. մի՝ բանիւ մարդկութեն. զի ըստ մարդկութեն եւ նմա վիճակ ընդ ընտիրս. իբր զի ընտրեցաւ՝ կամ ըստ որում մարդ սահմանեցաւ բնական որդի ։ Կամ դիւ մարդկօրէն խորհելով՝ յորժամ վիճակք արկան յերկս ընտիրս, ըստ յերկս ածայլին անձինս, 'ի հայր, յորդի, և 'ի հոգի՝ թէ ո մարդասցի, որդւոյ եւ վիճակն. և եղև նմա այն հաճոյական ժառանգութի ։

Երկրորդ՝ բանիւ ստանալոյ զնոր եկեղեցի. զի նմանութբ իմն խօսելով՝ 'ի վիճակարկութե հին և նոր եկեղեցւոյ՝ նոր եկեղեցին, որ է ընդ ընտիրս ըստ ընտիր, և ընտրանօք ժողովեալ, եւ Քրի իբրև հաճոյական ժառանգութի ։

Իսկ եթէ այս բան առցի 'ի դիմաց դաւթի, վերածի 'ի սաղ. ծը. 3. և յայլս. յորս ցուցանի, թէ եւ դաւթի վիճակ ընդ ընտիրս, ըստ ընդ թագաւորս, և ընդ իշխանս, ընդ մարգարէս և ընդ սբս. որ է ասել, եղև թագաւոր, իշխան, ևն ։

Այլ եթէ այս բան ասասցի 'ի դիմաց իւրաքանչիւր արդարոյ կամ 'ի դիմաց անդամոցն Քրի, վերածի առ նախընթաց համարն ։ Այս ըստ այսմ առեալ՝ արժան է գիտել, զի վիճակն է արարողութիւն ինչ, յորում ըստ բաղդի որոշի իմն առ այլ՝ առ 'ի ժառանգել զայն, կամ առ 'ի առնել, ևն. և երբեմն նոյն իսկ եա՝ որ վիճակաւ որոշի, վիճակ կոչի ։ Արդ՝ կամելով մարգարէն նմանութեամբ ցուցանել՝ թէ որպիսի օրինակաւ մարդն ունի զԱծ իւր բաժին ժառանգութե՝ զեղունն վիճակաց առաջի դնէ, իբր թէ վիճակեալ իցէ նմա ժառանգութիւնն այդ. և զայս դնէ առ 'ի յայտ առնել զգերազանցութի այնր ուրախութե, զոր ունին և ունելոց են ընտրեալքն 'ի ժառանգելն զԱծ. զի յայտ է թէ ելանել վիճակի զուրախութի պատճառէ ։

Արդ՝ յորժամ մարդիկ վիճակ արկանեն յայնպիսի իրս, յորում ընտրելի են բազումք, յելանել ումեք վիճակին՝ ասի, թէ վիճակ ել նմա ընդ բախտաւորս, կամ ընդ այնոսիկ՝ որք ընտրելի են։ Այլ քզի ած ընտրեալ և սահմանեալ է զբազումս առ ժառանգութիւն իւր յաւիտենական, որում և դիպեցի այս ընտրութի և նախասահմանութի, վիճակ ելանէ նմա ընդ ընտիրս. յոր միտ ասէ առաքեալն. կողոս. ա. 11. * Կոչեաց ,, զմեզ (ած) ՚ի մասն վիճակի սրբոց ՚ի լոյս ||. Եւ կոչեաց զմեզ ՚ի լոյս իբրև վիճակաւ, որով ընտրեցան սրբք։ Այլ եփես. ա. 11. ասէ. * որով և վիճակեցաք ,, (ժառանգ լինել այ) յառաջագոյն հրաւիրեալք ,, ըստ առաջադրութեանն այ ||. Ո ի թէպէտ այն ընտրութի և այն նախասահմանութի ՚ի կողմանէ այ՝ ոչ է վիճակ, բայց ՚ի կողմանէ մերմէ համարի վիճակ. Յայս ամ հայեցեալ ասէ.

Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս. և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ. որպ թէ ասէր. բարեբախտութե դիպայ, զի իբրև վիճակաւ համարեցայ ՚ի թիւս այնոցիկ, որք ժառանգեն զած՝ աստ ծառայելով նմա, և ՚ի հանդերձեալն վայելելով զնա։ Այլ սոյն այս ժառանգութիւն իմ ասէ հաճոյ եղև ինձ. եւ այս ժառանգելս զած, կամ այս բախտս, որով ժառանգեմ զած՝ ծառայելով նմա աստ, և վայելելով զնա ՚ի հանդերձեալն, հաճոյ և զուարճալի եղև ինձ։ Այլ թէպէտ ոչ է յայտ ումեք, թէ ինքն իցէ սահմանեալ ՚ի ժառանգել զած, բայց որովհետև կոչեցեալ է յայ ՚ի պաշտել զնա, պարտական է յուսալ՝ թէ իցէ սահմանեալ, և ըստ այնմ վարել զկեանս իւր ՚ի ծառայութեն այ, և ուրախանալ իսկ՝ և ասել. * վիճակք ելին ինձ ընդ ըն- ,, տիրս, և ժառանգութի իմ հաճոյ եղև ինձ ||.

Իսկ թէ ընդէր ոչ դնէ եզակի՝ վիճակ ել ինձ, այլ յոգնակի, * վիճակք ելին ինձ ||. մարթ է ասել, թէ ըստ երկուց խօսի այսպէս. նախ՝ հայելով ՚ի բազմութի ընտրելոցն. որպ թէ ասէր. բզմ վիճակք ընտրութեան ելին բազմաց. ընդ որս այն վիճակք ելին և ինձ։ Երկրորդ՝ հայելով ՚ի յաճախութի պարգևացն այ, որք ՚ի կողմանէ մերմէ մտածեալ՝ իբրև վիճակք ելանեն մեզ՝ առ ՚ի հասանել նոքօք ՚ի ժառանգութի այ.

Վճարող վարդապետ վիճակաւ խնամոյ զհողին՝ զոր տայ ած. ուստի 'ի մեկն. եսայ. ասէ. * Եւ նա արկցէ „նոցա վիճակ, եւ զհողին զբաժինս վիճակին, որ ելին „ընդ ընտրեան ||.

Լաւագոյնս բաժին ընտրեալ խնամոյ ասէ զմարմ-նական փառս կամ զփափկութիւն. Թէպէտեւ յաջողե-ցաւ ինձ ասէ վայելել 'ի փառս դի եւ 'ի փափկութիւն, բայց ես * ոչ կամիմ ամենեւին զայն, զի ինձ՝ իմ ժա-„ռանգութիւն ( որ է ած ), եղեւ հաճոյ ||. Արդ՝ զայս եղեալ միշտ՝ շնորհակալ լինի զնմ, եւ օրհնէ զնա վն այսր բարերարութեան, որով ետ նմա խնամով զայս իւր ժառանգութիւն բարի, եւ յամենայն սրտէ յարիլ 'ի նա. Ամէն իրի՝ ասէ.

Է. Օրհնեցից զՏէր՝ որ իմաստուն արար զիս. Մինչ 'ի գի-շերի եւս խրատեցին զիս երիկամունք իմ.

Իմաստուն առնելն է՝ հաղորդել ումեք զիմաստութիւն ըստ ընդունակութեան նորին. Իսկ քանզի գերագոյն ընդու-նակութիւն մարդոյ է բերիլ 'ի ժառանգութիւն այ, յոր-ժամ ած իմաստուն առնէ զոք ըստ այնմ ընդունակութեան, այնպէս հաղորդէ նմա զիմաստութիւն իւր, մինչեւ ոչ միայն ճանաչել նմա՝ թէ ած է իւր ժառանգութիւն. այլ եւ յարիլ 'ի նա, եւ ըստ յարելոյ 'ի նա՝ ուղղել զկ-եանս իւր առ նա՝ նորին օրինօք. Իսկ քանզի աստ մարգարէն 'ի վերոյ, ած է ժառանգութիւն իմ, եւ այն միայն է ինձ հաճոյ եւ ցանկալի, յասելն աստ՝ * Իմաս-„տուն արար զիս ||. յայտ առնէ՝ թէ վասն իմաստուն առնելոյն այ զինքն հասու լեալ է այնմ, եւ յարեալ է 'ի նա. եւ ըստ այնմ յուղղութեան պահէ զկեանս իւր. որոյ վասն օրհնելով զնա գոհանայ զնմանէ, եւ ասէ.

Օրհնեցից զՏէր՝ որ իմաստուն արար զիս. Այսինքն, բազում շնորհակալութեամբ օրհնեցից եւ բարեբանեալ գովեցից զՏէր վն անթիւ բարերարութեանց նր, եւ մանաւանդ վասն այսր մեծի բարերարութեան զի իմաստուն արար զիս 'ի ճանաչել զինքն, եւ յուղղել զկեանս իմ. Իսկ առ ցուցանելոյ զառաւելութիւն այսր յարէ զինի, եւ ասէ.

Մինչ 'ի գիշերի եւս խրատեցին զիս երիկամունք իմ. Երի-

կամամբք իմացեալ լինի աստ կամքն՝ ըստ ստորին մա-
սին, իսկ սրտիւ նոյն կամքն ըստ վերին մասին. բազում
անգամ եւս սրտիւ նշանակի միտքն. որպէս ասէ, * որ քննէ
,, զսիրտս և զերիկամունս ած արդար ‖. սաղ. է. 11.
և թէ՝ * ես տէր քննեմ զսիրտս, և փորձեմ զերի-
,, կամունս ‖. երեմ. ժէ. 10. և թէ՝ * փորձեա զիս
,, տէր և քննեա զիս. փորձեա զերիկամունս և զսիրտ
,, իմ ‖. սաղ. իե. 2. Յորս սրտիւք իմացեալ լինի
միտքն կամ խորհուրդք մտաց. և երիկամամբք՝ կամքն
կամ յօժարութիւնք կամաց, և կամ ես երկոքին միան-
գամայն ըստ այլեայլ տեսութեց. զորմէ տես և 'ի
սաղ. է. 11. Իսկ գիշերաւ իմացեալ լինի ոչ միայն
ժամն գիշերային, այլև ժամն փորձութե և խաւարման
մտաց. որպ 'ի ձեռն տանջեան իմացեալ լինի և ժամն
խաղաղութե և լուսաւորութե մտաց.

Ըստ այսոցիկ առեալ՝ յասելն ասա. * մինչ 'ի գիշերի
են խրատեցին զիս երիկամունք իմ ‖, կամի ասել. այն-
պէս խնամոտն արար զիս տէր, մինչ զի՝ ոչ միայն 'ի
տանջեան, որ է ժամ զգաստութե, այլև 'ի գիշերի
ես, որ է ժամ քնոյ, ես և 'ի գիշերի փորձութեց՝ խրա-
տեցին զիս, որ ազդ առնելով՝ յուղիղն յօժարեցու-
ցին զիս կամք և խորհուրդք իմ, և յորդորեցին զիս
չմնալ կրիցս, այլ՝ բանին այ. չապաւինիլ յանձն,
այլ յած միայն. չյօժարիլ զհետ մոլութեց, այլ ըզ-
հետ այ՝ առ 'ի ժառանգել զնա.

Յարմարական մեկնութբ, յայլ զգաստ 'ի գիշերի ես
խրատիչ լինին երիկամունք, յորում է զօրութի ցան-
կութե մարմնոյ. մինչև յերազի ես չհաւանիլ ցան-
կական բերմանց.

Այս բան ասացեալ 'ի դիմաց քի յայտ առնէ զառա-
ւելութի իմաստութե բանական հոգւոյ նր. որում
իմաստուն արար զնա հայր որ մարդկութենն՝ անսահման
իմաստութբ. ըստ որոյ ասի զնմէ, թէ * աճէր և զօ-
րանայր ( հոգւով լնոյր ) լի իմաստութբ ‖. ղուկ. բ. 40.
Նաև 'ի գիշերի չարչարանաց նորա կամք նր ըստ ստորին
մասին խրատէին զնա՝ որ յայտ առնէին նմա, ասել առ
հայր. * հայր իմ՝ եթէ հնար է, անցցէ բաժակս
այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ՝ որպ դու ‖.
մատ. իզ. 39. և 42. Որդ՝ յետ յայտ առնելոյ մար-

գարէին զխմաստնանալն յոյժ և զպատրաստութիւն կամացն 'ի խրատել և յառաջնորդել յուղղութիւնս՝ յայտ առնէ այժմ և զՀանգամանս այնր, և ասէ:

Ը. Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ. զի է ընդ աջմէ իմէ, զի մի սասանեցայց:

Այս բան ըստ որում ասի 'ի դիմաց Հաւատացեալ Հոգւոյ կամ 'ի դիմաց իւրաքանչիւր արդարոյ՝ կրկնակի կարէ առեալ լինել. մի՝ Հայելով առ Նախընթաց Համարն. և մի ևս՝ Հայելով առ յառաջընթաց բանսն Համայն: Եթէ ակնարկեսցէ առ Նախընթաց Համարն, դնի իբր պատճառ այնմ, զոր ասաց. * 'ի գիշերի ևս խրատեցին զիս երիկամունք իմ ‖. որպէս թէ ասէր, որովհետև իմաստուն արար զիս տէր՝ ճանաչել զինքն, և յարիլ 'ի նա, և ոչ երբէք թողուլ զնա, յաղագս այսորիկ յառաջագոյն զմտաւ ածէի զնմէ, և իբրև առաջի աչաց ունէի զնա, և ընդ աջմէ իմմէ տեսանէի, և այսու երիկամունք իմ խրատէին զիս՝ զի մի սասանեցայց, և անկայց 'ի մեղս ինչ:

Իսկ եթէ այս բան ակնարկեսցէ առ յառաջընթաց բանսն, դնի իբր ներգործութիւն կամ Հետևութիւն սիրոյն՝ զոր ունի Հոգին 'ի ժառանգել զԱստուած. վասն զի յայտ է թէ՝ որ սիրէ ինչ, Հանապազ ընդ նմին լինել աւորժէ, Հանապազ զնոյն առաջի աչաց նկարէ, Հանապազ բաղձանօք 'ի նոյն դադարէ. ըստ որոյ յիրաւի ասի, * Հոգին առաւել է անդ՝ ուր սիրէ, քան ուր Հոգեւորէ ‖:

Նաև քանզի յայտ արար մարգարէն 'ի վերոյ, թէ զԱստուած ունի իւր ցանկալի ժառանգութիւն, և 'ի նմէ իմաստնանալով և 'ի Հոգւոյ նորա լցեալ լինելով՝ վառեալ է 'ի սէր նորա, մինչև ոչ միայն 'ի տունջեան, այլև 'ի գիշերի առ նա բերիլ տարփանօք սրտի, այսու բանիւս յայտ առնէ՝ թէ վասն այսր իսկ՝ յամենայն ժամ առաջի աչաց ունի զԱստուած. Այլ զի վտանգ մեծ է սասանելոյ 'ի սիրոյն Աստուծոյ 'ի կեանս յայս, յաւէտ յայն ուղղէ զբանն իւր՝ ասելով:

Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմէ՝ (զի մի սասանեցայց): որ տեսանելով զիս միշտ 'ի վտանգի սասանելոյ և յետս կալոյ 'ի ժառանգութենէ,

ինձ՝ յառաջագոյն աչօք հոգւոյ իմոյ տեսանէի զտէր իբրև առաջի աչաց . * զի է ընդաջմէ ինձ ‖ . ուր բառս զի՝ կրկնակի կարէ իմացեալ լինել . մի՝ իբր թարմատար շաղկապ . յոր միտ կամի ասել . տեսանէի զտէր ընդաջմէ ինձ : Այլ մի ևս՝ իբր շաղկապ պատճառական . և ըստ այսմ կամի ասել . առաջի աչաց իմոց ունէի զա̃ծ , վ̃ն զի չէ նա հեռի յինէն , այլ՝ է ընդաջմէ ինձ , ք̃ միշտ ընդ իս է՝ առ 'ի պահել զիս , խնամել զիս , զօրացուցանել զիս , մխիթարել զիս , քաջալերել զհոգի իմ , վանել զվտանգս չարեաց , առաջնորդել ինձ 'ի հաճոյս իւր , և հաստատել զիս 'ի բարի առաջադրութեանս իմում : Իսկ թէ առ ինչ՝ յայտ առնէ ասելովն :

Զի̃ մ̃ սասանեցայց : Ուր բառս զի՝ կրկնակի յարէ զայս բան ընդ վերնոյն . մի՝ թէ ա̃ծ ը̃աջմէ ինձ լինելովն պահէ զիս , որպէս զի մի սասանեցայց : Երկրորդ՝ թէ վ̃ն տեսանելոյ իմ զա̃ծ՝ այս ինչ բարի եղև ինձ , զի մի սասանեցայց : * Որպէս իմացիր զայս տեսութիւն
,, լինել ( ասէ լամբ . ) , ք̃ յորժամ դու զգալի արքայի
,, առաջի շրջիս , յա̃մ ներհակաց կամացն նորա՝ 'ի բնուէ̃
,, կամացդ երկիւղէ խորշիս ‖ : Այնպէս և որ շրջի առաջի ա̃յ , և տեսանէ զնա հաւատով ը̃աջմէ իւրմէ , ք̃ ընդ իւր , կայ 'ի զգաստութե̃ զի մի ինչ արասցէ ը̃դէմ նորա : Ըստ սմին խօսի և գրիգոր վարդապետ 'ի հրահանգումն . երես . 496 . յասելն . վայելուչ գրէ մարգարէն , * յառաջագոյն տեսանէի զտէր առաջի իմ
,, յա̃մ ժամ՝ զի էր ընդ աջմէ ինձ . զի մի սասանե-
,, ցայց , ք̃ զի մնաց աչօք համապաղ ինձ մերձակայ և
,, ընդաջմէ ինձ կացեալ տեսանէի . և 'ի ն̃ր տեսուէ̃ն
,, երկուցեալ և պատկառեալ ոչ սասանէի 'ի մեղաց ‖ .
և ապա յաւելու ասել . * այս ոչ միայն դաւթի , այլև
,, ա̃մ ումեք այսպէս պատահէ , զի յորժամ զա̃ծ ին-
,, քեան մերձակայ և տեսող հաւատայ՝ զիարդ կարէ
,, մեղանչել ‖ :

Գողն ոչ գողանայ , եթէ գիտասցէ՝ թէ տեսանէ դատաւորն , կամ տէր ընչիցն : Եթէ ներկայութիւն յարգոյ մարդոյ զապէ զմեզ 'ի չարէ , ապա զինչ արասցէ ներկայութիւնն ա̃յ , մինչդ եթէ հաւատասցէ մարդ , թէ որ տեսանէ՝ պատուհասէ : Գրասան 'ի

զգալն թէ հարկանելոց է վարիչն՝ ոչ միայն խոտորի 'ի թիւր ճանապարհէ, այլ վաղվաղէ յընթացսն. ըստ այնմ և դու կրթեա՛ զզգայութիւնդ, և ասա՛ ցքեզ. * ո՞չ ապաքէն ինքն տեսցէ զճանապարհս իմ, և ա̃մ գնացք իմ թուեսցին ||. յոբ. լա̃. 4 ։ Այլին այսու լուսաւորիս 'ի հոգիդ, և զտկարացեալ զզգայութիւնդ զօրացուցանես 'ի բարին ։ Մոլորակք յորժամ յանդիման ունին զարեգակն՝ լուսաւորին յինքեանս, և ազդեն յենթալուսնեայս զզօրութի՛ արեգական. եթէ և դու յանդիման աչաց հոգւոյդ ունիցիս զա̃ծ, ըստ նոյնն բերիս 'ի քեզ և 'ի զգայութիւնդ ։

Մի՛ խնդրեր զա̃ծ արտաքոյ քո, զի 'ի քեզ է. որպէս ասէր երանելին այն. * խնդրէի արտաքոյ իմ՝ զոր յիս ունէի ||. առաւել մօտ է նա մեզ՝ քա̃ մեք 'ի մեզ, և ոչ բնաւ հեռի. ապա թէ ոչ՝ ոչ ևս լինէաք. զի ո̃պ ասաց առաքեալն, * Նաև ոչ հեռի իսկ է յիւրաքան-
„ չիւր ումեքէ 'ի մէնջ. զի նովաւ կեամք, և շար-
„ ժիմք և եմք ||. գործ. ժէ. 27 ։ Լի են փառօք ամենակարողութե՛ նո՛ր երկինք և երկիր՝, ըս̃ հոգի և մարմին. (եսայ. զ. 3.) նաև ը̃ս բովանդակութե՛ զոլոյ մարդոյն. զի * հոգի ա̃ն ելից զտիեզերս ||. իմաստ. ա̃. 7 ։ Ո̃պ սպունգ եդեալ 'ի ծովու՝ ուր և իցէ՝ եթէ 'ի վեր և եթէ 'ի վայր՝ լի է ջրով ծովու, սոյնպէս և մարդ 'ի ծովու ա̃ծութե՛ եթէ 'ի վեր յերկինս ելանիցէ, և եթէ յանդունդս իջանիցէ (սաղ. ճլէ. 8.) լի է ա̃ծովք ։ Երանի թէ զոյն զայս բարւոք ճանաչէաք, և 'ի ճանաչելն՝ հաւատով 'ի նա յարէաք. զի յայնժամ ոչ միայն նա լինէր 'ի մեզ, այլ մեք 'ի նա. որով և ուղղէաք զգնացս մեր ըստ հաճոյս նո՛ր, և ոչ երբէք սասանէաք. և ոչ թիւրէաք 'ի չարիս, և ոչ ընկղմէաք 'ի մեղս ։ Յայսմ մասին պարտ է մեզ վարիլ ըստ ղեկավարի. զի ո̃պ նա զակն իւր եդեալ ունի 'ի կողմնացոյցն (ըս̃ 'ի պուսուլայն) միագամայն և յուղիղ ընթացս նաւուն, և երբեմն զմին յաչաց յայս և զմիւսն յայն, սոյնպէս և մեք սևեռեսցուք զաչս մեր յա̃ծ՝ որ ընդաջմէ մեր է, և 'ի մեզ, միանգամայն և յուղղութի գործոց մերոց. որով լինի մեզ անվտանգ ընթանալ և անսասան ժամանել 'ի նաւահանգիստ փրկութեան մերոյ ։

Մարգարէն փոխ առեալ՝ * ընդ աջմէ իմմէ ||, կարէր պարզագոյն ևս ասել՝ * ընդ իս է || . բայց վասն երկուց դնէ՝ ընդ աջմէ իմմէ . մի՝ վս յարգութե խօսելոյ . զի աջն է յարգութե նշանակ . և երկրդ՝ վասն ցուցանելոյ թէ ած ընդ մեզ է իբր օգնական յաղթողի գործս՝ որք են ընդ աջմէ, զի 'ի բարեաց համարի . զի սոքին օրինակին յաջ . և ոչ 'ի չարիս՝ որք օրինակին 'ի ձախ . տես զայսմանէ և 'ի սաղ . հը . 28 . ուր ցուցանի՝ թէ յայսպիսի բանս յինչ միտս դնի ընդ աջմէ լինելն այ :

Արդ բան տիրապէս առեալ՝ միայն քսի յարմարի, ըստ վկայելոյ սրբյն պետրոսի 'ի գործս առաք . բ . 25 . զի բանական հոգի նր յառաջագոյն 'ի վայրկենէ յղութե իւրոյ տեսանէր զէութիւնն այ դէմ յանդիման, իբր առաջի իւր . վս զի էր ը աջմէ նր . իբր զի միշտ ը նմա էր հայր՝ իբրև ընդ իւրում էակցի 'ի փառաւորել զնա, և 'ի լուել զաղօթս նր, ուս . ըս այնմ * չեմ միայն՝ զի հայր ընդ իս է || . յովհ . ժզ . 32 :

Իսկ յաւելեալ բանն այն՝ զոր ասէ . * զի մի սասանեցայց ||, ոչ ցուցանէ՝ թէ հոգին քսի կարէր սասանիլ, այլ յաւէտ ցուցանէ, թէ ոչ երբէք կարէր յաղթողի վտանգս բերել, ոչ միայն վոկ՝ զի գոյացապէս միաւորեալ էր ը բանին այ, յորմէ անկարելի էր նմա սասանիլ, այլև վոկ՝ զի միշտ վարիւր հոգւով սբվ . ըստ որում ասի 'ի ղուկ . դ . 1 : * Յս լի հոգւով սբվ դարձաւ 'ի յորդանանէ . և վարէր հոգւովն յանապատ || : և 'ի մատ . դ . 1 . * յայնժամ վարեցաւ յս յանապատ 'ի հոգւոյն || . և 'ի մարկ . ա . 12 . * և նոյն ժամայն հոգին հանէ զնա յանապատ || . որովք ցուցանի՝ թէ նա վարիւր միշտ 'ի հոգւոյն սբյ և հոգւով սբվ, ոչ զի իւրև ոչ վարէր, այլ զի որովհետև այս վարումն սեփականի հոգւոյն սբյ, ասի՝ վարիլ հոգւով սբվ : Արդ յացիկ ամի զորս ասաց մարգարէն, հետևեցուցանէ և ասէ :

թ . Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ . և ցնծացաւ լեզու իմ . ևս և մարմին իմ բնակեսցէ յուսով :

Այս է պտուղն ժառանգելոյ զած, և ունելոյ զնա առաջի աչաց հոգւոյ, մինչ թէ ընդ աջմէ . և յայս իսկ ասէ՝ * վս այսորիկ || . զի վս ունելոյ իմ զած 'ի

ժառանգութ՟ի, և վ՟ն տեսանելոյ զնա առաջի իմ, և վ՟ն կալոյ ն՟ր ընդ աջմէ իմմէ, * ուրախ եղև սիրտ իմ ‖. զի նա միայն ուրախ լինի, որ 'ի ժառանգութ՟ե ունի զբարին՝ ընդ որ հաճի: Եւ ք՟զի յայտ արար 'ի վերոյ՝ թէ 'ի ժառանգութ՟ե իւրում ունի զծայրագոյն բարին զա՟ծ, ապա իրաւամբք ասէ:

Վ՟ն ուրախ եղև սիրտ իմ: Մեր սրտիւ իմանայ զհոգին. ըստ որոյ կամի ասել. ուրախ եղև հոգի իմ 'ի ժառանգութենն ա՟յ: Եւ այս ուղղակի վերաբերի առ ք՟ս, որ ըստ որում մարդ՝ ներգործութ՟բ ժառանգէր զէութ՟ին ա՟յ, և վայելէր յերանական ուրախութ՟ե:

Նոյն այս հայի և առ նոսա, որք ընտրեն զա՟ծ 'ի ժառանգութ՟ի իւրեանց, և յուսով ուրախ լինին 'ի նա 'ի սիրտս իւրեանց այնպիսի ի՟մն ուրախութ՟բ՝ զոր ոչ ոք կարէ յափշտակել 'ի նոցանէ. ըստ որում ասաց տէր: * ուրախ լիցին սիրտք ձեր, և զուրախութ՟ի ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ. . . . զի ուրախութ՟ի ձեր լցեալ իցէ ‖. յովհ. ժզ. 22. և 24:

Կարէր մարգարէն փոխ ասելոյ՝ ուրախ եղև սիրտ իմ, դնել պարզապէս՝ ուրախ եղէ. բայց սիրտ դնելով կամի յայտ առնել զճշմարտութ՟ի ուրախութեանն. զի ո՟չ ճշմարիտ ոսկին 'ի սիրտ երկրի է և 'ի ներքին երակունս հողոյ, և ոչ յերեսս, բայց եթէ 'ի զեղուն այլ յառաւելուն 'ի նոյն, սոյնպէս և ճշմարիտ ուրախութիւնն 'ի ներքս 'ի սրտի է, այլ 'ի հոգին. ուր յառաւելուն զեղու 'ի լեզուն. ըստ որոյ յարէ զկնի, և ասէ:

Եւ ցնծացաւ լեզու իմ: Այսինքն յուրախութ՟է հոգւոյ իմոյ ցնծացաւ լեզու իմ, այլ խօսեցաւ լեզու իմ զբանս ցնծութ՟ե և օրհնութեան: * Օ՛ ի յանտանելի
,, ուրախութենէն սրտին չհանդուրժեալ (ասէ լամբ՟)
,, և զսա առնու իւր կցորդ, տալով 'ի նա զպէսպէս
,, բանս առ սիրեցեալն ա՟ծ աղաղակել ‖ և հայր կոչել
զնա: Եւ զի յայսպիսի ուրախութենէ անդորրանայ և մարմինն. վ՟նկ յաւելու ասել:

Եւս և մարմին իմ բնակեսցէ յուսով: Մարմինն կրկնակի կարէ առեալ լինել աստ. մի՝ ըստ միաւորեալ գոլոյն, և մի ևս ըստ անջատեալ մնալոյ 'ի հոգւոյն. ըստ առաջնոյն կամի ասել. յուրախ լինել հոգւոյս՝ ուրախ լիցի և

մարմին իմ, եւ հանգիցէ 'ի խաղաղութեան եթէ 'ի կեանս՝ անվրդով մնալով, եւ եթէ 'ի մահու, այն ունելով՝ թէ ինքն եւս հանդերձեալ է ծայրագոյն բերկրիլ յարքայութե՛ն. Ըստ երկրորդին այս բան յատկապէս հայի 'ի յոյս յարութեանն. վ՟ն զի որ զա՟ծ ժառանգ ունելով մեռանի, մարմին նորա բնակէ յուսով, զ՟ի մնայ յառնել փառաւոր յարութ՟բ. Եւ այս տիրապէս ք՟սի պատշաճի, ըստ վկայելոյ սրբոյն պետրոսի. գործ. բ. 26. զի մարմին ն՟ր բնակեցաւ 'ի գերեզմանի յուսով՝ զ՟ի սպասելով յառնել յետ երից աւուրց՝ առանց տեսանելոյ բնաւ զապականութ՟ի գերեզմանի. ըստ որում յայտ առնէ զայս 'ի յաջորդ համարն, եւ ասէ.

Ժ. Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս. եւ ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութի՟ւն.

Բառս "դժոխք" 'ի ս՟բ. գիրս կրկնակի առեալ լինի. մի՝ փոխ գերեզմանի, ո՟ր այսմ, * Հանգստեամբ իջեցին 'ի դժոխս ||. յոբ. իա. 13. * Կեանք իմ 'ի դժոխս մերձեցան ||. սաղ. ձէ. 4. Եթէ տ՟ր ոչ օգնեալ էր ինձ, փոքր մի եւս բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս ||. սաղ. ղգ. 17. * Ապականեցան եւ 'ի դժոխս իջին ||. բարուք. գ. 19. * Եւ դու անկցիս 'ի վ՟ր լերանց իբրեւ զմեռեալ. գարշելի 'ի մէջ դիականց կոտորելոց սրով՝ իջելոց 'ի դժոխս ||. ես. ժդ. 19. * Իջուցանիցէք զծերութիւն իմ տրտմութ՟բ հանդերձ 'ի դժոխս ||. ծնն. խդ. 29. Եւ յայլ բազում տեղիս, յորս բառդ դժոխք՝ դնի փոխ գերեզմանի.

Երկրորդ՝ փոխ սանդարամետի, որ 'ի ներքին խորս երկրի. ո՟ր այսմ, * Խոր են դժոխք, եւ դու զի՞ խելամտեսցես ||. յոբ. ժա. 8. * փրկեցեր զանձն իմ 'ի դժոխոց ներքնոց ||. սաղ. ձե. 13. * Թէ իջանեմ 'ի դժոխս, եւ անդ մօտ ես ||. սաղ. ճլը. 8. * դժոխք 'ի ներքուստ դառնացան 'ի պատահիլն քեզ ||. ես. ժդ. 9. եւս եւ՝ բ. օրին. լբ. 22. առակ. թ. 18. իմաստ. ե. 14. սաղ. Է. 18. բարուք բ. 17. եզեկ. լա. 16. եւ 17. եւ յայլ բ՟զմ տեղիս. յորս բառդ "դժոխք" նշանակէ զայն տեղին, որ է 'ի կեդրոն երկրիս, որ եւ կոչի սանդարամետ. յորում կան եւս վայրք զանազան աստիճանաւ. մին է տեղին դատապարտելոց. ուր

գնաց հոգի խորտկաճաշ մեծատանն ։ Նոյնպէս և տեղին այն, ուր կային հոգիք նահապետաց, այն է գոգն աբրահամու . ուր գնաց աղքատ ղազարոս . որպ յայտնի աւանդի ՚ի ղուկ . ժզ . 23 ։ Թող և զայլ տեղիս՝ զորոց խօսին ածաբանք ։

Նոյնպէս և բառս "անձն" կրկնակի առեալ լինի ՚ի սբ գիրս ։ Մի՝ փխնկ բառիս հոգի . օր այսմ, * Զանձրացաւ յիս անձն իմ ‖ . ողբ . գ . 20 ։ * Տրտում է անձն իմ մինչև ՚ի մահ ‖ . մարկ . ժդ . 34 ։ * Տրտմութի է անձին իւրոյ ‖ . առակ . ժդ . 10 ։ * Ի զուր յուսացաւ անձն նր ‖ . եսայ . իթ . 8 ։ * Ցանկալի էր տն անձն նր ‖ . իմաստ . դ . 14 ։ * Յանձն չարարուեստ իմաստութի ոչ մտանէ ‖ . իմաստ . ա . 4 ։ *Պատմեա ինձ՝ զոր սիրեաց անձն իմ ‖ . երգ . ա . 6 ։ *Անձն ամպարշտի ցանկանայ չարեաց ‖ . առակ . իա . 10 ։ * Թոյլ տուր, զի անձն նր ցաւագին է ‖ . դ . թագ . դ . 27 ։ * Խնդրեցէք զնա յամ սրտէ և յամ անձնէ ձերմէ ՚ի նեղութեան ձերում ‖, բ . օրին . դ . 29 ։ * Անձն իմ օրհնեսցէ զած՝ զթգրն մեծ ‖ . յոբ . ժգ . 19 . * գտջիք հանգիստ անձանց ձերոց ‖ . մատ . ժա . 29 ։ Յորս բառդ "անձն" դնի փոխանակ հոգւոյ ։

Երկդ՝ փխնկ պարզ անձին, կամ փխնկ այնր, զոր յայտ առնեն բառքդ՝ ես, դու, նա, ինքն . օր այսմ, * ժողովեցէք . . . ըստ թուոյ անձանց ձերոց ‖ . ելից . ժզ . 16 ։ * Ճանաչէք դուք զանձինս պանդխտաց ‖ . ելից . իգ . 9 ։ * Մեռան ամ արք՝ որք խնդրէին զանձն քո ‖ . ելից . դ . 19 ։ * Սատակեսցի անձն այն յազգէ իւրմէ ‖ . ծնն . ժէ . 14 . * Մեռցի անձն իմ ընդ անձինս արդարոցն ‖ . թուոց . իգ . 10 ։ * Անձն ընդ անձին տուժեսցի ‖ . ղևտ . իդ . 18 ։ * Անձն՝ որ կերիցէ ՚ի նմէ, մեղս առցէ ‖ . ղևտ . է . 18 ։ * Ուր խնդրեցից անձին իմոյ տեղի, խնդրեցից և քում անձին ‖ . ա . թագ . իբ . 23 ։ * Որպ մեծացաւ անձն քո աստ այսօր առաջի աչաց իմոց, այնպէս մեծասցի անձն իմ առաջի տն ‖ . ա . թագ . ժզ . 24 ։ * Արդարն յուտելն իւրում յագեցուցանէ զանձն իւր . և անձինք ամպարշտաց կարօտք եղիցին ‖ . առակ . ժգ . 25 ։ * Անձինք անօրինաց սատակեսցին տարաժամ ‖ . առակ . ժգ . 2 ։ Անձն յագեալ զխորիսխ և զմեղր արհամարհէ . բայց անձին

կարօտելոյ և զառն իբրև զքաղցր թուի ‖. առակ. իէ. 7. * Անձինք ձեր տեսցեն զզուարճ երկայնակեաց ‖. եսայի. ծզ. 10: * փրկէ 'ի չարէ զանձն վկայ հաւատարիմ ‖. առակ. ժդ. 25: * Պատերազմօղն մի ապրեցուսցէ զանձն իւր ‖. ամովս. բ. 14: * Հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վր ոչխարաց ‖ յովհ. ժ. 11: * Ամ անձն' որ ընդ իշխանութբ է, 'ի հնազանդութն կացցէ ‖. հռովմ. ժգ. 1: Այնպէս է և յայլ բազում տեղիս, յորս բառս անձն' դնի փխկ պարզ անձին' կմ փխկ ինքեան: Զայսոսիկ այսպէս առաջի եդեալ' մատիցուք 'ի մեկնութիւն առաջի եդեալ բանիդ' զոր ասէ:

Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս. և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն: Յայսմ բանի եթէ բառս "անձն" առեալ լիցի փխկ հոգւոյ, բառս դժոխք' նշանակէ զներքին դժոխսն, ուր էջ հոգին քսի. զի յայտ է թէ յորժամ մարմինն նր եդաւ 'ի գերեզմանի, հոգի նորա բաժանեալ էր 'ի նմէ, ուստի և ոչ էր անդ ընդ մարմնոյն, այլ' իջեալ 'ի բանտն դժոխոց' ուր էին հոգիք արդարոց. և այս անտի յայտ է, զոր գրէ պետրոս. ա. գ. 18. * Թէպէտև ասէ մեռաւ (քս) մարմնով, այլ կենդանի է հոգւով. որով (հոգւով) և ոգւոցն' որ էին 'ի բանտին, երթեալ քարոզեաց ‖. կմ իջեալ 'ի բանտն յայն' ուր սրբոց արգելեալ պահէր զհոգիս արդարոցն, քարոզեաց նց զինքն փրկիչ նոցին. կմ է' յայտ արար նց, թէ ինքն է ած և փրկիչ նոցա. և երանական տեսութբ երանացոյց զնս. և յաղթեալ բռնութեան սանյի' վերածեաց զնս ընդ իւր յարքայութի երկնից:

Ըստ այսմ մտաց յասելն մարգարէին 'ի դիմաց քսի * Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս ‖. կամի ասել, յիջանել հոգւոյ իմոյ 'ի դժոխս' ոչ թողցես, զի անդ մնասցէ, այլ' մնւնդ հանցէ անտի զայնոսիկ' որք ակն ունէին ինձ: Զայս միտ բերէ պետրոս առաքեալ զայս բան 'ի գործս առաքելոց' 'ի ցուցանել զյարութիւն քսի. վս զի յարէ զնա, * զի ոչ թողաւ ասէ ոգի նր 'ի դժոխս. և ոչ մարմին նր ետես զապականութի ‖. գործ. բ. 31: Եւ որոշ դնէ, ոգի և մարմին. վասն հոգւոյն ասէ' ոչ թողաւ 'ի դժոխս. որով իմանայ զբանտն դժոխոց, զի ըստ ասելոյ իւրոյ' հոգի նր գնաց

անդ՝ իսկ վ՟ն մարմնոյն ասէ՝ ոչ ետես զապականութի՟ ։

Այլ եթէ բառիս "անձն" իմասցի աստ ինքն քրիստոս, կարէ և բառիս դժոխք՝ իմացեալ լինել աստ գերեզմանն . զի ճշմարիտ է՝ թէ ինքն ք՟ս ըստ մարմնոյն էր ՚ի գերեզմանի . զի մարմին նորա թէպէտև անջատեալ էր ՚ի հոգւոյ, բայց չէր անջատեալ յա՟ծութ՟ենն . վ՟յ և այն՝ որ եդեալ էր ՚ի գերեզմանի, էր ք՟ս որդին ա՟յ ։ Եւ այս յայտնի լինի յաջորդ բանիւն, զոր ասէ . * ոչ տացես ս՟բյ քում տեսանել զապականութի՟ ‖ . ուր * ս՟բյ քում ‖ ասելով իմանայ զք՟ս՝ մարմնով եդեալ՚ի գերեզմանի . զի նա էր միայն ս՟բն ա՟յ, այ՟ է ք՟ս . որ թարգմանի օծեալ, այ՟ սրբեալ ա՟ծութ՟բ՝ և սուրբ ։

Այլ թէ արդեօք այն՝ որ էր ՚ի գերեզմանի, կարէ՞ր կոչիլ "անձն", ոչինչ է տարակուսելի . վ՟ն զի այն էր բանն ա՟ծ մարմնով եդեալ անդ ։ Թող զայն, զի ուրեք ուրեք ՚ի ս՟բ գիրս՝ նաև մեռեալ մարմինն մարդոյ կոչի անձն . յոր միտ ասի ՚ի գիրս թւոց . ժ՟թ . 13 . * ա՟մ՝ որ մերձենայցէ ՚ի մեռեալ անձն մարդոյ՝ որ մեռանիցի ‖ . և ՚ի ղևտ . ի՟ա . 11 . ասի վ՟ն քահանայապետին, թէ * յանձն վախճանեալ մի՟ մտցէ ( այ՟ մի՟ մերձենայցէ ) ‖ ։ Արդ՝ եթէ ըստ ս՟բ գրոց մարմին մեռեալ մարդոյ կոչի անձն, ևս առաւել մարմինն ք՟սի անջատեալ՚ի հոգւոյն ։ Եւ ըստ այսմ յասելն աստ, * զի ոչ թողցես զանձն իմ ՚ի դժոխս ‖ . միտ բանին լինի այս . յորժամ թաղիմ ես ՚ի գերեզմանի, ոչ թողցես զիս մնալ անդ և ապականիլ ։ Եւ առ այս՝ յաւելու ասել ։

Ոչ տացես ս՟բյ քում տեսանել զապականութի՟ ։ այ՟ ոչ տացես, զի ս՟բն քո, այ՟ ք՟ս՝ ՚ի գերեզմանի մնասցէ . և մարմին ն՟ր ապականեսցի, կամ նեխեսցի և փտեսցի, ը՟ որում ապականին մարմինք որդւոց մարդկան, որք պղծեալ են ՚ի ձեռն սկզբնական մեղաց . այլ յարուսցես զնա ։ Այս բան կարէ պատշաճիլ և ս՟բյ կուսին . որ թէպէտ և մեռաւ, բայց մարմին ն՟ր ոչ ետես զապականութի՟ . զի ապականութի՟ մարմնոյ էր ՚ի սկզբնական մեղաց . ըստ որում սպառնացաւ ա՟ծ, * հող էիր և ՚ի հող դարձցիս ‖ . իսկ արդ ս՟բ կոյսն ոչ անկաւ ընդ սկզբնական մեղօք, ապա և ոչ ապականութե՟ գտաւ մասնակից ։ Մարմին մեր ՚ի հող լուծեալ՝ ո՟պ թէ ՚ի վայրի տեղ-

ւոջ 'ի յանապատի մոռացեալ մնայ . իսկ կուսինն ա-
զատ գոլով՝ եւ անապական 'ի վեր . * ո՞վ է սա որ ելա-
նէ յանապատէ իբրեւ զստեղն ծխոյ խնկեալ . երգ .
գ . 6 ։ Եւ չասիցես՝ թէ ըստ այդմ եւ ոչ մահու էր պար-
տական . յիրաւի է , եւ սակայն 'ի մեռանիլ որդւոյ ն՟ր
կամաւ վ՟ն մեր , ինքն եւս մեռաւ սիրով վ՟ն նորա ։ Ասա-
ցի սիրով . զի ո՟չ հասարակ աւանդութի է , ո՟ր կոյսն
ոչ եթէ հիւանդութե՟ մեռաւ , այլ սիրով որդւոյ իւ-
րոյ . ը՟ստ այնմ . ողբ . ա՟ . 13 . * առաքեաց հուր ( սիրոյ )
յոսկերս իմ, եւ բաժանեաց զիս ‖ ։ Աւանդի թէ փիւ-
նիկ հաւ հրով այրեալ մեռանի . եւ ստեղն ծխոյ նորա
առաւել քան զա՟մ բարձրանայ ։ Սոյնպէս եւ իմանալիս
այս փիւնիկ հրով սիրոյ մեռաւ , եւ ել 'ի բարձունս
վերափոխմամբ իբրեւ զստեղն ծխոյ ։ Եւ զի սքանչելի
ի՟մն եղեւ այս՝ սքանչելեօք ի՟մն ժողովեցան առ նա ա-
ռաքեալքն 'ի փոխման նորա առ 'ի լինել վկայ ճշմար-
տութեանն ։ Ասի թէ 'ի մերձենալ մահու փիւնիկ հա-
ւու՝ ազգք ազգք թռչնոց հասանեն առ նա 'ի տեսա-
նել զնա վ՟ն մի գոլոյ միայն 'ի վ՟ր երկրի . ըստ այսմ
պատահեցաւ եւ 'ի մերձենալ մահու ս՟բ կուսին ։ Մա-
նաւանդ թէ նա ինքն տ՟րն ինքնին եկն առնուլ զնա .
անխնայելով 'ի մարմին ն՟ր՝ զի մի տեսցէ զապականութի .
որովհետեւ ինքն էր յօրինեալ զնա վ՟ն իւր ։ Օգոստոս
կայսր կամեցաւ յապականութի ածել զաղեքսանդրիա
քաղաք , եւ հողոյ հաւասարել . բայց քանզի գեղեցիկ
էր , եւ հիմնեալ 'ի մեծէ աղեքսանդրէ՝ ոչ իշխեաց առ-
նել զայս ։ Ապա եւ ք՟ս տեսեալ թէ քան զա՟մ գեղե-
ցիկ էր իմանալի այս քա՟ք , եւ ինքն բարձրեալն ար-
կեալ էր նմա հիմունս . ( սաղ . ձզ . 5 . ) ոչ եթող քակ-
տիլ , այլ մի՟նչ փառաւորիլ ։ Տես զայսմանէ 'ի ճառն
վերափոխման 'ի գիրքն կոչեցեալ՝ պատկեր տօնից
տիրամօրն ։

Ոմանք յարմարական մեկնութե՟ զայս բան վերածեն
յանապականութի կտաւոց թաղմանն ք՟սի . իբր թէ
ասել , ոչ տացես տեսանել զապականիլ սուրբ կտաւոցն՝
յորս պատեցաւ ս՟բն քո , եւ ոչ եւս զապականիլ այլոց
հանդերձից ն՟ր . ըստ որում աւանդութի է եկեղեցւոյ ,
թէ այսօրիկ հանդերձեղէնք մնացին մինչեւ ցայժմ ,
բաշխեալ 'ի մասունս 'ի մէջ հաւատացելոց՝ ո՟րի են

և այլ բզմ լինչ, զի անկար պատմուճանն, բևեռքն, փշեայ պսակն, սպունգն, սիւնն, եւ. զորս ժողովե-ցին աշակերտք ։ Զկտաւոցն և զվարշամակն առ-եալ բարսեղ վրդ. 'ի մեկն. մարկ. գլ. ժզ. թէ առին 'ի գերեզմանէ պետրոս և յովհաննէս, սոյնպէս և այլք զայլ իրս ։

Զայս առաջիկայ բանս թէպէտ միայն քոյ պատշաճի ասել, սակայն մեք եւս կարեմք ասել զայն . մի՛ զի եմք անդամք քոյ ։ Երկդ՝ զի և զմեզ նոյնս յարոյց ընդ. որպ ասէ սբն պօղոս . եփես . բ . 5 . * մինչդեռ մե-ռեալ էաք 'ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ 'ի քս . քզի շնորհօք ապրեցայք . ընդ նմին յարոյց և ընդ նմին նս-տոյց յերկնաւորս 'ի քս յս ‖ ։ Եւ ե՛րդ՝ զի հոգիք մեր եւս շնորհօքն քոյ ոչ թողցին 'ի դժոխս . և մարմինք մեր ոչ տեսցեն զյաւիտենական ապականութիւն ։

Այլաբանօրէն՝ ոչ եթող քս զեկեղեցի իւր 'ի միշտ հալածանաց, որ օրինակի 'ի դժոխս . և ոչ եթող նմա իբրև սրբոյ իւրում տեսանել զապականութիւն . մնւնդ զի միշտ կեանս տայ նմա, համապազ կերակրելով զնա կենարար մարմնով և արեամբ իւրով, և հաճոյարար շնորհօք ։

Բարոյապէս, 'ի ձեռն դժոխոց կարէ նախ իմանալ լինել մարմինն ըստ լամբ'' . ըստ որոյ կամի ասել . ոչ թողցես զիս պանդխտիլ 'ի մարմնի աստ . և ոչ տացես ինձ ապականիլ յաւիտեան ։ Երկդ՝ կարէ իմանալ լինել տառապանքն և վիշտքն . յոր մտ ասէ մարգա-րէն . * վիշտք դժոխոց պաշարեցին զիս ‖ . սաղ . ժէ . 6 ։ և ձժդ . 3 ։ Եւ ըստ այսմ կամի ասել . գիտեմ տէր՝ զի որովհետև եղեալ եմ 'ի քեզ զամ զյոյս իմ, ոչ թող-ցես զիս մնալ համապազ 'ի դառն վիշտս փորձութեանց . այլ փրկեսցես զիս . և այնու ոչ տացես ինձ թոյլ ա-պականիլ մեղօք . մնւնդ թէ ցուցցես ինձ և զճանա-պարհս քո, և ուրախութբ լցուցես զիս ։ Եւ զայս յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով ։

ժա . Ցուցեր ինձ զճանապարհս կենաց . լցուցեր զիս ու-րախութեամբ յերեսաց քոց . 'ի վայելչութեան աջոյ քոյ մինչև իսպառ ։

Այս բանք եթէ մտածեսցին ըստ այնմ՝ զոր արտա-

քոյ յայտնէն մ̃նչ ըստ երկդ հատուածոյն , են որպէս կնիք այնր ամ̃ի , զոր ասաց մարգարէն ցայս վայր · իսկ եթէ մտածեսցեն ըստ այնմ, զոր 'ի ներքս փակեն , են որպ̃ նպատակ կամ եզր , յոր հայեսցին բանք սաղմոսիս · զի 'ի մէջ բերեալ զցոյց ճանապարհի կենաց՝ առաջի առնէն ապա և զեզրն՝ այ̃ զլիանալ հոգւոյն երանական ուրախութե̃ , յոր յանգին և եզերին փափաքմունք մարդոյ · Արդ հայելով նախ 'ի ճանապարհ կենաց՝ ասէ ·

Ցուցեր ինձ զճանապարհս կենաց · Ճանապարհաւ կենաց նախ նշանակի աստ այն , որով լինի գնալ 'ի մահուանէ 'ի կեանս , այ̃ 'ի մեռելութե̃ 'ի յարութի̃ · Այս ճ̃պհ անծանօթ է մարդոյ · զի ոչ ոք գիտէ՝ թէ երբ յառնելոց իցէ 'ի մեռելոց , բայց միայն քս՝ զի նա միայն գիտէր զայն ըստ որում մարդ · Քզի նմա միայն եցոյց հայր՝ թէ երբ ինքնին յառնելոց իցէ · վ̃նկ ասէ · * Ցուցեր ինձ զճանապարհս կենաց ‖ · այ̃ ինձ միայն՝ և ոչ այլում՝ յայտնի արարեր , թէ յետ մեռանելոյ իմոյ՝ երբ ունիցիմ ինքնին յառնել ·

Այս մեկնութի̃ թէպէտև երևի մթին , բայց է ճշմարիտ և համաձայն նկարագրին · և յայս իսկ յաւելու առաքեալն պետրոս 'ի վկայութիւն յարութե̃ն քսի զայն զայս բան · գործ · բ̃ · 28 · ապա թէ ոչ՝ աւելորդ լինէր զայն յառաջ բերել առ 'ի ցուցանել զյարութի̃ նորա · Իսկ թէ յոգնակի դնէ , * զճանապարհս կենաց ‖ · այս ցուցանէ՝ թէ ոչ միայն գիտէր զիւրն , այլև զայլոցն ամ̃ցն · Հնար է ևս ասել , թէ զյոգնականն դնէ փ̃խնկ եզականի · որպէս և դնի 'ի բնագիրս եբրայեցւոց · այ̃ է՝ * զճանապարհ կենաց ‖ ·

Երկրորդ՝ ճանապարհաւ կենաց նշանակի օրէնքն այ̃ , պատուիրանք նորա · զի որովք լինի գնալ 'ի կեանս · ըստ որոյ 'ի սաղմոսս ինչ մեր փ̃խնկ դնելոյ զճ̃նպրհս կենաց · դնի , զճ̃նպրհս քո՝ կենաց · Զայս ճ̃նպրհս եցոյց քսի հայրն երկնաւոր ուսանել մարդկան · Ու ըստ այսմ ոչ միայն քս , այլև ամ̃ մարդ կարէ ասել առ ա̃ծ · ցուցեր ինձ զուղիղ ճ̃պհս 'ի ձեռն օրինաց քոց՝ ժամանել նոքօք առ յաւիտենական կեանսդ · Արթ է ասլին իմանալ և զճ̃նպրհսն առաքինութեանց մ̃նչ խոնարհութեան ·

Ուղղաբանօրէն՝ քո է ճանապարհ կենաց. զի նովաւ միայն կարեմք գնալ առ Հայր. որպէս և ինքն վկայեաց յասելն. * Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք ‖. Յովհ. ժդ. 6, և թէ՝ * ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինև ‖. Յովհ. ժդ. 6. Իսկ ըստ այսմ՝ նոր եկեղեցին ցնծալից երգէ առ Հայր ասելով. ցուցեր ինձ զփեսայն իմ զՔս, որ եղև ինձ ճանապարհ գալոյ առ քեզ, և առաջնորդ ժամանելոյ 'ի կեանսն յաւիտենից. Որդ՝ յետ առաջի դնելոյ մարգարէին զբան ճանապարհի կենաց, յայտ առնէ այժմ և զվախճան այնր ասելով.

Լցուցեր զիս ուրախութեամբ յերեսաց քոց։ Ո՞չ յայտ է յառաջելոցս, տէրն մեր 'ի վայրկենի յղութեան հոգւովն իւրով դէմ յանդիման տեսանէր զերեսս Հօր, քանզի զէութիւնն իւր. վասն զի հարկ էր բանական հոգւոյ նորա 'ի միաւորիլն ընդ անձին բանին՝ տեսանել զայն, ընդ որում միաւորէր. Իսկ զի՞նչ՝ որովհետև գերագոյն աստիճանն փակէ ընդ իւրև զստորինսն, աստիճանն անձնաւորական միաւորութեան գոլով գերագոյն յոյժ քան զաստիճանն փառաց՝ քանզի քան զաստիճանն տեսանելոյ զԱծ, հոգին Քրի ունելով զանձնաւորական միաւորութիւնն 'ի վայրկենի անդ յղութեան՝ ունէր և զտեսութիւնն իւր. Իսկ քանզի 'ի տեսութենէն իւր է լիութիւն ճանաչման, յորում պարագրի էութիւն երանական ուրախութեան, վասն և յայնմ վայրկենի յղութեան հարկ էր ունել Քրի զայն լիութիւն երանութեան և ուրախութեան. ուստի ասէ. * Լցուցեր զիս ուրախութեամբ յերեսաց քոց ‖. քանզի լցուցեր զիս երանական ուրախութեամբ, որ 'ի յերեսաց քոց՝ քանզի տեսութեամբ երեսաց քոց.

Իսկ երես ասելով ըստ որում ասացաք, իմանայ զէութիւն իւր. զի որպէս 'ի տեսանել երեսաց մարդոյ՝ տեսանի և վայելեալ լինի մարդն, սոյնպէս և տեսութեամբ էութենէն իւր՝ տեսանի Աստուած և վայելեալ լինի անճառելի ուրախութեամբ. Որդ զոր ասացաք զՔսէ, զնոյն իմա և զերանելեաց ընդ իւրեանց շաւիղ. զի և նոքա լցեալ լինին ուրախութեամբ յերեսացն իւրոց՝ յարքայութեան.

Օ այս բան՝ որ դնի յանցեալ ժմկն, մարթ է առնուլ և յապառնին և 'ի ներկայն. զի զինչև իցէ բանք մարգարէութեան՝ որք աւանդին 'ի դէմս այլոյ, յերիս ժմկս են կարեն առնել. յապառնին՝ հայելով 'ի ժմկն, յո-

րում կատարելոց է այն մարգարէացեալ բանն . 'ի ներկայն՝ հայելով 'ի ժմկն, յորում կատարի . և յանցեալ՝ հայելով 'ի ժմկն՝ յորում արդէն կատարեալ է ։ Եւ այսօրինակ 'ի սաղմոսի աստ ևս յայտնի երևին . զի բանք սորա առաջի դնին յերկս ժմկս ևս . 'ի համարն՝ 1 . 5 . և 8 . 'ի ներկայն ։ 'ի համարն՝ 2 . 3 . 6 . 9 . և 11 . յանցեալն ։ Իսկ յայլս՝ յապառնին ։ Որպէս է տեսանել և յայլ բզմ սաղմոս, ևս և 'ի բզմ մարգարէութիս ։ Եւ քզի այս ուրախութի զոր եդ մարգարէն պատճառեալ յերևասցն այ՝ կայանայ 'ի հաղորդութե ածային քաղցրութեան, և տևէ յաւիտեան,

յայս հայելով յաւելու ասել ։

Ի ՔԱՂՑՐՈՒԹԵ ՎԱՅԵԼՉՈՒԹԵ ԱՋՈՅ ՔՈՅ ՄԻՆՉԵ ԻՍՊԱՌ ։ Այսինքն, այն ուրախութի որով լցուցեր զիս, է 'ի քաղցրութե վայելչութե աջոյ քոյ, զի թէ՝ հաղորդեալ է ինձ 'ի ծովէ անտի երանութեդ և վայելչութեդ ։

Այլ աստանօր բառքդ քաղցրութիւն և վայելչութիւն՝ կրկնակի կարեն առեալ լինել, զի փոխ ածականի և գոյականի . և ըստ այսմ, եթէ բառդ վայելչութիւն՝ առեալ լիցի փոխ ածականի, նշանակէ վայելուչ, կամ ցանկալի, կամ ամենավայելեն . որով և բառդ քաղցրութի նշանակէ զանսահման բարութիւն այ քաղցրութբ հաղորդեալ, կամ զներքին երանութիւնն այ, յոր միտ կամի ասել . յամենացանկալի քաղցրութէ բարութե և երանութե քո եղև ինձ լիանալ ուրախութբ ։ Որպէս ևս եթէ բառդ քաղցրութի առեալ լիցի փոխ ածականի, նշանակէ ամենաքաղցր . որով և բառդ վայելչութի նշանակէ զպանծելի փառս այ . որ 'ի ժառանգելն լնու զհոգին քաղցրութբ և բերկրութեամբ . յոր միտ կամի ասել . յամենաքաղցր վայելչութէ փառաց քոց եղև ինձ հասանել 'ի լիութե ուրախութե ։

Իսկ աջ ասելով՝ ոչ իմանայ աստ զամենակարողութիւն այ, այլ զփառս նորա . յոր միտ ասի, թէ քս է ը աջմէ այ . ( կողոս . գ . 1 ։ եբր . ա . 3 . և ժ . 12 ։ և ա . պետ . գ . 22 ։ և սաղ . ճթ . 1 ։ և գործ . է . 55 ։ և ղուկ . իբ . 69 ) ։ Եւ կամ իմանայ զառատաձեռնութիւնն այ որ օրինակի յաջ, ևս և զխանդաղատական սէր նորա . յոր միտ ասէ հարսն յերգս երգոց . * խան-
,, դակաթ եմ ես սիրով . . . և աջ նորա պատեսցէ

» զԼինել ‖ . Երգ . Բ . 6 . և զի այս խանդաղատական սէր մտածի իբր պատճառ մատակարարելոյն այ ըղքաղցրութի իւր արդարութբ , վն ասէ մարգարէն այլուր . * արդարութբ լի է աջ քո ‖ . սաղ . խէ . 11 . Նաև ծանիր ես զի այս կուսակութիւնք բանից՝ որք դնին աստ , ոչ է քաղցրութի , վայելչութի , և աջ՝ ոչ այլ ինչ ցուցանեն , բայց եթէ զառաւելութիւն կատարելութե իւրն . յորմէ հաղորդեալ եղև այն ուրախութի . և զայս հաղորդութի ուրախութե դնէ լինել մինչև իսպառ . իբր զի այնպէս հաղորդեալ եղև այն՝ որ տևելոց էր մինչև յաւիտեան , և կամ թէ հաղորդեալ եղև լիուլի մինչև 'ի ծագ կատարելութեան .
Նոյն զայս բան տիրապէս կարէ ասել մարդկայինս բնութի առ որդին այ , զի 'ի մեռանել իւր 'ի ճնպրհէ կենաց՝ եկն առ նա , և եցոյց նմա ոչ միայն զճնպրհ կենաց , այլ և զերեսս իւր , և լցոյց զնա ուրախութբ 'ի քաղցրութե վայելչութեան իւրոյ , զոր յանդիման արար 'ի բևեռիլ աջոյն իւրոյ 'ի խաչ . որով և փրկեաց զմեզ , և եած զընտրեալս իւր 'ի կեանս յաւիտենականս .

## ՍԱՂՄՈՍ · ԺԶ .

*Խնդրուածք առ ած վասն ընդունելոյ 'ի նմէ նպաստս հաստատութեան յուղղութի վարուց . Եւս և աղաչանք վասն պաշտպանելոյ 'ի հալածչաց և 'ի թշնամեաց . և յայտարարութիւն գործոց նոցին .*

### Աղօթք 'ի Դաւթէ .

1 Լուր Տէր արդարութեան , և նայեա՛ 'ի խնդրուածս իմ .
ունկն դիր աղօթից իմոց , զի ոչ շրթամբք նենգա-
ւորօք ։ 2 Յերեսաց քոց իրաւունք իմ ելցեն , և աչք իմ
տեսցեն զուղղութիւն ։ 3 Փորձեցեր զսիրտ իմ , և հններ 'ի
գիշերի . հորձեցեր զիս , և ոչ գտաւ յիս անիրաւութիւն ։ 4 Մի՛
խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան . վն բանից շր-
թանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս ։ 5 Հաստատեա

[illegible] 6 [illegible]
[illegible]
[illegible] 7 [illegible]
[illegible]
[illegible] 8 [illegible]
[illegible]
[illegible] 9 [illegible]
[illegible]
[illegible] 10 [illegible]
[illegible] 11 [illegible]
[illegible]
[illegible] 12 [illegible]
[illegible]
[illegible] 13 [illegible]
[illegible] 14 [illegible]
[illegible]
[illegible] 15 [illegible]
[illegible]

## ՎԵՐՆԱԳԻՐ.

Աղօթք 'ի դաւիթ.

ՉՈՐՍ ՍԱՂՄՈՍ ԵՆ, ՈՐՈՑ Դ
վերնագիրսն գնի բառս աղօթք. մին է
առաջինկայդ. յասելն՝ * աղօթք 'ի դա-
„ ւիթ ||. Երկրորդ է ՁԵ. որ նոյնպէս գնի
* աղօթք 'ի դաւիթ ||. Երրորդ է ՁԹ. յասելն. * ա-
„ ղօթք 'ի մովսէս այրն այ ||. Չորրորդ է ՃԱ. յասելն.
* աղօթք ուրկի ճա ||. զորոց խօսեսցուք յիւրեանց
տեղիս. իսկ որ աստ գնի՝ չունի պէտս մեկնութե. զի
նշանակէ սաել, թէ այս սաղմոս է աղօթք ինչ ա-
դեալ 'ի դաւիթ՝ պաղատիլ սովաւ առ ած.

Այլ թէ 'ի դիմաց ոյր ասիցի այս, պէսպէս կարծիք
ուանդլին. ոմանք համարին՝ թէ այս ասի 'ի դիմաց
քսի՝ վասն յուդայի և վն տիրասպան հրէից. ևս և 'ի
դիմաց եկեղեցւոյ՝ վն հալածչաց իւրոց. Այլք ընդ

որս և վարդան, համարին՝ թէ այս իցէ ասացեալ 'ի դիմաց նորին իսկ դաւթայ 'ի հալածիլն 'ի սաւուղայ: Այս կարծիս են և բազում բարունիք հրէից. որոց ոմանք կեղծեն, թէ դաւիթ յայսմ սաղմոսի կարի խիստ անմեղ ցուցանելով զանձն իւր՝ երևի ապաւինիլ յինքն. վ̃յ (ասեն) թոյլ ետ նմա ա̃ծ անկանիլ 'ի մեղս, և այնու խոնարհիլ: Այս կարծիք բարունեաց հայելով յընթացս սաղմոսիս՝ ոչ միայն ոչ ճշմարտի. այլ և 'ի ներհակն ելանէ՝ 'ի խնդրել 'ի ս̃մ մարգարէին յի̃յ թախանձանօք՝ պահել զինքն, զի մի անկցի:

Իսկ հասարակ կարծիքն է, թէ այս սաղմոս ասացաւ 'ի դաւթայ իբրև զօրաւոր աղօթք՝ ո՛չ միայն 'ի դիմաց իւրոց, այլ և 'ի դիմաց ա̃մ արդարոց, առ 'ի խնդրել յի̃յ երկու ինչ. մի՝ զնպաստ և զառաջնորդութիւն յուղղութիւն վարուց. և մի ևս՝ զազատութի̃ 'ի հալածչաց, որ ըստ հոգւոյ՝ և որ ըստ մարմնոյ. հայելով միանգամայն և 'ի խորհուրդ փրկութեան մերոյ՝ որ կատարեցաւ ք̃սիւ:

## ԲԱՆ.

ա̃. Լուր տէր արդարութե̃, և նայեա՛ 'ի խնդրուածս իմ. Ունկն դիր աղօթից իմոց. զի ոչ շրթամբք նենգաւորօք:

## ՎԵՐՆԱԳԻՐ.

Ակզբնաւորութի̃ այսր սաղմոսի՝ ըստ մնաց բանից ամենևին նոյն է ընդ այնմ, զոր ասաց 'ի սաղ. ե̃. 1. և 2. * բանից իմոց ունկն դիր տէր ա̃ծ ‖. բայց երկոքումբք ևս տարբերի. մի՝ զի կարգ բառիցն ունի զփոխադարձութի̃. վ̃յ զի այն՝ որ աստ իբր 'ի վերջոյ դնի, * ունկն ,, դիր աղօթից իմոց ‖. անդ դնի 'ի սկզբանն՝ * բանից ,, իմոց ունկն դիր տէր ‖. և որ աստ 'ի սկզբան դնի, * լուր տէր արդարութե̃ ‖. անդ 'ի միջի դնի այլով բառիւ. * 'ի միտ առ զաղաղակ իմ ‖. որ 'ի նոյն յանգի: Եւ որ աստ 'ի միջի դնի, * նայեա՛ 'ի խնդրուածս ,, իմ ‖. անդ 'ի վերջոյ դասի. * նայեա՛ 'ի ձայն աղօ- ,, թից իմոց ‖: Զայսր կարգի զնշանակութիւն տես

ման. զի մի հարկ լիցի կրկնել զնոյն աստ վերստին ։ Երկրորդ տարբերութիւնն է այս, զի աստ բաց 'ի բառէս արդարութիւն՝ յաւելեալ լինի և այն, զոր ասէ * զի ,, ոչ շրթամբք նենգաւորօք ‖ ։

Արդ՝ որ ունի զիրաւունս, իբ̃ զիրաւացի պատճառս վ̃ն իրիք խնդրուածոյ, կամ վասն պաշտպանելոյ 'ի թշնամեաց, դիմէ առ այն՝ որ է տէր արդարութե̃, կ̃մ սիրող արդարութե̃, և կամ արդար դատաւոր, առ 'ի յանդիմանն առնել նմա ոչ զինքն, այլ զիրաւունս իւր. ք̃զի և որ արդարադատն է՝ ոչ հայի յանձն, այլ յիրաւունս անձին ։ Իսկ քանզի մարգարէն ունէր զայսպիսի իրաւունս բողոքելոյ առ ա̃ծ իբրև առ տէր ա̃մ արդարութե̃՝ վասն գտանելոյ առ 'ի նմէ զառաջնորդութի̃ և զպաշտպանութի̃, վ̃նկ առ նա դիմէ ա̃մ համարձակութ̃բ, և ասէ ։

Լուր տէր արդարութեան ։ Աստանօր եթէ բառդ արդարութե̃՝ առեալ լիցի փ̃նկ սեռականի՝ իբր յատկացուցիչ, միտ բանին լինի այս. դու ա̃ծ՝ որ ես տէր ա̃մ արդարութե̃ և զա̃մն արդարութ̃ք դատես, լուր ձայնի իմում, իբ̃ 'ի միտ ա́ռ զաղաչանս իմ, զոր այժմ ունիմ տարածել առաջի քո ։ Իսկ եթէ բառդ արդարութեան՝ առեալ լիցի փոխանակ տրականի իբր խնդիր լսելոյ, միտ բանին լինի այս. դու տէր՝ որ արդար ես, լո́ւր արդարութեան իմում, իբ̃ իրաւանց իմոց, կամ արդար փաստից և պատճառաց իմոց. և այնու արա ինձ իրաւունս ։ Իսկ ք̃զի չէ բաւական միայն լսել և 'ի միտ առնուլ զաղաչանս, այլև պիտոյ է հայելով 'ի դիտաւորութիւն ձայնին՝ յօժարիլ առ այն, վ̃նկ յաւելու, և ասէ ։

Նայեա 'ի խնդրուածս իմ ։ իբ̃ նայեաց յայն ինչ, զոր խնդրելոց եմ 'ի քէն. որով կամի ասել, նայելով 'ի վախճան բանից իմոց՝ կատարեա զխնդրուածս իմ ։ Նաև ք̃զի առ 'ի լսել և նայիլ 'ի բանս այլոց՝ պիտոյ է և ունկնդրութի̃, զայն ևս խնդրէ, և ասէ ։

Ունկն դիր աղօթից իմոց ։ իբ̃ արժանի համարեա լսել զաղօթս իմ. և մի արհամարհեր զայն իբրև զնենգապատիր բանս. և առ այս յարէ ։

Որ ոչ շրթամբք նենգաւորօք ։ իբ̃ թէ, ոչ մատուցանեմ զխնդրուածս իմ առաջի քո նենգաւոր շրթամբք, այլ

Ճշմարտութի̃ւ և խրատամբք ։

Իսկ նենգաւոր շրթամբք նա մատուցանէ զաղօթս , որոյ բանք ելեալք ը̃ շրթունս թէպէտ և ունին զկերպարանս աղօթից , բայց մերկ են 'ի զօրութենէ անտի աղօթից ։ Ա. յայպիսի աղօթօղ է նախ նա , որ միայն 'ի հաճոյս իւր հայելով աղօթէ , և ոչ 'ի հաճոյսն ա̃յ ։ Երկդ՝ նա , որ անկարգութի̃ աղօթէ . ո̃ր առանց պատկառանաց . կամ առանց գիտելոյ՝ թէ զինչ խնդրէ . կամ առանց ուշադրութեան բանից իւրոց . կամ արհամարհելով զայլս՝ և հաւանելով ինքեան . կամ ըստ ասելոյ լամբ" * 'ի պէտս մարդկային փառաց . . . . և կի̃ ,, խնդրելով զդիւրութիւն մարմնոյ ‖ ։ Երրորդ՝ նա , որ յիւրմէ ոչ կամի գործակցիլ ա̃ծային օգնութեան զոր խնդրէ . այլ՝ կամի , զի ա̃ծ՝ որ զա̃մ ըստ կարգի առնէ , և գործակցութեամբ խնդրողին կատարէ զգործն , աբացէ ինքնին առանց իւրոյ աշխատանաց ։ Չորդ՝ նա , որ այլոց խնդրուածոց ոչ լսէ , և կամի՝ զի ա̃ծ զիւրն լուիցէ ։ Հինգերորդ՝ նա , որ յաղօթելն՝ չունի 'ի սրտի զկամս փախչելոյ յաւթէ փորձանացն այնոցիկ , որոց վ̃ա աղաչէ զերծանել , այլ մի̃ընդ ունի կամս առիթտալոյ . և կամ ևս ինքն լեալ պատճառ փորձանաց իւրոց՝ իբրև անպարտ աղաչէ զա̃ծ լսել ինքեան և ազատել ։ Վեցերորդ՝ նա , որ վասն չար ինչ վախճանի խնդրէ ազատիլ 'ի ներկայ փորձանացն ։ Եօթներորդ՝ նա , որ յաղօթելն՝ ոչ այնչափ խնդրէ զերծանել , որչափ խնդրէ զանձն արդար ցուցանել ։ Ութերորդ՝ նա , որ ատելով զհալածիչսն , կամ վրէժս խնդրելով 'ի նմէ՝ աղօթէ , և ոչ սակ առ 'ի ազատիլ ։ Իններորդ՝ նա , որ յետ բ̃զմ չարագործութեանց՝ միայն վասն անկանելոյ 'ի փորձանս , կամ միայն վ̃ա հալածեալ լինելոյն աղօթէ . ապա թէ ոչ՝ ոչ աղօթէր . որպէս արար անտիոքոս , ( բ̃ . մնկ . թ̃ . 13 . ) և այլք բազումք ։

Որք ա̃մքեն ոչ աղօթեն ուղղութեամբ , այլ՝ շրթամբք նենգաւորօք . զի թէպէտև շրթունք նոցա խօսին զուղիղն , բայց ոչ ուղղութի̃ , այլ՝ նենգութի̃ . վասն զի ուղիղ բանքն յայնժամ ուղղութեամբ արտաբերին ընդ շրթունս , յորժամ հանգամանք ուղղութեան կան 'ի սրտի . իսկ եթէ չիցէ ուղղութի̃ 'ի սրտի , այն բանք թէ և ուղիղ իցեն ըստ ինքեան , ոչ են ուղիղ 'ի շըր-

թունսն․ ուստի և յարտաքերին ընդ շրթունս՝ արտաքերին նենգաւոր շրթամբք․ զի այլ ինչ է 'ի ներքս, և այլ ինչ առ արտաքս․ այլ ինչ 'ի սրտի, և այլ ինչ 'ի բերանի․ այլ ինչ յաղօթսն, և այլ ինչ 'ի շրթունսն։ Եւ այսպիսի աղօթից ոչ լինի առաւել օգուտ է մարդոյ՝ քան լռին, ըստ ասելոյ լամբրոնացւոյն։ Այդ՝ ասէ մարգարէն, թէ ոչ են այսպիսի և իմ բանք․ վասն զի ամենևին յուղղութիւն իրաւանց դիտելով՝ դնեմ

ասէ առաջի այ զխնդրուածս իմ։

Այս բան ասի և 'ի դիմաց մարդկայինս բնութեն, եթէ առ հայր ուղղելով որ արդարացոյց զմեզ որդւովն, և եթէ առ որդին, որ եղև մեզ տէր արդարութեն 'ի հատուցանել նորա զպարտս մեր արդարութբ։ Յուղղին առ հայր՝ միտ բանին լինի այս․ լո՛ւր իրաւանց մերոց, և արդարացո՛ զմեզ 'ի մեղաց, յորս պաշարեալ կամք, և չիք ուստեք մեզ փրկութի՝ եթէ ոչ առ 'ի քէն տէր։ Յուղղին առ որդին՝ միտ բանին լինի այս, լո՛ւր մեզ տէր․ և եկ առ մեզ․ և դու ինքն արդարացո՛ զմեզ։
Արդ՝ յետ որոյ հայցեաց յայ մարգարէն լսել աղաչանաց իւրոց, սկիզբն առնէ տարածել առաջի նորա զխնդրուածս իւր․ և նախ՝ խնդրէ 'ի նմէ, զի ըստ ուղիղ իրաւանց իւրոց տացէ նմա զլոյս շնորհաց՝ առ 'ի ճանաչել զուղիղս, ըստ երից․ մի՝ ըստ ուղիղ խորհրդով պաղատելոյ առ այ՝ և ոչ շրթամբք նենգաւորօք, զոր յիշեաց 'ի վերոյ․ երկրորդ՝ ըստ ուղղութբ կենցաղավարելոյ առաջի այ․ երրորդ՝ ըստ ոչ խոտորելոյ յիրաւանց՝ 'ի պաշարելին պէսպէս փորձանօք։ Ի սոյին ակնարկելով ասէ։

բ · Յերեսաց քոց իրաւունք իմ ելցեն․ և աչք իմ տեսցեն զուղղութիւն ։

Ասելովն * յերեսաց քոց ‖ ոչ ցուցանէ, թէ այ ունի զերեսս, որպ այլոց ասացաք, այլ՝ ոճ իմն է, որով կամի ցուցանել զգերազանցութիւն անձին կամ զմեծվայելչութի նր․ և նոյն էր՝ թէ ասէր, 'ի քէն ելցեն ինձ իրաւունք։ Եւ կամ գուցէ իմանայ այսու զտեսչութիւնն այ՝ որով իբր երեսօք յանդիման տեսանէ զամ, և դարմանէ զամենին։ Եւ կամ ես՝ որովհետև եդ 'ի վերոյ * տէր արդարութե ‖, աստ երես ասելով

գուցէ իմանայ զայցելութի արդարութեանն ն̃յ · ըստ որոյ ասի յարևադալի ժամերգութեան, * ելցեն իրաւունք յարդարութէ քումմէ ‖ · վ̃ն զի առարկայ արդարութե է իրաւունքն · իբր զի արդարութ̃ին յայս կարգի, զի արասցէ իրաւունս ։

Իսկ իրաւունքն բազում օրինակաւ առեալ լինի · մի՛ փ̃նկ արդար դատաստանի, և կամ արդար վճռոյ՝ որ լի-նի 'ի դատաստանի · ո̃ր այսմ, սաղ․ ճժը̃ · 84 · * Երբ արաս-ցես ինձ իրաւունս ‖ ( և փ̃ · Թագ · ը̃ · 11 · և 28 ։ ) ո̃ր ո-րոյ ասէ յեբր'' դնի միշփաթի, այս է դատաստան ։ Երկրդ՝ փ̃նկ պատուիրանի կամ օրինաց · որպէս դնի 'ի սաղ · ճժը̃ · 'ի բ̃զմ հանգրս ։ Երրդ՝ փ̃նկ զօրութե օրի-նաց՝ ըստ լամբրոնացւոյն · սաղ · ճժը̃ · 149 · ուր ասի * յիրաւունս քո կեցո զիս ‖ ։ Չորրորդ փ̃նկ այնր, որ տուեալ լինի այլում ըստ սահմանելոյ օրինաց · յոր միտ ասի, ա̃ · Թագ · ր̃ · 13 · իրաւունք քահանային էին՝ ( բաժինք զոհիցն ) ‖ ։ Հինգերրդ փ̃նկ ուղղութե և ար-դարութե, կամ փ̃նկ այնր իրի, որ ասի արդար և ու-ղիղ ։ Իսկ իր ինչ արդար ասի՝ կրկնակի · մի՛ ընդհան-րապէս, ըստ որում համաձայնի օրինաց · և երկրդ մաս-նաւորապէս, ո̃ր որում 'ի մէջ բերէ զհաւասարուի ինչ զոր պարտ է առնել այլում ։ Արդ ըստ այսմ առեալ ո̃պ ասացաք՝ իրաւունքն ասի առարկայ արդարութեան · և յայս միտ դնի 'ի սաղ · ճժը̃ · 106 · * պահեցից զա̃մ իրաւունս արդարութե քո ‖ ։ Վեցերրդ՝ ո̃ր սահմանի և ըստ յատուկ առման, որով նշանակի օրինաւոր կարգ ու-նելոյ կամ առնելոյ ինչ · կամ ա̃նհնդ վերաբերութի ու-նելոյ կամ առնելոյ ինչ օրինաւորապէս · յոր միտ ասի · ա̃ · Թագ · ը̃ · 11 · * այս ինչ լիցին իրաւունք թ̃գին ‖ ։ Արդ ըստ այսմ առման՝ իւրաքանչիւր ոք ասի ունել զի-րաւունս առնելոյ զայս ինչ · տալոյ զայն ինչ, խօսե-լոյ զայս կամ զայն ինչ · տես և 'ի սաղ · ճ̃ · 1 ։ Արդ ոչ երբեք, յայսմ բնաբանի՝ բառս իրաւունք թէպէտ և ըստ առաջնոյն իմացեալ լինի, բայց գրեթէ ըստ ա̃մ նշանակութեանցս այսոցիկ ևս առաջի դնի, յաւելն ։

Յերեսաց քոց իրաւունք իմ ելցեն ։ ա̃յ 'ի մեծվայելչութէ քումմէ, կամ 'ի քաղցր տեսչութէ քումմէ՝ ելցեն և եկեսցեն ինձ իրաւունք՝ ոչ 'ի դատել, այլ՝ 'ի յաղ-թել զիս, ևս և 'ի վանել զթշնամիս իմ․ և կամ եկես-

ցեն և հաղորդեսցին ինձ օրէնք քո ըստ ուղղութեան ի-
րեանց . որ է ասել . տպաւորեսցին 'ի հոգի իմ զօրու-
թիւնք կամ պատկերք օրինաց 'ի ձեռն շնորհաց քոց , զի
աչք իմ տեսցեն զուղղութիւն : Եւ կամ դրձլ կամի ա-
սել . հայեցեալ 'ի տկարութիւն իմ և 'ի կուրութիւն մտաց
իմոց՝ արա ինձ զայս ողորմութիւն , զի այն իրաւունք՝
զորս եդեալ ես արդարութբ , եկեսցեն առ իս , զի եղի-
ցին ինձ օգնական , և առաջնորդեսցեն տկար բնութեան
'ի բարին : Յայս միտս ևս կարէ իմացեալ լինել այն
վերոյգրեալ բան ժամագրքին , * եկեսցեն իրաւունք
յարդարութենէ քումմէ 'ի տկարութիւնս մեր ‖ :
Կամ դարձեալ ըստ լամբրոնացւոյն՝ կամի ասել , * ամե-
„ նահայեաց տեսողութիւնդ՝ զոր ինչ և դատէ իրաւա-
„ ցի և պատշաճ , զայն հանցես 'ի քաղցր կամացդ
„ արտաքս , և ինձ ուսուսցես . զի ես քո կամացդ լի-
„ ցիմ պաշտօնեայ , և մի դու իմոյս ‖ : Եւ կամ այլ-
ազգ ևս . ո՞րպ թէ ասէր . այն իրաւունք քո , որով ու-
նիս 'ի վ՛ր իմ զօրութիւն , եկեսցեն ինձ . զի այնպէս եղի-
ցին՝ զի ոչ միայն տիրեսցես այնու 'ի վ՛ր իմ , այլև ա-
րասցես ինձ ըստ նոցին գնալ . և հաղորդեսցես ինձ ըղ-
ձանաչութեան այնր , ո՞րպ զի և միտք իմ 'ի նոսին հայելով
յուղիղն առաջնորդեսցեն ինձ . և առ այս յարէ :
Եւ աչք իմ տեսցեն զուղղութիւն : զի 'ի հաղորդել քո ինձ
զիրաւունս քո՝ նոյնին լուսաւորեսցին աչք հոգւոյ ի-
մոյ , և տեսցեն զուղղութիւն 'ի խորհրդն , 'ի խօսսն և
'ի գործսն : Զմիտսն կոչէ աչք , զի ընդ այն իբր ընդ
աչս կամ իբր ընդ պատուհանս տեսանէ հոգին . յոր միտ
առէ բարսեղ վ՛րդ 'ի մեկն . մարկ . գլ . ժե . * աչքն
են պատուհան կամաց հաւանութեան ‖ . իբր թէ ասէր .
աչք հոգւոյն՝ զի միտք՝ պատուհան են հոգւոյն , որոյ 'ի
տեսանելն զայս ինչ և զայն՝ զհետ գայ հաւանութիւն
կամաց :

Այլաբանօրէն՝ երեսօքն ո՛չ իմացեալ լինի աստ կեն-
դանի նկարագիր ն՞ր զի է բանն ա՛ծ . յորմէ ելին իրա-
ւունք և դատաստանք . իրաւունք՝ 'ի հատուցանել նորա
ո՛չ զամ զվարձս մեր , ևս և 'ի ցուցանել նորա մեզ զամ
ուղղութիւն վարուց . և դատաստանք՝ 'ի դատել և 'ի
դատապարտել նորա զթշնամի մեր զսատանայ և զդևս :
Մարթ է աստ յարմարական մեկնութբ յայլ իմն տե-

ութիւն վերածել զայս բան 'ի դիմաց եկեղեցւոյ խօսելով. ըստ որոյ ո՟պ յասելն * յերեսաց քոց իրաւունք իմ ելցեն՝ ‖ բառդ երես հայի 'ի բանն ա՟ծ, նոյնպէս և յասելն * աչք իմ տեսցեն զուղղութի ‖, բառդ "աչք" հայի յառաջնորդս եկեղեցւոյ. զի եկեղեցին նոքօք տեսանէ զուղղութի յօրէնս ա՟յ. վ՟ն և աղաչէ զա՟ծ՝ զի յերեսաց իւրոց՝ այ՟ յորդւոյ իւրմէ շնորհեսցէ ինքեան զուղղութի իրաւանց. և աղաչէ՝ զի աչք իւր, այ՟ առաջնորդք իւր տեսցեն զայն ուղղութի. Զայսոսիկ եղեալ մարգարէին առաջի առնէ այժմ և զանմեղութի իւր՝ եթէ յինքեան, և եթէ առ հալածիչսն.

վ՟ն որոյ ասէ.

Գ՟. Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր 'ի գիշերի. փորձեցեր զիս, և ոչ գտաւ յիս անիրաւութի.

Այս ասացեալ տիրապէս առեալ՝ ոչ կարէ ճշմարտիլ յումեք, բայց եթէ ըստ երկուց. Մի՛ ըստ վիճակի շնորհաց. իբր զի եթէ իցէ ոք 'ի շնորհս՝ յայնպիսի վիճակի համարի, յորում ոչ գտանի անիրաւութի կամ մեղք. զի շնորհք և անիրաւութի ոչ կարեն կալ 'ի միասին. Եւ մի ևս՝ ըստ վիճակի անպարտ գոլոյ առ թըշնամիս. իբր զի եթէ ոք չիցէ անիրաւեալ առ թշնամիս իւր՝ թէ և կրեալ իցէ 'ի նոցէ զրկանս, յայնպիսի վիճակի համարի՝ յորում ոչ գտանի անիրաւութի առ թշնամիս. Ըստ այսոցիկ տեսութեց պարտ է իմանալ զխօսս առաջիկայ բնաբանիդ. յասելն.

Փորձեցեր զսիրտ իմ Տր. այ՟ դու՝ որ միայն ես քննօղ սըրտից, հայեցար 'ի սիրտ իմ. և քննեալ փորձեցեր՝ թէ զիա՛րդ իցեմ. Եւ այսու ոչ կամի ցուցանել, թէ ա՟ծ փորձէ առ 'ի գիտել. այլ թէ գիտէ նա զա՟մ՝ որ ինչ կայ 'ի սրտի, ո՟պ թէ փորձեալ իցէ. իսկ թէ զիա՛րդ, յայտ առնէ՝ ասելով.

Եւ քննեցեր 'ի գիշերի. փորձեցեր զիս. Զերկուս դնէ առաջի. մի՝ 'ի գիշերի քննել. և միւս ևս՝ փորձել, այ՟ հրով քննել, կամ 'ի ձեռն հրոյ փորձել, այ՟ խալլընել. ո՟պ դնի 'ի բնագիրս եբրայեցւոց և յայլ ա՟մ թարգմանութիս. Արդ յայն սակս զերկուս զայսոսիկ ևեթ դնէ աստ, զի առաւելապէս յերկուս առիթս յայտնի լինի՝ թէ զինչ կայցէ 'ի սրտի մարդոյ.

Առաջինն է առիթն գործելոյ ինչ 'ի ծածուկ. իսկ երկրորդն է ժամն փորձութեան. ըստ առաջնոյն բժիշկք են՝ որք երեւին բարի յաչս այլոց առ արտաքս, սակայն եթէ ունիցին զառիթ մեղանչելոյ 'ի ծածուկ՝ ուր չիցէ վըրտանգ չար երեւելոյ՝ 'ի դըդել ախտիցն գործեն ըզչարն։ Նմանապէս եւ ըստ երկրորդին բազումք են, որք 'ի ժամի յաջողութեան եւ խաղաղութեան երեւին՝ եւ են բարի. այլ յորժամ հուրն փորձութեան պաշարէ զնոսա, ծախին. եւ որք յառաջն իբրեւ ոսկի երեւէին, իբրեւ կապար կղկղին. մանաւանդ թէ իբրեւ զյարդ այրին։

Արդ՝ որովհետեւ ժամն գիշերային է իբրեւ առիթ եւ միջոց՝ ծածուկ գործելոյ. իսկ ժամն փորձութեան եւ նեղութեան իբրեւ առիթ այրելոյ, յերկուսին եւս ասէ քննեցեր, եւ փորձեցեր զիս. իբրեւ թէ ասէր. այց արարեր առ իս եւ քննեցեր զիս յայնպիսի ժամի՝ որ էր առիթ ծածուկ մեղանչելոյ. եւ կամ ըստ լամբ″ յայնպիսի ժամի, յորում խաւարեալ էր միտք իմ մթին խորհրդովք. եւ փորձեցեր զիս յայնպիսի փորձութեան, որ իբրեւ զհուր այրէր զոգիս մեղօք. կամ փորձեցեր զիս յայնպիսի նեղութիւս որք իբր հրով զտէին։ Իսկ թէ յայնպիսի քննութեան զինչ գտաւ 'ի նմա՝ յայտ առնէ ասելով։

**Եւ ոչ գտաւ յիս անիրաւութիւն ։** Ըստ շաղկապս ″եւ″ դնի փոխ բառիս՝ այսու ամենայնիւ. որպէս թէ ասէր. յայսպիսի առիթս քննեալ, եւ յայսպիսի փորձութիւնս փորձեալ՝ այսու ամենայնիւ * ոչ գտաւ յիս անիրաւութիւն ‖. Այսինքն ոչ գըտաւ յիս այնպիսի գործ, որ իցէ ընդդէմ իրաւանցն Աստուծոյ եւ ընկերին. եւս եւ ոչ գտաւ յիս անիրաւ ինչ գործ ընդդէմ հալածչաց իմոց։

Ստամոքս բառիս ″սիրտ″ կարէ իմացեալ լինել եւ խիղճն մտաց. ըստ որում յայսպիսի բանս փոխ խղճի մտաց 'ի գործ ածի բառս սիրտ. որպէս դնէ սարգիս Շընորհալի 'ի մեկն. ա. յովհ. գ. 20. ճառ. դ. 'ի բացատրելն զբան աւետարանչին, յասելն. * եթէ ըստ-գտանիցեն զմեզ սիրտք մեր, այսինքն է ասէ խիղճ մտաց մերոց ‖։ Նոյն ըստ այսմ կամի ասել. 'ի փորձել եւ 'ի քըննել Աստուծոյ զխիղճ մտաց իմոց՝ յայտնի ցուցաւ թէ ոչ գոյ յիս անիրաւութիւն ինչ նկատեալ առ թշնամիս իմ։

Այս փորձ կարէ հայիլ 'ի հասարակի յայնս, յորս ա-

ութ ընծայի մարդոյ առնել չար ինչ, և ոչ առնէ. ո՞րպ եղև դաւթի յառիթն սպանանելոյ զսաւուղ, և ոչ սպան. ուստի և կարէր առնել. փորձեցեր, և տեսեր, զի յայսպիսի առիթս՝ ոչ անիրաւեցայ։ Պատճառ զայսպիսիս խօսելոյ մարգարէին ոչ այն է՝ զի ցուցցէ զանմեղութիւն իւր, այլ զի գտցէ յա͞յ զողորմութիւն և զպաշտպանութիւն. իբր զի տեսեալ ա͞յ զանմեղութի նորա՝ խնայեսցէ 'ի նա, և ցուցցէ նմա ըղգութ խնամոց իւրոց, և պատսպարեսցէ 'ի չարութէ թշնամեաց նորա։ Ըստ զփորձ սրտի և զքննութիւն առաջի եդեալ մարգարէին, 'ի մէջ մատուցանէ այժմ և զփորձ բերանոյն 'ի զգուշանալ նորա առ 'ի չխօսելոյ ըստ խօսից մարդկան՝ յասելն։

Դ. Մի խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վ͞ս բանից շրթանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս։

Մոլլին յայտ առնէ մարգարէն, թէ առ 'ի մնալ այնպիսի՝ ո՞չ երևեցոյց զինքն 'ի վերոյ, յանձն առնու զո͞մ զգուշութի, և զո͞մ ներգութիւն. և թէ զիա՛րդ, ասէ.

Մի խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան։ Կամի ասել. 'ի տեսանել իմում զգործս՝ զորս գործեն մարդիկ, եթէ ոչ գտից զնոսին ը͞ս ա͞յ՝ թէ և սքանչելի կարծեսցեն * մի խօսեսցի բերան իմ ‖. ա͞յ մի թողու տաց, զի, խօսեսցի բերան իմ, թէ այն գործք են զարմանալի, ապա պատշաճ է և ինձ այնպէս գործել. կամ թէ են զօրաւոր, ապա պարտ է յայնս յուսալ. կամ թէ են փառաւոր, ապա պիտոյ է զայնս գովել. կամ թէ են բերկրալի, ապա արժան է այնց հետևիլ. ևն. կամ թէ անարգ տեսանելով զայնս՝ չարիս խօսիլ զայնցանէ, և զգործօղսն ատել կամ նախատել։ Իսկ կամ ևս ըստ լամբ''. * Մի կայուցցից զբերան իմ զմնւոր գործոց մարդկան ‖. և կամ մի խօսեցայց զայնպիսի ինչ, որ իցէ ը͞ս գործոց մարդկան։ Կամ ը͞ս յարմարական մեկնութե, մի խօսեսցի բերան իմ զայնպիսիս՝ զորպիսիս խօսին մարդիկ չարք։

Այս է արդարև կանոն իմն ճշմարիտ օրինապահաց, հաստատելիմ ծառայից ա͞յ. մ͞ն զի եթէ ոք 'ի գործս մարդկան հայելով ոչ զգուշասցուցէ զինքն, խոտորի

'ի ձեռնէ արդարութե՟ , և յօժարի գնալ 'ի ճանապարհս գործոց մարդկան . և վ՟նկ իսկ յայտնեաց զգուշանայր մարգարէն . և հայելով յօրէնս այ՟ ըստ նմին գնայր 'ի ճանապարհս արդարութե՟ , թէև խիստ երևէր նմա այն . սմին իրի ասէ ։

**Ա՟ռ բանից շրթանց քոց՝ ես պահեցի զճանապարհս խիստս ։**

Շրթամբք այ՟ խնամոց ասէ մարգարէն զայ՟ խնամատութիւնն և զարդարութիւն . որովք իբր երկու շրթամբք աւանդեալ է մ՟ծ զբանս իւր՝ յ՟ զպատուիրանս , ըն- խոստմունս և զպատուհասս ։

Իսկ ճանապարհս խիստս ասելով խնամոց զայնպիսի գործս և զկեանս որ է արդար և ուղիղ և հաճոյ այ՟ . բայց խիստ և դժուարին , կամ ը՟ լամբ՟՟ նեղ և անձուկ ։ Զայսպիսի ճանապարհս ասէ ընտրեցի պահել վասն բանից շրթանց քոց . որպէս թէ ասէր . յանձն առի զայսպիսի խիստ կեանս՝ միայն վասն քո և վ՟ բանիցդ՝ զորս դու իմքն պատուիրեալ ես , կամ սպառնացեալ ես մարդկան . և ոչ վասն բանից մարդկան , կամ վ՟ գովելոյ 'ի նցէ , և կամ վ՟ յոյս ինչ ունելոյ 'ի նս՟ ։ Զի որք վասն մարդկան պահեն զճանապարհս արդարութեան , արտաքուստ միայն երևելին պահել զայնս առաջի մարդկան . վ՟յ և զաման ինչ 'ի նս՟ արտաքոյ արդարութեան . իսկ որք վ՟ այ՟ պահեն՝ առաջի այ՟ և առաջի մարդկան պահեն՝ եթէ 'ի ներքուստ և եթէ արտաքուստ . և ոչ թողուն զոր սկսան առնել յինչ և իցէ առիթս ։

Այս բան հայի և 'ի քս՟ , որ վ՟ հնազանդելոյ շրթանց հօր , այ՟ հրամանաց նորա՝ յանձն էառ զճանապարհս խաչի զխիստս . և նովին փրկեաց զմեզ 'ի խստութենէ տանջանացն յաւիտենականաց . այլ ոմն զի մի լիցի ընդունայն ընթացք այսր ճանապարհի զոր ընթացաք 'ի պատճառս մեր , աղաչէ զհայր 'ի յաջորդ համարն 'ի գնացս անդամոց իւրոց՝ հաստատել զնոյն , և անայլայլ թողս առաջնորդել 'ի նոյն ։ Բարոյապէս , խիստ ճանապարհս նշանակի ճանապարհ մեռուցման ախտից , և զարման ըղգայութեանց , և ճնշման մարմնոյ . զոր 'ի հասարակի կոչեմք ճգնաւորութիւն ( և կամ մահացուցումն ) ։ Արդ որ պահէ զայսպիսի ճանապարհ՝ վ՟ բանից շրթանց նս՟ , 'ի բնմս օգտի 'ի վերջորդելոյդ ։ Առաջինն է այն՝ զի ըստ բնաբանիդ՝ այսպիսւոյ ոչ խօսի զգործս որդ-

ւոց մարդկան՝ զսպելով զլեզու իւր յունայնախօսու-
թենէ, և առաւել ևս 'ի չարաբանութենէ, 'ի հայհոյանաց,
'ի բամբասանաց, ևն.

Երկրորդ օգուտն է այն, զի այսպիսին՝ 'ի բորբոքիլ կրից՝ ոչ անսալով այնմ՝ ուշ դնէ բանից շրթանցն որոյ ըստ առաջիկայ բանիցդ, և ըստ նմին կանոնաւորէ զկեանս իւր նուաճութբ զգայութեանց իւրոց. և ոչ տայ թոյլ տիրել ախտից 'ի վրն իւր:

Երրորդ օգուտն և մեծն է այն՝ զի այսպիսին ոչ հայելով 'ի գործս որդւոց մարդկան, այլ 'ի նուաճութիւն անձին իւրոյ, գտանէ զճշմարիտ խաղաղութի հոգւոյ. քզի մարտ եղեալ ընդ խռովիչս հոգւոյն՝ յա̃ ը̃ անկարգ կիրս՝ 'ի բաց վանէ զայնս յիւրմէ. որով խաղաղի հոգի նորա. զի առակ է, * պատերազմաւ ստացեալ լինի
,, խաղաղութիւն ‖: Իսկ յանփոյթ լինելն և 'ի թուլանալն՝ զօրանան կիրք, և պղտորեն, մինչև անհետ լինել խաղաղութե, յոր միտ ասէ՝ թէ * ոչ գոյ խա-
,, ղաղութիւն ամպարշտաց ‖. եսայ. ծէ. 21. զի անբարի բերմունք խռովեն զսիրտ նոցա, և ինքեանք իբրև զծով փրփրին. քզի գրեալ է՝ թէ * անօրէնք իբրև
,, զծով ծփեսցին ‖. եսայ. ծէ. 20: Իբր զի՝ որք առանց օրինադրելոյ ըստ արդարութե զկիրս՝ իբր առանց օրինաց վարին խիստս վարկանելով զայնս՝ ծփեսցին նոքա խռովութբ. զի կիրք՝ հողմոց նման են. 'ի յառնելն՝ պղտորեն զհոգին. որպ̃ 'ի յառնել բարկութե եթէ ոչ զսպեսցի՝ տագնապէ զհոգին և բառնայ զխաղաղութի նորա, սոյնպէս և կիրք վախճանութե, և նախանձու, և այլն՝ որ 'ի կարգի: Իսկ եթէ օրինօք և արդարութբ նուաճեսցին՝ զխաղաղութբ փարին. զի թէպէտ և խիստ իմն է, այլ խաղաղարար, արդար. * արդարութի
,, և խաղաղութի համբուրեսցին ‖. սաղ. ձդ. 11:

Ըստ փիլիսոփայից յանտրամադրեալ նիւթ ոչ գայ տեսակ. սոյնպէս ոչ գայ խաղաղութիւն յոչ մահացեալ ոգի. բայց ծանիր, զի դժուարութիւնն ոչ է 'ի հաղորդել զտեսակն, այլ 'ի տրամադրել զնիւթն. փայտ դալար 'ի տրամադրիլ յընդունելութիւն տեսակի հրոյ՝ ծանուանս կրէ, և բզմ̃ ծուխս հանէ, մինչև տրամադրեսցի. և 'ի տրամադրիլն՝ ինքնին գայ տեսակ հրոյ. այսպէս է և 'ի ստացման խաղաղութեան,

զի խստութիւն կամ դժուարութիւն ոչ է 'ի ստացման անդ , այլ 'ի մեռուցման ախտից և 'ի նուաճութեան կրից · որով տրամադրի հոգին յընդունելութիւն խաղաղութեան · և 'ի տրամադրելն՝ ճգնելին ժամանէ խաղաղութիւնն , և 'ի ժամանել այնր՝ գայ և տէրն խաղաղութեան · զի 'ի խաղաղութեան է տեղի նորա · սաղ · հե · 3 ·

Արդ կշռեա՛ միանգամ՝ թէ որ իցէ բարի , ընդ խիստ ճանապարհ գնալով հասանել 'ի խաղաղութիւն , թէ կրից և ախտից անսալով մտանել 'ի խռովութիւն : Ի հետևիլ քո աւելորդ կերակրոց և ըմպելեաց՝ յափրանաս · ֆ թէ փքուս և ուռուս · սոյնպէս լինի քեզ և 'ի հետևիլ ախտիցդ , և յոչ զսպել զկիրսդ · զի որպէս յոլովութիւնք կերակրոց և ըմպելեաց անմարսմնացելոց՝ ժանտ գոլորշիս հանեն 'ի գլուխն , և անհանգիստ առնեն , սոյնպէս և ախտք և կիրք՝ յորժամ անմեռ մնան , զանկարգ խորհուրդս ծնդեն , և զհոգին խռովեն · առ որ պժգալով ասէ եսայի · ծա · 21 · * լո՛ւր այսմ տառապեալդ ('ի կրից) , որ ար-
,, բեալդ ես՝ և ոչ 'ի գինւոյ (այլ յախտից) || · յորոց զգուշացուցանել կամելով Տէրն՝ ասէ · * զգո՛յշ լերուք
,, անձանց , գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայ-
,, տութեամբ և արբեցութեամբ || · ղուկ · իա · 34 ·

Այս զգուշացուցումն հայի 'ի նուաճութիւն անկարգ ախորժակաց · և տիրապէս 'ի ճնշումն մարմնոյ թըշնամւոյ հոգւոյն · * զի մարմին ցանկայ հակառակ
,, հոգւոյ || · հռովմ · է · 19 · (սիրաք · ժը · 30 · ) նա և զի որպէս ասէ իմաստունն · * մարմին եղծանելի ծանրա-
,, ցուցանէ զհոգի || · իմաստ · թ · 15 · ըստ որում ստորին մասն հոգւոյ քարշէ և ձգէ զհետ իւր զվերին մասն , և այնու վեր 'ի վայր կացուցանէ զհոգին :

Եւ թէպէտ , որպէս ասէ իմաստունն · ժող · է · 30 · * ա-
,, րար Աստուած զմարդն ուղիղ || , սակայն ստորին մասն նորա ապստամբեցաւ յապստամբութենէ վերնոյն · որով և զգայութիւնք մարդոյ առ հասարակ՝ մանաւանդ շօշափականն՝ լրբացան և անկարգացան : Այլ զի մահու է պարտական ապստամբն , սոյնպէս և ստորին մասն ապստամբեալն 'ի վերնոյն , ընդ նմին և զգայութիւնք ամենայն , յորս բնաւ չէ արժան խնայել , այլ 'ի մեռուցումն մատնել · և դանդանաւանդիւք ճնշել և

ճնշել զկզակս նոցա. ապա թէ ոչ՝ ոգի անկիրթ և անսանձ ձի աշխատ առնէ և վտանգէ զհեծեալն, սոյնպէս և նոքա զհոգին: Նաև զի անզուսպ մնալով կամին յետս կալ 'ի բանից շրթանցն այ̃, և յարել յինքեանս. և 'ի նոյն յաճախելով ունականան առաւել յինքեանս յարիլ քան 'ի տէր իւրեանց, և առաւել մոլիլ քան հնազանդիլ: Զայսոսիկ յայտնի գիտելով մարգարէին և անձամբ անձին փորձելով, ոչ ըստ հաճոյս

զգայութե̃ց գնայր, այլ ընդ ճնշրհս խստս:

Զերդ օգուտ այսր խստ ճնշրհի այն է՝ զի սովոր յաջողի մարդոյ անվրդով կալ յաղօթս ըստ օրինի. զի այս նուաճութի է ճնշրհ կամ յարմար տրամադրութի առ աղօթս. իսկ առանց այսր նուաճութեան, ոչ կարեմք արժանապէս մերձենալ 'ի նոյն. ուստի ասացաւ առ մովսէս. լոյծ զկօշիկս ոտից քոց, և այնպէս մերձեցիր

'ի մորենիդ, այ̃ յաղօթս. (ելից. գ. 5:)

Աղօթքն է տեսութիւն հոգևորաց. արդ որպէս 'ի ջուր պղտորեալ ոչ տեսանէ մարդ ինչ յատակ, սոյնպէս և ոչ 'ի սիրտ խռովեալ. բայց եթէ 'ի հանդարտիլն և 'ի սրբիլն. * երանի այնոցիկ՝ որք սուրբ են սրտիւք. զի ,, նոքա զա̃ծ տեսցեն ||. մատ. ե. 8: Աչք բժոտեալ ախտիւք ոչ կարէ տեսանել բարւոք. սոյնպէս և միտք տրորեալ կրիւք, ոչ տեսանէ զա̃ծային յաղօթեն: Թևք թռչնոց թացեալք ոչ տան թոյլ թռչիլ. սոյնպէս և միտք և կամք տոգորեալ ախտիւք ոչ թողացուցանեն թռչիլ յաղօթս և 'ի տեսութիւն ա̃ծայնոց. ապա պարտ է ըստ թռչնոց զխոնաւութիւ ախտից թօթափել, և այնպէս մատչիլ: Եղիսէ մարգարէ 'ի խօսիլն սաստկութբ ընդ արքային իլի՝ խռովեցաւ փոքր մի 'ի հոգի իւր. և 'ի կամիլն մարգարէանալ և կոչել զոր հանդերձեալ էր պատահիլ արքային՝ ետ կոչել զսաղմոսանուագս, և հանդարտեալ 'ի կրից անտի՝ կարողացաւ տեսանել: (դ. թագ. գ. 15:)

Զինչ ապա պարտ իցէ առնել զանկարգ կրից, և

զխռովութե̃ց:

Ոչ զրի զիր պատկանաւոր 'ի վր մագաղաթի եթէ չիցէ կոկեալ. սոյնպէս և ոչ խորհուրդ բարի 'ի միտս՝ եթէ չիցէ սրբեալ. զի * շնչաւոր մարդ (եթէ ոչ նուաճեսցի) ոչ ընդունի զհոգւոյն այ̃ ||. ա. կոր. բ. 14:

Եթէ ոչ հարթեսցին ճանապարհք՝ հանդարտ ոչ գնան կառք ։ Եթէ ոչ յետս կացցէ մարդ յանկարգ յօժարութեանց, և հետևիցի նուաճութեանց, ոչ ազդեն 'ի միտս և 'ի կամս նորա ա̃ծային ծանօթութիւնք 'ի յաղօթս. * ուր ուսուցէ զխոնարհութի (յաղօթս).
„ ուր լսելի արասցէ զգթութիւն (խորհրդոց), (եթէ
„ ոչ) անջատելոյն 'ի կարթանէ, հաստուցելոյն 'ի սահ-
„ նէ ‖. եսայ. ԽԸ. 9.

Աղօթք առանց նուաճութեան ոչ ինչ զօրէ. * զի կոչէք
„ զիս տէր տէր, և զոր ասեմ՝ ոչ առնէք ‖. ղուկ. Զ.
46. Այնպէս և նուաճութիւն առանց աղօթից չէ ընդունելի ա̃յ. * ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց,
„ և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ ‖. սաղ. ԽԹ.
13. * Բարի են աղօթք պահօք ‖. ա̃յ նուաճութեանն. տոբ. ԺԲ. 8. Երկոքին սոքա զմիմեամբք փարին. և երկոքին ևս իբրև զմուռն և կնդրուկ միացեալք բուրեն հոտ անուշ առաջի ա̃յ. զմուռս օրինակ է նուաճութեան, և կնդրուկն աղօթից. զորոց զհոտ առեալ փեսային՝ ասէ. * ով է սա որ ելանէ յանապատէ (ան-
„ կատարութեան 'ի կատարելութի) իբրև զտունկն ծխոյ
„ խնկեալ ‖. և թէ զինչ, այնէ. իբրև * զմուռս
„ և կնդրուկ, (խառնեալ) յամ փոշեաց իւղեփե-
„ ցաց (ա̃յ առաքինութեանց եփելոց և կատարելոց) ‖.
երգ. Գ. 6.

Երեք սեղանք էին 'ի տաճարի. մին՝ սեղան խնկոց 'ի ներքս 'ի սրբութեան. երկրորդն 'ի նմին տեղւոջ՝ սեղան առաջաւորութեան, և երրորդն սեղան զոհի արտաքոյ նորա. մին սոյն է սեղան աղօթից 'ի ներքս 'ի հոգին, և միւսն սեղան առաջադրութեան, և երրորդն սեղան նուաճութեան՝ 'ի զգայութիւնս. երեքին ևս կարեւոր, և միմեանց նպաստաւոր, է միմեանս յօդեալ և 'ի միմեանց անանջատ. նուաճութիւն նպաստէ առ 'ի բարւոք աղօթել՝ և առաջադրել, և աղօթքն կարգի առ 'ի զախտս նուաճել. ք̃զի աղօթեմք՝ զի մեռուսցուք զախտս մեր. Ոչ բաւական ջեռուցանել զերկաթն, այլ պիտոյ է և կռանել. նոյնպէս չէ ինչ օգուտ սոսկ ջեռուցանել զհոգին յաղօթս, այլ և պիտոյ է նուաճել. զի յայն սակս ջեռուցանի. Հարկանելով հանես զախտս. այլ դարձեալ ջեռն, մինչև տպաւորեսցի 'ի հոգի քո կերպարան ա-

ւաքինութեանց: Որպէս առնէր և երանելին Դաւիթ. և 'ի նոյն շարունակէր. և թէպէտ խիստ թուի այս մեզ, բայց յընթանալն դիւրանայ, և 'ի յառաջանալն հաճոյանայ: Որով քանզի հնար է այլազգ ինչ դիպիլ յընթացս՝ աղաչէ մարգարէն զԱծ՝ և ասէ:

ե. Հաստատեա շաւիղս իմ 'ի ճանապարհի քում. զի մի գայթագղեսցին գնացք իմ:

Որ գնայ ընդ խիստ և նեղ անձուկ ճանապարհ առաքինութեանց, պիտոյ են նմա երկու հարկաւոր հանգամանք յայնմ ճանապարհի. մի՝ զի այն ճանապարհ, որ երևի բարի՝ իցէ ևս ճշմարտիւ բարի, այսինքն համաձայն ճանապարհին Աստուծոյ. ապա թէ ոչ՝ խաբէութիւն է և կեղծաւորութիւն. զի թէպէտ բարի թուեսցի, բայց ելք նորա հանեն 'ի դժոխս՝ ըստ բանի իմաստնոյն ( առակ. ժդ. 12: ) Երկրորդ՝ հարկաւոր է միանաւոր օգնութիւն Աստուծոյ առ 'ի հաստատուն կալ 'ի նմին, և ուղիղ դիտաւորութեամբ գնալ 'ի նոյն. ապա թէ ոչ՝ զինչ օգուտ է մտանել 'ի ճանապարհ, և 'ի նմին սայթաքիլ և խոտորիլ. և կամ յանդէտս ընթանալ: Եւ քանզի ասաց մարգարէն, թէ հաստատեալ է 'ի մտի պահել զճանապարհս խիստս, այսու բանիւ խնդրէ յԱստուծոյ՝ զի զայն ճանապարհ համաձայնեցուսցէ իւրում ճանապարհի, և հաստատեսցէ 'ի նմին. վասն որոյ ասէ:

Հաստատեա շաւիղս իմ 'ի ճանապարհի քում: այսինքն արա, զի շաւիղք իմ՝ ընդ որ յանձն առի գնալ, իցեն 'ի ճանապարհի քում, և ոչ արտաքոյ նորին. և հաստատեա ևս զնոսին 'ի նոյն. այսինքն 'ի քում ճանապարհի, հաստատուն պահելով և զիս 'ի նմին. ապա թէ ոչ՝ ոչ միայն ընդունայն լինի ինձ ընթանալ, այլև ոչ իսկ լինի անսայթաք 'ի նոյն գնալ. սմին իրի յարէ զկնի, և ասէ:

Զի մի գայթագղեսցին գնացք իմ: Որպէս թէ ասէր. աղաչեմ զքեզ տէր, 'ի հաստատել քո զճանապարհս իմ՝ կալ զձեռաց իմոց՝ իբրև զձեռաց տկարի, կամ իբրև զձեռաց ծերացելոյ յընդունայնութեան մտի. կալ աղաչեմ, * զի մի գայթակղեսցին գնացք իմ ‖. այսինքն զի մի 'ի գնալս իմում սահեցայց և գլորեցայց ընդ զառ 'ի վայր մեղաց. կալ, զի առանց կալեալ լինելոյ 'ի քէն ոչ կարեմ կալ և գնալ ընդ ճանապարհս խիստս. իսկ 'ի կա-

լեալ լինելս իմ 'ի քէն՝ դիւրաւ ընթանամ. և զհետ
քո գնամ։

Այս ընթացք դիւրաւ յաջողի մեզ՝ եթէ ուշ դիցուք ընթացից ոտ՟ն մերոց, և ջանասցուք ընդ նոյն փութալ։ Սվինչէնսլաւոս ջերմեռանդն Թ՟գ՟ր հանապազ գնայր գիշերայն յեկեղեցիս՝ բոկոտն կոխելով 'ի վ՟ր ձեան. գնայր ընդ նմա և բարեկամ իւր փոտիվլնոս։ Սա չկա-րացեալ յաւուր միում ժուժել ցրտոյ՝ կասեցաւ յետս. ասաց ցնա Թագաւորն, կոխեա անդ՝ ուր կոխեմ ես։ Զայս արարեալ նորա՝ ջերմ ոտիւք գնայր։ Ըստ այնմ և մեք եթէ հայեցեալ յելս գնացից երկնաւոր Թ՟գ՟րին՝ կոխեսցուք անդ՝ ուր կոխեաց նա, ջերմն ըն-թանամք. նա կոխեաց ընդ հետս խոնարհութե՟, ընդ հետս հեզութե՟, ընդ հետս համբերութե՟, և որ 'ի կարգի, եթէ մեք ևս յայն հայելով ընթասցուք, ընթացք մեր յաջողին և կեանք մեր դիւրին։ Ի գործել մեր զբարիս, և 'ի կրել մեզ զդժուարինս՝ դիտեսցուք զորս արար և կրեաց տէր. և հաստատես-ցին յայնժամ շաւիղք մեր 'ի ճ՟նպ՟րհի նորա։

Պատմի թէ սրբուհին ռեձոնիկա յաւնել ինչ և 'ի համբերել՝ խորհէր թէ այնու հետևէր ք՟սի. և զայս խորհելով արիանայր և դիւրանայր. յորժամ կերա-կուրն էր անհամ, յիշէր զլեղին՝ զոր ճաշակեաց ք՟ս. յորժամ նախատիւր՝ յիշէր զնախատական լինելն ք՟սի. եւ՟։ և յ՟նմ զքայլ ոտից կենաց իւրոց դնէր անդ, ուր կոխեալ էր ք՟ս։ Յաւուր միում երևեալ նմա ք՟ս՝ ասաց ցնա, եկ զկնի իմ։ Նա իբրև սկսաւ գնալ, տեսեալ՝ թէ լի է ճ՟նպ՟րհն փշովք՝ երկեաւ. ասաց ցնա ք՟ս. մի երկնչիր դուստր իմ. ուր եսն կո-խեմ՝ անդ կոխեա և դու։ Արար կոյսն ըստ հրամանին ք՟սի, և ոչ զգաց զխայթուածս, մինչև եհաս առ ք՟ս. * եկայք առ իս ա՟մ վաստակեալք և բեռնաւորք, և „ես հանգուցից զձեզ ‖. Մատ. ԺԱ. 28։

Եթէ ըստ այնմ և մեք ջանասցուք գնալ, ուղղին շա-ւիղք մեր, և գնացք գործոց մերոց ոչ գայթակղին։ Այս փափաքելով մարգարէն ասաց. հաստատեա զշաւիղս իմ՝ 'ի ճ՟նպ՟րհի քում, զի մի գայթակղես-ցին գնացք իմ. և առ լսելի առնելոյ զաղաչանս իւր՝
յարէ զկնի, և ասէ։

Գ. **Ես առ քեզ տէր կարդացի՝ դու լուար ինձ ած. Խոնարհեցո՛ առ իս զունկն քո. և լո՛ւր բանից իմոց:**

Եւ այս է, զոր ասաց 'ի սկզբան սաղմոսիս, փոքր մի այլազգ կարգելով աստ զբանն, և յանցեալն դնելով. ըստ որոյ ասէ:

**Ես առ քեզ տէր կարդացի, դու լուար ինձ ած:** Կամի ասել. յուսալով 'ի քեզ՝ կարդամ առ քեզ, զի գիտեմ՝ թէ լսես ինձ. վասն զի և յայլ ժամս բազում անգամ 'ի կարդալ իմում առ քեզ՝ լուար ինձ. ապա և այժմ լուր աղաչեմ: Օրինակ լսելոյն ես առաջի դնէ, և ասէ:

**Խոնարհեցո առ իս զունկն քո, և լուր բանից իմոց:** Սովին բանիւ առաւել իմն նուաստացուցանէ զանձն իւր առաջի ած, և կարի իմն բարձրացուցանէ զմեծվայելչութիւն նր. զի ոչ ասէ, ունկն դիր, կամ նայեա. այլ՝ * խոնարհեցո առ իս զունկն քո ‖. որով կամի ասել, թէպէտև կարի իմն անարգ եմ ես յաչս քո, և 'ի խորս նուաստութեան սուզեալ կամ, իսկ դու յանչափս գերազանցեալ և 'ի բարձրութիւն փառաց բազմեալ, բայց աղաչեմ զքեզ, զի իբրև անարգամեծար տէր հաճեսցիս խոնարհեցուցանել զունկն քո առ իս. զի հաճիցիս հայել 'ի մաղթանս իմ, և այնու լսել բանից իմոց. տես զայսմանէ և 'ի սաղ. Հ. 2:

Եւ այս բան փոքր մի այլազգ ես կարէ մեկնել. իբր զի ասելով * լուար ինձ ‖, կամի յայտ առնել, թէ յաղօթելն անդ՝ արդէն ըստ մասին լուեալ էր նմա ած. ըստ որում բարբառեալ էր զսիրտ նր պաղատիլ առ ինքն, և զօրացուցեալ էր զկամս նորա պահել զպատուիրանս խիստս. բայց կրկին ես աղաչէ, զի ըստ ամի լսիցէ աղօթից իւրոց՝ կատարել զամ խնդրուածս իւր:

Եւ աստ գիտելի է, զի ըստ ասելոյ մեր 'ի սկզբան սաղմոսիս՝ երկու մասն են սորա. մին է այն, զոր ցարդ ասաց. իսկ միւսն՝ զոր հանդերձեալ է ասել, է խնդիր պաշտպանեալ լինելոյ 'ի հալածչաց: Եւ ըստ այսմ առեալ՝ հնար է ասել, թէ այս վերջերորդ համար դնի իբր աւարտ նախընթաց բանիցն, և իբր սկզբնաւորութիւն յետագայից: Եւ գուցէ թէ վն նախընթացիցն ասաց, * Ես առ քեզ տէր կարդացի. զի լուար

„ ինձ ա̃ծ ‖ ։ Իսկ վասն յետագայիցն նորոց սկսանի խնդրել, և ասել · * Խոնարհեցո զունկն քո առ իս, „ և լուր բանից իմոց ‖ . այսինքն այնոց բանից · զորս այժմ ունիմ մատուցանել առաջի քո ։ Եւ զի այս երկրորդ խնդիր նորա կարգի յազատութ̃ի 'ի թշնամեաց, նախ զգործս ազատութեան, զորս արարեալ էր ա̃ծ, և առնէր իսկ առ այլս, առաջի նորա դնէ՝ իբր յարացոյց և իբր առիթ գործելոյ և առ ինքն զնոյն · վ̃ն ասէ ։

Է. Սքանչելի արարեր զողորմութիւնս քո . ո՛ փրկես զյուսացեալս որք յուսացեալ են 'ի քեզ . յայնցանէ, որ հակառակ կան աջոյ քո ։

Ա̃ծ հաւանի սքանչելի առնել զողորմութիւնս իւր, յորժամ ողորմելով 'ի վ̃ր ուրուք՝ առնէ նմա զայնպիսի ինչ, որ երևի սքանչելի . կամ թէ ցուցանէ նմա զայնպիսի գործս՝ որով սքանչելի երևի ողորմութիւն իւր . որպէս և արար իսկ առ բ̃զմս բ̃զմ անգամ . մ̃նդ առ որդիսն Ի̃ղի . թող զվերջինն զայն գործ, զոր արար առ բոլոր ազգս մարդկան . ուր յիրաւի սքանչելի երևեցաւ ողորմութի նր ։ Յայտնապէս հայելով մարգարէին՝ ասէ ։

Սքանչելի արարեր զողորմութիւնս քո ։ այսինքն զայնպիսի և զայնչափ գործս ողորմութե ցուցեր առ բ̃զմս, մինչև ա̃մն սքանչանալ . կամ որ նոյն է, գործեցեր զբ̃զմ սքանչելի գործս առ բազումս՝ ողորմելով նոցա ։ Եւ զի ողորմութիւնն ա̃յ առաւել ևս երևի 'ի փրկելն զյուսացեալս իւր, զայն ևս 'ի մասնաւորի 'ի մէջ բերէ ասելով ։

Ո՛ փրկես զյուսացեալս՝ որք յուսացեալ են 'ի քեզ ։ Կամի ասել, դու՝ որ սքանչելի ցուցանես առ ա̃մն զողորմութիւնս քո, անտարակոյս փրկես զայնոսիկ, որք եդեալ են զյոյս իւրեանց 'ի քեզ ։ Իսկ թէ տիրապէս յորոց փրկէ՝ յայտ առնէ ասելով ։

Յայնցանէ՝ որ հակառակ կան աջոյ քո ։ այսինքն փրկես զյուսացեալսն 'ի քեզ՝ յայնպիսի իրաց և յայնպիսի մարդկանէ, * որք հակառակ կան աջոյ քո ‖ ։ Եւ զայս դնէ փոխաբերութեամբ ձևով ճարտասանից . որով զաջն առնու փ̃նկ ներգործութեց աջոյն, այսինքն փ̃նկ կարողութե և առաջնորդութեան, և զներգործութիս աջոյն առ-

նու փխկ կառավարեցելոյն և առաջնորդելոյն աջով. որպէս թէ եդեալ էր. փրկես յայնցանէ՝ որք հակառակին և վնասեն այնոցիկ՝ զորս աջով քով կառավարես և առաջնորդես 'ի փրկութիւն. զի նոքա վնասելով սոցա, և փրկութեան սոցին արգելք լինելով այնու իսկ աջոյ քում հակառակին։ Եւ կամ թէ փրկես զյուսացեալս քո յայնցանէ, որք ըստ առաջնորդելոյ աջոյ քո ոչ գնան, այլ ըստ իւրեանց հաճութեան. և կամին՝ զի և այլք այնպէս գնասցեն, և ոչ ըստ աջոյ քո։ Իսկ աջ ասելով՝ իմանայ աստ զնախախնամողական զօրութիւնն այ։

Ընդ սովաւ և զանձն իւր առաջի առնէ դաւիթ. որպէս թէ ասացեալ էր. ողորմեցար և ինձ սքանչելապէս. և փրկեցեր զիս 'ի սաւուղեանց և յայլոց թշնամեաց իմոց, որք հակառակ ելին ինձ՝ զոր աջով քո օծեր թգր լինել. կամ թէ հակառակ կան աջոյ քո, որով օծեր զիս։

Այս բան ոչ հակառակի այնմ, որ գրի 'ի գիրս եսթերայ. ժգ. 9. * տէր ած թգր ամենակալ, զի քում
„ հրամանի սպասէ ամ ոք. ոչ ոք է՝ որ ընդդէմ կայ
„ քեզ, յորժամ կամիցիս դու կեցուցանել զժողո-
„ վուրդ քո զիէլ. . . . դու տիրես 'ի վր ամի. և ոչ
„ ոք է՝ որ հակառակ կայ քում տէրութեանդ ‖. վս զի այս բան հայի 'ի բացարձակ կամս այ, որ ասի հետևորդ կամք կամ երկրորդ կամք, որում անկարելի է ումեք կալ հակառակ։ Իսկ այն՝ զոր ասէ, * հակա-
„ ռակ կան աջոյ քո ‖, հայի յառաջին կամս այ, որ և ասի նախընթաց կամք. հայի ևս և 'ի կամս նշանի, որ միշտ և յամի ոչ կատարի. որպէս և յայտ է. զի թէպէտև կամի ած՝ նախընթաց կամօք և 'ի ձեռն օրինաց իւրոց, զի ամ մարդիկ լիցին բարի, և կեցցեն, բայց յայտնի տեսանեմք, զի ոչ ամքին լինին բարի։ Վս զի առ 'ի լինել նց այնպիսի՝ և կեալ, պարտ էր նց խոնարհեցուցանել զանձինս իւրեանց ընդ աջովն այ. ըստ որում յորդորէ առաքեալն՝ ասելով. * խոնարհե-
„ ցարուք ընդ հզօր ձեռամբն այ, զի զձեզ բարձրա-
„ ցուսցէ 'ի ժմկի ‖. ա. պետ. ե. 6. քանզի առ սոսա ցուցանէ ած զխնամս պաշտպանութեան և փրկութեան իւրոյ. զոր և թախանձանօք իմն խնդրէ մարգարէն ասելով.

Ը · Գոհասցեն [illegible]

Ողորմհեսցէ եցոյց 'ի վերոյ, թէ ած փրկէ և պահէ զյուսացեալսն իւր, խնդրէ սովին 'ի մամնաւորի՝ զի և զինքն փրկեսցէ և պահեսցէ։ Իսկ թէ որպէս պարտ իցէ պահել, առաջի դնէ զնմանութիւն պահպանութեան բբաց. զի արդարև այսպիսի իմն համարելով ըզ-հաւատարիմ ծառայս իւր, ըստ սմին պահէ զնոսա · քն որում և ինքն սա բերանով մարգարէին, * Որ մեր-
„ ձենայն 'ի ձեզ, ոպ որ ընդհարկանիցի ընդ բիբ ական
„ իւրոյ ‖ · զաքար · բ · 8 · Իսկ զայս նմանութիւն յայն
սակս բերէ, զի ցուցցէ՝ թէ որպէս մարդիկ 'ի վեր քան զամ 'ի վն բբաց զգուշանան, քն որում և բնութիւնն իսկ զգուշացեալ է՝ կարգելով 'ի պահպանութե նորա զարտևանունս հանդերձ յօնօք, սոյնպէս և ած զըն-թէ 'ի վեր քան զամ զգուշանայ 'ի վն ծառայից իւ-րոց իբրև 'ի վն փափուկ և դիւրազգած անդամոց իւրոց. առ որս և կարգեալ է 'ի պահպանութե իբրև զարտևանունս զամ երևելի արարածս, եւ և զա-ներևոյթս, զր զհրեշտակս, և զայլ բազմապատիկ խնամս իւր 'ի պէսպէս իրս ·

Իսկ զբ բիբք թեպէտև ջրեղէն հիւթովք պատեալ են, և նովին իսկ լի են, բայց նոքօք ձգեն յինքեանս ըզ-պատկերս գունաւոր իրաց, սոյնպէս և ծառայքն այ թեպէտև յամ կողմանց պատեալ են ջրովք փոր-ձութեց, բայց նոքօք շահին զբզմ արդիւնս, և ձգեն յինքեանս զլոյսն երկնային, զսէրն այ, զփափաք արքայութե, և զխութե հոգևոր բարեաց և առա-քինութեանց ·

Որպէս բիբք չունին ինչ գոյն . զի թէ ունէին՝ ըստ նմին երևեցուցանէին . եթէ կարմիր՝ կարմիր, և եթէ դե-ղին՝ դեղին . իսկ չունելով ինչ գոյն՝ ընդունին յին-քեանս զամ տեսակս գունոց, և զամ երևեցուցանեն որպէս և են . սոյնպէս և ծառայք այ չունին 'ի հոգիս զգոյն ախտից՝ մամնաւանդ զգոյն անձնասիրութեան . ուստի և զամ ինչ յստակ տեսանեն . իսկ ծառայք սատանայի ունելով զայլ և այլ գոյնս՝ այլ ընդ այլո

տեսանեն զամենայն , 'ի կարկառութեն՝ զակնակն կարմիր , 'ի դեղնութեան՝ զկապուտն դեղին , սոյնպէս և յայլս ։

Եւ զի՞նչ՝ որպէս բիբք 'ի խաւարին տեղւոջ մեծանան , և 'ի լուսաւոր տեղւոջ փոքրկանան , սոյնպէս և ծառայքն այ յորժամ խաւարաւ փորձութեանց պատին , մեծանան յաղթանակաւ և արդեամբք ․ իսկ յորժամ լինին 'ի լոյս անդորրութեան և 'ի պայծառութե մտաց , փոքրկանան , զի խոնարհեսցին յոյժ ։ Զայս այ առնէ 'ի նոսա շնորհքն այ , որովք պահէ և խնամէ զնոսա ած ։ Եւ աՀա այս է՝ զոր խնդրէ մարգարէն յայ՝ յասելն ։ •

Պահեա զիս որպէս բիբ ական ։ Այսինքն թէ որպէս մարդիկ զգուշանան 'ի վը բբոց իւրեանց , և յամ իրս առաւել քան զամ զայն պահեն 'ի վտանգից , սոյնպէս և դու պահեա զիս ած իմ․ և արա , զի 'ի պահիլ իմ 'ի քէն այսպէս՝ շնորհօք քո վարեցայց 'ի հոգեւորն ըստ ներգործութե բբոց ։ Եւ զը մարդիկ յորժամ զգան պատահար ինչ պատահիլ բբոց՝ զբազուկս իւրեանց կամ զթեւսն տարածեալ առաջի աչացն՝ պաշտպանեն զնոյն , սոյնպէս ասէ և դու պաշտպանեա զիս ․ սմին իրի 'ի պաշտպանութի թեւոց նորա ապաւինելով յարէ զկնի , և ասէ ։

Ի հովանի թեւոց քոց ծածկեսցես զիս յերեսաց ամպարշտաց՝ որք տառապեցուցին զիս ։ Թեւք ընծայեն այ ըստ պէսպէս նմանութե ։ Երբեմն փոխ խնամոց նր · ըս այսմ, * 'ի հովանի թեւոց քոց ցնծացայց ‖ · սաղ · կբ · 8 · Երբեմն փոխ օգնութե և պաՀպանութե նր · ըս այսմ, * 'ի հովանի թեւոց նորա յուսասցիս ‖ · սաղ · Ղ · 4 · Երբեմն փոխ զթոյ և սիրոյ · ըս այսմ, * տարածեաց զթեւս իւր , և ընկալաւ զնա ‖ · բ · օրին · լբ · 11 · Իսկ աստ թուի թէ առեալ լինին փոխ պաշտպանութեն այ՝ որ լինի ողորմութբ և արդարութբ իւր երկոքումբք թեւօք ։

Վաս սմին աղաչէ մարգարէն զած , զի 'ի վտանգին կամ 'ի մահուն 'ի թշնամեաց իւրոց տարածեսցէ ըզթեւս իւր ընդդէմ նոցա , և ընդ հովանեաւ նր ընդ պաշտպանութբ թեւոց իւրոց ծածկեսցէ զինքն , նր պահեսցէ , և մի թողցէ՝ զի տեսցեն զնա , և մատնեսցեն նմա թշնամիք իւր · զորոց և ասէ իսկ , թէ * տառապե-

„ ցուցին զիս ‖ ։ Թէ գործովք եւ բանիւք իւրեանց նե-
ղեցին զիս՝ առ ՚ի յաղթել ինձ եւ խախտել զիս յուղ-
ղութենէ ։

Ա.յլով իմն յարմարութբ եւս կարէ մեկնել այս բան ․
եթէ զի ոչ հան ՚ի տեսանելն զցին կամ զուրուր՝ իջա-
նել ՚ի վը ձագուց իւրոց առ ՚ի յափշտակել զնոսա առ-
նու զնոսին ընդ թեւովք իւրովք եւ ծածկէ, զի մի ե-
րեւեսցին, եւ մի յափշտակեսցին ․ սոյնպէս աստ եւ դու
տէր պաշտպանեա զիս * յերեսաց ամպարշտաց ‖ ․ Թէ ՚ի
նենգութէ նց, կամ ՚ի բարկութէ եւ ՚ի բռնութէ նց ։
Ա.յլաբի նմանութբ խօսեցաւ եւ տէրն մեր առ ան-
հաւան հրէայս ․ * քանիցս անգամ աստ կամեցայ ժո-
„ ղովել զմանկունս քո, որպէս ժողովէ հաւ զձագս իւր
„ ընդ թեւովք, եւ ոչ կամեցայք ‖ ։ մատ․ իգ․ 37 ։
Ո.րք՝ յետ խնդրելոյ մարգարէին զպահպանութի նց
ընդ հովանեաւ խնամոց նր յերեսաց թշնամեացն՝ որք
տառապեցուցանէին զնա, յայտ առնէ այժմ զգործս
անօրէնութեան նց, առ ՚ի փութով գտանել յնյ ըղ-
պաշտպանութի․ վնյ ասէ ։

Թ․ Թշնամիք ոգւոյ իմ պաշարեցին ․ ՚ի ճարպս իւրեանց
արգելան ․ եւ բերանք նոցա խօսեցան զամբարտա-
ւանութիւն ։

Թշնամիք ասելով՝ իմանայ զայնս, որք մնասիչ են
հոգւոյ՝ թէ դեւք իցեն՝ եւ թէ մարդիկ ․ եւ կամ իմա-
նայ զայնս, որք թէպէտ մարմնոյ եւեթ մնասեն, բայց
յաճախելով զմնասն՝ վտանգ հասուցանեն եւ հոգւոյն ։
Ո սոյանէ խօսի աստ յասելն ։
Թշնամիք ոգւոյ իմ պաշարեցին ։ Թէ յամ կողմանց պա-
տեալ պաշարեալ տառապեցուցին զիս թշնամիք իմ,
մինչեւ ոչ եւս կարել ինձ խոյս տալ յերեսաց նոցա, եւ
զերծանիլ ՚ի ձեռաց նոցին ։ Ա.յլ յետ այսչափ տառա-
պեցուցանելոյ զիս՝ ոչ շարժեցան ՚ի գութ, այլ՝ իս-
պառ փակեցին ընդդէմ ինձ զաղիս իւրեանց ․ սմին իրի
յարէ զկնի, եւ ասէ ։
Ի ճարպս իւրեանց արգելան ․ կամ ըստ այլում գրի ՚ի ժա-
մագրբէ, * ՚ի ճարպս իւրեանց արգելին ‖ ։ Ճարպն
է թանձրացեալ զիրուցն այն, որ պատէ զփորոտիս
կենդանեացն, եւ զաղիսն ։ Իսկ այլաբանութբ՝ երբեմն

առեալ լինի փոք պարարտութե կամ փոք լիութեան իւրեք բարւոյ . յոր միտ առի . Բ . օրին . ԼԲ . 14 . * ընդ ձարպոյ երիկամանց ցորենոյ, և զարիւն խաղողոյ ըմպէին զգինի || . որ է ասել, ուտէին զլաւութիւն ցորենոյ, և ըմպէին զանապակ գինի ։ Այլ կամ փոք փափկութե հոգւոյ կամ ուրախութե . Ը այսմ, սաղ . ԿԲ . 6 ։ * որպ 'ի ձարպոյ պարարտուէ լցցի անձն իմ . շրթամբք ցնծութե օրհնեսցէ զքեզ բերան իմ || ։

Իսկ երբեմն առեալ լինի 'ի չար կողմն փոք յանդըգնութե կամ անբարտաւանութե կամ լրութե չարեաց, և կամ լիրբ անզգամութե . յոր միտ առէ մարգարէն . * ելցէ որպ 'ի ձարպոյ անիրաւութիւն նոցա || . սաղ . ՀԲ . 6 ։ Այս միտ և եղիփազ թեմնացին առէ 'ի գլուխ յոբայ վասն անզգամ մարդոյ . * ընթացաւ առաջի նորա հպարտութբ, թանձրութբ վահանի իւրոյ . զի ծածկեաց զերեսս իւր ձարպով իւրով || . յոբ . ԺԵ . 26 ։ Ի սոյն միտս առեալ լինի և աստ ձարպն ։

Իսկ պատճառ այսպէս նշանակելոյն է այս, զի որպէս ասացաք՝ ձարպն պատէ զաղիս . իսկ աղիքն յայտ է թէ այլաբանօրէն նշանակէ զգութ կամ զսէր . Ը որոյ ասեմք, աղէկէզ, աղէխարշ . աղէկտուր, ևն . ըստ 'ի գթոյ կիզեալ, 'ի գթոյ խարշեալ, ևն . յոր միտ առի 'ի բզմ տեղիս . աղիք նր գալարէին . կամ աղիք իմ գեղու . կամ պղնձի աղիք . կամ թէ * աղիք ամպարշտաց անողորմ են || . առակ . ԺԲ . 10 ։

Այլ յաղագս այսորիկ՝ յորժամ մարդիկ յանդգնութբ կամ անզգամութբ վարին Ը տառապեալ և Ը նեղեալ անձանց, այնու անզգամութբ գրեթէ իբր ձարպով ծածկեն զաղիս իւրեանց, ըստ՝ զգութ իւրեանց . կամ թէ յանզգամութե իւրեանց իբրև 'ի ձարպս արգելեալ լինին, զի մի բերցին գթով առ նոսա . սմին իրի այլաբանութեամբ ասի զնչէ, թէ արգելուն զաղիս 'ի ձարպս իւրեանց ։ Կամ որ նոյն է, արգելեալ լինին 'ի ձարպս իւրեանց, ըստ յանզգամութե իւրեանց, զի մի զեղուցուն զգութ իւրեանց յայլս ։

Այլ յայս միտս կամի առել մարգարէն . ամենևին անգութք եղեն առ իս թշնամիք իմ . զի ոչ եղև նոցա բաւական յամ կողմանց պաշարել զիս տառապանօք, այլ՝ առաւելեալ յանզգամութեան իւրեանց՝ առաւել

եւ անգթութեամբ ջանացան նեղել զիս՝ ոչ միայն գործովք, այլեւ ամբարտաւան բանիւք · վ՟յ յարէ զկնի եւ ասէ ։

Բերանօք նոցա խօսեցան զամբարտաւանութիւն ։ ո՟ր խօսեցան բերանօք իւրեանց զամբարտաւանական եւ զպարծաղական բանս, թէ ահա նեղեցաք եւ նեղեմք զնա · եւ ո՞վ է՝ որ կայ մեզ հակառակ ·

Զայս արարին ո՟ն մերում եւ անօրէն հրէայքն երկիցս · մի՝ 'ի տան կայիափայ, եւ մի եւս՝ 'ի լեառն գողգոթայ · զի պաշարեալ զնովաւ՝ յետ այնչափ դառն տանջանաց՝ փ՟նկ գթալոյ 'ի նա՝ կսկծագին բանիւք եւ ամբարտաւանական երգիծանօք խօսէին առ նա · թող զորս արարին անողորմ զինուորք դատաւորին ·

Այս բան այլազգ եւս կարէ մեկնիլ, եթէ բանիւս ճարպ՝ նշանակեսցի ախորժ սրտի, կամ առաւելութիւն բերկրութե՝ զոր զգան ամպարիշտք 'ի նեղելն զայլս · եւ յայս միտ առեալ՝ կամի ասել, թշնամիք իմ յետ նեղելոյ զիս յա՟մ կողմանց՝ յախորժակս կամ 'ի բերկրութիւնս սրտից իւրեանց արգելան, ո՟ր դադարեցան · ո՟պ թէ ասէր · տեսեալ զիս 'ի ձեռաց իւրեանց նեղեալ եւ տառապեալ, ուրախացան, եւ սկսան պարծանօք խօսիլ՝ թէ ահա յաղթեցաք նմա, լ՟ա · եւ կամ թէ նեղեցին զիս չարաչար, եւ ինքեանք 'ի հանգստեան եղեն · Այս մեկնութիւն թէպէտ հայելով 'ի յաջորդ համարն՝ երեւի ուղիղ · բայց առաջինն առաւել եւս ուղղագոյն թուի ·

Կիրակոս վ՟րդ 'ի մեկն · եւագր · ի՟ · 34 · Ճարպով խմնոյ զթանձրութի մտաց՝ տիրեալ 'ի չարութէ կամաց · եւ ըստ այսմ կամի ասել · ամպարիշտք պաշարեալք 'ի թանձրութենէ մտաց, եւ 'ի նոյն իբր 'ի ճարպ ընկղմեալք, վարէին ընդ այլս ըստ բերման սրտից իւրեանց · երբեմն գործովք հարստահարեն զնոսա, եւ երբեմն ամբարտաւանական բանիւք տառապեցուցանեն ·

Այլ եթէ բանիւս ճարպ՝ նշանակեսցի պարզ լիութիւն, կամ պարարտութի, եւ կամ փարթամութի, միտ բանին լինի այս, թէ կամելով նոցա առաւելուլ 'ի մեծութեան կամ ինչս՝ 'ի փարթամութեան՝ նեղեցին զիս, եւ մերկացուցին 'ի բարեաց · եւ ջանացան իսպառ նուաճել զիս · սմին իրի յաւելու ասել ·

Ժ. Մերժեցին զիս. և այժմ դարձեալ պատեցան զինև. ուշ եդին խոնարհեցուցանել զիս յերկիր:

Մարգարէն յայս և 'ի նախընթաց համարն, որ և 'ի յաջորդն զչարիս թշնամեաց իւրոց մի ըստ միոյ յարելով և իբր 'ի վր միմեանց կուտելով ոչ այնչափ դիտէ զառաւելութի չարեաց նոցա յանդիմանն կացուցանել, որչափ զգութ ողորմութեանն այ 'ի վր իւր շարժել. իբր զի տեսեալ այ զայսպիսի և զայսչափ չարիս թշնամեաց նորա, գթասցի և հաճեսցի պաշտպանել զնա. զայս դիտելով մարգարէին՝ պէսպէս նկատէ զչարիս նոցին. զի յետ 'ի մէջ մատուցանելոյ զանգըթութի աղեաց նց, և զամբարտաւանութիւն բերանոյ նոցին՝ զորոց խօսեցաւ 'ի նախընթաց համարն, առաջի առնէ և զմերժել նոցա զինքն, և ասէ:

Մերժեցին զիս. և այժմ դարձեալ պատեցան զինև. ուշ եդին խոնարհեցուցանել զիս յերկիր: Այս բան կրկնակի մեկնի. մի՝ ըստ 'ի բաց թողլոյ 'ի թշնամեացն. որ թէ ասացեալ էր. յետ բզմ տառապանս հասուցանելոյ ինձ թշնամեաց իմոց՝ * մերժեցին զիս ‖. այս նախատանօք և արհամարհանօք 'ի բաց թողին զիս. որպէս թէ ընկճեալ իցեն զամ զօրութի իմ. և այժմ անզգոյն դրդռեալ 'ի չարութենէ իւրեանց՝ * դարձեալ պատեցան զինև ‖. այս վերստին հասին 'ի վր իմ առ 'ի միւսանգամ տառապեցուցանել զիս: Եւ որ զի ըստ ամի նուաճեսցեն զիս, * ուշ եդին խոնարհեցուցանել զիս յերկիր ‖. այս ամ մտադրութբ և զգուշութբ խորհեցան՝ իսպառ անպիտանացուցանել զիս և հողոյ հաւասար առնել:

Երկդ մեկնի ըստ մերժեալ լինելոյ 'ի խաղաղութէ և 'ի բարութէ. որ թէ ասէր. թշնամիք իմ բզմ չարիս հասուցանելով ինձ՝ մերժեցին, այս խախտեցին և 'ի բաց հանին զիս 'ի խաղաղութէ և 'ի հանգստենէ իմմէ, ևս և 'ի հայրենեաց իմոց և 'ի քաղաքէ իմմէ. և ոչ յագեալ այսու՝ այժմ ևս կրկին անգամ պատեցան զինև, և ձեռն արկին յիս, և խորհեցան բառնալ զկեանս իմ. և այնու խոնարհեցուցանել զիս յերկիր: Յայսոցիկ երկուց մեկնութեց առաջինն երևի հաւանականագոյն:

Իսկ վասն այնր բանի՝ զոր ասէ, * ուշ եդին խոնարհե-

ցուցանել զիս յերկիր ||, գիտելի է, զի այս է ոճ փոխաբերական, որով նշանակի կարի խիստ արհամարհելի առնել, կամ ամենևին տկարացուցանել, և կամ անպիտանացուցանել, և իբրև հող երկրի կոխան ոտից առնել։ Ըստ այսմ մտաց իմացեալ լինի և այն, որ ասի 'ի սաղ. ՃԽԲ. 3. * Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ ||. Եւս և այն՝ որ ասի 'ի սաղ. Է. 5 * Հալածեսցէ ապա թշնամին զանձն իմ. հասցէ և կոխեսցէ յերկիր զկեանս իմ. և զփառս իմ 'ի հող բնակեցուսցէ ||։

Խորհրդաբար՝ սոյն այս ասի 'ի բերանոյն ադամայ 'ի դէմս ազգի մարդկան. որպէս թէ եդեալ էր. մերժեցին զիս դեք 'ի դրախտէ. և դարձեալ պատեցան զինև, զի և 'ի սկզբան անդ խորհեցան 'ի հող դարձուցանել զիս, և այսու խորհրդով յարձակեցան 'ի վերայ իմ։

Բարոյապէս նշանակի այսու ըստ լամբ'' մերժել փորձութեանց զմարդն 'ի հոգևոր կենաց, և յերկնաւոր խորհրդոց յերկրաւորս խոնարհեցուցանել ։ Դարձեալ՝ սոյն այս հայի և 'ի չար հնարս դիւաց՝ ընդդէմ այնոցիկ՝ որք դառնան յապաշխարութի. զի պատեալ զնովաւ՝ ուշ դնեն հանդամանաց նոցա, և ըստ այնց հանգամանաց ջանան խոնարհեցուցանել զնոսա յերկիր. երբեմն շողոմելով մատչին 'ի թուլացուցանել. տուր մեզ ասեն զբեռն ապաշխարութեդ. մեք բառնամք զայն, և դու թեթևացիր փոքր մի. եթէ տաս՝ առնուն և փախչին ։ Երբեմն 'ի հեռուստ կարթընկեց լինին, և զկարթն խայծիւ փափկութե թագուցանեն, մինչև որսասցին. ըստ որում ասէ իմաստունն. * որպ ձկունք որսացեալք կարթիւ, և թռչունք ըմբռնեալք 'ի ծուղակս, նոյնպէս անկանին յորոգայթ որդիք մարդկան 'ի չար ժմկի ||. ժող. Թ. 12 ։ Երբեմն յանդուգն յարձակին 'ի դրունս աշտարակի, որպ 'ի զգայութիս, բորբոքել զայնս հրով ըստ աբիմելէքայ. (դատ. Թ. 52 ։) Երբեմն յաճախեն զփորձութիւն և ոչ դադարին 'ի բորբոքելոյ զհնոցն ցանկութե ըստ բաբելացւոց. (դան. Գ. 46 ։) Իսկ այլ ևս ազգի ազգի հնարիւք փորձեն. զի թէ միով ոչ յաղթեսցեն, միւսով նուաճեսցեն. որպ կամեցաւ առնել նա ինքն ստնյ՝ պէսպէս փորձե-

ըով զոէրն մեր ( մատ․ ը․ 8 ․)

Նաեւ զայս ա͞մ առնեն՝ առ 'ի խոնարհեցուցանել զնոսա յերկիր ը͞ երկուց․ մի՝ զի երկրաքարշս կամ երկրասէրս արասցեն զնոսա․ զի ոմ͞ք ինքեանք լանջովք յերկրի սողան, սոյնպէս կամին տեսանել զմարդիկ, առ 'ի կլանել զնոսա․ զի հողակեր են ։ Երկ͞դ՝ զի իբրեւ զհող դիւրաւ կոխեսցեն զնոսա, եւ իբրեւ 'ի հող սերմանեսցեն 'ի ն͞մ զչարիս իւրեանց․ եւ հուսկ յետոյ 'ի սանդարամետս երկրի իջուսցեն զն͞ա ։ Բայց առ առաւել եւս բացատրելոյ մարգարէին զայսոսիկ, եւ առ սաստիկ ցուցանելոյ զխստութի͞ն նոցա, 'ի մէջ բերէ տարացոյց ինչ 'ի գործոց թշնամեաց իւրոց եւ ասէ ։

ժա․ Համարեցան ինձ որպէս առիւծ, որ պատրաստ է յորս․ որպէս կորիւն առիւծու, որ նստի դարանեալ ։

Առիւծն յորժամ քաղցնու, եւ պատրաստի վասն որսոյ, այնչափ գազանանայ՝ մինչեւ զրեթէ կրկին առիւծանալ ։ Սոյնպէս եւ կորիւն առիւծու յետ հատանելոյ 'ի ստենէ մօր իւրոյ՝ յորժամ առնու զճաշակ որսոյ, թէեւ չիցէ քաղցեալ՝ հանապազ դարանի՝ գտանել զորս․ եւ 'ի գտանելն յանդուգն յարձակի 'ի վ͞ր նորա ։ Արդ՝ որովհետեւ ասաց մարգարէն 'ի վերոյ զթշնամեաց իւրոց՝ թէ * ուշ եդին խոնարհեցուցանել զիս յերկիր ‖, զայս ուշադրութիւն ն͞ց կամելով սաստիկ ցուցանել՝ նմանեցուցանէ գազանային ուշադրութեան առիւծու պատրաստելոյ յորս, եւս եւ հետամտութեան կորեան առիւծու ։ Ուստի ասէ ։

Համարեցան ինձ որպէս առիւծ՝ որ պատրաստ է յորս․ որպէս կորիւն առիւծու՝ որ նստի դարանեալ ։ Ոչ ասէ՝ եղեն, այլ համարեցան․ որով ցուցանէ՝ թէ պատրաստիլ նոցա չզօրէ ինչ՝ եթէ ոչ թողցէ ա͞ծ․ եւ ըստ այսմ կամի ասել․ Թշնամիք իմ իբրեւ առիւծ սպասող որսոյ՝ պատրաստեալ են յափշտակել զիս եւ պատառել, եւ իբրեւ կորիւն առիւծու նստեալ են 'ի դարանի, իբր զի խորհին յանակնկալ պահու յարձակիլ 'ի վ͞ր իմ, եւ անհնարին գազանութ͞բ տառապեցուցանել եւ տանջել զիս, եւ իբրեւ թէ գիշատելով սպանանել, բայց ոչ կարեն առնել՝ զոր խորհին, եթէ ոչ թոյլ տացէ ա͞ծ ։ Ու-

տի թէպէտեւ յինքեանս են իբրեւ առիւծ եւ կորիւն առիւծու , բայց դեռեւս ոչ են ինձ այնպիսի · այլ միայն այնպիսի համարեցայն ։ Իսկ եթէ թոյլ տացէ տէր , ոչ թէ համարին , այլ լինին ։

Զայս բան այլով իմն նմանութբ մեկնէ Լամբրոնացին՝ հայելով 'ի դարանս դիւին · * Որպ ( ասէ ) առիւծն
,, 'ի ներքոյ ծառոյն նստի 'ի դարան , եւ մարդն ո՛չ ընդ
,, ուղիղ ճ̃պհ գնայ ընդ այն , եւ յանկարծակի 'ի դարա-
,, նակալէն յափշտակի , այնպէս եւ նա ( ո̃ր ստնյ ) 'ի
,, ներքոյ ուղիղ խորհրդոցն զմեքենայսն իւր թաքու-
,, ցանէ · եւ ( մեք ) յորժամ զայնմանէ իբր զճշմարտէ
,, բուռն հարկանեմք , 'ի հաղբս դարանակալութեանն
,, յանկարծակի ըմբռնիմք ‖ ։ Յայսմ ո̃մէ զերծանիլ
կամելով մարգարէին՝ պաղատի առ ա̃ծ եւ ասէ ·

ժ̄գ̄ · Արի՛ տէր՝ ժամանեա նոցա , եւ խափանեա զն̃ս · փրկեա զանձն իմ յամպարշտաց · 'ի սուր եւ 'ի ձեռաց թշնամեաց ։

Արի ասել առ ա̃ծ՝ իբր յորդոր ինչ մաղթողական առաջի դնի՝ առ 'ի յօգնութի կոչելոյ զա̃ծ 'ի պաշարիլն 'ի թշնամեաց · զորմէ տես 'ի սաղ · է̃ · 7 · ըստ որոյ եւ աստ աղաչէ զնա մարգարէն հասանել ինքեան յօգնութի առ 'ի վանումն թշնամեաց իւրոց յասեն ։

Արի՛ տր , ժամանեա նոցա , եւ խափանեա զն̃ս ։ Կամի ասել , ահա դու տէր տեսանես՝ զինչ գործեն թշնամիք իմ · եւ արդ՝ մի ես յամեր տէր · այլ "արի" , որ հաս ինձ յօգնութի · եւ * ժամանեա նոցա ‖ · որ հաս 'ի վր նց , որք են պատրաստեալ իբրեւ առիւծ յարձակիլ 'ի վր իմ · եւ կամ հաս զկնի նոցա , որք ո̃պ թէ վազելով հասանել կամին ինձ իբրեւ որսոյ իւրեանց ։ * Եւ խափանեա զն̃ս ‖ · որ արա , զի խափանեսցին 'ի գործոց իւրեանց , կամ 'ի ներգործութէ կատարութե իւրեանց · եւ ապրեցո զիս · եւ առ այս յարէ , եւ ասէ ։

Փրկեա զանձն իմ յամպարշտաց ։ Մատանօր բառս յամպարշտաց՝ դնի փոխ այնոցիկ , զորս ետ 'ի վերոյ դերանուամբս՝ նոցա ։ Իսկ պատճառ անուանելոյն զնոսա ամպարիշտս՝ երեւի լինել այս · զի ցուցցէ՝ թէ արժան է ա̃յ փրկել զնա 'ի ձեռաց նոցա · վն զի ամպարշտութբ խորհէին նոքա 'ի վր նր զչարիս ։ Եւ զոր ամպարիշտ

անուամբ յոգնականապէս առաջի առնէ , յասելն . * փրկեա զանձն իմ յամպարշտաց ||, զնոյն՝ թշնամի
անուամբ եզականապէս դնէ զինի , և ասէ ,

Ի սրոյ և 'ի ձեռաց թշնամւոյն ։ Սրով իմանայ աստ ոչ միայն զնիւթական սուրն , այլև զփոխաբերականն , այս զանզգամութիւն թշնամւոյն՝ ես և զլեզու նորա , որ իբրև զսուր խոցէ զհոգին ։ Նմանապէս և ձեռօք իմանայ ոչ միայն զնիւթական ձեռս թշնամւոյն , այլև զհնարսն որովք իբր ձեռօք ըմբռնէ ։ Այսպիսի սրոյ ասէ և յայսպիսի ձեռաց թշնամւոյ իմոյ փրկեա զիս ։ Արժան է աստանօր սրով իմանալ զբարկութիւն այ . յոր միտ յեբր" դնի խառպէխա . այ սուր քո . սոյնպէս դնի և յայլ ամ թարգմանութիւ՝ թէպէտ և տարբերութբ իւիք . այլ թէ զիարդ՝ ծանիր . զի ած 'ի բարկանալն և 'ի կամին պատժել զչարս և փրկել զարդարս՝ թոյլ տայ ամպարշտաց , զի նոքա նեղեսցեն զնս . որով և այն բարկութի լինի իբրև սուր 'ի ձեռս ամպարշտաց . նաև նոքին իսկ ամպարիշտք լինին իբրև սուր ձեռին այ , ոչ այնպիսի սուր , է որ հաճիցի ած , այլ՝ այնպիսի , զոր ասէ . սմին իրի վայ տայ այսպիսեաց սբ գիրն՝ յասելն ։ * Վայ ասորեստանւոյն , գաւազան բարկութե և սրտմտութե իմոյ 'ի ձեռս նոցա || .
եսայ . Ժ . Ե ։

Այսպիսի իմն նմանութի հայեցեալ մարգարէին՝ ասէ . հան և առ զսուր բարկութե քո 'ի ձեռաց թշնամեաց իմոց . վս զի նոքա և ձեռին քում թշնամի են , զի հակառակ կան նմին . նա զի՝ այնու սրով քով աւելի կամին հարկանել՝ քան զոր ձեռն քո թոյլ տալ կամիցի առնել ։ Նաև զի՝ նոքա անօրէնութբք իւրեանց արդէն թշնամիք ձեռին քո են . զի ոչ գնան ըստ առաջնորդելոյ աջոյ քո , այլ՝ ըստ չարութե սրտից իւրեանց , որով և ինքեանք իսկ լեալ են որպէս սուր ընդդէմ իմ ։ Նաև արդ փրկեա զիս աղաչեմ 'ի սրոյ աստի . և հեռացո յինէն զթշնամիս իմ , և ցրուեա զնս 'ի բաց ։ Ըստ սմին տեսութե յաւելու մարգարէն զինի . և ասէ ,

ԺԳ . Տէր կորո՛ զնս յերկրէ . բաժանեա՛ և խափանեա՛ զնս 'ի կեանս իւրեանց ։

Այսու քանիւ ոչ խնդրէ մարգարէն , զի ած դատա-

պարտեսցէ զթշնամիս իւր · այլ զերիս միայն կամի առաջի դնել ։ Առաջինն է ոչ գուշակութիւն , իբր թէ ած կորուսանելոց է զամպարիշտս · և զայս թէպէտ մաղթելով դնէ , բայց այն հայի յեղանակ բանին , և ոչ 'ի գուշակութիւն ։ Երկրորդն է իբր համարումն , որով դատիմք այսպիսի հատուցումն լինել ամպարշտաց · ուստի ասէ վանական վրդ 'ի մեկն · յոբ · գլ · իէ · * ոչ թէ աղօթէ այսպէս լինել ( ամպարշտաց ) · այլ զայս յայտ առնէ՝ թէ համարիմք ամպարշտաց հատուցումն՝ զոր կրեմք ‖ ։ Երրորդն է իբրև խնդրուած զերծանելոյ 'ի ձեռաց թշնամեաց իւրոց · և ոչ եւս մատնիլ 'ի ձեռս նոցա · 'ի սոյն ակնարկելով ասէ ։

Տէ՛ր ի սակաւուց յերկրէ ։ Կամի ասել · որպէս դու ես տէր ամի՝ իմ և նց , մի իսպառ թող տար նոցա առնել զոր կամին · այլ հեռացո զնս յինէն · և արա այնպէս , որպ թէ ոչ եւս իցեն նք յերկրի · և կամ բարձ զնոսա 'ի կենցաղոյ՝ յոր յարեալ են յամ սրտէ · և առ այս յարէ զկնի , և ասէ

Բաժանեա՛ և խափանեա՛ զնոսա ՚ի կեանս իւրեանց ։ այ բաժանեա զնոսա յինէն և ցրուեա իբրև զխուռն · և * խափանեա զնս 'ի կեանս իւրեանց ‖ · այ թէ արա , զի խափանեալ ունիցին զկեանս իւրեանց · որ է ասել , բարձ զնոսա 'ի կենաց աստի՝ զոր չարաչար վարեն , կամ արա , զի ոչ ունիցին զկեանս ։ Սա կամ այլազգ եւս · իբր թէ ասել · որպէս նոքա զաստի կեանս միայն ընտրեցին , բաժանեա , այ արա , զի յաստի կեանս միայն սակաւիկ մի վայելեսցեն · և յետոյ խափանեա , այ արա զի յետոյ բարձցին 'ի կենաց աստի ։ Սա կամ եւս՝ արա , զի 'ի կամիլ իւրեանց զայլս նեղել , և զայլոց կեանս բառնալ , ինքեանք նեղեսցին՝ և 'ի կենաց իւրեանց բարձցին ։ Այլ ոչ ասացաք այժմ , սոքօք ոչ մաղթէ մարգարէն զչարիս ընդդէմ ամպարշտաց · այլ միայն յայտ առնէ մաղթողական եղանակաւ , թէ այսպիսի ինչ լինելոց է ամպարշտաց · և կամ թէ զայս ինչ գործելոց է ընդ նոսա ած ։

Ըստ Լամբրոնացւոյն՝ զայս ասէ մարգարէն վասն չար խորհրդոց առ 'ի կորուսանել զնս յերկրէ՝ այ 'ի մարմնոյն , և բաժանել զնս անտի , զի մի եւս ունիցին կեանս 'ի նմա , այ զի մի եւս մնասցեն ։

Յարմարական մեկնութիւն զայս բան բազումք մեկնեն 'ի վերայ կորստեանն հրէից յերկրէն հրէաստանի 'ի ձեռն տիտոսի և վեսպասիանոսի , բայց 'ի սակաւուց 'ի նոցէ՝ որք էին հաւատացեալք 'ի քս՟ · Այլք 'ի վերայ սաւուղայ մեկնեն ըստ կորնչելոյ նր՟ և ըս՟ բաժանելոյ , դր՟ ըստ մերժելոյ 'ի թգւրութէ իւր , և ըս՟ խափանելոյ 'ի կե-նաց սրով իւրով ·

Արդ՝ յետ առաջի դնելոյ մարգարէին զայսոսիկ՝ բա-ցատրէ այժմ զայն , զոր զօրութեամբ դիտէ · դր՟ թէ՝ զխորդ ամպարիշտք յոմ՟ սրտէ յարեալ են յերկրաւոր բարիս , և 'ի նոսին միայն կամին փափկանալ՝ առանց հայելոյ յերկնաւոր բարիսն · Այնն իրի ասէ ·

ԺԴ · Գաղտնեօք քովք լցան որովայնք նոցա · յագեցան հե-բոհրանէ , և թողին զմնացեալսն տղայոց իւրեանց ·

Գաղտնեօք իմացեալ լինելն աստ երկրաւոր բարիք , զորս արար ած՟ 'ի վայելս մարդկան · Այլ սոքա գաղտ-նիք կոչին վն՟ չորից · Առաջին՝ զի իբրև 'ի գաղտնի շտե-մարանէ առ՟ յամէ և օր ըստ օրէ հանեալ լինելն առ 'ի վայելումն որդւոց մարդկան · Երկրորդ՝ զի բնութիւնք և յատկութիւնք նոցա գաղտնի են 'ի մարդկանէ · զի թէ-պէտև վայելեն զնոսին մարդիկ , և տեսանեն զգործս նոցա , բայց թէ որպի ինչ է այն զօրութի , որով նք կան և գործեն , գաղտ 'ի հասողութէ միտաց նոցա · Երրորդ՝ զի յոմ՟ արարածս գաղտն այնպիսի կատարելութիւնք , որք 'ի բնկին՝ յայտ առնեն զկատարելութիւնս , որք գոն 'ի յած՟ · * զի աներևոյթք նորա 'ի սկզբանէ աշխի ( ասէ առ-աքեալն ) արարածովքս իմացեալ տեսանին , դր՟ է մշտնջենաւորութի , և զօրութի , և ածութի նորա ‖ · Հռովմ · ա · 20 · Չորրորդ՝ զի մարդիկ՝ մնւնդ ամպարիշտք 'ի վայելելն զբարիս զայսոսիկ՝ միայն յայն հային , որ բերկրեցուցանէ զզգայութիւս նոցա , իսկ 'ի գաղտնիս նոցին ոչ հային · ուստի և գաղտնի են առաջի տեսու-թե նոցա · վն՟ զի ոչ տեսանեն , թէ նա՝ որ տուեալ է նոցա վայելել զայս ամ՟ , քանի բարի է և քաղցր · և թէ՝ պահանջէ ևս , զի ծանիցեն զնա , և գոհասցին զնմէ , և ծառայեսցեն նմա · Այլ և ոչ տեսանեն , թէ ած՟ եթէ վն՟ ապականացու և ցաւալից մարմնոյ զայսչափ բարիս է ստեղծեալ , ապա քանի մեծամեծ բարիս

ևս պատրաստեալ է վ՟ն հոգւոյ ։ Եւ դարձեալ ոչ տեսանեն, թէ այս ա՟մ բարիք ոչ են իւրեանց, այլ՝ այլում, յ՟ն ա՟յ. ապա ոչ է նոցա արժան յա՟մ սրտէ ՚ի նոսին յարելով իբրև իւրեանց ժողովել զնոսին, ևս և առ ՚ի վայելելոյ ՚ի ն՟ս՝ զայլս կեղեքել և տառապեցուցանել, և զինքեանս և զորովայնս իւրեանց պարարել ։ Իսկ որովայն ասելով՝ ոչ միայն իմանայ զնիւթական որովայնն՝ զանդղին փորոտեաց, որ և կոչի փոր, այլև զբարոյականն, այն է բաղձանք մարդոյ. զի որպէս որովայնն միշտ պահանջէ զկերակուր, և որ ինչ գնայ յայն, ծախի՝ մասն ինչ ապականելով, և մասն ինչ ՚ի գոյացութիւն մարդոյ փոխարկելով. սոյնպէս և բաղձանք մարդոյ միշտ պահանջէ զախորժելիս իւր. և որ ինչ գնայ ՚ի նոյն, յ՟ն որ ինչ կատարի ըստ ախորժականաց նորա, ծախի՝ ըստ մասին անցանելով, և ըստ մասին ՚ի բաղձանսն փոխարկելով. յ՟ն զգածելով ըզբաղձանսն յայնպիսի համգամանս՝ զորպիսի ինքն ունի. վասն զի հա՟րկօրէն որք բաղձանօք կատարեն ինչ, տպաւորի ՚ի բաղձանս ն՟ց ստուեր որպիսութեան այնր, զոր կատարեն. և կա՟մ ունակութ՟ի ինչ գործելոյ զնոյն ։

Յայս ա՟մ հայեցեալ՝ ասէ ։

**Գաղտնեօք քոց լցան որովայնք նոցա ։** յ՟ն բարեօք քովք, զորս տուեալ ես ն՟ց ՚ի վայելել, լիացան և լցան որովայնք և բաղձանք ն՟ց ։ Եւ յաւելու ևս.

**Յագեցան ասէ խոզենեաւ ։** յ՟ն ՚ի կերակուրս և յինչս միայն յարելով նոքօք միայն կամեցան յագել. և փոխ հոգալոյ զփրկութենէ հոգւոց իւրեանց՝ հոգացան յաւելուլ զստացուածս. որպէս զի առաւել ևս վայելեսցեն՝ ինքեանք և որդիք իւրեանց. վասն որոյ յարէ, և ասէ ։

**Եւ թողին զմնացուածս տղայոց իւրեանց ։** յ՟ն ՚ի մեռանելն թողլն որդւոց իւրեանց զայնս, որք մնացեալ էին յընչից անտի՝ զորս ժողովեցին վասն իւրեանց և վ՟ն նոցա ։ Նոյն է յիրաւի փոյթ որդւոց Տ՟ր, զի ջանան ոչ միայն լինել բարեօք և ընչիւք Տ՟ի, այլև թողուլ զորդիս իւրեանց ժառանգս նոցին ։ Եւ արդարև թողուն, բայց ոչ ինչ օգտին՝ յորոց թողուն, այլ մանաւանդ տանջին՝ վ՟ն որոց թողուն.

Ո՛չ ասէ մարգարէն, թողլն որդւոց իւրեանց, այլ՝

* տղայոց իւրեանց ‖ . որով կամի ցուցանել՝ թէ որդիք ն՟ց թէպէտև անմեղք իցեն իբրև զտղայս , բայց այնոքիւք ընչիւք՝ զորս թողուն նոցա հարք իւրեանց , բ՟մ անգամ պատահի՝ զի կորուսանեն նոքա զանմեղութի իւրեանց , մի՟նդ յերկս . վ՟ն զի կամ անհոգ լինին այնուհետև յաշխատիլ 'ի գործս ինչ , և մնան 'ի դատարկութե , որ է մայր մոլութեց . կամ պատրաստական զտեալ զինչս՝ ծախեն զայնս յանառակութիս ։ Եւ կամ չար օրինակ ունելով զհարս իւրեանց՝ առաւել ևս քան զն՟ս վատթարանան ։ Զայսոսիկ բ՟մ բանիւք և գեղեցիկ ձեռնարկութբ յայտնի ցուցանէ երանելին սուրբն 'ի բազում տեղիս՝ 'ի մեկնութեան կաթուղիկեայց . տես . յակ . ա . 10 . ճառ . բ . 'ի յորդորակն ։

Այս յետին ասացուած կարէ հայիլ և 'ի մնացուածս հեթանոսութե . 'ի յամօթ և 'ի նախատինս առաջին գործոց իւրեանց ։ Ուստի ասէ գէորգ վ՟րդ . 'ի մեկն . եսայեայ , թէ * վ՟նկ եթող ( տ՟ծ ) սակաւ մնացորդս
,, հեթանոսութե խմորոյն , զի յամօթ առաջին վա-
,, րուցն լինիցին . և որք այժմ են՝ 'ի տօնս կռոցն
,, պարտակս զերեսօք կալցեն ‖ ։

Այլով իմն տեսութբ քննեալ՝ այս բան կարէ համարեալ լինել և իբր գուշակութի այնր զաղմնեաց՝ յ՟տ այնր հրաշից , զոր երկիցս արար ք՟ս 'ի բազմացուցանելն զհինգ և զեօթն նկանակս , զերկուս և զսակաւ ձկունս . զորս կերան՝ և յագեցան հրէայքն . և զնշխարս նոցին ևս ( ըստ ասելոյ մեկնչաց ) առեալ տարան որդւոց իւրեանց . ( մատ . ժդ . 19 . և ժե . 36 ։ ) Բարոյապէս՝ չարաչար ներգործութբ լցեալ լինին բաղձանք ամբարշտաց , և ինքեանք յագին 'ի նոսին , և զչար գործս յօրինակ թողուն որդւոց իւրեանց ։ Ըստ լամբրոնացւոյն՝ գաղտնեօք խնայեալ լինին ատա գաղտնի խորհուրդք մնաց մարդկան շուրջ զա՟ծայլն իրօք . իսկ դևք յածեցուցանելով զայսպիսի խորհուրդս մարդկան 'ի չարն , յագեցան և պարարտացան . իբր զի այնու կատարեցան կամք իւրեանց . իսկ զայլ հնարան իբրև զմնացուածս չարութեան թողին տղայոց յ՟տ հետևողաց իւրեանց . զի նոքա լցուսցեն զպակասութի չարութեն ։

Յարմարական մեկնութ՟ ըստ վարդանայ՝ գաղտնեօք իմացեալ լինի առ բարկութ՟ին այ՟՝ զոր պահեալ ունի ՚ի շտեմարանի իւրում. * տալ ամպարշտաց՝ թէ ոչ
,, գանձան. ըստ այնմ, ոչ այդ ամ՟ ժողովեալ է առ իս, և
,, կնքեալ պահի ‖. Նոյն բարկութ՟ ասէ լցան և լիանան որովայնք ամպարշտաց. զի կեանք նոցա, յորս յագեցան անցաւոր բարեօք. և զմնացուածս պատժոց թողին որդւոց իւրեանց՝ զի հետեւողաց վարուց նոցին. Օ այս եղեալ մարգարէին՝ առաջի առնէ այժմ, թէ զինչ այն իցէ, որով ինքն ցանկայր յագել. վ՟յ ասէ.

ԺԵ. Ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց. յագեցայց յերևել փառաց քոց.

Արդարութ՟ իմացեալ լինի առ անաչառութիւն վարուց, և բովանդակութ՟ի ձև իցէ բարի գործոց և առաքինութ՟եց. Իսկ այսպիսի արդարութ՟ երևիլ մարդոյ երեսացն այ՟՝ կրկնակի կարէ լինել. մի՝ յաստի կեանս, յորժամ ոք կեայ արդարութ՟ առաջի ներկայութ՟են այ՟, կամ առաջի նր՟. իբր զի զայնպիսի վարս վարէ ՚ի կեանս յայս առաջի այ՟, որ ամենեւին համաձայն է օրինաց նր՟, և հաճոյ նմա. Երկրորդ՝ ՚ի հանդերձեալն, յորժամ մարդն յանդիման լինի առաջի այ՟՝ իբրև արդար, զի սրբեալ ՚ի մեղաց, և զարդարեալ բարի գործովք ՚ի ձեռն շնորհացն այ՟. Ի սոյն ակնարկելով՝ ասէ.

Ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց. Նոյն բան հայելով յաստի կեանս մեկնի այսպէս. տուր ինձ տէր, զի արդարութ՟ կենաց շրջեցայց առաջի քո ՚ի կեանս յայս. և այնու արդար երևեցայց երեսաց քոց, զի անստգտանելի գտայց առաջի քո.

Նոյն հայի և առ այնոսիկ՝ որք անդադար վաստակին ՚ի գործս առաքինութ՟ե, և ձգնին համապազ յաղօթս. ուստի ասէ ծործորեցին ՚ի մեկն. մատ. գլ. ժը. թէ սրբք * միշտ անխոնջ վաստակօք, և յարակայ աղօ-
,, թիցն ձգամբք առ տէր ՚ի վեր ակնարկեն. ըստ այնմ, ես
,, արդարութ՟ երևեցայց երեսաց քոց ‖.

Իսկ քզ՟ի այսպիսի կենօք կենցաղավարիլ առաջի այ՟՝ է ՚ի շնորհացն այ՟, վ՟նկ ոչ ասէ մարգարէն, երևեցայց

առաջի քո, կամ երևեցայց քեզ, այլ՝ երեսաց քոց. վասն զի կեանք մարդոյ առանց ճառագայթից երեսացն այ՟՝ այն՟ առանց շնորհացն այ՟՝ է մթին յոյժ և խաւարին, մինչև ոչ կարել նմա երևիլ առաջի այ՟ բարի և արդար. իսկ յորժամ ած՟ դարձուցեալ զերեսս իւր 'ի մարդն՝ ճառագայթիւք շնորհաց իւրոց լուսաւորէ զմիթացս նորա, յայնժամ կարէ նա տեսանել և գործել զբարին, և երևել առաջի այ՟ բարի և արդար. և ըստ այսմ յասելն աստ * արդարութբ՟ երևեցայց երեսաց քոց ‖. լուելայն 'ի մէջ բերէ և ըղձայլին այ՟ առ ինքն, որպ՟ թէ եղեալ էր. 'ի ձայնդ քո առ իս շնորհօք՝ արդարացայց, և արդարութբ՟ կեցից, և արդար երևեցայց առաջի քո:

Իսկ հայելով 'ի հանդերձեալ կեանս՝ այս բան ցուցանէ զանդատապարտելի երևելն յատենին այ՟. յոր միտ կամի ասել. 'ի կալ իմում առաջի երեսաց քոց յահեղ ատենի քում մի գտայց անարգեալ, այլ արդարացեալ:

Նաւ՟ ըղի 'ի կենցաղավարել մարդոյ առաջի այ՟ արդարութբ՟, և 'ի գտանիլ նորա արդար և հաւատարիմ 'ի դատաստանի՝ շնորհի նմա մտանել 'ի փառս նորա, և ժառանգել զնա. ըստ այնմ, * որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ ես .... մուտ յուրախութիւն տն՟ քո ‖. մատ. իե. 21. վասն յետ յայտ առնելոյ մարգարէին զարդարութբ՟ երևելն առաջի այ՟՝ յայտ առնէ և զմուտն 'ի փառս, կամ զժռնգութի՟ նորին, և ասէ:

Յագեցայց յերևել փառաց քոց: Մարդ ցորչափ կենցաղի յաստի կեանս, թէպէտև ըն՟ զգայութեցն կարէ իւիք յագիլ, բայց ըն՟ բանական մասին ոչ յագի, և ոչ իսկ կարէ յագիլ յայնս՝ յորս առաջնորդեն զգայութիւնք իւր: Ոչ ի յայտ է թէ զգայութիւնք մարդոյ՝ որպէս տեսանելիք, լսելիք, ճաշակելիք, եւլ՟, թէպէտև 'ի հայիլ յառարկայս իւրեանց՝ ըն՟ իմիք յագին. վս՟ զի ժառանգեն զայնս՝ առ որս կարգեալ են, բայց հոգի մարդոյ յանսահման բարին կարգեալ գոլով, և զայն միայն իւր ծայրագոյն առարկայ և վախճան ունելով՝ յինչ և յօժարեսցի արտաքոյ նորին առ 'ի յագիլ, ոչ գտանելով 'ի նմա զբարութի՟ անսահման՝ ոչ յագի 'ի նմին. այլ՝ կամ զզուանօք վայելէ, և կամ թողեալ զայն՝

յայլս բերի ։ Իսկ եթէ յանսահման բարին յարեսցի , ՚ի նմին գտանելով զայն՝ զոր խնդրէ , նովին յագի . և զնմ շարժութիւն բաղձանաց իւրոց ՚ի նմին դադարեցուցանէ ։

Այլ այս անդորրական դադարումն բաղձանաց բազում փորձութիք ամբոխի յաստի կեանս . և ոչ է կատարեալ յագուրդ . զի որովհետև ոչ լինի աստ ՚ի ձեռն լուսոյ փառաց դէմ յանդիման ժառանգել զայն անսահման բարին , այլ միայն ՚ի ձեռն լուսոյ հաւատոյ իբրև ընդ հայելի նկատելով , վն և այն յագումն բաղձանաց յաստի կեանս է անկատար յոյժ . իսկ ՚ի հանդերձեալն ՚ի վայելելն զած դէմ յանդիման՝ լինի ամենակատար . մինչև ամ բաղձանաց հոգւոյն՝ ( որ ըստ արխատանելի յանսահմանս բերի ) յանսահման երանութենէ փառաց ածութեն ըստ ամի յագիլ և լիանալ ։ Ի սոյն հայելով մարգարէին ասէ զայս բան ‖ * Յագեցայց յերևիլ փառաց քոց ‖ . այ յորժամ փառք ածութե քո երևեսցին ինձ , յայնժամ յագեցայց ըստ ամ բաղձանաց իմոց . յայնժամ ոչ ես յօժարեցայց առ այս կամ առ այն , այլ՝ հանգեայց ՚ի ծայրագոյն բարիդ իմ . յայնժամ ոչ ես տոչորեցայց հառաչանօք ժամանելոյ առ քեզ , այլ անդորրացայց և զմայլեցայց ՚ի ժառանգութե երեսաց քոց ։

Այս երևումն փառացն այ՝ ոչ այլ ինչ է , եթէ ոչ ( ոպ և յայտ է յասացելոցս ) դէմ յանդիման տեսութի էութե նորա . վն զի փառքն այ յինքեան առեալ՝ ոչ է այլ յէութենէն այ , ուրեմն և երևումն փառացն այ յինքեան՝ է երևումն էութենն այ . և սոյն այս՝ որպէս ՚ի կողմանէ այ ասի երևումն կամ երևիլ , սոյնպէս և ՚ի կողմանէ այնր՝ որում երևի , ասի տեսութի կամ տեսանել . զի յայտ է թէ փառքն՝ որ երևի այլում , տեսանի ՚ի նմէ , և այն՝ դէմ յանդիման . ապա թէ ոչ՝ ոչ ասիւր երևումն կամ տեսութի փառաց . թող զայն , զի եթէ չէր դէմ յանդիման , ոչ ասէր մարգարէն՝ " յագեցայց " . զի միայն դէմ յանդիման տեսութեամբ հնար է հոգւոյ մարդոյն յագիլ , և ոչ ծածկեալ տեսութբ , և կամ օրինակաւ , որպէս այժմ տեսանեմք ։ Սա արդարև զուարճացուցանէ , իսկ այն լիացուցանէ և յագեցուցանէ ։ Տեղիս տեսեալ զնշանս այ ափ-

շեցաւ ( Գ · Թագ · ԺԹ · 13 · ) զի՛նչ լինիցի ապա այնմ, որ տեսցէ զերեսն այ ։ Այն արձագանգ իմն էր ձայնի · իսկ այս նոյն իմքն տեսութիւն · ըստ որում ասէ նարեկացին · 'ի մեկն · երգ · Գ · 4 · * Ի տեսանել ( ասէ
„ եղիայի ) զյետոյս միայն՝ որպէս թէ ( ազդեցաւ 'ի նա )
„ ձայնի արձագանգ միայն ‖ · ապա զի՛նչ ազդեսցէ 'ի հոգին նոյն իսկ ժառանգութիւն երեսացն այ ։

Այս տեսութիւն այ է՝ որ խոստացեալ է հաւատարիմ ծառայից նորա, և այնոցիկ՝ որք սուրբ են սրտիւք · որպէս և ասաց տէրն · մատ · Ե · 8 ։ Այսմ ակնկալեալ մնայր երանելի առաքեալն, և ասէր · * այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի ( որ իբրև 'ի ձեռն հայելւոյ ) օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման · այժմ խելամուտ եմ փոքր 'ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս և նայն ծանեաւ զիս ‖ · Ա · կոր · ԺԳ · 12 · որ դէմ յանդիման տեսից զնա, որպէս և էն · զի եթէ գիտացից ասէ՝ որպէս և նա գիտէ զիս, ապա գիտացից և տեսից զնա դէմ յանդիման, որպէս և էն · զի և նա դէմ յանդիման գիտէ և տեսանէ զիս՝ որպէս և եմ · * Այժմ ոչ կարեմք պարզ տեսանել
„ զած ( ասէ բարսեղ վ̃դպ · մարկ · ԺԸ · ) այլ իբրև ը̃
„ հայելի՝ օրինակաւ · և անդ երես առ երես դէմ
„ յանդիման տեսանեմք զՃշմարտութիւն ‖ · և 'ի տեսանելն բերկրիմք լցեալք ամենապատիկ ուրախութբ ։

Որ և օրինակաւ իմն յանդիման առնէ սարգիս շնորհալի 'ի մեկն · յուդայի թղթոյն · համար · 24 · Ճառ · Փ · երես · 835 · յասելն · * զի եթէ յորժամ զարեգակ-
„ նըս զայս տեսանեմք յետ բզմ աւուրց ամպոց և
„ մառախլոյ՝ խնդամք և ուրախանամք, ապա որքան
„ խնդութի և ո՞րպի ցնծութիւն ոչ ծնանիցի այնմ, որ
„ յետ 'ի բաց դնելոյ զամպ մարմնոյս և զխաւար կեն-
„ ցաղոյս, ապա վՃիտ լուսով զարարիչն արեգական
„ տեսանիցէ · զանաղօտ լոյսն, զանՃառ գեղեցկու-
„ թիւն, զյաւէժական ցնծութիւն ‖ · և այս՝ յառաջ քան զյարութի մարմնոց · զի ասէ՝ թէ այս տեսութի լինելոց է յետ 'ի բաց դնելոյ զամպ մարմնոյս ։ Բայց զայն ևս դնէ 'ի մեկն · Ա · պետ · Ե · 14 · Ճառ ԺԲ · յորդ · յասելն, թէ 'ի յառնել մեր՝ յայնժամ ևս * յագես-
„ ցուք յերևիլ փառաց նորա յիւրում ահաւոր գալս-
„ տեանն փառօք հօր և հրեշտակօք սրբօք ‖ ։ Յորում

և ունիմք զուարճանալ անպղտոր տեսութբ, և բերկ-
րել անկիր զմայլմամբ։

Աչք մեր 'ի հայելին յարև խոտղի․ իսկ աչք արծուոյ սփոփի․ որպ եղև առաքելոց 'ի հայելին անդ յարեգակն արդարութե 'ի Թափոր լերին․ սոյնպէս, և աչք հոգւոյ մերոյ 'ի հայելին յԱծ յաստի կեանս՝ խոտղի և ոչ կարէ յայտնի տեսանել․ իսկ 'ի հանդերձեալն սփոփի և զմայլի։

Եւ թէպէտ աստ ես եղև ումանց տեսանել զԱծ․ որպ յասել մարգարէից, տեսի զՏր զօրութեանց աչօք իմովք, ևս, բայց այն էր օրինակաւ տեսանել, իբրև ըստմանեայ․ ուստի ասէ գէորգ վ̃դպ 'ի մեկն․ եսայ․ թէ զայս տեսութիւն մարգարէից * այսպէս իմացուք․
„ տեսանեմք զծով ըստ մասին, և ճշմարտիմք յասելն
„ թէ տեսաք զծով․ այլ ոչ գիտեմք զլայնութիւն կամ
„ զխորութիւն․ Նոյնպէս ընդ պատուհանս զերկինս,
„ և տարածմանն չեմք հասու․ տեսաք և ոչ տեսաք․
„ այսպէս ճշմարիտ է մարգարէս ( եսայի ) թէ տեսի
„ զՏր, և աւետարանն թէ զԱծ ոչ ոք ետես ‖։ Ըստ որում մարգարէք իբր հայելեաւ, կամ տեսլեամբ տեսին․ և ոչ դէմ յանդիման․ զի այս՝ միայն 'ի հանդերձեալն պահի․ յորժամ հոգին լուսով փառաց 'ի վեր առեալ՝ յայտնի տեսանէ զԱծ․ որպէս աչք զառարկայ իւր։

Այսմ դէմ յանդիման տեսութե է խոկութի և էութի յաւիտենական երանութե և արքայութե․ զի յայսմ տեսութե ժառանգի Ած 'ի մարդոյ բոլոր․ և ժառանգեցուցանէ նմա զԻմ ուրախութի իւր բոլոր․ որով և հոգի նորա ուրախանայ և զմայլի այնու հաղորդեալ ուրախութբ և երանութբ, որով ուրախանայ նոյն ինքն Ած․ ապա թէ ոչ՝ ոչ ասէր քո, * մուտ յուրախութիւն Տն քո ‖․ մատ․ իե․ 21․ այլ՝ մուտ յուրախութի քո․ զի սոլին յայտ առնէ՝ թէ այն ուրախութի որով ունին արդարքն ուրախանալ յարքայութե, է հաղորդեալ յայնմ ուրախութենէ՝ զոր ունի և վայելէ նոյն ինքն Ած։

Բայց աստ գիտելի է, զի այս ուրախութի կամ այս յագումն և զմայլումն՝ ոչ է նոյն ինքն տեսութիւնն Այ, այլ՝ է զեղումն նր կամ իբրև ծաղիկ նորին 'ի նմանէ

պատճառեալ. վ՟ն զի այն տեսութիւն է 'ի միտս. իսկ յագուրդն 'ի բաղձանս հոգւոյն. Զայսմանէ բազում ինչ պիտոյ էր խօսիլ աստ. բայց ստիպեալք զանց առնել վ՟ն երկուց. մի՝ զի երկարին յոյժ բանք մեր. և երկրորդ՝ զի անհաս է այս մտաց մերոց. վ՟ն զի այնպիսի ինչ է, * զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ ||. Ա. Կորն. Բ. 9. Եւ սակայն արժան է յորդորել զմիտսն 'ի խորհել և 'ի մտածել զնոյն հանապազ. վասն զի մտածութիւն այնր երանութեան անտարակոյս հաստատանէ զմեզ յայն. քանզի 'ի մտածութենէ անտի ուղղեալ զմիտ զկեանս մեր, և յարդարութեան կացեալ, արդարութեամբ երևիք աստ առաջի երեսացն Ա՟յ, և 'ի հանդերձեալն ժամանակ 'ի վայելումն փառաց ն՟ր յաւիտեանս յաւիտենից.

# ՍԱՂՄՈՍ ԺԷ.

*Ցանկք սիրոյ և գովութե առ Ա̅Ծ. և խոստովանութիւն պաշտպանութե նորա. ևս և յայտարարութիւք պէսպէս վտանգաց և տառապանաց. միանգամայն և բազմադիմի նմանաբանութիւք ՚ի գործս տարերաց, (՚ի մետէօրայս) ՚ի ցոյց ամենազօր կարողութեն այ, հայելով և ՚ի խորհուրդ փրկութե որ եղև ՚ի ձեռն մարդեղութե բանին.*

(ըստ գրչեաց ՚ի սաղմոսէ.)

Ի կատարած. ՚ի Դ̅Թ̅ պատերազմօղ նահատակին՝ ծառայի Տ̅ն Դաւթի. որ խօսեցաւ ընդ Տ̅ն զբանս օրհնութե՝ յաւուր յորում փրկեաց զնա Տ̅ր ՚ի ձեռաց ամ̅ թշնամեաց, և ՚ի ձեռաց սաւուղայ. և ասէ.

1 Սիրեցից զքեզ Տ̅ր զօրութի̅ իմ. Տ̅ր հաստատութիւն իմ. ապաւէն իմ, և փրկիչ իմ.

2 Ա̅Ծ օգնական իմ, և յուսամ ՚ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է.

3 Օրհնելով կարդացից առ Տ̅ր. և ՚ի թշնամեաց իմոց ապրեցայց.

4 Պատեցին զինև երկունք մահու. և հեղեղք անօրէնութեան խռովեցուցին զիս.

(ըստ գրչեաց ՚ի Բ̅. Թագ. ԻԲ̅. 2.)

Այս խօսեցաւ Դաւիթ ընդ Տ̅ն ըզբանս օրհնութե̅ս այսորիկ՝ յաւուր՝ յորում փրկեաց զնա Տ̅ր ՚ի ձեռաց ամ̅ թշնամեաց իւրոց, և ՚ի ձեռաց սաւուղայ, և ասէ.

2 Տէր վէմ և ամրութի̅ իմ. և փրկիչ իմ ինձ.

3 Ա̅Ծ պահապան եղիցի ինձ. յուսացեալ եղէց ՚ի նա. վերակացու իմ, և եղջիւր փրկութե̅ իմոյ. պաշտպան իմ և ապաւէն փրկութե̅ իմոյ. յանիրաւէ փրկեսցէ զիս Տ̅ր.

4 Օրհնեալն զՏ̅ր կարդացից. և ՚ի թշնամեաց իմոց ապրեցայց.

5 Զի պաշարեցին զիս ճախճախանք մահու. հեղեղք անօրէնութե̅ տագնապեցուցին զիս.

5 Վեղաւք [?] դժոխոց պաշարե-
ցին զիս · ժամանեցին ինձ որո-
գայթք մահու ։

6 Ի նեղութեան իմում ես առ
տր̄ կարդացի · և առ ած̄ իմ ա-
ղաղակեցի ։

7 Լուաւ ինձ ՚ի տաճարէ
սբ̄յ իւրմէ ձայնի աղօթից իմոց ·
և աղաղակ իմ առաջի նր̄, մտցէ
յականջս նր̄ ։

8 Սասանեցաւ և դողաց եր-
կիր · հիմունք լերանց սասանե-
ցան և խռովեցան · զի բարկա-
ցաւ ՚ի վր̄ նոցա ած̄ ։

9 Ել ծուխ ՚ի բարկութենէ
նր̄ · և հուր յերեսաց նր̄ բոր-
բոքեցաւ · և կայծակունք
հատան ՚ի նմանէ ։

10 Խոնարհեցոյց զերկինս,
և էջ · և մէգ ՚ի ներքոյ ոտից
նորա ։

11 Ել ՚ի քրօբէս, և թռ-
եաւ · սլացաւ նա ՚ի թևս հող-
մոց ։

12 Եդ զխաւար ՚ի ծած-
կոյթ իւր · և շուրջ զնովաւ էին
յարկք իւր · և խաւարային
ջուրք, մթնեալ [?] յամպս օդոց ։

13 Ի փայլատակել առաջի
նր̄՝ ամպք անցուցին զկարկուտ,
և զկայծակունս հրոյ ։

14 Որոտաց տր̄ յերկնից · և
բարձրեալն ետ զձայն իւր ՚ի կար-
կուտ և ՚ի կայծակունս հրոյ ։

15 Առաքեաց զնետս իւր,
և ցրուեաց զն̄ս · յաճախեաց
զփայլատակունս իւր, և խռո-
վեցոյց զնոսա ։

6 Երկունք մահու պաշարե-
ցին զինև · ժամանեցին ինձ ո-
րոգայթք մահու ։

7 Ի նեղութեան իմում կարդա-
ցից առ տր̄ · և առ ած̄ իմ ա-
ղաղակեցից ։

Եւ լուիցէ ինձ ՚ի տաճարէ
սբ̄յ իւրմէ ձայնի իմում · և ա-
ղաղակ իմ յականջս նորա ։

8 Ճայեցաւ [?] և խռովեցաւ
և շարժեցաւ երկիր · և հի-
մունք երկնից խռովեցան և պա-
պաղեցան [?] · զի բարկացաւ նոցա
տէր ։

9 Ել ծուխ ՚ի բարկութենէ
նր̄ · և հուր ՚ի բերանոյ նր̄ կե-
րիցէ · և կայծակունք բորբոքե-
ցան ՚ի նմանէ ։

10 Եւ խոնարհեցոյց զեր-
կինս, և էջ · և մէգ ՚ի ներքոյ
ոտից նր̄ ։

11 Եւ նստաւ ՚ի վր̄ քրով-
բէից, և թռեաւ · և երևե-
ցաւ ՚ի վր̄ թևոց հողմոց ։

12 Եդ զխաւար ՚ի ծած-
կութն̄ իւր · շուրջ զնովաւ խո-
րան իւր · և խաւար ջրոց
թանձրացոյց զամպս օդոց ։

13 Ի լուսոյն առաջի նորա
բորբոքեցան կայծակունք հրոյ ։

14 Եւ որոտաց յերկնից տէր,
և բարձրեալն ետ զձայն իւր ։

15 Եւ առաքեաց զնետս
իւր, և ցրուեաց զն̄ս · փայլա-
տակեցոյց զփայլատակունս, և
զարհուրեցոյց զն̄ս ։

16 Երևեցան աղբերք
ջուրց. և յայտնեցան հիմունք
աշխարհի։
17 Ի սաստէ քումմէ Տէր,
և 'ի շնչել հոգւոյ բարկութեան
քո։
18 Առաքեաց 'ի բարձանց,
և ընկալաւ զիս. ընկալաւ զիս
'ի ջուրց բազմաց։
19 Փրկեսցէ զիս Տէր 'ի թշ-
նամեաց իմոց հզօրաց՝ և յատե-
լեաց իմոց. զի հզօր եղեն քան
զիս։
20 Ժամանեցին ինձ յաւուր
չարչարանաց իմոց. եղև Տէր հզօ-
րիչ իմ. և եհան զիս յանդորր.
և փրկեսցէ զիս Տէր, զի կամե-
ցաւ զիս։

21 Հատուսցէ ինձ Տէր ըստ
արդարութեան իմում. ըստ ամբ-
ծութեան իմում հատուսցէ ինձ։

22 Զի պահեցից զճանա-
պարհս Տեառն. և ոչ ամպարշտե-
ցայց յԱստուծոյ իմմէ։
23 Զի ամենայն իրաւունք նորա ա-
ռաջի իմ են. արդարութիւն իւր
ոչ 'ի բացեայ արար յինէն։
24 Եղէց և ես անբիծ ընդ
նմա. զգուշացայց յանօրէնութենէ
իմմէ։
25 Հատուսցէ ինձ Տէր ըստ
արդարութեան իմում. ըստ սրբու-
թեան ձեռաց իմոց՝ առաջի աչաց
իւրոց։
26 Ընդ սրբոյն՝ սուրբ եղիցես.
ընդ առն անբծի՝ անբիծ եղի-
ցես. ընդ ընտրելոյն՝ ընտրեալ

16 Եւ երևեցան յորդունք
ծովու. և յայտնեցան հիմունք
տիեզերաց։
Ի սաստէ Տեառն, և 'ի շնչե-
լոյ հողմոյ բարկութեան նորա։

17 Առաքեաց 'ի բարձանց,
և առ զիս. ձգեաց զիս 'ի ջրոց
բազմաց։
18 Փրկեաց զիս 'ի բռնու-
թեան թշնամեաց իմոց՝ և յատե-
լեաց իմոց. զի սաստկացան քան
զիս։
19 Ժամանեցին ինձ աւուրք
նեղութեան իմոյ. եղև ինձ Տէր
հաստատութիւն։
20 Եւ եհան զիս յանդորր.
և ապրեցոյց զիս, զի հաճեցաւ
ընդ իս։
21 Եւ հատոյց ինձ Տէր ըստ
արդարութեան իմում. և ըստ
սրբութեան ձեռաց իմոց հատու-
սցէ ինձ Տէր։
22 Զի պահեցի զճանա-
պարհս Տեառն. և ոչ ամպարշտե-
ցայց յԱստուծոյ իմմէ։
23 Զի ամենայն իրաւունք նորա
առաջի իմ են. և յարդարութենէ
նորա ոչ հեռացայց։
24 Եւ եղէց ընդ նմա ան-
բիծ. և յառաջագոյն զգուշա-
ցայց յանօրէնութենէ իմմէ։
25 Եւ հատուսցէ ինձ Տէր
ըստ արդարութեան իմում, և ըստ
սրբութեան ձեռաց իմոց առաջի
աչաց նորա։
26 Ընդ սրբոյն՝ սուրբ եղիցես.
և ընդ առն կատարելոյ՝ կատա-
րեսցես։

եղիցիս . և զթիւրեալն կործա-
նեսցես :

27 Դու զժողովուրդս խո-
նարհս կեցուսցանես . և զաչս
ամբարտաւանից դու խոնարհե-
ցուսցանես :
28 Դու լուսաւոր առնես
զճրագ իմ . Տր Ած իմ՝ լոյս ա-
րա ինձ ՚ի խաւարի :
29 Քեւ փրկեցայց ՚ի փոր-
ձութէ իմն , Այ իմով անցից
ընդ պարիսպ :
30 Ա՛ծ իմ՝ անբիծ են ճանա-
պարհք քո . և բանք Տն ընտ-
րեալ են . և ապաւէն ամենե-
ցուն՝ որ յուսան ՚ի նա :
31 Զի ո՞վ է Ած բայց
՚ի Տնէ . կամ ո՞վ է Ած բայց յԱյ
մերմէ :
32 Ա՛ծ , որ զգեցուցեր ինձ
զօրութիւն . և եդիր յանբծութիւն
զճանապարհս իմ :
33 Հաստատեցեր զոտս իմ
որպէս զեղջերուի . և ՚ի վերայ
բարձանց կացուցեր զիս :
34 Ուսուցեր զձեռս իմ ՚ի
պատերազմ . և արարեր զբա-
զուկս իմ որպէս զաղեղն հաստ .
և ետուր ինձ պաշտպանութիւն
փրկութեան քո :
35 Աջ քո ընկալաւ զիս , և
խրատ քո կանգնեաց զիս յա-
ռաջ . և խրատ քո մեծացուցէ
զիս :
36 Ընդարձակեցեր զգնացս
իմ ՚ի ներքոյ իմ , և ոչ տկա-
րացան զարիճք իմ :
37 Հալածեցից զթշնամիս

27 Եւ ընդ ընտրելոյն՝
ընտրեալ եղիցիս . և ընդ թիւ-
րելոյն թիւրեսցիս :
28 Զի դու զժողովուրդ
խոնարհ ապրեցուցես . և զաչս ամ-
բարտաւանից խոնարհեցուցա-
նես :
29 Զի դու ես ճրագ իմ
Տր . և դու Տր լուսաւորես-
ցես ինձ զխաւար իմ :
30 Զի քեւ ընթացայց ՚ի մե-
նազինեալ , և Այ իմով անցից
ընդ պարիսպ :
31 Ա՛ծ իմ հզօր՝ որոյ անա-
րատ է ճանապարհ իւր . բան
Տն հզօր քննեալ . վերակացու է
ամ ապաւինելոց իւրոց :
32 Ո՞վ է հզօր բայց ՚ի քէն
Տր . և ո՞վ է հաստիչ բայց յԱյ
մերմէ :
33 Հզօր , որ զօրացուցանէ
զիս զօրութբ , և յղեաց ան-
արատ զճանապարհս իմ :
34 Պնդեաց զոտս իմ իբրեւ
եղջերուաց . և ՚ի վր բարձանց
կացուցանէ զիս :
35 Ուսուցանէ զձեռս իմ ՚ի
պատերազմ . և հաստատեաց ա-
ղեղն պղնձի զբազուկս իմ :
36 Եւ ետուր ինձ պաշտ-
պանութիւն փրկութեան իմոյ :
Եւ հնազանդութիւն իմ յա-
ճախեաց ինձ :

37 Ընդարձակեցեր ՚ի ներ-
քոյ գնացից իմոց . և ոչ սասա-
նեցան բարձք իմ :
38 Հալածեցից զթշնամիս

իմ, և հասից նոցա. և ոչ դար-
ձայց 'ի նոցանէ՝ մինչև սպառե-
ցից զնոսա ։

38 Նեղեցից զնոսա. և այլ
մի՛ կարասցեն կալ. և անկցին
'ի ներքոյ ոտից իմոց ։

39 Զգեցուցեր ինձ զօ-
րութիւն 'ի պատերազմ. զյարու-
ցեալսն 'ի վր իմ՝ ներքոյ իմ
արարեր ։

40 Զթշնամիս իմ հալածա-
կան արարեր. և զատելիս իմ
սատակեցեր ։

41 Աղաղակեցին, և ոչ ոք
էր՝ որ փրկէր զնոսա. կարդացին
առ Տր, և ոչ լուաւ նոցա ։

42 Մանրեցից զնոսա որպէս
փոշի առաջի հողմոյ. որպէս
կաւ փողոցաց կոխեցից զնոսա ։

43 Փրկեսցէ զիս Տր 'ի հա-
կառակութենէ ժողովրդոց և կա-
ցուսցէ զիս գլուխ հեթանոսաց ։

44 Ժողովուրդ՝ զոր ոչ գի-
տէի, ծառայեաց ինձ. և 'ի
լուր ականջաց լուաւ ինձ ։

45 Որդիք օտարաց ստեցին
ինձ. որդիք օտարաց մաշեցան.
և կաղացան 'ի շաւղաց իւ-
րեանց ։

46 Կենդանի է Տր, և օրհ-
նեալ է Ած. և բարձր եղիցի
Ած փրկութեան իմոյ ։

47 Ա՛ծ, որ խնդրէ զվրէժ
իմ. և հնազանդ առնէ զժո-
ղովուրդս ընդ ինև ։

48 Փրկիչ իմ 'ի թշնամեաց
իմոց բարկացողաց, յայնցանէ՝
որ յարուցեալ են 'ի վր իմ,

իմ. և պատահեցից զնոսա. և ոչ
դարձայց՝ մինչև սպառեցից ըզ-
նոսա ։

39 Խորտակեցից զնոսա, և
մի՛ կանգնեսցին. անկցին 'ի ներ-
քոյ ոտից իմոց ։

40 Եւ զօրացուցեր զիս
զօրութեամբ 'ի պատերազմ. և խո-
նարհեցուցեր 'ի ներքոյ իմ զյա-
րուցեալսն 'ի վր իմ ։

41 Եւ զթշնամիս իմ դար-
ձուցեր յետս յինէն. և զա-
տելիս իմ խորտակեցեր ։

42 Աղաղակեցին, և ոչ ոք
էր՝ որ օգնեսցէ. առ Տր, և
ոչ լուաւ նոցա ։

43 Եւ լեալ զնոսա իբրև
զհող երկրի. և իբրև զկա-
փողոցաց մանրեցից զնոսա ։

44 Եւ փրկեսցես զիս 'ի
կռուոյ ժողովրդոց. և պահես-
ցես զիս 'ի գլուխ ազգաց ։

45 Ժողովուրդ՝ զոր ոչ գի-
տէի, ծառայեաց ինձ. Եւ 'ի
լուր ականջաց լուան ինձ ։

46 Որդիք օտարոտիք սու-
տեցին ինձ. որդիք օտարոտիք ըն-
կեցին 'ի բաց. և խախտեցին
'ի պահարանս իւրեանց ։

47 Կենդանի է Տր, օրհ-
նեալ է պահապան իմ. և բարձ-
րասցի Ած իմ պահապան փր-
կութեան իմոյ ։

48 Ա՛ծ է Տր՝ որ առնէ ըզ-
վրէժխնդրութիւն. հնազանդէ ըզ-
ժողովուրդս 'ի ներքոյ իմ ։

49 Եւ հանէ զիս 'ի թշնա-
մեաց իմոց. և յարուցելոց 'ի
վերայ իմ բարձրացուսցէ զիս,

Բարձր արարեր զիս . և յաւէտ անիրաւէ փրկեցեր զիս ։

49 Ս ꞊ այսորիկ խոստովան եղէց քեզ 'ի հեթանոսս . և անուան քում սաղմոս ասացից ։

50 Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նր , առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա ընդ Դաւթի , և ընդ զաւակի նորա ազգէ մինչև յազգ ։

յաւէտ անիրաւութեանց փրկեսցես զիս ։

50 Ս ꞊ այսորիկ գոհացայց զքեզ 'ի մէջ ազգաց տէր . և անուան քում սաղմոս ասացից ։

51 Մեծացուցանէ զփրկութիւնս թագաւորի . և առնէ ողորմութիւն օծելոյ իւրում Դաւթի և զաւակի նորա՝ մինչև յաւիտեան ։

## ՎԵՐՆԱԳԻՐ ։

Ի կատարած՝ 'ի Տր պատերազմօղ նահատակին՝ ծառայի Տն Դաւթի . զոր խօսեցաւ ընդ Տն զբանս օրհնութեն՝ յաւուր յորում փրկեաց զնա Տր 'ի ձեռաց ամ թշնամեաց . և 'ի ձեռաց սաւուղայ . և ասէ .

Ա. ՅՍ ՎԵՐՆԱԳԻՐ Ի ՁԵՌԱԳԻՐ սաղմոսս ինչ մեր գնի . * 'ի կատարած՝ 'ի պատերազմօղ նահատակն 'ի ծառայն տն 'ի դաւիթ . զոր խօսեցաւ ընդ տն եւ ‖ ։

Բայց այս եւս զնոյն նշանակէ . որով և ցուցանի , թէ բանք այսր սաղմոսի յայտ առնեն զբարերարութիւնն այ՝ զոր արար ընդ դաւիթ ըե ծառայ իւր , որ եղև պատերազմօղ յանուն նորա , և նահատակեցաւ՝ այ քաջութբ պատերազմեցաւ վնն որ ընդդէմ հալածչաց իւրոց , և ընդդէմ թշնամեաց ժողովրդեանն այ ։

Նա ևս թէ յետ մահի , այ յետ փրկելոյ զնա տն յամ փորձանաց և 'ի ձեռաց թշնամեաց՝ մանաւանդ 'ի սաւուղայ՝ որ էր գլխաւոր թշնամի նորին , նաև յետ փրկելոյ 'ի ձեռաց աբեսաղոմայ , իբրև հանգեաւ յամ կակածանաց իւրոց , ասաց զայս սաղմոս՝ իբրև * զբանս օրհնութեան ‖ . այ իբրև զայնպիսի բանս , որք կարգին յօրհնել զած և 'ի հռչակել զբարերարութի նր , ըստ որում և ասէ . * զոր խօսեցաւ ընդ տն զբանս օրհնութե՝ յաւուր՝ յորում փրկեաց զնա տէր , եւ ‖ ։ Իսկ բառդ

յաւուր՝ գնի փոխ ժամանակի. որ թէ ասէր. 'ի ժամանակի՝ յորում ոչ ես ունէր կասկած ինչ 'ի թշնամեաց. զի յամէ փրկեաց զնա տէր.

Եւ քանզի դաւիթ բերէր յանձն իւր զօրինակ քրի՝ մնւնդ 'ի պատերազմունս, 'ի խօսիլ նր զայս 'ի գլխոց իւրոց՝ խօսէր մարգարէութի 'ի գլխոց քրի զանազան օրինակաւ. Իսկ որ ասի 'ի վերնագրին * 'ի պատե-
„ րազմօղ նահատակն ‖. այդ երևի յաւելեալ յայլոց. զի ոչ գտանի յեբր".

Արդ որպէս և տեսանես, այս սաղմոս է այն օրհնութիւն, որ գրի 'ի բ̃. գիրս թագ. իբ. 1. 2. ուր ասի ևս 'ի գլ. իգ. 1. թէ * այսոքիկ են բանք դաւթի վեր-
„ ջինք. ‖ որով ցուցանի, թէ այս է վերջին սաղմոս ասացեալ 'ի դաւթայ. զոր հաւաքիչքն եդեալ են 'ի թիւս ՃԾ սաղմոսաց. յորս և գտանին տարբերութիւք ոչ սակաւ, թէ ըստ շարադրութե, և թէ ը̃ մասանց բանին. Եւ հաւանականագոյն թուի՝ թէ այս այլայլութի եղև ըստ մասին 'ի հաւաքիչն, և ը̃ մասին 'ի թարգմանիչն յեօթանասնից և յայլոց.

Եւ զի սոքա ուրեք ուրեք զմիմեանս բացատրեն, զի բազում բանք՝ որք 'ի սաղմոսի աստ մթին երևին, 'ի բանից անտի առաւել պարզին. և որք անդ նսեմ երևին, յաստ եղելոց դիւրաւ մեկնին, վ̃նկ յայն ևս հայելով ունիմք մեկնել զայս սաղմոս. մանաւանդ զի այն առաւել ևս համաձայնի բնագրին եբրայեցւոց. Եւ որպէս զի զսա և զնա առաջի աչաց ունիցի ընթերցօղն, զերկոսին ևս եդաք աստ հանդէպ միմեանց ըստ իւրեանց յատուկ համարոց.

## ԲԱՆ.

ա. Սիրեցից զքեզ տէր՝ որ զօրութի իմ. որ հաստատիչ իմ. ապաւէն իմ և փրկիչ իմ.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ.

Գիտելի է՝ զի սիրելն և կամ սէրն ըստ ինքեան և ը̃հանրապէս առեալ ոչ այլ ինչ է՝ բայց եթէ յօժարիլ 'ի բարին, թէ՛ ճշմարիտ իցէ այն բարի՝ և թէ՛ ա-

ռաւորք ։ Առ՛ Նախ՝ այս յօժարութիւն եթէ մտածեսցի իբրև սոսկ հաճութիւն ինչ ընդ բարին՝ 'ի ստանալ, ասի սէր հաճութեան ։ Երկրորդ՝ եթէ այս հաճութիւն յօժարեցուսցէ զկամս կամիլ զբարի այնմ յոր բերի , ասի սէր բարեհաճութեան ։ Երրորդ՝ եթէ այս հաճութիւն տացէ սիրողին առաւել կամիլ զբարին այնր՝ յոր բերի , քան զբարին՝ զոր ունի , ես և զքո զանձն՝ ( այնպիսի օրինակաւ՝ մինչև ձգել ես զսէր նորա փոխադարձաբար առ ինքն ) ասի սէր բարեկամութեան ։ Չորրորդ՝ եթէ սոյն այս հաճութիւն իցէ վասն իւրեք բարւոյ , զոր սիրողն արդէն ընկալեալ է յայնմանէ՝ առ որ բերի , ասի սէր բարերարութեան ։ Առ այս յայնժամ լինի , յորժամ բարերարեալն ոչ միայն շնորհակալ լինի զբարերարէն վասն բարերարութեան , այլև ստիպի սիրել զնա յաղագս ցուցանելոյ նմա առ ինքն զբարերարութիւն ․ ուր բարերարութիւն մտածի իբրև առիթ սիրելոյ , իսկ բարերարն իբրև առարկայ ։ Հինգերորդ՝ եթէ այս բերումն կամ յօժարութիւն իցէ ոչ վասն բարութեան այնր՝ առ որ բերի , այլ՝ վասն բարութեան իւրոյ , այսինքն վասն ունելոյ զայս զտանելոյ 'ի նմա զբարի ինչ կամ զշահ անձին իւրոյ , ասի սէր ըղձի ․ և սորա առարկայն է շահ սիրողին և ոչ սիրեցելոյն ․ և այս ըստ ինքեան ոչ է գովելի , եթէ չիցէ խառն ընդ սիրոյ բարեհաճութեան ։ Վեցերորդ՝ եթէ այս բերումն իցէ միայն առ անձն սիրողին , ասի սէր ցանկութեան ․ որոյ առարկայն է նոյն իսկ անձն , որ սիրէ ․ և եթէ այս սէր ոչ կարգեսցի առ գերագոյն ինչ վախճան , է չար ։

Արդ այս զանազանութիւն ներգործութեանց սիրոյ բաց 'ի վերջնոյն՝ մտածի և 'ի սէրն Այ ․ այլ գերագոյն օրինակաւ ․ վասն զի այս սէր Ածային՝ թէ բնական իցէ , և թէ հեղական , առարկայ իւր ունի զԱծ՝ ըստ որում է անսահման բարի ․ և բերի առ նա 'ի վեր քան զամ՝ իբրև առ մի միայն ծայրագոյն բարի , ըստ վերոյեդեալ զանազան ներգործութեանց ․ այսինքն կամ ըստ հաճութեան , կամ ըստ բարեհաճութեան , կամ ըստ բարերարութեան , կամ ըստ ըղձի ․ և կամ կատարելագոյն ես՝ ըստ բարեկամութեան ․ որով այնպէս բերի հոգին առ Ած՝ մինչ գրեթէ խմանալապէս իւիւ փոխարկիլ 'ի նա , ըմբռնիլ 'ի նմանէ՝ և ըմբըռնել զնա , կեալ 'ի նմա և բերկրիլ նովաւ ․ ոչ այնչափ

վ՟ս իւր , որչափ վ՟ս նր՟ ․ զի ոչ այնչափ վասն վայելելոյ զնա , որչափ վասն լինելոյ նր՟ յանչափս վայելելի ․ որով և ցանկայ վարիլ և գնալ ըստ կամաց նորա , ոչ այնչափ վասն հաճոյ լինելոյ նմա , որչափ վասն առնելոյ զհաճոյս նորա ։

Որոյ վասն այս սէր նկարի իբրև զկոյս մի՝ յորոյ աջոյ ձեռին կայ ղամբար յայրեալ զի և իցէ իւղ , և 'ի ձախին ջուր 'ի շիջուցանել զերկիւղ ․ որով ցուցանի՝ թէ սէրն ա՟յ բերի յա՟ծ 'ի սիրել միայն զա՟ծ վասն իւր , և բաց յա՟յ ոչ ինչ սիրել , մինչև հեռացուցանել յիւրմէ զայն ամենայն՝ որ կարէ նուազեցուցանել զսէրն ա՟յ ․ որպէս արար միքէլինա տիկին ․ սա ունէր զորդի մի ․ և զի վասն ուժգին սիրելոյ զնա պակասէր 'ի սաստկութենէ սիրոյն ա՟յ , աղաչեաց զա՟ծ զի առցէ զորդին յիւրմէ , զի միայն զա՟ծ սիրեսցէ ․ որ՟ և եղև իսկ ։

Այս սէր է՝ որ միաւորէ զմեզ ընդ ա՟յ իբր ընդ սիրեցելոյ բարեկամի ․ շնորհքն միաւորէ զմեզ ընդ նմա իբր ընդ սիրողի , իսկ սէրն իբր ընդ սիրեցելոյ ․ վ՟ս զի շնորհն տուեալ լինի մեզ յա՟յ իբր 'ի սիրողէ , որով և միաւորէ զհոգի մեր ընդ նմա իբր ընդ սիրողի ․ և զի առաջին և անբաժանելի յատկութի շնորհին է սէրն որ՟պ ջերմութիւն է յատկութիւն հրոյ , տալ մեզ յարել 'ի նա սիրով ․ որով և միաւորէ զմեզ ընդ նմա իբր ընդ սիրեցելոյ ։ Զայս սէր 'ի շնորհացն ա՟յ կրելով յինքեան մարգարէին , և 'ի սոյն վառելով ասէ ։

ՍԻՐԵՍՑԻՑ ԶՔԵԶ ՏՐ ։ Ի բնագիրս եբրայեցւոց փոխանակ սիրելոյ դնի եռխամխա , որով նշանակի՝ խանդակաթ սիրով սիրել , կամ յամենայն սրտէ սիրել , և ամենայն զթով , կամ 'ի ներքին աղեաց սիրել ։ Նա զի յետ առնելոյ մարգարէին՝ սիրեսցից , 'ի յարելն անմիջապէս զդերանունդ "զքեզ" , ցուցանէ՝ թէ ոչ յայլ ինչ հայի սէր իւր , բայց եթէ յայն՝ առ որ ասէ * սիրեսցից ,, զքեզ ||, որով 'ի մէջ բերի սէր բարեկամութե յորում պարագրի և սէր հաճութե և բարեհաճութեան ։ Նաև 'ի յաւելուլն զնի զբառդ տէր , 'ի մէջ բերէ և զսէր բարերարութե ընդ նմին և զսէր ըղձի ․ զի սովին ցուցանէ թէ սիրէ զնա եւս և վասն լինելոյ նր՟ իւր տէր ըստ մեծամեծ բարերարութեանց նորա , զորս արարեալ է նմա ։

Իսկ թէ ծիք էին, այն բարերարութիւնք, թուէ զնոսա զկնի՝ ոչ յիմքեանս, այլ՝ 'ի բարերարին. զի ոչ ասէ, սիրեցից զքեզ՝ տէր, որովհետև զօրացուցեր և հաստատեցեր զիս. այլ թէ՝ սիրեցից զքեզ տէր զօրութիւն իմ, տէր հաստատիչ իմ, ևն. որով ցուցանէ, թէ ոչ այնչափ 'ի բարերարութեանն, որչափ 'ի բարերարին բերի. զի ոչ 'ի տուրսն, այլ՝ 'ի տուօղն կարօտի, ըստ նարեկացւոյն ('ի բանն. ժդ.) և ես թէ ոչ վասն վարձս առնլոյ, այլ վասն սիրելոյ ծառայէ: Տաց այսմ օրինակ զմայրն մանկանն. դուստրն փարաւոնի վարձս տայր նմա դիեցուցանել և սնուցանել զմանուկն. բայց նա ոչ վասն վարձուցն առնէր զայս, այլ վասն սիրոյ որդւոյն. սոյնպէս առնէ և ասա մարգարէն 'ի բան սիրոյ, ուստի և 'ի խոստմանն սիրել զնա նաև վասն բարերարութեց, ոչ զբարերարութիւնսն, այլ զբարերարն 'ի մէջ բերէ՝ ասելով:

**Տէր զօրութիւն իմ. տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ:**

Զչորեսին զայսոսիկ միայն յիշատակելով ցուցանէ թէ ած առաւելապէս 'ի սոսին երևի լինել բարերար մարդոյ, ըստ որում մարդն առաւելապէս 'ի սոսա գտանի կարօտ՝ թէ ըստ նպաստից բարւոյ և թէ ըստ ազատութեան չարի: Ըստ բարւոյն կրկնակի, նախ՝ զի տկար է մարդ 'ի գործել զայն, վասնորոյ կարօտի զօրութեան: Երկրորդ զի թէև զօրասցի յայլ և գործեսցէ, ոչ մնայ ինքնին հաստատուն 'ի նմին, վասնորոյ կարօտի և հաստատութեան: Ըստ չարին ևս կրկնակի, նախ զի մարդ 'ի վտանգին յապագայ չարէ՝ կարօտի ապաստանի: Երկրորդ՝ զի 'ի տառապելն 'ի հասեալ չարէ՝ կարօտի փրկչի: Ուրեմն եթէ ած 'ի սոսին լիցի նմա ձեռնտու, յայտ է թէ առաւելապէս ցուցանէ նմա զմարդասիրութիւն և զբարերարութիւն իւր: Ուստի և յայսոսի՛կ հայելով խօսի մարգարէն զայս բան: Վասն առաջնոյն ասէ:

* Տէր զօրութիւն իմ‖. այսինքն թէ՝ դու ես միայն զօրացուցիչ իմ. կամ դու ես միայն պատճառ զօրանալոյ իմոյ 'ի տկարութեանս առ 'ի գործել զբարին: Վասն երկրորդին ասէ:

* Տէր հաստատիչ իմ‖. այսինքն դու ես միայն, որ 'ի զօրանալ իմում առնել զբարին՝ հաստատես զիս 'ի նմին. այսինքն պահես հաստատուն 'ի բարին. կամ դու ես, որ տաս

ինձ հաստատութեամբ ժառանգել զբարին, զոր խոր-
հես ինձ, և զոր խորհեալ ես ։ Ա՟ն երրորդին ասէ ։
* Ապաւէն իմ ։ Քս դու ես միայն, որ 'ի վտանգս
ապագայ չարեաց հոգւոյ և մարմնոյ լինիս ապաւէն
իմ, Քս ապաստանարան իմ . վ՟ն զի յապաւինիլ և 'ի
դիմել իմում առ քեզ՝ անվտանգ պահես զիս 'ի չա-
րեաց, որք գալոց են ։ Ա՟ն չորրորդին ասէ ։
* Եւ փրկիչ իմ ։ Քս դու ես միայն, որ 'ի պաշարիլ
իմում 'ի չարեաց, Քս 'ի թշնամեաց կամ 'ի փորձութեանց՝
փրկեցեր և փրկես զիս 'ի ձեռաց նոցա ։ Որոց կամի հե-
տևեցուցանել թէ ահա յայսմ ամի յամ 'ի կեանս
իմ սիրեցից զքեզ տէր . * Սիրեցից զքեզ տէր՝
„ որով զօրացայ ( ասէ սաղմ 'ի մջ ) . հաստատե-
„ ցեր զիս, զի ապաւինեցայ 'ի քեզ . ապաւինեցայ,
„ և փրկեցեր զիս ։

Այս սէր այսպիսի օրինակաւ առաջի եդեալ՝ առա-
ւել յորդոր է այ քան զպատարագ արտաքին իրաց .
զոյն նախ առաջին հրամայեաց ած 'ի ձեռն մով-
սէսի, և զոյն ինքնին եկեալ եցոյց բանիւք, և հաս-
տատեաց գործովք ։ Իսկ 'ի կողմանէ մերմէ մատու-
ցեալ՝ այս սէր այ այնպիսի առնէ զմարդն՝ մինչև զա-
մենայն ինչ ունայն և անարգ համարել և դրեթէ մո-
ռանալ եթէ զերկրայինս, և եթէ զգալիս ։ Ասի
թէ խոտն չիթլքայ կոչեցեալ՝ այնպիսի ունի զօրու-
թիւն՝ մինչ զի որ ուտէ զայն՝ ոչ քաղց զգայ և ոչ զծա-
րաւ ։ Այսպիսի ինն է և սէրն այ . զի որ ճաշակէ
զայն՝ ոչ կամի զգալ ոչ զքաղցրութիւն կենցաղոյս և
ոչ զվայելչութիւն անցաւորացս ։ Յայսմ ամի ոնդ և տե-
սանի * սիրոյ զօրութիւն գերազանցէ քան զընութիւն ըստ
գրելոյ խորհրդոյն 'ի մեկն . մատ . 'ի յաջարանն . և
* ոչ երբէք անկանի ( ասէ սուրբն խորհրդ 'ի մեկն .
„ ա . պետ . դ . 8 . Ճառ . է . ) . . . ոչ 'ի թշուառութ,
„ և ոչ 'ի բարեկրութեան ։

Լամբրոնացին հայելով և 'ի տնօրէնութիւնս քնի՝ ա-
վլին մօք մեկնէ զայս բան, բայց այլով կարգաւ, և
այլով նշանակութ . քս եղև մեզ ասէ զօրութիւն յաղ-
թելոյ ընդդիմամարտից . հաստատիչ 'ի ծփմանէ և 'ի
խռովութենէ սրտից . ապաւէն յամ սատանայական
հակառակամարտութեց . և փրկիչ յամ փորձութենէ

գիւաց ։ Զայսոսիկ՝ զորս թուեաց սուտ մարգարէն, կրկնէ 'ի յաջորդ համարն այլովք բառիւք ․ և ասէ ։

Բ ․ Ած օգնական իմ և ես յուսամ 'ի նա ․ ապաւէն իմ ․ եղջիւր փրկութեան իմոյ ․ ընդունելի իմ է ։

Այս բան թէպէտև զնոյն յայտնէ՝ որ 'ի նախընթաց համարն, բայց յեղանակէ խօսելոյն, և յաւելուածոյն որ գնի 'ի սմին, յայտ առնէ զսաստկութիւն ախորժանաց հոգւոյ մարգարէին ․ որ չբաւականացեալ այնու՝ զոր ասաց, * տէր զօրութի իմ, տէր հաստատիչ „ իմ, ապաւէն իմ, և փրկիչ իմ ||, յաւելու ևս բացատրել փոխադարձութեամբ կարգի և բառի ․ զի զոր եդ անդ 'ի սկզբան, աստ դնէ 'ի վերջոյ ․ և զոր եդ անդ 'ի վերջոյ, աստ դնէ յե՛րդ տեղւոջ, և զոր եդ անդ յե՛րդ տեղւոջ, աստ դնէ յերկրորդումն ։ Իսկ զոր եդ անդ յերկրորդումն, աստ դնէ 'ի սկզբան ․ և ասէ ։

Ած օգնական իմ և ես յուսամ 'ի նա || ։ Այս հայի յայն՝ զոր ասաց, * տէր հաստատիչ իմ || ․ և ըստ այսմ կամի ասել ․ Նա՝ որ է Ած իմ և արարիչ իմ, եղև ինձ օգնական ոչ միայն 'ի վանել զչարն և առնել զբարին, այլ և հաստատուն կալ 'ի նմին ․ և քզի յամի ասէ այսպէս արար ինձ, վն * և ես յուսամ 'ի նա || ․ այս դնեմ զամ յոյս իմ յօգնականութիւն նր, գիտելով թէ նա 'ի հաստատելն զիս՝ լինելոց է ինձ պահապան ․ վն և 'ի Բ ․ Թագ ․ ԻԲ ․ Գ ․ ասէ ․ * Ած պահապան եղիցի „ ինձ ․ յուսացեալ եղէց 'ի նա || ։ Զայս եդեալ յառէ, և ասէ ։

Ապաւէն իմ ։ Նոյն այս ըստ բառին ևս նոյն է ը առաջնոյն ․ զի անդ ևս ասաց՝ * ապաւէն իմ || ․ իբր թէ ասէր ․ յամ վտանգս ապաստան չարի՝ նա է ինձ ապաստանարան, այս է՝ տեղի ապաւինելոյ, և յապահովս մնալոյ, և անկասկած լինելոյ 'ի վտանգից ․ կամ թէ՝ տեղի փրկութե ։ Իսկ յաւելու ևս ասել ։

Եղջիւր փրկութեան իմոյ ։ Իսկ այս հայի յայն՝ զոր ասաց ․ * և փրկիչ իմ || ։ Իսկ եղջերաւ նշանակի ուժգնութիւն կամ վանիչ զօրութի ․ ը որում հզօր անասունք, որպս եզն, խոյ, ևն, եղջերօք վանեն և խեթկեն զթշնամիս իւրեանց, յոր միտ 'ի գործ ածի բզմ ուրեք 'ի սբ

գիրս բառս եղջիւր․ որպէս՝ միքիայ․ դ․ 13․ ուր ասէ տէր․ * Կանգնեաց և կամ զնոսա դուստր սիօնի, զի զեղջիւրս քո արարից երկաթիս . . . . և փշրեսցես նոքօք զազգս ‖․ այսինքն զվանիչ զօրութիւնս քո արարից իբրև զերկաթս, որովք հարցես զթշնամիս քո, և փրկեսցես զանձն քո 'ի նոցանէ։ Նաև բ․ օրին․ լգ․ 17․ ասի զեփրեմայ․ * եղջերք միեղջերոյի եղջիւրք նորա․ խեթկեսցէ նոքօք զազգս ‖․ այսինքն զօրութիւնք եփրեմայ են իբրև զեղջիւրս միեղջերոյի․ Եա․ Նաև եզեկ․ իթ․ 21․ ասի * յաւուր յայնմիկ ծագեսցի եղջիւր տան տանն իէլի ‖․ այսինքն ծագեսցի իէլի զօրութիւն վանիչ թշնամեաց նորա։

Յայս միտս առնու աստ և մարգարէն զբառդ եղջիւր․ և վերոյ յաւելուածով դնէ, * եղջիւր փրկութեան իմոյ ‖․ որպէս թէ ասէր․ տէր է իմ վանիչ զօրութիւն 'ի փրկել զիս 'ի թշնամեաց իմոց, ես և յանիրաւութենէ ։ Նաև ըստ քն տրն մեր եղև մեզ զօրութիւն վանիչ թշնամեաց մերոց, և եղջիւր փրկութեան․ Ըստ այնմ, ղուկ․ ա․ 69․ * և յարոյց եղջիւր փրկութեան մեզ 'ի տանէ դաւթի ծառայի իւրոյ, որպէս խօսեցաւ բերանով սրբոց ‖, այս բան ուղղակի հայի առ քն․ զի նա միայն հզօր զօրութբ փրկեաց զմեզ յանիրաւէ, այսինքն 'ի սատանայէ․ և 'ի ծառայութենէ ապականութեան, և եղև մեր շնորհօղ․ Ամին իրի յարէ զկնի, և ասէ։

Ընդունելի եմ է․ այսինքն ընդունօղ իմ է․ և այս հայի յայն՝ զոր ասաց, * տէր զօրութիւն իմ ‖․ որով կամի ասել․ թէ 'ի տկարութեան իմում՝ որով անկարանայի առ բարիս, շնորհօղ իմ եղև տէր․ այս է՝ ընկալաւ զիս ընդ պաշտպանութբ իւրով, կամ ընկալաւ զիս 'ի ձեռս իւր․ և այնու զօրացոյց զիս․ և կամ ըստ օրինակի դաստիարակի կալեալ զձեռաց, այսինքն զկարողութեանց հոգւոյ իմոյ՝ ետ ինձ գործել զմեծամեծս։ Նաև քանզի այսպիսի բարեբարութիւնք այս առաւելութբ իմն ցուցան առ նա ինքն դաւիթ, մինչդ 'ի փրկել նր զնա 'ի թշնամեաց նորին․ սկիզբն առնէ խօսիլ զայնցանէ համդերձ օրհնութբ շնորհակալութեան․ և ասէ։

դ. **Օրհնելով կարդացից առ տր. և 'ի թշնամեաց իմոց ապրեցայց ։**

Կարդալ առ ած՝ է սրտի մտօք գիտել առ նա համդերձ աղաղակաւ, եթէ ներքին իցէ այն աղաղակ, և եթէ արտաքին . իսկ օրհնելով կարդալ առ ած առաւել իմն 'ի մէջ բերէ, զի շնորհակալ լինելով գիտել առ նա վն անդրէն գտանելոյ զօգնութ̃ի նորա, և զպաշտպանութ̃ի առ 'ի թշնամեաց, յայս միտ խօսելով աստ մարգարէին՝ ասէ ։

**Օրհնելով կարդացից առ տր. և 'ի թշնամեաց իմոց ապրեցայց ։** Կամի ասել, որովհետև տէր է իմ զօրութ̃ի և օգնութ̃ի, ապաւէն և փրկիչ, անտարակոյս փրկեսցէ նա զիս յամ̃ թշնամեաց իմոց՝ 'ի կարդալ իմում առ նա . վասն որոյ և ես * օրհնելով կարդացից առ նա ‖ . զի շնորհակալ լինելով զնմէ, և հռչակ հարկանելով զզօրութիւն նորա՝ աղաղակեցից առ նա . և օգնութ̃բ նր̃ * 'ի թշնամեաց իմոց ապրեցայց ‖ ։ Այլ թէ զինչ կրէր 'ի ձեռաց թշնամեաց, և որպիսի մեծամեծ վիշտք էին նորին՝ զորս կրէր 'ի նոյն, յայտ առնէ 'ի յաջորդ համարն, և ասէ ։

ե. **Շուրջ եղեն զինև երկունք մահու . և հեղեղք անօրէնութ̃ե խռովեցուցին զիս ։**

* Ողորմութիւն է մարդկան (ասէ լամբրոնացին), յոր-
„ ժամ 'ի նաւահանգիստն հասանեն, ապա զկուտա-
„ կումն ալեաց յիշեալ՝ սքանչանան . և յորժամ 'ի
„ վախճան պ̃տրզմին՝ ապա զմարտին սաստկուն (յի-
„ շեն և պատմեն) ։ Նոյնպէս և սա ժամանեալ 'ի քա-
„ ղաք և 'ի նաւահանգիստ (խաղաղութ̃ե և) սիրոյն
„ այ . զարհաւիրսն՝ ընդ որ 'ի գալն առ սա՝ էանց, յի-
„ շեալ՝ սքանչանայ ‖ . և ասէ ։

**Շուրջ եղեն զինև երկունք մահու ։** Երկունք են ցաւք ծնանելոյ . ուստի և երկունք մահու են ցաւք, կամ տրտմութ̃իք ծնանելոյ զմահ, և կամ զհոգեվարութ̃ի՝ որում զհետ գայ մահն . և զի այսպիսի երկունք, որոց հետևէր մահ, պատճառէին 'ի մեծ տառապանաց, կամելով մարգարէին զմեծութիւն այնոցիկ տառապանաց յայտ առնել, փոխանակ տառապանք դնելոյ՝ դնէ

երկունք . որով կամի ասել . եկեսցեն 'ի վր իմ այնպիսի վտանգք , յորոց ոչ ակն ունէի ապրել . կամ պատեցին զիս այնպիսի ցաւք և հոգք , կամ այնպիսի տրտմութի(ւ)ն և երկիւղ , որպիսի պաշարեն զայնոսիկ՝ որք տեսանեն զինքեանս 'ի վտանգս մահու ։ Նա և եթէ ոչ էր ինձ օգնեալ ած , յիրաւի ջաղխէին և խորտակէին զիս այն ցաւք և տրտմութիւնք ։ Իսկ թէ յորս և երբ այսպէս եղև նմա , յայտ առնէ ասելով ։

**Եւ հեղեղք անօրէնութեան խռովեցուցին զիս ։** Որ շաղկապս և՝ զնի փոխ բառիս՝ յորժամ , կամ վս զի . ոմ թէ ասէր . մահուչափ երկիւղիւ և տագնապաւ պաշարեցայ , յորժամ ուղխք անօրէնութեն խռովեցուցին զիս ։ և կամ թէ մահաբեր տրտմութբ ըմբռնեցայ , վասն զի ուղխք անօրէնութեն խռովեցուցին զիս ։

Իսկ * ուղխք անօրէնութեն ‖ ասելով՝ իմանայ զբազմութին թշնամեաց իւրոց , որք իբրև ուղխք՝ կամ իբրև յանկարծահաս հեղեղք յանակնկալ պահու հասին 'ի վր նր , ոմք եղեն զօրքն սաւուղայ և աբեսաղոմայ , և այլք թշնամիք . և զի մք անօրէն էին , և անօրէնութբ գային 'ի վր նր , վնր կոչէ զնս ուղխք կամ հոսանք անօրէնութեն . կմ անօրէն բազմութիւնք . որք այնպէս խռովեցուցին և տագնապեցուցին զնա , ոմ խռովին այնոքիկ , յորոց վր հասանեն յանկարծակի ուղխք կամ հեղեղք ջուրց , և պաշարեն զնոսա յամ կողմանց ։

Բարոյապէս , ըստ Լամբրոնացւոյն երկունք մահու են չար խորհուրդքն , յորոց ծնանի մեղքն՝ որ է մահ հոգւոյ ։ Այնպէս և ուղխք անօրէնութեանց են յաճախութիւնք տառապանաց , և խեղդիչ վիշտք հոգւոյ . ևս և ազդմունք դիւաց և հոյլք յուսահատեցուցիչ վարանմանց , որք խռովեցուցանեն և տառապեցուցանեն զհոգին ։ Զայս եղեալ մարգարէին կամելով և ևս ցուցանել զմեծութիւն տառապանաց և ցաւոց իւրոց՝ այլով ևս նմանութբ խօսի զնոյնանէ և ասէ ։

Է . **Երկունք դժոխոց պաշարեցին զիս . ժամանեցին ինձ որոգայթք մահու ։**

Երկունքն՝ * վիշտք դժոխոց ‖ իմանայ զայն , զոր ասաց 'ի վերոյ՝ * երկունք մահու ‖ . ոմ զնի և բ . Թագ" . իբ . վս զի նոյն երկունք , կամ ցաւք և տրտմութիւնք գոլով

պատճառ մահու՝ էին եւ պատճառ իջանելոյ 'ի դը-
ժոխս, այսինքն 'ի գերեզման. և յայս միտ ասէ:

ԱԼԷԿՔ ԴԺՈԽՈՑ ՊԱՇԱՐԵՑԻՆ ԶԻՍ: Այսինքն այնպիսի վիշտք հասին 'ի վերայ իմ, որք կարէին սպանանել զիս և իջուցանել 'ի գերեզման ըստ եբր՞. կամ այնպիսի վիշտք՝ որք էին նման վշտաց դժոխոց, և այսու կարէ իմացեալ լինել եթէ վիշտ հոգւոյ, և եթէ վիշտ մարմնոյ: Այլ թէ ընդէր կամիցի ած տալ զսիրելիս իւր 'ի վիշտս մարմնոյ՝ երկար գրէ շնորհալին 'ի թուղթն՝ որ առ ուրուկս. երես 217 = 219: Իսկ պատճառ դժոխք գնելոյ ասա այն է՝ զի որովհետեւ նախ քան զքս՝ որք մեռանէինն իջանէին 'ի դժոխս՝ (թէեւ յայլ և այլ տեղիս), նոյն էր յայնժամ վիշտն՝ որ լինէր պատճառ մեռանելոյ, և վիշտն՝ որ լինէր պատճառ իջանելոյ 'ի տեղին յայն, ուր գնային մեռեալքն. այն է՝ դժոխք: Իսկ զի այսպիսի վիշտք հասին նմա յորոգայթից մահու՝ սմին իրի յարէ զկնի, և ասէ:

ՅԱՌԱՋԵՑԻՆ ԻՆՁ ՈՐՈԳԱՅԹՔ ՄԱՀՈՒ: Այս քան հայի յայն, զոր ասաց 'ի վերոյ, * հեղեղք անօրէնութեան խռովեցուցին զիս ‖. զի իբրեւ հեղեղք յանկարծակի հասանելով՝ եղեն նմա այնպիսի որոգայթք և վտանգք, յորոց պատճառէր երկիւղ մահացուցիչ կամ վտանգ մահու: Իսկ կամ որ լաւ եւս է՝ որոգայթիւք իմանայ ասա մարգարէն զնենգութիւնս թշնամեաց, յորս իբրեւ յորոգայթս ըմբռնելով՝ պատճառէր 'ի նմա երկիւղ մահու՝ կամ երկիւղ մեռանելոյ:

Բարոյապէս, որոգայթիւք մահու նշանակին առիթք հոգեւոր մահու, որք ժամանեն մարդոյ մանաւանդ արդարոյ: Այսոքիկ առիթք երբեմն ժամանեն 'ի ներքոյ, և երբեմն արտաքոյ: Ի ներքոյ 'ի ձեռն զգայութեանց այսինքն 'ի ձեռն տեսութեան, լսելութեան, ևն. յորս սակս ասի. Երեմ. Թ. 21. * Ել մահ ընդ պատուհանս ձեր, և եմուտ յերկիր ձեր ‖ որ է ասել, ել մահ ընդ պատուհանս աչաց, ականջաց. ևն. և եմուտ 'ի հոգին. վասն այս զգուշութեամբ պարտ է ամրափակել զփեղկս սոցա: Արտաքոյ՝ 'ի ձեռն օտարի: Այլ որպէս և իցեն՝ եթէ ներքինք և եթէ արտաքինք, կրկնակի լինի մեզ զերծանիլ 'ի նոցունց, այսինքն փախչելով և աղօթելով.

Ասացի նախ՝ փախչելով, և այս մանաւանդ յայնմ՝ յորս է

յորս է՝ որոգայթ վավաշոտութեան · որպէս տեսանի 'ի յովսէփ · որ եթէ չէր թողեալ զլոդիկն և փախուցեալ, 'ի կորուստ հոգւոյ դրաւիր · ( ծնն · լթ · 11 ։ ) Ի ժամանել և քեզ առթից մեղաց՝ մի թուլանար · թող և դու զլոդիկ մեղկութեանդ և հաճութեանդ, և փախիր · լաւ է առելով փոքր մի վշտանալ ընդ ծառայս ած ք հաւանիլ և վայելել 'ի մեղս · ըստ այնմ · եբր · ժա · 24 · * մովսէս իբրև աճեաց՝ ուրացաւ լինել որդի
,, դստերն փարաւոնի, լաւ համարեցաւ չարչարիլ ընդ
,, ժողովրդեան, ք ( յաւիթս կալով ) առ ժմկ մի վայե-
,, լել 'ի մեղս ‖ ։ Չզօրն յորդիս մարդկան սամփսոն, զորոյ զնմանն ոչ ետես աշխ, իշխան իւր 'ի կարգեալ յայ, Նա որ զառիւծ պատառէր, և զհազարաւորս թշնամեաց կոտորէր, զպարանս խզէր և զդրունս քաղաքին տապալէր, ոչ զգուշանալով յաւթէ՝ 'ի ձեռս թշնամեաց մատնեցաւ և յաչաց զրկեցաւ, յաղօրիս իշոց վարեցաւ և խաղալիկ փղշտացւոց կացուցաւ, ( դատ · ժզ · 25 · ) զայլիլէ կին պատրեաց և պարտեաց զնա · * վն զեղոյ կնոջ բազումք կորեան · զի 'ի նմանէ ցանկութիւն որպէս հուր բորբոքի ‖ · սիրաք · թ · 9 ։ * զերծիր 'ի լեառն, գուցէ ընդ նոսա ըմբռնեսցիս ‖ · ծնն · ժթ · 17 ։

Մի՛ հաւատար ուժոյ անձինդ, մի հաւատար հասակիդ, մի հաւատար շնորհացն այ՝ որ 'ի քեզ · մի հաւատար և այ թէ պահէ զքեզ · այլ փախիր և հաւատա՛ · փախչիլդ կանխեսցէ քան զհաւատալդ ։ Ստեղծօղն ըստ աշակերտան էր 'ի կերակրելն զայնչափ ժողովուրդ · այլ յետ կերակրելոյն ստիպեաց զնս յառաջել յայնկոյս · ( մատ · ժդ · 22 · ) զի առաջի կայր նոցա գիշերային ընկերակցութիւն կանանց, ևս և առիթ մնոտի պարծանաց · ապա թէ ոչ՝ զինչ ստիպումն էր այն · մեզ օրինակ մատուցանէր · զի թէ այսչափ զգուշութիւ պիտոյ եղև առ անկործանելիս իւր, քանի՛ ևս առ դիւրակործանս ։ Ի պաշարիլդ 'ի վիշտս դժոխոց՝ փութաս զերծանիլ · ապա և 'ի ժամանել առթից մեղաց փութա փախչիլ ։

Ուսացի ենդ՝ աղօթելով, որ աղօթիւք առ այ ապաւինելով, և զաչս մտաց առ նա վերացուցանելով · որպէս առնէր դաւիթ · զի յայնժամ նա ինքն այ ապրեցու-

ցանէ զքեզ . ը՟ այնմ սաղ . ի՟զ . 15 . * աչք իմ յա՟մ ժամ առ տէր , և նա հանէ յորոգայթէ զոտս իմ ‖ . իբրև թէ ասէր . յորում ժամու վերացուցանէի զաչս իմ առ տէր՝ ազատէր նա զիս յորոգայթէ անտի՝ զոր թագուցանէր ինձ թշնամին իմ . և հասանէր ինձ օգնութի՟ն ն՟ր 'ի բարձանց 'ի զօրացուցանել զիս . * համբարձի զաչս իմ 'ի լերինս , ուստի եկեսցէ ինձ օգնութի՟ ‖ . սաղ . ճի . 1 : Ա՟ռ զի որք վերանան և մերձենան առ ա՟ծ , և որք թռչին և մատչին առ նա՝ նովաւ պատրսպարին , և յայնժամ ընդվայր լինի որոգայթադրութի՟ թշնամւոյն . և երբեմն զորոգայթադիրն ըմբռնէ . * զի ոչ եթէ տարապարտուց ձգին գործիք թռչնոց ‖ . առակ . ա՟ . 17 . վ՟ն զի որ լարէ զորոգայթ թռչնոց , ք՟ն թռուցելոց առ ա՟ծ՝ որչափ տարապարտուց ձգի վասն նոցա , այնչափ դիւրաւ պատի զոտիւք ձգողին իւր 'ի պարտուց , և ոչ թէ 'ի տարապարտուց : Եթէ տկարանաս վերացուցանել զմիտս քո առ ա՟ծ՝ կամաւորական աղօթիւք ե՟լ առ նա , ք՟ն դիմեա յօգնականութի՟ նորա : Ա՟ց ընդ բարձր ծառով հայրագութ խնամոց ն՟ր , և 'ի դիմել կործանիչ ատթից և վտանգիչ փորձութեանց , ե՟լ կամաւորական աղօթիւք 'ի ծառն յայն , և զերծցիս : Գոչեա և կարդա կամօք առ ա՟ծ , և փախիցեն 'ի քէն առիթք և որք մատուցանեն զառիթսն . զի լուեալ նոցա զաղաղակ հոգւոյդ՝ աղաղակեսցեն և նոքա ասելով . ահա գայ հասանէ ա՟ծ սորա . փախիցուք և ցրուեսցուք 'ի բաց :

Ի վերջոյ ծանիր , զի ո՟պ հայելով 'ի մեզ՝ փախչին է հնարք զերծանելոյ յորոգայթից մեղաց , սոյնպէս և հայելով առ ա՟ծ՝ աղօթքն է միջնորդ ազատելոյ : Ուստի և տէրն մեր 'ի տեսանելն անդ զաշակերտս իւր թէ ունին ըմբռնիլ 'ի փորձութենէ և անկանիլ յորոգայթ , ազդ արար նոցա և ասէ . * աղօթս արարէք՝ զի մի անկանիցիք 'ի փորձութիւն ‖ . մատ . ի՟զ . 41 : Նա որ և զանձն իւր ետ օրինակ 'ի նմին ժամու՝ կացեալ երիցս յաղօթս : Ո՟պ առնէր և դաւիթ՝ յա՟մ նեղութի՟ս իւր և 'ի փորձութի՟ս գոչելով առ տէր . զոր և յայտ առնէ 'ի յաջորդսդ՝ ասելով :

Զ. Ի նեղութենէ իմումէ ես առ տէր կարդացի. և առ ած իմ աղաղակեցի :

Է. Լուաւ ինձ 'ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ առաջի նորա՝ մտցէ յականջս նորա :

Ո՞վ այսորիկ առաքէ մեզ զվիշտս և զտառապանս (ասէ աստ լամբրոնացին), զի նոքօք իբր խթանօք զարթուցեալ՝ կարդասցուք առ նա. և զարթուսցուք զնա մերովք խնդրուածովք յօգնութիւն մեզ. զի որովհետև * հեշտասէր է (ասէ) բնութիւնս, յորժամ ըստ „ կամացն դիւրութեան պատահէ, մոռանայ անհոգու„ թեամբն զյիշատակն այ. իսկ մատնեալ 'ի նեղութիւն՝ „ օգնականի կարօտի. սակս որոյ և առ ած հայի. ը̃ այնմ „ տէր 'ի նեղութեան յիշեցաք զքեզ ||:

Եւ ոչ այսչափ միայն, այլև նոյն նեղութիւնք և վիշտք արծարծիչ լինին սիրոյ որ առ ած, որպէս փչմունք արծարծեն զկայծս. յոր միտս ումանք զսկզբնաւորութիւն սաղմոսիս յարելով ընդ բանս նախընթաց համարոյն ընթեռնուն այսպէս. * սիրեցից զքեզ տէր, զի վիշտք „ դժոխոց գտին զիս ||: Բայց ք̃զի վիշտքն վտանգիչ ևս են, վ̃նկ ստիպեն կոչել առ ապրեցուցիչն. և յայս հայելով մարգարէին՝ ասէ :

Ի նեղութենէ իմումէ ես առ տր կարդացի : Այսինքն, յայնմ նեղութեան՝ յոր տառապեցուցին զիս թշնամիք իմ, ես և յայլ ամ նեղութիս * ես առ տէր կարդացի ||. ը̃ աղօթիւք կարդացի առ այն, որ տէր է ամի՝ և ած արարիչ իմ, ո̃պ զի նա օգնեաց ինձ, և փրկեաց զիս. վ̃ զի՝ որ տէրն է, խնամածէ 'ի վր ծառայից իւրոց. և որ արարօղն է՝ 'ի վր այնոցիկ՝ զորս արարեալ է : Եւ առ 'ի ցուցանել՝ թէ յամ զօրութենէ իւրմէ կարդաց առ նա, ասէ :

Եւ առ ած իմ աղաղակեցի : Այս բան թէպէտև կրկնումն է այնր՝ զոր ասաց, * ես առ տէր կարդացի ||, բայց է ևս իբր բացատրութիւն նր. զի սովին ցուցանէ, թէ 'ի կարդալ իւրում առ ած՝ աղաղակելով կարդաց, ը̃ սաստիկ եռանդիւ, և յամ սրտէ : Զայս եղեալ՝ ապա և զլսելի լինել աղաղակին առաջի առ-

նէ , և ասէ :

Լուաւ ինձ 'ի տաճարէ սբյ իւրմէ ձայնի աղօթից իմոց : այսինքն թէ յաղաղակել իմում առ ած՝ իմանալի ձայն աղօթից իմոց եհաս և եմուտ յերկինս , որ է անձեռագործ տաճար այ՝ որ և մաքուր յամ աղտեղութենէ և յարատոյ . և անտի * լուաւ ձայնի աղօթից իմոց ‖ . այսինքն ընկալաւ զաղօթս իմ, և հաճեցաւ օգնել ինձ : Եւ կամ թէ որովհետև կարդացի առ նա 'ի տաճարի կամ 'ի տան նորա՝ որ յեղմ, առաջի տապանակի նորին , յայնմ տաճարէ լուաւ ինձ . որ է ասել, վասն աղօթելոյ իմ 'ի տան նորա՝ լուաւ ինձ . կամ թէ նա ինքն տէր 'ի տաճարի գոլով լուաւ ինձ՝ յորժամ հեռի էի 'ի տաճարէ նորա : Զայսմանէ տես և 'ի սաղ . զ̄ . 4 : և 'ի սաղ . ղ̄ . 9 : ևս և 'ի սաղ . է̄ . 1 :

Բարոյապէս այս բան ցուցանէ՝ թէ լսէ ած աղօթից նոցա՝ որք 'ի սբ տաճարէ՝ այսինքն 'ի սբ սրտէ կարդան առ նա . և ըստ այսմ՝ տաճարաւ իմացեալ լինի աստ հոգին կամ սիրտն մաքուր 'ի մեղաց . զի յայսպիսի սրտէ եղեալ աղօթքն լսելի լինի այ : Իսկ թէ յինչ վստահացեալ մարգարէին՝ տարածեալ իցէ զաղօթս իւր առաջի այ , և աղաղակեալ առ նա , յայտ առնէ ասելով :

Եւ աղաղակ իմ առաջի նորա՝ մտցէ յականջս նորա . այսինքն վնկ համարձակեցայ աղաղակել առ ած , վասն զի գիտէի՝ թէ աղաղակ իմ, այս է եռանդագին աղօթք իմ, զոր առնէի * առաջի նորա ‖, այսինքն 'ի ներկայութե նորա, * մտցէ յականջս նորա ‖ . այսինքն լսելի լիցի նմա . տես և 'ի համեմատութիւն : Զայսոսիկ առաջի եդեալ մարգարէին՝ մատչի 'ի զարմանալիս՝ ասելով :

Ը . Սասանեցաւ և դողաց երկիր . հիմունք լերանց սասանեցան և խռովեցան . զի բարկացաւ 'ի վերայ նոցա ած :

Աստի սկսանի մարգարէն յայտ առնել զմեծամեծ գործս , զորս առնէ ած 'ի վր երկրի ըստ երից , այսինքն ըստ ցուցանելոյ զզօրութի իւր , ըստ պաշտպանելոյ զծառայս իւր , և ըստ վանելոյ զթշնամիս իւր : Բայց կամելով զարմանալի իմն նկարել զայսոսիկ՝ խօսի փոխաբերական բանիւք և նմանութբ , 'ի մէջ բերելով զմետա-

րայս, քն զդողալ երկրի, և զսասանիլ լերանց 'ի բար-կութենէն այ, և այն որ 'ի կարգի։ Զայսպիսիս խօսի և 'ի սաղ. ՀԵ. 9։ և ՂԳ. 4։ և ԽԵ. 3։ և ՀԳ. 4։ և ՃԳ. 32։ և ՃԷ. 32։ և ՃԺԳ. 7։ ( տս և եսայ. ԺԳ. 13։ և ամբակ. Գ. 6։ և այլն )։

Իսկ զայսոսիկ կարի իմն ըստ պատշաճի 'ի մէջ բերէ մարգարէն, 'ի նկարագրելն թէ քս 'ի բարկանալ թգրի և 'ի պատրաստել նորա 'ի պատերազմ, բովան-դակ թգրութիւնն խռովի և իբր թէ դողայ, սոյնպս և 'ի բարկանալ երկնաւոր թգրի, և 'ի պատրաստել նորա 'ի պտրզմ ընդդէմ թշնամեաց իւրոց, եւս և սոսկ 'ի հրա-մայել նորա սասանի համօրէն ած, մինչ չորս տա-րերքս՝ երկիր, հուր, օդ և ջուր. որոց իւրաքանչիւրն գործէ զզարհուրելիս։ Երկիր դողայ, և կամ պատա-ռեալ կլանէ զմարդիկ, ընդ նմին և լերինք սասանին 'ի հիմանց։ Հուրն ծախէ և սպառէ զամ յանխնայ. և կամ յերկնից փայլատակեալ՝ կայծակունս արձակէ։ Օդն յարուցանէ հողմունս սաստիկս և տապալիչս, և մէգս զարհուրելիս, և ամպս թխպայորդս։ Ջուրք ծովու և գետոց սաստկանան. եւս և աճեցեալ կոխեն զերկիր, և կամ իսպառ ցամաքին. և երևին յատակք նոցա։ Զայսոսիկ առաջի առնելով մարգարէին մինչև 'ի 17 համարն, ոչ այնչափ կամի զգործս նոցա ցու-ցանել, որչափ զիշխանութիւն այնր՝ որ առնէ. և որով տայ իմանալ և զգաղտնի խորհուրդս զորս դիտէ ած. և նախ ասէ։

ՍԱՍԱՆԵՑԱՒ ԵՒ ԴՈՂԱՑ ԵՐԿԻՐ. ՀԻՄՈՒՆՔ ԼԵՐԱՆՑ ՍԱՍԱՆԵՑԱՆ ԵՒ ԽՌՈՎԵՑԱՆ։ Սովաւ նկարագրէ մարգարէն զսասանութի երկրի, որ ասի երկրաշարժութիւն. որով դողայ երկիր և խռովի. քն յանշարժականութենէ իւրմէ շարժական երևի. որոյ 'ի շարժելն՝ շարժին եւս և հիմունք լե-րանց, քն այն տեղիք, յորս հաստատեալ են լերինք։

Իսկ թէ ընդէր, պատասխանէ։

ԶԻ ԲԱՐԿԱՑԱՒ 'Ի ՎՐ ՆՈՑԱ ԱԾ։ Սքանչելի նմանաբա-նութիւն է, որով զհրամայելն այ՝ 'ի բարկութի ձևա-ցուցանէ. Նախ՝ առ 'ի ցուցանել, թէ որպէս 'ի բարկա-նալ տն՝ ծառայք նորա փութով կատարեն զկամս նորա, սոյնպէս և 'ի հրամայել այ՝ 'ի նոյն վայրկենի կատարեն զհրաման նորա տարերք ամ։ Երկրդ՝ առ 'ի ցուցանել,

Թէ որովհետև այսպիսի գործք, զի դողալ երկրի և սասանիլ լերանց են սոսկալի, թէ և 'ի պարզ հրամանէն ոչ լինիցին, երևին այնպիսի՝ որպէս թէ ած բարկացեալ իցէ 'ի վր նց, և նոքա յերկիւղէ նր դողայցեն։ Երկրորդ՝ առ 'ի ցուցանել, թէ այսպիսի գործք լինին ևս գործիք բարկութեանն ոչ ըղէմ թշնամեաց նորա։ Եւ թէպէտ մարգարէն զայսոսիկ դնէ 'ի կատարեալ ժմկի. բայց այնու ոչ կամի որոշել զժմկն, այլ՝ զստուգութիւն իրին դիտէ յանդիման առնել։

Այս մեկնութիւն առաջի դնի ըստ նմանաբանութեն։ Իսկ 'ի փոխաբերական միտս առեալ՝ իմաստ բանին յայլ և այլ հայի։ Եւ նախ դիտելով յառիթ սաղմոսիս և 'ի վերնագիր սր՝ երկրաւ իմացեալ լինին աստ այն մարդիկ երկրի, զորս դողացոյց և նուաճեաց ած առ ժմկօք դաւթի, զի որում երկիրն 'ի սր գիրս բզմ անգամ առեալ լինի փոխ մարդկան՝ որք են յերկրի. որպէս յասելն. * ուսով չափ 'ի վեր էր (սաւուղ) քան ,, զամ երկիրն ‖. ա. թագ. թ. 2. երկրաւ իմացեալ լինին այն մարդիկ, որք էին յերկիրն պաղեստինու։

Նմանապէս և լերամբք իմացեալ լինին աստ այն իշխանք կամ զօրավարք, զի որս պատերազմէր դաւիթ. վասն զի իշխանք՝ նմանին լերանց 'ի սր գիրս. զի այսմ. եզեկ. զ. 3. * լերինք իլի ‖. զի իշխանք իլի։ զի այսմ է և 'ի գէ. լզ. 1։ Եւ քզի թգրքն են իբրև հիմունք իշխանաց, հիմամբք լերանց իմացեալ լինին աստ թգրք այնոցիկ իշխանաց։ Արդ՝ 'ի պտրզմիլ դաւթի ընդ սոսա ամենին, (որպէս յայտնի տեսանի 'ի բ, գիրս թագաւորաց), ամքին խռովէին և դողային և սասանէին. և յամի յաղթօղ գտանէր դաւիթ. և զօրութբն ոչ վանէր զամենեսին. վասն զի ած բարկացեալ էր 'ի վերայ նոցա։

Երրորդ՝ երկրաւ իմացեալ լինին աստ ներքին բնակիչք երկրի, զի են դևք. և հիմամբք լերանց՝ իշխանք նոցա։ Զոքա առ հասարակ 'ի մարդանալ բանին ոչ խռովեցան. զի 'ի սկզբան անդ ոչ ծանեան՝ թէ ով է. բայց տեսեալ՝ թէ ոչինչ գտանեն 'ի նմա ստգտանելի, ամ ուժգնութեամբ յարձակեցան 'ի վր նր, մինչև զի թոյլ տալոյ նորա՝ ետուն բևեռել զնա 'ի վր խաչին։ Այլ

իբրև էջ նա հոգւով 'ի դժոխս, և եցոյց նոցա զբարկու-
թիւն իւր, և աւար եառ զա՟մ զօրութիւն ն՟ց, ծանեան
զնա, և յանհնարինս զարհուրեցան 'ի բարկութենէ
նորա ։

Արդ՝ երկրաւ իմացեալ լինին աստ առհ՟րկ բնակիչք
երկրի. և հիմամբք լերանց զօրութիւնք ազգաց. որք
'ի գալ որդւոյն ա՟յ 'ի սկզբան անդ գրեթէ առհ՟րկ
խռովեցան և շփոթեցան. և ոմանք ևս սկսան հա-
լածել զնա 'ի յանդիման նորա. որ՟պ յայտ է նախ 'ի հե-
րովդէս, և 'ի հրէայս՝ որք էին 'ի ժ՟մկս ք՟ի և առա-
քելոց, և յետ ն՟ց յայլ ազգս և 'ի թագաւորս ։ Նա-
ըստ այսմ այն բան զոր դնէ, * զի բարկացաւ 'ի վ՟ր ն՟ց
„ ա՟ծ ‖, թէպէտ ոչ յարմարի ասել զմարդկանէ. զի
ոչ վասն բարկանալոյն ա՟յ 'ի վ՟ր ն՟ց՝ եկն որդին ա՟յ առ
նոսա, այլ վ՟ն փրկելոյ. սակայն կարէ ևս ճշմարտիլ՝
եթէ զբառսդ * 'ի վ՟ր նոցա ‖, իմասցուք նշանակել
'ի վ՟ր մեղաց նոցա. մ՟նդ զի 'ի բնագիրս եբրայեցւոց
ոչ ասի * բարկացաւ 'ի վ՟ր նոցա ա՟ծ ‖. այլ անորոշակի
դնի * բարկութիւն նմա ‖. այսինքն է թէ բարկացաւ.
որով կարէ նշանակիլ՝ թէ ա՟ծ բարկանալով, ք՟ս վրէժ
խնդրելով մեղաց մարդկան՝ մատնեաց զորդին իւր 'ի
մահ, և մահուամբ նորա փրկեաց զմարդիկ 'ի բռնութէ
սատանայի ։

Պարզագոյն ևս մեկնի այս, եթէ զբարկանալն ըն-
թերցցուք 'ի յարակատարն որպէս թէ եղեալ էր. որով
հետև բարկացեալ էր ա՟ծ 'ի վերայ մարդկան, որդին
ա՟յ եկեալ հաշտեցոյց զնոսա ընդ հօր իւրում ։

Յայլ իմն այլաբանական, կամ յաւէտ 'ի յարմարական
միտս կարէ մեկնիլ այս բան. յոր միտս երկրաւ կարէ
իմացեալ լինիլ ադամ. զի նա եղև առաջին մարդն
յերկրէ. իսկ հիմամբք լերանց՝ մարգարէքն, զի ե-
ղեն ն՟ք հիմունք առաքելոց՝ որք եղեն իբրև լերինք
'ի մէջ եկեղեցւոյ. և կամ նաև հիմունք բարձր խոր-
հրդոցն ա՟յ ։ Նա ե՟ւ այսմ բառքս խռովիլ և սասանիլ՝
առեալ լինին ոչ իբրև ներգործութիւք երկիւղի, այլ և
իբրև ներգործութիւք ուրախութե. իբր զի 'ի բարկա-
նալ ա՟յ վասն մեղաց մարդկան, և 'ի կամիլ նորա փրկել
զն՟ս 'ի ձեռն խորհրդոյ մարդեղութե, յուրախութէ և
'ի զարմացմանէ խռովեցաւ, ք՟ս հիացաւ ադամ, և

ցնծալով դողաց. ընդ նմին և մարգարէքն և նահա-
պետքն ։

Դարձեալ՝ երկրաւ իմացեալ լինին նոքա որք 'ի վերայ երկրի կալով ծառայեն ա՟յ հաւատարմութ՟բ, կամ յերկրի գոլով փափաքին երկնից. իսկ հիմամբք նշանակին բարեպաշտ իշխանք, և թ՟գք, և դատաւորք. զի ո՟պ ասէ լուսաւորիչն մեր 'ի յաճախ. ճառ. ի. 231. * Նոքա են հիմունք բարեաց, որ հաստատեալ ունին
,, զ՟նս հնարագիտութ՟բն իւրեանց 'ի հնարս սիրոյ ա-
,, մենեցուն արարչին, որով ծ՟ի բարին յառաջանայ ‖ ։

Ամենեքին սոքա 'ի բարկանալ տ՟ն խռովին և դողան, ա՟յ խոնարհին, և դողալով 'ի տէր ապաւինին ։

Այս բան, ընդ սմին և այնք՝ որք 'ի յաջորդ համարադ-դնին, կարեն համարիլ և գուշակութիւնք այնց նշանաց, որք եղեն 'ի ժ՟մս չարչարանաց և յարութ՟ն ք՟սի, և յետ այնր ևս 'ի ժ՟մս առմանն ե՟ղմի յաւերման տաճարին. 'ի նշան այնր ա՟մի՝ որք զհետ եկին տնօրէնուեցն ք՟սի. ո՟պ գրէ բարսեղ վ՟րդպ 'ի մեկն. մարկ. գլ. ժե ։ Այլափոխեցաւ ասէ մարդկայինս բնութիւն յանա՟ծութ՟է յա՟ծգիտութիւն. յորժամ խռովեցաւ և դողաց երկիր ։ Թագաւորք և իշխանք խոնարհեցան, փոփոխեցան և նորոգեցան 'ի նորոգութ՟ի կենաց, յորժամ հիմունք լերանց սասանեցան ։ * Բացաւ եր-
,, կինք, յորժամ պատառեցաւ վարագոյրն. և տա-
,, պանակ կտակարանացն և ա՟մ խորհուրդք օրինացն՝
,, որ ծածկեալ էր մինչև ցայժմ, երևեցաւ (զի բար-
,, կացաւ 'ի վ՟ր ն՟ց ա՟ծ, ա՟յ թէ արհամարհեաց զն՟ս)
,, ո՟պ զի փոխեսցի 'ի հեթանոսս ‖ ։

Դարձեալ այս բանք կարեն համարիլ իբրև գուշակութիւնք այնց գործոց, որք լինելոց են յե՟կդ գալըստեանն ք՟սի. զի յայտ է թէ յայնժամ դողալոց է երկիր, և հիմունք լերանց սասանելոց են. զի բարկացեալ է ա՟ծ 'ի վ՟ր ն՟ց, ո՟չ վ՟ս ն՟ց, այլ վ՟ս ապերախտութեան որդւոց մարդկան՝ որք կային և շրջէին 'ի վերայ նոցա ։

Բարոյապէս՝ երկրաւ իմացեալ լինին տկարք և տըգէտք կամ "ա՟ն լամբ" մարմինս մեր. իսկ լերամբք իմանին չարք և հպարտք, որոց հիմունք են մեծութիւնք և իշխանութիւնք նոցա ։ Ի սպառնալ առ սոսա տ՟ն՝ եթէ

երկիցեն 'ի նմէ. յիրաւի խռովեցին եւ փոխեցին 'ի
լաւ անդր: Եւ ըստ այսմ 'ի բերանոյ այսպիսեաց երեւի
առացեալ այն բան Եսայեայ. * վն երկիւղի քո մր յղա-
,, ցաք, երկնեցաք, եւ ծնաք. (եւ) զհոգի փրկութե քո
,, արարաք 'ի վր երկրի ||. Եսայ. ԻԶ. 17: Զայս ե-
դեալ մարգարէին յաւելու ասել:

Թ. Ել ծուխ 'ի բարկութենէ նր. եւ հուր յերեսաց նորա
բորբոքեցաւ. եւ կայծակունք հատան 'ի նմանէ:

Այս բան հայելով յեբրայականն 'ի մէջ մատուցանի
ըստ նկարագրութեան կերպարանաց մարդոյ բարկացե-
լոյ. զի որ բարկանայ սաստիկ՝ իբրեւ հուր ծխէ
երեւի բարկութիւն յերեսս նր. եւ գոլորշիք իբրեւ ծուխք
ելանեն ընդ ռնգունս նր, եւ փայլատակունք բանից՝
իբր զայրացական բանք, եւս եւ կայծակունք՝ այս է
հարուածք որոտան 'ի նմէ: Այս նմանաբանութիւն
ցուցանէ զահաւոր նախախնամութիւնն այ, որով կա-
ռավարէ զտարերս յահարկութիւն մարդկան: Եւ զի
մարգարէն խօսեցաւ նախ զկառավարութենէ երկրի եւ
լերանց՝ իբր զսասանմանց նոցին, կամելով 'ի վեր եւս
ելանել քան զերկիր, եւ պատմել զգործս այ՝ զորս
յերկրէ սկսանի գործել, դնէ նախ զծուխն, ապա
զհուր, եւ յետոյ զփայլատակունս յասելն:

Ել ծուխ 'ի բարկութենէ նորա (եւ հուր յերեսաց նորա եւն:)

Ծուխ ասելով ըստ Ձաւլին իմանայ ասա զչոր եւ զհրա-
նիւթ եւ զծծմբային գոլորշիս, որք փոխարկին հրա-
փայլ լինին, իբր 'ի փայլատակունս, 'ի յասուպ, եւն:
Այս ծուխ ասէ՝ * ել 'ի բարկութենէ նր ||. փխկ ասե-
լոյ, ել յերկրէ հրամանաւ նր: Եւ թէպէտ կարէր
պարզապէս եւս դնել՝ 'ի հրամանէ կամ հրամանաւ նր.
բայց կամելով ցուցանել զահաւորութիւն նորին՝ դնէ,
* 'ի բարկութենէ ||: Եւ զայս նմանութի՝ թուի թէ
առնու՝ հայելով ոչ յայն եւեթ՝ զոր եդաք 'ի վերոյ,
այլ եւ յայն՝ որ տեսանի 'ի զայրացման բորբոքեալ հնո-
ցի. զի որպ ծուխն՝ որ ելանէ յայսպիսի հնոցէ, երեւի
ելանել իբրեւ 'ի բարկացեալ հրոյ. սոյնպէս եւ յելա-
նել ծխոյ 'ի յերկրէ ըստ հրամայելոյն այ՝ նմանաբա-
նութեամբ ասի ելանել 'ի բարկութե նր: Եւ զի այս-
պիսի ծուխք բազմ անգամ վարին յօդս պէսպէս օրի-

նակաւ, եւ իբրեւ հուր բորբոքին, զայս եւ կամելով յայտնել մարգարէին՝ ասէ.

Եւ հուր բորբոքեցաւ յերեսաց նորա. որպէս թէ ասէր՝ 'ի հրամանէ նորա բորբոքի յօդս հուր 'ի ծխոյ անտի ելելոյ յերկրէ. երբեմն իբրեւ աստղ, երբեմն իբրեւ վարսամ, երբեմն իբրեւ գիսաւոր աստղ, եւ երբեմն եւ իբրեւ զփայլակն. եւ զայս եւ 'ի մանաւորի յայտ առնէ յասելն.

Ածուխ վառեցաւ 'ի նմանէ. այսինքն թէ՝ ըստ հրամանի նորա այն ծուխք եղեն եւ լինին փայլատակունք. եւ ըստ ակնարկելոյ նորա փայլատակին յերկնից; եւ կայծակունս եւս արձակեն.

Բայց որպէս զնախընթաց համարոյն ասացաք, սոյնպէս եւ այս բան ըստ փոխաբերական իմացուածոյ յայլ ինչ հայի, այսինքն 'ի բարկութիւնն Այ. ըստ որոյ ծուխ ասելով իմանայ զվրէժխնդրութիւն նորա. վասն զի որպէս ծուխն է սեաւ գոլորշիք ելեալ յայրեցեալ իրաց, սոյնպէս եւ վրէժխնդրութիւնն է իբրեւ սեաւ եւ կսկծեցուցիչ գոլորշիք ելեալ 'ի սրտէ՝ բարկութեամբ այրեցելոյ. սեաւ, զի 'ի նմա ոչ տեսանի սպիտակութիւն, այսինքն քաղցրութիւն եւ հանդարտութիւն. կսկծեցուցիչ աչաց, զի յորս հասանէ՝ կսկծեցուցանէ զնոսա.

Եւ թէպէտ ոչ գոյ յԱծ այսպիսի ինչ, եւ ոչ իսկ հնար է զայսպիսիս զմտաւ ածել զնմանէ, սակայն գործք բարկութեան նորա կարեն այսպիսի նմանաբանութեամբք դնիլ առաջի. Իբր զի յորժամ թշնամիք նորա 'ի կողմանէ իւրեանց բարկացուցանեն զնա, եւ որպէս թէ այրեն բարկութեամբ զսիրտ նորա, վրէժխնդրութիւն նորա հասանէ 'ի վերայ նոցա իբրեւ զծուխ սեաւ եւ կսկծեցուցիչ. մանաւանդ յորժամ թոյլ տայ եւ եւս սեանալոյ 'ի հոգիս իւրեանց, այսինքն կուրանալոյ. եւ եւս յորժամ տագնապէ զնոսա ժմկեայ եւ կամ յաւիտենական պատժովք. Բայց երբեմն խառն գոլով ընդ գթութեան հարկանէ եւս ըզսիրտս կսկծմամբ ապաշխարութեան, որով եւ բժշկէ.

Եւ առ 'ի ցուցանել մարգարէին զսաստկութիւն այսր վրէժխնդրութեան՝ եբեր 'ի մէջ զնմանութիւն հրոյ, յասելն թէ. * հուր յերեսաց նորա բորբոքեցաւ ‖. եւ այս եւս թէպէտ զնոյն վրէժխնդրութիւն յայտնէ, բայց սաստկապէս. զի յայտ է թէ առաւել է յոյժ զօրութի

հրոյ քան ծխոյ . և առաւելագոյն բարկութեան է նշա-
նակ՝ յորժամ ոք ոչ եթէ 'ի ձեռն այլոյ , այլ՝ երեսօք՝
իւ՟ անձամբ իւրով յարձակի 'ի վերայ թշնամեաց իւրոց ,
Նմին իրի դնէ՝ * յերեսաց նորա ‖ .

Իսկ երեսօք երեք ինչ իմացեալ լինի աստ . մի՝ որպէս
յիշեցաք՝ նոյն իսկ անձն . Երկրորդ այն՝ որ երեսօք կամ
բերանով կարէ յայտնել . որպիսի է արդարութի՟ն ա՟յ և
զօրութի՟ն նր՟ և կամ եւս կարողութի՟ և տէրութի՟ նորին .
յորմէ ելանէ սաստկութի՟ վրէժխնդրութիւն նորա 'ի
վ՟ր թշնամեաց նորուն , որպէս և եւ 'ի վ՟ր թշնամեացն
դաւթի . Երրորդ՝ իմացեալ լինի բանն ա՟ծ . որ է իբ-
րև երես և պատկեր հօր . և այլով նմանութեամբ՝ բե-
րան . որոյ 'ի մարդանալն՝ եւ 'ի նմէ վրէժխնդրութիւն
իբրև զհուր բորբոքեալ ը՟դէմ սատանայի և դիւաց նր՟ ,
և եկեր և ծախեաց զզօրութիւն նոցա .

Բայց կամելով մարգարէին՝ առաւել եւս քան զհուր
սաստիկ ցուցանել զայսպիսի վրէժխնդրութիւն ա՟յ , այ-
լով իմն նմանութեամբ առաջի եդ զայն յասելն * Եւ
փայլատակունք հատան 'ի նմանէ ‖ . որով կամի յայտ
առնել , թէ որպէս յորժամ խառոյկն կամ երկաթն կարի
իմն վառեալ բորբոքի , կայծակունս և շանթս ար-
ձակէ , և որպէս ամպք յորժամ լիանան հրեղէն և
ծծմբախառն գոլորշեօք , 'ի շարժմանէ ջերմացեալ՝
փայլատակունս և կայծակունս արձակեն , նոյնպէս
եւս յորժամ ա՟ծ սաստկապէս վառի բարկութի՟ , առաքէ
շանթս ծախիչս , իւ՟ զչարաչար պատիժս . և կամ յետ
բազում ժմկս սպասելոյ դարձի մեղաւորաց թշնամեաց
իւրոց , տեսեալ՝ թէ նոքա ոչ ինչ հոգան , իբրև ամպ
լիացեալ հրով բարկութեան առաքէ 'ի վ՟ր ն՟ց զկայծա-
կունս քանդիչս , իւ՟ զայնպիսի պատիժս , որք իսպառ
եղծանեն զնոսա . ո՟պ և արար իսկ ը՟ բ՟ղն , եւ և ընդ
թշնամիսն դաւթի . և առաւել եւս ընդ սա՟ւլ և ը՟ զօրս
նորա՝ յորժամ իջեալ յերկնից՝ մարտեաւ ընդ նո՟ մարդ-
կութբ իւրով . Բայց թէ զիարդ արար զայս , յայտ
առնէ 'ի յաջորդ համարն . 'ի մէջ բերելով զշարժ-
մունս հողմոց և միգի՝ յասելն .

Ժ. Խոնարհեցոյց զերկինս և էջ. և մէգ ՚ի ներքոյ ոտից նորա։

Այլմէ տարագրէ մարգարէն զհասարակ հողմունս, որք են ՚ի ստորին գաւառս, և պատճառին յազդեցութենէ երկնից. և զի գերապանծ իմն օճիւ խօսի՝ փոխաբերութեամբ բանի առաջի առնէ զայս. և խելամտութեան ձևով վարելով փինկ անուան գործոյն զանուն պատճառին ՚ի մէջ բերէ ասելով։

Խոնարհեցոյց զերկինս և էջ։ Կամի ասել խոնարհեցոյց զազդեցութիւնս երկնից ՚ի ստորին գաւառս ՚ի գոյացութիւն հողմոց. և զի ինքն գործէ ՚ի նս իբրև առաջին պատճառ, յիջուցանելն զազդեցութիւնս նոցա՝ ինքն ևս ասի իջանել. ոչ զի շարժի, այլ զի տայ շարժել. զի ա̃ծ ՚ի պատճառեն յայլս զշարժումն՝ ասի շարժիլ. յոր միտ ասի, իմաստ. է. 24. * քան զա̃մ շարժումն շարժադոյն է իմաստութիւն ||. խօսի ապա և զմիգէ ասելով։

Եւ մէգ ՚ի ներքոյ ոտից նորա։ Մէգն է գոլորշիք ջրոյ՝ միանգամայն և հողոյ ելեալ յերկրէ և պատեալ զերկրաւ՝ իբրև անօսրագոյն ամպ. որ վ̃ն ՚ի ստորինս լինելոյ՝ ասի լինել ՚ի ներքոյ ոտիցն այ̃։

Զայսուիկ ըստ նկարագրին այսպէս կարգելով մարգարէին՝ զարմանալի իմն նմանաբանութեամբ կամի ցուցանել զմեծութիւն և զբարձրութիւն այ̃՝ թէ յինքեան, և թէ ՚ի գործս իւր։ Զի յասելն, * խոնարհեցոյց զերկինս և էջ ||. յայտ առնէ, թէ ա̃ծ ոչ է փակեալ ուրեք. այլ ՚ի վերոյ է քան զա̃մ, ևս և քան զերկինս. և նոյն իսկ երկինք են նորա իբրև գործիք իջանելոյ յերկիր, կ̃մ գործելոյ նոքօք յերկրի՝ զոր ինչ միանգամ և կամի։ Այնպէս և յասելն, * և մէգ ՚ի ներքոյ ոտից նորա ||. կամի յայտ առնել, թէ այնչափ բարձր է ա̃ծ, մինչ զի ամպք և մէգ համարին իբրև զփոշիս ը̃ ոտիւք նորա. յոր միտ ասէ Նաւում. ա̃. 3. * ամպք փոշի ոտից նորա ||։

Այս բան կարէ հայիլ ըստ նկարագրին և յայնս, յորս երևեցաւ ա̃ծ ամպօք և միգօք, որք են իբրև ստորին մասունք երկնից։ Նա ըստ այսմ իմացեալ՝ կամի ասել ա̃ծ բազում անգամ, մինչդ յառաջնորդելն որդւոցն

ինքն՝ խոնարհեցոյց զերկինս , ի͞ն զամպս՝ որք են յերկինս , և էջ . և նոյն էր՝ թէ ասացեալ էր , ա͞ծ խոնարհեցաւ յերկնից , և երևեցաւ յամպս , և ՚ի նոյն խօսեցաւ՝ ունելով ընդ ոտիւք զմէգ . ( Ելից . ԺԹ ․ )

Այլով իմն նմանութ͞բ կարէ հայիլ այս բան և յայտնասիկ գիպուածս , յորս փրկեաց ա͞ծ զդաւիթ՝ ցուցանելով նմա յերկնից զզօրութիւն իւր . թէպէտև այն յայտնի ոչ երևէր թշնամեաց նորա , այլ՝ իբրև միգով պատեալ ։

Այս բան և յաջորդ սորա են ևս իբրև մարգարէութիւնք և խորին այլաբանութիւնք նկարիչք մարդեղու͞ե բանին . և ըստ այսմ "զերկինս" առեալ իմանայ աստ զբարձրութիւն փառացն ն͞յ , կամ որ նոյն է՝ զանչափութիւն և զանհասութ͞ի մեծութ͞ե ն͞ր . վ͞ն զի որովհետև մեք ք͞ զերկինս բարձրագոյն և անհաս իմն ոչ տեսանեմք՝ ՚ի կամիլն սուրբ գրոց յայտնել մեզ զբարձրութ͞ի փառացն ն͞յ և զանհասութիւն մեծութ͞ե ն͞ր՝ զերկինս ՚ի մէջ բերեն , ա͞ծ ասեն յերկինս է . փոխ առեալ՝ ա͞ծ է յանհաս բարձրութեան փառաց ։ Առ յայս միտ՝ յաւելու , * խոնարհեցոյց զերկինս , և էջ ‖ . յայտ առնէ մարգարէն զխոնարհեցուցանել բանին ն͞յ ըզբարձրութիւն փառաց իւրոց ՚ի խորհուրդ մարդեղու͞ե . որով զրեթէ ծածկեաց զփառս ա͞ծութեան իւրոյ ընդ միգաւ , ի͞ն ընդ մարդկութ͞բ , և երևեցաւ իբրև զմարդ տկար ։

Այսմ օրինակ տայ գէորգ վ͞դ ՚ի մեկն . եսայ . ըզխոնարհիլ հրոյ ՚ի բարձրութէ կայից իւրոց ՚ի միաւորիլն ընդ փայտի , ո͞ր տեսանի ՚ի կայծական հրոյ . զի
* ո͞ր կայծն փայտ է , ասէ , բնութ͞բ և բոլորովին լցեալ
,, հրով , և զնորա զօրութիւն և զգործն ունի , այսպէս
,, ( եղև ) և մ͞րն մեր յս͞ ք͞ս . վ͞ն զի ը͞ն զգեցելումն , եղև
,, մարմնին բանն , և բնակեաց ՚ի մեզ . և էր իբրև ըզ-
,, մեզ մարդ ըստ տնօրէնութ͞ե . և ա͞մ լրումն ա͞ծութեն
,, բնակեալ ՚ի նմ͞ ‖ ։

Զայսպիսի խոնարհութեամբ զիջանել իւր ՚ի մեզ՝ ոչ համարեցաւ անարգանք իմն փառաց ա͞ծութեան իւրոյ , զի այսու ոչինչ ինչ նուազեցաւ ՚ի փառաց անտի . յոր միտ առէ առաքեալն . * որ ՚ի կերպարանս ա͞յ էր
,, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւա-

„ սար ա՟յ . այլ զանձն ունայնացոյց , զկերպարան
„ ծառայի առեալ , 'ի նմանութիւն մարդկան եղեալ . և
„ կերպարանօք գտեալ իբրև զմարդ . խոնարհեցոյց
„ զանձն՝ լեալ հնազանդ մահու չափ և մահու խաչի ‖ .

փիլ . բ . 6 .

Զայս իջանել և զխոնարհեցուցանել ան՟ն՝ գեղեցիկ իմն օրինակաւ անկանիլ կոչէ շնորհալին 'ի մեկն . մատ . գլ . ա՟ . յասելն . * զոր օրինակ առ անկեալն
„ անկանել պարտ է որ յարուցանելոց է զնա , նոյն-
„ պէս տէրն մեր անկաւ 'ի վ՟ր անկելոյ բնութեանս .
„ և կանգնեաց 'ի կանգնումն յարութեան՝ որ ոչ ան-
„ կանի ‖ .

Դարձեալ՝ 'ի ձեռն երկնից մարթ է իմանալ աստ զերկնայինս , ո՟ր զհրեշտակս . և յայս միտ կամի ասել . եթող զհրեշտակային բնութիւնսն և էջ 'ի մարդկային բնութիւնս . որ է ասել . ոչ կամեցաւ հրեշտականալ , այլ մարդանալ . որով գրեթէ խոնարհեցոյց զհրեշտակսն , ո՟ր խոնարհ երևեցոյց զնոսա քան զմարդ . յայս հայի և բան առաքելոյն՝ զոր ասէ , * ոչ երբէք ըզհրեշտակաց բուռն հարկանէ , այլ զզաւակէն աբրահամու ‖ . եբր . բ . 16 . Այսմ օրինակ ինչ բերէ վարդան ասելով . 'ի կամիլ որդւոյ թագաւորի ամուսնանալ՝ եթէ կայցեն երկու հարսնացու . մին գեղեցիկ դուստրր թագաւորի , և միւսն տգեղ դուստր աղքատի . որդի թագաւորին թողեալ զդուստր թ՟գին առնուցու ըզդուստր աղքատին , խոնարհ և 'ի վայր ցուցանէ զնա ք՟ զսա . Եւ թէպէտ տ՟րն մեր ոչ վ՟ս խոնարհեցուցանելոյ զհրեշտակս՝ եթող զհրեշտականալն , բայց մարդանալովն՝ երևեցաւ խոնարհեցուցանել զնոսա . Դարձ՝ "զերկինս" ասելով իմանայ աստ մարդարէն և զնոյն նիւթեղէն երկինս , բայց փոխաբերութ՟բ . իբր զի 'ի մարդանալ բանին և 'ի շրջիլ նորա 'ի վ՟ր երկրի , արար՝ զի որ յերկինս էր , իջէ յերկրի . որով և երկիրս եղև իբրև երկինք . որպէս թէ բանն ա՟ծ զերկինս խոնարհեցուցեալ էր ընդ իւր 'ի յերկիր . և 'ի նմին շրջէր . Եւ յայս միտ բ՟մ ուրեք ասի , թէ երկիրս երկինք եղև . ըստ որոյ ասեմք 'ի շարականի 'ի կանոնն ա՟ն ը՟ առաջին . * այսօր երկիրս երկինք անուանեցաւ . զի տ՟րն տերանց իջեալ ( է ) յերկնից 'ի յերկիր ‖ .

շար · ԺԴ ·

Իսկ "էջ" ասելովն ոչ ցուցանէ, թէ բանն ած յառաջա-
գոյն չէր 'ի յերկրի, եւ 'ի մարդանալն էջ. այլ՝ կամի
յայտ առնել, թէ ոչ էր այնպէս 'ի յերկրի, որպէս էր
յառաջն. զի յառաջն էր յերկրի ը̃ ածութեան միայն.
իսկ յետոյ ը̃ մարդկութեան եւս եղեւ անդ, եւ զի նովաւ
պլագդ երեւեցաւ յերկրի, վասն այսորիկ ասի՝ թէ
"էջ" : Նա այս է սովորութիւն գրոց. յորս ուր ու-
րեք ած յայտնէ զինքն, ասի՝ էջ տէր անդ. ոչ զի չէր
անդ, այլ զի այնու եղանակաւ չէր անդ. եւ յետոյ այ-
նու եղանակաւ եւս յայտնելով զինքն անդ՝ համարի ի-
ջանել անդ : Նա թէպէտ փոխ առելոյ՝ էջ, պատշաճ
եւս էր դնել՝ եղեւ. բայց վասն ցուցանելոյ զբարձրութիւն
այ՝ ասի էջ. իբր թէ ինքն 'ի բարձրութեան գոլով՝ 'ի
յայտնելն 'ի վր երկրի երեւի իջեալ անդ՝ ուր յայտնի :
Նա քանզի խորհուրդ մարդեղութեան բանին էր խորին
յոյժ եւ մթին, թէ յառաջ քան զկատարելն՝ եւ թէ 'ի
կատարմանն անդ, զայս մթութիւն յայտ առնէ մարգա-
րէն այլաբանութեամբ միգի. զի ք̃ս յորժամ մէգ պատի
զիրք, դժուարաւ եւ կամ նսեմութբ̃ նշմարի իրն այն,
եւ երբեմն եւս ոչ տեսանի, սոյնպէս եւ խորհուրդ մար-
դեղութեան բանին յառաջն նսեմութբ̃ նշմարեցաւ 'ի
նահապետաց եւ 'ի մարգարէից. նմանապէս եւ 'ի կա-
տարելն անդ, յորժամ նա ինքն բանն ած շրջէր ընդ
մարդկան, մարդիկ դժուարաւ եւ նսեմութեամբ նշմա-
րէին զնոյն. եւ բզ̃ք եւս՝ ընդ որս եւ դեւք, ոչ տեսանէ-
ին. ուստի գրեթէ մէգ ինն պատեալ էր զնովաւ. սմին
իրի եւ Ճանաչումն մարդկան 'ի վր այսր խորհրդոյ էր
յայնժամ իբրեւ զմիգով, զի էր նսեմ յոյժ. ըստ որոյ
ասի * եւ խաւար նմա ոչ եղեւ հասու ||. յովհ · ա · 5 :
Նա կամ թէ որովհետեւ բանն ած ծածկեալ էր 'ի բարձ-
րութեան այսր երկնային խորհրդոյ, Ճանաչումն մարդ-
կան՝ որ միայն զերկրաւ յածի իբր մէգ, էր 'ի ներքոյ
ոտից նորա. եւ ոչ կարէր համարձակ 'ի վեր յառնել 'ի նա
եւ յայտնի տեսանել զնա. ք̃ղի ասէ, * աշ̃ զնա ոչ ծա-
նեաւ ||. յովհ · ա · 10 :

Հնար է եւս ոտիւք իմանալ աստ զմարդկութիւն միա-
ւորեալ 'ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ. զոր էառ բանն ած,
եւ միաւորելով զնա ը̃ ածութեան իւրում՝ նովաւ շրջէ-

ցաւ ընդ մարդկան 'ի վերայ երկրի ( բարուք · գ̃ · 38 ։ ) Այլ ընդ սովաւ եւ նսեմ գտաւ ճանաչումն մարդկան · զի ոչ եհաս նմա ։ Ասացաք իմն 'ի սոյն միտս մեկնել զայս՝ վանական վրդ̃ 'ի մեկն · յոբ · գլ · գ̃ · ասելով ։

* Անդ զմարմինն ասաց ըստ դաւթի, մէգ 'ի ներքոյ
„ ոտից նորա · նախ՝ վն̃ զի ծածկեաց · և (Բ) ոչ կարաց
„ հասու լինել խորհրդոյ տնօրէնութեանն · և միւս եւս
„ զի արար զօր չարչարանացն ( խաւար ) ‖ ։

Դրձլ՝ հնար է ոտիւք իմանալ աստ և զզօրութիւն քնի կամ զիշխանութիւն նր̃ · և ըստ այսմ՝ միգաւ իմացեալ լինի աստ մեղք միգապատեալ մարդկային բնութիս , որ եղև ընդ իշխանութբ̃ն քնի · և կամ եւս միգաւ իմա-ցեալ լինի միգապատիրն սատանայ , որ ընկճեցաւ ընդ ոտիւքն քնի՝ դր ընդ իշխանութբ̃ նորա ։ Արժ է եւ ասել ըստ լամբրոնացւոյն , թէ ներքոյք ոտիցն նր՝ են հետք ճանապարհաց նորա՝ դր գործոց նր̃ · որք վն̃ ան-հասութեան իւրեանց են իբրև միգով պատեալք ։

Զոր ինչ ասացաք զայսմ համարոյ , հնար է յարմա-րեցուցանել և երկրորդ գալստեանն քնի · իբր զի յայն-ժամ եւս ունի քրիստոս խոնարհեցուցանել զերկինս՝ դր զբնակիչս երկնից , և իջանել ընդ նմ և նստել 'ի բարձ-րութեան · և յայնժամ լինիցի 'ի ներքոյ ոտից նր̃ մէգ , դր անօրագոյն լուսեղէն ամպ , կամ այլաբանութեամբ հրեշտակք , կամ ընդ հակառակն՝ բազմութիւնք թշնա-մեաց նորա · զորս դիցէ յայնժամ պատուանդան ոտից իւրոց , ըստ ասելոյ առաքելոյն · ա̃ · կոր · ժե · 25 ։ և եբր · ժ · 13 ։ իբր զի զամենեսին զնս նուաճեսցէ և ընկճեսցէ ընդ ոտիւք իշխանութեան իւրոյ , և առցէ վրէժս 'ի նոցանէ ։

Այլ աստ արժան է գիտել, զի բանք այսր համարոյ, եւ և 13 · 15 · և 18 , համարոցն՝ գնին և 'ի սաղ · ձիգ̃ · 'ի համարսն · 5 · 6 · և 7 · 'ի հրամայական կամ 'ի մաղթողական եղանակն ։ Այլ թէ յինչ միտս՝ խօ-սեսցուք անդ ։ Արդ առաջի եդեալ մարգարէին զզօ-րութիւն այ̃ 'ի խոնարհեցուցանել զերկինս և յիջանել՝ յայտ առնէ այժմ և զելս զօրութեան նր̃ , և ասէ ։

ԺԱ · Նստաւ 'ի քերովբէս եւ թռեաւ · սլացաւ նա 'ի թեւս հողմոց ։

Ոյորքիկ աստուածք հայելով 'ի շարժմունս հողմոց՝ յաւէտ սքանչելախօսութիւնք են՝ քան նմանաբանութիւնք · որովք զսաստկաթռիչ հողմունս այլաբանէ մարգարէն 'ի քերովբէս · եւ այս չէ ինչ անդէպ · զի որովհետեւ քերովբէք են բազմաթեւեան, որով նշանակի արագութիւն, հողմունք ը՟տ արագութեան իւրեանց կարեն այլաբանիլ 'ի քերովբէս ։ Եւ թէպէտ կարէր մարգարէն յայլ ինչ այլաբանել, բայց վասն ցուցանելոյ զսքանչելի փառս եւ զգերազանց իշխանութիւն արարչին՝ 'ի քերովբէս փոխաբերէ զնոսա · նոյնպէս եւ զպատճառել արարչին զայնս ի՟բ զհողմն՝ ելանել 'ի նոսին եւ թռչիլ · եւ այս եղանակ խօսից ըստ ճարտասանից կոչի փոխանունութիւն · որով բանք նշանակիչք ներգործութեան պատճառին՝ դնին փոխ կրողութե պատճառեցելոյն, կամ փոխ արտադրութեան գործոյն · ըստ այսմ ոճոյ խօսելով մարգարէն ասէ ։

Նստաւ 'ի քերովբէս եւ թռեաւ ։ Կամի ասել · արար՝ զի սաստիկ արագութբ՝ ը՟տ արագութե քերովբէից շնչեսցեն հողմունք եւ թափեսցեն · յայս միտ յաւելու եւս ասել ։

Սլացաւ նա 'ի թեւս հողմոց ։ ի՟բ արար՝ զի հողմունք այնպէս արագ ընթասցին, որպէս թէ ունէին զթեւս ։

Քերովբէիւք կարեն իմացեալ լինել աստ եւ հրեշտակք, որովք իբրեւ պաշտօնէիւք վարէ ա՟ծ զհողմունս, եւ զայլ տարերս ։ Եւ դարձեալ որովհետեւ բառս քերովբէ՝ ստուգաբանի իմաստութիւն կամ լիութի գիտութե, քերովբէիւք կարէ նշանակիլ աստ եւ այն գերագոյն իմաստութիւն, որով կառավարէ ա՟ծ զա՟մ ինչ ։ Մարթ է զայս բան յարմարեցուցանել եւ ներկայանալոյ ա՟յ 'ի տապանակին, յորոյ վ՟ր կային երկու քերովբէք · եւ զի 'ի տապանակի անդ յանդիման լինէր ներկայութիւն ն՟ր, եւ 'ի տապանակէ անտի ցուցանիւր բ՟զմ անգամ զօրութիւն նորին, զայսմիկ եւս նկարագրէ աստ մարգարէն նմանութբ եւ այլաբանութբ բանից · իբր զի գլխին նորա 'ի տապանակի նկարէ բանիւքս ել 'ի քերովբէս · ըստ որոյ 'ի Բ · Թագ" ԻԲ · դնի, ել նստաւ 'ի վ՟ր քերովբէից · իսկ զհասանել զօրութեն

ոչ յօգնութիւն կնացւոց՝ նկարէ բանիւքս , թռեաւ սլացաւ 'ի թևս հողմոց , որ պարզագոյն են գնի 'ի դ՟ . թագ″ յաւելն , երևեցաւ 'ի վերայ թևոց հողմոց . Այլին նշանակէ և գործեն ոչ 'ի ձեռն հրեշտակաց կամ երևիլ նորա միջնորդութ՟ հրեշտակաց . ո՞չ արար 'ի սինա լերին . ես և յառաջնորդեն որդւոցն ի՟ղի . և դարձեալ՝ 'ի հարկանելն զթշնամիս , և այս՝ յոր-
ժամ արագ կատարէր .

Այս բան փոխաբերութեամբ առեալ երեք ինչ ես ցուցանէ . Նախ՝ թէ ա՟ծ թէպէտև 'ի քերովբէս նստեալ հանգչի , բայց զօրութիւն նր՟ է յա՟մ տեղիս . Ո 'ի յաւելն՝ * եւ 'ի քերովբէս ‖ . կամ * նստաւ 'ի վ՟ր քերովբէից ‖ . ցուցանէ՝ թէ նա է հանգուցեալ և փառաւորեալ 'ի քերովբէս . Իսկ յաւելն՝ "թռեաւ" , ցուցանէ՝ թէ ա՟ծ ըստ ամենակարող զօրութե՟ իւրում իբրև թէ թռչի , և է յա՟մ ես . Այնպէս և յաւելն՝ * սլացաւ նա 'ի թևս հողմոց ‖ , զնոյն ցուցանէ . զի թևօք հողմոց՝ նշանակի արագութիւն հողմոց . ապա և 'ի թևս հողմոց սլանալն ոչ՝ նշանակէ իբրև զհողմն արագ սլանալ . այ՟ յա՟մի անպակաս ներկայ լինել 'ի գոյացուցանել և 'ի կենդանացուցանել զնա .

Երդ՝ ցուցանէ , թէ ա՟ծ փութով և մեծաւ զօրութ՟ հասանէ յօգնութիւն՝ որոց ապաւինին 'ի նա . զի ո՞չ թագաւոր ոք 'ի լսելն՝ թէ թշնամիք իւր պաշարեալ են զքաղաքս թգ՟րութեան իւրոյ , ելանէ 'ի կառս , և բազմութեամբ զօրաց հասանէ արագ , և փրկէ , սոյնպէս և ա՟ծ 'ի տեսանելն՝ թէ ծառայք իւր պաշարեալ են փորձութ՟ք , և կարդան առ ինքն , ելանէ 'ի կառս՝ զօրս ձգեն քերովբէք , և իբր թռչելով հասանէ յօգնութիւն . որ է ասել . հանդիսութ՟ հրեշտակաց իւրոց՝ որք են զնովաւ , արագ հասանէ նոցա յօգնութ՟ , և փրկէ զնոսա . Ո այս յայտնէ և յաջորդ բանն այն . * սլացաւ 'ի թևս հողմոց ‖ , այ՟ թէ եհաս ա՟մ արագութ՟ . զի որպէս ասացաք՝ թևք հողմոց նշանակեն զարագութիւն . Այլին արագութ՟ եհաս և առ մեզ 'ի փրկել զմեզ , և զի այս տեսեալ եղև 'ի չորեսին կենդանիս , այ՟ 'ի չորս աւետարանս , վասն որոյ գրէ Նարեկացին խօսելով առ սուրբ կոյսն 'ի գով . կուս . յաւելն , * քև զարագեալն 'ի թևս օդայինս 'ի քառընթաց

կենդանիս տեսաք ||։

Երրորդ՝ այս բան ը̃ս ասելոյ լամբրոնացւոյն ցուցանէ, թէ զխորութիւն բնութ̃են ա̃յ չէ մեզ յայտնի, այլ՝ քրովբէից և հրեշտակաց և երանեալ հոգւոց. թռեաւ ասէ, 'ի մէնջ այն զխորութիւն, և նստաւ 'ի միտս քերովբէից. և սլացաւ 'ի թևս հողմոց, ա̃յ 'ի ճանաչմունս հրեշտակաց ։ Բայց նաև նոցին ես անհաս 'ի վեր քան զօրինակ. ուստի ասէ Նարեկացին 'ի բանն Լ̃Դ. * ա̃ծութիւն անճառ . . . անհաս խնամոց թևոց սլացմանն՝ 'ի վեր քան զօրինակ ||։

Խնդրեցես, ընդէր մարգարէն այսպիսի նմանաբանութ̃բ խօսի ։ Պատճառն նախ՝ զի բ̃մ անգամ և ինքն ա̃ծ այսպիսի իմն տեսլեամբ երևեցաւ, և այսպիսի իմն օրինակաւ եհաս յօգնութիւն. ո̃պ և յանապատի անդ ։ Երկ̃դ՝ զի ցուցցէ թէ անհասանելի է զօրութ̃ն ա̃յ, և անչափ է բարձրութիւն փառաց ն̃ր, ուստի և ոչ կարէ բացատրել յայտնի բանիւք, այլ նմանաբանութեամբ ։ Եր̃դ՝ զի ցուցցէ, և սքանչելի երևեցուսցէ զնա 'ի միտս ծառայից նորա. ը̃ս որում այսպիսի բանիւք միտք նոցա բերին 'ի սքանչացու̃մն 'ի վ̃ր ամենազօր կարողութ̃են ա̃յ, և 'ի վ̃ր գործոց նորա, և կառավարութեանն ։

Այս բան գոլով ևս մարգարէութիւն՝ յանդիման առնէ և զհանդիսաւոր համբարձու̃մն ք̃ի. զի յետ որոյ կատարեաց ք̃ս զա̃մ անօրինական գործս իւր՝ * ել 'ի քրովբէս, և թռեաւ ||. ա̃յ ել 'ի քրովբէական կառս. որ է ասել, հանդերձ քերովբէիւք ել և թռեաւ յերկինս. և կալաւ զնա ամպն յաչաց առաքելոցն. և ապա * սլացաւ 'ի թևս հողմոց ||. ա̃յ թէ՝ ա̃մ արագութ̃բ, և 'ի քթթել ական ել յերկինս երկնից. և նըստաւ փառօք ընդ աջմէ հօր. ըստ որոյ ասէ Նարեկացին բան. Լ̃Դ. 'ի դաւանութեան. * և կառավարեալ 'ի թևս հողմոց, ելեալ 'ի քրովբէս ամպով անքննութեան ծածկեցաւ, համբարձեալ գեր 'ի վերոյ ա̃մ երկնի ||։ Եւ 'ի գով. կուս. ասէ. * սլացաւ ո̃պ վերնայնն. թռեաւ ո̃պ հոգեղէն. ծածկեցաւ որպէս զանքննելն. փախեաւ որպէս զանհաս. 'ի յանկս երկնից եդ զգնացս ||։ Բայց այսմ նշանակութ̃ե երգեմք զայս տուն սաղմոսի յաւուրս տօնի համբարձման ք̃ի ։ Օ այսուհետև յայտ արարեալ մարգարէին յայտ առնէ այժմ այլով իմն այ-

լուսաւորութեամբ որ նմանութիւն շրջապատութեան ամպոց զգաղտնութիւն աստուածութեան կամ զգաղտնի լինելոյն խորհրդոց նորա. եւ ասէ:

ԺԲ. Եդ խաւար 'ի ծածկոյթ իւր, եւ շուրջ զնովաւ են յարկք իւր. եւ խաւարային ջուրք, մինչեւ յամպս օդոյ:

Մարգարէն որոշեալն 'ի գործս չորից տարերաց այլաբանելով խօսի, 'ի համարն 8 'ի մէջ բերէր զհողայինս. 'ի համարն 9 'ի մէջ բերէր զհրեղէնս. 'ի համարն 10 'ի մէջ բերէր զօդայինս. ընդ նմին եւ զերկինս իբրեւ զպարունակիչ օդոյ. 'ի համարն 11 որ 'ի նախընթացն զնոյն բերէր յառաջ 'ի հողմոց: Իսկ յայս համար 'ի մէջ բերէ նմանութեամբ իմն զջրեղէնս՝ որ զջրալից ամպս՝ յասէն:

Եդ խաւար 'ի ծածկոյթ իւր, եւ շուրջ զնովաւ են յարկք իւր. եւ խաւարային ջուրք մինչեւ յամպս օդոյ: Խաւարաւ իմանայ աստ զմթագին եւ զսեւագոյն ամպս թանձրացեալս ջրով. սոյնպէս եւ "յարկք" կամ "խորան" ասելով (որպէս գտնի 'ի Է. թարգ.) իմանայ զնոյն, որ զջրալից ամպս սեւացեալս. զորս եւ կոչէ * խաւարային ջուրք ‖. իբր թէ այն ջրալից ամպք գոյացեալ են 'ի ջուրց գոլորշեօք եւ շոգեօք վերացելոց յերկրէ մինչեւ յամպս եւ խաւարելոյ 'ի նոսին. ըստ որոյ 'ի Է. թարգ. գտնի. * խաւար ջրոյ թանձրացոյց զամպս օդոյ ‖. որ զայնոսիկ ամպս, զորս տեսանեմք 'ի բարձունս օդոյ, թանձրացուցեալ է Աստուած 'ի խաւար ջրոյ. որպէս թէ ասէր, արարեալ է զնոսա խաւարին լի ջուրբք: Եւ արդ քանզի Աստուած ասի լինել յերկինս, յորժամ այսպիսի խաւարային եւ ջրալից ամպք պատեն զերկինս, գրեթէ լինին իբրեւ ծածկոյթ նորա ահեղակերպ. եւ կամ շուրջ զնովաւ իբրեւ խորանք եւ յարկք անմատոյցք:

Զայսպիսիս խօսի մարգարէն եւ 'ի սաղ. ղզ. 2: եւ ճգ. 2. 3. եւ այլն. որովք երեք իմն կարեն այլաբանիլ 'ի փոխաբերական միտս. մի՝ թէ Աստուած է աներեւոյթ եւ անհաս՝ ծածկեալ 'ի տեսութենէ աչաց եւ մտաց. որպէս ծածկեալ լինի արեգակն 'ի պատելն թանձրամած ամպովք: Եւ մի այսր պատճառի Աստուած բազում անգամ յամպոյ խօսէր. որպէս ընդ մովսէսի, եւ ընդ յոբայ, եւ այլն (ելից.

ժԹ. յոբ. լԸ. 1. և Ծն. 1.) Իսկ եթէ խաւարս ի-
մանացուք զգիտութիւն մեր՝ սովին բանիւ ցուցանի՝ թէ
ծածկեալ է ա͞ծ 'ի գիտութենէ մերմէ. զի թէպէտև
ա͞ծ լոյս է և 'ի լոյս բնակէ, բայց մեզ մթին է իմա-
նալ. ուստի և ասի անմատոյց լոյս. կամ * բնակեալ
'ի լոյս անմատոյց ‖. ըստ որում և աստ ասի * եդ զխա-
ւար 'ի ծածկոյթ իւր ‖.

Երկրորդ՝ թէ գործք ա͞յ ևս անհասանելի են մեզ. իսկ
թէ զիարդ, զայն ցուցանեն մեզ ջրալից և խաւարայ-
ին ամպք իբր յօրացոյցք այլոց ա͞մի. Ո՞ զի մեք տե-
սանեմք, զի ջուրք ըստ բնութեան իւրեանց ոչ 'ի վեր,
այլ 'ի վայր իջանեն. բայց տեսանեմք ևս, զի նաև
'ի վերայ օդոց ամպացեալ դադարեն. զորս եթէ աչօք
ոչ տեսանէաք՝ անհաւատալի թուէր մեզ. Իսկ քանզի
ա͞ծ զայլ ևս սոյնն նման անհամար գործս գործէ,
զորս մեք ըստ միոյ մասին միայն տեսանեմք, և ըստ այլ
մասին ոչ տեսանեմք, անհասանելի երևին մեզ և
նորին.

Երրորդ թէ ա͞ծ ահեղ իմն է, ըստ որում այսպիսի թըն-
դագին ամպք ահաւոր գոչեն օրինակ ահեղութեան.
որով զարհուրեցուցանէ ա͞ծ զթշնամիս իւր, մինչ 'ի
պատուհասելն զնոսա պէսպէս իրօք.

Այլաբանօրէն՝ խորանաւ իմացեալ լինի եկեղեցի ն͞ր,
և յարկօք մանաւոր եկեղեցիք, որք ըստ վարդանայ
փարեալ են զ͞քիւ. Իսկ ջուրքն՝ նշանակեն խորհուրդք
եկեղեցւոյ. և զի զոր գործեն այսպիսի խորհուրդք
'ի հոգիս՝ ոչ տեսանին մեզ՝ խաւարային դնէ. և այս՝
մինչև յամպս օդոց, ա͞յ նաև մինչ 'ի գերազանց միտս,
որք օրինակին յամպս, ևս և 'ի միտս մարգարէից և
առաքելոց՝ որք նկարեցին զայսպիսի խորհուրդս իբրև
զջուրս, և հոսեցին առ մեզ յերկնից, ա͞յ 'ի ք͞նէ. Ըստ
այսմ համեմատութեան ա͞ծ զհին եկեղեցին իբրև զխա-
ւար եդ 'ի ծածկոյթ իւր. ա͞յ թէ ծածկեաց լուսով
նոր եկեղեցւոյ.

Իսկ լամբռնացին յարկօք իմանայ աստ զհրեշտակս,
որք են շուրջ զա͞ծ իմանալապէս. Օ այսպիսի եղեալ
մարգարէին՝ յաւելու ևս և 'ի մէջ բերել զայն՝ որք
յամպս լինին և յամպոց պատճառին. վասն որոյ ասէ.

ժգ. Ի փայլատակել առաջի նր՝ ամպք անցանէին կարկուտ, և կայծակունս հրոյ.

ժդ. Որոտաց Տէր յերկնից. և Բարձրեալն ետ զձայն իւր 'ի կարկուտ և 'ի կայծակունս հրոյ.

ժե. Առաքեաց նետս իւր, և ցրուեաց զնս. յաճախեաց փայլատակունս իւր, և խռովեցոյց զնոսա.

Գիտելի է, զի յորժամ շոգիք ջուրց և գոլորշիք հողոյ և օդիք հրոյ, ընդ որս և նուրբ և թանձր մասունք հողեղէնք՝ ելանեն 'ի վեր յօդս, և ժողովին 'ի մի, պէսպէս ամպս գործեն ըստ անօսրութե և ըստ թանձրութե իւրեանց. յորս ծծմբաւոր և բորակաւոր դիւրավառ մասունք գոլորշեաց 'ի պէսպէս խորշս նոցա իբրև 'ի կծիկս ամփոփին 'ի ցրտութենէ այնր վերին գաւառի։ Ի սոսա բազում անգամ խառնին և այն հողեղէն մասունք, և պնդեալ խտանան։ Իսկ ապա յազդեցութենէ աստեղաց 'ի շարժիլ ամպոց, այն ծծմբաւոր գոլորշիք նուրբք վառեալ յանկարծ փայլեն, և արձակին 'ի դուրս առանց ձայնի. և այն է փայլակն։ Իսկ խիտ գոլորշիքն 'ի վառիլն՝ ճայթեն. և եթէ իցեն բազումք և փոքրիկ, հետ զհետ վառելով և ճայթելով 'ի վերկոյս, և կամ սաստիկ սողոսկելով պատճառեն զորոտումն։ Իսկ եթէ իցեն կարի հոծք, և անիցին 'ի միջի ամփոփեալ և կծկեալ զհողեղէն մասունս, ուժգին ձայնիւ թափով և թնդմամբ արձակեն զնոսա յիւրեանց. որք և ասին կայծակունք։ Իսկ յորժամ յայսպիսի թնդմանէ ջրալից ամպքն սկսանին լուծանիլ՝ 'ի ջերմագին կաթիլս ջուրց, յիջանել նոցա 'ի վայր՝ միջին գաւառն օդոյ յամառան գոլով ցուրտ՝ քան զվերինն սառեցուցանէ զնս, և առնէ կարկուտ։ Զայսոսիկ հայի մարգարէն՝ յասելն.

Ի փայլատակել առաջի նորա՝ ամպք անցանէին կարկուտ, և կայծակունս հրոյ։ Այսինքն 'ի փայլատակել ամպոց՝ իջուցին զկարկուտ և արձակեցին զկայծակունս հուր, կամ զկայծակունս հրոյ, կամ որ նոյն է զկայծակունս հրեղէնս։ Իսկ * առաջի նորա ‖ ասելով կամի հայեցուցանել 'ի նախընթաց բան իւր. զի որովհետև ասաց

անդ, թէ այն ամպք են իբրև ծածկոյթ նորա, նոյն իսկ համարին կացեալ յառաջոյ նորա, և անտի փայլատակել. և կամ թէ ասել. առաջի աչաց նր̃, ի̃ք առաջի ներկայութե̃ն նր̃ և կամ հրամանաւ նր̃ այն ամպք փայլատակեն.

Այսպիսի ասելով մարգարէին՝ երկու ինչ կամի յայտ առնել. մի՝ թէ զիա՛րդ ամենակարող է ա̃ծ, որ 'ի տարերաց զայսպիսիս գործէ՝ 'ի խնամել զստորին գաւառս երկրի: Երկրորդ՝ թէ զիա՛րդ ահաւոր է 'ի պատժել. զի որովհետև հրամանաւ նորա լինին սոքա, ըստ ակնարկելոյ նր̃ կարեն հարկանել՝ զորս նա թոյլ տայ հարկանել. և կարեն ևս իբրև գործիք պատերազմի վանել զթշնամիս նորա. որպէս և արարին իսկ 'ի ժամս մովսէսի (ելից. Թ. 23. և 24.) Նաև յեսուայ՝ 'ի պատերազմունս հինգ թագաւորաց (յեսու. Ժ. 11.) Նաև սամուէլի մարգարէին՝ 'ի պատերազմունս այլազգեաց. (ա̃. թագ. Է. 10. ևա̃.) Բայց կամելով մարգարէին առաւել ևս սաստիկ ցուցանել զահաւորութի̃ նր̃ յայսպիսիս՝ յաւելու, և ասէ.

Որոտաց տ̃ր յերկնից, և բարձրեալն ետ զձայն իւր 'ի կարկուտ և 'ի կայծակունս հուր:

Այս բան թէպէտև իբրև կրկնումն է նախընթացին, բայց 'ի սմա երևի ահաւորութիւն սաստիկ. զի ոչ ասէ՝ թէ ամպք որոտացին և ետուն զձայն, այլ թէ՝ տէր որոտաց և ետ զձայն իւր. և այն՝ * 'ի կարկուտ և 'ի կայծակունս հուր ||. ի̃ք թէ ետ ձայն կարկտով և կայծակամբք հրոյ. զի բառս հուր՝ որպէս և 'ի նախընթացս համարին՝ սոյնպէս և աստ դնի իբր յատկացուցիչ կայծականց.

Իսկ ասելովն՝ տէր որոտաց, ևա̃. ոչ ցուցանէ, թէ ինքն ա̃ծ որոտայ, և տայ զձայն, այլ թէ հրամանաւ նորա լինին որոտմունք և ձայնք և կարկուտք և կայծակունք: Բայց յայն սակս դնէ՝ թէ տէր որոտաց, զի ցուցցէ՝ թէ ա̃ծ այնպէս ահագինս տայ որոտալ ամպոց և արձակել ձայնս և կայծակունս, մինչ գրեթէ համարիլ՝ թէ նա ինքն է, որ որոտայ, և տայ զձայն: Նաև յայս իսկ ասացաւ առ յոբ. * միթէ բար-
,, բառ հանգոյն նմա որոտայցես ||. յոբ. Խ. 4. Նաև որպէս ասացաք սոյնն կամի ցուցանել, թէ ահաւոր է ա̃ծ, և ոչ է իբրև զմարդիկ տկար: Նաևս և թէ որոտ-

մանքք և կայծակամբք և կամ ես սպառնալեօք իբրև նետիւք իւրովք խոցրէ երբեմն տէր զվրէժս 'ի թշնամեաց իւրոց ։ Այլ զայս յայտ առնէ 'ի յաջորդ համարն, և ասէ ։

Առաքեաց նետս իւր՝ և ցրուեաց զնս̄ . յաճախեաց զփայլատակունս իւր, և խռովեցոյց զնոսա ։ Նետիւք իմանայ աստ զկայծակունս, զորս ա̄ծ յաղեղանց՝ յ̄ յամպոց, և կամ յաղեղանէ բարկութե̄ իւրոյ արձակէ 'ի վերայ թշնամեաց իւրոց, և իբր նշանաւորութեամբ հարկանէ զնս̄ . ը̄ այսմ՝ զոր ասէ իմաստունն . * գնասցեն նետք կա„րովլք փայլատականց ( յ̄ գնասցեն կայծակունք ). „ և իբրև 'ի լայնալիճ աղեղանէ յամպոցն տասցեն 'ի „ նպատակս . և 'ի քարընկէց բարկութենէ թափեսցի „ լի կարկուտ ‖ . իմաստ . Ե . 22 'ի ձեռագր . որովք և ցրուէ զթշնամիս իւր, և խռովեցուցանէ զնոսա ։ Իսկ փայլատակամբք ոչ իմանայ զանձայն փայլատակունս, այլ զահեղագոչ փայլմունս ամպոց . զորս ա̄ծ բազում անգամ արձակէ 'ի վ̄ր թշնամեաց իւրոց՝ յ̄ 'ի վ̄ր մեղաւորաց՝ առ 'ի նահանջել զնոսա 'ի չարեաց ։

Այսօք՝ ես և նախընթաց բանիւք կարեն իմացեալ լինել ըստ լամբրոնացւոյն՝ նաև գործք վրէժխնդրութեանն ա̄յ ընդդէմ սատանայի 'ի մարդանալ բանին ։ Նոյն և այլ պատիժք կամ սպառնալիք նաև շնորհք, զորս յաճախէ ա̄ծ 'ի մեղաւորս, զի դարձցին և ապաշխարեսցեն ։

Խորհրդաբար, 'ի փայլատակել զօրութեան և յայտնութեանն ա̄յ՝ մարգարէք իբրև ամպք հոսեցին զկարկուտ սպառնալեաց, և զկայծակունս լուսափայլ բանից՝ իբրև հուր կիզել զմեղս, և մաքրել զսիրտս ։ Նա 'ի լրման ժամանակին երիցս որոտաց հայր յերկնից 'ի վ̄ր որդւոյն . և ապա հոգին սուրբ ետ զձայն իւր 'ի վերնատան 'ի կարկուտ լեզուախօսութեան և 'ի կայծակունս հրաշից, և 'ի հուր շնորհաց ։ Նա առաքեաց զառաքեալսն իբրև զնետս 'ի վ̄ր իշխանութե̄ դիւաց, և ցրուեաց զնոսա . և յաճախեաց զփայլատակունս սքանչելագործութե̄ և խռովեցոյց զիշխանս, և զմեծամեծս դժի ։ Օ այսուհետև առաջի եդեալ մարգարէին՝ յայտ առնէ այժմ և զայլ սքանչելի գործս ա̄յ, որք երևեին 'ի ջուրս, և ասէ ։

ԺԶ. Երեւեցան աղբերք ջուրց . և յայտնեցան հիմունք աշխարհի .

Յորժամ պատառի երկիր 'ի սասանմանէ , և 'կամ յայլ ինչ պատճառէ , 'ի խորս անդ երեւին երբեմն աղբիւրք ջրոց . զի որովհետև 'ի խորս երկրի կան ջուրք բազումք որք անցանեն ընդ կաւեղէն խողովակս . ( որպէս և 'ի փորել 'ի խոր զերկիր՝ աչօք իսկ տեսանեմք , ) 'ի պատառիլ երկրի՝ այն խողովակք ևս բեկանին . և ջուրքն՝ որ 'ի նոսա , սաստկութեամբ բղխեն 'ի նոցանէ իբրև յաղբերէ ։ Յայսոսիկ հայելով ասէ .

Երեւեցան աղբերք ջուրց . որ թէ՝ 'ի պատառիլ երկրի՝ 'ի խորս անդ երեւեցան աղբիւրք ջուրց , և կամ առատ ջուրք ։ Եւ զի 'ի սաստիկ պատառմանէ երկրի վիհ մեծ լինի , ուր երեւին խորք , որք են իբրև հիմունք երկրի՝ և կամ հիմունք ծովի , յայն սակս յաւելու , և ասէ .

Եւ յայտնեցան հիմունք աշխարհի ։ որ 'ի պատառիլ երկրի 'ի խորութեան անդ պատառուածոյն՝ 'ի յայտ եկին ահագին տեղիք քարեղէնք և կամ հողեղէնք իբրև հիմունք՝ յորս յեցեալ կայ երկիրս ։

Այս բան կարէ հայիլ և 'ի ժամս ջրհեղեղին . զի յայտ է՝ թէ յայնժամ աղբերք ջուրց , և յորդութիւնք ծովու երեւեցան . իբր զի յայտնի եղեն՝ թէ քանի յորդ են . նոյնպէս ստորերկրեայ ջուրք՝ որք էին 'ի խորս երկրի իբրև 'ի հիմունս , յորդեալ եկին 'ի յայտ ։

Դարձեալ կարէ այս բան հայիլ և 'ի ժամս մովսէսի ( ելից . ԺԴ . 22 . ) և յեսուայ . ( Դ . 16 . ) զի յայնժամ ևս 'ի պատառիլ կարմիր ծովու և յորդանան գետոյ՝ 'ի յատակս նոցա երեւեցան աղբերք , որ տեղիք ջուրց . և հիմունք երկրի , որ խորք երկրի , և կամ ցամաքութիւն երկրի , ընդ որ անցին որդիքն Իլի . և յանցանել փարաւոնեանց կորեան ։

Զայսոսիկ յառաջ բերեալ յակոբ մծբնայ հայրապետ 'ի ճառն . ա . որքիմբ ցուցանէ զզօրութիւն հաւատոյ և զառաքինութիւն նորին . * բաժանեցան ասէ „ ջուրք հաստատ նման լերանց բարձանց . . . և „ երեւեցան հիմունք՝ որ յաւիտենից , և խորք ան-

„ գնդոց՝ որք 'ի սկզբանէ հաստատեալ կային , վաղ-
„ վաղակի ցամաքեցան . ամբարձին դրունք զգլուխս
„ իւրեանց 'ի վեր , և 'ի վեր ամբարձան դրունք՝ որ
„ յաւիտենից . և ելին եմուտ սիւն ամպոյ , և լուսա-
„ ւոր եղև ա̃մ բանակին . ելին և էանց ժողովուրդն
„ հաւատով . և եղեն դատաստանք ստուգութեան 'ի
„ փարաւոն և 'ի զօրս իւր , և 'ի կառս և յերիվարս
նորա ‖ .

Արդ որպէս ասացաք բ̃զմ՛անգամ, 'ի խօսիլ մարգարէին զայսոսիկ գիտէ յայտ առնել. թէ քանի հզօր է ա̃ծ , և զինչ գործէ յարարածս իւր . Այլ արդ՝ եթէ մարդիկ 'ի զօրաւորս ապաւինին առ 'ի փրկիլ 'ի հալածչաց , քանի առաւել արժան է ապաւինիլ յա̃ծ , որ է զօրութիւն անբաւ , և զայնպիսի ինչ գործէ յարարածս իւր՝ մի̃նչդ 'ի տարերս , որք են ահեղ և սքանչելի . Փոխաբերաբար , աղբերօք ջուրց իմացեալ լինին խորհուրդք ա̃յ գաղտնիք , ևս և բազմազիմի կատարելութիւնք նր̃ , ո̃ր է զօրութի̃ , մեծութի̃ , արդարութի̃ , մնո̃ջենաւորութի̃ եւ̃ . որք արարածովքս երևին մեզ . Իսկ հիմունք ե̃ի իմացեալ լինին ամենակարողութին ա̃յ և իմաստութիւն նր̃ որք կալեալ ունին զե̃ . ևս և կամք նորին հիմնօղք ե̃ի . որք յայտնեցան յառաջին և յերկրորդ արարչութեան .

Այլաբանօրէն՝ աղբերօք ջուրց իմացեալ լինին առաքեալքն . որք յետ մարդանալոյ բանին երևեցան և հոսեցին զջուրս իմաստութեանն ա̃յ . որովք և արբուցին զտիեզերս . Իսկ հիմունք ե̃ի իմացեալ լինին մարգարէքն . որք յառաջն իբրև թէ ծածկեալ էին հանգոյն ներքին հիմանց , և յետոյ յայտնեցան՝ ըստ 'ի յայտ գալոյ մարգարէութե̃ իւրեանց .

Բարոյապէս՝ յորժամ փայլատակէ ա̃ծ 'ի հոգիս մեր զլոյս շնորհաց իւրոց , երևին և յայտնին 'ի մեզ աղբիւրք և հիմունք տկարութեան մերոյ . Իբր զի տեսանեմք՝ թէ քանի տկար եմք 'ի բղխել զջուր բարի գործոց և 'ի հիմնիլ յայնս , ո̃ր 'ի մնալ 'ի նոսին հաստատուն . Եւ կամ ներհակ այսմ՝ ըստ լամբրոնացւոյն , երևին 'ի մեզ գործք բարիք . Իբր զի սկսանիմք գործել զբարիս . և հաստատուն մնամք 'ի նմին . Այլ թէ արդեօք այս ա̃մ , զոր ասաց մարգարէն , վ̃ն ինչ

պատճառի լինելն, եւ կամ ուստի եւ յինչ աղէտ, յայտ առնէ զինի, եւ ասէ։

ԺԶ · Ի սաստէ քումմէ տէր եւ 'ի շնչել հողմոյ բարկութեան քո։

Որ ինչ խօսեցաւ մարգարէն զտարերաց 'ի 8 համարս մինչեւ աստ, զնոյն եւս վերագրեաց եւ վերագրէ բարկութեանն այ. զի ոչ 'ի սկսանելն խօսիլ զայնցանէ՝ 'ի մէջ բերեր զբարկութիւն այ, յաւելն՝ * զի բար-
„ կացաւ 'ի վր նց ած ||. սոյնպէս եւ յաւարտելն զխօսիլն իւր զայնցանէ՝ 'ի մէջ բերէ դարձեալ զբարկութի նորա։ Որով (ոպ ասացաք 'ի վերոյ) ոչ ցուցանէ, թէ ած յիրաւի բարկացեալ իցէ 'ի վր նց. այլ՝ զայս միայն կամի յայտ առնել, թէ որովհետեւ այսպիսի գործք՝ որք 'ի հրամանէն այ լինին՝ են ահեղ իմն եւ սաստիկ, երեւին լինել գործք բարկութեան նր։ Իսկ թէպէտ լինին եւս երբեմն 'ի բարկանալոյ նր 'ի վր մարդկան, բայց հնիկօրէն պատահին 'ի պարզ հրամանէ նորին ըստ կարգի կառավարութեան տարերաց։ Իսկ զայս կամելով մարգարէն սքանչելի ցուցանել, այլաբանութբ իմն առաջի դնէ, եւ ասէ։

Ի սաստէ քումմէ տէր։ Սաստելն այ 'ի վերայ տարերաց՝ որպէս տեսանի 'ի վերոյգրելոցդ, է հրամայել նր 'ի վր նոցա ամենակարող զօրութբ իւրով։ Յայսմ հրամանէ քումմէ ասէ եղեն եւ լինին այն ամ, զոր ցարդ ասացի։ Իսկ քանզի ած բազում անգամ 'ի ձեռն հնչմանն զարհուրելի հողմոց առնէ զայն, յայն հայեցեալ՝ յաւելու։

Ի շնչել հողմոյ բարկութեան քո։ Սեր հոգւով իմնոյ ըզհողմն. ուստի 'ի Բ. Թագ. ԻԲ. գրի. * 'ի շնչելոյ հող-
„ մոց բարկութեան նր ||. որով կամի ասել, թէ այն ահագին գործք տարերաց կատարին բազում անգամ զարհուրագին հողմովք, որք յամենազօր հրամանացն այ շնչեալ՝ իբրեւ գործիք կառավարութե կամ բարկութե նր՝ ահագինս գործեն. զի է՝ զերկիր դողացուցանեն, զլերինս շարժեն, զամպս կուտեն, զջուրս ծովու յալիս կուտակեն. եւս եւ ցամաքեցուցանեն. ոպ յայտ է՝ Ելից. ԺԴ. 21. ուր ասի. * դարձոյց անդրէն (ած)
„ զծովն բռնութբ հարաւոյ հողմոյ զամ գիշերն, եւ

„ արար զծովն ցամաք . և պատառեցաւ ջուրն ||.
Այսմանօր հոգւով կարէ իմացեալ լինիլ և հոգին սուրբ, որ թէպէտև է հոգի հեզութեան և քաղցրութեան, բայց կոչի ևս հոգի բարկութեան 'ի վարիլն վրէժխնդրութեան, և 'ի սաստելն ընդդէմ ոգւոցն չարութեան, ըստ ասելոյ լամբրոնացւոյն: Այլ կամ վասն աճապարութեանն. իբր զի երբեմն այնպիսի օրինակաւ շնչէ, որպէս յայտնէ զինքն, որով երևի աճապար և սաստիկ, ինքնազօր և ամենազօր: Այլ յայս միտ երգեմք զայս տուն սաղմոսի յաւուրս տօնի հոգեգալստեան յուրբաթու և 'ի շաբաթու: Այսպիսի աճապար զօրութբ ածն փրկութիւն գտեալ մարգարէին՝ խոստովան լինի զնմանէ . և իբր թէ հռչակ հարկանելով գոչէ և ասէ:

ԺԸ. Առաքեաց 'ի բարձանց՝ և ընկալաւ զիս. ընկալաւ զիս 'ի ջուրց բազմաց:

ԺԹ. Փրկեաց զիս տէր 'ի թշնամեաց իմոց հզօրաց, և յատելեաց իմոց. զի հզօր եղեն քան զիս:

Ջուրք բազումք իմանայ զայնս, զորս կոչեաց 'ի վերոյ 'ի համարն Դ. ուղխք անօրէնութեան. որովք նշանակէին բազմութիւնք հալածչաց՝ և յանձնխութիւնք տառապանաց. յորոց փրկեաց զնա ածն. իսկ թէ զիարդ՝ ասէ:
Առաքեաց 'ի բարձանց, և ընկալաւ զիս. ընկալաւ զիս 'ի ջուրց բազմաց: Այսինքն ասել. յորժամ տառապէի ես 'ի հալածչաց իմոց և յազգի ազգի տառապանաց իբրև 'ի ջուրց բազմաց, առաքեաց տէր զօգնութիւն իւր, կամ որ նոյն է՝ ձգեաց զամենակարող ձեռն իւր 'ի բարձանց, և էառ զիս 'ի ձեռս իւր. և զերծոյց զիս 'ի ձեռաց նոցին: Այլ զայս բացայայտ ևս դնէ առաջի, և ասէ:
Փրկեա՛ց զիս տէր 'ի թշնամեաց իմոց հզօրաց. և յատելեաց իմոց, զի հզօր եղեն քան զիս: Այս բան թէպէտև է իբրև բացատրութիւն վերնոյն, բայց դնի յապառնի ժմն, որով ոչ ցուցանէ մարգարէն՝ թէ չէ՛ է փրկեալ զնա ոք, այլ թէ փրկեալ է զնա այնպիսի օրինակաւ, որով մնայ ապահովեալ 'ի թշնամեաց իւրոց՝ որպէս յայտ է յեբր''. Ուստի ոմն կամի ցուցանել զառաւել ստու-

գութիւն փրկութեան իւրոյ · և գրեթէ ասէ · յերաւի կորզեաց և փրկեաց զիս տէր 'ի ձեռաց կամ 'ի բռնութէ̃ թշնամեաց իմոց · և յայնցանէ որք հզօրացեալ էին ք̃ զիս, և մերձ էին կորուսանել զիս ·

Եւ 'ի յարեւն զինի՝ * Եւ յատելեաց իմոց · զի հզօր եղեն քան զիս ‖ · ասլին զնոյն յայտնէ · զի "յատելեաց" ասելով իմանայ զթշնամիս իւր · վ̃ն զի թշնամութիւնն յատելութենէ ծագի · Իսկ * հզօրք եղեն, կամ տատա-կացան ք̃ զիս ‖ ասելով զայն յայտնէ, զոր ասաց "հզօ-րաց" · Այլ սակայն զայս կրկնութիւնս առաջի դնելով կամի ևս ցուցանել զառաւելութիւն ատելութե̃ թըշ-նամեաց իւրոց, և զկարի իմն զօրանալ նոցա 'ի վերայ իւր · Իսկ 'ի կատարեալ ժ̃մն դնելով * հզօրք եղեն քան զիս ‖, ոչ կամի ցուցանել, թէ նք̃ յաղթեցին, այլ թէ զօրացեալ էին ք̃ զնա · և յաղթէին ևս նմա, եթէ ա̃ն չէր փրկեալ զնա 'ի ձեռաց նց̃ · որպէս յայտ է · բ̃ · Թագ · ԺԵ · 16 · և ա̃ · Թագ · իգ̃ · 26 ·

Այլաբանօրէն, այս բան և նախընթաց սորա և յա-ջորդ սորին ասին 'ի բերանոյ մարդկայնոյ բնութեան · ա̃ղ թէ եղեալ էր · առաքեաց տէր զմարմին իւր, և ընկալաւ զիս և ազատեաց 'ի ձեռաց դիւաց · առա-քեաց և զհոգի իւր ս̃բ, և նորոգեաց զիս · Որոշա-պէս առեալ կամի ասել · առաքեաց տէր զօգնականու-թիւն իւր առ իս, և փրկեաց զիս 'ի չար խորհրդոց և 'ի տագնապիչ հոգոց · Զայս եղեալ մարգարէն՝ այ-լով իմն օրինակաւ վերստին յիշէ զտառապել իւր 'ի թշնամեաց իւրոց, և զփրկել ա̃ն զնա 'ի ձեռաց նոցա, և ասէ ·

Ի̃ · Ժամանեցին ինձ յաւուր չարչարանաց իմոց · եղև տ̃ր հզօ-րիչ իմ · և եհան զիս յանդորր · և փրկեսցէ զիս տ̃ր, զի կամեցաւ զիս ·

Ասելով * յաւուր չարչարանաց ‖ իմանայ զայնոսիկ աւուրս յորս յազգի ազգի իւրոց տառապէր, և կամ նաև պատճառաւ հալածանաց թշնամեացն կայր 'ի նեղութիւնս · Եւ զի յայսպիսի աւուրս եգիտ զփրկու-թիւն յա̃յ, վ̃այ ասէ ·

Ժամանեցին ինձ յաւուր չարչարանաց իմոց · եղև տ̃ր հզօրիչ իմ · և եհան զիս յանդորր · Կամի ասել · մինչդեռ ես յիմ

տառապանս չարչարէի՝ հասին 'ի վր̃ թշնամիք իմ, և կամ այլ ես վիշտք բազումք. եհաս յայնժամ և տէր նմ յօգնութիւն. և եղև զօրացուցիչ իմ, և հաստատիչ, և եհան զիս յանդորր. զի թէ եհան զիս 'ի նեղութէ անտի իմմէ իբրև 'ի նեղ տեղւոջէ, և եդ 'ի խաղաղութեան իբրև 'ի տեղի անդորր, զի ընդարձակ, առ 'ի լինել ազատ առանց կասկածանաց և առանց երկիւղի. զի յայտ է թէ՝ որ 'ի նեղ տեղւոջէ յընդարձակն հանի, հանգիստ շնչի, և դիւրի. Զայս եղեւ մարգարէին յաւելու ասել.

Ի՛ [illegible]. Սոյին ոչ ցուցանէ՝ թէ չէ է փրկեալ (ըստ ասելոյ մեր 'ի վերոյ), այլ թէ ած փրկեալ է զնա տէր, նոյնպէս միշտ փրկեսցէ. Իսկ թէպէտ 'ի սաղմոսս ինչ զնի՝ * փրկեաց զիս ‖. և 'ի ի̃. թաղ. զնի * ազատեցոյց զիս ‖, սակայն 'ի սոսա եւս նոյն ասեութիւն է. այսինքն է եղեալ և լինելի փրկութիւն. Իսկ զի պատճառ այսր փրկութեան եղև հաճութին ած, սմին իրի յարէ զնի, և ասէ.

Օ [illegible]. կամ ած զնի 'ի ի̃. թաղ. * հաճեցաւ ը̃ իս ‖. զի թէ՝ սիրեաց զիս, և վս̃ սիրելոյն հաճեցաւ փրկել զիս. և այս ոչ վս̃ն՝ զի մարդ յիրաւի է սիրելի ած, այլ զի ած հաճի սիրել զնա, և կամ 'ի ձեռն շնորհաց իւրոց առնէ զնա սիրելի, որով և սիրէ, և վասն սիրելոյն փրկէ.

Իսկ թէպէտ մարգարէն 'ի յաջորդ համարն, և յորս զինքն 'ի մէջ բերէ զարդարութիւն և զանբծութիւն իւր՝ իբրև առիթ ինչ, որոյ վասն ած կամեցեալ իցէ փրկել զնա. բայց յայտ է թէ զայն 'ի մէջ բերէ ոչ իբրև իւր, այլ իբրև պարգև ած. և ըստ այնմ պարգևի համարձակի յիշել զայնս. Իսկ 'ի յիշելն զնոսին ոչ կամի ցուցանել, թէ ինքն չունի յիրաւի ինչ, վս̃ զի ած 'ի կամիլն փրկել զմեզ՝ ոչ կամի թէ մեք ոչ արասցուք ինչ. այլ կամի և առնէ՝ զի և մեք կամեսցուք և արասցուք՝ զոր նա կամի. * զի թէև կամիցի նա (փըրկել՝ ասէ լամբրոնացին, բայց) առանց մեր կամացն ոչ փրկիւք ‖. վասն զի՝ որպէս ասի. * որ արար զմեզ առանց մեր՝ ոչ փրկէ զմեզ առանց մեր ‖.

Սոյն այս հայի և 'ի փրկութիւնն յաւիտենական. յոր 'ի ծանանել մեզ՝ ունին ասել. հասին 'ի վր̃ մեր նեղու-

թիւնք և չարչարանք · այլ փրկեաց զմեզ տէր · և եհան զմեզ յանդորր՝ թօթափելով 'ի մէնջ զվիշտս մեր · Սոյն զայս գեղեցիկ իմն նմանաբանութեամբ առաջի առնէ սարգիս շնորհալի 'ի մեկն · ա · պետ · ե · 9 · Ճառ ժբ · և խօսելով 'ի գլխոց առաքելոյն առ հաւատացեալսն՝ ասէ · * Որ օրինակ ցօղունն՝ ցորենոյն սնուցիչ է, նմանապէս և չարչարանքն ձեզ · արդ 'ի մանրել զցօղունն կամնասայլիւ , զպտուղն ժողովեն 'ի շտեմարանս , և զյարդն 'ի բաց ընկենուն , այսպէս և դուք 'ի համբերութեան ձերում (քս 'ի հանգչելն մահուամբ ) զպտուղն չարչարանաց առեալ ընդ ձեզ տանիք · իսկ յարդատեսակ չարչարանքն աստանօր մնան ||·

Բայց առ գիտելի է, զի այսօրիկ երեք տունք սաղմոսիս և յաջորդք սը հայելով 'ի խորհուրդ փրկութե ազգի մարդկան՝ կարեն յերկուց գլխոց ևս առնլ · մի՝ 'ի գլխոց մարդկութեանս · և մի ևս 'ի գլխոց քսի՝ ած որում էր մարդ · այլ յոր դէմս և առիցի, կամ յոր գլխոց և մատուցեսցի՝ նոյնն մեկնութբ մեկնի , այսչափ բնչ ևեթ տարբերութբ , զի եթէ իբրև 'ի գլխոց քսի ասացեալ լիցի , զանկատարութիւն բանիցն սպառ է 'ի բաց առնուլ , և ըստ կատարելագունիցն ընծայել նմա · Յարմարական մեկնութբ սոյն այս առի և 'ի բերանոյ ննջեցեալ քրիստոնէի · որ աղօթիւք հաւատացելոց և երկիւղածաց ածն և պատարագօք զերծեալ 'ի հրոյ և յայլոց ժմկաւոր պատժոց հանդերձելոյն՝ ելանեն յանդորր , և մտանեն 'ի ժառանգութիւն արքայութե ուղ տեսանի 'ի շարականի 'ի կարգս ննջեցելոց · յոր միտ դրէ ծործորեցին 'ի մեկն · մատ · ժբ · 32 · որք ննջեցին ասէ 'ի քս * 'ի ձեռն ասա պատարագացն և ողորմութեանցն յիշատակաց՝ զերծանին 'ի հրոյն , և մտանեն յարքայութիւնն · և այս՝ նախ քն զհամօրէն դատաստանն և զկատարած աշխարհիս ||· Իսկ արդ քանզի եղ մարգարէն , թէ ած եղև ինքեան հզօրիչ և փրկիչ , առաջի առնէ այժմ և զայն՝ թէ ած արար նմա զայս իբրև զհատուցումն ըստ արդարութե և ըստ ամբծութեան իւրոյ · վսյ ասէ ·

խա · Հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում · ըստ ամբծութեան իմում հատուսցէ ինձ :

Ո՞ր բարիք՝ թէ արդարութիւնք իցեն , և թէ անմեղութիւնք՝ թէպէտև յայս են · բայց այնչափ է առատութիւնն այ , մինչև վն այնց բարեաց եւ՝ զոր տայ մարդոյ , հատուցանէ նմա և զայլ բարիս · յոր միտ կարէ իմացեալ լինիլ այն , որ աս՛ի յովհ · ա · 16 · * առաք շնորհս փոխ շնորհաց ‖ : Ըստ այսմ մնայ յառաջ բերելով մարգարէին զայս բանն , ՚ի մէջ մատուցանէ զարդարութիւն և զամբծութիւն իւր ոչ իբր տիրապէս պատճառ հատուցմանն , այլ որպ ասացաք այժմ իբրև առիթ ինչ · վն ոչ ասէ՝ հատուսցէ ինձ վն արդարութե իմոյ , այլ՝ ըստ արդարութեան իմում · որով կամի ասել , թէ ած յետ տալոյն զշնորհս իւր ինձ , և հաճելոյն ընդ իս՝ տեսեալ յիս զարդարութիւն և զամբծութի որ ՚ի ձեռն շնորհաց իւրոց , ըստ չափու կամ ըստ յարգի այնր արդարութե և ամբծութեան՝ հատուսցէ ինձ աստ և ՚ի հանդերձեալն : Իսկ թէպէտ այսպիսի ասացուածք զր ինքեան մնացեալ երևին լինել պարծողական , սակայն աստ ոչ է այնպէս · զի որպէս յայտ է յասացելոցս , մարգարէն խօսի աստ հայելով ՚ի սկզբնապատճառն արդարութե իւրոյ , որ ՚ի յած · և կարգէ զբան իւր առ նա՝ վասն ճանաչելոյ վնա տր իւրոյ ամբծութեան : Այլ արար և եզեկիա թագաւոր յասելն · * յիշեա՛ զիս տէր , զի գնացի առաջի քո արդարութբ՝ ճշմարիտ սրտիւ · և զհաճոյս առաջի քո արարի ‖ · եսայ · լը · 3 : Ըստ այսմ արար և եսթեր · ժդ · 18 · և Նեեմի · գ · եզր · ե · 15 · և 19 : Իսկ թէպէտ յիրաւի ևս է այս , թէ ոչ ոք արդարանայ առաջի այ · սաղ · ճխբ · 2 · բայց այն իմացեալ լինի զր բնական կարողութե , և ոչ ըստ շնորհաց · ապա թէ ոչ՝ զիա՞րդ բազումք կարացին արդարանալ առաջի նորա : Արդեւն զր այսմ արդարութեան որ ՚ի շնորհաց , գիտէ խօսիլ աստ մարգարէն՝ յասելն :

Հատուսցէ ինձ տր ըստ արդարութեան իմում , ըստ ամբծութեան իմում հատուսցէ ինձ : Արդարութի ասելով իմանայ նախ՝ զարդար գործս · և եկդ՝ զվարկն ընդ այլս արդարութբ : Այնպէս և ամբծութիւն ասելով իմանայ նախ՝ զանարատ և զմաք լինելն ՚ի գործոց մեղաց · և եկդ՝

զվարկին ընդ այլոց առանց անխտրութեան ։ Եւ կամ եր-կրկնումբք այսոքիւք , զի արդարութիւն եւ անբծութեամբ իմանայ զկրկին սրբութիւն՝ զսրտի եւ զգործոց ․ ըստ որոյ 'ի 25 , համարն փոխէ անբծութեան՝ դնի սրբութիւն ձե-ռաց , որ նշանակէ զսրբութիւն գործոց ։

Արդ՝ ողորմեան ած է արդար եւ անբիծ , եւ զարդա-րութիւն սիրէ , ըստ այսմ արդարութեան եւ անբծութեան ասէ հատուսցէ ինձ , զի թէ տացէ ինձ նախ զբարիս ըստ ար-ժանաւորելոյ արդարութեան իմոյ , զոր ունիմ շնորհօք նորա ․ եւ արասցէ եւս ինձ բարի առաջի իւր եւ առաջի մարդկան ․ եւ եկդ՝ թէ ըստ արժանաւորելոյ անբծութեան իմոյ՝ որ է 'ի շնորհաց նորա՝ պահեսցէ զիս 'ի ներքուստ եւ արտաքուստ 'ի վտանգից հոգւոյ եւ մարմնոյ ։

Աստանօր բառդ ըստ՝ ոչ հայի յորքանութիւն գործոց ար-դարութեան եւ անբծութեան , այլ յորակութիւն նոցին ։ Եթէ մեծ իցէ գործն՝ առանց ած այլին սիրոյ ոչ է վարձա-տրելի ըստ արդարութեան եւ ըստ անբծութեան ․ իսկ եթէ փոքր ինչ իցէ գործն՝ միացեալ ած այլին սիրով վարձատրե-լի է ըստ արդարութեան եւ ըստ անբծութեան ։ Փոքր գործ էր , զոր արար դաւիթ յոչ ըմպելն զջուրն բեթղեհեմի ․ բայց 'ի նուիրելն սիրով՝ մեծ համարեցաւ ( ա ․ մնաց ․ ժա ․ 18 ։ ) Այնպէս է եւ 'ի հակառակն 'ի պատուհա-սել ․ փոքր ինչ էր զոր արար մեղքող 'ի ծաղր առնելն անդ ընդ միտս իւր զկաքաւումն դաւթի ․ բայց մեծ հա-մարեցաւ , որով եւ ամլացաւ մինչեւ 'ի մահ ( բ ․ թագ ․ զ ․ 20 = 23 ։ ) եւ այսու ցուցանիւր՝ թէ երբեմն վն փո-քու յանցանաց ամենայն մարդ 'ի բարեգործութիւն եւս եւ յաղօթս ։ Աստի զինչ եւ իցէ հատուցումն եթէ վար-ձուց իցէ եւ եթէ պատժոց՝ ըստ որակութեան գործոյն չարի ։

Այլ գիտելի է՝ զի յասելն աստ հատուսցէ՝ ոչ ցուցանէ զապագայ հատուցումն միայն , այլեւ զանցեալ , ըստ ըղձմ իւրոց եւ ըստ բաղձանացն փրկութեանց ։ Աստի եւ 'ի բ ․ թագ ․ 'ի միումն դնի յանցեալն , եւ 'ի միւսումն յապառնին ․ * հատոյց , ասէ , ինձ տէր ըստ արդարութեան իմում , եւ ըստ սրբութեան ձեռաց իմոց հատուսցէ ինձ տէր ‖ ։ Այնպէս է իմանալ եւ 'ի յաջորդսդ , յորս 'ի համարս ինչ խօսի մարգարէն յապառնին , եւ 'ի համարս ինչ 'ի ներկայն , եւ յայլս եւս 'ի կատարեալն ։ Եւ որ աստ դնի յապառ-

նին, 'ի բ̃. թագ. և յայլ թարգմանութիս ուրեք ուրեք դնի 'ի կատարեալն, և ուրեք յապառնին։ Իսկ որ աստ դնի 'ի կատարեալն, 'ի բ̃. թագ. և յայլ թարգմանութիւնս դնի ուրեք յապառնին, և ուրեք 'ի կատարեալն։ Որովք ցուցանի, թէ բանք այսր սաղմոսի հային թէ յապագայն, և թէ 'ի ներկայն։

Բ. Եւ եթէ այս բան հայեսցի 'ի հատուցումն վարձուց որ 'ի հանդերձեալն, յոր ժմկ և դիցեն բայքդ ցուցանեն զստուգութիւն և զհաստատութիւն հատուցմանն, զոր Ած̃ ունի հատուցանել ծառայից իւրոց ըստ արդարութեան և ը̃ ամբծութե̃ նց̃. յոյր սակս և կրկին դնէ զհատուսցէն. 'ի ցուցանել, թէ հատուցումն այն ոչ է ընդ տարակուսանօք՝ որպ̃ թէ եղեալ էր, հատուցումն զոր առնեն մարդիկ երկրաւորական է, զի կամ ոչ առնեն, և կամ նուազ հատուցանեն. իսկ հատուցումն Այ̃ է աներկբայ և անչափ։ Զայս խորհելով փլորոս ախոռապետ՝ Թէոդոբերտոս թագաւորին գաղղիոյ, և դնելով 'ի կշիռ՝ թէ զինչ վարձս ունի տալ ինքեան թագաւոր իւր, և զինչ թգ̃րն երկնաւոր, եթող զն̃առ 'ի ծառայել նմ̃, և շինեալ վանք մի՝ եմուտ անդր. և առաջի թգ̃րին և իշխանաց նր̃ զգեցաւ զգեստն կրօնաւորական. յորմէ շարժեալ բզ̃մ իշխանք՝ ինքեանք ևս հետևեցան նմա. խորհելով զնոյն բան նորա՝ թէ զինչ ունի հատուցանել երկրաւոր թգ̃ւորն. և զինչ թգ̃րն երկնաւոր։ Յայս խորհուրդս էր և դաւիթ. վ̃յ և զուն գործէր կեալ ըստ հաճոյս նր̃ և ոչ յետնիլ 'ի ծառայութէ̃ նորին. զորև յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

ԻԲ. Զի պահեցից զճանապարհս Տն̃. և ոչ ամպարշտեցայց յԱյ̃ իմմէ։

Առաջին հատուած այսր բանի՝ այն է. * Զի պահեցից զճանապարհս Տն̃ ||, հայի յայն՝ զոր ասաց 'ի նախընթաց համարն. * հատուսցէ ինձ տէր ը̃ արդարութեան իմում ||։ Իսկ երկրորդ հատուածն, այն է՝ * ոչ ամպարշտեցայց յԱյ̃ իմմէ ||, հայի յայն՝ զոր ասաց 'ի նմին. * ըստ ամբծութե̃ իմում հատուսցէ ինձ տէր ||։ զի պահմամբ ճանապարհի Տն̃ նկարի 'ի հոգին արդարութիւն. և յոչ ամպարշտիլ յԱյ̃ ներգոյանայ ամբծու-

Թիւն. Յայտնիկ ակնարկելով կարգէ աստ մարգարէն զբան իւր յասելն.

Զի պահեցի զճանապարհս Տն. և ոչ ամպարշտեցայ յԱյ իմմէ. Կամի ասել. որովհետև ըս արդարութե իմում հատուցանէ ինձ Տէր, ես ևս պահեցից զարդարութիւնս, զոր կոչէ ճանապարհս Տն. որով և խնամոյ զօրէնս նր. Եւ դարձեալ՝ որովհետև ըստ ամբծութե իմում հատուցանէ ինձ Տէր, ոչ առից յանձն իմ զբիծ ինչ ամպարշտութե. ուստի * ոչ ևս ամպարշտեցայց յԱյ իմմէ ‖. զի ոչ ապստամբեցայց յԱյ, և կամ ոչ հեռացայց յԱյ իմմէ՝ գործելով զամպարշտութի ինչ. և կամ ըստ լամբրոնացւոյն սոյն խոստանայ ոչ թերի գտանիլ 'ի հաճոյս Այ. Եւ զպատճառն առաջի դնէ ասելով.

ԻԳ. Զի ամենայն իրաւունք նորա առաջի իմ են. զարդարութիւնս նորա ոչ 'ի բաց արարի յինէն.

Իրաւունք և արդարութիւն ասելով խնամոյ զայն, զոր կոչեաց 'ի վերոյ՝ ճանապարհս Տն, զի են օրէնք Այ. զի մարգարէն բզմ ուրեք՝ մանաւանդ 'ի սաղ. ՃԺԸ. զօրէնս Տն կոչէ ճանապարհս, իրաւունք և արդարութի. Երդ՝ որովհետև ասաց և խոստացաւ 'ի վերոյ պահել զճանապարհս Տն, աստ ցուցանէ՝ թէ զիա՞րդ պահէ, վասն զի միշտ առաջի իւր են նորին. զի 'ի միտս իւր. յոյր սակս իսկ ասէ.

Զի ամենայն իրաւունք նր առաջի իմ են. զի ամ օրէնք նր հանապազ 'ի միտս և 'ի յիշողութեան իմում են. Եւ զի այսպիսի հանապազորդեան յիշումն օրինացն Այ է 'ի մանաւոր խնամոց նորա, վասն նորա վերագրէ զայս, և ասէ.

Զարդարութիւնս նորա ոչ 'ի բաց արարի յինէն. Կամի ասել. ոպ յայտնեաց ինձ զարդարութիւն իւր՝ զի զօրէնս իւր, այնպէս և յետ յայտնելոյն ոչ հեռացոյց 'ի մտաց իմոց զյիշատակ նր, մինչ այնպիսի ժմկի և այնպիսի առիթս, յորս պարտ էր ինձ յայն խորհիլ, և զայն կամիլ. Եւ կամ այլազգ ևս, իբր թէ՝ զներգործութի արդարութե իւրոյ կամ զարդար վրէժխնդրութե իւր եցոյց ընդդէմ թշնամեաց իմոց 'ի ժմկի հալածանաց. և սոյնն այսու ոչ 'ի բացեայ արար յինէն զարդարութի

իւր քն՟ զպաշտպանութիւն իւր. եւ այս եղեւ գործ արդարութեան նր՟։

Բազում մեկնիչք բառիւս "իրաւունք" իմանան աստ զվարձս, զորս տայ ած՟ արդարոց, եւ զպատիժս՝ զորս տայ մեղաւորաց. եւ կամ եւս զխոստմունս այ՟ եւ զսպառնալիս նորա. եւ բառիւս արդարութիւն՝ իմանան զարդար դատաստանն այ՟։ Եւ ըստ այսմ կամի ասել մարգարէն. խոստումն այ՟ եւ սպառնալիք նր՟ միշտ առաջի աչաց իմոց են. եւ արդար դատաստան նր՟ նկարեալ է ՚ի միտս իմ։ Իսկ ը՟ս լաւմբ". արդարութբ՟ եւ իրաւամբ իմացեալ լինի աստ քս՟, որ եղեւ արդարութիւն մեր եւ սրբութի՟. վարդան զհոգին ասէ մարգարէութն՟, որ մնաց ՚ի նմա կամ առաջի նր՟։ Ընդ որ հաճեալ եւ հաւանեալ մարգարէին՝ հետեւեցուցանէ եւ ասէ։

ԻԴ. ԵՂԷՑ ԵՍ ԱՆԲԻԾ ԸՆԴ ՆՄԱ. ԶԳՈՒՇԱՑԱՅՑ ՅԱՆՕՐԷՆՈՒԹԵՆԷ ԻՄՄԷ։

Մարգարէն ՚ի մտածելոյ զօրէնս այ՟՝ որ յորդորիչ է յանբիծ վարս՝ զորմէ խօսեցաւ ՚ի նախընթաց համարն. եւ ՚ի խորհելոյ զօգուտ այնր անբծութեան վարուց՝ որ է հատուցումն վարձուց, յայսմանէ յղացեալ յինքեան զփափագ ստանալոյ զնոյն, ցուցանէ աստ զցնծալից բերկրութիւն իւր յայսն՝ յասելն։

ԵՂԷՑ ԵՍ ԱՆԲԻԾ ԸՆԴ ՆՄԱ. ԶԳՈՒՇԱՑԱՅՑ ՅԱՆՕՐԷՆՈՒԹԵՆԷ ԻՄՄԷ։

Այսինքն թէ՝ որովհետեւ առաջի իմ են օրէնք այ՟, եւս եւ խոստմունք եւ սպառնալիք նորա, յայնս հայելով, եւ ը՟ս նոցին վարելով՝ եղէց անբիծ ը՟ նմա։ Իսկ բառդ անբիծ՝ կրկնակի կարէ նշանակել. մի՝ փոխ բառիս՝ աննենգ եւ հաւատարիմ՝ չունելով զբիծ ընդդէմ հաւատարմութեան. եւ ը՟ս այսմ "ը՟ նմա" դնելով՝ կամի ասել. որպ՟ նա եղեւ ինձ անբիծ եւ հաւատարիմ յօրէնս եւ ՚ի խնամս իւր. (եթէ զի առանց իրիք բծի ետ ինձ զօրէնս եւ զշնորհս ՚ի պահել, եւ առանց պակասելոյ եցոյց ինձ զխնամս իւր,) սոյնպէս ջանացայց եւ ես լինել նմա հաւատարիմ եւ անբիծ. եւ կամ փոխադարձեալ՝ ես եղէց նմա հաւատարիմ, որպ՟ զի եւ նա լիցի ինձ հաւատարիմ, ամբողջ հատուցանելով ինձ զվարձս։ Երկրորդ կարէ նշանակել փոխ բառիս անմեղ կամ առանց բծի մեղաց, որ է ասել ո՟ջ եւ կատարեալ, ըստ որոյ այս

քան հայր յայն զոր ասաց ած · ղևտ · Ի · 7 · * սրբեսջիք և եղիջիք սբ, զի սբ եմ ես տէր ած ձեր ‖ · և տէրն ասէ 'ի մատ · Ե · 48 · * եղերուք դուք կատարեալք, որպ և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է ‖ ։ Եւ Ը այսմ յաւելլով մարգարէին զբառդ "Ը նմա" կամի ասել · առանց մեղաց եղէց առ ած, կամ առանց բծի մեղաց կեցից Ը նմա, կամ թէ այնպէս պահեցից զիս, զի մի՛ բիծ ինչ մեղաց յարեսցի յիս, և պատուոր ցուցցէ զիս առաջի նորա ։ Մանաւանդ գարշելի բիծն փափաշոտութե · զորմէ 'ի մասնաւորի պատուիրէ ած ասելով · * և եղիցի բանակն քո սբ, և ոչ երևեսցի 'ի միջի քում աղտեղութի ‖ · Բ · օրին · իգ · 14 · որով բարոյապէս նշանակի աղտեղութի փափաշոտութեան · զորոյ և զնշմարանսն ծածկել հրամայեաց · * ցից լինիցի, ասէ, զգօտւոյ քումմէ ‖, 'ի փորել և 'ի բրել զհող, և ծածկել ըզհետս և զնշանս աղտեղութե · (Բ · օր · իգ · 13 ։)

Օսոյն զայս պահանջէ և հանգամանք բանական հոգւոյն ըստ ազնուականութեն · զի ազնիւ իրք ամբըծութե պահին, և զգուշութե խնամին · որպ խորան սբ, ակն պատուական, զգեստ մեծագին, ևն · արդ հոգին է խորան այնպիսի, յորում բնակի ած · և ակն այնպիսի, որոյ գին ոչ գտանի յարարածս · ևս և ըզգեստ այնպիսի՝ զոր ած ախորժի զգենուլ ։ Եւ թէպէտ առաջի այ նուաստ և անարգ իմն է հոգին, բայց որպ մեք առ 'ի յայտ առնել զփառաւորութիւն անձանց զգենումք զդիպակեղէնս և զասուեղէնս և զմորթեղէնս, ևն, որք անարգ իմն են զի են բերք անբան կենդանեաց, որդանց, խոտոց, հողոյ, ևն, սոյնպէս առնէ և ած ընդ հոգիս, առ 'ի ցուցանել նոքօք զփառս իւր ։

Արդ որովհետև այսպիսի ինչ է հոգի մեր՝ պարտ է մեզ ամի ամբիծ և անարատ պահել զնոյն յա և իցէ մեղաց ևս և 'ի փոքունց · զի յազնիւ իրս փոքր բիծն ևս յոյժ երևեցուցանէ ։ Տիղմ մածեալ յոտս՝ ոչ տըգեղացուցանէ · իսկ յերեսս՝ կարի իմն զզուեցուցանէ · սոյնպէս և արատ ինչ մեղաց մածեալ 'ի հոգին, մանաւանդ 'ի հոգիս հաւատացելոց · զի բիծք մեղաց 'ի հոգիս անհաւատից իբր յոտս կռուելով ոչ այնչափ տգեղ ցուցանեն · իսկ 'ի հոգիս հաւատացելոց իբրև

յերեսս յարելով կարի խիստ զզուելի կացուցանեն ։ Այսմ իրի պիտոյ է զզուշութիւն մեծ առ 'ի պահելոյ զհոգիս մեր 'ի մեղաց եթէ 'ի մեծաց և եթէ 'ի փոքունց . որպէս էր զզուշութիւն մարգարէին . ըստ որում և վկայէ ասելով ։

Զգուշացայց յանօրէնութենէ իմմէ ։ Հնգապատիկ մեկնի այս բան՝ հայելով 'ի բառդ "իմմէ" . մի՝ ըստ ոչ բծաւորելոյ յանօրէնութէ . յոր միտ կամի ասել . յորմէ տեսանել իմում զանօրէնութիւն իմ՝ յառաջագոյն զզուշացայց , ( որպէս դնի ՟Բ . Թագ . ) զի մի գործեցից զգործս իմ անօրէնութեան և բծաւորեցայց նովաւ . որպէս և գործեցի երբեմն յանզգուշութէ կալով ։ Եւ ըստ այսմ "իմմէ" ասելով՝ յայտ առնէ , թէ 'ի գործել մարդոյ զանօրէնութիւն՝ ինքն լինի պատճառ այնմ , և իւր լինի յանցանքն ։

Երկ՝ մեկնի որ սրբելոյ 'ի բծէ անօրէնութէ . որպէս թէ ասէր . ամ ջանիւք ջանացայց սրբիլ յանօրէնութենէ զոր գործեցի , և զիմ արարի . և այնու լինել արդար և սրբեալ , և ընդունիլ յայ վձ այնր զհատուցումն ըստ խոստմանց նր . զորմէ խօսի 'ի յաջորդ համարն ։ Երր՝ մեկնի որ զգուշանալոյ յառիթից անօրէնութեան . որպէս թէ ասացեալ էր . զգուշացայց յա՛ և իցէ առթէ՝ որ կարէ ածել զիս յանօրէնութի , և մի հայեցայց յայն իբրև յայնպիսի ինչ որ իցէ իմ ։ Եթէ փոքր իցէ առիթն՝ յոչ զգուշանալն մեծանայ . եթէ հեռաւոր իցէ՝ յանփոյթ լինելն լինի մերձաւոր . զի փոքրն առ մեծն յօժարեցուցանէ , և որ հեռաւորն է՝ մերձենայ , և բռնանայ ։ Այսմ իրի նախնի նազովրացիք , որոց մեղք էր ըմպել զգինի , ժուժկալէին յազոխոյ , զի մի յօժարեսցին ուտել զխաղող . և յուտելն զխաղող՝ յօժարեսցին ըմպել զգինի ։ Նյս զզուշութի առաւել ք զառաւել պիտոյ է 'ի նիւթ ողջախոհութէ , մինչ 'ի կենցաղիլն ընդ կանայս , հեռի կալով 'ի նցէ . վասն մերձեալ 'ի հուր՝ այրի , և այր մօտ կացեալ 'ի կին՝ ոչ մնայ անկէզ . ապա ամ արթնութբ պարտ է զգուշկալ ։ Պտուղք դիզեալք՝ հպմամբ նեխին . և ապակեղէնք շօշափեալք 'ի միասին՝ վտանգին 'ի բեկանիլ . քանի ևս 'ի կալ 'ի միասին արուի և իգի ։ Մի՛ դներ զաղ հուպ 'ի ջուր՝ խոնաւանայ և հալի . զի որպէս բարուք

տասցդ ձգնաւոր ումն. աղ 'ի ջրոյ գոյանայ. և մերձեալ 'ի ջուր՝ հալի. սոյնպէս և այր 'ի կնոջէ գոյանայ, և 'ի մերձենալն 'ի կին՝ ապականի: Այս աւիթ 'ի վեր է ք՟ զա՟մ աւիթս, մեծ է և հզօր. ապա առաւել քան զա՟մ

պարտ է զգուշանալ աստի:

Որդ՝ մեկնի ըստ հրաժարելոյ 'ի փոքունց. և ա՟յ այսմ բառդ խմմէ՝ հայի 'ի մեղս փոքունս ա՟ծ 'ի ներելիս. մահացու մեղք օտար համարին մեզ. ոչ են մեր, այլ մահացուցիչ մեր. իսկ ներելիք և փոքունք՝ մեր ասին, զի ոչ պակասին 'ի մէնջ. այլ իբրև փուշ և տատասկ բուսանին 'ի մեզ հանապազ. սմին իրի դնէ "զխմմէն". զգուշացայց ասէ յանօրէնութենէ փոքունց՝ որք յիմն բուսանին, և ածեն 'ի մեծն իբրև յօտար. ոչ հայիմ ասէ 'ի գոլ նոցա փոքր, այլ 'ի վնաս նոցին մեծ:

Փոքրն յորժամ արհամարհի՝ ոչ մնայ փոքր. այնչափ մեծանայ՝ որչափ փոքր համարի: Փոքր մի հուր հրդեհ մեծ արկանէ. դոյզն վառօդ 'ի հրացանի եդեալ ահեղս գործէ. փոքրիկ աւազիկ մի յաչս անկեալ՝ արտասուեցուցանէ. նուրբ ծայր ասղան մերձեալ 'ի սիրտ սպանանէ. նուրբ հեր գլխոյ կախէ զմարդ ըզծառոյ (Բ. Թագ. ԺԸ. 9.) նուրբ ծայր տտան մեղուի ցաւեցուցանէ. նուրբ խայթուած կարճի չարիս հասուցանէ. փոքրիկ ձուկն եքինէիս կալեալ զնաւ լի բեռամբ՝ վարեալ 'ի հողմոյ՝ ընկըրկեալ նահանջէ. * փոքր մի խմոր զա՟մ զանգուածն խմորէ ||. (Ա. Կոր. Ե:) Պատմի թէ ձանձ մի վարեալ 'ի նէապօլիս՝ գոլով թունաւորեալ ժանտիւ ապականեաց

զերկիրն:

Այսոքիկ են օրինակք մեղաց ներելեաց. որք թէպէտև փոքունք են, բայց բազմապատիկ են և վնասակարք. * մի արհամարհեր զնոսա՝ զի փոքունք են,
,, այլ երկեր՝ զի յոգունք են ||. այս երկեր ոչ 'ի մեծութենն, այլ 'ի շատութենն: Սակաւ ջուր է՝ որ մտանէ ընդ փոքրիկ ծակ նաւուն, բայց շատութեն ընկղմէ ըզնաւն. առ զառաջս նորա, զի մի նա առցէ զքեզ. փակեա՛ զի մի յափշտակեսցէ. ջանա՛ յաղթել, և ոչ յաղթիլ. եթէ 'ի փոքունց յաղթիս, որչափ ևս 'ի մեծաց, ո՞չ ապաքէն վատութիւն է 'ի տկար և 'ի փոքր թշնամւոյ յաղթիլ: Ներելի մեղք թէպէտև 'ի կողմանէ

իւրեանց փոքր են, բայց զի են իւրք ընդդէմ օրինաց՝ են մեծ. ուստի ասի թէ փոքրիկ չարն մեղաց է մեծ քան զամենայն չար պատժոց. զի այն է անարգանք այ. իսկ սա անարգանք մարդոյ: Դու որ այդքան անփոյթ ես արհամարհել զհրամայսն այ թեթեւօք, ած զինչ փոյթ ունիցի զքեն մեծամեծօք. որպէս վարիս՝ այնպէս վարի նա ընդ քեզ. և * ընդ թիւրսն ,, թիւրեսցիս ||. սաղ. ժէ. 27: Ներելի մեղք ոչ զրկեն արդարև զմարդ յարքայութենէ. բայց նոքօք ոչ լինի մտանել յարքայութիւն. ուստի և մինչեւ վն միոյ ներելի մեղաց ոչ եմուտ յերկիրն աւետեաց. յայս օրինակ բորոտք ոչ կարէին մտանել 'ի տաճարն (բ. թագ. ե. 8:) Սմին իրի և տրն մեր նախ լուաց զոտս աշակերտացն 'ի փոշեաց՝ որք օրինակէին զներելի մեղս. և որ հրաժարեցաւն 'ի լուացմանէ՝ ասաց ցնա քս. * եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդ իս ,, մասն ||. յովհ. ժգ. 8: Որչափ չար են ներելի մեղք, մինչ զի 'ի մահուչափ մեղօք մեւելոյն՝ յաւիտենական պատժովք պատժին. վոյ զգուշացայց ասէ յայսպիսեաց:

Հինգերդ՝ մեկնի ըստ ոչ կրկնելոյ 'ի գործս անօրէնութեան. յոր միտ բառդ "խմէ" հայի 'ի յատկացուցանն մեղաց 'ի ձեռն կրկնութեան. որպ թէ ասէր. յետ քաւելոյ յանօրէնութենէ՝ զգուշացայց՝ զի մի ևս կրկնեցից զնոյն և ինձ յատկացուցից, և արարից իմ: Այս է արդարև ամենահարկաւոր զգուշութիւն, զոր պարտ է ունել ամի այնոցիկ որք դառնան 'ի մեղս. ապա թէ ոչ՝ չար ևս լինի վիճակ նոցա քան զառաջինն. չար է արդարև մեղանչելն, բայց չարագոյն է կրկին մեղանչելն, և ամենաչար՝ արդարանալ 'ի մեղաց, և վերստին 'ի նոյն դառնալ: Հիւանդն եթէ յառողջանալն անդ՝ դարձցի 'ի նոյն հիւանդութի (որ թէ իւզնիւկ արասցէ) տկարանայ յոյժ, և վտանգի առ 'ի մահ: Բազուկ խորտակեալ և հաստատեալ, եթէ երկիցս և երիցս ևս խորտակեսցի 'ի նմին տեղւոջ, դժուարուղղելի լինի. այսպէս իմն և զխորտակմանէ հոգւոյն մեղօք, և զբժշկութենէ նորին:

Ի դառնալդ 'ի մեղաց արդարև թողու ած. բայց ծանիր ևս, զի որչափ թողանի մեղքն, այնչափ և դժուա

րանայ թողութիւնն ։ Որչափ թողու քեզ Ած , այնչափ բարերար գտանի , և դու որչափ կրկնես՝ այնչափ չարարար գտանիս առ բարերարն քո ։ Եթէ ոք ածցէ ապտակ թագաւորի՝ մեծ է անօրէնութիւն . ապա եթէ ներեսցէ նմա թագաւորն , և մեծացուսցէ ևս փառօք , և նա դարձեալ ապտակեսցէ , յոր մեծութե չափ հասանէ անօրէնութիւն նր ։ Ած հաշտի է մարդոյ ապաշխարութեամբ , և գայ առ նա . և վանելով 'ի նմանէ զսատանայ՝ ինքն բնակի 'ի նմա . որով և ազնուանայ մարդ . իսկ 'ի կրկնել մարդոյ զմեղս՝ արտաքսէ յիւրմէ զԱծ , և վերստին մուծանէ 'ի ներքս զսատանայ , և բնակեցուցանէ զնա անդ , որով և յանհնարինս վատթարանայ ։

Յապաշխարել մարդոյ՝ ազատի 'ի ձեռաց սատանայի և անդորրանայ . եթէ անզգոյշ կայցէ՝ կրկին ըմբռնի և թշուառանայ ։ Տեսանեմք՝ զի կենդանիք միանգամ որսացեալք յորոգայթս՝ 'ի զերծանելն ոչ ևս ըմբռնին 'ի նոյն . ապա քանի՛ ևս պարտ է մարդոյ ըզգուշանալ՝ զի մի՛ վերստին ըմբռնեսցի 'ի մեղս , և անկցի 'ի ձեռս սատանայի . յորմէ դժուարին լինի այնուհետև զերծանիլ ։ Պարտաւոր փախուցեալ 'ի բանտէ՝ եթէ դարձեալ ըմբռնեսցի , բազում զգուշութբ պահի 'ի բանտի՝ զի մի՛ միւսանգամ փախիցէ . այսպէս պատահի և այնմ որ փախուցեալ 'ի բանտէ մեղաց՝ վերստին ըմբռնեսցի 'ի մեղս . զի այնուհետև ամենայն զգուշութեամբ պահէ զնա սատանայ՝ զի մի՛ կրկին ևս փախիցի . Մինչդ թէ երթայ և առնու ընդ իւր զայլ ևս եւթն այսս չարութե , և պահապան կարգէ 'ի վր նր ( մատ . ժբ . 45 . ) , և եթէ դարձեալ փախնուցու , և դարձեալ ըմբռնեսցի , կուտէ այնուհետև զգունդս դիւաց 'ի վր նորա , և արկանէ զնովաւ ըզնիգս յուսահատութեան , մինչև խստանալ մեղուցելոյն և քարանալ . որոյ տարացոյց կինն ղովտայ 'ի դառնալն յետս քարացաւ . 'ի մեղս դարձար՝ քարացար . և այնուհետև ոչ ևս կարես ճշմարտապէս զղջալ . գնաս անբաւական զղջմամբ 'ի խոստովանութիւն , և շաղախիս դարձեալ 'ի նոյն անօրէնութի բարդելով զմեղս 'ի վերայ մեղաց ։ Գիտեմ՝ զի դու ապաւինեալ ես յողորմութին Այ , որ խոստանայ թողուլ

եօթանամենկի եօթն և բիւրապատիկ ես. և սակայն ողորմութիւնն Աստուծոյ ոչ կարէ լինել քեզ գործիք անօրինելոյ։ Քաղցրունի ողորմութեան Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն յորդորէ, և երկայնմտութեամբ դարձի քում սպասէ. իսկ դու փոխ դառնալոյ առ նա՝ ՚ի նոյն չարիս խստանաս. և որում ներելոյ արժանի գտանիցիս (Հռովմ. Բ. 4 ։ Եբր. Զ. 4 ։) Զայս լսելով զգաստացիր եղբայր, և փոխ ՚ի մեղս յարելոյ՝ յաճախեա ՚ի գործս արդարութեան և սրբութեան. և հատուսցի քեզ յԱստուծոյ հատուցումն բազում, ըստ որում յուսայր և մարգարէն. որոյ վասն ասէ։

ԻԷ. Հատուցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում. ըստ սրբութեան ձեռաց իմոց առաջի աչաց իւրոց։

Այս այն է՝ զոր եդ ՚ի համարն 21. յասելն՝ * Հատուցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում. ըստ ամբծութեան „ իմում հատուցէ ինձ ‖. զոր յաւելուածով իմն կրկնէ աստ յասելն։

Հատուցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում ևն։ Կամի ասել. հանդերձեալ է Աստուած տալ ինձ վարձս ըստ արդար գործոց իմոց, զորս շնորհօք նորա գործեցի. կամ տեսեալ Աստուծոյ՝ թէ ես ոչ անխրաւեցայ առ այլս, այլ արդարութեամբ գնացի ընդ նոսա, տացէ վասն այսր զվարձս, կամ ցուցցէ ինձ վասն այսր զողորմութիւն կամ զպաշտպանութիւն իւր։ Կամելով ապա յայտնել և զանպարտ լինել իւր յանօրէնութենէ՝ յարէ զկնի, և ասէ։

Ըստ սրբութեան ձեռաց իմոց առաջի աչաց իւրոց։ Այսինքն հատուցէ ինձ տէր ոչ միայն վասն արդար գործոց իմոց, այլև վասն ոչ գործելոյ իմ զչար առաջի աչաց նորա, կամ վասն նորա պահելոյ զիս ՚ի գործոց անտի՝ որք արգելեալ են յօրինացն Աստուծոյ։ Իսկ այս սրբութիւն և անբծութիւն, զոր ասացաք ՚ի նախընթաց համարն, կրկնակի մտածի. մի՝ ըստ ոչ բծաւորելոյ մեղօք առաջի Աստուծոյ. և միւս ևս՝ ըստ ջնջելոյ զբիծս մեղաց ապաշխարութեամբ։

Իսկ ձեռամբք իմանայ աստ մարգարէն զգործս. զի որովհետև մարդիկ զարտաքին գործս ձեռօք գործեն, զբառդ "ձեռք" դնէ փոխ գործոց, թէ արտաքին իցեն այնք՝ և թէ ներքինք. կամ որ նոյն է, որովհետև ձեռքն է պատճառ գործողութեանց՝ զպատճառն

դնէ փոխ գործոց. ուստի և նոյն էր՝ թէ ասէր, ըստ սրբութեան գործոց իմոց։

Լամբրոնացին արդարութիւն իմանայ աստ զհաւատն 'ի Քս. իսկ սրբութիւն ձեռաց զբարի գործս. և զայս վկայ յաւելու ասէ՝ մարգարէն, * զի մի 'ի հաւատն ապա-
,, տանեալ՝ յանդգնութեամբ ասիցեմք, յաճախեսցուք
,, 'ի մեղս՝ զի շնորհքն բազմասցին. այլ՝ վայելեալ՝ 'ի
,, գիտութիւն շնորհի արդարութեանն (Քս 'ի հաւատս՝)
զգործս մեր ընթացակից առցուք նմին ‖։

Իսկ ասելովն * առաջի աչաց իւրոց ‖, յայտ առնէ՝ թէ վասն այնպիսի գործոց խօսի աստ, որք առաջի աչացն Այ են արդար և բարք, և ոչ թէ առաջի աչաց գործողին. և կամ որք ոչ գործին կեղծաւորութեամբ առաջի մարդկան՝ ըստ ասելոյ լամբրոնացւոյն, այլ՝ ուղղութիւն սրտի իբրև առաջի Այ։

Զայս բան յառաջ բերեալ սարգիս շնորհալի 'ի մեկն. Ա. յովհ. Գ. 22. ճառ. Է. սովին այսու ցուցանէ կատարել մեզ զհաճոյսն Այ. ուստի խօսելով՝ 'ի վերոյ բանից առաքելոյն ասէ. * Եւ զհաճոյսն առաջի նորա
,, առնեմք... ոչ ասէ, վարկպարագի առնեմք զհա-
,, ճոյս նորա և ոչ ըստ կամաց մերոց. այլ (առաջի նորա)
,, որպէս նա տեսանէ և կամի. սրբութիւն ձեռաց իմոց
,, առաջի աչաց նորա ասաց մարգարէն ‖. և յարէ զպատճառն ասելով. * վասն զի այն է տիրապէս պատուի-
,, րանապահին կատարումն, առաջի Այ ըստ հաճոյից
,, նորա առնել զամենայն, ոչ զոր մարդկան աչք տե-
,, սանեն և գովեն, այլ զոր ամենատես ակն Այ տեսա-
,, նէ և հաճի ‖։ Զայսպիսի առաջի եղեալ մարգարէին՝ յայտ առնէ այժմ, թէ ըստ որոյ յուսայր ինքն յԱծ՝ ընդունիլ վարձս 'ի նմէ, և գտանել զառաջնորդութիւն նորա 'ի պահպանութեան օրինաց նորին. վասն որոյ և առ Ած խօսելով՝ ասէ։

ԻԶ. Ընդ սրբոյն՝ սուրբ եղիցիս. ընդ առն անմեղի՝ անմեղ եղիցիս. ընդ ընտրելոյն՝ ընտրեալ եղիցիս, և ընդ թիւրոյն թիւրեսցիս։

Զայս բան լսելեայն իմն առաջի դնէ մարգարէն ըղփոխաք ջանից իւրոց, զոր եցոյց 'ի նախընթաց համարն. որով և գիտէ ասել. ջանացայց լինել սուրբ և

անբիծ և ընտիր · զի և տէր եղիցի առ ի այնպիսի, ըստ ՟որ, և անբիծ, և ընտիր ։ Իսկ թէ յինչ հիմնի այս գիտումն մարգարէին՝ կարգաւ խմն 'ի մէջ մատուցանէ · և նախ ասէ ։

Ընդ սրբոյն սուրբ եղիցիս ։ Ընդ՝ ասելով, ոչ կամի ցուցանել, թէ յորժամ մարդն է ՟որ, յայնժամ ած ևս ընդ նմա լինի ՟որ · այլ թէ յայնժամ վարի ընդ նմա իբրև ՟որ ընդ ՟որյ ։ Այնպէս ևս՝ եղիցիս ասելով, ոչ ցուցանէ՝ թէ յորժամ ՟որ լինի ոք, ած ևս յայնժամ լինի սուրբ, այլ թէ յայնժամ ցուցանէ նմա զինքն լինել սուրբ ։ Իսկ "սրբոյն" ասելով՝ խմնայ զայն, որ ունի զգործս սրբս · ըստ զայնպիսիս՝ որք հաճոյ են ամենասուրբ աչացն այ ։ Ըստ՝ ած ընդ այսպիսի սուրբս բազում օրինակաւ լինի ՟որ ։

Ա՛ռ՝ արարողապէս · իբր զի՝ յորժամ ոք ՟որ գործս գործէ, առնէ ած՝ զի զայն ՟որ գործ սրբութբ գործեսցէ · և կամ դրձել առնէ զնա ինքն ՟որ · * ՟որ եմ ես (ասէ) տէր, որ սրբեմ զնս ‖ · ղևտ · իա · 8 ։

Ընդ՝ առաջնորդութբ, ըստ առաջնորդելով 'ի սուրբ գործս · վասն զի ած ողորմեալ զամ մարդ յամի առ բարին շարժէ, ամէն 'ի սրբութիւն առաջնորդէ · այլ իբր 'ի շարժել զբազրի գգիչ իւր բարւոք, եթէ գտին իցէ խանգարեալ՝ բերէ 'ի վատթարն · իսկ եթէ իցէ բարւոք, բերէ 'ի յարմարն ։ Այնպէս ևս 'ի շարժելն այ զմտմին 'ի բարին՝ և յառաջնորդել նոցա 'ի սրբուի, եթէ ոք իցէ 'ի չարն և 'ի թիւրն յօժարեալ՝ յայնմ բարի առաջնորդութե նր բերէ 'ի չարն, և փոխանակ բարիս գործելոյ՝ չար գործէ, և թիւր գործս արտադրէ ։ Իսկ եթէ իցէ 'ի սրբութիւն յօժարեալ, բերէ 'ի բարին, և բարիս գործէ, և սուրբ գործս արտադրէ · և ըստ այսմ ած է սրբոյն լինի ՟որ, և ընդ թիւրելոյն լինի թիւր, ոչ զի ինքն է թիւր՝ և թիւրէ, այլ զի յուղղութե նր թիւրն թիւրի ։

Ընդ՝ հաւանութբ, ըստ հաւանելով ընդ սրբութին · իբր զի ած ողորմեալ յայտնեալ է՝ թէ հաճի ընդ սրբուի, և սիրէ զնա՝ որ իցէ ՟որ, սոյնն իսկ ասի լինել ՟որ ընդ սրբոյն ըստ հաւանող սրբոյ · զի նմանն զնմանն սիրէ, ուստի և ած գոլով ամենայնն ՟որ՝ զսրբսն սիրէ, և ընդ սրբութե նց հաճի · ևս և աղդ առնէ նց զգործս սրբուե ·

և յորդորէ զմեզ լինել այնպիսի ք՟ն զն՟ա . ղևտ . Ի . 7 , և . ա՟ . պետ . ա՟ . 16 ։ Նաև ո՞չ ա՟ծ ցուցանէ զհաճութիւն իւր ընդ սրբութիւնս ս՟ց . սոյնպէս և մեք ցուցանեմք զին- քեանս հաճեալ ընդ սրբութիւն ս՟յն ա՟յ . Իբր զի ճանա- չելով զսրբութիւն ն՟ր հաճիմք ընդ այն ։ Նաև ե՟ս այսմ եւս լինի ա՟ծ առ նոսա ն՟ր ։

Ընդ՝ սրբեալ և փառաւորեալ լինելով 'ի ս՟ս . Իբր զի ա՟ծ անարատութ՟բ և սրբութ՟բ պաշտի 'ի ն՟ս և փա- ռաւորի . յոր միտ ասի . * ա՟ծ փառաւորեալ է 'ի խոր- հուրդս ս՟ց իւրոց || . սաղ . ՁԸ . 7 ։ ուստի և ըստ այսմ եւս ճշմարտիւ առ ս՟ս լինի ն՟ր՝ ք՟ն սրբեալ, կամ սըր- բութ՟բ պաշտեալ ։

Ընդերդ՝ վարձատրելով զսրբութիւնս ս՟ց . զի որպէս ն՟ք ն՟ր եղեն նմա , ք՟ն թէ սրբութ՟բ կատարեցին զհա- ճոյս նորա , և ցուցան եւս ն՟ր և բարի առ ընկերս իւ- եանց , նոյնպէս և ա՟ծ եղիցի առ ն՟ս ն՟ր , ք՟ն թէ սըր- բութ՟բ կատարեսցէ զա՟մ հաճոյս ն՟ց յարքայութ՟ն իւ- րում , ուր սրբութ՟բ ասելն նշանակէ առանց իրիք պա- կասութ՟ն կամ առանց իրիք արատոյ կամ առանց իրիք տրտմութ՟ն կամ նեղութ՟ն ։ Նաև դարձեալ՝ ո՞չ գտան ն՟ք ս՟ք առ ա՟ծ՝ առատ սրտիւ և զուարթութ՟բ ծառայելով նմ՟ . և առ ընկերս ողորմած՝ ցուցանելով առ ն՟ս ըզ- գութ . սոյնպէս եղիցի առ ն՟ս և ա՟ծ ։ Որդ ո՞չ զս՟յն խօսեցաւ մարգարէն , սոյնպէս և զամբծէն խօսի՝ ա- սելով ։

Ընդ առն անբծի՝ անբիծ եղիցիս ։ Նմանօր բառս ան- բիծ՝ առեալ լինի ենթակայապէս կամ կրաւորաբար՝ փոխ այնր յորում չիք բիծ մեղաց , կամ յորում ոչ կրե մեղք . և ըստ այսմ կրկնակի հայի այս բան 'ի նախըն- թացն , ըստ հակադրութ՟ն և ե՟ս համգիտութ՟ն . ե՟ս հա- կադրութեան մտածեալ , ո՞չ այնու բանիւ 'ի մէջ բե- րի հպաւորութիւն առ բարին , նոյնպէս և այսու բա- նիւ նշանակի հեռաւորութիւն 'ի չարէ կամ 'ի բծէ մե- ղաց . յոր միտ կամի ասել ընդ զգուշաւորին զգուշաւոր եղիցիս , ո՞չ թէ եղեալ էր . որ զգուշանայ 'ի բծէ մե- ղաց՝ զգուշասցիս և դու զնովաւ՝ զի մի բծաւորեսցի ։ Իսկ ըստ համգիտութ՟ն մտածեալ՝ այս բան նոյնանայ ընդ վերնոյն՝ բայց աւելութ՟բ իւիք . ե՟ս որոյ բառիւդ անբիծ՝ նշանակի ամենեւին ս՟ն և կատարեալն . յոր

միտ 'ի ը̃ թագ" դնի * ընդ առն կատարելոյ կատարեցիս ‖ ։ որ է ասել . այնպէս վարեսցիս ընդ կատարեալ մարդոյ՝ որպիսի է նա ընդ քեզ . և այս իմացեալ լինի ըստ վերոյգրեալ մեկնութեանդ ։ Արդ է աստ զբառդ "ամբիծ" առնուլ և ներգործաբար՝ փոխ այնր, որ ոչ տայ բիծ այլում, այս է՝ որ ոչ վնասէ այլում, որ և սուր անվնաս կամ անմեղ . յոր միտ կամի ասել . որ ոչ առնէ չար ինչ այլում, ա՛ծ ցուցանէ նմա զինքն անբիծ, այ՛ անվնաս . իբր զի ոչ տայ թոյլ՝ զի հասցէ նմա վնաս ինչ ։ Նա յայս միտ յայլ բ̃մ թարգմանութիւնս դնի . * ընդ առն անվնասի՝ անվնաս եղիցիս ‖ ։ կամ * ը̃ առն անմեղի անմեղ եղիցիս ‖ ։ Յաւելու ևս ասել ։

Ընդ ընտրելոյն՝ ընտրեալ եղիցիս ։ Ընտրեալ ասելով, Նախ՝ իմանայ զընտրեալն յա̃յ 'ի սկզբանէ Տի 'ի յաւիտենից . ըստ որոյ ասէ առաքեալն . * ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն Տի ‖ . եփես . ա . 4 . և միտ բանին լինի այս, թէ յընտրեալ եղելոց ընտրեալ եղիցի ա՛ծ . կամ որ նոյն է ը̃ այնմ անձին՝ զոր ընտրեալ է ա՛ծ 'ի յաւիտենից, եղիցի ընտրեալ . այ՛ թէ եղիցի այնպիսի՝ զի ընտրեալն այն՝ միայն զնա ընտրեսցէ իւր բարի . և նմա միայն հաճոյանալ ջանասցէ, և պահեսցէ զպ՛տս՛ն ընտրեալ յա̃յ 'ի փրկութի . և այս թէ սր̃ լինելով 'ի գործս . ըստ որոյ ասաց՝ * ը̃ սր̃յն՝ սր̃ եղիցիս ‖ . և թէ անբիծ կամ անարատ լինելով 'ի մեղաց, ըստ որոյ ասաց՝ * ը̃ առն ամբծի՝ ամբիծ եղիցիս, Նա թուի թէ յայս միտս խօսի առաքեալն զայն վերոյեղեալ բանն թէ . * ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն Տի՝ լինել մեզ սր̃ս և անարատս առաջի նր̃ սիրով ‖ ։

Երկրորդ իմանայ զայն, որ ունի զգերազանցութիւն ինչ կատարելութեան վարուց՝ ը̃ սրբութե և ը̃ ամբծութե . որ և կոչի ընտիր . ըստ որոյ ասի յերգս երգոց . Ե . 10 ։ * եղբօրորդին իմ սպիտակ է և կարմիր՝ ընտրեալ 'ի բիւրուց ‖ . այ՛ ամբիծ է 'ի սեւութէ մեղաց, և կարմիր գեղեցկութբ սրբութեան . որովք և է ընտիր, այ՛ պատուական 'ի մէջ բիւրաւորաց ։ Նա ըստ այսմ առեալ՝ միտ բանին լինի այս . ա՛ծ ընդ այսպիսիս իբրև այսպիսի վարի, ըստ այնմ մեկնութեան՝ զոր ասացաք 'ի վերոյ 'ի սկզբան այսր համարոյ ։ Արդ՝ ծանուցեալ մարգա-

րէին՝ թէ զիա՛րդ լինի և վարի ա՟ծ ընդ ս՟բն և ը՟ն ամբը-
ծին և ընդ ընտրելոյն, յայտ առնէ այժմ՝ թէ զիա՛րդ
վարի և ընդ թիւրսն · վ՟ն ասէ ·

ԸՆԴ ԹԻՒՐՍ ԿՈՐԾԱՆԵՍՑԵՍ : Թիւր ասելով իմանայ զայն, որ չէ ուղիղ, այլ թեքեալ յուղղութե՟ վարուց և օրինաց · Ո՟րդ՝ ո՟պ յորժամ շինուած ինչ թեքի չարաչար, տէր շինուածոյն կործանէ զնա · զի ոչ միայն է անպիտան, այլև վտանգաւոր · սոյնպէս և յորժամ ոք թեքի յուղղութենէ վարուց և օրինաց · և մնայ թիւր՝ և ոչ կամի ուղղիլ, տէր նորա՝ յ՟ս ա՟ծ կործանէ զնա · յ՟ս բանիւ կամ պատժէ, և կամ կորուսանէ, ևս և կործանէ 'ի դժոխս · զի ոչ միայն է անպիտան, այլև վնասակար այլոց · Պատահի երբեմն՝ զի տէր շինուածոյն կամի ուղղել զայն 'ի թեքելոյ · բայց յուղղելն կործանի շինուածն՝ վ՟ն առաւել խախտելոյ հաստատուն մասանցն · Սոյնպէս և ա՟ծ թէպէտև բ՟զմ անգամ կամի ուղղել զթիւրսն 'ի ձեռն պէսպէս ազդարարութեանց և պատժոց, բայց ն՟ք միայն ուղղին՝ որք գործակից լինին շնորհացն ա՟յ · իսկ որք ոչն կամին լինել գործակից այլ մի՟նդ հակառակին նմա՝ ն՟ք կործանին · և ահա յայսպիսի իմն նմանութիւն ակնարկելով մարգարէին խօսի զայս բան յասելն · * Ը՟դ զթիւրսն կործանեսցես ‖ · Ս՟պ թէ ասէր · զայնոսիկ որք թիւրեալ են յուղղութե՟ բանի, և յարդարութենէ օրինաց քոց, և գնան ընդ քեզ խոտորնակս, և ոչ կամին զգաստանալ ազդարարութեամբք և պատժովք քովք, կորուսցես և
կործանեսցես 'ի դժոխս ·

Զայս սպառնացաւ ա՟ծ և ժողովրդեանն իւ՟րի բերանով՝ մովսէսի՝ յասելն · * թէ ոչ լուիցէք ինձ . . . (այլ)
,, գնայցէք դուք խոտորնակս, յաւելից ձեզ հար-
,, ուածս եօթնպատիկ . . . ապա թէ այնու ևս ոչ խրա-
,, տիցիք, այլ տակաւին խոտորնակս գնայցէք ընդ իս,
,, գնացից և ես ընդ ձեզ բարկութե՟ խոտորնակս · և
,, հարից զձեզ եօթնպատիկ փոխ մեղաց ձերոց ‖ ·
,, ղևտ · ի՟զ · 14 · և 24 ·

Ի մեկն "լամբ · ա՟պ և ը՟ թարգ · ի՟ր · և 'ի լատ · և յայլ թարգ" փոխ ասելոյ * և զթիւրսն կործանեսցես ‖ գրի · * ընդ թիւրելոյն թիւրեսցիս ‖ · Ը՟դ այս ևս թէպէտ ըստ նախագրելոցդ մեկնի, բայց կարէ և այլ բաց-

մտապատիկ մեկնութի՟ բացատրել ։

Նախ՝ ըստ այնմ, զոր եդաք յառաջին հատուած այսր համարոյ . տես անդ ։

Երկրորդ՝ ըստ Թոյլտուութեան . երբ զի 'ի կամիլ մարդոյ թողուլ և խոտորիլ 'ի ճշմհէ ուղղութեան՝ ած ևս վն չարութեան նր թողլ տայ նմա խոտորիլ . զի * առ խոտորեալս խոտորեալ ճնպրհ առաքէ ած ‖ . առակ . իը . 8 ։

Երրորդ՝ ըստ փոխանման . երբ զի 'ի կամիլն թիւր մարդոյ գործել թիւր ինչ առ 'ի հասանել չար բաղձանաց իւրոց՝ ած 'ի ներհակն փոխարկէ զայն , 'ի չարս նորին . և որով հնարիւք կամի նա կատարել զհաճոյս իւր , նովին հնարիւք ած զներհակն առնէ ։ Եւ այս յայտ է 'ի բզմ օրինակաց . յորս երևելի են այն երկու դիպուածք , որք պատահեցան եղբարցն յովսեփայ ևս և համանայ . վասն զի եղբարքն յովսեփայ լուեալ 'ի նմէ զերազ ինչ , որով յայտնէր նոցա ած՝ թէ նա իշխելոց է 'ի վր նոցա . առ 'ի խափանել նց զայս իշխել նորա՝ վաճառեցին զնա իսմայելացւոց . բայց ած այնու վաճառմամբ եհան զնա յայնպիսի իշխանութի , որով իշխեաց նա 'ի վր նց ( ծնն . խե . 5 ։ ) Նոյնպէս և համան 'ի կամիլն կորուսանել զմուրթքէ՝ պատրաստեաց փայտ մեծ՝ կախել զնա անտի . այլ ած թոյլեա , զի ինքն կախեսցի անտի , և մուրթքէ անցցէ 'ի տեղի նորա ( եսթ . է . 9 ։ ) Յորս յայտնի լինի , թէ ած զիորդ * ըմբռնէ զիմաստունս 'ի խորագիտութե իւրեանց ‖ ա . կորն . գ . 19 ։ երբ զի ըմբռնէ զնս այնու խորագիտութ , որով նոքա կամէին զայլս ըմբռնել ։

Չորրորդ՝ ըստ փոխարինման . երբ զի զոր ինչ առնէ թիւրեալն ընդ այլս , զնոյն փոխարինէ նմա և ած . եթէ լիցի նա անաչառ 'ի դատել զայլս , կամ 'ի զրկել , կմ , ած ևս լինի անաչառ 'ի դատել զնա , և 'ի պատուհասել ։ Յոր մտ ասաց տրն մեր . * որով չափով չափէք , չափեսցի ձեզ ‖ . մատ . է . 2 ։

Հինգերորդ՝ ըստ տհաճութե . երբ զի թիւր մարդն կամի յայնպիսի ճշմհ գնալ՝ ընդ որ ոչ հաճի ած . և ըստ այսմ նա զայլ ինչ կամի՝ և ած զայլ ինչ . նա յայլ ինչ բերի , և ած յայլ ինչ . նա կամի իշխել և հրամայել , և ած տայ նմա իշխել և ճնշիլ . նա ըղձէմ գա-

ռայ կամացն ա՟յ. և ա՟ծ ընդդէմ դառնայ կամաց ն՟ր. և այսուհետ լինի թիւր և այլադդ առ ա՟ծ. և ա՟ծ լինի այլադդ առ նա.

Վեցե՟րդ՝ ըստ ճանաչման. իբր զի ո՟պ ա՟ծ ոչ ուղիղ ճանաչէ զճանապարհ թիւրելոյն, այնպէս և թիւրեալն խոպան՝ ոչ ուղիղ ճանաչէ զճանապարհն ա՟յ. և յայս միտ խօսի ա՟ծ զինէն բերանով եզեկիելի, յասէն. * ասէն տուն իղի, ոչ ուղիղ է ճանապարհ տ՟ն ||. և այնէ. * միթէ իմ ճանապարհ չիցէ ուղիղ տուն իղի. ոչ ապաքէն ձեր ճ՟նհքն չեն ուղիղ ||. եզեկ. ժ՟ը. 28.

Եօթնե՟րդ՝ ըստ երևելոյն կամ ը՟ս համարեալ լինելոյն. իբր զի ա՟ծ 'ի պատժելն զթիւրեալն՝ երևի նմա թիւր. զի համարի թէ ոչ պատժէ իրաւամբք, այլ՝ անիրաւութ՟բ, և կամ խստութ՟բ. Եւ յիրաւի իսկ կարէ ասել, թէ երևի թիւրել՝ ոչ յիրաւունց, այլ՝ 'ի գթութենէ. զի ա՟ծ տաւել կամի վարձատրել՝ քան պատժել. ուստի եթէ պատժեսցէ զոք, գրեթէ ակամայ պատժէ, և բռնութեամբ ածի 'ի գթալոյ 'ի պատժել. Եւ թուի թէ զայս կամելով յայտ առնել մարգարէն՝ երկիցս դնէ զգթասիրելն ա՟յ՝ յասէն. * ընդ սրբ՟յն ս՟ր եղիցիս. ընդ առն անմեղի անմեղ եղիցիս. ընդ ընտրեալմն ընտրեալ եղիցիս ||. իսկ զպատուհասեն միանգամ միայն՝ յասէն. * և ընդ թիւրելոյն թիւրեսցիս || ։ կամ * զթիւրսն կործանեսցես ||.

Այս բնաբան՝ * ընդ սրբ՟յն ս՟ր եղիցիս ||. եւս, կարէ ը՟ս յարմարական մեկնութեան առնել և առ ա՟մ որ՝ այսպէս. եթէ դու ո՛վ մարդ կենցաղավարեսցիս ը՟ս սրբ՟յ, և ը՟ս առն անմեղի և ընտրելոյ, եղիցիս ս՟ր և անմեղ և ընտրեալ. Ուրեմն ըստ ասելոյ իմաստնոյն՝ * հանապազորդ լեր ը՟ս առն սրբ՟յ ||. սիրաք. լէ. 15. Իսկ եթէ ընդ թիւրելոյն կենցաղավարեսցիս, թիւրեսցիս և դու. ուստի ասէ բարսեղ մ՟ծ 'ի մեկն. մարկ. գլ. ժ. * ընդ սրբ՟յն շրջելով ս՟ր եղիցիս. իսկ ընդ թիւրսն շրջելով՝ թիւրեսցիս ||. վ՟ս զի ո՟պ ասէ իմաստունն. * որ հպի 'ի ձիւթ՝ աղտեղասցի 'ի նմէ. և որ կցորդի ամբարտաւանի՝ զգեցցի զամբարտաւանութիւն ||. սիրաք. ժ՟գ. 1. Ն՟ս զի ո՟պ * որ գնայ ընդ իմաստունս, իմաստուն եղիցի, (այնպէս) և որ թարթափի ը՟ս անզգամս, յայտնի եղիցի ||.

առակ. ժզ. 20: Զայս բնաբան՝ զոր եդ մարգարէն 'ի հասարակի և իբր անորոշակի, մանաւանդ 'ի յաջորդ համարն, և իբրև թէ բացատրէ զայն. տարացուցիւ խելք և ասէ:

ԻԷ. Պատ շնորհաւորդս խոնարհս հեզացուցանէ. և զաչս ամբարտաւանից դա խոնարհեցուցանէ:

Յայս համար զօրութեամբ իմացեալ լինի շաղկապս զի, կամ վ̃ն զի. ո̃պ և դնի 'ի բ̃. թագ. և 'ի բնագիրս եբրայեցւոց, և յայլ թարգմանութիւնս. ք̃զի իբրև զցուցանէ ասացելոց իւրոց առաջի դնէ զայս մարգարէն՝ յասելն:

Պատ շնորհաւորդս խոնարհս հեզացուցանէ: Լսիմքն, դու որ ո̃րդ ես ո̃մն կեցուցանես զայնոսիկ՝ որք խոնարհ են յաչս իւրեանց, ևս և տառապեալ, և կամ (ըստ̃ դնելոյ 'ի բ̃ թագ.) տնանկ են, յորմէ պատճառի խոնարհութիւն: Որ կեցուցանես ասելով կամի ցուցանել թէ սիրէ զնո̃ ո̃ծ, և կարկառէ նց̃ զամենազօր ձեռն իւր, և տայ նց̃ զշնորհս և ցուցանէ նց̃ զգթութիւն որով և փրկէ զնոսա և կեցուցանէ աստ և 'ի հանդերձեալն:

Սա ներհակ այսմ՝ զթիւրսն կործանէ. վ̃ն ասէ:

Զաչս ամբարտաւանից դա խոնարհեցուցանէ: Զաչս ասելով՝ իմանայ զնոսին իսկ զամբարտաւանսն, զնոսն փ̃նկ բոլորին դնելով. զի որովհետև ամբարտաւանք՝ առաւելապէս յարտևանուն աչաց մարմնոյ, և 'ի հայեցուածս աչաց հոգւոյ յայտնեն զամբարտաւանութիւն իւրեանց, վ̃ն փ̃նկ դնելոյ զամբարտաւանս՝ դնէ զաչս, յորս առաւել երևի ամբարտաւանութիւն նոցա ըստ̃ յաչս. և դարձեալ որովհետև 'ի խոնարհիլ ամբարտաւանին խոնարհին և աչք նր̃՝ վ̃ն զաչսն դնէ. դա-ասէ * Զաչս ամբարտաւանից խոնարհեցուցանես ‖. ըստ̃ թէ որք հպարտութբ̃ վարին, և ամբարտաւանութբ̃ հայլին, ատես զնո̃ և անարգես, ցրուես և կործանես, մինչև ծանիցեն զինքեանս, թէ մարդիկ են, և խոնարհեսցին:

Մարգարէն զխոնարհս և զամբարտաւանս միայն յիշելով աստ՝ զայլս ևս տայ իմանալ իբր երկոքումբք հակադրելովք. ըստ որում մին առաւել ք̃ զո̃մ հաճոյ գտանի ո̃յ, և միւսն առաւել քան զո̃մ ատելի. միոյն

տարբերութե՛ն զի խոնարհութե՛ն աղբիւր է եւ պահապան սրբութեան եւ անբծութե՛ զորոց խօսեցաւ 'ի վերոյ. իսկ միւսոյն մոլութիւն, զի ամբարտաւանութե՛ն աղտեղի իմն հանք է, եւ տածիչ թիւրութեան եւ չարութե: Զայս ամ եղեալ մարգարէին՝ կամելով ասա 'ի մին հաւաքել եւ 'ի միւսոյն հեռի գտանիլ՝ խնդրէ յԱյ եւ ասէ:

ԻԸ. Զի դու լուսաւոր առնես զճրագ իմ. Տէր Ած իմ՝ լոյս արա ինձ 'ի խաւարի:

Ի վերագոյնդ 'ի 21, համարոյն մինչեւ 'ի 25, համարն խօսեցաւ մարգարէն զարդարութենէ եւ զանբծութենէ իւրմէ. եւ ծանոյց, թէ Ած հատուցանելոց է նմա ըստ արդարութեան եւ ըստ անբծութե. վն զի նա է այն որ լինի, եւ ընդ արդարոյն արդար, եւն: Նայց զի սկիզբն արդարութեան եւ սրբութե յայր չափահասն՝ է լուսաւորութիւն հոգւոյն 'ի շնորհացն Այ, զայն եւ դնէ աստանօր առաջի, եւ ասէ:

Զի դու լուսաւոր առնես զճրագ իմ. որ զօրութբ խնացեալ լինի պատճառական շարժմամբ գի. որպ դնի 'ի Բ. Թագ. եւ յայլ թարգմանութիւս. որպ թէ ասէր. քեւ ունիմ զամ բարի, եւ ես եւ զսկիզբն բարութեան. զի զլուսաւորութիւն մտաց. վն զի * դու լուսաւոր առնես ըզճրագ իմ տէր:

Ճրագ ասելով իմանայ զմիտս. ըստ այնմ. Մատ. Զ. 22. * Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամ մարմինդ լուսաւոր եղիցի ||. եւ զի այս ճրագ 'ի ձեռն սկզբնական մեղաց խաւարեցաւ, եւ ինքնին ոչ լուսաւորէ, այլ 'ի ձեռն շնորհացն Այ եւ յայտնութե նր, յայն հայելով ասէ՝ * լուսաւոր առնես զճրագ իմ ||. զի թէ 'ի ձեռն շնորհաց քոց, եւ կամ 'ի ձեռն յայտնութե քո՝ լուսաւորես զմիտս իմ՝ որպէսզի զճշմարիտ բարին 'ի սուտ բարւոյն, եւ զստոյգ չարն 'ի սուտ չարէն, եւ այնու առնել զուղիղ ընտրութի՝ մինչդ յորժամ խաւար պաշարէ զիս: Նա որոյ աղաչանօք խնդրէ, եւ ասէ:

Ած իմ, լոյս արա ինձ 'ի խաւարի: Կամի ասել. դու՝ որ ես Ած Ճշմարիտ, եւ արարիչ իմ, եւ լոյս յաւիտենական, * լոյս արա ինձ 'ի խաւարի ||: Ուր խաւարախնացեալ լինի կուրութիւնն մտաց, ես եւ տգիտութիւն.

յայտնի լինի խաւարի գոլոյ լոյս խնդրել. և որպէս թէ ասէ. առանց լուսոյ քո 'ի խաւարի կուրութեան կամ, և 'ի խաւարի տգիտութեան շրջիմ՝ ոչ միայն առ գերբնականս, այլև առ բնականս, ոչ միայն 'ի յաջողութէ, այլև 'ի ձախորդութէ. ոչ միայն 'ի խորհուրդս, այլև 'ի բանս և 'ի գործս. վսն դու լոյս արա ինձ, որ կամ յայսմ խաւարի, և լուսովդ քով փարատեա զայս զիմ խաւար: Իսկ այս լոյս՝ զոր խնդրէ՝ է գիտութիւնն աստուածային. որոյ 'ի հասանելն 'ի մարդ՝ բառնի խաւարն տգիտութէ իբր չէութիւն. զի որոյ ասէ կիրակոս վրդպ 'ի մեկն. հարիւր. եւագրի. 'ի ճնաց. 59. լոյս յոր-
„ ժամ ծագէ՝ խաւարն ոչ ինչ դառնայ. զի չէ էութի.
„ և առ էութի 'ի գալ լուսոյն երևի. Նմանապէս
„ անգիտութիւնն և մեղքն ոչ է էութի. 'ի ծագել գի-
„ տութէ չքանայ, և աներևոյթ լինի ‖: Եւ զի ամենքն 'ի խաւարի գնամք, պարտիմք խնդրել յԱյ՝ զի ծագեսցէ զլոյս իւր. որոյ վասն և այլուր ասէր մարգարէն. * լոյս տուր տէր աչաց իմոց ‖. սաղ. ԺԲ. 4. Եթէ պակասեցիմք յայսմ աստուածային լուսոյ, պարտիմք երկիւղիւ և զգուշութբ գնալ: Որ մտանէ 'ի խաւար տեղի, զգուշութբ գնայ. և առ երկիւղի զձեռս իւր տարածէ յառաջոյ՝ զի մի հարցի ընդ իմիք և գլորեսցի. այնպէս և մեզ պարտ է գնալ ընդ խաւար կենցաղոյս, և տարածել զձեռս մեր յայն զոր կարեմք առնել. մինչև ծագեսցի առ մեզ լոյսն աստուածային, և 'ի խաւարի անդ լոյս արասցէ մեզ, զի թէ լուսաւորեսցէ զմեզ, և առաջնորդեսցէ 'ի լոյսն յաւիտենական:

Լամբրոնացին խաւարաւ իմանայ զմարմինն. ըստ որոյ խնդրէ մարգարէն, զի լուսաւորեսցէ աստ զհոգին, որ կայ 'ի խաւարի, այսինքն 'ի մարմնի:

Ի Բ. Թագ. ԻԲ. 29. փոխնկ ասելոյ. * դու լուսաւոր առնես զճրագ իմ տր ած իմ ‖. դնի. * դու ես ճրագ իմ տր. և դու տր լուսաւորեսցես ինձ զխաւար իմ ‖. և զայս դնէ ըստ լուսաւորելոյ զճրագ մեր, և ըստ փարատելոյ զխաւար սրտից մերոց. և ըստ այսմ նոյն իմաստ ընծայի յայսմ և յայնմ: Իսկ թէ ճրագ կոչէ զած, այդ հայի 'ի գործ լուսաւորելոյն. վասն զի ըստ այլևայլ գործոց այլևայլ անուն ընծայի այ. զի ոմն գրէ եզնակ կողբացի 'ի Գլ. ԻԴ. * ուր աստուա-

,, թիւն պիտոյ է՝ առ ի հուր կոչի ած. և ուր քաղց-
,, ցութիւն՝ առ ի լոյս կենարար. այլ նորին 'ի վեր է քն
,, զհուր և քան զլոյս. և այլ ինչ ըստ զանուանս առ-
,, նու զնիքեամբ վասն պէսպէս զարմանեացն ||. որպէս
աստ զանուանս Ճրագ՝ 'ի զարմանալն նշոյլիւք իւրովք.
տես զայսմանէ և 'ի հանդիսաւորութիւնն։

Այս բան ասի և 'ի գինաց մարդկայնն բնութեանս առ բանն ած՝ յառաջ քան զմարդանալ նր. զի յայնժամ նա զոլով խոսաւ 'ի խաւարի, ած ոչ երբէք զարեգակն, այլ երբէք զՃրագ 'ի խաւարի առ ի ծագել ըղնշոյլս ինչ լուսոյ յայտնութեան իւրոյ 'ի ձեռն մարգարէից, որք էին երբէք ճրագակալք, եւ և նոքա ճրագունք. կամելով ապա իբր լուսով արեւու լուսաւորել, պաղատի առ բանն ած. դու ես առէ կենդանի Ճրագ իմ՝ յաւիտենական բանդ ած, և դու լուսաւորես զճրագունս իմ՝ զն զմարգարէսն, եւ և զչիջեալ միտս իմ 'ի լուսոյ քո. եկ աղաչեմ, և հանգոյն արեւու լոյս արա ինձ 'ի խաւարիս, յորում նստիմ։

Այլաբանօրէն ճրագաւ իմացեալ լինի մարմինն այն զոր էառ բանն ած և, հրով ածութեան իւրոյ վառեաց զնոյն. որով և լոյս արար աշխարհի, եւ և ծագեաց իբրև զլոյս՝ որոց նստէին 'ի խաւար մահու։ Յայս հայի մատամբ ինն այն՝ զոր ասէ նարեկացին 'ի բանն զէ. 'ի ձայն մեռանին. * Եւ զինչ ճրագին լուսաւորե-
,, լոյ շնորհակալութիւն, եթէ ոչ 'ի մէջ ինն անցաւոր
,, մեղացն միգի և կատարածութէն խաւարի՝ կերպարա-
,, ցապէս միութեամբ 'ի յիս Եմմանուէլ ||. Յուշեցեալ
ապա մարգարէին 'ի բանս իւր ասէ.

ԻԹ. Երդուայ 'ի հաստատեցի պահել զիրաւունս արդարութեան քո
ըստ պատուիրանաց.

Աստանօր 'ի ցուցանել մարգարէին զկամս խորհելոյ 'ի չարէ. և առնելոյ զբարին՝ բերէ միայն զուխտն չարի՝ որ է փորձութիւնն, և զերդեն բարւոյ՝ որ է դժուարութիւնն։ Եւ զայս այսպէս գնելով յայտ առնէ, թէ 'ի յաղթելն ամեից չարին՝ զն փորձութեանց. հեռանամք յառնելոյ զչարն. և 'ի բառնալն զերդեալ բարւոյ՝ զն զդժուարութիւնս, մերձենամք առնել ըղբարին. և առնեմք իսկ։ Բստ առաջնոյն խօսելով

ասէ ։

Քեւ փրկեցայց 'ի փորձութենէ ինձ ։ զի յօգնելն քո ինձ 'ի ձեռն չարչարաց քոց՝ քեւ լուսաւորեալ և զօրացեալ՝ յաղթեցից ա՛ և իցէ փորձութեան , որ գայ 'ի վ՟ր իմ ։ Եհաս 'ի յովսէփ փորձութիւն ծանր 'ի ձեռն եգիպտուհւոյն՝ որ էր կին դահճապետին . զօրացաւ յովսէփ ն՟մ և փրկեցաւ՝ 'ի բաց թողեալ զձորձն ( Ծնն . լթ . 13 . ) եթէ հասցէ և քեզ խորհուրդ դահճապետին սատանայի , զօրացիր և դու , թող զձորձ՝ զի զհանգիստ քո , և ապաւինելով առ ն՟մ՝ փրկեսցիս ն՟մ 'ի փորձութենէ ն՟ր ։ Եթէ յաւելցէ դահճապետն զփորձութիւնս , արկանելով զքեզ 'ի բանտ անձկուե՟ որու . մի՛ երկնչիր , տէր ը՟ քեզ է . * և էր տ՟ր ը՟ յովսեփայ ‖ . Ծնն . լթ . 21 . լուսաւորէ զքեզ և մխիթարէ , մինչև լինել քեզ մեկնօղ երազոց . ( Ծնն . խ . 8 . ) և ելցես 'ի բանտէ անտի փառօք . և զօրասցիս անցանել ընդ դժուարինս , և գործել զմեծամեծս . յայս հայելով՝ յարէ զինի մարգարէն ըստ երկրորդին

և ասէ ։

Աստուծով իմով անցից ընդ պարիսպ ։ Կամ ասել . 'ի զօրանալ իմում 'ի տ՟նէ՝ անցից ընդ ն՟մ , ես և ը՟ պարիսպս ։ Պարսպօք իմանայ զմեծամեծ դժուարութ՟իս , որք խափան լինին գործելոյ զգործս բարիս . զի որպէս պարիսպք են արգելք մտանելոյ 'ի ներքս 'ի քղ՟քն , սոյնպէս և դժուարութիւնքն են արգելք մտանելոյ 'ի բարի գործս ։ Եւ այլ գ՟ք հզօրք քանդելով զպարիսպն , և կոխելով 'ի վ՟ր աւերակաց , և կամ զանցանելով ըղպարսպօք մտանեն 'ի ներքս , և առնուն զքաղաքն , սոյնպէս և որք զօրացեալ են շնորհօք և օգնականութ՟են ա՟յ , քանդեն զդժուարութիւնս , և բառնան զայն յառաջոյ իւրեանց , և արկանեն ը՟ ոտիւք . և կամ զանցանեն վերջօք , և այնպէս մտանեն 'ի գործս բարիս , և գործեն զայնս . ոչ հայելն յայն՝ թէ դժուարութ՟իք արգելք լինին ինքեանց , այլ հայելն յայն՝ զի վանեալ զդժուարութիւնսն՝ յառաջ ընթասցին ։ Նմանապէս ձուկն երթայ ընդ զառ 'ի վեր հակառակ ընթացից ջրոյն . իսկ մեռեալն տարեալ լինի ընդ զառ 'ի վայր յափշտակեալ յընթացից ջուրց ։

Յամբառնացելն պարսպաւ իմանայ աստ զս՟ . * Որչափ

„ ( առէ ) ասա եկք , ունին իշխանութի փորձիչքն՝ ըղ-
„ մեզ վտանգել . իսկ զընթացս 'ի սպառ անձեալ , և
„ ընդ զգալի քղքիս պարիսպ ելեալ՝ չիք այլ փորձանք .
„ այլ այնուհետև այ դատաստանն և ընտրութին . ո՛ր
„ զի իւրաքանչիւր ոք ժառանգեսցէ զոր ինչ իւրով
„ մարմնովն գործեաց՝ եթէ բարի , և եթէ չար . արդ՝
„ առէ քև արարիչ իմ՝ լիցի իմ՝ ընթացս , մինչև ելից
„ ընդ պարիսպ կենցաղոյս . և յետ ելիցն զվարձ փոխա-
„ րինին հատուցես ‖ :

Յայտ արարեալ մարգարէին զլուսաւորիլ և զզօրա-նալ իւր յայ , և զապաւինիլն 'ի նա և զնովաւ փըր-կիլ 'ի չարէ՝ և առնել զբարին , յարէ զկնի , և առէ :

Լ . ԱԾ ԻՄ՝ ամբիծ են ճանապարհք քո . և բանք քո ընտ-րեալ են . և ապաւէն ամենեցուն՝ որ յուսան 'ի նա :

Ասելովն՝ ած իմ՝ յայտ առնէ , թէ զնա միայն խոս-տովանի ած , և լոյս անստուեր , և զօրացուցիչ անձի : Եւ զի այսպիսի ճանաչէ զնա , վասն 'ի նմէ միայն յու-սայ լուսաւորիլ և զօրանալ , և լուսով նորա գնալ 'ի ճնհս նր , գիտելով թէ որք են այն ճանապարհք . յորոյ սակս առէ :

ԱԾ ԻՄ ամբիծ են ճանապարհք քո : Ճանապարհք ասելով իմանայ զնախախնամութիւնն այ , կամ զեղանակս գոր-ծելոյ և կառավարելոյ նր զտիեզերս . այսոքիկ ճանա-պարհք քո առէ ամբիծ են , զի չունին ինչ բիծ կամ արատ տկարութեան կամ թիւրութե : Ճանապարհաւ կարէ իմացեալ լինել և օրէնքն այ , որք յայտ է թէ ամբիծ են . և զայսմանէ առանձինն խօսի՝ առելով :

Եւ բանք քո ընտրեալ են . զի պատուիրանք քո կամ պատ-գամք քո . ես և խոստմունք նր ամենևին որք են և ընտրեալ , այս է իբրև հրով փորձեալ . և անարատ գտեալ , սուրբ և զօրաւոր : Այլ զայսմանէ տես 'ի սաղ . ժը . 6 : Յաւելու ևս մարգարէն առել :

Եւ ապաւէն ամենեցուն՝ որ յուսան 'ի նա : Ապաւէնն է այն , յոր դիմէ մարդ առ 'ի զերծանիլ 'ի չարէ՝ որ գայ : Այսպիսի իմն համարեալ լինի պաշտպանութին այ , ես և բան նորա ոչ սոսկ այսմ կամ այնմ մարդոյ , այլ ամնց , թէ բարի իցեն՝ և թէ չար . միայն թէ ջերմ-ապէս յուսասցին 'ի նա . զի որովհետև նորն է ստեղ

ծող և նախախնամող ա̃յ, ինքն պաշտպանութի̃ւ և բանիւ իւրով լինի ապաւէն միանգամայն և վերակացու, զի̃ խնամող այնոցիկ՝ որք յուսան և ապաւինին 'ի նա: Կամելով ապա մարգարէին ցուցանել, թէ յիրաւի նա միայն է ապաւէն, որոյ վ̃զի արժան իցէ յուսալ 'ի նա, 'ի մէջ բերէ և զայն՝ թէ նա միայն է ճշմարիտ ա̃ծ ամենազօր. վ̃զի ասէ:

Սղ̃. Ո̄չ ոք է նման քեզ յաստուածս Տէր. եւ ոչ ոք է ըստ գործոց քոց:

Բազում ա̃ծք են 'ի հեթանոսս սուտք՝ մի քան զմի տկար և վատթար. և որք 'ի նոսին յուսային՝ ը̃ստ նոցին վատթարանային: Այսպիսի անարգութի̃ նց̃ հայելով մարգարէին, ոչ այսպիսի ինչ է ասէ ա̃ծն ի̃մ. այլ ա̃ծ հզօր և կենդանի. և զայս հարցանելով իմն առաջի առնէ յասելն:

Ո̄չ ոք է նման քեզ յաստուածս Տէր. եւ ոչ ոք է ըստ գործոց քոց:

Այսինքն, ո՛վ յայնցանէ՝ որք իբրև ա̃ծ պաշտին 'ի հեթանոսս, իցէն ճշմարիտ ա̃ծ. արդարև ոչ ոք. վ̃զի նոքա առ հասարակ անզօր են և անգործ, ան̃ք են և անօգուտ, խաբեբայ են և սուտ. իսկ այն՝ զոր մեք պաշտեմք, է ճշմարիտ ա̃ծ. զի է հզօր յա̃մի, և հաստիչ ա̃յն. ա̃մ ճանապարհք ն̃ր ուղիղ են. և բանք նորա ն̃ք: Իսկ կրկնութի̃ աստուածոյն ցուցանէ զհաստատութի̃ ճշմարտութե̃ն:

Այսքիւք ոչ միայն կամի յայտ առնել մարգարէն, թէ ո̃ր է ճշմարիտ ա̃ծ՝ հզօր և զօրացուցիչ, այլև դիտէ յորդորել զմեզ և զայլս՝ 'ի նա ապաւինիլ. զի որովհետև այսպիսի է նա. արժան է ա̃յն 'ի նա յուսալ, զնա միայն սիրել, նմա ծառայել, և 'ի նմա հանգչիլ: Զի նա գոլով ճշմարիտ ա̃ծ, որք յուսան 'ի նա՝ փրկէ, և յուղիղն առաջնորդէ. և որք սիրեն զնա՝ խնամէ, լուսաւորէ և ընդ ն̃ն լինել ախորժէ. և որք ծառայեն նմա՝ վարձատրէ, պսակէ և փառաւորէ, և որք գնեն զհանգիստ իւրեանց 'ի նմա՝ տայ նոցա զժառանգութիւն յաւիտենական հանգստեան: Իսկ թէ յիրաւի զայս ա̃մ առնէ ա̃ծ ընդ ն̃ն, ցուցանէ մարգարէն 'յօրինի գրելոցդ: Իսկ նախ ասէ:

լբ · Ած, որ զգեցուցեր ինձ զօրութիւն · և եդիր յամբծութեան զճանապարհս իմ ։

Քանի և որպիսի էր արդեօք զօրութիւնն Դաւթի, զոր տուեալ էր նմա Ած ի մանկութենէ, յայտնի տեսանի ի պատմութե անտի · որ գրի ի Ա · Թագ · ԺԷ ։ Այլ զայս կամելով յայտնի առնել, նմանութեամբ խօսի, և ասէ ։

Ած որ զգեցուցեր ինձ զօրութիւն · այ դու որ ես Ած ճշմա-րիտ՝ ըստ ամի զօրացուցեր զիս · իբր զի ես մերկ էի ի զօրութենէ, և դու տալով ինձ զայն՝ յամ կողմանց պա-տեցեր զիս նովաւ · զի զգեցուցանելն՝ զայս ցուցանէ աստ ։ Այլ կամ դարձեալ յայտ առնէ ոչ միայն ի ներ-քուստ զօրացուցանել · այլև արտաքուստ · զի զգե-ցուցանելն զարտաքինն զօրանալն ևս բերէ · վն զի ոչ իրն զգեցեալ լինելով երևի, սոյնպէս և զօրութիւնն յորժամ արտաքուստ ևս յայտնի, ի զգեցեալ լինել օրինակի ։

Այլ արդ՝ քանզի սոսկ զօրանալն ոչինչ օգտէ, եթէ մարդ այնու զօրութբ ոչ ի բարին բերիցի, մանդ զի բզմ անգամ պատահի, զի զօրաւորք ի ցուցանել զզօ-րութիւն իւրեանց՝ բերին յանիրաւս · վնկ յետ յայտ առնելոյ մարգարէին զզօրանալ իւր՝ յայտ առնէ ևս, թէ Ած ոչ միայն զօրացոյց զնքն, այլև ետ նմա գնալ ի բարին՝ գնելով զկեանս նր յանարատութե վարուց · վյ ասէ ։

Եւ եդիր յամբծութեան զճանապարհս իմ ։ Ճանապարհ ա-սելով իմանայ աստ զկեանս · կամ զընթացս կենաց, և կամ ևս զգործս՝ զորս գործէ մարդ ի կեանս իւր ։ Զայս ճանապարհս իմ ասէ՝ * եդիր յամբծութեան ∥ · այ արարեր անբիծ · կամ ետուր ինձ առանց բծի գնալ ի նոյն · կամ արարեր, զի այն ճանապարհ իմ ձգեսցի և կատարեսցի անբիծ ։

Այս բան ի դիմաց մարդկային բնութե ևս ասի · զի ճանապարհ նորա լի էր բծով, և թաղեալ իսկ էր ի բիծս սկզբնական և ներգործական մեղաց · իսկ Ած ի վեր առեալ զայն անտի, եդ յամբծութե կրկին օրի-նակաւ · մի՝ ցուցմամբ · և մի ևս՝ արդեամբք · ցուց-մամբ՝ ի ձեռն անբիծ պատուիրանաց իւրոց · ար-

զեամբք , 'ի ձեռն շնորհաց եւ պարգեւաց իւրոց , զոտս ետ եւ տայ ա̅մն , որք զխմեն առ նա : Զայս եդեալ մարգարէին՝ մասնաւորէ զբան իւր զայն , զոր ասաց՝ * զգեցուցեր ինձ զօրութիւն ||, եւ բացատրէ՝ թէ զիարդ եւ յորս զգեցոյց նմա զայն զօրութիւն . վ̅ս որոյ ասէ :

լգ . Հաստատեսցէ զոտս իմ որպէս զեղջերուի . եւ 'ի վերայ բարձանց կացուսցէ զիս :

լդ . Ուսուցեր զձեռս իմ 'ի պատերազմ . եւ արարեր զբազուկս իմ որպէս զաղեղն հաստ . եւ ետուր ինձ պաշտպանութիւն փրկութեան քո :

Սոքիմբք յայտ առնէ մարգարէն՝ թէ 'ի զօրացուցանել զնա ա̅ծ տուեալ էր նմա զարագութիւն ընթացից յոտս , եւ զարուեստ քաջութեան 'ի ձեռս , եւ զմեծ իմն զօրութիւն 'ի բազուկս : Եւ նախ՝ զարագութէ ոտիցն խօսելով ասէ :

Հաստատեսցէ զոտս իմ որպէս զեղջերուի : Եղջերուն՝ ( որ տաճկերէն ասի կէյիք ) , երկու զօրութիւն ունի յոտս . մի՝ ըստ արագ ընթանալոյ , եւ մի եւս՝ ը̅ աներկիւղ կոխելոյ զօձս եւ սպանանելոյ : Արդ՝ քանզի ա̅ծ ետ զաւթի շրջիլ արագ 'ի լերինս իբրեւ զեղջերու 'ի հալածիլն իւր , եւ արագութեամբ փախնել զթշնամիս , եւ յաղթել նոցա , յայն հայելով ասէ . * հաստատեսցեր զոտս իմ որպէս զեղջերուի || . ը̅ արարեր կամ եդեր զոտս իմ որպէս զոտս եղջերուի . որ է ասել , արարեր՝ զի եղէց արագընթաց եւ զօրաւոր 'ի հալածանս իմ . եւ զայս՝ մեծ իմն կամելով ցուցանել յարէ զկնի , եւ ասէ :

Եւ 'ի վերայ բարձանց կացուսցէ զիս . ը̅ արարեր , զի շրջեցայց 'ի վերայ բարձանց՝ այս է՝ 'ի վ̅ր լերանց առանց կրելոյ վնաս ինչ . եւս եւ արարեր՝ զի 'ի հալածիլ իմում՝ հալածեցից զթշնամիս իմ , եւ բարձրացայց 'ի վ̅ր ն̅ց յաղթանակաւ :

Այս բան ըստ լամբրոնացւոյն՝ հայի եւ 'ի մարդկային բնութիւնս . զորոյ զտատանեալ զնացսն հաստատեաց ա̅ծ 'ի ձեռն մեծի շնորհաց խորհրդոյ մարդեղութեան , եւ արար արագընթաց 'ի գործս բարութեան , եւ կացոյց 'ի վ̅ր բարձանց , ը̅ 'ի վ̅ր կատարելութեան վարուց . եւ կամ սահմանեաց կացուցանել զնոյն 'ի բարձունս , ը̅

յերկինս.

Այլով իմն մեկնութեամբ վերաբերի այս բան առ ք՟ս. զորոյ զոտն արար հայր ո՟պ զեղջերուի. իբր զի՝ նա, որ զգեցեալ էր զզօրութիւն՝ և էր յամբծութ՟ե ճանա-պարհի, կարի իմն արագ ընթացաւ 'ի տնօրէնութ՟իւն իւր՝ իբրև 'ի վերայ լերանց վազելով՝ ո՟պ որթ եղանց, յ՟ս որպէս եղջերու. ը՟ որոյ ասի յերգս երգոց. * Նման
,, է եղբօրորդին իմ (յ՟ս ք՟ս) այծեման կամ որթուց ե-
,, ղանց 'ի վ՟ր լերանց բեթելայ՝ (որ թարգմանի տուն
,, ա՟յ՝ այն է եկեղեցի). և թէ՝ * ահաւասիկ սա եկն
,, վազելով 'ի վ՟ր լերանց, խայտալով 'ի վ՟ր բլրոց ‖.
երգ. բ. 8. և 9: Նոյս և կացոյց զնա հայրն երկնաւոր 'ի վ՟ր բարձանց, յ՟ս 'ի վ՟ր ա՟մ իշխանութ՟եց և տէրութ՟եց յերկինս և յերկրի: Յետ խօսելոյ մարգարէին զա-րագութ՟է ոտիցն՝ խօսի այժմ և զձեռացն, և ասէ:

Ուսուցեր զձեռս իմ 'ի պատերազմ: Զարմանք է, զի ոչ ասէ՝ արարեր, կամ զօրացուցեր, այլ՝ ուսուցեր. որով կամի յայտ առնել, թէ ա՟ծ ետ ձեռաց ն՟ր զայնպիսի ոյժ պատերազմելոյ ընդ թշնամիսն, զոր չէր հնար վե-րագրել մարդկայնն արուեստի, այլ՝ ա՟ծային զօրու-թեան: Նոյս այս յայտնի տեսանի յայն դիպուած, յո-րում եւ դաւիթ ընդդէմ գողիադայ ցպով միայն և քա-րամբք. որոյ յարհամարհելն զնա՝ ասաց ցնա. * Դու
,, գաս 'ի վ՟ր իմ սրով և գեղարդեամբ և ասպարաւ.
,, և ես գամ՝ 'ի վ՟ր քո անուամբ տ՟ն զօրութ՟եց.... և
,, պարսաքարեաց և եհար զճակատ այլազգւոյն... և
,, սպան զնա, և սուր չէր 'ի ձեռին նորա ‖. ա՟. թագ.
ժէ. 45: Որ յայտնի երևեցաւ, թէ զիարդ ուսու-ցեալ էր ա՟յ զձեռսն դաւթի յարուեստ պատերազմի. զի յայտ է թէ այս գործ նորա ոչ էր սոսկ մարդկային ուսումն կամ արուեստ, այլև ա՟ծային. զի ուսեալ յ՟այ՝ թէ զօրութ՟բ նորա կարէ յաղթել թշնամեացն. նովաւ եւ ընդդէմ ն՟ր: Բայց որպէս զի բարւոք ևս ծանիցես զայս, և զայլ ևս ուսմունս ձեռացն դաւթի, ընթեր-ցիր, ա՟. թագ. գլ. ժէ: Նոյս և անտի սկսեալ մինչև 'ի բ՟. թագ. գլ. թ՟: Արդ յայտ արարեալ դաւթի զզօ-րանալ ձեռաց իւրոց յ՟այ, յայտ առնէ այժմ և զզօրա-նալ բազկացն, և ասէ:

Եւ արարեր զբազուկս իմ որպէս աղեղն պղնձի: Հաստ ա-

ղեղն ասելով՝ խմանայ զանբեկանելի աղեղն , որպիսի էին 'ի նախնումն պղնձի աղեղունք . ըստ որոյ 'ի Բ . Թագ . գնի . * Հաստատեաց ( իբրև ) աղեղն պղնձի զբազուկս իմ ‖ . սոյնպէս գնի և յայլս ։ Այլ թէպէտ պղինձն ոչ երբեք լինել յարմար նիւթ աղեղան , բայց ըստ ասելոյ բազմաց՝ 'ի հին ժամս զայնպիսի իմն որակութիւն զգեցուցանէին նմա , մինչև լինել հաստատուն քան զայլ նիւթս , և ուժգին արձակել զնետս , և չարաչար վիրաւորել . յոր միտ ասի 'ի գիրս յոբայ . Ի . 24 . * խոցոտեսցէ զնա աղեղն պղնձի ‖ ։

Արդ՝ ասէ մարգարէն . թէ որպէս հաստ պղնձի աղեղն անխորտակելի է , և հզօր 'ի հարկանել , սոյնպէս արար Ած և զբազուկս իմ ։ Այլ այս այնչափ առաւել եղև 'ի նմա , մինչև 'ի մանկութէ անդ իւրում զառիւծ և զարջ սպանանել նմա , ոչ 'ի ձեռն սրոյ պատերազմելով , այլ՝ զուլից նոցա իբրև զհաւուց ըմբռնելով և պատառելով . որպէս և ինքն վկայեաց 'ի խօսելն ընդ սաւուղայ՝ յորժամ կամէր գնալ ընդդէմ գողիաթայ . * Արածէր ( ասէ ) ծառայ քո զխաշինս հօր իւրոյ . և
,, յորժամ գայր առիւծ կամ արջ , և առնոյր զոչխար
,, 'ի հօտէ անտի , ելանէի զհետ նորա , և հարկանէի
,, զնա՝ ( ոչ սրով , այլ ձեռօք . զի չունէր սուր ) , և
,, կորզէի 'ի բերանոյ նորա . և եթէ յառնէր 'ի վր իմ ,
,, ունէի ( կմ ըմբռնէի ) զփողից նորա , և հարկանէի
,, ( բռնցի ) , և սպանանէի զնա , զառիւծ և զարջ սա-
,, տակէր ծառայ քո . և եղիցի այլազգին անթլփատ
,, իբրև զմի 'ի նոցանէն . և արդ՝ ոչ երթայց և սատա-
,, կեցից զնա . . . . զի ով է այն անթլփատ , որ նախա-
,, տեաց զբանակս Այ կենդանւոյ ‖ . Ա . Թագ . ԺԷ . 34 ։

Այլ որպ զի յայտ արասցէ մարգարէն , թէ այս զօրութիւն ձեռաց և բազկաց զոր ընկալաւ յԱյ , սակաւ օգտէր նմա՝ եթէ Ած ոչ ցուցանէր նմա զյատուկ իմն պաշտպանութիւն փրկութէ իւրոյ , յայն սակս յաւելու ասել ։

ԵՒ ԵՏՈՒՐ ԻՆՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՔՈ ։ Կամի ասել . 'ի վարել իմում ձեռօք և բազկաւ ընդդէմ յարուցելոց 'ի վր իմ . պաշտպանեցեր զիս . և այնու պաշտպանութեամբ փրկեցեր զիս ։

Բանք այսր համարոյ պատշաճին և իւրաքանչիւր հա-

ւառացելոյ՝ հայելով առ ք՟ս, որ ուսոյց ա՟մ՟ն պատե-
րազմիլ ընդ թշնամին սատանայ՝ տուեալ նոցա զաղեղն
խոնարհութե՟ան 'ի բազուկս նոցին՝ ո՟ր 'ի գործս ը՟ լամբ",
կամ զաղեղն տարածութե՟ան ձեռաց յաղօթս ը՟ վարդա-
նայ, կամ զաղեղն զօրութեան ը՟ վանական վ՟շպի, 'ի
մեկն. յոբայ. գլ. իթ. ուր և ասէ նա. * աղեղն
„ յայտ առնէ զզօրութիւն՝ եթէ հոգևոր և եթէ
„ մարմնաւոր՝ որ նորոգեալ լիցի յա՟մ՟ ըստ դաւթի. արար
„ զբազուկ իմ ո՟պ զաղեղն ||. զրէ դարձեալ. 'ի գլ. խ.
թէ նա ինքն ք՟ս եղև * բազուկ ա՟մ նահապետաց, և
„ զօրացոյց զզօրութիւն ն՟ց ո՟պ զաղեղն. ը՟ որում սաղ-
„ մոսն.դաւիթ. արարեր զզօրութիւն իմ ո՟պ զաղեղն
„ հաստ ||: Ի սոյն հոգևորական պատերազմ յորդո-
րելով բարսեղ վ՟դպ 'ի մեկն. մարկ. գլ. ժա. ասէ,
* որպէս ըմբշամարտքն մերկանան և օծանին, ապա
„ և կռուին, նոյնպէս և դու որ մերկացար և լուա-
„ ցար աւազանաւն, և օծար միւռոնաւն, պարտիս
„ կռուիլ ||. և տայ ասէ քեզ ք՟ս զպաշտպանութիւն
փրկութեան իւրոյ:

Դարձեալ՝ այս բան ուղղակի ասի և 'ի դիմաց ք՟սի առ
հայր. ուսուցեր զձեռս իմ բևեռելով 'ի խաչին՝ պա-
տերազմիլ ընդ սատանայի. և արարեր զբազուկս իմ
իբրև զաղեղն հզօր՝ լարեալ 'ի վ՟ր խաչին՝ 'ի վանել
զզօրութիւն դիւաց. արարեր և զառաքեալսն իմ զօ-
րաւոր ընդդէմ սանդարամետականաց. իբրև զաղեղն
հաստ և ետուր ինձ զպաշտպանութիւնդ առ 'ի փրկել
զազգ մարդկան 'ի կորստենէ: Յայտ արարեալ մար-
գարէին զգտանել իւր 'ի ա՟ծնէ զպաշտպանութիւն նորա,
յայտ առնէ այժմ, թէ որով եցոյց նմա ա՟ծ զայն
պաշտպանութիւն. վ՟ս որոյ ասէ:

լե. Աջ քո ընկալաւ զիս, և խրատ քո կանգնեաց զիս իս-
պառ. և խրատ քո ուսուսցէ զիս:

Որովհետև ա՟ծ իբրև հայր բարի հովուէ զհաւատա-
րիմ ծառայս իւր, 'ի պաշտպանեալն զնոսա՝ կրկին
խնամս ցուցանէ առ ն՟ս. մի՝ զի 'ի փորձութիւնս և 'ի
տառապանս կարկառէ նոցա զաջ իւր, ո՟ր զամենակալ
պ՟հպնութիւն իւր՝ առ 'ի ազատել և մխիթարել: Եւ
երկ՟դ՝ զի 'ի յաջողութիւնս տայ ն՟ց զխրատ իւր՝ ո՟ր զհայ-

ըմբռնամ զզաստացուցիչ վիշտս. զի մի՛ զոր 'ի նեղութե՟ շահեցայ, 'ի հանգստեան կորուսցեն: Ըստ այսմ եցոյց ա՟ծ զխնամս իւր և առ երանելին Դաւիթ 'ի բզ՟մ իրս բզ՟մ անգամ. առ որս հայելով խօսի աստ զայս բանս. ըստ առաջնոյն ասէ:

ԱՋ ՔՈ ԸՆԿԱԼԱՒ ԶԻՍ: Աջով իմացեալ լինի ամենայաջող զօրութիւնն այ՟. և որ՟պ գրէ մեծն խոսրով 'ի մեկն. ժամագր. երես. 71. իմացեալ լինի և խնամակալութիւնն այ՟, ըստ որոյ պաղատի եկեղեցի ասելով * քո ,, խնամակալութ՟դ ամրացուսցես զմեզ ‖. * զոր աջ ,, կոչեն, ասէ, գիրք ‖: Իմացեալ լինի և պաշտպանութիւնն այ՟, ես և նա ինքն 'ի գոլն պաշտպանող. որով և լինի ապաւէն անդորրութեան և հանգստեան. յոր միտ ասէ Նարեկացին 'ի բանն. ձ՟գ. * աջ ապաւինու- ,, թեան, անդորրութ՟ի հանգստեան ‖: Եւ ահա այսպիսի աջով ասէ ընկալաւ զիս:

Իսկ բայդ ընդունիլ, որոյ կատարեալն է ընկալաւ, ըստ ասելոյ մեկնչին 'ի ղուկ. ա՟. 54. ը՟արձակագոյն առեալ լինի 'ի սաղմոսի. * զի նշանակէ առնուլ, ձեռն ,, կարկառել, օգնել, փրկել, ուղղել, կառավարել, ,, յառաջ շարժել, ջատագովել, պաշտպանել եւ՟ ‖: Ըստ այսոցիկ առեալ՝ կամի ասել. աջ քո, այ՟ ամենակարող զօրութիւն քո ընկալաւ և պաշտպանեաց զիս յանկանելն իմ 'ի փորձութի՟ս և 'ի տառապանս: Ըստ երկրորդին ես խօսելով՝ ասէ:

ԵՒ ԽՐԱՏ ՔՈ ԿԱՆԳՆԵԱՑ ԶԻՍ ԻՍՊԱՌ: Այսինքն խրատ քոյ օգնական լինելով ինձ 'ի յաջողութիւնս՝ ես և 'ի վտանգս յաջողութեանց՝ հաստատեաց զիս, զի մի՛ գլորեցայց 'ի չարիս: Եւ այս ոչ եթէ ըստ իմիք միայն, և կամ միանգամ եւեթ, այլ՝ "իսպառ". այ՟ ը՟ ա՟մի՝ և միշտ. ես և առ յապայն. և առ այս յաւելու:

ԵՒ ԽՐԱՏ ՔՈ ՈՒՍՈՒՍՑԷ ԶԻՍ: Խրատ ասելով՝ որպ՟ ասացաք, իմանայ զզգաստացուցիչ կամ զհայրախնամ վիշտս՝ ես և զպատիժս, զորս առաքէ ա՟ծ առ ծառայս իւր 'ի զգաստութ՟ի նց՟. յոր միտ ասէ առաքեալն. * Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրախութեան ,, թուի, այլ՝ տրտմութե՟ ‖. եբր. ժբ՟. 11: Այնպիսի խրատ քոյ ասէ զգաստացուսցէ զիս, և այնու ուսուսցէ զիս հանապազ՝ գնալ ըստ հաճոյից քոց: Սովին այ-

սու՝ կամի ցուցանել, թէ ոչ խորշի 'ի վշտաց՝ կամ 'ի պատժոց՝ զորս առաքէ նմա ա՟ծ առ 'ի զգաստացուցանել զնա. այլ՝ պատրաստ է սիրով յանձն առնուլ զայն, և հնազանդիլ այնմ:

Խրատով կարէ իմացեալ լինել աստ և վարդապետութի՟ն այն, որ պարունակի յօրէնս ա՟յ, և կամ նոյն իսկ օրէնքն. և ըստ այսմ կամի ասել, վ՟րդպութ՟ի քո և կամ օրէնք քո յա՟մի եղև և եղիցի ինձ օգնական՝ ցուցանելով ինձ զուղիղն:

Լամբրոնացին աջով իմանայ աստ զզօրութիւն տնօրէնութեանցն ք՟սի. ևս և զխաչ նորա. որով ընկալաւ նա ինքն ք՟ս զազգս մարդկան 'ի կորստենէ. և աւետարանական խրատու ուսոյց և յանկոյց զնոսա յինքն: Դրձ՟լ աջով իմացեալ լինի բանն ա՟ծ՝ որ ընկալաւ ըզմեզ. և խրատ նորա, այ՟ն չարչարանք ն՟ր և խաչելութի՟ն կանգնեաց զմեզ, և մարզեաց 'ի համբերութի՟: Ցայսոսիկ եղեալ մարգարէին՝ սկսանի պատմել, թէ յընդունելն զնա ա՟յ՝ զինչ ինչ արար նմա. վ՟յ ասէ:

ԼԷ. Ընդարձակեցեր զգնացս իմ 'ի ներքոյ իմ, և ոչ տկարացան շաւիղք իմ:

Սովաւ յայտ առնէ մարգարէն զայնոսիկ յաջողութի՟ս իւր, որք յիշատակին՝ բ՟. թագ. ը՟. 6: և ա՟. մնաց. ժ՟ը. 13. ըստ երկուց՝ այ՟ն ըստ փառաւորելոյ 'ի յաղթութեան, և բ՟ զօրանալոյ 'ի նուաճութե՟. ը՟ սոյին խօսելով ասէ:

Ընդարձակեցեր զգնացս իմ 'ի ներքոյ իմ, և ոչ տկարացան շաւիղք իմ: Կամի ասել, յա՟մ տեղիս, ուր և գնայի՝ յաջողեցեր ինձ՝ ընթանալ համարձակ, և գործել աներկիւղ. և այս էր ընդարձակութիւն իմն * 'ի ստորե
,, նորա ||. այ՟ն 'ի ներքոյ գնացից ն՟ր. ո՟պ դնի 'ի բ՟. թագ. կամ ը՟ Լամբ", առաջի ն՟ր. որով նշանակի յաջողիլ գնացից, կամ անսասան գնալ, ը՟ ոտիւք ունելով զընդարձակութի՟ անդորր. վ՟յ * Եւ ոչ տկարացան, ասէ, շա-
,, ւիղք իմ ||. կամ ըստ որում դնի 'ի բ՟. թագ. * ոչ
,, սասանեցան բարձք իմ ||. այ՟ն թէ՝ ճ՟նհք իմ յորս գնայի, և կամ գնացք ոտից իմոց ոչ տկարացան, այլ միշտ զօրաւոր եղեն. որ է ասել, եթէ վտանգէի մերձ 'ի նուաճիլ՝ քև զօրանայի, և ոչ տկարանայի:

Գնացիւք կարէ իմացեալ լինել աստ և հասարակ գործք կամ ընթացք կենաց. սոյնպէս և շաւիղք կարէ իմացեալ լինել մասնաւոր գործք. յոր միտ առէ իմաստունն. * ուսուցանեմ քեզ, խելամուտ առնել զքեզ
„ ուղիղ շաւղաց. զի եթէ գնասցես՝ ոչ խափանես-
„ ցին գնացք քո ‖. առակ. դ. 11: և թէ՝ * այլ ինքն
„ տէր ուղիղ արասցէ զշաւիղս քո, և զգնացս քո խա-
„ ղաղութ̃ յառաջեցուսցէ ‖. առակ. դ. 27: Իսկ ըստ այսմ իմացեալ՝ կամի ասել. համարձակեցուցեր զիս աներկիւղ և աներկեան գործել զբարիս. յորմէ և մասնաւոր գործողութիւնք իմ ևս յաջողեցան 'ի բարին:

Համբերողացն գնացիւք իմանայ զաստի կեանս, որ է գնացք 'ի ծննդենէ 'ի մահ: Այս կեանք առէ, նեղ էր յառաջ քան զգալուստն ք̃ի. զի մարդիկ մեծութ̃ և ամբարտաւանութ̃ ուռուցեալ՝ ոչ կարէին համարձակ գնալ. իսկ ք̃ս եկեալ ուսոյց գնալ խոնարհութ̃ և անընչութ̃. և այնու ընդարձակ եղև ճ̃պհն. յոր ա̃մքին իսկ առանց տկարանալոյ կարեն գնալ. զի թէպէտև նեղ և անձուկ ասաց ք̃ս զայս ճ̃պհ, բայց զայդ եդ վասն հպարտաց և ագահաց և հեշտասիրաց. զի գոլով ս̃ց ուռուցեալք և մեծացեալք՝ նեղ է վասն նոցա. իսկ որք անինչ և խոնարհ կեանս վարեն՝ ընդարձակ է նոցա, և դիւրին:

Նոյնպէս ըստ յարմարական մեկնութեան, ընդարձակեցուցանէ և յաջողէ ա̃ծ զընթացս հոգւոյն 'ի նուաճել զհին մարդն, և 'ի հպատակեցուցանել զստորին մասն հոգւոյն՝ վերին մասին. յոր միտ առէ առաքեալն. գաղ. ե. 16. * հոգւով գնասջիք ‖. և այս հայի 'ի վերին մասն. * և զցանկութիւն մարմնոյ
„ մի կատարիջիք ‖. և այս հայի 'ի ստորին մասն. զոր և մեկնեալ հրամայէ ասելով. * մերկացարուք զհին
„ մարդն գործովք իւրովք, և զգեցարուք զնորն ‖. կողոս. գ. 9: Իսկ յայնժամ ընդարձակին կեանք մեր, և ազատ մ̃նան 'ի ստորէ մերմէ, յ̃ր 'ի տիրապետութ̃է ստորին մասին:

Հոգի մեր ըստ վերին մասին դիմէ առ ա̃ծ. այլ ստորին մասամբ բերի 'ի վայր. կամ որպէս ասէ՝ միտ մեր՝ որ կապեալ կայ ընդ ա̃յ, ըստ վերին մասին կամի

միանալ ընդ նա, իսկ ըստ ստորին մասին իբրև քար ծանրութեամբ քարշի. եթէ վերին մասն ազատ գտցի 'ի ծանրութենէ նորա՝ իւրով ծանրութբ յափշտակէ զհոգին առ հուրն կենդանի, ապա եթէ ստորինն բորբոքեսցի, սէր վերնոյն ևս 'ի նոյն ծանրանայ և 'ի նոյն բերի. * սէր իմ ծանրութիւն իմ, նովաւ բերիմ՝ յո՛ և բերիմ||։

Զայս գիտելով մեր՝ պարտիմք ընկճել զապստամբութիւն ստորնոյն, կամ որ նոյն է նուաճել զմարմին մեր. զի * որք քրիստոսին են՝ զմարմինս իւրեանց 'ի
,, խաչ հանին ( ասէ առաքեալն ) կարեօք և ցան-
,, կութեամբ հանդերձ ||. գաղ. Ե. 24։ Հոգի մեր ոսկի է, և ստորին մասն աղտ ոսկւոյ. պարտ է զըտել. եթէ ոչ զտեսցի, 'ի կռանիլն ճայթի. իսկ եթէ զտեսցի՝ կռանի և ճարձակի. և ա՜ծ ինքնին ընդարձակէ զգնացս նորա. և ոչ տկարանան շաւիղք նորին։ Արդ յայտ արարեալ մարգարէին զընդարձակել ա՜յ զգնացս իւր, յայտ առնէ այժմ թէ յայնմ ընդարձակութենէ զինչ կարաց, և զինչ կարէ առնել. վ՜յ ասէ։

ԼԷ. Հալածեցից զթշնամիս իմ՝ և հասից նոցա. և ոչ դարձայց 'ի նոցանէ՝ մինչև սատակեցից զնոսա։

ԼԸ. Նեղեցից զնո՜ս, և այլ մի՛ կարասցեն կալ. և անկցին 'ի ներքոյ ոտից իմոց։

Աստանօր կամ զօրութբ դնի շաղկապս ո՜պ զի. և կամ 'ի կատարեալն պա՛րտ է իմանալ զայս բան. վասն զի սովաւ ոչ կամի ցուցանել մարգարէն, թէ հանդերձեալ է հալածել զթշնամիս իւր. զի յայտ է թէ ո՛չ առ այս ասաց զայս սաղմոս, այլ՝ յետ հալածելոյ զամենայն թշնամիսն. ո՜պ և յայտ է 'ի վերնագրէն. ուստի և յապառնի ժմկն դնելով ոչ կամի զապագայ գործողութիւնս ցուցանել, այլ միայն զներգործութի ընդարձակելոյն ա՜յ յայտ առնել։ Յայս միտ խօսելով ասէ։

Հալածեցից = նոցա։ Կամի ասել. ընդարձակեցեր զգնացս իմ, որով արիացայ հալածել զթշնամիս իմ. մ՜ վանել և սատակել զայնոսիկ, որք անիրաւութեամբ

յարուցեալ էին 'ի վերայ իմ և 'ի վր ժողովրդեան քո ։ Եւ առ 'ի ցուցանել զառաւելութիւն այսր ներգործու-թեան յաւելու, և ասէ ։

**Եւ ոչ դարձայց 'ի նոցանէ՝ մինչև սատակեցից զնս ։** կամի ա-սել, այնչափ ընդարձակութիւն ետուր ինձ, մինչև ամ հա-մարձակութբ յարձակիլ ինձ աներկիւղ 'ի վր թշնա-մեաց իմոց, և ոչ դառնալ յետս՝ մինչև 'ի կորուսա-նել զնս ։ Եւ եթէ կայցեն ինչ մնացորդք նոցա, զնս ես ասէ ջնջեցից . և առ այս յարէ ։

**Նեղեցից զնոսա, և ոչ կարասցեն կեալ ։** Այսինքն այնպէս նեղեցից և տագնապեցուցից զնոսա մինչև բարձցի կեանք նց . կամ, մինչև հասցէ նց մահ . կամ թէ այնչափ նեղեցից զնս, մինչև ոչ ևս կարասցեն կանգ-նիլ յիշխանութեան իւրեանց, որպ դնի 'ի ե . թագ . այլ՝ լինել ընդ իշխանութբ իմով . և առ այս յարէ . * անկ-„ ցին 'ի ներքոյ ոտից իմոց ‖ . կամ ընդ իշխանութեամբ իմով ։

Ըստ լամբրոնացւոյն՝ զայսպիսի բանս վստահութեամբ կարէ ասել և հաւատացեալն 'ի քս . զի զօրութբ նր ելեալ 'ի մարտ ընդդէմ դիւաց և ախտից՝ կարէ հա-լածել զնոսա . միայն թէ կրկնակի զինեսցի ընդդէմ նոցա . նախ՝ զի հասեալ 'ի վր թելադրութեանց նց ոչ դա-դարեսցէ 'ի վանելոյ զայնպիսի թելադրութիւնս մինչև սպառեսցէ զայնս ։ Եւ երկրորդ՝ զի աղօթիւք և պահօք ձնշելով զինքն՝ նեղեսցէ կամ նուաճեսցէ զնս, մինչև ոչ ևս կարել նոցա կեալ առաջի նր . այլ՝ անկանիլ ընդ ոտիւք նորին, կամ ըստ ամի յաղթիլ 'ի նմէ ։

Եւ այս բանք ուղղակի ևս առ քս հային . որ ոչ միայն հալածեաց զթշնամիս ազգի մարդկան, այլև էարկ զնոսա ըստ ամենայնի ը ոտիւք իւրովք . և ետ զօրութիւն ծառայից իւրոց զնոյն առնել . զորս զկեր-պարան նմանութեանն ընկալեալ և մարգարէին՝ ասէ ։

լթ . **Ո՛ զօրացուցեր ինձ զօրութիւն 'ի պատերազմի . զյարու-ցեալսն 'ի վր իմ՝ 'ի ներքոյ իմ արարեր ։**

Զայսպիսի ինչ եդ և 'ի համարն 32 . այլով իմն յա-ւելուածով յասելն . * ած՝ որ զգեցուցեր ինձ զօրու-„ թիւն, և եդիր յամբծութեան զճանապարհս իմ ‖ . և զի այն զօրութիւն կարգեալ էր 'ի վանումն թշնամեաց,

ատամնոք զայն 'ի մէջ մատուցանել ասելով ։

Ս՛ովորեցուցեր ինձ զօրութիւն 'ի պատերազմ · զյարուցեալսն 'ի վերայ իմ 'ի ներքոյ իմ ոտքեր ։ Կամի ասել · զօրացուցեր զիս զօրութեամբ քում՝ լինել յաղթօղ 'ի պատերազմի · և զթշնամիս իմ՝ որք յարուցեալ էին 'ի վե՛ր իմ, նկուն արարեր, և արկեր ընդ իշխանութեամբ իմով ։ Օ՛ այս ասելով մարգարէին դիտէ հաստատել, թէ՛ հալածել նո՛ր զթշնամիս իւր յիրաւի ոչ էր 'ի զօրութենէ իւրմէ, այլ 'ի զօրութենէ անտի, զոր զգեցոյց նմա տէր · մինչ թէ ինքնին իսկ տէր զյարուցեալսն 'ի վե՛ր նո՛ր՝ զփղշտացիս, զմովաբացիս, և զամոնացիս, 'ի ներքոյ նորա արար, և ընդ իշխանութեամբ նորա էարկ ։

Ի համարն 32, յաւել մարգարէն * զգեցուցեր ինձ „ զօրութիւն ‖, ոչ յաւել և զքաջ 'ի պատերազմ. իսկ աստ զայն ևս յաւելու ասելով. * զգեցուցեր ինձ զօ„ րութիւն 'ի պատերազմ ‖. և այս հայի յայն՝ զոր ասաց 'ի համարն 34 · * ուսուցեր զձեռս իմ 'ի պատերազմ ‖ · յորս յաւելմամբ բառիդ պատերազմ՝ կամի յայտ առնել՝ թէ սոսկ ունիլն զզօրութիւն և զուսումն պատերազմելոյ չիճարէ ինչ, եթէ 'ի գործ ոչ դիցի 'ի պատերազմի · զի քաջութիւն զինուորի 'ի մարտի երևի, և ոչ 'ի մարզի ։ Ս՛արզն հարկաւ պահանջի, պատերազմն կարգաւ · զի նախ պարտ է ուսանիլ, և ապա ըստ ուսանելոյն պատերազմիլ · յոր միտ ասէ իմաստունն · ժող · Թ · 16 · * բարի է իմաստութիւն քան „ զզօրութիւն ‖ · և թէ լաւ է իմաստութեամբ յաղթել, քան անկիրթ պատերազմիլ · ուստի յարէ 'ի 18 համարն · * բարի է իմաստութիւն քան զանօթս պատերազ„ մի ‖ · մինչ եթէ թշնամին իցէ իմաստուն · և կամ իցէ իբր ընտանի, կամ իբր դարանակալ · որպիսի են թշնամիք հոգւոց մերոց, սատանայ, մարմին, և այլն · ընդդէմ առաջնոյն՝ պիտոյ է իմաստութիւն · ընդդէմ երկրորդին՝ զօրութիւն · ընդդէմ երրորդին՝ զգաստաւորութիւն զգուշութեան ։ Իսկ ընդդէմ ամենայնի՝ աճապարումն · ո՛պ արար դաւիթ · որով և եհար զգլուխ այլազգւոյն ( Ա · Թագ · ԺԷ · 45 · ) 'ի ցուցանել՝ թէ աճապարելի է զսկզբնաւորութիւն մարտին խորտակել իբրև զգլուխ ։ Իսկ այս դիւրաւ յաջողի եթէ մարտիցուք խոնարհութեամբ ։ Ճա՛րտար ըմբիշն խոնարհի և կորանայ, և 'ի կորանալն

զօրանայ. խոնարհեսցուք և մեք, զի զօրասցուք. Զի ընդ խոնարհին դաւթի է ած. և նա ինքն պատերազմի և վանէ զթշնամիս խոնարհաց. ըստ որում վկայէ մարգարէն յաջորդ բանին ասելով.

ԽԱ. Զթշնամիս իմ հալածական արարեր. և զատելիս իմ սատակեցեր։

Զայն' զոր 'ի վերոյ ասաց, * հալածեցից զթշնամիս իմ ||, այլով օրինակաւ դնէ աստ' առ 'ի մեծացուցանել զզօրութիւնն այ, և զբարերարութի նր, և ցուցանել' թէ զոր ինչ յաղթութի արար ընդդէմ թշնամեաց իւրոց, այն էր 'ի պաշտպանութենէն այ. ուստի նմա միայն տալով զնոյն' ասէ.

Զթշնամիս իմ հալածական արարեր. և զատելիս իմ սատակեցեր։ Կամի ասել. 'ի յառնել թշնամեաց 'ի վր իմ, դու ինքն յետս դարձուցեր զնոսա յինէն, և արարեր զնս հալածականս և փախստականս. ևս և սատակեցեր զայնոսիկ, որք անիրաւութբ ատէին զիս։ Այս բանք 'ի դիմաց քնի ասացեալ' յայտ առնեն զյաղթութիւն նր, որով վանեաց զսատանայ և զզօրս նորա' զթշնամիս ազգի մարդկան, և յամօթ արար զմատնիչս իւր և զհալածիչս եկեղեցւոյ իւրոյ։ Իսկ 'ի դիմաց իւրաքանչիւր հաւատացելոյ իմացեալ' յայտ առնեն ըստ լամբրոնացւոյն' զյաղթութին, որով մարդս զօրացեալ բանիւն քնի և շնորհօք նորա' յաղթէ ախտից և դիւաց և աշխի. ըստ որում և ինքն տր արար. որպ և ասաց իսկ. * քաջալերեցարուք, զի ես յաղթեցի „ աշխի ||. յովհ. ժզ. 33։ Զայսոսիկ յայտ արարեալ մարգարէին' առաջի առնէ այժմ թէ 'ի հալածիլ թշնամեաց իւրոց զինչ տագնապ եհաս նոցա. վն ասէ.

ԽԲ. Աղաղակեցին, և ոչ ոք էր որ փրկէր զնս. կարդացին առ տէր, և ոչ լուաւ նոցա։

Այդոքիկ թշնամիք' զորոց խօսի աստ' էին այլազգիքն, որք 'ի պատերազմին ընդ դաւթի, և 'ի հալածիլն 'ի նմանէ' աղաղակէին առ չաստուածս զորս տանէին 'ի բանակս իւրեանց. յայս հայելով աւաղէ զնոսա, և իբր թէ վայ տալով նոցա ասէ.

Աղաղակեցին, և ոչ ոք էր՝ որ փրկէր զնս · կարդացին առ Տր, և ոչ լուաւ նոցա ։ Կամի ասել, յաղաղակել նց առ չտծս իւրեանց՝ ոչ ոք 'ի չտծոց անտի նոցա լսէր նց, և փրկէր զնս · ուստի տղ գրի Բ · Թագ · Ե · 21 ։ և ա · Մնաց · ԺԴ · 12 · 'ի տագնապիլ իւրեանց յերեսաց դաւթի՝ խուճապէին և թողուին զչտծս իւրեանց և փախչէին ։ Լինէր և երբեմն՝ զի ճանաչելով նոցա, թէ հզօրագոյն է տծն իլի, ( տղ յայտ է՝ ա · Թագ · Դ · 8 · և Զ · 5 · ) առ նա ևս աղաղակէին · բայց ոչ լսէր առ նոցա տէր, զի ոչ էր ուղիղ աղաղակ նոցա ։

Հնար է ևս ասել, թէ առաջին հատուած այսր համարոյ, այն է՝ * աղաղակեցին, և ոչ ոք էր՝ որ փրկէր ,, զնս ‖, հայի յայլազգիսն ։ Իսկ երկրորդ հատուածն, այս է՝ * կարդացին առ Տէր, և ոչ լուաւ նց, հայի 'ի սաւուղ, յեբուսթէ, 'ի յաբեսաղոմ, ևն · զի նք ևս ըստ իմիք յայ օգնութիւն խնդրէին 'ի կորուսանել զդաւիթ · ( տղ երևի ա · Թագ · ԻԴ · 7 ։ և Բ · Թագ · ԺԵ · 17 · ) բայց ոչ գտանէին ։ Արդ՝ որովհետև եգիտ դաւիթ զթշնամիս իւր անօգնական, սպառնայ կոտորել զնոսա · սմին իրի ասէ ։

ԽԳ · Մանրեցից զնոսա՝ որպէս փոշի առաջի հողմոյ · որպէս հող փողոցաց կոխեցից զնս ։

Զայս ասէ մարգարէն՝ ոչ առ 'ի ցոյց վրէժխնդրութե, զի այսպիսի ոգի հեռի է 'ի սրբց, այլ առ 'ի ցուցանել՝ թէ 'ի զօրացուցանել զնա այ՝ չարաչար վանէ զթշնամիս · և որպէս թէ մանրէ զնս · վսյ ասէ ։

Մանրեցից զնս որպէս փոշի առաջի հողմոյ ։ Կամի ասել, հարից զթշնամիս իմ, և զմնացորդս նոցա ցիրուցան արարից օգնութեամբ այն, տղ ցիրուցան լինի փոշի առաջի սաստիկ հողմոյ · կամ որ նոյն է՝ սատակեցից զթշնամիս իմ, և մնացորդք նոցա ցրուեսցին, որպէս ցրուի հող երկրի՝ յորժամ լեսեալ լինի և հողմով վանի · և յայս միտ 'ի Բ Թագ · դնի, * լեսի զնոսա իբրև զհող ,, երկրի ‖ · ուր զօրութեամբ յաւելեալ լինի և այս ևս՝ թէ ցրուեցի զնս պատերազմաւ իբրև հողմով ։ Իսկ առ 'ի ցուցանել զըստ ամենայնի նուաճիլ նոցին՝ յարէ զկնի, և ասէ ։

Որպէս հող փողոցաց կոխեցից զնս ։ Սա ասելով խնամոյ

զցամաքեալ տիղմն . զի խոնաւ տիղմն թէպէտեւ ընդ ոտիւք կոխի , բայց աղտեղէ զոտսն . իսկ յորժամ իս-պառ ցամաքի , անշաղախ կոխեալ լինի , եւս եւ մանր-րի ։ Այսպէս են ասէ եւ թշնամիք մր̃ ցամաքեալք 'ի զօրութենէ , ուստի եւ ես զօրացեալ տերամբ՝ ոչ մի-այն յաղթեցից եւ տիրեցից նոցա , այլ եւ կոխեցից եւ ընկ-ճեցից զնս̃ , եւ աներկիւղ հրամայեցից նոցա . եւ եթէ ը̃դէմ դարձցին ինձ , սաստկութբ̃ ելից 'ի վր̃ նոցա՝ մինչեւ մանրեցից զնս̃ . եւ յայս միտ 'ի բ̃ թագ . գնի .
* իբրեւ զկաւ գուհաց մանրեցից զնոսա || ։

Օ այս արար տրն̃ մեր ընդ ստնյ̃ եւ ընդ զօրս նր̃ . զի մանր-րեաց զզօրութիւն նր̃ եւ ցրուեաց իսպառ . եւ յիջանելն հոգւովն 'ի դժոխս՝ կոխեաց զնս̃ իբրեւ զկաւ . մինչեւ ոչ եւս կարել նր̃ բռնի ձգել զոք անդր ։ Օ այս կարեն առնել ըստ ասելոյ լամբրոնացւոյն եւ իւրաքանչիւր հա-ւատացեալք . ըստ որում արարին եւ մանկունք փոքունք եւս եւ աղջկունք . զի ասաց քս̃ . * ետու ձեզ իշխանու-թիւն կոխել զօձս եւ զկարիճս , եւ զամ̃ զօրութն̃ թըշ-նամւոյն || . ղուկ . Ժ . 19 ։ Ի սոյն յաւելեալ մար-գարէին՝ ասէ ։

խք̃ . Փրկեսցես զիս տէր 'ի հակառակութենէ ժողովրդոց . եւ կա-ցուսցես զիս գլուխ հեթանոսաց ։

Դաւիթ մարգարէ երկոքումբք կրեաց հակառակու-թիւնս . մի՝ յընդդէմ դառնալ ազգին իւրոյ . որպ̃ եղեւ 'ի հալածմանն սաւուղայ եւ աբեսաղոմայ , եւ սաբէեայ որդւոյ բոքորայ . ( բ̃ թագ . ի̃ . 2 ։ ) Երկրորդ՝ 'ի յառ-նել հեթանոսաց բզմ̃ անգամ 'ի վր̃ նր̃ ։ Եւ զի յեր-կոսին եւս եգիտ յայ̃ պաշտպանութիւն եւ օգնութիւն , յառաջինն հայելով ասէ ։

Փրկեսցես զիս տր̃ 'ի հակառակութենէ ժողովրդոց ։ Այսինքն թէ փրկեսցես զիս տէր յա̃ եւ իցէ հակառակութե̃ , որպ̃ եւ փրկեաց 'ի հակառակութենէ ժողովրդեան իմոյ , եւ 'ի կռւոյ նոցա 'ի միաբանիլ նոցին ը̃ ապստամբս ։ Հայե-լով եւ յերկրդն ասէ ։

Կացուսցես զիս գլուխ հեթանոսաց ։ Կամի ասել՝ որ փրկեացն զիս 'ի հակառակութենէ ազգի իմոյ՝ նա ինքն զօրացոյց զիս , եւ ետ ինձ լինել գլուխ եւ իշխան ոչ միայն 'ի վերայ իմի , այլ եւ 'ի վր̃ հեթանոսաց , կամ

օտար ազգաց ։ Յապառնին խօսելով կամի խնդուցանել յանցեալն՝ ըստ ոճոյ երգայեցւոց, մինչդ զի 'ի բնագիրս նոցա յանցեալն դնի. ոճ և 'ի քանի մի ձեռագիր սաղմոսս մեր ։

Այս բան ուղղակի հայի 'ի դէմս քոի. ըստ որում փրրկեաց զնա հայր 'ի հակառակութենէ հրէից. և յարուցանելով զնա 'ի մեռելոց՝ յամօթ արար զչար խորհուրդս նոցա, և արհամարհեաց զնա. և 'ի տեղի նոցա ժողովեալ զհեթանոսս 'ի նոր եկեղեցի՝ կացոյց զնա գլուխ 'ի վերայ նոցա ։

Որպէս ժողովրդովք և հեթանոսօք խմբեալ լինելն աստ ըստ լամբրոնացւոյն՝ չար խորհուրդք և դաւք. յորոց հակառակութենէ փրկէ տր զայն, որ յուսայ 'ի նա, և կացուցանէ զնա գլուխ 'ի վր նց. Իբր տայ նմա իշխել նոցա ։ Զայս եղեալ մարգարէին՝ յայտ առնէ այժմ, թէ որպիսի էին առ ինքն այն ժողովուրդք և ազգք՝ որոց ինքն կացուցաւ գլուխ. վսյ ասէ ։

խդ. Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի, ծառայեաց ինձ և 'ի լուր ականջաց լուաւ ինձ ։

խե. Որդիք օտարաց ստեցին ինձ. որդիք օտարաց հնացան, և կաղացան 'ի շաւղաց իւրեանց ։

Ի նախընթաց համարն նախ եդ զժողովուրդն իւր, և ապա զժողովուրդս հեթանոսաց. իսկ աստ նախ դնէ զհեթանոսս և ապա զիէլացիս ։ Ի հեթանոսս ակնարկելով ասէ ։

Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի՝ ծառայեաց ինձ. և 'ի լուր = ինձ ։

Ոչ գիտէի ասելով ոչ կամի ցուցանել՝ թէ ամենևին ոչ ճանաչէր զայն ժողովուրդ, որ ծառայեաց նմա, այլ թէ ոչ գիտէր լինել ինքեան ժողովուրդ ։ Այսպիսի ժողովրդով որպէս ասացաք, իմանայ զհեթանոսս, որք անկեալ ընդ իշխանութբ նր ծառայէին նմա. և * 'ի լուր ականջաց լսէին նմա ‖. Իբր լսելով միայն զհրամանս նորա՝ առանց տեսանելոյ զնա, յօժարութբ հնազանդէին նմա ։ Իսկ թէ արդեօք իւր բուն ժողովուրդք զինչ արարին նմա, զայն ևս յայտ առնէ ասելով ։

Որդիք օտարաց ստեցին ինձ ։ Որդիք օտարաց կոչէ զիէլացիս. զի գոլով նոցա իբր որդիք և ժողովուրդ դաւթի,

օտարացան 'ի նմ̃է , և օտարաց ծառայելով՝ օտարաց եղեն որդիք . որք և յետ ընտրելոյ զնա իւրեանց թգ̃ր՝ միաբանեալ ընդ արեւաղանց և է̃ սաբէեայ՝ * ատեցին նմա ‖ . զի ոչ կացին յայնմ հաւատարմութեան . որով խոստացան ծառայել նմա իբրև իւրեանց թգ̃րի . որպէս արարին և ընդ Տ̃րն մեր , մինչ թէ ուրացան և զնա առաջի պիղատոսի ասելով * չէք մեր թագաւոր բաց 'ի կայսերէ ‖ : Այլ 'ի կարծել իւրեանց՝ թէ մեծի ինչ ունին հասանել , փ̃ոխ մեծամարդոյ ունայնացան . և առ

այս յարէ :

Որդիք օտարոտ հնացան . Այլ ինքն նոյն որդիք իմ̃՝ որք օտարացան , օտարանալով իւրեանց տկարացան և անարգեցան , անպիտանացան և յետս ընկեցան . վ̃ն զի ոչ յորժամ իր ինչ մաշի , կորուսեալ զզօրութի̃ իւր՝ տկարանայ . և 'ի յայտ գալ նեղքին պակասութեանն անարգ երևի . և 'ի հաստատութենէ պակասեալ՝ անպիտանանայ . և հուսկ յետոյ ընկեցեալ լինի 'ի բաց : Նոյնպէս և որդիք իմ̃ի միաբանելով ընդ ապստամբս՝ 'ի հնանալ նոցա , զի 'ի պակասել ապստամբաց՝ կորուսին զզօրութիւն իւրեանց , որով և տկարացան . և 'ի յայտ գալ անզգամութեան իւրեանց , խայտառակ երևեցան . և 'ի մնալ հաստատութենէ իւրեանց պակասեալ՝ անպիտանացան . և հուսկ յետոյ ընկեցան 'ի բաց 'ի յուսոյ իւրեանց : Այլ յաւելու զպատճառն ասելով :

Եւ կաղացան 'ի շաւղաց իւրեանց : Այս բառս և՝ ունի զզօրութիւն պատճառական շաղկապիս "վ̃ն զի" . ո՞չ թէ ասէր . վ̃նկ անարգեցան նոքա , վասն զի * կաղացան 'ի շաւղաց իւրեանց ‖ . զի յետս կացին յուղիղ գնացից , և 'ի պարտաւոր հնազանդութենէ իւրեանց . կամ որ նոյն է , ըստ պարտաւորութե̃ իւրեանց ոչ կացին 'ի հնազանդութեան թգ̃րի իւրեանց , այն է՝ դաւթի , այլ ապստամբեցան և յարեցան յաբեսաղոմ :

Իսկ եթէ բառս և՝ առցի պարզաբար փոխ բաղհիւսական շաղկապի , փոքր մի այլազգ մեկնի այս յետին բան . ո՞չ թէ ասացեալ էր . վրիպեցան նք̃ 'ի գործեն զգործ ապստամբութե̃ . կամ թէ 'ի պատերազմիլ նոցա ընդ իս , և 'ի պաշարել իւրեանց 'ի զօրաց իմոց՝ երևեցան կաղացեալ , զի սխալեալ 'ի գործս իւրեանց . և թերևս յայս միտ դնի 'ի է̃ . թագ . * սխալեցին 'ի

պաշտաման իւրեանց ։

Այս բանք, որ տեսանի 'ի գրելոցդ, ուղղակի հային 'ի դէմս քոյի · զի յայտ է թէ՝ հրէայք, որք յառաջն էին ժողովուրդ Նորա, օտար եղեն 'ի Նմէ, և ստեցին հաւատարմութեան իւրեանց. և մաշեալ անպիտանացան, և թօթափեցան 'ի Նմէ. և կաղացան և վրիպեցան ոչ միայն 'ի շաւղաց արդարութե, այլ և 'ի բանից մարգարէիցն. որով և յանձն եղեն խոտա ։ Իսկ 'ի տեղի ն̃ց հեթանոսք, զորս չէր արարեալ ա̃յ իւր յատուկ ժողովուրդ, ընկալան զնա. լուան աւետարանի Նորա, և ծառայեցին Նմա՝ ժողովելով 'ի մի Նոր եկեղեցի նր̃ ։ Այլ ծանիր և՝ զի որդիքն ինչ ոչ էին որդիք օտարաց, այլ որդիք բարձրելոյ և ժառանգ փառաց. և սակայն ըստ գրելոյ մեր այժմ կամակար եղեն որդիք օտարաց, յոտար միտս շրջելով և յոտար կամս բերելով և յոտար գործս գնալով ։ Յոտար միտս ստեցին. յոտար կամս մաշեցան. յոտար գործս կաղացան ։ Իսկ հեթանոսք՝ որք օտար էին՝ որդիացան. և հակադարձ բանիւք խօսելով, ստեցին՝ զի սուտ ցուցին ըզկրօնս իւրեանց. մաշեցան՝ զի սրբեցան 'ի շաղախմանէ մեղաց, և կաղացան՝ զի յետս կացին 'ի գնալոյ զհետ կռոց ։ Զայս միտ առնու զայսոսիկ բանս և սբն յակոբ մծբնայ հայրապետ. 'ի Ճառն. ԺԵ. և գրէ այսպէս. * և դաւիթ ( ասաց ) 'ի լուր ականջաց լսի-
„ ցեն ինձ որդիք օտարաց. և Նոքին իսկ որդիք օտա-
„ րաց արգելցին և կաղասցին 'ի շաւղաց իւրեանց.
„ քանզի հեթանոսք լուան, և կաղացան 'ի շաւղաց
„ պաշտամանց դիցն օտարաց, կռոց և պատկերաց ։
„ Իսկ եթէ ասիցեն ( հրէայք ) թէ զմեզ կոչեաց որ-
„ դիս օտարաց, Նոքա ( թէպէտև ) կոչեցան որդիք և
„ ժառանգորդք, որ և ասաց Եսայի, որդիս ծնայ և
„ սնուցի. և ( սակայն ) Նք արհամարհեցին զիս ։ Իսկ 'ի Ճառն՝ ԺԶ. ասէ. * կոչեաց զմեզ որդիս. որպէս ա-
„ սացն. թէ որդիք օտարաց լսիցեն ինձ ։

Յարմարական մեկնութիւն հնար է ժողովրդովք իմանալ աստ ըստ լամբրոնացւոյն զհրեշտակս. զորս թէպէտև մեք ոչ գիտեմք, զի ոչ տեսանեմք, բայց Նոքա ծառայեն մեզ, զի պաշտպանեն մեզ. և լսեն խնդրուածոց մերոց ։ Իսկ որդիք օտարութ՝ զի դևք, որք

օտարացան յինէն, հանապազ ստեն մեզ. Թէպէտև զօրութեամբն քո մաշեցան ՚ի զօրութէ իւրեանց, և կաղացան ՚ի չար հնարից։ Օայսուիկ առաջի եդեալ մարգարէին՝ խոստովան լինի ՚ի վերջին մասին սաղմոսին՝ թէ յայսմ ա՟մի պաշտպան և փրկիչ իւր ունի զա՟ծ կենդանի. ուստի և օրհնելով զնա ասէ։

**Խզ. Կենդանի է Տ՟ր, և օրհնեալ է Ա՟ծ. և բարձր եղիցի Ա՟ծ փրկութեան իմոյ։**

Կենդանի ասի նա՝ որ ունի կեանս յինքեան. իսկ կեանքն սահմանի գոյութիւն ինքնաշարժ, կամ ներգործականութիւն ինքնաշարժ գոլոյ։ Արդ ա՟ծ ասի կենդանի և կեանք, ոչ զի ինքնին շարժի, այլ զի է աղբիւր ինքնաշարժութեան կենդանեաց. իբր զի գոլով ինքն էակ անշարժ կամ ինքնութեամբ անշարժութեամբ՝ տայ այլոց ինքնին շարժիլ. նա և պահէ զնո՟ յայնմ ինքնաշարժութեան՝ ՚ի գոլ և ՚ի գործել։

Իսկ արդ՝ քանզի մարգարէն մինչև ցայսվայր յայտ արար ՚ի դիմաց իւրոց և ՚ի դիմաց քո զամենակարող զօրութիւն ա՟յ, և զպաշտպանել նորա զինքն յա՟մ վտանգս, և զվանել նորին զթշնամիս իւր. ՚ի յարելն զկնի զայս բան՝ սովին զխոսէ նախ ցուցանել, թէ ինքն զայնպիսի տ՟ր ունի, որ չէ մեռեալ, և չէ մեռանելի, այլ կենդանի և կենդանացուցիչ ա՟մի. ուստի և յա՟մի կարող է պահել զինքն և փրկել, և առնուլ նա վրէժս ՚ի թշնամեաց իւրոց. ո՟պ և արար իսկ։ Պիտոյ էր կդ ցուցանել զինքն շնորհապարտ գոլ, և այնու շնորհակալ լինել զա՟յ, և զկենդանութիւն նո՟ր հռչակելով օրհնել զնա վասն բարերարութեան և փրկութեան և պահպանութեան նորա, զոր եցոյց նմա. բայց ո՟պ զի յայտ արասցէ զառաւելութիւն փափաքմանացն իւրոց ՚ի յօրհնել զա՟ծ, այնպիսի օրինակաւ ձևացուցանէ զբան իւր, մինչ գրեթէ երևի՝ աղաղակելով գոչել յասելն։

**Կենդանի է Տ՟ր, և օրհնեալ է Ա՟ծ։** ա՟յ թէ միշտ կենդանի է տէր ա՟ծ իմ. զի է տէր կենդանութեան. կեայ յինքեան, և տայ կեանս ա՟մցն. օրհնեալ է յինքեան, և տայ զօրհնութիւն իւր ա՟մցն. բարձրեալ է յինքեան, և բարձրասցի ՚ի յաւիտեան. և առ այս յարէ։

**Եւ բարձր եղիցի Ա՟ծ փրկութեան իմոյ։** ա՟յ է թէ ա՟ծ՝ որ է

պատճառ և պահապան փրկութեան իմոյ, բարձրասցի և փառաւորեսցի յաւիտեան, և յա͞մի ծանիցի զքանչելի. այս և զգործս փրկութեանն առաջի եղեալ ասէ ։

ԽԷ. Ա͞Ծ, որ խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև ։

Մարգարէն դաւիթ 'ի հալածիլ իւրում 'ի սաւուղայ և յաբեսաղոմայ, և յապստամբիլ 'ի նմանէ ժողովրդեանն՝ ոչ կամեցաւ ինքնին խնդրել 'ի նցէ զվրէժ, այլ յանձն արար ա͞յ զա͞մ։ Այլ և ա͞ծ ինքնին խնդրեաց զայն յերկուց եւս, զի 'ի սաւուղայ և յաբեսաղոմայ. (ա. թագ. լա. 3. և 4, և բ. թագ. ժը. 9. և 14.) և զժողովուրդն հնազանդեցոյց 'ի ներքոյ նորա. և ահա այս է՝ զոր ասէ ։

Ա͞Ծ՝ որ խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև, զի առանց խնդրելոյ իմ զվրէժ 'ի հալածչաց իմոց, ա͞ծ՝ որ է կենդանի և հզօր տէր՝ (ո͞պ գնի 'ի բ. թագ.) ինքնին խնդրեաց զնոյն զայն 'ի նցէ. և զժողովուրդն իւրացուց հանեալ 'ի ձեռաց նո͞ց հնազանդ արար ընդ ինև. զի եդ 'ի ներքոյ իշխանութե͞ իմոյ. և կամ՛ նուաճեաց ը͞ իշխանութ͞բ իմով. և յայս միտ 'ի բ. թագ. գնի. * խորտակէ զժողովուրդս 'ի ներքոյ իմ ‖. զի նուաճեալ պահէ 'ի ներքոյ իմ ։

Այս բան և նախընթացն 'որ ուղղակի ասին 'ի դիմաց ք͞սի առ հայր՝ ըստ մարդեղեալ մկնութենցդ. ո͞պ թէ ասացեալ էր. կենդանի է հայր իմ, որ է տէր ա͞մի. և օրհնեալ է ա͞ծ իմ յաւիտեան, որ փրկեաց՝ զի յարոյց զիս 'ի մեռելոց. և խնդրեալ զվրէժ իմ 'ի հալածչաց իմոց՝ 'ի դիւաց և 'ի հրէից, զնո͞ կապելով և զնոսա մերժելով։ Եւ 'ի տեղի հրէից ետ ինձ ժողովուրդ զհեթանոսս. զորս և հնազանդ արար 'ի ներքոյ իմ (եփես. ա. 20. և 22.)

Դարձեալ՝ այս բան ասի և 'ի դիմաց եկեղեցւոյ առ ք͞ս՝ հայելով 'ի յարութիւն նո͞ր. կենդանի է փրկիչն իմ՝ և օրհնեալ յաւիտեան. * յ͞ս ք͞ս երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս ‖. եբր". ժգ. 8. զի թէպէտ մեռաւ մարմնով, այլ յարուցեալ 'ի մեռելոց՝ կեայ յաւիտեան. վ͞ոյ և բարձր արարից զնա, որ փրկեաց զիս 'ի ձեռաց ս͞տնյին. և խնդրեաց 'ի նմէ զվրէժ իմ. և հնազանդ

արար ինձ զհեթանոսս ։ Զայս փրկութիւն այլով իմն օրինակաւ ևս կամելով մարգարէին յայտ առնել՝ կրկնի յիշատակէ, և ասէ ։

ԽԸ. Փրկիչ իմ 'ի թշնամեաց իմոց բարկացողաց, յայնցանէ՝ որ յարուցեալ են 'ի վր իմ, բարձր արարեր զիս. և յառնէ անիրաւէ փրկեցեր զիս ։

Երեքկին էին թշնամիքն դաւթի ։ Ոմանք էին այլազգիք, որք իբրև լուան զթագաւորել նորա, բարկութբ յարձակեցան 'ի վր նր ։ Իսկ այլք էին իւրացիք յերկուս դասս. որոց ոմանք գործով հալածեցին զնա. որպիսի եղեն սաւուղ, յեբուսաէ, աբեսաղոմ, ևն ։ և ոմանք բանիւ և խորհրդով. յորոց միջի անիրաւ գտաւ աքիտոբէլ, որ ետ աբեսաղոմայ զանիրաւ խորհրդս վր դաւթի ։ (Բ. Թագ. ԺԶ. 21 ։ և ԺԷ. 1 ։)

Հայելով յառաջինսն՝ ասէ ։

Փրկիչ իմ 'ի թշնամեաց իմոց բարկացողաց ։ Տր թէ դու ես ճշմարիտ փրկիչ իմ, որ հաներ և փրկեցեր զիս 'ի միջոյ թշնամեաց իմոց յայլազգեաց, որք բարկութեամբ յարձակեալ էին 'ի վր իմ ։ Հայելով և յիւրացիս ըստ առաջնումն դասու ասէ ։

Յայնցանէ որ յարուցեալ են 'ի վր իմ, բարձր արարեր զիս ։ Տր 'ի սաւուղայ, և յաբեսաղոմայ, և յայլոց ևս, որք յարուցեալ էին 'ի վր իմ, * բարձր արարեր զիս ‖. Տր փառօք փրկեցեր զիս. իբր զի 'ի կամիլ նց ամենեին նկուն առնել զիս՝ դու փառաւորեցեր զիս, և կացուցեր թգր 'ի վերայ ժողովրդեան քո ։ Ըստ երկրորդումն դասու ևս խօսելով ասէ ։

Յառնէ անիրաւէ փրկեցեր զիս. Տր յաքիտոբելայ, ևս և յանիրաւ խորհրդոց նորա փրկեցեր զիս ։ (Բ. Թագ. ԺԷ. 14. և 23 ։)

Զայս ամ՝՝ զոր որոշակի եդաք ըստ մասնաւոր թշնամեացն դաւթի. հնար է միանգամայն և առ ամենայն վերածել. զի այսու բանիւ դիտէ մարգարէն յայտ առնել, թէ ած յամ թշնամեաց իւրոց փրկեաց զինքն. և զմարդկայինս ազգ 'ի սատանայէ և 'ի դիւաց նորա. յոր սակս իսկ գոհանայ զնմէ. և ասէ ։

խթ․ ՎԱ̃Ն ԱՅՍՈՐԻԿ ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԷՑ ՔԵԶ ՚Ի ՀԵԹԱՆՈՍՍ․ Ե ԱՆՈՒԱՆ ՔՈՒՄ ՍԱՂՄՈՍ ԱՍԱՑԻՑ։

Ըստանօր բառդ վասն այսորիկ՝ հայի յայն ա̃մ, զոր ասաց մարգարէն ՚ի սաղմոսի աստ, մի̃նչ ակնարկելով ՚ի փրկութիւն անձին իւրոյ, ՚քզի չունելով ինչ հատուցանել ա̃յ վասն այնր ա̃մի, միայն շնորհակալութի̃ մատուցանէ նմա․ և խոստանայ ես զնոյն առնել միշտ, և ասէ։

ՎԱ̃Ն ԱՅՍՈՐԻԿ ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԷՑ ՔԵԶ ՚Ի ՀԵԹԱՆՈՍՍ․ Ե ԱՆՈՒԱՆ ՔՈՒՄ ՍԱՂՄՈՍ ԱՍԱՑԻՑ։ Այսինքն, վ̃ն ա̃մի այնր բարերարութեան, ես և վ̃ն այնր՝ որով փրկեցեր զիս ՚ի հալածչաց իմոց, խոստովան եղէց քեզ ՚ի հեթանոսս, ա̃յ յայտնի պատմելով զբարերարութիւնս քո՝ գոհացայց զքեզ, և սաղմոսիւք օրհնեցից զանուն քո։

Իսկ զոր ասէ՝ * ՚ի հեթանոսս ‖, երկակի իմանի։ Ըստ միոյն կամի ասել ո՛չ ՚ի ծածուկ խոստովան եղէց քեզ, այլ յայտնի ՚ի մէջ ա̃մ ազգաց, ես և ՚ի մէջ հեթանոսաց։ Ըստ երկրորդին կամի ասել․ աւանդեցից զայնպիսի բանս գոհութե̃, որք մնասցեն և տեւեսցեն և ասասցին ես ՚ի մէջ հեթանոսաց․ ո՛րպ և եղև իսկ․ զի յա̃մ ազգս հեթանոսաց ասին ՚ի հաւատացելոց սաղմոսքն դաւթի․ Ըստ երրորդին կամի ասել․ բերանով հեթանոսաց գոհացայց զքեզ․ զի ՚ի փրկել հեթանոսաց ՚ի ծառայութենէ կռոց և ՚ի դառնալ նոցա առ ա̃ծ, տեսեալ ՚ի վ̃ր իւրեանց զողորմութիւնն ա̃յ՝ գոհասցին զնմէ, ուստի և գոհութիւնն դաւթի ՚ի նո̃ ունէր կատարել․ ո՛րպ և կատարեցաւ։ Յայս միտս մեկնէ սուրբն պօղոս զայս բան․ * Հեթանոսք ասէ վ̃ն ողորմութեան փառաւոր առնեն զա̃ծ․ ո՛րպ և գրեալ է․ վ̃նկ գոհացայց զքեզ ՚ի հեթանոսս․ և անուան քում սաղմոս ասացից ‖․ հռովմ․ ԺԵ․ 9։ Զայս ա̃մ եդեալ մարգարէին՝ բովանդակէ զբան իւր, և ասէ։

ծ․ ՄԵԾ ԱՌՆԷՐ ՓՐԿՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՆՈՐԱ, ԱՌՆԷՐ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՕԾԵԼՈՅ ՆՈՐԱ ԸՆԴ ԴԱՒԹԻ, Ե ԸՆԴ ԶԱՒԱԿԻ ՆՈՐԱ ՄԻՆՉԵ ՅԱՒԻՏ։

Այս բան համարի իբրև մասն ինչ նախընթաց հաւարոյն․ զի ը̃ թարգմանելոյ բաղմաց, ՚ի բնագիրս եբրայ-

եցուց դնի այսպէս ․ * խոստովան եղէց քեզ 'ի հեթանոսս , և սաղմոս ասացից անուան քում , որ մեծացուց զփրկութիւն թագաւորի իւրոյ , և արար զողորմութի՟ օծելոյ իւրում դաւթի , և զաւակի նորա յ՟ն ‖ ։ Որով երևի՝ թէ աստանօր բառս նորա , որ դնի 'ի մերում թարգմանութե՟ն , յարաբերէ զա՟ծ , և կամ զանունն ա՟յ , զոր եդ 'ի նախընթացս համարն ․ ո՟պ թէ ասացեալ էր ․ մեծ արարեր զփրկութիւն թագաւորի քո ։ Իսկ պատճառ յե՟րդ դէմս խօսելոյն է այս , զի այսու յարգոյ ցուցցէ զբան իւր , եւս և զի թերևս կամի տալ օրինակ աղօթելոյ ժողովրդեան առ ա՟ծ վ՟ն թագաւորի իւրեանց ։

Յայսմիկ հայելով ասէ ․

Մեծ արարեր զփրկութիւն թ՟գրի նորա ։ Այսինքն ․ մեծ արարեր զփրկութիւն այնր թագաւորի , զոր ընտրեցեր և օծեր 'ի վ՟ր ժողովրդեան քո , որ է ասել ․ մեծ փըրկութիւն ցուցեր թ՟գրիս , ո՟պ իմն՝ թէ՛ ըստ հոգւոյ , և թէ՛ ըստ մարմնոյ ։ Իսկ փրկութիւն ասելով՝ ոչ միայն խնանայ զփրկիլն 'ի թշնամեաց , այլև զգտանելն յ՟այ ըզշնորհս և զողորմութիւն՝ մշտնջենաւորելոյ թ՟գրութե՟ իւրոյ ․ և առ այս յարէ , և ասէ ։

Առնել ողորմութիւն ընդ օծելոյ ն՟ր՝ ընդ դաւթի , և ընդ զաւակի ն՟ր աւգէ մինչև յաւէտ ։ Կամի ասել ․ յետ ցուցանելոյ քո առ իս առ օծեալդ զփրկութիւն քո մեծ՝ ցուցեր եւս և զողորմութիւն քոյ ․ զի կամեցար պահել և զթ՟գրութի՟ իմ որդւոց յորդիս * աւգէ մինչև յաւգ ‖ ․ ո՟պ մինչև ցյաւիտեան ․ ո՟պ դնի 'ի բ՟ թագ ։

Այլ այս կատարեցաւ 'ի ք՟ս ․ զի իբրև եհաս 'ի նա իշխանութիւնն դաւթի յորդւոց յորդիս , եղև 'ի նմա յաւիտենական և մշտնջենաւոր ․ ըստ որում գուշակեցին մարգարէքն ․ դանիէլ ․ է ․ 27 ․ և եսայի ․ թ ․ 7 ։ և այլք ։ Իսկ թէ քանի՛ մեծ արար ա՟ծ հայր զփրկութիւն ն՟ր , որով փրկեաց նա զազգս մարդկան , ո՛ կարասցէ պատմել , թէ՛ ըստ տարազուն և թէ՛ ըստ իրին , թէ՛ ըստ կատարման այնչափ գուշակութեց և մարգարէութեանց և թէ՛ ըստ տարածութե՟ որ եղև ը՟ն ա՟մ տեղիս ։ Տես 'ի խորհուրդ ա՟ծպաշտութե՟ ․ մ ․ բ՟ ․ գլ ․ 10 = 14 ․ և մ ․ գ՟ ․ ծայրէ 'ի ծայր ․ յորս մեծ ցուցանի փրկութիւնն ք՟սի , և ամենայաղթ թ՟գրութիւն ն՟ր , որով թագաւորէ 'ի վ՟ր ա՟մ յաւիտեանս յաւիտենից ։